Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՌՈՒՍ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

БИБЛИОТЕКА РУССКОЙ КЛАССИКИ

А. СЕРАФИМОВИЧ

Железный поток

А. ФАДЕЕВ

Разгром

Н. ОСТРОВСКИЙ

Как закалялась сталь

ЕРЕВАН «СОВЕТАКАН ГРОХ» 1986

Ա. ՍԵՐԵԼԻՄՈՎԻՉ

Երկաթե հոսք

Ա. ՖԱԴԵԵՎ

Ջարդուրանք

Ն. ՕՍՏՐՈՎՍԿԻ

Ինչպես է մարմարինը պողպատվել

ԵՐԵՎԱՆ «ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» 1986

ԳՄԴ 84Ռ7
Ս430

Կազմեց Հ. ՖԵԼԵՖՅԱՆԸ

Սերաֆիմովիչ Ա. Ս.
Ս 430 Երկաթե հեղեղ /Ա. Սերաֆիմովիչ. Ջախջախում/ /Ա. Ֆադեև, թարգմ.՝ Ս. Բաբիյան. Ինչպես էր կոփվում պողպատը/ Ն. Օստրովսկի, թարգմ.՝ Վ. Եսայան /Կազմ.՝ Հ. Ֆելեֆյան.— Եր.: Սովետ. գրող, 1986.— 848 էջ.— (ռուս դաս. գ-ական).

Ժողովածուն ամփոփում է Ա. Ս. Սերաֆիմովիչի «Երկաթե հեղեղ», Ա. Ա. Ֆադեևի «Ջախջախում», Ն. Ա. Օստրովսկու «Ինչպես էր կոփվում պողպատը» վեպերը։

ԳՄԴ 84Ռ7

© «Սովետական գրող» հրատարակչություն,
թարգմանված է հայերեն, 1986



Ա. Ս. ՍԵՐԱՖԻՄՈՎԻՉ

ԵՐԿԱԹԵ ՀԵՂԵՂ

1

Ստանիցայի այգիները, փողոցները, տները ու ցանկապատները խեղդվել անհետացել են փոշու տոթակեզ անսահման ամպերի մեջ, և միայն բրգաձև բարդիների սուր կատարներն են երևում։

Ամեն կողմից լսվում են բազմաձայն խոսակցություն, թնդյուն, շան հաչոց, ձիերի խրխնջյուն, երկաթի շառաչ, մանկական լաց, թունդ հիշոցներ, իրար կանչող կանանց ձայներ, խոպոտ, շվայտ երգեր՝ հարբած հարմոնիկայի ձայնակցությամբ։ Ասես պարսմայը կորցրած մի չտեսնված, վիթխարի փեթակ է մոլորված աղմկում բազմազան աններդաշնակ, հիվանդոտ ձայներով։

Այդ անսահման թեժ ժխորը կլանել է և տափաստանը, մինչև հողաբլուրների վրայի հողմաղացները, այնտեղ էլ է տիրում անլռելի հազարաձայն աղմուկը։

Միայն ստանիցայի ետևը հոսող փրփրադեզ սառնորակ լեռնային գետակի ձայնն է, որ չեն կարողանում խեղդել հեղձուցիչ ամպերը։

Հեռու՝ գետի մյուս կողմում կապույտին տվող հսկա լեռները ծածկում են երկնքի կեսը։

Զարմացած լողում են պսպղուն խորշակում և ականջ են դնում տափաստանի շիկափետուր ավազակները՝ ուրուրներ, շուռ են տալիս իրենց կեռ կտուցները և ոչինչ չեն հասկանում. դեռ այդպիսի բան չէր եղել։

Թե ասես՝ տոնավաճառ է, ապա ինչո՞ւ ոչ մի տեղ ոչ կրպակ կա, ոչ վաճառական, ոչ կիտված ապրանք։

Թե գաղթականներ են, ապա որտեղի՞ց են այստեղ թընդանոթներ, հրաձգամթերքի արկղեր, երկանիվ սայլեր, վայր դրած հրացաններ։

Իսկ եթե զորաբանակ է, ապա ինչո՞ւ են չորս կողմը երեխաներ լալիս, հրացանների վրա խանձարուրներ չորացնում. ինչո՞ւ են թնդանոթներից օրորոցներ կախ տված. ջահել մայրերը կուրծք են տալիս, հրետանու ձիերի հետ միատեղ կովերն են արածում, և արևից սևացած կանայք ու աղջկերք սուր հոտով ծխացող աթարների վրա ճարպով ու կորեկով լի կաթսաներն են կախ տալիս։

Խառնաշփոթ, անորոշ, փոշոտ, անկարգ ու անկանոն. աղմուկ ու գոռգոռոց, անհասկանալի խառնիճաղանջ մի ժխոր։

Ստանիցայում միայն կանայք, պառավներն ու երեխաներն են մնացել։ Կանայք խրճիթների փոքրիկ պատուհաններից դիտում են այդ Սողոմ-Գոմորը, որ տարածվել է փոշու ամպերով ծածկված լայն ու նեղ փողոցներում։

— Ա՛յ կոտորվեք դուք։

2

Կովերի բառաչյունից, աքլորների բարձր կանչից, մարդկային խոսակցությունից ջոկվելով լսվում են մերթ խոպոտ, մերթ տափաստանի ուժեղ, զիլ ձայներ.

— Ընկերնե՛ր, միտինգի հավաքվեցեք։

— Ժողովի։

— Է՛յ, հավաքվեցեք, տղե՛ր։

— Ժողովի՛։

— Հողմաղացների մոտ։

Դանդաղ հովացող արևի հետ միասին դանդաղ նստում է տաք փոշին, և իրենց հսկայական բարձրությամբ երևան են գալիս բրգաձև բարդիները։

Որքան մարդու աչք կտրում է, փռված են այգիներ, սպիտակին են տալիս խրճիթներ, և բոլոր փողոցները ծայրից ծայր լցված են սայլակներով, սայլերով, երկանիվներով, ձիերով, կովերով, և այգիներում և այգիների եռեր, մինչև հողմաղացները, որ տափաստանի հողաբլրի վրա չռել են ամեն կողմ իրենց երկար, թաղանթավոր մատները։

Իսկ հողմաղացների շուրջը հետզհետե աճող աղմուկով ավելի ու ավելի ծավալվում է մարդկային մի ծով, որի անհուն տարածության մեջ բրոնզե դեմքերը երևում են որպես բծեր։ Սպիտակամորուս ծերուկներ, տանջված դեմքերով կանայք, աղջիկների զվարթ աչքեր. երեխաները վազվզում են ոտքերի տակ. շները հևում են՝ լեզուները դուրս դցած. այս ամենը կորչում է զինվորների վիթխարի, ամեն ինչ հեղեղող բազմության մեջ։ Կարմիր փրչոտ փափախներ, տրորված գլխարկներ, լեռնականների թաղիքե գդակներ՝ կախ ընկած ծայրերով։ Ոմանք պատռված գիմնաստյորկաներով, խունացած չթե բլուզներով, չերքեզկաներով, շատերն էլ մինչև գոտին մերկ են, և բրոնզագույն ջլասլինդ մարմնի վրա՝ խաչաձև կապած գնդացրի ժապավեններ։ Գլխների վրայով անկարգ, խառնիխուռն չորս կողմն են նայում մուգ կապտագույն սվինները։ Հնությունից սևացած հողմաղացները նայում են զարմացած. այդպիսի բան երբեք չեն տեսել։

Հողաբլրի վրա հողմաղացների մոտ հավաքվել են գնդապետներ, գումարտակայիններ, վաշտայիններ, շտաբի պետեր։ Ովքե՞ր են այդ գնդապետները, գումարտակայինները, վաշտայինները։ Կան ցարական զորքից սպայության հասած զինվորներ, կան վարսավիրներ, տակառագործներ, ատաղձագործներ, նավաստիներ, ձկնորսներ՝ քաղաքներից ու ստանիցաներից։ Դրանք ամենքը փոքրիկ կարմիր ջոկատների պետեր են, որ նրանք կազմակերպել են իրենց փողոցում, իրենց ստանիցայում, իրենց ագարակում, իրենց շենում։ Կան և կադրային սպաներ, որ հարել են հեղափոխության։

Արշինանոց բեղերով հաղթանդամ գնդապետ Վորոբյովը բարձրացավ անիվավոր գերանի վրա, որ ճոճոաց նրա տակ, և զիլ ձայնով դիմեց ամբոխին.

— Ընկերնե՛ր...

Եվ որքան թույլ էր այդ ձայնը հազարավոր բրոնզագույն դեմքերի, նրա վրա սևեռված հազարավոր աչքերի դիմաց։ Նրա շուրջը հավաքվել էր ողջ հրամանատարական կազմը։

— Ընկերնե՛ր։

— Գնա՛, քո հե՛րն էլ անիծած...

— Կորի՛ր, քաշվի՛ր...

— Գրողի ծո՛ցը...

— Հարկավոր չի...
— Մեծավո՞ր է, ես քո մե՞ը...
— Իսկ ուստադիրներդ որտե՞ղ են...
— Վաղուց կորսել է...
— Ի՞նչ ես հաշում...
— Մի լավ տո՛ւր դրան։

Մարդկային անհուն ծովը ձեռքերի մի ամբողջ անտառ բարձրացրեց։ Մի՞թե կարելի է հասկանալ, թե ով ինչ է բղավում։

Հողմաղացի մոտ մի կարճահասակ, կարծես արճիճից պինդ ձուլված, իրար կպած քառանկյունի ծնոտներով մարդ է կանգնած։ Ցածր հոնքերի տակից, ինչպես երկու բիզ, մոխրագույն, ոչինչ բաց չթողնող աչքերն են առկայծում։ Կարճ ստվեր է ընկնում նրանից, ստվերի գլուխը կոխկրտում են ոտներով։

Իսկ գերանի վրայից մեծ բեղավորը՝ կոկորդը պատռելով՝ վիլ բղավում է.

— Ախր մի սպասեցի՛ք, լսե՛ք... մի քննեք, թե ինչ դրություն է ստեղծվել...

— Դե գնա՛, քո...

Աղմուկը, հայհոյանքը խեղդեցին նրա միայնակ ձայնը։

Ձեռների և ձայների ծովի միջից բարձրացավ մի երկար, նիհար, արևից և աշխատանքից այրված, դարդից ոսկոր դարձած կանացի ձեռք, և կանացի տանջված ձայնը գոռաց.

— Լսել չենք ուզում, իզուր դուրս մի տուր, ձիու լեշ։ Կով ունեի, մի ջուխտ եղներ ունեի, խրճիթ կար, ինքնաեռ, ո՞ւր ա հիմա էդ բոլորը։

Եվ ամբոխը նորից մոլեգին ալեկոծվեց. ամեն մեկը իրենն էր գոռում առանց մյուսին լսելու։

— Ես հիմա հացի տեր կլինեի, եթե հնձեի...

— Ասում էին, թե պետք է Ռոստով անցնենք։

— Ինչի՞ գիմնաստյորկաներ չտվին։ Ոչ ոտի փաթաթաններ, ոչ էլ կոշիկներ...

Իսկ գերանի վրայից նորից հնչում է ձայնը.

— Էլի ձեր պատճառով։ Դուք բերիք, դուք խաբեցիք, սրիկանե՛ր։ Բոլորս էլ տանն էինք նստած, օջախի տեր էինք, իսկ հիմա անտերների պես տափաստանում թափառում ենք։

— Իհարկե, խաբեցիք,— լսեցին զինվորները խրոխտ ձայները, սվինները ծածանվեցին։

— Իսկ հիմա ո՞ւր ենք գնալու։

— Եկատերինոդար։

— Չէ՞ որ այնտեղ կադետներն են...

— Ուրիշ տեղ չկա գնալու։

Հողմաղացի մոտ կանգնած է երկաթե ծնոտավորը և ուշադիր դիտում է բզի պես սուր, մոխրագույն փոքրիկ աչքերով։

Այդ միջոցին ամբոխի վրայով անուղղելի հնչում է մի բառ.

— Ծախեցի՞-ի՞ք։

Այդ ձայնը լսեցին բոլոր ծայրերում, իսկ եթե չլսողներ եղան, նրանք էլ՝ սայլակների, օրորոցների, ձիերի, խարույկների, զինամթերքների արկղների միջև՝ գլխի ընկան։ Ամբոխը ցնցվեց, շնչակտուր եղան։ Բարձր հնչեց մի հիստերիկ կանացի ձայն, բայց ճչում էր ոչ թե կին, այլ մի թռչնաքիթ փոքրիկ զինվոր, որ մինչև գոտին մերկ էր, իր չափից մեծ կոշիկները հագին։

— Մեզ առնում ու ծախում են սատկած անասունների պես։

Ամբոխի միջից մեկը, որ ամբողջ գլխով բոլորից բարձր էր, արմունկներով հրելով, լուռ դիմում է դեպի աղորիքները, դեմքը հրապուրիչ, նոր բուսնող սև բեղերով, նավաստու փոքրիկ գլխարկով, որի երկու ժապավենները նրա երկար արևակեզ վզին էին դիպչում։ Նա ճեղքելով առաջ է գնում առանց աչքը հեռացնելու հրամանատարների խմբակից՝ պինդ սեղմելով ձեռքին զայրագին շողշողացող հրացանը։

— «Է՞... պրծա՛վ...»։

Երկաթե ծնոտներով մարդը ավելի պինդ հուպ տվեց ծնոտները։ Վշտալի հայացք գցեց մարդկային ալեկոծ ծովի վրա, մի ծայրից մինչև մյուս ծայրը. աղաղակող բերաններ, մուգ կարմիր դեմքեր, իսկ հոնքերի տակից չարությամբ աղաղակող աչքեր են առկայծում։

— «Որտե՞ղ է կինս...»։

Ծածանվող ժապավենների նավաստու գլխարկով մարդն արդեն մոտենում էր, հրացանը առաջվա պես միշտ սեղմած, աչքերը հառած, կարծես թե վախենում էր աչքաթող անել, և շարունակ հրելով իրեն սեղմող ամբոխը, որ աղմուկի և գոռոցների մեջ այս ու այն կողմ էր գցում նրան։

Մանավանդ դառն էր սեղմած ծնոտներով մարդու համար. չէ՞ որ նրանց հետ կողք կողքի կռվել էր նա իբրև գնդացրորդ տաճկական ռազմաճակատում։ Արյան ծովեր... Հաղար անգամ մահն էր սավառնել գլխների դեմ. Եյսկ, Թեմրյուկ, Թաման, Կուբանի ստանիցաները...

Նա բաց արեց ծնոտները և ասաց երկաթե փափուկ ձայնով, որ սակայն աղմուկի ու ժիորի մեջ ամեն տեղ լսելի էր...

— Ընկերնե՛ր, դուք ինձ ճանաչում եք։ Միասին արյուն ենք թափել։ Ինքներդ եք հրամանատար ընտրել։ Իսկ եթե այժմ այսպես լինի, բոլորս էլ կորած ենք։ Անիծած կաղակները և կադետներն ամեն կողմից վրա են տալիս։ Ոչ մի ժամ չի կարելի կորցնել։

Նա խոսում էր Ռիլրաինայի բարբառով, և այդ կաշառում էր։

— Դու էլ ես ուսադիրներ ունեցել, լա՞վ,— սուր ճչաց մինչև գոտին մերկ փոքրիկ դինվորը։

— Ես հո չե՞մ դրանց հետևից ընկել։ Ինքներդ գիտեք, կռվում էի ռազմաճակատում, իշխանությունն էլ կպցրեց։ Բայց մի՞թե ես ձերը չեմ։ Մի՞թե եղի պես ձեզ հավասար չեմ կրել շալակիս. աղքատության և աշխատանքի ծանրությունը... Ձեզ հետ չե՞մ հերկել, չե՞մ ցանել...

— Ինչ որ ճիշտ է՝ ճիշտ է,— հնչեց աղմուկի միջից,— մերն է։

Բարձրահասակ նավաստին վերջապես դուրս պրծավ ամբոխի միջից, երկու ոստյունով մոտ հասավ և, առաջվա պես լուռ, առանց աչքը հեռացնելու, ամբողջ ուժով վրա բերեց սվինը, ետևից կոթը մեկին դիպցնելով։ Երկաթե ծնոտներով մարդը ոչ մի փորձ չարեց խուսափելու, միայն մի ջղաձգություն, որ ժպիտի էր նման, շարժեց դիմագծերը, որ վայրկենապես դեղնեցին ինչպես կաշի։

Կողքից արջառի պես գլուխը կախ գցելով՝ ուսը ամբողջ ուժով դեմ տվեց ցածրահասակ մեկը, որ նավաստու սրմունկից էր։

— Ա՛ռ քեզ...

Եվ վրա բերած սվինը, մի կողմի վրա թեքվելով, սեղմված ծնոտներով մարդու փոխարեն նրա կողքին կանգնած բատալիոնի մի ջահել զինվորի փորը խրվեց մինչև վերջ։ Նա աղմկալից, ինչպես դուրս պրծած գոլորշի, շունչ արձակեց և ընկավ մեջքի վրա։ Բարձրահասակը մոլեգնաբար աշխատում էր դուրս քաշել ողնաշարի մեջ պինդ խրված սուր ծայրը։

Առանց բեղերի, օրիորդի դեմքով մի վաշտապետ բռնեց աղորիքի մի թևը և վեր մագլցեց։ Թևը ճռռալով իջավ, և նա նորից գետնին ընկավ։ Մնացածները, բացի քառանկյունի ծնոտներով մարդուց, հանեցին ատրճանակները. գունատ դեմքերը վշտալից են։

Ամբոխի միջից դեպի աղորիքն էին ճիգ անում անցնել դարձյալ մի քանի մարդ՝ խելագարի պես աչքերը չռած, հրացանները սեղմելով ջղաձգորեն։

— Շներին շան պես պետք է սատկացնել։

— Կոտորեցե՛ք դրանց։ Քոքները կտրե՛ք։

Հանկարծ ամեն ինչ լռեց։ Բոլորի գլուխները շուռ եկան, բոլորի աչքերը մի կողմ դարձան։

Տափաստանով մինչև արտերը փռված ու թելի պես ձգված մի սև ձի էր սլանում, իսկ նրա վրի հեծածը՝ կարմիր-խայտաբղետ բլուզով, կուրծքն ու գլուխը ձիու բաշին էր դեմ տվել, ձեռները երկու կողմից կախ էին ընկած։ Մոտենում է ավելի ու ավելի... Երևում է, թե ինչպես ամբողջ ուժը լարած սլանում է խելակորույս նժույգը։ Փոշին արագ ետ է մնում։ Կուրծքն սպիտակ փրփուր է պատել։ Կողերը քափ ու քըրտինքի մեջ են։ Իսկ հեծյալը, գլուխը շարունակ բաշին հենած, երերվում է սլացքի հետ։

Տափաստանում դարձյալ մի բան սևին տվեց։

Ամբոխի մեջ լսվեց.

— Մի ուրիշն էլ է գալիս...

— Տեսեք ինչպես է շտապում։

Սև ձին հասավ խռմփալով և սպիտակ փրփուր թափելով և ամբոխի առաջ միանգամից կանգ առավ՝ ընկնելով ետևի ոտների վրա. զոլավոր կարմիր բլուզով ձիավորը տոպրակի

նման ձիու գլխի վրայով շուռ եկավ և խուլ թրմփաց գետին, ձեռները լայն տարածած և գլուխն անբնական կերպով տակովն արած։

Ոմանք վազեցին վայր ընկածի մոտ, ոմանք էլ՝ ծառս եղած ձիու, որի կողերը կարմիր ու լպրծուն էին։

— Սա Օխրիմն է,— բղավեցին մոտ վազողները, խնամքով շոկելով սառչող ձիավորին։ Ուսին և կրծքին արյունոտ բաց վերք կար, իսկ մեջքի վրա՝ չորացած մի սև բիծ։

Եվ ամբողջ ամբոխն աղորիքների այն կողմը և սայլակների մեջ, մեծ ու փոքր փողոցներում համակվում է խոր հուզմունքով.

— Օխրիմին կաղակները սպանել են...

— Վա՛յ ինձ։

— Ո՞ր Օխրիմին։

— Գ-ժվե՞լ ես, չե՞ս իմանում։ Պավլովսկցուն, որի տունը ձորակի վրա է։

Մոտեցավ նաև երկրորդը։ Դեմքը, քրտնած բլուղը, ձեռները, բորիկ ոտքերը, վարտիքը, բոլորն աբյունոտ էր. ի՞նչ արյունն էր, թե ուրիշի։ Իսկ աչքերը կլոր էին։ Նա վայր ցատկեց երերվող ձիուց և պառկածի կողքն ընկավ, որի երեսին մեղրամոմի թափանցիկ դեղնություն էր սփռվել, իսկ աչքերի վրա ճանճեր էին նստել։

— Օխրի՜մ։

Հետո արագ շոքեց, ականջը աբյունաշաղախ կրծքին մոտեցրեց ու խկույն ոտքի կանգնեց և գլուխը խոնարհեց.

— Տղա՛ս, որդի՛ս...

— Մեռած է,— խուլ արձագանքեցին շրջապատողները։

Նա քիչ էլ կանգնած մնաց և հանկարծ խռպոտ բացականչեց առաջվա մրսեցրած ձայնով, որ լսելի էր ամենահեռավոր խրճիթներում, սայլակների մեջ.

— Սլավյանսկայա ստանիցան ոտքի է կանգնել, Պալտավսկայան էլ, Պետրովսկայան էլ, Ստիբլևսկայան էլ։ Եվ ամեն մի ստանիցայում, ժամի առաջ, հրապարակի վրա խկույն կախաղան են կանգնեցնում և բոլորին հերթով կախ են տալիս, մենակ թե մարդ ձեռքներն ընկնի։ Ստիբլիևսկայա եկան կադետներ, թրերով կտտրում են, կախում են, գնդակահար են անում, ձիաններով Կուբան են քշում։ Ստարաքաղաքացիներին չեն խնայում, ծերերին, պառավներին, բոլորին։ Նրանք ասում են, թե բոլորն էլ բոլշևիկ են։ Մեր Օպանասը, բոստանչին, որի խրճիթը Յավդոխա Պերեպերեչիցայի տան դեմն է...

— Ճանաչում ենք,— կարճ դղրդաց ամբոխը։

— ...աղաչում էր, ոտքերն էր ընկել. կախ տվին։ Անթիվանհամար զենք ունեն։ Կանայք, երեխաներ, օր ու գիշեր բանջարանոցներում փորում են, այգիներում, հողի տակից հրացաններ, գնդացիրներ, խոտի դեզերից ռումբերի, փամփուշտների ամբողջ արկղեր են հանում, ամեն բան բերել են տաճկական ճակատից, թիվ ու համար չկա։ Թնգանոթները դղրդում են։ Խելքները թոցրել են։ Կարծես կրակն ընկել, վառվում են։ Ամբողջ Կուբանը կրակի մեջ է։ Մեզ, ղողքից եկածներիս, ավելի են տանջում. ծառերից են կախում։ Զոկատները ցրվում են տարբեր կողմեր. մի մասը՝ Եկատերինոդար, մի մասը՝ դեպի ծով, մի մասը՝ Ռոստով. բոլորն էլ սրի բաժին են գառնում։

Դարձյալ կանգնեց մեռածի առաջ, գլուխը խոնարհեց։

Եվ անշարժ լռության մեջ բոլորի աչքերը նրան էին նայում։

Նա երերաց, ձեռներն օդի մեջ մի բանի մեկնելով, հետո առավ սանձը և սկսեց հեծնել դեռևս քրտնած կողերով ձին, որ ջղաձգորեն լայնացնում էր իր արյունոտ ռունգները՝ արագ շնչառությունից։

— Ո՞ւր, Պավլո՛, ճանապարհդ կորցրել ես։

— Կա՛ց, ո՞ւր, ե՛տ արի։

— Բռնեցե՛ք դրան։

Բայց տափաստանում արդեն լսվում էր հեռացող դոփյունը։ Ամբողջ թափով զարկեց մտրակով, և ձին, խոնարհ մեկնելով իր թաց վիզը և հուպ տալով ականջները, առաջ սլացավ։ Աղորիքների ստվերները երկար հետևեցին նրան տափաստանում։

— Զուր կկորչի։

— Ընտանիքը մնացել է այնտեղ։ Իսկ էստեղ, ահա, որդին է ընկած։

Երկաթե ծնոտավորը բացեց ծնոտները և ծանր շարժելով դանդաղ խոսեց.

— Տեսա՞ք։

Ամբոխը մռայլ՝

— Հո կույր չենք։

— Լսեցի՞ք։

Մռայլ՝

— Լսեցինք։

Իսկ երկաթե ծնոտները անողոք ասում էին.

— Ընկերնե՛ր, ուրիշ ելք չկա. թե՛ առաջ, թե հետ՝ ամեն տեղ մահ է սպասում։ Ա՛յ, սրանք,— նա գլխով ցույց տվեց կազակների վարդի գույն ստացած տները, վիթխարի բարդիները, որոնք երկար ստվերներ էին արձակում,— գուցե հենց այս գիշեր կհարձակվեն մեզ վրա, իսկ մենք ոչ մի պահակ, ոչ մի հսկիչ չունենք։ Չկա մեկը, որ կարգադրի։ Հարկավոր է նահանջել։ Ո՞ւր։ Նախ պետք է վերակազմել զորքը։ Իշխանավորներ ընտրեցեք, բայց միայն մի անգամ. իսկ ընտրելուց հետո նրանք ձեր կյանքի և մահվան տերը պետք է լինեն. երկաթե կարգապահություն պետք է տիրի, միայն այդ է փրկությունը։ Միանանք մեր գլխավոր ուժերի հետ, իսկ հետո Ռուսաստանից էլ օգնության կհասնեն։ Համաձա՞յն եք։

— Համաձայն ենք,— միաբերան պատասխան լսվեց տափաստանում, փողոցներում շարված սայլակների և այգիների մեջ, ամբողջ ստանիցայում մի ծայրից մյուս ծայրը, մինչև վերջը։

— Շատ բարի, իսկույն ընտրեցեք։ Իսկ հետո անմիջապես վերակազմեք զորամասերը։ Սայլաշարքը անջատենք ռազմաշարքերից։ Հրամանատարներին տեղավորել զորամասերում։

— Համաձայն ենք։— Նորից միաձուն լսվեց դեղնին տվող անծայր տափաստանում։

Առաջին շարքերում բարետես մի միրուքավոր էր կանգնած։ Առանց մի ջանք գործ դնելու, իր հուժկու, փոքր-ինչ խռպոտ ձայնով նա լռեցրեց բոլորին։

— Իսկ ո՞ւր պետք է գնանք։ Ի՞նչ ենք փնտրում։ Սա, ախր, տնսքանդություն է, ամեն ինչ թողինք՝ տուն-տեղ, անասուն։

Կարծես թե մեկը քար գցեց՝ ամբոխը ետ քաշվեց, երերաց, աղմուկ բարձրացավ, և ամեն կողմից վրա բերին.

— Իսկ քո կարծիքով, ո՞ւր գնանք։ Հե՞տ։ Որ բոլորիս կոտորե՞ն։

Իսկ բարետես միրուքավորն ասում է.

— Ինչի՞ պիտի կոտորեն, թե որ մեր ոտով գնանք, զենքերը հանձնենք. հո գազան չե՞ն։ Ա՛յ, մորկուշինցիք անձնատուր եղան, հիսուն մարդ, զենքերը հանձնեցին, հրացաններ, փամփուշտներ, կազակները բոլորովին ձեռք չտվին, մինչև այժմ էլ վար են անում։

— Կեղեքիչներն են, որ անձնատուր են եղել։

Տաքացած դեմքերի և գլուխների վրայով ձայներ լսվեցին.

— Քիթդ սև շան պոչի տակ դիր՝ հոտ քաշիր։

— Մեզ անխոս կկախեն։

— Իսկ ո՞ւմ համար պիտի գնանք, վար անենք,— բարակ ձայներով ճչացին կանայք,— էլի աֆիցերների և կազակների համա՞ր։

— Էլի՞ լծի տակ մտնենք։

— Կազակի մտրակի տա՞կ, աֆիցերների՞, գեներալների՞։

— Կորի՛ր, նզովվա՛ծ, քանի չենք սատկացրել։

— Սատկացրե՛ք դրան։ Մերոնք են մեզ ծախում...

Միրուքավորը՝

— Հըլա լսեցեք... Ի՞նչ եք շան պես հաչում։

— Լսելու բան չկա։ Ի՞նչ պտուղ է։

Գրգռված կարմիր դեմքերը իրար էին դառնում, աչքերը չարությամբ փայլփլում էին. գլուխների վրա բռունցքներ էին շարժվում։ Մեկին ծեծում էին։ Մեկի վզակոթին տալով քշում էին ստանիցան։

— Լռեցե՛ք, քաղաքացինե՛ր...

— Սպասեցե՛ք, ի՞նչ եք ուզում ինձնից։ Ձեզ համար ես ի՞նչ եմ, խո՞ւրձ եմ, թե ինչ...

Երկաթե ծնոտավորը ծնոտները բացեց.

— Ընկերնե՛ր, դադարեցե՛ք, պետք է գործով զբաղվել։ Պետք է հրամանատար ընտրել, իսկ նա մնացածներին կնշանակի։ Ո՞ւմն եք ընտրում։

Մի ակնթարթում անշարժ լռություն տիրեց. տափաստանը, ստանիցան անթիվ ամբոխը՝ ամեն ինչ լռեց։ Հետո ջլոտ, կոշտացած ձեռքերի մի անտառ բարձրացավ և մինչև տա-

Դիաստանի սահմանները ու ստանիցայի անվերջ այդիները, և գետի մյուս կողմը մի անուն թնդաց.

— Կոժուխի-ի՜-ի՜-ի՜ն...

Եվ թռավ, անցավ և երկար ժամանակ լեռների ստորոտներում դեռ հնչում էր.

— Ի՜-ի՜-ի՜ն...

Կոժուխը սեղմեց իր քարե ծնոտները. հարգանքի նշան արեց. և երևում էր, թե ինչպես այտոսկրի տակի խլերը խաղում էին։ Մոտեցավ մեռածներին, հանեց կեզտոտ հարդի գդակը։ Եվ կարծես քամուց բոլոր գլխարկները բարձրացան, բոլոր գլուխները մերկացան, և կանայք հեծկլտացին։ Կոժուխը գլուխը խոնարհեց, կանգնած մնաց մեռածների մոտ։

— Թաղենք մեր ընկերներին ամենայն հարգանքներով։ Բարձրացրե՛ք։

Երկու վերարկու փռեցին։ Գումարտակի պետին, որի կրծքին դիմնաստյորկայի վրա արյան մի մեծ բիծ էր շոյացել, մոտեցավ նավաստու գլխարկով մի գեղեցիկ աղամարդ, վզին ծածանվող ժապավեններով, լուռ թեքվեց և զգույշ, կարծես վախենալով, որ կցավեցնի, բարձրացրեց։ Բարձրացրեց և Օխրիմին։ Տարան։

Ամբոխը ճանապարհ բաց արեց։ Հետո նորից սեղմվեց և հետևեց գլխաբաց, անվերջ հեղեղի պես։ Եվ ամեն մեկի ետևից երկար-երկար ասվեր էր գնում, որ գնացողները կոխկրտում էին։

Մի ջահել ձայն սկսեց մեղմ և վշտագին երգել.

Դուք ղոհ գնացիք օրհասական կռվում...

Ուրիշ ձայներ միացան, կոշտ ու կոպիտ ձայներ, սխալ և աններդաշնակ, անհարթ, բազմաձայն, բայց հետզհետե ավելի լայնանալով.

...ժողովրդի անձնվեր տիրուն։

Բազմաձայն և աններդաշնակ է, բայց ինչո՞ւ մի տեսակ սուր վիշտ է խոցում, որ ի մի է ձուլվում տարօրինակ կերպով և միայնակ, մտախոհ տափաստանի հետ, և հին, սևացած աղո-

րիքների հետ, և քիչ ոսկեզօծված բարձրուղեշ բարդիների հետ, և սպիտակ տների հետ, որոնց կողքով անցնում են նրանք, և անվերջ այդիների հետ, որոնց կողքով տանում են մեռյալներին, կարծես թե այստեղ ամեն ինչ հարազատ է, մոտ է, կարծես թե այստեղ են ծնվել և այստեղ էլ մեռնելու են։

Երեկոյան թանձր կապույտը լեռները պատեց։

Պառավ Գորպինան, նա ինքը, որ բարձրացրած ձեռների անտառի մեջ իր ոսկրոտ ձեռքն էլ էր բարձրացրել, փոշոտ փեշով սրբում էր իր կարմրած աչքերը, թաց, փոշիով լի կընճիռները և հեծկլտալով շշնջում էր և հանդարտ երեսը խաչակնքում.

— Սուրբ աստված, սուրբ և հզոր, սուրբ և անմահ, ողորմա մեզ... սուրբ աստված, սուրբ և հզոր...— և դառնությամբ սրբում է քիթը նույն փեշով։

Զինվորները քայլում են միաչափ, լայն քայլերով, մտազբաղ դեմքերով, հոնքերը կիտած, և ներդաշնակ ճռճվում են սվինների մութ շարքերը։

... դուք նրա համար ղոհ բերիք, ինչ որ կարող էիք...

Գիշերը նեղհած փոշին նարից դանդաղ քուլաներով բարձրանում է և ամեն ինչ սքողում։

Եվ ուրիշ ոչինչ չի երևում, լսելի է միայն քայլերի թանձր դոփյունը և՝

— ... սուրբ և հզոր... սուրբ և անմահ...

... տառապում էք... խոնավ բանտերում...

Գիշերվա հանգստի համար մթագնած սգավոր լեռները ծածկում են առաջին երկչոտ աստղերը։

Ահա և խաչերը։ Որը վայր է ընկել, որը՝ ծռվել։ Շուրջը ամայի տարածություն է, մացառներով ծածկված։ Հանդարտ թռավ բուն։ Մեղմ թրթռացին չղջիկները։ Երբեմն աղոտ սպիտակին է տալիս մարմարիոնը, երեկոյան մշուշի մեջ մերթ ցոլում են ոսկեզօծ տառերը. տապանաքարեր հարուստ կազակների, վաճառականների, տապանաքարեր զորեղ տնտե-

սությունների վրա, անխախտ կենցաղաձևի վրա, իսկ դրանց վրայով անցնում են և երգում.

... կընկնի կամայականությունը, ոտքի կկանգնի ժողովուրդը։

Իրար կողքի երկու գերեզման փորեցին։ Նույն տեղ էլ շտապ-շտապ ադոտ սպիտակին տվող հոտավետ թարմ տախտակներից դագաղներ էին պատրաստում։ Մեռածներին դրին դագաղները։

Կոժուխը գլխաբաց կանգնեց նոր դուրս թափած հողի վրա։

— Ընկերնե՛ր, ես ուզում եմ ասել... Մեր ընկերները սպանվեցին։ Այո՛... Մենք պետք է պատիվ տանք նրանց... Նրանք մեզ համար զոհվեցին ... Այո՛, ես ուզում եմ ասել... Ինչո՞ւ մեռան նրանք։ Ընկերնե՛ր, ես ուզում եմ ասել, որ Խորհրդային Ռուսաստանը չի մեռել, նա կանգուն է մնալու հավիտյան։ Մենք այստեղ, ընկերնե՛ր, կարելի է ասել, սեղմըված ենք, իսկ այնտեղ՝ Ռուսաստանը, Մոսկվան է։ Ռուսաստանը իրենը կանի։ Ընկերնե՛ր, Ռուսաստանում, ուզում եմ ասել, բանվորագյուղացիական իշխանություն է... Դրա շնորհիվ ամեն ինչ կարգի կընկնի։ Մեզ վրա հարձակվում են կադետները, այսինքն, ուզում եմ ասել, գեներալները, կալվածատերերը և բոլոր կապիտալիստները, մի խոսքով, ես ուզում եմ ասել, կողոպտիչներն ու ավազակները։ Բայց մենք չենք խոնարհվի նրանց առաջ, նրանց մերը... Մենք նրանց ցույց կտանք։ Ընկերնե՛ր, է՛-է՛... ը՛մ... ուզում եմ ասել, թաղենք մեր ընկերներին և երդվենք նրանց գերեզմանների վրա՝ պաշտպանել խորհրդային իշխանությունը։

Սկսեցին իջեցնել։ Գորպինա տատը, բերանը փակելով, սկսեց հեծկլտալ, շնիկի պես կամաց կաղկանձելով, հետո սկսեց բարձրաձայն ողբալ. նրանից հետո մյուսը, հետո երրորդը։ Ամբողջ գերեզմանատունը լցվեց կանացի ձայներով։ Եվ ամեն մեկն աշխատում էր առաջ անցնել, կռանալ, մի բուռ հող վերցնել և գերեզմանի մեջ նետել։ Հողը խուլ թափվում էր։

Կոժուխի ականջին հարցրին.

— Քանի՞ փամփուշտ տանք։

— Մի տասներկու հատ։

— Քիչ կլինի։

— Ախր, փամփուշտ չկա. ամեն մի հատը պետք է խնայենք։

Մի թույլ համազարկ լսվեց, երկրորդը, երրորդը։ Մի վայրկյան դեմքերը, խաչերը, հող թափող թիակները պարզ լուսավորվում էին։

Եվ երբ լռություն տիրեց, հանկարծ բոլորը զգացին, որ գիշեր է, տիրում է լռություն, տաք փոշու հոտ է գալիս, և ջրի անդուլ կարկաչյունը քուն է բերում, խառնաշփոթ հիշողություններ զարթեցնում,— չես մտաբերում, թե ինչի մասին,— իսկ գետի մյուս կողմը, հեռու-հեռու՝ երկար տարածված լեռների խիտ սևությունն է փռված, ծանր-ծանր կտրատված։

3

Գիշերվա պատուհանները սև-սև նայում են խավարին, և նրանց անշարժության մեջ մի չարագուշակ խորհրդավորություն կա։

Աթոռակի վրա դրած առանց ապակու թիթեղյա լապտերից արագ երերվելով սև սուգ է բարձրանում դեպի առաստաղը։ Սենյակը ծխախոտի ծխով լիքն է։ Հատակի վրա գցած է մի ֆանտաստիկական գորգ անհամար նշաններով, գծերով, կանաչ-կապույտ բծերով, սև գալարագծերով. Կովկասի անագին քարտեզն է։

Անգոտի բլուզներով, բոբիկ, զգուշությամբ չորեքթաթ է տալիս քարտեզի վրա հրամանատար կազմը։ Ոմանք ծխում են, աշխատելով մոխիրը չթափել քարտեզի վրա. մյուսները անընդհատ սողում են վրան։ Կոժուխը ծնոտները սեղմած պպզած է, մի կողմ է նայում իր փոքրիկ, ծակծկող-պարզ աչքերով, իսկ դեմքից երևում է, որ իր խոհերն ունի։ Ամեն ինչ սուզված է ծխախոտի կապտագույն ծխի մեջ։

Պատուհանների մթության մեջ անընդհատ լսվում է գետի սպառնալի շաչյունը, որ ցերեկը մոռացվում է։

Թեև այդ և հարևան տներից բոլորին դուրս են հանել, բայց և այնպես խոսակցում են զգույշ, կիսաշշունջ.

— Մենք ամենքս այստեղ կկորչենք. ոչ մի մարտական հրաման չի կատարվում։ Միթե չե՞ք տեսնում։

— Զինվորներին բան հասկացնել չի լինում։

— Դե նրանք էլ բոլորը զուր կկորչեն՝ բոլորին կազակները կկոտորեն։

— Մինչև ամպը չգոռա՝ մուժիկը երեսը չի խաչակնքի։

— Ինչպե՞ս թե չգոռա, քանի որ չորս կողմն արդեն հրդեհը բոցավառվել է։

— Դե արի հասկացրու նրանց։

— Իսկ ես ասում եմ՝ պետք է Նովորոսիյսկը գրավենք և այնտեղ սպասենք։

— Նովորոսիյսկի մասին խոսք անգամ չի կարող լինել,— ասաց մեկը, մաքուր լվացած բլուզով, գոտի կապած, երեսը լավ սափրած,— տեղեկագիր եմ ստացել ընկեր Սկորնյակից։ Այնտեղ սարսափելի խառնաշփոթություն է տիրում. այնտեղ կան և՛ գերմանացիք, և՛ տաճիկներ, և՛ մենշևիկներ, և՛ էսէռներ, և՛ մեր հեղկոմը։ Եվ բոլորն էլ միտինգներ են անում, անվերջ վիճում, քննարկում են, մի ժողովից մյուս ժողով են գնում, փրկության հազար ու մի ծրագիր են կազմում, բայց այդ բոլորը միայն սանդում ջուր ծեծել է։ Ջորքն այնտեղ տանել՝ կնշանակի բոլորովին քայքայել նրան։

Գետի անդուլ ու մուկի մեջ որոշակի մի հրացանի ձայն լսվեց։ Ձայնը հեռավոր էր, բայց գիշերային պատուհանները իրենց դաղտագողի և սև անշարժության մեջ ասացին. «Ահա՛... սկսվում է»...

Ամենքը ներքուստ ծայրահեղ լարված, իսկ արտաքուստ՝ ծխախոտը բերաններում և ծխի թանձր քուլաները բաց թողնելով, մատները շարունակում էին պտտեցնել մինչև ամենավերջին գիծն ուսումնասիրած քարտեզի վրա։

Բայց, որքան էլ պտտեին, նույնն էր. ձախ կողմից ճանապարհը կտրում է ծովի կապույտ խազը. աջից և վերևից՝ թշնամի ստանիցաների և ագարակների բազմաթիվ անուններ. ներքև՝ հարավի կողմը դեղին ներկով նշանակված անանցանելի լեռներ են ճանապարհը կտրում, մի խոսքով՝ իսկական թակարդ։

Ահագին բանակով կանգնած են իրենք ահա այդ քարտեզի վրա նշանակված գալարվող գետի ափին, որ գոչյունը սև պատուհաններից շարունակ ներս է խուժում, իսկ քարտեզի վրա նշանակված բոլոր ձորակներում, եղեգնուտներում, անտառներում, տափաստաններում, ագարակներում և ստանիցաներում կազակներն են հավաքվում։ Մինչև այժմ մի կերպ կարողանում էին ճնշել հատ-հատ ապստամբած ստանիցաները, ագարակները, իսկ այժմ ապստամբության բոցը բռնկել է ամբողջ Կուբանում։ Խորհրդային իշխանությունը ամենն տեղ տապալված է. նրա ներկայացուցիչները սրի ճարակ են դարձել ստանիցաներում և ագարակներում, և գերեզմանատան խաչերի նման ամենն տեղ կախաղաններ են տնկած. կախում են բոլշևիկներին, որոնց մեծ մասը օտարաքաղաքացիք են, թեև կազակ բոլշևիկներ էլ կան. նրանք ամենքն էլ կախաղան են հանված։ Ո՞ւր նահանջեն։ Ինչպե՞ս ազատվեն։

— Պարզ բան է, պետք է անցնել դեպի Տիխորեցկայա, այնտեղից՝ Սուրբ Խաչ, իսկ այնտեղից՝ Ռուսաստան կանցնենք։

— Խելքի տոպրակ, դեպի Սուրբ Խաչ։ Իսկ ինչպե՞ս կհասնես Սուրբ Խաչ առանց փամփուշտների, առանց ռումբերի, ամբողջովին ապստամբած Կուբանի միջով։

— Իսկ ես ասում եմ, որ չպետք է միանանք մեր գլխավոր ուժերի հետ...

— Իսկ որտե՞ղ են այդ գլխավոր ուժերը։ Չլինի՞ թե հատուկ սուրհանդակի ձեռքով լուր ես ստացել. մեզ էլ հաղորդիր։

— Ես ասում եմ Նովորոսիյսկը գրավենք ու մնանք այնտեղ, մինչև որ Ռուսաստանից օգնություն կհասնի։

Նրանք խոսում են, իսկ ամեն մեկը ինքն իրեն ասում է. «Եթե ինձ հանձնեին ամբողջ գործը, ես շատ լավ ծրագիր կկազմեի և բոլորին կփրկեի.....

Դարձյալ հեռվից հրացանի չարագուշակ ձայն լսվեց՝ գետի գիշերային աղմուկը ծածկելով. քիչ հետո կրկնվեց, մի անգամ էլ, և հանկարծ սկսեց թափվել ինչպես մաղից և ապա դադարեց։

Ամենքը գլուխները շուռ տվին դեպի անշարժ. սև պատուհանները։

Պատի ետևը, շատ մոտ, թե տանիքի տակից, կանչեց աքլորը։

— Ընկեր Պրիխոդկո,— ծնոտները բաց արեց Կոժուխը,— գնացեք, իմացեք ինչ է պատահել այնտեղ։

Ջահել, միջահասակ կուբանցի մի կազակ, գեղեցիկ դեմքով, մի քիչ չեչոտ, պինդ կապած բեշմետով՝ ոտաբոբիկ զգույշ դուրս գնաց։

— Իսկ ես ասում եմ, որ...

— Ներեցե՛ք, ընկե՛ր, այդ բոլորովին անթույլատրելի բան է,— ընդհատում է մաքուր սափրված մեկը, հանգիստ կանգնած, վերևից նրանց նայելով. սրանք ամենքը պատերազմի ժամանակ սպա դարձած գյուղացի զինվորներն են, որոնք կամ ատաղձագործ են եղել, կամ ատաղձագործ, կամ վարսավիր, իսկ ինքը զինվորական կրթություն ունի և հին հեղափոխական է, բոլորովին անթույլատրելի է զորքը այդ դրության մեջ տեղից շարժել. այդ նշանակում է՝ կորստի մատնել նրան. այս զորք չէ, այլ միտինգ անող խուժան։ Անհրաժեշտ է վերակազմել։ Բացի դրանից տասնյակ հազար փախստականների սայլերը մեր ոտ ու ձեռքը կաշկանդում են։ Անհրաժեշտ է անջատել նրանց զորքից. թող գնան՝ ուր ուզում են, կամ թող տուն վերադառնան։ Զորքը պետք է բոլորովին ազատ լինի և չկաշկանդված։ Գրեցեք հրաման. «Երկու օր մնում ենք ստանիցայում վերակազմության համար»։

Նա խոսում էր, իսկ խոսքերը քողարկում էին նրա մտքի ընթացքն ու լեզուն. «Ես մեծ գիտություն ունեմ՝ տեսականն ու գործնականը միասին, մանրամասն ուսումնասիրել եմ ռազմական գործի պատմությունը։ Ինչո՞ւ պետք է նա լինի և ոչ թե ես։ Ամբոխը կույր է և միշտ ամբոխ կմնա»։

— Ապա ի՞նչ եք ուզում,— ժանգոտ երկաթի ձայնով խոսեց Կոժուխը,— ամեն մի զինվոր մթերասայլերի հետ կամ մայր, կամ հայր, կամ հարս, կամ ընտանիք ունի. մի՞թե կթողնի նրանց։ Եթե այստեղ նստած մնանք— կգան, բոլորին կկոտորեն։ Պետք է գնալ և գնալ։ Ճանապարհին կվերակազմվենք։ Պետք է շուտով անցնենք քաղաքի մոտով, առանց կանգ առնելու, պետք է գնալ ծովի ափով, մինչև որ Տուապսե հասնենք, այնտեղ խճուղով կանցնենք գլխավոր լեռնաշղթան և կմիանանք մեր գլխավոր ուժերի հետ։ Նրանք շատ հեռու չեն գնացել։ Իսկ այստեղ ամեն օր մահ է սպառնում մեզ։

Ապա ամենքը միանգամից սկսեցին խոսել, և ամեն մեկը իր կարծիքով՝ հրաշալի, իսկ ուրիշների կարծիքով անպետք ծրագիր ուներ։

Կոժուխը վեր կացավ, երկաթե խլերը խաղացնելով և սուր ծակելով իր մանրիկ պողպատագույն աչքերով, ասաց.

— Վաղը... լուսաբացին ճանապարհ ենք ընկնում...։

Եվ մտածեց. «Չեն կատարի, գարշելիները...»

Բոլորն էլ ակամա լռեցին, և այդ լռության միտքն էր. «Հիմարին ի՞նչ օրենք...»

4

Երբ Պրիխոդկոն դուրս գնաց, ջրի աղմուկը սաստկացավ և լցրեց ամբողջ խավարը։ Դռան մոտ սև հողի վրա մութ և ցածր գնդացիր կա կրած։ Նրա կողքին երկու մութ դեմքեր են կանգնած մութ սվիններով։

Պրիխոդկոն գնում է, ուշադրությամբ նայելով։ Ամբողջ երկինքը ծածկված է տաք և աներևույթ ամպերով։ Հեռվում, զանազան կողմերում, համառ, անդադար, տարբեր ձայներով շներ են հաչում։ Լռում են, ականջ են դնում. գետն է, որ աղմկում է, և դարձյալ սկսում են հաչել անվերջ, տաղտկալի։

Աղոտ սպիտակ բծերի պես աչքի են ընկնում անտեսանելի տները։ Փողոցում սև կույտեր են դիզված. նայում ես ուշադրությամբ,— սայլեր են. լսելի է թունդ խմփոց և բնածների բարձր շնչառություն թե սայլերի տակից և թե սայլերի միջից. ամեն տեղ մարդիկ են թափված։ Փողոցի մեջտեղում սևին է տալիս մի բան, որ ոչ բարդի է, ոչ էլ զանգակատուն. նայում ես մոտից՝ սայլի բարձրացրած լծափայտն է։ Ձափով և լսելի ծամում են ձիերը, տնքում են կովերը։

Ալեքսեյն զգույշ քայլում է մարդկանց միջով, մի վայրկյան լուսավորելով ծխախոտով։ Հանգիստ է և խաղաղ, բայց սպասում ես մի բանի, մի հեռավոր հրացանի ձայնի, և որ նորից կկրկնվի՞։

— Ո՞վ է։

— Մերոնցից եմ։

— Ո՞վ է, ասում եմ։

Հաղիվ նշմարելի երկու սվին դիպան ձեռքին։

— Վաշտապետ,— և կռանալով՝ շշնջալով ավելացրեց.— «Լաֆետ»։

— Ճիշտ է։

— Պատասխա՞նը։

Զինվորը, իր կոշտ բեզերով նրա ականջը խոզոտելով, խոսում, շշնջում է.

— «Ջիսկապ»,— իսկ բեղերի տակից օղու սաստիկ հոտ է փչում։

Նա առաջ է գնում շարունակ. սև-անտարբեր սայլակներ, ծամող ձիեր, քնածների շնչառություն, ոչ մի րոպե չընդհատվող ջրի աղմուկը, համառ և ուժասպառ շան հաչոց։ Զգույշ անցնում է ձեռքերի և ոտքերի վրայով։ Տեղ-տեղ սայլերի տակ անքուն զինվորները զրույց են անում իրենց կանանց հետ, իսկ ցանկապատերի տակ՝ գաղտուկ ծիծաղ, զսպված ճիչեր— սիրեկանների հետ։

«Խելքի են եկել, բայց էլի հարբած են, նզովից արմատները։ Կազակների բոլոր գինին լակել են։ Լակեցեք, բայց գոնե խելքներդ մի կորցրեք։ Զարմանալի է, որ կազակները մինչև հիմա մեզ չեն՞կոտորել։ Տխմարնե՛ր...»։

«Սպիտակին տվեց մի բան... նեղ խրճի՞թ, թե՞ սպիտակ քաթան, որ խավարի մեջ փայլեց։

«Հիմա էլ ուշ չի. մարդագլուխ տասը փամփուշտ էլ չի ճարվի, ամեն մի թնդանոթի՝ տասը-տասնհինգ արկ, իսկ նրանք ամեն ինչ ունեն»։

Սպիտակը շարժվեց։

— Ա՛նկա, գո՞ւ ես։

— Իսկ գու ի՞նչ ես գիշերները թափառում։

Մի մուգ գույնի, երևի սև, ձի ծամում է լծափայտի մոտ թափված խոտը ... Նա սկսեց նոր ծխախոտ շինել։ Անկան, սայլակից բռնած՝ մի բոբիկ ոտով մյուս ոտը քորեց։ Սայլի տակ մի փալաս էր փռված, և լսվում էր թունդ խոմփոց. հայրն էր քնած։

— Շա՞տ ենք նստելու էստեղ։

— Շուտով,— և ծխախոտ քաշեց։

Լուսավորվեց նրա քթի ծայրը, մատների ծխախոտագույն ծայրերը. աղջկա աչքերի կայծերը, սպիտակ շապիկից դուրս եկող փարթամ վիզը, ուլունքի մանյակը, հետո դարձյալ՝ վայրկենական խավար, սայլերի անճառնի գծեր. կովերը տրնքում են, ձիերը ծամում, և գետն աղմկում։ Ինչո՞ւ հրացանի ձայն չի լսվում։

«Ի՞նչ կլինի ամուսնանամ սրա հետ»...

Եվ անմիջապես, ինչպես լինում է այդ, աչքին երևում է մի անծանոթ աղջկա ցողունի պես բարակ վիզը, կապույտ աչքերը, քնքուշ կապտագույն թափանցիկ զգեստը... գիմնազիան ավարտած... Նույնիսկ ոչ թե իբրև կին, այլ հարսնացու... Մի աղջիկ, որին նա երբեք չի տեսել, բայց որը մի տեղ գոյություն ունի։

— Եթե կազակները գան, ես ինձ կսպանեմ։

Նա ձեռքը տարավ ծոցը և այնտեղից աղոտ փայլով մի բան հանեց.

— Սո՞ւր է... փորձիր։

— Տի-լի-լի-լի՛։

Գիշերային մի տարօրինակ հեռացող, սիրտ ճմլող ձայն, բայց ոչ մանկական լացի ձայն. երևի բվեճ էր։

— Դե՛, պետք է գնալ, թեև գալու ժամանակ չէ։

Բայց ոչ մի կերպ չի կարողանում տեղից շարժվել, կարծես ոտները կպել են գետնից։ Եվ որպեսզի պոկ գա, մտածում է. «Կովի նման ոտքով քորեց ականջի ետևը...»։

Բայց այդ չի օգնում. նա կանգնած է, ծխում է, և դարձյալ մի վայրկյան խավարից հառնում են քթի ծայրը, մատները, աղջկա փարթամ վիզը փոսիկով, մանյակը և ասեղնագործած սպիտակ զգեստով պատած ջահել կուրծքը, ապա նորից խավար, գետի գոռոցը և մարդկանց շնչառությունը։

Դեմքը մոտ է նրա աչքերին։ Ասեղներ ծակծկելով ցրվեցին մարմնում։ Բռնում է նրա թևը։

— Անկա՛...

Նրանից ծխախոտի և ջահել, առողջ մարմնի հոտ է գալիս։

— Ա՛նկա, գնանք այգիները մի քիչ նստենք։

Անկան երկու ձեռքը դեմ տվեց նրա կրծքին և այնպես հրեց, որ նա տատանվեց և ետ գնաց, ետևում տրորելով մի-կի ձեռներն ու ոտները։ Սպիտակը շտապ-շտապ ցատկեց ճռճռացող սայլակը, լսվեց մի հրապուրիչ կարճ ծիծաղ և հանդարտվեց, իսկ Գարպինա տատը դուրս բերեց վրայից

բարձրացրեց, նստեց սայլի մեջ և կատաղած սկսեց իրեն քորել։

— Ո՜-ո՜ւ, գիշերաշրջիկ... ե՞րբ ես խելքի գալու։ Ո՞վ ես դու։

— Ե՛ս եմ, տատի՛։

— Ա՜, Ալյոշենկա, դո՞ւ ես։ Չճանաչեցի։ Ի՞նչ է պատահել, սիրելի՛ս։ Օ՜յ, փորձանք է գալու գլուխներիս։ Սիրտս զգում է։ Երբ որ դուրս էինք գալիս, մի սև կատու անցավ ճանապարհով, մի մեծ հաստափոր կատու, իսկ նրանից հետո՝ մի նապաստակ, տե՛ր իմ աստված։ Լա՜վ, ի՞նչ են մտածում բոլշևիկները։ Ունեցած-չունեցածներս թողինք։ Երբ ինձ մարդու էին տալիս իմ ծերուկին, մայրս ասաց. առ էս ինքնաները, աչքիդ լույսի պես կպահես. երբ որ մեռնելու լինես, կտաս որդիներիդ ու թոռնիկներիդ։ Երբ Անկային մարդու տամ՝ նրան կտամ։ Իսկ հիմա ամեն ինչ թողինք, ամեն ինչ կորցրինք։ Ի՞նչ են մտածում բոլշևիկները, ի՞նչ է անելու խորհրդային իշխանությունը։ Թող կորչի՛ այդպիսի իշխանությունը, ոնց իմ ինքնաեռը կորավ։ Ասում էին, թե երեք օրով ենք գնում, իսկ երեք օրից հետո ամեն ինչ իր տեղը կլինի, բայց ահա արդեն մի ողջ շաբաթ է թափառում ենք նզովվածների պես։ Էլ ի՞նչ խորհրդային իշխանություն։ Կազակներն էլ ոտի էին կանգնել կռապաշտների պես... Ափսոս մերոնք, Օխրիմը, էն մյուսն էլ, ինչ ջահե՛լ էր։ Է՛-է՛-է՛հ, տե՛ր իմ աստված...

Գարպինա տատը շարունակ քորում էր իրեն և երբ լռեց, մոռացված գետը իրեն հիշել տվեց. աղմուկ է հանում, անհուն գիշերը լցնում։

— Է՛-է՛, տատի՛, գանգատվելուց խեր չկա։

Նորից ծխեց, մտածելով՝ վաշտի հետ մնա, թե շտաբը մտնի։ Երբ և որտե՞ղ կպատահի կապույտ աչքերի և բարակ վզի։

Բայց տատն էլ երբեք չի հանգստանա։ Ստվերի պես երկար կյանք է անցել։ Ծանր էր։ Երկու տղան տաճկական ճակատումն են սպանվել. երկուսն էլ այստեղ են զորքի մեջ։ Ծերուկը խոմփում է սայլի տակ, իսկ այս կաշաղակը սուս է կացել, երևի քնած է, ո՞վ գիմանա։ Օյ, դժվար բան է... Հոգին դուրս է եկել՝ հիսունն անց է արդեն։ Թե որդիքը՝ մեջքները կոտրվել է աշխատելուց։ Իսկ ո՞ւմ համար են աշխատել։ Կազակների և նրանց գեներալների, ոֆիցերների համար։ Բոլոր հողը նրանցն էր, իսկ դրսից եկածը ոնց որ շուն... Օ՜, ծանր էր, ծանր էր... Շարունակ աշխատում էին, աչքները գետնին, եզան նման։ Առավոտ, երեկո, ամեն օր աղոթքներում թագավորներին էր հիշում, ծնողներին, հետո թագավորին, հետո երեխաներին, հետո բոլոր ուղղափառ քրիստոնյաներին։ Բայց նա թագավոր չէր, այլ մի մոխրագույն շուն, որին վայր գլորեցին։ Սկզբում, երբ լսեց, որ թագավորին գլորել են, սարսափից ծնկներ ըթուլացան։ Իսկ հետո՝ այդպես էլ պետք էր. շուն է ու շուն։

— Ինչքան լու կա այս գիշեր։

Եվ տատին նորից սկսեց քորվել։ Հետո նայեց խավարին. գետը աղմկում էր. նա երեսը խաչակնքեց.

— Երևի շուտով կլուսանա։

Պառկեց, բայց քունը չի տանում. ամբողջ կյանքը կանգնած է, ինչպես ստվերը մարդու գլխին, չես կարող ազատվել նրանից — լուռ կանգնած է, կարծես չկա, բայց թե ամբողջովին աչքիդ առաջ է։

— Բոլշևիկները աստծուն չեն հավատում. հետո ինչ։ Երևի գիտեն, թե ինչ են անում. եկան միանգամից. կալվածատերերն ու սպաները իսկույն փախան։ Կազակներն էլ այդ պատճառով կատաղել են, աստված դրանց առողջություն տա, ի՞նչ արած, որ աստծուն չեն հավատում. ինչ էլ որ լինի, մերոնք են, բասուրմաններ հո չեն։ Եթե առաջ դուրս եկած լինեին, այս անիծյալ պատերազմը չէր լինի, և իմ որդիքս էլ կենդանի կլինեին։ Տաճկաստանում ոչինչ չկա... որտեղի՞ց բուսան էդ բոլշևիկները։ Ասում են՝ Մոսկվայումն են առաջ եկել, ուրիշներն էլ ասում են՝ Գերմանիայում. գերմանացոց թագավորն է հնարել և Ռուսաստան ուղարկել։ Իսկ նրանք հենց որ եկան, մի բերան գոռում էին՝ հո՛ղ, հո՛ղ, հո՛ղ տվեք մարդկանց, որպեսզի աշխատեն իրենց համար և ոչ թե կազակների։ Լավ մարդիկ են, բայց ինչի՞ նրանք իմինքնա...քն... քնած...որդի...կայ...քո...կատու...

Պառավը նիրհեց, գլուխը վայր գցեց. երևի վերջալույսը մոտ է։

Ամեն մարդ իր ցավն ունի, իր ուրախությունը։ Սայլի տակ, բոլորովին կպած ցանկապատին, կարծես թե տատրակ է մնչում։ Եվ որտեղի՞ց կարող է գիշերը սայլի տակ, ցանկապատի մոտ, տատրակ մնչալ և փոքրիկ բերանով փուչիկներ բաց թողնել. «Վվվա՜-վա՜», «ուո՜-վվա՜-վա՜», բայց երևի կա մեկը, որի համար դա քաղցր է, և մի անուշ, հրծքից հնչող, մայրական ջահել ձայն նույնպես մնչում է.

— Դե՛, անուշի՛կս, դե՛, աղոռնի՛կս, կե՛ր, ահա՛, ա՛ռ։ Ինչի՞ չես առնում։ Տես, ոնց ենք գլուխներս շուռ տալիս ու մայրիկի ծիծը բռնում։

Եվ ծիծաղում է այնպիսի երջանիկ, վարակիչ ծիծաղով, որ չորս կողմը լուսավորվում է։ Չի երևում, բայց անշուշտ հոնքերը սև են, և փոքրիկ ականջներին սևացած արծաթե օղեր ունի։

— Չե՞ս ուզում, փափվի՛կ։ Տես ի՞նչ բարկացկոտն է, ոնց է մայրիկի ծիծիկը սեղմում իր թաթիկներով։ Իսկ եղունգները՝ տես ծխախոտի թուղթ լինեն... Բեր մեկ-մեկ համբուրեմ մատիկներդ, էս մեկ, էս երկու, էս երեք։ Օ՜օ՜, ինչ փուչիկներ է բաց թողնում։ Մեծ մարդ է դառնալու։ Իսկ մայրիկը պառկած կլինի, աչքերը թափած, և որդին կասի.— Դե՛, պա՛ռավ, նստիր սեղանի մոտ, ես քեզ կաշա և սալամաթ կուտեցնեմ։ Ստեփա՛ն, Ստեփա՛ն, ի՞նչ ես քնել, վեր կաց, տես՝ աղաղ քեֆ է անում։

— Սպասի՛ր, ֆո՛ւ... Ջեռք մի տուր, թո՛ղ... Քունս տանում է...

— Ա՛յ Ստեփան զարթիր, տուում եմ, տղաղ քեֆ է անում։ Ի՞նչ անեցաղն ես։ Վերցրու երեխային։ Քաշի՛ր, որդիս, դրա քիթը, շրթունքը, քաշիր, այ էդպես, էդպես։ Հերդ դեռ ոչ միրուք ունի, ոչ էլ բեղեր, դու էլ նրա շրթունքները, շրթունքները քաշիր։

Իսկ խավարի մեջ նախ քնաթաթախ, իսկ հետո նույնպես ուրախ-ժպտաձայն լսվում է.

— Դի՛, պառկի՛ր, պառկի՛ր, տղա՛ս, ինձ մոտ, կնկա հետ գործ չունես, մենք մուժիկ ենք։ Միասին պատերազմ կգնանք, միասին էլ կաշխատենք, վար ու ցանք կանենք... Հող կմշակենք... է՛, էս ի՞նչ ծով արիր տակս...

Իսկ մայրը ծիծաղում է անասելի ուրախ զնգզնգան ծիծաղով։

Պրիխոդկոն գնում է, ոգուշ քայլելով ոտքերի, լծափայտերի, անուղների, տոպրակների վրայով, երբեմն լուսավորելով ծխախոտով։

Արդեն ամեն ինչ լռել է, ամեն տեղ մութն է։ Եվ նույնիսկ սայլի տակ՝ ցանկապատի մոտ, խաղաղ է։ Շները լուռ են։ Միայն գետն է գոռում-գոչում, բայց նրա աղմուկն էլ է հանդարտվել, մի կողմ քաշվել, և ահագին քունը հավասարաչափ շնչառությամբ պատել է տասնյակ հազարավոր մարդկանց։

Պրիխոդկոն քայլում է, էլ չի սպասում կրկնվող հրացանի ձայների, աչքերը փակվում են. ասրերի անհարթ ծայրերը քիչ-քիչ սկսում են նշմարվել։

«Բայց չէ՞ որ հենց լուսաբացին են հարձակվում»...

Գնաց, հաղորդեց Կոժուխին, հետո մթության մեջ մի սայլ ճարեց, մտավ մեջը, սայլը ճռճռաց և տատանվեց։ Ուզում էր մտածել... Հա՛, ինչի՞ մասին, խփվող աչքերը փակեց և սկսեց քաղցր նիհրել։

5

Երկաթի զնգոց, ճայթյուն, շառաչյուն, աղաղակներ... Տա՜-տա՜-տա՜-տա՜...

— Ո՞ւր, ո՞ւր Սպասի՛ր...

Այդ ի՞նչ է ամբոզջ երկինքը բռնել ու վառվում. հրդեհ է թե արշալույսն է։

— Առաջին վաշտ, վա-աղ-քո՜վ։

Ծուլաշների սև եռամակների խլացուցիչ ճիչերով անվերջ ճախրում են կարմիր երկնքում։

Ամեն տեղ գորշ լուսադեմին հագցնում են ձիերի անասուները, ամրացնում լծազեղները։ Փախստականներն ու սայլերի զինվորները, լծափայտերը վայր գցելով, իրար են գիպչում ու կատաղի հայհոյում են մթությանց...

... Բո՜ւմմ, բո՜ւմմ...

... Տենդոտ արագությամբ լծում են, սուսակներն են իրար կպչում, ձիերին ծեծում և ճայթյունով խորտակվելով, դուրս

թռչող անիվներով խելակորույս սլանում են կամրջով, ամեն րոպե ճանապարհը կտրելով...

... Տրա-տա՛-տա՛-տա՛... բո՛ւմմ... բո՛ւմ...

Բադերը տափաստան են թռչում կերակրվելու... ...Կանայք հուսահատ վայնասուն են բարձրացրել... Տա՛-տա՛-տա՛-տա՛...

Թնդանոթաձիգները լծափոկերը փոկակալների վրա են հագցնում տենդոտ։

Աչքերը չռած, միայն մի կարճ գիմնաստյորկա հագին, առանց վարտիքի, մազմզոտ ոտներով մի զինվոր վազում է, երկու հրացան քարշ տալով, և բղավում է.

— Որտե՞ղ է մեր վաշտը, որտե՞ղ է մեր վաշտը։

Իսկ նրա ետևից մի կին է լեղապատառ բղավում.

— Վասի՛լ... ա՛յ Վասիլ, ա՛յ Վասիլ...

Տա՛-տա՛-տրա՛-տա՛-տա՛...բո՛ւմմ...բո՛ւմ...

Ահա՛, արդեն սկսվեց. ստանիցայի ծայրում, տները, ծառերի վրա արագ-արագ բարձրանում են ծխի վիթխարի սյուները։ Անասունները բառաչում են։

Մի՞թե գիշերը վերջացավ։ Մի՞թե դեռ նո՞ր չէր խավար տիրում և տասնյակ հազարների քնած շնչառություն լսվում և գետը անվերջ աղմկում, և մի՞թե սարերի անորոշ ստվերներ չկի՞ն այնտեղ հեռու երևում։

Իսկ այժմ նրանք ոչ սև են և ոչ կապույտ, այլ վարդագույն և, սքողելով նրանց, սքողելով գետի նվաղած աղմուկը, սայլախմբի գոռգոռոցն ու ճարճատյունը դղրդում է և սառնություն լցնում մարդու ճմլվող սիրտը։

... Ո՛ռ՛ռ՛...տրա՛-տա՛-տա՛-տա՛...

Բայց այդ բոլորը չնչին բան է թվում, երբ օդը ճեղքելով դուրս է պրծնում ցնցող դղրդյունը.

... Բրա՛-բա՛հ...

Կոժուխը նստած է տան առաջ։ Դեմքը հանգիստ դեղին է. երկաթուղով, կարծես գնացող կա, և բոլորն էլ իրար անցած շտապում են, իսկ գնացքը մեկնելուց հետո ամեն ինչ դարձյալ խաղաղ կլինի, հանգիստ կլինի, ինչպես միշտ։ Ամեն րոպե ձիով թե ոտքով զեկուցումներ են բերում նրան։ Մոտը պատրաստ կանգնած են ադյուտանտն ու սուրհանդակները։

Արևը բարձրանում է. հրացանների և գնդացիրների տրաքոցն անտանելի է դառնում։

Իսկ նա բոլոր զեկուցումների համար մի պատասխան ունի.

— Փամփուշտները խնայեք, խնայեցեք ձեր աչքի լույսի պես. միայն ամենածայրահեղ դեպքում գործածեք։ Մոտ թողեք և գրոհ տվեք։ Թույլ չտաք, որ այգիներին մոտենան, թույլ չտաք։ Վերցրեք երկու վաշտ առաջին գնդից, ետ առեք աղորիքները, գնդացիրներ դրեք այնտեղ։

Ամեն կողմից վազում են նրա մոտ տագնապալից զեկուցումներով, իսկ նա շարունակ հանգիստ է և դեղին, միայն երկաթի խլերն են այտերի վրա խաղում, և մեկը, ներսից, ուրախ կրկնում է՝ «Այդպե՛ս, տղե՛րք, այդպե՛ս...»։ Գուցե, մի ժամից հետո, կես ժամից հետո կազակները խուժեն և բոլորին տեղն ու տեղը կոտորեն։

Այո՛, նա այդ գիտե, բայց նա տեսնում է նաև, թե ինչպես հլու և հնազանդ թե վաշտերը և թե գումարտակները կատարում են հրամանները, թե ինչպես կատաղի կռվում են այն գումարտակներն ու վաշտերը, որոնք դեռ երեկ անիշխանաբար երգեր էին բառում և թե հրամանատարներին, թե իրեն բանի տեղ չէին դնում, այլ միայն խմում էին և կանանց ետևից էին ընկած. նա տեսնում է, թե ինչպես ճշտիվ կատարում են իր կարգադրությունները հրամանատարները, այն հրամանատարները, որոնք դեռ այս գիշեր այնպես միահամուռ արհամարհանքով էին վերաբերվում իրեն։

Մի զինվոր բերին, որին կազակները բռնել և բաց էին թողել։ Կտրել էին նրա քիթը, ականջները, լեզուն, կտրտել էին մատները, իսկ կրծքի վրա հենց իր արյունով գրել էին՝ «Ձեզ բոլորիդ էլ այսպես կանենք, ձեր մերը»...

«Այդպե՛ս, տղե՛րք, այդպե՛ս»...

Կազակները կատաղի գրոհ են տալիս։

Բայց երբ թիկունքից մարդիկ եկան վազելով և շնչասպառ ասացին.

— Այնտեղ կամուրջի առաջ կռիվ է սկսվել...— նա կիտրոնի պես դեղնեց,— կռիվ է սկսվել սայլախմբի և գաղթականների միջև...

Կոժուխը այնտեղ սլացավ։ Կամուրջի առաջ տուրուդմփոց էր. կացիններով իրար անիվներն էին ջարդում, մտրակներով և բրերով իրար թակում. աղմուկ, ճիչ, կանացի մահասարսուռ ծվծվոց, երեխաների լաց... Կամուրջի վրա ահռելի խռնվածք է. սոնակներն իրար կպած սայլեր, լծափոկերի մեջ խճճված խռմփացող ձիեր, սեղմված մարդիկ, սարսափից բղավող երեխաներ։ Տրա՛-տա՛-տա՛... այգիների ետևից... Ոչ առաջ կարելի է շարժվել, ոչ էլ ետ։

— Սպասե՛ք, սպասե՛ք,— խոպոտ երկաթի զրնգոցի ձայնով գոռում էր Կոժուխը, բայց ինքն էլ չէր լսում իր ձայնը։ Մոտակա ձիու ականջին արձակեց ատրճանակը։

Նրա վրա հարձակվեցին բրերով։

— Հա՛... սատանի փայ։ Հայվանի՞ն ես սպանում... Տվե՛ք դրան...

Կոժուխը, որին դեպի գետն էին սեղմել, աղյուսանտի և երկու զինվորի հետ նահանջում էր, իսկ գլխի վրա բրերն էին ղղրդում։

— Գնդացիր...— խոխոցաց Կոժուխը։

Աղյուսանտը ձկան պես ծլկեց սայլերի, ձիերի փորերի տակով։ Մի րոպեից հետո մի գնդացիր մոտ բերին, և վազելով հասավ մի զորախմբակ։

Մուժիկները վիրավորված եզների պես գոռացին.

— Մա՛հ այդ հուդաներին,— և սկսեցին բրերով հրացանները ձեռքներիցն առնել։ Զինվորները հրացանների կոթերով էին պաշտպանվում. հո չէին կարող իրենց հայրերի ու մայրերի, կանանց վրա կրակել։

Կոժուխը վայրի կատվի պես ցատկեց գնդացրի մոտ, մտցրեց ժապավենը և՝ տա՛-տա՛-տա՛, հովհարի ձևով գլխների վրայով, և մահվան քամին երգելով շարժեց մարդկանց մազերը։ Մուժիկները ետ քաշվեցին։ Իսկ այգիների ետևն առաջվա պես՝ տա՛-տա՛-տա՛... բո՛ւմմ... Այնտեղ էլ իր կարգին։

Կոժուխը դադարեց կրակել և սաստիկ գոռալով սկսեց սոսկալի հայհոյանքներ թափել։ Այդ միանգամից հանգստացրեց։ Հրամայեց գետը ձգել այն սայլերը, որ չէր կարելի իրարից բաժանել։ Մուժիկները հնազանդվեցին։ Կամուրջը մաքրեցին։ Կամուրջի առաջ մի զորախումբ կանգնեց հրացանները ձեռքներին, իսկ աղյուսանտը սկսեց հերթով բաց թողնել անցկացողներին։

Սայլերը սլանում էին կամրջով երեք-երեք ամեն շարքում. պոզերը շարժելով վազում էին թոկով կապած կովերը, սոսկալի ճվճվոցով և թոկերը ձիգ քարշ տալով փախչում էին խոզերը. կամրջի տախտակները ղղրդում էին և վեր-վեր թռչում ստեղների նման, և դղրդյունը կլանում էր գետի աղմուկը։

Արևը բարձրանում է ավելի ու ավելի։ Ջրի անտանելի փայլը աչք է կուրացնում։

Գետի մյուս կողմը լայն շերտով կառախմբերն են վազում , փոշու ամպերի մեջ կորչելով հետզհետե ամայանում են հրապարակները, փողոցները, ամբողջ ստանիցան։

Մի վիթխարի աղեղի ձևով, որի ծայրերը հենված են գետին, կազակները շրջապատել էին ստանիցան, և ամեն րոպե լսվում էր հրացանների ճարճատյունը։ Աղեղը հետզհետե ավելի ու ավելի նեղանում է, ավելի ու ավելի են սեղմվում նրա մեջ ստանիցան, այգիները, սայլախմբերը, որ անընդհատ փախչում են կամրջով։ Զինվորները հանգիստ կռվում են, պաշտպանում են հողի ամեն մի թիզը, կռվում են իրենց երեխաների, հայրերի, մայրերի համար, խնայում են ամեն մի փամփուշտ, սակավ են կրակում, բայց ամեն մի արձակածը կազակի որբեր է թողնում, լաց ու արցունք է ծնում կազակ ընտանիքներում։

Կազակները կատաղի վրա են տալիս. տափաստանը ցիր ու ցան դիակներով է ծածկված. մոտ է, շատ մոտ է նրանց շղթան։

Իսկ երեկոյան հանկարծ խառնիխուռն, հրացանները մահակների նման պտույտ տալով, վրա թափվեցին։ Եվ ոչ թե «ուռա» կամ սիրած առաջնորդների անուններն էին հնչում նրանց գլխավերևում, այլ թունդ, անասելի հիշոցներ... ձեր մերը, մե՛րը, մե՛րը... Հասան զինվորներին, հանկարծ դեն շպրտեցին հրացանները և գազանացած եզի աչքերով, սեղմած բռունցքներով նրանց վրա հարձակվեցին։

Եվ հոգեկան վարակման մի տարօրինակ բնազդով զինվորներն էլ դեն գցեցին իրենց հրացանները և բռունցքներով կատաղած հարձակվեցին կազակների վրա։ Անասնաբար հայհոյելով իրար ոռնում էին ջարդում, խփում էին քթին, աչքերին,

բողազին, ծնոտին, հևալով, ճրթճրթալով, թանչելով, և գարբողազին, ծնոտին, հևալով, ճրթճրթալով, թանչելով, և գարշահոտ մշուշի նման ամեն ինչ ծածկում էր աննկարագրելի հիշոցը։

Կազակ սպաները և զինվորների հրամանատարները, խոպոտ գոչյունից հալից ընկած, վազվզում էին ատրճանակները ձեռներին, զուր ջանալով իրարից բաժանել և ստիպել զենք ձեռք առնել. սակայն չէին համարձակվում կրակել. ահագին տարածության վրա պտույտ էր գալիս մի չտեսնված մարդկային կծիկ, և անտանելի վատ օդու հոտ էր փչում։

— Ա՜, սրիկաներ...— բղավում էին զինվորները,— լափել եք, լակել և առյուծ կտրել... ձեր մերը, մե՛րը, մե՛րը...

— Իհարկե, ձեր պես խոզերի համար չի էդ սուրբ խմիչքը... Ձեր մերը, մե՛րը, մե՛րը...— բղավում էին կազակները։

Եվ նորից հարձակվում էին իրար վրա։ Մոլեգնաբար գըրկում էին իրար՝ քթերը ջարդում, և որտեղ հասնում էր, բռունցքներով անվերջ խփում էին։ Վայրագ, կատաղի ատելությունը թույլ չէր տալիս մտաբերել զենքը, թույլ չէր տալիս, որ իր ու թշնամու միջև մի ուրիշ բան լինի, ուզում էին ջարդել, տրորել, խեղդել, զգալ անմիջապես իրենց բռունցքի հարվածի տակ թշնամու արյունաշաղախ դունչը, և ամեն ինչ ծածկվում էր թունդ հիշոցով և նույնքան էլ թունդ օդու անտանելի հոտով։

Մի ժամ, երկու ժամ, նույն մոլեգին տուրուդմփոցը, նույն մոլեգին հիշոցները։ Ոչ ոք չնկատեց, թե ինչպես մթնեց։ Մի զինվոր և մի կազակ խավարի մեջ հայհոյելով և տնքալով երկար ժամանակ իրար թակում էին, բայց մի բոպե բաժանվեցին և նայեցին իրար.

— Օպանաս, այդ դո՞ւ ես պա՜հ, ես քո մե՛րը... Ի՞նչ ես թակում ինձ, կարծես ցորենի խուրձ եմ կալում։

— Դո՞ւ ես, Միկոլկա... Ես կարծում էի, թե կազակ ես։ Անիրավ լակոտ, քիթ ու պռունգս արյունլվա արիր, հո թագավորական չի։

Արյունոտված դեմքերը սրբելով, հայհոյելով, դանդաղ գնում են իրենց տեղերը շղթայում և մթության մեջ իրենց հրացաններն են փնտրում։

Իսկ կողքին երկու կազակ երկար տնքտնքալով, իրար

գնքսում էին բռունցքներով, հերթով իրար էին հեծնում, հետո նայեցին իրար։

— Ի՞նչ ես հեծնում վրաս, քո էսպեսն ու էնպեսը, կարծես քավթառ ձի լինեմ։

— Այդ դո՞ւ ես, Գարասկա։ Բա ինչի՞ չէիր ասում, հենց գժվածի պես հայհոյում ես. իսկ ես կարծում էի զինվոր ես։

Եվ արյունը սրբելով, գնացին կազակների թիկունքը։ Վերջապես ընդհատվեցին գարշելի հիշոցները, և նորից լսելի եղավ գետի աղմուկն ու կամրջի տախտակների թխկթխկոցը. սայլերն են անվերջ ընթանում և հանգչող հրդեհից սև ամպերի եզրերն են բոսորագույն երևվում։ Այգիների երկարությամբ զինվորների շղթան է տարածված, իսկ շուրջը՝ տափաստանում, կազակների շղթան։ Լուռ հսկում էին իրար։ Կամուրջն է շարունակ թրմփթրմփում, գետն է գոռում։ Առավոտյան դեմ ստանիցայից հեռացան։ Վերջին էսկադրոնն էլ անցավ, և կամուրջը կրակ տվին, իսկ գնացողների ետևից ամբողջ ստանիցայից հրացանաձգություն սկսվեց, գնդացիրները ճրթճրթացին։

6

Ստանիցայի փողոցներով երգեր ասելով, ձիգ կապած չերքեզկաների երկայն քղանցքները ծածանելով, անցնում են կազակները, պլաստունյան գումարտակները. սև փոշոտ փափախների վրա ժապավեններ են սպիտակին տալիս։ Իսկ դեմքերը զարդարված են՝ մեկի աչքն է ուռած ու կապտած, մյուսի քթի փոխարեն արյունազանգ մսագունդ է. մեկի թուշն է ուռած, մյուսի շրթունքներն են փքված բարձի պես. ոչ մի կազակ չկա, որ դեմքի վրա կապտած տեղեր չլինեն։

Բայց ուրախ, խռնված են գնում, և ոտքերի տակից բարձրացող փոշու մեջ հնչում է խրոխտ քայլվածքին համապատասխան երկաթահնչյուն մարշը.

Նրանք չցան-կա-ցան.
ապստամ-բե-ցին...—

թանձր, ուժգին արձագանք տալով այգիներում, այգիներից գենը, տափաստանում ստանիցայի վրա։

Կազակների կանայք դիմավորում են, ամեն մեկն իր ամուսնուն է փնտրում, ուրախ գիրկն է ընկնում, կամ հանկարծ ձեռքերը կոտրատելով աղաղակում է, ծածկելով երգի ձայնը, իսկ պառավ մայրը սպիտակ մազերն է փետում և ուշաթափվում է, և ուժեղ ձեռներ նրան խրճիթն են տանում։

... ապրս-տամբ-վե-ցին...

Կազակ երեխաները վազում են, տեսեք, որքան են նրանք և որտեղի՞ց դուրս եկան, չէ որ երբեք չէին երևացել, վազում են և բղավում.

— Հայրիկ... հայրիկ...

— Հորեղբայր Միկոլա... հորեղբայր Միկոլա...

— Կարմիրները մեր արջառը կերան։

— Իսկ ես մի զինվորի աչքը թափեցի նետաղեղով։ Հարբած քնած էր այգում։

Նախկինի փոխարեն այժմ մի ուրիշ բանակ է տեղավորվել փողոցներում, և երևում է, որ այդ բանակը իրենցն է. բոլոր բակերում արդեն ամառային խոհանոցներից ծուխ է բարձրանում։ Կազակ կանայք պատրաստություն են տեսնում։ Տափաստանից, ով գիտի որտեղից, պահած կովեր դուրս բերին, թռչուններ էլ բերին. եփում են, խաշում են, տապակում։

Իսկ գետի վրա մի ուրիշ աշխատանք է եռում, կացինները զարկում են, խլացնելով նույնիսկ գետի աղմուկը, արևի տակ պսպղալով ամեն կողմ սպիտակ տաշեղներ են թռչում՝ կազակները շտապով կամուրջ են շինում այրվածի փոխարեն, որպեսզի հասնեն թշնամու ետևից։

Իսկ ստանիցայում կազակներից նոր զորամասեր են կազմվում։ Սպաները դեսուդեն են ընկնում հուշատետրերը ձեռներին։ Հենց փողոցում, սեղանների վրա, գրագիրները ցուցակներ են կազմում։ Անուններն են ստուգում։

Կազակները նայում են ճեմող սպաներին, արևի տակ ճուսադիրներն են պսպղում։ Իսկ վաղո՞ւց է արդյոք, վեց-յոթ ամիս էլ չկա, որ բոլորովին ուրիշ տեսարան էր. հրապարակների վրա, ստանիցայի փողոցներում սպաների արյունոտ

դիակներ էին թափթփված՝ պոկված ուսադիրներով։ Իսկ ագարակներում, տափաստաններում, ձորակներում բռնում էին թաքնվածներին, ստանիցա էին բերում և անխնա ծեծում էին, կախում և օրերով կախված թողնում՝ ագռավների բաժին։

Մի տարի առաջ սկսվեց այդ, երբ Ռուսաստանում սկսված հրդեհի բոցերը տաճկական ռազմաճակատը հասան։

Ո՞վ է։ Ի՞նչ է։

Ոչինչ հայտնի չէ։ Միայն թե երևան եկան անհայտ բոլշևիկները, և կարծես բոլորի աչքերի փառը պոկվեց, և հանկարծ բոլորն էլ տեսան այն, ինչ որ դարերով չէին տեսնում, բայց դարերով զգում էին. սպաներին, գեներալներին, ատենակալներին, ատամաններին, չինովնիկների անթիվ բանակը և անտանելի զինվորական ծառայությունը, որ քարուքանդ էր անում իրենց։ Ամեն մի կազակ պարտավոր էր իր հաշվին իր որդոց զինվորական ծառայության պատրաստություն տեսնել. երեք-չորս որդի, ամեն մեկի համար ձի, թամբ, հագուստ, զենք առնել, և այդ բավական էր մի ամբողջ օջախ քանդելու համար։ Իսկ մուժիկը գալիս էր ծառայության մերկ, նրան ամեն բան տալիս, ոտից գլուխ հագցնում էին։ Եվ կազակների մասսան հետզհետե աղքատանում, քանդվում էր ու շերտավորվում, առաջ էր գալիս, աճում և զորեղանում հարուստ կազակների դասակարգը, մնացյալները հետզհետե անհետանում էին։

Փոքրիկ արևը անտանելի շլացուցիչ կերպով նայում է իր տակ փռված երկրին, որ մշուշապատ է երևում կիզիչ տոթից։

Իսկ մարդիկ ասում են.

— Մեր երկրից գեղեցիկը չկա։

Շլացուցիչ շողք է խայտում հանդարտ ծովի երեսին։ Հազիվ նկատելի կանաչ ասպակենման կնճիռներ են վրա տալիս և ծուլորեն լվանում ծովափի ավազները։ Ձկները վխտում են այնտեղ։

Իսկ կողքին մի ուրիշ ծով է՝ կապույտ, անհատակ ծով, որի մեջ մինչև խորքը արտացոլվում է կապտագույն երկնակամարը։ Անտանելի փայլը անհամար մասնիկների է բաժանվում։ Ուղղակի աչք է ցավեցնում։ Հեռու կապույտի մեջ

ջոգենավերն են ծուխ բարձրացնում, սև, հալվող պոչեր բաց թողնելով՝ գնում են հաց բերելու, փող են տանում։

Իսկ ծովից սկսվում են մուգ կապույտ լեռների կույտերը, կուսական ձյունով և խոր կապտավուն կնճիռներով ծածկված։

Լեռնային անվերջ անտառներում, կիրճերում, տափաստաններում ու հովիտներում, սարահարթերի և լեռնաշղթաներում ու հովիտներում, սարահարթերի և լեռնաշղթաներում ամեն տեսակ թռչուններ և գազաններ կան, նույնիսկ այնպիսիները, որ էլ ոչ մի տեղ չկան աշխարհի երեսին՝ վայրի ցուլ։

Ողողված, դիզված, կուտակված վայրի լեռնակույտերի գետակներում կա և պղինձ, և արծաթ, և ցինկ, և արճիճ, և սընարգանդում կա և պղինձ, և արծաթ, և ցինկ, և արճիճ, և սընդիկ, և գրաֆիտ, և ցեմենտ, և ինչ որ ցանկանաք, իսկ նավթը, սև արյունի պես, ծորում է ամեն մի ճեղքից, և գետերի ու գետակների մեջ ծիածանագույն յուղի բծեր են պսպղում, և նավթի հոտ է գալիս։

Ամենագեղեցիկ երկիրն է...

Իսկ սարերից ու ծովերից սկսվում են տափաստաններ՝ անծայր, անսահման։

«Ոչ վերջ ունեն, ոչ սահման»...

Անվերջ շողշողում են ցորենի արտերը, կանաչին են տալիս խոտհարքները, կամ անվերջ խշխշում են ճահիճների վրա եղեգները։ Սպիտակ բծերի նման երևում են խիտ ու անսահման այգիների մեջ ստանիցաներ, ագարակներ, գյուղեր, նրանց վրա դեպի տաք երկնակամարն են բարձրանում բարդիները, իսկ խորշակից պապակվող հողաբլուրների վրա մոխրագույն աղորիքներն են իրենց թևերը չռել։

Տափաստանում անշարժ միմյանց կպած խռնված են ոչխարների գորշ հոտերը, նրանց վրա տզզալով միլիոնավոր մոծակ, բոռ ու մլակ են ղժվժում։

Մինչև ծնկները տափաստանի ջրերի հայելու մեջ արտացոլվում է տավարը։ Ձիերի երամակները դեպի ձորակներն են գիմում, գլուխները թափ տալով։

Իսկ այդ բոլորի վրա՝ ուժասպառ հնչող անվերջանալի տոթը...

Ճանապարհին վազ տվող լծած ձիերի գլխին հարդի գլխարկներ են դարձած, ապա թե ոչ փոքրիկ արևի մահաբեր

ակնապիշ հայացքից սատկում են։ Նույնպես և մարդիկ, եթե անզգույշ կերպով գլուխները բաց են անում, արևահար, հանկարծակի կապտած դեմքով, վայր են ընկնում ճանապարհին կիզիչ փոշու մեջ, աչքերը սառչում են ապակու նման... Ամեն տեղ թրթռում է զնգզնգան տոթը...

Երբ երեք-չորս զույգ կեռ պողերով եզներ լծած ծանր գութանը անծայր տափաստանում ակոս է փորում, սպիտակ խոփը այնպիսի յուղոտ հող է շուռ տալիս, որ կարծես թե հող չի, այլ սև կարագ՝ փայլուն, որ կքսեիր հացին ու կուտեիր։ Եվ ինչքան ուզում ես խորը ակոսիր, երբեք չես հասնի կավի շերտին, պսպղուն պողպատը միշտ նույն կուսական, աշխարհիս երեսին միակ, տեղ-տեղ մոտ մի սաժեն հաստությամբ, սև հողի շերտ է շուռ տալիս։

Եվ ի՞նչ ուժ, ինչ գերմարդկային ծնող ո՞ւժ։ Պատահում է, որ փոքրիկ տղաներ խաղալիս փողոցում ընկած մի ձող գետին են խրում, մեկ էլ տեսնես, արդեն ընձյուղներ է արձակում, մի քիչ էլ, և ստվերաշատ մի ծառ է դառնում։ Իսկ խաղողը, ձմերուկը, սեխը, տանձը, ծիրանը, կարմիր և սև պորինջանը, կամ ո՞րն ասեմ։ Եվ բոլորը ահագին, չտեսնված, անբնական մեծությամբ։

Ամպերը կուտակվում են սարերի գլխին, սահում են տափաստանների վրայով, անձրև են թափում, ծարավ հողը հագենում է, իսկ հետո խելագար արևն է սկսում իր գործը, և երկիրը ծածկվում է մի չտեսնված բերքով։

Այո, այդ երկրից գեղեցիկը չկա։

Բայց ո՞վ է այդ հրաշալի երկրի տերը։

Կուբանի կազակներն են այդ հրաշալի երկրի տերը։

Եվ նրանք ունեն մշակներ, մշակ ժողովուրդ, թվով նույնքան, որքան հենց իրենք կազակներն են. նրանք էլ նույն Ուկրաինայի երգերն են երգում և խոսում մայրենի ուկրաինյան լեզվով։

Երկու ժողովուրդն էլ հարազատ եղբայրներ են — նրանք երկուսն էլ եկել են սիրելի Ուկրաինայից։

Կազակները չեն եկել, նրանց բերել է տվել Կատյա թագուհին 150 տարի առաջ։ Նա կործանեց ազատ զապորոժցիների ամրավայրը և քշեց այստեղ, նա պարգևեց նրանց այն ժամանակ դեռ վայրի, սոսկալի երկիրը։ Զապորոժցիները այդ

պարգևից արյուն-արցունք էին թափում՝ Ուկրաինայի կարոտը քաշելով։ Ճահիճներից, եղեգներից կուլ եկած, դեղնած տենդեր դուրս եկան և, կազակների արյան մեջ մտած, ոչ ծերի էին խնայում, ոչ ջահելի. շատ մարդ կուլ տվին։ Գիշատիչ չերքեզները սուր դաշույններով և անվրեպ գնդակներով ընդունեցին ակամա եկածներին. արյուն-արցունք էին թափում զապորոժյան կազակները, հիշում էին իրենց հարազատ ամրավայրը և գիշեր-ցերեկ կռվում էին դեղին տենդի, չերքեզների և վայրի հողի հետ. ոչինչ չունեին, որ կարողանային մարդու ձեռք չդիպած խավերը բարձրացնել։

Իսկ այժմ...

— Մեր երկրից գեղեցիկը չկա։

Իսկ այժմ բոլորի աչքը այդ երկրի վրա է, որ չտեսնված հարստություններով լի մի բաժակի է նման։ Կարիքից դրդված շարան-շարան եկան իրենց երեխաներով և ունեցած-չունեցածով աղքատ ու անճարները Խարկովի, Պոլտավայի, Եկատերինոսլավի և Կիևի նահանգներից, ցրվեցին ստանիցաներում և քաղցած գայլերի նման կրճտում են ատամներն այդ հրաշալի հողի համար։

— Ա՛ռ, կստանաս, բա չէ՞, հող են ուզո՞ւմ։

Եվ գաղթականները բանվորներ դարձան կազակների մոտ. սկսեցին նրանց «օտարաքաղաքացի» անվանել։ Կազակներն ամեն կերպ ճնշում էին նրանց, չէին ընդունում նրանց երեխաներին կազակների ժողովրդական ուսումնարաններում, երկու տակ կաշի էին պլոկում նրանցից ամեն մի վերշոկ հողի համար, որ ձեռք էին բերում իրենց խրճիթների, այգիների համար, հողը կապալով վերցնելիս, ստանիցայի բոլոր ծախսերը նրանց վզին էին գնում և խորին արհամարհանքով կոչում էին նրանց «սատանի ճտեր», «հաստափոր ավանակ»։

Իսկ երկաթի պես դիմացկուն օտար քաղաքացիք առանց սեփական հողի, ակամա ձեռնամուխ էին լինում ամեն տեսակ արհեստի, արդյունաբերական գործունեության. ճարպիկ էին, գիտության և կուլտուրայի էին դիմում, ուսման ծարավ ունեին, նրանք էլ կազակների պարտքի տակ չէին մնում և նրանց «կուրկուլ», (բռունցք), «կակլուկ», «պուգաչ» (բվեճ) էին կոչում։ Այսպես է բորբոքվում փոխադարձ ատելությունը և արհամարհանքը, իսկ թագավորի կառավարությունը, գենեռալները, սպաները, կալվածատերերը ուրախությամբ բորբոքում են այդ գաղանային թշնամությունը։

Գեղեցիկ երկիր, որ աղուլեղի, սուր քեն ու ոխ, ատելություն և արհամարհանք է ծխում։

Բայց բոլոր կազակները և բոլոր օտար քաղաքացիք չեն այդպես վերաբերվում միմյանց։ Կարիքից և աղքատությունից իրենց խելքով, տոկունությամբ, երկաթե աշխատանքով ոտքի կանգնած օտար քաղաքացիք հարուստ կազակների կողմից հարգանք են վայելում։ Նրանք շատ աղորիքներ ունեն, շատ կազակների հողեր են կապալով վերցրել, իրենց չունևորներին իբրև բանվորներ են պահում, բանկում փող ունեն և ցորենի առևտուր են անում։ Հարգում են նրանց այն կազակները, որոնց տները երկաթե տանիքներ ունեն, և ամբարները ցորենից տրաքում են. ագռավն ագռավի աչքը չի հանի։

Չերքեզի հագած և փափախները թեք դրած ինչո՞ւ են կազակները փողոցներում ետ ու առաջ արշավում և ձիու սմբակներով մարտ ամսի սաստիկ ցեխը ցրիվ տալիս և ինչո՞ւ էն հրացաններ արձակում դեպի գարնան կապույտ երկինքը։ Տո՞ն է, ի՞նչ է։

Եվ զանգակներն էլ անդադար զվարթ, կապույտ զողանջներ են տարածում ստանիցաներում, ագարակներում և գյուղերում։ Իսկ մարդիկ տոնական զգեստներով, թե կազակներ, թե օտար քաղաքացիք, թե աղջկերք և ջահելներ, թե ալևոր ծերեր և ատամները թափած պառավներ — ամենքը, ամենքը գարնանային տոնական փողոցներումն են։

Զատիկ հո չի՞։ Չէ՞, տերտերների տոնը չի։ Մարդկային տոն է, առաջին տոնն է դարերի ընթացքում։ Դարերի ընթացքում, քանի երկիրը գոյություն ունի, առաջին տոնն է։

Թող կորչի պատերա՞զմը...

Կազակները գրկում են իրար, գրկում են և օտարաքաղաքացիներին, նրանք էլ՝ կազակներին։ Էլ չկան կազակներ ու ոչ օտարաքաղաքացիներ, կան միայն քաղաքացիներ։ Չկան ոչ «կուրկուլներ», ոչ էլ «սատանի ճտեր», կան միայն քաղաքացիներ։

Թող կորչի պատերա՞զմը...

Փետրվարին տապալեցին ցարին, Հոկտեմբերին մի քան

պատահեց հեռու Ռուսաստանում, ոչ ոք կարգին չգիտեր, թե ինչ է պատահել, միայն մի բան տպավորվեց սրտերում.

Թող կորչի պատերա՜զմը...

Տպավորվեց, և դա ամենքի համար շատ հասկանալի մի բան էր։

Եվ գունդ գնդի ետևից եկան տաճկական ճակատից։ Եկավ կազակ հեծելազորը, գալիս էին Կուբանի պլաստունների գումարտակները, օտարքաղաքացոց հետևակ գնդերը, հեծյալ հրետանին, և այդ բոլորը անընդհատ հեղեղի պես վերադառնում էր դեպի Կուբան, հայրենի ստանիցաները, իրենց բոլոր զենքերով, ռազմամթերքներով և սայլախմբերով։

Իսկ Կուբանում արդեն խորհրդային իշխանություն էր։ Իսկ Կուբանում արդեն հավաքվել էին բանվորները քաղաքներից, նավաստիները ջրասույզ արած նավերից, և նրանց շնորհիվ հանկարծ ամեն ինչ պարզվեց և որոշվեց. կալվածատերեր, բուրժույներ, ատամաններ, ցարական ատելություն սերմանելը կազակների և օտար քաղաքացիների մեջ, Կովկասի բոլոր ազգությունների մեջ։ Եվ սկսեցին սպաների գլուխներ թոցնել, նրանց պարկի մեջ դնել և ջուրը նետել։

Բայց հարկավոր էր վարուցանք անել, և արեգակը, հարավի հրաշալի արեգակը ավելի և ավելի պայծառ էր փայլում բերքի վրա։

— Լա՜վ, բայց ո՞նց վարենք. պետք է հողը բաժանել, թե չէ ժամանակը կանցնի,— ասացին օտարքաղաքացիք կազակներին։

— Դուք հո՞ղ եք ուզում,— ասացին կազակները և խոժոռվեցին։

Հեղափոխության բերկրանքը սկսեց մարել։

— Ձեզ հո՞ղ, սրիկաներ։

Եվ դադարեցին կոտորել իրենց սպաներին, գեներալներին, և դուրս սողացին նրանք բոլոր ճեղքերից և կազակների գաղտնի ժողովներում իրենց կուրծքը թակելով գրգռում էին.

— Բոլշևիկները որոշել են կազակներից ետ վերցնել բոլոր հողերը և տալ օտարքաղաքացիներին, իսկ կազակներին բատրակ դարձնել, ով համաձայն չի՝ Սիբիր ուղարկել և բոլոր գույքը խլել և տալ օտարքաղաքացիներին։

Կուբանը խոժոռվեց, գաղտուկ, տակետակ սկսեց սողալով տարածվել բռնկվող հրդեհը տափաստաններում, խրամատներում, եղեգնուտներում, ստանիցաների և աղարակների բակերում։

— Մեր երկրից գեղեցիկը չկա։

Եվ կազակները նորից «կուրկուլ», «կակլուկ», «սրուպաչ» դարձան։

— Մեր երկրից գեղեցիկը չկա։

Եվ օտարքաղաքացիք վերստին «սատանի ճտեր» և «հաստափոր ավանակներ» դարձան։

Լավ շփոթ էփվեց տատանումը թվի մարին. այդ շփոթի համը օգոստոսին առան, երբ այս երկրում արեր դեռ կիզիչ է և տաք փոշու անթիվ-անհամար ամպեր են կանգնած։

Ինչպես որ Կուբան գետի հոսանքը սարնիվեր չի գնա, նույնպես էլ անցյալը չի վերադառնա, կազակները սպաներին պատիվ չեն տալիս, և նույնիսկ երբ նրանք փորձում են հաճոյանալ, չեն մոռանում, թե ինչպես տանջել էին իրենց, ուստի և սպաներին արյունոտ լեշ էին դարձնում։ Իսկ այժմ սպաների ճառերին նրանք սականջ են դնում և նրանց հրամանները կատարում։

Կացինները զրնգում են, սպիտակ տաշեղները թռչկոտում, կամուրջը կպել է դիմացի ափին։ Արագ և դոփյունով Հեծելակորը, պլաստունները անցնում են կամուրջը. կազակները շտապում են հասնել հեռացող կարմիր թշնամուն։

7

Սայլախմբերը ճռնչում են, զինվորները գնում են. ձեռքները շարժում։ Մեկի աչքն է ուռել, մյուսի քիթը մի մեծ դամբուլ դառել։ Մեկի այտոսկրներն են արյունոտված, և չկա մեկը, որի դեմքին կապույտ տեղեր չլինեն։ Գնում են, ձեռքերը թափ տալիս և ուրախ-ուրախ պատմում.

— Ես նրա քթին որ մի լավ շրմփացրի, ձեռաց ոտները մեկնեց։

— Իսկ ես մեկին բռնեցի, գլուխը ոտներիս մեջ առա ու տուր թե կտաս ...ին, իսկ նա, շան որդին, էնպես կծեց...

— Հո՜, հո՜, հո՜,... հա՜, հա՜,հա՜...— հռհռացին շարքերը։

— Բա ո՞նց ես հիմա կնոջդ մոտ գնալու։

Ուրախ պատմում են, և ոչ ոք ոչ մի կերպ չի կարողանում մոռացերել, թե ինչպես պատահեց, որ փոխանակ իրար սպանելու և կոտորելու, նրանք վայրենի հրճվանքով բռունցքներով իրար քիթ ու պռունգ էին ջարդում։

Իրենց հետ նրանք ստանիցայում բռնած չորս կաղակ են տանում և ճանապարհին հարցուփորձ անում։ Նրանց դեմքերը ծածկված են արյունախառն կապույտներով, աչքերը մարած, և այդ մտերմացնում է նրանց զինվորներին։

— Ի՞նչ էիք մուշտակով տալիս, հիմա՞ր անասուններ, զե՞նք չունեիք, ի՞նչ է։

— Ի՞նչ արած. կոնծել էինք,— մեղավորի պես կուչ գալով պատասխանում էին կազակները։

Զինվորների աչքերը փայլեցին։

— Որտեղի՞ց ճարեցիք։

— Հենց որ հասանք մոտակա ստանիցան, սպաները այգում հողի մեջ թաղած 25 տակառ գտան. երևի Արմավիրից էին բերել մերոնք։ Սպաները մեզ շարեցին ու ասեցին՝ եթե ստանիցան վերցնենք, օղի կտանք ձեզ։ Իսկ մենք ասեցինք՝ ավելի լավ է հենց հիմա տվեք, այն ժամանակ մենք նրանց հավերի պես կկոտորենք։ Դե՛, նրանք էլ ամեն մեկիս երկու շիշ տվին, մենք գցեցինք։ Մենք էլ վրա տվինք, իսկ հրացանները խանգարում էին։

— Է՜-է՜, շա՛ն որդիք...— մոտ վազեց մի զինվոր,— խոզե՛ր,— և տարավ-բերեց, որ քիթ ու բերանին հասցնի։

Նրան բռնեցին.

— Կա՛ց. սպաներն են դրդել, իսկ դու սրա՞ն ես խփում։

Ճանապարհի ոլորանում կազակները կանգ առան և սկսեցին իրենց համար մի ընդհանուր գերեզման փորել։

Իսկ անվերջ սայլախմբերը, ամեն ինչ ծածկող փոշու ամպեր բարձրացնելով, ճռռալով առաջ էին գնում տասնյակ վերստեր կողմնակի ճանապարհով, իսկ դիմացի սարերն էին կապույտին տալիս։ Սայլերի վրա թափթփված էին կարմիր բարձեր, խառնիխուռն փոցխեր էին ցցված, թիեր, կիսատակառներ, հայելիներ էին պսպղում։ Ինքնաեռներ, իսկ բարձերի մեջ, շորերի, ցնցոտիների, ծածկոցների կույտերի մեջ կարելի էր մանկական գլուխներ տեսնել, կատուների ականջներ,

հյուսած կողովների մեջ կոթկոթում էին հավերը, ետևից թոկով կապած կովերն էին գնում և լեզուները հանած ու հևալով քարշ էին գալիս սայլերի շվաքում կոծոծներով ծածկված փոշոտ շներ։ Տան իրեղեններով ծանրաբեռնված սայլերը ճռռոում էին, մուժիկները և կանայք կազակներից փախչելիս շտապ-շտապ և ագահաբար բարձել էին ամեն բան, ինչ որ ձեռքի տակ էր ընկել։

Առաջին անգամը չէ, որ օտարքաղաքացիք այսպես փախչում են։ Կաղակների մասնակի ապստամբությունները խորհրդային իշխանության դեմ վերջերս հաճախ էին վռնդել նրանց իրենց բներից, բայց այդ տևում էր միայն երկու օր. գալիս էին կարմիր զորքերը. կարգը վերականգնում, և բոլորը վերադառնում էին իրենց տեղերը։

Իսկ այժմ չափազանց երկար է տևում այդ՝ երկրորդ շաբաթն է։ Բայց հաց միայն մի քանի օրվա համար են վերցրել։ Եվ ամեն օր սպասում են, թե ահա, որտեղ որ է, կասեն՝ դե, այժմ կարելի է վերադառնալ. բայց ավելի ձգձգվում, ավելի խճճվում է. կազակներն ավելի կատաղի են ոտքի կանգնում. ամեն կողմից լսվում է՝ ստանիցաներում կախաղաններ են կանգնեցրած, օտարքաղաքացիներին կախում են։ Եվ ե՞րբ է լինելու սրա վերջը։ Ի՞նչ է դառնալու բարձիթող արած տուն ու տեղը։

Սայլերը, սայլակները, ֆուրգոնները ճռճռում են, հայելիները արևի տակ պսպղում են, բարձերի արանքներում մանուկների փոքրիկ գլուխներն են օրորվում և խայտարղետ խմբերով զինվորներն են ճանապարհներով, հանդերով, բոստաններով գնում, որտեղ, մորեխի նման, մաքրում են բոլոր ձմերուկները, սեխերը, դդումները, արևածաղիկները։ Չկան վաշտեր, գումարտակներ, գնդեր, ամեն ինչ խառնվել, խճճվել է։ Ամեն մեկը որտեղ ասես ու ինչպես ասես գնում է։ Ոմանք երգեր են երգում, ոմանք վիճում են, բղավում, հայհոյում, ոմանք էլ սայլերում պառկած՝ գլուխներն են քնաթաթախ դես ու դեն շարժում։

Ոչ ոք վտանգի կամ թշնամու մասին չի մտածում։ Հրամանատարների մասին նույնպես։ Երբ փորձում են այդ հոսուն հեղեղը մի փոքր կազմակերպել, հրամանատարներին անպատկառ անարգում են և հրացանները մահակների պես

ուսերին գցած, հրացանների կոթը դեպի վեր, կամ չիբուխ են քաշում կամ խայտառակ երգեր երգում. այսինքն թե՝ այժմ հին ճնշումը չկարծեք։

Կոժուխն ընկղմված է այդ անընդհատ հոսող սահանքի մեջ, և կուրծքը կարծես մի սեղմված զսպանակ է ճնշում— եթե կազակները վրա տան, բոլորն էլ սրախողխող կլինեն։ Միակ հույսն այն է, որ մահվան դիմաց երեկվա պես ամենքն էլ միաբան և հնազանդ շարքերը կմտնեն. բայց ուշ չի լինի արդյոք։ Եվ նա ցանկանում էր, որ վտանգը շուտ վրա հասնի։

Իսկ վայրագ և աղմկալից հեղեղի պես շարունակ գալիս են ցարական զորքից վերադարձվածները և խորհրդային իշխանության զորաժողովի ենթարկվածները, գալիս են կարմիր զորքի կամավորները, մեծ մասամբ մանր արհեստավորներ՝ տակառագործներ, փականագործներ, կլայեկիչներ, ատաղձագործներ, կոշկակարներ, վարսավիրներ և մանավանդ շատ ձկնորսներ։ Այդ բոլորը մի կերպ գլուխ պահող «օտարքաղաքացի», աշխատավորներ էին, որոնց համար խորհրդային իշխանությունը հանկարծ կյանքի մի ծայրը բարձրացրեց, հանկարծ զգալ տվեց, որ նրանց կյանքը կարող էր այնքան էլ շան կյանք չլինել, ինչպես եղել է։ Բայց այնուամենայնիվ, բացարձակ մեծամասնությունը գյուղացիներ էին։ Սրանք համարյա բոլորն էլ քոչել էին իրենց տեղերից։ Մնացել էին միայն հարուստները, սպաներն ու ունևոր կազակները, որոնց ձեռք չէին տալիս։

Տարօրինակ կերպով աչք էին շլացնում սև նժույգներ հեծած, երերվելով իրենց չերքեզները հուպ տված վայելչակազմ իրաններով կուբանցի կազակները. ո՜չ, նրանք թշնամիներ չեն, այլ հեղափոխական եղբայրներ, կազակ չքավորությունն է, մեծ մասամբ պատերազմի դաշտից վերադարձած, որոնց սրտերում, կրակի, ծխի և հազարավոր մահվան մեջ, հեղափոխությունը անշեջ կայծ էր գցել։

Էսկադրոն էսկադրոնի ետևից է գալիս փրշոտ փափախներով, որոնց վրա կարմիր ժապավեններ են ամրացված։ Հրացաններն ուսերից կախած, արծաթե սևացած դաշույններն ու թրերը պսպղում են. նրանք կարգ ու կանոնով առաջ են գնում այդ հոսուն խառնաշփոթության մեջ։

Նժույգները թափ են տալիս գլուխները։

Նրանք կռվելու էին հայրերի և եղբայրների դեմ։ Տանը թողել են ամեն ինչ՝ տուն-տեղ, անասուններ, տան ամեն սարք ու կարգ, տնտեսությունը քայքայված է։ Ճկուն և վայելչակազմ՝ նրանք առաջ են գնում, սիրած աղջկա ձեռքով փափախին կպցրած վարդագույն ժապավենները կարմրին են տալիս, և նրանք ջահել և ուժեղ ձայներով Ուկրաինայի երգեր են երգում։

Սիրով է դիտում նրանց Կոժուխը. «ապրեք, տղերք, ամբողջ հույսը ձեզ վրա է»։ Սիրով դիտում է, բայց ավելի մեծ սիրով նա դիտում է փոշու ամպերի մեջ թափառող այդ մերկ ու բոբիկ օտարաքաղաքացիների հրոսակը. չէ՞ որ ինքն էլ դրա մի հարազատ կտորն է։

Եվ նրա ետևից անմեկին նրա կյանքն է ձգվում, ինչպես մի շեղ ստվեր, որ կարելի է մոռանալ, բայց որից անջատվել չի կարելի։ Տափաստանի ամենասովորական, աշխատավոր, սովալլուկ, գորշ, անգրագետ, խավար, խավար շեղ ստվեր է։ Մայրը տակավին ջահել է, բայց, ինչպես մի տանջված պառավ ձի նրա դեմքը կնճիռներ են պատել. բազմաթիվ փոքր երեխաներ կան ձեռին, որոնք նրա փեշերից են կախ ընկնում։ Հայրը կազակի հավիտենական մշակ է, ջլերը դուրս են ցցվել, բայց որքան չարչարվի՝ մեկ է, նույն մերկ ու սովածն է։

Կոժուխը վեց տարեկան հասակից գյուղական հոտաղ է։ Տափաստան, ձորակներ, անտառ, կովեր, փախչող ամպեր և նրանց ստվերները. ահա՜ նրա ուսածը։

Հետո այդ ժիր և ուշիմ երեխան ծառայում է ստանիցայի մի կեղեքիչի խանութում, կամաց-կամաց կարդալ-գրել է սովորում, հետո զինվոր է գնում, պատերազմ, տաճկական ռազմաճակատ։ Նա պատվական գնդացիր արձակող է։ Գընդացրի զորախմբի հետ լեռներում նա թշնամու թիկունքն անցավ, և երբ տաճկական դիվիզիան սկսեց նահանջել, վերևից սկսեց գնդացրով մարդկանց շարքերը խոտի պես հնձել, և տաք, ծխող արյունը սկսեց հոսել նրա կողմը. առաջ նա երբեք չէր կարծում, որ մարդկային արյունը կարող էր մինչև ծունկը հասնել, բայց այդ տաճկական արյուն էր և մոռացվում էր։

Այդ անօրինակ քաջության համար նրան ուղարկեցին պրապորշչիկների ուսումնարան։ Ի՜նչ դժվար էր, գլուխը ճա-

քում էր։ Բայց նա եզի համառությամբ յուրացնում էր ուսումը և... կտրվեց։ Սպաները քրքջում էին նրա վրա, սպա-դաստիարակները, սպա-ուսուցիչները, յունկերները. «Մուժիկն սպա է ուզում դառնալ, գարշելի՛ մուժիկ... հիմա՞ր անասուն... Հա՛, հա՛, հա՛... սպա՞ է ուզում դառնալ»։

Նա ատում էր նրանց լուռ, ատամները սեղմած, խեթ-խեթ նայելով։ Նրան ետ ուղարկեցին գունդը, որպես անընդունակի։

Դարձյալ շրապնելներ, հազարավոր մահ, արյուն, հեծեծանք և դարձյալ նրա գնդացիրները (զարմանալի աչք ունի նա) կտրատում են, և շարեշար պառկում են մարդիկ, հնձած խոտի պես։ Գերմարդկային լարման, ամեն մի բոպե գլխին սավառնող մահվան դեմ ժամանակ չկար մտածելու, թե հանուն ինչի է գետի պես արյուն հոսում՝ թագավորի՞, հայրենիքի՞, ուղղափառ հավատի՞. կարող է լինել, բայց մի տեսակ մշուշի մեջ։ Իսկ ամենից առաջ և պարզորոշ մտածում էր ազատվել, ազատվել հառաչանքներից, արյունից, մահից, ինչպես որ ազատվեց հովիվ լինելուց և խանութի ծառայող դարձավ։ Եվ նա հանգիստ կանգնած էր քարե ծնոտներով այնտեղ, ուր կատաղաբար շրապնելներն էին տրաքտրաքում, ինչպես իր տանը խոտ հնձելիս, և շուրջը խոտն է պառկում։

Նրան երկրորդ անգամ ուղարկում են պրապորշչիկների ուսումնարանը՝ սպաների պակասություն կա. կռվի ժամանակ միշտ սպաների պակասություն է լինում. իսկ նա իրոք տպագրի պաշտոն է կատարում, երբեմն զեկավարելով բավական խոշոր ջոկատներ, և երբեք պարտություն չի կրել։ Չէ՞ որ զինվորների համար նա հարազատ է, իրենց մարդն է, նրանց պես հող մշակող, ցորեն ցանող։ Եվ նրանք անձնվիրաբար հետևում են նրան, այդ ցամաքած, քարե ծնոտներով մարդուն, նրա հետ պատրաստ են ջուրն էլ ընկնելու։ Հանուն ինչի՞... Ցարի՞, հայրենիքի՞, ուղղափառ հավատի՞։ Գուցե, բայց այդ կարծես արյունոտ մշուշի մեջ է, իսկ այժմ, այս բոպեին պետք է առաջ գնալ, անխուսափելի կերպով առաջ գնալ. ետ մնաս՝ կգնդակահարեն, ուրեմն ավելի լավ է հետևել նրան, հարազատին, այն ցամաքած մարդուն, այն մուժիկին։

Ի՜նչ դժվար է, ինչ տանջալի դժվար։ Մարդու պուխ է ճաքում։ Տասնորդական կոտորակներ յուրացնելը շատ ավելի դժվար է, քան գնդացրի կրակի տակ հանգիստ դեմ գնալ մահվան։

Իսկ սպաները ծիծաղից կոտորվում են, այն սպաները, որոնք, պետք են թե չէ, բայց ավելի պետք չեն, լցվել են ուսումնարանը. չէ՞ որ թիկունքը միշտ մի ապահով անկյուն է և լցված է ռազմաճակատից խուսափողներով, և այդ խուսափողների համար թիկունքում ստեղծվում են հազար ու մեկ ավելորդ պաշտոններ։ Սպաները ծիծաղից թուլանում էին. մուժիկ, հաստագլուխ, կեղտոտ սինլքոր... Ինչպես էին ծաղր ու ծանակ անում, ինչպես էին կտրում նրան պատասխան տալիս, չնայած որ պատասխանները վերջիվերջո միանգամայն ճիշտ էին։

Եվ ետ ուղարկեցին, ետ ուղարկեցին իր գունդը... անընդունակության պատճառով։

Գնդանոթների կրակի բոնկում, շրապնելների տրաքոցներ, գնդացիրների անողոք թիկթիկոց, արյունազանգ հրեղեն մբրիկ և՝ «ամեն կողմից դժոխք ու մահ», իսկ նա կարծես թե իր տանը լիներ, այդ տնտես մուժիկը։

Տնտես մուժիկը եզի պես համառ է, ժայռի պես անհողդողդ, իզուր չէ, որ ուկրաինացի է, կառաճն էլ ուղիղ աչքերի վրա է եկել, փոքրիկ ծակող աչքերի վրա։

Մահաբեր աշխատանքի ժամանակ ցույց տված տնտեսավարության համար երրորդ անգամ նրան ուսումնարան են ուղարկում։

Իսկ սպաները շարունակ ծիծաղում են. դարձյա՞լ... Մուժի՛կ... գարշելի՛, ծուռո՛տ... Եվ անընդունակության պատճառով ետ են ուղարկում գունդ։

Այս անգամ շտաբից պատասխանում են զայրացած՝ պրապորշչիկություն տալ... Սպաների ահագին պակասություն է։

Հե՜-հե՜. սպաների ահագին պակասություն, թե՛ կռիվների և թե՛ թիկունք փախչելու պատճառով։

Արհամարհանքով պրապորշչիկություն տվին։ Իր վաշտը եկավ, ուսագիրները պսպղում են, վերջապես ստացավ։ Եվ ուրախ է, և ուրախ չէ։

Ուրախ է, որովհետև վերջապես հասավ նպատակին, հասավ սոսկալի դժվարությամբ, գերմարդկային ճիգով։ Ուրախ

չէ, որովհետև պսպղուն ուսադիրներն անջատեցին նրան յուրայիններից, հարազատներից, երկրագործներից, զինվորներից. զինվորներից անջատեցին, իսկ սպաներին չմոտեցրին. Կոժուխի շուրջը ամայի շրջան գոյացավ։

Սպաները բարձրաձայն չէին ասում՝ «մուժիկ», «գարշելի», «ծուռտռ», բայց բիվակներում, սեղանատանը, վրաններում, ուր ուսադիրներով երկու-երեք մարդ էր հավաքվում, նա մնում էր միայնակ։ Նրանք խոսքով ոչինչ չեն ասում, բայց աչքերով, հայացքով, ամեն մի շարժումով ասում էին՝ գարշելի, մուժիկ, հոտած հաստաղլուխ։

Նա ատում էր նրանց հանգիստ, ապառաժի պես խորը թաքցրած ատելությամբ։ Ատում էր։ Եվ արհամարհում էր։ Եվ թե այդ ատելությունից, թե իր զինվորներից անջատվելուց նա պատսպարվում էր սառնարյուն անվեհերությամբ հազարավոր մահերի միջև։

Եվ հանկարծ ամեն ինչ տատանվեց. և Հայաստանի լեռները, և տաճկական դիվիզիաները, և զինվորները, զարմացած, շփոթված դեմքերով գեներալները, և լռած թնդանոթները, և սարերի մարտ ամսվա ձյունը, կարծես թե տարածությունը ճեղքվել էր և բացվել չտեսնված հրեշավորը, չտեսնվածը, որը միշտ գաղտնի էր ապրել խորքերում, թաքստարաններում, որը անուն չուներ, բայց երբ երևան եկավ, պարզ էր, հասարակ և անխուսափելի։

Եկան սովորական, նիհար, դեղնած գործարանային դեմքերով մարդիկ և սկսեցին ավելի և ավելի լայնացնել այդ բացված ճեղքը. այնտեղից ժայթքեց դարավոր ատելությունը, դարավոր հարստահարությունը, ապստամբած դարավոր ստրկությունը։

Կոժուխն առաջին անգամ ափսոսաց, որ իր ուսերի վրա պսպղում էր այն, ինչի որ նա այնպիսի համառությամբ ձգտում էր. նա տեսավ, որ ինքը բանվորների թշնամիների շարքումն է, մուժիկների թշնամիների, զինվորների թշնամիների։

Երբ հոկտեմբերյան օրերը հասան այնտեղ, նա զզվանքով պոկեց իր ուսադիրները, դեն շպրտեց և տուն վերադարձող զորքի անդիմադրելի աղմկալից հեղեղներին անձնատուր եղած, մի մութ անկյունում թաքնված, աշխատելով չերևալ,

գնում էր լիքը, երերուն տեպլուշկայով։ Հարբած զինվորները գոռալով երգում էին և թաքկացող սպաներ էին որսում։

Երբ տուն հասավ, ամեն ինչ կտոր-կտոր էր եղել՝ ամբողջ հին հանրակարգը, հարաբերությունները, իսկ նորը խառնաշփոթ էր և անորոշ։ Կազակները գրկախառնվում էին օտարաքաղաքացոց հետ, բռնում էին սպաներին և իրենց դատաստանն անում։

Թթու խմորի կտորների պես ընկան ցնծացող ժողովրդի մեջ գործարաններից եկած բանվորները, ջրասույզ արած նավերից եկած նավաստիները, և հեղափոխական Կուբանի ստանիցաներում, ագարակներում, գյուղերում խմորաշաղախի նման բարձրացավ խորհրդային իշխանությունը։

Կոժուխը թեև չէր կարողանում խոսքերով ասել դասակարգեր, դասակարգային կռիվ, դասակարգային հարաբերություններ, սակայն խորապես զգաց այդ բանվորների բերանից, ըմբռնեց զգացողությամբ։ Եվ նրա ատած սպայությունը այժմ մի փոքրիկ դատարկ բան էր երևում այդ հսկայական դասակարգային կռվի զգացման առաջ. սպայությունը լոկ բուրժուայի և կալվածատիրոջ ողորմելի լակեյներն էին։

Իսկ երբեմն գերմարդկային ճիգերով ձեռք բերած ուսադիրների հետքերն այրում էին ուսերը, թեև նրան համարում էին իրենց մարդը, բայց էլի խեթ աչքով էին նայում։

Եվ նույնպես ապառաժի նման, նույնպիսի ուկրաինական համառությամբ նա վճռեց հրաշեկ երկաթով, սեփական արյունով, սեփական կյանքով մաքրել այդ հետքերը և այդպես ծառայել. ո՜չ, անչափ ավելի ծառայել չքավոր բազմությանը, որի ոսկրի մի մասն էլ ինքն էր։

Հենց այդ միջոցին էլ սկսվեց։ Չքավորությունը ոչնչացնում էր բուրժույներին։ Եվ որովհետև նրանց շարքն էին ընկնում ամենքը, ով որ մի զույգ ավելորդ վարտիք ուներ, ուստի տղերքը դոնեդուռ ման էին գալիս, ջարդում էին բոլորի սընդուկները, հանում էին միջից, բաժանում և հենց տեղն ու տեղը հագնում, որովհետև պետք էր բոլորի մեջ հավասարություն գցել։

Կոժուխի մոտ էլ մտան նրա բացակայության ժամանակ, ընտրեցին, ինչ որ գտան, և Կոժուխը մի մաշված գիմնաստյորկայով, հին, ջարդված հարդի գլխարկով, հին կոշիկներով

մնաց, իսկ կինը՝ միակ շրջազգեստով։ Կոժուխը բանի տեղ չդրեց. միայն մի զգացումով, մի համառ մտքով էր տարված։

Տղերքն սկսեցին հավասարեցնել և կազակներին, իսկ երբ հերթը հասավ հողին, ամբողջ Կուբանը եռ եկավ և տապալեց խորհրդային իշխանությունը։

Եվ Կոժուխը գնում է այժմ ճռճռոցի, աղմուկի, գոռում-գոչյունի, ձիերի փռնչոցի և փոշու անվերջ ամպերի մեջ։

8

Սարերի առաջ՝ վերջին կայարանում բաբելոնյան խառնակություն է տիրում, աղմուկ, գոռոց, լաց, հիշոցներ, զատ-զատ զորամասեր, զինվորների առանձին-առանձին խմբեր, իսկ կայարանի մյուս կողմում հրացանի ձայներ, ճիչ և իրարանցում։ Մերթ ընդ մերթ որոտում են թնդանոթները։

Այնտեղ է և Կոժուխը իր զորասյան և իր փախստականների հետ։ Հասավ և Սմոլոկուրովը իր զորասյան և փախստականների հետ։ Անընդհատ գալիս են և ուրիշ զորախմբեր, գալիս են ամեն կողմից՝ կազակներից հալածված և նեղված։ Եվ այդ վերջին կտոր հողի վրա խռնվել են տասնյակ հազարավոր դատապարտված մարդիկ. կադետներն ու կազակները ոչ ոքի չեն խնայի, ոչ ծերերին, ոչ ջահելներին, ամենքն էլ կպառկեն սրերի և գնդակների կրակի տակ, կամ կկախվեն ծառերից, կամ կթափվեն խոր ձորերը և սաղ-սաղ քարերի և հողերի տակ կթաղվեն։

Եվ քանիցս արդեն հուսահատ ճիչ է լսվում՝ «Ծախեցին... դավաճանեցին մեզ հրամանատարները»։ Իսկ երբ թնդանոթների կրակոցն ավելացավ՝ հանկարծ գոչեցին.

— Փախե՛ք, ազատվեցե՛ք, ով որ կարող է...

Կոժուխի զորասյան տղերքը մի կերպ դիմադրում էին կազակներին և տագնապի առաջն առնում, բայց զգալի էր, որ երկար չի տևելու այդ։

Հրամանատարներն ամեն բոպե խորհուրդ էին անում, բայց ապարդյուն, և ոչ ոք չգիտեր, թե հետևյալ բոպեին ինչ կպատահի։

Կոժուխը հայտարարեց.

— Միակ փրկությունն այն է, որ անցնենք սարերը և ծովի ափովն արագ գնանք միանանք մեր գլխավոր ուժերի հետ։ Ես այս բոպեին ճանապարհ եմ ընկնում։

— Եթե փորձես տեղից դ շարժվել, կկրակեմ քեզ վրա,— ասաց Սմոլոկուրովը, սև տափակ միրուքով մի հսկա, պսպղացնելով իր սպիտակ ատամները,— պետք է պատվով պաշտպանվել և ոչ թե փախչել։

Կես ժամից հետո Կոժուխի զորասյունը տեղից շարժվեց. ոչ ոք չհանդգնեց արգելք լինել նրանց։ Եվ հենց որ տեղից շարժվեց, տասնյակ հազար զինվորներ, փախստականներ, սայլեր և անասուններ սարսափած սկսեցին հետևել, խռնվել, ճանապարհը փակելով, աշխատելով իրարից առաջ անցնել, խանգարողներին առուները նետել։

Եվ սարն ի վեր սողաց անծայր կենդանի օձը։

9

Գնում էին ամբողջ օրը և ամբողջ գիշերը։ Լուսադեմին, առանց ձիերն արձակելու, կանգ առան մի քանի վերստ տարածությամբ խճուղու վրա։ Սարերի գլխին շատ մոտ, խոշոր աստղեր էին փայլում։ Անդուլ զնգում էր կիրճի մեջ կարկաչուն ջուրը։ Ջորս կողմը լուռ էր և մառախլապատ, կարծես ոչ սար կար, ոչ անտառ, ոչ էլ ձոր։ Միայն ձիերն էին բարձրաձայն ծամում։ Նոր էին աչքները խփել, որ աստղերն սրդեն սկսեցին մարել. աչքի ընկան անտառով ծածկված հեռավոր լեռնապարերը, կիրճերում կաթնագույն մեգ տարածվեց։ Նորից շարժվեցին, և տասնյակ վերստեր ձգվեց խճուղին։

Հեռավոր լեռնաշղթաների ետևից շլացուցիչ ցոլքով դուրս սողաց արևը և սարերի վրա երկար կապտագույն ստվերներ տարածեց։ Ջորասյան գլուխը գագաթին հասավ, հասավ և ապշած մնաց. լեռնաշղթայի մյուս կողմը մի անհուն խորխորատ էր, որի մեջ, ինչպես մի անիրագործելի ակնարկ, սպիտակին էր տալիս մի քաղաք։ Իսկ քաղաքից ապշեցուցիչ անակնկալությամբ մի անվերջ կապույտ պատի պես ծովն էր բարձրանում, այնպիսի մի չտեսնված վիթխարի պատի պես, որ նրա թունդ կապույտից բոլորի աչքերը կապույտ գույն ստացան։

— Օ՜, տե՛ս, ծովը։

— Բա ինչո՞ւ է նա պատի պես կանգնած։

— Չլինի՞ պատերի վրա պետք է բարձրանանք։

— Իսկ ինչո՞ւ, երբ որ ափին ես կանգնած, նա հարթ է երևում մինչև մյուս ափը։

— Մի՞թե չես լսել, թե ինչպես Մովսեսը, երբ հրեաներին եգիպտական գերությունից դուրս էր բերում, ինչպես հենց հիմա մենք, ծովը պատի պես բարձրացավ և նրանք ցամաքով անցան։

— Իսկ մեզ չի թողնում, առաջներս կտրել է։

— Պատճառը Գարասկան է, շմուշկները նոր են, չթրջվեն։

— Տերտեր պետք է կանչել, նա ամեն ինչ կհասկանա իսկույն։

— Այդ մազոտին փոխանիդ մեջը կոխիր...

Շարքերը ազատ քայլերով սարից վայր են իջնում. ձեռքերն ավելի ուրախ են տափահարում, զրույց և ծիծաղ է տիրում շարքերում, որոնք ավելի և ավելի վայր են իջնում, ոչ ոք չի մտածում այն սև վիթխարի արդուկի մասին, որ շարագուշակ անշարժ կանգնած, մռայլ ծխում է և այլանդակում նավահանգստի կապույտ երեսը. գերմանական զրահանավ է։ Նրա շուրջը մանր գծերի պես տաճկական ականակիրներ են, որ նույնպես ծուխ են բարձրացնում։

Իսկ լեռնակատարի ետևից շարունակ ուրախ-ուրախ քայլող նորանոր շարքեր են դուրս գալիս, և ամենքին միատեսակ ապշեցնում և մինչև երկինքը հասնող թունդ կապույտ պատը, և կապտում են նրանց աչքերը, և հուզված շարժվում են ձեռքերը սպիտակ օձապտույտ խճուղով իջնելիս։

Ահա այնտեղ են և սայլախմբերը։ Ձիերը թափ են տալիս ականջներին ընկած անուրները, վայելչաքայլ վազ են տալիս կովերը։ Ճիպոտները հեծած ճչալով վազվզում են երեխաները։ Արագ-արագ քայլերով հետևում են մեծերը՝ պահելով գլորվող սայլերը։ Եվ բոլորը միասին աջ ու ձախ պտույտներ անելով, ուրախ-ուրախ շտապում են անհայտ ճակատագրին ընդառաջ։

Ետևում կանգնած է լեռնակատարների շարքը, որ ծածկում է երկնքի կեսը։

Վայր իջած գլուխը՝ անվերջ օձի պես քաղաքի մյուս կողմն անցնելով, նավահանգստի և ցեմենտի գործարանների արանքով հեռու ձգվեց մի նեղ շավղի վրա։ Մի կողմից մինչև ծովի ափն են հասել լերկ սարերը, մյուս կողմից կապուտաչյա քնքշությամբ ամայի ծովն է տարածվում համասփյուռ։ Ոչ ծուխ կա և ոչ սպիտակ առագաստ։ Միմիայն շարեշար, հալվող սպիտակ, անվերջ ու անծայր, թափանցիկ հաշիաներ վեր են բարձրանում և անհետանում թաց քարերի վրա։ Եվ անհուն լռության մեջ, լոկ սրտին լսելի, ստեղծագործության անդրանիկ երգն է հնչում։

— Տե՛ս, տե՛ս, ծովն իջել է դարձյալ։

— Իսկ դու կարծում էիր, որ նա հենց պատի պես կանգնա՞ծ է մնալու։ Սարի գլխիցն էր այնպես խաբում։ Թե չէ՝ ինչպե՞ս պիտի վրան ման գային։

— Է՜յ, Գարա՜սկա, շմուշկներդ կորան, ծովն անցնելիս բոլորովին կթրջվեն։

Իսկ Գարասկան բոբիկ ուրախ քայլում է՝ հրացանը ուսին։

Միաձայն ծիծաղ է անցնում շարքերի մեջ, և ետևինները ոչինչ չլսած և չիմացած, թե բանն ինչումն է, նույնպես ուրախ-ուրախ հոհոում են։

Իսկ մի խոժոռ ձայն ասում է.

— Միևնույն է, այժմ տեղ չկա գնալու. այս կողմից ծովն է, այն կողմից սարերը, իսկ քամակից ղազախները։ Մնում է միայն առաջ գնալ, պրծավ գնաց։

Գլուխը նեղ ծովափով հեռու առաջ էր անցել և ծածկվել ծովի ոլորանում, մեջտեղը քաղաքի այն կողմն էր պտտվում, իսկ պոչը դեռ ուրախ շարժվում էր խճուղով, որ սպիտակ պտույտներով իջնում էր լեռնաշղթայից։

Գերմանացի կոմենդանտը, որ զրահանավի վրա էր, նկատեց օտար, բայց իր կայզերական թնդանոթների սպառնալիքի տակ գտնվող քաղաքում չնախատեսված մի շարժում, իսկ այդ արդեն անկարգություն էր. նա հրաման տվեց, որ այդ անծանոթ մարդիկ, սայլերը, զինվորները, երեխաները, կանայք, քաղաքի մոտով այդ բոլոր շտապ-շտապ անցնողները անմիջապես կանգնեն ու հանձնեն զենքերը, մթերքները, հացը, խոտը և սպասեն հետագա կարգադրություններին։

Բայց փոշոտ մոխրագույն օձը դարձյալ շարունակում էր

հապճեպ առաջ սողալ։ Դարձյալ շտապ-շտապ քայլում էին կովերը մտահոգ. սայլերից բռնած մանրաքայլ շտապում էին երեխաները. հասակավորները լուռ մտրակում էին իրենց ուժերը լարող ձիերին, և շարքից լսվում էր մի ընդհանուր լայնահնչյուն թնդյուն, որ արձագանք էր տալիս խորքում. քուլա-քուլա բարձրանում էր շլացուցիչ սպիտակ փոշին։

Այդ անվերջ հեղեղի հետ քաղաքից աղմուկներով, ծովի քամիներից աղի դարձած ձայնի հիշոցներով. ուրիշի անիվներն ու սռնակները փշրելով՝ բարձած սայլերի մի ուրիշ հեղեղ սկսեց ծուլվել։ Այդ անթիվ սայլերի վրա նստած էին ջոտ, թունդ հարբած նավաստիներ. նրանց սպիտակ համազգեստի վրա կապույտին էին տալիս ետ ծալած օձիքները, կլոր գլխարկներից կախ էին ընկել սև, ոսկետառ մակագրություններով ժապավենները։ Հազարից ավելի սայլեր, սայլակներ, կառքեր, ֆայտոններ ձուլվեցին սայլախմբի հետ, իսկ նրանց վրա շպարված կանայք և մոտ հինգ հազար նավաստի, որ հայհոյում էին ամենաթունդ հիշոցներով։

Գերմանացի կոմենդանտը սպասեց, բայց տեսավ, որ կանգ չեն առնում։ Այդ ժամանակ, հանկարծ խախտելով կապույտ անդորրությունը, զրահանավից մի դղրդոց լսվեց, որ արձագանք տվեց լեռներում, կիրճերում, կարծես հսկայական բեռներ էին թափվում. իսկ մի վայրկյան հետո արձագանք տվեց հեռու, հեռու կապույտ հորիզոնի ետևը։

Սողացող օձի վրա մեղմ և առեղծվածական մի սպիտակ քուլա ծնվեց, ծանր ճարճատյունով պայթեց և, դանդաղ սահելով, սկսեց հալվել։

Մի աշխետ ձի, որ գիշերը սև էր երևում, հանկարծ ծառս եղավ և, լծափայտերը փշրելով, ամբողջ մարմնով գետին փռվեց։ Մոտ քսան մարդ մոտ վազեցին, բռնեցին բաշից, պոչից, ականջներից, ոտներից և խճուղուց քարշ տվին, ձորակը գցեցին։ Սայլն էլ հետը, և, առանց մի վայրկյան կանգ առնելու, ահագին կառախումբը խճուղու լայնությամբ փռված սայլ սայլի ետևից առաջ էր գնում։ Գարպինոն և Անկան շուռ տված սայլից, ինչ որ ձեռքների տակն ընկավ, լացով դուրս քաշեցին, ուրիշների սայլերի մեջ կոխոտեցին և ոտով առաջ գնացին, իսկ ծերուկը դողդոջուն ձեռքերով շտապ կտրատում էր լծափոկերը և սատկած ձիուց անուրն էր հանում։

Երկրորդ անգամ զրահանավից շլացուցիչ կերպով մի վիթխարի լեզու փայլեց, դարձյալ դղրդաց քաղաքում, անցավ լեռները, իսկ մի վայրկյան հետո խուլ արձագանք տվեց խաղաղ ծովում։ Շողշողուն կապույտ երկնակամարում դարձյալ մի քնքուշ գունդ ծնվեց, զանազան տեղերում մարդիկ հառաչներով վայր ընկան, իսկ սայլի վրա սև հոնքերով և ականջի օղերով մի ջահել կնոջ գրկում կուրծքը շտապ-շտապ ծծող երեխան նվաղեց, ձեռները թուլացան, և շրթունքները սառելով բացվեցին ու պտուկը բաց թողին։

Մայրը վայրի գազանի ձայնով մի ճիչ արձակեց։ Մոտ վազեցին. նա թույլ չէր տալիս և, կատաղաբար ազատվելով նրանցից, ծիծը, որից կաթի սպիտակ կաթիլներ էին կաթում, մանկան սառչող բերանն էր կոխում։ Փոքրիկ գեմքը կիսափակ աչքերով հանգավ, և դեղնություն պատեց նրան։

Իսկ օձն անդադար սողում էր ու սողում, քաղաքի շուրջբոլորը։ Սարի գլխին, ուղիղ արևի տակ մարդիկ, ձիեր երևացին։ Նրանք այնքան մանր էին, որ հազիվ նկատելի էին՝ եղունգից էլ մանր։ Նրանք մի բան էին անում, ձիերի շուրջը խռնված, իսկ հետո հանկարծ անշարժացան։ Եվ անմիջապես այնտեղ չորս անգամ իրար վրա դղրդաց և ջարդվեց, գլորվեց, սարերից, իսկ ներքևը, խճուղու կողքերին, օդի մեջ զանազան տեղերում սկսեցին ստեպ-ստեպ սպիտակ գնդեր ծնվել և տրաքվել նախ վերևում, հետո ավելի ու ավելի ցածր, խճուղու մոտ, և այս ու այնտեղ մարդիկ, ձիեր, կովեր սկսեցին վայր ընկնել։ Առանց ուշադրություն դարձնելու մարդկանց հառաչանքներին՝ նրանց արագ տեղավորում էին սայլերում և անասուններին մի կողմ էին քարշ տալիս, և օձը առաջ էր սողում ու սողում, առանց կտրվելու, սայլը սայլին կպած։

Կայզերի հրամանատարը վիրավորվեց։ Նա կարող էր կոտորել կանանց և երեխաներին, կարգն էր պահանջում այդ, բայց ուրիշներն իրավունք չունեին այդ անելու առանց նրա թույլտվության։ Զրահանավի վրա թնդանոթի երկայն կնճիթը բարձրացավ, մի վիթխարի լեզու արձակեց. կապույտ անդունդի, սարերի և սայլախմբի վրայով բարձր սլացավ կլթկլթալով... Եվ դղրդաց այնտեղ, սարի գագաթին, ուր այն մանր ու մժեղ մարդիկ, ձիերն ու թնդանոթներն էին։ Մարդիկ այնտեղ նորից իրար անցան։ Չորս թնդանոթանոց մարտ-

կոցը հերթով սկսեց ռումբեր ուղարկել հրամանատարին, և արդեն «Հեբենի» վրա սկսեցին կապույտ օդի մեջ սպիտակ քուլաներ ծնվել։ «Հեբենը» բարկացած լռեց։ Նրա խողովակից սև ծխի վիթխարի սյուներ ժայթքեցին։ Նա մռայլ շարժվեց տեղից, դանդաղ հեռացավ երկնագույն նավահանգստից դեպի կապույտ բաց ծովը, շուռ եկավ և...

...Ծովն ու երկինքը զարհուրած ցնցվեցին։ Ծովի կապտությունը մարեց։ Գետինը գերբնական ուժով սասանվեց. մարդկանց կրծքում և ուղեղում տանջալից անդրադարձավ այդ սասանումը, տներում պատուհաններն ու դռները բացվեցին, և մի վայրկյան բոլորը խլացան։

Սարի գագաթին, դանդաղ գալարվելով, սգավոր կանաչագույն, գերմարդկային վիթխարի մի կույտ էր բարձրանում, արևի շողերը չէին թափանցում, և նրա թունավոր գոլորշիների մեջ ողջ մնացած կազակների խմբերը գազանացած մրտրակում էին մահասարսափից խելագարի պես մնացած երկու թնդանոթները սարնիվեր քաշող ձիերին և մի բոպե հետո անհետացան գագաթի ետևում։ Իսկ սգավոր-կանաչ վիթխարի կույտը շարունակ կանգնած էր՝ դանդաղ-դանդաղ ցրվելով։

Գերբնական ցնցումից գետինը նստեց, գերեզմանները բացվեցին, բոլոր փողոցներում մեռյալներ երևացին։ Մոմի գույնով աչքերի տեղ սև խոր ընկած փոսեր, մաշված հոտած սպիտակեղենով, նրանք քայլում, սողում էին, գնում էին կապալով միայն մի ուղղությամբ՝ դեպի խճուղին։ Ոմանք լուռ, մտախոհ, ակնկառույց, տանջվելով ոտ էին փոխում, ոմանք լայն շպրտում էին իրենց մարմինը անթացուպերի վրա հենված, մյուսներից առաջ անցնելով, ոմանք էլ վազում էին անհասկանալի խռպոտ, բեկբեկ ձայներով գոռալով։

Եվ բարակ, բարակ, վիրավոր թռչունի պես, մի տեղից ձայն է լսվում.

— Ջո՛ւ-ո՛ւր... ջո՛ւ-ո՛ւր...— այնպես բարակ, ինչպես մի վիրավորված թռչուն չոր ամայի արոտավայրում։

Մի բոլորովին ջահել տղա, պատռված սպիտակեղենով, որի տակից երևում է դեղին մարմինը, անտարբեր փոխում է քայլերը, զառանցող աչքերով իր առաջը նայելով, բայց ոչինչ չտեսնելով.

— Ջո՛ւր... Ջո՛ւ-ո՛ւր...

Մի քույր տղայի պես կարճ խուզած գլխով, խունացած խաչը ճղված թևքի վրա, ոտաբոբիկ վազում է նրա ետևից։

— Մի՛տյա, սպասի՛ր... Ո՞ւր... Իսկույն ջուր կտամ, թեյ կտամ, սպասի՛ր... Ետ գնանք... Հո գազան չե՞ն նրանք...

— Ջո՛ւր... Ջո՛ւր...

Բնակիչները շտապով ծածկում են պատուհանները, դռները։ Կտուրների տակից, ցանկապատերի ետևից կրակում են գնացողների մեջքերին։ Իսկ հիվանդանոցներից, լազարեթներից, մասնավոր տներից ամենքը դուրս են գալիս, դուրս են թափվում պատուհաններից, ընկնում են վերնահարկերից և մեկնում, քարշ են գալիս հեռացող սայլախմբերի ետևից։

Ահա և ցեմենտի գործարանները և խճուղին... Իսկ խճուղով արագաքայլ անցնում են կովեր, ձիեր, մարդիկ, սայլեր. օձի պոչը դուրս սողում, հեռանում է։

Տենդոտ աչքերը խճուղուն հառած գնում են շտապ-շտապ. որն առանց ոտի, որն առանց ձեռի, որը փշրված, կեղտոտ շորով փաթաթված ծնոտներով, որի գլխին արյունոտ ցնցոտիներից չալմա, որի փորը փաթաթած, իսկ սայլերն անդադար առաջ են գնում, և կողքին քայլող մարդկանց դեմքերը խոժոռ են, մտախոհ, միայն իրենց առաջն են նայում։ Եվ շարունակ, աղերսագին լսվում է.

— Ախպե՛ր... Ախպե՛ր... Ընկերնե՛ր...

Ամեն կողմից լսվում են մերթ խռպոտ, մերթ կտրվող ձայներ, ականջ ծակող զիլ ձայներ, լսվում են նույնիսկ սարերի մոտից.

— Ընկերնե՛ր, ես տիֆով չեմ հիվանդ, տիֆով չեմ հիվանդ, ես վիրավոր եմ, ընկերնե՛ր...

— Ե՛ս էլ տիֆով հիվանդ չեմ...

— Ե՛ս էլ...

— Ե՛ս էլ...

— Ե՛ս էլ...

Սայլերն առաջ են սողում։

Մեկը երկու ձեռքով բռնել է իրեղեններով և երեխաներով լիքը մի սայլից և ցատկում է միակ ոտքով։ Սայլի սպիտակ բեղերով, արևից և քամուց սևացած դեմքով տերը կռանում է, բռնում է նրա միակ ոտից ու կոխում սայլի մեջ՝ սարսափելի ծվծվացող երեխաների գլխին։

— Է՛յ, զգո՛ւյշ, երեխաներին խեղդեցիր,— բղավում է գլխի թաշկինակը ծռված կինը։

Միոտնանին աշխարհիս ամենաերջանիկ մարդու տեսք ունի։ Իսկ խճուղով գնում են հա գնում, սայթաքելով, վայր ընկնելով և վերկենալով կամ փոսի մեջ անշարժ պառկած մնալով։

— Սիրելինե՛րս, բոլորին կվերցնեի, եթե հնար լիներ, թայց ահա տեսնք, թե ինքներս որքան վիրավորներ ունենք, իսկ ուտելու ոչինչ չի մնացել. մեզ հետ դուք կկորչեք, մեղք եք...— կանայք քիթները սրբում են և համառ կերպով թափվող արցունքները չորացնում։

Մի հաղթանդամ զինվոր, մռայլ դեմքով և մեկ ոտքով, մտազբաղ իր առաջը նայելով, անթացուպերը շատ առաջ գցելով՝ իր ուժեղ մարմինն էլ ետևից է գցում, լայն-լայն քայլելով խճուղով ու վրա է բերում.

— Ես ձեր մերը... Ես ձեր ըսենցն ու ընենցը...

Իսկ սայլերը գնում են ու գնում։ Վերջին անիվներն արդեն շատ հեռու են փոշի բարձրացնում, և հազիվ լսվում է երկաթե սոնակների զնգոցը։

Քաղաքը և նավահանգիստը ետևում են մնացել։ Միայն ամայի խճուղին է, որի վրա հեռու ցրված դանդաղ առաջ են գնում աչքից ծածկված սայլերի ետևից, մոմի պես դեղին մեռյալները։ Կամաց-կամաց ուժասպառ կանգ են առնում, նստում են և պառկում ճանապարհի կողքերին։ Եվ ամենքն էլ մարող աչքերով ձգտում են դեպի այն կողմը, ուր ծածկվել է վերջին սայլը։ Վերջալույսով ներկված փոշին հանդարտ նըստում է։

Իսկ բարձրահասակ միոտնանի զինվորը անթացուպերով շարունակ առաջ է գցում իր ուժեղ մարմինը ամայի խճուղու վրա և մրթմրթում.

— Ես ձեր մերը... Ձեզ համար արյուն ենք թափել... Ձեր ըսենցն ու ընենցը...

Հակառակ կողմից քաղաքն են մտնում կազակները։

10.

Երկարում է հոգնած գիշերը և, առանց մի բոպե ընդհատելու իր աղմկալից և չհանդարտվող ընթացքը՝ հոսում է սև մարդկային հեղեղը։

Աստղերը արդեն նվաղած գունատվում են։

Սկսում են նշմարվել գորշ կարմրավուն ամայի, խանձված լեռները, խոռոչները, կիրճերը։ Երկինքը հետզհետև լուսավորվում է։ Անընդհատ փոփոխվող ծովը այստեղ անսահման է սփռվում՝ մերթ նուրբ-մանիշակագույն կամ ծխագույն-սպիտակ, մերթ իր մեջ ընկղմված երկնքի կապուտակությամբ ծածկված։

Սարերի գագաթները լուսավորվեցին։ Լուսավորվեցին մութ, երերվող անթիվ սվիններ։

Դեպի խճուղին թեքված ժայռոտ սեպերի վրա խաղողի այգիներ են. սպիտակին են տալիս ամառանոցները, դատարկ վիլլաները։ Երբեմն այնտեղ թիակներ, քլունգներ ձեռներին, տանու գործած հարդի գլխարկներով մարդիկ են երևում և կանգնած նայում են, թե ինչպես ձեռքները թափ տալով զինվորներ են անցնում և անհամար սրածայր սվիններ երերվում։

Ովքե՞ր են նրանք. ի՞նչ տեղից են, ո՞ւր են գնում այդպես, առանց կանգ առնելու, ձեռքները հոգնած շարժելով։ Դեմքերը դեղին են, ինչպես աղաղած կաշի։ Փոշոտ ու ծվատված, աչքերի շուրջը սևացած։ Սայլերը ճռճռում են, հոգնած սմբակները խուլ տրոփում։ Սայլերից երեխաներ են նայում։ Երևի հոգնածությունից ձիերն էլ գլուխները կախ են գցել։

Սկսում են նորից հողը քանդել։ Նրա՞նց ինչ... Բայց երբ հոգնած մեջքներն ուղղում են, խճուղով քայլում ու քայլում են, ճանապարհի հետ պտույտներ անելով, և երևում են անհամար սվիններ։

Իսկ արևն արդեն սարերից շատ բարձր է, և երկրի վրա տոթ է սփռվում, և ծովի պսպղոցն աչք է ցավեցնում։ Մեկ, երկու, հինգ ժամ՝ գնում են գնում։ Մարդիկ արդեն երերում են, ձիերը կանգ առնում։

— Չլինի՞ թե գժվել է այդ Կոժուխը։

Հիշոցներ են լսվում։

Կոժուխին հաղորդեցեք, որ նրա զորասյունից անջատվե-

ցին Սմոլոկուրովի միացած երկու զորասյունները իրենց սայլախմբով, գիշերը մնացին ճանապարհին գտնվող գյուղում, և այժմ նրանց միջև խճուղին տասը վերստ ազատ է։ Նա կկոցեց իր փոքրիկ աչքերը, կարծես թե անտեղի ծաղրական կայծերը թաքցնելով, և ոչինչ չասաց։ Եվ շարունակ գնում էին ու գնում։

— Նա մեզ հալից գցում է,— խուլ տրտնջում էր զորասյունը։

— Ի՞նչ է մեզ քշում. մի կողմից ծովն է, մյուս կողմից սարերն են. մեզ ո՞վ ձեռք կտա։ Թե չէ այսպես առանց կազակների էլ հալումաշ կլինենք։ Ահա արդեն հինգ ձի ենք թողել, չեն գնում։ Մարդիկ էլ պառկում մնում են ճանապարհի կողքերին։

— Ի՞նչ եք նրան նայում,— բղավում են նավաստիները, ատրճանակներ, ռումբեր, գնդացիրների ժապավեններ կախ տված իրենց վրա, գնացող սայլերի մեջ մտնելով և խառնվելով շարքերի հետ,— չե՞ք տեսնում, որ նա իր էշն է քշում։ Սպա չի՞ եղել։ Ոսկե ուսադիր կրո՞ղը... Ա՛յ, կհիշեք՝ փորձանք կբերի նա մեր գլխին, պատեպատ կընկնենք, բայց արդեն ուշ կլինի։

Երբ արևը ստվերները սաստիկ կարճացրեց, քառորդ ժամ կանգնեցին, ձիերին ջուր տվին, քրտնաթոր մարդիկ իրենց ծարավը կոտրեցին և նորից ճանապարհ ընկան շիկնած խճուղով, հազիվ փոխելով ծանրացած ոտները։ Կիզիչ է օդը։ Անտանելի շլացուցիչ փայլով պսպղում է ծովը։ Բայց հա գնում են, և խուլ դժգոհությունն արդեն ակնհայտ է և սպառնալից խանգարում է շարքերը։ Մի քանի վաշտի ու գումարտակի պետեր հայտնեցին Կոժուխին, որ իրենց զորամասերը կբաժանեն հանգստանալու համար և անկախ կշարունակեն ճանապարհը։

Կոժուխը մթնեց, ոչինչ չպատասխանեց։ Զորասյունը գնում է ու գնում։

Գիշերը կանգ առան։ Մթության մեջ տասնյակ վերստի վրա խճուղու կողքին խարույկներ պլպլացին։ Կորտում էին ծուռ ու մուռ, ցածր, չոր փշոտ ծառերը (այս անապատում անտառներ չկան), կոտրատում էին ամառանոցների ցանկապատերը, հանում էին պատուհանների շրջանակները, կահկապասիքն ու վառում էին։ Կրակի վրա կաթսաներով կերակուր էին եփում։

Թվում էր, թե գերմարդկային հոգնածությունից բոլորն էլ պետք է մեկնվեին և մեռածի պես քնեին։ Բայց խարույկներով լուսավորված խավարը շարժվում էր կարմիր գույներով, տարօրինակ կերպով կենդանացել էր։ Լսելի էր խոսակցություն, ծիծաղ, հարմոնի ձայն։ Զինվորները կատակում էին, միմյանց կրակի մեջ էին հրում։ Գնում էին սայլախմբի կողմը, խաղում էին աղջիկների հետ։ Կաթսաներում շիլա էր եփվում։

Մեծ խարույկների բոցերը լիզում էին վաշտերի սև կաթսաները։ Այդ անվերջ թափորը կարծես երկար ժամանակով էր տեղավորվել։

11.

Գիշերը, քանի դեռ բոլորի հետ միասին էր գնում, ամբողջական էր, իսկ հենց որ կանգնեցին, մաս-մաս եղավ, և ամեն մի մասը իր կյանքովն էր ապրում։

Մի փոքրիկ կրակի մոտ, վրան մի փոքր կաթսա կախ տված, որ մնացած իրերի և ուտեստի պաշարի հետ կարողացել էին դուրս կորզել դեն գցած սայլից, գզգզված մազերով ծալապատիկ նստած էր կարմրագույն լույսից վհուկի նման պառավ Գարպինոն։ Կողքին գետնին փռած մահուդի արխալուղի վրա, չնայած որ տաք գիշեր էր, երեսը ծածկած քնած էր ծերուկը։ Պառավը կրակի մոտ նստած գանգատվում էր.

— Ոչ թաս կա, ոչ գդալ... փոքրիկ կիսատակառն էլ մնաց. տեսնես ո՞ւմ կհասնի. այնպես լավն էր, այնպես պինդ, թիկենու փայտից։ Արդյոք մեր Գնեդկոյի նման ձի մեկ էլ կունենա՞նք. այնպես վազկան, մտրակի չէր սպասում երբեք։ Ա՛յ ծերուկ, արի հաց ուտենք։

— Չեմ ուզում,— խռպոտ պատասխան է լսվում։

— Ինչպե՞ս թե չես ուզում. չուտես՝ կհիվանդանաս, գբրկած հո չե՞մ տանելու քեզ։

Ծերուկը լուռ պառկած է գետնին, խավարի մեջ, երեսը ծածկած։

Փոքր-ինչ հեռու, սայլի մոտ, խճուղու վրա խավարի մեջ սպիտակին էր տալիս մի վայելչակազմ աղջիկ։ Եվ աղջկա ձայնն ասում է.

— Անուշի՜կս, հոգյա՜կս, բաց թող, այդպես չի կարելի։

Սայլերի շուրջը աղոտ նշմարվող կանանց ձայները.

— Տո՛ւր, հոգյա՜կս, տո՛ւր, պետք է թաղել այդ հրեշտակին։ Աստված իր մոտ կընդունի նրան։

Մուժիկները լուռ կանգնած են։

Իսկ կանայք՝

— Ծծերն ուռել, կոշտացել են։

Ձեռքերը կոխում են և փորձում ուռած և ամրացած ստինքները։ Մութի մեջ կատվի աչքերի նման փայլող աչքերով գլխաբաց մայրը խոնարհվում է պատռած շապկի տակից սպիտակին տվող ուռուցիկ կրծքի վրա և սովոր մատներով պտուկը բռնելով՝ քնքշությամբ դնում է երեխայի անշարժ մնացած, սառած բերանը։

— Կարծես քար է կտրել։

— Արդեն ետ է գալիս. կանգնել չի կարելի։

Մուժիկների ձայներ՝

— Ի՞նչ եք ականջ դնում նրան. վերցրեք՝ պրծավ գնաց։

— Կվարակի։ Ինչպե՞ս կարելի է։ Պետք է թաղել։

Եվ երկու առողջ, ուժեղ մուժիկ վերցնում են երեխային, բանալով մոր ձեռքերը։

Խավարը ճեղքում է կատաղի գազանային մի ճիչ, որ լրամեց խճուղու երկայնքով ցրված խարույկների մոտ, տարեց ու անցավ աղոտ նշմարելի ծոփի երեսով, և ամայի լեռնեքսան էլ լսվեցին, եթե մեկն այնտեղ թաք է կացել։ Կատաղի կրակից սայլը ճռճռում է և ճռճվում։

— Կծո՛ւ-ո՛ւմ ես...

— Ցատանի աղջիկ, բոլոր ատամները խրեց ձեռքիս մեջ։

Մուժիկները ետ են քաշվում։ Նարից կանայք տխրամած կանգնած են։ Կամաց-կամաց ցրվում են։ Մոտենում են ոտքերը։ Շոշափում են ուռած կուրծքը։

— Սա էլ կմեռնի։ Կաթը մակարդվել է։

Իսկ սայլի վրա առաջվա պես խաչվածի նմանք նստած է, ամեն բառն բաց պտուկը շոյա կողմը դարձնելով, գազանի շոր հայացքով պատրաստ է ամեն մի վայրկյան մոլեգնաբար

պաշտպանվելու։ Մերթընդմերթ քնքուշ կերակրում է ծծով կարկամած սառն բերանը։

Կրակները գողդոզում են, հեռու խավարի մեջ կորչելով։

— Անուշի՜կս, տո՛ւր, դե տո՛ւր, չե՞ս տեսնում, որ մեռած է։ Մենք կթաղենք, իսկ դու լաց եղիր։ Ինչո՞ւ չես լաց լինում։

Աղջիկը կրծքին է սեղմում այդ խավարի մեջ վառվող գայլի աչքերով վհուկի գզգզված գլուխը։ Իսկ նա զգուշությամբ հեռացնելով նրան, խռպոտ ձայնով ասում է.

— Կամա՛ց, Ա՛նկա, ա՛ռ... Քնած է, մի անհանգստացնի նրան։ Ամբողջ գիշերը քնած է, փոկ առավոտյան կխաղա, Սանչանին է սպասում։ Հենց որ Ստեպանը գա, կսկսի փուչիկներ բաց թողնել և տոտիկները թափթափ տալ, խաղ անել, այնպես սիրունիկ երեխա է- այնպես խելոք, այնպես հասկացող։

Եվ նա կամացուկ ծիծաղում է անուշ, զսպված ծիծաղով։

— Սսս՜...

— Ա՛նկա, Ա՛նկա,— լսվում է խարույկի մոտից,— ինչո՞ւ չես գալիս ընթրելու։ Ներուկը չի գալիս, դու էլ կորել ես... Ա՛յ դու, սատանի ճուտ... ախր, շոգացավ, գնաց...

Կանայք կամացուկ գալիս են, ձեռք տալիս, ցավակցություն հայտնում և հեռանում։ Կամ կանգնում են գլուխները բռնած և արմունկներին նեցուկ տալով նայում են։

Մուժիկները չիբուխ են քաշում, մի վայրկյան կարմրավուն լուսավորելով մազմազոտ դեմքերը։

— Պետք է Ստեպանին կանչել, թե չէ երեխան սրա ձեռների վրա կփտի, որդեր կգոյանան։

— Արդեն ուղարկել ենք կանչելու...

— Կաղ Միկիտկան վազ տվեց։

12.

Այդ կրակները սովորական չեն։ Խոսակցությունն էլ, ծիծաղն էլ, կանացի ծվոցն էլ, թունդ հիշոցն էլ, շշերի ձայնն էլ ուրիշ տեսակ են։ Երբեմն հանկարծ սկսում են միասին նվագել մի քանի մանդոլիններ, կիթառներ, բալալայկաներ՝ մի ամբողջ նվագախումբ, որ ամենևին նման չէ խավարին, խա-

վարի մեջ կրակների շղթային։ Սև սարերն անշարժ են. անտեսանելի ծովը լուռ է, որպեսզի չխանգարի իր մեծությամբ։

Մարդիկ էլ առանձնահատուկ են. խոշոր, թիկնավետ, վրստահ շարժումներով։ Երբ խարույկների կարմիր-երերուն շրջանն են ընկնում՝ նրանք գեր են, բրոնզե գույն սև, զանգակաձև վարտիքներով, նավաստու սպիտակ հագուստով, շատ բաց արած, բրոնզե գույնի վզով և կրծքով, իսկ մեջքներին ծածանվում են գնդակներից կախ ընկած ժապավենները։ Ոչ մի խոսք, ոչ մի շարժում առանց թունդ հիշոցի։

Կանայք խարույկի դողդոջուն փայլքի մեջ ցայտում են պայծառ բծերի նման։ Ծիծաղ, ծվծվոց, սիրահարներն են զվարճանում։ Գույնզգույն փեշերը հավաքած՝ ծալապատիկ նստած կերակուր են պատրաստում խարույկի կրակի վրա, կասկածելի խոպոտ ձայնով երգելով, իսկ գետնի վրա փռած քառակուսի սպիտակ սփոցների վրա խավիարի տուփեր, սարդինաներ, գինու շշեր, քաղցրավենիք, կարկանդակներ, թխվածքներ, կոնֆետներ, մեղր։ Խավարի մեջ հեռու սփռված է այդ թափորը աղմուկ-ծիծաղով, հայհոյանքով և մանդոլինի ու բալալայկայի անակնկալ ներդաշնակ հնչյուններով։ Կամ հանկարծ խավարը լցվում է հարբած բարձրաձայն և վարժ ու շնորհալի խմբերգով, և հանկարծ լռում. այսինքն թե, լսեցի՞ք, մենք ամեն ինչ կարող ենք։ Եվ նորից աղմուկ, ծիծաղ, զրույց, ծվծվոց, կատակներ, սիրալիր հիշոցներ։

— Ընկերնե՛ր։

— Լսում ենք։

— Սկսեցինք։

— Նվագեցե՛ք, ձեր հերը, ձեր պապը, ձեր օխտը պորտը...

— Օ՜յ, Կամբո՛ւզ, ապարանջանս կտրեցիր... գրողը տանի քեզ... ապարանջանս կորց...

Ձայնը կտրվեց։

— Ընկերնե՛ր, ինչո՞ւ ենք մենք այստեղ։ Մի՞թե սպաների օրերը վերադառնում են։ Ինչո՞ւ է Կոժուխը կարգադրություն անում, ո՞վ է նրան գեներալ նշանակել։ Ընկերներ, աշխատավոր ժողովրդի հարստահարություն է այդ։ Թշնամիներն ու հարստահարողները...

— Կոտորեցե՛ք դրանց...
Եվ խմբովին ներդաշնակ՝

Վստահ քայլեցեք, ընկերնե՛ր։
Կռվում կարիանանք հոգով։

13.

Նա նստած է խարույկի լույսով լուսավորված, ծնկները գրկած, անշարժ։ Նրա ետևի կրակի կարմիր շրջանակի մեջ ցցվել է ձիու գլուխը։ Փափուկ շրթունքները շտապ-շտապ հավաքում են գետնին գցած խոտը, ղը՜ռթ-ղը՜ռթ ծամում է, մեծ, սև աչքերը խելոք պսպղում են և մանիշակագույն ցոլքով ուշադրությամբ դիտում։

— Այո,— ասում է նա շարունակ մտազբաղ, ծնկները գրկած, անթարթ նայելով երերվող կրակին,— հազար հինգ հարյուր նավաստի են բերել, հավաքել են, ում որ բռնել են։ Նրանք էլ հիմարի պես՝ մեր բանն, ասում են, ծովն է, մենք ծովի մարդիկ ենք, մեզ ձեռք չեն տա։ Իսկ նրանց քշում են, կանգնեցնում և ասում՝ փորձեցե՛ք։ Իսկ շուրջը գնդացիրներ են, թնդանոթներ, կազակներ՝ հրացաններով։ Նրանք սկսում են փորել առանց իմանալու, բոլորն էլ առողջ, ուժեղ են։ Սարի լանջի վրա ժողովուրդ է հավաքվում։ Կանայք լաց են լինում։ Սպաները ման են գալիս ատրճանակները ձեռքներին, ով որ թիակը դանդաղ է շարժում՝ կրակում են փորին, որպեսզի երկար տանջվի։ Մյուսները փորում են, իսկ նրանք, որոնց փորումը գնդակ կա, արյունաշաղախ քարշ են գալիս և տնքում։ Ժողովուրդը հառաչում է, իսկ սպաները... «Ձայներդ կտրեցե՛ք, շան որդիներ»...

Նա պատմում էր այդ, իսկ ամենքը լուռ ականջ էին դնում այն բանին, ինչը որ նա չէր պատմում, բայց որը բոլորն էլ, հայտնի չէ որտեղից, գիտեն։

Կանգնած են չորս կողմը, կարմիր լույսով լուսավորված, առանց գլխարկների, սվիններին հենված։ Մյուսները փորի վրա պառկած լսում են, և խավարի մեջ երևում են նրանց փրշոտ, ուշադիր գլուխները, բռունցքներին հենված, ծերունիները միրուքները ցցած։ Կանայք տխրադեմ սպիտակին են

տալիս։ Իսկ երբ կրակը մարում է, միայն նա է նստած մնում, ծնկները գրկած. ձիու գլուխը մի բոպե իջնում է նրա մեջքի ետևը, նորից բարձրանում է և՝ ղը՜ռթ-ղը՜ռթ ծամում. սև փայլով պսպղում է խելոք, ուշիմ աչքը։ Եվ կարծես բացի նրանից էլ ոչ ոք չկա, այլ միայն աղջամուղջ և անսահման գիշեր։ Իսկ աչքերի առաջ՝ տափաստան, աղոթքներ, և տափաստանով սլանում է սև նժույգի վրա, հասնում է և տոպրակի պես փռվում մի արյունաշաղախ վիրավոր։ Նրա ետևից երկրորդը, իջնում է ձիուց, ականջը դնում կրծքին. «Որդի՜ս... Որդի՜ս...»

Մեկը հանգչող ածուխների վրա չոր ցախի կտորներ է գցում։ Ճրթճրթում է, բռնկվում և խավարը ետ մղում. դարձյալ կանգնած են սվիններին հենված, ծերերն իրենց դեմքերը միրուքների մեջ թաղած. կանայք տխրադեմ են և ուշադիր գլուխները բռունցքներին հենած։

— Շատ տանջեցին խեղճ աղջկան, շատ ծեծեցին։ Կազակները հարյուրի չափ էին... մեկը մյուսի ետևից պղծեցին նրան, և նա նրանց տակին էլ մեռավ։ Հիվանդանոցում մերոնց մոտ քույր էր՝ տղի պես մազերը խուզած, ոտաբոբիկ էր միշտ վազվզում, գործարանի բանվորուհի էր, չեչոտ էր ու շատ աշխույժ։ Վիրավորներից չցանկացավ հեռանալ, նայող չկար, ջուր տվող չկար։ Մեծ մասը տիֆով հիվանդներ էին։ Բոլորին կոտորեցին՝ մոտավորապես քսան հազար մարդ։ Երկրորդ հարկից փողոց էին գցում։ Սպանները, կազակները, սրերը մերկացած, ամբողջ քաղաքում փնտրում էին, ոչ մեկին ողջ չթողին։ Ամբողջ քաղաքը արյան մեջ էր։

Չկար այլևս ոչ աստղազարդ գիշեր, ոչ սևին տվող լեռներ, այլ միայն՝ «Ընկերնե՛ր... Ընկերնե՛ր... Ես տիֆով հիվանդ չեմ... Ես վիրավոր եմ»...

Դարձյալ խավար, և խավարի վրա աստղեր, և նա հանգիստ պատմում է, և դարձյալ բոլորը զգում են այն, ինչի մասին որ նա լռում է. տասներկու տարեկան որդու գլուխը շախշախել են հրացանի կոթով. պառավ մորը գանակոծ մահացրել. կնոջը բռնաբարել են քեֆներն ուզածի չափ, հետո կախ տվել շքհորի ձողից, իսկ երկու փոքրիկները կորել են, հայտնի չէ որտեղ. նա այս չի պատմում, բայց ամենքն էլ գիտեն։

Տարօրինակ կապ ունի այս մեծ լռությունը լեռների խորհրդավոր սևության, խավարով քողարկված անհուն ծովի հետ ոչ մի ձայն, ոչ մի լույս։ Կարմիր ցոլքը թարթում է և երերում խավարի սեղմվող օղակը։ Լուսավորված մարդը նստած է, ծնկները գրկած։ Ղը՜ռթ-ղը՜ռթ՝ ծամում է ձին։

Հանկարծ ծիծաղեց մի ջահել, որ կոթնել էր սվինին, և սպիտակ ատամները վարդագույն ցոլացին անմորուս դեմքի վրա։

— Մեր ստանիցայում հենց որ կազակները ռազմաճակատից եկան, ձեռաց բռնեցին իրենց սպաներին և հայդա, դեպի քաղաքը, ծովի ափը։ Քաղաքից տարան դեպի նավահանգիստը, վզներից քարեր կախեցին և ծովը շպրտեցին։ Իսկ ջուրը արցունքի նման մաքուր է, և երկար ժամանակ երևում էր, թե ինչպես նրանք ոտները, ձեռները թափթփ էին անում խեցգետնի պես։

Նա նորից ծիծաղեց, ցույց տալով իր փոքր-ինչ կարմրավուն դարձած ատամները։ Խարույկի առաջ նստած էր ծնկները գրկած մարդը։ Կարմիր թարթափող խավար էր տիրում, իսկ խավարի մեջ բաղմանում էր ականջ դնող ամբոխը։

— Եվ երբ որ հասնում էին հատակին, կծկվում կպչում էին իրար և այդպես էլ մնում։ Բոլորը երևում էր, ուղղակի զարմանալի էր։

Ականջ դրին. հեռու, մեղմ և մարդու սրտին ինչ-որ բան ասելով հնչում էին լարավոր գործիքների ներդաշնակ ձայներ։

— Նավաստիներն են...— ասաց մեկը։

— Իսկ մեր ստանիցայում կազակները սպաներին տոպրակների մեջ էին կոխում, բերանները կապում, ու հա՜յդա՝ դեպի ծովը։

— Անելու բան չէր այդ,— տխուր արտասանեց մի հողմահար, տափաստանային ձայն և լռեց. չէր երևում, թե ով էր. հետո դառնությամբ ավելացրեց,— հիմա որտե՞ղ պարկ կճարես, չկա, իսկ առանց պարկերի կառավարվել չի լինում։

— Ռուսաստանից էլ չեն բերում։

Նորից լռություն։ Գուցե նրա համար, որ խարույկի առաջ անշարժ ծնկները գրկած մարդն է նստած։

— Ռուսաստանում խորհրդային իշխանություն է։

— Մոսկվայում։

— Ինչ տեղ որ մուժիկն է, այնտեղ էլ իշխանություն է։

— Իսկ մեզ մոտ բանվորներ եկան, ազատություն բերին, ստանիցաներում խորհուրդներ ընտրեցին, հրամայեցին հողը խլել։

— Արդարություն բերին, իսկ բուրժույներին՝ դո՞ւրս...

— Մի՞թե մուժի՛կը չի բանվոր տվել։ Տես, թե ցեմենտի գործարանում մերոնցից քանի մարդ է բանում, իսկ մեքենայի գործարանում, ձիթահան և ուրիշ բոլոր գործարաններում, քաղաքներում։

Հեռվից հազիվ լսելի էր.

— Օ՜յ, մայրի՛կ...

Հետո մանուկը լաց եղավ։ Կանացի մի ձայն հանգստացնում էր։ Երևի խճուղու վրա էր, թույլ սեին տվող սայլերի մեջ։

Մարդը ծնկները մեկնեց, վեր կացավ, առաջվա պես մի կողմից կարմրագույն լուսավորված, ձգեց ձիու ճակատի մազափունջը, սանձեց, գետնից կարկատած պարկի մեջ հավաքեց խոտի մնացորդը, հրացանը կախ տվեց ուսից, ցատկեց թամքի վրա և միանգամից անհետացավ խավարի մեջ։ Երկար ժամանակ լսվում էր սմբակների հեռացող և թուլացող թրխկոցը, հետո այն էլ մարեց։

Եվ դարձյալ. կարծես խավար չէր, այլ անծայր տափաստան և աղորիքներ, և աղորիքների կողմից դոփյունի ձայն է գալիս, երկար և թեք ստվերներ են ձգվում, իսկ ետևից կանչում են. «Ո՞ւր... Ճանապարհդ կորցրե՞լ ես, ի՛նչ է... Ե՛տ դարձիր...»։ «... Ընտանիքն այնտեղ է, իսկ այստեղ որդին է ընկած»...

— Է՜յ, երկրորդ վաշտ...

Հանկարծ՝ կրկին խավար, և հեռավոր շղթայի նման կրակներ են այրվում։

— Գնաց Կոժուխին զեկուցումներ անելու. ամեն բան գիտի, ինչ որ կազակների մոտ կատարվում է։

— Օ՜յ, քանիսին է նա կոտորել՝ թե՛ երեխաների, թե՛ կանանց։

— Ամեն ինչով կազակի նման է՝ թե՛ չերքեզին, թե՛ խազիրները, թե փափախը։ Կազակները կարծում են, թե իրենցից է։ «Ո՞ր գնդից ես»— «Այսինչ գնդից»,— և ճանապարհը

շարունակում է։ Կին է պատահում՝ սրով գլուխն է թոցնում. երեխա է պատահում՝ դաշույնն է կոխում։ Երբ պետք է լինում՝ դեզի ետևից կամ մի անկյունից հրացանով կազակին վայր է գցում։ Ամեն ինչ գիտե նրանց մասին. որ զորամասերը ինչ տեղ են, ինչքան են, ամեն բան հաղորդում է Կոժուխին։

— Երեխաներն ի՞նչ մեղք ունեն,— հառաչեց մի կին, դառնագին, կոթնելով ձեռքին և արմունկը դեմ տալով։

— Է՜յ, երկրորդ վաշտ, խլացե՞լ եք, ի՛նչ է։

Պառկածները դանդաղ վեր կացան, ձգվեցին, հորանջեցին և ճանապարհ ընկան։ Սարի գագաթին նոր աստղեր դուրս եկան։ Կաթսաների շուրջը, գետնի վրա տեղավորվեցին և սկսեցին հաց ուտել։

14.

Մինչև անգամ խավարի մեջ զգալի էր, որ գնում էին աղմկալից, սանձարձակ խմբով և հեռվում աղոտ կերպով սպիտակին էին տալիս։ Հողմահար, թե հարբած ձայներով, աներևակայելի, անարտասանելի հիշոցներ օգտագործելով, խոսակցում էին իրար հետ։

Նրանք, ովքեր փոքրիկ կաթսաներից գդալներով կերակուր էին ուտում, մի բոպե գլուխները շուռ տվին.

— Նավաստիներն են։

— Ի՜նչ անսանձ մարդիկ են։

Մոտեցան ու միաբերան ընտիր-ընտիր թափեցին.

— Ձեր մերը... Ձեր հերը... Ձեր մերը... Նստած կաշա եք լափում, իսկ թե հեղափոխությունը կործանվում է, ձեր հոգը չի, հա՞... Շա՜ն տղերք... Բուրժույնե՛ր...

— Ի՞նչ եք շան պես հաչում... փչաններ...

Խեթ-խեթ են նայում նրանց, բայց նրանք ոտից գլուխ զինված են ատրճանակներով, ռումբերով, գնդացրի ժապավեններով։

— Ո՞ւր է տանում ձեզ Կոժուխը... Հասկանո՞ւմ եք... Հեղափոխությունը մենք ենք սկսել... Ա՜յ, ամբողջ նավատորմը ջրասույզ արինք, Մոսկվային բանի տեղ չդրինք։ Բոլշևիկները Վիլհելմի հետ սիլի-բիլի են անում, իսկ մենք, սոցիա-

լիստ-հեղափոխականներս, երբեք չենք թույլ տա, որ ժողովրդի շահերին դավաճանեն։ Ով որ ժողովրդի շահը անտես անի՝ տեղն ու տեղը կսպանենք։ Ո՞վ է Կոժուխը։ Սպա։ Իսկ դուք ոչխարներ եք։ Գլուխներդ կախ գցած գնում եք։ Ա՛յ դուք անպոզներ...

Խարույկի ետևից, որի վրա վաշտի կաթսան էր սևին տալիս, մի ձայն լսվեց.

— Ի՞նչ եք տզրուկի պես կպել մեզանից. մի ամբողջ անառականոց եք հետներդ ման ածում։

— Չե՛զ ինչ... Նախանձո՞ւմ եք... Քիթդ մի կոխիր ուրիշների դուռը, թե չէ կպոկեն։ Մենք իրավունք ունենք։ Ո՞վ սկսեց հեղափոխությունը. նավաստինե՛րը։ Ո՞ւմն էր թագավորը գնդակահար անում, խեղդում, պարաններից կապոտում. նավաստիների՛ս։ Ո՞վ էր արտասահմանից գրականություն անց կացնում. նավաստինե՛րս։ Ո՞վ էր բուրժույներին և տերտերներին կոտորում. նավաստինե՛րս։ Դուք նոր եք աչքներդ բաց անում, իսկ նավաստիներս վաղուց արյուն ենք թափում կռվի մեջ։ Եվ երբ մենք թափում էինք մեր հեղափոխական արյունը, հենց դուք էիք մեզ ցարական սվիններով կոտորում։ Սինլքորնե՛ր, ինչացո՞ւ եք դուք, ձեր ըսենցն ու ընենցը։

Մի քանի զինվոր վայր դրին գդալները, հրացանները վերցրին, տեղներից վեր կացան, և խավարը մեկեն լցվեց լարվածությամբ, իսկ խարույկներն աչքից կորան։

— Տղե՛րք, բռնեցե՛ք դրանց...

Հրացանները դեմ տվին։

Նավաստիները մի ձեռքով ատրճանակները հանեցին, իսկ մյուս ձեռքով շտապ-շտապ ռումբերն էին քակում։

Սպիտակ բեղերով մի ուկրաինացի, որ ամբողջ իմպերիալիստական պատերազմը արևմտյան ճակատումն էր անց կացրել, շնորհիվ իր անվեհեր սառնասրտության, ուսերություն էր ստացել, հեղափոխության սկզբում իր վաշտի սպաներին կոտորել, տաք կաշան բերանն առնելով, գդալը զարկեց կաթսայի եզրին, որպեսզի մաքրի, բեղերը սրբեց և ասաց.

— Իսկ և իսկ աքլորներ. կո՛-կո՛-կո՛-կո՛։ Ինչո՞ւ չեք ծուղրուղու կանչում։

Ամենքը ծիծաղեցին։

— Բա ինչո՞ւ են մեզ ծաղրում,— բարկացած դիմեցին տղերքը սպիտակ բեղերովին։

Հեռու ցրված խարույկները հանկարծ նորից երևան եկան։

Նավաստիները պահեցին իրենց ատրճանակները և նորից կապեցին ռումբերը։

— Թքել ենք ձեզ վրա, ձեր ըսենցն ու ընենցը...

Եվ հեռացան նույնպես աղմկալից և սանձարձակ, ընկըղմվելով խավարի մեջ։

Հեռացան, բայց նրանցից էլի մի բան մնաց։

— Տակառներով գինի շատ ունեն։

— Կազակներին են կողոպտել։

— Ինչպե՞ս թե կողոպտել։ Միշտ վճարում էին։

— Փող, ինչքան ասես, ունեն։

— Բոլոր նավերը կողոպտել են։

— Նավերը որ խորտակեցին, փո՞ղը ինչի կորչեր. ո՞ւմ ինչ օգուտ, որ փողն էլ կորչեր։

— Հենց որ մեր ստանիցան եկան, բոլոր բուրժուաներից մինչև վերջին թելը պլոկեցին և չունևորներին բաժանեցին. իսկ բուրժուաներին ցրիվ տվին, մի քանիսին սպանեցին, մի քանիսին էլ ծառից կախ տվին։

— Իսկ մեզ մոտ քահանան,— շտապելով վրա տվեց մի ուրախ ձայն, վախենալով, թե հանկարծ իրեն կընդհատեն,— հենց որ ժամից դուրս եկավ՝ տրա՛խ, տեղն ու տեղը պառկեցրին։ Եկեղեցու մոտ երկար ընկած մնաց, սկսեց հոտել. ոչ ոք չէր տանում։

Եվ ուրախ ձայնը շտապով և ուրախ ծիծաղեց, կարծես այստեղ էլ վախենում էր, որ իրեն կընդհատեն։ Եվ ամենքն էլ ծիծաղեցին։

— Օ՜, տեսե՛ք, տեսե՛ք, մի աստղ վայր ընկավ։

Ամենքն էլ ականջ դրին։ Այնտեղից, ուր ոչ ոք չկար, ուր դիշերվա անսահման անապատն էր, հասավ մի հնչյուն, մի ծփանք կամ մի հեռավոր անհայտ ձայն, հասավ անտեսանելի ծովի կողմից։

Լռությունը շարունակվեց։

— Իսկապես, նավաստիները ճշմարիտ են ասում։ Օրինակ հենց մենք. ի՞նչ ենք թափառում։ Կապրեինք տանը. ամենքս հաց էլ կունենայինք, անասուն էլ. իսկ հիմա...

— Ճշմարիտ է, ես էլ եմ ասում. հետևեցինք մի սպայի, չգիտենք, թե ինչ ենք փնտրում։

— Նա ի՞նչ սպա է։ Նա էլ մեզ նման է։

— Իսկ ինչո՞ւ խորհրդային իշխանությունը ոչ մի օգնություն չի տալիս։ Նստած են իրենց համար Մոսկվայում, խաղում են, իսկ նրանց եփած շիլան մենք պիտի խրթենք։

Հեռու, աղոտ փայլող խարույկների մոտ հեռավորությունից թուլացած աղմուկ, ձայներ էին լսվում. նավաստիներն էին աղմկում, մի խարույկից մյուսը, մի զորամասից մյուսն անցնելով։

15.

Գիշերը սկսեց հաղթել։ Խարույկները տեղ-տեղ սկսեցին մարել, մինչև որ բոլորովին անհետացավ ոսկեգույն շղթան, և ամեն տեղ լռություն և սև թավիշ սփռվեց։ Ոչ մի ձայն, բացի ձիերի ծամելու ձայնից։

Մեկն շտապով անցնում է սև, անշարժ սայլերի միջով, իսկ որտեղ հնար կա՝ վազում է խճուղու կողքով, թռչկոտելով քնածների վրայից։ Հազիվ հետևում է նրան մյուսը, որ առաջինի պես անճանաչելի սև էր։ Սայլերի մոտ մեկն ու մեկը զարթնում է, գլուխը բարձրացնում, հայացքով խավարի մեջ ուղեկցում հեռացող երկու ստվերներին։

— Ի՞նչ են ուզում դրանք այստեղ. ովքե՞ր են, գուցե լրտեսներ են...

Պետք էր վեր կենալ, բռնել, բայց քունը հաղթում է, և մարդու գլուխը վայր է ընկնում։

Նույն խավար գիշերը, նույն լռությունը, իսկ այն երկուսը վազում են ու վազում, ցատկոտելով, ճեղքելով, երբ նեղվածք է, և ձիերը, ականջները խլշած, դադարում են ծամելուց և ականջ են դնում։

Հեռու առաջներին և աջ կողմում, երևի սևին տվող սարերի ստորոտում, հրացանի ձայն է լսվում։ Միայնակ և անտեղի՝ այդ խաղաղության, այդ ամայության և ծամող ձիերի ձայների մեջ, խավարի մեջ այդ ձայնը դրոշմվեց, և նորից

լռություն տիրեց, իսկ այն հանգած հնչյունը դարձյալ զգալի է, դեռ չի կորել։

Այն երկուսն ավելի արագ վազեցին։

Մեկ, երկու, երեք... Դարձյալ աջ կողմից, սարերի ստորոտում։ Նույնիսկ խավարի մեջ կարելի է որոշել կիրճի լայն բացված երախը։ Եվ հանկարծ գնդացիրը տա-տա-տա-տա ինքն իրեն չհասնելով տկտկացրեց և քիչ հետո, կարծես լռացնելով պակաս մնացածը, նորից տկտկացրեց։

Մեկը բարձրացնում է իր սև գլուխը, հետո մյուսը։ Մեկը նստում է։ Մեկը շտապ վեր կացավ և սկսեց փնտրել իր հրացանը։ Բայց չգտավ։

— Է՛յ, Գրիցկո՛, լսի՛ր... լսո՞ւմ ես։

— Ձեռք քաշիր։

— Լսո՞ւմ ես... կազակները...

— Ֆո՛ւ, սատանի ճուտ... թո՛ղ, թե չէ ատամներդ կփըշրեմ... աստված վկա, կխփեմ...

Նա գլուխը շարժեց, մեջքը, ետևը քորեց, հետո մոտեցավ գետնին փռած վերարկուին, պառկեց, ուսերը շարժեց, որ ավելի հարմար պառկի...

... Տա՛-տա՛-տա՛...

....Մե՛կ... Երկո՛ւ... Երե՛ք...

Կիրճի մութ խոռոչում վայրկենաբար ծնվում են քորոցի ճակոցների պես բարակ կայծեր...

— Ա՜հ, ձեր մերը... Հանգիստ չեն տալիս, էլի՛։ Կարծես շներ լինեն, քնած տեղն էլ հանգիստ չեն տալիս։ Նղովվածնե՛ր։ Կովի ժամանակ կովիր, ինչքան կարող ես, մինչև հոգիդ դուրս գա, ատամներով կրծոտիր կատաղած, բայց որ պառկեցիր հանգստանալու՝ ձեռք քաշիր, մեկ է, ոչինչ չի դուրս գա, զուր տեղը փամփուշտ կփչացնես, մարդկանց էլ քնահարամ կանես։

Մի րոպեից հետո ձիերի ծամելու ձայնի հետ խառնվում է մի քնած մարդու շնչառությունը ևս։

16.

Առաջին վազողը, շունչ առնելով, ասաց.

— Բա որտե՞ղ են։

Իսկ մյուսը, նույնպես վազելով պատասխանեց։

— Այստեղ են։ Հենց այս ծառն է, իսկ նրանք խճուղու վրա են։— Եվ գոռաց.

— Գարդիեն տատի։

Խավարի միջից լսվեց.

— Ի՞նչ է։

— Այդտե՞ղ եք։

— Այստեղ ենք, այստեղ։

— Ո՞ւր է տայլը։

— Այդտեղ, որտեղ կանգնած եք։ Ձողից դեպի աջ։

Եվ խավարի մեջ անմիջապես մնչող տատրակի արտասվալից ձայն լսվեց։

— Ստեպանե՛... Ստեպանե՛... Մեռե՞լ է...

Մայրը մեկնեց՝ խոնարհաբար հանձնելով։ Մարդը վերցրեց փաթաթված տոն, տարօրինակ շարժուն գոնդողը, որից ծանր հոտ էր գալիս։ Մայրը կպցրեց նրա կրծքին իր գլուխը, և խավարը հանկարծ փայլեց սիրտ մաշող, հնչուն, անդարձ արտասուքներով։

— Մեռե՞լ է, Ստեպանե՛...

Իսկ կանայք արդեն հավաքվել էին այստեղ, տայլը շրջապատել էին, երեսներին խաչ էին հանում, հառաչում, խորհուրդներ տալիս։

— Առաջին անգամն է՝ լաց եղավ։

— Կթեթևանա։

— Կաթը պետք է ծծել, թե չէ գլխին կտա։

Կանայք իրար ետևից շոշափում են տառած տիրոջները։

— Կարծես քար լիներ։

Հետո խաչակնքելով, աղոթք մրմնջալով, ծծում են նրա պտուկները, աղոթքով թքում երեք կողմը և անվերջ խաչ հանում։

Խավարի մեջ մի փոս փորեցին մացառների տակ, հետո մի փաթաթված բան դրին մեջը և հավասարեցրին։

— Նա այլևս չկա, Ստեպանե՛...

Աղոտ կերպով նշմարվում է, թե ինչպես մթության մեջ մարդը երկու ձեռքով գրկեց փշոտ ծառը և հեծկլտաց խեղդված ձայնով, իսկ կինը փաթաթվեց նրա վզովը։

— Ստեպանե... Ստեպանե... Ստեպանե...

Եվ դարձյալ փայլեցին խավարի մեջ հնչող արտասուքները։

— Էլ չկա... Չկա՛... Չկա՛... Ստեպանե՛...

17.

Գիշերը հաղթեց։ Ոչ կրակ կա, ոչ էլ խոսակցություն։ Միայն ծամող ձիերի ձայն է լսվում։ Հետո ձիերն էլ լռեցին։ Մի քանիսը պառկեցին։ Շուտով լույսը կբացվի։

Սև, լռին սարերի երկարությամբ անվերջ ձգվել է բանակը։ Միայն մի տեղ լուսադեմի անդիմադրելի ներքը սփռող գիշերվա մթությունը չկարողացավ հաղթել. քնած պարտեզի ծառերի մեջ լույս է երևում. մեկը արթուն է բոլորի փոխարեն։

Ընդարձակ սեղանատանը, որի կաղնու փայտի գույնով ներկած պատերից կախ են տված սվիններով ծակծկած թանկագին պատկերներ, մոմի աղոտ լույսի մեջ երևում են անկյուններում թափված թամբերի կույտեր, իրար մոտ բըրգաձև կանգնեցրած հրացաններ. տարօրինակ դիրքերով մեռածների պես զինվորներ են պառկած հատակին փռած թանկագին վարագույրների վրա և խոմփում են. մարդու և ձիու քրտինքի ծանր հոտ է կանգնած։

Դռնից սև ու նեղ գնդացիրն է նայում։

Ահագին սեղանատան մեջտեղում կանգնած կաղնի փայտից քանդակած մի հոյակապ սեղանի վրա թեքված Կոժուխը հառել էր իր փոքրիկ աչքերը, որոնցից անկարելի էր փախչել, սեղանի վրա փռած քարտեզին։ Ժամի մոմը աղոտ լույս էր սփռում, կաթեցնելով սառչող կաթիլներ, և կենդանի ստվերներ արագ շարժվում են հատակի, պատերի և դեմքերի վրա։

Կապույտ ծովի, բրդոտ օձասանդրի նման լեռնաշղթայի վրա կռացած դիտում է համհարզը։

Պայուսակը կողքին պատրաստ կանգնած է սուրհանդակը։ Հրացանը մեջքին, սուրը կողքին, և նրա վրա ամեն ինչ շարժվում է երերվող ստվերների շնորհիվ։

Մոմի կտորը մի բոպե մարում է, և այդ միջոցին ամեն ինչ անշարժ է։

— Ահա,— ցույց է տալիս համհարզը օձասանդրը,— այս կիրճից նրանք դեռ կարող են հարձակվել։

— Այստեղից նրանք չեն կարող դուրս գալ, լեռնաշղթան բարձր է և անանցանելի, մյուս կողմից էլ նրանք մեզ չեն կարող հասնել։

Համհարզը ձեռքի վրա տաք մոմ կաթեցրեց։

— Հարկավոր է, որ մենք մինչև այս ուղեդարձը հասնենք, իսկ այնուհետև այլևս չեն հասնի մեզ։ Ինչքան ուժ ունենք, պետք է առաջ գնանք։

— Ուտելու բան չկա։

— Միևնույն է, եթե կանգնած մնանք, հաց չենք ստեղծելու։ Պետք է գնալ. մենակ փրկությունն այդ է։ Հրամանատարներին կանչե՞լ եք։

— Ամենքը կգան իսկույն,— շարժվեց սուրհանդակը, և նրա դեմքի ու վզի վրա խաղացին երերուն ստվերներ։

Միայն ահագին պատուհանների մեջ էր սև գիշերի մթությունն անշարժ կանգնած։

Տա՛-տա՛-տա՛-տա՛... Հեռու ձայն է տալիս սև կիրճերի մեջ, և գիշերը դարձյա՛լ լցվում է սպառնալիքով։

Ծանր քայլերի ձայներ են լսվում աստիճանների վրա, պատշգամբում, հետո սեղանատանը, և սպառնալիք են բերում կամ տեղեկություն նրա մասին։ Նույնիսկ թույլ լուսավորող մոմի կտորն այս անգամ պայծառ լուսավորեց, թե ինչպես փոշոտված էին ներս մտնող հրամանատարները, և հոգնածությունից, շոգից, անընդհատ արշավից նրանց դեմքի գծերը մի տեսակ սրված էին երևում։

— Ի՞նչ կա այնտեղ,— հարցրեց Կոժուխը։

— Քշեցին։

Ընդարձակ, հազիվ լուսավորված սեղանատանը ամեն բան աղոտ, անորոշ էր երևում։

— Դատարկ ձեռքերով ուրիշ ինչ կարելի էր անել,— ասաց մի ուրիշի խռպոտ ձայնով,— եթե թնդանոթներ ունենայինք, ոչ թե ձիու վրա բարձած մի գնդացիր...

Կոժուխը քար կտրեց. երկաթանման աչքերի վրա կիտեց ճակատի հարթ գիծը, և ամենքն էլ հասկացան, որ բանը կազակների հարձակումը չէ։

Խռնվեցին սեղանի շուրջը. որը ծխում էր, որը հացի կտոր էր ծամում, որն էլ առանց լսելու, հոգնած նայում էր քարտեզին, որ նույնպես աղոտ ու անորոշ փռված էր սեղանի վրա։

Կոժուխը սեղմած ատամների միջից արտասանեց.

— Հրամանները չեք կատարում։

Երերվող ստվերները միանգամից շարժ եկան հոգնած դեմքերի, փոշոտված վզերի վրա, սեղանատունը լցվեց կտրուկ, բաց օդում հրաման տալու սովոր ձայներով։

— Զինվորները հալից ընկել են։

— Իմ զորամասը տեղից չի կարող շարժվել այժմ։

— Իսկ իմը, հասավ թե չէ, առանց խարույկներ վառելու, մեռածի նման պառկեցին։

— Ինչպե՞ս կարելի է այս տեսակ տարածություններ անցնել ամեն օր. այդպիսով կարելի է շուտով ամբողջ զորաբանակը կորստի մատնել։

— Դատարկ բան է։

Կոժուխի երկաթի դեմքն անշարժ էր։ Դուրս ցցված գանգի տակից նրա փոքրիկ աչքերը ոչ թե նայում, այլ սպասում էին և ականջ դնում։ Լայն ու բաց պատուհանների մեջ անշարժ խավար էր կանգնած, իսկ նրա ետևից՝ գիշերը, հոգնած, բայց տագնապով լարված։ Կիրճի կողմից այլևս հրաձգություն չէր լսվում։ Զգալի էր, որ այնտեղ խավարն ավելի թանձր էր։

— Ես, գոնե, մտադիր չեմ իմ զորամասը վտանգի ենթարկել,— վրա տվեց մի գնդապետ, կարծես հրաման արձակելով,— ինձ վրա բարոյական պատասխանատվություն կա ինձ հանձնած մարդկանց կյանքի, առողջության և վիճակի համար։

— Միանգամայն ճշմարիտ է,— ասաց բրիգադապետը, որ աչքի էր ընկնում իր կերպարանքով, ինքնավստահությամբ և հրամաններ տալու սովորությամբ։

Նա հին զորքի սպա էր և այժմ զգում էր, որ վերջապես հասել է ժամանակը իր ամբողջ ուժը, ձիրքը ցույց տալու, որ ցարական զորքի ղեկավարներն այնպես անմտորեն աչքաթող էին արել։

— ...Միանգամայն ճշմարիտ է։ Բացի դրանից, արշավանքի ծրագիրը բոլորովին մշակված չէ։ Զորամասերի դիր-

քերը բոլորովին այլ կերպ պետք է դարգավորված լինեն. ամեն բոպե կարող են մեզ իրարից կորնել։

— Եթե ես նրանց տեղը լինեի,— գրգռված ավելացրեց մի վայելչակազմ, չերքեզին հազին, նուրբ իրանք ծիրք կապած, արծաթե դաշույնը գոտուց ծուռ կախած և փափախը ծռծրա-կին քաշած կոբանի զորքի մի հարյուրապետ,— եթե ես լի-նեի կազակների տերը, կերբից վրա կտայի և՝ չի՛ երկ, և ձեր թնդանոթներն այլևս չէիք տեսնի։

— Վերջապես ոչ կարգապրություն կա, ոչ հրաման. մենք հո խուժան կամ ավազակ չենք։

Կոժուխը դանդաղ ասաց.

— Ե՞ս եմ հրամանատարը, թե՞ դուք։

Եվ դա անշնչելի կերպով տպավորվեց ընդարձակ սենյա-կում. Կոժուխի մատը, սուր ծակող աչքերը սպասում էին, բայց ոչ, պատասխան չէին սպասում։

Եվ դարձյալ շարժ եկան ստվերները, փոփոխելով դեմ-քերը, նրանց արտահայտությունները։

Եվ դարձյալ լսվեցին խոպոտ, սենյակի համար անտեղի բարձր ձայներ։

— Մեզ, հրամանատարներիս վրա նույնպես ոչ պակաս պատասխանատվություն կա։

— Նույնիսկ թագավորի օրոք դժվար բոպեներին սպանե-րի հետ խորհուրդ էին անում, իսկ այժմ հեղափոխություն է։

Բայց խոսքերի իմաստն էր. «Դու մի հասարակ, անճոռնի ձևված հողագործ մարդ ես և անընդունակ հասկանալու, թե որքան բարդ է դրությունը։ Ռազմաճակատում սպայության աստիճանի ես արժանացել, սակայն այնտեղ սպաների պա-կասության պատճառով յաբուն էլ սպայություն կարող է ստանալ։ Ամբոխն է քեզ իշխանություն տվել, բայց չէ՞ որ ամ-բոխը կույր է»...

Այս էին ասում հին զորքի սպաների աչքերը, դեմքերի ար-տահայտությունը և ամբողջ կերպարանքը։ Իսկ տակառագործ, կլայեկչի, վարսավիր հրամանատարներն ասում էին. «Դու մերոնցից ես. ինչո՞վ ես մեզանից լավ։ Ինչո՞ւ դու, և ոչ մենք։ Մենք քեզնից ավելի լավ կկատարենք այս գործը»։

Կոժուխը լսում էր թե մեկ և թե մյուս խոսակցությունը, և՛ ասվածը, և՛ այն, ինչ որ չէր ասվում, և, շարունակ աչքե-

ջը հուպ աված, ականջ էր դնում պատուհանների այն կողմի խավարին և ապասում։

Եվ նրա ապասածը եղավ։

Գիշերվա մեջ հեռու մի տեղ մի թույլ հնչյուն ծնվեց։ Հե-տզհետե ավելի մնծացավ և որոշակի դարձավ։ Դանդաղ, աստիճանաբար ուժեղանալով, խառնիխուռն քայլողների խուլ և ծանր ժխորով լցվեց գիշերվա խավարը։ Քայլերը հասան աստիճանների մի բոպե կորցրին իրենց չափը, խառնվեցին և անջատ-անջատ սկսեցին պատշգամբ բարձ-րանալ, լցվեցին այնտեղ, և լայն բացված սևատեսիլ դռնով զինվորներն անընդհատ հոսանքով ներս խուժեցին աղոտ լուսավորված սեղանատունը, մինչև որ սենյակը լիքը լցվ-եց։ Դժվար էր նրանց տեսնել, զգացվում էր միայն, որ նրանք շատ-շատ էին և միանման։ Հրամանատարները խմբվեցին սեղանի այն անկյունի մոտ, ուր քարտեզն էր փռված։ Մոմի մնացարդը հազիվ էր լույս տալիս։

Զինվորներն ոտքամատների մեջ հազում են, քթները սրբ-ում, թքում հատակի վրա և ատքով մաքրում, ծխախոտ շի-նում. գարշահոտ ծուխը անտեսանելի կերպով տարածվում է խավարապատ ամբոխի գլխին։

— Ընկերնե՛ր...

Մարդկանցով լի և աղջամուղջով ընդարձակ սենյակում լռություն է տիրում։

— Ընկերնե՛ր։

Կոժուխը ատամների միջով դժվարությամբ բաց էր թող-նում խոսքերը։

— Դո՛ւք, վաշտերի ներկայացուցիչ ընկերներ, և դո՛ւք, ընկեր հրամանատարներ, պետք է իմանաք, թե ինչ դրու-թյան մեջ ենք մենք։ Մեր ետև քաղաքն ու նավահանգիստը կազակների ձեռքին է։ Այնտեղ մնացել էին քսան հազար հիվանդ և վիրավոր կարմիր զինվորներ, և բոլոր քսան հա-զարին էլ կազակները կոտորել են իրենց սպաների հրաման-ով. նույնն էլ պատրաստում են մեզ համար։ Կազակները վրա են հասնում մեր երրորդ զորասյան վերջապահներին։ Աջ կողմից ծովն է, ձախ կողմից՝ սարերը։ Մեջտեղը՝ մի ծակ. մենք այդ ծակումն ենք։ Կազակները վազում են սա-թերի ետևից, կիրճերով դուրս պրծնում և մեզ հասնում, և

մենք ամեն բոպե ստիպված ենք ետ մղել նրանց։ Այդպես էլ վրա են հասնելու, մինչև որ հասնենք այնտեղ, ուր լեռնաշղթան ծովից երես է դարձնում. այնտեղ սարերը բարձր են և լայն փռված, կազակներն այնտեղ էլ մեզ չեն հասնի։ Ուրեմն մենք պետք է աշխատենք հասնել ծովի մոտով մինչև Տուապսե, այստեղից երեք հարյուր վերստ է։ Այնտեղից սարերի վրայով խճուղի կա. այդ խճուղով մենք էլի կուբան կհասնենք, այնտեղ են մեր գլխավոր ուժերը, մեր փրկությունը։ Պետք է առաջ գնալ, որքան ուժ ունենք։ Միայն հինգ օրվա պաշար ունենք, բոլորս քաղցից կկոտորվենք։ Պետք է գնալ, գնալ, գնալ վազ տալ, ոչ քնել, ոչ ուտել, ոչ խմել, այլ միայն վազել, ինչքան ուժ կա. այդ է մեր փրկությունը, և ճանապարհը բանալ, եթե ուզենան առաջներս կտրել։

Նա լռեց՝ ոչ ոքի վրա ուշադրություն չդարձնելով։

Մարդկանցով և այրող մոմի լույսով լեցուն սենյակում լռություն էր տիրում. նույնպիսի լռություն էր տիրում և սև պատուհաններից դուրս անհուն գիշերին, նաև անտեսանելի և անասելի անհուն ծովին։

Մինչև հարյուր աչք անտեսանելի, բայց զգալի ցոլքով լուսավորում էին Կոժուխին։ Եվ դարձյալ նրա սեղմած ատամների միջով սպիտակին էր տալիս թքի թեթև փուչիկը։

— Ճանապարհին ոչ հաց կա, ոչ ձիերի ուտեստ. պետք է վազ տալով գնանք, մինչև որ դաշտավայր հասնենք։

Նա դարձյալ լռեց, աչքերը խոնարհեց, հետո ասաց ատամների միջից։

— Նոր հրամանատար ընտրեցեք ձեզ համար, ես հրաժարվում եմ։

Մոմը հալվեց, և խավարը պատեց։ Անշարժ լռություն էր տիրում։

— Ուրիշ մոմ չկա՞։

— Կա,— ասաց համհարզը՝ լուցկին չրթացնելով, որը մերթ վառվում էր, և այն ժամանակ երևան էին գալիս հարյուրավոր աչքեր՝ անթարթ հառած Կոժուխի վրա, մերթ հանգչում, և ամեն ինչ նորից խավարի մեջ էր ընկղմում։ Վերջապես մի բարակ մոմի կտոր վառվեց, և կարծես բոլորի լեզուները բացվեցին. սկսեցին խոսել, շարժվել, սկսեցին

նորից հազալ, քիթը սրբել, թքել, ոտքերով տրորել, իրար երես նայելով։

— Ընկեր Կոժուխ,— ասաց բրիգադապետը մի այնպիսի ձայնով, կարծես թե երբեք հրամաններ տված չլիներ,— մենք բոլորս հասկանում ենք, թե ինչպիսի դժվարություններ և արգելքներ կան մեր ճանապարհին։ Ետևներս մահ է, առաջներս էլ մահ, եթե ուշանանք։ Պետք է առաջ գնանք, որքան կարելի է արագ։ Եվ միայն դուք կարող եք ձեր եռանդով ու ճարտարամտությամբ փրկել զորաբանակը։ Հուսով եմ, որ այս նույնպես իմ բոլոր ընկերների կարծիքն է։

— Ճշմարիտ է... Այդպես է... խնդրում ենք... — շտապ արձագանք տվին բոլոր հրամանատարները։

Հարյուրավոր զինվորների պսպղուն աչքերն էլ համառ նայում էին Կոժուխին։

— Ինչպե՞ս կարող եք հրաժարվել,— ասաց հեծելազորի հրամանատարը վճռական կերպով, նրա փափախը մինչև ծոծրակը տանելով, այնպես որ գրեթե վայր էր ընկնում, գլխից,— քանի որ ժողովն է ձեզ ընտրել։

Փայլփլող աչքերով լուռ նայում էին զինվորները։

Կոժուխն անհաշտ նայեց իր դուրս ցցված գանգի տակից։

— Դե լավ, ընկերնե՛ր։ Միայն մի անհրաժեշտ պայման եմ դնում, ստորագրեցեք. ամենաթեթև հրամանազանցության համար՝ գնդակահարություն։ Ստորագրեցեք։

— Մենք... ինչ...

— Ի՞նչ կարիք կա...

— Ի՞նչ կա որ, կստորագրենք...

— Մենք առանց այդ էլ միշտ...

Ջանազան ձայներով մրմնջացին հրամանատարները։

— Տղերք,— երկաթի նման սեղմելով ծնոտները՝ ասաց Կոժուխը,— տղերք, դո՞ւք ինչ եք մտածում։

— Մահ,— գոչեցին հարյուրավոր ձայներ, որ չտեղավորվելով սեղանատանը, դուրս պրծան բաց սև պատուհաններից, բայց այնտեղ ոչ ոք չլսեց։

— Գնդակահարել... Նրա մերը... Ի՞նչ եք ոչխին նայում, եթե հրաման չի կատարում... Կոտորեցեք դրանց...

Զինվորները, կարծես նրանց կաշկանդող կապը կտրվեց, նորից շարժվեցին, իրար դառնալով, ձեռքերը թափահարելով, խնչելով, իրար հրելով, շտապ ծխելով և ոտքի տակ հանգցնելով ծխախոտի մնացորդները։

Կոժուխը, ծնոտները սեղմելով, ասաց՝ նրանց ուղեղների մեջ մխրճելով.

— Ով որ կարգադրությունը խանգարի, հրամանատար լինի, թե հասարակ զինվոր՝ կգնդակահարվի։

— Գնդակահարել... գնդակահարել շան լակոտներին, թե հրամանատար լինի, թե զինվոր... Միևնույն է,— կրկին տաքացած գոչեց ահագին սեղանատունը, և դարձյալ նեղվածք էր, ձայները չտեղավորվեցին և դուրս պրծան խավարի մեջ։

— Լավ։ Ընկեր Իվանկո, գրեցեք թուղթը, թող ստորագրեն հրամանատարները. ամենափոքր հրամանազանցության կամ դատողության համար՝ գնդակահարություն առանց դատի։

Համհարզը գրպանից մի թղթի կտոր հանեց և, տեղավորվելով ուղիղ մոմի կտորի կողքին, սկսեց գրել։

— Իսկ դուք, ընկերնե՛ր, գնացեք ձեր տեղերը։ Հայտնեցեք բոլորին այս որոշումը. երկաթե կարգապահություն՝ ոչ ոքի չխնայել։

Զինվորները, խռնվելով, հրհրելով և հանգցնելով ծխախոտները, դուրս խուժեցին պատշգամբը, հետո պարտեզը, և նրանց ձայներից ավելի ու ավելի հեռու կենդանանում էր խավարը։

Ծովի վրա երկինքն սկսեց սպիտակել։

Հրամանատարները հանկարծ զգացին, որ նրանց ուսերից ծանր քար վայր ընկավ. ամեն ինչ որոշվեց և պարզվեց. կատակներ էին անում, ծիծաղում էին, հերթով մոտենում էին և ստորագրում մահվան վճիռը։

Կոժուխը շարունակ, աչքերի վրա դուրս ցցված գանգով, կարճ հրամաններ էր տալիս, կարծես թե այն, ինչ որ կատարվում էր, ոչ մի կապ չուներ այն կարևոր մեծ գործի հետ, որ նա պիտի իրագործեր։

— Ընկեր Վոստրոտին, վերցրեք վաշտը և...

Լսվեց ձիու դոփյուն, որը ընդհատվեց պատշգամբի մոտ։

Լսվում էր, թե ինչպես ձին — երևի նրան կապում էին —

փռնչում էր և բարձր թափահարում էր իրեն՝ ասպանդակները զրնգացնելով։

Երերվող աղոտ կիսախավարի մեջ փափախը գլխին մի կուրանցի երևաց։

— Ընկեր Կոժուխ,— ասաց նա,— երկրորդ և երրորդ զորասյուները գիշերելու կանգնեցին տասը վերստ ետև։ Հրամանատարները պատվիրեցին, որ դուք սպասեք, մինչև որ նրանց զորասյուները հասնեն ձեզ՝ միասին գնալու համար։

Կոժուխը նայում էր նրան անշարժ, քար կտրած դիմագծերով։

— Ուրի՞շ։

— Նավաստիները խումբ-խումբ ման են գալիս զինվորների մեջ, սայլախմբերում, հիմար-հիմար դուրս են տալիս, սովորեցնում են, որ չլսեն հրամանատարներին, որ իրենք՝ զինվորները հրամայեն, ասում են՝ պետք է սպանել Կոժուխին.

— Ուրի՞շ։

— Կազակներին դուրս արինք կիրճից։ Մեր տղերքը կիրճով բարձրացան և նրանց մյուս կողմը քշեցին, այժմ հանգիստ է։ Մերոնցից երեքը վիրավորված են, մեկը՝ սպանված։

Կոժուխը լուռ էր։

— Լա՛վ, գնա՛։

Իսկ սեղանատանն արդեն դեմքերը և պատերը սկսեցին պարզվել։ Պատկերի շրջանակի մեջ հազիվ նշմարվում էր մարդու հրաշալի ստեղծագործած կապուտակ ծովը, պատուհանի շրջանակի մեջ հազիվ կապույտին էր տալիս կենդանի ծովը։

— Ընկեր հրամանատարնե՛ր, մի ժամ հետո բոլորս ճանապարհ ենք ընկնում. ամենաարագ քայլքով, կանգ առնել միայն նրա համար, որպեսզի մարդիկ և ձիերը չուր խմեն։ Ամեն մի ձորում զորաշղթա կանգնեցնել՝ հետը գնդացիր։ Թույլ չտալ, որ զորամասերն անջատվեն իրարից։ Ամենախիստ կերպով հսկել, որ բնակիչներին չնեղացնեն։ Որքան կարելի է հաճախ տեղեկացնել ինձ զորամասերի դրության մասին։

— Լսում ենք,— գոչեցին հրամանատարները։

— Ընկեր Վոստրոտին, դուք ձեր վաշտը թիկունքը տարեք, կորեցեք նավաստիների ճանապարհը և թույլ չտաք, որ մեզ հետ գան, թող մյուս զորասյուների հետ գնան։

— Լսում եմ։

— Հետևերդ գնդացրեր տարեք և, եթե հարկավոր լինի, կրակեցեք նրանց վրա։

— Լսում եմ։

Հրամանատարները խմբովին դուրս գնացին։

Կոժուխը սկսեց թելադրել համհարզին, թե նրանցից որին բոլորովին պետք է հեռացնել հրամանատարությունից, որին տեղափոխել, որին ավելի բարձր պաշտոն տալ։

Այնուհետև համհարզը ծալեց քարտեզը և Կոժուխի հետ միասին դուրս գնաց։

Հատակը թքով և ծխախոտի մնացորդներով ծածկված ընդարձակ, դատարկված սենյակում կարմրելով թարթափում էր մոռացված մոմի մնացորդը, և լռության ու մարդկանց ծանր հոտ էր կանգնած։ Այլևս ոչ հրացաններ, ոչ էլ թամքեր կային։

Լայն բացված դռներում արշալույսի նոսր կապույտ ծուխն էր բարձրանում ծովից։

Ծովի ափին, սարերի երկարությամբ, առաջից և ետևից թմբուկի ձայնն էր հեռու տմբտմբում և մարդկանց զարթեցնում։ Մի տեղ փողեր հնչեցին, կարծես թե պղնձե կարապների տարօրինակ կռնչոց լիներ, և արձագանք տվեց սարերի, կիրճերի, ծովափի մոտ և ծովի վրա, որովհետև նա բացվել էր անսահման։

18.

Երկրորդ և երրորդ զորասյուները, որ հետևում էին Կոժուխի զորասյանը, շատ ետ էին մնացել։ Ոչ ոք չէր շտապում. շոգ էր, հոգնել էին։ Վաղ էին կանգ առնում գիշերելու, առավոտներն էլ ուշ էին ճանապարհ ընկնում։ Խճուղու ամայի, սպիտակին տվող տարածությունը սկզբի և ետևի զորասյուների միջև հետզհետե մեծանում էր։

Գիշերելիս նույնպես բանակը մի քանի վերստ էր փռվում խճուղու վրա՝ սարերի և ծովափի արանքում։ Փոշոտված, հոգնած, տոթից ուժասպառ մարդիկ, հենց որ հասնում էին հանգստանալու տեղին, ուրախ-ուրախ խարույկներ էին վառում. ծիծաղ էր լսվում, կատակներ, աղմուկ, հարմոնիկա, հնչում էին իրենց սիրած ուկրաինական երգեր՝ մերթ քաղցր, սրտառուչ, մերթ սպառնական և ցասկոտ, ինչպես այդ աղգի պատմությունը։

Նույնպես խարույկների միջև, ռումբերով, ատրճանակներով զինավառված, առաջին զորասյունից արտաքսված նավաստիներն էին շրջում և, փողոցային հայհոյանքներ թափելով, ասում.

— Ոչխարներ հո չե՞ք, ո՞ւմ եք լսում. ցարի ծառայության սպայի։ Ո՞վ է այդ Կոժուխը. ցարին ծառայից, ծառայեց թագավորին, իսկ հիմա բոլշևիկ դարձավ։ Բայց գիտե՞ք, թե բոլշևիկներն ինչ մարդիկ են։ Գերմանիայից կնքած վագոններով են նրանց բերել հետախուզության համար, իսկ Ռուսաստանում հիմարներ ճարվեցին, որ վազ են տալիս նրանց ետևից, ինչպես թթված խմորը տաշտի միջից։ Գիտե՞ք, որ նրանք գաղտնի համաձայնություն ունեն Վիլհելմի հետ։ Այո՛, այո՛, տխմար ոչխարներ։ Ռուսաստանը կործանում եք, ժողովուրդը կործանում եք։ Ո՛չ, մենք, սոցիալիստ-հեղափոխականներս, ոչ մի բանի ականջ չդրինք, բոլշևիկների իշխանությունը Մոսկվայից մեզ հրաման տվեց՝ նավատորմիղը գերմանացիներին հանձնել։ Իսկ մենք ջրասույզ արինք, համեցեք, ասեցինք։ Ինչպես չէ։ Դուք, ոչխարի նման գլուխներդ կախ արած գնում եք, իսկ նրանք գաղտնի համաձայնություն ունեն։ Բոլշևիկները Ռուսաստանը ոտովգլխով ծախեցին, մի ամբողջ գնացք լիքը ոսկի ստացան Գերմանիայից։ Քոսոտ շուն շան որդիք, ձեր ըսենցն ու ընենցը։

— Ի՞նչ եք շան պես հաչում, կորե՛ք, ձեր մերը...

Զինվորները հայհոյում էին, բայց երբ նավաստիները հեռանում էին, սկսում էին։

— Իսկապես, ինչ որ ճիշտ է, ճիշտ է, նավաստիները շատ փչան են, բայց ճշմարիտ են ասում։ Ինչո՞ւ չեն բոլշևիկները մեզ օգնում, կազակները վրա են տալիս, ինչո՞ւ չեն

Մոսկվայից օգնություն հասցնում. միայն իրենց մասին են մտածում։

Նույնիսկ խավարի մեջ սևին տվող կիրճից դարձյալ լսվեցին հրացանի ձայներ, և զանազան տեղերում մի վայրկյան կրակներ էին վառվում և հանգչում, մի քիչ ճռճռաց գնդացիրը, և բանակը սկսեց դանդաղ խորասուզվել լռության և անդորրության մեջ։

Եվ ճիշտ առաջվա պես մի անբնակ ամառանոցում, որի պատշգամբը դեպի անտեսանելի ծովն էր դուրս գալիս, հավաքվել էին երկու զորասյուների հրամանատարները։ Ժողովը չէին սկսում, մինչև որ ձիավորը սլանալով բերեց գյուղում ճարած ռուեարինի մոմերը։ Ու նորից հացի սեղանի վրա քարտեզ է փռած, պարկետ հատակը ծխախոտներով ծածկված, պատերի վրա որբացած կախած են պատռած թանկագին նկարները։

Վիթխարի, սև հոնքերով, բարեսիրտ Սմոլոկուրովը, որ չի իմանում, թե ինչ բանի վրա գործադրի իր ֆիզիկական ուժը, նստած է նավաստու սպիտակ հագուստով, ոտները լայն բացած և թեյ է խմում։ Շուրջը զորամասերի հրամանատարներն են։

Ծխելուց, իրար հետ խոսելուց, ոտներով ծխախոտը հանգցնելուց զգացվում էր, որ չգիտեին, թե ինչից սկսեն։

Առաջվա պես ներկա եղողներից յուրաքանչյուրը իրեն էր ընտրված համարում փրկելու այդ վիթխարի բազմությունը և դուրս բերելու նրան։

Բայց ո՞ւր։

Դրությունը անհանգիստ էր և անորոշ։ Ի՞նչ է սպասում առջևում՝ մի բան միայն գիտեին, որ ետևում մահ էր։

— Հարկավոր է մի ընդհանուր հրամանատար ընտրել երեք զորասյուների համար,— ասաց հրամանատարներից մեկը։

— Ճի՛շտ է... ճի՛շտ է...— գոչեցին։

Ամեն մեկն ուզում էր ասել. «Իհարկե, ինձ ընտրեցեք», բայց չէր կարողանում ասել։

Բայց որովհետև բոլորն էլ այդ էին ցանկանում, ուստի և լռում էին, իրար չէին նայում և ծխում էին։

— Վերջիվերջո մի բան պետք է անել, մեկին պետք է ընտրել։ Ես առաջարկում եմ Սմոլոկուրովին։

— Սմոլոկուրովին... Սմոլոկուրովին...

Հանկարծ անորոշ դրությունից ելք գտնվեց։ Ամեն մեկը մտածում էր. «Սմոլոկուրովը շատ լավ ընկեր է, պարզ աղա է, ամբողջապես նվիրված է հեղափոխությանը, ձայնը մի վերստի վրա կլսվի, միտինգների ժամանակ շատ երևելի է զլում, իսկ այս գործում վիզը կկոտրի, և այն ժամանակ... Այն ժամանակ, իհարկե, ինձ կդիմեն»։

Եվ բոլորը միաբերան կանչեցին։

— Սմոլոկուրովին... Սմոլոկուրովին...

Սմոլոկուրովը, շփոթված, լայն տարածեց ձեռքերը։

— Ախր ես... Ինքներդ գիտեք, իմ գործը ծովի վերաբերյալ է, այնտեղ թեկուզ դրեդնոուտ շուռ կտամ, բայց այստեղ ցամաք է։

— Սմոլոկուրովին, Սմոլոկուրովին...

— Դե՛, որ այդպես է, լավ... Ես... հանձն եմ առնում... Միայն թե ամենքդ օգնեցեք ինձ, եղբայրնե՛ր, թե չէ դուրս է գալիս, որ ես մենակ եմ... դե, լա՛վ։ Վաղը ճանապարհ ենք ընկնում։ Գրեցեք հրաման։

Բոլորն էլ շատ լավ գիտեին, որ հրամանը գրես չգրես, ուրիշ ելք չկա, քան առաջ գնալ. հո չէին մնալու նույն տեղը կանգնած կամ հո ետ չէի՞ն գնալու կազակների մոտ՝ կոտորվելու։ Եվ ամենքը հասկանում էին, որ մնում էր միայն սպասել, մինչև որ Սմոլոկուրովը խճճվի և իր հրամաններով տապալվի։ Ասենք, տապալվելու առիթ էլ չկար. պիտի քարշ գային Կոժուխի զորասյան ետևից։

Մեկն ասաց.

— Կոժուխին պետք է հրաման ուղարկել, որ նոր գլխավոր հրամանատար է ընտրված։

— Նրա համար միևնույն է, նա իրենը կանի,— գոչեցին չորս կողմից։

Սմոլոկուրովը այնպես բռունցքը խփեց քարտեզին, որ սեղանի տախտակները ճռճռացին.

— Ես կստիպեմ հնազանդվել, ես կստիպեմ։ Նա իր զորասյան հետ ամոթալի կերպով դեպի քաղաք փախավ։ Նա պիտի մնար և կռվեր, որպեսզի հազթեր կամ պատվով մեռներ։

Ամենքը նրան էին նայում։ Նա ոտքի կանգնեց իր հաղ-

թանդամ մարմնով մեկ, և ոչ այնքան խոսքերը, որքան գեղեցիկ մեկնած ձեռքով հուժկու կերպարանքն էր համոզիչ։ Ամենքն զգացին, որ ելքը գտնված է... Ամեն բանում մեղավոր է Կոժուխը։ Նա առաջ է փախչում և չի թողնում, որ մարդ իրեն ցույց տա, օգտագործի իր ուժերը, ուստի և ամբողջ ուշադրությունը պետք է լարել նրա դեմ կռվելու համար։

Աշխատանքը եռաց։ Կեսգիշերին Կոժուխի ետևից սուրհանդակ ուղարկեցին։ Կազմակերպեցին շտաբը։ Գրելու մեքենաները հանեցին, դիվանատուն կազմակերպեցին, մեքենաները սկսեցին չխկչխկացնել։ Կոչ ուղղեցին զինվորներին նրանց կրթելու և կազմակերպելու նպատակով։ «Մենք, զինվորներս, չենք վախենում թշնամուց»... «Հիշեցե՛ք, ընկերնե՛ր, որ մեր զորաբանակի համար ոչ մի դժվարություն չկա»...

Այդ հրամանագրերը բազմապատկվում էին, կարդացվում վաշտերում, էսկադրոններում։ Զինվորները լսում էին, անշարժ, առանց աչք հեռացնելու, հետո մեծ ջանքով, ամեն տեսակ խորամանկությամբ, երբեմն կռվով ձեռք էին գցում այդ հրամանագրերը, ծնկների վրա հարթում, «շանոտ» էին փաթաթում և ծխում։

Կոժուխին էլ ուղարկում էին այդ հրամանագրերը, բայց նա օր օրի ավելի առաջ էր գնում, և ամայի խճուղու տարածությունը ավելի ու ավելի էր մեծանում նրանց միջև։ Եվ այդ զրգռում էր։

— Ընկեր Սմոլոկուրով, Կոժուխը ձեզ ասես բանի տեղ չի դնում, շարունակ առաջ է գնում,— ասում էին հրամանատարները,— և ոչ մի ուշք չի դարձնում ձեր հրամանագրերի վրա։

— Դե, ինչ անես նրան,— բարեսիրտ ծիծաղում էր Սմոլոկուրովը,— ես, դե՛, ցամաքի վրա չեմ կարող, իմ բանը ծովն է։

— Չէ որ գլխավոր հրամանատարը դուք եք, ձեզ են ընտրել, իսկ Կոժուխը ձեր ստորադրյալն է։

Սմոլոկուրովը մի րոպե լռում է, հետո նրա ամբողջ վիթխարի կերպարանքը լցվում է զայրույթով։

— Դե լավ, ես նրան խելքի կբերեմ... խելքի կբերեմ...

— Ի՞նչ ենք մենք պոչի պես նրա ետևից գնում։ Մենք պետք է մեր սեփական ծրագիրը մշակենք։ Նա ուզում է ծովափով գնալ մինչև սարովն անցնող խճուղին, որ ծովից դեպի Կուբանի տափաստաններն է գնում սարերի վրայով. իսկ մենք կգնանք իսկույն ահա, այս լեռնաշղթայի վրայով, և այստեղից երևի կարճ էլ է։

— Անմիջապես հրաման ուղարկել Կոժուխին,— որոտաց Սմոլոկուրովը,— որպեսզի տեղից չշարժվի իր զորասյան հետ միասին։ Իսկ ինքն անմիջապես գա այստեղ խորհրդակցության։ Զորաբանակն այստեղից կսկսի շարժվել սարերի վրայով։ Եթե կանգ չառնի, կհրամայեմ, որ ոմբակոծեն նրա զորասյունը։

Կոժուխը չեկավ, այլ անդադար առաջ էր գնում. և նրան հասնել չէր կարելի։

Սմոլոկուրովը հրամայեց, որ զորաբանակը դեպի սարերը թեքեն։ Այն ժամանակ նրա շտաբի կառավարիչը (որ ակադեմիան էր ավարտել և դրությունը հասկանում էր), երբ հրամանատարները, որոնց ներկայությամբ Սմոլոկուրովը ծառս էր լինում, գնացին, ղղույշ — Սմոլոկուրովը շատ համառն էր — ասաց.

— Եթե մենք այս լեռնաշղթայովն անցնենք, անանցանելի սարերում կկորցնենք մեր բոլոր սայլախումբը, գաղթականներին և գլխավորապես բոլոր թնդանոթները. այստեղ ոչ թե ճանապարհ է, այլ կածաններ են, և Կոժուխն իրավացի է, որ գնում է մինչև այնտեղ, ուր սարերի վրայով խճուղին է գնում։ Առանց թնդանոթների կապակները մեզ դատարկ ձեռներով գերի կվերցնեն և, բացի դրանից, մեզ զատ-զատ կջարդեն, Կոժուխին առանձին, մեզ առանձին։

Թեև այդ ամենը պարզ էր, բայց համոզեցուցիչն այդ չէր։ Համոզեցուցիչն այն էր, որ շտաբի ղեկավարը շատ զգույշ էր խոսում և չափազանց քաղաքավարի Սմոլոկուրովի վերաբերմամբ, որ թեև նա ակադեմիան էր ավարտել, բայց դրանով չէր պարծենում։

— Հրաման տվեք, որ շարունակեն խճուղով առաջ գնալ,— խոժոռվեց Սմոլոկուրովը։

Եվ նորից սկսեցին առաջ հոսել աղմկալից և խառնիխուռն. զինվորներ, գաղթականներ, սայլախմբեր։

19.

Ինչպես միշտ, գիշերելու կանգնած Կոժուխի զորասյունում, քնի և հանգստության փոխարեն, տիրում էին աղմուկ, բալալայկայի և հարմոնիկայի ձայներ, աղջկերանց ծիծաղ։ Կամ թե ուժեղ է երիտասարդական առույգ, ներդաշնակ, նազանի հմայքով լի ձայները լցնում և կենդանացնում էին գիշերը։

Շաչում են, հեծում բարձր ալիքներ
Կապուտակ ծովի,
Լալիս են, ողբում կազակ աղջիկներ՝
Թոգբերին գերի...

Մերթ վեր բարձրանալով, մերթ իջնելով, և արդյոք ծովը չէ՞, որ հանգարտ ու համաչափ բարձրանում է և իջնում ջահել ձայների ալիքներից։ Եվ խավարի մեջ չէ՞, որ տարածվել է վիշտը. թախծում են կազակ աղջիկները, թախծում են ջահելները։ Եվ նրանք չե՞ն, որ ազատվել են սպայության, գեներալների, բուրժույների գերությունից, և նրանք չե՞ն, որ գնում են ազատության համար կռվելու։ Եվ վիշտը չէ՞, որ տարածվել է, վիշտ—ուրախություն, լարված, կենդանացած խավարի մեջ։

...Կա-պու-տակ, ծովում...

Իսկ ծովը հենց այստեղ է, ներքևում, ոտների տակ, բայց կուռ է և անտեսանելի։

Եվ ձուլվելով այդ վիշտ-ուրախության հետ՝ նուրբ ոսկեզօծվեցին լեռների գագաթների եզրերը։ Դրա շնորհիվ ավելի սև և ավելի սգավոր են նայում նրանց վիթխարի կույտերը, նրբորեն ոսկեզօծվել են լեռնային բեկ-բեկ ատամները։

Հետո ճեղքերից, կիրճերից լուսնի երկայն շերտեր բարձրացան, և նրանց կողքին ավելի սև, ավելի խիտ սփռվեցին ծառերի, ժայռերի գագաթների ստվերները, ավելի սգավոր, անթափանցելի։

Ապա դուրս եկավ լուսինը, և աշխարհն ուրիշ կերպարանք առավ, իսկ տղերքը դադարեցին երգել։ Երևում էր, թե ինչպես քարերի, վայր ընկած ծառերի և ժայռերի վրա նըստած էին տղերքն ու աղջկերքը, իսկ ժայռերի տակ ծովն էր, որին անկարելի էր նայել. սառը, հալած ոսկի էր անվերջ ու անծայր փայլփլում մինչև եզերքը։ Նայել չի լինում՝ աչք է կուրացնում։

— Ասում են, թե այդ բոլորն աստված է ստեղծել։

— Իսկ ինչի՞ց է, որ ուղիղ ես գնում՝ Ռումինիա ես հասնում, կամ՝ Օդեսա, կամ թե չէ Սևաստոպոլ, որտեղ որ կողմնացույցն է պտտվում, այնպես էլ կհասնես։ Ուրեմն գիտությունն է, ոչ թե աստված։

— Իսկ մեզ մոտ, տղերք, տաճկական ճակատում, կռվից առաջ տերտերը միշտ մաղթանք էր կատարում։ Բայց չնայած տերտերի մաղթանքներին, մերոնց կոտորում էին, հա կոտորում։

Խճուղու վրա աղմուկ։ քայլերի ձայն է լսվում և, անեծքի պես, սոսկալի հիշոցներ։

Ամենքը գլուխները բարձրացրին և ետ նայեցին...

— Ովքե՞ր են դրանք, ովքե՞ր են այդպես անամոթ հայհոյում, դրանց մերը...

— Նավաստիներն են փնտրում այն, ինչ որ չեն պահել։

Նավաստիները գալիս էին ահագին, խառնիխուռն, անկարգ խմբերով, մերթ լուսնի լույսով լուսավորված, մերթ անտեսանելի սև ստվերների մեջ, և հայհոյանքն էր նրանց գլխավերևում՝ գարշահոտ ամպի պես։

Տղերքն ու աղջկերքը հոգնածություն զգացին և ճմլկոտալով ու հորանջելով սկսեցին ցրվել։

— Պետք է քնել։

Աղմուկով, գոռոցով և հայհոյանքներով նավաստիները մոտեցան ապառաժոտ սարավանդին։ Լուսնի մռայլ ստվերի տակ մի սայլ էր կանգնած. նրա վրա քնած էր Կոժուխը։

— Ո՞ւր եք գնում,— հրացաններով կտրեցին նրանց ճանապարհը երկու պահնորդ։

— Ո՞ւր է գլխավոր հրամանատարը։

Իսկ Կոժուխն արդեն վեր էր թռել, և խավարի մեջ սայլի վրա գայլային երկու կրակ վառվեցին։

Պահնորդները պատրաստվեցին կրակելու։

— Կկրակենք։

— Ի՞նչ եք ուզում,— լսվեց Կոժուխի ձայնը։

— Մենք ձեզ մոտ ենք եկել, գլխավոր հրամանատար։ Մեր պաշարեղենը վերջացել է։ Հո սոված չե՞նք սատկելու։ Մենք հինգ հազար հոգի ենք, մեր ամբողջ կյանքը հեղափոխությանն ենք նվիրել, իսկ հիմա սոված սատկե՞նք։

Կոժուխի դեմքը չէր երևում, այնպիսի սև ստվերի մեջ էր. բայց ամենքը տեսնում էին գայլային երկու կրակները։

— Զորքի շարքերը մտեք, ձեզ հրացաններ կբաժանեն, և պարեն կստանաք։ Մեր պաշարեղենը վերջանալու վրա է։ Մենք չենք կարող ոչ ոքի կերակրել, բացի զենք կրողներից, թե չէ՝ տեղ չենք հասնի։ Նույնիսկ մարտիկների պարենը քչացրել ենք։

— Իսկ մենք մարտիկներ չե՞նք։ Դուք մեզ զոռո՞վ եք տանում, ինչ է։ Ինքներս էլ գիտենք, թե ինչ պետք է անենք։ Պետք եղած ժամանակ մենք ձեզանից ավելի լավ կկռվենք։ Դուք չեք, որ մեզ, հին հեղափոխականներիս, պիտի սովորեցնեք։ Ո՞րտեղ էիք դուք, երբ մենք թագավորի գահը տեղահան էինք անում. դուք թագավորի զորքում սպայություն էիք անում։ Իսկ հիմա, երբ ամեն ինչ տվինք հեղափոխությանը՝ սոված սատկե՞նք։ Տեղից վեր կացողը էստեղ հրամանատար է դառնում։ Ա՛յ, քաղաքում մերոնցից հազար հինգ հարյուր հոգի կորավ, սպաներին սաղ-սաղ թաղեցինք, իսկ...

— Այո՛, նրանք սպանվեցին, իսկ դուք այստեղ կանանց հետ քեֆ եք անում։

Նավաստիները վայրենի եզների պես գոռացին.

— Մեր՝ մարտիկներիս երեսովն եք տալիս...

Գոռում են, ձեռքերը թափահարում պահապանների առաջ, բայց գայլային կրակներին չես խաբի՝ նրանք ամեն ինչ տեսնում են, այստեղ գոռգոռում են, ձեռքները թափ են տալիս, իսկ կողքերից, ետևից կռացած, լուսնի թավ կապույտ շերտերը վազելով անցնելով և վազելիս ռումբերը վրայից քակելով ուրիշներն առաջ են գալիս։ Եվ հանկարծ չորս կողմից հարձակվեցին շրջապատված սայլի վրա։

Եվ նույն վայրկյանին՝ տա՛-տա՛-տա՛-տա՛...

Սայլում գնդացիրը փայլատակեց։ Եվ ի՞նչ հնազանդ է նա այդ գազանի աչքին նույնիսկ այդ խճճված խավարի շերտերի և լուսնի ծխանման բծերի մեջ. ոչ ոքի ոչ մի գնդակ

չդիպավ, այլ միայն մահվան սոսկալի քամին տարուբերեց նավաստիների գդակները։ Բոլորը վայրկենապես ցրվեցին։

— Գրո՞ղը տանի... Ի՞նչ ճարպիկն է... Ա՛յ, էդպես գընդացիր արձակողներ ունենայինք...

Ահագին տարածության վրա քնած է արծաթազօծված զորաբանակը։ Քնած են արծաթազօծված լեռները։ Եվ ամբողջ ծովի վրայով փայլփլում է արծաթե ուղին։

23.

Հեռ. լուսացած՝ զորասյան գլուխն արդեն ձգվել անցել էր հեռու խճուղու վրա։

Աջ կողմում նույն կապուտակ տարածությունն է, ձախ կողմում՝ ահագին անտառապատ լեռներ, իսկ նրանց վրա՝ լերկ ժայռեր։

Ժայռոտ լեռնաշղթայից դուրս է սողում սաստկացող տոթը։ Խճուղու վրա նույն փոշու ամպերն են։ Հազարավոր ճանճեր անդադար կպչում են մարդկանց և կենդանիներին, իրենց հարազատ Կուբանի տափաստանի ճանճերը, որ հավատարմությամբ ուղեկցում են նրանց, գիշերում նրանց հետ և մեզը բացվելուն պես նրանց հետ վեր կենում։

Սպիտակ օձի պես ոլորվելով՝ խճուղին մտնում է անտառների մեջ։ Լռություն։ Զով ստվերներ։ Ծառերի միջից՝ ժայռեր։ Խճուղուց մի քանի քայլ այս ու այն կողմ անկարելի է անցնել. ամեն ինչ խճճված է բաղեղներով և գայլուկներով, չտեսնված փշոտ թփերով։ Արջերի, վայրի կատուների, այծերի, եղջերուների բներն են այնտեղ. իսկ գիշերով լուսանն է կատվի պես զզվելի ճչում։ Հարյուրավոր վերստերի վրա մարդու հետք չկա, կազակների հոտն անգամ չկա։

Երբեմն այստեղ չերքեզներն էին ապրում։ Խոռոչներում և անտառներում կածաններ էին անցկացրած, կուսական անտառներում տեղ-տեղ եգիպտացորենի փոքրիկ արտեր էին հանդիպում, կամ քարանձավների մեջ, ջրի մոտ, փոքրիկ այգիներ։

Մոտ յոթանասուն տարի առաջ ցարական կառավարությունը չերքեզներին Տաճկաստան արտաքսեց։ Այն օրից

կածաններն անհետացան բույսերի տակ, նրանց այգիները վայրենացան, և հարյուրավոր վերստեր ամայի անապատներ են միայն, գազանների որջեր։

Տղերքը խոնջաններն ավելի և ավելի են ձգում, հանգըստանալու տեղում տրվող պարենը ավելի և ավելի է փոքրանում։

Սայլերն առաջ են սողում, վիրավորները սայլերից բըռնած քարշ են գալիս, երերվում են երեխաների փոքրիկ գլուխները, ռմբաձիգների նիհար ձիերը քարշ են տալիս միակ թնդանոթի լծափոկերը։

Բազմամարդ բանակը սողում է խճուղով՝ առանց մի ըռպե կանգնելու, իսկ տղերքն ու աղջկերքը, երեխաներն ու վիրավորները, ով որ կարող է, զառիվայրով ներքև են վազում, շտապ-շտապ հանում ցնցոտիները, վարտիքը, շապիկը, յուբկան, հրացանները միատեղ ցցում են և վազ տալով կապտագույն ջրի մեջ նետվում։ Անթիվ կաթիլներ են պըսպըղում և ծիրանագույն փայլում։ Նույնպես արեգակնակերպ վառվում ծիծաղ, ճիչ, գոչյուն, բացականչություն, մարդկային կենդանի աղմուկ՝ ծովափը իմաստ ստացավ։

Ծովը, այդ գերմարդկային վիթխարի հրեշը, իմաստունփայփայող կնճիռներով խաղաղվել և փաղաքշելով լիզում է կենդանի ափը, կենդանի դեղին շարժուն մարմինները, զվարթ ճիչերի և հոհոցի մեջ։

Զորասյունն անդադար առաջ է սողում։

Մի քանիսը ջրից դուրս են ցատկում, վերցնում իրենց վարտիքները, շապիկները, յուբկաները, հրացանները և վազում, թևի տակ սեղմած իրենց ծանրահոտ շորերը, և կաթիլներն արևակեզ մարմինների վրա շողշողում են մարգարտանման, և երբ հասնում են յուրայիններին, ուրախ քրքիջով, ծիծաղով, հարայհրոցով ու ցոփ կատակներով, շտապ-շտապ սկսում են խճուղու վրա հագնել իրենց քրտնքոտ ցնցոտիները։

Մյուսներն ագահորեն ցած են վազում, ճանապարհին մերկանում և նետվում են աղմկալից շողշողուն ծփանքի մեջ, և խաղաղված հրեշը նույն վրա տվող հին, թափանցիկ կնճիռներով փաղաքշելով լիզում է նրանց մարմինները։

Իսկ զորասյունն անդադար առաջ է սողում։

Սպիտակին տվեցին ամառանոցներ, տնակներ, որ հեռու, հեռու տարածված են խճուղու երկարությամբ։ Ամեն ինչ սեղմվել կպել է այդ նեղ, սպիտակ շերտին, որ հաղորդակցության միակ ճանապարհն է անտառների, ժայռերի, կիրճերի և ապառաժների միջև։

Տղերքը շտապ ներս են վազում ամառանոցները, ամեն ինչ քրքրում. ամեն ինչ դատարկ է, ամայի, բարձիթողի արած։

Գյուղում թխադեմ հույները, մեծ քթերով և սև սալորի պես աչքերով, խուփ են ու լուռ և թաքցնում են իրենց թըշնամական վերաբերմունքը։

— Հաց չկա... չկա... ինքներս էլ քաղցած ենք...

Նրանք չգիտեն, թե ովքեր են այդ զինվորները, որտեղից, ուր կամ ինչու չեն գնում, չեն էլ հարցնում և ներքուստ թըշնամի են։

Խուզարկեցին, իսկապես չկա։ Իսկ ոեխներից երևում էր, որ թաքցրել են։ Որովհետև նրանք հույն են, իրենցից չեն, բոլոր այծերը քշեցին՝ հակառակ սևաչյա հույն կանանց ճչճվոցներին։

Սարերը լայն ճեղքած մի կիրճում մի ռուսական գյուղ տեսան. հայտնի չէ, թե ինչպես էր այնտեղ հաստատվել։ Խորքում ոլոր-մոլոր գետակ է պսպղում։ Խրճիթներ։ Անասուններ։ Մի լանջին դեղնագույն արտեր, ցորեն են ցանում։ Մերոնք են, պալտավացիներ, մեր լեզվով էլ խոսում են։

Հաց ու կորեկի ձավար բաժին հանեցին, ինչքան կարող էին։ Հարցուփորձ են անում, թե ուր են գնում և ինչի համար։ Լսել են, որ թագավորին տապալել են, և բոլշևիկներ են եկել, բայց թե նրանք ովքեր են, դեռ չգիտեն։ Տղերքն ամեն ինչ պատմեցին նրանց ու թեև խղճում էին, չէ՞ որ մերոնցից են նրանք, բայց բոլոր հավերը, սագերը, բադերը բռնեցին՝ առանց ուշ դարձնելու կանանց լաց ու կոծին։

Զորասյունն անցնում է առանց կանգնելու։

— Ուտել ենք ուզում,— ասում են տղերքն ու ավելի պինդ են ձգում խոնջանները։

Զինվորները վիտում են ամառանոցներում, խուզարկում են և վերջին ամառանոցում մի գրամոֆոն են գտնում, բազմաթիվ երգերի սկավառակներ։ Կապեցին մի դատարկ

թամքից, և ժայռերի, անտառի լռության ու փոշու սպիտակ ամպերի մեջ տարածվեց.

— ...Ապրում էր մի լու... Հա՜-հա՜... Մի լու... — մի կոշտ, ասես և՛ մարդկային, և՛ ոչ մարդկային ձայն լիներ։

Տղերքը միասին քայլում էին և թուլացած ծիծաղում.

— Ապա մեկ էլ, մեկ էլ, մեկ էլ լարիր այդ լուն։

Հետո հերթով գնում էին. «Դուրս եմ գալիս գետի ափը»... «Ինձ մի գայթակղիր»... «Երկրի վրա բոլոր մարդիկ»...

Իսկ մի սկավառակ էլ սկսեց երգել... «Տեր, պահպան զկայսրն մեր»...

Սկսեցին բոլորն էլ գոռգոռալ...

— Կորցրո՛ւ, դրա մերն էլ...

Հագցրու...իդ...

Սկավառակը հանեցին և խճուղու վրա անցնողների անհամար ոտքերի տակ շպրտեցին։

Այդ բոպեից գրամոֆոնը ոչ մի բոպե հանգիստ չուներ և խոխոալով, ճռռալով, վաղ առավոտից մինչև ուշ գիշեր ռոմանսներ, երգեր, օպերաներ էր ոռնում։ Հերթով անցնում էր մի վաշտից մյուսին, մի էսկադրոնից մյուսին, և երբ ուշացնում էին, բանը կռվի էր հասնում։ Գրամոֆոնը ընդհանուրս սիրելին դարձավ, և նրան ինչպես մի կենդանի էակի էին վերաբերվում։

21.

Թամքի վրա կռացած, փափախը ծոծրակին, խճուղու եզրով մի կուբանցի էր սլանում բղավելով.

— Որտե՞ղ է բատկոն։

Իսկ դեմքը քրտնած է, ձին էլ թաց կողքերը ծանր վեր ու վար է անում։

Անտառապատ սարերից վիթխարի, կլոր, սպիտակ-փայլփլուն ամպեր դուրս եկան և նայում են խճուղուն։

— Երևի փոթորիկ կլինի։

Խճուղու ոլորանում զորասյան գլուխը մի տեղ կանգ էր առել։ Հետևակի շարքերն իրար վրա հավաքվելով և ստվարանալով, նույնպես կանգ առան, ձիերի դնչերը բարձրացնել տալով՝ սայլախումբն էլ կանգնեց, և այդպես մինչև զորասյան պոչը կանգ առան։

— Ի՞նչ է պատահել. այսպես շուտ հանգստանա՞լ։

Կուբանցու շտապող, քրտնած դեմքը, կողքերը շտապ վեր ու վար անող ձին, անսովոր երևույթը երկյուղ և տագնապ տարածեցին շուրջը։ Հանկարծ այդ բոլորին չարագուշակ միտք և նշանակություն տալով՝ հեռու առաջներին հրացանների թույլ պայթյուններ լսվեցին և լռեցին։ Նրանց ձայնը տպավորվեց տիրող լռության մեջ և այլևս չէր ջնջվում։

Գրամոֆոնը լռեց։ Կոժուխը շտապով երկանիվ կառքով դեպի գլուխն անցավ։ Հետո այնտեղից ձիավորներ վազ տվին և անասելի մերահիշոցներով ճանապարհը կտրեցին։

— Ետ գնացեք... Կկրակենք... Ձեզ են ասում... Գետինն անցնեք... Այնտեղ իսկույն կռիվ կսկսվի, իսկ դուք վրա եք թափվում։ Կոժուխը հրամայել է, որ ձեզ վրա կրակենք։

Հանկարծ բոլորին երկյուղ տիրեց։ Կանայք, ծերեր, պառավներ, աղջկերք, երեխաներ լաց ու կոծ բարձրացրին։

— Բա ո՞ւր գնանք, ի՞նչ անենք, ո՞ւր եք մեզ քշում։ Մենք էլ ձեզ հետ ենք, թող միասին մեռնենք։

Բայց ձիավորներն անողոք էին.

— Կոժուխը հրամայել է, որ ձեր և ձիավորների միջև հինգ վերստ լինի, թե չէ խանգարում եք, չեք թողնում, որ կռվեն։

— Բա մենք ձերը չե՞նք։ Իվանս այնտեղ է։

— Իսկ Միկիտան։

— Իմ Ապանասն էլ։

— Դուք կգնաք, իսկ մենք կմնանք... դուք մեզ կթողնեք։

— Դուք գլխո՞վ եք մտածում, թե քամակով։

— Ձեզ ասում են, թե ձեզ համար են այնտեղ կռվում։ Երբ ճանապարհ կբանան, դուք էլ մեր ետևից կգաք, թե չէ խանգարում եք, կռիվ է լինելու։

Սայլերը, որքան երևում է, իրար են խառնված։ Առողջները և վիրավորները խմբված են. կանանց վայնասուն է լսվում։ Տասնյակ վերստ խճուղու վրա սայլախումբն է սառել։ Ճանճերն աշխուժացել են և սևացրել ձիերի մեջքերը, կողերը և վզերը. պատել են նույնպես երեխաներին. ձիերը նեղացած շարժում են գլուխները և սմբակով զարկում փո-

ռեքին։ Սաղարթների միջից ծովն է երևում։ Բայց ամենքը միայն խճուղու մի մասն են տեսնում, որ կտրել են ձիավորները, իսկ ձիավորների մյուս կողմը զինվորներն են, իրենց տղերքն են հրացաններով, իրենց հարազատներն են, իրենց սիրելիները, որ նստոտած «ցիգարկա» են շինում խոտի լայն տերևներից և լցնում նույնպես մանրացրած չոր խոտով։

Ահա շարժվեցին, դանդաղ տեղներից վեր են կենում, մեկնեցին, և խճուղին հետզհետե լայնանում է, և այդ լայնացող շերտի մեջ, որի վրա ամայորեն նստում է փոշին, սպառնալիք և դժբախտություն է թաքնված։

Ձիավորներն անողոք են։ Անցնում է մեկ, երկու ժամ։ ամայի խճուղին առաջներին սպիտակին է տալիս, մահվան պես ճնշում։ Կանայք ուռած աչքերով հեծկլտում են և ողբում։ Ծառերի միջից ծովն է կապույտին տալիս, իսկ ծովին անտառապատ սարերի ետևից ամպերն են նայում։

Ո՞վ գիտե որտեղ՝ թնդանոթի մի կլոր, առաձգական թնդյունի ձայն լսվեց։ Հետո մյուսը, հետո երրորդը։ Դղրդաց ոմբաձգությունը և կոտրատվելով արձագանք տվեց սարերում, ձորերում և անտառներում։ Անկենդան ու անտարբեր սկսեց կտկտացնել գնդացիրը։

Այդ ժամանակ բոլոր մտրակները սկսեցին կատաղի մտրակել ձիերին։ Ձիերը սլացան, բայց ձիավորներն անօրինակ հայհոյանքներով սկսեցին բոլոր ուժով ձիերի դրնչերը, աչքերն ու ականջները մտրակել։ Ձիերը խորդալով, գլուխները շուռ տալով, արյունոտ ռունգները լայնացնելով, կլոր աչքերը չռելով՝ լծափայտերի մեջ ծառս էին լինում, աքացիներ տալիս։ Իսկ ետևից մոտ էին վազում մյուս սայլերի մարդիկն ու հայ տալիս, անողորմաբար ծեծում, երեխաներն այնպես էին ճչում, կարծես մորթում էին իրենց, ճիպոտներով խփում էին ոտներին, փորին, որքան կարելի է ցավեցնելով. կանայք անտանելի կերպով գոռում էին և բոլոր ուժով քարշ էին տալիս սանձափոկերը, իսկ վիրավորվածները անթացուպերով կողքերին էին տալիս։

Խելակորույս ձիերը կատաղած պրոհ տվին, ջարդեցին, ոռնատակ տվին ձիավորներին և, դուրս պրծնելով մաշված լծասաքքերից, սարսափած խորդալով, սլացան խճուղով վզերը մեկնած և ականջները միմյանց սեղմած։ Մուժիկները սայլերն էին ցատկում, վիրավորները սայլերի ետևներից կախ ընկած վազ էին տալիս, վայր ընկնում, քարշ գալիս, պոկվում, գլորվում էին խճուղու առվի մեջ։

Ոլոր-մոլոր բարձրացող սպիտակավուն քուլաների մեջ անիվների դղրդոցն էր լսվում, կախ տված դույլերի անտանելի դղրդոցը, սոսկալի հարայհրոցները։ Սաղարթի միջից երևում էր կապույտ ծովը։

Կանգնեցին և դանդաղ սկսեցին առաջ գնալ միայն այն ժամանակ, երբ հասան հետևակ զորամասերին։

Ոչ ոք ոչինչ չգիտեր։ Ասում էին, թե առաջներին կազակներն են։ Սակայն կազակները որտեղի՞ց պիտի գային. լեռնակույտերը վաղուց էին անջատել նրանց։ Ասում էին, իբր թե չերքեզներ են կամ կալմիկներ. կամ վրացիք, կամ ինչ-որ անհայտ ժողովուրդ, և անթիվ անհամար ուժ ունեն նրանք։ Այդ պատճառով էլ փախստականների սայլերն ավելի պինդ էին կպչում զորամասերին, ոչ մի կերպ չէր կարելի բաժանել նրանց, թերևս բոլորին մեկ-մեկ գնդակահարելով։

Կազակներ են, թե վրացի, չերքեզ, թե կալմիկ՝ միևնույնն է, մարդ ապրել է ուզում։ Գրամոֆոնը ձիու վրա նորից սկսեց երգել. «Հոեցեք, կրքի հուզումներ...»։ Տղերքը զարնազան անկյուններում հետը երգում էին։ Խառնիխուռն առաջ էին գնում խճուղով։ Խճուղուց սարերի վրա էին մագլցում, ճյուղերի և փշերի վրա իրենց վերջին ցնցոտիներն էին պատառոտում, փնտրում էին փոքրիկ, վայրի և անտանելի թթու խնձորներ, և կնճռոտվելով, գազանի նման դունչները ծռմռելով ստամոքսներն լցնում էին այդ թթու պտուղներով։ Կաղնիների տակ խոզակաղին էին հավաքում և ծամում, և գառն, կծու թուքն առատ հոսում էր բերաններից։ Հետո գուրս էին գալիս անտառից մերկ կաշին ժանգոտած, արյունոտված և ցնցոտիների մնացորդներով փաթաթում էին իրենց ամոթույքը։

Կանայք, երեխաները, աղջկերքը, բոլորը դեպի անտառ են ձգտում։ Աղմուկ, ծիծաղ, լաց, ծառի ասեղները ցցվում են մարմնի մեջ, փշերը չանգռոտում, բաղեղները խճճում, ոչ առաջ, ոչ ետ չի կարելի գնալ, բայց ինչ արած, քաղցը քաղցր չէ, և բոլորն էլ գլուխ են կոտրում։

Տեղ-տեղ սարերը լայնանում են, և լանջերի վրա դեղնին է տալիս խակ եգիպտացորենի մի փոքրիկ պատ՝ ավի տակ. մի որևէ տեղ փոքրիկ գյուղ է երևում։ Արտը մի վայրկյանում մորեխների պես մարդկանցով է ծածկվում։ Զինվորները կոտրում են եգիպտացորենի գլուխները և հետո ճանապարհին երկար ժամանակ տրորում են ձեռքների մեջ. ընտրում են խակ հատիկները, բերանները գցում և ագահաբար ծամում։

Մայրերն էլ երկար ծամում են, բայց կուլ չեն տալիս, այլ տաք լեզվով երեխաների բերաններն են կոխում թքով ջրկացած շիլան։

Իսկ առջևում դարձյալ հրացանի ձայներ, դարձյալ կըտկըտացնում է գնդացիրը, բայց ոչ ոք այլևս ուշադրություն չի դարձնում։ Ընտելացել են։ Թռչնի ձայնով ձգում է գրամոֆոնը... «Եվ էլ չեմ հավատում ոչ մի խոստման...»։ Անտառում իրար ձայն են տալիս, ծիծաղում, ամեն կողմից զինվորների երգերի ձայնն է լսվում։ Փախստականների սայլախումբը ձուլվում է հետևանքի վերջին զորամասերի հետ, և բոլորը միասին անդադար հոսում են խճուղով փոշու անվերջ ամպերի մեջ։

22.

Առաջին անգամն է, որ թշնամիները ճանապարհը կըտրում են. նոր թշնամիներ։

Ինչո՞ւ։ Ի՞նչ են ուզում։

Կոժուխը հասկանում է՝ այստեղ ճանապարհը փակվում է։ Զախ կողմից՝ սարեր են, աջից՝ ծովը, իսկ նրանց միջև՝ նեղ խճուղին։ Խճուղու վրա փրփրալից լեռնավտակի վրա երկաթուղու կամրջի օրինակով մի կամուրջ է կապած, որի կողքերից հնար չկա անցնելու։ Իսկ կամրջի առաջ թշնամին գնդացիրներ և թնդանոթներ է դրել։ Այս միջանցուկ պողպատե գերաններով հյուսված անցքում, ինչ զորաբանակ ասես, կարելի է կանգնեցնել։ Էհ, եթե հնար լիներ զորասյունը ուղածիդ պես շարժելու։ Ափսոս չեն տափաստանները։

Նրան հանձնում են Սմոլոկուրովի շտաբի հրամանագիրը, թե ինչպես պետք է վարվի թշնամու հետ։ Կիտրոնի պես

դեղնած, ծնոտները սեղմած, առանց կարդալու ճխլտում է հրամանագիրը և շպրտում խճուղու վրա։ Զինվորները խնամքով վերցնում են, հարդարում ծնկների վրա և «ցիգարկաներ» ոլորում, չոր տերևներ լցնելով։

Զորքերը ձգված են խճուղու երկարությամբ։ Կոժուխը նայում է նրանց. պատռված հագուստներով, բոբիկ. կեսը երկու կամ երեք փամփուշտ ունի միայն, իսկ մյուս կեսը միայն դատարկ հրացաններ։ Ընդամենը թնդանոթ միայն, տասնվեց ռումբով։ Բայց Կոժուխը, ծնոտները սեղմելով, այնպես է նայում զինվորներին, կարծես թե նրանցից յուրաքանչյուրը երեք հարյուր փամփուշտ ունի պայուսակում, խրոխտ տեսք ունեն թնդանոթները, և ռումբերով լիքն են մթերապահ արկղները, իսկ շուրջը հարազատ տափաստանն է, զորասյունը կարող է ծավալվել մինչև ամենավերջին զինվորը։

Եվ այդպիսի աչքերով ու դեմքով նա ասում է.

— Ընկերնե՛ր, մենք կռվել ենք կազակների և կադետների դեմ։ Գիտենք, թե ինչի համար ենք կռվել. նրա համար, որ ուզում են հեղափոխությունը խեղդել։

«Առանց քեզ էլ գիտենք այդ։ Հետո ի՞նչ։ Միևնույնն է, այս ծակովն անցնել չենք կարող...

— ... Կազակներից պոկվեցինք, սարերն են մեզ պաշտպանում, կարող ենք շունչ քաշել։ Բայց նոր թշնամի է ճանապարհը կտրել։ Ովքե՞ր են սրանք։ Վրացի մենշևիկներ են։ Իսկ մենշևիկները կադետների եղբայրներն են, բուրժույների հետ նույնպես միանում են, քնում են ու երազում, թե ինչպես կործանեն խորհրդային իշխանությունը։

Իսկ զինվորների աչքերն ասում են։

«Դե գնա, որ այդպես է, համբուրվիր քո խորհրդային իշխանության հետ։ Չե՞ս տեսնում, որ մենք բոբիկ ենք, տկլոր և քաղցած»։

Կոժուխը հասկանում էր նրանց հայացքները, հասկանում էր, որ դա կործանում է։

Եվ նա իր վերջին հնարավորությունը փորձեց և գիմեց հեծելազորին.

— Ընկերներ, դուք պետք է մի հարվածով առնեք կամուրջը։

Հեծյալները ամենքն էլ հասկացան, որ գլխավոր հրամանատարը անխոհեմ հանձնարարություն է տալիս իրենց. ոլանալ մեկ-մեկ, իրար ետևից, գնդացիրների և թնդանոթների կրակի տակ, նշանակում է մի մասը իրենց մարմնով կծածկի կամուրջը, իսկ մյուս մասը, հնար չունենալով առաջ գնալու դիակների կույտի վրայով, գնդակահար կլինի ետ փախչելիս։

Բայց նրանց վրա չերքեզկաներն այնպես սիրուն էին նստած, այնպես պսպղում էին հայրական և պապական արծաթե զենքերը, այնպես գեղեցիկ, ռազմատենչ տեսք ունեին փափախները և ոչխարի մորթու կուրանկաները, այնպես ժիր շարժում էին գլուխները և առաջ ձգում երասանակները Կուբանի տափաստանների հրաշալի նժույգները, և այնպես զմայլվելով էին նայում ամենքը նրանց, որ նրանք միահամուռ գոչեցին.

— Կառնե՛նք, ընկեր Կոժուխ...

Թաքցրած թնդանոթը, հրեշավոր կերպով աճող արձագանքով լցնելով սարերը, ձորերը և ժայռերը, սկսեց իրար ետևից հարվածել այն տեղը կամրջի ետևում, ուր գնդացիրներն էին թաքցրած, իսկ հեծյալները, փափախներն ուղղելով, լուռ, առանց աղմուկի, առանց հրացան արձակելու, գուրս թռան ոլորանից, և սարսափից ականջները հուպ տված, վզները մեկնած, աբյունագույն ուռած ռունգներով նժույգները սլացան գեպի կամուրջը և կամրջի վրայով։ Վրացի գնդացրորդները, կոտորակառումբի ամեն մի բոպե բռնկող քուլաներից կուչ գալով, սարերում վայրագ դղրդացող որոտներից խլացած, այդ անակնկալ հանդգնությունից հափշտակված, սկսեցին վրա տալ գնդացիրներից... վայր ընկավ մի ձի, հետո մյուսը, երրորդը, բայց աջդեն կամրջի կեսին են, կամրջի մյուս ծայրին, տասնվեցերորդ ռումբը պայթեց և... վաղ ավին։

— Ուռռա՜-ա՜...— սկսեցին սրերով բրդել։

Կամրջից քիչ հեռու կանգնած վրաց զորքը, մեկ-մեկ կրակելով, փախուստի դիմեց խճուղով և անհետացավ ոլորանի ետևը, ծովափի կողմը։ Բայց վրացի ոպաներն ավելի շուտ նավակները ցատկեցին և արագ հեռացան դեպի նավերը։ Ծխնելուղներից թանձր ծուխ սկսեց ելնել, և նավերը դեպի բաց ծովը մեկնեցին։

Վրացի զինվորները մինչև ծնկները, գոտին ջրի մեջ, ձեռքերը դեպի հեռացող նավերը պարզած, գոռում, անիծում էին, պաղատում էին հանուն նրանց երեխաների, բայց նրանց վզերը, գլուխները, ուսերը բրդում էին, և երեսին արյունի կոհակներ էին տարածվում։

Կապույտ հորիզոնում նավերը սև կետերի փոխվեցին և անհետացան, ծովափին այլևս ոչ ոք չէր պաղատում, չէր անիծում։

23.

Անտառների, ձորերի վրա ժայռոտ գագաթներ էին կուտակվում։ Երբ այնտեղից քամի էր փչում, զով էր գալիս, իսկ ներքևը, խճուղու վրա՝ տոթ, ճանճեր և փոշի։

Խճուղին նեղ նրբանցքի ձև ստացավ. երկու կողմից սարերն են սեղմել։ Վերևից կախ են ընկած հեղեղից մերկացած արմատներ։ Ոլորաններն ամեն մի բոպե աչքից ծածկում են, թե ինչ կա առջևում և ինչ՝ ետևը։ Ոչ կարելի է շեղվել ճանապարհից, ոչ ետ դառնալ։ Նրբանցքով անլուռ հոսում է միակ ուղղությամբ կենդանի բազմությունը։ Սարերն աչքից ծածկեցին ծովը։

Շարժումը դադարում է։ Սայլեր, մարդիկ, ձիեր կանգ են առնում։ Երկար, տառապալից կանգնած են մնում, հետո նորից շարժվում, նորից կանգնում։ Ոչ ոք ոչինչ չի իմանում, ոչինչ էլ չի երևում. միայն սայլերն են, իսկ հետո՝ ոլորան և պատ, վերևը մի կտոր կապույտ երկինք։

Մի բարակ ձայն.

— Մա՜-մա՜... խնձո՛ր...

Մի ուրիշ սայլակում.

— Մա՜-մա՜...

Եվ երրորդում.

— Սո՛ւս կացեք... որտեղի՞ց տամ... Թե՞ պատերն ելնեմ. տեսնում ես, պատեր են։

Երեխաները ձայնները չեն կտրում, լալիս են, հետո՝ այնպես են ճչում, որ ասես հիմա պիտի ճաքեն։

— Մա՛-մա՛... Սիմինդր տուր... Խնձոր տուր... Խնձո՛ր... Սիմի՛նդր տուր...

Մայրերը հալածվող գայլերի պես, փայլուն աչքերով, չորս կողմը նայելով, երեխաներին են ծեծում.

— Սուս, չոռ ու ցավ։ Ե՞րբ պիտի սատկես, հոգիս հանեցիք...— և շարունակից անզոր արցունք են թափում։

Մի տեղ հեռվում խուլ հրացանաձգություն կա։ Ոչ ոք չի լսում, ոչ ոք ոչինչ չգիտե։

Կանգնած են մի ժամ, երկու ժամ, երեք ժամ։ Շարժվեցին ու նորից կանգ առան։

— Մա՛-մա՛... Սիմի՛նդր...

Մայրերն առաջվա պես չարացած, ամեն մեկի վիզը ոլորելու պատրաստ, կովելով, հայհոյելով, սայլակներում բան են փնտրում, կանաչ սիմինդրի ցողուններ են դուրս քաշում սայլից, չափազանց երկար ծամում, այնպիսի դժվարությամբ ատամները հուպ տալով, որ ընդերից արյուն է հոսում, ապա կռանում են դեպի մանկան ագահաբար բացած բերանը և լեզվով ներս են խրում։ Երեխաները կուլ տալ են փորձում, բայց հարդը կոկորդն է ծակում, խեղդվում են, հազում, թքում և սաստիկ լաց լինում։

— Չե՞մ ուզում... Չե՞մ ուզում։

Մայրերը կատաղած ծեծում են.

— Էլ ի՞նչ չոռ ու ցավ տամ քեզ։

Կեղտոտ արտասուքը երեսներին քսելով, երեխաները խեղդվելով կուլ են տալիս։

Կոժուխը, ծնոտները սեղմած, հեռադիտակով դիտում է ժայռի ետևից թշնամու դիրքերը։ Խմբված են հրամանատարները և նույնպես դիտում են հեռադիտակներով, զինվորները, աչքերը կկոցելով, հեռադիտակից վատ չէին տեսնում։

Ուլորանից հետո կիրճը լայնացավ։ Կիրճի լայն բացվածքից կարելի էր տեսնել հեռավոր սարերի կապույտ գագաթները։ Ահագին խիտ անտառով ծածկված կիրճի առաջը կտրող սարը։ Սարի գլուխը կայծաքարից է, իսկ բուն գագաթը չորս սաժեն բարձրությամբ ուղղահայաց զառիվայր է, նրա վրա թշնամու ամրություններն են, և 16 թնդանոթ

ագահ նայում են նրբանցքից դուրս վազող խճուղուն։ Հենց որ զորասյունը ժայռոտ դռնով սկսեց շարժվել, թնդանոթները և գնդացիրները տարափ թափեցին, բաց տեղ չթողին. զինվորները ետ փախան ժայռերի ետևը։ Կոժուխի համար պարզ է՝ թռչունն էլ չի կարող անցնել։ Խճուղին է միակ ճանապարհը, իսկ այնտեղ մահն է։ Նա դիտում է հեռու ներքևում գտնվող սպիտակ փոքրիկ քաղաքը, կապույտ նավահանգիստը, ուր սևին են տալիս վրացիների նավերը։ Պետք է մի նոր բան հնարել, բայց ի՞նչ. հարկավոր է այլ կերպ մոտենալ, բայց ի՞նչ կերպ։ Նա շոքում է և սկսում է փոշոտ խճուղու վրա փռած քարտեզը քննել, ուսումնասիրելով ամենափոքր, ամենաաննշան ծայքերը, բոլոր կածանները։

— Ընկեր Կոժուխ։

Կոժուխը բարձրացնում է գլուխը։ Երկու հոգի կանգնած են՝ քեֆները տեղը։

«Սրիկանե՛ր... կոնծել են»...

Բայց նրանց նայում է լուռ։

— Ընկեր Կոժուխ, դժվար թե կարողանանք խճուղով անցնել. Վրաստանը բոլորիս կկոտրի։ Մենք էլ հենց գնացել էինք իբրև... կամավորներ՝ տեղեկություններ հավաքելու։

Կոժուխն, առանց աչքերը հեռացնելու նրանցից՝

— Շնչիր, ներս մի քաշիր, ինձ վրա շնչիր։ Չգիտե՞ս որ դրա համար մահապատիժ կա։

— Քրիստոսը վկա, անտառի հոտն է, շարունակ անտառովն էինք գնում, և այդ հոտը կպել է մեզ։

— Այստեղ հո օցնտուն չկա անտառում,— խորամանկ, ուրախ ուկրաինյան աչքերով ավելացրեց երկրորդը,— անտառում միայն ծառեր կան, ուրիշ ոչինչ։

— Դե՛, ասա ի՞նչ կա։

— Ընկեր Կոժուխ, դե՛, մենք գնում ենք անտառով, և լուրջ խոսակցություն ունեինք. ի՞նչ անենք, բոլորս կոտրվենք այստեղ խճուղու վրա՞, թե գնանք կաղակների ճանկն ընկնենք։ Ոչ մեռնելու ցանկություն կա, ոչ էլ նրանց ճանկը ընկնելու... Ի՞նչ անենք։ Մեկ էլ տեսնենք՝ ծառերի մեջ մի դուքան։ Մենք սողալով մոտեցանք, տեսանք չորս վրացի գինի են խմում, խորոված են ուտում. դե, հայտնի է, վրա-

ցիք հարբեցող են։ Հոտը քթերիս դիպավ, բերաններիս ջուրը գնաց։ Նրանք ատրճանակներով էին։ Դուրս թռանք, երկուսին սպանեցինք։ «Տեղներիցդ չշարժվեք։ Շրջապատված եք, ձեր էսպեսն ու էնպեսը»։ Շշկլվեցին, չէին սպասում։ Մեկին էլ սպանեցինք, իսկ էն մյուսին կապեցինք։ Խեղճ դուքանչին լեղապատառ եղավ։ Դե, ինչ թաքցնենք, վրացիներից մնացած խորոված՝ մաքրազարդեցինք, իսկ գինու որ ասես համն էլ չտեսանք, ինչպես որ դուք հրամայել էիք։

— Թող կորչի՛ այդ անիծված խմիչքը... Թող ոչխս ծրոմի, եթե հոտ քաշած լինեմ գինուց։ Թող փորոտիքս թափեն։

— Կա՛րճ կապեք։

— Վրացիներին քարշ տվինք անտառի խորքը, ղենքերը վերցրինք, իսկ մնացած վրացուն ու դուքանչուն էլ հետներս բերինք, որպեսզի խաբար չտանի։ Ճանապարհին պատահեցինք հինգ մուժիկի, կանանց և աղջկերանց հետ. էստեղացիք են, քաղաքի մոտ են ապրում, մեր ռուսներից են։ Ամեն բան թողել են, գալիս են մեզ մոտ. ասում են, թե կածաններով կարելի է քաղաքի մյուս կողմը դուրս գալ։ Ասում են՝ դժվար է, անտառներ, ձորեր, անդունդներ կան, բայց կարելի է։ Իսկ ճակատ ճակատի անկարելի է։ Բոլոր կածանները գիտեն նրանք հինգ մատի պես։ Դժվար է, շատ դժվար է, մի խոսքով, ուղղակի մահ է, բայց էլի կարելի է։

— Որտե՞ղ են նրանք։

— Այստեղ են։

Մոտենում է մի զումարտակի պետ։

— Ընկեր Կոժուխ, մենք էս բոպեիս ծովի ափին էինք. այնտեղ անկարելի է անցնել, ժայռոտ ափը զառիվայր ուղղակի ջուրն է իջնում։

— Խո՞րն է։

— Ժայռի մոտ մինչև գոտին, գուցե և մինչև վիզը կամ նույնիսկ գլուխը։

— Ի՞նչ կա որ,— ասում է ուշադիր լսող մի զինվոր ցնցոտիներով և հրացանը ձեռքին,— ի՞նչ կա որ, մինչև գլուխն է, քարեր կան սարերից ընկած. կարելի է քարից քար ցատկել նապաստակի նման։

Կոժուխին ամեն կողմից զեկուցումներ են ուղարկում, հասցնում են ցուցումներ, բացատրություններ, ծրագրեր՝ երբեմն անակնկալ, սրամիտ, պարզ, և ընդհանուր դրությունը որոշակի աչքի առաջ է գալիս։

Ժողովում է հրամանատարներին։ Մնոտները սեղմած են, աչքերի հայացքը՝ ծակող, առարկություն չընդունող։

— Ընկերնե՛ր, ահա թե ինչ։ Բոլոր երեք էսկադրոնն էլ պետք է քաղաքը շրջանցեն։ Ճանապարհը դժվար է, կածաններով, անտառներով, ժայռերով, ձորերով և այն էլ գիշերով. բայց, այնուամենայնիվ, ինչ էլ որ լինի, պետք է կատարել։

«Վզներս կկոտրենք, ոչ մի ձի սաղ չի մնա». կարելի էր կարդալ նրանց աչքերում, ինչ որ լեզուն չէր ասի։

— Հինգ ուղեցույց կա, ռուս են, այստեղի բնակիչներ։ Վրացիներից վառված են։ Նրանց ընտանիքները մեզ մոտ են։ Ուղեցույցներին հայտարարված է, որ իրենց ընտանիքներն են պատասխանատու նրանց համար։ Շրջանցել թիկունքից և ներս խուժել քաղաք։

Նա լռեց, աչքերը հառելով կիրճի մեջ ներս սողացող գիշերին, կարճ վրա բերեց.

— Բոլորին ոչնչացնել։

Հեծյալները կորիճի նման իրենց փափախները ծոծրակների վրա քաշեցին։

— Կկատարե՛նք, ընկեր Կոժուխ,— և ցատկեցին իրենց ձիերին։

Կոժուխը՝

— Հեղափոխական դունդը... Ընկեր Խրոմով, ձեր դունդը թեքեցրեք քարափից, քարերի վրայով կանցնեք մինչև նավահանգիստը։ Ծեզը բացվելիս հարձակվեցեք առանց կրակելու և գրավեցեք նավամատույցից կապած նավերը։

Եվ դարձյալ, լռելով, վրա բերեց.

— Բոլորին կոտորե՛լ։

«Վրացիք ծովի վրա որ մի զինվոր կանգնեցնեն, ամբողջ դունդը մեկ-մեկ կփոի քարերի վրա»...

Իսկ բարձր ձայնով միաբերան ասացին.

— Լսում ենք, ընկեր Կոժուխ։

— Երկու դունդ պատրաստել ճակատից հարվածելու համար։

Մեկը մյուսի ետևից մարեց հեռավոր բարձրությունների կարմրությունը. միապաղաղ և թարմ կապտություն պատեց։ Գիշերը ներս սողաց կիրճ։

— Ինքս կառաջնորդեմ։

Բոլորի աչքի առաջ խավար լռության մեջ տպավորվեց. Բոլորի աչքի առաջ խավար լռության մեջ տպավորվեց. թավ անտառ, անտառի ետևից կայծքարի վերելք. իսկ նրա վրա միայնակ, մահվան պես հայացքը ցած գցած ժայռն ուղղահայաց կտրված. պատկերը շուտով չքացավ։ Գիշերը կիրճի մեջ ներս սողաց։

Կոժուխը մագլցեց ժայռի վրա։ Ներքևը աղոտ շարված ցնցոտիներ էին երևում, բոբիկ ոտքեր, բազմաթիվ խոնված սուր սվիններ։

Ամենքն ակնապիշ Կոժուխին էին նայում նրա ձեռին էր մահվան և կյանքի հարցը վճռելու գաղտնիքը. նա պարտավոր էր ելք ցույց տալ — ամենքն այդ պարզ տեսնում էին — անելանելի դրությունից։

Իրար վրա հառած հազարավոր պահանջկոտ աչքերի ազդեցության տակ, կյանքի և մահվան անհայտ գաղտնիքի տեր զգալով իրան, Կոժուխն ասաց.

— Ընկերնե՛ր, ընտրություն անելու բան չունենք մենք. կամ այստեղ պետք է գլուխներս վայր դնենք, կամ ետևնեռիցս կազակներն ամենքիս չարաչար պիտի կոտորեն։ Անհաղթելի են արգելքները. փամփուշտ չկա, ռումբ չկա, ստիպված ենք դատարկ ձեռքերով վերցնել, իսկ այնտեղից 16 թնդանոթ են նայում մեզ։ Բայց եթե բոլորս, ինչպես մի մարդ...— նա մի վայրկյան լռեց, երկաթե դեմքը քարացավ և բացականչեց մի վայրենի ձայնով, որ ցնցեց ամենքին,— եթե բոլորս, մի մարդու պես գրոհ տանք, այն ժամանակ ճանապարհը բաց է դեպի մերոնց կողմը։

Այն, ինչ որ ասում էր նա, ամենավերջին զինվորն էլ գիտեր, բայց երբ բացականչեց անսովոր ձայնով, բոլորին զարմացրեց ասածի անակնկալ նորությունը, և զինվորները բացականչեցին.

— Մի մարդու պես... Կա՛մ ճանապարհ կբանանք, կա՛մ գլուխներս վայր կդնենք։

Անհետացան սպիտակին տվող ժայռերի վերջին բծերը. ոչինչ չէր երևում. ոչ սարը, ոչ ժայռերը, ոչ էլ անտառները։

Խավարի մեջ ծածկվեցին վերջին ձիերի գավակները։ Ջեն երևում այլևս իրար ցնցոտիներից բռնած հեղեղատով ծովափ իջնող զինվորները։ Անթափանց անտառում ծածկվեցին երկու գնդերի վերջին շարքերը, որի վրա աչքերը փակած մահվան պես կանգնած էր թվում դուրս ցցված ժայռը միայն։

Սայլախումբը աներևութացավ գիշերվա լայնածավալ լռության մեջ. ոչ խարույկներ կան, ոչ աղմուկ, ոչ ծիծաղ, և երեխաներն էլ լուռ պառկած են քաղցից փոս ընկած դեմքերով։

Լռություն։ Խավար։

24.

Մի վրացի սպա, նոր բուսած բեղերով, ձիգ սեղմված կարմիր շերքեզին հագին, ոսկեգույն ուսադիրներով, սև, նշաձև աչքերով, որից (նա այդ գիտեր) ուշագնաց էին լինում կանայք, անցուդարձ էր անում տափարակի վրա և երբեմն աչք էր ածում։ Խրամատներ, հողապատնեշներ, գնդացիրների խոռոչներ։

Քսան սաժենի վրա անմատչելի ուղղահայաց քարափ է, նրա տակ քարքարոտ զառիվայր, հետո անանցանելի թավ անտառներ, անտառներից հետո ժայռապատ կիրճն է, որից դուրս է վազում խճուղու սպիտակ ամայի շերտը։ Թաքցրած թնդանոթները նայում են դեպի այդ կողմը. այնտեղ է թշնամին։

Գնդացիրների մոտ համաքայլ ման են գալիս պահապան զինվորները, կտրիճ տեսքով, կոկ հագնված։

Այդ կեղտոտ խոզերին այս առավոտ մի լավ ուտեցրինք, երբ նրանք փորձեցին ժայռերի ետևից քթները դուրս հանել. չեն մոռանա։

Այդ նա է ընտրել, գնդապետ Միքելաձեն (այդպես ջահել՝ և արդեն գնդապետ) այդ դիրքը և հաստատել տվել շտաբում։ Դա այն բանալին է, որով փակվում է ծովեզրը։

Նա դարձյալ նայեց սարի լայնածավալ տափարակին, ուղղահայաց քարափին, դեպի ծովափն իջնող ուղղահայաց

ժայռակույտերին. այո՛, դրանք բոլորը կարծես դիտմամբ կուտակվել էին, որպեսզի ամեն մի զորաբանակ կանգնեցնեն։

Բայց այդ բավական չէ, որ նրանց կանգնեցնեն, պետք է նրանց ոչնչացնել։ Եվ նա արդեն ծրագիր ունի կազմած. նավերն ուղարկել նրանց թիկունքը, որտեղ խճուղին ծովափն է իջնում, ոմբակոծել, զորք ափ հանել, երկու կողմից փակել այդ հոտած խուժանի ճամփան, և նրանք կսատկեն, ինչպես մկները թակարդի մեջ։

Նա, իշխան Միքելիձեն, որ Քութաիսի մոտ մի փոքր, բայց հրաշալի կալվածք ունի, մի հարվածով կկտրի ծովեզրով սողացող թունավոր ճիվաղի գլուխը։

Ռուսները Վրաստանի թշնամիներն են, չքնաղ, քաղաքակիրթ մեծ Վրաստանի թշնամիներն են, ինչպես և հայերը, թուրքերը, աղրբեջանցիները, թաթարները, աբխազները։ Բոլշևիկները մարդկության թշնամիներն են, համաշխարհային կուլտուրայի թշնամիներն են։ Նա, Միքելաձեն, ինքը սոցիալիստ է, բայց ինքը... («Կանչել չտա՞մ արդյոք այն աղջկան, այն փոքրիկ հույն աղջկան... Ո՛չ, չարժե, դիրքերում չարժե, զինվորների պատճառով»...) ... բայց իսկական սոցիալիստ է, խորապես ըմբռնում է անցքերի պատմական մեխանիզմը և երդվյալ թշնամի է բոլոր արկածախնդիրներին, որոնք սոցիալիզմի դիմակի տակ ամբոխի ամենաստոր բնազդներն են զարթեցնում։

Նա արյունարբու չէ, նա գարշում է արյունաթափելուց, բայց երբ հարցը վերաբերում է համաշխարհային կուլտուրային, իր հարազատ ազգի մեծության, նա անողոք է, ուստի և դրանց բոլորին նա կկոտորի։

Նա դիտակը ձեռին ման է գալիս, նայում է, գիտում ահռելի վայրէջքը, անանցանելի անտառների կատարը, ժայռերի ետևից մանվածապատ դուրս եկող սպիտակ խճուղին, ուր ոչ ոք չկա, երեկոյան վարդագույն կարմրությամբ պատած գագաթները, և վրա հասնող մեղմ երեկոյի խաղաղությունը, համաշխարհային խաղաղությունն է լսում։ Եվ այդ հրաշալի մահուդից կարած չերքեզին, որ կարծես ձուլված լինի նրա վայելչակազմ իրանի հետ, ոսկեկերտ՝ ակացրած թանկագին դաշույնը և ատրճանակը, Կովկասի միակ հոչակավոր վարպետ Օսմանի կարած ձյունի պես սպիտակ փոփափը, այդ բոլորը, բոլորը, բոլորը պարտավորեցնում է նրան մի սխրագործության, արտակարգ սխրագործության, որ նա պետք է կատարի, այդ հանգամանքն անջատում է նրան ամենքից՝ թե զինվորներից, որ նրա առաջ արձան են կանգնում, թե սպաներից, որոնք զուրկ են նրա փորձառությունից, և երբ նա վայելչաձև զբոսնում է, զգում է, որ իր միայնակության բեռն է կրում։

— Է՛յ...

Մոտ է վազում սպասյակը, մի ջահել վրացի, դեղնագույն քաղցրաբարո դեմքով և նույնպես սև, թաց աչքերով, ինչպես և իր գնդապետինը, լարի պես ձգվում, ձեռը գլխարկի մոտ տանում։

— Ի՞նչ կհրամայեք։

«... Այն փոքրիկ... հույն աղջկան... կանչիր...»։

Բայց չարտասանեց, այլ խստիվ նայելով ասաց.

— Ընթրիքը պատրա՞ստ է։

— Այո՛, պարոն սպաները սպասում են։

Գնդապետը հոյակապ տեսքով անցավ ամեն կողմից դուրս ցատկող արձանացած, նիհար դեմքով զինվորների մոտով. պաշար չէին հասցնում, նրանք միայն մի բուռ եգիպտացորեն էին ստանում և քաղցած էին մնում։ Նրանք ողջույն էին տալիս, իսկ նա անուշադիր բարձրացնում էր միայն մատներին քաշած սպիտակ ձեռնոցը։ Անցավ երեկոյան կապույտ ծխով հանգիստ այրվող խարույկների մոտով, գմբեթաձև դարսած հրացանների և ոմբաձիգների ծխակապերի մոտով և մտավ մի սպիտակ երկայն վրան, որի մեջ մի ծայրից մինչև մյուս ծայրը ձյունի պես սպիտակ սեղան էր բաց արած, վրան շշեր, ափսեներ, ըմպանակներ, խավիար, պանիր, մրգեր։

Նույնպես երիտասարդ, գեղեցիկ չերքեզի հագին սպաների խմբերում խոսակցությունն իսկույն ընդհատվեց, ամենքը վեր կացան։

— Խնդրեմ,— ասաց գնդապետը, և սկսեցին նստել։

Իսկ երբ պիտի պառկեր իր վրանում, գլուխը ախորժելի պառույտ էր գալիս, և ծառային իր լայքայե կոշիկը հանելու համար ոտը մեկնելիս մտածում էր.

«Զուր կանչել չտվի այն հույն աղջկան... Ասենք, լավ եղավ, որ կանչել չտվի...»։

25.

Վիթխարի գիշերը կլանել է և սարեր, և ժայռեր, և այն հսկայական անդունդը, որ ցերեկով բացված էր լայնադիր սարի առաջ, և որի մեջ անտառներ են, իսկ այժմ ոչինչ չի երևում։

Հողապատնեշի վրա պահապանն է ման գալիս, որ նման է սև թավշի, ինչպես և ամեն ինչ այդ թավշանման խավարում։ Նա դանդաղ տասը քայլ է անում, դանդաղ շուռ է գալիս և դանդաղ ետ է դառնում։ Երբ մի կողմ է գնում, հազիվ նշմարվում է գնդացիրը, իսկ երբ մյուս կողմն է անցնում, ժայռոտ անդունդն է զգալի՝ մինչև եզրերը միակերպ խավարով լցված։ Այդ անտեսանելի ուղղահայաց քարափը անդորրության և վստահության զգացումով է համակում։

Եվ նորից կրկնվում է դանդաղ տասը քայլը, դանդաղ դարձը, և նորից...

Տանը մի փոքրիկ այգի կա. եգիպտացորենի փոքրիկ արտ։ Նինան, և փոքրիկ Սերգոն նրա ձեռքին։ Երբ նա հեռանում էր, Սերգոն երկար նայում էր նրան իր սև սալորի պես աչքերով, հետո մոր ձեռքերի վրա թրթռաց, մեկնեց փափլիկ ձեռքերը և ժպտաց, փուչիկներ բաց թողնելով, ժպտաց իր սքանչելի անատամ բերանով։

Իսկ երբ հայրը վերցրեց նրան, նա իր անուշ թքով թքոտեց երեսը։ Եվ այդ անատամ ժպիտը, այդ փուչիկները չեն մարում խավարի մեջ։

Տասը դանդաղ քայլ, հազիվ նշմարվող գնդացիրը, դանդաղ հետադարձ, նույնպես հազիվ նշմարվող ուղղահայաց քարափի եզրը, նորից...

Բոլշևիկները նրան վատություն չեն արել...

Նա պիտի կրակի նրանց վրա իր բարձր դիրքից... Խճուղով մի խլեզ չի կարող անցնել... Բոլշևիկները թագավորին տապալեցին, իսկ թագավորը Վրաստանը ճզմում էր, շատ լավ արին... Ռուսաստանում, ասում են, բոլոր հողը գյուղացիներին են տվել... Նա հոգոց քաշեց։ Նրան զինվոր են

կանչել և կրակելու է նրանց վրա, որ ժայռերի ետևումն են։

Առանց պատճառի աչքին երևում են անատամ ժպիտն ու փուչիկները, սիրտը տաքանում է, ներքուստ ժպտում, բայց դեմքը լուրջ է։

Նույն խավարով լի լռությունն է տիրում, որ լուսադեմին, երևի ավելի է խտանում։

Մի անասելի ծանրությունից գլուխը ավելի ու ավելի է խոնարհվում... բայց իսկույն նորից վեր է բարձրանում։ Նույնիսկ գիշերվա մեջ նկատելի է անհարթ սփռած մթությունը. զգալի են սարերը. փայլկլտում են մենավոր աստղերը։

Հեռվում տարօրինակ ճչաց մի գիշերային թռչուն։ Ինչո՞ւ Վրաստանում նա չի լսել այդպիսի ճիչ։

Ամեն ինչ ծանրացած, ամեն ինչ անշարժ և դանդաղ նրան ընդառաջ է լողում որպես խավարի մի օվկիանոս, և տարօրինակ չի թվում, որ անշարժ և անդիմադրելի նրան ընդառաջ է լողում։

— Նինա, դո՞ւ ես... Իսկ Սերգո՞ն...

Աչքերը բացեց, բայց գլուխն օրորվում է կրծքի վրա, և ինքը հենվել է հողապատնեշին։ Ընդհատված քնի վերջին վայրկյանները դանդաղ լողում էին աչքի առաջ գիշերվա ընդարձակ խավարում։

Գլուխը թափ տվեց, ամեն ինչ անհետացավ։ Կասկածանքով դիտեց՝ նույն անշարժ մթությունն է, նույն հազիվ նշմարվող հողապատնեշը, անդունդի եզրը, գնդացիրը։ Հեռվում ճչաց թռչունը, այդ տեսակ թռչուններ չկան Վրաստանում...

Նա իր հայացքը փոխում է դեպի հեռուն։ Նույն անհարթ սևությունն է, որի ծալքերում այժմ աստղերը, այլ կերպ դասավորված, գունատ պսպղում են։ Ուղղակի լուռ խավարի օվկիանոս է, և նա գիտե, որ նրա հատակում խիտ անտառներ կան։ Հորանջում է և մտածում՝ «Պետք է ման գալ, թե չէ դարձյալ...», բայց չվերջացրեց իր միտքը, և նորից սկսեց անդունդի տակից դուրս լողալ անշարժ խավարը, անվերջ, անդիմադրելի, և սիրտը սկսեց վշտից ճմլվել։

Նա հարցրեց.

«Մի՞թե գիշերվա խավարը կարող է լող տալ»։

Եվ նրան պատասխանեցին.

«Կարող է»։

Միայն պատասխանեցին ոչ թե խոսքերով, այլ ծիծաղեցին լոկ լնդերքով։

Նա սոսկաց, որովհետև բերանն անատամ էր և փափուկ։ Նա մեկնեց իր ձեռքը, իսկ Նինան վայր գցեց երեխայի գլուխը։ Մոխրագույն գլուխը գլորվեց (նրա սիրտը նվաղեց բայց ուղիղ եզրի մոտ կանգ առավ... Կինը սարսափած ճչաց՝ ա՜հ... Բայց ոչ թե դրանից, այլ մի ուրիշ սարսափից. լուսադեմին լարված մթության մեջ անդունդի եզրին բազմաթիվ գլուխներ էին գորշ խռնվել, երևի գլխատվածների... Նրանք հա բարձրանում էին. երևացին վզերը, մեկնվեցին ձեռքեր, բարձրացան ուսեր և սեղմված ծնոտների միջով երկաթի զրնգոցի նմանող մի ձայն խախտեց ընդարմացումն ու լռությունը.

— Առա՜ջ... Գրո՜հ տվեք...

Անասելի գազանային մի գոռոց բարձրացավ չորս կողմը։ Վրացին մի կողմ ցատկեց, և... մեջքը ճեղքեց անտանելի մի ցավ... Նա գլորվեց, և այդ անմարդկային մորմոքող ցավի մեջ միանգամից մարեց մոր ձեռքի վրա թրթռացող, թաթիկները մեկնած, անատամ, ժպտուն բերանով փուչիկներ բաց թողնող մանուկը։

26

Գնդապետը դուրս պրծավ իր վրանից և նետվեց դեպի ներքև, դեպի նավահանգիստը։ Շուրջը, քարերի և վայր ընկածների վրայով ցատկելով՝ բացվող ծեգի մեջ թռչում էին ղինվորները։ Ետևից թնդում էր մի ոչ մարդկային, երբեք լսված ոռնոց։ Ձիերը կտրատում էին իրենց կապերն ու սարսափահար փախչում...

Գնդապետը մի աշխույժ երեխայի նման քարից քար թռչկոտելով, թփից թուփ անցնելով, այնպես արագ էր վազում, որ սիրտը չէր հասցնում կատարել իր բաբախումները։ Աչքի առաջ միայն մի բան էր տեսնում. նավահանգիստ... Նավեր... Փրկություն...

Եվ ինչ արագությամբ որ նա փոխում էր ոտները, նույն արագությամբ էլ, ո՜չ, ո՜չ թե ուղեղով, այլ ամբողջ մարմնով անցնում էր. «... Միայն թե... Միայն թե... Միայն թե... չըսպանեն... Միայն թե խնայեն... Ամեն ինչ պատրաստ եմ անելու նրանց համար... Անասուններ, հնդուհավեր արածացնել... Ամանները լվանալ... Հող փորել... Աղբ հավաքել... Միայն թե կենդանի մնամ... Միայն թե չսպանեն... Տեր աստված... Կյա՜նքս... Կյա՜նքս...»։

Այդ անվերջ, գետինը սասանեցնող դոփյունը լսվում է շատ մոտ՝ ետևից, կողքերից։ Բայց ավելի զարհուրելի են մեռնող գիշերվա մեջ ետևից վրա հասնող վայրի, խելագար, անմարդկային ոռնոցը՝ ա՜-ա՜-ա՜... և ընտիր, խոպոտ խեղդվող հայհոյանքները...

Եվ ի հաստատումն այդ ոռնոցի սարսափելիության տեղ-տեղ լսվում է՝ թրա՜խկ-թրա՜խկ... Նա հասկանում է, հրացանի կոթով կառափներ են ջարդում ընկույզի նման։ Լսվում են նապաստակի ճիչեր, որ հանկարծ կտրվում են, և նա հասկանում է՝ սվիններով են ծակում։

Նա փախչում է, ծնոտները քարի պես սեղմած, և կիզիչ շունչը գոլորշու պես դուրս է պրծնում ռունգերից։

«... Միայն թե ողջ մնամ... միայն թե խնայեն... ոչ հայրենիք ունեմ... ոչ մայր... ոչ պատիվ, ոչ սեր... միայն թե ազատվեմ... Իսկ հետո այդ բոլորը էլի կլինի... Իսկ այժմ ապրե՛լ, ապրե՛լ, ապրե՛լ...»։

Կարծես բոլոր ուժերը սպառված էին, բայց նա լարեց իր վիզը, գլուխը ներս քաշեց, բռունցքները սեղմեց և այնպիսի ուժով առաջ սլացավ, որ իր դիմացը քամի բարձրացրեց, իսկ խելակորույս փախչող զինվորները սկսեցին ետ մնալ, և նրանց մահագույժ ճիչերը թևեր էին տալիս փախչող գրնդապետին։

Թրա՜խկ... Թրա՜խկ...

Նավահանգստի կապույտը երևաց. նավեր, օ՜, փրկություն...

Երբ մոտ վազեց նավին՝ բարձրանալու տախտակամածին, մի վայրկյան կանգ առավ. նավի վրա, տախտակամածի վրա, ծովեզրին, ծովապատնեշի վրա մի բան էր կատարվում, և ամեն կողմից լսվում էր՝ թրա՜խկ... թրա՜խկ...

Նա ապշեց. այնտեղ էլ մի անզուսպ, զարհուրելի ոռնոց էր, և լսվում էր՝ Թրա՜խկ, Թրա՜խկ... և բռնկում էին ու հանգչում մահագույժ ճիչեր։

Նա վայրկենապես շուռ եկավ և ավելի թեթև ու արագ պոկ եկավ նավահանգստից, և վերջին անգամ մի վայրկյան աչքին փայլեց ծովապատնեշի ետև անծայր կապույտ ծովը...

«... Ապրե՛լ... ապրե՛լ... ապրե՛լ...»։

Նա թռչում էր սպիտակ տնակների մոտով, որ անտարբեր նայում էին սև, համր պատուհաններով. թռչում էր քաղաքի մյուս ծայրը, ուր խճուղին էր անցնում, այնպես սպիտակ, այնպես հանգիստ, դեպի Վրաստանը տանող խճուղին. ո՛չ դեպի վեհապետական Վրաստանը, ո՛չ դեպի համաշխարհային կուլտուրա տարածող Վրաստանը, ոչ դեպի այն Վրաստանը, ուր ինքը գնդապետություն էր ստացել, այլ իր հարազատ, միակ, սիրելի Վրաստանը, ուր այնպես հրաշալի բուրում են գարնանը ծաղկող ծառերը, ուր կանաչ անտառներով ծածկված սարերի ետև ձյունն է փայլում, ուր կիզիչ տոթ է, ուր Թիֆլիսն է, Վորոնցովի հրապարակը, փրփրալից Քուռը, ուր նա վազվզում էր փոքր ժամանակ։

«... Ապրե՛լ... ապրե՛լ... ապրե՛լ...»։

Տնակները սակավացան. նրանց ընդհատում էին այգիները, իսկ ոռնոցը, զարհուրելի ոռնոցը և հատ-հատ հրացանի ձայները շատ հեռու մնացին, ներքևում, ծովի մոտ։

«Փրկված եմ...»։

Նույն վայրկյանին բոլոր փողոցները լցվեցին ծանր, դղրդացնող դոփյունով, հանկարծ մութ փողոցից մարդիկ դուրս թռան սարշավ սլացող ձիերով, և նրանց հետ միասին տարածվեց նույնպիսի զազրելի մահագույժ ոռնոց՝ ռ ռ ռ ա՜ ա՜ ա՜... փայլփլում էին սրերի նեղ շերտերը...

Նախկին իշխան Միքալաձեն, մի ժամանակ վրացական գնդապետ, մի ակնթարթում ետ փախավ։

«... Փրկե-ցե-ե՛ք...»։

Եվ շունչը պահած թռավ դեպի քաղաքի կենտրոնը։ Մի երկու անգամ զարնվեց դարպասի դռնակին, բայց դռնակն ու դարպասը ամուր փակած են երկաթե սողնակներով, ոչ ոք կենդանության նշան չէր ցույց տալիս, այնտեղ հրեշավոր անտարբերություն էր տիրում դրսում կատաղածի նկատմամբ։

Այն ժամանակ նա հասկացավ, որ միակ փրկությունը հույն աղջիկն է։ Նա սպասում է սև-պսպղուն, պաղատող աչքերով։ Նա միակ մարդն է աշխարհում... Ինքը կամուսնանա նրա հետ, կտա նրան իր կալվածքը, փողը, կհամբուրի նրա փեշերը...

Գլուխը տրաքվեց և կտոր-կտոր եղավ։ Երևանում ոչ թե կտոր-կտոր եղավ, այլ շեղ փայլատակած սրից կիսվեց մեջտեղը, և ուղեղը դուրս թափվեց։

27

Տոթը սաստկանում էր։ Անտեսանելի մեղալ մառախուղ է ծանրացած քաղաքի վրա։ Փողոցները, հրապարակները, ծովափերը, ծովապատնեշը, բակերը, խճուղին լիքն են։ Դիակների կույտերն անշարժ թափված են տարբեր դիրքերով։ Մի քանիսը սարսափելի ծռած գլուխներով, մյուսները՝ առանց գլուխների։ Դոնդողի պես երերվում են սալահատակի վրա թափված ուղեղները։ Ինչպես սպանդանոցում, սառած արյունը տների, քարե պատերի մոտով հոսել և անցել է դարպասների տակ։

Նավերի վրա, խցիկներում, նավապետի կամրջակի տախտակամածի վրա, հնոցաբաժնում, մեքենաների մասում նրանք բոլորը նուրբ դեմքերով են և սև, ջահել բեղերով։

Անշարժ կախ են ընկած ծովափի պատնեշի վրայով, և երբ նայում ես կապույտ վճիտ ջրին, նրանք հանգիստ պառկած են լպրծուն կանաչ քարերի վրա, իսկ նրանց դլխին պտույտ են գալիս ձկների մոխրագույն երամներ։

Միայն քաղաքի կենտրոնից հաճախ հրացանների ձայներ են լսվում, և շտապ-շտապ տկտկացնում է գնդացիրը։ Մայր եկեղեցու շուրջը նստել է վրաց մի վաշտ և հերոսաբար մեռնում է։ Բայց նրանք էլ լռեցին։

Մեռածները թափված են, իսկ կենդանիները լցրել են քաղաքը, փողոցները, բակերը, տները, ծովափը, և քաղաքի շրջակայքը, խճուղին, լանջերը. ձորերում սայլեր, մարդիկ,

ձիեր են։ Իրարանցում, բացականչություններ, ծիծաղ, ազմուկ։

Այդ մահվան ու կյանքի տեղերով անցնում է Կոժուխը։

— Հաղթությո՜ւն, ընկերնե՛ր, հաղթությո՜ւն...

Եվ կարծես ոչ մեռածներ կան, ոչ արյուն, ուրախ և խրոխտ որոտում է.

— Ու ռ-ռ-ռ-ա՜-ա՜-ա՜...

Եվ արձագանք է տալիս հեռավոր կապույտ լեռներում ու մեռնում հեռու, նավերի, նավահանգստի, ծովապատնեշի ետև, տամուկ կապտության մեջ։

Իսկ բազարում, խանութներում արդեն ուրիշ գործով են զբաղված. կոտրում են արկղներ, կտրում են մահուդի թոփեր, դարակներից պոկում են սպիտակեղեն, վերմակներ, փողկապներ, ակնոցներ, շրջազգեստներ։

Ամենից շատ նավաստիներ են վրա թափվել, այդպիսի ժամանակ նրանք միշտ առաջինն են։ Ամուր, ջլապինդ տեսքով, սպիտակ համազգեստով, կլոշ վարտիքով, կլոր գլխարկով՝ ծածանվող ժապավեններով, զիլ ձայն են տալիս.

— Հավաքիր։

— Քարշ տուր։

— Դուրս քաշիր։

— Այդ դարակից ցած բեր։

Արագ, հմուտ, կազմակերպված էին գործ անում։ Մեկը մի հրաշալի կանացի գլխարկ դրեց գլխին, դունչը փաթաթեց շղարշով, մյուսը մետաքսե ժանյակ հովանոց բաց արեց գլխին։

Մասնակցում էին և զինվորները՝ աներևակայելի ցնցոտիներով, սև, ճաքճքած ոտներով, հավաքում էին չիթ, քաթան, պարուսին, իրենց կանանց ու երեխաների համար։

Մեկը դուրս է քաշում կարտոնի տուփից մի ծալված շապիկ, թևերը բանում է և կուշտ ծիծաղում։

— Տղե՛րք, տեսե՛ք, էս շապկին նայեցեք. մարդ վզատակին չի հասնի...

Գլուխը մեջը կոխեց օձիքից։

— Բա՛, ի՞նչ պինդ է, կարծես տախտակ լինի...

Եվ սկսեց կռանալ և ուղղվել, ոչխարի պես իր կրծքին նայելով։

— Ճստված վկա, չի ճկվում. կարծես զսպանակ լինի։

— Է՛յ, ախմա՛խ, էդ օսլա է։

— Ի՞նչ։

— Էդ աղաները իրանց շապիկը կրծքի մասում կարտոֆիլով են շինում, որ կուրծքները բարձր լինի։

Մի բարձրահասակ նիհար մարդ, որի սև մարմինը ցնցոտիների տակից երևում էր, մի ֆրակ դուրս քաշեց։ Երկար դիտում էր ամեն կողմից. վճռական շարժումով հանեց իր ցնցոտիները և օրանգուտանի ձեռքերի պես երկայն ձեռքերը թևերի մեջ կոխեց. թևերը մինչև արմունկները հասան, հագել էր ուղղակի մերկ մարմնի վրա, փորի վրա կոճկեց, իսկ առաջը բաց է, և մրթմրթաց.

— Շալվար է հարկավոր։

Սկսեց փնտրել, բայց վարտիքներն արդեն վերցրել էին։ Անցավ սպիտակեղենի բաժանմունքը, մի կարտոնե տուփ հանեց, մեջը մի տարօրինակ բան կար. բաց արեց, նայեց, նորից մրթմրթաց.

— Զարմանալի բան. թե շալվար է, բա ինչի՞ է էսպես բարակ։ Խվյոդոր, էս ի՞նչ բան է։

Բայց Խվյոդորը ժամանակ չուներ, նա կնոջ և երեխաների համար չիթ էր դուրս քաշում՝ նրանք տկլոր էին։

Նորից փորձեց և, հանկարծ վճռական կերպով սկսեց հանել վարտիք կոչված ցնցոտիները և քաշեց երկայն, ջլոտ, արևից և ցեխից սևացած ոտքերի վրա։ Բանից երևաց, որ իր հագածի ծայրի ժանյակները ծնկներից վեր կախ ընկան։ Խվյոդորը նայեց և ծիծաղից թուլացավ։

— Տղե՛րք, տեսե՛ք, Օպանա՜սը...

Ասանութը ծիծաղի ձայնից դողդաց.

— Էդ հո կնոջ փոխան է։

Իսկ Օպանասը մռայլ պատասխանեց.

— Է՛, լա՛վ, կինը մարդ չի՞։

— Լավ, իսկ ոնց ես ման գալու՝ միջից ճղած է ու բարակ է, ամեն բան երևում է։ Իսկ ձագը ահագին բան է։

Օպանասը վշտացած նայեց.

— Ճիշտ է։ Ի՞նչ են այս բարակ կտորից շալվար կարում հիմարները, իզուր ապրանք են փչացնում։

Հանեց կարտոնից բոլորը, ինչ որ մեջը կար, և սկսեց

լուռ վրան քաշել մեկը մյուսի ետևից. վեց հատ հագավ, ժանյակները փքվել, տնկվել էին ծնկներից վերև։

Նավաստիները մի վայրկյան ականջ դրին և հանկարծ խելագարի պես վազ տվին դեպի դուռն ու պատուհանները։ Իսկ դուրսը ձիերի դոփյուն էր լսվում, հիշոցներ, հարայ-հրոց, մտրակների շաչյուն մարդկային մարմնի վրա։ Զինվորները վազ տվին պատուհանների մոտ։ Հրապարակով, որքան ուժ կար, լեղապատառ փախչում էին նավաստիներն, աշխատելով փրկել կողոպտածը։ Հեծյալները, խթանելով ձիերին, անխնա թակում էին նրանց, ճզելով շորերը, երեսներին կապույտ շերտեր փաթաթելով. արյունը ցայտում էր։

Նավաստիները գաղանացած, շուրջը նայելով, լիքը պայուսակները թափթփեցին, շտապով աջ ու ձախ ցրվեցին։

28

Թմբուկը խռովահույզ և շտապ զարկում էր. նվագում էր փողհարը։

Քսան րոպեից հետո հրապարակի վրա զինվորներ էին շարքերով կանգնած, խիստ հայացքներով։ Բայց այդ խստությանը չէր համապատասխանում նրանց զգեստը։ Մի քանիսը իրենց նախկին քրտնքոտ շորերով էին, մյուսները օսլայած, բաց կրծքով, թոկով կապած շապիկներով կուրծքերը ուռած։ Շատերը կանացի գիշերվա կոֆտաներով կամ կրծքակալներով էին, որոնց միջից տարօրինակ կերպով երևում էին սև-սև վզեր և ձեռքեր։ Իսկ երրորդ վաշտի աջակողմյանը՝ բարձրահասակ, վտիտ և մռայլ դեմքով, կանգնած էր սև ֆրակով, թևքերը մինչ արմունկները, և ծնկներից վերև՝ սպիտակ ժանյակների փնջեր։

Մոտեցավ Կոժուխը, ծնոտները երկաթի պես սեղմած, մոխրագույն աչքերի սուր ցոլքերով։ Նրա ետևից հրամանատարի խումբը՝ վրացական սպաների գեղեցիկ փափախներով, մոխրագույն չերքեզիներով, արծաթե դաշույնները կապած։

Կոժուխը մի քիչ կանգնեց, իր փոքրիկ աչքերից պողպատի կայծեր արձակելով դեպի զինվորների շարքերը։

— Ընկերնե՛ր։

Նույն ժանգոտ-ճաքած երկաթի ձայնն էր, ինչ որ դիշերը՝ «Առա՛ջ... Գրո՛հ տվեք...»։

— Ընկերնե՛ր, մենք հեղափոխական զորք ենք, կռվում ենք մեր երեխաների, մեր կանանց համար, մեր պառավ մայրերի և հայրերի համար, հեղափոխության համար, մեր հողի համար։ Իսկ ո՞վ է տվել հողը։

Նա լռեց և սպասում էր պատասխանի, գիտենալով, որ պատասխան չի լինելու, որովհետև շարքումն էին կանգնած։

— Ո՞վ է տվել։ Խորհրդային իշխանությունը։ Իսկ դո՞ւք ինչ արիք. դուք ավազակների պես սկսեցիք կողոպտել։

Այնպիսի լռություն էր տիրում, որ ահա որտեղ որ է կպայթեր։ Իսկ ժանգոտ երկաթը ճաքում-դղրդում էր։

— Ես, զորասյունի հրամանատարս, յուրաքանչյուրին՝ ով գեթ մի թել անգամ վերցրել է, նշանակում եմ 25 ճիպոտի հարված։

Ամենքն անշարժ նրան էին նայում, աչքերը հառած. նա պատառոտված էր, վարտիքը կտոր-կտոր, կախ ընկած, կեղտոտ հարդի գլխարկը սունկի պես փռված։

— Ով որ մի բան կողոպտել է, երեք քայլ առաջ գա։

Գետինը խուլ հաշվեց. մեկ, երկու, երեք։ Քչերը մնացին շարքում կանգնած ցնցոտիներով։ Իսկ նոր շարքում շատերն էին կանգնած խայտաբղետ հագուստներով։

— Ինչ որ վերցրել եք քաղաքում, ընդհանուրին կհասնի՝ ձեր երեխաներին և կանանց։ Դարսեցեք այստեղ, ով ինչ վերցրել է։ Բոլո՛ր։

Առաջին շարքը շարժվեց և սկսեց իր առաջ դարսել չթի, կտավի, քաթանի կտորներ, իսկ շատերը սկսեցին հանել օսլայած շապիկներ, կանացի կոֆտաներ, կրծքակալներ, կիտեցին գետնի վրա և իրենք մնացին տկլոր, արևակեզ։ Աջակողմյանն էլ հանեց իր ֆրակն ու փոխանները և մնաց կանգնած նիհար ու մերկ։

Մոտեցավ մի սայլ. միջից հանեցին ճիպոտներ։

Կոժուխը մոտեցավ աջակողմյանին։

— Պառկի՛ր։

Նա նստեց չորեքթաթ, հետո անշնորհք պառկեց, երեսը

կանացի փոխանների մեջ, իսկ արևն այրում էր նրա մերկ քամակը։

Կոժուխը ժանգոտ գոչեց.

— Պառկե՛ք ամենքդ։

Եվ ամենքը պառկեցին, մեջքներն ու քամակները դեմ անելով տաք արևին։

Կոժուխը նայում էր քարացած դեմքով։ Մի՞թե այս մարդիկ չէին, որ աղմկալից ժողովին նրան գլխավոր ընտրեցին։ Նրա՞նք չէին, որ բղավում էին իրեն՝ «Ծախեցիր... դավաճանեցիր մեզ»։ Նրա՞նք չէին, որ ուզում էին իրեն սվինի վրա բարձրացնել։

Իսկ այժմ խոնարհ պառկած են մերկ։

Նրա հոգու մեջ նորից բարձրացավ ուժի և զորության այն ալիքը, որ բարձրացնում էր նրան, երբ ձգտում էր սպայություն ստանալու։ Բայց այդ մի ուրիշ ալիք էր. նա կփրկի, տեղ կհասցնի նրանց, այնպես խոնարհ պառկած են և սպասում են ճիպոտների։ Խոնարհ պառկած են, բայց եթե նա մի բերան ասեր՝ «Տղե՛ր ք, ետ դարձեք կազակների, սպաների մոտ», նրան սվինների վրա կբարձրացնեին։

Եվ Կոժուխի ժանգոտ ձայնը նորից հնչեց պառկածների վրայով.

— Հագնվեցե՛ք։

Ամենքը վեր կացան և սկսեցին հագնել օսլայած շապիկները, կոֆտաները, իսկ աջակողմյանը նորից քաշեց վրան ֆրակը ու վեց փոխանը։

Կոժուխը նշան տվեց, և երկու զինվոր ուրախ դեմքով հավաքեցին ձեռք չտված ճիպոտների կապոցը և դարսեցին սայլի մեջ։ Հետո սայլը անցավ շարքի առջևով, և նրա մեջ ուրախ-ուրախ նետում էին չթի, կտավի, սատինի կտորներ։

29

Թավշասև օվկիանոսում երեքում են կարմրագույն խարույկները, լուսավորելով տափակ, կարծես ստվարաթղթից շինած, դեմքերը, սայլի անկյունը, ձիու դունչը։ Եվ ամբողջ գիշերը լի է աղմուկով, խոսակցությամբ, բացականչություններով, ծիծաղով. մոտիկ և հեռու երգեր են ծնվում. հանգչում են։ Հնչում է բալալայկան, մեջընդմեջ ընդհատում է հարմոնիկան։ Խարույկներ, խարույկներ...

Գիշերը լի է էլի մի բանով, որի մասին մարդ չի ուզում մտածել։

Քաղաքի վրա փայլում է էլեկտրականության կապտավուն լույսը։ Ճռճռացող խարույկի կրակագույն լույսն ընկնում է մի պառավի դեմքի վրա։ Ծանոթ դեմք է։ է՜-է՜, բարև, տատի՛։ Գարպինո տատին է։ Պապին մուշտակը վրա քաշած պառկած է մի կողմում։ Խարույկի շուրջը զինվորներ են նստած, իրենց ստանիցայից, դեմքերը կարմիր լուսավորված։ Կաթսաներ են կրակի վրա կախ տված, մեջը՝ համարյա թե միայն ջուր։

Գարպինո տատին ասում է.

— Տեր աստված, երկնային թագուհի, էս ինչ բան է, գնում ենք, գնում ենք, գնում ենք, մի բան չկա ուտելու, քաղցից կմեռնենք։ Էս ինչ տեսակ մեծավորներ են, ուտելու ոչինչ չեն կարողանում տալ... Անկան չկա։ Պապին սուս է կացել։

Խճուղու երկայնությամբ հեռացող խարույկների ծուռ ու մուռ շղթան է ձգված։

Խարույկի ետևը մեջքի վրա մի զինվոր է պառկած, գլուխը ձեռքերին դրած, նայում է երկնքին և աստղերը չի տեսնում։ Պառկած է, ձեռքերը գլխի տակին, իր մտքի հետ է, և նրա ջահել, մեղմ-մտախոհ ձայնը սահում է նրա մտքերի պես.

Կնկաղ հետդ վերցրու։

Կաթսաների մեջ քլթքլթում է դատարկ ջուրը։

— Էս ինչ կյանք է,— շարունակում է Գարպինոն,— կկոտորվենք այստեղ։ Ինչքան ուզում է, քլթքլթա, դատարկ ջրից միայն փոր է ուռչում։

— Ճիշտ որ...— ասում է զինվորը, մեկնելով դեպի խարույկն իր կարմրագույն լուսավորված ոտքը, նոր անգլիական շտիբլետ և նոր ռեյտուզ հագին։

Հարևան խարույկի մոտ սկսեցին ուրախ հարմոնիկա նվագել։

— Անկան էլ չկա մինչև հիմա... Կորավ. որտե՞ղ է, ի՞նչ անեմ նրան. գոնե դու նրա մազերից քաշեիր, պառավ։ Ի՞նչ ես սուս կացել քոթուկի նման։

... տուր ինձ չիբուխս...—

Իր երգն էր շարունակում զինվորը, հետո շուռ եկավ փորի վրա, ձեռքերը դեմ տվեց կղակին և կարմրագույն լուսավորված դեմքով սկսեց խարույկին նայել։

— Բոլորն էլ մարդ էին, ու ամենքն էլ մայր ունեին...

Նա այդ ասաց ինքն իրեն իր ջահել ձայնով, և հանկարծ լռություն տիրեց, և մարեց հարմոնիկան, խոսակցությունն ու ծիծաղը. և բոլորն էլ զգացին նեխած ծանր հոտ, որ փչում էր սարերի կողմից. այնտեղ ամենից շատ էին թափված նրանք։

Մի հասակավոր զինվոր ոտի կանգնեց, որպեսզի տեսնի խոսողին... Թքեց խարույկի մեջ, ֆշշաց։ Երևի երկար կտևեր լռությունն այդ խավարի մեջ, որ հանկարծ զգացվեց, եթե աղմուկ, հայհոյանք, խոսակցություն չխուժեր։

— Ի՞նչ է պատահել։

Բոլորը գլուխները շուռ տվին միևնույն կողմը։ Իսկ այն կողմից խավարի միջից՝

— Գնա՛, գնա՛, գարշելի արարած։

Լուսավորված շրջանի մեջ վրդովված զինվորների մի խումբ մտավ, և խարույկն անորոշ և տարօրինակ կերպով լուսավորում էր խավարի մեջ դուրս ցցված մեկ կարմիր դեմքի մի մասը, մեկ բարձրացրած ձեռքն ու սվինը։ Իսկ մեջտեղը, բոլորի համար անակնկալ կերպով փայլեցին նեղ չերքեզի ուսերի ոսկեգույն ուսադիրները. այդ ջահել վրացի էր, համարյա թե երեխա։

Նա հալածված գազանի նման նայում էր իր շուրջը օրիորդի աչքերի նման հրաշալի աչքերով, և ահագին արտևանունքի վրա կարմիր արցունքների պես արյան կաթիլներ էին դողդողում։ Թվում էր, թե այս բոպեին կանչելու էր. «մայրի՛կ...», բայց նա ոչինչ չէր ասում, այլ նայում էր իր շուրջը։

— Թփի տակ էր թաքնված,— դեռևս վրդովված պատմում էր զինվորը,— այ թե ինչպես եղավ։ Հարկավորության գնացի թփերի տակ, իսկ մերոնք բղավում էին՝ «Շա՛ն որդի, քիչ

հեռու գնա»։ Ես էլ քիչ հեռու նստեցի, տեսնեմ, կողքիս մի սև բան։ կարծում էի քար է, ձեռք տվի, տեսնեմ սա է։ Մի լավ հրացանի կոթով տվինք։

— Ստակացրու դրան, դրա...— մոտ վազեց մի փոքրիկ զինվոր՝ սվինը պատրաստ բռնած։

— Թող... սպասիր...— բացականչեցին չորս կողմից,— պետք է հրամանատարին զեկուցել։

Վրացին սկսեց պաղատել։

— Ես զինակոչ եղածներից եմ... Զինակոչ եղածներից... Ես չէի կարող... Ինձ ստիպեցին... Ես մայր ունեմ...

Իսկ արտևանունքի վրա նոր կարմիր արցունքներ էին գլորվում, կոտրած գլխից։ Զինվորները կանգնած էին, ձեռները հրացանների բերանին դրած։

Նա, որ դիմացը փորի վրա պառկած էր և շարունակ նայում էր խարույկին, ասաց.

— Ի՞նչ ջահելն է... երևի 16 տարեկան էլ չկա...

Հանկարծ մի քանի ձայներ միանգամից.

— Մեզ ասա, դու ո՞վ ես... Ի՞նչ պարոն ես... Մենք կրվում ենք կադետների հետ, իսկ վրացիք ի՞նչ են քթները խոթում։ Ո՞վ է խնդրել նրանց, որ այստեղ գան։ Մենք կազակների հետ ենք գլուխ կոտրում, նրանք ինչի՞ են խառնվում։ Ով որ քիթը խոթի, գլուխն էլ հետը կպոկենք։

Ամեն կողմից զրգռված ձայներ էին բարձրանում։ Մոտենում էին և մյուս խարույկներից։

— Էս ո՞վ է։

— Լակոտի մեկն է, կաթը բերանին դեռ չի էլ չորացել։

— Ա՛յ դրա մերը...

Զինվորը կոպիտ հայհոյեց և սկսեց կաթսան կրակից վայր բերել։ Մոտեցավ հրամանատարը։ Աչք գցեց երեխայի վրա և շուռ եկավ, հեռացավ, ասելով այնպես, որ վրացին լսեց։

— Կորցրե՛ք։

— Գնանք,— չափազանց խիստ ասացին երկու զինվորը հրացանները առնելով և առանց նայելու վրացուն։

— Ո՞ւր եք տանում ինձ։

Երեքով գնացին և մթության մեջ լսվեց նույն չափազանցրած խստությամբ.

— Շնաբ... հարցուփորձի... այնտեղ կպիշերես։

Մի քանի հետո կրակեցին։ Երկար ժամանակ բեկբեկվելով դղրդում էր սարերում, վերջապես, կտրվեց, իսկ գիշերը դեռ լի էր մարած դղրդոցով։ Երկուսը վերադարձան, լուռ նստեցին կրակի մոտ, ոչ ոքի չնայելով, իսկ գիշերը դեռ լի էր վերջին կրակոցի չմեռնող ձայնով։

Կարծես ցանկանալով խլացնել այդ ձայնի անտանելի արձագանքը, բոլորն էլ սկսեցին սովորականից ավելի աշխույժ և ավելի բարձր խոսել։ Հարմանիվան սկսեց նվագել, բալալայկան ծնգծնգացնել։

— Մենք որ անտառումն անցանք և մոտեցանք ժայռին, տեսանք, որ բաներդս բուրդ է, ոչ կարող ենք բարձրանալ, ոչ էլ հետ գնալ — կլուսանա և ամենքիս էլ կկոտորեն։

— Ոչ առաջ, ոչ հետ,— ծիծաղեց մեկը։

— Մտածում ենք՝ շան որդիքը երևի ձևացնում են, թե քնած են և հանկարծ վրա կտան։ Իսկ այնտեղ բավական էր տասը հոգի կանգնեցնել, որ երկու գունդն էլ ճանճերի պես կոտորեն։ Իսկ մենք ելնում ենք իրար ուսերի, իրար գլխի կանգնում։

— Իսկ որտե՞ղ էր բատկոն։

— Բատկոն էլ, իհարկե, մեզ հետ էր։ Հենց որ հասանք վերևները, մի երկու սաժեն մնաց միայն ուղիղ պատի պես, ոչ առաջ, ոչ հետ. շունչներս կտրվեց։ Բատկոն սվինը մեկից խլեց, խրեց ժայռի մեջ և սկսեց վեր սողալ։ Բոլորս էլ նրա հետևից սկսեցինք սվինները ժայռի ճեղքերը խրել և այդպես բարձրացանք։

— Իսկ մեզ մոտ մի ամբողջ զորախումբ խեղդվեց ծովում։ Նապաստակների նման քարից քար էին թռչկոտում։ Մութ ու խավար էր։ Մեկը մյուսի հետևից սլքվեցին ու ջուրն ընկան, խեղդվեցին։

Չնայած աշխույժ խոսակցությանը, ուրախ այրվող խարույկներին, մութը լարված լցվում էր այն քանով, ինչ որ ամեն մեկն ուզում էր մոռանալ, և առաջվա պես անխախտանելի փչում էր նեխածի հոտը։

Իսկ Գաբրինո տատին ասաց.

— Այս ի՞նչ է,— և ցույց տվեց։

Սկսեցին այն կողմը նայել։ Խավարում, ուր անտեսանելի կանգնած էր լայնանիստ սարը, ծխող կերոններ էին փայլփլում և առաջ էին շարժվում, կռանում։

Մանոթ չահել ձայնն ասաց մթության միջից.

— Մերոնք և քաղաքի բնակիչներն են, որ հավաքում են դիակները։ Ամբողջ օրը հավաքում են։

Ամենքը լուռ էին։

30

Դարձյալ արև։ Դարձյալ ծովի փայլքը, հեռավոր սարերի ծխագույն կապույտ գծագրությունները։ Այդ բոլորը դանդաղ վայր է իջնում — խճուղին, ոլորապտույտ, դեպի վեր է գնում շարունակ։

Ներքևում հեռվում սպիտակին է տալիս քաղաքը և աստիճանաբար անհետանում։ Կապույտ ծովածոցը կարծես մատիտով շրջագծված է ծովապատնեշի ուղիղ, բարակ գծերով։ Սև կետերի պես կանգնած են վրացիների թողած շոգենավերը։ Ափսոս որ չէր կարելի դրանք էլ հետները վերցնել։

Ասենք առանց այդ էլ շատ բան են վերցրել։ Վեց հազար ռումբ են տանում, երեք հարյուր հազար փամփուշտ։ Հրաշալի վրացական ձիաներ յուղած սև լծափոկերը ձիգ տալով 16 վրացական թնդանոթ են տանում։ Վրացիների սայլերի վրա բարձած տանում են ամեն տեսակ մթերքներ — դաշտային հեռախոսներ, վրաններ, փշավոր երկաթաթելեր, դեղորայք. իրար հետևից սանիտարական սայլեր, ամեն բան, ինչ որ կուզես։ Միայն մի բան չկա՝ — հաց և խոտ։

Հանդարտ գնում են ձիերը, գլուխները քաղցածությունից շարժելով։ Զինվորները պինդ կապում են փորերը, բայց բոլորն էլ ուրախ են՝ ամեն մեկը երկու-երեք հարյուր փամփուշտ ուներ վրան, զվարթ քայլում են սպիտակ փոշու տաք ամպերի մեջ, և խումբ-խումբ ընտելացած ճանճերն են հետևում։

Անվերջ ճռճռում են սայլերը, ֆուրգոնները, երկանիվները։ Կարմիր բարձերի մեջ ճռճվում են նիհարած մանկական գլուխները։

խճուղու ոլորանների արանքներում կարճ շավիղներով իրար ետևից մեկ-մեկ հետևակներն են գնում նույն պատատոտած, ճխլտված հարդի և թաղիքի գլխարկներով, ձեռնափայտերով, իսկ կանայք պատված յուբկաներով, ոտաբոբիկ։ Բայց այլևս ոչ ոք ճիպոտով կովեր, խոզեր չի քշում. նույնիսկ շները քաղցից անհետացել են։

Անվերջ գալարվող օձը, անթիվ օղակներով շարժվելով, նորից սկսեց սողալ սարն ի վեր՝ դեպի ամայի ժայռերը, անդունդների, ճեղքերի խրամատների մոտով դեպի սարի գագաթը, որպեսզի անցնի վրայովն ու վայր սողա դեպի տափաստանները, ուր հաց և խոտ կա, ուր սպասում են հարազատները։

«Դարդ ու ցավեր մոռանանք, խմենք ու ուրախանանք...»։
«Համարձակ, տորե-ադոր...տորե-ադոր...»։

Քաղաքում երգերի նոր սկավառակներ էին գտել։

Սարի գագաթները հասնում են կապույտ երկնքին։

Քաղաքն անհետացավ։ Ծովափը ձուլվեց կապույտ օդի հետ։ Ծովը կապույտ պատի նմանվեց և ծածկվեց խճուղու շուրջը կանգնած ծառերի ետև։ Տոթ, փոշի, ճանճեր, փլած հողակույտեր խճուղու և անտառի մոտ, ամայի անտառներ, գազանների որջեր։

Երեկոյան դեմ անվերջ ճռճռացող սայլախմբի վրա մի կոչ էր միայն լսվում.

— Մայրի՛կ... Հա՛ց... Հա՛ց տուր...

Մայրերը նիհարած, թուչնի կտուցի նման սևացած դեմքերով, վիզները դուրս ձգած, բորբոքված աչքերով նայում էին խճուղու դեպի վեր հեռացող պտույտներին, ոտաբոբիկ շրջելով սայլերի չորս կողմը — իրենց երեխաներին ասելու բան չունեին։

Շարունակ բարձրանում էին. անտառները նոսրանում էին և վերջապես ներքևում մնացին։ Ժայռեր, կիրճեր, ճեղքվածքներ, քարակույտեր, անապատներ էին անցնում։ Ամեն մի ձայն, սմբակների թրխկոց, անիվների ճռռոց, ամեն կողմից արձագանք տալով, վայրի կերպով սաստկանում, մեծանում էին և մարդկային ձայները ծածկում։ Ամեն մի քայլափոխում ստիպված էին սատկած ձիերի շրջանցել։

Հանկարծ տոթը կոտրվեց. բարձրավանդակից զով փչեց. ամեն ինչ մոխրագույն դարձավ։ Գիշերն անմիջապես վրա հասավ։ Սևացած երկնքից հեղեղներ թափվեցին։ Անձրև չէր այդ, այլ խավարի մեջ կատաղի հորձանքներ տվող ջրի հոսանք, որին մարդ չէր կարող դիմանալ։ Թափվում էր վերևից, ներքևից, կողքերից։ Ջուրը հոսում էր ցնցոտիների, իրար կպած մաղերի վրայից։ Ճանապարհի ուղղությունը կորավ, կապն ընդհատվեց։ Մարդիկ, սայլեր, ձիեր առանձին-առանձին էին գնում, կարծես թե նրանց միջև մի խոր-վահույզ տարածություն կար, առանց իրար տեսնելու, առանց իմանալու, թե ինչ կա և ով կա շուրջը։

Հոսանքը մեկին տարավ... Մեկը գոռում էր... Ի՞նչ մարդկային ձայն կլսվեր այդտեղ... Ջուրը գոգոում էր, քամին էր, թե սև երկինքն էր մոլեգնած կամ սարերն էին կործանվում... Գուցե նույնիսկ ամբողջ սայլախումբն է ջուրը տարել, ձիերի, սայլերի հետ միասին...

— Օգնեցե՛ք...

— Փրկեցե՛ք... աշխարհիս վերջն է...

Նրանց թվում էր, թե բղավում են, բայց միայն շնչարգել շշնջում էին նրանց կապտած շրթունքները։

Հեղեղը քշում էր ձիերին, որոնք սայլերը դեպի անդունդ էին քաշ տալիս, իսկ մարդիկ դեռ երկար քայլում էին դատարկ տարածության ետևից, կարծելով թե սայլի ետևից են գնում։

Երեխաները թաղվել էին ամբողջովին թրջված բարձերի և շորերի մեջ։

— Մայրի՛կ... Մայրի՛կ... Հայրի՛կ...

Նրանց թվում էր, թե սարսափելի բղավում են, այնինչ այդ ջուրն էր հոսում, աներևույթ քարեր էին գլորվում աներևույթ քարափներից, քամին էր կատաղած կենդանու պես շառաչում, անընդհատ տարափ տեղալով։

Մեկը, որ կարգադրություն էր անում այդ գժանոցում, հանկարծ ետ քաշեց վիթխարի վարագույրը և անտանելի կապտագույն լույս սփռեց ամեն բանի վրա, ինչ որ կար այդ անհուն գիշերվա խավարի մեջ։ Սուր կապտավուն սարսուռ անցավ հեռավոր լեռների ծալքերով, կախ ընկած ժայռերի ժանիքների անդունդի եզրերի և ձիերի ականջների

վրայով և այդ սոսկալի դողդոջուն լույսի մեջ ամեն ինչ մեռած էր և անշարժ, այդ էր ամենից զարհուրելին։ Անշարժ էին ջրի շեղ հոսանքներն օդի մեջ, անշարժ էին փրփրադեզ հեղեղները, անշարժ էին քայլ փոխելու համար ձիերի բարձրացրած ծնկները, անշարժ էին մարդկանց կիսաքայլերը, բաց էին մնացած մարդկանց բերանները, խոսքը կիսատ մնացած շրթունքների վրա և երեխաների գունատ կապտած թաթիկները թաց բարձերի մեջ։ Ամեն ինչ անշարժ էր լուռ սարսուռի մեջ։

Այդ մահաբեր կապտության սարսուռը շարունակվեց ամբողջ գիշեր, իսկ երբ նույն ակնթարթում վարագույրը անակնկալ նորից ծածկվեց, երևաց, որ մի վայրկյան էր միայն տևել։

Անհուն գիշերն ամեն ինչ կլանեց, և անմիջապես մի սար ճաքեց, և նրա խորքից մի այնպիսի դղրդյուն ժայթքեց, որ, չտեղավորվելով այդ անհուն գիշերի մեջ, կտոր-կտոր եղավ և, այդպես կոտրվելով, զանազան կողմեր ցրվեց, հետզհետե լցնելով անբևեռ կիրճերը, անտառներն ու անդունդները. մարդիկ խլացան, իսկ երեխաները պառկած էին մեռելի պես։

Տեղատարափ հեղեղների, ամեն րոպե թարթող կապույտի, անընդհատ աճող որոտների մեջ կանգ առան սայլախումբը, զորքը, թնդանոթները, ռազմամթերքի արկղերը, փախստականները, երկանիվները. այլևս ուժ չկար շարժվելու։ Ամեն ինչ կանգնած էր՝ անձնատուր եղած կատաղի հեղեղներին, քամուն, որոտին և անտանելի թրթռացող մեռյալ լույսին։ Ջուրը, ձիերի ծնկներից բարձր էր։ Կատաղած գիշերը վերջ չուներ։

Իսկ առավոտյան դարձյալ պայծառ արև, ինչպես լվացված, թափանցիկ է օդը, եթերային են կապուտակ լեռները։ Միայն մարդիկ են սև, նիհարած, աչքերը խորն ընկած, վերջին ուժերը լարած օգնում են ձիերին քաշ տալու։ Իսկ ձիերի գլուխները ոսկրոտ, կողերը մեկ-մեկ երևում են, մաքները մաքուր լվացված։

Կոժուխին զեկուցում են.

— Ընկեր Կոժուխ, երեք սայլ մարդկանց հետ միասին հեղեղը տարավ, մի երկանիվ փշրեց սարից վայր ընկած

քարը. երկուսին կայծակը սպանեց. երրորդ վաշտից երկու մարդ անհետ կորել են, իսկ ձիերը տասնյակներով են սատկում, թափված են ամբողջ խճուղու վրա։

Կոժուխը նայում է մաքուր լվացված խճուղուն, ծայռերին, որ վերը խոժոռ կուտակվել են, և ասում է.

— Առանց գիշերելու, առանց կանգ առնելու, գիշեր-ցերեկ առաջ գնալ։

— Ընկեր Կոժուխ, ձիերը չեն տանի. ոչ մի չոփ խոտ չկա։ Անտառով անցնելիս գոնե տերևներով էինք կերակրում, իսկ այժմ լերկ քարքարոտներ են։

Կոժուխը փոքր-ինչ լուռ մնաց։

— Առանց կանգ առնելու առաջ գնալ։ Եթե կանգ առնենք, բոլոր ձիերը կսատկեն։ Հրաման գրեցեք։

Ի՞նչ հրաշալի լեռնային օդ է. շնչես ու շնչե՞ս։ Բայց տասնյակ հազար մարդկանց հոգը չի այդ օդը. լուռ նայում են իրենց առաջ և քայլում են սայլերի հետ, ճանապարհի կողքերով թնդանոթների ետևից։ Հեծյալները ձիուց վայր իջած քաշ են տալիս ձիերին իրենց ետևից։

Շուրջը վայրենի և լերկ ժայռեր են կուտակված։ Սևին են տալիս նեղ կապանները. զոհի սպասող անհատակ անդունդներ։ Ամայի կիրճերում մառախուղն է թափառում։

Եվ մութ ժայռերը, կիրճերը, ճեղքվածքները լի են ոչ մի րոպե չլռող սայլերի ճռռոցով, անիվների ձայնով, սմբակների դոփյունով, դղրդոցով և զրնգոցով։ Եվ այդ բոլորն, ամեն կողմից անդրադառնալով՝ հազարապատկվում, դառնում է մի անլռելի վայրի ոռնոց։

Ամենքը լուռ գնում են, և եթե նույնիսկ մեկը կատաղի կերպով բղավեր, միևնույն է, մարդկային ձայնը անհետ կկորչեր այդ տասնյակ վերստեր շարժվող ճռռոց-գոռգոռոցի մեջ։

Փոքրիկները լաց չեն լինում, հաց չեն խնդրում, միայն գունատ գլուխներն են ճոճվում բարձերի մեջ։ Մայրերը չեն համոզում, չեն փաղաքշում, չեն կերակրում, այլ գնում են սայլերի կողքով, կատաղությամբ նայելով ամպերին հասնող անվերջ շարժվող ոլորապտույտ խճուղուն. նրանց աչքերը չոր են։

Անհաղթելի վայրենի սարսափ է բռնկում, երբ մի ձի կանգ է առնում։ Բոլորը գազանի պես կատաղած բռնում են անիվները, ուսերը դեմ են տալիս, զայրույթով մտրակահարում, գոռգոռում են անմարդկային ձայներով, բայց նրանց բոլոր ջանքերը, բոլոր ճիգերը, հանգիստ, առանց շտապելու կլանում և անհագ, հարյուր անգամ անդրադարձած, հարյուր անգամ կրկնված անհամար անիվների ճռճռոցը։

Իսկ ձին մեկ, երկու քայլ է անում, տատանվում, վայր է ընկնում լծափայտերը կոտրատում, և այլևս ոչ մի կերպ չես բարձրացնի նրան. ոտները ձգած, դունչը ցցած է, և մանիշակագույն աչքերում ցերեկվա լույսն է մարում։

Երեխաներին հանում են սայլի միջից. մեծին մայրը կատաղած թակում է, որ ոտով գնա, փոքրիկին կամ ձեռքի վրա է առնում կամ շալակում. իսկ եթե շատ են... Եթե շատ են, մեկին, երկուսին, ամենքից փոքրերին թողնում է անշարժ սայլի մեջ և հեռանում է, հեռանում է չոր աչքերով, առանց ետ նայելու։

Իսկ ետևից, առանց աչքը գցելու, գալիս, դանդաղ անցնում են շարժուն սայլերը անշարժ սայլի կողքով, կենդանի ձիերը՝ սատկածի կողքով, կենդանի երեխաները՝ կենդանի երեխաների մոտով, և անլռելի, հազարապատկված անիվների ճռռոցը հանգիստ կլանում է տեղի ունեցած իրողությունը։

Մայրը, որ մի քանի վերստ ձեռքի վրա էր տարել երեխային, սկսում է օրորվել. ոտները ծալվում են, խճուղին, սայլերը, ժայռերը աչքից փախչում։

— Ո՛չ... Չեմ հասնի...

Նստում է մի կողմ՝ խճի մի կույտի վրա և նայում է և օրորում իր երեխային, և մոտից անվերջ սայլեր են անցնում։ Երեխայի սև, չորացած փոքրիկ բերանը բաց է, անշարժ նայում են կապույտ տերեփուկի նման աչքերը։

Նա հուսահատված է.

— Կաթ չկա, սիրելի՛ս, անուշի՛կս, ծաղի՛կս...

Խելագարի պես համբուրում է իր երեխային, իր վերջին ուրախությունը, իր կյանքը։

Իսկ աչքերը չոր են...

Սևացած բերանն անշարժ է, անշարժ նայում են կաթնագույն, կանգ առած աչքերը։ Նա սեղմում է կրծքին այդ սիրելի, անօգնական սառչող փոքրիկ բերանը։

— Անուշի՛կս, չես տանջվելու, տանջանքով չես սպասելու մահվան։

Ձեռքերի վրա մի դանդաղ սառչող մարմին է։

Քանդում է խճի կույտը, դնում է այնտեղ իր գանձը, հանում է վզից իր փոքրիկ խաչը, հագցնում է նրա ծանրացած սառը գլխով քրտնքոտ քուղը, թաղում է և խաչակնքում է, խաչակնքում անվերջ։ Բայց մոտովն անցնում են ու անցնում առանց նայելու նրան։ Անդուսպ անցնում են սայլերը, հազարավոր բյուրապատկված քաղցած ճռճռոցով քաղցած ժայռերի մեջ։

Հեռվում, զորասյունի գլխին հեծյալներն են գնում ոտով, ուժով քաշում են հազիվ քայլող ձիերին, որոնց ականջները կախ են ընկած շների ականջների նման։

Տաքանում է։ Ճանճերի խուժանը, որ փոթորկի ժամանակ անհետացել էր, սայլերի տակ էր պատսպարվել, այժմ ամպերի պես է հետևում։

— Է՛յ, տղե՛րք, ի՞նչ եք գող կատուների նման պոչներդ հուպ տվել։ Երգեցե՛ք...

Ոչ ոք ձայն չտվեց։ Առաջվա պես հոգնած դանդաղ գնում էին, ետևից ձիերին քարշ տալիս։

— Է՛յ, ձեզ հետ եմ, գրամոֆոնը լարեք, գոնե նա երգի։

Ինքը ձեռը կոխեց սկավառակների տոպրակը, հանեց ձեռքըն ընկածը և սկսեց վանկ-վանկ կարդալ։

— Բ...բբ...բ...ի...բբի...մմ բիմ բբ...ռ...բիմ բոմ։ Այս ի՞նչ մազալու բան է... կկ...ղղ...կլ...ռ...ն կլո-ու-ններ, ծիծաղի արտիս-տներ։ Զարմանալի բան է։ Ապա, նվագիր։

Նա լարեց թամքի վրա դրած գրամոֆոնը, դրեց սկավառակը։

Մի վայրկյան դեմքն անկեղծ զարմանք էր արտահայտում, հետո աչքերը նեղ ճեղքերի պես սեղմվեցին, բերանը բացվեց մինչև ականջները, ատամները պսպղացին և սկսեց անդիմադրելի, վարակիչ կերպով ծիծաղել։ Երգի փոխարեն գրամոֆոնի փողից դուրս թռավ խելագար քրքիջ. քրքջում էին երկուսը, մերթ մեկը, մերթ մյուսը, մերթ երկուսն էլ միասին։

Քրքջում էին ամենաանակնկալ ձայներով, մերթ արտասովոր բարակ, կարծես փոքրիկ երեխաների ծղրտոց լինի, մերթ եղան հաստ ձայնով, և շուրջը ամեն ինչ դողում էր. քրքջում էին շնչարգել, քրքջում էին հիստերիկ կանանց պես, քրքջում էին փորները ճաքեցնելով, քրքջում էին այնպես, կարծես թե հնար չունեն այլևս կանգ առնելու։

Անցնող ձիավորները սկսեցին ժպտալ, նայելով գրամոֆոնի փողին, որն էլ խելագարի պես ամեն ձայնով վայրենի քրքջում էր։ Շարքերով ծիծաղ անցավ, հետո չկարողացան զսպել և իրենք էլ սկսեցին քրքջացող փողի ձայներով, և քրքիջն աճելով և շարքից շարք անցնելով հեռու և հեռու վազեց։

Հասավ դանդաղ քայլող հետևակին, և այնտեղ էլ սկսեցին ծիծաղել առանց մի պատճառի. այնտեղ գրամոֆոնի ձայնը չէր լսվում, քրքջում էին առաջին շարքերի քրքիջից վարակված։ Եվ այդ քրքիջն անդիմադրելի կերպով անցավ մինչև թիկունքը։

— Ի՞նչ են ծիծաղից թուլանում, ի՞նչ քամի է դիպել դրանց,— և իրենք էլ սկսեցին քրքջալ ձեռները թափահարելով և գլուխները շարժելով։

Գնում էին, և քրքջում էր ամբողջ հետևակ զորքը, քրքջում էր ամբողջ սայլախումբը, քրքջում էին գաղթականները, քրքջում էին մարդիկ 15 վերստ տարածության վրա քաղցած քարափների միջև անլուսելի հնչող անիվների քաղցած ճռճռոցի հետ։

Երբ քրքիջը հասավ Կոժուխին, նա գունատվեց, դեղնեց՝ իր աղաղած կիսամուշտակի պես. առաջին անգամն էր, որ նա գունատվեց ամբողջ արշավանքի ժամանակ։

— Ի՞նչ է պատահել։

Համհարզը, իր ծիծաղն էլ հազիվ զսպելով, ասաց.

— Սատանան գիտի։ Գժվել են։ Ես իսկույն կգնամ, կիմանամ։

Կոժուխը նրա ձեռքից խլեց մտրակն ու սանձը, անճռռնի ընկավ թամբի մեջ և սկսեց անխնա մտրակել ձիու կողքերը։ Նիհարած ձին, ականջները կախ գցած, դանդաղ առաջ էր գնում, իսկ մտրակը կտրտում էր նրա կաշին։ Նա հազիվ տեղից շարժվեց, իսկ շուրջը նույն քրքիջն էր կանգնած։

Կոժուխը զգում էր, թե ինչպես սկսում էին կծկվել իր այտերը, և ատամները պինդ հուպ տվեց։ Վերջապես հասավ ծիծաղից թուլացող սկզբնաշարքին։ Հիշոցներ տվեց և մտրակով զարկեց գրամոֆոնին.

— Լռեցեք։

Ճաքած սկավառակը կոնչաց և լռեց։ Եվ շարքերով լռություն վազեց, ծիծաղը կտրելով։ Լսելի էր խելագարեցնող, անսահման, բյուրակերպ կրկնվող ճռռոց, ճաքոց, գոռոց։ Քաղցած կիրճերի ապառաժ ժանիքները ետ էին մնում։

Մեկն ասաց.

— Գագաթն անցանք։

Խճուղին, թեքվելով, սկսեց ոլորապտույտ վայր իջնել։

31

— Քանի՞ հոգի են։

— Հինգ։

Անտառը, երկինքն ու հեռավոր լեռները խորշակից տաշտրվում էին։

— Կարգո՞վ։

— Կարգով։

Քրտնած դեմքով կուբանցին, որ եկել էր հետախուզությունից, չվերջացրեց իր խոսքը. ձին, գլուխը թափ տալով, նրան էլ բաշի մոտ քաշեց, ճանճերից ազատվելու համար նա ուժգին թափ էր տալիս գլուխը և աշխատում սանձը ձեռքից դուրս կորզել։

Կոժուխը նստած էր մի սայլակի վրա, կառապանի և համհարզի հետ, կարմրատակած, կարծես բաղնիքից նոր դուրս եկած լինեին։ Շուրջը ամայություն է։

— Խճուղուց հեռո՞ւ է։

Կուբանցին մտրակով դեպի աջ ցույց տվեց։

— Տաս կամ 15 վերստ կլինի անտառի ծայրից։

— Խճուղուց ճանապարհ կա՞ մինչև այնտեղ։

— Կա։

— Կազակներ չե՞ն երևում։

— Չէ՛, չկան։ Մերոնք երեսուն վերստաչափ առաջ էին անցել, կազակների հոտն էլ չկա։ Ագարակներում ասում են,

որ կազակները 60 վերստ հեռու գետակի մյուս կողմը ամրություններ են փորում։

Կոժուխի դեղին դեմքի վրա խաղում էին խլերը։ Հանկարծ դեմքին անդորը իջավ, կարծես թե քիչ առաջ բոլորովին խաշած մսի գույն չէր ունեցել։

— Ջորաբանակի գլուխը կանգնեցնել, շուտ տալ քո ասած ճանապարհով, թող նրանց առջևից անցնեն բոլոր գնդերը, փախստականները, սայլախմբերը։

Կուբանցին առաջ թեքվեց թամբի վրա և զգուշությամբ, որպեսզի կարգապահությունը խանգարած չլինի, ասաց.

— Մեծ պտույտ կլինի... Մարդիկ ոտի վրա չեն մնում... Շոգ է... Ոչինչ չեն կերել...

Կոժուխի փոքրիկ աչքերը մեխվեցին տոթակեզ դողդոջուն հեռավորության մեջ, մոխրագույն դարձան... Երրորդ օրն է... Դեմքերը քաշված են, աչքներում քաղցի փայլ։ Երրորդ օրն է, ոչինչ չեն կերել։ Լեռները ետևը մնացին, բայց պետք է առաջ գնալ, ինչքան որ ուժ ունեն, պետք է դուրս գալ ամայի բարձրավանդակից, հասնել ստանիցաներին, կերակրել մարդկանց և ձիերին։ Եվ պետք է շտապել, որպեսզի կազակները ժամանակ չունենան ամրանալու։ Ոչ մի բոպե չի կարելի կորցնել, չի կարելի կորցնել այդ 10—15 վերստ պտույտը։

Նա նայեց կուբանցու ջահել, քաղցից և շոգից սևացած դեմքին։ Աչքերը պողպատի ցոլք ստացան և, բառերն ատամների միջով դուրս բերելով, ասաց.

— Ջորքն այն կողմը շուտ տվեք. թող նրանց մոտիցն անցնեն։

— Լսում եմ։

Ուղղեց քրտնքից թաց մորթե կլոր գլխարկը, մտրակեց անմեղ ձիուն, որն իսկույն զվարթացավ, կարծես ոչ անտանելի տոթ լիներ, ոչ էլ ճանճերի և բոռերի ամպեր, ապա բռնեց կանգնած տեղը, հետո շուռ եկավ և ուրախ սլացավ խճուղու կողմը։ Բայց խճուղի չկար, այլ անվերջ տարածվում էին կոհակներ տվող գորշ-սպիտակավուն փոշու ամպերը, որոնք բարձրանում էին ծառերից վեր և անհետանում սարերի ետևում։ Եվ թվում էր, թե փոշու ամպերի մեջ շարժվում են հազարավոր քաղցածներ։

Կոժուխի սայլակը տեղից շարժվեց անտանելի տոթալից գնգզնգոց արձակելով. միջից սպառնացող գնդացիր էր երևում։

Կուբանցին սլացավ, անցկացավ նեղ անտառակն ու խորասուզվեց անթափանցելի ալեկոծվող խեղդուկ մթնոլորտի մեջ։ Ոչինչ չի կարելի ջոկել, բայց լսվում է, թե ինչպես հոգնած, խառնիխուռն քայլում են խանգարված շարքերը, հեծյալները, ճռճռացող սայլերը։

Քայլում են խառնված շարքերը, հեծյալները, ճռճռացող սայլերը, և նրանց հետ, նրանցից անբաժան, աներևույթ հոսում է արճիճը, սվիններ, ցնցոտիներ, փամփուշտի լիքը պայուսակներ,— ամեն ինչ ծանրացած է։ Սև այրված դեմքերը քրտինքից աղտոտ փայլ են ստանում։ Ցավագար կկոցած աչքերում մանրիկ պսպղուն կետեր են, և ամեն ինչ սպիտակ է — արտևանունքները, մազերը, վզերը, զենքերը։

Ոչ խոսակցություն, ոչ ծիծաղ, այլ միայն բոլորի հետ միասին առաջ շարժվող ծանր լռություն։ Եվ այդ տաք լռության մեջ նույն թալկացած, նվաղած քայլերի, սմբակների ձայնը, սոնակների ճռճռոցն է։

Ականջները թույլ-թույլ կախ գցած, գլխիկոր գնում են ձիերը։

Երեխաների գլուխները սայլերում այս ու այն կողմն են ընկնում, և հաղիվ սպիտակին են տալիս բաց ատամները։

— Ջո՜ւր... ջո՜ւ-ո՜ւր...

Լողում է հեղձուցիչ, ամեն ինչ ծածկող սպիտակավուն մշուշը, և նրա մեջ քայլում են քաղցած, բոբիկ, ուժասպառ, ցնցոտիավոր շարքերը, և արևն էլ պակասն է լրացնում։ Իսկ առջևում կուշտ, կազմ ու պատրաստ, ամրացած կազակների գնդերը, գիշատիչ գեներալներն են ագահությամբ սպասում։

Կուբանցին անցնում էր այդ լուռ ճռճռացող հեղձուցիչ ամպերի միջով և միայն մեկ-մեկ ձայներից հասկանում էր, թե որտեղ ո՞ր զորամասն էր գտնվում։

Կուբանցին այդ սոսկալի փոշու մեջ, մարդկանց և ձիերին հրելով, հասավ զորասյան գլուխը, թամբի վրա թեթև թեքվելով, խոսեց հրամանատարի հետ։ Նա խոժոռվեց, նա-

յեց փոշու ամպերի մեջ մերթ աղոտ երևացող, մերթ անհետացող զինվորներին, կանգնեց և օտար, ոչ իր ձայնով խոպոտ հրաման տվեց.

— Գո՛նդ, կանգնի՛ր...

Հեղձուցիչ մշուշը բամբակի նման անմիջապես կլանեց նրա խոսքերը, բայց բանից երևաց, որտեղ հարկավոր է, լսեցին և հետզհետե հեռանալով և թուլանալով՝ տարբեր ձայներով գոչեցին.

— Գումարտակ, կանգնի՛ր... Վա՛շտ, կանգնի՛ր...

Եվ բոլորովին հեռու հնազիվ լսելի հնչեց և մեղմ հանգավ.

— ... կանգ-նի՛ր...

Զորանոցի քայլերի ձայնը դադարեց, և հեռու, հեռու տարածվեց այդ դադարը և այդ ընդհատված տաք մշուշի մեջ մի վայրկյան ոչ միայն լռություն, այլ խաղաղություն, անվերջ հոգնածություն, անխնա տոթի մեծ խաղաղություն էր։ Հետո հանկարծ այդ լռությունը լցրեց բազմաթիվ խնչոշների ձայնով։ Հազում թքում էին կոկորդները լցված փոշին, մայր էին հայհոյում, տերևներից և խոտից ծխախոտ էին շինում, և դանդաղ, դանդաղ նստող փոշու միջից երևում էին մարդիկ, ձիեր, սայլեր, հեռու հորիզոնը։

Նստած էին խճուղու կողքերին, առուների մեջ, սվինները ծնկների արանքին պահած և խոտի ծխախոտներից թանձր ծուխ էին բաց թողնում։ Արևի կիզիչ ճառագայթների տակ նրանք մեջքների վրա անշարժ պառկած էին, իսկ նրանց կողքին ալյուրի պես սպիտակ, այրող փոշու մեջ հրացանները։

Ուժասպառ կանգնած էին ձիերը, դունչները կախած, ուժ չունենալով քշելու կպչող ճանճերի խիտ ամպերը։

— Վեր կացեք... Է՛յ, վեր-կա-ա-ցե՛-ե՛ք...

Ոչ ոք չէր շարժվում, ամեն ինչ անշարժ էր. հնար չկար վեր կացնելու այդ քարի պես ծանրացած մարդկանց։

— Վե՛ր կացեք, ասում են... Ձեր էսպեսն ու էնպեսը...

Դատապարտվածների նման մեկ-մեկ վեր էին կենում և առանց հրամանի սպասելու գնում էին ճնշող հրացանները ուսերին և բորբոքված աչքերով նայելով, չորացած բերանները բաց. պատառոտված, գզգզված, սևացած, մերկ, ճճռռացող մի հրոսակ, որ իր ետևից քաղց և հուսահատություն էր քարշ տալիս. նորից, ակամա, նվաղելով, բարձրանում են սպիտակ ամպերը, և սարերի վերևից դեպի տափաստան է իջնում անվերջ պտույտներ գործող խճուղին։

Հանկարծ անակնկալ և տարօրինակ հնչեց.

— Աջ ուսն առա՛ջ։

Եվ ամեն անգամ, երբ նոր զորամաս է մոտենում, զարմացած լսում է.

— Աջ ուսն... ա՛ջ... ա՛ջ...

Նախ զարմացած, հետո աշխույժ շուռ են տալիս դեպի նեղ ուղին. նա քարքարոտ է, առանց փոշու, և երևում էր, թե ինչպես շուտափույթ շեղվում են զորամասերը, հեծյալները և ճռճռացող սայլերը, երկանիվները։ Բացվում են կիսպույտ սարերը, անտառի ծայրերը, հորիզոնը։ Շեղվում են նաև ճանճերի սև երամները։ Դանդաղ իջնող փոշու ամպերը և խեղդող լռությունը մնում են խճուղու վրա, իսկ նեղ ուղին կենդանանում է ձայներից, բացականչություններից և ծիծաղից։ Եվ բոլորը քայլում են սպիտակ արտանունքներով, սպիտակ հոնքերով, սպիտակ բեղերով, մազերով, ցնցոտիներով, սպիտակ հրացանները ձեռքներին բռնած։

— Ո՞ւր են տանում մեզ։

— Ասում են, անտառը, որ մի քիչ բուկներս թրչենք, թե չէ շատ է չորացել։

— Դդում... անտառում քեզ համար անկողին են պատրաստել, որ հանվես պառկես։

— Եվ կաթի սերով բլիթներ են պատրաստել։

— Յուղով...

— Արաժանով...

— Մեղրով...

— Եվ սառը սեխ։

Այն նիհար բարձրահասակը, պառաված, քրտնքից թաց ֆրակով, կեղտոտ հաշիաների մնացորդներով, որի տակից ամեն ինչ դուրս էր պրծնում, բարկացած թքեց.

— Դե՛, սո՛ւս կացեք... Շա՛ն լակոտներ...

Զարացած պնդացրեց վարտիքի գոտին, ստամոքսը կողերի տակը գցելով, և կատաղած ուսից ուս տեղափոխելով ճնշող հրացանը։

Քրքիջը շարժեց ճանճերի թանձր ամպը։

— Օպանաս, այդ ի՞նչ ես քամակդ ծածկել, իսկ առաջդ բոլորովին բաց արել։ Զուլերդ առաջդ քաշիր, թե չէ ստան նիցայում կանայք բլիթներ չեն տա, երեսները շուռ կտան։

— Հո՜-հո՜-հո՜... Հա՜-հա՜-հա՜...

— Տղե՛րք, էն աստված, հանգիստ ենք առնելու։

— Ախր, այստեղ ոչ մի ստանիցա չկա, ես գիտեմ։

— Ի՞նչ ես փչում, այ, տեսնո՞ւմ ես սյուները. հեռագրի սյուներ են. ո՞ւր կարող են տանել, եթե ոչ ստանիցա։

— Էյ, հեծելազո՛ր, ձրի հաց չե՞ք ուտում, հո, ղլե՛ցե՛ք...

Ջիու թամբի վրա ամրացրած գրամոֆոնից խռպոտ լսելի եղավ.

Ա՜խ, իմ գարնան ոսկե օրեր, արդյոք ինչո՞ւ հեռացաք...

— Է՜-է՜, նայեցե՛ք, բատկոն։

Ամենքը անցնելիս գլուխները շուռ էին տալիս և նայում. այո, նա է, միշտ նույնը, ցածրահասակ, հաստաբեստ, սունկի պես կեղտոտ հարդի գլխարկը վրան քաշած։ Կանգնած նայում է նրանց։ Եվ մազմազոտ կուրծքը դուրս է նայում ճղղված, քրտնքից թաց գիմնաստյորկայի տակից։ Վրան ցընցոտիներ, ծակ կոշիկների միջից ճաքճքած ոտներն են երևվում։

— Տղե՛րք, մեր բատկոն շատ է բանդիտի նման. անտառում որ հանդիպի, ծակը կմտնես։

Սիրով նայում են ու ծիծաղում։

Իսկ նա իր մանր, ամեն բան տեսնող աչքերով, որ երկաթե դեմքի վրա կապույտ գույն են ստացել, սուր դիտում է իր առջևով խառը, դանդաղ, ծույլ-ծույլ անցնող խմբերն ու մտածում է. «Այո՛... ավազակախումբ է... եթե հանկարծ կազակները պատահեն, ամեն ինչ կորած է... ավազակախումբ է...»։

— Այս ի՞նչ է, այն ի՞նչ է...— լսելի եղավ ամբոխի մեջ։

Գերեզմանային լռություն տիրեց, և բոլորը գլուխները շուռ տվին և սկսեցին մի կողմ նայել, այն կողմը, ուր հեռագրի սյուներն էին գծի պես հեռանում հետզհետե փոքրանալով և անհետանալով դողդոջուն տոթի մեջ բարակ մատների պես։ Մոտակա չորս սյունի վրա անշարժ կախված են չորս մերկ մարդ, ճանճերի սև խմբերը նրանց վրա ղժվժում էին։ Գլուխները թեքված էին, կարծես թե ջանել կզակներով հուպ տալիս լինեին իրենց խեղդող թոկի հանգույցը. բաց մնացած ատամները ծիծաղում էին. կացահար արած աչքերի խոռոչները սևին էին տալիս։ Սվիններով ծակած կացահար եղած ստամոքսներից դուրս էին թափված լպրծուն կանաչ փորոտիքը։ Արևն այրում էր։ Կաշին ճաքճքել էր շերտ-շերտ ու սևացել՝ հրացանի շշի հարվածներից։ Ագռավները թռան և տեղավորվեցին հեռագրասյուների գլխին, վար նայելով։

Չորս հոգի, իսկ հինգերորդը, հինգերորդ սյունից կախված էր մի աղջիկ, կուրծքը կտրտած, մերկ և սևացած։

— Գո՛ւնդ, կանգնի՛ր...

Առաջին սյունի վրա սպիտակ թուղթ էր կպցրած։

— Գումարտա՛կ, կանգնի՛ր... վա՛շտ, կանգնի՛ր...

Եվ այդպես մինչև զորասյունի վերջը...

Այդ հինգ դիակներից լռություն և քաղցր, սիրտ խառնող գարշահոտություն էր փչում։

Կոժուխը հանեց իր ճղճղված գլխարկը։ Մնացյալները, ով որ գլխարկ ուներ, հանեցին, իսկ ով որ չուներ, հանեց գլխին փաթաթած հարդը, խոտը, ճյուղերը։

Արևն այրում էր։

Եվ գարշահոտություն էր, քաղցր գարշահոտություն։

— Ընկերնե՛ր, տվեք ինձ։

Համհարզը պոկեց առաջին սյունից սպիտակ թուղթը և տվեց։ Կոժուխը ծնոտները սեղմեց, և ատամների միջից դուրս սողացին հետևյալ խոսքերը։

— Ընկերնե՛ր,— և ցույց տվեց արևից պայծառ սպիտակին տվող թուղթը,— գեներալները ձեզ են գրում։ Գեներալ Պոկրովսկին գրում է. «Այսպիսի սոսկալի պատժի կենթարկվեն, ինչպես այս հինգ մեռյալները Մայկոպի գործարանից, բոլորը, ով որ ամենափոքր առնչություն կունենա բոլշևիկների հետ»։

Եվ ծնոտները նորից սեղմեց։ Հետո ավելացրեց.

— Ձեր եղբայրներն են և ձեր քույրը։

Եվ նորից սեղմեց. այլևս ասելիք չուներ։

Հազարավոր պսպղացող աչքեր անթարթ նայում էին։ Մի գերմարդկային վիթխարի սիրտ էր, որ բաբախում էր։

Աչքերի խոռոչներից սև կաթիլներ էին կաթում։ Գարշահոտություն էր գալիս։

Հնչուն խորշակը, անթիվ ճանճերի բարակ տզզոցը լռության մեջ մարեց։ Միայն գերեզմանային լռություն և զազիր գարշահոտություն էր տիրում։ Կաթիլները կաթում էին։

— Հանդարտ... քայլով մ՛արշ։

Ծանր քայլերի դոփյունը միանգամից ընդհատեց լռությունը, հարթ և չափով առաջ գնաց, կարծես մի մարդ գնալիս լիներ, անասելի հասակով, անասելի ծանրությամբ, և մի վիթխարի, գերմարդկային սիրտ բաբախելիս լիներ։

Գնում են, աննկատելի կերպով արագացնում իրենց ծանր քայլերը, լայնարձակ քայլում։ Արևը խելագարի պես նայում է նրանց։

Առաջին շարքում՝ աջ կողմում մեկը, փոքրիկ, սև բեղերով՝ տատանվեց, հրացանը վայր գցեց և գետին փռվեց։ Դեմքը բոստրագույն ուռեց, վզի երակները փքվեցին, և աչքերը, մսի պես կարմրած, շուռ եկան։ Արևը կատաղի նայում էր։

Ոչ ոք չկանգնեց, չշփոթվեց. ավելի արագ, ավելի շտապ էին քայլում, պսպղուն աչքերով դիտելով տոթակեզ դողդոջուն հեռուն։

— Սանիտա՛ր։

Մոտ եկավ մի երկանիվ. բարձրացրին, դրին մեջը. արևն սպանել էր։

Մի քիչ անց, վայր ընկավ էլի մեկը, հետո երկուսը։

Երկանիվ բերեք։

Հրաման.

— Գլխարկները դրեք։

Ով ուներ՝ դրեց։ Ով չուներ, գնալիս պոկում էր չոր խոտը և փաթաթում էր գլխին։ Պոկում էին քրտնած, փոշոտ ցնցոտիները հանում էին վարտիքները, կտոր-կտոր անում և կանանց պես գլուխները ծածկում և առաջ էին գնում մերկ, ոտաբոբիկ, ոտքի տակ անցնող խճուղին կլանելով։

Կոժուխն իր սայլակովն ուզում է հասնել զորագլխին։ Կառապանը շոգից խեցգետնի աչքեր շինած մտրակում է ձիերին՝ քրտինքի շերտեր թողնելով նրանց գավակների վրա։ Ձիերը, սապոն կտրած, ոչ մի կերպ չեն կարողանում առաջ անցնել. ծանր շարքերն ավելի ու ավելի արագ և լայնարձակ են քայլում։

— Գժվե՞լ են, ի՞նչ է, նապաստակի պես վազում են։

Նվ նորից մտրակում են և թափ տալիս ուժասպառ ձիերի սանձափոկերը։

— Այդպե՛ս, այդպե՛ս, տղերք...— աչքերի վրա կիտած գանգի տակից դիտում է Կոժուխը, իսկ աչքերն իսկական մաղ պողպատ են,— այդպիսով մենք օրական 70 վերստ կանցնենք։

Նա իջնում է և ոտով առաջ գնում, ջանալով ետ չմնալ և անհետանում է անվերջ ծանրաքայլ շարքերի մեջ։

Սյունները դեպի հեռուն են գնում դատարկ, մենավոր։ Զորասյան գլուխը դեպի աջ է շուռ գալիս։

Եվ երբ բաթձրանում է ամայի խճուղու վրա, նորից խեղդուկ ամպերը անխափան վեր են ելնում և պատում։ Ոչինչ չի երևում։ Միայն հարթ, հավասարաչափ քայլերի ծանր դոփյունով լցվում են հեզձուցիչ կոհակներով հորձանք տվող ամպերը։

Իսկ ետև մնացած սյուներին հերթով մոտենում են մյուս զորամասերը և կանգ առնում։

Մառախուղի պես գերեզմանային լռությունն է գալիս և կտրում բոլոր ձայները։ Հրամանատարը կարդում է գեներալի թուղթը։ Հազարավոր պսպղուն աչքեր անթարթ նայում են, և մի չտեսնված վիթխարի սիրտ է միահամուռ բաբախում։

Հինգը միշտ նույնպես անշարժ են։ Պարանի օղակի տակ սևացած միսը ցրվել է, և երևում են սպիտակ ոսկորները։

Ցյունների գլխին ագռավներն են նստած, ճոզբրհան փայլուն աչքերով նայում են դեպի վար։ Սիրտը խառնող քաղցը, տապակած մսի թանձր հոտն է կանգնած։

Հետո հավասարաչափ քայլերն ավելի ու ավելի են առաջ գնում, առանց հրամանի հավասարվում և ստվար շարքեր ձևավորում։ Եվ մոռացել են, գնում են գլուխները բաց, առանց նկատելու ոչ ուղիղ գծի պես հեռացող սյուները, ոչ էլ ճաշվա կարճ, գրեթե սև ստվերները, տանջվելու չափ սեղմած աչքերը մխելով հեռավոր դողդոջուն տոթի մեջ։

Եվ հրաման.

— Գլխարկներդ դրեք։

Քայլում են ավելի ու ավելի արագ, լայնարձակ, ծանր հավասար շարքերով, շուռ են գալիս դեպի ձախ, անցնում են խճուղու վրա, և ամպերը կլանում են և գլորվում նրանց հետ միասին։

Անցնում են հազարավոր, տասնյակ հազարավոր մարդիկ։ Չկան այլևս ոչ քառյակներ, ոչ վաշտեր, ոչ գումարտակներ, ոչ գաղեր, այլ միայն մի անանուն վիթխարի միություն։ Անհամար քայլերով գնում են, նայում անհամար աչքերով, բազմաթիվ սրտեր բաբախում են որպես մի մեծ սիրտ։

Եվ բոլորն էլ, ինչպես մի մարդ, աչքերն անթարթ հառել են դեպի տոթակեզ հեռուն։

Ստվերները երկայնացան։ Սարերի ետևում կապույտ երկնակամարը մշուշով ծածկվեց։ Թուլացած, հոգնած, սիրտը դուրս ընկած արևը սարերի ետևը գլորվեցավ։ Ծանր շարժվում են սայլերը երեխաներով, վիրավորներով։

Մի բոպեում կանգնեցնում են նրանց և ասում.

— Ձեր եղբայրներն են... Գեներալների արածն է...

Հետո շարունակում են իրենց ճանապարհը, և լսելի է միայն անիվների ճռռոցը։ Միայն երեխաներն են վախեցած շշնջում.

— Մայրի՛կ, իսկ մեռելները գիշերը չե՞ն գա մեզ մոտ։

Կանայք խաչ են հանում, փեշերով քթները, աչքերը սրբում։

— Խեղճ ու կրակներ։

Ներերը շաղված քայլում են սայլերի կողքով։ Եվ ամեն ինչ անորոշ է դառնում։ Սյուներն այլևս չեն երևում. միայն լեռնակույտերն են՝ մթության մեջ երկնքին սյուն տված։ Երկինքն էլ անհամար աստղերով շողշողաց, բայց դրանից լույս չավելացավ։ Թվում է, թե սարերն են շուրջը սևին տալիս, այնինչ այդ միայն սարերի լանջերն են, իսկ սարերը վաղուց ծածկված են խավարում։

Մի այնպիսի մռայլ կանացի ճիչ լսվեց, որ զվարթ աստղերը մի կողմ քաշվեցին.

— Ա՛յ-ա՛յ-ա՛յ-ա՛յ... Հրեշնե՛ր... Տես ի՞նչ են արել, կատաղած շնե՛ր... տեսե՛ք, տեսե՛ք, ա՛յ մարդիկ, տեսեք ի՞նչ են արել սրանց...

Նա ընկնում է սյունի վրա, գրկում է սառած ոտքերը, սեղմվում է իր ջահել խառնացրիվ մազերով։

Մի զույգ զորեղ ձեռքեր հազիվ են նրան սյունից պոկում և քաշ տալիս դեպի սայլը։ Նա օձի պես դուրս է պրծնում, նորից գրկում է և խելագարի պես աղաղակում.

— Ո՞ւր են ձեր մայրերը, ուր են ձեր քույրերը։ Միթե ապրել չէի՞ք ուզում դուք... Ո՞ւր են ձեր աչքերը, ձեր ուժը, ձեր քաղցր լեզուն... ա՛յ անասստվածներ... Օ՜, իմ խեղճ, անբախտներ... Ո՞վ պիտի ողբա, ո՞վ պիտի դարդ անի ձեզ համար...

Նրան նորից բռնում են, նա դուրս է պրծնում և նորից խելակորույս աղաղակում.

— Տեսեք ի՞նչ են արել... Որդուս կերան, Ստեփանին կերան, ձեզ կերան։ Դե, կերեք բոլորիս միանգամից, բոլորիս արյունը լափեցեք, խեղդվեցեք, փորներդ մարդու մսով, ոսկորներով, աչքերով, ուղեղով լցրեք...

— Թո՛ւ... դե, հերիք եղավ...

Սայլերը չեն սպասում, առաջ են գնում ճռճռալով։ Նրա սայլն էլ անցավ։ Նրան բռնում են ուրիշները, նա դուրս է պրծնում, և կրկին ոչ թե աղաղակները, այլ խավարն է կատաղաբար ճեղքում, հարձակվում է խելագար գիշերը։

Միայն վերջին շարքերը ուժով վերցրին նրան և կապեցին վերջին սայլի մեջ։ Գնացին։ Եվ ամայություն էր, ու գարշահոտություն էր փչում։

32

Այնտեղ, ուր խճուղին դուրս է գալիս սարերի միջից, կազակներն սպասում են ապահաբար։ Այն օրից, երբ ամբողջ Կուբանում ապստամբության հրդեհը բռնկեց, բոլշևիկների ուժերը ամենուրեք նահանջում էին կազակների գնդերի առաջ, կամավորների զորաբանակի սպաների զորամասերի առաջ, «կադետների» առաջ, հնար չունենալով որևէ տեղ կանգ առնել, հենվել, դիմադրել գեներալների կատաղի

գրոհին, և հանձնում էին նրանց քազաք քաղաքի, ստանիցա ստանիցայի ետևից։

Դեռ ապստամբության սկզբին բոլշևիկների մի մասը դուրս սպրդեց երկաթե օղակից և խառնիճաղանջ խմբերով, տասնյակ հազարավոր փախստականների, հազարավոր սայլերի հետ սլացավ սարերի և ծովի միջև անցնող նեղ ճանապարհով։ Այնպես արագ էին գնում, որ նրանց չկարողացան հասնել, իսկ այժմ կազակները ամրացած սպասում են։

Կազակները տեղեկություն ունեն, որ սարերից հեղեղի պես թափվող հրոսակները անթիվ-անհամար կողոպտած հարստություններ են իրենց հետ բերում՝ ոսկի, թանկագին քարեր, հագուստներ, գրամոֆոններ, ահագին թվով զենքեր, ռազմամթերք, բայց իրենք պատառոտած, բոբիկ, գլխաբաց են գնում, երևի ըստ հին, թափառաշրջիկների սովորության։ Եվ կազակների, սկսած գեներալից մինչև վերջին զինվորը, անհամբեր, բերանների ջուրն է գնում՝ բոլոր, բոլոր հարստությունը, թանկագին իրերը իրենց ոտով նրանց մոտ են գալիս։

Գեներալ Դենիկինը հանձնարարել էր գեներալ Պոկրովսկուն Եկատերինոդարում զորամասեր կազմակերպել, շրջապատել սարից իջնող հրոսակները և ոչ մեկին կենդանի բաց չթողնել։ Պոկրովսկին կազմակերպեց մի կորպուս՝ շատ լավ պարենավորված, ճանապարհը կտրեց Սպիտակ գետի վրա, որ սպիտակ է սարերից եկող փրփրաջրերից։ Զորքի մի մասն ընդառաջ ուղարկեց։

Փափախները կտրիճի պես ծոծրակներին դրած՝ ուրախ առաջ են գնում կազակները, կուշտ, կայտառ նժույգներով։ Արևից պսպղում են և շաչում նախշած զենքերը. սիրուն ճոճվում են չերքեզիների փեշերը, և փափախների վրա ժապավեններն են սպիտակին տալիս։

Ստանիցաներից երգ ասելով են անցնում, և կազակ կանայք դուրս են բերում նրանց համար և խաշածը և տապակածը, իսկ ծերերը գինով լի տակառներ են դուրս գլորում։

— Դուք գոնե մի բոլշևիկ բերեք սարերի էն կողմից, տեսնենք, ինչ մարդիկ են։

— Կբերենք, շա՜տ կբերենք, դուք կախաղաններ պատրաստեցեք։

Կազակները լավ կոնծում էին, լավ էլ կռվում։

Հեռվում փոշու հսկայական ամպեր բարձրացան։

— Ահա՜, նրանք են։

Նրանք են, պատառոտած, սև, ցնցոտիներով, գլխարկների փոխարեն հարդ կամ խոտ փաթաթած։

Փափախները ուղղեցին, մերկացրին վայրկենապես պսպղուն սրերը, թեքվեցին թամբերի վրա, և կազակների նժույգները սլացան, ականջներին քամին սուլեց։

— «Ա՜յ, կկոտորենք հա՜...»։

— Ու-ռ-ռա՜-ա՜...

Մեկուկես, երկու րոպեի ընթացքում մի անակնկալ հրեշավոր բան տեղի ունեցավ. վրա թափվեցին, ընդհարվեցին և կազակները սկսեցին վայր գլորվել ձիերից, կտրատված փափախներով, կտրված վզերով, և կամ սվինի վրա էին բարձրացնում թե ձիուն և թե ձիավորին։ Ետ դարձրին ձիերը, թռան, այնպես էին կպել թամբերին, որ նույնիսկ չէին երևում, և քամին ավելի զիլ սուզվեց ականջներում, և սկսեցին վայր գլորել նրանց՝ ձիերից երգող գնդակներով։ Վրա են հարձակվում այդ անիծյալ բոկոտները, փախցնում են երկու, երեք, հինգ, տասը վերստ. միակ փրկությունն այն է, որ նրանց ձիերը ուժասպառ են եղել։

Կազակները թռան-անցկացան ստանիցայից, իսկ նրանք ներս խուժեցին, թարմ ձիեր ձեռք գցեցին և կոտորում էին աջ ու ձախ, եթե ախոռներից անմիջապես չէին հանում, և դարձյալ սլացան նրանց ետևից և շատ շատ սպիտակ ժապավեններով կազակների փափախներ ցրվեցին տափաստանում և շատ չերքեզի սևատած արծաթե գոտիներով կապած կապտագույն բլուրների վրա, դեղին արտերում, անտառի ծայրերում սևին էին տալիս։

Կազակները միայն այն ժամանակ ազատվեցին հետապնդումից, երբ հասան իրենց առաջապահ ուժերին։

Իսկ սարից վայր իջած բոկոտն, մերկ հրոսակները վազում էին իրենց էսկադրոնների ետևից, ինչքան որ ուժ ունեին։ Սկսեցին խոսել թնդանոթները, կչկչալ գնդացիրները։

Կոժուխը չուզեց ցերեկով իր ուժերը մեջ բերել. գիտեր թշնամու գերազանցությունը, չէր ցանկանում երևան հանել իր սակավաթիվ լինելը, սպասեց, որ մթնի, իսկ երբ լավ

մթնեց, նույնը կրկնվեց, ինչ որ ցերեկը. ոչ թե մարդիկ, այլ դևեր էին, որ հարձակվում էին։ Կազակները նրանց շարադում, կոտորում, գնդացիրներով հնձում էին, բայց կազակների թիվը ավելի ու ավելի էր պակասում, ավելի նվազ էին դղրդում նրանց թնդանոթները կրակի երկար պոչեր ժայթքելով, ավելի նվազ էին կչկչում նրանց գնդացիրները, իսկ հրացանների ձայնը բոլորովին չէր լսվում. կազակները պառկում են։

Եվ չդիմացան, փախուստի դիմեցին։ Բայց գիշերն էլ չփրկեց. կազակները շարեշար թափվում էին սրերի ու սվինների հարվածներից։ Վերջապես սկսեցին աջ ու ձախ փախչել, թողին թնդանոթները, ռումբերը, ցրվեցին մթության մեջ անտառում, ձորերում՝ չհասկանալով, թե ինչ դիվական ուժ է հալածում իրենց։

Իսկ երբ արևը ծագեց տափաստանի բլուրների ետևից, անծայր տափաստանում շատ կազակներ էին անշարժ թափթրփված, ոչ վիրավորներ կային, ոչ էլ գերիներ։

Թիկունքում, սայլախմբում, փախստականների մեջ խարույկներ էին վառվում, կաթսաներում կերակուր էին եփում, ձիերը խոտ ու վարսակ էին ծամում։ Հեռու թնդանոթներ էին դղրդում, ուշադրություն չէին դարձնում. ընտելացել էին։ Միայն երբ դադարեց, կովի վայրից երևացին մերթ՝ մի ձիավոր սուրհանդակ հրամաններով, մերթ՝ մի կեր պատրաստող, մերթ՝ ընտանիքը տեսնելու համար գաղտնի վերադարձող մի զինվոր, ամեն կողմից վրա էին թափվում տանջված, սևացած դեմքերով կանայք, բռնում էին ասպանդակները, սանձը։

— Որտե՞ղ է իմը։

— Իսկ ի՞մը։

— Կենդանի՞ է, թե ոչ։

Աղերսալից, սարսափով և հույսով լի աչքերով։

Իսկ նա մտրակը թափահարելով արագ սլանում է և մեկին, մյուսին պատասխան տալիս.

— Կենդանի է... Կենդանի է... Վիրավորած է... Սպանված է, իսկույն կբերեն...

Նա անցնում է, իսկ նրա ետևից կամ հանգստացած ուրախ

խաչ են հանում, կամ ալալակում, ճչում և ուշաթափ ընկնում, և վրան ջուր են լցնում։

Բերում են վիրավորվածներին, մայրերը, կանայք, քույրերը, հարսները, հարևանուհիները սկսում են հոգ տանել։ Բերում են մեռածներին, կոծում են նրանց կրծքերի վրա, և հեռու լսվում է անդարձ սուգ ու շիվանի, հեծկլտանքների ձայնը։

Իսկ ձիավորները գնացին քահանայի ետևից։

— Առանց խաչի և խունկի ենք թաղում, կարծես անասուններ լինեն։

Իսկ քահանան նազ է ծախում, ասում է գլուխը ցավում է։

— Ա՜... Գլո՞ւխդ է ցավում... Չես ուզում... Քամակդ կրժշկենք։

Մտրակը քաշեցին մեկ, երկու, իսկույն տեղից վեր թռավ և սկսեց պատրաստվել։ Հրամայեցին զգեստավորվել, վերցնել խաչը, բուրվառն ու խունկը։

Կանչեցին հաստափոր սարկավագին և չորացած տիրացուին։

Զգեստավորեցին։ Քշեցին երեքին էլ։

Իսկ սայլախմբի ետևն, այգիների մոտ, գերեզմանատանը անհամար բազմություն է հավաքված։

Նայում են։ Տեսան՝ քահանային բերում են։ Կանայք խաչ հանեցին.

— Փառք աստուծո, ինչպես հարկն է կթաղենք։

Իսկ զինվորները՝

— Տեսե՛ք, սարկավագ ու տիրացու էլ են բերել։

— Ինչ հաստափորն է, կարծես խող լինի։

Արագ մոտեցան, հազիվ շունչ քաշելով. քրտինքը հոսում է։ Տիրացուն բուրվառը վառեց։ Մեռածներն անշարժ պառկած էին ձեռքները խաչած։

— Օրհնյալ տեր մեր Հիսուս...

Սարկավագը հոգնած, հաստ ձայնով զլեց, իսկ տիրացուն շուտասելուկով միացավ նրան, քիթը ֆսֆսացնելով.

— Սուրբ աստված, սուրբ և հզոր, սուրբ և անմահ...

Բուրվառի ծուխը կապույտ վեր էր բարձրանում։

Կանայք բերանները փակած կամացուկ հեծկլտում են։

Զինվորները կանգնած են սև, նիհար դեմքերով և խոժոռ հայացքներով. քահանայի ձայնը նրանց չի հասնում։

Բարձր աշխետ ձի նստած գլխաբաց կուբանցին, որ քշել ու բերել էր հոգևորականներին, թեթև հրեց իր ձին, ձին մի քայլ արեց։ Նա կռացավ և շշնջաց քահանայի ականջին, բայց այնպես, որ ամբողջ գերեզմանատանը լսելի եղավ.

— Ես քո մերը... Եթե այդպես ես ասելու, քաղցած խոզի նման, կաշիդ կքերթեմ...

Քահանան, սարկավագն ու տիրացուն սարսափած աչքները չռեցին նրա վրա։ Եվ սարկավագն անմիջապես այնպես դղրդացրեց, որ ագռավները վեր թռան գերեզմանատնից. քահանան տենորի ձայնով սկսեց գեղգեղել, իսկ տիրացուն, ոտքի մատների վրա բարձրանալով, աչքերը ներս գցեց և բարակ ձայնով ծվվաց.

— Հանգո ընդ սուրբս քո...

Կուբանցին ձին ետ տարավ և արձանի պես անշարժ, նստած մնաց հոնքերը կիտած։ Բոլորը սկսեցին խաչ հանել և ծունր դնել։

Երբ գերեզման իջեցրին, երեք անգամ հրացանաձգություն եղավ։ Կանայք խնչելով և ուռած աչքերը սրբելով ասում էին.

— Քահանան շատ լավ կատարեց կարգը, սրտանց։

33

Գիշերը կլանեց ահագին տափաստանն իր բլուրներով և ամբողջ օրը հեռու կապույտին տվող նզովված սարեքը և թշնամու կողմում գտնվող ստանիցան. այնտեղ ոչ մի լույս, ոչ մի ձայն, կարծես ոչ ոք չկար։ Նույնիսկ շներն էլ, ցերեկվա թնդանոթաձգությունից սարսափահար եղած, լուռ են։ Միայն գետի խշշոցն է լսվում։

Այժմ աներևույթ գետի մյուս կողմից ամբողջ օրը կազակների գորշ ամրություններից թնդանոթներն էին դղրդում։ Նրանք անխնա ռմբակոծում էին։ Եվ անթիվ սպիտակ ծխի քուլաները փռվում էին տափաստանի այգիների և ձորակների վրա։ Նրանց այս կողմից սակավ, հոգնած, ակամա էին պատասխանում։

— Ա՜-ա՜-ա՜...— չարախինդ ասում էին կազակ ռմբաձիգները,— քթներիդ կպավ հա՞,— և նորից պատրաստում և դարձյալ ռմբակոծում էին։

Նրանց համար պարզ էր. մյուս կողմում հալից ընկել, թուլացել էին, ամեն արձակածին չէին պատասխանում։ Երևոյան դեմ գետի մյուս կողմից այն բոկոտններն սկսեցին գրոհ տալ, բայց այնպես դաղեցին, որ ցիրուցան եղան, մկան ծակերը մտան, ափսոս, որ գիշերը վրա հասավ, թե չէ ցույց կտայինք։ Բայց լույսը դեռ կբացվի։

Աղմկում է գետը և խշշոցով լցնում խավարը։ Իսկ Կոժուխը գոհ է, և սուր պողպատի պես պսպղում են նրա մանրիկ աչքերը։ Գոհ է. զորքը իր ձեռքին նման է մի ճկուն և հլու գործիքի։ Նա առաջ ուղարկեց զորաշղթաներ և հրամայեց դանդաղ պատսպարվելով առաջ գնալ և երբ այժմ գիշերով նա գնաց ստուգելու նրանց թավշյա խավարի մեջ, բոլորն էլ իրենց տեղերումն էին, ուղիղ գետափին, իսկ ներքև, վեց սաժեն խորությամբ, ձորում գետն էր աղմկում. գետը աղմկում էր և հիշեցնում այն գիշերը, երբ այդ բոլորն սկսվեց։

Ամեն մի զինվոր խավարի մեջ առաջ էր սողում, շոշափում և չափում էր անդունդը։ Ամեն մի զինվոր ուսումնասիրել էր իր տեղը. չէր սպասում ոշխարի պես, որ հրամանատարն առաջ հրի նրան։

Սարերումն անձրև էր եկել. ցերեկով գետը կատաղի փրփրում էր, իսկ այժմ աղմկում է։ Զինվորները գիտեն, արդեն նույնիսկ չափել են, գետը այժմ երկու երեք արշին խորություն ունի, տեղ-տեղ պետք կլինի լող տալ, ի՞նչ արած։ Դեռ չմթնած, զինվորներն իրենց պառկած տեղերից շրապնելի անընդհատ տրաքոցների տակ ամեն մեկը դիտեց գետի մյուս կողմում թշնամու ամրությունների այն մասը, որ ինքը պիտի հարվածեր։

Զախ կողմում երկու կամուրջ կար՝ երկաթուղու և փայտի։ Բայց այժմ նրանք չեն երևում։ Կազակներն ուղղել են դեպի կամուրջներն իրենց թնդանոթները և գնդացիրները, որ նույնպես չեն երևում։

Գետի աղմուկով լիքը գիշերվա խավարում, Կոժուխի հրամանով, անշարժ կանգնած են կամուրջների դեմ հեծյալ և հետևակ գնդերը...

Գիշերը դանդաղ անցնում է առանց աստղերի, առանց ձայների, առանց շարժումների, միայն անհերևույթ վազող գետի աղմուկն է միապաղաղ լցնում գիշերվա անհուն ամայությունը։

Կազակները նստած էին իրենց ամրություններում և ականջ էին դնում վազող ջրի աղմուկին, առանց ձեռքից բաց թողնելու հրացանները, թեև գիտեին, որ այդ բոկոտները գիշերով գետը չեն անցնի — բավական ուտեցրել էին նրանց. և սպասում էին։ Գիշերը դանդաղ սահում էր։

Զինվորները պառկած էին անդունդի եզրին, փորսողի նման գլուխները խավարի մեջ կախ գցած, և կազակների հետ միասին ականջ էին դնում հոսող ջրի աղմուկին ու սպասում։ Եվ այն, ինչը որ սպասում էին և թվում էր, թե երբեք չի հասնելու, սկսեց վրա հասնել.դանդաղ ու ծանր, ինչպես մի ակնարկ, սկսեց ծնվել արշալույսը։

Դեռ ոչինչ չի երևում, ոչ գույներ, ոչ գծեր, ոչ եզրեր, բայց խավարը հիվանդ տեսք ստացավ, թափանցիկ դարձավ։ Դալուկ է լուսադեմի արթնությունը։

Անըմբռնելի, անորսալի, մի բան սահեց-անցավ ձախ ափով, էլեկտրական կայծ էր, թե ծիծեռնակի մի երամ — սլացավ անձայն։

Վեց սաժենանոց բարձրությունից, կարծես տոպրակի միջից, սկսեցին վայր թափվել զինվորները, կավի, ավազի և մանր քարերի հետ միասին... Գետն աղմկում է։

Հազարավոր մարմիններ հազարավոր ծփանք ծնեցին, գետի աղմուկից խլացած հազարավոր ծփանքներ... Աղմըկում է գետը, միապաղաղ աղմկում է գետը...

Արշալույսի գորշ մշուշի մեջ ապշած կազակների առաջ սվիններ անտառ բուսավ, և գոռում գոչյունի, կոնչյունի, հառաչանքի և հայհոյանքների մեջ եռաց գործը։ Մարդիկ չկային, այլ զեռուններ պես իրար փաթաթված արյունարբու գազաններ։ Կազակները գլորում էին տասնյակներ, իրենք հարյուրներով էին թափվում։ Մի անակնկալ դիվական ուժ նորից սկսեց վրա տալ։ Մի՞թե նրանք այն բոլշևիկներն են, որոնց նրանք քշում էին ամբողջ Կուբանում. ոչ, սա մի ուրիշ բան է։ Ձուր չէ, որ սրանք բոլորն էլ մերկ, սևացած և ցնցոտիներով են։

Հենց որ ամբողջ աջ ափը սկսեց մոլեգին գոռալ, թնդանոթներն ու գնդացիրները իրայինների գլուխների վրայով սկսեցին կրակ թափել ստանիցայի վրա, իսկ հեծելազունդը կատաղած սլացավ կամուրջներով. նրան հևալով հետևում էր հետևակ զորքը։

Թնդանոթներն ու գնդացիրները խլեցին, և էսկադրոնները ողողեցին ամբողջ ստանիցան։ Տեսնողներ եղան, թե ինչպես խրճիթից մի սպիտակ բան դուրս պրծավ և անասելի արագությամբ չթամբած ձիով անհետացավ լուսաբացի մշուշի մեջ։

Խրճիթներ, բարդիներ, սպիտակ եկեղեցի՝ բոլորը հետզհետե ավելի պարզ էին նշմարվում։ Այգիների ետևի արշալույսն էր կարմրում։

Քահանայի տնից դուրս էին բերում մոխրագեմ մարդկանց, ոսկեգույն ուսադիրներով. շտաբի մի մասը ձեռք էին գցել։ Քահանայի ախոռատան մոտ աղբի կույտի վրա նրանց գլխատում էին։

Գոռում-գոչյունի, կրակոցների, հայհոյանքների, հառաչանքների մեջ գետի աղմուկը չէր լսվում։

Գտան ստանիցայի ատամանի տունը։ Խուզարկեցին տանիքից մինչև գետնահարկը, բայց չգտան նրան։ Փախել էր։ Հետո սկսեցին կոտորել երեխաներին։ Ատամանի կինը ծընկալոք, հերարձակ քաշ էր գալիս գետնին և սլինդ կպչում էր նրանց ոտներից։ Սպանողներից մեկը հանդիմանելով ասաց.

— Ի՞նչ ես ճղավում, կարծես մորթում են։ Իմ աղջիկն էլ, ինչպես քոնը, ճիշտ երեք տարեկան էր... Այնտեղ թաղեցինք, սարերում, խճակույտի մեջ. բայց ես, որ ասես, չէի բղավում։

Սպանեց փոքրիկ աղջկանն ու հետո փշրեց քրքջացող մոր գանգը։

Մի խրճիթի մոտ, որի առաջ գետնի վրա ապակու կտորներ էին թափված, մի խումբ երկաթուղու ծառայողներ էին հավաքված։

— Այս խրճիթում գիշերում էր գեներալ Պոկրովսկին։ Քիչ էր մնացել, որ բռնեինք։ Հենց որ լսեց ձեր ձայնը, պատուհանը դուրս գցեց, ապակիները տեսնո՞ւմ եք, և մի

շապկանց, տանց ոտաշորի, անթամբ ձիու վրա ցատկեց և պուկ եղավ։

Մի ձիավոր մոայլ հարցրեց։

— Բա ինչո՞ւ էր առանց փոխանի։ Բաղնիսում հո չէ՞ր։

— Քնած էր։

— Ինչպե՞ս թե քնած էր, անփոխա՞ն։ Անփոխան քնել կլինի՞։

— Պարոնները միշտ այդպես են քնում. բժիշկներն են ասում, որ առողջության համար լավ է։

— Թո՞ւ, անզգամնե՞ր։ Քնում էլ են ոչ մարդու պես։

Թքեց և հեռացավ։

Կազակները փախան։ Նրանցից յոթ հարյուր հոգի թափված էին ամրություններում և երկար շարքով՝ տափաստանում։ Միայն մեռածներ։ Եվ փախչողներին դարձյալ անհաղթելի զարմանք էր պատճառում այդ դիվային անհայտ ուժը։

Միայն երկու օր առաջ այդ նույն ստանիցան բոլշևիկների գլխավոր ուժերն էին գրավել. կազակները մի հարվածով վռնդեցին նրանց այնտեղից, իսկ այժմ նրանց զորամասերն են վռնդում կազակներին։ Որտեղի՞ց են եկել այդ զորամասերը։

Սատանան հո չի՞ օգնում նրանց։

Հեռու հորիզոնի վրա բարձրացող արևի շողերը կուրացնում էին փախչողներին։

Հեռու փոված էին սայլախումբն ու փախստականները տափաստանում։ Նույն կապույտ ծուխն է խարույկների վրա. նույն նիհար և վտիտ մանկական գլուխները, որ հապիվ են պահում բարակ վզերը։ Նույնպես գետնին փռած վրացիների սպիտակ վրանների վրա պառկած են մեռածները, ձեռքերը կրծքերին ծալած, և կանայք հուսահատ լացուկոծով իրենց գլխի մազերն են փետում. ուրիշ կանայք են, ոչ թե այն, ինչ որ անցյալ անգամ։

Ձիավորների կողքին զինվորներ են խռնված։

— Էդ ո՞ւր եք գնում։

— Տերտեր բերելու։

— Դե՛, ձեր տերտերի մե՛րը...։

— Բա ո՞նց կարելի է առանց տերտերի։

— Կոժուխը հրամայել է երաժշտախումբ կանչել, էն, որ կազակներից ենք խլել։

— Ինչացո՞ւ է երաժշտախումբը. պղնձի խողովակներ են, իսկ տերտերինը կենդանի կոկորդ է...

— Ի՞նչ գլխներովս ենք տալու նրա կոկորդը. մարդու փոր է ցավում՝ հենց զռում է։ Իսկ երաժշտախումբը զինվորական պատիվ է։

— Երաժշտախո՞ւմբ... Երաժշտախո՞ւմբ...

— Տերտե՛ր, տերտե՛ր...

— Ձեր մե՛րն էլ, տերտերի՛ն էլ...

Երաժշտախումբը, տերտերը և ամենաթթու հայհոյանքներ իրար խառնվեցին։ Կանայք մոտ վազեցին և սկսեցին կատաղած բղավել՝ տերտե՛ր, տերտե՛ր... Ջահել զինվորները մոտ վազելով պահանջում էին.

— Երաժշտախո՞ւմբ, երաժշտախո՞ւմբ...

Երաժշտախումբը հաղթեց։

Ձիավորներն սկսեցին իջնել ձիերից։

— Դե լա՛վ, երաժշտախումբ կանչեցեք։

Անվերջ գնում են փախստականներն ու զինվորները, մոայլ և ծանր հնչում են պղնձի ձայները՝ հանդիսավոր, վիշտ ու զորության զգացում առաջացնելով, պղնձի պես է փայլում և արևը։

34

Կազակները ջարդված էին, սակայն Կոժուխը տեղից չէր շարժվում, թեև անհրաժեշտ էր, ինչ էլ որ լիներ, առաջ գնալ։ Լրտեսները և թշնամու կողմից եկած փախստականները միաբերան վկայում էին, որ կազակները հավաքում են իրենց ուժերն ու կազմակերպվում են։ Նկատելիորեն դարից անընդհատ օգնության են հասնում, դղրդալով խմբվում են թնդանոթները, մոտենում են սպայական ահարկու վաշտերը, կազակների նորանոր հարյուրյակները. խտանում է Կոժուխի շուրջը, խտանում է թշնամու ահագին կիտվող ուժը։ Օ՜հ, պետք է գնալ, դեռ կարելի է ճեղքել և անցնել, դեռ այնքան հեռու չեն գնացել գլխավոր ուժերը, իսկ Կոժուխը... կանգնած է։

Սիրտ չի անում տեղից շարժվելու, նախքան ետ մնացած զորասյուները կհասնեն։ Նա գիտե, որ կովի անընդունակ են նրանք. եթե թողնի նրանց, կազակները կջարդեն, ցրիվ կտան նրանց, բոլորին կկոտորեն։ Եվ Կոժուխի, որպես տասնյակ հազարավոր մարդկանց աղատողի ապագա փառավոր հուշակի մեջ այդ կոտորածը իբրև մի սև բիծ կմնա։

Եվ նա որոշեց սպասել, իսկ կազակները խտացնում էին իրենց ուժերը։ Երկաթե օղակն անդիմադրելի կերպով կապվում էր նրանց շուրջը և իբրև ապացույց, տափաստանը և երկինքը դղրդացնելով, սկսեց գոռգոռալ թշնամու հրետանին, և շրապնելը սկսեց անընդհատ տրաքտրաքվել և բեկորներ թափել մարդկանց վրա, իսկ Կոժուխը տեղից չէր շարժվում, այլ միայն հրաման տվեց պատասխան տալ թշնամու կրակին։

Ցերեկն անցավ. գիշերն էլ անցավ. թնդանոթները, տաքանալով, դղրդում են, իսկ ետ մնացած զորասյուները չկան ու չկան։ Անցավ երկրորդ օրն ու երկրորդ գիշերը, իսկ զորասյուները չկան ու չկան։ Փամփուշտներն ու ռումբերը սկսեցին հատնել։ Կոժուխը հրամայեց խնայելով կրակել։ Կազակները սիրտ առան, տեսնելով, որ սակավ են պատասխանում և առաջ չեն գալիս. մտածեցին, որ ուժից ընկել են, և սկսեցին բռունցք պատրաստել։

Երեք օր չէր քնել Կոժուխը. դեմքը աղաղած կաշի էր դարձել, ոտքերը կարծես գետնի մեջ էին խրվում մինչև ծունկները։ Հասավ չորրորդ գիշերը, որ ամեն բոպե լուսավորվում էր թնդանոթների բռնկման կրակից։ Կոժուխն ասաց.

— Ես մի ժամ կքնեմ. եթե մի բան պատահի, իսկույն զարթնեցրեք։

Աչքերը դեռ հազիվ էր խփել, վազում են.

— Ընկե՛ր Կոժուխ, ընկե՛ր Կոժուխ... Բանը վատ է...

Կոժուխը ցատկեց, չի հասկանում, թե որտեղ է, ինչ է կատարվում։ Ձեռքը քսեց երեսին, կարծես սարդի ոստայն հավաքելիս լիներ, և հանկարծ նրան ապշեցրեց լռությունը. գիշեր-ցերեկ գոռգոռացող թնդանոթները լուռ էին. միայն հրացանների ճռճռոցն էր լցնում խավարը։ Նշանակում է, բանը վատ է՝ իրար մոտեցել են։ Գուցե նույնիսկ ճակատը ճեղքել են։ Եվ նա լսեց, ինչպես աղմկում էր գետը։

Վազելով հասավ մինչև շտաբը, տեսնում է՝ բոլորի դեմքերը փոխվել են, մոխրի գույն են ստացել։ Խլեց հեռախոսի փողը. վրացիների հեռախոսները պետք եկան։

— Ես եմ, գլխավոր հրամանատարը։

Հեռախոսի մեջ լսվում է մկան ծվծվոց։

— Ընկե՛ր Կոժուխ, օգնություն հասցրեք. չեմ կարող դիմադրել։ Բռունցք է դեմս. սպայական գնդեր։

Կոժուխը քարի պես պատասխանում է.

— Օգնություն չեմ տա, չկա։ Դիմադրեցեք մինչև վերջին մարդը։

Այնտեղից՝

— Չեմ կարող. հարվածը կենտրոնացած է ինձ վրա. չեմ դիմանա...

— Դիմադրեցե՛ք, ասում են ձեզ։ Պահեստում ոչ մի մարդ չկա։ Իսկույն ինքս կգամ։

Կոժուխը այլևս չի լսում, թե ինչպես է աղմկում գետը, լսում է միայն, թե ինչպես խավարի մեջ առջևում, աջ ու ձախ, հրացանի տրաքոցներ են լսվում։

Կոժուխը հրամայեց... բայց չկարողացավ վերջացնել. լսվեց՝ ա՜-ա՜-ա՜...

Ջնայած խավարին, Կոժուխը նկատեց, որ կազակները ներս խուժեցին, աջ ու ձախ կոտորում են — նշանակում է, հնծյալներն են ճակատը ճեղքել։

Կոժուխը վազեց, հանկարծ դիմացից ուղիղ նրա առաջ դուրս ցատկեց այն հրամանատարը, որ նոր խոսում էր հեռախոսով։

— Ընկե՛ր Կոժուխ...

— Դուք այստեղ ի՞նչ եք անում։

— Ես այլևս չեմ կարող դիմադրել... այնտեղ ճակատը ճեղքեցին...

— Ինչպե՞ս եք հանդգնել հեռանալ ձեր զորամասից։

— Ընկե՛ր Կոժուխ, ես եկել եմ անձամբ օգնություն խնդրելու։

— Ձերբակալե՛լ։

Իսկ զարհուրելի խավարի մեջ լսվում են ճիչեր, ճռթճրթոց, հրացանաձգություն։ Սայլերի, հակերի, սև խրճիթների

Ետևներից խավարի մեջ հանկարծակի երևում են ատրճանակների, հրացանների կրակները։

Որտե՞ղ են մերոնք, որտե՞ղ են օտարները։ Սատանան չի կարող հասկանալ... Գուցե հենց մերոնք են իրար կոտորում... Գուցե և այս եղավ է...

Վազ է տալիս համհարզը. խավարի մեջ ճանաչում է նրան Կոժուխը։

— Ընկե՛ր Կոժուխ...

Ձայնը հուզված է,— դեռ ապրել է ուզում։ Եվ հանկարծ համհարզը լսում է.

— Ինչ կա... Մի՞թե վերջն է հասել...

Մի չլսված ձայն, երբեք Կոժուխից չլսված ձայն։ Ճայթյուններ, ճիչեր, ճռթճռթոցներ, հառաչանքներ, իսկ համհարզի մտքով մի վայրկյան, սրտի խորքերում, անգիտակցորեն, ինչպես կայծ, և մի փոքր շարախնդությամբ անցնում է՝ «Ահա՛... Ուրեմն դու էլ նույնպես մարդ ես, ինչպես ամենքը... Դու էլ ապրել ես ուզում...»։

Բայց այդ լոկ մի չնչին վայրկյան տևեց։ Ցավոք է, չի երևում, սակայն զգալի է, թե ինչպես Կոժուխի դեմքը քարանում է, և ճաքած երկաթի ձայնով սեղմված ծնոտների միջից լսելի է դառնում.

— Շտաբից անմիջապես գնդացիրը ճեղքվածքի մոտ տարեք. կանչեցեք շտաբի բոլոր ծառայողներին, ատրպետքերի մարդկանց՝ կազակներին ետ սեղմեցեք դեպի ատրպետքը։ Մի էսկադրոն աջ թևից...

— Էստե՛մ եմ...

Համհարզը անհետացավ խավարի մեջ։ Նույն ճիչերը, պայթյունները, հառաչանքները, դուփյուռը։ Կոժուխը վազ տվեց։ Աջ ու ձախ բոնկում են հրացանների կրակի լեզվակները, իսկ մի հիսուն սաժեն ատաղձուկյան մութն է։ Այդտեղ են ճեղքել կազակները, իսկ զինվորները չեն փախել, այլ նահանջել են, զանազան տեղերում թաքնվել և պատասխանում են կրակին։ Խավարի մեջ կարելի է տարբերել վազելով առաջ անցնող մարդկանց խմբեր, որ ավելի և ավելի մոտենում, մոտենում են... Նորից պառկում և այնտեղից սկսում են կրակի լեզվակներ ցցվել խավարի մեջ, իսկ զինվորները կրակում են այդ լեզվակների վրա։

Մեքենի շտաբի գնդացիրները։ Կոժուխը հրամայեց վերջացնել կրակելը և կրակ տալ մի մեծ ֆայ։ Նստեց գնդացրի մոտ և խկույն զգաց իրեն ինչպես ձուկը ջրում։ Աջ ու ձախ՝ տրաքտրաքոց, բոնկող լեզվակներ։ Թշնամու զորաշղթան, հենց որ զինվորները դադարեցին կրակել, հարձակվեց՝ ուռ-ռա՛, արդեն մոտ են, արդեն կարելի է զանազանել ամեն մի կերպարանք, որոնք կոտցած, հրացանը ձեռքերին պատրաստ առաջ են վազում։

Կոժուխը հրամայեց.

— Կրակեցե՛ք, խումբ-խումբ։

Եվ գնդացիրն էլ գործի դրեց.

Դոռ՛-ռռ՛-դոռ՛-դոռ՛...

Եվ սև թղթի տնակների պես սկսեցին վայր գլորվել մարդկանց մութ խմբերը։ Զորաշղթան կանգ առավ. ետ-ետ գնաց և փոխուստ տվեց նոսրանալով։ Դարձյալ անթափանցելի խավար։ Սակավ են լսվում հրացանի ձայներ, և հեռաստվեռան անհալով լսելի դարձավ գետի ոռմոտը։

Իսկ հետը, խորքում նույնպես սկսեցին դադարել հրացանի ձայնները, ճիչերը. կազակները, օգնություն չստանալով, հետզհետե ցրվեցին, թաղնում էին ձիերը, մտնում սայլերի տակ, թաքնվում էին ու խրճիթներում։ Մի տասը մարդ կենդանի բռնեցին. նրանց արի անցրին բնարանները ճեղքելով, որից ապաստի հոտ էր գալիս։

Արշալույսը մի փոքր գորշացավ. զինվորների մի խումբ դեպի գերեզմանատուն տարան ծերբակալված մի հրամանատարի։ Վերապարձան առանց նրան։

Գարը քարձրացավ և լուսավորեց գիակների անշարժ բեկ-բեկ շղթան, կարծես ալիքների անհավասար տեղատվություն էր թողել։ Տեղ-տեղ ուղղակի կիսոված էին ոչ հեռու ապաստեղից, ուր գիշերը Կոժուխն էր։ Կազակները պատգամավոր ուղարկեցին, Կոժուխը թույլ տվեց դիակները հավաքել, ապրատես տաք արեից կփտեին, կվարակվեին։

Հավաքեցին, և նորից սկսեցին խառել ֆինգանները. գնդամարդիկները գրերդյունից նորից ցնցվում են տարփաստանն ու հրկինքը, և ծանր արձագանք է տալիս գրեթե և ուղեղի մեջ։

Գնդապետ ոգի մեջ տարաքում են ատրճանի վառոդները։ Կեն-

դանի մնացածները նստած են կամ ման են գալիս բերաններ-ը բաց. ականջների համար ավելի թեթև է այդպես, իսկ մեռածներն անշարժ սպասում են, թե երբ իրենց թիկունքը կտանեն։

Հալվում են փամփուշտները. դատարկվում են ռումբերի արկղերը։ Կոժուխը չի շարժվում տեղից. ետ մնացած զորասյուները դեռ չեն երևում։ Ժողով է հրավիրվում, չի ուզում իր վրա առնել պատասխանատվությունը, եթե մնան, բոլորը կոչնչանան, եթե առաջ անցնեն — հետամնաց զորասյուները կոչնչանան։

35

Թիկունքի խորքում, ուր անվերջ տափաստանում սայլեր, ձիեր, ծերեր, մանուկներ, վիրավորներ, աղմուկ և խոսակցություն է, վերջալույսի կապույտն է սփռվում։ Սփռվում է վերջալույսի և խարույկների ծխի կապույտը, ինչպես ամեն երեկո։

Հետո ինչ, որ 10—15 վերստ հեռու է, տափաստանի այն ծայրում, գետինը մարդու ոտքի տակ ամեն բոպե ծանր ցնցվում է այստեղ հեռավոր դղրդյունից. հենց այժմ էլ, բայց ոչ ոք չի նկատում, ընտելացել են։

Սփռվում է վերջալույսի կապույտը, ծխի կապույտը, հեռու անտառի կապույտը, իսկ անտառի և սայլերի միջև՝ ամայի, գաղտուկ դաշտի կապույտը։

Խոսակցություն, զրնգոց, անասունների ձայներ, դույլերի ձայներ, մանուկների լաց և խարույկների անհամար կարմիր բծեր։

Այդ տնային, այդ խաղաղ անկյունի մեջ հանկարծ ներս սպրդեց անտառում ծնված մի օտար, անսովոր, տարօրինակ բան։

Նախ լսելի եղավ՝ հատ-հատ-ա՜-ա՜-ա՜-ա՜... այնտեղից՝ մութ անտառից, գորշ վերջալույսից՝ ա՜-ա՜-ա՜-ա՜...

Հետո անտառից անջատվելով, սեին տալով առաջ եկան մութ խմբեր, մեկը, մյուսը, երրորդը... Սև ստվերները շատացան, ձուլվեցին անտառի ամբողջ երկայնությամբ և փոխվեցին մի անընդհատ երերվող շերտի, որ գլորվում էր դեպի բանակը, և նրա հետ միասին զորեղանալով, գլորվում էր մահագույժ թախիծով՝ լի-ա՜-ա՜-ա՜ ա՜...

Բոլոր գլուխները, թե մարդկանց և թե անասունների, դեպի անտառը դարձան, որտեղից դեպի բանակն էր գլորվում այն ծուռումուռ շերտը, մերթ ընդ մերթ առկայծող նեղ ցոլքեր արտացոլելով։

Եվ բոլորը լսեցին — գետնի արգանդը լցվեց ծիու դոփյունով, և թնդանոթների հեռավոր հարվածների ցնցումները խլացան։

... Ա՜-ա՜-ա՜-ա՜...

Անիվների, լծափայտերի, խարույկների միջից դատապարտյալների աղաղակներ հնչեցին.

— Կազակնե՜ր... կազակնե՜ր... կա-զակ-նե՜-ր...

Ձիերը դադարեցին ծամել, ականջները խլրեցին, հաճկարծ երևան եկած շները սայլերի տակ կուչ եկան։

Ոչ ոք չէր փախչում, փրկություն չէր փնտրում. ամենքն էլ անթարթ նայում էին խտացած վերջալույսի մեջ գլորվող սև լավային։

Խուլ դոփյունով լի այդ մեծ լռությունը մի մոր ձայն կտրեց։ Նա վերցրեց իր զավակին, միակ կենդանի մնացած զավակին և, կրծքին սեղմելով, դոփյունի մեջ աճող լավային ընդառաջ վազեց։

— Մա-ա՜հ... Մա-ա՜հ... Մա-ա՜հ...

Այդ ճիչը վարակեց տասնյակ հազարավոր մարդկանց.

— Մա՜հ... Մա-ա՜հ...

Բոլորը, բոլորը, մի-մի բան ձեռքներն առնելով — փայտ, խոտ, լծաղեղ, բաճկոն, ձող, վիրավորներն իրենց ցուպերը, կատաղի ղայրույթով մահվան դեմ սլացան։

— Մա-ա՜հ... Մա-ա՜հ...

Երեխաները մոր փեշերից բռնած վազում էին և բարակ ձայներով ծվում.

— Մա-ա՜հ... Մա-ա՜հ...

Հեծյալ կազակները, իրենց անգութ և փայլփլող սրերը պինդ բռնած, գիշերային թանձր խավարի մեջ նշմարեցին հսկայական օվկիանոսի իրենց դեմ գրող տվող հետևակ զորքի տարուբերվող անհամար շարքերը, անհամար բարձ-

բացված հրացաններ, սև ծածանվող դրոշակներ և անվերջ կոհակներ տվող գազանային գոռոց՝ մա-ա՜հ...

Բոլորովին ակամա, առանց հրամանի, սանձերը լարելի պես ձգվեցին, ձիերը հանկարծահաս, գլուխները շուռուռմուռ տալով և քամակի վրա նստելով, կանգ առան։ Կազակները լռեցին և, ասպանդակների վրա բարձրանալով, սուր աչքով դիտում էին առաջ գլորվող սև շարքերը։ Նրանք գիտեին այդ դևերի սովորությունը. առանց մի հրացան արձակելու կուրծք կրծքի հասնել և սվիններով սկսել իրենց դիվային աշխատանքը։ Այդպես էր սկսած այն օրից, երբ նրանք երևացին սարերից, մինչև վերջին գիշերվա գրոհը, երբ նրանք լուռ ու մունջ գլուխ հանեցին ամրություններում — շատ կազակներ ընկան հարազատ տափաստանում։

Իսկ այժմ սայլերի ետևից, անթիվ խարույկների ետևից, ուր կազակները մտադիր էին հանդիպելու անզեն ծերերի և կանանց անօգնական խուժանի և թիկունքից տագնապի հրդեհ գցել թշնամու բոլոր զորամասերի մեջ, շարունակ նորանոր զորամասեր էին դուրս գալիս, և սևացած գիշերը զարհուրանքով էր լցնում ահարկու գոռոցը.

— Մա-ա՜հ...

Երբ տեսան, որ դա վերջ ու վախճան չունի, կազակները շուռ տվին, մտրակեցին ձիերին, և թփերի ու ծառերի ոստերը սկսեցին ճռթճռթալ։

Փախչողների առաջին շարքերը, մահվան քրտինքը դեմքերին, կանգնեցին. նրանց առաջ համր սեին էր տալիս ամայի անտառը։

36

Չորրորդ օրն է, որտեղում են թնդանոթները, իսկ ընտեսները հաղորդեցին — Մայկոպից նոր գեներալ է եկել թշնամու մոտ հեծելազորքով, հետևակ և թնդանոթաձիգ զորքով։ Խորհրդակցության ժամանակ վճռեցին այդ գիշեր առաջ անցնել՝ առանց սպասելու հետամնաց զորայուններին։

Կոժուխը հրաման է տալիս, երեկոյան դեմ աստիճանաբար ընդհատել հրացանաձգությունը, որպեսզի թշնամուն հանգստացնեն։ Թնդանոթները խնամքով նշան առնեն թշնամու ամրությունները և նշանն ամրացնեն, իսկ ռմբակոծումը գիշերով բոլորովին դադարեցնել։ Գնդերը, որքան կարելի է, զորաշղթաներով մոտեցնել թշնամու ամրություններին և դիրք բռնել, բայց այնպես զգույշ, որ թշնամին չնկատի։ Զորամասերի բոլոր տեղափոխությունները վերջացնել գիշերվա ժամը մեկ և կեսին, երկուսից քառորդ պակաս բոլոր պատրաստի թնդանոթներից տասական ռումբ արձակել, վերջին ռումբի հետ գիշերվա ժամը երկուսին ընդհանուր գրոհ՝ գնդերը ներս խուժեն թշնամու ամրությունները։ Հեծելազունդը պատրաստ կանգնած լինի պահեստում օգնություն հասցնելու և թշնամուն հետապնդելու համար։

Սև, ցածր, վիթխարի ամպեր եկան և անշարժ պատեցին տափաստանը։ Թնդանոթները երկու կողմից էլ տարօրինակ կերպով լռեցին. լռեցին նաև հրացանները, և լսելի եղավ գետի աղմուկը։

Կոժուխը ականջ դրեց այդ աղմուկին. վատ նշան է։ Ոչ մի հրացանի ձայն, իսկ անցյալ ցերեկներն ու գիշերները թնդանոթների և հրացանների կրակը չէր լռում։ Թշնամին էլ մտադիր չէ՞ արդյոք նույնը անել, ինչ որ ինքը. այն ժամանակ երկու գրոհ իրար կհանդիպեն, անակնկալության վայրկյանը կանցնի, և երկու գրոհն էլ իրար կփշրեն։

— Ընկե՛ր Կոժուխ։

Խրճիթ ներս մտավ համհարզը. նրա ետևից մտան երկու զինվոր հրացաններով, իսկ նրանց միջև մի անզեն, գունատ կարճահասակ զինվոր։

— Ի՞նչ կա։

— Թշնամու կողմից, գեներալ Պոկրովսկուց նամակ կա։

Կոժուխը բևեռեց զինվորի վրա իր մանր, կկոցած աչքերը, իսկ նա, հանգստացած շունչ քաշելով, ձեռքը կոխեց ծոցը և սկսեց փնտրել։

— Էնպես որ ես գերի եմ... Մերոնք նահանջում են, իսկ մենք յոթ հոգի գերի ընկանք... Մեկելներին շարշարեցին, սպանեցին...

Նա մի բոպե լռեց. լսվում է գետի աղմուկը. իսկ պատուհանների ետևը խավար է։

— Ա՛յ նամակը. գեներալ Պոկրովսկին... Շատ թունդ հիշոց էր տալիս ինձ...

Եվ ամաչելով ավելացրեց.

— Ձեզ էլ, ընկե՛ր, մայր էր հայհոյում։ Ասում էր, ես նրա այսպեսն ու այնպեսը, տուր նրան այս նամակը։

Կոժուխի աչքերում խաղացող կայծերը շտապ-խորամանկ ու ինքնաբավական սահում էին գեներալ Պոկրովսկու ձեռքով գրած տողերի վրայով. «...Դու, գարշելի՛, քո մե՛րը... խայտառակեցիր ռուս զորքի և նավատորմի բոլոր սպաներին, որ հանդգնեցիր բոլշևիկների, գողերի, բոկոտների շարքերն անցնել. ի նկատի ունեցիր, սրիկա, որ քո և քո բոկոտն ընկերների վերջը հասել է, դու այլևս տեղիցդ չես կարող շարժվել, որովհետև շրջապատված ես իմ և գեներալ Հեյմանի զորքերով. մենք քեզ, սրիկայիդ, ամուր ճանկերի մեջ ենք առել և ոչ մի պայմանով բաց չենք թողնի։ Եթե ուզում ես գթության արժանանալ, այսինքն միայն կալանավորման ենթարկվել, այն ժամանակ ես հրամայում եմ քեզ կատարել հետևյալ հրամանս, այսօր ևեթ բոլոր զենքերը կհանձնես Բելորեչենսկի կայարանում, իսկ զինաթափ եղած հրոսակներդ 4—5 վերստ ետ կտանես կայարանից դեպի արևմուտք. երբ որ այդ կատարես, անմիջապես կհաղորդես ինձ, երկաթուղու չորրորդ տնակում»։

Կոժուխը նայեց ժամացույցին և պատուհանների խավարին։ Մեկից տասը րոպե անց է. «Ահա թե ինչու են կազակները դադարել կրակելուց, գեներալը պատասխանի է սպասում»։ Հրամանատարներից ամեն րոպե տեղեկություններ էին հասցնում։

— Բոլոր զորամասերը բարեհաջող կերպով հասել են թշնամու ամրություններին և դիրք բռնել։

...«Շատ բարի... շատ բարի»,— ասում էր ինքն իրեն Կոժուխը և լուռ, հանգիստ, քարացած նայում էր նրանց, աչքերը կկոցած։

Պատուհանի ետև՝ խավարի և գետի աղմուկի մեջ, ձիու ստեպ քայլերի ձայն լսվեց։ Կոժուխի սիրտը բաբախեց. «Երևի էլի մի բան է պատահել... Քառորդ ժամ է մնացել»... Լսվում է, ինչպես մեկը վայր իջավ փռնչացող ձիուց։

— Ընկեր Կոժուխ,— հազիվ շունչ քաշելով ասաց մի կուրանցի, երեսի քրտինքը սրբելով,— երկրորդ զորասյունը մոտենում է...

Անօրինակ շլացուցիչ լույսով լուսավորվեցին թե գիշերը, թե թշնամու դիրքերը, թե գեներալ Պոկրովսկին և նրա նամակը, թե հեռավոր Տաճկաստանը, որտեղ նրա գնդացիրը հնձում էր հազարավորներին, իսկ նա, Կոժուխը, հազարավոր մահերի մեջ կենդանի մնաց, կենդանի մնաց, որպեսզի ազատի, փրկի ոչ միայն իրայիններին, այլև իրեն հետևող հազարավոր անօգնականներին, որոնց կազակների ձեռքն ընկնել էր վիճակված։

Երկու սև ձի, առանց որևէ բան տեսնելու, գիշերով սլանում էին։ Ինչ-որ զորքի սև շարքեր մտնում էին ստանիցան։

Կոժուխը ցատկեց և մտավ մի հարուստ կազակի վառ լուսավորված տուն։

Սեղանի մոտ իր հաղթանդամ մարմնով կանգնած էր և առանց թեքվելու բաժակով թունդ թեյ էր խմում Սմոլոկուրովը. նրա սև միրուքը գեղեցիկ կերպով աչքի էր ընկնում նավաստու նոր զգեստի վրա։

— Բարև, բարեկա՛մս,— ասաց նա թավշի նման, խրոխտ բասով, վերից վար նայելով ամենևին չցանկանալով դրանով վիրավորել Կոժուխին,— թեյ ուզո՞ւմ ես։

Կոժուխն ասաց.

— Տասը րոպեից ես հարձակվելու եմ։ Զորամասերը դիրք են բռնել անմիջապես թշնամու ամրությունների առաջ։ Թնդանոթների նշանը բռնած է։ Երկրորդ զորասյունը մոտեցավ երկու թևերին, և հաղթանակն ապահովված է։

— Չեմ տա։

Կոժուխը սեղմեց ծնոտները և ասաց

— Ինչո՞ւ։

— Որովհետև չեն հասել,— բարեսիրտ և ուրախ ասաց Սմոլոկուրովը և վերևից հեգնական հայացք գցեց կարճահասակ, ցնցոտիներով մարդու վրա։

— Երկրորդ զորասյունը մտնում է ստանիցան, այս րոպեին ինքս տեսա։

— Չեմ տա։

— Ինչո՞ւ։

— Ինչո՞ւ, ինչո՞ւ,— խրոխտ, գեղեցիկ բասով ասաց

նա,— որովհետև հոգնած են, պետք է հանգստանան։ Նո՞ր հասնելիս, չե՞ս հասկանում։

Մի միտք, լարված զսպանակի պես, բոլոր զգացումները դուրս մղեց Կոժուխի մեջ. «Եթե հաղթեմ, միայնակ կհաղթեմ»։

Եվ Հանգիստ ասաց.

— Թե զոնե իրրև պահեստ մոտեցրու կայարանին, իսկ ես կվերցնեմ իմ պահեստի զորքը և կզորեղացնեմ գրոհ տվող մասերը։

— Ձեմ տա։ Խոսքս սուրբ է, ինքդ գիտես։

Նա մի անկյունից մյուսն անցավ, և նրա ամբողջ հաղթանդամ մարմինը և քիչ առաջ այնպես բարեսիրտ դեմքը եղան համառություն էր արտահայտում. այժմ նրան մահակով էլ չես համոզի։ Կոժուխն այդ հասկանում էր և ասաց հանդարտորեն.

— Գնանք։

— Մի րոպե,— վեր կացավ շտաբի գլխավորը և, մոտենալով Սմոլոկուրովին, ասաց միաժամանակ մեղմ և ծանրակշիռ.

— Երեմեյ Ալեքսեյիչ, կայարանին կարելի է մոտեցնել, միևնույն է, պահեստումն են լինելու։

Իսկ այդ խոսքերի միտքն էր՝ «Եթե Կոժուխին ջարդեն, մեզ բոլորիս կկոտորեն»։

— Իսկապես... Ես, այսպես ասած... Ոչինչ դեմ չունեմ... Ի՞նչ արած. որ մասը եկել է՝ վերցրու։

Սմոլկուրովին ոչնչով չէր կարելի տեղահան անել, եթե նա դեմ էր ընկնում. բայց մի անակնկալ, կողմնակի թեթև ճընշումից առաջ նա շփոթված տեղի էր տալիս։

Սև մորուքով դեմքը բարեմիտ կակղեց։ Նա իր վիթխարի թաթով խփեց կարճահասակ մարդուն.

— Է՛, բարեկա՛մ, բանն ինչպե՞ս է, հը՞։ Մենք, տիրելի՛ս, ծովի գայլեր ենք, ծովի վրա մենք ամեն բան կարող ենք. նույնիսկ սատանին ոտքից կախ կտանք, իսկ ցամաքի վրա խելքներս բան չի կտրում։

Եվ քրքջաց, ցույց տալով սև բեղերի տակից ձյունի պես սպիտակ ատամները։

— Թեյ ուզո՞ւմ ես։

— Ընկե՛ր Կոժուխ, բարեկամաբար ասաց շտաբի գլխավորը,— իսկույն հրաման կգրեմ, և զորասյունը դեպի կայարան կգնա որպես պահեստի զորամաս ձեզ համար։

Իսկ խոսքերի միտքն այս էր՝ «Է՛, եղբա՛յր, տեսա՞ր, որ առանց մեր օգնության յոլա չգնացիր»...

Կոժուխը դուրս եկավ ձիերի մոտ և խավարի մեջ ասաց համհարզին։

— Դուք մնացեք։ Զորասյունի հետ միասին կհասնեք կայարան և կհաղորդեք ինձ։ Դրանց խոսքին հավատալ չի լինի, կարող են խաբել։

Զինվորները երկար շարքերով պառկած էին կոշտ գետնի վրա, ճնշված գիշերվա ծանր մթության տակ։ Հազարավոր գազանային սուր աչքեր լցնում էին խավարը, բայց կապտագույն ամրությունների ամեն ինչ անշարժ է և համր։ Աղմկում էր գետը։

Զինվորները ժամացույց չունեին, բայց ամեն մեկը լարված էր սպասելուց։ Գիշերը, կարծես, ծանր էր և անշարժ, բայց ամեն մեկը զգում էր, թե ինչպես դանդաղ և անդադար մոտենում էր ժամը երկուսը։ Անընդհատ վազող ջրի աղմուկի մեջ հոսում էր ժամանակը։

Ու թեև հենց այդ րոպեին բոլորը հենց դրան էին սպասում, հանկարծ բոլորովին անակնկալ կերպով գիշերը ճեղքվեց, և ճեղքի մեջ սկսեցին ամպերի բոսորագույն քուլաները կրակոտ թրթռալ։ Երեսուն թնդանոթ անդուլ դղրդացին։ Իսկ գիշերով կապտակների անտեսանելի ամրությունները հշմարվում էին որպես շրապնելների շլացուցիչ պայթյուններից բռնկվող մի մանյակ, որոնց կրկնակի ճարճատյունը նույնպես ցույց էր տալիս այն աներևույթ գալարվող գիծը, որտեղ մարդիկ մեռնում էին։

«Դե, հերի՛ք է... Վե՛ր»,— տառապալից մտածում էին կազակները, կպչելով ամրությունների չոր պատերին, ամեն րոպե սպասելով, որ կգլորեն փայլփլել սև ամպերի բոսորագույն եզրերը, կմիանա ճեղքված գիշերը, և կարելի կլինի հանգստանալ որոտացող դղրդյունից։ Բայց դեռ շարունակվում էր բոսորագույն թրթռացը. հողի, կրծքի ուղիղի

մեջ ծանր արձագանք տվող նույն գոռյունը, և այս ու այնտեղ կծկվող մարդկանց հեծեծանքը։

Եվ նույնպես անակնկալ կերպով խավարը փակվեց, և վայրկենապես տիրող լռության մեջ հանգան թե բոսորագույն ամպերը և թե թնդանոթների անմարդկային գոռյունը։ Ամրությունների գլխին մարդկանց կերպարանքների մի սև ցանկապատ բարձրացավ և մի նոր, կենդանի, գազանային գոչյուն հնչեց։ Կազակները փորձեցին փախչել ամրություններից, ամենևին ախորժակ չունեին քաջքերի հետ գործ ունենալ, բայց դարձյալ ուշացան, ամրությունները մեռածներով լցվեցին։ Այն ժամանակ նրանք արիաբար երես առ երես շուռ եկան և սկսեցին իրար կոտորել։

Այո՛, դիվային ուժ է. 15 վերստ քշեցին և 15 վերստ վազեցին մեկ ու կես ժամվա ընթացքում։

Գեներալ Պոկրովսկին հավաքեց կազակ հարյուրյակների, պլաստունների, սպայական գումարտակների մնացորդները, որ ուժասպառ էին եղել և ոչինչ չէին հասկանում, և տարավ դեպի Եկատերինոդար, բոլորովին մաքրելով բոկոտների առաջ ուղին։

37

Ամբողջ ուժը լարված, լայն քայլերով խուլ դղրդացնելով դետինը, դեմքերը, վառոդից սևացած, փոշոտ հոնքերը կիտած, խուռն շարքերով առաջ են գնում։ Իսկ հոնքերի տակից սուր փայլատակում են մանրիկ բիբերի կետերը, որոնք անթարթ հառած են ամայի տափաստանի տոթակեզ դողդոջուն եզերքին։

Ծանր ու բարակ դղրդում են շտապող թնդանոթները։ Փոշու ամպերում ձիերն են անհամբեր շարժում իրենց գլուխները... Ռմբաձիգները հեռավոր կապույտ գծից աչքերը չեն պոկում։

Սայլերն անվերջ գնում են այդ անսահման անընդհատ աղմուկի մեջ։ Ուրիշների սայլերի մոտով շուտափույթ քայլում են ոտաբոբիկ՝ փոշի հանելով, միայնակ մայրերը։ Սևացած դեմքերի վրա չոր փայլով փայլում են արտասվազուրկ

աչքերը, որ նույնպես չեն պոկվում միևնույն հեռավոր տափաստանի կապույտ գծից։

Շտապող բազմությունից ետ չմնալով գնում են վիրավորները։ Որը կաղում կեղտոտ փաթաթանով կապած ոտով, որը ուսերը բարձրացրած, լայն տեղափոխում է անթացուպերը, որը ուժասպառ վտիտ ձեռքերով բռնել է սայլի կողքից, և ամենքն աչքերն անթարթ հառել են հեռավոր կապույտին։

Տասնյակ հազարավոր բորբոքված աչքեր լարված իրենց առաջն են նայում. այնտեղ երջանկություն է, այնտեղ տանջանքների, հոգնածության վերջն է։

Այրում է Կուբանի հարազատ արևը։

Չեն լսվում ոչ երգեր, ոչ ձայներ, ոչ գրամոֆոն։ Եվ այդ բոլորը, և շտապ բարձրացող փոշու ամպերում լսվող անվերջ ճռռոցը, և սմբակների խուլ ձայնը, և պատառոտված շարքերի խիտ քայլերը, և ճանճերի վժվժացող բազմությունը՝ այդ բոլորը տասնյակ վերստ արագահոս հեղեղի նման հոսում է դեպի կապույտ, խորհրդավոր, հրապուրիչ հեռուն։ Ահա կբացվի այդ հեռուն, և սիրտներն ուրախացած կբացականչեն՝ մերո՞նք են։

Բայց ինչքան էլ գնում են, ինչքան էլ ստանիցաներ, ագարակներ, աուլներ են անցնում, միշտ նույնն է՝ կապուտակ հեռուն ավելի ու ավելի ետ է գնում, միշտ նույն խորհրդավոր, միշտ նույն անհասանելի։ Եվ ամեն տեղ միշտ նույնն են լսում.

— Արդեն անցան. երկու օր առաջ այստեղ էին, բայց հանկարծ շտապեցին, պատրաստվեցին ու գնացին։

Այո՛, ամեն ինչ ասում է, որ քիչ առաջ նրանք այստեղ են եղել, որոնց համար անցել էին գերմանական զրահանավի շրապնելների տակից, կռվել էին վրացիների հետ, կիրճերում թողել էին իրենց երեխաներին, կատաղի կռիվ մղել կազակների հետ, բայց անընդհատ անհասանելի ետ է քաշվում կապուտակ հեռուն։

Կոժուխը նիհարած, կաշին սևացած, մռայլ առաջ է գնում տարանտասով և, ինչպես ամենքը, դիշեր, ցերեկ իր կկոցած մոխրագույն աչքերը չի հեռացնում հեռավոր շրջագծից։ Նրա համար էլ այդ շրջագիծը խորհրդավոր և անհաս-

կանալի կերպով չի բացվում։ Մնոտները ամուր սեղմված են։

Մեկը մյուսի ետևից ետ են մնում ստանիցաները, ագարակները, օր օրի ետևից, նվաղած։

Կազակ կանայք դիմավորում են, խորը գլուխ են տալիս, իսկ սիրալիր աչքերում ատելություն կա թաքնված։ Բայց երբ հեռանում են, զարմացած նայում են նրանց ետևից. ոչ ոքի չսպանեցին, չկողոպտեցին, բայց զզվելի գազաններ են։

Գիշերելիս Կոժուխին զեկուցում են — նույնն են կրկնում. կազակներն առանց մի հրացան արձակելու ճանապարհ են բանում. ոչ ցերեկը, ոչ գիշերը ոչ մի հարձակում զորասյունի վրա, իսկ ետեում, առանց վերջապահներին ձեռք տալու, նորից միանում են։

— Շատ լավ... Ատամները փշրել են...— ասում է Կոժուխը և խլերը խաղացնում։

Հրաման է տալիս.

— Ձիավորներով բոլոր սայլախմբերին իմաց տվեք, որ ոչ ոք կանգ չառնի. շարունակ առաջ գնալ. գիշերը միայն երեք ժամ հանգստանալ։

Եվ դարձյալ լարված ճռճռում են սայլախմբերը, չարատանջ ձիերը ձիգ են տալիս թոկի լծափոկերը, ծանր դղրդում են թնդանոթները։ Եվ միջօրյա տոթաշունչ փոշու մեջ, և աստղաղարդ գիշերվա խավարում, և վաղորդյան դեռ չարթնացած արշալույսին ծանր ու անվերջ թնդյուն է անցնում Կուբանի տափաստաններում։

Կոժուխին զեկուցում են.

— Ձիերը սատկում են, զինվորներից կաղ մնացողներ կան։

Իսկ նա սեղմած ատամների միջից ասում է.

— Սայլերը դեն գցել, բեռը մյուս սայլերի վրա բարձել. հավաքել ետ մնացողներին։ Շտապել, շտապել, շտապել։

Դարձյալ տասնյակ հազարավոր աչքեր չեն պոկվում հեռավոր գծից, որ գիշեր-ցերեկ շրջափակում է հունձից հետո կոշտ դեզված տափաստանները։ Առաջվա պես ստանիցաներում, ագարակներում ատելությունը թաքցրած, սիրալիր ասում են կազակ կանայք.

— Եկան ու գնացին. երեկ էին այստեղ։

Նայում են վշտալի, և նույն պատկերն են տեսնում — հանգած խարույկներ, թափթփված խոտ, գոմաղբ։

Հանկարծ բոլոր սայլախմբերում, զորամասերում, կանանց և երեխաների մեջ բերանից բերան անցավ։

— Կամուրջները քանդում են... Գնում են և իրենց ետևից կամուրջները քանդում են...

Եվ Գարպինո տատին, սարսափն աչքերում սառած, շրթունքները չորացած, շշնջում է.

— Կամուրջները խորտակում են։ Գնում են և իրենց ետևից կամուրջները քանդում։

Զինվորներն էլ՝ ոսկրացած ձեռներով հրացանները բռնած, խուլ ասում են.

— Կամուրջները քանդում են... Հեռանում են մեզանից, կամուրջները քանդում են...

Երբ զորասյան գլուխը հասնում է մի գետակի, ձորակի կամ ճահճուտի, բոլորը տեսնում են՝ տախտակամածը քանդած, սևացած ատամների պես ցցված են ճեղքված ցիցերը, և ճանապարհը ընդհատվում է անհուսալի կերպով։

Իսկ Կոժուխը, գանգը աչքերի վրա տված՝ հրամայում է.

— Վերանորոգել կամուրջները, ուղղել տախտակամածները։ Մի առանձին մաս կազմակերպել հմուտ մարդկանցից, կացիններով. թող ձիաներով առաջ գնան. բնակիչներից առնել բոլոր գերանները, տախտակները, մի տեղ հավաքել։

Կացինները թրխկացին, սպիտակ տաշեղները սկսեցին թռչել արևից շողշողալով։ Եվ ճռճռացող, շարժուն նեղ տախտակամածի վրայով նորից հասնեց հազարավոր ամբոխը, անվերջ սայլերը, ծանր թնդանոթները. զգույշ խորդում են ձիերը, վախով խեթ-խեթ ջրին նայելով։

Անվերջ հասում է մարդկային հոսանքը, և առաջվա պես բոլորի աչքերը դեպի երկինքը տափաստանից բաժանող անհասանելի գիծն են ուղղված։

Կոժուխը հալաքում է հրամանատարներին և ասում է.

— Ընկերնե՛ր, մերոնք փախչում են մեզնից, ինչքան որ ուժ ունեն։

Մասդ պատասխանում են.

— Ոչինչ չենք հասկանում։

— Փախչում են և կամուրջները քանդում։ Երկար չենք դիմանա. ձիերը տասնյակներով սատկում են. մարդիկ ետ են մնում, և կազակները ետ մնացողներին բոլորին կոտորում են։ Կազակները, քանի որ մենք դաս տվինք նրանց, վախից ճանապարհը բանում են, գեներալները ետ են տանում իրենց զորամասերը։ Բայց միևնույն է, մենք երկաթի օղակի մեջ ենք, և եթե այսպես երկար շարունակվի՝ մենք կխեղդվենք. փամփուշտները վերջանում են, ռումբերը նույնպես։ Հարկավոր է ելք բանալ։

Նա նայեց իր մանր, կկոցած սուր աչքերով։ Ամենքը լուռ էին։

Այն ժամանակ Կոժուխը ատամների միջով հատ-հատ արտասանեց.

— Հարկավոր է ելք բանալ։ Եթե հեծելագունդը առաջ ուղարկենք, մեր ձիերը վատ են, չեն դիմանա, կազակները կկոտորեն։ Այն ժամանակ կազակները սիրտ կառնեն, ամեն կողմից կթափվեն մեզ վրա։ Պետք է ուրիշ ճար անել։ Հարկավոր է ճեղքել անցնել և իմաց տալ։

Դարձյալ լռություն։ Կոժուխն ասաց.

— Ո՞վ է ցանկանում։

Վեր կացավ մի երիտասարդ։

— Ընկեր Սելիվանով, վերցրեք երկու զինվոր, վերցրեք մեքենան և հայդա։ Ինչ ուզում է լինի, բայց ճղեք-անցեք։ Ասացեք նրանց, որ մենք ենք։ Ի՞նչ են փախչում։ Մեր մա՞հն են ուզում, թե ինչ։

Մի ժամ հետո, շտաբի խրճիթի մոտ արևի շեղ ճառագայթների մեջ մի ավտոմոբիլ էր կանգնած։ Միջից երկու գնդացիր էր նայում՝ մեկը առաջից, մյուսը՝ ետևից։ Վարորդը, յուղոտված դիմնաստյորկայով, ինչպես և բոլոր վարորդները, մտազբաղ, լուրջ, ծխախոտը բերանից բաց չթողնելով աշխատում էր ավտոմոբիլի մոտ, ստուգումը վերջացնում էր։ Սելիվանովը և երկու զինվոր՝ ջահել և անհոգ հայացքներով, սակայն աչքերի խորքում լարում է թաքնված։

Խռռացնելով տեղից շարժվեց, օդը խառնեց, փոշի բարձրացրեց, փորփրեց, փոքրացավ, փոքրացավ, մի կետ դարձավ և անհետացավ։

Իսկ անվերջ բազմությունը, անվերջ սայլախմբերն ու անվերջ ձիերը հոսում էին, առանց մի բան գիտենալու ավտոմոբիլի մասին, հոսում էին անդուլ և մռայլ, մերթ հուսահատ դիտելով կապուտակ հեռուն։

38

Դիմացը մրրիկ է շաչում։ Կողքերից խրճիթներ, բարդիներ, ցանկապատեր և հեռավոր եկեղեցիներն են թռչում։ Փողոցներում, տափաստանում, ստանիցաներում, ճանապարհին մարդիկ, ձիեր, անասուններ դեռ զարմանք չարտահայտած, էլ ոչինչ չեն տեսնում, բացի խճուղու վրա կատաղի պտույտներ տվող փոշուց, ծառերից պոկված տերևներից և օդ բարձրացրած հարդից։

Կազակ կանայք գլուխները շարժում են։

— Երևի կատաղել է։ Տեսնենք ո՞ւմն է։

Կազակների ձիավոր պահակները հաճախ բաց են թողնում սլացող ավտոմոբիլը. առաջին վայրկյանին կարծում են, թե իրենցն է, ուրիշ ո՞վ սիրտ կաներ նրանց խորքը մրտնել։ Երբեմն գլխի են ընկնում, կրակում են մեկ, երկու, երեք անգամ. բայց որտեղ... միայն օդն է ծակում և կորչում։

Եվ այդպես մեկ վերստ մյուսի ետևից, տասնյակ տասնյակի ետևից սլանում է սուլոց-շաչյունի մեջ։ Վայ է որ անիվը կոտրվի կամ մի բան փչանա — կորած են։ Առաջ և ետ լարված նայում են երկու գնդացիրը և լարված դիտում են դիմացը ուղիղ չորս զույգ աչքեր։

Խելագարի պես հևալով և սուր ոռնալով, դղրդալով սլանում էր մեքենան։ Սոսկալի էր, երբ մոտենում էին գետին, իսկ այնտեղ միայն հատ-հատ ատամների պես ճեղքված ցցերն են ջրից դուրս նայում։ Նրանք այդ ժամանակ կողմնակի ահագին պտույտ էին գործում, մինչև որ մի տեղ հանդիպում էին բնակիչների գերաններից շինած ժամանակավոր կամրջին։

Երեկոյան դեմ հեռու սպիտակին տվեց մի մեծ ստանիցայի զանգաթատուն։ Արագ մեծանում էին այգիները, բարդիները, ընդառաջ էին վազում սպիտակ տնակները։

Զինվորը հանկարծ ճչաց, դարձնելով իր այլայլված դեմքը.

— Մերո՞նք են...

— Ո՞ւր, ո՞ւր են, ի՞նչ ես ասում...

Բայց նույնիսկ սլացող մեքենայի գոռոցն անգամ անկարող էր ծածկել, խլացնել այդ ճիչը.

— Մերո՞նք են, մերո՞նք են... Ահա՛...

Սելիվանովը, որպեսզի չհիասթափվի, գայրացած բարձրացավ տեղից ու հանկարծ.

— Ուռռռա՛-ա՛-ա՛...

Դիմացից մի հեծելախումբ էր գալիս, փափախների վրա կակաչի պես կարմիր աստղեր։

Եվ նույնի վայրկյանին ականջի մոտով ծանոթ, բարակ տզզոց անցավ՝ տզզ... տզզի-տի-ի՛... մեկը, մյուսը՝ մոծակի հեռացող տզզոցի նման։ Իսկ կանաչ այգիներից, ցանկապատերի ետևից, տնակների ետևից հրացանների տրաքոցների ձայն հասավ։

Սելիվանովի սիրտը նվաղեց. «Մերոնք... Մերոնցից»... Եվ երեխայաբար բարակ ձայնով ծղրտաց, հուսահատ շարժելով գլխարկը.

— Ձերոնցի՛ ենք... Ձերոնցի՛ց...

Խնթ, կարծես թե բան կարելի էր լսել սլացող մեքենայի ոռնոցի մեջ։ Նա ինքն էլ հասկացավ այդ և սեղմեցավ վարորդի ուսը.

— Սպասի՛ր... կանգնեցրո՛ւ...

Զինվորները գլուխները թաքցրին գնդացիրների ետևը։ Վարորդը այդ մի քանի վայրկյանում սաստիկ նեհարած դեմքով, կանգնեցրեց հանկարծ ծխի փոշու մեջ կորած մեքենան, և չորսն էլ միանգամից առաջ ընկան, այնինչ մեքենայի ետևը երկու գնդակ ցցվեցին։

— Ձերո՞նք ենք... ձերո՞նք...— գոռում էին չորս մարգկային կոկորդներ։

Պայթյունները շարունակվում էին։ Հեծելախումբը կարաբինները ուսից շտապ վայր բերելով, ձիերը ճանապարհի մի կողմը խմբելով, որպեսզի չխանգարեն այգիներից կրակելուն, իրենք էլ սլանալիս կրակում էին։

— Կսպանեն...— կարկամած շրթունքներով ասաց վարորդը, ղեկից ետ ընկնելով և բոլորովին կանգնեցնելով մեքենան։

Սրարշավ մոտեցան։ Տասնյակ հրացանի բերաններ աչքների առաջ ոսկին տվին։ Մի քանի ձիավոր, վախից այլայլված դեմքերով, վայր թռան ձիերից գերբնական հայհոյանքներով.

— Հեռո՛ւ գնդացիրներից... Ձեռքերդ բարձրացրե՛ք... վա՛յ իրենք...

Մյուսները, վայր ցատկելով ձիերից, գունատված բղավում էին։

— Զարդեցի՛ք, ի՞նչ եք նայում... Չե՞ք տեսնում, որ սպանելու են, դրանց էսպես ու էնպես։

Պարզապես կատարելու համար մեքենայորած թրերը։

«Կսպանեն»,— Սելիվանովը, երկու զինվորը և վարորդը անմիջապես դուրս թափվեցին մեքենայից։ Բայց հենց որ կանգ առան վրդովված ձիերի դունչերի առաջ, բարձրացրած թրերի և նշան բռնած հրացանների տակ, հանկարծ խաղաղվեց, որովհետև բաժանվեցին նրանց կատաղեցնող գընդացիրներից։

Եվ իրենց հերթին վրա ավին թունդ հայհոյանքներով.

— Գժվե՞լ եք, ի՞նչ է... Ձերոնց դուք... Աչքերդ քամակների՞դ է, ի՞նչ է... Դեռ բան չիմացած սպանելու էիք, հետո ուշ կլիներ արդեն... Ձեր էսպեսները, ձեր էնպեսները, ձեր...

Ձիավորները սառեցին։

— Ախր ովքե՞ր եք դուք։

— Ովքեր ենք... Մի հարցնեիր, հետո կրակեիր... Շտապ տարեք մեզ։

— Բա ի՞նչ անեինք,— մեղավորի պես ասացին նրանք ձի նստելով,— անցյալ շաբաթ, ձեզ պես, մի զրահապատ ավտոմեքենա ներս թռավ և սկսեց այնպես կարկուտ թափել, այնպես դող գցեց, որ... Նստե՛ք։

Դարձյալ նստեցին մեքենայում։ Երկու հեծյալ նստեցին հետևները, իսկ մնացածները կարաբինները ձեռքին զգույշ շրջապատեցին նրանց։

— Ընկերնե՛ր, բայց շատ արագ չքշեք մեքենան, թե չէ ձիերը հոգնած են, չենք հասնի։

Հասան այգիներին, մտան փողոցները։ Հանդիպող զինվորները կանգնում էին՝ թունդ հայհոյելով.

— Կոտորեցե՛ք, դրանց... Ի՞նչ եք քաշ տալիս...

Շեղ պառկում էին երեկոյան ստվերները։ Ինչ-որ տեղից հարբած երգի ձայն էր գալիս։ Ճանապարհին ծառերի ետևից երևում էին կազակների քանդած տների դուրս թափած պատուհանները։ Մի սատկած ձի գարշահոտություն էր սփռում։ Ամեն տեղ փողոցում զուտ խոտ էր թափթփված։ Ցանկապատերի ետևից երևում էին պլոկված, այլանդակված, ճյուղերը կոտրատած պտղատու ծառեր։ Ամբողջ ճանապարհին փողոցներում, բակերում ոչ մի հավ, ոչ մի խոզ։

Կանգնեցին շտաբի՝ քահանայի մի մեծ տան առաջ։ Պատշգամբի տակ եղինգի մեջ քնած խումփում էին երկու հարբած զինվոր։ Հրապարակի վրա, թնդանոթների կողքին, զինվորները թուղթ էին խաղում։

Խմբով ներս մտան հրամանատարի մոտ։

Սելիվանովը, երջանկությունից և պատահածից հուզված, պատմում էր իրենց արշավի մասին, վրացիների, կազակների հետ ունեցած կռիվների մասին, ամեն բան չէր հասցնում պատմել, մեկից մյուսին էր անցնում.

— ...Մայրեր... Երեխաներ անդունդներում... Սայլերը կիրճերում... Առանց փամփուշտի, դատարկ ձեռքով...

Եվ հանկարծ թելը կտրվեց. հրամանատարն իր երկայն բեղերը և ստևանման մորուքը ձեռքն առնելով, կռացած նստած էր, անթարթ նայելով նրան խորթ հայացքով։

Մյուս մեծավորները, բոլորն էլ ջահել, սևացած, ոմանք նստած, ոմանք կանգնած, առանց ժպիտի, քարացած, անտարբեր լսում էին։

Սելիվանովը, զգալով, թե ինչպես ուշում են իր վզի, ծոծրակի, ականջի երակները, կոշտ ընդհատեց և հանկարծ խզված ձայնով ասաց.

— Ահա փաստաթղթերը,— և առաջ քաշեց թղթերը։

Նա, առանց նայելու, անցկացրեց իր օգնականին, որը ակամա և արդեն կայացրած վճիռ ունեցող տեսքով սկսեց թերթել։ Հրամանատարը շեշտելով, առանց աչքը հեռացնելու նրանից, ասաց.

— Իսկ մենք բոլորովին հակառակ տեղեկություններ ունենք։

— Ներեցե՛ք,— Սելիվանովի դեմքն ու ճակատը արյունով լցվեցին,— ուրեմն դուք մեզ... Համարում...

— Մենք բոլորովին հակառակ տեղեկություններ ունենք,— հանգիստ և հաստատ ասավ նա, բեղերն ու կզակը շարունակ ձեռքն առած, թույլ չտալով, որ ընդհատեն իրեն և առանց աչքը հեռացնելու նրանից,— մենք ճիշտ տեղեկություններ ունենք. Թամանի թերակղզուց դուրս եկած ամբողջ զորաբանակը ոչնչացել է Սև ծովի ափերին, բոլորը կոտորվել են մինչև վերջին զինվորը։

Սենյակում լռություն տիրեց։ Լայն բացած պատուհաններից ներս էր գալիս թունդ հայհոյանքների և հարբած զինվորների ձայնը։

— «Սրանք քայքայման են հասել...»,— տարօրինակ գոհունակությամբ մտածեց Սելիվանովը։

— Ներեցե՛ք... Ուրեմն այդ փաստաթղթերը քի՞չ են... Այդ ի՞նչ է նշանակում. անասելի ճիգ թափելով, գերմարդկային կռիվ մղելուց հետո, որպեսզի միանանք մերոնց հետ, դուք այժմ...

— Նիկիտա,— դարձյալ հանգիստ կերպով ասաց հրամանատարը, կզակը բաց թողնելով և մարմինն ուղղելով, տեղից բարձրացավ։

Բարձրահասակ էր նա, երկայն, կոխ ընկած բեղերով։

— Ի՞նչ կհրամայեք։

— Գտիր հրամանագիրը։

Օգնականը սկսեց քրքրել թղթապանակը, հանեց մի թուղթ և մեկնեց։ Հրամանատարը սեղանի վրա դրեց և առանց կռանալու կարծես զանգակատնից սկսեց կարդալ։ Այն հանգամանքը, որ նա կարդում էր այդ բարձրությունից, կարծես, անփութորեն հաստատում էր իր և բոլոր ներկա եղողների կարծիքի որոշված լինելը։

Գլխավոր հրամանատարի հրամանագիր № 73.

Գրավված է գեներալ Պոկրովսկու գեներալ Դենիկինին ուղղած ռադիոհեռագիրը։ Նրա մեջ հաղորդվում է, որ ծովի կողմից Տուապսեի ուղղությամբ բոկոտների անհամար խու-

ժան է գալիս։ Այդ վայրի խուժանը բաղկացած է Գերմանիայից վերադարձած ռուս դերիներից և նավաստիներից։ Նրանք հիանալի զինված են, ունեն բազմաթիվ թնդանոթներ, մթերքներ և իրենց հետ բերում են ահագին կողոպտած հարստություններ։ Այդ զրահավորված խոզերը բոլորին կոտորում և ոչնչացնում են իրենց ճանապարհին՝ կազակների և սպաների ամենալավ զորամասերը, կադետներին, մենշևիկներին, բոլշևիկներին։

Երկայնահասակը՝ սեղանին հենվելով, ծածկեց թուքը, շեշտակի նայեց Սելիվանովին, հուսահատ կրկնելով.

— Եվ բոլշևիկներին։

Հետո ձեռքը վերցրեց և շարունակ կանգնած, ասեց կարդալ.

— «Ուստի հրամայում եմ անընդհատ նահանջել. ետևը կամուրջները քանդել, գետն անցնելիս բոլոր պարապները ոչնչացնել. նավակները մեր ափը անցկացնել և ամբողջապես այրել։ Նահանջի կարգապահության համար պատասխանատու են զորամասերի մեծավորները»։

Եվ դարձյալ շեշտակի նայեց Սելիվանովին և թուքը չասելով, որ բերանը բանա, ասաց.

— Գիտե՞ք ինչ, ընկե՛ր, ես ձեզ ոչ մի բանում չեմ ուզում կասկածել, բայց հասկացեք մեր դրությունը. մենք իրար առաջին անգամ ենք տեսնում, իսկ տեղեկությունները, ինքներդ տեսնում եք... Մենք իրավունք չունենք... Չէ որ մեզ են հավատացել զորամասերը, և մենք ոճրագործ կլինենք...

— Ախր այնտեղ սպասում են...— հուսահատ քաջալերեց Սելիվանովը։

— Հասկանում եմ, հասկանում եմ, մի վրդովվեք։ Գնանք մի քիչ հաց ուտենք, թեյ խմենք, քաղցած կլինենք, ձեր տղերքը նույնպես...

«Ուզում է առանձին հարցուփորձ անել...»,— մտածեց Սելիվանովը և հանկարծ զգաց, որ անհաղթահարելի կերպով քնել է ուզում։

Ճաշի ժամանակ մի գեղեցիկ լուրջ կազակ կին, դատարկ սեղանի վրա տաք ապուրման դրեց՝ մեջը յուղաջուր, և խոնարհ գլուխ տվեց.

— Անուշ արեք, սիրելինե՛ր։

— Էդ, դո՛ւ, ջադո՞ւ, առաջ ինքդ լափիր։

— Ի՞նչ եք ասում, սիրելի՛։

— Դե՛, դե՛...

Նա երեսը խաչակնքեց, վերցրեց գդալը, կոխեց ամանի մեջ, որից հանկարծ գոլորշի բարձրացավ և փչելով, սկսեց զգույշ ուտել։

— Մի փոքր ավելի լափիր... Լա՛վ եք սովորել. մեզանից մի քանիսին թունավորեցիք... Գազանե՛ր։ Գինի բերեք։

Ճաշից հետո պայմանավորվեցին. Սելիվանովը մեքենայով ետ է վերադառնում և նրա հետ, ստուգելու համար, ուղարկվում է մի էսկադրոն։

Մեքենան հանգիստ առաջ է գնում, հակառակ ուղղությամբ անցնում են ծանոթ ստանիցաները, ագարակները։ Սելիվանովը նստած է երկու հեծյալի հետ, նրանց դեմքերը լարված են, ատրճանակները պատրաստ։ Բայց շուրջը, առաջից, ետևից, կողքերից մերթ միահամուռ, մերթ շաղված ծանրաբարակ բարձրանում և իջնում են զինվորների քամակները լայն թամբերի վրա. իսկ նրանց տակ վազում են, ամբակները երևացնելով, հեծելազորի ձիերը։

Մեքենայում նստած հեծելազորայինների լարված դեմքերը կամաց-կամաց խաղաղվում են և վստահացած սկսում են տխուր պատմություն պատմել Սելիվանովին։ Թե ինչպես ամեն ինչ թողցրել է, ջլատվել է, մարտական հրամանները չեն կատարվում, փախուստ են տալիս մի խումբ կազակներից. քայքայված զորամասերից խումբ-խումբ փախչում են և ցրվում որ կողմն ասես։

Սելիվանովը գլուխը շարժում է։

«Ինչե՞ փաղանգների հանդիպենք, ամեն ինչ կորած է»։

39

Ոչ մի տասող, և այդ պատճառով փափուկ թավիշը ամեն ինչ կլանում է. ոչ ցանկապատեր են երևում, ոչ փողոցներ, ոչ բարդիներ, ոչ տնակներ, ոչ այգիներ։ Գնդասեղի ծայրերի նման սփռված են կրակները։

Մեղմ ու մութ անհունի մեջ զգալի տարածված է կենդանի անհանգիստ։ Քնած չեն։ Մերթ զրնգում է մթի մեջ մի բա-

նի դիպած դույլ, մերթ սկսում են իրար կրծել և տրոփել կռվող ձիերը, և՝ «-տպո՜ւ, սպասե՛ք, գրողը ձեզ տանի»... Մերթ մայրական քաղցր ձայնն է, որ միօրինակ օրոր է ասում՝ ա՛-ա՛-ա՛...

Մի հեռավոր հրացանի ձայն, բայց մարդ գիտե, որ այդ իրն է, բարեկամական է։ Ձայները մեծանում, բազմանում են, մարդ չի իմանում՝ վեճ է, թե բարեկամական դիմավորում, նորից հանգչում է, և դարձյալ միայն խավար է։

— Այսօր վերջին օրն է, ես...— լսվում է հոգնած, կիսաբուն ժպիտով։

Ինչո՞ւ քունը չի տանում։

Լսվում է կարծես հեռավոր անիվների կամ պատուհանի տակ ճռճռացող ավազի ձայն։

— Է՜յ, էլ ո՞ւր ես գնում. մերոնք, ա՛յ, այստեղ են կանգնած։

Բայց ոչ ոք չի երևում. միայն սև թավիշն է։

Զարմանալի է, մի՞թե չեն հոգնել, մի՞թե այլևս գիշեր ու ցերեկ չեն դիտում անթարթ աչքերով հեռավոր գիծը։

Կարծես թե այդ սեպտեմբերյան թավիշը, թե աներևույթ ցանկապատերը, թե աթարի հոտը, ամեն ինչ հարազատ, ամեն ինչ ծանոթ, վաղուց ըղձալին են։

Վաղը կայարանի մյուս կողմը հանդիպելու են գլխավոր ուժերի զորքերի հետ։ Դրա համար է գիշերը շարժումով, աղմուկով, ձայներով, շշուկով, ժպիտներով լի։

Կիսաբաց դռնից ցայտող լուսնի նեղ շերտը փռված է հողի վրա, բեկվում է ցանկապատի դեմ և սահում է դեպի ոտնատակ տված բանջարանոցի կողմը։

Իսկ տնակում եռում է ինքնաեռը։ Պատերը սպիտակացրած են։ Ամանեղենները, սպիտակ հացը շարած են։ Մաքուր է սփռոցը։

Կոժուխը, դոտին հանած, նստած է նստարանի վրա. մազոտ կուրծքը երևում է։ Ուսերը վեր են բարձրացած, ձեռքերն ու գլուխը կախ գցած։ Տանտիրոջ նման,— որ ամբողջ օրը պսպղուն արորով սև շաղ ակոսներ վարելուց հետո տուն է վերադարձել, և այժմ ձեռներն ու ոտները գոհ մղկտում են, և կինը ընթրիք է պատրաստում, սեղանի վրա էլ կերակուր է դրած, իսկ պատից, թեթև ծուխ անելով փայլում է թիթեղի

լապտերը,— հոգնած է այդպիսի տանտիրոջ պես, հոգնած է աշխատանքի հոգնածությամբ։

Եղբայրն էլ մոտն է նստած նույնպես առանց զենքի։ Նա անհոգ հանել է կոշիկները և լուրջ կերպով զննում է քրքրված կոշիկը։ Կոժուխի կինը հմուտ տանտիկնոջ շարժումով բարձրացնում է ինքնաեռի խուփը, դուրս է պրծնում ըմբոստ գոլորշին. հանում է ծանր, գոլորշիով պատած սրբիչը, հանում է ձվաները և դարսում է ափսեի վրա։ Անկյունում սրբի պատկերն է սևին տալիս։ Տնակի առաջին մասը լուռ է։

— Դե՛, նստե՛ք։

Հանկարծ կարծես դանակով կտրեցին, երեքն էլ գլուխները ետ դարձրին. լույսի շերտում ցոլացին մեկ, երկու, երեք ծանոթ կլոր գդակներ ժապավեններով։ Հիշոցներ։ Խզակոթերի թրխկոցներ։

Ալեքսեյն առանց մի վայրկյան կորցնելու (է՜հ, ո՞ւր է ատրճանակս) ասաց.

— Եկե՛ք, տղե՛ր։

Գոմեշի նման հարձակվեց։ Հրացանի կոթը դիպավ ուսին։ Տատանվեց, բայց ոտքի վրա մնաց, և նրա երկաթի բռունցքի տակ ճռթճռթաց մեկի քթարմատը, և հառաչելով ու կատաղի հայհոյանքով մեկը գետին գլորվեց։

Ալեքսեյը վրայից ցատկեց.

— Եկեք ետևիցս...

Լույսից դուրս պրծավ և միանգամից խորասուզվեց խավարի մեջ և սաժենանոց քայլերով թռավ մարգերի միջով, կոտրատելով արևածաղկի բարձր ցողունները։

Նրա ետևից ընկած Կոժուխին հրացանի կոթի անվրեպ հարվածներ դիպան։ Նա վայր ընկավ ցանկապատի մյուս կողմը, իսկ շուրջը հողմահար, ծովային ձայներ բարձրացան.

— Ա՜ա... ահա՛ նա... տվե՛ք...

Մի անմար սուր ճիչ լսվեց ետևից.

— Օգնեցե՛ք...

Կոժուխը տասնապատկեց իր ուժը, հարվածներ ստանալով, նա դուրս գլորվեց լույսի շերտից մթության մեջ, ցատկեց և այն կողմը սլացավ, որտեղից եղբոր ձայնն էր լսս-

վում։ Իսկ անմիջապես իր ետնից լսում էր ծանր քայլերի դոփյունի ձայնը՝ ստեպ ու խռպոտ հևոցի միջից։

— Չկրակեք, թե չէ կհավաքվեն... կոթով խփեցեք... Ահա՛ նա... Հասե՛ք...

Խավարից ավելի սև էր ցանկապատը։ Տախտակները ճռճռացին։ Ալեքսեյն անցավ։ Կոժուխը երիտասարդի պես ճկուն ցատկեց, և երկուսն էլ միասին ընկան աղմուկի, հարվածների, հայհոյանքի, սվիններ անասելի ծխորի մեջ. մյուս կողմում սպասում էին։

— Սպանեցե՛ք սպաներին... սվինների վրա բարձրացրեք...

— Ձեռ մի՛ տա... Ձեռ մի՛ տա...

— Ճանկներս ընկաք, դարշելինե՛ր... Տեղն ու տեղը սատկացրեք...

— Պետք է անպատճառ շտաբ տանել, այնտեղ հարցուփորձ կանեն... Հերները կանիծենք։

— Թող սատկացնենք։

— Շտաբ, շտաբ տանենք...

Կոժուխի և Ալեքսեյի ձայնը ծածկվեց ձայների սև, աղմրկահույզ հորձանքի մեջ։

Անընդհատ աղմուկ-գոռոցով, հայհոյանքով, խռնված, իրար հրելով, նրանց տարան։

«Կարծես ողջ,առողջ պրծանք»,— մտածում էր Կոժուխը. նա աչքը չէր պոկում մեծ, երկհարկանի տան-շտաբի պատուհաններից ծագող լույսից։

Մտան լույսի շերտի մեջ, և բոլորը քեբանները բացին և աչքները շռեցին։

— Սա հո բատկոն է...

Կոժուխը հանգիստ, միայն խլերը խաղացնելով ասաց.

— Ի՞նչ է, խելագարվե՞լ եք...

— Այս ի՞նչ բան է... Ախր մենք... Այդ անիծած նավաստիներն են... Գալիս են ասում՝ երկու սպա ենք գտել, կազակների լրտեսներն են, ուզում են Կոժուխին սպանել, պետք է սատկացնենք նրանց։ Մենք, ասում են, դուրս կգցենք նրանց, իսկ դուք սպասեցեք ցանկապատի ետև, և հենց որ նրանք սկսեն ցատկել, դուք սվինները դեմ տվեք, թող վրան նստեն։ Իսկ շտաբ հարկավոր չէ տանել. այնտեղ դավաճաններ են նստած, բաց կթողնեն։ Դուք նրանց սուսուփուս սյուս աշխարհն ուղարկեցեք։ Մենք էլ հավատացինք։

Կոժուխը հանգիստ՝

— Նավաստիներին՝ հրացանի կոթերով...

Զինվորները կատաղած նետվեցին զանազան կողմեր, իսկ խավարի միջից մի հանգիստ ձայն՝

— Արդեն փախան։ Հիմար հա չե՞ն, որ սպասեն իրենց մահին։

— Գնանք թեյ խմենք,— ասաց Կոժուխն իր եղբորը, ճեղքած դեմքից արյունը սրբելով,— պահապաններ դրեք։

— Լսո՛ւմ ենք։

40

Կովկասի արևը, թեև ուշ աշնան արև, բայց տաք է։ Միայն տափաստաններն են թափանցիկ, միայն տափաստաններն են կապույտ։ Պսպղում է նուրբ սարդի ոստայնը։ Բարդիները նոսր սաղարթով մտախոհ կանգնած են։ Այգիները թեթև սկսել են դեղնել։ Ձանգակատունը սպիտակին է տալիս։

Իսկ այգիների ետևը տափաստանում մաքդկային անհուն ծովն է, անհուն, ինչպես և արշավի սկզբում։ Բայց այժմ ինչ-որ նոր բան է նրան քողարկում։ Փախստականների նույն անհամար սայլերը, բայց ինչո՞ւ դեմքերին նույն չմարող վստահության կենդանի ցոլքն է դրոշմված։

Նույն անհամար, պատառոտած, ցնցոտիներով, մերկ, բոբիկ զինվորների խմբերը, բայց ինչո՞ւ թեթի պես ուղիղ գծով լուռ շարված են անթիվ շարքերով, դեմքերը կտած-կոփած երկաթի նման սևացած, նիհարած են, և երաժշտության պես ներդաշնակ սևին են տալիս սվինները։

Եվ ինչո՞ւ այդ շարքերին դեմառդեմ կանգնած են, նույնչափ անհամար հագնված և կոշիկներով զինվորների շարքեր, բայց սվիններն այս ու այն կողմ են թեքված, իսկ դեմքերի վրա շփոթության և ագահ սպասումի արտահայտություն։

Ինչպես այն ժամանակ փոշու անվերջ սյուներ, բայց այժմ նրանք նստում են աշնան ծանրությունից, և պարզ

երևում է թափանցիկ տափաստանը, և պարզ նկատվում է դեմքերի ամեն մի գիծը։

Այն ժամանակ մարդկային անսահման ալեկոծ ծովի մեջտեղը մի բլուր կար կանգնած, և նրա վրա հողմաղացներն էին սևին տալիս, իսկ այժմ մարդկային ծովի մեջտեղը մի արձակ տափարակ է, որի վրա սևին է տալիս մի սայլ։

Միայն թե այն ժամանակ տափաստանում մարդկային ծովը սփռվել էր ալեկոծ, իսկ այժմ կծկված և լուռ կանգնած է երկաթե եզրերում։

Սպասում էին։ Եվ անխոս, անձայն, լուռ հանդիսավոր երաժշտություն էր հնչում անծայր ամբոխի վրա, կապույտ երկնքում, կապույտ տափաստանում, ոսկեփայլ խորշակի մեջ։

Մարդկանց մի փոքր խումբ երևաց։ Եվ նրանք, որ կանգնած էին երկաթե դեմքերով, ճանաչեցին այդ խմբում իրենց հրամանատարներին, իրենց պես նիհարած և սևացած։ Եվ նրանք, որ կանգնած էին նրանց դեմ առ դեմ, ճանաչեցին իրենց հրամանատարներին, իրենց պես հագնված, առողջ, հողմահար դեմքերով։

Առաջինների հետ գալիս էր Կոժուխը, ցածրահասակ, մինչև ոսկորները սևացած, նիհարած, ցնցոտիներով, ինչպես մի շրջմոլիկ, իսկ բերանը բաց կոշիկների միջից սևացած, ճաքճքած ոտների մատներն էին երևում։ Գլխին ճռռոած հարդի գլխարկի մնացորդներ էին կախ ընկած։

Սրանք մոտեցան և խմբվեցին սայլի շուրջը։ Կոժուխը բարձրացավ սայլի վրա, քաշեց գլխից ծղոտի կտորտանքը և երկար հայացք գցեց իր երկաթե շարքերի վրա, տափաստանում փռված անթիվ սայլերի վրա, բազմաթիվ վշտաբեկ, առանց ձիերի մնացած փախստականների վրա և գլխավոր ուժերի շարքերի վրա։ Նրանց մեջ քայքայման մի նշան էր նկատվում։ Եվ նրա մեջ մի գաղտնի, նույնիսկ իր համար անխոստովանելի, գոհունակություն զարթնեց. «Կազմալուծվում են»...

Ամենքը, ամենքը նրան էին նայում։ Նա ասաց.

— Ընկերնե՛ր։

Ամենքը գիտեին, թե ինչ պետք է ասվի, բայց մի վայրկյան կայծ շանթեց բոլոր նայողներին։

— Ընկերնե՛ր, հինգ հարյուր վերստ մենք անցանք ոտով, քաղցած, ծարավ, բոբիկ։ Կազակները կատաղած հալածում էին մեզ։ Ոչ հաց ունեինք, ոչ պաշար, ոչ խոտ։ Մարդիկ մեռնում էին, անդունդ գլորվում, թշնամու գնդակներից ընկնում, փամփուշտ չկար, դատարկ ձեռքերով...

Ու թեև գիտեին այդ, իրենք էին կրել այդ, և ուրիշներն էլ գիտեին նրանց հազարավոր պատմություններից՝ Կոժուխի խոսքերը իբրև մի չլսված նորություն փայլեցին։

— ... Երեխաներին թողնում էինք կիրճերում...

Եվ գլուխների այդ անհուն ծովի վրա հնչեց և սրտերի մեջ թափանցեց, թափանցեց և դողդողաց.

— Օ՜հ, մեր զավակները, մեր սիրելի զավակները...

Մարդկային ծովը ծայրից ծայր հուզվեց.

— Մեր զավակնե՛րը... Մեր զավակնե՛րը...

Նա քարացած նայում էր նրանց, սպասեց և ասաց.

— Իսկ քանի՞ քանիսը մեզանից գնդակի զոհ գնացին տափաստաններում, անտառներում ու սարերում ընդմիշտ և հավիտյան...

Բոլոր գլուխները մերկացան և ծայրից ծայր գերեզմանային լռություն անցավ, և այդ լռության մեջ, ինչպես տապանաքարեր, ինչպես շիրիմի ծաղիկներ, լսելի էին կանացի հանդարտ հեծկլտանքներ։

Կոժուխը կանգնած էր գլխիկոր, հետո գլուխը բարձրացրեց, նայեց այդ հազարներին և լռությունը խախտեց.

— Ինչի՞ համար էին տանում այդ տանջանքները այս հազարավոր, տասնյակ հազարավոր մարդիկ, ինչի՞ համար...

Նա նորից նայեց նրանց և հանկարծ անակնկալ ասաց.

— Միայն մի բանի համար, խորհրդային իշխանության համար, որովհետև. միայն նա է գյուղացիների և բանվորների իշխանությունը, նրանք ուրիշ ոչինչ չունեն...

Էլ չկարողացան դիմանալ, կրծքերից անհամար հառաչանք դուրս թռավ և երկաթե դեմքերի վրա ժլատ կաթեցին մեկնակ արցունքներ, դանդաղ գլորվեցին դիմավորողների հողմահար դեմքերի վրա, ծերերի դեմքերի վրա, և արցունքներ փայլեցին աղջկերանց աչքերում։

— ... Գյուղացիների և բանվորների...

«Ահա թե ինչի համար էինք մենք փոքրում, ընկնում, մեռնում, փոխարվում, գալիք դարերում...»։

Կարծես աչքերը նոր բացվեցին, կարծես առաջին անգամ լսեցին գաղտնիքների գաղտնիքը։

— Ա՛յ մարդիկ, թողեք ես էլ մի քառք ասեմ,— բղավում էր, դառնացած, քիթը սրբելով Գարպինոն տատին, խցկվելով դևպի սայլը, բռնելով անիվներից, կողաձողերից,— թողեք տիպ մի խոսք ասեմ...

— Ա՛յ տատի, քիչ ապասիր, թող բատկեն ասի պրծնի, հետո դու կասես։

— Թողե՛ք ինձ, թողե՛ք,— արմունկներով հրելով և բոլոր ուժով առաջ գնալով, բղավում էր նա։

— Լսեցե՛ք, ա՛յ մարդիկ, լսեցե՛ք, ինքնաեռը տանը թողինք։ Երբ որ ինձ մարդու էին տալիս, մայրս ինձ բաժինք տվեց և ասաց՝ աչքիդ լույսի պես կպահես, իսկ մենք թողինք։ Գրողի ծոցը, թող կորչի։ Բայց թող ապրի մեր իշխանությունը, մեր հարազատ իշխանությունը, որովհետև մենք մեր ամբողջ կյանքը շարշարվել ենք և օր չենք տեսել։ Իսկ իմ որդիքս... Որդի՞քս։

Եվ էր պառավ աչքերը ճպճպացնելով՝ սկսեց արցունքներ թափել ոչ այն էր վշտից, ոչ էլ իրեն համար անհասկանալի փայլող ուրախությունից։

Եվ մարդկային ծովը նորից հառաչանք ժայթքեց, և սահեց հառաջ մինչև տափաստանի ծայրերը։ Իսկ սայլի վրա քուռ և մռայլ բարձրանում էր ծերունի Գարպինոն։ Նրան այնքան էլ հեշտ չէր վայր քաշել — հաղթանդամ ծերուկ էր, ամբաղջովին խամրված կպրով և սև հոգով, ձեռքերը ամբակի նման։

Բարձրացավ և զարմացավ, որ բարձր է և, փակուշն այդ մոռանալով, սայլի նման ճռճռան ձայնով ասաց.

— Այո՞, պառավ նի էր, բայց դավ բեռնակիրը Ֆիգանները, հո գիտեք լավ ես են ճռճռալում, համ բերանը տնտղեցին, համ պոչի տակն ու առնցին՝ տասը տարեկան է։ Իսկ ինն 23 տարեկան էր...

Ծերուկը ծիծաղեց, ծիծաղեց առաջին անգամ, և աչքի շուրջը բազմաթիվ կնճիռներ հավաքվեցին, ծիծաղեց մանկական ծիծաղով, որ այնպես չէր հարմարում նրա հոգակոշտ տեսքին։

Իսկ Գարպինո տատին շփոթված ձեռքերը ծնկներին դարկեց.

— Տեր իմ աստված, ա՛յ մարդիկ, մի տեսեք, չլինի՞ խելագարվել է։ Ամբողջ կյանքը սուս էր. սուս ինձ ուզեց, սուս սիրում էր, սուս ծեծում, իսկ հիմա լեզուն բացվել է։ Տեսնես ի՞նչ է պատահելու։ Թե՞ խելագարվել է, ինչ է։

Ծերուկը կնճիռները հարդեց, հոնքերը կիտեց, և չսապոնած սայլը նորից ճռճռաց.

— Ջին սպանեցին, սատկեց... Ինչ որ սայլում կար՝ բոլորը կորավ։ Ոտով էինք գալիս։ Քթկնափակը կտրեցի, այն էլ կորավ. պառավիս ինքնաեռը, տանը ունեցած-չունեցածը կորցրինք, իսկ ես, «Քրիստոսք վկա,— ն բաքեր ձայնով զոզոաց — չեմ ափս-ո-սում... Թող գրողի ծոցը, թող... Ինչի որ՝ այս մեր գյուղացիներիս իշխանությունն է։ Առանց սրան մենք լեշի նման ենք, որ հոտում է աղբանոցում...— և լաց եղավ շան պես ժլատ արցունքներով։

Մի ծայրից մյուսը հորձանք տվեց.

— ...Հա-ա՞-ա՞... Այս... Մեր ժողովն է, մեր սեփական իշխանությունը... Ապրի՛... Կեցցե՛ խորհրդային իշխանությունը...

Հնչեց մի ծայրից մինչև մյուս ծայրը։

«Ահա, ուրեմն, երջանկությունը»,— կրակի պես այրեց Կոժուխի սիրտը, իսկ դեմքին հանգստություն է, և ծնոտները՝ քար։

«Ահա թե ինչի համար,... — անդիմադրելի ուրախությամբ բոցավառվեց նիհար, ցնցոտիներով մարդկանց երկաթե շարքերը,— ահա թե ինչու ենք մենք քաղցած, ծարավ, շարշարվում, ոչ միայն մեր անձի համար...»։

Իսկ մայրերը՝ չապաքինվող սրտով, չչորացող արցունքներով. ո՛չ, լերկ-ցցված կիրճերը նրանք երբեք չեն մոռանա, երբեք, բայց այդ զարհուրելի տեղերը, նրանց ահռելի հիշատակը մի խաղաղ թախիծ էին դառնում և նույնպես իրենց տեղը բռնում այն քանի մեջ, որ այնպիսի վեհությամբ լուռ հնչեց տափաստանում անսահման սիրված այն ահագին մարդկային բազմության վրա։

Իսկ նրանք, որ հագնված և կուշտ բազմաթիվ շարքերով կանգնած էին նիհար և մերկ մարդկանց երկաթե շարքերի դեմ, նրանք իրենց որբ էին զգում այդ չտեսնված հանդիսին, որին արժան չէին զգում իրենց և, չամաչելով ակամա արցունքներից, շարքերը քանդեցին և խորտակիչ լավայով գրոհ տվին դեպի այն սայլը, որի վրա կանգնած էր նիհար, կիսաբորիկ, ցնցոտիներ հագին Կոժուխը։ Եվ հնչեց մինչև տափաստանի հեռավոր ծայրերը.

— Դու մեր հայրն ես... Տար մեզ, ուր որ կամենաս... Մենք պատրաստ ենք մեռնելու։

Հազարավոր ձեռքեր մեկնվեցին, վայր բերին նրան և բարձրացրին ուսերի, գլուխների վրա և տարան։ Եվ տասնյակ վերստի վրա տափաստանը դղրդաց մարդկային ձայներից.

— Ուռռա՜... Ուռռա՜-ա՜-ա՜...ա՜-ա՜-ա՜... բատկո Կոժուխին։

Կոժուխին տարան այնտեղ, ուր կանգնած էին կանոնավոր շարքերը, տարան և այնտեղ, ուր կանգնած էին թնդանոթաձիգները, տարան և էսկադրոնների ձիերի միջով, և հեծյալները թամբի վրա շուռ գալով, ոգևորությունից այլայլված դեմքերով անընդհատ գոռում էին։

— Տարան նրան և փախստականների մեջ, սայլերի միջև, և մայրերը մեկնում էին նրան իրենց երեխաներին։

Հետո ետ բերին և զգույշ վայր դրին դարձյալ սայլի մեջ։ Կոժուխը բերանը բաց արեց, որպեսզի խոսի, և բոլորն ապշեցին, կարծես առաջին անգամ էին տեսնում նրան։

«Աչքերը կապույտ են»։

Ոչ, չգոռացին, որովհետև չգիտեին, թե ինչպես արտահայտեն իրենց զգացմունքները, բայց նրա աչքերն իսկապես կապույտ էին, սիրալիր, և ժպտում էին մանկական անուշ ժպիտով,— այդ չգոռացին, այլ գոռացին.

— Ուռռա՜-ա՜-ա՜ մեր բատկոյին... Կեցցե՜... Նրա հետ մինչև աշխարհի ծայրը կգնանք... Կկռվենք խորհրդային իշխանության համար, կկռվենք պաների, գեներալների, սպաների դեմ։

Իսկ նա սիրով նայում էր նրանց իր կապույտ աչքերով, սրտում դրոշմվում էր հրեղեն խոհը. «Ես ոչ հայր ունեմ, ոչ մայր, ոչ կին, ոչ եղբայրներ, ոչ հարազատներ, ոչ ազգականներ, միայն սրանք են, որոնց ես փրկել եմ մահից... Ե՛ս, ե՛ս եմ փրկել։ Իսկ սրանց նման միլիոնավորներ կան, և նրանց վզին շղթա է կապած, և ես պետք է կռվեմ նրանց ազատելու համար։ Այստեղ են իմ հայրը, մայրը, տունս, կինս, երեխաներս... Ե՛ս, ե՛ս, ե՛ս ազատեցի մահից հազարավոր, տասնյակ հազարավոր մարդկանց... փրկեցի, երբ նրանք սոսկալի դրության մեջ էին»։

Կրակով դրոշմվում էր սրտում, իսկ շրթունքներն ասում էին.

— Ընկերնե՛ր...

Բայց դեռ խոսքը չվերջացրած, զինվորներին աջ ու ձախ հրելով, առաջ էր դրոհում նավաստիների բազմությունը։ Ամեն տեղ կլոր գլխարկներ էին երևում և ժապավեններ ծածանվում։ Արմունկներին զոռ տալով՝ ավելի ու ավելի մոտենում էր սայլին նավաստիների հոսանքը։

Կոժուխը հանգիստ նայում էր նրանց մոխրագույն, պողպատափայլ աչքերով, և դեմքը երկաթի է, ծնոտները՝ սեղմած։

Արդեն մոտ են, արդեն միայն զինվորների մի բարակ շարքն է անջատում։ Արդեն շրջապատեցին, չորս բոլորը միայն կլոր գլխարկներ և ժապավեններ են երևում, և կզգու նման սևին է տալիս սայլը, իսկ սայլի վրա Կոժուխն է։

Մի հաղթանդամ, թիկնավետ նավաստի, վրան ձեռնառումքեր, երկու ատրճանակ, փամփուշտակալ, բռնեց սայլի կողքից։ Սայլը թեքվեց, ճռռաց։ Նա բարձրացավ, կանգնեց Կոժուխի կողքին, հանեց կլոր գլխարկը, ժապավենները թափահարեց և խոպոտ ձայնով, որի մեջ կար և ծովի քամի, և աղի անհուն տարածություն, և կտրիճություն, և հարբեցողություն, և զեղխ կյանք, մի ծայրից մինչև մյուսը գոչեց.

— Ընկերնե՛ր, ահա մենք, հեղափոխական նավաստիներս, զղջում ենք, մեղավոր ենք Կոժուխի առաջ և ձեր առաջ։ Մենք նրան ամեն կերպ վնասում էինք, երբ նա փրկում էր ժողովրդին, մի խոսքով՝ ոտքի տակ քար էինք զցում, փոխանակ օգնելու՝ քննադատում էինք, իսկ այժմ տեսնում ենք, որ սխալվել ենք։ Այստեղ հավաքված բոլոր նավաստի-

ների կողմից խոնարհաբար ողջունում ենք ընկեր Կոժուխին և սրտանց ասում՝ մեղավոր ենք, ներիր մեզ։

Նույնանման աղած ծովային ձայնով նավաստիների խումբանը գոռաց.

— Մեղավո՞ր ենք, ընկեր Կոժուխ, մեղավո՞ր ենք, ների՛ր։

Հարյուրավոր ուժեղ ձեռքեր վայր բերին Կոժուխին և սկսեցին վեր-վեր գցել։ Կոժուխը նետվում էր բարձր, վայր ընկնում, կորչում ձեռների մեջ, նորից բարձր նետվում, և տափաստանը, երկինքը, մարդիկ անիվի պես պտույտ էին գալիս աչքին։

«Բանս բուրդ է՝ շան որդիք փորոտիքս կխառնշտորեն»։

Եվ ծայրից ծայր դղրդում էր ահեղ.

— Ուռռա՜-ա՜-ա՜ մեր բատկոյին. ուռռա՜-ա՜-ա՜...

Երբ նորից դրին սայլի վրա, Կոժուխը մի փոքր տատանվում էր, իսկ կապույտ աչքերը փոքրացան և ժպտացին խորամանկ ժպիտով։

«Ա՛յ ստախոս շներ, լավ դուրս պրծանք։ Բայց մի ուրիշ տեղ ձեռքներդ ընկնեմ՝ կաշիս կքերթեք»...

— Իսկ նրանց՝ իր երկաթե, մի քիչ ժանգոտած ձայնով ասաց.

— Ով որ անցածը հիշի՝ թող աչքը դուրս գա։

— Հա՜-հա՜-հա՜... հա՜-հա՜-հա՜... ուռռա՜-ա՜-ա՜...

Շատ ճառախոսներ սպասում են իրենց հերթին։ Ամեն մեկը նրանցից ամենակարևոր, ամենագլխավոր բանն ունի հայտնելու, և եթե նա չասի, ամեն բան կքանդվի։ Իսկ ժողովը լսում է։ Լսում են նրանք, որոնք անմիջապես սայլի շուրջն են խոնված։ Իսկ հեռու միմիայն առանձին խոսքեր են հասնում, ծայրերում ոչինչ չի լսվում, բայց բոլորն էլ միատեսակ ագահաբար վզները մեկնած, ականջները դեմ արած լսում են։ Կանայք երեխաների բերաններն են դնում դատարկ կուրծքը և կամ շտապ օրորվում են նրանց հետ միասին, թաթով տալով, վզները մեկնած, ականջները նրա կողմը դարձած։

Եվ զարմանալի է, թեև չեն լսում, կամ միայն հատուկենտ են լսում, բայց վերջիվերջո գլխավորն ըմբռնում են։

— Լսո՞ւմ ես, չեխոսլովակները մինչև Մոսկվա են հասել, իսկ այնտեղ նրանց ռեխները ջարդել են և Ֆրբիր քշել։

— Գանները նորից դալմազալ են բարձրացրել. իրենց հողերն են պահանջում։

— Քամակս պաչեն՝ էլի չեմ տա։

— Պանասյո՛ւկ, լսեցի՞ր, Ռուսաստանում կարմիր զորք կա հիմա։

— Ինչպե՞ս թե կարմիր։

— Կարմիր է, վարտիքն էլ է կարմիր, շապիկն էլ է կարմիր, գդակն էլ է կարմիր, առաջից էլ, հետևից էլ՝ կարմիր։ Ինչպես խաշած խեցգետին։

— Հերիք է փչես։

— Էն ասուածը։

— Ես էլ եմ լսել. այնտեղ հիմա էլ սալդաթ չկա, բոլորը կարմիր զինվոր են կոչվում։

— Երևի մե՞զ էլ են կարմիր շալվարներ տալու։

— Եվ ասում են շատ խիստ կարգապահություն կա։

— Մեր կարգապահությունից խիստ էլ ո՞րը կլինի։ Հենց որ բատկոն ուզեց շշպռել, բոլորն էլ սանձվածի պես սկսեցին քայլել. մի տեսնեիր, թե ոնց էին շարքով գնում, կարծես թելով գիծ քաշած լիներ։ Իսկ երբ ստանիցայով էինք անցնում, ոչ ոքի դիպչող, ոչ ոքի նեղող չեղավ։

Ճառերից հատ-հատ խոսքեր լսելով, իրար ասում էին անպաճույճ խոսքեր, զգալով, որ թեև անջատված էին անսահման տափաստաններով, անանցանելի լեռներով, թավ անտառներով, նրանք նույնն էին ստեղծում, թող անհամեմատ փոքր ծավալով, բայց նույնն էին ստեղծում, ինչ որ այնտեղ, Ռուսաստանում՝ համաշխարհային ծավալով, ստեղծում էին քաղցած, բոբիկ, առանց քաղաքական ղեկավարների և լուսավորության, առանց նյութական միջոցների, առանց որևէ օգնության։ Իրենք չէին հասկանում, բայց զգում էին և չգիտեին, թե ինչպես արտահայտեն։

Մինչև վերջալույսի կապտանալը ճառախոսները հաջողում էին իրար. ճառերի հետ աստիճանաբար նրանց համակում էր անսահման երջանկության և անբակտելի կապի զգացումը այն հսկայի հետ, որին իրենք և՛ ճանաչում են, և՛ չեն ճանաչում, և որը կոչվում է Խորհրդային Ռուսաստան։

Խավարի մեջ փայլում են անհամար խարույկներ, իսկ նրանց վրա՝ նույնպես անհամար աստղեր։

Հանդարտ բարձրանում է լուսավորված ծուխը։ Խարույկների շուրջը նստած են զինվորներ՝ ցնցոտիներով, կանայք՝ ցնցոտիներով, ծերունիներ, մանուկներ, նստած են հոգնած, գաղրած։

Ինչպես որ աստղազարդ երկնքում ծխի հետքն է մարում, այնպես այդ մարդկանց ամբողջ բազմության վրա անշմարելի նվաղում, մարում է ջերմ ուրախության բոցը։ Այդ մեղմ խավարի մեջ, խարույկների շողքի մեջ, այդ մարդկային անհուն ծովում հանգչում է մեղմ ժպիտը. կամացուկ քուն է վրա գալիս։

Խարույկները հանգչում են։ Լռություն է։ Կապույտ գիշեր։

1924 թ.



Ա. Ա. ՖԱԴԵԵՎ

ՉԱԽՉԱԽՈՒՄ

1.

ՄՈՐՈԶԿԱՆ

Ճապոնական մաշված թուրը զնգզնգացնելով սանդուղքի աստիճաններին՝ Լևինսոնը բակ դուրս եկավ։ Դաշտերից հնդկացորենի մեղրաշոտ էր բուրում։ Գլխավերևում, սպիտակ-վարդագույն տաք փրփուրում, լողում էր հուլիսյան արևը։

Բանբեր Մորոզկան, մտրակով քշելով ճանճրացնող խայտահավերին, վարսակ էր շորացնում բրեզենտի վրա։

— Կտանես Շալդիբայի ջոկատը,— ասաց Լևինսոնը՝ մի ծրար մեկնելով։— Բկրանացի հարոնիր... բայց ոչ, պետք չէ՝ այդտեղ ամեն բան գրված է։

Մորոզկան գժգոհությամբ շուռ տվեց գլուխը, մտրակը խաղացրեց. չէր ուզում գնալ։ Ջանձրացրել էին պաշտոնական տաղտկալի շրջագայությունները, ոչ ոքի պետք չեկող ծրարները, իսկ ամենից շատ՝ Լևինսոնի ոչ տեղական աչքերը։ Խորունկ և մեծ, ինչպես լճեր, դրանք ամբողջովին ընդգրկում էին Մորոզկային և նրա մեջ տեսնում այնպիսի բաներ, որոնք գուցե ինքը Մորոզկան էլ չգիտեր։

«Արիկա»,— մտածեց բանբերը՝ վիրավորված ճպճպացնելով թարթիչները։

— Դե ի՞նչ ես կանգնել,— բարկացավ Լևինսոնը։

— Սա ի՞նչ բան է, ընկեր հրամանատար, հենց որ մի տեղ պետք է գնալ, իսկույն Մորոզկային եք ասում։ Կարծես ջոկատում էլ ոչ ոք չկա...

Մորոզկան դիտմամբ ասաց «ընկեր հրամանատար», որպեսզի ավելի պաշտոնական դուրս գա. սովորաբար աղջանունով էր կոչում։

— Գուցե ի՞նքս գնամ, հա՞,— հարցրեց Լևինսոնը կծու։

— Ինչո՞ւ ինքդ։ Մարդ շա՜տ կա, ինչքան ուզես...

Լևինսոնը ծրարը խոթեց գրպանը այնպիսի մարդու վրճռական տեսքով, որը բոլոր խաղաղ միջոցներն սպառել է։

— Գնա, զենքդ տնտեսվարին հանձնիր,— ասաց նա սպանիչ հանգստությամբ,— և կարող ես կորչել՝ ուր ուզում ես։ Ինձ խոովարարներ պետք չեն...

Գետի կողմից փչող քնքուշ քամին Մորոզկայի անհնազանդ գանգուրներն էր քրքրում։ Անշարժ օշինդրների մեջ, շտեմարանի մոտ անխոնջ ծղրիդները սղոցում էին շիկացած օդը։

— Սպասիր,— մռայլ ասաց Մորոզկան։— Տուր նամակը։

Երբ նամակը պահում էր ծոցում, ոչ այնքան Լևինսոնին, որքան ինքն իրեն պարզաբանեց.

— Ջոկատից հեռանալ ես ոչ մի կերպ չեմ կարող, իսկ հրացանս հանձնել՝ առավել ևս։— Նա փոշոտ գլխարկը քաշեց ծոծրակին և զնգուն, հանկարծակի ուրախացած ձայնով վերջացրեց.— Որովհետև մենք այս շիլան քո սքանչելի աչքերի համար չեփեցինք, սիրելի ընկեր Լևինսոն... Քեզ ասեմ, ինչպես հանքափոր...

— Այդ է, է՞,— ծիծաղեց հրամանատարը,— թե չէ պոզերդ տնկեցիր... դմբո՜...

Մորոզկան քաշեց Լևինսոնի զգեստի կոճակից և խորհրդավոր շշուկով ասաց.

— Ես, եղբայր, արդեն պատրաստվել էի հիվանդանոց գնալու՝ Վարյուխայիս մոտ, իսկ դու քո ծրարով մեջ ընկար։ Գուրս է գալիս, որ հենց դու ես դմբոն...

Նա խորամանկորեն աչքով արավ ու փոթկաց, և նրա ծիծաղի մեջ, նույնիսկ այժմ, երբ խոսում էր կնոջ մասին, տարիներով բորբոսի պես նստած լկտի շեշտեր էին հնչում։

— Տիմո՜շա,— կանչեց Լևինսոնը շեմքին կանգնած անքնությունից նվաղած տղային.— եկ, վարսակին նայիր. Մորոզկան մեկնում է։

Ախոռների մոտ, շուռ տված տաշտին հենած, պայթեցնող Գոնչարենկոն կարկատում էր կաշվե պարկերը։ Նրա գլուխը բաց էր ու արևախանձ, մորուքը՝ մուգ շիկակարմիր և թաղիքի պես պինդ ոլորած։ Կայծքարագույն դեմքը պարկերի

վրա խոնարհած՝ նա ձեռքի լայն շարժումներով խոթում էր ասեղը, ասես եղան էր շարժում։ Հզոր թիակները ջաղացքարերի պես շարժվում էին կտավի տակ։

— Ի՞նչ է, նորի՞ց ես գնում,— հարցրեց պայթեցնողը։

— Ճիշտ այդպես, ձերդ պայթեցնողական գործարժանություն...

Մորոզկան ուղիղ ձգվեց և պատիվ տվեց՝ աջը դնելով անվայել տեղին։

— Աղա՜տ,— ներողամիտ ասաց Գոնչարենկոն,— ես ինքս էլ այդպիսի հիմարն եմ եղել։ Ի՞նչ գործով են ուղարկում։

— Այնպես, դատարկ գործով. հրամանատարը պատվիրեց՝ քիչ ման գալ։ Ապա թե ոչ, ասում է, դու այստեղ երեխա էլ կծնես։

— Հիմար,— փնթփնթաց պայթեցնողը, ատամով կտրելով մոմած թելը.— սուչանյան դատարկախոս։

Մորոզկան ձին ախոռից դուրս բերեց։ Երկայնաբաշ որձ հովատակը լարված ականջներն էր շարժում։ Նա ամրակազմ էր, բրդոտ, արագավազ, նման էր տիրոջը. նույնպիսի պայծառ կանաչաշագանակագույն աչքեր, նույնպիսի կարճ և ծուռ ոտքեր, նույնպես պարզամտորեն խորամանկ և չարաճճի։

— Միշկա-ա՜... ո՜ւ-ո՜ւ... Սատանա-ա՜...— սիրով քրթմընջում էր Մորոզկան՝ թամբակալը պրկելով.— Միշկա-ա՜... ո՜ւ-ո՜ւ... աստծու անասուն...

— Եթե դատենք, թե ով է ձեղանից ավելի խելոք,— լրջորեն ասաց պայթեցնողը,— ոչ թե դու պետք է Միշկային հեծնես ման գաս, այլ Միշկան պետք է քեզ հեծնի, աստված վկա։

Մորոզկան վարգով անցավ անասնանոցի ետեը։

Խոտակալած գյուղամիջյան ճանապարհը դեմ էր առնում գետին։ Գետի մյուս կողմում, արևի շողերի տակ փայլում էին հնդկացորենի և ցորենի արտերը։ Տաքուկ քողի մեջ երևվում էին Սիխոտեալինյան լեռնաշղթայի կապույտ գագաթները։

Մորոզկան երկրորդ սերնդի հանքափոր էր։ Նրա պապը,— աստծուց և մարդկանցից արհամարհված սուչանյան պապը,— դեռ հող էր հերկում. հայրը սեահողն ածուխի հետ էր փոխել։

Մորոզկան ծնվեց մութ բարաքում, № 2 հանքահորի մոտ, երբ խոպոտ շչակը առավոտյան հերթափոխին աշխատանքի էր կանչում բանվորներին։

— Տղա՞ է,— հարցրեց հայրը, երբ հանքի բժիշկը դուրս եկավ նկուղից և ասաց, որ հենց տղա է ծնվել։

— Ուրեմն՝ չորրորդը...— հաշիվ արավ հայրը հնազանդորեն։— Ուրախ կյանք է...

Հետո նա վրան գցեց ածուխից կեղտոտված բրեզենտե բաճկոնը և գնաց աշխատանքի։

Տասներկու տարեկան հասակում Մորոզկան սովորեց շչակի ձայնը լսելուն պես վեր կենալ, հրել վագոնիկները, տանել անհարկի, հայհոյական խոսքեր և օղի խմել։ Իսկ Սուշանի հանքում գինետները հանքախորշերից քիչ չէին։

Հանքահորից հարյուր սաժեն հեռու վերջանում էր ծոռակը, և սկսվում էին բլուրները։ Այնտեղից մամռապատ եղևնիները խստորեն նայում էին գյուղին։ Սպիտակ մշուշապատ առավոտներին տայգայի եղջերուներն աշխատում էին իրենց ձայներով խլացնել շչակների ձայնը, լեռնագագաթների կապույտ բացվածքներով, թևք լեռնանցքներով անվերջանալի ռելսերով ամեն օր ածուխով բեռնված փոխադրիչները սողում էին դեպի Կանգաուզ կայարանը։ Մազութից սևացած թմբուկները, անընդհատ լարվածությունից ցնցվելով, փաթաթում էին սահուն ճոպանները։ Լեռնանցքների ստորոտում, ուր բուրավետ փշատերևների մեջ անկոչ ներս էին խցկվել քարե շենքերը, չգիտես թե ում համար, աշխատում էին մարդիկ, զանազան ձայներով սուլում էին «կուկուշկանները», շառաչում էին էլեկտրական ամբարձիչները։

Կյանքն իսկապես ուրախ էր։

Եվ այդ կյանքում Մորոզկան նոր ուղիներ չէր փընտրում, այլ գնում էր հին, արդեն ստուգված շավիղներով։ Երբ ժամանակը եկավ, գնեց սատինե շապիկ, խրոմե նեղմիտք կոշիկներ և սկսեց տոն օրերը գնալ հովտում գտնվող գյուղը։ Այնտեղ այլ ջահելների հետ նա նվագում էր հարմոշկա, կռիվներ էր սարքում, երգում էր անվայել երգեր և «փչացնում» գյուղի աղջիկներին։

Վերադարձի ժամանակ «հանքահորայինները» բոստաններից գողանում էին ձմերուկներ, մուրոմյան կլորիկ վարունգներ և լողանում էին լեռնային արագահոս գետակում։ Նրանց զիլ, ուրախ ձայներն անհանգստացնում էին տայգան, նվաղած լուսինը նախանձով նայում էր ժայռի ետևից, դետի վրայով լողում էր գիշերային տաքուկ խոնավությունը։ Երբ ժամանակը եկավ, Մորոզկային նստեցրին խեղդուկ, ոտնափաթաթանների և փայտոջիլների հոտով լցված ոստիկանական բաժնում։ Այդ բանը պատահեց ապրիլյան գործադուլի եռուն օրերին, երբ ստորերկրյա ջուրը, պղտոր, ինչպես հանքի կուրացած ձիերի արցունքներ, գիշեր-ցերեկ ծորում էր հանքահորի անցքերով, և ոչ ոք դուրս չէր քաշում այն։

Նրան նստեցրին ոչ թե ինչ-որ նշանավոր քաջագործության համար, այլ ուղղակի բացբերանության պատճառով. հույս ունեին, թե կվախեցնեն և կիմանան խռովություն գրգռողների անունները։ Մորոզկան, մայխինյան սպիտատարների հետ հոտած սենյակում փակված, պատմում էր նրանց անթիվ լկտի անեկդոտներ, բայց գործադուլի պարագլուխներին չմատնեց։

Երբ ժամանակը եկավ, գնաց ռազմաճակատ և ընկավ հեծելազոր։ Այնտեղ, ինչպես բոլորը, սովորեց արհամարհանքով նայել «հետևակ զամբիկին», վեց անգամ վիրավորվեց, երկու անգամ կոնտուզիա ստացավ և լրիվ ազատվեց դեռ մինչև հեղափոխությունը։

Իսկ երբ տուն վերադարձավ, մի երկու շաբաթ հարբեցողությամբ զբաղվեց և ամուսնացավ № 1 հանքահորից մի բարի, անբարոյական ու անպտուղ բանվորուհու հետ։ Նա ամեն ինչ անում էր առանց մտածելու. կյանքը նրան թվում էր մի հասարակ, պարզ բան, ինչպես Սուշանի բոստանների մուրոմյան կլորիկ վարունգը։

Գուցե այդ պատճառով, իր հետ վերցնելով կնոջը, նա տասնութ թվականին գնաց սովետները պաշտպանելու։

Ինչևիցե, այդ ժամանակվանից հանքի մուտքը նրա համար բաց չէր. սովետները պաշտպանել չհաջողվեց, իսկ նոր իշխանությունն այդպիսի ջահելներին շատ էլ չէր հարգում։

...Միշկան բարկացած չխկացնում էր պայտած սմբակներով՝ նարնջագույն բոռերը ձանձրալի բզզում էին ականջի տակ, խճճվում թավ բրգի մեջ, կծառում արյունոտելու չափ։

Մորոզկան ուղևորվեց դեպի Սվիյազինյան մարտաշրջանը։ Վառ կանաչ կաղնեծածկ բլրի ետևում անտեսանելիորեն թաքնվել էր Կռիլովկան. այնտեղ էր կանգնած Շալդիբայի ջոկատը։

— Վը՜-զ-զ... վը՜-զ-զ...— տաք-տաք երգում էին անդադրում բոռերը։

Տարօրինակ մի ձայն ճայթեց և գլորվեց բլրի ետևում։ Նրան հետևեց երկրորդը, երրորդը... Ասես շղթայապուրծ մի գազան իր խոյանքով ջարդում էր փշոտ թփուտը։

— Սպասիր,— սանձը քաշելով՝ ասաց Մորոզկան հազիվ լսելի ձայնով։

Միշկան հնազանդորեն անշարժացավ՝ մկանուտ իրանն առաջ մղելով։

— Լսո՞ւմ ես... Կրակում են,— ուղղվելով՝ մրթմրթաց բանբերը.— Կրակում են... հա՞...

— Տա՜-տա՜-տա՜,— երգեց գնդացիրը բլրի ետևից՝ հրե դերձաններով կարելով բերդանկաների խլացուցիչ որոտը, ճապոնական կարաբինների բոլորաձև հատու լացը։

— Սրարշա՜վ,— բղավեց Մորոզկան լարված, խռովահույզ ձայնով։ Ոտքերի ծայրերը վարժ կերպով կպան ասպանդակին. դողացող մատներն արձակեցին ատրճանակի պատյանը, իսկ Միշկան խշխշացող թփուտի միջով արդեն սլանում էր դեպի բարձունքը։

Կատարին չհասած՝ Մորոզկան կանգնեցրեց ձին։

— Սպասիր այստեղ,— ասաց՝ ցատկելով գետնին և սանձը գցելով թամբի կեղին. Միշկան, հավատարիմ ստրուկը, կապելու կարիք չուներ։

Մորոզկան սողալով բարձրացավ գագաթը։ Աջ կողմից, Կռիլովկայի կողքով, կանոնավոր շղթայիկներով, ինչպես զորահանդեսում, վազում էին միանման փոքրիկ կերպարանքներ՝ դեղնականաչ բոլորքով գլխարկները գլխներին։ Ձախ կողմից, խուճապով, անկանոն խմբերով, ոսկեհասակ դարու մեջ դես-դեն էին ընկնում մարդիկ, որոնք վազելիս կրակում էին բերդանկաներից։ Կատաղած Շալդիբան (Մորոզկան նրան ճանաչեց սևաթույր ձիուց և մորթե սրածայր փափախից) մտրակը շրխկացնում էր ամեն կողմ և չէր կա-

բողանում ետ դարձնել մարդկանց։ Երևում էր, թե ինչպես ոմանք թաքուն պոկում էին կարմիր ժապավենները։

— Սրիկանե՞ր, ի՞նչ են անում, մի տես, ի՞նչ են անում,— փնթփնթում էր Մորոզկան՝ ավելի ու ավելի գրգռվելով փոխհրաձգությունից։

Փախչողների ետևից կաղալով վազում էր մի վտիտ ջահել՝ վերքը թաշկինակով կապած, քաղաքային կարճ բաճկոնով, հրացանը անվարժ գետնին քսելով։ Մնացածներն, ըստ երևույթին, դիտմամբ հարմարվում էին նրա վազքին, չկամենալով նրան մենակ թողնել։ Խումբն արագորեն նոսրանում էր, սպիտակ վիրակապով ջահելն էլ ընկավ։ Սակայն նա սպանված չէր. մի քանի անգամ փորձեց վեր կենալ, սողաց, տարածեց ձեռքերը, կանչեց անլսելի ձայնով։

Մարդիկ արագացրին քայլերը, առաջ անցան՝ թողնելով նրան իրենց ետևում։

— Սրիկանե՞ր, մի տես, թե ինչ են անում,— ասաց Մորոզկան՝ ջղայնորեն մատները սեղմելով քրտնած հրացանին։— Միշկա՜, ե՛կ այստեղ,— հանկարծ բղավեց նա այլայլված ձայնով։

Ճանկոտված, արյունոտված հովատակը, ոռնգները լայն փքելով, թեթև խրխնջյունով նետվեց դեպի գագաթը...

Մի քանի վայրկյան անց, թռչնի պես տափակած՝ Մորոզկան թռչում էր գարու արտով։ Գլխավերևում չարագուշակ վզզում էին արճճահրեղեն բոռերը, ձիու թիկունքն ասես անդունդն էր ընկնում, շեշտակի սուլում էր ոտքերի տակի գարին...

— Պառկի՛ր...— Բղավեց Մորոզկան՝ մի կողմ նետելով սանձը և ոտքով մոլեգին խթանելով հովատակին։

Միշկան չէր ուզում պառկել գնդակների տարափի տակ և վեր-վեր էր ցատկում չորս ոտքերով, մեջքի վրա ընկած կերպարանքի շուրջը, որի գլուխը կապված էր սպիտակ, արյունով ներկված վիրակապով։

— Պառկի՛ր...— կատաղած խռխռում էր Մորոզկան՝ ձիու շրթունքները սանձով կտրատելով։

Լարվածությունից դողացող ծնկները ծալելով՝ Միշկան պառկեց գետնին։

— Ցավո՞ւմ է, վա՜յ... ցա-վո՞ւմ է...— տնքում էր վիրա-

վորը, երբ բանբերը թամբի վրա էր գցում նրան։ Երիտասարդի դեմքը դժգույն էր, անբեղ և մաքուր, թեև ներկված էր արյունով։

— Լոիր, նվվա՞ն...— շշնջաց Մորոզկան։

Մի քանի րոպե հետո, սանձը թողած, բեռը երկու ձեռքով բռնած, նա բլրի կողքով պլանում էր գեպի այն գյուղը, ուր կանգնած էր Լևինսոնի ջոկատը։

2.

ՄԵՉԻԿԸ

Ճիշտն ասաց, փրկվածը առաջին հայացքից գուր չեկավ Մորոզկային։

Մորոզկան չէր սիրում մաքուր մարդկանց։ Կյանքի փորձից նա գիտեր, որ դիանք փափուկական, անպետք մարդիկ են, որոնց հավատալ չի կարելի։ Բացի դրանից, վիրավորը առաջին իսկ պահից ցույց տվեց, որ ինքը շատ էլ քաջ մարդ չէ։

— Դեղնակտուց է...— տոտմների արտանքից ծաղրանքով ասաց բանբերը, երբ ուշագնաց ջահելին պառկեցրին Բյաբեցի խրճիթում։— Մի քիչ ճանկռել են, իսկ նա արդեն խեղճացել է։

Մորոզկան ուզում էր մի շատ վիրավորական բան ասել, բայց խոսք չէր գտնում։

— Երևում է, փալնքոտի մեկն է...— փնթփնթում էր նա դժգոհ։

— Լեզուդ քեզ պահիր,— խստորեն կտրեց նրա խոսքը Լևինսոնը։— Բակլանով...— Գիշերը ջահելին հիվանդանոց կտանեք։

Վիրավորի վերքը կապեցին։ Բաճկոնի ներսի գրպանում գտան մի քիչ փող, վկայաթղթեր (նրա անունը Պավել Մեչիկ էր), մի կապ նամակներ և մի կնոջ լուսանկար։

Մոտ քսան խոժոռ, չսափրված, արևից սևացած մարդ հերթով քննեցին քնքուշ, բաց գույնի խոպոպիկներով ազջրկա դեմքը, և նկարը դարձավ իր տեղը։ Վիրավորը պառկած էր ուշագնաց՝ սառած, անարյուն շրթունքներով, անկենդան ձեռքերը վերմակի վրա մեկնած։

Նա լսեց, թե ինչպես խեղդուկ, խավար մի երեկո նրան, ցնցվող սայլ դրած, գյուղից դուրս բերին. ուշքի եկավ արդեն պատգարակի վրա։ Սահուն ճոճման առաջին զգացողությունը խառնվեց գլխավերևում լողացող աստղազարդ երկնքի աղոտ զգացողության հետ։ Ամեն կողմից շրջապատում էր թանձր, կույր մթությունը, բուրում էր փշատերևների ու փտած սաղարթների թարմ և թունդ, ասես սպիրտով հագեցած հոտը։

Նա հոգու խորքում լուռ երախտագիտություն էր զգում այն մարդկանց հանդեպ, որոնք տանում էին իրեն այդպես հանդարտ և զգուշությամբ։ Ուզում էր խոսել նրանց հետ. շրթունքները շարժեց և, առանց մի խոսք ասելու, նորից ընկավ ինքնամոռացության մեջ։

Երբ նորից զարթնեց, արդեն ցերեկ էր, մայրինների գոլորշի արձակող ճյուղերում հալվում էր փարթամ և ծույլ արեգակը։ Մեչիկը պառկած էր մահճակալին, ստվերում։ Աջ կողմում կանգնած էր մի նիհար, բարձրահասակ, ձիգ տղամարդ՝ հիվանդանոցային գորշ խալաթը հագին, իսկ ձախ կողմում, ոսկեգույն խարտյաշ ծանր ծամերն ուսին գցած, մահճի վրա թեքվել էր մի հանգիստ և փափկիկ կանացի կերպարանք։

Առաջին պահ Մեչիկը համակվեց մի անիմաստ, բայց ամեն ինչ ընդգրկող, համարյա անսահման բարության և քնքշության զգացումով, որը բխում էր այդ կնոջ հանգիստ կերպարանքից, նրա խոշոր, ծխագույն աչքերից, փարթամ ծամերից, տաք, արևառ ձեռքերից։

— Որտե՞ղ եմ,— հարցրեց Մեչիկը կամացուկ։

Բարձրահասակ, ձիգ տղամարդն ինչ-որ վերևից մեկնեց իր ոսկրոտ, կոշտ ափը, շոշափեց զարկերակը։

— Կանցնի...— ասաց հանգիստ։— Վարյա, պատրաստեք ամեն ինչ վիրակապելու համար և կանչեք Խարչենկոյին...— Մի քիչ լռեց և, չգիտես ինչու, ավելացրեց.— խկույն։

Մեչիկը ցավով բարձրացրեց թարթիչները և նայեց խոսողին, որն ուներ երկար ու դեղին դեմք, խոր ներս ընկած,

փայլուն աչքեր։ Դրանք անտարբեր ուղղվեցին դեպի վիրավորը, և մի աչքը անսպասելի ու տխուր աչքով արավ։

Սաստիկ ցավում էր, երբ չորացած վերքերի մեջ խոթում էին կոշտ թանզիֆը, բայց Մեչիկը շարունակ զգում էր կանացի փաղաքշող ձեռքերի հպումը և չէր գոռում։

— Հիմա լավ է,— ասաց բարձրահասակ տղամարդը, վերջացնելով վիրակապումը։— Երեքն իսկական անցք են, իսկ գլխին՝ հենց այնպես, քերծվածք է։ Թե մի ամսից չփակվեն, ես Ստաշինսկին չեմ լինի։— Նա մի քիչ աշխուժացավ, մատներն ավելի արագ շարժեց, միայն աչքերը նայում էին նույն թախծոտ փայլով, և աչը միակերպ թարթում էր։ Մեչիկին օգնեցին։ Նա բարձրացավ արմունկների վրա և նայեց շուրջը։

Ինչ-որ մարդիկ իրարանցման մեջ էին գերանաշեն բարաքի մոտ, ծխնելույզից ոլորվելով բարձրանում էր կապտավուն ծուխը, կտուրից խեժ էր ծորում։ Սևակտուց, ահագին փայտփորը ջանասիրությամբ թխկթխկացնում էր անտառի ծայրում։ Փոքրիկ ցուպին հենված՝ ամեն բանի բարեսրտորեն էր նայում բացգույն մորուքով և խալաթը հագին մի խաղաղ ծերուկ։

Ծերուկի վերևում, բարաքի վերևում, Մեչիկի վերևում պարուրված խեժերի բույրով, լողում էր տայգայի հագեցած լռությունը։

Մոտ երեք շաբաթ առաջ, դուրս գալով քաղաքից, ուղեգիրը ոտնամանի մեջ և ատրճանակը գրպանում, Մեչիկը շատ աղոտ էր պատկերացնում, թե ինչ է սպասում իրեն։ Նա աշխույժ սուլում էր քաղաքային մի ուրախ եղանակ, ամեն մի երակում խաղում էր արյունը, պայքար և շարժում էր ուզում։

Նրա աչքերի առաջ կենդանի կանգնում էին բլուրների մարդիկ (որոնց միայն թերթերից էր ծանոթ), վառոդի ծուխ և հերոսական քաջագործություններ հագած։ Գլուխը ուռչում էր հետաքրքրությունից, հանդուգն երևակայությունից, բացգույն դանգուրներով աղջկա մասին տանջալիորեն քաղցր հիշողություններից...

Նա՝ այդ աղջիկը, երևի առաջվա պես առավոտը սուրճ է խմում թխվածքով և, կապույտ թղթով փաթաթված իր գրքերը փոկով կապելով, գնում է սովորելու...

Հենց Կոբլովկայի մոտ թփերից դուրս թռան մի քանի հոգի՝ բերդանկաները ձեռքներին։

— Ո՞վ ես,— հարցրեց նավաստու գլխարկ դրած սրադեմ ջահելը։

— Ինձ... ուղարկել են քաղաքից...

— Փաստաթղթե՞րդ։

Հարկ եղավ ատնամանները հանել և դուրս բերել ուղեգիրը։

— «...Մերձ...ծովյան... սոցիալիստ... հեղա- փո- խականների... մարզային կոմիտե...»— կարդաց նավաստին վանկ-վանկ, տատասկափշի պես ծակող աչքերը մերթ ընդ մերթ Մեչիկի վրա ուղղելով։— Այդ-պե՞ս...— ծոր տվեց անորոշ։

Եվ հանկարծ, գազազած, թափով բռնեց Մեչիկի ղեկստի օձիքից ու ճչաց լարված, ճղճղան ձայնով.

— Բա էդ ինչպե՞ս ես, դարշելի...

— Ի՞նչ... ի՞նչ,— շփոթվեց Մեչիկը։— Բայց չէ՞ որ սա «մաքսիմալիստներինն» է... Կարդացեք, ընկեր...

— Խուզարկե՛լ...

Մի քանի րոպե հետո Մեչիկը, ծեծված և զինաթափված, կանգնած էր մորթե սրածայր փափախ դրած մարդու առաջ, որն իր սև աչքերով այրում էր նրան ոտքից մինչև գլուխ։

— Նրանք չհասկացան...— ասում էր Մեչիկը՝ նյարդայնորեն հեծկլտալով և կակազելով։— Ախր այնտեղ գրված է «մաքսիմալիստների»։ Ուշադրություն դարձրեք, խնդրեմ։

— Հապա մի տուր թուղթը։

Մորթե փափախով մարդը աչքերը հառեց ուղեգրին։

Նրա հայացքի տակ ճմլված թերթիկը կարծես ծխում էր։ Հետո նա աչքերը դարձրեց նավաստու վրա։

— Հիմա՛ր...— ասաց խստորեն.— Չե՞ս տեսնում, «մաքսիմալիստների»...

— Իհա՛րկե, իհա՛րկե,— բացականչեց ուրախացած Մեչիկը։— Չէ՞ որ ես ասացի՝ մաքսիմալիստների... Ախր դա բոլորովին այլ բան է։

— Դուրս է գալիս, որ զուր ծեծեցինք...— ասաց նավաստին հիասթափված։— Զարմանալի է։

Հենց նույն օրը Մեչիկը դարձավ ջոկատի իրավահավասար անդամ։

Նրան շրջապատողները բոլորովին նման չէին այն մարդկանց, որոնց ստեղծել էր իր վառ երևակայությունը։ Սրանք ավելի կեղտոտ էին, ոջլոտ, ավելի կոպիտ և ավելի անմիջական։ Իրարից փամփուշտներ էին գողանում, ամեն մի չնչին բանի համար գրգռված հայհոյում էին և մի կտոր ճարպի պատճառով ծեծում, արյունլվիկ էին անում իրար։ Նրանք ծաղրում էին Մեչիկին ամեն մի առիթով՝ նրա քաղաքային բաճկոնի, կանոնավոր խոսակցության համար, այն բանի համար, որ չգիտեր հրացան մաքրել և նույնիսկ, որ ճաշին մի ֆունտից պակաս էր հաց ուտում։

Սակայն դրա փոխարեն նրանք ոչ թե գրքային, այլ իսկական, կենդանի մարդիկ էին։

Այժմ, տայգայի խաղաղ բացատում պառկած, Մեչիկը ամեն ինչ նորից վերապրեց։ Նա ափսոսում էր այն լավ, միամիտ, բայց անկեղծ զգացմունքի համար, որով ջոկատ էր գալիս։ Այժմ նա առանձին, հիվանդագին զգայնությամբ էր ընդունում շրջապատողների հոգատարությունն ու սերը, տայգայի նիրհող լռությունը։

Հիվանդանոցը գտնվում էր երկու աղբյուրների միաձուլման տեղում։ Անտառի ծայրին, ուր փայտփորը թխկթխկացնում էր, շշնջում էին մանչուրական ծիրանագույն թեքեները, իսկ ներքևում, զառիվայրի տակ, անխոնջ երգում էին արծաթավուն սիզախոտով պարուրված աղբյուրները։ Հիվանդները և վիրավորները քիչ էին։ Նանր հիվանդ երկուսն էին՝ փորից վիրավորված սուչանյան պարտիզան Ֆրոլովը և Մեչիկը։

Ամեն առավոտ, երբ նրանց դուրս էին հանում խեղդուկ բարաքից, Մեչիկին մոտենում էր բացգույն մորուքով խաղաղ ծերուկ Պիկան։ Նա հիշեցնում էր մի շատ հին, բոլորովին մոռացված նկար, որտեղ անխոով լռության մեջ, հին, մամառապատ մենաստանի մոտ, լճի զմրուխտյա ափին նստած է մի շիկահեր ու խաղաղ ծերուկ, փեղույրը գլխին, և ձուկ է որսում։ Ծերուկի գլխավերևում խաղաղ երկինքն է. ուրբ թմրածության մեջ՝ խաղաղ եղևնիները, եղեգներով պատած խաղաղ լիճը։ Խաղաղություն, քուն, լռություն...

Արդյո՞ք այդ քնի համար չի թախծում Մեչիկի հոգին։

Երգեցիկ ձայնով, ինչպես գյուղական տիրացու, Պիկան պատմում էր իր որդու՝ նախկին կարմիրգվարդիականի մասին։

— Հա-հա՜։ Գալիս է նա ինձ մոտ։ Ես, իհարկե, նստած եմ մեղվանոցում։ Դե՛հ, վաղուց չէինք տեսել իրար։ Համբուրվեցինք, պարզ բան է։ Համա տեսնում եմ, մի տեսակ մռայլ է նա..., «Ես,— ասում է,— հայրիկ, Չիտա եմ գնում»։— «Պատճա՞ռը...» «Այնտեղ,— ասում է,— հայրի՛կ, չեխոսլովակներ են հայտնվել»։ «Է՛հ, ինչ կա որ,— ասում եմ,— թող հայտնվեն... Ապրիր այստեղ։ Նայիր,— ասում եմ,— ինչքա՞ն բարիք կա...»։ Եվ ճիշտ որ իմ մեղվանոցը ոնց որ իսկական դրախտ. կեչին ասեմ քեզ, լորենին ծաղկած, մեղուներ... բզ՛զ-զ... բզ՛զ-զ...

Պիկան գլխից հանում էր փափուկ սև գլխաթակը և ուրախ պատեցնում շուրջը։

— Եվ ի՞նչ կասես... Ջմնաց։ Այդպես էլ չմնաց... Դնայ։ Հիմի մեղվանոցն էլ «կոլչակները» ավերեցին, որդիս էլ չկա... Այ քեզ կյա՜նք...

Մեչիկը սիրում էր լսել նրան։ Դուր էր գալիս ծերուկի երգեցիկ ձայնը, նրա դանդաղ, ներսից եկող շարժումները։ Բայց ավելի շատ սիրում էր, երբ գալիս էր գթության քույրը։ Նա կարում էր և լվացք անում ամբողջ հիվանդանոցի համար։ Նրա մեջ անսահման սեր էր զգացվում մարդկանց հանդեպ, իսկ Մեչիկի նկատմամբ նա առանձնապես քնքուշ էր ու հոգատար։ Հետզհետե ապաքինվելով՝ Մեչիկն սկսեց նայել եզկրային աչքերով։ Նա մի քիչ կռացած էր և դժգույն, իսկ ձեռքերը կնոջ համար չափից ավելի մեծ էին։ Բայց քայլում էր մի առանձին, ոչ սահուն, հաստատուն քայլվածքով, և նրա ձայնը միշտ մի բան էր խոստանում։

Եվ երբ նա նստում էր իր կողքին՝ մահճակալին, Մեչիկն ոչինչ հանգիստ պառկել չէր կարողանում։ (Նա երբեք չէր խոստովանի այդ բանը շիկագանգուր աղջկան)։

— Շնացող է նա՝ Վարկան,— ասաց մի օր Պիկան։— Մորոզկան՝ նրա ամուսինը, ջոկատում է, իսկ սա շնություն է անում...

Մեչիկը նայեց այն կողմը, ուր աչքը թարթելով ցույց էր տալիս ծերուկը։ Բուժքույրը անտառի բացատում լվացք էր

անում, իսկ նրա մոտ պտտվում էր բուժակ Խարչենկոն։ Նա հաճախ թեքվում էր բուժքրոջ կողմը և մի ուրախ բան ասում, իսկ վերջինս, ավելի ու ավելի գործից կտրվելով, նայում էր նրան տարօրինակ, ծխագույն հայացքով։ «Ծնացող» խոսքը Մեչիկի մեջ սուր հետաքրքրություն զարթեցրեց։

— Բայց ինչո՞ւ է... այդպես,— հարցրեց նա Պիկային՝ աշխատելով թաքցնել իր շփոթմունքը։

— Սատանան գիտե, թե ինչու է այդպես քնքուշ։ Ոչ ոքի չի կարողանում մերժել և վերջ...

Մեչիկը հիշեց այն առաջին տպավորությունը, որ գործել էր իր վրա բուժքույրը, և մի անհասկանալի վիրավորանք զարթնեց նրա մեջ։

Այդ րոպեից Մեչիկն սկսեց ավելի ուշադիր դիտել նրան։ Իսկապես բուժքույրը շափազանց շատ էր «թրև գալիս» տղամարդկանց հետ, յուրաքանչյուրի հետ, ով գեթ մի քիչ կարող էր յոլա գնալ առանց ուրիշի օգնության։ Բայց չէ՞ որ հիվանդանոցում այլևս կին չկար։

Մի առավոտ, վիրակապությունից հետո, բուժքույրը ավելի երկար մնաց՝ շտկելով Մեչիկի անկողինը։

— Մի քիչ նստիր մոտս...— ասաց նա՝ կարմրելով։

Բուժքույրը նայեց նրան երկար և ուշադիր, ինչպես այն օրը, լվացք անելիս, նայում էր Խարչենկոյին։

— Սրան մի տես...— ասաց ակամա, որոշ զարմանքով։

Սակայն, անկողինը կարգի բերելուց հետո, նստեց կողքին։

— Խարչենկոն քեզ դո՞ւր է գալիս,— հարցրեց Մեչիկը։

Նա հարցը լսեց՝ պատասխանեց սեփական մտքերին, ծխագույն մեծ աչքերով Մեչիկին ձգելով դեպի իրեն։

— Եվ ի՞նչ ցահել է,— և հանկարծ գլխի ընկնելով,— Խարչենկո՞ն... Ինչ է որ, ոչինչ։ Դուք բոլորդ էլ մի սաների կտավ եք...

Մեչիկը ձեռքը բարձի տակ տարավ և դուրս բերեց լրագրի թղթով փաթաթված մի փոքրիկ ծրար։ Դժգունած լուսանկարից նրան նայեց ծանոթ կուսական դեմքը, բայց այնպես սիրելի չթվաց, ինչպես առաջ. այդ դեմքը նայում էր օտար, շինծու ուրախությամբ։ Ու թեև Մեչիկը վախենում էր խոստովանել, բայց նրան տարօրինակ մի զգացում տիրեց, թե ինչպես կարող էր ինքը առաջ այնքան շատ մտածել նրա

մասին։ Նա դեռ չգիտեր, թե ինչու է անում այդ բանը, և լա՞վ էր արդյոք, երբ բուժքրոջը մեկնում էր շեկ գանգուրներով աղջկա լուսանկարը։

Բուժքույրը զննեց այն՝ նախ մոտիկից, ապա՝ փոքր-ինչ հեռվից, և հանկարծ, լուսանկարը վայր ձգելով, ճչաց, վեր թռավ անկողնից ու արագ ետ նայեց։

— Լավն է,— ասաց թիկենու ետևից մեկի ծաղրական խռպոտ ձայնը։

Մեչիկը ծուռ նայեց դեպի այն կողմը և տեսավ տարօրինակ ծանոթ դեմքը՝ գլխարկի տակից երևացող ժանգագույն անհնազանդ մազափնջով ու կանաչաշագանակագույն, ծաղրող աչքերով, որ այն ժամանակ ուրիշ արտահայտություն ունեին։

— Դե, ինչո՞ւ վախեցար,— հանգիստ շարունակեց խռպոտ ձայնը։— Ես ասացի ոչ թե քեզ համար, այլ՝ նկարի... Շատ կնիկներ եմ փոխել, իսկ պատկերները չունեմ։ Գուցե դու ինձ երբեմն կնվիրե՞ս...

Վարյան հանգստացավ և ծիծաղեց։

— Այ թե վախեցրի՜ր...— ասաց ոչ իր, երգեցիկ կանացի ձայնով։— Որտեղի՞ց հայտնվեցիր, սատանա...— Եվ դարձավ Մեչիկին։— Սա Մորոզկան է, իմ ամուսինը։ Միշտ մի բան կսարքի...

— Մենք իրար հետ, ախր, ծանոթ ենք... մի քիչ,— ասաց բանբերը՝ ծաղրական ժպիտով ընդգծելով «մի քիչ» խոսքերը։

Մեչիկը պառկած էր ծեծվածի պես և ամոթից ու վիրավորանքից խոսքեր չէր գտնում ասելու։ Վարյան արդեն մոռացել էր լուսանկարը և, խոսելով ամուսնու հետ, ոտքը դրել էր նկարի վրա։ Մեչիկն ամաչում էր նույնիսկ խնդրել, որ լուսանկարը վերցնեն։

Իսկ երբ նրանք գնացին տայդա, նա, ոտքերի ցավից ատամները սեղմելով, ինքը վերցրեց հողի մեջ ճմռթված նկարը և կտոր-կտոր արեց։

3.

ՎԵՑԵՐՈՐԴ ԶԳԱՅԱՐԱՆ

Մորոզկան և Վարյան վերադարձան կեսօրին՝ չնայելով իրար, հոգնած և ծույլ։

Մորոզկան դուրս եկավ անտառի բացատը և, երկու մատը բերանը խոթելով, երեք անգամ սուլեց զիլ, ականջ ծակող սուլոցով։ Եվ երբ, ինչպես հեքիաթում, թավուտից դուրս թռավ գանգրահեր հնչեղամբակ հովատակը, Մեչիկը հիշեց, թե որտեղ էր տեսել այդ երկուսին։

— Ճիխրյուտկա-ա... Շան որդի, շա՞տ սպասեցիր...— փաղաքշանքով փնթփնթաց բանբերը։

Մեչիկի մոտից անցնելով՝ նա նայեց խորամանկ քըմծիծաղով։

Հետո սուզվելով զառիվայրում՝ ձորերի ստվերոտ կանաչի մեջ, Մորոզկան դեռ շատ անգամ հիշեց Մեչիկին։ «Եվ ինչո՞ւ են այդպիսիները մեզ մոտ գալիս,— մտածում էր նա զայրույթով ու տարակուսանքով։— Երբ սկսում էինք, ոչ ոք չկար, իսկ հիմա, երբ պատրաստ է՝ գալիս են»... Նրան թվում էր, թե Մեչիկն իսկապես եկել է «պատրաստ»-ին, թեև իսկական ծանր խաչի ճամփան առջևումն էր։ «Գալիս է այդպիսի մի մունդրիկ, կակղում է, ապականում, իսկ մենք պետք է տակից դուրս գանք։ Եվ ի՞նչ է գտել իմ հիմար կինը նրա մեջ»։

Նա մտածում էր նաև այն մասին, որ կյանքն ավելի է դժվարանում, սուչանյան հին շավիղները խոտակալում են, պետք է ինքդ ճամփա ընտրես։

Արտասովոր ծանր խոհերի մեջ Մորոզկան չնկատեց, թե ինչպես է մտել հովիտը։ Այնտեղ, բուրումնավետ սեղում, վայրի, գանգուր առվույտում մանգաղներն էին հնչում. մարդկանց վերևում լողում էր ջանասեր աշխատավոր օրը։ Մարդիկ առվույտի պես գանգուր մորուքներ ունեին, քրտնքոտ և երկար, մինչև ծնկները հասնող շապիկներ։ Նրանք քայլում էին հնձաշերտով՝ համաչափ, խոնարհված քայլով, և խոտերը աղմուկով պառկում էին ոտքերի մոտ՝ բուրավետ ու ծույլ։

Տեսնելով զինված ձիավորին՝ մարդիկ առանց շտապելու թողեցին աշխատանքը և, արևից պաշտպանվելով վաստակած ափերով, երկար նայում էին նրա ետևից։

— Մոմի պես է,— հիանում էին նրանք Մորոզկայի նրստելուսձևից, երբ սա, ասպանդակների վրա բարձրացած, ուղղաձիգ, թամբի առջևի կեղին թեքված, անցնում էր սահուն վարգով, հազիվ ցնցվելով վազքի պահին, ինչպես մոմի բոցը։

Գետի ոլորապտույտում, գյուղի նախագահ Խոմա Ռյաբեցի բոստանների մոտ, Մորոզկան կանգնեցրեց ձին։ Բոստանների վրա տիրող հոգատար աչք չէր զգացվում. երբ տերը զբաղված է հասարակական գործերով, բոստանները խոտակալում են, փտում է պապական հյուղը, հաստափոր սեխերը դժվարությամբ են հասնում օշինդրների մեջ, և բոստաններում տնկված խրտվիլակը նման է սատկող թռչնի։

Գողի պես շուրջը նայելով՝ Մորոզկան ձին դարձրեց դեպի ծռված հյուղը։ Զգուշությամբ ներս նայեց։ Այնտեղ ոչ ոք չկար։ Դես ու դեն ընկած էին ինչ-որ լաթեր, գերանդու մի ժանգոտած կտոր, վարունգի և սեխի չոր կեղևներ։ Արձակելով պարկը՝ Մորոզկան ցած թռավ ձիուց և, գետնին հակվելով, անցավ ածուներով։ Տենդորեն կտրտելով պատատացողունները՝ սեխերը կոխում էր պարկը, մի քանիսը տեղնուտեղը ուտում էր՝ ծնկի վրա ջարդելով։

Միշկան, պոչը շարժելով, նայում էր տիրոջը խորամանկ, հասկացող աչքերով, երբ հանկարծ, շրշյուն լսելով, տնկեց բրդոտ ականջները և մազոտ գլուխը դարձրեց դեպի գետը։ Ուռենու թփուտից ափ ելավ երկարամորուս, մեծասկոր մի ծերունի՝ կտավե վարտիքով և թաղիքե դարչնագույն գլխարկով։ Նա դժվարությամբ էր պահում ձեռքերի մեջ սաստիկ ցնցվող ձկնորսական կողովը, որի մեջ տափակախոռիկ ահագին լոսդին պատեպատ էր զարնվում, մաքառելով մահվան դեմ։ Ձկնորսական կողովից սառը շիթերով ջրախառն, մորեգույն արյունը հոսում էր կտավե վարտիքի, բոբիկ ոտքերի ամուր թաթերի վրա։

Խոմա Եգորովիչ Ռյաբեցի բարձրահասակ կերպարանքից Միշկան ճանաչեց մուգ դարչնագույն, լայնագավակ մատակ ձիու տիրոջը, այն ձիու, որի հետ, տախտակե միջնորմով

բաժանված, Միշկան ապրում և սնվում էր միևնույն ախոռում։ Այն ժամանակ նա սիրալիր ցցեց ականջներն ու, գլուխը ետ ձգելով, հիմարաբար և ուրախ խրխնջաց։

Մորոզկան վախեցած վեր ցատկեց և, երկու ձեռքով տոպրակը բռնած, քարացավ կիսաթեք դրության մեջ։

— Դու այդ ի՞նչ ես... անում...— վիրավորված և դողացող ձայնով ասաց Ռյաբեցը՝ նայելով Մորոզկային անտանելի խիստ ու վշտալի հայացքով։ Նա ձեռքից բաց չէր թողնում սաստիկ ցնցվող ձկնորսական կողովը, և ձուկը թպրտում էր նրա ոտքերի մոտ, ինչպես սիրտը՝ շարտահայտված, այրող խոսքերից։

Մորոզկան ցած գցեց պարկը և վախեցած, գլուխը ուսերի մեջ քաշելով, վազեց դեպի ձին։ Արդեն թամբի վրա նա մտածեց այն մասին, որ պետք էր սեխերը թափել և պարկն իր հետ առնել, որպեսզի հանցանքի ոչ մի ապացույց չմնա։ Բայց հասկանալով, որ այժմ արդեն միևնույն է, խթեց հովատակին և սլացավ ճամփով՝ փոշոտ, խենթ սրարշավով։

— Սպասի-ի՞ր, մենք քո դատաստանը կանե՛նք... կանե՛նք... կանե՛նք...— աղաղակում էր Ռյաբեցը, կրկնելով նույն խոսքը և դեռևս չհավատալով, որ այն մարդը, որին նա մի ամիս շարունակ սնել էր և հագցրել, ինչպես իր որդուն, կողոպտում է իր բոստանները, այն էլ այնպիսի ժամանակ, երբ դրանք խոտակալում են այն պատճառով, որ դրանց տերն աշխատում է գյուղական համայնքի համար։

...Ռյաբեցի փոքրիկ պարտեզի ստվերում դրված կլոր սեղանին քարտեզը փռած, Լևինսոնը հարցուփորձ էր անում հենց նոր վերադարձած հետախույզին։

Հետախույզը, գեղջկական մկդակած հագուստով և ոտքերին տրեխներ, եղել էր ճապոնական դիրքերի հենց կենտրոնում։ Նրա կլոր, արևակեզ դեմքը վառվում էր դեռ նոր անցած վտանգի ուրախալի գրգիռով։

Հետախույզի պատմելով՝ ճապոնական գլխավոր շտաբը գտնվում էր Յակովլևկայում։ Երկու վաշտ Սպասկ-Պրիմորսկից տեղաշարժվել էին Սանդագոու, բայց Սվիյագինսկի ճյուղը մաքրված էր, և մինչև Շաբանովսկի Կլյուչը հետախույզն անցել էր գնացքով՝ երկու զինված պարտիզանների հետ, որոնք Շալդիբայի ջոկատից էին։

— Իսկ Շալդիբան ո՞ւր է նահանջել։

— Դեպի կորեական ագարակները...

Հետախույզը փորձեց դրանք գտնել քարտեզի վրա, բայց դա այնքան էլ հեշտ չէր, և նա, չկամենալով տգետ երևալ, անորոշ կերպով մատը դրեց հարևան գավառի վրա։

— Կոիլովկայի մոտ նրանց լավ են ջարդել,— շարունակեց նա աշխույժ, քիթը վեր քաշելով։— Այժմ տղերանց կեսը ցրվել է գյուղերում, իսկ Շալդիբան նստած է կորեական ձմեռանոցում և չումիզա* է խժռում։ Ասում են, թե լավ խմում է։ Խելքը թոցրել է բոլորովին։

Լևինսոնը նոր լուրեր համեմատեց դաուբիխինյան սպիտատար Ստիրկշայի հայտնած և քաղաքից ուղարկված տեղեկությունների հետ։ Ինչ-որ վատ բան էր զգացվում։ Այդ առումով Լևինսոնն ուներ մի առանձին հոտառություն՝ վեցերորդ զգայարան, ինչպիսին ունի շղջիկը։

Վատն զգացվում էր նրանից, որ Սպասսկոյե գնացած կոոպերատիվի նախագահը երկրորդ շաբաթն էր տուն չէր վերադառնում, և նրանից, որ երկու օր առաջ ջոկատից փախել էին մի քանի սանդագոույան գյուղացիներ, որոնք անսպասելիորեն կարոտել էին իրենց ընտանիքներին, և նրանից, որ կաղ խունխուզ Լի Ֆուն, որը ջոկատի հետ բռնել էր դեպի Ուբորկա տանող ճամփան, անհայտ պատճառներով թեքվել էր դեպի Ֆուձինի ակունքը։

Լևինսոնը նորից ու նորից էր սկսում հարցուփորձ անել և նորից սուզվում էր քարտեզի մեջ։ Նա չափազանց հաբերատար էր և հաստատակամ, ինչպես տայգայի ծեր գայլը, որի ատամները գուցե արդեն չկան, բայց որը սիրաբար էր նախից տանում է ոհմակները՝ շատ սերունդների անհաղթ իմաստությամբ։

— Դե, իսկ մի այնպիսի առանձին բան... չէ՞ր զգացվում։

Հետախույզը նայում էր առանց հասկանալու։

— Հոտառությամբ, հոտառությա՛մբ...— բացատրեց Լևինսոնը՝ մատների ծայրերը միացրած արագ քթին մոտեցնելով։

— Ոչ մի բանի հոտ չառա... ոնց որ կա...— հանցավորի

* Չումիզա — Մանչուրիայի կողմերում մի տեսակ հացարույս։

նման ասաց հետախույզը։ «Ես շո՞ւն եմ, ինչ է,— մտածեց նա վիրավորված տարակուսանքով, և նրա դեմքը մեկից կարմիր ու անմիտ դարձավ, Սանդագոուի շուկայում առևտուր անող կնոջ դեմքի նման։

— Դե, գնա...— ձեռքով արավ Լևինսոնը, նրա ետևից ծաղրական կկոցելով իր կապույտ, լճակների պես աչքերը։

Մենակ, մտքերի մեջ խորասուզված, նա անցավ պարտեզով, կանգ առավ խնձորենու մոտ, երկար դիտեց, թե կեղևի մեջ ինչպես էր շարշարվում ամրագլուխ, ավազագույն բզեզիկը, և ինչ-որ անհայտ ճանապարհներով հանկարծ եկավ այն եզրակացության, որ շուտով ճապոնացիները ջոկատը կցրեն, եթե նախապես չպատրաստվեն դրան։

Դռան մոտ Լևինսոնն դեմ առ դեմ հանդիպեց Ռյաբեցին և իր օգնական Բակլանովին՝ ամրակազմ մի ջահելի, մոտ տասնինը տարեկան, պաշտպանական գույնի մահուդե զգեստը հագին և արծաթե ատրճանակը գոտուց կախ։

— Ի՞նչ աննենք Մորոզկայի հետ...— մեկեն վրա բերեց Բակլանովը, քթարմատում հավաքելով հոնքերի պինդ ծալքերը և բարկությամբ նրանց տակից դուրս նետելով ածուխի պես վառվող աչքերը։— Ռյաբեցի քոստանից սեխ է գողացել... ահա, խնդրեմ...

Նա խոնարհվելով ձեռքը տարավ Հրամանատարից դեպի Ռյաբեցը, ասես առաջարկում էր նրանց ծանոթանալը։ Լևինսոնը վաղուց իր օգնականին չէր տեսել այդպիսի հուզված վիճակում։

— Իսկ դու մի՛ գոռա,— ասաց նա հանգիստ ու հաստատ,— գոռալու կարիք չկա։ Ի՞նչ է պատահել։

Ռյաբեցը ցնցվող ձեռքերով մեկնեց չարաբաստիկ պարկը։

— Բոստանի կեսը փչացրեց, ընկեր հրամանատար, ազնիվ խոսք։ Ես, գիտես, ձկնորսական կողովն էի ստուգում, հազիվ էի ժամանակ գտել, մեկ էլ դուրս եմ գալիս ուռենու թփուտից...

Եվ նա մանրամասն պատմեց իր վիրավորանքի մասին, առանձնապես շեշտելով այն կետը, որ, աշխատելով գյուղական համայնքի համար, բոլորովին աչքաթող էր արել տընտեսությունը։

— Ինձ մոտ կանայք, գիտես, փոխանակ բոստանները քաղհանելու, ինչպես ընդունված է մարդկանց մոտ, խոտհարքում են աշխատում։ Անիծվածի պես...

Լևինսոնը, ուշադիր և համբերությամբ լսելով նրան, ուղարկեց Մորոզկայի ետևից։ Նա եկավ գլխարկը անփույթ կերպով ծոծրակին թեքած ու գոռոզ, հանդուգն արտահայտությամբ, որը միշտ ընդունում էր, երբ իրեն մեղավոր էր զգում, բայց միտք ուներ ստելու և պաշտպանվելու մինչև վերջ։

— Քո՞նն է պարկը,— հարցրեց հրամանատարը՝ մեկեն առնելով Մորոզկային իր չպտտվող աչքերի շրջագծի մեջ։

— Իմն է...

— Բակլանով, վերցրու նրա ատրճանակը...

— Ինչպե՞ս թե վերցրու... Դո՞ւ ես տվել։— Մորոզկան մի կողմ ցատկեց և արձակեց ատրճանակի պատյանը։

— Քեզ կարգին պահիր...— ասաց Բակլանովը սառը զսպվածությամբ, քթարմատում ծալքերը ավելի պինդ հավաքելով։

Անդեն մնալով՝ Մորոզկան մեկից փափկեց...

— Դե, ինչքա՞ն սեխ եմ վերցրել որ... ի՞նչ եք դուք, Խոսմա Եգորիչ, իսկապես։ Դե, ախր, դատարկ բան է... ճշմարիտ։

Ռյաբեցը, գլուխը սպասողաբար խոնարհած, շարժում էր բորիկ, փոշոտ ոտքերի մատները։

Լևինսոնը կաքգադրեց, որ երեկոյան գյուղական ժողով գումարվի ջոկատի հետ միասին՝ Մորոզկայի արարքը քննելու համար։

— Թող բոլորն իմանան...

— Իոսիֆ Աբրամիչ...— խոսեց Մորոզկան խուլ, մթնած ձայնով։— Դե՛հ, թող ջոկատ լինի... Մինենույն է։ Իսկ գեղջուկներին ինչո՞ւ...

— Լսիր, սիրելիս,— Լևինսոնը դիմեց Ռյաբեցին, չնայելով Մորոզկայի կողմը,— ես քեզ հետ գործ ունեմ... երեկ առ երեկ։ Նա բռնեց նախագահի արմունկից և, մի կողմ տանելով, խնդրեց երկու օրվա ընթացքում գյուղից հաց հավաքել ու մոտ տասը փութ պաքսիմատ շորացնել։

— Միայն տես՝ ոչ ոք չիմանա, թե ինչի՞ համար է և ո՞ւմ համար...

Մորոզկան հասկացավ, որ խոսակցությունը վերջացել է, և, վհատված, քայլեց դեպի պահակատուն։

Լևինսոնը, Բակլանովի հետ մենակ մնալով, պատվիրեց վաղվանից ավելացնել ձիերին տրվող վարսակը։

— Ասա տնտեսվարին՝ թող լիքը չափով տա։

4.

ՄԵՆԱԿ

Մորոզկայի գալը խախտեց Մեչիկի հոգեկան հավասարակշռությունը, որ հաստատվել էր հիվանդանոցի միապաղաղ, անհույզ կյանքի ազդեցության տակ։

«Ինչո՞ւ նա այնպես արհամարհանքով նայեց,— մտածեց Մեչիկը, երբ բանբերը մեկնեց։— Ասենք թե նա ինձ կրակի միջից դուրս քաշեց, մի՞թե դա իրավունք է տալիս ծաղրելու... Եվ բոլորը, գլխավորը... բոլորը»։ Նա նայեց իր բարակ, նիհարած մատներին, վերմակով ծածկված ոտքերին, որ պրկված էին վիրատախտակներում, և հին, թաքնված վիրավորանքները նոր ուժով բռնկվեցին նրա մեջ, և հոգին հուզմունքից ու ցավից սեղմվեց։

Հենց այն ժամանակից, երբ սրադեմ ջահելը, տատասկափշերի պես ծակող աչքերով, թե թշնամաբար և խստորեն բռնեց նրա օձիքից, ամեն մեկը գալիս էր Մեչիկի մոտ ծաղրանքով և ոչ օգնելու համար. ոչ ոք չէր ուզում պարզել նրա վիրավորվածության էությունը։ Նույնիսկ հիվանդանոցում, ուր տայգայի լռությունը սեր և խաղաղություն էր շնչում, մարդիկ փաղաքշում էին նրան միայն այն բանի համար, որ դա իրենց պարտականությունն էր։ Եվ ամենածանր, ամենադառն բանը Մեչիկի համար այն էր, որ նա մենակ էր այն բանից հետո, երբ նա էլ էր իր արյունը թողել ինչ-որ տեղ, դարու դաշտում։

Նա պահանջ զգաց խոսելու Պիկայի հետ, բայց ծերունին խալաթը փռած, հանգիստ քնած էր ծառի տակ՝ անտառի բացատում, գլխի տակ իր փափուկ գլխարկը դրած։ Կլոր, փայլուն ճաղատից ամեն կողմ փռվում էին շողի պես թափանցիկ, արծաթյա մազիկներ։ Երկու ջահելներ,— մեկը՝ ձեռքը կապած, մյուսը՝ կաղալով,— դուրս եկան տայգայից։ Ներունու մոտ կանգ առնելով՝ չարաճճիորեն իրար աչքով արեցին։ Կաղը գտավ մի ծղոտիկ և, բարձրացնելով հոնքերն ու կնճռոտվելով, կարծես ինքն էր պատրաստվում փուշտալ, խաղտեց Պիկայի քիթը։ Պիկան քնկոտ փնթփնթաց, քիթը ծռմռեց, մի քանի անգամ ձեռքը շարժեց, վերջապես բարձրաձայն փուշտաց՝ ուրախություն պատճառելով տղաներին։ Երկուսն էլ սկսեցին հռհռալ և, կռանալով, ետ-ետ նայելով, ինչպես չարություն արած երեխաներ, վազեցին դեպի բարաքը՝ մեկը խնամքով սեղմելով ձեռքը, մյուսը՝ ղդուշորեն հենվելով մի ոտքին։

— Հե՜յ, դո՛ւ, մահի օգնական,— բղավեց մեկը՝ տեսնելով հողաթմբի վրա Խարչենկոյին ու Վարյային։— Այդ ի՞նչ ես ձեռք գցում մեր կանանց... Հապա, հապա, թույլ տուր ես էլ մի քիչ մնամ էստեղ...— փնթփնթաց նա շողոքորթ ձայնով, նստելով բուժքրոջ կողքին և գրկելով նրան առողջ ձեռքով։— Մենք քեզ սիրում ենք, դու մեզ մոտ մի հատ ես, իսկ այդ սևամորթին քշիր, քշի՛ր նրան մոր մոտ, քշի՛ր նրան, շան որդուն...— Նա նույն ձեռքով փորձում էր հրել Խարչենկոյին, բայց բուժակը պինդ սեղմվում էր Վարյային մյուս կողքից և ցույց տալիս իր՝ «մանչուրկայից» դեղնած, հավասար ատամները։

— Իսկ ես որտե՞ղ ապաստան գտնեմ,— լալագին նըվնըվաց կաղը։— Ի՞նչ բան է սա, ո՞ւր է արդարությունը, ո՞վ պիտի խղճա վիրավոր մարդուն, ինչպես ևք դուք այդ բանին նայում, ընկերներ, սիրելի քաղաքացիներ...— վրա էր տալիս նա, լարվածի պես խոնավ թարթիչները ճպելով ու անմտորեն ձեռքերը շարժելով։

Նրա ուղեկիցը սպառնագին թափահարում էր ոտքերը՝ թույլ չտալով մոտենալ, իսկ բուժակը ծիծաղում էր անբնական ուժգին ձայնով և աննկատելիորեն ձեռքը մտցնում Վարյայի կոֆտայի տակ։ Կինը նայում էր նրանց հնազանդորեն ու հոգնած, նույնիսկ առանց փորձելու հեռացնել Խարչենկոյի ձեռքը, և հանկարծ տեսավ, թե ինչպես Մեչիկը շփոթված հայացքով իրեն է նայում. նա վեր թռավ՝ արագ ուղղելով կոֆտան և վարդի պես կարմրատակելով։

— Վրա են տալիս, ինչպես ճանճերը՝ մեղրին, որձ շնե՞ր...— ասաց նա բարկությամբ և, գլուխը կախ, վազեց դեպի բարաք։ Շրջազգեստի փեշը թողեց դուռն արանքը և, բարկացած դուրս քաշելով, նորից խփեց դուռն այնպես, որ մամուռը թափվեց ճեղքերից։

— Այ քեզ քու-ո՞ւյր...— երգելով ասաց կաղը։ Ծոմռեց դեմքը, ինչպես քթախոտ քաշելուց առաջ, ու ծիծաղեց կամաց, մանր ու գարշելի կերպով։

Իսկ թխկենու տակից, մահճակալի շորս ներքնակների բարձրությունից, դեղնած, հիվանդությունից մաշված դեմքը երկնքին դարձրած, օտարոտի և խստորեն նայում էր վիրավոր պարտիզան Ֆրոլովը։ Նրա հայացքը աղոտ էր և դատարկ, ինչպես մեռելի հայացքը։ Ֆրոլովի վերքը անհուսալի էր, և նա այդ բանը գիտեր այն րոպեից ի վեր, երբ, կծկվելով փորի մահացու ցավից, առաջին անգամ սեփական աչքերում տեսավ անմարմին, շուռ տված երկինքը։ Մեչիկն զգաց իր վրա նրա անշարժ հայացքը և ցնցվեց, վախեցած փախցրեց հայացքը։

— Տղերքը... շարություն են անում...— խռպոտ ձայնով ասաց Ֆրոլովը և շարժեց մատները, ասես մեկին ուզում էր ապացուցել, որ դեռ կենդանի է։

Մեչիկը ձևացրեց, թե չի լսում։

Ու թեև Ֆրոլովը վաղուց մոռացել էր նրան, բայց Մեչիկը դեռ երկար ժամանակ վախենում էր նայել նրա կողմը. թվում էր, թե վիրավորը դեռ նայում է՝ ատամները ցույց տալով ոսկրոտ, ձգված ժպիտի մեջ։

Բարաքից, անհարմար կռանալով դռան մեջ, դուրս եկավ բժիշկ Ստաշինսկին։ Մեկեն ուղղվեց, ինչպես երկար, ծալվող դանակ, և տարօրինակ թվաց, թե ինչպես կարողացավ կռանալ, երբ դուրս էր գալիս։ Նա մեծ քայլերով մոտեցավ տղաներին և, մոռանալով, թե նրանք ինչու պետք եղան, զարմացած կանգ առավ, մի աչքը ճպելով։

— Տոթ է...— փնթփնթաց վերջապես, խուզած գլուխը շփելով։ Իսկ նա դուրս էր եկել ասելու, թե լավ բան չէ ձանձրացնել մի մարդու, որը, ախր, չի կարող բոլորի համար փոխարինել և՛ մորը, և՛ կնոջը։

— Ջանձրալի՞ է պառկելը,— հարցրեց նա Մեչիկին՝ մոտենալով նրան և իր շոր, տաք ափը նրա ճակատին դնելով։

Մեչիկը զգացվեց նրա անսպասելի հոգատարությունից։

— Ինձ ի՞նչ... լավացա թե չէ, կգնամ,— ասաց Մեչիկը,— իսկ դո՞ւք... Ախր միշտ անտառում եք։

— Իսկ եթե պե՞տք է...

— Ի՞նչ է պետք,— չհասկացավ Մեչիկը։

— Անտառում լինել...— Ստաշինսկին ետ քաշեց ձեռքը և առաջին անգամ մարդկային հետաքրքրությամբ իր փայլուն ու սև աչքերով նայեց ուղիղ Մեչիկի աչքերին։ Նրանք նայում էին կարծես հեռվից ու թախծոտ, ասես իրենց մեջ լին առել ողջ անխոս թախիծը դեպի մարդիկ, այն թախիծը, որ երկար գիշերների ընթացքում կրծում էր տայգայի մենակյացներին՝ սիխոտեալինյան ծխացող խարույկների մոտ։

— Ես հասկանում եմ,— տխուր ասաց Մեչիկը և ժպտաց նույնպես սիրալիր ու տխուր։— Բայց մի՞թե չէր կարելի գյուղում տեղավորվել... Այսինքն՝ ոչ թե ինքներդ անձամբ,— ուղղեց նա իր տարակուսական հարցը,— այլ հիվանդանոցը գյուղում լիներ։

— Ավելի ապահով է այստեղ... Իսկ դուք ինքներդ որտեղի՞ց եք։

— Ես քաղաքից եմ եկել։

— Վաղո՞ւց...

— Արդեն մի ամսից ավելի է։

— Կրայզելմանին ճանաչո՞ւմ եք,— աշխուժացավ Ստաշինսկին։

— Գիտեմ մի քիչ...

— Դե ի՞նչպես է նա այնտեղ, էլ ո՞ւմ գիտեք,— բժիշկն ավելի ուժգին թարթեց աչքերը և այնպես հանկարծակի նստեց կոճղի վրա, ասես ետևից խփեցին նրա ծնկատակերին։

— Բոնսիկին գիտեմ, Եֆրեմովին...— սկսեց թվել Մեչիկը։— Գուրևին, Ֆրենկելին՝ ոչ թե ակնոցավորին, նրա հետ ծանոթ չեմ, այլ փոքրին...

— Բայց չէ՞ որ դրանք բոլորը «մաքսիմալիստներ են,— զարմացավ Ստաշինսկին։— Դուք նրանց որտեղի՞ց գիտեք։

— Ախր ես ավելի նրանց հետ եմ եղել...— անվստահ փնթփնթաց Մեչիկը, չգիտես ինչու վախենալով։

«Հա՜-ա՜...»— կարծես ասել էր ուզում Ստաշինսկին և չասաց։

— Լա՜վ է,— շոր-շոր փնթփնթաց նա ինչ-որ օտարացած ձայնով և վեր կացավ։ Դե՛հ-դե՛հ... լավացեք...— ասաց, չնայելով Մեչիկին։ Եվ, կարծես վախենալով, որ նա իրեն ետ կկանչի, արագ քայլեց դեպի բարաքը։

— Գիտեմ նաև Վասյուտինային...— կանչեց Մեչիկը նրա ետևից՝ աշխատելով մի բանից կառչել։

— Այո՜... այո՜...— մի քանի անգամ կրկնեց Ստաշինսկին, ետ նայելով և քայլերն արագացնելով։

Մեչիկը հասկացավ, որ մի բանով դժգոհեցրել էր նրան. կծկվեց ու կարմրեց։

Հանկարծ վերջին ամսվա բոլոր ապրումները մեկեն գրոհեցին նրա վրա. նա նորից փորձեց մի բանից կառչել և չկարողացավ։ Շրթունքները դողացին, և նա աչքերը թարթեց արագ-արագ, զսպելով արտասուքները, բայց դրանք չհնազանդվեցին և հոսեցին՝ խոշոր ու առատ, տարածվելով երեսի վրա։ Նա գլուխը ծածկեց վերմակով և, այլևս չզսպելով իրեն, կամացուկ լաց եղավ՝ աշխատելով չգոռալ ու չհեկեկալ, որպեսզի ոչ ոք չնկատի իր թուլությունը։

Նա լացեց երկար ու անմխիթար, և նրա մտքերն էլ արցունքների պես աղի էին ու բարկ։ Հետո, երբ հանգստացավ, առաջվա պես անշարժ պառկած մնաց՝ գլուխը ծածկած։ Վարյան մի քանի անգամ մոտեցավ։ Մեչեկը լավ գիտեր նրա հաստատուն քայլվածքը, ասես մինչև մահ բուժքույրը պարտավորվել էր հրել բեռնված վագոնիկը։ Անվստահորեն մի քիչ կանգնելով մահճակալի մոտ՝ նա նորից հեռանում էր։ Հետո կաղալով եկավ Պիկան։

— Քնա՞ծ ես,— հարցրեց պարզ և փաղաքուշ ձայնով։

Մեչեկը քնած ձևացավ։ Պիկան մի քիչ սպասեց։ Լսվում էր, թե ինչպես վերմակի վրա երգում էին մոծակները։

— Դե՛հ, քնիր...

Երբ մթնեց, նորից մոտեցան երկու հոգի՝ Վարյան և էլի մեկը։ Խնամքով բարձրացնելով մահճակալը՝ բարաք տարան նրան։ Այնտեղ շոգ էր ու խոնավ։

— Գնա... գնա Ֆրոլովի ետևից... Ես հիմա կգամ,— ասաց Վարյան։

Նա մի քանի վայրկյան կանգնած մնաց մահճակալի մոտ և, զգուշությամբ ետ քաշելով վերմակը, հարցրեց.

— Ի՞նչ եղավ, Պավլուշա... Վա՞տ ես զգում...

Նա առաջին անգամ էր նրան Պավլուշա կոչում։

Մեչիկը մթության մեջ չտեսավ Վարյայի դեմքը, բայց զգաց նրա ներկայությունը նույնպես, ինչպես և այն, որ բարաքում իրենք երկուսով էին։

— Վատ եմ զգում...— ասաց նա տխուր և կամացուկ։

— Ոտքե՞րդ են ցավում...

— Ոչ, հենց այնպես...

Բուժքույրն արագ կռացավ և, պինդ սեղմվելով նրան իր մեծ, փափուկ կրծքով, համբուրեց նրա շրթունքները։

5.

ԳԵՂՋՈՒԿՆԵՐԸ ԵՎ «ԱՄԵԱՅԻՆ ՑԵՂԸ»

Կամենալով ճշտել իր ենթադրությունները՝ Լևինսոնը ժողով գնաց վաղորդ, պտտվելու գեղջուկների մեջ և իմանալու՝ արդյո՞ք որևէ լուր չկա։

Ժողովը դպրոցում էր լինելու։ Ժողովուրդը դեռ քիչ էր. մի քանի հոգի, դաշտից վաղ վերադարձած, նախամուտքի սանդուղքի վրա զրուցում էին երեկոյան աղջամուղջում։ Բայց դռնից երևում էր, թե ինչպես Դյաբեցը սենյակում աշխատում է հարմարեցնել լամպի մրոտ ապակին։

— Բարև, Օսիպ Աբրամիչ,— հարգանքով ողջունում էին գեղջուկները՝ հերթով մեկնելով Լևինսոնին իրենց մուգ, ուշխատանքից փայտացած մատները։ Նա բարևեց բոլորին ջոկջոկ և համեստորեն նստեց աստիճանի վրա։

Գետի մյուս կողմում զանազան ձայներով երգում էին աղջիկները. խոտի, խոնավացող փոշու և խարույկի ծխի հոտ էր գալիս։ Լսվում էր, թե ինչպես լաստի վրա շարշարվում էին հոգնած ձիերը։ Երեկոյի տաքուկ մթնում, բեռնված սայլերի ճռինչում, կուշտ, չկթված կովերի երկար բառաչում մարում էր գեղջկական աշխատանքային օրը։

— Քիչ են եկել,— ասաց Ռյաբեցը՝ դուրս գալով արտասանդուղք։— Համ էլ բոլորին էսօր չես հավաքի, խոտհարքում են գիշերում շատերը...

— Էդ օրին ի՞նչ ժողով։ Չլինի՞ վառոդ գործ կա։

— Հա, մի գործ կա...— կմկմաց նախագահը։— Էստեղ սրանցից մեկն անկարգություն է արել. իմ տանն է կենում։ Էդ, էսպես ասած, մի չնչին բան է, բայց երկար պատմություն ստացվեց...— Նա շփոթված նայեց Լևինսոնին և լռեց։

— Դե որ չնչին է, էլ ժողովն ի՞նչ պետք է...— մեկեն ղալմաղալ բարձրացրին գեղջուկները։— Այնպիսի ժամանակ է հիմա, որ գեղջուկի ամեն մի ժամը թանկ է։

Լևինսոնը բացատրեց։ Այն ժամանակ նրանք սկսեցին արտահայտել իրենց տրտունջները, որ պլխավորապես պտտվում էին խոտհարքի և գործիքների քչության շուրջը։

— Դու, Օսիպ Աբրամիչ, լավ կլիներ մի անգամ անցներիր խոտհարքներով, նայեիր, թե մարդիկ ինչո՞վ են հընձում։ Ոչ ոք մի կարգին մանգաղ չունի, գոնե մեկը լիներ դեղի համար, բոլորը կարկատված են։ Ոչ թե աշխատանք է, այլ չարչարանք։

— Սեմյոնը ի՞նչ մանգաղներ փչացրեց։ Նա ուզում է ամեն բան շուտ անել, անզուսպ է աշխատանքի մեջ, գնում է հնձած տեղով, փնչում է մեքենայի պես, կոճղին այնպես զարկեց... Այժմ արդեն՝ ինչքան էլ կարկատես, այն չէ։

— Լավ «ձուլվածք» էր...

— Իմոնք ի՞նչպես են այնտեղ...— մտածկոտ ասաց Ռյաբեցը։— Պրծա՞ն, թե չէ։ Խոտը հիմա առատ է, գոնե մինչև կիրակի հերվա շերտը հնձեին։ Թանկ պիտի նստի մեզ վրա էս կռիվը։

Խավարից լույսի գոզացող շերտի մեջ էին ընկնում նոր կերպարանքներ, երկար, կեղտոտ-սպիտակ շապիկներ հագած, մի քանիսը կապոցներով՝ ուղղակի աշխատանքի տեղից։ Նրանք բերում էին իրենց հետ գեղջկական աղմկալի խռսակցություն, նոր հնձած խոտի, ձյութի և քրտինքի հոտ։

— Ողջություն ձեր խրճիթում...

— Հո՛-հո՛-հո՛... Իվա՞ն... Հապա՛, ցոբյց տուր ռեխդ լույսին, լա՞վ կծեցին իշամեղուները։ Տեսա, թե ոնց էիր փախչում նրանցից, հետևդ շարժելով...

— Դու ինչո՞ւ իմ շերտը հնձեցիր, ա՛յ ժանտախտ։

— Ո՞նց թե քո։ Մի՛ փչի... Ես՝ սինոռով, կետը կետին։ Մեզ ուրիշինը պետք չի, մերը հերիք է։

— Գիտենք ձեզ... Հերի՞-ի՞ք է։ Ձեր խոզերին բոստանից քշելու հնար չկա... Շուտով իմ բոստանում խոճկորներ կծընեն... Հերի՞-ի՞ք է...

Բարձրահասակ, կռացած և կոպիտ մեկը, մթնում փայլող մի աչքով, բուսավ ամբոխի մեջ և ասաց.

— Ճապոնացին երկու օր առաջ Սունդուգա եկավ։ Զուգռանի տղերքն ասին։ Եկավ, տեղավորվեց ուսումնարանում և մեկից կանանց՝ «Ռուս աղջիկ, ռուս աղջիկ... սյո՛ւ-սյո՛ւ-սյո՛ւ»։ Թո՛ւ, տե՛ր ողորմյա՛...— խոսքը կտրեց նա ատելությամբ, ձեռքը թափով բերելով։

— Նա մեզ էլ կհասնի, արդեն պարզ է...

— Որտեղի՞ց եկավ էդ փորձանքը։

— Ու ամեն ինչ գեղջուկի գլխին, ամեն ինչ... Գոնե մի՛ բան լիներ...

— Գլխավորը՝ ոչ մի ելք չկա։ Կուզես գերեզման մտիր, կուզես՝ դաշտ, ճամփան մեկ է...

Վևինսոնը լսում էր, առանց միջամտելու։ Նրան մոռացել էին։ Նա այնպես փոքրիկ էր, աննշան տեսքով, ամբողջովին կազմված էր գդակից, շիկակարմիր մորուքից և ծնկներից բարձր կոշիկներից։ Բայց, ականջ դնելով գեղջուկների հուզված ձայներին, Լևինսոնը նրանց մեջ որսում էր միայն իրեն հասկանալի անհանգիստ հնչյուններ։

«Գործը վատ է,— մտածում էր նա կենտրոնացած,— շատ վատ է... Պետք է վաղն իսկ գրել Ստաշինսկուն. թող վիրավորներին թաքցնի, ուր որ կարելի է... Առժամանակ էռել, կարծես մենք չկանք... Պահակախմբերն ուժեղացնել...»։

— Բակլա՞նով,— կանչեց նա իր օգնականին։— Նկ մի բոպե այստեղ... Ահա թե բանն ինչն է... Նստիր ավելի մոտիկ։ Ես կարծում եմ, որ անասնանոցի մոտ մի պահակը քիչ է մեզ համար։ Պետք է ձիավոր դետք կարգել մինչև Կոլիլովկա... առանձնապես գիշերը... Արդեն չափազանց անհոգ ենք դարձել...

— Իսկ ի՞նչ կա,— ցնցվեց Բակլանովը։— Միթե անհանգստացնող բան կա... թե՞ այլ բան։— Նա ածիլած գլուխը դարձրեց դեպի Լևինսոնը, և նրա՝ թաթարի աչքերի նման շեղ ու նեղ աչքերը նայեցին ուշադիր ու քննախույզ։

— Պատերազմում, սիրելիս, միշտ անհանգիստ է,— ասաց Լևինսոնը փաղաքշական ու թունոտ։— Պատերազմում, թանկագինս, այն չէ, ինչ որ խոտանոցում՝ Մարուսյայի հետ...— Նա հանկարծ ծիծաղեց կերկերուն, ուրախ ձայնով ու կսմթեց Բակլանովի կողքը։

— Տեսա՞ր, ինչ խելոքն է...— արձագանքեց Բակլանովը՝ մեկեն բռնելով Լևինսոնի ձեռքը և իսկույն դառնալով մի կովարար, ուրախ ու բարեսիրտ երիտասարդ։— Մի՛ հրիր, մի՛ հրիր, միևնույն է, չես պրծնի...— փաղաքշանքով փնթփընթում էր նա ատամների արանքից՝ ոլորելով Լևինսոնի ձեռքը և աննկատելիորեն սեղմելով նրան սանդուղքի սյունին։

— Գնա՛, գնա՛, ա՛յ, Մարուսյան կանչում է...— խորամանկեց Լևինսոնը։— Դե թող, սատանա-ա՛... անհարմար բան է ժողովի ժամանակ...

— Հենց բանն էլ անհարմարն է, ապա թե ոչ՝ ես քեզ ցույց կտայի...

— Գնա՛, գնա՛... ահա նա՝ Մարուսյան... գնա։

— Դետք, կարծում եմ, մի՞ հոգի,— հարցրեց Բակլանովը՝ վեր կենալով։

Լևինսոնը ժպտալով նայեց նրա ետևից։

— Հերոս օգնական ունես,— ասաց մեկը։— Չի խմում, չի ծխում, իսկ գլխավորը՝ ջահել է։ Երեք օր առաջ մտնում է խրճիթ՝ ձիու անուր է հարցնում... «Ի՞նչ է, ասում եմ, չե՞ս ուզում մի գավաթ պղպեղօղի խմել»։ «Չէ, ասում է, չեմ խմում։ Եթե, ասում է, ուզում ես հյուրասիրել, կաթ տուր, կաթը, ասում է, սիրում եմ, իսկապես»։ Եվ խմում է, գիտես, ինչպես փոքրիկ երեխա՝ ամանից, ու մեջը հաց է բրդում... Մի խոսքով՝ կտրիճ տղա է։

Բազմության մեջ, հրացանի փողերը փայլեցնելով, հետզհետե ավելի հաճախ էին հայտնվում պարտիզանների կերպարանքները։ Տղերքը հավաքվում էին ժամանակին և միասին։ Վերջապես եկան հանքափորները՝ Տիմոֆեյ Դուբովի՝ Սուչանի բարձրահասակ հանքափորի գլխավորությամբ,

որն այժմ դասակի հրամանատար էր։ Նրանք հենց այդպես էլ լցվեցին բազմության մեջ, առանձին, միացյալ խմբով, առանց խառնվելու, միայն Մորոզկան մոայլ նստեց քիչ հեռու, հողաթմբի վրա։

— Ա-ա՛... Դու է՞լ այստեղ ես,— Լևինսոնին նկատելով՝ ուրախ թնդաց Դուբովը, կարծես նրան չէր տեսել շատ տարիներ և չէր սպասում բոլորովին, թե այստեղ կտեսնի։— Էդ ի՞նչ անկարգություն է արել մեր բարեկամը,— հարցրեց նա հանդարտ ու թավ ձայնով, Լևինսոնին մեկնելով իր մեծ, սև ձեռքը...— Դա՛ս տալ, դա՛ս տալ... որ ուրիշները չանեն...— նորից թնդաց նա՝ Լևինսոնի բացատրությունները մինչև վերջ չլսելով։

— Այդ Մորոզկայի վրա արդեն վաղուց ժամանակն է ուշադրություն դարձնելու, ամբողջ ջոկատի անունը խայտառակում է,— մեջ ընկավ Ջիժ անունով քաղցրաձայն մի ջահել՝ ուսանողի գլխարկով և փայլեցրած սապոգներով։

— Քեզ չհարցրին,— առանց նայելու՝ նրա խոսքը կտրեց Դուբովը։

Ջահելը նոր էր շրթունքները վիրավորված և արժանապատվությամբ սեղմել, բայց Լևինսոնի ծաղրական հայացքն իր վրա ուղղված տեսնելով՝ ծլկեց բազմության մեջ։

— Տեսնո՞ւմ ես ինչ պտուղ է,— մոայլ հարցրեց դասակի հրամանատարը։— Ինչո՞ւ ես նրան պահում... Լսել եմ, որ նա ինքը գողության համար ինստիտուտից վռնդվել է։

— Ամեն լսածի մի՛ հավատա,— ասաց Լևինսոնը։

— Գուցե ներս անցնենք...— ձայն տվեց սանդուղքից Ռյաբեցը, շփոթված ձեռքերը տարածելով, ասես չէր սպասում, որ իր խոտակալած բոստանը այսպիսի հավաքույթի առիթ կտա։— Սկսենք, է՛լի... ընկեր հրամանատար... Մինչև հավախոս տրորվելու ենք այստեղ...

Սենյակը տաքացավ և ծխից կանաչավուն էր թվում։ Նստարանները պակասում էին։ Գեղջուկները և պարտիզանները փոփոխակի խռնվում էին դռների մոտ, շնչում էին Լևինսոնի ծոծրակին։

— Սկսիր, Օսիպ Աբրամիչ,— մոայլ ասաց Ռյաբեցը։ Նա դժգոհ էր և՛ իրենից, և՛ հրամանատարից. ամբողջ այդ

պատմությունը այժմ թվում էր շնչին և գլխացավանք պատճառող։

Մորոզկան խցկվեց դռան մեջ և կանգնեց Դուբովի կոխքին, մռայլ ու չար։

Լևինսոնն ավելի ծանրանում էր այն կետի վրա, որ երբեք գեղջուկներին աշխատանքից չէր կտրի, եթե չհամարեր, որ այս գործը ընդհանուրի գործն է, երկու կողմերն էլ շահագրգռված են, և, բացի դրանից, ջոկատում տեղացիներ շատ կային։

— Ինչպես դուք վճռեք, այնպես էլ կլինի,— վերջացրեց նա ծանրակշիռ, նմանեցնելով գեղջկական լուրջ սովորության։ Դանդաղ նստեց նստարանին, ետ քաշվեց և մեկեն դարձավ փոքրիկ ու աննկատելի, մարեց ինչպես պատրույգ, թողնելով ժողովին՝ մթության մեջ անձամբ վճռելու գործը։

Նախ՝ խոսեցին մի քանի մարդ անորոշ և անհաստատ. խճճվելով մանրուքներում, հետո՝ մեջ մտան ուրիշները, ժողովը հետզհետե տաքացավ։ Մի քանի րոպե անց արդեն բան հասկանալ հնարավոր չէր։ Ավելի շատ խոսում էին գեղջուկները, պարտիզանները խուլ ու սպասողական լռում էին։

— Սա էլ նմանապես օրենք չի,— խստորեն դոդոջացնում էր ծերուկ Եվստաֆին՝ ալևոր և խոժոռ, ինչպես ամառվա մամուռը։— Հին ժամանակ, Միկոլաշկի օրերում, այդպիսի բաների համար գյուղի միջով մահ էին ածում։ Գողացած իրերը կախում էին մարդու վրայից և մահ ածում թավայի զնգզնգոցով...— Նա մեկին խրատական ձևով սպառնաց շորացած մատով։

— Իսկ դու Միկոլաշկի օրերով մի՛ չափիր...— բղավում էր կռացածն ու միաչքանին, նա, որ պատմել էր ճապոնացիների մասին։ Նա ամբողջ ժամանակ ուզում էր ձեռքերը շարժել, բայց տեղը շատ նեղ էր, և այդ պատճառով ավելի էր շարանում։— Միշտ Միկոլաշկայի օրերն ես հիշում... Անցավ էդ ժամանակը... չե՞ս վերադարձնի...

— Գրողի ծոցը անցնի, համա սա՛ էլ օրենք չի, ախր,— համառում էր ծերունին։— Առանց էն էլ բոլոր թրև եկողներին կերակրում ենք։ Բայց գողեր բազմացնելն էլ հարմար գործ չի։

— Ո՞վ է ասում բազմացնել։ Ոչ ոք գողերի կողմը չի

բռնում։ Գուցե դու ինքդ ես գողեր բազմացնում...— ակնարկեց միաչքանին ծերունու որդուն, որն անհետ կորել էր մոտ տասը տարի առաջ։— Միայն այստեղ սեփական չափ է պետք։ Ջահելը, կարելի է, վեցերորդ տարին է՝ կռվում է, մի՞թե մի սեխով էլ ուրախանալու իրավունք չունի։

— Եվ ի՞նչ կարիք կար վնաս տալու...— տարակուսեց մեկը։— Կամքդ լինի, տեր, բանն էլ բան լինի... Եթե ինձ մուտ դար, ես մի լիքը պարկ կտայի առանց նայելու։ Ա՛ռ, խոզերին ենք կերակրում, լավ մարդու համար այդ զիբիլը չեմ ափսոսում...

Գեղջուկների ձայներում չարություն չէր զգացվում։ Մեծամասնությունը համաձայն էր մի կետում. հին օրենքներն անպետք են, առանձին մոտեցում է պետք։

— Թող իրենք վճռեն, նախագահի հետ...— կանչեց մեկը։— Մենք ինչո՞ւ խառնվենք էդ գործի մեջ...

Լևինսոնը վեր կացավ նորից, խփեց սեղանին։

— Ընկերներ, եկեք հերթով,— ասաց նա կամացուկ, բայց պարզորոշ, այնպես, որ բոլորը լսեցին։— Մեկից որ խոսենք, ոչինչ չենք վճռի։ Իսկ ինքը Մորոզկան ո՞ւր է... Հապա, ե՛կ այստեղ...— ավելացրեց նա մռայլվելով, և բոլորը ծուռ նայեցին դեպի այն կողմը, ուր կանգնած էր բանբերը։

— Ես այստեղից էլ եմ տեսնում...— խուլ ձայնով ասաց Մորոզկան։

— Գնա՛, գնա՛...— հրեց նրան Դուբովը։

Մորոզկան տատանվեց։ Լևինսոնը առաջ ձգվեց և, մեկեն աքցանի պես բռնելով նրան անթարթ հայացքով, դուրս քաշեց ամբոխի միջից, ինչպես մի մեխ։

Բանբերն անցավ դեպի սեղանը, գլուխը կախած, ոչ ոքի չնայելով։ Նա խիստ քրտնած էր, ձեռքերը դողում էին։ Զգալով իր վրա ուղղված հարյուրավոր հետաքրքրվող հայացքներ՝ նա փորձեց գլուխը վեր բարձրացնել, բայց հանդիպեց Գոնչարենկոյի դաժան, կոշտ թաղիքի նման մազակալած դեմքին։ Պայթեցնողը նայում էր համակրանքով և խիստ։ Մորոզկան չդիմացավ և, երեսը լուսամուտին դարձնելով, անշարժացավ՝ աչքերը հառած դատարկությանը։

— Ահա այժմ կքննենք,— ասաց Լևինսոնը՝ առաջվա պես զարմանալի խաղաղ, բայց բոլորին լսելի, նույնիսկ նրանց,

Նրանք դռան ետևն էին։— Ո՞վ է ուզում խոսել... Դու, ծերունի, ուզում էիր, կարծեմ...

— Այստեղ խոսելու ինչ կա որ,— շփոթվեց Եվստաֆի պապը,— մենք միայն այնպես, մեր մեջ...

— Երկար խոսելու բան չկա, ինքներդ վճռեցեք,— նորից աղմկեցին գեղջուկները։

— Հապա՛, ծերո՛ւկ, ինձ խոսք տուր...— անսպասելիորեն ասաց Դուբովը, խուլ և զսպված, չգիտես թե ինչու Եվստաֆի պապին նայելով և այդ պատճառով Լևինսոնին էլ սխալմամբ ծերուկ անվանելով։ Դուբովի ձայնի մեջ մի այնպիսի բան կար, որ բոլոր գլուխները, ցնցվելով, դարձան դեպի նա։

Նա դժվարությամբ անցավ դեպի սեղանը և կանգնեց Մորոզկայի կողքին՝ ծածկելով Լևինսոնին իր մեծ ու ծանր կերպարանքով։

— Ինքնե՞րս վճռենք... Վախենո՞ւմ եք...— ձայնեց բարկացած և կրքոտ, օդը կրծքով ցնցելով։— Ինքնե՞րս կվճռենք...— Նա արագ թեքվեց դեպի Մորոզկան և վառվող աչքերը հառեց նրա վրա։— Մե՞րն ես, ասում ես, Մորոզկա... հանքափո՞ր,— հարցրեց լարված և կծու։— Ո՜ւ-ո՜ւ... անմաքուր արյուն. Սուչանի հա՜նք... Չե՞ս ուզում մերը լինել. անառակությո՞ւն ես անում, խայտառակո՞ւմ ես ածխային ցեղը։ Լա՜վ...— Դուբովի խոսքերն ընկան լռության մեջ պղնձի ծանր դղրդոցով, ինչպես զրնգուն անտրացիտ։

Մորոզկան, կտավի պես գունատ, նայում էր նրա աչքերին, առանց նրանցից կտրվելու, և նրա ներսում սիրտը պոկվեց՝ ասես զարկված։

— Լա՜վ...— նորից կրկնեց Դուբովը,— անառակություն արա՛... Տեսնենք, թե ինչպե՞ս կապրես առանց մեզ... Իսկ մեզ... պետք է քշե՛լ նրան...— կտրեց նա մեկեն՝ թափով շուռ գալով դեպի Լևինսոնը։

— Նայի՛ր՝ չինի թե սխալվե՞ս...— կանչեց պարեպիզաններից մեկը։

— Ի՞նչ,— հարցրեց Դուբովը սոսկալի ձայնով և առաջ քայլեց։

— Դե սո՛ւս կացեք, տե՛-ե՛ր ասված...— քթի մեջ խոսեց ծերունու մի վախկոտ ձայն։

Լևինսոնը ետևից բռնեց դասակապետի թևից։

— Դուբով... Դուբով...— ձայն տվեց հանգիստ։— Մի կողմ շարժվիր, ժողովրդին ծածկում ես...

Դուբովի փուքսը մեկեն իջավ. նա ընկրկեց՝ շփոթված թարթելով աչքերը։

— Դեհ, ինչպե՞ս քշենք նրան՝ հիմարին,— խոսեց հանկարծ Գոնչարենկոն, բարձրացնելով բազմության մեջ իր գանգրահեր, խանձված գլուխը։— Ես ասում եմ ոչ թե պաշտպանելու համար, որովհետև ոնց էլ շուռ գաս՝ մեղավոր է տղան, ես ինքս նրա հետ ամեն օր կռվում եմ... Միայն այն էլ սուտեմ՝ տղան համարձակ տղա է, չես ուրանա։ Մենք նրա հետ ամբողջ ուսուրական ռազմաճակատն անցանք առաջավոր դիրքերում։ Մեր տղան է՝ չի մատնի, չի ծախի...

— Մե՞րն է...— դառնությամբ ընդհատեց Դուբովը։— Իսկ մեզ համար նա, կարծում ես, մերը չի՞... Մի փոսում ենք ծխել... երրորդ ամիսն է մի շինելի տակ ենք քնում... Իսկ այստեղ ամեն մի սրիկա,— հանկարծ հիշեց քաղցրաձայն Զիժին,— պիտի սովորեցնի՞...

— Ահա իմ ասածն էլ այդ է,— շարունակեց Գոնչարենկոն տարակուսանքով՝ ծուռ նայելով Դուբովին (նրա հայհոյանքն ընդունեց իր հաշվին)։— Այս գործն անհետևանք թողնել չի կարելի, բայց մեկեն քշել նրան՝ դա էլ խելքի բան չէ, սխալ բան է։ Իմ կարծիքն այսպես է՝ հարցնենք իրեն...— և նա օդը ծանրապես կտրեց ափով, ձեռքը դնելով կողի վրա, կարծես բաժանեց ողջ օտարն ու անպետքը հարազատից և ճշմարտից։

— Ճիշտ է... Իրեն հարցնենք... թող ասի, եթե գիտակի՞ց է...

Դուբովը, որ սկսել էր մի կերպ անցնել իր տեղից, կանգ առավ և զննողաբար աչքերը հառեց Մորոզկայի վրա։ Սա նայում էր՝ չհասկանալով, քրտնած մատներով ջղայնորեն խաղալով շապիկի հետ։

— Խոսիր, ի՛նքդ ինչպես ես դատում...

Մորոզկան ծուռ նայեց Լևինսոնին։

— Մի՞թե ես...— սկսեց նա կամացուկ և լռեց՝ խոսքեր չգտնելով։

— Խոսի՛ր, խոսի՛ր...— բղավեցին խրախուսանքով։

— Մի՞թե ես... մի այնպիսի բան արի...— Նա նորից չգտավ հարկավոր խոսքը և Ռյաբեցին գլխով արավ։— Դե՛հ, այդ սեխերը հենց... կվերցնեի՞, եթե մտածեի... չարությամբ կամ ինչպես... Չէ որ դա մեզ մոտ մանկությունից... բոլորը գիտեն, այդպես էլ ես... Իսկ ինչպես Դուբովն ասաց, թե ես մեր բոլոր տղերանց... մի՞թե ես, եղբայրներ...— Հանկա՛րծ դուրս թռավ նրա ներսից, ու նա ողջ մարմնով առաջ ընկավ, բռնելով կոփածը, և աչքերը փայլեցին ջերմ ու խոնավ լույսով։— Ախր ես իմ արյունը կտամ կաթիլ առ կաթիլ բոլորի համար, և ոչ թե խայտառակություն, կամ ինչ...

Փողոցից ներս խուժեցին կողմնակի ձայներ, մի տեղ՝ Սնիտկինյան մի անկյունում, շունը հաչում էր, աղջիկները երգում էին, կողքին՝ տերտերի տանը, համաչափ և բութ ինչ-որ բան էր թխկում, ասես սանդ էին ծեծում։— «Լարի-ի՛ր»։— Ծոր տալով կանչում էին լաստի վրա։

— Դեհ, ինչպե՞ս ինքս ինձ պատժեմ...— ցավով, բայց արդեն բավականին հաստատ և պակաս չափով անկեղծ շարունակեց Մորոզկան...— Միայն խոսք տալ կարող եմ... հանքափորի խոսք... դա արդեն ճիշտ կլինի՝ չեմ կեղտոտվի...

— Իսկ եթե խոսքդ չպահե՞ս,— հարցրեց Լևինսոնը զգուշությամբ։

— Կպահեմ...— և Մորոզկան կնճռոտվեց, ամոթ զգալով գեղջուկների առաջ։

— Իսկ եթե ո՞չ...

— Այն ժամանակ՝ ինչ կուզեք արեք... թեկուզ գնդակահարեք...

— Ով կգնդակահարենք,— խստությամբ ասաց Դուբովը, բայց նրա աչքերը փայլում էին առանց որևէ բարկության, սիրով և ծաղրական։

— Կնշանակի, պրծա՞վ։ Վե՞րջ...— կանչեցին նստարաններից։

— Դեհ, ահա ամբողջ գործը... խոսեցին գեղջուկները, ուրախանալով, որ երկար ժողովը վերջանալու վրա է։— Գործն ինքը դատարկ բան է, իսկ խոսակցությունը՝ մի տարվա...

— Այդպես էլ վճռե՞նք, ինչ է... Ուրիշ առաջարկություններ չկա՞ն։

— Դեհ փակիր, է՛, սատանա-ա՛...— աղմկեցին պարտիզանները, քիչ առաջվա լարվածությունից հետո պայթելով։ — Առանց այն էլ արդեն ձանձրացրեց... Ուտե՛լ ենք ուզում. քարը քարին կերավ...

— Ոչ, սպասեցնք,— ասաց Լևինսոնը, ձեռքը բարձրացնելով և զսպված՝ աչքերը կկոցելով։— Այս հարցը վերջացրինք, այժմ մյուսը...

— Էլի ի՞նչ կա։

— Ես կարծում եմ՝ պետք է այսպիսի որոշում կայացնենք...— նա շուրջը նայեց։— Իսկ մենք քարտուղար էլ չունեինք...— ծիծաղեց հանկարծ մանր և բարեսրտորեն։— Ե՛կ, Ջիժ, գրիր... այսպիսի որոշում ընդունենք, որ ռազմական գործողություններից ազատ ժամանակ փողոցներում ոչ թե շուն փախցնենք, այլ օգնենք գյուղացիներին, գեթ մի քիչ... — Նա այդ բանն ասաց այնպես համոզիչ, կարծես ինքը հավատում էր, որ գոնե մեկը կսկսի օգնել գյուղացիներին։

— Դե, մենք այդ բանը չե՞նք պահանջում...— կանչեց գեղջուկներից մեկը։

Լևինսոնը մտածեց. «Խայծը քաշեց»...

— Սո՛ւս, դո՛ւ-ո՛ւ...— կտրեցին խոսքը մյուս գեղջուկները։— Ավելի լավ է՝ լսիր։ Թող իսկապես աշխատեն, ձեռքները չի ջարդվի...

— Իսկ Ռյաբեցին մենք ջոկ կհատուցենք աշխատանքով...

— Ինչի՞ ջոկ,— հուզվեցին գեղջուկները։— Ի՞նչ մի մեծ մարդ է նա... Շատ էլ մեծ աշխատանք չի, ամեն մարդ էլ կարող է նախագահ լինել...

— Վերջացնե՞լ, վերջացնե՞լ... համաձա՞յն ենք... գրիր... — Պարտիզանները վեր թռան տեղներից և, արդեն լսելով հրամանատարին, իրար ետևից դուրս եկան սենյակից։

— Է՛հ... Վանյա-ա՛...— Մորոզկայի մոտ թռավ փրշոտ, սրաքիթ մի ջահել և, սապոգներով թխկթխկացնելով, քաշեց նրան դեպի դուռը։— Դու, իմ սիրելի տղաս, որդիս, փսլընքոտս... Ի-ե՛հ...— դոփդոփում էր նա արտասանդուղքի վրա՝

գլխարկը կտրիճաբար թեքելով և մի ձեռքով Մորոզկային գրկելով։

— Դե գնա,— անչար հրեց նրան բանբերը։

Մոտից արագ անցան Լևինսոնն ու Բակլանովը։

— Ի՞նչ քաջն է էդ Դուբովը,— ասում էր օգնականը, հուզված շաղ տալով թուքը և շարժելով ձեռքերը։— Ա՜յ, եթե նրան Գոնչարենկոյի հետ իրար դեմ գրգռես։ Ո՞վ՝ որին, ի՞նչ ես կարծում։

Լևինսոնը, տարված այլ մտքերով, չէր լսում նրան։ Խռնավացած փոշին նստում էր ոտքերի տակ՝ երերուն և փափուկ։

Մորոզկան աննկատելիորեն ետ մնաց։ Վերջին գեղջուկները անցան նրանից։ Այժմ նրանք խոսում էին հանգիստ, առանց շտապելու, ասես վերադառնում էին աշխատանքից և ոչ թե ժողովից։

Բլրակի վրա սողացին տնակների հյուրընկալ կրակները, որ ընթրիքի էին հրավիրում։ Գետը մշուշում աղմկում էր հարյուրավոր քչքչացող ձայներով։

«Միշկային դեռ չեմ ջրել...»— ցնցվեց Մորոզկան՝ մրտնելով հետզհետե իր սովորական, չափված շրջանի մեջ։

Ախոռում, զգալով տիրոջ ներկայությունը, Միշկան խրրխընչաց կամաց և դժգոհ, կարծես հարցնում էր. «Այս ո՞ւր ես թրև գալիս»։ Մորոզկան մթության մեջ ձեռքով շոշափեց ձիու կոշտ բաշը և խոտանոցից դուրս քաշեց նրան։

— Հը, ուրախացա՞ր,— նա մի կողմ հրեց Միշկայի գլուխը, երբ սա խոնավ ռունգներով հանդգնորեն հպվեց նրա վզին,— միայն անառակություն գիտես անել, իսկ պատասխան տալու ժամանակ՝ ես մենակ...

6.

ԼԵՎԻՆՍՈՆԸ

Լևինսոնի ջոկատն արդեն հինգերորդ շաբաթն էր հանգրստանում, ամել էր տնտեսությամբ՝ պահեստի ձիերով, սայլերով, խոհանոցի կաթսաներով, որոնց շուրջը պատրաստվում էին պատառոտուն շորերով շատախոս դասալիքներն ուրիշ ջոկատներից։ Ժողովուրդը ծուլացել էր, քնում էր հարկ եղածից ավելի, նույնիսկ պահակատեղում։ Անհանգիստ լուրերը Լևինսոնին թույլ չէին տալիս տեղից շարժել ամբողջ այդ մեծածավալ մեքենան. նա վախենում էր չմտածված քայլ անել. նոր փաստերը մերթ հաստատում էին, մերթ ծաղրում նրա երկյուղները։ Քանի՞ անգամ նա մեղադրել էր իրեն ավելորդ զգուշության համար, մանավանդ երբ հայտնի դարձավ, որ ճապոնացիները թողել են Կռիլովկան, և հետախուզությունը չէր հայտնաբերել թշնամուն մի քանի տասնյակ վերստ տարածության վրա։

Սակայն, բացի Ստաշինսկուց, ոչ ոք չգիտեր Լևինսոնի այդ տատանումների մասին։ Եվ ոչ ոք էլ ջոկատում չգիտեր, որ Լևինսոնն առհասարակ կարող է տատանվել. նա ոչ ոքի հետ չէր բաժանում իր մտքերն ու զգացմունքները, մատուցում էր արդեն պատրաստի «այո»-ն կամ «ոչ»-ը։ Այդ պատճառով նա թվում էր բոլորին,— բացի այնպիսի մարդկանցից, ինչպես Դուբովը, Ստաշինսկին, Գոնչարենկոն, որոնք գիտեին նրա իսկական արժեքը,— մի առանձին, կանոնավոր, ճիշտ տեսակի մարդ։ Ամեն մի պարտիզան, մանավանդ պատանի Բակլանովը, որն ամեն բանում աշխատում էր նմանվել հրամանատարին, և որը նույնիսկ նրա արտաքին ձևերն էր ընդունել, մտածում էր, օրինակ, այսպես. «Իհարկե, ես՝ մեղավոր մարդս, շատ թուլություններ ունեմ, շատ բան չեմ հասկանում, շատ բան չեմ կարող հաղթահարել իմ մեջ, տանն ունեմ հոգացող և ջերմ կին կամ հարսնացու, որին կարոտում եմ, ես սիրում եմ քաղցր սեխ կամ հացով կաթ կամ թե փայլեցրած կոշիկներ, որպեսզի երեկույթի ժամանակ հրապուրեմ աղջիկներին։ Իսկ Լևինսոնը ուրիշ բան է։ Նրան չի կարելի կասկածել այդպիսի բաների մեջ. նա ամեն ինչ հասկանում է, ամեն ինչ անում է, ինչպես որ պետք է. նա աղջիկների մոտ չի գնում, ինչպես Բակլանովը, և սեխ չի գողանում, ինչպես Մորոզկան։ Նա գիտե միայն մի բան՝ **գործը**։ Դրա համար էլ չի կարելի չհավատալ և չհպատակվել այդպիսի կանոնավոր, կարգին մարդուն...»։

Այն ժամանակվանից, երբ Լևինսոնն ընտրվեց հրամանատար, ոչ ոք չէր կարող երևակայել նրան մի այլ տեղում, ամեն մեկին թվում էր, որ նրա ամենահատկանշական գիծը հենց այն է, որ նա հրամանատարություն է անում իրենց ջո-

կատին։ Եթե Լևինսոնը պատմեր այն մասին, թե ինչպես մանկության օրերին ինքն օգնում էր հորը՝ վաճառելու գործածված կահկարասին, թե ինչպես իր հայրը ամբողջ կյանքում կամենում էր հարստանալ, բայց վախենում էր մկնիրից և շատ վատ ջութակ էր նվագում, բոլորն էլ դա կհամարեին գրեթե անտեղի կատակ։ Բայց Լևինսոնը երբեք այդպիսի բաներ չէր պատմում։ Ոչ թե նրա համար, որ ծածկամիտ էր, այլ գիտեր, որ իր մասին մտածում են հենց որպես մի «առանձին տեսակի» մարդու մասին, գիտեր նաև իր և ուրիշների թուլությունները և մտածում էր, որ ուրիշներին կարելի է տանել իր ետևից՝ միայն ցույց տալով նրանց իրենց թուլությունները և ճնշելով, ծածկելով սեփականները։ Նա երբեք չէր փորձում ծաղրել պատանի Բակլանովին՝ ընդօրինակելու համար։ Նրա հասակում Լևինսոնն էլ էր ընդօրինակում իրեն սովորեցնող մարդկանց, և նրանք թվում էին նույնպես կանոնավոր, ինչպես ինքը՝ Բակլանովին։ Հետագայում նա համոզվեց, որ դա այդպես չէ, և, այնուամենայնիվ, շատ շնորհակալ էր նրանցից։ Չէ՞ որ Բակլանովը փոխ էր առնում իրենից ոչ միայն արտաքին ձևերը, այլև հին կենսական փորձառությունը՝ կռվի, աշխատանքի, վարքի հմտությունները։ Եվ Լևինսոնը գիտեր, որ արտաքին ձևերը տարիների ընթացքում կմաղվեն, իսկ հմտությունները, լրացվելով սեփական փորձով, կանցնեն նոր Լևինսոններին ու Բակլանովներին, իսկ դա շատ կարևոր է և անհրաժեշտ։

...Մի խոնավ կեսգիշեր, օգոստոսի սկզբին, ձիով սուրհանդակը մի թուղթ բերեց ջոկատ, ծերունու Սուխովեյ-Կովտունից՝ պարտիզանական ջոկատների շտաբի պետից։ Ծեր Սուխովեյ-Կովտունը գրում էր ճապոնացիների հարձակման մասին՝ Անուչինոյի վրա, ուր կենտրոնացած էին պարտիզանական գլխավոր ուժերը, Իզվեստկայի մոտ տեղի ունեցած մահացու կռվի մասին, հարյուրավոր շարշարվածների մասին և այն մասին, որ ինքը թաքնվում է որսորդական ձմեռանոցում՝ ինը գնդակով վիրավորված է և որ այլևս, երևի, շատ չի ապրի...

Պարտության լուրը անցնում էր հովտով չարագուշակ արագությամբ և, այնուամենայնիվ, սուրհանդակի բերած թուղթը կանխել էր նրան։ Ամեն մի բանբեր զգում էր, որ դա

ամենաաարսափելի թուղթն է, որը միայն պետք է եղել տանել շարժման սկզբից ի վեր։ Մարդկանց տագնապը հաղորդվում էր նաև ձիերին։ Պարտիզանական բրդոտ ձիերը, ատամները ցույց տալով, սրարշավ թռչում էին գյուղից գյուղ, մռայլ, ցեխոտ ճամփաներով, դես-դեն շաղ տալով սմբակներով փրցրած ցեխի գնդերը...

Լևինսոնը թուղթն ստացավ գիշերվա ժամը տասներկուսն անց կեսին, իսկ կես ժամ հետո, հովիվ Մետելիցայի հեծյալ դասակը անցնելով Կոռլովկան, հովհարաշար թռավ այս ու այն կողմ, սիխոտեալինյան գաղտնի շավիղներով, տանելով խռովահույզ լուրը Սվիյագինի մարտական տեղամասի ջոկատներին։

Չորս օր Լևինսոնը կցկտուր տեղեկություններ էր հավաքում ջոկատներից, նրա միտքը աշխատում էր լարված և խարխափելով. ասես ականջ էր դնում, բայց նա առաջվա պես հանգիստ խոսում էր մարդկանց հետ, ծաղրանքով կկոցում էր խաժ, ոչ տեղացու աչքերը, ձեռք էր առնում Բակլանովին՝ «կեղտափեշ Մարուսկայի» հետ ունեցած գաղտնի գործերի համար։ Իսկ երբ վախից սիրտ առած Չիժը մի անգամ հարցրեց, թե ինչու նա ոչ մի բան չի ձեռնարկում, Լևինսոնը քաղաքավարությամբ մատով թխկթխկացրեց նրա ճակատին և պատասխանեց, որ դա «հավի խելքի բան չէ»։ Իր ամբողջ արտաքինով Լևինսոնը ասես ցույց էր տալիս մարդկանց, որ ինքը շատ լավ է հասկանում, թե այդ բոլորը ինչից է առաջանում և ուր է տանում, որ դրա մեջ ոչ մի անսովոր կամ սարսափելի բան չկա, և որ ինքը՝ Լևինսոնը, արդեն վաղուց աղատվելու ճիշտ, անսխալ ծրագիր ունի։ Իսկապես նա ոչ թե որևէ ծրագիր չուներ, այլ առհասարակ իրեն շփոթված էր զգում, ինչպես մի աշակերտ, որին ստիպել են միանգամից վճռել բազմաթիվ անհայտներով մի խնդիր։ Նա լուրեր էր սպասում քաղաքից, ուր խռովահույզ թղթից մի շաբաթ առաջ գնացել էր պարտիզան Կանուննիկովը։

Նա վերադարձավ թղթի գալուց հինգ օր հետո, մազմորուք կոխած, հոգնած և քաղցած, բայց առաջվա պես ճարպիկ ու խորամանկող. այդ տեսակետից նա անուղղելի էր։

— Քաղաքում գործը ձախողված է, և Կրայզելմանը բանտում է.— ասաց Կանուննիկովը, նենգ խաղամոլի ճարպ-

կությամբ նամակը հանելով անհայտ թևքից, և ժպտաց միայն շրթունքներով. նա ամենևին ուրախ չէր, բայց առանց ժպտալու խոսել չգիտեր։— Վլադիմիրո-Ալեքսանդրովսկում և Օլգայի վրա ճապոնացիները դեսանտ են իջեցրել... Ամբողջ և Սուչանը ջախջախված է։ Բանը բուրդ է... ծխիր...— և մեկնեց Լևինսոնին ոսկեզօծ բարակ սիգարետը։

Լևինսոնը թոուցիկ նայեց հասցեներին, մի նամակը դրեց գրպանը, մյուսը բացեց։ Այն հաստատում էր Կանուննիկովի ասածները։ Պաշտոնական տողերի միջից, որոնք լիքն էին շինծու ստույգությամբ, չափազանց պարզ կերպով երևում էր պարտության և անզորության դառնությունը։

— Վատ է, հա՞...— կարեկցաբար հարցրեց Կանուննիկովը։

— Ոչինչ... Նամակը ո՞վ գրեց, Սեդի՞խը։

Կանուննիկովը գլխով արեց։

— Դա նկատելի է. նա միշտ բաժիններով է գրում...— Լևինսոնը ծաղրաբար եղունգով ընդգծեց. «Բաժինը IV. Հերթական խնդիրներ», հոտոտեց սիգարիկը։— Անպետք ծխախոտ է, այնպես չէ՞։ Տուր վառեմ... դու այնտեղ, տղերանց մեջ դուրս չտաս դեսանտի և այլնի մասին... Ինձ համար ծխամորճ գնեցի՞ր։— Եվ առանց լսելու Կանուննիկովի բացատրությունները, թե ինչու նա ծխամորճ չի գնել, նորից քիթը կոխեց թղթի մեջ։

«Հերթական խնդիրներ» բաժինը հինգ կետից էր կազմված։ Նրանցից չորսը Լևինսոնին թվացին հիմար և անիրագործելի։ Իսկ հինգերորդ կետն ասում էր.

«...Ամենակարևորը, ինչ այժմ պահանջվում է պարտիզանների հրամանատարությունից, և որին պետք է ձգտել ամեն կերպ, այն է՝ պահպանել թեկուզ և ոչ մեծ, բայց ամուր ու կարողապահ մարտական միավորներ, որոնց շուրջը հետագայում...»։

— Կանչիր Բակլանովին և տնտեսվարին,— ասաց Լևինսոնը արագ-արագ։

Նա նամակը դրեց դաշտային պայուսակի մեջ՝ առանց վերջացնելու և իմանալու, թե ինչ պիտի լինի հետագայում

մարտական միավորների շուրջը։ Բազմաթիվ խնդիրների միջից մի ինչ-որ տեղ պատկերանում էր մեկը՝ «ամենագլխավորը»։ Լևինսոնը դեն նետեց մարած սիգարետը և սկսեց թմբկահարել սեղանին... «Պահպանել մարտական միավորները...» Այս միտքը բոլորովին չէր հեռանում, կանգնած էր ուղեղում երեք բառերի ձևով, որոնք քիմիական մատիտով գրված էին տողած թղթի վրա։ Մեքենաբար շոշափեց երկրորդ նամակը, նայեց ծրարը և հիշեց, որ դա կնոջից էր։ «Հետո,— մտածեց նա և նորից սկսեց։— Պահպանել մարտական մի-ա-վոր-նե-րը»։

Երբ տնտեսվարը և Բակլանովը եկան, Լևինսոնն արդեն գիտեր, թե ինչ պետք է անեն ինքը և իրեն ենթակա մարդիկ. նրանք պետք է անեն ամեն ինչ, որպեսզի պահպանեն ջոկատը՝ իբրև մարտական միավոր։

— Մեզ հարկ կլինի շուտով հեռանալ այստեղից,— ասաց Լևինսոնը։— Ձեզ մոտ ամեն ինչ պատրաստ է... Խոսքը պատկանում է տնտեսվարին...

— Այո՛, տնտեսվարին,— ինչպես արձագանք կրկնեց Բակլանովը և քաշեց փոկը այնպիսի խիստ ու վճռական տեսքով, կարծես առաջուց գիտեր, թե այդ բոլորը ինչի համար է։

— Ես ինչ, իմ պատճառով գործը չի կանգնի, ես միշտ էլ պատրաստ եմ... Միայն թե ի՞նչ է լինելու վարսակի բանը...— Եվ տնտեսվարը սկսեց երկար ու բարակ պատմել թրջված վարսակի, պատատոտված պարկերի, հիվանդ ձիերի մասին, այն մասին, որ «ամբողջ վարսակը վերցնելու հնար իսկի չունեն»,— մի խոսքով՝ այնպիսի բաների մասին, որոնք ցույց էին տալիս, որ նա դեռ պատրաստ չի և ընդհանրապես տեղաշարժը վնասակար բան է համարում։ Նա աշխատում էր չնայել հրամանատարին, ցավագնորեն կնճռոտում էր դեմքը, աչքերը թարթում էր և տնքում, որովհետև առաջուց հավատացած էր իր պարտությանը։

Լևինսոնը բռնեց նրա ղեստի կոճակից և ասաց.

— Խելառություն ես անում...

— Ո՛չ, իրա՞վ, Օսիպ Աբրամիչ, ավելի լավ է մենք այստեղ ամրանանք...

— Ամրանա՞նք... այստե՞ղ...— Լևինսոնը օրորեց գլուխը,

ասես ցավակցելով տնտեսվարի հիմարությանը։— Իսկ մաղերդ արդեն սպիտակում են։ Դու ինչո՞վ ես մտածում, գըլխո՞վ արդյոք...

— Ես...

— Ոչ մի խոսակցություն։— Լևինսոնը համոզիչ կերպով քաշեց նրա զգեստի կոճակից։— Ամեն րոպե պատրաստ լինել։ Պա՞րզ է... Բակլանով, դու կհետևես դրան...— Նա բաց թողեց կոճակը։— Ամո՞թ է... դատա՞րկ բան են քո պարկերը, դատա՞րկ։— Նրա աչքերը պարզեցին, և նրանց կոշտ հայացքի տակ տնտեսվարը վերջնականապես համոզվեց, որ պարկերն, իրոք, դատարկ բան են։

— Այո, իհարկե... էհ, ի՞նչ կա որ, պարզ է... բանը դա չէ...— փնթփնթաց նա, այժմ պատրաստ լինելով համաձայնել նույնիսկ, որ վարսակը տանի սեփական մեջքով, եթե հրամանատարը դա անհրաժեշտ համարի։— Ի՞նչը կարող է մեզ խանգարել։ Երկար մտածելու ի՞նչ կա այստեղ։ Թո՛ւ-ու... կուզես՝ այսօր, ձեռաց...

— Այդպե՞ս, այդպես...— ծիծաղեց Լևինսոնը,— դե լավ, լավ, գնա...— և նա թեթևակի հրեց նրան թիկունքից։— Որպեսզի ամեն րոպե...

«Խորամանկն է սրիկան»,— բարկությամբ և հիացմունքով մտածում էր տնտեսվարը՝ սենյակից դուրս գալիս։

Երեկոյան դեմ Լևինսոնը հավաքեց ջոկատի խորհուրդը և դասակների հրամանատարներին։

Լևինսոնի լուրերին տարբեր կերպ վերաբերվեցին։ Դուբովն ամբողջ երեկոն լուռ նստած մնաց, քաշքշելով թավ, ծանր-ծանր վայր կախված ընչացքները։ Երևում էր, որ նա առաջուց համաձայն էր Լևինսոնի հետ։ Առանձնապես հեռանալու դեմ առարկում էր 2-րդ դասակի հրամանատար Կուբրակը։ Նա ամենածեր, ամենավաստակավոր և ամենամիամիտ հրամանատարն էր ամբողջ գավառում։ Նրան ոչ ոք չպաշտպանեց. Կուբրակը բնիկ կոիլովկացի էր, և ամեն մեկը հասկանում էր, որ նրա մեջ խոսում են Կոիլովկայի վարելահողերը և ոչ թե գործի շահերը։

— Պրծա՞վ։ Կա՛ց...— ընդմիջեց նրան հովիվ Մետելիցան։— Ժամանակն է մոռանալ կնկա փեշը, քեռի Կուբրակ։ — Նա, ինչպես միշտ, անսպասելիորեն բռնկվեց սեփական

խոսքերից, բուունցքը զարկեց սեղանին, և նրա չեչոտ երեսը մեկեն քրտնեց։— Այստեղ մեզ, հավերի նման՝ կա՛ց, ու պրծա՞վ...— և նա սկսեց վազվզել սենյակում, բրդոտ կոշիկներով աղմկելով ու խարազանով աթոռները շուռ տալով։

— Իսկ դու մի քիչ կամաց, ապա թե ոչ՝ շուտով կհոգնես,— հորդորեց Լևինսոնը։ Բայց յուրովի հիանում էր նրա՝ կաշվե խարազանի պես պինդ ոլորված ճկուն մարմնի պոռթկուն շարժումներով։ Այդ մարդը չէր կարողանում մի րոպե հանգիստ նստել. նա ամբողջովին կրակ էր ու շարժում, և նրա գիշատիչ աչքերը միշտ վառվում էին մեկին հասնելու և հետը կռվելու անհագ ցանկությամբ։

Մետելիցան նահանջի իր սեփական ծրագիրն առաջադրեց, որից երևաց, որ նրա տաք գլուխը չի վախենում մեծ տաքարյունություններից և զուրկ չէ ռազմական հասկացողությունից։

— Ճի՞շտ է... Նրա գլուխն աշխատում է,— բացականչեց Բակլանովը՝ հիացած և մի քիչ վիրավորված Մետելիցայի ինքնուրույն մտքի չափազանց համարձակ թռիչքից։— Վազո՞ւց էր, որ ձիեր էր արածացնում, իսկ մի երկու տարուց, մեկ էլ տեսար, մեզ բոլորիս կսկսի հրամայել...

— Մետելիցա՞ն... Օ՜-օ՜... գա՜նձ է,— հաստատեց Լևինսոնը։— Միայն, տես, չմեծամտանաս...

Սակայն, օգտվելով տաք վիճաբանություններից, որի ժամանակ ամեն մեկն իրեն ուրիշներից խելոք էր համարում և ոչ ոքի չէր լսում, Լևինսոնը փոխեց Մետելիցայի ծրագիրը իրենով, որն ավելի պարզ էր և զգուշավոր։ Բայց նա այդ բանն արեց այնպես վարպետորեն և աննկատելի, որ նրա նոր առաջարկությունը քվեարկեց իբրև Մետելիցայի առաջարկություն և ընդունվեց բոլորի կողմից։

Քաղաք և Ստաշինսկուն գրած պատասխան նամակներում Լևինսոնը հայտնում էր, որ մոտ օրերս ջոկատը փոխադրում է Շիբիշի գյուղը՝ Իրոխեձայի ակունքներում, իսկ հիվանդանոցին կարգադրում էր մնալ իր տեղում, մինչև հատուկ հրամանը։ Ստաշինսկուն Լևինսոնը գիտեր դեռ քաղաքից, և դա երկրորդ տագնապալի նամակն էր, որ գրում էր նրան։

Նա աշխատանքը վերջացրեց ուշ գիշերին, լամպի նավթը վերջացավ։ Բայց լուսամուտից խոնավության և փտածության հոտ էր գալիս։ Լսվում էր, թե ինչպես վառարանի ետևում խշխշում էին ուտիճները, և Ռյաբեցը խոմփում էր հարևան տնակում։ Լևինսոնը հիշեց կնոջ նամակի մասին և, լամպի մեջ նավթ ածելով, կարդաց։ Ոչ մի նոր և ուրախալի բան չկար նրա մեջ։ Առաջվա պես ոչ մի տեղ ծառայության չեն ընդունում. ծախված է ամենը, ինչ որ կարելի է ծախել, ստիպված է ապրել «Բանվորական կարմիր խաչի» հաշվին, երեխաները տառապում են ընդախտով և արյան պակասություն ունեն։ Իսկ այդ ամենի միջից ելնում էր անծայր մի հոգս նրա մասին։ Լևինսոնը մտածկոտ գզգզեց մորուքը և սկսեց պատասխան գրել։ Սկզբում նա չէր ուզում շուտ տալ մտքերի ընթացքը, որոնք կապված էին իր կյանքի այս կողմին, բայց հետզհետե տարվեց. դեմքը մեղմացավ. նա գրեց ամբողջ երկու թերթ՝ մանր, անընթեռնելի ձեռագրով, և նրանց մեջ շատ էին այնպիսի խոսքեր, որոնց մասին ոչ ոք չէր կարող մտածել, թե դրանք Լևինսոնին ծանոթ են։

Հետո, շփելով մարմնի թմրած անդամները, նա բակ ելավ։ Ախոռում դոփում էին ձիերը, հաճույքով խրթխրթացնում խոտը։ Օրապահը, հրացանն ամուր գրկած, քնած էր ծածկի տակ։ Լևինսոնը մտածեց... «Ի՞նչ կլինի, եթե ժամապահներն էլ այսպես քնեն...» Մի քիչ ժամանակ կանգնած մնաց և, դժվարությամբ հաղթելով իր իսկ քնելու ցանկությունը, ախոռից դուրս բերեց հովատակը։ Թամբեց։ Օրապահը չզարթնեց։ «Տե՛ս շան որդուն»,— մտածեց Լևինսոնը։ Զգուշությամբ հանեց նրա գդակը, պահեց խոտի տակ և, ցատկելով թամբի վրա, գնաց պահակներին ստուգելու։

Թփերի մոտից անցնելով՝ նա հասավ անասնանոցը։

— Ո՞վ է այդտեղ,— խստորեն կանչեց ժամապահ զինվորը՝ հրացանի փակաղակը չխկացնելով։

— Յուրային...

— Լևինսո՞ն... Այդ ինչ ես ման գալիս գիշերով։

— Դեռքեր անցա՞ն։

— Տասնհինգ րոպե առաջ մեկը գնաց։

— Նոր բան չկա՞։

— Դեռ հանդիստ է... Ծխախոտ ունե՞ս...

Լևինսոնը մի քիչ «մանչուրկա» տվեց նրան և, գետի ծանծաղուտով անցնելով, դուրս եկավ։

Երևաց աղոտ լուսինը, խավարի միջից դուրս ելան ցողից թեքված, դալուկ թփերը։ Գետը ծանծաղ տեղերում գընգում էր, լսվում էր ամեն մի շիթը քարին զարնվելու ձայնը։ Առջևում, բլրակի վրա, աղոտ կերպով շարժվեցին չորս ձիավոր կերպարանքներ։ Լևինսոնը ձին դարձրեց դեպի թփերը և պահվեց։ Ձայները լսվեցին բոլորովին մոտիկ։ Լևինսոնը ճանաչեց Երկուսին, դեռքեր էին։

— Հապա մի սպասեք,— դուրս գալով ճանապարհ՝ ասաց նա։

Ձիերը փնչալով ետ-ետ գնացին։ Մեկը ճանաչեց Լևինսոնի հովատակին և կամացուկ խրխնջաց։

— Այդպես կարելի է վախեցնել,— ասաց առջևինը անհանգստացած-աշխույժ ձայնով.— Ո՞-ո, անպիտան...

— Այդ ո՞վ է ձեզ հետ,— հարցրեց Լևինսոնը՝ մոտենալով նրանց։

— Օսոկինի հետախույզները... Ճապոնացիները Մարյանովկայում են...

— Մարյանովկայո՞ւմ,— Լևինսոնը ցնցվեց։— Իսկ Օսոկինն իր ջոկատով որտե՞ղ է։

— Կոիլովկայում,— ասաց հետախուզներից մեկը։— Նահանջեցինք, սոսկալի կոիվ էր, չդիմացանք։ Ահա ուղարկեցին ձեզ մոտ, կապի համար։ Վաղը կորեական ագարակներն ենք գնում...— Նա ծանրորեն թեքվեց թամբի վրա, ասես սնփական խոսքերի խիտ բեռը ճնշում էր նրան։— Կորավ ամեն ինչ։ Քառասուն մարդ կորցրինք։ Ամբողջ ամառվա ընթացքում այսպիսի կորուստ չէինք կրել։

— Կոիլովկայից կանո՞ւխ եք դուրս գալու,— հարցրեց Լևինսոնը։— Ետ դարձեք, ես ձեզ հետ կգամ...

—... Նա ջոկատ վերադարձավ գրեթե ցերեկը, նիհարած, բորբոքված աչքերով և անքնությունից ծանրացած գլխով։

Օսոկինի հետ ունեցած խոսակցությունը վերջնականապես հաստատել էր Լևինսոնի ընդունած վճռի ճշտությունը՝ պետք էր հեռանալ վաղորոք, հետքերը կորցնելով։ Ավելի պերճախոս կերպով այդ բանի մասին ասաց հենց օսոկինյան

ջոկատի տեսքը. նա բոլորովին պայթել էր, ինչպես փտած սախտակներով և ժանգոտ օղակներով մի հին տակառ, որին ուժգին հարվածել էին կացնի կոնակով։ Մարդիկ դադարել էին հրամանատարին լսելուց, աննպատակ շրջում էին բակից բակ, շատերը գինով էին։ Առանձնապես միտքն էր մնացել մեկը՝ մազոտ և նիհար. նա նստած էր հրապարակում, ճամփի մոտ, պղտոր աչքերը գետնին հառած և կույր մոլեգնության մեջ փամփուշտ փամփուշտի ետևից ուղարկում էր դեպի առավոտյան սպիտակավուն մառախուղը։

Տուն վերադառնալով՝ Լևինսոնը իսկույն ուղարկեց իր նամակներն ըստ պատկանելույն, ոչ ոքի, սակայն, չասելով, թե գյուղից դուրս գալը նշանակված է մոտակա գիշերը։

7.

ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Ստաշինսկուն գրած առաջին նամակում, որն ուղարկել էր գեղջկական հիշյալ ժողովի հաջորդ օրը, Լևինսոնը հայտնում էր իր վախը և առաջարկում աստիճանաբար դատարկեր հիվանդանոցը, որպեսզի հետո ավելորդ բեռ չլինի։ Բժիշկը մի քանի անգամ կարդաց նամակը, և այն բանից, որ նա առանձնապես աչքերը շուտ-շուտ էր թարթում, իսկ դեղին երեսի վրա հետզհետե ավելի խիստ էին ընդգծվում ծնոտները, ամեն մեկը իրեն վատ զգաց, մռայլվեց։ Կարծես փոքրիկ, դորշագույն ծրարիկից, որ Ստաշինսկին բռնել էր շոր ձեռքերում, շաչելով դուրս սողաց Լևինսոնի անպարկեշտ տագնապը, և ամեն մի խոտի միջից, ամեն մի մարդու հոգու խորքից խրտնեցրեց հարմարորեն անշարժացած լռությունը։

... Պարզ եղանակը մեկեն վատացավ, արևը և անձրևը հաջորդեցին իրար փոփոխակի, տխուր երգեցին մանչուրական մուգ թխկիները՝ ամենից շուտ զգալով մոտիկ աշնան շունչը։ Ծեր, սևակտուց փայտփորը զարկեց կեղևին սաստիկ մոլեգնությամբ. Պիկան սկսեց թախծել, լռեց և մռայլվեց։ Ամբողջ օրերով թափառում էր նա տայգայում, դալիս էր հոգնած, չգոհացած։ Նստում էր կարի՝ թելերը խճճվում էին և կտրվում, նստում էր շաշկի խաղալու՝ տարվում էր,

և նա այնպիսի զգացողություն ուներ, կարծես բարակ ծղոտով ներծծում էր ճահճի նեխված ջուրը։ Իսկ մարդիկ արդեն ցրվում էին դեպի գյուղերը՝ փաթաթում էին զինվորական անուրախ կապոցները, տխուր ժպտում էին, մոտենում ամեն մեկին «ձեռք տալու»։

Բուժքույրը, քննելով վիրակապերը, համբուրում էր «եղբայրներին» մնաս բարևի ժամանակ, և նրանք, նոր տրեխներով թաղվելով մամուռում, գնում էին դեպի անհայտ հեռուն և ցեխը...

Վերջինը, որին Վարյան ճամփեց, կաղն էր։

— Գնաս բարով, եղբայրս,— ասաց՝ համբուրելով նրա շրթունքները։— Տեսնում ես, աստված քեզ սիրում է՝ լավ օր տվեց.... Մի՛ մոռանա մեզ՝ խեղճերիս...

— Իսկ այդ աստվածն ո՞ւր է,— քթի տակ խնդաց կաղը։— Աստված չկա՛... չկա՛-չկա՛, զորեղ ոչի՛լ...— Նա ուզում էր էլի մի բան ավելացնել՝ սովորական-ուրախ և համով բան, բայց հանկարծ երեսը ցնցվեց. նա ձեռքով արավ, շրջվեց և կաղալով քայլեց շավղով, զրնգացնելով կաթսայիկը։

Այժմ վիրավորներից մնացել էին միայն Ֆրոլովը և Մեչիկը, մեկ էլ Պիկան, որն իսկապես ոչ մի բանով հիվանդ չէր, բայց չէր ուզում հեռանալ։ Մեչիկը, նոր շագրենու շապիկ հագած, որ կարել էր բուժքույրը, մի կողմով նստած էր մահճակալին, օգտվելով բարձից և Պիկայի խալաթից։ Նա արդեն գլխին վիրակապ չուներ, մազերն աճել էին, ոլորվել թանձր դեղնավուն օղակներով, քունքի մոտի սպին նրա դեմքն ավելի լուրջ և տարիքավոր էր դարձնում։

— Ա՛յ, դու էլ ես լավանում և շուտով կգնաս,— տխուր ասաց բուժքույրը։

— Ո՞ւր պիտի գնամ,— հարցրեց նա անվստահ և ինքն էլ զարմացավ։ Հարցը ծագեց առաջին անգամ և ծնեց անորոշ, բայց արդեն ծանոթ պատկերացումներ. ուրախություն վար դրանց մեջ։ Մեչիկը կնճռոտվեց։— Գնալու տեղ չունեմ,— չոր ասաց նա։

— Այ քեզ բա՜ն,— զարմացավ Վարյան։— Ջոկատ կգընաս, Լևինսոնի մոտ։ Չի նստել գիտե՞ս։ Մերը հեծյալ ջոկատ է... Դե ոչինչ, կսովորես...

Նա նստեց Մեչիկի կողքին, մահճակալի վրա, և բռնեց նրա ձեռքը։ Մեչիկը չէր նայում նրան, և այն միտքը, որ վաղ թե ուշ, այնուամենայնիվ, պետք է գնալ, նրան անպետք թվաց այժմ, դառնացրեց թույնի պես։

— Իսկ դու մի՛ վախիր,— կարծես նրան հասկանալով՝ ասաց Վարյան։— Այսպես գեղեցիկ և ջահել, բայց անհամարձակ... Անհամարձակ ես դու,— կրկնեց նա քնքշությամբ և աննկատելի շուրջը նայելով, համբուրեց նրա ճակատը։ Նրա փաղաքշանքում մայրական ինչ-որ բան կար։— ...Դա Շալդիբայի մոտ՝ այնտեղ, իսկ մեզ մոտ այլ տեսակ է...— արագ շշնջաց նրա ականջին, առանց խոսքը վերջացնելու։— Նրա մարդիկ գեղջուկներ են, իսկ մեզ մոտ շատը հանքափորներ են, մեր տղերքն են՝ հարմարվել կարելի է... Դու ինձ մոտ հաճախ արի...

— Իսկ Մորո՞զկան։

— Իսկ նա՞, նկարի՞նը,— հարցով պատասխանեց Վարյան, ծիծաղեց և Մեչիկից ետ քաշվեց, որովհետև Ֆրոլովը գլուխը շուռ տվեց։

— Է՛հ... Ես արդեն մոռացել եմ անգամ նրա մասին մտածել... Պատռեցի նկարը,— շտապ ավելացրեց նա։— Թղթերը, որ տեսար, դա էր...

— Դե՛հ, իսկ Մորոզկան՝ դրանից էլ քիչ, նա, երևի, սովորել է։ Եվ ինքն էլ քեֆ է անում... Դե դու, բան չկա, մի՛ վհատվիր, գլխավորը՝ հաճախ արի։ Եվ ոչ ոքի մի՛ զիջիր... Ինքդ մի՛ զիջիր... Մեր տղաներից չպետք է վախենալ. նրանք տեսքից են միայն շար. մասդ բերանները դիր՝ կծծեն։ Այդ բոլորը սարսափելի չի, մենակ թվում է։ Հարկավոր է միայն, որ դու ինքդ էլ ատամներդ ցույց տաս...

— Իսկ դու մի՞թե ցույց ես տալիս։

— Իմ բանը ուրիշ է, ես կնիկ եմ, ինձ, գուցե, դա պետք չէ, ես սիրով էլ կհաղթեմ։ Իսկ տղամարդն առանց դրան չի կարող... Միայն թե դու չես կարողանա,— ավելացրեց նա, մտածելով։ Եվ նորից, թեքվելով դեպի նա, շշնջաց.— Գուցե դրա համար էլ ես քեզ սիրում եմ... չգիտեմ...

«Ախր ճիշտ է, որ ես բոլորովին համարձակ չեմ,— մտածում էր Մեչիկը հետո, ձեռքերը գլխի տակ դրած և անշարժ հայացքը երկնքին սևեռած։— Բայց մի՞թե չեմ կարողանա։

Չէ՞ որ մի կերպ պետք է, ուրիշները կարողանում են...» Նրա մտքում, սակայն, վիշտ չկար հիմա՝ թախծոտ և մենավոր։ Նա արդեն կարողանում էր ամեն բանի վրա նայել կողքից՝ ուրիշ աչքերով։ Դա տեղի էր ունենում այն պատճառով, որ նրա հիվանդության մեջ բեկում էր կատարվել. վերքերն արագ փակվում էին, մարմինը ամրանում էր և լցվում։ Իսկ դա հողից էր,— հողը սպիրտի և մրջյունների հոտ էր բուրում,— և մեկ էլ Վարյայից. նրա աչքերն զգայուն էին, ինչպես ծուխը, և ուզում էիր հավատալ, որ նա այդ բոլորն ասում էր սիրելով։

«... Եվ ինչո՞ւ վհատվեմ, իսկապես,— մտածում էր Մեչիկը, և նրան, իրոք, թվում էր այժմ, որ վհատության ոչ մի առիթ չկա։— Պետք է մեկին ինձ պահեմ նրանց հավասար։ Ոչ ոքի թույլ չտամ... Ինքս չտամ՝ այդ բանը նա շատ ճիշտ ասաց։ Այստեղի մարդիկ ուրիշ են, պետք է, որ ես էլ մի կերպ փոխվեմ... Եվ ես այդ բանը կանեմ,— մտածեց նա չեղած վճռականությամբ, զգալով համարյա որդիական շնորհակալություն դեպի Վարյան, դեպի նրա խոսքերը, դեպի նրա լավ սերը։— Այն ժամանակ ամեն բան նոր ձևով կերթա... Եվ երբ ես կդառնամ քաղաք, ոչ ոք ինձ չի ճանաչի՝ բոլորովին ուրիշ տեսակ կլինեմ...»

Նրա մտքերը շեղվեցին հեռու, մի կողմ՝ դեպի ապագա պայծառ օրերը, և այդ պատճառով նրանք թեթև էին, հալվում էին իրենք իրենց, ինչպես վարդագույն-խաղաղ ամպիկները՝ տայգայի անտառի բացատների վրա։ Նա մտածում էր այն մասին, թե ինչպես Վարյայի հետ միասին կվերադառնա քաղաք՝ բաց լուսամուտներով, ճոճվող, փափուկ վագոնով, և կտեսնի լուսամուտից, որ նույնպիսի վարդագույն խաղաղ ամպիկներ են շողում նաև հեռաստանում հալ ընկնող լեռնաշղթաների վերևում։ Եվ իրենք նստած կլինեն լուսամուտի առաջ՝ իրար սեղմված. Վարյան իրեն լավ խոսքեր կասի, իսկ ինքը կշոյի Վարյայի մազերը, և նրա ծամերը կլինեն բոլորովին ոսկեգույն, ինչպես կեսօրը... Եվ Վարյան նրա ցնորքներում նույնպես նման չէր № 1 հանքահորի կռացած բանվորուհուն, որովհետև այն բոլորը, ինչի մասին մտածում էր Մեչիկը, ոչ թե իրական էր, այլ այն, ինչպես նա ուզում էր տեսնել ամեն բան։

...Մի քանի օր հետո ջոկատից եկավ երկրորդ նամակը. Մորոզկան բերեց։ Նա մեծ խառնաշփոթություն ստեղծեց՝ դուրս թռավ տայգայից ճիչ ու կանչով, երիվարին ծառս անելով և անհեթեթ աղաղակով։ Այդ բանը նա արավ կենսական ուժերի առատությունից և... ուղղակի «խնդալու համար»։

— Ո՞վ է քեզ քշում, սատանա,— ասաց վախեցած Պիկան երգեցիկ ձայնով կշտամբելով։— Այստեղ մարդ է մեռնում,— գլխով ցույց տվեց Ֆրոլովի կողմը,— իսկ դու բղավում ես...

— Ահա... հայր Սերաֆիմ,— ողջունեց Մորոզկան։— Մեր հարգանքը ձեզ...

— Ես քեզ համար հայր չեմ, իսկ իմ անունը Ֆյոդոր է... — շարացավ Պիկան։ Վերջին ժամանակները նա հաճախ էր բարկանում, դառնում էր ծիծաղելի և ողորմելի։

— Ոչինչ, Ֆեդոսեյ, մի՛ փքվիր, ապա թե ոչ՝ մազերդ կթափվեն... հարգանքներս,— ողջունեց Մորոզկան Վարյային, գլխարկը հանելով և դնելով Պիկայի գլխին։— Ոչինչ, Ֆեդոսեյ, գլխարկը քեզ սազում է։ Միայն դու վարտիքդ վեր քաշիր, ապա թե ոչ կախվել է, ասես խրտվիլակի վրա. շա՜տ անկիրթ բան է։

— Ի՞նչ է, շուտո՞վ պիտի կծկենք կարթերս,— հարցրեց Ստաշինսկին՝ պատռելով ծրարը։— Հետո բարաք կմտնես պատասխանի համար,— ասաց նա, պահելով նամակը Խարչենկոյից, որը, կյանքը վտանգելով, երկարացնում էր վիզը նրա ուսի ետևից։

Վարյան կանգնած էր Մորոզկայի առաջ՝ խաղալով զոգնոցի ծայրով և առաջին անգամ զգալով մի տարօրինակ անհարմարություն ամուսնուն հանդիպելիս։

— Ինչո՞ւ էսքան ժամանակ չէիր գալիս,— հարցրեց վերջապես շինծու անտարբերությամբ։

— Իսկ դու կարոտե՞լ էիր,— հարցրեց Մորոզկան հեգնանքով, զգալով նրա անհասկանալի օտարացումը։— Դե՜հ, ոչինչ, հիմա մի կուշտ կզվարճանաս, ա՜յ, անտառ կգնանք...— նա լռեց մի քիչ և կծու ավելացրեց.— տանջվելու...

— Քեզ միայն էդ է հարկավոր,— պատասխանեց Վարյան շոր՝ շնայելով նրան և մտածելով Մեչիկի մասին։

— Իսկ քե՞զ...— Մորոզկան սպասողաբար խաղաց մրտրակով։

— Ինձ էլ, առաջին անգամը չի, հո օտար չենք...

— Ուրեմն գնա՞նք...— ասաց նա զգուշությամբ, տեղից չշարժվելով։

Վարյան ցած թողեց զոգնոցը և, ծամերը ետ ձգելով, շավղով առաջ գնաց անփույթ, շինծու քայլվածքով, զսպելով իրեն, որպեսզի չնայի Մեչիկի կողմը։ Նա գիտեր, որ Մեչիկը նայում է իր ետևից ողորմելի, շփոթված հայացքով և երբեք չի հասկանա, նույնիսկ հետո, որ ինքը միայն ձանձրալի պարտականություն է կատարում։

Վարյան սպասում էր, թե Մորոզկան հիմա ետևից կգբրկի իրեն, բայց նա չէր մոտենում։ Այդպես գնում էին նրանք բավական երկար ժամանակ, իրարից հեռու և լուռ։ Վերջապես Վարյան չդիմացավ և կանգ առավ, նայելով նրան զարմանքով ու սպասողական։ Մորոզկան մոտեցավ, բայց էլի ձեռք չտվեց նրան։

— Ինչ-որ պոչ ես խաղացնում,...— ասաց նա հանկարծ խռպոտ ձայնով և ընդմիջումով։— Արդեն խրվե՞լ ես, ինչ է։

— Իսկ դու, ինչ է, հարցաքննո՞ւմ ես։— Նա բարձրացրեց գլուխը և շեշտակի նայեց նրան՝ ըմբոստ ու համարձակ։

Մորոզկան առաջ էլ գիտեր, որ նա իր բացակայության ժամանակ տղաների հետ է լինում այնպես, ինչպես աղջիկ ժամանակն էր։ Նա այդ բանը գիտեր դեռ ամուսնության առաջին օրից, երբ առավոտյան, կոնծելուց հետո, զարթնեց գլխի ցավով, հատակին փռված մարմինների խմբում, ու տեսավ, որ իր «ջահել» և «օրինական» կինը քնած է շիկակարմիր մազերով Գերասիմի՝ № 4 հորի հանքահատ բանվորի հետ գրկված։ Բայց, ինչպես այն ժամանակ, այնպես էլ ամբողջ հետագա կյանքում նա դրան վերաբերվում էր կատարյալ անտարբերությամբ։ Ըստ էության նա ընտանեկան կյանքի իսկական համը չէր առել և երբեք իրեն ամուսնացած մարդ չէր զգացել։ Բայց այն միտքը, որ իր կնոջ սիրեկանը կարող է լինել Մեչիկի պես մի մարդ, նրան այժմ շատ վիրավորական թվաց։

— Էդ ո՞ւմ վրա ես սիրահարվել, կուզեինք իմանալ,—

հարցրեց նա դիտավորյալ քաղաքավարությամբ, դիմանալով նրա հայացքին անփույթ և հանգիստ ժպիտով. նա չէր ուզում վիրավորանքը ցույց տալ։— Չլինի՞ մայրիկի բալայի վրա։

— Թեկուզ մայրիկի բալայի վրա...

— Հա, նա, ոչինչ, մաքուր է,— համաձայնեց Մորոզկան։— Ավելի քաղցր կլինի։ Դու նրան թաշկինակներ կարիր՝ խլինքը սրբելու համար։

— Եթե պետք լինի, կկարեմ և կսրբեմ... ինքս կսրբեմ, լսո՞ւմ ես։— Նա դեմքը ընդհուպ մոտեցրեց նրան և խոսեց արագ ու համարձակ։— Դեհ, ի՞նչ ես աքլորանում, ի՞նչ օգուտ ունի քո խիզախությունը։ Երեք տարվա ընթացքում երեխա չարիր՝ միայն լեղուդ ես բանեցնում, դե կորիր... փուչ հսկա...

— Կանես, ոնց չէ, երբ էստեղ ամբողջ մի դասակ է աշխատում... Դու մի՛ գոռա,— կտրեց նրա խոսքը,— թե չէ...

— Դեհ, ի՞նչ, թե չէ ի՞նչ...— ասաց Վարյան գրգռիչ տոնով։— Գուցե պիտի ծեծե՞ս... Մի փորձիր, տեսնեմ...

Մորոզկան զարմացած բարձրացրեց մտրակը, կարծես այդ միտքը մի անսպասելի հայտնություն էր նրա համար, և նորից իջեցրեց։

— Չէ, չեմ ծեծի...— ասաց անվստահ և ափսոսանքով, կարծես մտմտալով դեռևս՝ արդյոք իսկապես չծեծի՞։— Այդ բանը պետք է անել, բայց ես սովոր չեմ ձեզ՝ կնիկներիդ ծեծելու։— Նրա ձայնի մեջ Վարյայի համար անծանոթ հընչյուններ լսվեցին։— Դեհ, ինչ կա որ, ապրիր։ Գուցե տիրուհի կդառնաս.— նա մեկեն շուռ եկավ և քայլեց դեպի բարաքը՝ ճանապարհին մտրակով թոցնելով ծաղիկների գլուխիկները։

— Լսի՛ր, սպասի՛ր...— կանչեց Վարյան՝ հանկարծ լցվելով խղճահարությամբ։— Վա՜նյա...

— Ինձ պետք չի հարուստների սեղանի ավելցուկը,— ասաց նա խստությամբ։— Թող իմից օգտվեն...

Վարյան տատանվեց՝ արդյոք վազի՞ ետևից, թե՞ ոչ, և չվազեց։ Սպասեց, մինչև որ նա ծածկվեց ոլորանի ետևում, և ապա, չորացած շրթունքները լիզելով, դանդաղ գնաց նրա ետևից։

Տեսնելով Մորոզկային, որը չափազանց շուտ էր վերադարձել տայգայից (բանբերը քայլում էր ձեռքերը սաստիկ

շարժելով, ծանր, մռայլ քայլվածքով), Մեչիկը հասկացավ, որ «ոչինչ չի ստացվել», և դրա պատճառը ինքը՝ Մեչիկն է։ Մի անվստահ ուրախություն և անառիթ մեղավորության զգացում անհարկի շարժվեց նրա մեջ, և սարսափելի էր Մորոզկայի ոչնչացնող հայացքին հանդիպելը...

Հենց մահճակալի մոտ կրճկրճոցով խոտ էր ուտում բբրդոտ հովատակը. թվում էր, թե բանբերը նրա մոտ է գնում. իսկապես, մութ, ջլատված մի ուժ քաշում էր նրան դեպի Մեչիկը, բայց Մորոզկան ծածկում էր դա նույնիսկ իրենից, անհագ հպարտությամբ և արհամարհանքով լցված։ Նրա ամեն մի քայլի հետ Մեչիկի մեջ աճում էր հանցավորության զգացումը, իսկ ուրախությունը ցնդում էր. նա նայում էր Մորոզկային փոքրոգի, խոր ընկած աչքերով և չէր կարողանում կտրել նրանից։ Բանբերը բռնեց հովատակի սանձը, ձին դնչով հրեց նրան, դարձնելով գլուխը դեպի Մեչիկը, կարծես դիտմամբ, և Մեչիկը հանկարծակի հեղեղվեց օտար ու ծանր՝ ատելությունից պղտորված հայացքով։ Այդ կարճ ակնթարթում նա իրեն զգաց այնպես ստորացված, այնպես անտանելի վատ, որ հանկարծ խոսեց միայն շրթունքներով, առանց խոսքերի. նա խոսքեր չուներ։

— Նստած եք այստեղ թիկունքում,— ատելությամբ ասաց Մորոզկան իր մութ մտքերին համահնչուն, չկամենալով ականջ դնել Մեչիկի խուլ բացատրություններին։— Շագրենու շապիկներ եք հագել..

Նա վշտացավ, որ Մեչիկը կարող է մտածել, թե իր չարության պատճառը խանդն է, բայց ինքն էլ չէր գիտակցում դրա իսկական պատճառները և հայհոյում էր երկար ժամանակ։

— Ինչո՞ւ ես հայհոյում,— բռնկվելով հարցրեց Մեչիկը՝ Մորոզկայի հայհոյելուց հետո մի անհասկանալի թեթևություն զգալով։— Իմ ոտքերն են ջարդված, ոչ թե թիկունքում եմ...— ասաց նա բարկության, վիրավորված ինքնասիրության դողով և դառնությամբ։ Այդ բոլորին նա հավատում էր, որ իր ոտքերը ջարդված են, և առհասարակ այնպես էր զգում իրեն, իբր ոչ թե ինքը, այլ Մորոզկան է կրում շագրենու շապիկը։— Մենք էլ ենք ճանաչում այդպիսի ճակատա-

ֆիններին,— ավելացրեց կարմրելով,— ես էլ քեզ կասեի, թե պարտական չլինեի... ի դժբախտություն իմ...

— Ահա-ա՜... կպա՞վ,— համարյա թե վեր ցատկելով գոռաց Մորոզկան, առաջվա պես նրան չլսելով և չկամենալով հասկանալ նրա ազնվությունը։— Մոռացա՞ր, թե ինչպես քեզ օշինդրի միջից դուրս բերի... Մեր գլխին փորձանք բերելու համար եք ձեզ օգնում...— կանչեց նա այնպես բարձրաձայն, կարծես ամեն օր «օշինդրի միջից» վիրավորներ էր դուրս բերում, ինչպես շագանակներ.— ... մեր գլխին փորձանք բերելու համար... այ թե մեր ո՛ր տեղին եք դուք նստած...— և նա խփեց իր վզին աներևակայելի մոլեգնությամբ։

Ստաշինսկին և Խարչենկոն դուրս թռան բարաքից։Ֆրոլովը երեսը դարձրեց ցավագին զարմանքով։

— Ինչո՞ւ եք գոռում,— հարցրեց Ստաշինսկին արագաբարագ թարթելով մի աչքը։

— Ո՞ւր է իմ խիղճը,— բղավում էր Մորոզկան՝ Մեչիկին ի պատասխան, թե ուր է նրա խիղճը։— Ահա թե ուր է խիղճը, ահա՛, ահա՛— կտրում էր նա կատաղած, անվայել շարժումներ անելով։

Տայգայից, տարբեր կողմերից, վազում էին բուժքույրը և Պիկան, ինչ-որ բան կանչելով։ Մորոզկան թռավ հովատակի վրա և սաստիկ մտրակեց, մի բան, որ նրա հետ պատահում էր միայն ամենաթունդ գրգռման բոպենեերին։ Միշկան ծառս եղավ և խաչվածի պես մի կողմ ցատկեց։

— Սպասի՛ր, նամակը կվերցնես հետդ... Մորոզկա՜...— շփոթված կանչեց Ստաշինսկին, բայց Մորոզկան արդեն չկար։ Անհանգստացրած թավուտից լսվում էր հեռացող սմբակների խենթ դոփյունը։

8.

ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԸ

Ճանապարհն ընդառաջ էր վազում, ինչպես առաձգական մի ժապավեն, ճյուղերն ուժգին զարնվում էին Մորոզկայի գլխին, իսկ նա շարունակ քշում էր ու քշում խենթացած հովատակին՝ լցված մոլեգին չարությամբ, վիրավորանքով։

վրեժով։ Մեչիկի հետ ունեցած անմիտ խոսակցության առանձին պահերը,— մեկը մյուսից ավելի մտրակիչ,— նորից ու նորից էին ծնվում տաքացած ուղեղում, և, այնուամենայնիվ, Մորոզկային թվում էր, թե ինքը բավական թունդ չարտահայտեց իր արհամարհանքը դեպի այդ տեսակ մարդիկ։

Օրինակ՝ կարող էր հիշեցնել Մեչիկին, թե ինչպես նա կառչել էր իրենից գարու դաշտում, ինչպես նրա խենթացած աչքերում թպրտում էր սենյակային վախն իր փոքրիկ կյանքի համար։ Նա կարող էր չարաչար կերելով ծաղրել Մեչիկի սերը դեպի գանգրահեր աղջիկը, որի պատկերը գուցե դեռ պահված էր նրա բաճկոնի գրպանում, սրտի մոտ, և պարգևվել այդ գեղեցիկ, մաքուր օրիորդին ամենավիրավորական անուններ... Այստեղ նա հիշեց, որ Մեչիկն ախք «ընկել էր» իր կնոջ հետ և այժմ հաղիվ թե վիրավորվի մաքուր օրիորդի համար, և, հակառակորդի ստորացման վրա չարախնդությամբ հրճվելու փոխարեն, Մորոզկան նորից զգում էր իր անուղղելի վիրավորանքը։

... Միշկան, տիրոջ անարդարությունից վերջնականապես վիրավորված, վազեց այնքան ժամանակ, մինչև որ հոգնած շրթունքներում սանձը թուլացավ. դրանից հետո նա քայլերը դանդաղեցրեց և գնաց ցուցադրական արագ քայլով, ինչպես մի մարդ, որ վիրավորված է, բայց սեփական արժանիքը չի կորցրել։ Նա ուշադրություն չէր դարձնում նույնիսկ ճայերի վրա, որոնք չափազանց շատ էին աղմկում այդ երեկո, բայց, ինչպես միշտ, իզուր, և սովորականից ավելի անհանգիստ ու հիմար էին թվում։

Տայգան ետ-ետ գնաց կեչու՝ իրիկնաժամի ազատ բոլորքով, և նրա կարմրին տվող բացվածքներում արևը ուղիղ դեմքին էր զարկում։ Այստեղ հարմար էր, թափանցիկ, ուրախ, այնպես նման չէր ճայերի մարդկային անհանգստությանը։ Մորոզկայի բարկությունը սառեց։ Վիրավորական խոսքերը, որ նա ասաց կամ ուզում էր ասել Մեչիկին և վաղուց կորցրել էին վրեժխնդիր-պայծառ փետրավորումը, ներկայացան իրենց ամբողջ բզկտված տգեղությամբ. նրանք անտեղի-ճչան էին և թեթևակշիռ։ Նա ափսոսում էր արդեն, որ գոթ էր ունեցել Մեչիկի հետ. մինչև վերջը «իր արժեքը չէր պահպանել»։ Նա այժմ զգում էր, որ Վարյան իր համար

այնքան էլ անարժեք մարդ չէ, ինչպես առաջ էր թվում, և միևնույն ժամանակ հաստատ գիտեր, որ այլևս երբեք չի վերադառնա նրա մոտ։ Եվ որովհետև Վարյան ամենամոտիկ մարդն էր որը կապում նրան առաջվա՝ հանքերի կյանքի հետ, երբ ինքը ապրում էր «ինչպես բոլորը», երբ ամեն ինչ նրան թվում էր պարզ ու հասարակ, այժմ, բաժանվելով նրանից, այնպես էր զգում, կարծես նրա կյանքի այդ մեծ և ամբողջական շերտը վերջացել էր, իսկ նորը դեռ չէր սկսվել։

Արևը նայում էր Մորոզկայի գլխարկի հովարի տակ. նա դեռ կանգնած էր լեռնաշղթայի վերևը՝ լուրջ, անթարթ աչքերով, բայց դաշտերը շորս կողմում անհանգիստ-ամայի էին։

Նա տեսնում էր կարու չհավաքված խրձեր՝ մինչև վերջ չհնձված շերտերում, կնոջ մի դոգնոց, որ շտապելիս մոռացել էր խրձերի վրա, մի փոցխ՝ միջնակում տնկված։ Խոտի ծռված դեզի վրա, վատ տեսքով, ինչպես որբ, լուռ կանգնել էր ագռավը։ Բայց այս բոլորը լող էր տալիս գիտակցության կողքից։ Մորոզկան քրքրում էր հիշողությունների հին, երկար ժամանակ նստած-մնացած փոշին և տեսնում, որ դա բոլորովին ոչ թե ուրախ, այլ շատ անուրախ, անիծված բեռ է։ Նա լքված և մենակ զգաց իրեն։ Թվում էր, թե ինքն է լողում այդ մեծ ամայի դաշտում, և վերջինիս խռովահույզ ամայությունը ավելի ուժեղ էր ընդգծում նրա մենակությունը։

Նա ուշքի եկավ ձիու սմբակների մանր դոփյունից, որ հանկարծակի դուրս թռավ բլրակի ետևից։ Հազիվ էր գլուխը բարձրացրել՝ նրա առաջ բուսավ դետքի ուղղաձիգ, մեջքը գոտիով պինդ ձգած կերպարանքը՝ աչեղ, չարաճճի ձի նըստած, որը անսպասելիությունից մեկեն նստեց ետևի ոտքերի վրա։

— Դե՛հ, դու-ու, մատա՜կ, ա՜յ մատակ...— հայհոյեց դետքը՝ ցնցումից թռչող գլխարկն իսկույն բռնելով։— Մորոզկա՞ն է, ինչ է։ Քշիր շուտով դեպի տուն, դեպի տուն քշիր. այնտեղ մեզ մոտ մի այնպիսի բան է, ոչինչ չես հասկանա, աստված վկա...

— Ի՞նչ կա։

— Դասալիքներն այստեղից անցան, ահագին բան պատմեցին, ահագին բան՝ թե ճապոնացիներն ուր որ է այստեղ կլինեն... Գյուղացիները փախան դաշտից, կնիկներն սկսեցին ողբալ, ողբալ... Լաստի մոտ այնքան սայլեր քշեցին, ասես շուկա լինի՝ ծիծաղելու բան... Քիչ մնաց լաստավարին սպանեին, մինչև հիմա, երևի բոլորին մյուս ափը չհանեց՝ ո՛չ, չի՛ հանել... Իսկ մեր Գրիշկան մոտ տասը վերստ քշեց ձիուն՝ ճապոնացիների հետքն անգամ չկա՝ սուտ է։ Խաբեցին շան որդիները... Այդպիսի գործերի համար գնդակահարել պետք է, բայց թե փամփուշտներն ափսոս են, ափսոս են, աստված վկա..

Դետքը շաղ էր տալիս թուքը, շարժում մտրակը և մերթ հանում, մերթ դնում գլխարկը, կտրիճավարի ցնցելով գանգուրները, կարծես, մնացյալ ամեն բանից զատ, ուզում էր նաև ասել. «Նայիր, սիրելիս, ինչպես են աղջիկներն ինձ սիրում»։

Մորոզկան հիշեց, թե ինչպես երկու ամիս առաջ այդ ջահելը գողացավ իր թիթեղե ամանը, իսկ հետո երդվում էր, որ դա իրենն է՝ «դեռ գերմանական ռազմաճակատից»։ Ու թեև ամանն այժմ չէր ափսոսում, բայց այդ հիշողությունը մեկեն, դետքի խոսքերից շուտ,— Մորոզկան, իր մտքերով տարված, նրան չէր լսում,— հրեց նրան ջոկատային կյանքի սովորական ուղու վրա։ Ձիավոր սուրհանդակով ուղարկված թուղթը, Կանուննիկովի գալը, Օսոկինի նահանջը, այն լուրերը, որոնցով ջոկատը սնվում էր վերջին ժամանակները,— այդ ամենը թափվեց նրա վրա խռովահույզ ալիքի պես՝ սրբել-տանելով անցած օրվա սև նստվածքը։

— Ի՞նչ դասալիքներ, ի՞նչ ես դուրս տալիս,— կտրեց նա դետքի խոսքը։ Սա զարմացած բարձրացրեց հոնքերը և անշարժացավ գլխարկը ձեռքին, որը նոր էր հանել և նորից պատրաստվում էր դնելու։— Դու միայն ուզում ես ձևանալ, թաթիկով աղջիկ,— ասաց Մորոզկան արհամարհանքով։ Բարկացած քաշեց սանձը և մի քանի րոպե հետո արդեն լաստի մոտ էր։

Մազոտ լաստավարը, վարտիքը վեր ծալած, ծնկի վրա ահագին պալարով, իսկապես շարշարվում էր՝ չափից դուրս բեռնված լաստը ետ ու առաջ քշելով, և, այնուամենայնիվ, շատերը դեռ խռնվում էին այս կողմում։ Հազիվ լաստը մոտեցավ ափին, նրա վրա գրոհ տվեց մարդկանց մի ամբողջ ձյունահյուս, անթիվ տոպրակներ, սայլեր, լողացող երեխա-

ներ,— օրորոցներ,— ամեն մեկն աշխատում էր առաջինը հասնել, բոլորն իրար հրում էին, կանչում, ճղճղում, ընկնում,— լաստավարը, ձայնը կորցրած, զուր էր կոկորդ պատռում՝ աշխատելով կարգ հաստատել։ Մի կճաքիթ կին, որը կարողացել էր անձամբ խոսել դասալիքների հետ, տանջվելով շուտ տուն հասնելու և իր նորությունները մնացածներին պատմելու ցանկությունների անլուծելի հակասությունից, երրորդ անգամ ուշանում էր լաստ նստելուց, հրում էր մեկի ետևից, մի մեծ, իրենից էլ մեծ՝ խոզերի համար առած վայրի բազուկով լի տոպրակով, մեկ աղերսում էր. «տե՛ր աստված, տե՛ր աստված», մեկ նորից սկսում պատմել, որ չորրորդ անգամ ուշանա։

Մորոզկան, ընկնելով այդ իրարանցման մեջ, արդեն ուզում էր, ըստ հին սովորության («ծիծաղի համար»), ավելի սաստիկ վախեցնել, բայց չգիտես ինչու թողեց այդ միտքը և, ձիուց վայր ցատկելով, սկսեց հանգստացնել։

— Ի՞նչ ես դատարկ,դատարկ դուրս տալիս, ոչ մի ճապոնացի էլ չկա,— կտրեց նա վերջնականապես դիվակալած կնկա խոսքը,— բա՞ն է պատմում. «գա-ազե՛ր են արձակում..» Ի՞նչ գազ։ Կորեացիները, երևի, ծղոտ են վառում, իսկ նրան թվում է գա-ազե՛ր...

Գեղջուկները, մոռանալով կնոջը, շրջապատեցին նրան։ Նա հանկարծ իրեն զգաց մեծ, պատասխանատու մարդ, և, ուրախանալով իր արտասավոր դերով ու նույնիսկ այն բանով, որ «վախեցնելու» ցանկությունն ընկճեց, այնքան հերքեց և ծաղրեց դասալիքների պատմած ստերը, մինչև որ վերջնականապես հանգստացրեց հավաքվածներին։ Երբ հաջորդ լաստը մոտեցավ, արդեն այդպիսի հրմշտոց չկար։ Մորոզկան ինքը հերթով ուղղեց սայլերը։ Գեղջուկներն ափսոսում էին, որ դաշտից վաղ էին ճամփա ընկել և, իրենք իրենց վրա բարկանալով, ձիերին լին հայհոյում։ Նույնիսկ կճաքիթ կինը իր տոպրակով տեղավորվեց վերջապես մեկի սայլին, ձիերի երկու դնչերի և մի գեղջուկի լայն հետույքի միջև։

Մորոզկան, լաստի բազրիքին կռացած, նայում էր, թե ինչպես մակույկների միջև վազում են փրփուրի սպիտակ օղակները,— ոչ մեկը մյուսի ետևից հասնել չէր կարողանում,— նրանց բնական կարգը հիշեցնում էր, թե ինչպես նա ինքը հենց նոր կազմակերպեց գեղջուկներին,— այս հիշեցումը հաճելի էր։

Անասանոցի մոտ նա պատահեց դետքերի հերթափոխին՝ Դուրովի ջոկատի հինգ տղաներին։ Նրանք ողջունեցին ծիծաղելով և բարեսիրտ հայհոյանքով, որովհետև միշտ ուրախանում էին նրան տեսնելիս, բայց խոսելու բան չունեին, և մեկ էլ նրա համար, որ բոլորն էլ առողջ ու ամրակազմ տղերք էին, և երեկոն վրա էր հասնում՝ զով, առույգ։

— Դե գնացեք բաններիդ...— ճամփու դրեց Մորոզկան և նախանձով նայեց նրանց ետևից։ Նա կուզենար նրանց հետ լինել, նրանց ծիծաղի, հայհոյանքի հետ, միասին սլանալ դետքի՝ այդ զով և առույգ երեկոյան։

Պարտիզաններին հանդիպելը հիշեցրեց Մորոզկային, որ, հիվանդանոցից ճամփա ընկնելով, չէր վերցրել Ստաշինսկու նամակները, իսկ դրա համար կարող էր տուժել։ Ժողովի պատկերը, երբ նա քիչ էր մնացել ջոկատից դուրս ընկներ, մեկեն ներկայացավ աչքերին, և խսկույն մի տեսակ սիրտը ճմլվեց։ Մորոզկան միայն այժմ զգաց, որ այդ դեպքը գուցե ամենակարևորն էր իր համար վերջին ամսվա ընթացքում, շատ ավելի կարևոր, քան թե այն, ինչ որ հիվանդանոցում տեղի ունեցավ։

— Միխրյուտկա,— ասաց նա իր հովատակին և բռնեց նրա բաշից։— Ձանձրացրեց ինձ, ախպերս, ամեն ինչ, հերն անիծած...— Միշկան շարժեց գլուխը և փնչաց։

Շտաբին մոտենալով՝ Մորոզկան հաստատ վճռեց «թքել ամեն ինչի վրա» և խնդրել, որ իրեն ուղարկեն դասակ՝ տղաների մոտ, վերցնելով իրենից բանբերի պարտականությունները։

Շտաբի արտասանդուղքի վրա Բակլանովը հարցաքննում էր դասալիքներին. նրանք զինաթափ էին և հսկողության տակ։ Բակլանովը, աստիճաններին նստած, գրում էր ազգանունները։

— Իվան Ֆիլիմոնո՛վ...— թոթովում էր մեկը աղիողորմ ձայնով, ուժը ներածին չափ վիզը ձգելով։

— Ի՞նչ...— սպառնալից հարցրեց Բակլանովը՝ շրջվելով դեպի նա ամբողջ իրանով, ինչպես սովորաբար անում էր

Լևինսոնը։ (Բակլանովը կարծում էր, թե Լևինսոնն այդպես է անում, կամենալով ընդգծել իր հարցերի առանձին կարևորությունը,— իրականում Լևինսոնն այդպես էր շրջվում, որովհետև մի ժամանակ վիրավորված էր վզից և այլ կերպ առհասարակ չէր կարողանում շրջվել)։

— Ֆիլիմոնո՞վ... Հայրանունդ...

— Լևինսոնը որտե՞ղ է,— հարցրեց Մորոզկան։

Նրան գլխով ցույց տվեցին դեպի դուռը։ Նա ուղղեց մազերի փունջը և մտավ խրճիթ։

Լևինսոնը զբաղված էր անկյունում և չնկատեց նրան։ Մորոզկան անվճռականությամբ խաղաց մտրակի հետ։ Ինչպես ջոկատում ամենքին՝ հրամանատարը Մորոզկային էլ մի արտակարգ կանոնավոր մարդ էր թվում։ Բայց որովհետև կյանքի փորձը նրան ասում էր, որ կանոնավոր մարդիկ գոյություն չունեն, ուստի նա աշխատում էր համոզել իրեն, որ Լևինսոնը, ընդհանրապես, շատ մեծ խաբեբա է և «իր գործը լավ գիտե»։ Այնուամենայնիվ, նա էլ հավատացած էր, որ հրամանատարը «ամեն բան պարզ տեսնում է», և նրան գրեթե անկարելի է խաբել. երբ պետք էր լինում մի բան խնդրել, Մորոզկան տարօրինակ թուլություն էր զգում։

— Իսկ դու միշտ էդ թղթերի հետ ես՝ մկան նման,— ասաց նա վերջապես։— Ծրարը անկորուստ տեղ հասցրի։

— Պատասխան չկա՞։

— Չկա-ա...

— Լավ,— Լևինսոնը մի կողմ դրեց քարտեզը և վեր կացավ։

— Լսիր, Լևինսոն...— սկսեց Մորոզկան։— Ես մի խընդիրք ունեմ... որ կատարես, մշտական բարեկամս կլինես, ճշմարիտ...

— Մշտական բարեկա՞մ,— ժպտալով հարցրեց Լևինսոնը։— Դեհ, ասա, էդ ինչ խնդիր է։

— Թող ինձ՝ դասակ գնամ...

— Դասա՞կ։ Էլի ի՞նչ է փչել խելքիդ։

— Երկար է պատմելը, զզվել եմ, հավատա խոսքիս... կարծես պարտիզան չեմ, այլ այնպե՞ս...— Մորոզկան ձեռքով արավ և մռայլվեց, որպեսզի չհայհոյի և գործը չփչացնի։

— Իսկ բանբե՞ր ով կլինի։

— Եֆիմկային կարելի է հարմարեցնել,— ասաց Մորոզկան։— Օ՜, ինչ ձիավո՞ր է, պետք է ասեմ քեզ, հին բանակում մրցանակ է տարել։

— Այդպե՞ս, ասում ես, մշտական բարեկա՞մ,— նորից հարցրեց Լևինսոնն այնպիսի տոնով, կարծես այդ նկատառումը կարող էր վճռական նշանակություն ունենալ։

— Դե դու մի՛ ծիծաղի, սատանի խոլերա՜...— չդիմացավ Մորոզկան։— Նրա մոտ գործի են գալիս, իսկ նա հանաք է անում։

— Իսկ դու մի՛ տաքանա։ Տաքանալը վնաս է... Կասես Դուբովին, որ Եֆիմկային ուղարկի և... կարող ես ճամփա ընկնել։

— Այ, էդ լա՜վ արիր, ընկերակա՜ն բան արիր...— ուրախացավ Մորոզկան։— Ա՜յ գնահատեցիր ինձ... Լևինսոն... հա-մա ջա-ա՜ն...— Նա գլխից խլեց գլխարկը և զարկեց հատակին։

Լևինսոնը վերցրեց գլխարկը և ասաց.

— Հիմա՛ր։

... Մորոզկան եկավ դասակ. արդեն մթնել էր։ Նա խրճիթում գտավ մոտ տասներկու մարդ։ Դուբովը, նստարանին հեծած, դիշերային լապտերի լույսով նագանն էր քանդում։

— Ա-ա՜, սատանի՛ ճուտ...— բամբ ձայնով ասաց նա բեղերի տակից։ Տեսնելով Մորոզկայի ձեռքի կապոցը՝ զարմացավ։— Էդ ինչ է՝ բոլոր փասափուսայո՞վ։ Աստիճանիցդ իջեցրի՞ն, ինչ է։

— Վերջացա՜վ,— բղավեց Մորոզկան։— Պաշտոնաթո՞ղ եմ... Փետուրը հետույքիս, առանց կենսաթոշակի... Ճամփիր Եֆիմկային՝ հրամանատարն է պահանջում։

— Երևի օյի՞ն ես խաղացել,— կծու հարցրեց Եֆիմկան՝ մի չոր և մաղձոտ ջահել, քոսերով ծածկված։

— Քշի, քշի, այնտեղ կիմացվի... Մի խոսքով՝ շնորհավոր բարձրացումդ, Եֆիմ Սեմյոնովիչ... ձեզանից մաղարիչ...

Ուրախացած, որ նորից գտնվում է տղաների մեջ, Մորոզկան կատակախոսում էր, տնազ անում, կսմթում տանտիրուհուն, պտտվում խրճիթի մեջ, մինչև որ դասակապետի

վրա ընկավ և թափեց հրացանի յուղը, ատրճանների բոլոր մասերի հետ միասին։

— Հաշմանդա՜մ, չլուղած գայլիկոն,— հայհոյեց Դուբովը և այնպես զարկեց նրա թիկունքին, որ Մորոզկայի գլուխը քիչ մնաց բաժանվեր մարմնից։

Ու թեև շատ էր ցավում, Մորոզկան չնեղացավ. նրան նույնիսկ դուր էր գալիս, թե ինչպես Դուբովը հայհոյում էր, գործածելով իր՝ բոլորին անծանոթ խոսքերն ու արտահայտությունները. այստեղ ամեն բան նա ընդունում էր այնպես, ինչպես պետք էր։

— Այո... ժամանակն էր, արդեն ժամանակն էր,— ասաց Դուբովը։— Լավ է, որ դու նորից մեզ միացար։ Թե չէ բոլորովին փչացել ես՝ ժանգոտել, ոնց որ դուրս պրծած մեխի գլուխ, խայտառակում ես...

Բոլորը համաձայնում էին, որ լավ է, բայց այլ պատճառով. մեծամասնությանը Մորոզկայի մեջ դուր էր գալիս այն, ինչ որ Դուբովը չէր հավանում։

Մորոզկան աշխատում էր չհիշել հիվանդանոց ուղևորվելու մասին։ Նա շատ էր վախենում, որ մեկնումեկը կհարցնի. «Իսկ կի՞նդ ոնց է...»

Հետո բոլորի հետ նա գետափ գնաց՝ ձիերին ջրելու... Խուլ, ոչ սարսափելի ձայնով ձորում կանչում էին բվերը, մշուշում՝ ջրերի վրա աղոտ կերպով երևում էին ձիերի գլուխները. նրանք իրար ետևից գնում էին լուռ, ականջները տնկած։ Ափին կուչ էին եկել թխաթույր թփերը՝ պաղ մեղրացողով թրջված։ «Այ սա կյանք է՜...»— մտածում էր Մորոզկան և փաղաքշորեն սուլում հովատակին։

Տանը կարկատեցին թամբերը, մաքրեցին հրացանները։ Դուբովը բարձրաձայն կարդում էր հանքահորերից եկած նամակները, իսկ երբ պառկեցին քնելու, Մորոզկային նշանակեց օրապահ՝ «Տիմոթեոսի գոգը վերադառնալու առիթով»։

Ամբողջ երեկո Մորոզկան իրեն զգում էր իբրև ճշտապահ ղինվոր և լավ պետանի մարդ։

Գիշերը Դուբովը զարթնեց. մեկը սաստիկ հրում էր կողքը։

— Ի՞նչ եզավ, ի՞նչ կա...— հարցրեց վախեցած և նըստեց։ Նոր էր աչքերն ուղղել աղոտ լապտերլիկին, երբ լսեց,

ավելի ճիշտ՝ զգաց, հեռավոր տրաքոց, մի քանի րոպեից հետո՝ մյուսը...

Անկողնի մոտ կանգնած էր Մորոզկան ու կանչում էր.

— Վե՛ր կաց, շո՛ւտ։ Գետի մյուս կողմից կրակում են...

Հատուկենտ, մենավոր կրակոցները հետևում էին իրար գրեթե կանոնավոր ընդմիջումներով։

— Տղաներին արթնացրու,— կարգադրեց Դուբովը,— իսկույն իմաց տուր բոլոր հյուղերին... Շո՛ւտ...

Մի քանի վայրկյանից, մարտական լիակատար հանդերձանքով, նա դուրս թռավ բակ։ Երկինքը բացվել էր՝ անհողմ, սառը։ Հարդագողի ճամփի մառախլապատ, շտրորված ճանապարհներով շփոթված վազում էին աստղերը։ Խոտանոցի մութ անցքից իրար ետևից դուրս էին ցատկում պարտքզանների գզգզված կերպարանքները՝ հայհոյելով, քայլելիս կոճկելով փամփշտակալները, դուրս բերելով ձիերին։ Թառից մոլեգին կչկչալով թռչում էին հավերը, ձիերը զարնվում էին իրար և խրխնջում։

— Ի զե՞ն... ձիերի վրա՜,— հրամայում էր Դուբովը։ Միտրիյ, Սե՜նյա... Վազեք դեպի տնակները, զարթնեցրեք մարդկանց... Շո՛ւտ...

Շտաբի մոտի հրապարակից վեր սլացավ ուժանակային մի հրթիռ և ծխահար ֆշշոցով գլորվեց երկնքի վրայով։ Քնկոտ մի կին գլուխը լուսամուտից դուրս հանեց ու արագ ետ քաշվեց։

— Կապիր...— ասաց մեկը դողացող ձայնով։

Շտաբից թռած-եկած Եֆիմկան կանչում էր դարբասից.

— Տագնա՜պ... Բոլորը կատարյալ պատրաստությամբ գան հավաքման տեղը...— Ձին նրա տակ ծառս եղավ, ատամները դուրս ցցած, և նա, էլի մի անհասկանալի բան բղավելով, չքացավ։

Երբ ուղարկված մարդիկ վերադարձան, պարզվեց, որ դասակի կեսից ավելին տանը չի գիշերում. երեկոյից գնացել են զբոսնելու և երևի մնացել էին աղջիկների մոտ։ Շփոթված Դուբովը, չգիտենալով, դուրս գա՞լ արդյոք եղած մարդկանցով, թե՞ անձամբ գնալ շտաբ՝ իմանալու բանի էությունը, հայհոյելով աստծուն և սուրբ սինոդը, ուղարկեց ամեն տեղ՝ մեկիկ-մեկիկ գտնելու իր մարդկանց։ Երկու

անգամ եկան բանբերները՝ հրաման բերելով, որ անհապաղ գան բոլոր դասակները, իսկ նա էլի չէր կարողանում գտնել մաքգկանց, դես ու դեն էր ընկնում բակում, ինչպես բռնված գազան, պատրաստ էր հուսահատությունից գնդակ արձակել ճակատին և, գուցե, կարձակեր, եթե ամբողջ ժամանակ չզգար իր ծանր պատասխանատվությունը։ Շատերն այդ գիշեր տուժեցին նրա անողոք բռունցքներից։

Վերջապես, շների սրտաճաք ոռնոցի տակ դասակը նետվեց դեպի շտաբ՝ ահից ճնշված փողոցները լցնելով ձիերի կատաղի դոփյունով ու պողպատի զնգոցով։

Դուբովը շատ զարմացավ, երբ ամբողջ ջոկատը հավաքված տեսավ հրապարակում։ Գլխավոր ճանապարհի երկարությամբ ձգված էր ուղևորվելու պատրաստ սայլաշարքը. շատերը ձիերից իջած նստած էին ձիերի մոտ և ծխում էին։ Նա աչքերով փնտրեց գտավ Լևինսոնի փոքրիկ կերպարանքը. սա կանգնած էր ջահերով լուսավորված գերանների մոտ և հանգիստ խոսում էր Մետելիցայի հետ։

— Ինչո՞ւ այդպես ուշացար,— հարձակվեց նրա վրա Բակլանովը։— Եվ դեռ ասում ես. «Մե՞նք... հանքափորներս...» — Նա սաստիկ բարկացած էր, այլապես երբեք այդպիսի խոսք չէր ասի Դուբովին։ Դասակի հրամանատարը միայն ձեռքը թափ տվեց։ Ամենավիրավորականը նրա համար այն գիտակցությունն էր, որ այդ ջահել տղան՝ Բակլանովը, այժմ օրինական իրավունք ունի ամեն կերպ վատաբանելու իրեն։ Բայց նույնիսկ այդ վատաբանությունը արժանի հատուցում չի լինի նրա՝ Դուբովի հանցանքի համար։ Բացի դրանից, Բակլանովը խոցեց նրա ամենից ցավոտ տեղը. հոգու խորքում Դուբովը կարծում էր, որ հանքափորի կոչումը ամենաբարձր և պատվավորն է այն կոչումներից, որը միայն կարող է կրել մարդն աշխարհիս երեսին։ Այժմ նա համոզված էր, որ իր դասակը խայտառակել էր և՛ իրեն, և՛ Սուչանի հանքը, և՛ հանքային բանվորների ամբողջ ցեղն առնվազն մինչև յոթերորդ պորտը։

Մի լավ անարգելուց հետո Բակլանովը ճանապարհվեց դեռքերն արձակելու։ Իր հինգ տղաներից, որոնք վերադարձել էին գետի մյուս կողմից, Դուբովն իմացավ, որ ոչ մի թշնամի էլ չկա, հենց իրենք են հրացան արձակել՝ Լևինսոնի հրամանով «նշան առնելով օդի մեջ»։ Այն ժամանակ նա հասկացավ, որ Լևինսոնը կամեցել էր ստուգել ջոկատի մարտական պատրաստությունը, և ավելի ևս դառնացավ այն գիտակցությունից, որ ինքը չէր արդարացրել հրամանատարի վստահությունը, օրինակ չէր եղել ուրիշներին։

Երբ դասակները շարվեցին և սկսեցին կարդալ անունները, պարզվեց, որ էլի շատ մարդ է պակասում։ Առանձնապես շատ դասալիք կար Կուբրակի մոտ։ Ինքը Կուբրակը ցերեկը գնացել էր իր աղգականներին մնաս բարև ասելու և մինչև այժմ գինով էր։ Նա մի քանի անգամ դիմել էր իր դասակին ճառով,— «կարո՞ղ են արդյոք նրան հարգել, եթե նա այնպիսի ստոր արարած է ու խոզ...»,— ու լացել էր։ Եվ ամբողջ ջոկատը տեսել էր, որ Կուբրակը գինով է։ Միայն թե Լևինսոնը կարծես չէր նկատում դա, այլապես հարկ կլիներ Կուբրակին պաշտոնից հեռացնել, իսկ նրան փոխարինող չկար։

Լևինսոնն անցավ զորաշարքի առջևից և, վերադառնալով կենտրոն, բարձրացրեց ձեռքը, որ կախվեց պաղ ու խիստ։ Գիշերային խորհրդավոր աղմուկները լսելի դարձան։

— Ընկերներ...— ասաց Լևինսոնը, և նրա ձայնը, ոչ բարձր, բայց պարզ, լսեց ամեն մեկը, ինչպես իր սրտի բաբախումը։— Մենք հեռանում ենք այստեղից... ո՞ւր՝ հիմա չարժե ասել։ Ճապոնական ուժերը,— թեև պետք չէ չափազանցնել,— այնուամենայնիվ, այնպիսին են, որ լավ է միաժամանակ թաքնվել։ Դա չի նշանակում, որ մենք բոլորովին հեռանում ենք վտանգից։ Ո՛չ։ Այն միշտ կախված է մեր գլխին, և ամեն մի պարտիզան այդ բանը գիտե։ Արդարացնո՞ւմ ենք արդյոք մենք մեր պարտիզանական կոչումը... Այսօր բոլորովին չարդարացրինք... Մենք երես ենք առել աղջիկների նման.. Դե՛հ, ի՞նչ կլիներ, եթե, իսկապես, ճապոնացիները եկած լինեին... Ախր չէ՞ որ նրանք մեզ կխեղդեին վառեկների պես... Ամո՞թ...— Լևինսոնն արագ թեքվեց դեպի առաջ, և նրա վերջին խոսքերը հարվածեցին միանգամից բացված զսպանակի ուժով այնպես, որ ամեն մեկը հանկարծ զգաց իրեն ինչպես հանկարծակի բռնված վառեկ, որին խեղդում են մթնում անողոք, երկաթե մատները։

Նույնիսկ ոչինչ չհասկացած Կուբրակը ասաց համոզված.

— Ճի՜շտ է... Այդ բոլորը... ճիշտ է...— քառակուսի գլուխը շարժեց և բարձրաձայն զկրտաց։

Դուբովն ամեն րոպե սպասում էր, որ Լևինսոնը կասի. «Ահա, օրինակ, Դուբովը. նա այսօր եկավ, երբ ամեն ինչ վերջանում էր, բայց ախր ես ամենից ավելի նրա վրա էի հույս դրել. ամո՜թ...» Բայց Լևինսոնը ոչ մեկին անունով չհիշեց։ Նա առհասարակ քիչ խոսեց, բայց համառորեն խփում էր մի կետի, ասես մի մեծ, բութ մեխ էր գամում, որը պետք է ծառայեր ընդմիշտ։ Միայն երբ համոզվեց, որ իր խոսքերը հասան ըստ պատկանելույն, նա նայեց Դուբովի կողմը և անսպասելիորեն ասաց.

— Դուբովի դասակը կերթա գումակի հետ... Ջափազանց արագաշարժ է...— ապա ասպանդակների վրա ձգվելով և մտրակը շրխկացնելով՝ հրամայեց.— Զգա՜ստ... աջից երեք-երեք... մա՜րշ...

Համահնչյուն զրնգացին սանձերը, աղմուկով ճռճռացին թամբերը, և գիշերում ճռճվելով, ինչպես ահագին ձուկը՝ ջրափոսում, մարդկանց խիտ շարքը լող տվեց դեպի այն կողմը, ուր հին սիխոտեալինյան լեռնապարի ետևից, նույնպես հին ու ջահել, բացվում էր այգը։

9.

ՄԵՉԻԿԸ ՋՈԿԱՏՈՒՄ

Ստաշինսկին մեկնելու մասին իմացավ տնտեսվարի օգնականից, որը հիվանդանոց էր եկել պարեն պատրաստելու համար։

— Նա՝ Լևինսոնը, գլխով մարդ է,— ասում էր օգնականը՝ կուզ, խամրած թիկունքն արևին դեմ անելով։— Առանց նրան մենք բոլորս կկորչենք... Ա՜յ, հենց սրանից դատիր. հիվանդանոցի ճամփան ոչ ոք չգիտի, թե որ պատահի մեզ քշեն՝ ամբողջ ջոկատով ուղղակի էստեղ... Փնտրիր, որ գըտնես... Իսկ էստեղ արդեն՝ և՛ ուտելիք է պատրաստված, և՛ անասնակեր։ Ճարպիկ է մտածված...— օգնականը հիացած՝ գլուխն էր շարժում, և Ստաշինսկին տեսնում էր, որ նա գովում է Լևինսոնին ոչ թե միայն նրա համար, որ իսկապես «գլխով մարդ է», այլ նաև այն հաճույքից, որ օգնականն զգում է՝ վերագրելով մի այլ մարդու այնպիսի հատկություններ, որոնցից ինքը զուրկ է։

Այդ իսկ օրը Մեչիկն առաջին անգամ ոտքի կանգնեց։ Թևերով մեկին հենված՝ անցավ բացատով, զարմացած և ուրախ, ոտքերի տակ զգաց առաձգական ճիմը և առանց պատճառի ծիծաղեց։ Իսկ հետո, մահճակալին պառկած, զգում էր սրտի անխոնջ տրոփյունը, ոչ այն է հոգնածությունից, ոչ այն է՝ հողը զգալու ուրախությունից։ Դեռ ոտքերը դողում էին թուլությունից, և ամբողջ մարմնով անցնում էր ուրախ, անհանգստություն։

Մինչ Մեչիկը զբոսնում էր, Ֆրոլովը նախանձով նայում էր նրան, և Մեչիկն ամենևին չէր կարողանում հաղթահարել իր մեջ նրա հանդեպ ունեցած ինչ-որ հանցանքի զգացումը։ Ֆրոլովն արդեն այնքան երկար ժամանակ էր հիվանդ, որ շրջապատողների ողջ կարեկցությունն սպառել էր։ Նրանց անխափան փաղաքշանքում և հոգատարության մեջ նա լսում էր մշտական մի հարց. «Վերջապես ե՞րբ պիտի դու մեռնես», բայց մեռնել չէր ուզում։ Եվ նրա՝ կյանքին կառչելու ակներև անմտությունը ճնշում էր բոլորին, ինչպես գերեզմանաքար։

Մեչիկի՝ հիվանդանոցում մնալու մինչև վերջին օրը նրա ու Վարյայի միջև տեղի ունեին տարօրինակ հարաբերություններ, որոնք նման էին խաղի, որի մեջ յուրաքանչյուրը գիտեր, թե ինչ է ուզում մեկը և ինչից է վախենում մյուսը, բայց ոչ մեկը չէր վստահում անել համարձակ, վերջնական քայլը։

Իր համբերատար և դժվար կյանքում, որի մեջ տղամարդիկ այնքան շատ էին, որ անկարելի էր տարբերել նրանց՝ աչքերի, մազերի գույնով, նույնիսկ անուններով,— Վարյան ոչ մեկին չէր կարողացել ասել. «ցանկալիս, սիրելիս»։ Մեչիկն առաջինն էր, որին նա իրավունք ուներ ասելու և ասաց այդ խոսքերը։ Նրան թվում էր, որ միայն Մեչիկը, այնպես գեղեցիկ, համեստ և քնքուշ, ընդունակ է բավարարելու իր մայրության թախիծը, և որ ինքը սիրել է նրան հենց այդ պատճառով։ Անհանգիստ համբույրյան մեջ Վարյան կանչում էր նրան գիշերները, փնտրում էր ամեն օր անհագ, ագահ, աշխատելով նրան հեռու տանել մարդկանցից, որպեսզի ըն-

ծայեր իր ուշացած սերը, բայց չգիտես ինչու երբեք չէր հանդգնում ուղղակի ասել այդ բանը։

Ու թեև Մեչիկը նույնն էր ուզում նոր հասած պատանեկության ամբողջ կրակով ու երևակայությամբ, բայց համառորեն խուսափում էր նրա հետ առանձին մնալուց՝ մեկ Պիկային էր իր ետևից քաշ տալիս, մեկ գանգատվում էր, որ հիվանդ է։ Նա վախենում էր այն պատճառով, որ երբեք մոտիկ չէր եղել որևէ կնոջ. նրան թվում էր, թե այդ բանը նա կանի ոչ այնպես, ինչպես մյուս մարդիկ, այլ շատ ամոթալի կերպով։ Իսկ եթե հաջողվում էր հաղթահարել վախկոտությունը, նրա առաջ կանգնում էր Մորոզկայի բարկացած կերպարանքը, որ գալիս էր տայգայից, մտրակը շարժելով, և Միչիկն այդ ժամանակ ունենում էր վախի ու դեպի այդ մարդն ունեցած անհատույց պարտքի գիտակցության մի խառն զգացում։

Այդ խաղում նա նիհարեց ու մեծացավ, բայց այդպես էլ մինչև վերջին րոպեն չհաղթահարեց իր թուլությունը։ Հեռացավ նա Պիկայի հետ միասին, անհարմար կերպով մնաս բարև ասելով բոլորին, ինչպես օտարների։ Վարյան հասավ նրանց ետևից։

— Արի գոնե ինչպես պետքն է մնաս բարև ասենք իրար,— ասաց Վարյան վազելուց և շփոթմունքից կարմրելով։— Այնտեղ ես մի տեսակ ամաչեցի... երբեք այդպիսի բան չէր եղել, իսկ հիմա ամաչեցի,— և մեղավորի պես նրա ձեռքը խոթեց ասեղնագործած մի ծխախոտի քիսա, ինչպես անում էին հանքում բոլոր ջահել աղջիկները։ Այդ շփոթմունքը և ընծան այնպե՞ս չէին կապվում նրա հետ։ Մեչիկը խղճաց նրան և ամաչեց Պիկայից. նա հազիվ շրթունքները հպեց նրա շրթունքներին, իսկ Վարյան նայում էր նրան վերջին, ծխացող հայացքով, և նրա շրթունքները ծռվում էին։

— Տես, մեկ-մեկ կգաս...— կանչեց նա, երբ նրանք արդեն ծածկվեցին թավուտում։ Եվ, պատասխան չստանալով, տեղնուտեղը խոտերի վրա նստելով, լաց եղավ։

Ճանապարհին, տխուր հիշողություններից ուշքի գալով, Մեչիկն իրեն իսկական պարտիզան զգաց, նույնիսկ քշտեց թևերը՝ կամենալով արևից սևանալ. նրան թվում էր, որ դա

շատ անհրաժեշտ է այն նոր կյանքում, որը սկսեց բուժքրոջ հետ ունեցած անմոռանալի խոսակցությունից հետո։

Իրոխեձի ակունքը բռնված էր ճապոնական և կոլչակյան զորքերով։ Պիկան վախենում էր, ջղայնանում, ամբողջ ճանապարհին գանգատվում էր գոյություն չունեցող ցավերից։ Մեչիկը ոչ մի կերպ չկարողացավ համոզել նրան, որ գյուղը շրջանցեն հովտից։ Հարկ եղավ մագլցել լեռներով, այծերի անհայտ հետքերով։ Նրանք երկրորդ գիշերը ժայռոտ զառիթափով իջան դեպի գետը, հաղիվ շշարդվելով. Մեչիկը դեռ թույլ էր զգում իրեն։ Համարյա լուսադեմին նրանք ընկան մի կորեական խրճիթ. ագահորեն կուլ տվեցին առանց աղի չումիզան, և, նայելով Պիկայի մաշված, խղճալի կերպարանքին, Մեչիկը ոչ մի կերպ չէր կարողանում վերականգնել մի ժամանակ իրեն դյուրած խաղաղ ու պայծառ ծերուկի պատկերը՝ խաղաղ եղեգնապատ լճի ափին։ Իր ճնշված կերպարանքով Պիկան ասես ընդգծում էր այդ լռության անկայունությունը և կեղծիքը, լռություն, որի մեջ հանգստություն ու փրկություն չկար։

Հետո անցան իրարից հեռու գտնվող խուտորներով, ուր ոչ ոք չէր լսել ճապոնացիների մասին։ Երբ հարցնում էին՝ արդյոք անցե՞լ է ջոկատը, նրանց ցույց էին տալիս ակունքը, նորություններ, հարցնում էին խմեցնում մեղրի կվաս, աղջիկները երկար նայում էին Մեչիկին։ Սկսվել էին ծանր դաշտային աշխատանքները։ Ճանապարհները թաղվել էին խիտ, մեծահասակ ցորենի արտերում, առավոտները ցողով ծածկվում էին դատարկված սարդոստայնները, և օդը լի էր մեղուների նախաաշնանային-լալկան ձայներով։

Նրանք Շիբիշի հասան իրիկնադեմին. գյուղակը կանգնած էր անտառոտ լեռան տակ, արևկողմում. մայր մտնող արևը զարկում էր հակառակ կողմից։ Հին սունկերով պատած մատուռի մոտ մի խումբ ուրախ, բարձրախոս ջահելներ, կարմիր ժապավենակապ գլխարկներ դրած, գորոդկի էին խաղում։ Հենց նոր խփել էր մի մարդ,— բարձր կոշիկներով և շիկակարմիր, երկար սեպաձև մորուքով, նման փոքրիկ թզուկի, որ նկարում են մանկական հեքիաթներում,— խայտառակ ձևով վրիպելով բոլոր ձողիկները։ Նրա վրա ծիծաղում էին։ Մարդն ամաչելով ժպտում էր, բայց բոլորը տեսնում էին, որ

նա բոլորովին չի ամաչում, այլ նույնիսկ շատ ուրախ է։

— Ահա նա՝ Լևինսոնը,— ասաց Պիկան։

— Ո՞ւր է։

— Ա՛յ, էն շիկակարմիրը...— և թողնելով վարանման մեջ ընկած Մեչիկին՝ Պիկան մի անսպասելի, սատանայական արագությամբ մանրաքայլ գնաց դեպի փոքրիկ մարդը։

— Տեսեք, տղերք, Պիկան...

— Ինքը Պիկան է, հա՛

— Էլի մեջ ընկավ, ճաղատ սատանա...

Տղերքը, խաղը թողնելով, շրջապատեցին ծերունուն։ Մեչիկը մնաց մի կողմում, չիմանալով՝ մոտենա՞ արդյոք, թե՞ սպասի, մինչև որ կանչեն։

— Այդ ո՞վ է հետդ,— հարցրեց վերջապես Լևինսոնը։

— Էդ մի տղա է հիվանդանոցից... լա-ա՞վ տղա է...

— Էն վիրավորվածն է, որին Մորոզկան բերեց,— ասաց մեկը ճանաչելով Մեչիկին։

Լսելով, որ իր մասին են խոսում, նա մոտեցավ.

Փոքրիկ մարդը, որն այնպես վատ էր գորոդկի խաղում, խոշոր և ճարպիկ աչքեր ուներ. դրանք Մեչիկին առան իրենց մեջ, նրա ներսը թափանցելով ասես ծանր ու թեթև անելով այն ամենը, ինչ որ այնտեղ կար։

— Ահա եկա ձեզ մոտ՝ ջոկատ մտնելու,— սկսեց Մեչիկը՝ կարմրելով իր վեր քշտած թևերի համար, որ մոռացել էր ուղղել։— Առաջ Շալդիբայի մոտ էի... մինչև վիրավորվելս,— ավելացրեց նա, ավելի կշիռ տալու համար։

— Իսկ Շալդիբայի մոտ երբվանի՞ց էիր։

— Հունիսից, այսպես՝ կեսից...

Լևինսոնը նորից չափեց նրան փորձող, ուսումնասիրող հայացքով և հարցրեց.

— Կրակել գիտե՞ս։

— Գիտեմ...— անվստահ ասաց Մեչիկը։

— Եֆիմկա... բեր դրագունկան...

Մինչև հրացանը բերելը Մեչիկն զգում էր, թե ինչպես ամեն կողմից իրեն զննում են տասնյակ հետաքրքրասեր աչքեր, որոնց համը համառությունը նա սկսում էր համարել թշնամություն։

— Դեհ, ահա՛... Ինչի՞ վրա կրակես,— Լևինսոնն սկսեց փնտրել աչքերով։

— Խաչին,— խնդագին առաջարկեց մեկը։

— Ոչ, խաչին չարժե... Եֆիմկա, գորոդոկը դիր սյան վրա, այ այնտեղ...

Մեչիկն առավ հրացանը և քիչ մնաց աչքերը կկոցեր ահից, որ տփրեց նրան (ոչ թե այն պատճառով, որ պետք է կրակեր, այլ նրան թվում էր, թե բոլորը ուզում են, որ ինքը վրիպի)։

— Ձախ ձեռքդ ավելի մոտիկ բեր, այդպես ավելի հեշտ է,— խորհուրդ տվեց մեկը։

Այդ խոսքերը, որոնք ասվեցին ակնհայտ համակրությամբ, շատ օգնեցին Մեչիկին։ Նա սեղմեց շնիկը և կրակոցի գղրդյունի մեջ,— այստեղ նա, այնուամենայնիվ, կկոցեց աչքերը,— կարողացավ տեսնել, թե ինչպես գորոդոկը թռավ սյան վրայից։

— Գիտե՞ս...— ծիծաղեց Լևինսոնը։— Պատահե՞լ է, որ ձիու հետ գործ ունենաս։

— Ոչ,— խոստովանեց Մեչիկը՝ այդպիսի հաջողությունից հետո նույնիսկ ուրիշի մեղքերն իր վրա ընդունելու պատրաստ։

— Ափսո՞ս,— ասաց Լևինսոնը։ Երևում էր, որ նա իսկապես ափսոսում էր։— Բակլանով, նրան կտաս Զյուչիխա ձին,— նա խորամանկորեն կկոցեց աչքերը։— Պահպանիր նրան, անվնաս ձի է։ Թե ինչպես պետք է պահպանել՝ կսովորեցնի դասակի հրամանատարը... Ո՞ր դասակն ուղարկենք սրան։

— Ես կարծում եմ՝ Կուբրակի դասակը. նրա մոտ մարդու պակասություն կա,— ասաց Բակլանովը։— Պիկայի հետ միասին կլինեն։

— Դա էլ ճիշտ է,— համաձայնեց Լևինսոնը։— Հայդե՛...

...Զյուչիխայի վրա գցած հենց առաջին հայացքը ստիպեց Մեչիկին մոռանալ իր հաջողությունը և գրան հետևող մանկական հպարտ հույսերը։ Դա մի արցունքոտ, տխուր մատակ ձի էր, կեզտա-սպիտակ գույնի, կորացած մեջքով և մղեդոտ փոքով՝ գեղջկական հնազանդ մի ձի, որ իր կյանքում անթիվ օրավար հոգ էր վարել։ Ի լրումն այդ ամենի,

նաև հղի էր, և տարօրինակ անունը կպել էր նրան, ինչպես սվսվախոս պառավին՝ տիրոջ օրհնանքը։

— Սա ինձ համար է, հա՞...— հարցրեց Մեչիկը ընկճված ձայնով։

— Տգեղ ձի է,— ասաց Կուբրակը, խփելով նրա հետույքին։— Սմբակները թույլ են, գուցե, ասեմ, դաստիարակությունից, գուցե՝ ցավոտ վերաբերմունքից... Սակայն հեծնել կարելի է...— Նա Մեչիկի կողմը դարձրեց իր քառակուսի, կարճ կտրած բիզ-բիզ մազերով գլուխը և կրկնեց բութ համոզվածությամբ.— Հեծնել կարելի է...

— Մի՞թե ուրիշը չունեք,— հարցրեց Մեչիկը իսկույն տոգորվելով անզոր ատելությամբ դեպի Զյուչիխան և այն, որ նրան կարելի է հեծնել։

Կուբրակը, առանց պատասխանելու, սկսեց տաղտկալի և միապաղաղ կերպով պատմել, թե ինչ պետք է անի Մեչիկը առավոտյան, ճաշին և երեկոյան այդ խղճուկ մատակ ձիու հետ, որպեսզի պահպանի նրան անթիվ վտանգներից ու հիվանդություններից։

— Երթից վերադառնալուց հետո թամբը իսկույն մի՛ հանիր,— սովորեցնում էր դասակի հրամանատարը,— թող մնա հովանա։ Իսկ երբ թամբը վերցնես, իսկույն սրբիր թիկունքը, ափով կամ խոտով, և նախքան թամբելդ նույնպես սրբիր...

Մեչիկը դողացող շրթունքներով նայում էր ինչ-որ տեղ, ձիուց վեր, և չէր լսում։ Նա իրեն զգում էր այնպես, ասես այդ վիրավորական մատակ ձին, բոլորովին զարնված սմբակներով, դիտմամբ էին տվել իրեն, որպեսզի հենց սկզբից ստորացնեն։ Վերջին ժամանակները իր ամեն մի վարմունքը Մեչիկը դիտում էր այն նոր կյանքի տեսակետից, որը պետք է սկսեր։ Եվ նրան այժմ թվում էր, թե խոսք չի կարող լինել ինչ-որ նոր կյանքի մասին այս զզվելի ձիու հետ. ոչ ոք չի տեսնի, որ ինքը արդեն բոլորովին այլ, ուժեղ, իր ուժերին վստահ մի մարդ է, այլ կմտածեն, որ առաջվանն է, ծիծաղելի Մեչիկը, որին նույնիսկ լավ ձի վստահել չի կարելի։

— Էս մատակ ձին, էդ բոլորից զատ, դաբաղ էլ ունի...— անհամոզիչ տոնով ասում էր դասակի հրամանատարը՝ չկամենալով իմանալ, թե Մեչիկն ինչպե՛ս վիրավորված է, և թե

արդյո՞ք իր խոսքերը հասնում են ըստ պատկանելույն։— Նրան պետք է բուժել արջասպով, սակայն մենք արջասպ չունենք։ Դաբաղը բուժում ենք հավի ծերտով, նույնպես շատ անկեղծ միջոց է։ Պետք է քսել լաթին և սանձելուց առաջ փաթաթել լկամի շուրջը. լավ է օգնում։

«Ինչ է, ես երեխա եմ, թե ինչ,— մտածում էր Մեչիկը՝ լսելով դասակի հրամանատարին։— Ոչ, կերթամ և կասեմ Լևինսոնին, որ չեմ ուզում նստել այդպիսի ձի... Ես ամենևին էլ պարտավոր չեմ տուժելու ուրիշների փոխարեն (նրան հաճելի էր մտածել, որ ինքը զոհ էր դառել մի ուրիշի փոխարեն)։ Ոչ, ես բոլորը ուղղակի նրան կասեմ, թող նա չմտածի...»

Միայն այն ժամանակ, երբ դասակի հրամանատարը վերջացրեց, և ձին ամբողջովին Մեչիկի խնամքին հանձնվեց, նա զգաց, որ չէր լսել բացատրությունները։ Զյուչիխան, գլուխը կախ, ծուլորեն շարժում էր սպիտակ շրթունքները, և Մեչիկը հասկացավ, որ նրա ամբողջ կյանքն այժմ գտնվում է իր ձեռքում։ Բայց նա առաջվա պես չգիտեր, թե ինչպես պետք է տնօրիներ ձիու պարզ կյանքը։ Նա նույնիսկ չկարողացավ լավ անտրտունջ մատակ ձիուն, որը թափառում էր բոլոր ախոռներում՝ դունչը կոխելով ուրիշի խոտի մեջ, գրգռելով ձիերին և օրապահներին։

— Ախր ո՞ւր է նա, այդ նոր խոլերան... ինչի՞ չի կապում իր մատակը...— կանչեց մեկը ախոռում։ Լսվեցին մտրակի մոլեգին հարվածներ։— Գնա, գնա՜-ա՜, անպիտա՜ն... Օրապահ, դուրս քշիր էս մատակին, դեհ դրա...

Մեչիկը, արագ քայլելուց և ներքին տաքությունից քրտնած, մտքում ընտրելով ամենաչար արտահայտությունները, ծակող թփերին դիպչելով, քայլում էր մութ, նիրհող փողոցներով՝ փնտրելով շտաբը։ Մի տեղ քիչ մնաց քեֆի մեջ ընկներ. խոպոտ հարմոնը տաք-տաք «սարատովյան» պար էր նվագում, վառվում էին ծխախոտները, զրնգում էին թրերը և խթանները, աղջիկները ճչում էին, գետինը դողում էր խելագար պարից։ Մեչիկը ամաչեց նրանցից ճանապարհը հարցնել և անցավ հեռվից։ Նա ամբողջ գիշեր կթափառեր, եթե անկյունից նրա առաջ չհայտնվեր մի մենավոր կերպարանք։

— Ընկեր, ինչպե՞ս գտնեմ շտաբը,— ձայնեց Մեչիկը՝

մոտենալով։ Եվ ճանաչեց Մորոզկային։— Բարև ձեզ...— ասաց տատիկ շփոթված։

Մորոզկան կանգ առավ շվարած, մի անորոշ ձայն հանելով...

— Աջ կողմից երկրորդ բակն է,— պատասխանեց վերջապես, ավելի ոչինչ չգտնելով։ Ցարօրինակ կերպով փայլեցրեց աչքերը և անցավ կողքից, առանց ետ նայելու...

«Մորոզկան... այո... ախր նա այստեղ է...», մտածեց Մեչիկը և, ինչպես առաջներում, իրեն մենակ զգաց, շրջապատված վտանգներով՝ հանձինս Մորոզկայի, մութ, անծանոթ փողոցների, անտրտունջ մատակ ձիու, որի հետ հայտնի չէ, թե ինչպես պետք է վարվել։

Երբ մոտեցավ շտաբին, նրա վճռականությունը վերջնականապես թուլացավ. նա արդեն չգիտեր, թե ինչու էր եկել, ինչ պիտի ասեր և աներ։

Մոտ քսան պարտիզան պառկած էին խարույկի շուրջը, որ վառված էր մի դատարկ, դաշտի պես մեծ բակի մեջտեղում։ Լևինսոնը նստած էր հենց կրակի մոտ՝ կորեացու պես ոտքերը ծալած, հմայված ծխոտ, թշշացող բոցով և ավելի էր հիշեցնում մանկական հեքիաթի փոքրիկ թզուկին։ Մեչիկը մոտեցավ և կանգնեց թիկունքի ետևում. ոչ ոք չնայեց նրան։ Պարտիզանները հերթով պատմում էին անպատշաճ պատմություններ, որոնց մեջ անպատճառ մասնակցում էր միամիտ տերտերն իր շնացող կնոջ հետ և մի քաջ ջահել, որը թեթև քայլում էր գետնի վրա, ճարպկորեն խաբում տերտերին՝ տերտերակնոջ փաղաքշական ողորմությունների համար։ Մեչիկին թվում էր, թե այդ բաները պատմում են ոչ թե նրա համար, որ իսկապես դրանք ծիծաղելի են, այլ նրա համար, որ էլ պատմելու բան չկա, իսկ ծիծաղում են ըստ պարտականության։ Սակայն Լևինսոնը ամբողջ ժամանակ լսում էր ուշադրությամբ, ծիծաղում էր բարձր ձայնով և կարծես անկեղծ։ Երբ նրան խնդրեցին, նա էլ պատմեց մի քանի ծիծաղելի պատմություններ։ Եվ որովհետև հավաքվածների մեջ ամենագրագետն էր, նրա պատմությունները դուրս եկան ամենից ավելի խրթին և անպատշաճ։ Բայց Լևինսոնը, ըստ երևույթին, բոլորովին չէր քաշվում, այլ խոսում էր ծաղրական հանգստությամբ, և անպատշաճ խոսքերն անցնում էին, ասես, նրան չկպչելով, ինչպես օտարներ։

Նայելով նրան՝ Մեչիկը ակամա ուզեց ինքն էլ պատմել,— իսկապես, նա սիրում էր լսել այդպիսի բաներ, թեև ամոթալի էր համարում և աշխատում էր այնպես ձևացնել, իբրև թե նրանցից բարձր է կանգնած, բայց նրան թվում էր, թե հենց որ նստի կրակի մոտ, բոլորը զարմացած կնայեն իրեն և շատ անհարմար բան դուրս կգա։

Նա այդպես էլ հեռացավ, առանց նրանց միանալու, սրրտում բարկանալով իր վրա և վիրավորված բոլորից, ավելի շատ Լևինսոնից։ «Դեհ, թող էդպես լինի,— մտածում էր Մեչիկը, վիրավորված սեղմելով շրթունքները,— միևնույն է, ես նրան չեմ նայելու, թող սատկի։ Կտեսնենք, թե նա ինչ կերգի, իսկ ես չեմ վախենում...»

Հաջորդ օրերը նա իսկապես դադարեց ուշադրություն դարձնել ձիու վրա, տանում էր նրան միայն ձիավարժության, երբեմն՝ ջրելու։ Եթե նա ընկներ մի ավելի հոգատար հրամանատարի ձեռք, գուցե, նրան շուտով կուղղեին, բայց Կուբրակը երբեք չէր հետաքրքրվում, թե ինչ է կատարվում դասակում, թույլ էր տալիս, որ ամեն ինչ ընթանա սահմանված կարգով։ Զյուչիխան ծածկվել էր քոսերով, ման էր գալիս քաղցած, ծարավ, երբեմն օգտվելով օտարի խղճահարությունից, իսկ Մեչիկը վաստակեց ընդհանուրի ատելությունը, իբրև ծույլ և պարծենկոտ։

Ամբողջ դասակից միայն երկու մարդ քիչ թե շատ մոտիկ էին նրա սրտին՝ Պիկան և Ջիժը։ Բայց նա մտերմացել էր ոչ թե այն պատճառով, որ նրանք գոհացնում էին իրեն, այլ՝ որովհետև էլ ոչ մեկի հետ չէր կարողանում մտերմանալ։ Ջիժը ինքը մոտեցավ նրան, աշխատելով շահել նրա համակրանքը։ Օգտվելով հարմար պահից, երբ Մեչիկը, չմաքրված հրացանի պատճառով ջոկի հրամանատարի հետ ունեցած վեճից հետո պառկած էր խոտանոցում, մութ հայացքն առաստաղին սևեռած, Ջիժը մոտեցավ նրան անհոգ քայլվածքով և ասաց.

— Բարկացա՞ք... թողե՞ք։ Բթամիտ, անգրագետ մարդ է, արժի՞ ուշադրություն դարձնել։

— Ես չեմ բարկանում,— ասաց Մեչիկը հառաչելով։

— Կնշանակի՝ ձանձրո՞ւյթ եք զգում։ Դա ուրիշ բան է, դա ես կարող եմ հասկանալ...— Ջիժը նստեց սայլի հանված առաջամասի վրա և սովորական շարժումով քաշեց իր թանձր յուղած սապոգները։— Էհ ինչ, գիտեք, ես էլ եմ ձանձրանում. ինտելիգենտ մարդիկ այստեղ քիչ են։ Գուցե միայն Լևինսոնը, բայց նա էլ...— Ջիժը ձեռքով արավ և բազմանշանակ նայեց իր ոտքերին։

— Իսկ ի՞նչ կա...— հարցրեց Մեչիկը հետաքրքրությամբ։

— Դեհ, գիտեք, այնքան էլ շատ զարգացած մարդ չէ։ Ուղղակի խորամանկ է։ Մեր կուզով իր համար դրամագլուխ է կազմում։ Չե՞ք հավատում։— Ջիժը մոայլ ժպտաց։— Դեհ, իհարկե։ Դուք, անշուշտ, կարծում եք, որ նա շատ քաջ է, տաղանդավոր զորավար,—«զորավար» խոսքը նա արտասանեց մի առանձին ախորժակով,— թողեք... Այդ բոլորը մենք ինքներս ենք հնարել։ Հավատացնում եմ ձեզ... Այ, վերցնենք թեկուզ մեր հեռանալու կոնկրետ դեպքը. փոխանակ շեշտակի հարվածով թշնամուն տապալելու, մենք քաշվեցինք մի խուլ անկյուն։ Գիտեք, ստրատեգիական բարձրագույն նկատառումներով։ Այնտեղ, գուցե, մեր ընկերները կորչում են, իսկ մենք ստրատեգիական նկատառման հետ ենք։— Ջիժը, առանց նկատելու, դուրս բերեց անվակալը և բարկությամբ նորից խոթեց տեղը։

Մեչիկը չէր հավատում, որ Լևինսոնը կարող էր իսկապես Ջիժի նկարագրածի նման լինել, բայց հետաքրքիր էր. նա վաղուց չէր լսել այդպիսի գրագետ խոսք և, չգիտես ինչու, ուզում էր, որ այդ խոսքի մեջ մի քիչ ճշմարտություն լինի։

— Մի՞թե դա ճիշտ է,— ասաց նա՝ վեր կենալով։— Իսկ ինձ նա կարգին մարդ թվաց։

— Կարգի՞ն...— սարսափեց Ջիժը։ Նրա ձայնը կորցրեց սովորական քաղցրավուն երանգը, և նրանում այժմ հնչում էր իր գերազանցության գիտակցությունը։— Ի՞նչ մոլորություն... Դուք մի նայեցեք, թե ինչպիսի մարդիկ է նա ընտրում... Դեհ,ի՞նչ է Բաչլանովը։ Լակոտ... Մեծ կարծիքի է իր մասին, իսկ ի՞նչ հրամանատարի օգնական է նա։ Մի՞թե չէր կարելի ուրիշներին գտնել։ Իհարկե, ես ինքս հիվանդ եմ, վիրավորված մարդ,— վիրավորված եմ յոթ գնդակով և ռումբից խլացած,— ես բնավ չեմ վազում այդպիսի բազմահոգ պաշտոնի ետևից, բայց համենայն դեպս, ես նրանցից վատ չէի լինի՝ կասեմ առանց պարծենալու...

— Գուցե նա չգիտեր, որ դուք լավ եք հասկանում զինվորական գործը։

— Տե՜ր աստված, չգիտե՞ր... Ախր բոլո՞ր գիտեն դա, հարցրեք՝ ո՞ւմ կուզեք։ Իհարկե, շատերը նախանձում են և կչարախոսեն ձեզ իմ մասին, բայց դա հո փաստ է...

Հետզհետե Մեչիկն էլ աշխուժացավ և սկսեց իր տրամադրությունները հաղորդել։ Ամբողջ օրը նրանք միասին անցկացրին։ Ու թեև այդպիսի մի քանի խոսակցություններից հետո Ջիժը Մեչիկին պարզապես անախո՛րժ դարձավ, այնուամենայնիվ, նրանցից չէր կարողանում բաժանվել։ Նա նույնիսկ ինքն էր փնտրում նրան, երբ երկար ժամանակ չէր տեսնում։ Ջիժը նրան սովորեցրեց օրապահությունից, խոհանոցից խուսափել. այդ բոլորը վաղուց արդեն կորցրել էր նորության հրապույրը, ձանձրալի պարտականություն էր դարձել։

Եվ այդ ժամանակվանից ջոկատի եռուն կյանքն անցնում էր Մեչիկի կողքով։ Նա չէր տեսնում ջոկատի մեքենայի գլխավոր զսպանակները և չէր զգում այն ամենի անհրաժեշտությունը, ինչ որ արվում էր։ Այդպիսի օտարացման մեջ խորասուզվեցին նրա բոլոր երազները մի նոր, համարձակ կյանքի մասին, թեև նա սովորեց վիճել, չվախենալ մարդկանցից, արևից սևացավ և ղեկստի խնամքը աչքաթող արավ՝ արտաքուստ հավասարվելով բոլորին։

10

ՋԱԼՋԱԽՄԱՆ ՍԿԻԶԲԸ

Մորոզկան, հաղիպելով Մեչիկին, զարմանքով նկատեց, որ ոչ նախկին չարությունը, ոչ ատելությունը չի զգում։ Մնացել էր միայն տարակուսանքը, թե ինչու նորից ճամփի վրա պատահում է այդ վնասակար մարդը, և կարծես գիտակցական այն համոզմունքը, որ ինքը՝ Մորոզկան, պետք է նրա վրա բարկանա։ Բայց և այնպես այդ հանդիպումն այնպես ազդեց նրա վրա, որ նա կամեցավ մեկի հետ անհապաղ խոսել դրա մասին։

— Քիչ առաջ անցնում էի երբանցքով,— ասաց նա Դուբովին,— հենց նոր էր անկյունից դուրս եկել, ուղղակի դեմս ելավ Շալդիբայի երիտասարդը, որին ես բերի. մի՞տդ է։

— Է՞...

— Դե ոչինչ... «Ինչպե՞ս,— ասում է,— շտաբ գնալ...»— «Ա՛յ այնտեղ,— ասում եմ,— երկրորդ բակը՝ դեպի աջ...»

— Եվ ի՞նչ,— հետաքրքրվեց Դուբովը, այդ բոլորի մեջ չգտնելով ոչ մի առանձին բան և կարծելով, թե դեռ կլինի։

— Դե՛հ, հանդիպեցի, և վերջ... էլ ի՞նչ պիտի լիներ,— պատասխանեց Մորոզկան անհասկանալի գրգռվածությամբ։

Նա հանկարծ ձանձրույթ զգաց և չուզեց խոսել մարդկանց հետ։ Փոխանակ երեկույթ գնալու, ինչպես որ պատրաստվել էր, նա փռվեց խոտանոցում, բայց քնել չկարողացավ։ Անախորժ հիշողություններ գրոհ տվին նրա վրա ծանր խմբով։ Թվում էր, թե Մեչիկը դիմամբ կանգնեց ճամփի վրա, աշխատելով դեն հրել նրան ինչ-որ կանոնավոր գծից։

Ամբողջ հաջորդ օրը նա թափառեց, առանց տեղ գտնելու, դժվարությամբ ճնշելով Մեչիկին նորից տեսնելու ցանկությունը։

— Դեհ, ի՞նչ ենք անգործ նստել,— անբավականությամբ դիմում էր նա դասակի հրամանատարին։— Այստեղ ձանձրույթից փտել կարելի է... Ինչի՞ մասին է մտածում էդ Լևինսոնը...

— Հենց այն բանի մասին, թե ինչպես Մորոզկային զվարճացնի։ Վարտիքը մաշել է այդ մտքի վրա նստելով։

Դուբովը չէր էլ կասկածում Մորոզկայի բարդ ապրումների մասին։ Իսկ Մորոզկան, օգնություն չստանալով, չարագուշակ թախծից մեռնում էր և գիտեր, որ շուտով կսկսի խմել, եթե չհաջողվի ցրվել տաք գործի մեջ։ Կյանքում առաջին անգամ էր նա ինքն իր ցանկությունների դեմ պայքարում, բայց նրա ուժերը թույլ էին։ Միայն պատահական մի հանգամանք փրկեց նրան անկումից։

Մի խուլ տեղ քաշվելով՝ Լևինսոնը համարյա կորցրեց իր կապը մյուս ջոկատների հետ։ Կցկտուր տեղեկությունները, որ երբեմն հաջողվում էր հավաքել, փլուզման դաժան պատկերն էին նկարում։ Ուլախինյան տագնապահար քամին բերում էր արյան ծխահոտը։

Տայգայի ծածուկ շավիղների միջով, ուր շատ տարիներ արդեն մարդու ոտք չէր դիպել, Լևինսոնը կապվեց երկաթուղու հետ։ Նրան հայտնեցին, որ շուտով պետք է անցնի մի էշելոն՝ զենքով և հանդերձանքով։ Երկաթուղայինները խոստացան ճշմարտությամբ հայտնել օրը և ժամը։ Գիտենալով, որ վաղ թե ուշ ջոկատը, մեկ է, կգտնեն, իսկ տայգայում առանց փամփուշտների և տաք զգեստի անկարելի է ձմեռել, Լևինսոնը վճռեց առաջին հարձակումը գործել։ Գոնչարենկոն շտապով լցրեց ֆուգասները։ Մշուշոտ մի գիշեր, աննշմար անցնելով թշնամու դժոխքի միջով, Դուբովի դասակն անսպասելիորեն հայտնվեց գծի վրա։

... Գոնչարենկոն անջատեց փոստատար գնացքին կցված ապրանքատար վագոնները, առանց կպչելու մարդատարներին։ Պայթյունի սաստիկ դղրդոցի և ուժանակի խանձահոտի մեջ օդ թռան պայթած ռելսերը և ցնցվելով, գլորվեցին ավազաթմբի ետևը։ Ֆուգասից բերդանկայի փակաղակը, կառչելով քուղից, կախվեց հեռագրալարի վրա, հետագայում շատերին ստիպելով գլուխ կոտրել, թե ով և ինչու է կախել այն։։

Մինչ շուրջը վխտում էին հեծելախմբերը, Դուբովը, ձիերին ծայր աստիճան բեռնավորած, սպասում էր Սվիյագինյան անտառային ամառանոցում, իսկ գիշերը ծլկեց դեպի կիրճը։ Մի քանի օրից Շիբիշումն էր՝ չկորցնելով ոչ մի մարդ։

— Դեհ, Բակլանիչ, այժմ դիմացիր...— ասաց Լևինսոնը, և նրա ոչ կայուն հայացքում չէր կարելի կարդալ՝ արդյոք հանա՞ք է անում նա, թե՞ լուրջ է ասում։ Այդ իսկ օրը նա բաժանեց տնտեսական մասը, մարդկանց ձեռքը տալով շինելները, փամփուշտները, թրերը, պաքսիմատները, թողնելով այնքան, որքան կարող են վերցնել պահեստի ձիերը։

Ամբողջ Ուլախինյան հովիտը, մինչև Ուսսուրի, բռնել էր թշնամին։ Դեպի Իրոխեձայի գետաբերանը ձգվում էին նոր ուժեր, ճապոնական հետախույզները փնտրում էին ամեն ուղղությամբ և մի քանի անգամ Լևինսոնի դետքերին էին հադիպել։ Օգոստոսի վերջին ճապոնացիները շարժվեցին գետի վեր։ Գնում էին դանդաղ, մեծ ընդմիջումներով, մի խուտորից մյուսը, շոշափելով ամեն մի քայլը, թևերի վրա տրելով պաշտպանության խիտ ջոկատներ։ Նրանց շարժման

եղբայրական համայնության մեջ, չնայած դանդաղությանը, զգացվում էր իր նկատմամբ վստահ, խելացի և միևնույն ժամանակ կույր մի ուժ։

Լևինսոնի հետախույզները վերադառնում էին վայրի աչքերով, իսկ նրանց տեղեկությունները հակասում էին մեկը մյուսին։

— Ինչպե՞ս թե,— սառնասրտորեն հարցնում էր Լևինսոնը։— Երեկ, ասում ես, նրանք Սոլոմեննայայում էին, իսկ այսօր առավոտ՝ Մոնակինում. ինչ է, նրանք ե՞տ են գնում...

— Չ-չգիտեմ,— կակազում էր հետախույզը։— Գուցե առաջապահներն էին Սոլոմեննայայում...

— Իսկ դու ո՞րտեղից գիտես, որ Մոնակինում գլխավորներն են և ոչ թե առաջապահները։

— Գեղջուկներն էին ասում...

— Շա՜տ են դուր եկել քեզ գեղջուկները... Քեզ ի՞նչ էր հրամայված...

Հետախույզը տեղնուտեղը հնարում էր մի խորամանկ պատմություն, թե ինչու չէր հաջողվել խորքը թափանցել։ Իսկ իրականում, կանանց պատմածներից վախեցած, նա թշնամուց տասը վերստ հեռու էր գտնվել, նստել էր թփերում, ծխել և սպասել, թե երբ հարմար կլիներ ետ դառնալ։ «Լավ է, դու ինքդ խցկվիր»,— մտածում էր Լևինսոնի մասին, նայելով նրա վրա շողում-թարթող՝ գեղջուկի հայացքով։

— Ստիպված ես անձամբ գնալ,— ասաց Լևինսոնը Բակլանովին։— Ապա թե ոչ մեզ այստեղ ճանճերի պես կկոտորեն։ Ի՞նչ կարող ես անել այդպիսի մարդկանց հետ։ Մեկին վերցրու հետդ և ճամփա ընկիր լույսը բացվելուն պես։

— Իսկ ո՞ւմ վերցնեմ,— հարցրեց Բակլանովը։ Նա աշխատում էր լուրջ և մտահոգ երևալ, թեև մարմնի մեջ ամեն ինչ թրթռում էր մարտական անհանգիստ ուրախությունից։ Լևինսոնի պես նա ևս կարծում էր, թե պետք է թաքցնի իր իսկական զգացմունքները։

— Վերցրու ում կուզես... Թեկուզ էն նոբեկին, որ Կուրբակի մոտ է՝ Մեչի՞կ է, ի՞նչ է... Միաժամանակ կստուգես, թե ինչ տղա է։ Թե չէ նրա մասին վատ բաներ են խոսում, գուցե և իզուր...

Հետախուզությունը Մեչիկի համար ամենահարմար ժամանակ պատահեց։ Ջոկատում գտնվելու կարճ ժամանակամիջոցում նա հավաքել էր այնքան չկատարված գործ, չպահած խոստումներ և չիրագործված ցանկություններ, որ նրանցից ամեն մեկն առանձին, նույնիսկ իրագործված, կկորցներ արդեն իր իմաստն ու նշանակությունը։ Բայց միասին դրանք ճնշում էին է՛լ ավելի ծանր, խուլ և ցավագին կերպով, չթողնելով դուրս պրծնել իրենց՝ անմտության չափ նեղ շրջանից։ Այժմ թվում էր նրան, որ կկարողանա պատռել այդ անմիտ շրջանը մի համարձակ շարժումով։

Նրանք ճամփա ընկան դեռ լույսը չբացված։ Լեռնապարի վրա հազիվ էին վարդագունում տայգայի գագաթները, գյուղում, լեռան ներքևում, երկրորդ անգամ կանչում էին աքաղաղները։ Ցուրտ էր, մութ և մի քիչ սահմռկելի։ Տեղագրության անսովորությունը, վտանգի կանխազգացումը, հաջողության հույսը երկուսի մեջ էլ ծնում էր այն բարձր-մարտական տրամադրությունը, որի ժամանակ բոլոր մնացածը կարևոր չէ։ Մարմնի մեջ զգացվում էր արյան թեթև ծփանքը, մկանները ձգվում էին, իսկ օդը թվում էր պաղ ու այրող, նույնիսկ խրթխրթում էր։

— Հա՜մա մատակ ձիդ փչացել է, հա՜,— ասում էր Բակլանովը։— Չե՞ս նայում նրան, ինչ է։ Լավ չէ... Այդ Կուրբակը, ախմախը, ցույց չի տվել երևի, թե ինչ պետք է անել։— Բակլանովի մտքով երբեք չէր անցնում, որ ձիու հետ վարվել իմացող մարդը խիղճ կունենա ձիուն այդ դրության հասցնելու։— Ցույց չի տվել, հա՞։

— Ոնց ասեմ...— շփոթվեց Մեչիկը։— Նա առհասարակ քիչ է օգնում։ Չգիտես, ում դիմես։

Ամաչելով իր ստից, նա շարժվեց թամբի վրա՝ չնայելով Բակլանովին։

— Իսկ դու հարցրու ում ուզես։ Մեզ մոտ հասկացողներ շա՜տ կան։ Ճարպիկ տղերք կան...

Հակառակ Չիժի կարծիքին, որը Մեչիկն էլ գրեթե յուրացրել էր, Բակլանովը սկսում էր դուր գալ նրան։ Նա լիքն էր ու կլոր, ամուր նստած թամբին։ Նրա աչքերը դարչնագույն էին և խելոք, ամեն ինչ միանգամից էին նկատում՝ տեղնու-

տեղը ջոկելով ուշադրության արժանին դատարկներից, հետո գալիս էին փորձնական հետևությունները։

— Է-է՜, տղա, իսկ ես հա՜ նայում եմ, թե ինչու է թամբդ շարժվում։ Ետևի թամբակալը շատ ես քաշել, իսկ առջևինը կախված է։ Պետք է հակառակը անել։ Բեր նորից կապենք...

Դեռ Մեչիկը գլխի չէր ընկել, թե բանն ինչումն է, երբ արդեն Բակլանովը, ցած իջնելով, թամբի մոտ էր։

— Դե-եհ... ախր քո քրտնքաքաշն էլ փաթաթվել է... իջի՜ր, իջի՜ր, ձին կփչացնես։ Նորից կթամբենք։

Մի քանի վերստից հետո Մեչիկը վերջնականապես համոզվեց այն բանում, որ Բակլանովն իրենից շատ ավելի լավ է ու խելոք, որ Բակլանովը, բացի դրանից, շատ համարձակ և ուժեղ մարդ է, և որ ինքը՝ Մեչիկը, պետք է միշտ անտրտունջ նրան հնազանդվի։ Իսկ Բակլանովը, որ մոտեցել էր Մեչիկին առանց որևէ կանխակալության, թեև շուտով զգաց իր գերազանցությունը, բայց խոսում էր նրա հետ, որպես հավասարի, աշխատելով պարզ դիտողությամբ որոշել նրա իսկական արժեքը։

— Քեզ ո՞վ ուղարկեց սոպկաները։

— Դե, ես, ճիշտն ասած, ինքս եկա, իսկ ուղեգիր մաքսիմալիստները տվին։

Հիշելով Ստաշինսկու տարօրինակ վարմունքը՝ Մեչիկն աշխատեց մի կերպ նվազեցնել իրեն ուղարկող կազմակերպության նշանակությունը։

— Մաքսիմալիստնե՞րը... Ջուր ես նրանց հետ գործ ունենում՝ դատարկախոսներ են...

— Ինձ համար, իսկապես, ողջը մեկ է... Ուղղակի այնտեղ կան գիմնազիայի ընկերներիցս մի քանիսը, ահա ես...

— Գիմնազիան ավարտե՞լ ես,— կտրեց նրա խոսքը Բակլանովը։

— Ի՞նչ։ Այո, ավարտել եմ...

— Դա լավ է։ Ես էլ սովորել եմ արհեստագործականում։ Խառատ էի ուզում դառնալ։ Չհաջողվեց ավարտել։ Գիտես՝ ուշ սկսեցի,— բացատրեց նա, ասես արդարանալով։— Մինչ այդ նավաշինարանում էի աշխատում, մինչև որ եղբայրս մեծացավ, իսկ այստեղ էլ այս ապուրը եփվեց...

Քիչ հետո նա նորից մտածկոտ ձգեց.

— Հա-ա՜... Գիմնազիա... Ես էլ փոքր ժամանակս ուզում էի, բայց գործն այսպես եղավ...

Ինչպես երևում է, Մեչիկի խոսքերը նրա միտքը բերին շատ անհարկի հիշողություններ։ Մեչիկը անսպասելի կրքով սկսեց ապացուցել, որ բոլորովին էլ վատ չէ, այլ նույնիսկ լավ է, որ Բակլանովը գիմնազիայում չի սովորել։ Իր համար անսպասելի կերպով նա հավատացնում էր Բակլանովին, թե նա ինչ լավն է ու խելոք, չնայած կրթությունից զուրկ լինելուն։ Բակլանովը, սակայն, մեծ արժանիք չէր տեսնում իր անուսում մնալու մեջ, իսկ Մեչիկի ավելի բարդ դատողությունները նա բոլորովին չհասկացավ։ Անկեղծ խոսակցություն չստացվեց։ Երկուսն էլ ավելի արագ քշեցին ձիերը և երկար ժամանակ գնում էին լուռ։

Ամբողջ ճանապարհին պատահում էին հետախույզներ և ստում էին առաջվա պես։ Բակլանովը միայն ճոճում էր գլուխը։ Խուտորում, Սոլոմեննայա գյուղակից երեք վերստ հեռու, նրանք թողին ձիերը և գնացին ոտքով։ Վաղուց արդեն արևը թեքվել էր դեպի արևմուտք, հոգնած դաշտերը լիքն էին կանանց խայտաբղետ գլխաշորերով, պարարտ խրձակույտերը հանդարտ-խիտ և մեղմ ստվեր էին գցում։ Հանդիպող սայլի մեջ նստածներից Բակլանովը հարցրեց, թե արդյոք Սոլոմեննայայում ճապոնացիներ եղե՞լ են։

— Առավոտյան, ասում են, մի հինգ հոգի եղել են, իսկ այսօր, կարծես, բան չի լսվում... Գոնե ցորենը հավաքեինք, գրողը նրանց տանի...

Մեչիկի սիրտը բաբախեց, բայց նա վախ չէր զգում։

— Կնշանակի, նրանք ճիշտ որ Մոնակինում են,— ասաց Բակլանովը։— Դրանք հետախույզներ են եղել։ Քշիր համարձակ։

Նրանք մտան գյուղ. շները ծույլ հաչոցով դիմավորեցին նրանց։ Իշևանի բակում մի տրցակ խոտ կար, որը կապված էր ձողից, և դարբասի մոտ կանգնած էր մի սայլ։ «Բակլանովի ձևով» կաթ խմեցին ամանից՝ հացով։ Հետագայում, ահով հիշելով ամբողջ այդ արշավանքը, Մեչիկը անփոփոխ կերպով տեսնում էր իր առաջ Բակլանովին՝ թե ինչպես նա փողոց ելավ երջանիկ դեմքով և կաթի մնացորդը վերևի շրթունքին։ Նրանք մի քանի քայլ էլ չէին արել, երբ նրբանցքից,

շրջազգեստը քիչ վեր քաշած, դուրս վազեց մի հաստ կնիկ, և բախվելով նրանց, քարացած կանգ առավ։ Նրա աչքերը թռան գլխաշորի տակ, իսկ բերանով օդը կուլ էր տալիս, ինչպես բռնված ձուկ։ Եվ հանկարծ զիլ ու բարակ ձայնով սկսեց լաց ու կոծ անել։

— Օ՜յ, հարազատներս, էդ ո՞ւր եք գնում... Ճապոնացիների մի մեծ ուժ ուսումնարանի մոտ է... Էստե՞ղ են գալիս, դե փախեք, էստե՞ղ են գալիս...

Մեչիկը դեռ չէր կարողացել ըմբռնել նրա խոսքերի իմաստը, երբ նույն նրբանցքից, համաչափ քայլերով դուրս եկան չորս ճապոնացի զինվոր՝ հրացաններն ուսներին։ Բակլանովը, բացականչելով, թափով հանեց ատրճանակը և գրեթե դեմառդեմ կրակեց երկուսի վրա։ Մեչիկը տեսավ, թե ինչպես նրանց ետևից թռան արյունոտ կտորներ, և երկուսն էլ գետին տապալվեցին։ Երրորդ փամփուշտը ծուռ գնաց, և ատրճանակը դադարեց գործելուց։ Մնացած ճապոնացիներից մեկը սկսեց փախչել, իսկ մյուսն առավ հրացանը, բայց նույն միջոցին Մեչիկը, հպատակվելով մի նոր ուժի, որը նրան ղեկավարում էր ավելի, քան վախը, մի քանի անգամ իրար ետևից կրակեց նրա վրա։ Վերջին գնդակները դիպան ճապոնացուն, երբ նա արդեն գալարվելով պառկած էր փոշու մեջ։

— Փախչե՞նք,— կանչեց Բակլանովը,— դեպի սայլը...

Մի քանի րոպեից նրանք, արձակելով իշևանի բակում դոփող ձիուն, թռչում էին փողոցով՝ փոշու թանձր քուլաներ բարձրացնելով։ Բակլանովը կանգնած էր սայլի վրա, ամբողջ ուժով խփում էր ձիուն սանձերի ծայրով, հաճախ ետ նայելով՝ արդյոք չե՞ն հետապնդում։ Մի տեղ, կենտրոնում, ոչ պակաս քան հինգ փողհար տագնապ էին գուժում։

— Այստե՞ղ են նրանք... բոլո՞ր— բղավում էր Բակլանովը հաղթական չարացածությամբ։— Բոլորը... գլխավորնե՞ր։ Լսո՞ւմ ես, փչում են...

Մեչիկը ոչինչ չէր լսում։ Սայլի մեջ ընկած՝ նա զգում էր ազատման վայրի մի ուրախություն և այն, թե ինչպես տաք փոշու մ'ջ գալարվում էր իր ձեռքով սպանված ճապոնացին՝ մահվան վերջին տանջանքներից թուլանալով։ Եվ երբ նա նայեց Բակլանովին՝ վերջինիս ծռված դեմքը նրան թվաց զզվելի ու սարսափելի։

Մի քիչ հետո Բակլանովն արդեն ծիծաղում էր.

— Լա՜վ ստացվեց, չէ՞։ Ե՛վ նրանք, և՛ մենք միանգամից գյուղ մտանք։ Իսկ դու, ախպերս, կեցցե՜ս։ Նույնիսկ չէի սպասում քեզանից, ճշմարի՞տ։ Եթե դու չլինեիր, նա մեզ ա՜յ թե ինչպես կծակոտեր...

Մեչիկը, աշխատելով չնայել նրան, պառկել էր գլուխը ծածկած, բոլորովին դեղնած ու դժգույն, մութ բծերով ծածկված, ինչպես արմատի վրա փտող ցորենի հասկը։

Երկու վերստ հեռանալով և հետապնդման ձայն չլսելով՝ Բակլանովը ձին կանգնեցրեց ճամփի վրա թեքված մի կընձենու մոտ։

— Դու այստեղ մնա, իսկ ես բարձրանամ ծառի վրա, նայենք...

— Ինչո՞ւ...— ասաց Մեչիկը կցկտուր ձայնով։— Շուտ գնանք։ Պետք է հաղորդել... պարզ է, որ այստեղ գլխավորներն են։— Նա ստիպում էր իրեն հավատալ այն բանին, ինչ որ ասում էր, և չէր կարողանում։ Այժմ վախենում էր թշնամուն մոտիկ մնալ։

— Չէ, լավ է սպասենք։ Չէ՞ որ այս գործը մենք սարքեցինք ոչ թե նրա համար, որ այդ երեք հիմարների գլուխն ուտենք։ Ճիշտն իմանանք։

Կես ժամ հետո Սոլոմեննայայից դանդաղաքայլ դուրս եկան մոտ քսան ձիավոր։ «Ի՞նչ կլինի, թե որ նկատեն,— մտածեց Բակլանովը՝ թաքուն դողալով։— Սայլով փախչել չենք կարողանա»։ Իրեն հաղթահարելով՝ նա վճռեց սպասել, մինչև վերջին ծայրահեղություն։ Ձիավոր գորքը, որը Մեչիկին չէր երևում բլրի ետևում, անցել էր արդեն կես ճանապարհը, երբ Բակլանովն իր դիտակետից նկատեց հետևակը, որ նոր էր դուրս գալիս գյուղից խիտ շարքերով, փոշու մեջ փայլեցնելով զենքերը ... Սրընթաց քշելով խուտոր՝ նրանք քիչ էր մնում սատկացնեին ձիուն։ Այնտեղ հեծան իրենց ձիերը և մի քանի րոպեից սլանում էին արդեն Շիբիշի տանող ճանապարհով։ Շրջահայաց Լևինսոնը դեռ մինչև նրանց գալը (նրանք եկան գիշերը) կարգել էր ուժեղացրած պահպանություն՝ Կուբրակի հետևակացրած դասակը։ Դասակի մեկ երրորդ մասը մնացել էր ձիերի հետ, իսկ մնացածները հերթապահում էին հին, մոնղոլական ամրության պատնեշի ետևում

գտնվող գյուղի մոտ։ Մեչիկը, ձին հանձնելով Բակլանովին, մնաց դասակի հետ։

Չնայած սաստիկ հոգնածությանը՝ քնել չէր ուզում։ Մշուշը փռվում էր գետի կողմից, ցուրտ էր։ Պիկան շուռ էր գալիս և տնքում քնի մեջ։ Ժամապահների ոտքերի տակ խորհրդավոր կերպով խշխշում էին խոտերը։ Մեչիկը պառկած էր մեջքի վրա՝ աչքերով աստղերը շոշափելով։ Դրանք հապիվ էին նշմարվում սև դատարկության մեջ, որ ասես երևվում էր այնտեղ՝ մշուշն վարագույրի նման, և այդ նույն դատարկությունը, ավելի մռայլ ու խուլ, որովհետև անաստղ էր, Մեչիկն ղղում էր իր մեջ։ Նա մտածեց, որ ամբողջ ժամանակ հենց այդպիսի դատարկություն պետք է զգա Ֆրոլովը, և սարսափեց այն հանկարծակի մտքից, որ այդ մարդու վիճակը կարող է նման լինել իրենին։ Նա աշխատում էր իրենից վանել այդ սարսափելի միտքը, բայց Ֆրոլովի պատկերը գլխից չէր հեռանում։ Նա տեսնում էր նրան մահճակալի վրա պառկած՝ անկենդան, կախ ընկած ձեռքերով ու չորացած դեմքով, և թիկինները խաղաղ աղմկում էին նրա վերևում... «Ախր նա մեռել է...»— մտածեց Մեչիկը սարսափով։ Բայց Ֆրոլովը շարժեց մատները և, երեսը նրա կողմը դարձնելով, ասաց ոսկրոտ ժպիտով. «Տղերքը... շարություն են անում...» Հանկարծ նա ցնցվեց մահճակալի վրա, նրանից թռան ինչ-որ կտորներ, և Մեչիկը տեսավ, որ դա ամենևին էլ Ֆրոլովը չէ, այլ ճապոնացին է։ «Սարսափելի է...»— նորից մտածեց նա, ցնցվելով ամբողջ մարմնով, բայց Վարյան թեքվեց նրա վրա և ասաց. «Իսկ դու մի՛ վախենա»։ Նա պաղ էր և փափուկ։ Մեչիկը մեկեն թեթևացավ։ «Դու մի՛ բարկանա, որ քեզ այնքան էլ լավ հրաժեշտ չտվեցի,— ասաց Մեչիկը փաղաքշանքով։— Ես սիրում եմ քեզ»։ Վարյան սեղմվեց նրան, մեկեն բոլորը կորավ, խափանվեց մի տեղ, իսկ մի քանի վայրկյան հետո նա արդեն նստած էր գետնին, աչքերը կկոցած, ձեռքով հրացանը փնտրելով։ Լույսը բացվել էր։ Շուրջը դես ու դեն էին ընկնում մարդիկ՝ փաթաթելով շինելները։ Կուբրակը թփերի մեջ նստած՝ նայում էր հեռադիտակով։ Բոլորը մոտենում էին նրան և հարցնում.

— Ո՞ւր են... ո՞ւր են...

Մեչիկը, վերջապես գտնելով հրացանը, ելավ բարձունքը

և հասկացավ, որ խոսքը թշնամու մասին է, բայց նրանց չտեսնելով, նույնպես սկսեց հարցնել.

— Ո՞ւր են...

— Ի՞նչ եք խմբվել,— հանկարծ չարացած ձայնով ասաց դասակի հրամանատարը և սաստիկ հրեց մեկին։— Տարածվեցեք շղթայի ձևով...

Մինչ խրամում սողում էին միմյանցից հեռու, Մեչիկը, վիզը երկարացնելով, դեռևս աշխատում էր տեսնել թշնամուն։

— Ախր ո՞ւր են...— մի քանի անգամ հարցրեց նա իր հարևանին։ Սա, փորի վրա պառկած և նրան չլսելով, չգիտես ինչու շարունակ ականջն էր բռնում. նրա ներքևի շրթունքը կախվել էր։ Հանկարծ նա շուռ եկավ և սոսկալի հայհոյեց։ Մեչիկը ժամանակ չգտավ վիճելու՝ լսվեց հրամանը.

— Դա-սա՛կ...

Նա դուրս բերեց հարացանը և, առաջվա նման բան չտեսնելով ու բարկանալով, որ բոլորը տեսնում են, իսկ ինքը՝ ոչ, կրակեց պատահածին պես, երբ լսեց «կրա՛կ» խոսքը։ (Նա չգիտեր, որ դասակի ամբողջ կեսը նույնպես ոչինչ չէր տեսնում, բայց այդ բանը ծածկում էր՝ հետագայում ծաղրից խուսափելու համար)։

— Կրա՛կ...— նորից հրամայեց Կուբրակը, և նորից Մեչիկը կրակեց։

— Ահա-ա՛, փախչում են...— կանչեցին շուրջը. բոլորը հանկարծ խոսեցին բարձր ձայնով և անմտորեն, դեմքերը դարձան ուրախ ու գրգռված։

— Հերի՛ք է, հերի՛ք...— կանչում էր դասակի հրամանատարը։— Ո՞վ է այդտեղ կրակում։ Փամփուշտները ափսոս չե՞ն...

Հարցուփորձ անելով՝ Մեչիկն իմացավ, որ մոտեցել էր ճապոնական հետախույզ խումբը։ Շատերը նրանցից, ովքեր նույնպես չէին տեսել հետախույզներին, այժմ ծիծաղում էին Մեչիկի վրա և պարծենում, թե ինչպես թամբերից թռչում էին այն ճապոնացիները, որոնց նրանք նշան էին առնում։ Այդ ժամանակ թնդանոթի մի խուլ տրաքոց հնչեց, լցնելով հովիտը արձանքով։ Մի քանի մարդ վախեցած ընկան գետնին։ Մեչիկն էլ կծկվեց զարկվածի պես. դա առաջին թնդա-

նոթի հարվածն էր, որ նա լսում էր իր կյանքում։ Ռումբը պայթեց գյուղի ետևում, ինչ-որ տեղ։ Հետո խելառ շնչարգելությամբ հեչեցին գնդացիրները, իրար ետևից տեղացին հրացանի տրաքոցները, բայց պարտիզանները չէին պատասխանում։

Մի րոպե, գուցե և մի ժամ հետո,— ժամանակը ցավագնորեն աննկատելի էր դառնում,— Մեչիկն զգաց, որ պարտիզանները շատացան, և տեսավ Բակլանովին ու Մետելիցային, որ իջնում էին հողաթմբից։ Բակլանովը տանում էր հեռադիտակը, Մետելիցայի այտը ծռմռվում էր և ոտնգները սաստիկ լայնանում էին։

— Պառկա՞ծ ես,— հարցրեց Բակլանովը՝ ճակատի կընճիռներն ուղղելով։— Դեհ, ինչպե՞ս ես։

Մեչիկը տանջալի կերպով ժպտաց և, իր վրա մեծ ճիգ գործադրելով, հարցրեց.

— Իսկ մեր ձիերն ո՞ւր են...

— Մեր ձիերը տայգայում են, շուտով մենք էլ այնտեղ կլինենք, միայն թե մի քիչ պահեինք... Մեզ ոչինչ,— ավելացրեց նա, երևի կամենալով սիրտ տալ Մեչիկին,— այ, Դուբովի դասակը հարթության վրա է... Ա՜, գրողը քեզ...— հայհոյեց հանկարծ, ցնցվելով մոտիկ պայթյունից։— Լևինսոնն էլ այնտեղ է... Եվ ուր-որ վազեց շղթայի երկարությամբ՝ երկու ձեռքով հեռադիտակը բռնած։

Հաջորդ անգամ, երբ պետք եղավ կրակել, Մեչիկը արդեն տեսավ ճապոնացիներին. նրանք հարձակվում էին մի քանի շղթաներով, մի թփից մյուսը վազելով, և այնպես մոտիկ էին, որ Մեչիկին թվում էր, թե այժմ նրանցից անկարելի է փախչել, նույնիսկ եթե հարկ լինի։ Այն, ինչ որ նա զգում էր, ոչ թե սարսափ էր, այլ տանջալի սպասում, թե երբ կվերջանա այդ ամենը։

Այդպիսի վայրկյաններից մեկում չգիտես թե որտեղից հայտնվեց Կուբրակը և բղավեց.

— Ո՞ւր ես կրակում...

Մեչիկը ետ նայեց և հասկացավ, որ դասակի հրամանատարի խոսքերն իրեն չեն վերաբերում, այլ Պիկային, որին ինքը մինչև այժմ չէր տեսել։ Պիկան պառկած էր երեսը գետնին կպցրած, և, մի տեսակ անմիտ կերպով, գլխավերևում

փակաղակը շոշափելով, խփում էր առջևի ծառին։ Նա շարունակեց այդ զբաղմունքը նաև Կուբրակի ձայն տալուց հետո, միայն այն տարբերությամբ, որ փամփուշտներն արդեն վերջացել էին, և նա փակաղակը զուր էր չխկչխկացնում։ Դասակի հրամանատարը մի քանի անգամ խփեց նրան կոշիկով, սակայն Պիկան էլի չբարձրացրեց գլուխը։

Հետո բոլորը փախան այս ու այն կողմ, սկզբում անկարգ, ապա իրար ետևից՝ նոսր շարքով։ Մեչիկն էլ վազում էր բոլորի հետ, չհասկանալով, թե ինչի համար, բայց նույնիսկ ծայրահեղ շփոթմունքի րոպեներին զգալով, որ այդ բոլորն այնքան էլ պատահական և ոնմիտ բան չէ, և որ մարդկանց մի ամբողջ խումբ, որոնք չեն զգում այն, ինչ որ ինքն է զգում, ղեկավարում է իր և շրջապատողների գործողությունները։ Այդ մարդկանց նա չէր նկատում, բայց զգում էր իր մեջ նրանց կամքը, և երբ ուշքի եկավ գյուղում,— այժմ նրանք գնում էին դանդաղ քայլերով, երկար շղթայով,— ակամա աչքերով սկսեց փնտրել, թե ո՞վ է, այնուամենայնիվ, իր վիճակը տնօրինում։ Առջևից քայլում էր Լևինսոնը, բայց նա այնպես փոքրիկ էր և այնպես ծիծաղելի էր ճոճում ահագին մաուզերը, որ դժվար էր հավատալ, թե հենց նա է գլխավոր ուղղություն տվող ուժը։ Մինչ Մեչիկը ճգնում էր վճռել այդ հակասությունը, նորից առատորեն և շարությամբ թափվեցին գնդակները։ Թվում էր, թե դրանք մազերին, նույնիսկ ականջի ազվամազին էին քսվում։ Շղթայիկը առաջ նետվեց, մի քանի մարդ ընկան։ Մեչիկն զգաց, որ եթե նորից հարկ լինի կրակել, ինքը արդեն ոչնչով չի տարբերվի Պիկայից։

Իբրև այդ օրվա աղոտ տպավորություն, մնաց նաև Մորոզկայի կերպարանքը՝ ատամները ցցած և ծածանվող հրեղեն բաշով երիվարի վրա. այդ կերպարանքը սլացավ այնպես արագ, որ անկարելի եղավ որոշել՝ որտեղ էր վերջանում Մորոզկան և որտեղ էր սկսվում ձին։ Հետագայում նա իմացավ, որ Մորոզկան այն ձիավորների թվում էր, որոնք ջոկված էին՝ կռվի ժամանակ դասակների մեջ կապ պահպանելու համար։

Մեչիկը վերջնականապես ուշքի եկավ միայն տայգայում, լեռնային շավիղի վրա, որ բացվել էր նոր՝ անցած ձիերի

ոտնահետքերից։ Այստեղ մութ էր ու խաղաղ, և խիստ, հրամայական մայրին սքողում էր նրանց խաղաղ, մամռապատ ճյուղերով։

11

ԾԱՆՐ ԱՇԽԱՏԱՆՔ

Կռվից հետո թաքնվելով մի խուլ, ձիաձետով և ձաթխատով ծածկված ձորում, Լևինսոնը ստուգում էր ձիերը. նրա աչքն ընկավ Զյուչիխայի վրա։

— Ի՞նչ բան է սա։

— Ի՞նչ կա որ,— փնթփնթաց Մեչիկը։

— Հապա, թամբը վերցրու, ցույց տուր թիկունքը...

Մեչիկը դողդողացող մատներով թուլացրեց թամբակալը։

— Դեհ, իհարկե... թիկունքը հարվել է,— ասաց Լևինսոնն այնպիսի տոնով, կարծես ոչ մի լավ բան չէր էլ սպասում։— Թե՞ դու կարծում ես, որ ձին միայն ման գալու համար է, իսկ նրան պահել պետք չէ...

Լևինսոնն աշխատում էր ձայնը չբարձրացնել, բայց դա նրան դժվարությամբ էր հաջողվում. նա սաստիկ հոգնած էր, մորուքը ցնցվում էր և ձեռքերով ջղայնորեն տրորում էր ինչ-որ մի տեղից պոկած ճյուղը։

— Դասակի հրամանատար, եկ այստեղ... Դու էդ ինչի՞ վրա ես ուշք դարձնում...

Դասակի հրամանատարը, առանց թարթելու, աչքերը հառեց թամբին, որը, չգիտես ինչու, Մեչիկի ձեռքին էր։ Նա ասաց մռայլ և դանդաղ.

— Այս հիմարին քանի անգամ ասված է...

— Ես այդպես էլ գիտեի։— Լևինսոնը մի կողմ նետեց ճյուղը։ Նրա հայացքը, որ ուղղված էր Մեչիկին, պաղ էր ու խիստ։— Կգնաս տնտեսվարի մոտ և բեռնակիր ձի կնստես, մինչև որ բժշկես...

— Լսեցեք, ընկեր Լևինսոն...— փնթփնթաց Մեչիկը՝ ստորացումից դողացող ձայնով, որ զգում էր ոչ թե նրա համար, որ վատ էր նայել ձիուն, այլ՝ որ անշնորհք և ստորացուցիչ ձևով ձեռքին բռնել էր ծանր թամբը։— Ես մեղավոր

չեմ... Լսեցեք ինձ... սպասեցեք... Այժմ դուք կարող եք ինձ հավատալ... Ես լավ կվարվեմ նրա հետ...

Բայց Լևինսոնը, առանց ետ նայելու, անցավ դեպի հաջորդ ձին։

Շուտով պարենի պակասությունն ստիպեց նրանց դուրս գալ հարևան հովիտը։ Մի քանի օրվա ընթացքում ջոկատը դեսուդեն էր ընկնում ուլախինյան բազմաթիվ վտակներով՝ կոիվներից և տանջալի ճամփա անցնելուց տառապելով։ Զգրավված խուտորներ հետզհետե քիչ էին մնում, հացի ամեն մի կտորը, վարսակը ձեռք էր բերվում կռվով, նորից ու նորից բացվում էին վերքերը, որոնք դեռ լրիվ չէին լավացել։ Մարդիկ քարասրտում էին, դառնում ավելի լուռ, ավելի չար։

Լևինսոնը խորապես հավատում էր այն բանին, որ այդ մարդկանց շարժողը ոչ թե միայն ինքնապաշտպանության զգացումն է, այլև մի ուրիշ՝ ոչ պակաս կարևոր բնազդ, հարևանցի հայացքից ծածկված, նույնիսկ շատերի կողմից չգիտակցված, որով ամեն բան, ինչ որ նրանց պետք է լինում տանել, նույնիսկ մահը, արդարացված է իր վերջին նպատակով, և առանց որի նրանցից ոչ մեկը չէր գնա հոժարակամ մեռնելու ուլախինյան տայգայում։ Բայց նա գիտեր նույնպես, որ այդ խորունկ բնազդը մարդկանց մեջ ապրում է անչափ մանր, ամենօրյա, կենսական պահանջների և իրենց նույնպիսի փոքրիկ, բայց կենդանի անձնավորության հոգսերի ծանրության տակ, որովհետև ամեն մարդ ուտել ու քնել է ուզում, որովհետև ամեն մարդ թույլ է։ Ծանրաբեռնված ամենօրյա մանր հոգսերով, զգալով իրենց թուլությունը՝ նրանք իրենց ամենակարևոր հոգսն ասես վրստահել էին ավելի ուժեղ մարդկանց, ինչպես Լևինսոնը, Բակլանովը, Դուբովը, պարտավորեցնելով նրանց մտածել դրա մասին ավելի, քան այն բանի մասին, որ իրենք ևս պետք է ուտեն և քնեն, հանձնարարելով նրանց, որ մնացյալներին հիշեցնեն դրա մասին։

Լևինսոնը այժմ միշտ մարդկանց շրջանում էր. ինքն էր նրանց տանում կռիվ, ուտում էր նրանց հետ մի ամանից, չէր քնում գիշերներով ստուգելով պահակախմբերը, և գրեթե միակ մարդն էր, որը դեռ չէր մոռացել ծիծաղելը։ Նույնիսկ երբ խոսում էր մարդկանց հետ ամենասովորական բաների

մասին, նրա ամեն մի խոսքում լսվում էր. «Տեսնք, ես էլ տանջվում եմ ձեզ հետ, ինձ էլ կարող են վաղը սպանել, կամ էս կսատկեմ քաղցած, բայց առաջվա պես աշխույժ եմ և համառ, որովհետև այդ բոլորը այնքան էլ կարևոր չէ»...

Եվ այնուամենայնիվ... ամեն օր կտրատվում էին այն անտեսանելի թելերը, որոնք կապում էին նրան պարտիզանական սրտի հետ... Եվ որքան ավելի էին նվազում այդ թելերը, այնքան ավելի դժվար էր լինում նրան համոզելը. նա դառնում էր մի ուժ, որը ջոկատից բարձր էր կանգնած։

Սովորաբար, երբ ճաշի համար ձուկ էին խլացնում, ոչ ոք չէր ուզում պաղ ջուրը մտնել, քշում էին ավելի թույլերին, ամենից շատ՝ նախկին խոզարած Լավրուշկային՝ մի անհայտ աղգանունով, վախկոտ և կակազող մարդու։ Նա սաստիկ վախենում էր ջրից, դողալով և խաչ հանելով իջնում էր ափից, և Մեյիկը միշտ ցավով էր նայում նրա վտիտ թիկունքին՝ անհավասար, հողագույն ցցվածքներով, որ նման էր հավաքված կարտոֆիլի դաշտի։ Մի օր Լևինսոնը նկատեց դա։

— Սպասիր...— ասաց նա Լավրուշկային։— Ինչո՞ւ դու ինքդ չես մտնում,— հարցրեց ծուռ, մի կողքով կարծես դռան տակ ճմլված մի ջահելի, որը Լավրուշկային քշում էր քացիներով։

Սա իր շարֆ, սպիտակ թերթերունքներով աչքերը դարձրեց նրա վրա և անսպասելիորեն ասաց.

— Ի՞նքդ իջիր, փորձի՛ր...

— Ես չեմ մտնի,— հանգիստ պատասխանեց Լևինսոնը,— ես ուրիշ գործեր էլ շատ ունեմ, բայց դու ստիպված կլինես... Հանի՛ր, հանի՛ր վարտիքդ... Ա՛յ, արդեն ձուկը հեռանում է։

— Թող հեռանա... ինչի ես գնում...— ջահելը թիկունքը շուռ տվեց և դանդաղ հեռացավ ափից։ Մի քանի տասնյակ աչքեր հավանությամբ էին նայում նրան, իսկ Լևինսոնին այրում էին ծաղրանքով։

— Հա՜մա գլխացավանք է այդպիսի մարդկանց հետ...— ասաց Գոնչարենկոն, ինքը արձակելով շապիկը, և կանգ առավ՝ ցնցվելով հրամանատարի անսովոր բարձր կանչից.

— Ե՛տ դարձիր...— Լևինսոնի ձայնի մեջ զողանջեցին անսպասելի ուժի հզոր շեշտեր։

Եքիտասարդը կանգ առավ և, արդեն ափսոսալով, որ խառնվել էր վատ գործի մեջ, բայց չկամենալով ուրիշների առաջ ամոթով մնալ, ասաց նորից.

— Ասացի որ չեմ մտնի...

Լևինսոնը ծանր քայլերով շարժվեց դեպի նա, մատները բռնած, առանց նրանից հեռացնելու ներս ընկած և անսովոր կերպով ծակող ու փոքրացած աչքերը։ Երիտասարդը դանդաղ, ասես չկամությամբ, սկսեց արձակել վարտիքը։

— Շո՛ւտ,— ասաց Լևինսոնը մռայլ սպառնալիքով։

Երիտասարդը ծուռ նայեց նրան և հանկարծ ահ զգաց, շտապեց, վարտիքը չկարողացավ շուտ հանել և վախենալով, թե Լևինսոնը այդ պատահականությունը հաշվի չի առնի ու կսպանի իրեն, փնթփնթաց շուտասելուկի պես.

— Հիմա, հիմա... դեմ է առել... ա՛խ, սատանա՜... հիմա...հիմա...

Երբ Լևինսոնը դիտեց իր շուրջը, բոլորը նայում էին նրան հարգանքով ու վախով, բայց այդքան միայն. համակրանք չկար։ Այդ րոպեին նա զգաց իրեն ջոկատից վեր կանգնած մի ուժ։ Բայց դրան էլ պատրաստ էր. համոզված էր, որ իր ուժը շիտակ է։

Այդ օրվանից Լևինսոնն արդեն ոչ մի բան հաշվի չէր առնում, երբ պետք էր սննդամթերք ճարել և հանգստի մի ավելորդ օր ստեղծել։ Նա խլում էր կովերը, հավաքում էր գյուղացիների դաշտերի և բանջարանոցների բերքը, բայց նույնիսկ Մորոզկան տեսնում էր, որ դա բոլորովին նման չէ Ռյաբեցի բոստանից սեխեր գողանալուն։

Երբ անցան Ուդեգինյան լեռնապարը՝ կտրելով շատ վերստերի ճանապարհ, որի ժամանակ ջոկատը սնվում էր միայն խաղողով և կրակի վրա խաշած սունկերով, Լևինսոնը դուրս եկավ Տիգրովայա ձորը, դեպի կորեական մենավոր տնակը, Իրոխեձայի գետաբերանից քսան վերստ հեռավորության վրա։ Նրանց դիմավորեց վիթխարի, իր ոտնամանների պես փոչոտ, առանց գդակի մի մարդ, ժանգոտ ատրճանակը գոտու տակ։ Լևինսոնը ճանաչեց դաուբիխինյան սպիրտատար Ստիրկշային։

— Ահա, Լևինսո՜նը...— ողջունեց Ստիրկշան անբուժելի մրսածությունից խռպոտած ձայնով։ Փարթամ բուսականության միջից, սովորական դառն ժպիտով նայում էին նրա

այքերը։— Կենդանի՞ ես դեռ։ Լավ է... Իսկ այստեղ քեզ փնտրում են։

— Ո՞վ է փնտրում։

— Ճապոնացիները, կուլակները... էլ ո՞ւմ ես դու պետք։

— Գուցե չգտնեն... Մեզ համար ուտելիք կճարվի՞ այստեղ։

— Գուցե և գտնեն,— խորհրդավոր ասաց Ստիրկշան։— Նրանք էլ հիմարներ չեն՝ գլուխդ գին ունի... Ա՛յ, ժողովներում հրաման են կարդում. կենդանի կամ մեռած բռնողին՝ պարգև։

— Օհո՜... Եվ շա՞տ են վճարում...

— Հինգ հարյուր ռուբլի սիբիրական փողերով։

— Էժան է,— ծիծաղեց Լևինսոնը։— Ուտելու բան, ասում եմ, կճարե՞նք։

— Էլ ինչ կուզեի՜ր... ինքը կորեացին ցամաք չումիզա է ուտում։ Մի տասը փթանոց խոզ ունեն, վրան աղոթք են անում՝ ամբողջ ձմեռվա միս է։

Լևինսոնը գնաց տիրոջը գտնելու։ Դողդոջուն, ալևոր կորեացին, ճմրթված թաղիքե գլխարկով, առաջին իսկ խոսքերից սկսեց աղերսել, որ իր խոզին չդիպչեն։ Լևինսոնը, զգալով իր թիկունքին հարյուր հիսուն քաղցած բերան և խղճալով կորեացուն, փորձում էր ապացուցել նրան, որ այլ կերպ վարվել չի կարող։ Կորեացին, չհասկանալով, շարունակում էր աղերսագին ձեռքերը խաչել և կրկնում էր.

— Պետք չէ կուշի-կուշի* անել... Պետք չէ...

— Խփեք, միևնույնն է,— ձեռքով արավ Լևինսոնը և կնճռոտվեց, կարծես իր վրա պետք է կրակեին։

Կորեացին էլ կնճռոտվեց և լաց եղավ։

Հանկարծ նա ընկավ ծնկների վրա և, մորուքը խոտերին քսելով, սկսեց համբուրել Լևինսոնի ոտքը, բայց սա նույնիսկ չբարձրացրեց նրան. վախենում էր, որ այդ բանը անելով՝ չի դիմանա և կփոխի հրամանը։

Մեչիկը տեսավ այդ ամենը, և նրա սիրտը սեղմվեց։ Նա փախավ տնակի ետևը և դեմքը թաղեց ծղոտի մեջ, բայց նույնիսկ այստեղ նրա աչքերի առաջ կանգնած էր ծերունու արցունքոտված դեմքը, նրա սպիտակ շորերով փոքրիկ կերպարանքը, որ կծկվում էր Լևինսոնի ոտքերի առաջ։ «Մի՞թե առանց դրան չի կարելի», տենդորեն խորհում էր Մեչիկը, ու նրա առաջ երկար շարքով լողում էին խոնարհ և ասես ընկնող դեմքերն այն գեղջուկների, որոնցից նույնպես խլել էին վերջինը։ «Ո՛չ, ո՛չ, դա դաժանություն է, դա չափազանց մեծ դաժանություն է», նորից մտածում էր նա և ավելի խոր թաղվում ծղոտի մեջ։

Մեչիկը գիտեր, որ ինքը երբեք այդպես չէր վարվի կորեացու հետ, բայց խոզի միսը կերավ բոլորի հետ միասին, որովհետև սոված էր։

Վաղ առավոտյան Լևինսոնին կտրեցին լեռներից, և երկու ժամ տևող կռվից հետո, կորցնելով գրեթե երեսուն մարդ, նա ճեղքեց, դուրս եկավ Իրոխեձայի հովիտը։ Կուլակի ձիավոր զորքը կրնկակոխ հետապնդում էր նրան. նա ձգեց բոլոր բեռնակիր ձիերը և միայն կեսօրին գտավ հիվանդանոց տանող ծանոթ շավիղը։

Այստեղ նա զգաց, որ ձիու վրա հազիվ է նստած։ Սիրտը աներևակայելի լարումից հետո խփում է դանդա՜ղ-դանդաղ, թվում էր, թե ահա ուր որ է կանգ կառնի։ Նա քնել էր ուզում, գլուխը խոնարհեց և մեկեն լողաց թամբի վրա՝ ամեն ինչ դարձավ հասարակ և անկարևոր։ Հանկարծ նա ցնցվեց ինչ-որ ներքին հարվածից և նայեց շուրջը... Ոչ ոք չէր նկատել նրա քնելը։ Բոլորը տեսնում էին իրենց առաջ նրա սովորական, քիչ թեքված թիկունքը։ Իսկ կարո՞ղ էր միթե մեկը մտածել, որ նա հոգնած է, ինչպես բոլորը, և քնել է ուզում... «Այդքան ուժ կունենա՞մ ես»,— մտածեց Լևինսոնը, և դա այնպես դուրս եկավ, որ կարծես ոչ թե ինքն էր հարցնում, այլ մեկ ուրիշը։ Լևինսոնը ցնցեց գլուխը և ծնկներում մանր, անախորժ մի դող զգաց։

— Դե ահա... շուտով կնկանդ էլ կտեսնես,— ասաց Դուբովը Մորոզկային, երբ նրանք մոտենում էին հիվանդանոցին։

Մորոզկան լուռ մնաց։ Նա գտնում էր, որ դա վերջացած բան է, թեև ամեն օր ուզում էր տեսնել Վարյային։ Իրեն խաբելով՝ նա իր ցանկությունը համարում էր կողմնակի դիտողի բնական հետաքրքրություն. «Ինչպե՞ս կլինի նրանց տեսակցությունը»։

Բայց երբ տեսավ նրան,— Վարյան, Ստաշինսկին և Խարչենկոն կանգնած էին բարաքի մոտ՝ ծիծաղելով և ձեռքերը

* Կուշի — ռուսերեն Кушать (ուտել) բառից։

մեկնելով,— նրա մեջ ամեն ինչ տակնուվրա եղավ։ Առանց ժամանակ կորցնելու՝ նա ջոկատի հետ միասին գնաց թիկունների տակ և երկար ժամանակ զբաղվեց երիվարով. թամբակալներն էր թուլացնում։

Վարյան, փնտրելով Մեչիկին, արագ պատասխանում էր ողջույններին, բոլորին ժպտալով շփոթված ու ցրված։ Մեչիկը հանդիպեց նրա աչքերին, գլխով արավ և, կարմրելով, գլուխը կախեց. նա վախենում էր, թե Վարյան իսկույն կվազի իր մոտ, և բոլորը գլխի կընկնեն, որ այդ տեղ մի բան կա։ Իսկ Վարյան, ներքին խոհեմությունից դրդված, ցույց չտվեց, թե նրա համար ուրախ է։

Նա արագ կապեց Զյուչիխային և փախավ թավուտը։ Մի քանի քայլ անցած՝ հանդիպեց Պիկային։ Սա պառկած էր իր ձիու մոտ. նրա հայացքը, կենտրոնացած իր մեջ, խոնավ էր ու դատարկ։

— Նստի՛ր...— ասաց հոգնած։

Մեչիկը նստեց նրա կողքին։

— Ո՞ւր պիտի գնանք հիմա...

Մեչիկը չպատասխանեց։

— Ես հիմա ձուկ կբռնեի...— մտածկոտ ասաց Պիկան։— Մեղվանոցում... Ձուկը հիմա ցած է գնում... Ջրվեժ կշինեի և կորսայի... միայն հավաքիր...— Նա մի քիչ լռեց և ախուր ավելացրեց.— Բայց չէ՞ որ մեղվանոց չկա... չկա։ Ապա թե ոչ, լավ կլիներ... Խաղաղ է այնտեղ, մեղուն էլ հիմա խաղաղ է...

Հանկարծ նա բարձրացավ արմունկի վրա և, դիպչելով Մեչիկին, խոսեց թախծից ու ցավից դողացող ձայնով.

— Լսիր, Պավլուշա...— լսիր, տղաս, Պավլո՛ւշա... դեհ, մի՞թե չկա այնպիսի մի տեղ, չկա, հա՞... Բա ո՞նց պիտի ապրենք, ինչպե՞ս պիտի ապրենք, տղաս, Պավլուշա... Ախր ես ոչ ոք չունեմ... մենա՛կ եմ... մենա՛կ... ծեր... շուտով պիտի մեռնեմ...— Խոսքեր չգտնելով՝ նա անզոր կուլ էր տալիս օդը և ազատ ձեռքով բռնում խոտերից։

Մեչիկը նրան չէր նայում, նույնիսկ չէր լսում, բայց ամեն մի խոսքի հետ մի բան մեղմորեն ցնցվում էր նրա մեջ, ասես մեկի մատները պոկում էին հոգում դեռ կենդանի ճյուղից արդեն դեղնած տերևները։ «Այդ բոլորը վերջացավ և էլ երբեք չի վերադառնա...»— մտածում էր Մեչիկը և ափսոսում իր թոշնած տերևները։

— Գնամ քնելու...— ասաց Պիկային, որպեսզի մի կերպ ազատվի։— Հոգնած եմ...

Նա անցավ թավուտի խորքը, պառկեց թփի տակ և թաղվեց խոռվահույզ նիրհի մեջ... Զարթնեց հանկարծակի, ասես հարվածից։ Սիրտը զարկում էր անհավասար, շապիկը կպել էր քրտնած մարմնին։ Թփի ետևում խոսում էին երկու մարդ։ Մեչիկը ճանաչեց Ստաշինսկուն և Լևինսոնին։ Նա զգուշությամբ իրարից հեռացրեց ճյուղերը և նայեց։

— ...Միևնույն է,— մռայլ ձայնով ասում էր Լևինսոնը,— այս շրջանում ավելի երկար դիմանալ անհնարին է։ Միակ ճանապարհը դեպի հյուսիս է, դեպի Տուգո-Վակայի հովիտը...— Նա բացեց դաշտային պայուսակը և հանեց քարտեզը։— Ահա՛... Այստեղ կարելի է անցնել լեռնապարերով, կիջնենք Խաունիխեձեով։ Ճիշտ է, հեռու է, բայց ինչ պիտի անես։

Ստաշինսկին նայում էր ոչ թե քարտեզին, այլ տայգայի խորքը, մի կետի, կարծես կշռելով մարդկային քրտինքով ոռոգված ամեն մի վերստը։ Հանկարծ նա արագ կկոցեց աչքերը և նայեց Լևինսոնին.

— Իսկ Ֆրոլո՞վը... նորից մոռանում ես...

— Այո, Ֆրոլովը...— Լևինսոնը դանդաղ նստեց խոտերի վրա։ Մեչիկը ուղիղ իր առջև տեսավ նրա դժգույն կիսադեմքը։

— Իհարկե, ես կարող եմ մնալ նրա հետ...— խուլ ձայնով ասաց Ստաշինսկին կարճ լռությունից հետո։— Իսկապես, դա իմ պարտականությունն է...

— Դատարկ բան է։— Լևինսոնը ձեռքով արավ։— Ոչ ուշ, քան վաղը ճապոնացիները թարմ հետքերով այստեղ կգան... Թե՞ քո պարտականությունը սպանվելն է։

— Ուրեմն ի՞նչ անենք այդ դեպքում։

— Չգիտեմ...

Մեչիկը երբեք Լևինսոնի դեմքին այդպիսի անօգնական արտահայտություն չէր տեսել։

— Կարծեմ, մնում է միակը... ես արդեն մտածել եմ դրա մասին...— Լևինսոնը կարկամեց ու լռեց, խստորեն սեղմելով ծնոտները։

— Հա՞...— սպասողական հարցրեց Ստաշինսկին։

Մեչիկը, վատ բան զգալով, ավելի առաջ ձգվեց՝ հաղիվ չմատնելով իր ներկայությունը։

Լևինսոնն ուզում էր մի խոսքով անվանել այն միակ բանը, որ նրանց մնում էր անելու, բայց նրանք այդ խոսքը այնքան դժվար էր, որ նա չէր կարողանում արտասանել։ Ստաշինսկին նայեց նրան վախով ու զարմանքով և... հասկացավ։

Ճառանց իրար նայելու, դողդողալով ու կմկմալով և դրանից տանջվելով, նրանք սկսեցին խոսել այն մասին, որն արդեն հասկանալի էր երկուսին էլ, բայց որը նրանք չէին համարձակվում ասել, թեև դա կարող էր միանգամից արտահայտել բոլորը և վերջ դնել նրանց տառապանքներին։

«Ուզում են ազատել նրան»...— գլխի ընկավ Մեչիկը և գունատվեց։ Նրա սիրտը բաբախեց այնպիսի ուժով, որ թվում էր՝ թփերից դեռն էլ հիմա կլսեն նրան։

— Իսկ ինչպե՞ս է նա, վա՞տ է, շա՞տ...— մի քանի անգամ հարցրեց Լևինսոնը։— Եթե դա չլիներ... Դե՛հ... եթե նրան ոչ մենք... մի խոսքով, առաջնորդու գնի՞ որևէ հույս ո՞նի նա։

— Ոչ մի հույս... բայց մի՞թե բանն այդ է։

— Ինչպես էլ լինի՝ կարծես ավելի հեշտ է,— խոստովանեց Լևինսոնը։ Նա իսկույն ամաչեց, որ խաբում է իրեն, բայց և իսկապես թեթևություն զգաց։ Մի քիչ լռելուց հետո նա կամացուկ ասաց։— Հարկ կլինի այդ բանն անել հենց այսօր... միայն տես, որ ոչ ոք գլխի չընկնի, իսկ գլխավորը, նա ինքը... կարելի՞ է այդպես...

— Նա գլխի չի ընկնի... ջուտով նրան բրոմ պետք է տալ. ա՛յ, բրոմի փոխարեն... բայց գուցե հետաձգենք վաղվա՞ն, հա՞...

— Ինչո՞ւ ձգձգել... միևնույն է...— Լևինսոնը պահեց քարտեզը և վեր կացավ։— Չէ՞ որ պետք է, ոչինչ չի կարելի անել...— նա ակամա փնտրում էր օգնություն այն մարդուց, որին ինքն էր ուզում օգնել։

«Այո, պետք է...»— մտածեց Ստաշինսկին, բայց չասաց։

— Լսիր,— դանդաղ սկսեց Լևինսոնը,— դու շիտակն ասա, պատրաստ ես արդյոք։ Լավ է շիտա՛կ ասա...

— Պատրաստ եմ արդյոք,— ասաց Ստաշինսկին։— Այո՛, պատրաստ եմ։

— Դնանք,— Լևինսոնը քաշեց նրա թևից, և երկուսով էլ դանդաղ գնացին դեպի բարաք։

«Մի՞թե նրանք այդ բանը կանեն...» Մեչիկը երևնիմար ընկավ գետնին և դեմքը թաղեց ափերի մեջ։ Նա այդպես պառկած մնաց, հայտնի չէ, թե որքան ժամանակ։ Հետո վեր կացավ և, թփերին դիպչելով, երերալով, ինչպես վիրավորված, գնաց Ստաշինսկու և Լևինսոնի ետևից։

Հոգացած, թաքբերից ազատված ձիերը նրա կողմն էին դարձնում իրենց հոգնած գլուխները, պարտիզանները խորմփում էին անտառի բացատում, մի քանիսը ճաշ էին եփում։ Մեչիկը փնտրեց Ստաշինսկուն և, նրան չգտնելով, գրեթե վազեց դեպի բարաքը։

Նա հառաչ հենց ժամանակին։ Ստաշինսկին, թիկունքը Ֆրոլովին դարձրած, դողացող ձեռքերը լույսի կողմը մեկնած ինչ-որ բան էր ածում հեղուկաչափի մեջ։

— Սպասեցե՛ք... ի՞նչ եք անում...— բղավեց Մեչիկը՝ նետվելով նրա կողմը սարսափից լայնացած բիբերով։— Սպասեցե՛ք։ Ես բոլորը լսեցի։

Ստաշինսկին, ցնցվելով, շուռ տվեց գլուխը. նրա ձեռքերը դողացին ավելի սաստիկ... Հանկարծ նա քայլեց դեպի Մեչիկը, և սոսկալի մուգ-կարմիր երակն ուռեց նրա ճակատի վրա։

— Դո՛ւրս...— ասաց նա չարագուշակ, խեղդված շշուկով։— Կսպանեմ...

Մեչիկը ճչաց և, ինքն իրեն մոռացած, բարաքից դուրս թռավ։ Ստաշինսկին իսկույն սթափվեց և դարձավ Ֆրոլովի կողմը։

— Ի՞նչ... ի՞նչ է այդ...— հարցրեց սա, վախվորած՝ ժուռ նայելով հեղուկաչափին։

— Սա բրոմ է, խմիր...— պնդելով, խստիվ ասաց Ստաշինսկին։

Նրանց հայացքները միմյանց հանդիպեցին և, իրար հասկանալով, պաղեցին... «Վերջ...» մտածեց Ֆրոլովը և ինչ-որ չզարմացավ. չզգաց ոչ վախ, ոչ հուզմունք, ոչ դառնություն։ Ամեն ինչ դուրս եկավ այնպես պարզ ու թեթև, և նույնիսկ

տարօրինակ էր, թե ինչու նա այնքան տանջվել էր, այնպես համառորեն կառչել կյանքից և վախեցել մահից, եթե կյանքը խոստանում էր նրան նոր տանջանքներ, իսկ մահը՝ միայն փրկություն։ Նա անվճռականության մեջ աչքերը դարձրեց չորս կողմը, ասես մի բան էր փնտրում, և կանգ առավ ձեռք չտված ճաշի վրա, իր մոտ, նստարանին։ Դա կաթի կիսել էր, արդեն պաղած, և ճանճերը թռչում էին նրա վրա։ Հիվանդության ընթացքում առաջին անգամ Ֆրոլովի աչքերում երևաց մարդկային արտահայտություն՝ խղճահարություն դեպի ինքը, գուցե և դեպի Ստաշինսկին։ Նա թերթերունքները վայր իջեցրեց, և երբ նորից բարձրացրեց, նրա դեմքը խաղաղ էր ու հեզ։

— Թե պատահի՝ լինես Սուչանի ափին,— ասաց նա դանդաղ,— հայտնիր, որ էնտեղ շատ... չվշտանան... Բոլորը էնտեղ պիտի գան... հա՞... Բոլորը պիտի գան,— կրկնեց նա այնպիսի արտահայտությամբ, ասես մարդկանց մահվան անխուսափելիության միտքը դեռ նրա համար բոլորովին պարզ ու ապացուցված չէր, բայց դա հենց այն միտքն էր, որ զրկում էր իր՝ Ֆրոլովի անձնական մահը նրա առանձին, ջոկ, սոսկալի մտքից և դարձնում էր այդ մահը մի սովորական բան բոլոր մարդկանց հատուկ։ Մի քիչ մտածելուց հետո նա ասաց.— Էնտեղ մի տղա ունեմ... հանքում... անունը Ֆեդյա... Թող նրա մասին հիշեն, երբ ամեն ինչ փոխվի՝ օգնեն մի բանով, կամ թե... Դե տուր...— կարեց նա հանկարծ՝ մեկեն խոնավացած և ցնցվող ձայնով։

Փռելով դժգունած շրթունքները դողալով աչքերը թարթելով՝ Ստաշինսկին մոտեցրեց նրան հեղուկաչափը։ Ֆրոլովը բռնեց այն երկու ձեռքով և խմեց...

Մեչիկը, կպչելով ցախերին ընկնելով, վազում էր տայգայով, առանց ճանապարհը որոշելու։ Նա կորցրել էր գլխարկը, մազերը կախվել էին աչքերին, զզվելի և կպչուն, ինչպես սարդոստայնը, քունքերը տրոփում էին, և արյան ամեն մի հարվածի հետ նա կրկնում էր ինչ-որ անպետք ողորմելի խոսք, կառչելով նրանից, որովհետև է՛լ կառչելու բան չկար։ Հանկարծ նա իր առաջ տեսավ Վարյային և ետ ցատկեց՝ աչքերը կատաղի փայլեցնելով։

— Ես էլ քեզ եմ փնտրում...— սկսեց Վարյան ուրախացած և լռեց՝ նրա անմիտ տեսքից վախեցած։

Մեչիկը բռնեց նրա ձեռքը, խոսեց արագ, անկապ.

— Լսիր... նրանք նրան թունավորեցին... Ֆրոլովին... գիտե՞ս... Նրանք նրան...

— Ի՞նչ... թունավորեցի՞ն... լռի՛ր...— բղավեց նա՝ հանկարծ բոլորը մեկեն հասկանալով։ Եվ, տիրաբար քաշելով նրան դեպի ինքը, փակեց նրա բերանը տաք, խոնավ ափով։— Լռի՛ր... պետք չէ... Գնանք այստեղից...

— Ո՞ւր... ա՜խ, թող...— նա թափով ետ մղվեց և հրեց Վարյային, ատամները կրճտացնելով։

Վարյան նորից բռնեց նրա թևից և իր ետևից քաշեց, համառորեն կրկնելով.

— Պետք չէ... գնանք այստեղից... կտեսնեն... այստեղ մի ջահել... ման է գալիս անդադար... շո՞ւտ գնանք...

Մեչիկը էլի մի անգամ ազատվեց նրա ձեռքերից, հազիվ չհարվածելով նրան։

— Ո՞ւր... կա՛ց...— կանչեց Վարյան՝ նետվելով նրա ետևից։

Այդ ժամանակ թփերից դուրս թռավ Չիժը. Վարյան նետվեց մի կողմ և, առվի վրայից ցատկելով, թաքնվեց լաստենիների մեջ։

— Ի՞նչ է՝ չտրվե՞ց,— արագ հարցրեց Չիժը՝ Մեչիկի մոտ վազելով։— Հապա՝ գուցե ինձ հաջողվի...— նա ափը զարկեց ազդրին և վազեց Վարյայի ետևից...

12

ՈՒՂԻՆԵՐ—ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Մորոզկան մանկությունից ընտելացել էր այն բանին, որ Մեչիկի պես մարդիկ իրենց իսկական զգացմունքները,— նույնպես հասարակ և մանր, ինչպես Մորոզկայինը,— ծածկում են խոշոր ու գեղեցիկ խոսքերով և դրանով իրենց անջրպետում են այն մարդկանցից, որոնք, Մորոզկայի պես, չգիտեն զարդարել իրենց զգացմունքները բավականաչափ գեղեցիկ կերպով։ Նա չէր գիտակցում, որ բանը հենց այդպես է, և դա չէր կարող արտահայտել իր խոսքերով, բայց միշտ զգում էր իր և այդ մարդկանց միջև անանցանելի մի

պատ, նրանց՝ ով գիտե, թե որտեղից բերած ու դիզած կեղծ, գունազարդված խոսքերից ու վարմունքներից։

Այդպես, Մորոզկայի և Մեչիկի հայտնի ընդհարման ժամանակ վերջինս աշխատում էր ցույց տալ, որ դիջում է Մորոզկային՝ իր կյանքը փրկելու երախտագիտությունից։ Այն միտքը, որ նա ճնշում է իր մեջ ստոր ցանկությունները նույնիսկ դրան անարժան մի մարդու համար, լցնում էր նրա էությունն ախորժելի և համբերող տխրությամբ։ Սակայն հոգու խորքում նա բարկանում էր և՛ իր, և՛ Մորոզկայի վրա, որովհետև խկատպես նա Մորոզկային ամեն տեսակ շարիք էր կամենում, միայն թե ինքը չէր կարողանում շարիք հասցրնել նրան՝ վախկոտությունից և այն պատճառով,որ համբերող տխրության զգացողությունը շատ ավելի գեղեցիկ էր ու հաճելի։

Մորոզկան զգում էր, որ հենց այդ գեղեցկության համար, որը չկա իր՝ Մորոզկայի մեջ, Վարյան գերադասել էր Մեչիկին, գտնելով, որ Մեչիկի մեջ դա ոչ թե միայն արտաքին սիրունություն է, այլ իսկական հոգեկան գեղեցկություն։ Ահա թե ինչու, երբ Մորոզկան նորից տեսավ Վարյային, ակամա ընկավ մոքերի նախկին անելանելի շրջանը՝ Վարյայի, ի՛ր և Մեչիկի մասին։

Նա տեսնում էր, որ Վարյան շարունակ ուր-որ կորչում է («Ինչուշտ՝ Մեչիկի՞ հետ»), և երկար ժամանակ չէր կարողանում քնել, թեև աշխատում էր հավատացնել իրեն, որ իր համար մեկ է։ Ամեն մի շրշյունից նա զգուշությամբ բարձրացնում էր գլուխը, նայում մթության մեջ՝ չե՞ն երևալ արդյոք, նրանց խղճալի կերպով զողտուկ մոտեցող կերպարանքները։

Մի անգամ նրան զարթնեցրեց մի շփոթ։ Խարույկի մեջ թշշում էին թաց ցախերը, և ահագին ստվերները պարում էին անտառի բացատում։ Թարաքի լուսամուտները մերթ լուսավորվում էին, մերթ մթնում. մեկը լուցկի էր վառում։ Հետո բարարից դուրս եկավ Խարչենկոն, խոսքեր փոխանակեց մթնում չերևացող մեկի հետ և գնաց խարույկների միջով՝ փնտրելով ինչ-որ մեկին։

— Ո՞ւմ ես փնտրում,— խռպոտ ձայնով հարցրեց Մորոզկան։ Պատասխանը չլսելով՝ նորից հարցրեց.— Ի՞նչ։

— Ֆրոլովը մեռավ,— խուլ ձայնով ասաց Խարչենկոն։

Մորոզկան ավելի պինդ փաթաթվեց վերարկուով և նորից քնեց։

Արշալույսին Ֆրոլովին թաղեցին, և Մորոզկան ուրիշների թվում հանգիստ սրտով փորեց նրա գերեզմանը։

Երբ ձիերը թամբում էին, հայտնի դարձավ, որ Պիկան կորել է։ Նրա փոքրիկ, սապատաքիթ ձին վհատ կանգնած էր ծառի տակ, ամբողջ գիշեր թամբը վրան։ Նրա տեսքը շատ խղճալի էր։ «Փախավ, ծեր էր, չդիմացավ»,— մտածեց Մորոզկան։

— Դե լավ, մի՛ փնտրեք,— ասաց Լևինսոնը, կնճռոտվելով կողքի ցավից, որն առավոտվանից տանջում էր նրան։— Ձին մի՛ մոռանաք... Ոչ, ոչ, մի՛ բռնեք նրան... Ո՞ւր է տընտեսավարը։ Պատրա՞ստ է... Հեծի՛ր...— նա խոր հառաչեց և, նորից կնճռոտվելով, դժվարությամբ,— ասես իր մեջ կրում էր մի մեծ և ծանր բան, որից ինքը ևս մեծացել և ծանրացել էր,— բարձրացավ թամբին։

Ոչ ոք չափսոսաց Պիկայի համար։ Միայն Մեչիկը ցավով զգաց կորուստը։ Թեև վերջին ժամանակները ծերունին թախծից և նվնվան հիշողություններից զատ էլ ոչինչ չէր զարթնեցնում նրա մեջ, այնուամենայնիվ, այնպիսի զգացում մնաց, ասես Պիկայի հետ գնաց իր՝ Մեչիկի մի մասը։

Ջոկատը շարժվեց սեպ, այծերի արածած բարձունքով դեպի վեր։ Նրանց վերևում փռված էր գորշ-կապտավուն երկինքը։ Հեռու ներքևում կարծես երևում էին կապույտ ձորերը, և ոտքերի տակից ծանր քարերը ալմուկով գլորվում էին այնտեղ։

Նրանց գրկեց ոսկեներև, չորախոտ տայգան՝ աշնանային սպասող լռության մեջ։ Ճյուղաշատ դեղին ժանյակում ալեմորուս եղջերուն ասես բուրդն էր տալիս, աղբյուրները երգում էին, ցողը խմում էր ամբողջ օրը՝ հստակ ու վճիտ և նույնպես դեղին սաղարթներից։ Իսկ գաղանը մոնչում էր ամբողջ օրը՝ անհանգիստ, կրքոտ, անտանելի, և տայգայի ոսկե թոշնումի մեջ մի մեծ, միշտ կենդանի մարմնի հզոր շունչն էր զգացվում։

Առաջին մարդը, որ զգաց Մորոզկայի և Վարյայի՝ անհամերաշխությունը, բանբեր Եֆիմկան էր, որը կեսօրվա

հանգիստ քնից առաջ ուղարկված էր Կուբրակի մոտ հետևյալ կարգադրությամբ. «Քաշել պոչը, որպեսզի մեկնումեկը չկծի»։

Եֆիմկան դժվարությամբ անցավ շղթայի երկարությամբ, վարտիքը պատառոտեցին ծակող թփերը. նա վեճի բռնվեց Կուբրակի հետ, դասակի հրամանատարը խորհուրդ տվեց նրան չանհանգստանալ ուրիշի պոչի համար, այլ ավելի լավ պահպանել իր «ծաղկատար քիթը»։ Ի միջի այլոց, Եֆիմկան նկատեց, որ Մորոզկան և Վարյան իրարից փախչում են, և որ երեկ էլ նրանք միասին չերևացին։

Վերադարձին նա, հավասարվելով Մորոզկային հարցրեց.

— Ի՞նչ բան է. տեսնում եմ, որ կնոջիցդ փախչում ես, մ՞նչ ունեք բաժանելու։

Մորոզկան շփոթված ու բարկացած նայելով նրա չոր, մաղձոտ դեմքին, ասաց.

— Ինչ ունենք բաժանելո՞ւ։ Բաժանելու բան չունենք։ Ես նրան թողի։

— Թողի՞ր...— Եֆիմկան մի քանի րոպե լուռ ու մռայլ նայում էր մի կողմի, ասես խորհում էր, թե արդյոք հարմա՞ր է այդ խոսքը հիմա, եթե Մորոզկայի և Վարյայի նախկին հարաբերությունները նույնպես չեն ունեցել ընտանեկան հաստատուն կապ։

— Է՜հ, ինչ կա որ, այդպես էլ է լինում,— ասաց նա վերջապես,— այսինքն, ասում եմ՝ ում ինչպես կհաջողվի... Նո՜-ո, մատակիկ...— Նա սաստիկ մտրակեց ձիուկին, և Մորոզկան, աչքերով հետևելով նրա մահուդե շապիկին, տեսավ, թե ինչպես Եֆիմկան ինչ-որ բան զեկուցեց Լևինսոնին, հետո գնաց նրա կողքով...

«Է՜հ, սա էլ կյանք է... դե-ե՜...»— մտածեց Մորոզկան ծայրաստիճան հուսահատությամբ և խիստ տխրեց, որ ինքը շղթայված է ու չի կարողանում նույնիսկ անհոգությամբ անցուդարձ անել շղթայի երկարությամբ կամ խոսել դրացու հետ։ «Նրանք լավ են՝ գնում են իրենց համար և էլ ոչինչ,— մտածեց նա նախանձով։— Իսկապես, ինչի համար նրանք պետք է հոգս քաշեն։ Դիցուք Լևինսոնը... Իշխանություն ունեցող մարդ, ամեն մեկը դիմում է նրան պատվով՝ ինչ ուզում եմ, այն էլ անում եմ... Կարելի է ապրել»։

Եվ չենթադրելով, որ Լևինսոնի մրսեցրած կողքը ցավում է որ Լևինսոնն իր մեջ կրում է պատասխանատվություն Ֆրոլովի մահվան համար, որ նրա գլուխը գնահատված է և բոլորից շուտ կարող է բաժանվել մարմնից, Մորոզկան մտածում էր այն մասին, թե էլի՛ ինչպիսի առողջ, հանգիստ և ապահովված մարդիկ են ապրում աշխարհիս վրա, և թե ինչպես ինքը բոլորովին հաջողություն չունի կյանքում։

Բոլոր այն խճճված, ձանձրացնող մտքերը, որոնք առաջին անգամ ծագեցին նրա գլխում, երբ նա հուլիսյան մի տոթ օր վերադառնում էր հիվանդանոցից, և գանգրահեր հնձվորները հիանում էին նրա՝ հեծյալի վստահ նստվածքով,— այն մտքերը, որոնք մի առանձին ուժով տիրեցին նրան, երբ նա գնում էր ամայացած դաշտով, Մեչիկի հետ ունեցած վեճից հետո, և երբ մենավոր, անապաստան ագռավը նստած էր խոտի ծռված դեզի վրա,— բոլոր այդ մտքերն այժմ ստացան մի անասելի, տանջալից պայծառություն և սրբություն։ Մորոզկան իր նախկին կյանքում իրեն խաբված էր զգում և նորից տեսնում էր շուրջը միայն սուտ ու խաբեություն։ Նա այլևս չէր կասկածում, որ ամբողջ իր կյանքը, խանձարուրից սկսած, ամբողջ այդ ծանր, անմիտ քեֆն ու աշխատանքը, արյունն ու քրտինքը, որ թափել էր ինքը, և նույնիսկ նրա ողջ «անհոգ» հանդգնությունը ուրախություն չէ՛ր, ո՛չ, այլ մի անթափանցելի, տաժանելի արխատանք, որը ոչ ոք չէր գնահատել և չի գնահատի։

Նա իրեն անծանոթ՝ տխուր, հոգնած, գրեթե ծերունական չարությամբ մտածում էր, որ ինքն արդեն քսանյոթ տարեկան է, և ապրածից ոչ մի րոպե չի կարելի ետ դարձնել, որպեսզի ա՛յլ կերպ ապրի, իսկ առջևում նույնպես ոչ մի լավ բան չի երևում, և նա, գուցե, շատ շուտով կկորչի գնդակից, բոլորի համար էլ անպետք, ինչպես մեռավ Ֆրոլովը, որին ոչ ոք չափսոսաց։ Մորոզկային այժմ թվում էր, որ ինքը ամբողջ կյանքում աշխատել էր ընկնել իրեն ուղիղ, պարզ և կանոնավոր թվացող ճանապարհի վրա, որով գնում էին Լևինսոնի, Բակլանովի, Դուբովի պես մարդիկ (և նույնիսկ Եֆիմկան, թվում էր, նույն ճամփով էր գնում հիմա), բայց մեկը համառորեն խանգարում էր նրան այդ բանում։ Եվ որովհետև նա երբեք չէր կարող կարծել, թե այդ թշնամին նստած է հենց

իր մեջ, նրա համար առանձնապես հաճելի էր ու դառն մտածել, որ ինքը տանջվում է մարդկանց ստորության պատճառով, այնպիսի մարդկանց, ինչպես Մեչիկը՝ ամենից առաջ։

Ճաշից հետո, երբ նա աղբյուրի մոտ ջրում էր իր հովատակը, նրան մոտեցավ խորհրդավոր դեմքով հենց այն աշխույժ, դանդրահեր ջահելը, որը մի ժամանակ գողացել էր նրա թիթեղե ամանը։

— Ի՞նչ պիտի ասեմ քեզ, ի՞նչ պիտի ասեմ...— փընթփընթաց նա շուտասելուկի ձևով։— Ա՛յ, խոցիր նրան սըմբակից, սմբակից, ճշմարիտ խոսք, Վարկային, Վարկային... Իմ հոտառությունը, ախպեր, այդ բանի մեջ սուտ է...

— Ի՞նչ... ի՞նչ բանի մեջ,— կոպիտ հարցրեց Մորոզկան՝ պլուխը բարձրացնելով։

— Կնիկների գործում, կնիկներին ես լավ եմ հասկանում,— բացատրեց ջահելը՝ մի քիչ շփոթվելով։— Թեև դեռ ոչինչ չկա, ոչինչ չկա, բայց ինձ, ախպեր, չես խաբի, ոչ, ախպեր, չես խաբի... Աչքերով Վարկան նրա ետևից ո՞նց է վազվզում, ո՞նց է վազվզում։

— Իսկ նա՝ ինչպես,— զրգռված, կարմրելով հարցրեց Մորոզկան, հասկանալով, որ խոսքը Մեչիկի մասին է, և մոռանալով, որ ինքը պետք է ձևացնի, իբրև թե ոչինչ չգիտի։

— Իսկ նրան ի՞նչ։ Ոչինչ...— ասաց ջահելը ոչ անկեղծ, շրջահայաց ձայնով. ասես այն ամենը, ինչ որ նա ասում էր, ըստ էության կարևոր չէր, բայց իրեն պետք էր եղել նրա համար, որպեսզի իր հին մեղքերը քավի Մորոզկայի առաջ։

— Դեհ, նրանց հերն էլ անիծած, իմ ի՞նչ գործն է...— Մորոզկան փնչաց։— Երևի դու էլ ես նրա հետ պառկել, ես ի՞նչ գիտեմ,— ավելացրեց նա արհամարհանքով և վիրավորանքով։

— Այ քեզ բա՜ն... Չէ՞ որ ես...

— Գնա,գնա, քո հերն էլ անիծած,— հանկարծ զրգռվելով՝ բղավեց Մորոզկան։— Ի՞նչ ես ցցվել քո հոտառությամբ։ Գնա, դ-դե՛հ...— և նա հանկարծ ոտքով ուժգին խփեց նրա հետույքին։

Միշկան, նրա կտրուկ շարժումից վախեցած, մի կողմ նետվեց և ետևի ծալված ոտքերով ջուրն ընկնելով՝ մնաց տեղնուտեղը, ականջները տնկած մարդկանց վրա։

— Ա՜խ դու ս-սրի...— գոռաց ջահելը զարմանքով ու բարկությամբ և, խոսքը չվերջացրած, նետվեց Մորոզկայի վրա։

Նրանք կպան իրար գորշուկների պես։ Միշկան, մեկեն մի կողմ դառնալով, մանր սնգսնգոցով փախավ նրանցից։

— Շան որդի, ես քեզ ցույց կտամ հոտառությունը որն է... Ես քեզ...— մռնչաց Մորոզկան, կողքից խոթելով բռունցքը և շարանալով, որ ջահելը բաց չի թողնում իրեն, որ կարգին թափով խփի։

— Դե՛հ, տղերք,— լսվեց նրանց գլխավերևում մեկի զարմացած ձայնը։— Մի տես, թե ինչ են անում։

Երկու մեծ, կոշտացած ձեռք հանդարտ մղվեցին նրանց միջև և, երկուսի օձիքից բռնելով, քաշեցին տարբեր կողմեր։

Երկուսն էլ, չհասկանալով, թե բանն ի՞նչ է, նորից նետվեցին իրար վրա, բայց այս անգամ ստացան մի-մի այնպիսի ուժեղ աքացի, որ Մորոզկան, մի կողմ թռչելով, թիկունքով դարնվեց ծառին, իսկ ջահելը, բռնելով տապալված ծառից և ձեռքերը թափահարելով, ծանր թրմփաց ջրի մեջ։

— Տուր ձեռքդ օգնեմ...— առանց ծաղրի ասաց Գոնչարենկոն։— Համա՜ բան հնարեցիք։

— Բա ինչպե՞ս նա, անպիտանը... էդպես գարշելիներին սպանելը քիչ է...— բղավում էր Մորոզկան՝ մղվելով դեպի թրջված և հիմարացած ջահելը։ Սա մի ձեռքով Գոնչարենկոյից բռնած և բացառապես նրան դիմելով, մյուսով իր կուրծքն էր ծեծում. նրա գլուխը ցնցվում էր։

— Չէ՛, ասա՛, չէ, ասա՛,— կրկնում էր նա գրեթե լալով,— կնշանակի ամեն մեկին, ամեն մեկին այդպես. ուզեց՝ և հետույքին, ուզեց՝ և հետույքին...— Նկատելով, որ դեպքի վայրը մարդիկ են հավաքվում, նա սուր ձայնով բղավեց.— Մի՞թե ես մեղավոր եմ, ո՞վ է մեղավոր, որ կինը, նրա կինը...

Գոնչարենկոն, վախենալով խայտառակությունից, ավելի ևս՝ Մորոզկայի վիճակի համար (եթե խայտառակության մասին իմանա Լևինսոնը), թողեց ճչացող ջահելին և, թափով բռնելով Մորոզկայի ձեռքից, քաշեց իր ետևից։

— Գնա՛նք, գնա՛նք,— խստիվ ասաց նա համառող Մորոզկային։— Ա՛յ, դուրս կնետեն քեզ, շան որդուդ...

Մորոզկան, հասկանալով վերջապես, որ այդ ուժեղ և

խիստ մարդը իսկապես համակրում է իրեն, դադարեց ընդդիմանալ։

— Ի՞նչ, ի՞նչ պատահեց այդտեղ,— հարցրեց առաջ վազող, խաժ աչքերով գերմանացին՝ Մետելիցայի դասակից։

— Արջ բռնեցին,— հանդարտ ասաց Գոնչարենկոն։

— Ա-ա՞րջ...— Գերմանացին չռեց աչքերը և, կարճ ժամանակ կանգնած մնալով, հանկարծ սլացավ այնպես արագ, որ կարծես ուզում էր ևս մի արջ բռնել։

Մորոզկան առաջին անգամ հետաքրքրությամբ նայեց Գոնչարենկոյին և ժպտաց։

— Ուժեղ ես դու, խոլերա,— ասաց նա, բավականություն զգալով այն բանից, որ Գոնչարենկոն ուժեղ է։

— Ինչո՞ւ ծեծեցիր նրան,— հարցրեց պայթեցնողը։

— Բա ո՞նց... այդպիսի գարշելիներին...— նորից հուզվեց Մորոզկան։— Ախր նրան պետք է...

— Դե՛հ-դե՛հ,— հանգստացնող եղանակով ընդհատեց Գոնչարենկոն,— արժե՞ր, ուրեմն... Դե՛հ-դե՛հ...

— Հավաքվեցե՛ք...— կանչում էր մի տեղ Բակլանովը հնչուն, առնականից մանկականի կոտրվող ձայնով։

Այդ ժամանակ թփերի միջից երևաց Միշկայի բրդոտ գլուխը։ Միշկան նայեց մարդկանց իր խելոք, կանաչաշագանակագույն աչքերով և կամացուկ խրխնջաց։

— Է՛հ...— դուրս թռավ Մորոզկայի բերնից։

— Լա՛վ ձի է...

— Կյանքս չէի խնայի նրա համար։— Մորոզկան հիացած թփթփացնում էր ձիու վզին։

— Լավ կլինի կյանքդ դես-դեն չշպրտես, պետք կգա...

— Գոնչարենկոն թեթև ժպտաց սև, խուճուճ մորուքի մեջ։— Ես դեռ պետք է ձիս ջրեմ, զբոսնիր քեզ համար,— և նա ամուր, խոշոր քայլերով գնաց դեպի իր ձին։

Մորոզկան նորից հետաքրքրությամբ ուղեկցեց նրան աչքերով, մտածելով՝ ինչու՝ ինքը առաջ ուշադրություն չէր դարձնում այդպիսի զարմանալի մարդու վրա։

Հետո, երբ շարք էին կանգնում դասակները, նա առանց այդ բանը նկատելու, տեղավորվեց Գոնչարենկոյի կողքին և արդեն ամբողջ ճանապարհին, մինչև Խաունիխեձա, չբաժանվեց նրանից։

Վարյան, Ստաշինսկին և Խարչենկոն, որոնք Կուբրակի դասակից էին, գնում էին համարյա պոչից։ Լեոնաշզիթայի պտույտների վրա երևում էր ամբողջ ջոկատը, որը ձգված էր երկար շղթայիկի ձևով. առջևում, թեքված, գնում էր Լևինսոնը, նրա ետևից, ոչ գիտակցաբար նրա դիրքին նմանեցնելով, գնում էր Բակլանովը։

Վարյան իր թիկունքում ամբողջ ժամանակ զգում էր Մեչիկին, և նրա երեկվա վարմունքի վիրավորանքը խոսում էր իր մեջ՝ ծածկելով այն մեծ ու ջերմ զգացմունքը, որ նա միշտ տածում էր դեպի Մեչիկը։

Մեչիկի՝ հիվանդանոցից հեռանալուց հետո Վարյան ոչ մի բոպե չէր մոռանում նրա գոյության մասին և ապրում էր նրա հետ նորից տեսնվելու միակ մտքով։ Այդ օրվա հետ կապված էին ամենասրտագին, գաղտնի,— որոնց մասին ոչ ոքի պատմել չի կարելի,— բայց և միևնույն ժամանակ այնքան կենդանի, երկրային, գրեթե շոշափելի երազները։ Նա երևակայում էր, թե ինչպես Մեչիկը կհայտնվի անտառի բացատում,— շաղրենու վերնաշապիկով, գեղեցիկ, բարեկազմ, շիկահեր, քիչ վախկոտ,— իր վրա զգում էր Մեչիկի շունչը, նրա խուճուճ, փափուկ մազերը իր ձեռքի տակ, լսում էր նրա քնքուշ, սիրային խոսակցությունը։ Նա աշխատում էր չհիշել նրա հետ ունեցած նախկին թյուրիմացությունները. նրան թվում էր, թե այդ բանը կրկնվել չի կարող այլևս։ Մի խոսքով՝ նա երևակայում էր առաջիկա հարաբերությունները Մեչիկի հետ այնպես, ինչպես նրանք երբեք չէին եղել, բայց ինչպես հաճելի կլինեին իրեն, և աշխատում էր չմտածել այն մասին, ինչ իսկապես կարող էր պատահել, բայց իրեն դառնություն պիտի պատճառեր։

Հանդիպելով Մեչիկին՝ նա մարդկանց հանդեպ ունեցած իրեն հատուկ զգայնությամբ հասկացավ, որ Մեչիկը շատ վշտացած է և գրգռված, որպեսզի հետևի իր վարմունքներին, և որ նրան վշտացրած դեպքը շատ ավելի կարևոր է, քան թե Վարյայի որևէ անձնական վիրավորվածությունը։ Բայց հենց նրա համար, որ առաջ այդ հանդիպումը նրան ներկայանում էր այլ կերպ, Մեչիկի անակնկալ կոպտությունը վիրավորեց և վախեցրեց նրան։

Վարյան առաջին անգամ զգաց, որ այդ կոպտությունը

պատահական չէ, որ Մեչիկը գուցե բոլորովին այն չէ ում ինքն սպասում էր երկար օրեր ու գիշերներ, բայց որ ինքը չունի ոչ մի ուրիշ մարդ։

Վարյան քաջություն չուներ մեկին խոստովանելու այդ բանը. այնքան էլ հեշտ չէր դեն նետել այն ամենը, ինչով երկար ցերեկներ ու գիշերներ նա ապրել էր տանջվել ու հրճվել, և զգալ հոգու մեջ ոչ մի բանով չլցվող հանկարծակի դատարկություն։ Եվ նա իրեն ստիպում էր մտածել այնպես, իբրև թե ոչ մի առանձին բան չի պատահել, իբրև թե ամբողջ գործը Ֆրոլովի անհաջող մահվան մեջ է, իբրև թե ամեն ինչ դեռ լավ ճամփով կգնա, բայց դրա փոխարեն առավոտից մտածում էր միայն այն մասին, թե ինչպես Մեչիկը վիրավորել էր իրեն, և թե ինչպես նա իրավունք չուներ իրեն վշտացնելու, երբ ինքը մոտեցավ նրան իր երազներով և սիրով։

Ամբողջ օրը նա զգում էր Մեչիկին տեսնելու և նրա հետ խոսելու մի տանջալի ցանկություն, բայց ոչ մի անգամ ետ չնայեց և նույնիսկ հանգստի ժամանակ չմոտեցավ նրան։ «Ինչո՞ւ պիտի վազեմ նրա ետևից փոքրիկ տղայի պես,— մտածում էր նա։— Եթե իսկապես սիրում է ինձ, ինչպես ինքն էր ասում, թող առաջինը մոտենա, ես ոչ մի խոսքով չեմ կշտամբի նրան։ Իսկ եթե չի մոտենա, միևնույն է՝ մենակ կմնամ... այդպես էլ ոչինչ չի լինի»։

Գլխավոր կայանում շավիղը լայնացավ, և Վարյայի կողքին հայտնվեց Ջիժը։ Երեկ նրան չհաջողվեց բռնել Վարյային, բայց նա այդպիսի գործերում համառ էր և հույսը չէր կորցնում։ Վարյան զգում էր նրա ոտքերի հպումը, նա շշնջում էր իր ականջին ինչ-որ ամոթալի խոսքեր, բայց խորասուզված իր մտքերի մեջ՝ Վարյան չէր լսում նրան։

— Դեհ, դուք ինչպե՞ս եք, հը՞,— կպչում էր Ջիժը (նա ասում էր «դուք» կոնանց սեռի բոլոր անձանց, անկախ նրանց հասակից, դրությունից և իր հետ ունեցած հարաբերությունից)։— Համաձա՞յն եք, թե ոչ...

«... Ես ամեն ինչ հասկանում եմ, մի՞թե նրանից որևէ բան եմ պահանջում,— մտածում էր Վարյան։— Մի՞թե նրա համար դժվար էր զիջել ինձ... Բայց գուցե նա ի՞նքն էլ հիմա տանջվում է, կարծում է՝ ես իրենից վշտացած եմ։ Ի՞նչ կլինի, եթե խոսեմ նրա հետ... Ինչպե՞ս... ի՞նքս... այն բանից հետո, երբ ինձ քշե՞ց... ո՛չ, ո՛չ, և թող ոչինչ չլինի...»

— Ի՞նչ է, սիրելիս, խլացե՞լ եք միթե։ Համաձա՞յն եք, ասում եմ։

— Ի՞նչ համաձայն եմ,— սթափվեց Վարյան։— Դե, գրողը քեզ տանի։

— Բարև ձեզ...— Ջիժը վիրավորված տարածեց ձեռքերը։— Սիրելիս, ի՞նչ եք ձևացնում, իբրև թե առաջին անգամ եք, կամ փոքրիկ եք։— Նա սկսեց նորից համբերությամբ փոփսալ նրա ականջին, համոզված, որ Վարյան լսում է և հասկանում իրեն, բայց նապ է անում, որպեսզի ըստ կանացի սովորության իր գինն ավելացնի։

Երեկոյանում էր, ձորերը մթնում էին, ձիերը հոգնած փնչում, մշուշը թանձրանում էր աղբյուրների վրա և գանդաղ սողում դեպի հովիտները, իսկ Մեչիկը այդպես էլ չէր մոտենում Վարյային և, ըստ երևույթին, միտք էլ չուներ։ Եվ նա որքան ավելի էր համոզվում, որ Մեչիկը չի մոտենա իրեն, այնքան ավելի զգում էր իր նախկին երազների անպտուղ թախիծն ու դառնությունը և այնքան ավելի դժվար էր դրանցից բաժանվել։

Ջակաան խլնում էր ձորը՝ գիշերելու. խոնավ, երկյուղալի խավարում խունվում էին ձիերն ու մարդիկ։

— Ուրեմն դուք մի՛ մոռանաք, սիրելիս,— փաղաքշական լիտի համառությամբ ասաց Ջիժը։— Այո, կրակը ես կվառեմ մի կողմում։ Այդ նկատի ունեցեք...— Քիչ հետո նա մեկին կանչում էր.— Ինչպե՞ս թե «ա՞ր ես մոնում»։ Իսկ գո՞ւ ինչու ես կանգնել ճամփի վրա։

— Իսկ գո՞ւ ինչու ուրիշի դասակն ես խցկվում։

— Ինչպե՞ս թե ուրիշի։ Աչքերդ բաց...

Կարճ լռությունից հետո, որի ընթացքում երկուսն էլ, անշուշտ, աչքերն էին բաց անում, հարցնողը խոսեց մեղավոր, մեղմացած ձայնով.

— Թո՛ւ, ճիշտ որ «կուրբակներն» են... Բա Մետելիցա՞ն ուր է։— Եվ կարծես լիտվին հարթելով իր սխալը, մեղավոր ձայնով, նորից զուտ տալով, նա կանչեց.— Մետե-ե-լիցա՞։

Իսկ ներքևում մեկը, այն աստիճան զայրացած, որ թվում էր, եթե չկատաքես նրա պահանջը, նա կամ անձնասպանություն կգործի, կամ կսպանի ուրիշներին, աղաղակում էր.

— Կրա-ա՜կ տուր... կրա-ա-ա՜կ տու-ուր...

Հանկարծ ձորի հատակում վառվռաց խարույկի անաղմուկ ցոլքը և խավարից դուրս խլեց ձիերի մաղոտ գլուխները, մարդկանց հոգնած դեմքերը՝ փամփշտակալների և հրացանների պաղ փայլով։

Ստաշինսկին, Վարյան և Խարչենկոն մի կողմ գնացին և նույնպես իջան ձիերից։

— Ոչինչ, այժմ կհանգստանանք, կ-կրա՜կ կվառենք,— շինծու և ոչ ոքի չուրախացնող առույգությամբ ասում էր Խարչենկոն։— Հապա՛, ցախի՜ գնացեք...

— ...Մի՛շտ այսպես է՝ ժամանակին կանգ չենք առնում, իսկ հետո տանջվում ենք,— դատում էր նա, նույն սակավ մխիթարական եղանակով, ձեռքերով փնտրելով թաց խոտերի մեջ և իսկապես տանջվելով խոնավությունից, մթությունից, վախից, որ իրեն օձը կխայթի, և Ստաշինսկու մոայլ լռությունից։— Հիշում եմ, նույնպես Սուչանից էինք գալիս, վաղո՜ւց արդեն ժամանակն էր գիշերելու, այնքան մութ էր, իսկ մենք...

«Եվ ինչո՞ւ է նա այդ բոլորն ասում,— մտածում էր Վարյան։— Սուչան... ուր-որ գնում էին նրանք... սաստիկ մութն էր... դեհ, ո՞ւմ է պետք այդ ամենը հիմա։ Չէ՞ որ բոլորը, բոլորն արդեն վերջացավ, և ոչինչ չի լինի»։ Նա ուտել էր ուզում, և դրա պատճառով, ինչ-որ ուժեղանում էր մի այլ զգացողություն՝ համբ և ճնշված դատարկություն, որը այժմ ոչ մի բանով չէր կարողանում լցնել։ Նա քիչ մնաց լաց լիներ։

Սակայն, ուտելուց և տաքանալուց հետո, երեքն էլ զվարթացան, և նրանց շրջապատող մութ-կապույտ, օտար և պաղ աշխարհը արդեն թվաց հարազատ, հարմար ու տաքուկ։

— Էհ, շինել իմ, շինել,— կուշտ ձայնով ասում էր Խարչենկոն՝ բանալով փաթաթած շինելը։— Կրակից չի վառվում, ջրի մեջ չի սուզվում։ Այ թե մի կնի՜կ լիներ այստեղ...— Նա աչքով արավ և ծիծաղեց, կարծես ուզում էր ասել... «Դա, իհարկե, բոլորովին անկարելի է, բայց համաձայնեցեք, որ ախորժելի է»։— Դու կքնեի՞ր կնկա հետ, հա՞, ընկեր բժիշկ,— խենթություն անելով՝ հարցրեց նա Ստաշինսկուն։

— Ես կքնեի,— լավ լսելով՝ լուրջ պատասխանեց Ստաշինսկին։

«Ինչո՞ւ չարացա նրա վրա,— մտածում էր Վարյան, զգալով, որ ուրախ խարույկից, կերած շիլայից, Խարչենկոյի տանու խոսակցություններից վերադառնում է իր սովորական փափկությունը և բարությունը։— Ախր ոչինչ չկար, ինչի՞ց այդպես հուզվեցի։ Իսկ ջահելը նստած է ու ձանձրանում է իմ խենթության պատճառով... Բայց ախր արժե մոտենալ նրան, և բոլորը այնպես կերթա, ինչպես առաջ»։

Եվ նա հանկարծ չուզեց իր մեջ կրել վիրավորական և չար մի բան ու տանջվել դրանից, երբ շուրջը ամեն ինչ այնպես լավ է ու անհոգ, և երբ ինքն էլ կարող է անհոգ ու լավ լինել, այնպես, որ իսկույն վճռեց դուրս ձգել գլխից բոլորը և գնալ Մեչիկի մոտ։ Դրա մեջ արդեն ոչ մի պախարակելի կամ վատ բան չկար նրա համար։

«Ինձ ոչինչ, ոչինչ պետք չէ,— մտածում էր նա, մեկեն զվարթանալով,— միայն թե Մեչիկն ուզեր և սիրեր ինձ, միայն թե նա մոտս լիներ... Ոչ, ես ամեն ինչ կտայի, եթե նա միշտ ման գար ձիով, խոսեր, քներ ինձ հետ, այնպես գեղեցիկ ու ջահել...»

Մեչիկն ու Զիժը վառեցին առանձին խարույկ՝ կայանի ծայրին։ Նրանք ծուլացան իրենց համար ընթրիք եփել, կրակի վրա ճարպ տապակեցին և, որովհետև ավելի շատ ճարպ էին ուտում, քան հաց, բոլորը կերել վերջացրել էին և հիմա երկուսն էլ նստած էին քաղցած։

Մեչիկը դեռ ուշքի չէր եկել Ֆրոլովի մահից և Պիկայի անհետանալուց հետո։ Ամբողջ օրը նա կարծես լողում էր մշուշի մեջ, որ հյուսված էր օտար և խիստ, իրեն մյուս մարդկանցից բաժանող մտքերից՝ մենակության և մահվան մասին։ Երեկոյան դեմ այդ քողը ընկավ, բայց նա ոչ ոքի չէր ուզում տեսնել և վախենում էր ամեն բանից։

Վարյան դժվարությամբ գտավ նրանց խարույկը։ Ամբողջ ձորն ապրում էր նույնպիսի խարույկներով և ծխոտ երգերով։

— Այ թե որտեղ եք պահվել,— ասաց նա, դուրս գալով թփերի միջից բաբախող սրտով։— Բարև ձեզ...

Մեչիկը ցնցվեց և օտարոտի, վախեցած նայելով նրան՝ երեսը կրակին դարձրեց։

— Ա-ա՜,— ախորժակով ատամները ցույց տվեց Զի-

ժը։— Մենակ դուք էիք պակաս։ Նստեցեք, սիրելիս, նստեցեք։

Նա դեռ-դեռ ընկավ, բացեց շինելը և տեղ ցույց տվեց նրան իր կողքին։ Բայց Վարյան չնստեց Նրա մոտ։ Նրա սովորական գոհհկությունը,— մի հատկություն, որը նա մեկեն զգացել էր Զիժի մեջ, թեև չգիտեր էլ թե ինչ է դա,— այժմ առանձնապես անախորժ կերպով ծակեց նրան։

— Եկա քեզ այցի, թե չէ դու մեզ բոլորովին մոռացար,— խոսեց նա երգեցիկ, հուզված ձայնով՝ դիմելով Մեչիկին և չթաքցնելով, որ եկել է միայն նրա համար։— Այնտեղ Խարշենկոն էլ հարցրեց՝ ինչպես է առողջությունը, վիրավորված շահել էր, իսկ հիմա ոնց որ թե ոչինչ. էլ իմ մասին չեմ խոսում...

Մեչիկը լուռ թոթվեց ուսերը։

— Ասեք, որ ապրում ենք հիանալի՝ ի՞նչ հարցմունք.— բացականչեց Զիժը, սիրով բոլորը ընդունելով իր վրա։— Նստեք կողքիս, ինչո՞ւ եք քաշվում։

— Ոչինչ, ես երկար չեմ մնա,— ասաց նա,— հենց այնպես եկա, անցնում էի այստեղով...— Նա հանկարծ վշտացավ, որ եկել էր Մեչիկի պատճառով, իսկ սա ուսերն է վեր քաշում։ Վարյան ավելացրեց։— Իսկ դուք, երևում է, ոչինչ չեք էլ կերել՝ կաթսան մաքուր է։

— Ի՞նչ չենք կերել։ Թե որ լավ մթերքներ տային՝ ոչինչ, թե չէ, տատանան գիտե, թե ինչ են տալիս...— Զիժը գաղտնաբով կնճռոտվեց։— Դե, դուք նստեք կողքիս,— անհույս պատրաստակամությամբ կրկնեց նա նորից և, բռնելով նրա ձեռքից, իր մոտ քաշեց։— Դե նստեք...

Վարյան նստեց նրա կողքին, շինելի վրա։

— Իսկ մեր պայմանը հիշո՞ւմ եք։— Զիժը մտերմորեն աչքով արավ։

— Ի՞նչ պայման,— հարցրեց Վարյան՝ վախով մտաբերելով մի բան։ «Ա՜խ, պետք չէր, պետք չէր գալ»— մտածեց նա հանկարծ, և մի մեծ ու անհանգիստ բան կտրվեց նրա մեջ։

— Այսինքն՝ ինչպե՞ս թե ինչ... Ա՜յ, սպասեցեք...— Զիժն արագ թեքվեց Մեչիկի կողմը։— Թեև մարդկանց շրջանում գաղտնիքներ չեն ասում,— ասաց նա, գրկելով Մեչիկի ուսը և երեսը դարձնելով Վարյային,— բայց...

— Ի՞նչ գաղտնիքներ են դրանք...— ասաց Վարյան ծուռ

ժպիտով և, արագ թարթելով աչքերը չգիտես ինչու, դողացող, անհնազանդ մատներով սկսեց ուղղել մազերը։

— Գրողը քեզ տանի, ի՞նչ ես նստել փոկի պես,— արագ շշնջաց Զիժը Մեչիկի անկանչին։— Այստեղ ամեն ինչ պայմանավորված է, իսկ դու...

Մեչիկը, Զիժից մի կողմ քաշվելով, աչքի տակով նայեց Վարյային և թունդ կարմրեց։ «Դեհ ինչ, ստացա՞ր։ Տեսնո՞ւմ ես հիմա, ինչ է կատարվում»,— կշտամբանքով ասաց Մեչիկին Վարյայի լողացող հայացքը։

— Ո՛չ, ո՛չ, ես կգնամ... ո՛չ, ո՛չ — փնթփնթաց Վարյան, հենց որ Զիժը նորից դարձավ նրան, կարծես արդեն Վարյային մի խայտառակ ու ստորացուցիչ բան էր առաջարկում։— Ո՛չ, ո՛չ, ես կգնամ...— Նա վեր թռավ և գնաց մանր, արագ քայլերով, գլուխը կախած, և ծածկվեց մթության մեջ։

— Նոքից քո պատճառով փախցրինք... Շշմա՜ծ...— ֆրշշած Զիժը արհամարհանքով և շարունակեց։

Հանկարծ նա վեր ցատկեց մի տարերային ուժից մղված և, շեշտակի ցատկումներով, ասես մեկը նրան ներսից վերվեր էր ձգում, սլացավ Վարյայի ետևից։

Հասավ նրան մի քանի սաժեն հեռավորության վրա և, ամուր գրկելով մի ձեռքով, իսկ մյուսով բռնելով նրա կրծքից, տարավ թփերի մեջ, կրկնելով.

— Դե՛հ, սիրելիս... դե՛հ աղջիկս...

— Թող ինձ...— հեռացիր... կգոռամ...— աղերսում էր նա՝ թուլանալով և համարյա լալով, բայց զգալով, որ ուժ չունի գոռալու և որ այլևս գոռալու հարկ չկա. պատճառ չկա և ոչ մեկին պետք չէ։

— Դեհ, սի-րելիս, դեհ-ինչո՞ւ...— կրկնում էր Զիժը, փա կելով նրա բերանը և հետզհետե է՛լ ավելի դրգռվելով սեփական քնքշությունից։

«Եվ իսկապես՝ ինչո՞ւ։ Դեհ, ո՞ւմ է պետք այդ բանը հիմա,— մտածեց Վարյան հոգնած...— Բայց չէ՞ որ սա Զիժն է... այո, բայց չէ՞ որ սա Զիժն է... ո՞րտեղից է նա, ինչո՞ւ է նա... Ա՜խ, մի՞թե միևնույնը չէ...» Եվ նրա համար իսկապես ամեն ինչ միևնույնը դարձավ։

13

ԲԵՌԸ

— Չեմ սիրում նրանց՝ գեղջուկներին, սրտովս չեն,— ասում էր Մորոզկան, թեթև ճոճվելով թամբի վրա, և երբ Միշկան փոխում էր առջևի աջ ոտքը, մտրակով համաչափ թոցնում էր ցարասիների պայծառ- դեղին, վախլուկ տերևները։— Ես պապիս մոտ եմ եղել։ Այնտեղ երկու քեռի ունեմ՝ հող են հերկում։ Չէ, սրտովս չեն։ Այն չէ, չէ՛, արյունն ուրիշ է, ժլատ, խորամանկ, վախկոտներ են նրանք բոլորը... էլ ի՞նչ ասեմ։— Մորոզկան, ցարասին բաց թողնելով, չափը չկորցնելու համար մտրակն իր սապոգին խփեց։— Դու էլ կասե՞ս՝ ինչո՞ւ պիտի վախենան, ժլատ լինեն,— հարցրեց նա գլուխը բարձրացնելով։— Դե՛հ, ախր մի չոփ, մի չոփ չունեն նրանք, ավլիր՝ մաքուր է։— Եվ նա ծիծաղեց կարծես օտար, միամիտ, խղճալի ծիծաղով։

Գոնչարենկոն լսում էր՝ նայելով ձիու ականջների մեջտեղով. նրա գորշագույն աչքերում խելոք և ամուր արտահայտություն կար, ինչպիսին լինում է այն մարդկանց աչքերում, որոնք գիտեն լավ լսել, իսկ ավելի լավ՝ մտածել լսած բանի մասին։

— Իսկ ես կարծում եմ՝ մեզանից ամեն մեկին որ քերթես,— ասաց նա հանկարծ,— մեզանից,— շեշտեց, որ ավելի հաստատ լինի, և նայեց Մորոզկային,— օրինակ՝ իմ, կամ քո, կամ ա՛յ, Դուբովի, մեզանից ամեն մեկի մեջ գեղջուկ կգտնես... կգտնես,— կրկնեց նա համոզված։— Նույն փորոտիքներով, թերևս, միայն առանց տրեխների...

— Էդ ինչի՞ մասին է ,— ետ նայեց Դուբովը։

— Գուցե և տրեխներով... Մեր խոսակցությունը գեղջուկի մասին է... Ամեն մեկիս մեջ, ասում եմ, գեղջուկ է նստած...

— Դե-ե՛հ...— կասկածեց Դուբովը։

— Բա ուրիշ ինչպե՞ս... Մորոզկան, օրինակ, պապ ունի գյուղում, քեռի, դու...

— Ես, բարեկամս, մարդ չունեմ,— ընդհատեց Դուբովը,— ու փա՜ռք աստծու։ Չեմ սիրում այդ սերմը, խոստովանեմ... թեկուզ Կուբրակին վերցրու. դեհ նա ինքը դեռ ոչինչ, Կուբրակը Կուբրակ է (հո ամեն մեկից խելք չես պահանջի), բայց ի՞նչ դասակ է հավաքել։— Եվ Դուբովը արհամարհանքով թքեց։

Այս խոսակցությունը տեղի էր ունենում ճամփորդության հինգերորդ օրը, երբ ջոկատն իջավ դեպի Խպունիխեձայի ակունքները։ Նրանք գնում էին ձմեռվա հին ճամփով, որ ծածկված էր փափուկ, չորացող սեղով։ Թեև ոչ ոքի մոտ մի փշուր էլ չէր մնացել այն պաշարից, որ պատրաստել էր հիվանդանոցում տնտեսվարի օգնականը, բայց բոլորի տրամադրությունը բարձր էր, որովհետև զգում էին բնակավայրի և հանգստի մոտիկ լինելը։

— Տեսա՞ր, ինչ է անում մեր Դուբով ծերուկը, հա՞,— աչքով արավ Մորոզկան ու ծիծաղեց, զարմանալով և ուրախանալով, որ դասակի առաջնորդը համաձայն էր իր հետ և ոչ թե Գոնչարենկոյի։

— Լավ,— ասաց պայթեցնողը, բնավ չշփոթվելով,— ասենք՝ դու մարդ չունես, բանը դա չի, ես էլ հիմա մարդ չունեմ։ Ձեր հանքը վերցնենք... Դեհ, դու ճիշտ է, դեռ ռուսաստանցի ես, իսկ Մորոզկա՞ն։ Նա իր հանքից զատ համարյա ոչինչ չի տեսել։

— Ո՞նց չեմ տեսել,— վիրավորվեց Մորոզկան։— Հապա ես ռազմաճակատում...

— Թող, թող,— Դուբովը նրան ձեռքով արավ,— դեհ, ասենք թե չի տեսել։

— Դե, ձեր էդ հանքը գյուղ է ախր,— հանդիստ ասաց Գոնչարենկոն։— Ամեն մեկը բոստան ունի՝ մեկ։ Կեսը գալիս է ձմեռը, իսկ ամառը ետ է գնում գյուղ... Դե այնտեղ ձեզ մոտ եղջերուները, ինչպես փարախում... Եղել եմ ես ձեր հանքում։

— Գյո՞ւղ է,— զարմացավ Դուբովը՝ չհասնելով Գոնչարենկոյի ետևից։

— Բա ի՞նչ է։ Ձեր կնանիք զբաղված են բոստաններում, շուրջը ժողովուրդը նույնպես գյուղացի է, մի՞թե չի ազդում... ազդում է։— Եվ պայթեցնողը սովորական շարժումով կտրեց օդը ափով, կողի վրա դրած։

— Ազդում է... իհարկե...— ասաց Դուբովն անվստահ,

խորհելով՝ արդյոք դրա մեջ «ածխային ցեղի» համար մի խայտառակ բան չկա՞։

— Դե ահա... Հիմա վերցնենք քաղաքը. մե՞ծ են արդյոք մեր քաղաքները, շա՞տ քաղաքներ ունենք մենք։ Մեկ-երկու, ու պրծավ... Հազարավոր վերստեր միայն գյուղ է ամեն տեղ... Ազդո՞ւմ է, հարցնում եմ։

— Սպասիր, սպասիր,— շփոթվեց դասակի հրամանատարը,— հազարավոր վերստե՛ր. ինչպե՞ս թե ամեն տեղ... դե հա, գյուղ է... դե ազդում է...

— Դուրս է գալիս, որ մեզանից ամեն մեկի մեջ մի քիչ գեղջուկ կա,— ասաց Գոնչարենկոն՝ վերադառնալով ելակետին և դրանով ասես հերքելով այն ամենը, ինչի մասին խոսել էր Դուբովը։

— Լա՜վ սարքեց,— հիացավ Մորոզկան, որին, Դուբովի միջամտելուց հետո, վեճը հետաքրքրել էր միայն իբրև մարդկային ճարպկության արտահայտություն։— Կերա՜վ նա քեզ, ծերուկ, հերքելու բան չունես։

— Ես ուզում եմ ասել,— բացատրեց Գոնչարենկոն՝ չթողնելով Դուբովին ուշքի գալ,— որ մենք չպետք է պարծենանք գեղջուկի առաջ, թեկուզ և Մորոզկան. առանց գեղջուկի մեզ էլ...— նա գլուխը ճոճեց ու լռեց և, ըստ երևույթին, բոլորը, ինչ որ հետո Դուբովն ասաց, չէր կարող նրան տարհամոզել։

«Խելոք է սատանան,— մտածում էր Մորոզկան՝ նայելով Գոնչարենկոյին կողքից և հետզհետե ավելի մեծ հարգանք տածելով դեպի նա։— Այնպե՞ս պատին սեղմեց ծերուկին՝ փրկություն չկա»։ Մորոզկան գիտեր, որ Գոնչարենկոն, ինչպես և բոլոր մարդիկ, կարող է սխալվել, անարդար վարվել,— մասնավորապես Մորոզկան բոլորովին չէր զգում իր մեջ գեղջկական այն բեռը, որի մասին այնպես համոզված խոսում էր Գոնչարենկոն,— բայց էլի հավատում էր պայթեցնողին ավելի, քան որևէ մեկին։ Գոնչարենկոն «ընկերտղա» էր, «կարող էր հասկանալ», նա գիտակցում էր, բացի դրանից դատարկախոս, պարապ մարդ չէր։ Նրա մեծ, ոսկրոտ ձեռքերն ագահ էին աշխատանքի վերաբերմամբ, կատարում էին այն առաջին հայացքից դանդաղ, բայց իսկապես՝ արագ. նրանց ամեն մի շարժումը մտածված էր ու ճիշտ։

Եվ Մորոզկայի ու Գոնչարենկոյի հարաբերությունները

հասան այն առաջին՝ մտերմության մեջ անհրաժեշտ աստիճանին, որի մասին պարտիզաններն ասում են. «Նրանք քնում են մի շինելի տակ», «Նրանք ուտում են միևնույն կաթսայից»։

Շնորհիվ նրա հետ ամենօրյա հարաբերության՝ Մորոզկան սկսում էր մտածել, որ ինքը նույնպես ճշտապահ պարտիզան է. իր ձին կարգին է, ձիասարքը պինդ կաբկատած, հրացանը մաքրված է և փայլում է հայելու պես, կռվի մեջ ինքը առաջինն է և ամենահուսալին, ընկերները սիրում են իրեն և հարգում դրա համար։ Եվ այդպես մտածելով՝ նա ակամա հաղթաթղթից էր լինում այն խոհական, առողջ կյանքին, որով, թվում էր, թե միշտ ապրում է Գոնչարենկոն, այսինքն՝ այն կյանքին, որի մեջ տեղ չկա անպետք և պարապ մտքերի համար...

— Ա-ա՜յ... կա՜ղ առ...— կանչում էին առջևում։ Հրամանն անցնում էր շղթայով, և այն ժամանակ, երբ առջևիններն արդեն կանգնած էին, ետևինները շարունակում էին վրա տալ։ Շղթան խառնվեց։

— Է-է՜... ում... Մետելիցային են կանչում...— նորից անցավ շղթայով։ Մի քանի վայրկյանից, բազեի պես թեքված, սլացավ Մետելիցան, և ամբողջ ջոկատն անգիտակից հպարտությամբ հայացքով ուղեկցեց նրա՝ ոչ մի կանոնադրությամբ չորոշված կառուցն, հովվական ձևով ձի նստելը։

— Ես էլ գնամ, իմանամ ինչ կա այնտեղ,— ասաց Դուբովը։

Քիչ հետո նա վերադարձավ վրդովված, աշխատելով, սակայն, այդ բանը ցույց չտալ։

— Մետելիցան հետախուզության է գնում, այստեղ պիտի գիշերենք,— ասաց զսպված, բայց նրա ձայնի մեջ բոլորին լսելի հնչեցին չար, քաղցած շեշտեր։

— Այդ ինչպե՞ս, բան չկերա՞ծ։ Ինչի՞ մասին են մտածում նրանք,— ձայն տվին ամեն կողմից։

— Սա էլ կոչվում է՝ հանգստանալ..

— Գրողը տանի դրան...— միացավ Մորոզկան։

Առջևում արդեն իջնում էին ձիերից։

Լեհնսոնը վճռեց գիշերել տայգայում, որովհետև հավատացած չէր, թե Խաունիխեձայի ստորին հոսանքը թշնամուց

ազատ է։ Սակայն նա հույս ուներ, որ նույնիսկ այդ դեպքում նրան կհաջողվի, ճանապարհը հետախուզությամբ քննելով, անցնել Տուգո-Վակայի հովիտը, որը հարուստ էր ձիերով և հացով։

Ամբողջ ճանապարհին նրան տանջում էր կողքի անտանելի, ամեն օր սաստկացող ցավը, և նա արդեն գիտեր, որ այդ ցավը,— որ հոգնածության և սակավարյության հետևանք էր,— կարելի է բժշկել միայն շաբաթներով հանգիստ ու կուշտ կյանք վարելով։ Եվ որովհետև դրանից էլ լավ նա գիտեր, որ իր համար երկար ժամանակ հանգիստ և կուշտ կյանք չի լինի, ուստի ամբողջ ճամփին հարմարվում էր իր նոր դրությանը՝ հավատացնելով իրեն, որ այդ «բոլորովին դատարկ հիվանդությունը» ինքը միշտ էլ ունեցել է, և հետևաբար չի կարող խանգարել՝ կատարելու այն գործը, որը նա իր պարտքն էր համարում կատարելու։

— Իսկ իմ կարծիքով պետք է գնալ...— լսելով Լևինսոնին և նրա կոշիկներին նայելով՝ չորրորդ անգամ կրկնեց Կուբրակը մի մարդու բութ համառությամբ, որը ոչինչ չի ուզում իմանալ, բացի այն բանից, որ ուտել է ուզում։

— Դեհ, եթե այդքան անհամբեր ես, գնա ինքդ, ինքդ գնա... Քեզ փոխարինող թող ու գնա։ Իսկ մենք ամբողջ ջոկատը անհարմար դրության մեջ դնելու ցանկություն չունենք...

Լևինսոնն ասում էր այնպիսի արտահայտությամբ, կարծես Կուբրակը հենց այդ սխալ ցանկությունն ուներ։

— Հապա գնա, եղբայր, ավելի լավ է՝ պահակախումբը պատրաստիր,— ավելացրեց նա, դասակի հրամանատարի նոր նկատողությանն ականջ չդնելով։ Սակայն տեսնելով, որ նա պատրաստվում է պնդելու, հանկարծ խոժոռվեց և խստիվ հարցրեց.— Ի՞նչ...

Կուբրակը բարձրացրեց գլուխը և աչքերը թարթեց։

— Ճամփով ձիավոր դետք կուղարկես,— շարունակեց Լևինսոնն առաջվա հազիվ նկատելի ծաղրական ձայնով,— իսկ ետևում, կես վերստ հեռավորության վրա, կդնես հետևակ պահակախումբ, ամենից լավ է այն աղբյուրի մոտ, որն անցանք։ Հասկանալի՞ է։

— Հասկանալի է,— մռայլ ասաց Կուբրակը, զարմանալով, թե ինչու է ասում այդ և ոչ այն, ինչ որ ինքն է ուզում։

«Խորամանկ խոլերա»,— մտածում էր նա Լևինսոնի մասին՝ քողարկված հարգալիր ատելությամբ դեպի նա և խղճահարությամբ՝ դեպի ինքը։

Գիշերը, հանկարծ զարթնելով, ինչպես հաճախ զարթնում էր վերջին ժամանակները, Լևինսոնը հիշեց այդ խոսակցությունը Կուբրակի հետ և, ծխելով, գնաց պահակախմբերն ստուգելու։

Աշխատելով չտրորել քնածների շինելները, նա անցավ առանց բոցի վառվող խարույկների միջով։ Աջ կողմից վերջինը մյուսներից ավելի պայծառ էր վառվում։ Նրա մոտ ծալապատիկ նստած էր օրապահը և ձեռքերն էր տաքացնում՝ ափերը կրակին դարձրած։ Նա երևի բոլորովին մոռացել էր դրա մասին. մուգ մորթե գդակը թեքվել էր դեպի ծոծրակը, աչքերը մտածկոտ, լայն բացվել էին, և նա հազիվ ժպտում էր բարի, մանկական ժպիտով։ «Ճարպիկն է...», մտածեց Լևինսոնը, չգիտես ինչու, հենց այդ խոսքով արտահայտելով խաղաղ, քիչ երկյուղալի հիացման այն անորոշ զգացումը, որը մեկեն տիրեց նրան՝ տեսնելով այդ կապույտ, անբոց վառվող խարույկները, ժպտացող օրապահին և զգալով այն բոլորը, ինչ որ աղոտ կերպով սպասում էր նրան գիշերվա ընթացքում։

Եվ նա գնաց ավելի կամացուկ ու զգույշ, ոչ թե նրա համար, որ չնկատվի, այլ որպեսզի չվախեցնի օրապահի ժպիտը։ Բայց նա բնավ չսթափվեց և ամբողջ ժամանակ ժպտում էր՝ կրակին նայելով։ Երևի այդ կրակը և տայգայից հասնող՝ պռճոկվող խոտի չոր, կրճկրճացող ձայնը հիշեցնում էին օրապահին մանկության «գիշերային»-ը. լուսնի լույսով լուսավորված ցողապատ մարգ, աքաղաղների կանչը, գյուղում, ձիերի լռած երամակ, շղթաների ղողանջյուն, խարույկի աշխույժ բոց՝ մանկական հմայված աչքերի առաջ։ Այդ խարույկն արդեն վառվել վերջացել էր, և դրա համար օրապահին թվում էր ավելի պայծառ ու ավելի տաք, քան թե այսօրվանը։

Նոր էր Լևինսոնը հեռացել ճամբարից, երբ նրան գրկեց խոնավ, բուրյան մթությունը, ոտքերը սուզվում էին մի առաձգական բանի մեջ, սունկերի և փտող ծառի հոտ էր զգացվում։ «Ի՞նչ սոսկալի է»,— մտածեց նա և ետ նայեց։ Ետևում արդեն չկար ոչ մի ոսկե լույս. ճամբարը կարծես

գետնի տակ էր անցել ժպտացող օրապահի հետ միասին։ Լևինսոնը խոր հառաչեց և միտումնավոր-ուրախ քայլերով գնաց շավղով դեպի խորքը։

Որոշ ժամանակից հետո նա լսեց աղբյուրի հանդարտ խոխոջյունը, մի քիչ կանգնած մնաց, ականջ դնելով մթությանը, և ինքն իրեն ժպտալով քայլերն արագացրեց՝ աշխատելով ավելի բարձր խշխշացնել, որ լսելի լինի։

— Ո՞վ է... ո՞վ է այդտեղ...— լսվեց մթության միջից մի կտրվող ձայն։

Լևինսոնը ճանաչեց Մեչիկին և առաջ գնաց, առանց պատասխանելու։ Լարված լռության մեջ զրնգաց փակաղակը և, դիպչելով մի բանի, խղճալի կերպով ճռնչաց։ Լսվում էր, թե ինչպես ջղայնանում էին ձեռքերը՝ աշխատելով տեղ հասցնել փամփուշտը։

— Ավելի հաճախ պետք է յուղել,— հեգնանքով ասաց Լևինսոնը։

— Ա՛խ, այդ դո՞ւք եք...— թեթևացած դուրս թռավ Մեչիկի բերանից։— Ոչ, ես յուղում եմ... չգիտեմ, թե ինչ է պատահել...— Նա շփոթված նայեց հրամանատարին և, մոռանալով բաց փակաղակի մասին, հրացանը ցած իջեցրեց։

Մեչիկը պահակախումբ էր ընկել երրորդ հերթին, կեսգիշերին։ Անցել էր կես ժամից ոչ ավելի, երբ խոտերի մեջ խշշացին ու լռեցին փոխադիրների անշտապ քայլերը, բայց Մեչիկին թվում էր, թե ինքը արդեն վաղուց է կանգնած։ Նա մենակ էր իր մտքերի հետ ամբողջ թշնամական աշխարհում, ուր ամեն ինչ շարժվում էր, դանդաղ ապրում տարտ, դրույշ և գիշատիչ կյանքով։

Իսկապես, ամբողջ այդ ժամանակ նրան զբաղեցնում էր միայն մի միտք, որը չգիտես թե երբ և որտեղից էր ծնվել նրա մեջ, բայց այժմ նա անփոփոխ վերադառնում էր այդ մտքին, ինչի մասին էլ մտածեր։ Նա գիտեր, որ ոչ ոքի չի հայտնի այդ մասին, գիտեր, որ այդ միտքը մի բանով վատ է, շատ ամոթալի, բայց նույնպես գիտեր, որ այժմ արդեն չի բաժանվի նրանից՝ բոլոր ուժերով կաշխատի կատարել այն, որովհետև դա վերջինն էր և միակը, որ մնում էր նրան։

Այդ միտքը հանգում էր այն կետին, որ նա այս կամ այն

ճանապարհով, բայց որքան կարելի է շուտ, պետք է հեռանա ջոկատից։

Եվ առաջվա կյանքը քաղաքում, որը նրան թվում էր այնպես անուրախ ու ձանձրալի, այժմ, երբ նա մտածում էր, որ նորից կկարողանա վերադառնալ դրան, երևում էր բախտավոր ու անհոգ և միակ հնարավորը։

Տեսնելով Լևինսոնին՝ Մեչիկը շփոթվեց ոչ այնքան նրա համար, որ հրացանը կարգին չէր, այլ՝ որ թե այդ մտքերի պահին անակնկալ վրա էին հասել։

— Այ թե զինվոր ես, հա՞— ասաց Լևինսոնը բարեսրտորեն։ Ժպտացող օրապահից հետո նա չէր ուզում բարկանալ։— Սարսափելի՞ է դանդնելը, հա՞։

— Ո՛չ... ինչո՞ւ,— շփոթվեց Մեչիկը,— ես արդեն սովոր եմ...

— Իսկ ես ոչ մի կերպ չեմ կարողանում ընտելանալ,— ժպտաց Լևինսոնը։— Ինչքան ժամանակ է՝ մենակ ման եմ գալիս ոտքով, ձիով, և՛ ցերեկը, և՛ գիշերը, էլի միշտ ահ եմ զգում... է՛, ինչպե՞ս է այստեղ, հանգի՞ստ է։

— Հանգիստ է,— ասաց Մեչիկը՝ նայելով նրան զարմանքով և որոշ երկչոտությամբ։

— Ոչինչ, շուտով ձեզ համար ավելի հեշտ կլինի,— արձագանքեց Լևինսոնն ասես ոչ թե Մեչիկի խոսքերին, այլ այն բանին, ինչ որ ծածկված էր դրանց տակ։— Միայն թե Տոգո-Վակա եկնենք, այնուհետև հեշտ է։ Մթո՞ւմ ես։ Ո՞չ։

— Ո՛չ, չեմ ծխում... այնպես, երբեմն հանաք եմ անում,— շտապով ավելացրեց Մեչիկը, հիշելով Վարյայի տված քիսան և կարծելով, թե Լևինսոնն անպատճառ պետք է գիտենա այդ քիսայի գոյության մասին։

— Իսկ առանց ծխելու տաղտկալի չէ՞... «Բանը թութուն է», կասեր Կանուննիկովը,— այդ ապրանքնով մի լավ պարտեզան ունենք։ Չգիտեմ, արդյոք քաղաք ապրե՞ց նա...

— Ես ուզում եմ նրան զեկուցագրով, բայց ժամանակը շատ անհանգիստ է, իսկ այնտեղ մեր ամբողջ հավաքատեղին է։

— Բայց չէ՞ որ էլի կարելի է ուղարկել,— ասաց Մեչիկն անբնական ձայնով, աշխատելով ինչպես ճնացնել, իբրև թե

իր խոսքերի մեջ ոչ մի առանձին բան չկա։— Միտք չունե՞ք էլի ուղարկելու։

— Ի՞նչ կա որ,— ականջները սրեց Լևինսոնը։

— Հենց այնպես... Եթե միտք ունեք՝ ես կարող եմ տանել... Ինձ այնտեղ ամեն ինչ ծանոթ է...

Մեչիկին թվաց, թե ինքը շատ շտապեց, և Լևինսոնի համար այժմ ամեն ինչ պարզ է։

— Ո՛չ, միտք չունեմ,— մտածելով՝ դանդաղ ասաց Լևինսոնը։— Ի՞նչ ունեք այնտեղ. ազգականնե՞ր։

— Ո՛չ, ես առհասարակ աշխատել եմ այնտեղ... այսինքն՝ ազգականներ ունեմ, բայց ոչ թե դրա համար ... Ոչ, դուք կարող եք ինձ վստահել. երբ ես աշխատում էի քաղաքում, ինձ շատ անգամ պետք էր լինում ծածուկ ծրագրեր տանել-բերել։

— Ո՞ւմ հետ եք աշխատել։

— Աշխատել եմ մաքսիմալիստների հետ, բայց ես այն ժամանակ կարծում էի, թե դա միևնույնն է...

— Այսինքն՝ ինչպե՞ս թե միևնույնն է։

— Թե ում հետ աշխատել...

— Իսկ ա՞յժմ։

— Իսկ այժմ ինձ բոլորովին շփոթեցրին,— ասաց Մեչիկը կամացուկ՝ չիմանալով, թե վերջապես ինչ է պահանջվում իրենից։

— Այդպե՞ս...— երկարացնելով ասաց Լևինսոնը, ասես դա հենց այն էր, ինչ որ պահանջվում էր։— Ո՛չ,ո՛չ, միտք չունեմ... միտք չունեմ ուղարկելու,— կրկնեց նա նորից։

— Ոչ, գիտե՞ք ինչու խոսեցի դրա մասին...— սկսեց Մեչիկը հանկարծակի, ջղային վճռականությամբ, և նրա ձայնը դողաց։— Միայն թե դուք վատ մի՛ մտածեք իմ մասին և մի՛ կարծեք, թե ինչ-որ բան եմ թաքցնում. ես ձեզ հետ բոլորովին սրտաբաց կլինեմ...

«Հիմա ես նրան կասեմ բոլորը», մտածեց նա՝ զգալով, որ իսկապես բոլորը կասի, չգիտենալով՝ արդյոք դա լա՞վ է թե՞ վատ։

— Ես խոսեցի դրա մասին նաև այն պատճառով, որ ինձ թվում է, թե բոլորովին անպետք ու անօգուտ պարտիզան եմ, և ավելի լավ կլինի, եթե դուք ինձ ուղարկեք։ Ոչ, դուք մի՛

կարծեք, թե վախենում եմ կամ ձեզնից մի բան եմ թաքցնում, չէ՞ որ ես իսկապես ոչինչ չգիտեմ և ոչինչ չեմ հասկանում։ Ախր ես այստեղ ոչ ոքի, ոչ ոքի հետ չեմ կարող հարմարվել, ոչ ոքից օգնություն չեմ տեսնում, բայց մի՞թե մեղավոր եմ դրանում։ Ես բոլորին մոտենում էի բաց հոգով, բայց միշտ հանդիպում էի կոպտության, ծաղրանքների, չնայած որ եղել եմ կոմիվներում բոլորի հետ մեկտեղ և ծանր վիրավորվել եմ. դուք դա գիտեք... Այժմ ես ոչ ոքի չեմ հավատում. գիտեմ, որ եթե ավելի ուժեղ լինեի, ինձ կլսեին, ինձանից կվախենային, որովհետև այստեղ ամեն մեկը միայն դա է հաշվի առնում, ամեն մեկը մտածում միայն այն մասին, որ իր փորը լցնի, թեկուզ դրա համար գողանա ընկերոջից, և ոչ ոք գործ չունի մնացածների հետ... Ինձ երբեմն նույնիսկ թվում է, որ եթե նրանք վաղը ընկնեն Կոլչակի մոտ, նույն ձևով կծառայեն Կոլչակին և նույն ձևով խստիվ դատաստան կտեսնեն բոլորի հետ, իսկ ես չեմ կարող, ես այդ բանն անել չեմ կարող...

Մեչիկն զգում էր, որ ամեն մի խոսքի հետ իր մեջ պատրվում է մի սև քող, խոսքերն արտասովոր թեթևությամբ թռչում են մեծացող անցքից, և դրանից նա ավելի թեթև էր զգում իրեն։ Ուզում էր էլի ու էլի խոսել, և արդեն բոլորովին միևնույնն էր, թե Լևինսոնն ինչպես կվերաբերվի դրան։

«Այ քեզ բա՜ն... այ քեզ շիլա՜»...— մտածում էր Լևինսոնը, է՛լ ավելի մեծ հետաքրքրությամբ լսելով այն, ինչ որ ջղայնորեն թրթռում էր Մեչիկի խոսքերի տակ։

— Կաց,— ասաց նա վերջապես՝ դիպչելով նրա թևին, և Մեչիկը մի առանձին պարզությամբ իր վրա զգաց նրա խոշոր ու մութ աչքերը։— Դու, եղբայր, շատ բան ասացիր՝ ետ չես դարձնի... Կանգ առնենք առայժմ սրա վրա։ Վերջնենք ամենակարևորը... Դու ասում ես, որ ամեն մեկն այստեղ մտածում է միայն այն մասին, որ իր փորը լցնի...

— Ախր չէ,— բացականչեց Մեչիկը, նրան թվում էր, թե ամենակարևորն իր խոսքերում դա չէր, այլ այն, թե ինքն այստեղ ինչ վատ է ապրում, ինչպես բոլորն իրեն անիրավացի կերպով վշտացնում են, և ինքը ինչ լավ է անում՝ ասելով դրա մասին սրտաբաց, հստակորեն։— Ես ուզում էի ասել...

— Ոչ, արդեն սպասիր, հիմա ես կասեմ,— մեղմորեն

կտրեց նրա խոսքը Լևինսոնը։— Դու ասացիր, որ այստեղ ամեն մեկը մտածում է այն մասին, որ իր փորը լցնի, և եթե մենք ընկնենք Կոլչակի մոտ...

— Ա՛խ, ես անձամբ ձեր մասին չասացի... Ես...

— Դա միևնույնն է... Եթե նրանք ընկնեին Կոլչակի մոտ, նույնպես խստիվ և անմիտ կերպով կկատարեին այն գործը, որը կկամենար Կոլչա՞կը։ Բայց գա հա բոլորովին սխալ է...— Եվ Լևինսոնն սկսեց սովորական խոսքերով բացատրել, թե ինչու դա իրեն սխալ է թվում։

Բայց նա որքան բացատրում էր, այնքան իր համար պարզ էր դառնում, որ իր խոսքերը զուր են։ Ամեն հատ ու կտոր նկատողություններից, որ Մեչիկն անում էր նրա խոսելու միջոցին, Լևինսոնն զգում էր, որ պետք էր խոսել մի այլ բանի մասին, ավելի հիմնական և սիրելիական, որին նա ինքը ոչ առանց գժվարության մատնցավ իր ժամանակին, և որը այժմ մտել է նրա հոգու և արյան մեջ։ Բայց գրա մասին այժմ խոսելու հնար չկար, որովհետև ամեն մի բառն այժմ մարդկանցից պահանջում էր որոշն մտածված և վճռական գործողություն։

— Դե, քեզ հետ ի՞նչ կարելի է անել,— ասաց նա վերջապես դաժան և բարի խղճահարությամբ,— ինքդ քեզ մեղադրիր։ Իսկ գնալու տեղ չկա քեզ համար։ Միտք չունի գնալը։ Կազանն, ուրիշ ոչինչ։ Ավելի լավ է մտածենք ինչպես հարկն է, մանավանդ այն մասին, ինչ որ քեզ ասացի։ Գրա մասին մտածելը վատ չէ...

— Ես հենց դրա մասին էլ մտածում եմ,— խուլ ձայնով ասաց Մեչիկը, և առաջվա չղային ուժը, որ ստիպում էր նրան այնպես շատ և համարձակ խոսել, մնկեն լքեց նրան։

— Իսկ պլխավորը՝ քո ընկերներին քեզանից վատ մի՛ համարիր։ Նրանք ավելի վատ չեն, ոչ...— Լևինսոնը հանեց քիսան և զանդաղորեն սկսեց ծխախոտ փաթաթել։

Մեչիկը ժույլ թախիծով հետևում էր նրա արագին։

— Իսկ փակաղակը, այնուամենայնիվ, փակիր,— ասաց Լևինսոնը հանկարծ և նրևում էր, որ նա իրենց ամբողջ խոսակցության ժամանակ հիշում էր բաց փակաղակի մասին։— Արդեն ժամանակն է սովորել այդպիսի բաներ՝ առանց չենք։— Նա վառեց լուցկին, և մի պահ մթության միջից երևացին նրա կիսափակ կոպերը՝ երկար թարթիչներով, բարակ ունգները, հանգիստ, շիկակարմիր մորուքը։— Հա՛, ինչպե՞ս է քո մատակ ձին։ Դու էլի նույն ձի՞ն ես նստում։

— Այո՛...

Լևինսոնը մտածեց։

— Այ թե ինչ. վաղը ես Նիվկային կտամ քեզ, Նիվկային գիտե՞ս։ Պիկան էր նրան հեծնում... Իսկ Զյուչիխային կհանձնես անասնավարին։ Եղա՞վ։

— Եղավ,— ասաց Մեչիկը տխուր։

«Այ քեզ խառնակի՛չ»,— մտածում էր հետո Լևինսոնը, թեթև և զգույշ քայլելով մուգ խոտերի վրայով և հաճախ քաշելով ծխախոտը։ Նա մի քիչ հուզված էր այդ խոսակցությունից։ Մտածում էր այն մասին, թե Մեչիկը ինչ թույլ է դեռ, ծույլ ու կամազուրկ, և հիրավի ինչ անուրախ է, որ երկրում դեռևս ծնվում են անպետք ու աղքատ մարդիկ։ Այո, քանի դեռ մեզ մոտ մեր հոդի վրա,— մտածում էր Լևինսոնը՝ քայլերն արագացնելով և էլ ավելի հաճախ քաշելով ծխախոտը,— քանի դեռ միլիոնավոր մարդիկ ապրում են կեղտի և չքավորության մեջ, հերկում նախնադարյան գութանով, հավատում շաբ ու հիմար աստծուն, կարող են ծնվել այսպիսի կամազուրկ և ծույլ մարդիկ, այսպիսի անպետք, անհոտ ծաղիկներ»։

Եվ Լևինսոնը հուզվում էր, որովհետև այն ամենը, ինչի մասին նա մտածում էր, ամենախոր և կարևոր բանն էր, որի մասին միայն կարող էր մտածել, որովհետև այդ աղքատությունն ու խեղճությունը հաղթահարելու մեջ ամփոփված էր իր սեփական կյանքի հիմնական խմաստը, որովհետև ոչ մի Լևինսոն չէր լինի, այլ կլիներ մի ուրիշը, եթե նրա մեջ չապրեր մեծ, ոչ մի այլ ցանկության հետ չհամեմատվող ծարավը նո՛ր, զեղեցիկ, ուժեղ և բարի մարդու։ Բայց ինչ խոսք կարող էր լինել նոր, զեղեցիկ մարդու մասին, քանի դեռ անթիվ միլիոններ ստիպված են ապրել այդպիսի նախնադարյան և ողորմելի, այդպիսի անասելի աղքատիկ կյանքով։

«Բայց մի՞թե ես էլ մի ժամանակ այդպես էի կամ դրա նման»,— մտածում էր Լևինսոնը, մտքով դառնալով Մե-

չիկին։ Եվ նա փորձում էր երևակայել իրեն այնպես, ինչպես մանկության օրերին էր, վաղ պատանեկության ժամանակ, բայց այդ բանը նրան հաջողվում էր դժվարությամբ. չափազանց ամուր ու խոր էին ընկել,— և չափազանց ցգալի էին նրա համար,— հետագա տարիների շերտավորումները, երբ նա արդեն այն Լևինսոնն էր, որին բոլորը գիտեին ինչպես Լևինսոնի, ինչպես մի մարդու, որը միշտ ընթանում էր առաջին շարքերում։

Նա միայն կարողացավ հիշել մի հին, ընտանեկան լուսանկար, որի մեջ մի վախտ հրեա տղա, սև զգեստով, խոշոր, միամիտ աչքերով, զարմացած, ոչ մանկական համառությամբ նայում էր այն կետին, որտեղից, ինչպես, այն ժամանակ ասել էին, պետք է դուրս թռչեր մի գեղեցիկ թռչնակ։ Նա այնպես էլ չթռավ, և հիշում է, քիչ էր մնացել, որ լաց լիներ հիասթափությունից։ Բայց դեռ որքա՜ն շատ այդպիսի հիասթափություններ պետք եղան, որպեսզի վերջնապանապես համոզվի, թե «այդպես չի լինում»։

Եվ երբ նա իսկապես համոզվեց դրանում, հասկացավ, թե ինչ անհամար վնաս են բերում մարդկանց գեղեցիկ թռչնակների մասին հորինված սուտ հեքիաթները,— այն թռչնակների, որոնք ինչ-որ տեղից պետք է դուրս թռչեն, և որոնց շատերը զուր տեղը սպասում են իրենց ամբողջ կյանքում... Ոչ, ինքն այլևս նրանց կարիքը չուներ։ Ինքն անխնա կերպով խեղդել էր իր մեջ նրանց քաղցր, անշարժ կարոտը՝ այն ահռնը, ինչ որ ժառանգություն էր մնացել ճղմված սերունդներից, որոնք կրթվել էին գեղեցիկ թռչնակների մասին հորինված սուտ հեքիաթներով... «Տեսնել ամեն բան այնպես, ինչպես որ կա, որպեսզի կարելի լինի փոխել այն, ինչ որ կա, և կառավարել այն, ինչ որ կա», ահա թե ինչպիսի պարզ և դժվար իմաստության էր հանգել Լևինսոնը։

«...Ոչ, այնուամենայնիվ, ես ամուր տղա էի, նրանից շատ ավելի ամուր,— մտածում էր նա այժմ մի անբացատրելի,ուրախ հաղթանակով, որը ոչ ոք չէր կարող հասկանալ, նույնիսկ ենթադրել, թե նրա մեջ կա,— ես ոչ թե միայն ուզում էի շատ բան, այլև շատ բան կարող էի՝ բանը դրանում է...» Նա գնում էր արդեն առանց ճամփան որոշելու, և պաղ, ցողոտ ճյուղերը թարմացնում էին նրա երեսը. նա զգում էր ինչ-որ անբնական ուժերի հորդում, որոնք ասես բարձրացնում էին նրան անհասանելի բարձունքի, և այդ ընդարձակ, երկրային, մարդկային բարձրությունից նա իշխում էր իր հիվանդությունների, իր թույլ մարմնի վրա...

Երբ Լևինսոնը ճամբար հասավ, խարույկներն արդեն մարելու վրա էին, օրապահը այլև չէր ժպտում. լսվում էր, թե ինչպես նա ձիու մոտ շարչարվում էր՝ խլաձայն հայհոյելով։ Լևինսոնը հասավ իր խարույկին։ Խարույկը հաղիվ էր վառվում. նրա մոտ խորունկ և անխռով քնով քնած էր Բակլանովը՝ շինելի մեջ փաթաթված։ Լևինսոնը խարույկի մեջ ձգեց շոր խոտ, ցախ, և կրակը բորբոքեց։ Սաստիկ լարումից նրա գլուխը պտտվեց։ Բակլանովն զգաց ջերմությունը, շուռ եկավ և քնի մեջ ճմճմացրեց. նրա երեսը բաց էր, շրթունքները դուրս էին ցցված, ինչպես երեխաներն են անում, գլխարկը քունքին սեղմված, ցից տնկվել էր, և նա ամբողջովին նման էր մի մեծ, կուշտ ու բարի լակոտի։ «Տեսա՞ր»,— սիրով մտածեց Լևինսոնը և ժպտաց. Մեչիկի հետ ունեցած խոսակցությունից հետո առանձնապես հաճելի էր նայել Բակլանովին։

Հետո տնքալով պառկեց նրա կողքին և նոր էր փակել աչքերը, երբ պտտվեց, ճոճվեց, լողաց ինչ-որ տեղ, չզգալով իր մարմինը, մինչև որ մեկեն գլորվեց անհատակ, սև փոսի մեջ։

14

ՄԵՏԵԼԻՑԱՅԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ

Մետելիցային ուղարկելով հետախուզության՝ Լևինսոնը պատվիրեց, որ նա անպատճառ այդ իսկ գիշերը վերադառնա։ Բայց այն գյուղը, ուր ուղարկված էր դասակի հրամանատարը, իսկապես շատ ավելի հեռու էր, քան ենթադրում էր Լևինսոնը։ Մետելիցան ջոկատը թողեց կեսօրից հետո, ժամը չորսի մոտ, և բարեխղճորեն քշում էր ձին, նրա վրա կռացած, ինչպես գիշատիչ թռչուն, դաժանորեն և ուրախ փքվելով բարակ ոտնգները, ասես հարբած այդ խելագար վազքից՝ հինգ դանդաղ և ձանձրալի օրից հետո։ Բայց աշնանային տայգան, առանց պակասելու, մինչև աղջամուղջ

վազում էր ետևից խոտերի շրշյունով, մեռնող օրվա պաղ և տխուր լույսով։ Արդեն բոլորովին մթնել էր, երբ նա վերջապես դուրս եկավ տայգայից և ձին կանգնեցրեց մի հին, փտած, փուլ եկած կտուրով մեղվանոցի մոտ, որը երևի, վաղուց լքել էին մարդիկ։

Նա ձին կապեց և, բռնելով փխրուն, ձեռքի տակ փշրվող ատաղձի ծայրերից, բարձրացավ անկյունը, մութ անցքն ընկնելու վտանգին ենթարկվելով, որտեղից գարշելի ու ահավոր նեխած խոտի և լպրծուն փայտի հոտ էր փչում։ Բարձրանալով կառուցն, կեսճկված ոտքերի վրա, մոտ տասը րոպե նա կանգնած մնաց՝ առանց շարժվելու, ուշադիր նայելով և ականջ դնելով գիշերին, որ անտառի մութ ֆոնի վրա անտեսանելի էր և ավելի ևս նման գիշատիչ թռչնի։ Նրա առաջ փռված էր մռայլ հովիտը խոտի մութ դեզերով և պուրակներով, սեզմված երկու շարք սոպկաներով, որոնք խիտ սկսն էին տալիս անհրապույր ասաղալից երկնքի ֆոնի վրա։

Մետելիցան ցատկեց թամբին և ելավ ճամփի վրա։ Ճամփի սև, վաղուց ոտ չդիպած անվահետքերը կորչում էին խոտերի մեջ։ Կեչիների բարակ քները խաղաղ սպիտակին էին տալիս մթության մեջ, ինչպես հանգցրած մոմեր։

Նա բարձրացավ թմբի վրա. ձախ կողմից առաջվա պես գնում էր սոպկաների սև շարքը, որը ծռված էր, ինչպես հսկայական մի գազանի ողնաշար. գետն աղմկում էր։ Մոտ երկու վերստ հեռու, երևի հենց գետի մոտ, խարույկ էր վառվում. դա Մետելիցային հիշեցնում էր հովվական կյանքի որբ մենակությունը. ավելի հեռու, ճանապարհը կտրելով, ձգվում էին գյուղի դեղին, անհարթ կրակները։ Սոպկաների գիծն աջից թեքվում էր մի կողմ՝ կորչելով կապույտ մառախուղում. այդ ուղղությամբ տեղանքը խիստ ցածրանում էր։ Հավանաբար այնտեղով անցնում էր գետի հին հունը. նրա երկարությամբ սկսն էր տալիս մռայլ անտառը։

«Ճահիճ է այնտեղ, ուրիշ կերպ չի կարող լինել»,— մտածեց Մետելիցան։ Նա ցուրտ զգաց. պոկված կոճակներով, օձիքը բաց շապկի վրայից հագել էր զինվորական տաք բաճկոն՝ առանց կոճկելու։ Նա վճռեց նախ մոտենալ խարույկին։ Համենայն դեպս պատյանից հանեց ատրճանակը և խրեց գոտու մեջ, բաճկոնի տակ, իսկ պատյանը պահեց պայուսակի մեջ, թամբի ետևը։ Հրացանը մոտը չէր։ Այժմ նա նման էր դաշտից եկող գեղջուկի. գերմանական պատերազմից հետո շատերն էին այդպես ման գալիս՝ զինվորի տաք բաճկոններով։

Նա արդեն բոլորովին մոտեցել էր խարույկին, երբ հանկարծ մթության մեջ հնչեց ձիու անհամբերության խրխնջոց։ Հովատակն առաջ ընկավ և, ցնցվելով հղոր մարմնով, շարժելով ականջները, արձագանքեց կրքոտ ու ազիզորմ ձայնով։ Նույն վայրկյանին կրակի մոտ մի ստվեր շարժվեց։ Մետելիցան ուժգին զարկեց մտրակով և ծառայած ձիու հետ միասին...

Խարույկի մոտ, վախեցած աչքերը լայն շռած, մի ձեռքով մտրակը բռնած, խակ մյուսը, որ ճոճվող թևքի մեջ էր, վեր բարձրացրած, ասես պաշտպանվելով, կանգնած էր մի վտիտ, սևագույն տղա՝ տրեխներով, պատատուկված վարտիքով, իր հասակին անհամապատասխան երկար բաճկոնով, որը փաթաթած էր մարմնի շուրջը և կանեփի թելով գոտևորված։ Մետելիցան կատաղությամբ կանգնեցրեց ձին հենց տղայի քթի տակ, քիչ էր մնում նրան տրորեր, և ուզում էր արդեն մի հրամայական ու կոպիտ բան ասել, երբ հանկարծ իր առաջ տեսավ նրա վախեցած աչքերը, պատռված վարտիքի տակից երևացող մերկ ծնկները և ողորմելի՝ տիրոջ թիկունքից հանված բաճկոնը, որից այնպես հանգստավոր և խեղճ նայում էր տղայի մանկական բարակ, ծիծաղելի վիզը...

— Ի՞նչ ես կանգնել։ Վախեցա՞ր... Ա՛յ դու ճնճղուկ, ճրնճղուկ. այ քեզ հիմա՜ր,— շփոթված խոսեց Մետելիցան ակամա այն փաղաքշական կոպտությամբ, որով երբեք չէր խոսում մարդկանց հետ, այլ միայն ձիերի հետ։— Կանգնել է, և՝ վերջ... Բա որ քեզ տրորեի՞... Ա՛յ քեզ հիմա՜ր,— կրկնեց նա, բոլորովին մեղմանալով, զգալով, թե ինչպես այդ տղային և ամբողջ այդ խեղճությունը տեսնելուց հետո նրա մեջ զարթնում է մի բան՝ նոյնպիսի ողորմելի, ծիծաղելի, մանկական մի բան։

Տղան վախից հազիվ շունչ քաշեց և ձեռքը ցած իջեցրեց։

— Իսկ դու ի՞նչ վրա թռար աքլորի պես,— ասաց նա, աշխատելով խոսել լրջմտությամբ և անկախորեն, ինչպես

մեծ մարդ, բայց դեռ էլի վախենալով։— Կվախենա՞ս՝ այստեղ ես ձիեր ունեմ...

— Ձիե՞ր,— հեգնանքով ծոր տվեց Մետելիցան։— Ասացեք խնդրեմ։— Նա ձեռքերը հենեց կողքերին, գլուխը ետ գցեց՝ նայելով տղային, աչքերը կկոցած ու ատլասե խաղացկուն հոնքերը հազիվ շարժելով և հանկարծ ծիծաղեց այնպես սրտաբաց, բարձրաձայն, այնպիսի բարձր, բարի և ուրախ հնչյուններով, որ նույնիսկ ինքը զարմացավ, թե ինչպես են իրենից այդպիսի ձայներ դուրս գալիս։

Տղան շփոթված, անվստահորեն վեր քաշեց քիթը, բայց հասկանալով, որ ոչ մի վախենալու բան չկա, այլ բոլորը, ընդհակառակը, դուրս է գալիս շատ ուրախ, ենթադրվեց այնպես, որ նրա քիթը դեպի վեր ցցվեց, ու նա էլ բոլորովին տղայաբար կուշտ ծիծաղեց՝ հանդգնորեն զիլ։ Անսպասելիությունից Մետելիցան ավելի բարձր խնդաց, նրանք երկուսն էլ, ակամա իրար գրգռելով, այդպես քրքջացին մի քանի րոպե. մեկը՝ ետ ու առաջ ճոճվելով թամբի վրա, փայլեցնելով խարույկից հրային դարձած ատամները, իսկ մյուսը՝ հետույքի վրա ընկած, ափերը գետնին հենած և ամբողջ մարմնով ետ ընկնելով ամեն մի նոր պոռթկումից։

— Դե, լա՞վ ծիծաղեցիր, տղա,— վերջապես ասաց Մետելիցան՝ ոտքն ասպանդակից դուրս հանելով։— Խենթ ես դու իրավ...— Նա վայր ցատկեց և ձեռքերը մեկնեց կրակին։

Տղան, դադարելով ծիծաղելուց, նայում էր նրան լուրջ և ուրախ զարմանքով, կարծես նրանից սպասում էր էլի ամենաանսպասելի խենթություններ։

— Համա՞ թե ուրախ ես, սատանա,— ասաց նա վերջապես հատ-հատ և որոշ, ասես վերջնական հանրագումարի բերեց իր դիտողությունները։

— Ե՞ս,— ծիծաղեց Մետելիցան,— ես, ախպերս, ուրախ մարդ եմ...

— Իսկ ես այնպես վախեցա,— խոստովանեց տղան.— Այստեղ ձիեր ունեմ։ Իսկ հիմա կարտոֆիլ եմ եփում...

— Կարտոֆի՞լ։ Էդ շա՞տ լավ է...— Մետելիցան նստեց նրա կողքին, առանց ձեռքից բաց թողնելու ձիու սանձը։— Ո՞րտեղից ես ճարում էդ կարտոֆիլը...

— Այ քեզ բա՞ն, որտեղից ես ճարում... Այստեղ որքա՞ն

ուզես կա,— և տղան ձեռքով չորս կողմը ցույց տվեց։

— Գողանո՞ւմ ես, կնշանակի։

— Գողանում եմ... Տուր ես բռնեմ ձիդ... Հովատակ չէ՞, քոնը... ես, ախպերս, բաց չեմ թողնի, մի՞ վախի... լավ հովատակ է,— ասաց տղան, փորձված հայացքով տնտղելով ձիու ընտիր, նիհար, քաշված փորով և մկանուտ տեսքով։— Իսկ դու ինքդ ո՞րտեղից ես.

— Լավ ձի է,— համաձայնեց Մետելիցան։— Իսկ դո՞ւ որտեղից ես։

— Ա՜յ,— տղան գլխով սրավ դեպի կրակների կողմը.— Խանիխեզա է մեր գյուղի անունը... Հարյուր քսան տուն է, ինչպես մեկ կոպեկ,— կրկնեց նա մեկի խոսքերը և թքեց։

— Այդպե՞ս... Իսկ ես Վորոբյովկայից եմ, լեռնաշղթայի այն կողմից։ Գուցե լսե՞լ ես։

— Վորոբյովկայի՞ց։ Չէ, չեմ լսել, հեռու է երևի...

— Հեռու է։

— Ինչո՞ւ ես եկել մեզ մոտ։

— Դե ինչպես ասեմ... էդ, ախպերս, երկար պատմություն է... Միտք ունեմ ձիեր գնել ձեղանից. ձիեր, ասում են, շատ ունեք այստեղ... Ես, ախպերս, սիրում եմ նրանց, էդ ձիերին,— թափանցող խորամանկությամբ ասաց Մետելիցան,— ինքս ամբողջ կյանքում արածացրել եմ, միայն ուրիշներինը։

— Իսկ ես, կարծում ես, ի՞մ ձիերն եմ արածացնում. տիրոջս ձիերն են...

Տղան թեքից դուրս հանեց վտիտ, կեղտոտ ձեռքը և մեծ մտրակով սկսեց փորփրել մոխիրը, որի միջից հրապուրիչ ու ճարպիկ կերպով գլորվեցին սև, մեծ կարտոֆիլները։

— Գուցե դու ուտե՞լ ես ուզում,— հարցրեց նա։— Ես հաց էլ ունեմ, միայն քիչ...

— Շնորհակալ եմ, ես հենց նոր կուշտ կերա՝ ա՜յ,— ստեց Մետելիցան, ցույց տալով կոկորդը և միայն այժմ զգալով, թե ինչպես սաստիկ ուտել է ուզում։

Տղան կիսեց կարտոֆիլը, փչեց, կճեպով միասին կեսը դրեց բերանը, պտտեց լեզվի վրա և ախորժակով սկսեց ծամել՝ սուր ականջները թեթև շարժելով։ Ծամելը վերջացնելով՝ նա նայեց Մետելիցային և նույնպես հատ-հատ ու որոշ, ինչ-

պես քիչ առաջ տրակել էր նրան իբրև ուրախ մարդ, ասաց.

— Որբ եմ ես, կես տարի է արդեն որբ եմ։ Հորս կազակները սպանեցին, իսկ մորս բունաբարեցին ու էլի սպանեցին, եղբորս էլ սպանեցին...

— Կազակնե՞րը,— սթափվեց Մետելիցան։

— Բա ո՞վ։ Սպանեցին հենց այնպես։ Ամբողջ բակը այրեցին, և միայն մերը չէ՛, այլ մի տասներկու բակ, ո՛չ պակաս, և ամեն ամիս գալիս են, հիմի էլ մի քառասուն մարդ կա։ Իսկ մեր հետևի՝ գավառային գյուղում, որ կոչվում է Ռակի՛տնոյե, լրիվ մի գունդ է կանգնած ամբողջ ամառը։ Ի՞նչ վայրագություններ են անում։ Կարտոֆիլ վերցրու։

— Բա դուք ինչպե՞ս՝ չփախաք... Այ, ինչ անտառ ունեք...— Մետելիցան նույնպես քիչ բարձրաձայն տեղից։

— Անտառն ի՞նչ է որ։ Ողջ կյանքդ անտառում հո չե՞ս նստելու։ Համ էլ ճահիճ կա այնտեղ,— մեջը կմնաս,— այնպիսի ջրափոս է...

«Այդպես էլ գիտեի»,— մտածեց Մետելիցան, հիշելով իր ենթադրությունները։

— Գիտե՞ս ինչ,— ասաց նա վեր կենալով,— արածացրու իմ ձին, իսկ ես ոտքով գյուղ կերթամ։ Տեսնում եմ՝ ձեզանից ոչ թե բան կարելի է գնել. այլ վերջին ունեցածդ էլ կիսվեն...

— Ինչի՞ ես շտապում։ Նստի՛ր,— ասաց փոքրիկ հովիվը, միանգամից վշտանալով, և նույնիսկ վեր կացավ։— Մենակ ձանձրալի է այստեղ,— բացատրեց նա խղճալի ձայնով՝ նայելով Մետելիցային իր մեծ, խնդրող և փոնավ աչքերով։

— Չի կարելի, ախպեր,— Մետելիցան տարածեց ձեռքերը,— հենց հետախուզելու ժամանակն է, քանի որ մութ է... Ես շուտով կվերադառնամ, իսկ ձին կկապենք. որտե՞ղ է կենում նրանց գլխավորը։

Տղան բացատրեց, թե ինչպես պետք է գտնել խրճիթը, ուր էսկադրոնի գլխավորն է կենում, և ինչպես հարմար է անցնել հետևի կողմից։

— Իսկ շներ չա՞տ ունեք։

— Շները շատ են, բայց չար չեն։

Մետելիցան, ձին կապելով և մնաս բարև ասելով, առաջ

շարժվեց արահետով, գետի երկարությամբ։ Տղան թախիծով նայում էր նրա ետևից, մինչև որ նա կորավ խավարում։ Կես ժամից հետո Մետելիցան արդեն գյուղի մոտ էր։ Արահետը ծռվեց դեպի աջ, բայց նա, փոքրիկ հովվի խորհրդով, շարունակում էր գնալ հնձված մարգով, մինչև որ հանդիպեց մի ցանկապատի, որ անցնում էր գեղջուկների բանջարանոցների մոտով, ապա գնաց ետևի կողմերով։ Գյուղն արդեն քնած էր. կրակները մարել էին. աստղերի լույսով հազիվ երևում էին դատարկ ու խաղաղ պարտեզների մեջ գտնվող տնակների տաք, ծղոտե կտուրները. բանջարանոցներից նոր փորված խոնավ հողի հոտ էր գալիս։

Մետելիցան, անցնելով երկու նրբանցք, շրջվեց դեպի երրորդը։ Շները նրան ուղեկցում էին անհաստատ, խուլ հաչոցով, ասես իրենք էլ վախեցած էին, բայց ոչ ոք փողոց դուրս չեկավ, չնկատեց նրան։ Զգացվում էր, որ այնտեղ սովոր էին ամեն բանի, սովոր էին նաև այն բանին, որ անծանոթ, օտար մարդիկ թափառում են փողոցներում, անում այն, ինչ որ ուզում են։ Զէին երևում նույնիսկ աշնան ժամանակ սովորական շշնջացող զույգերը, երբ գյուղերում հարսանիքներ են կատարվում. խիտ ստվերում, ցանկապատների մոտ ոչ ոք սիրո խոսքեր չէր շշնջում այդ աշունքին։

Առաջնորդվելով այն նշաններով, որ տվել էր փոքրիկ հովիվը, նա անցավ էլի մի քանի նրբանցք, պտտվելով եկեղեցու շուրջը, և վերջապես դեմ առավ տերտերի պարտեզի պատին։ (Էսկադրոնի պետը կենում էր տերտերի տանը)։ Մետելիցան զննեց բակը, աչքերը հածեց չորս կողմ և, կասկածելի բան չգտնելով, անաղմուկ ու արագ պատից ներս ցատկեց։

Պարտեզը ծառաշատ էր և ոստախիտ, բայց տերևներն արդեն թափվել էին։ Մետելիցան սրտի զորեղ թրթռումը զսպելով՝ համարյա առանց շունչ քաշելու անցավ խորքը։ Թփերը հանկարծ վերջացան (դրանք կտրում էր ծառուղին), և մոտ քսան սաժեն հեռավորության վրա, իրենից դեպի ձախ, նա տեսավ մի լուսավորված պատուհան։ Սա բաց էր։ Ներսում մարդիկ էին նստած։ Հավասար, փափուկ լույսը հոսում էր թափված տերևների վրա, և խնձորենիները, ծայրերից լուսավորված, կանգնած էին նրա մեջ՝ տարօրինակ և ոսկյա...

«Ահա նա»,— մտածեց Մետելիցան, և այտը ջղայնորեն ցնցվեց, այտը ամբողջովին բռնկվեց, վառվեց անվախ հանդգնության այն ահալի, անդիմադրելի զգացումով, որը նրան դրդում էր սովորաբար ամենաանմիտ քաջագործությունների. դեռ խորհելով, թե արդյոք պե՞տք է, որ ինքը ծածուկ լսի այդ լուսավորված սենյակի մարդկանց խոսակցությունը, նա հաստատ գիտեր, որ այդտեղից կհեռանա միայն այն ժամանակ, երբ այդ բանը կանի։ Մի քանի րոպեից հետո նա կանգնած էր խնձորենու ետևում, հենց լուսամուտի մոտ, ագահորեն լսելով և մտքում պահելով այն բոլորը, ինչ որ կատարվում էր այնտեղ։

Նրանք չորս հոգի էին. սենյակի խորքում, սեղանի առաջ նստած, թուղթ էին խաղում։ Աջ կողմում նստած էր մի փոքրիկ, ծեր տերտեր՝ սղալած մազերով և ժիր աչքերով. նա ճարպկորեն այս ու այն կողմ էր տանում սեղանի վրա իր նիհար, փոքրիկ ձեռքերը, անձայն վերցնում էր խաղաթղթերը մանրիկ մատներով և աշխատում աչքերով թափանցել նրանցից ամեն մեկի տակ, այնպես որ նրա հարևանը, որ նստել էր թիկունքը Մետելիցային դարձրած, ընդունելով տրված թղթերը, վախեցած նայում էր նրանց և իսկույն թաքցնում սեղանի տակ։ Դեմքը Մետելիցային դարձրած՝ նստած էր մի գեղեցիկ, գեր, ծույլ և, ըստ երևույթին, բարեսիրտ սպա, ծխամորճը ատամների մեջ. անշուշտ, նրա գիրության պատճառով Մետելիցան կարծեց, թե դա էսկադրոնի պետն է։ Սակայն դրանից հետո, ամբողջ ժամանակ, իրեն անբացատրելի պատճառներով, նա ավելի շատ հետաքրքրվում էր չորրորդ խաղացողով, որ ուռած ու դժգույն դեմքով և անշարժ թերթերունքներով մեկն էր. նա սև փափախ ուներ և առանց ուսադիրների յափնջի, որի մեջ փաթաթվում էր ամեն անգամ, երբ արդեն թղթերը նետում էր։ Հակառակ այն բանին, ինչ որ Մետելիցան սպասում էր լսելու, նրանք խոսում էին ամենասովորական և անհետաքրքրական բաների մասին. խոսակցության ամբողջ կեսը դառնում էր թղթերի շուրջը։

— Ութսուն եմ խաղում,— ասաց նա, որը նստած էր թիկունքը Մետելիցայի կողմը դարձրած։

— Թույլ է, ձերդ մեծապատվություն, թույլ է,— ձայն տվեց սև փափախը։— Հարյուր, առանց նայելու,— ավելացրեց նա անհոգ։

Գեղեցիկն ու գերը, աչքերը կկոցելով, ճշտեց իր թղթերը և, ծխամորճն ատամների արանքից հանելով, բարձրացրեց մինչև հարյուր հինգ։

— Ես չեմ խաղում,— ասաց առաջինը, շուռ գալով դեպի տերտերը, որ բռնել էր առնելու թուղթը։

— Ես այդպես էլ կարծում էի...— ժպտաց սև փափախը։

— Մի՞թե ես մեղավոր եմ, որ թուղթը չի գալիս,— արդարանալով ասում էր առաջինը, ցավակցության համար տերտերին դիմելով։

— Քի՛չ-քիչ, քի՛չ-քիչ,— հանաք էր անում տերտերը, աչքերը կկոցելով և մանր-մանր ծիծաղելով, ասես այդպիսի մանր ծիծաղելով կամենալով ընդգծել իր խոսակցի խաղի ամբողջ չնչինությունը։— Իսկ երկու հարյուր երկու միավորն արդեն ջնջեցիք... գիտենք ձեզ... և նա ոչ անկեղծ, փաղաքշական խորամանկությամբ սպառնաց մատով։

«Այ անի՜ծ»,— մտածեց Մետելիցան։

— Ախ, դո՞ւք էլ չեք խաղում,— հացրեց տերտերը ծույլ սպային։— Ստացեք թուղթը,— ասաց նա սև փափախին և թղթերը չբացած տվեց նրան։

Մի րոպեի ընթացքում նրանք մոլեգնորեն շրմփացնում էին սեղանին, մինչև որ սև փափախը տարվեց։ «Ո՞նց էր պարծենում ձկան աչքը»,— արհամարհանքով մտածեց Մետելիցան, չգիտենալով՝ արդյոք հեռանա՞ թե էլի սպասի։ Բայց նա չկարողացավ հեռանալ, որովհետև տարվողը շուռ եկավ դեպի լուսամուտը, և Մետելիցան զգաց իր վրա նրա սուր հայացքը, որ պաղել էր սարսափելի, չթափվող լարվածության մեջ։

Այդ ժամանակ թիկունքը լուսամուտին դարձրածը սկսեց խառնել խաղաթղթերը։ Նա այդ բանը անում էր խնամքով ու տնտեսորեն, ինչպես աղոթում են ոչ շատ ծեր պառավները։

— Իսկ Նեչիտայլոն չկա,— հորանջելով ասաց ծույլը։— Ինչպես երևում է, գործը հաջող է։ Լավ կլիներ, եթե ես էլ հետը գնայի...

— Մեկտե՞ղ,— հարցրեց փափախը՝ լուսամուտից շուռ

գալով։— Նա կդիմանար,— ավելացրեց դեմքը ծռմռելով։

— Վասենկա՞ն,— հարցրեց տերտերը։— Ո՞ւ-ու... Նա կբավարարեր... Մենք այստեղ մի վիթխարի տիրացու ունենինք. հա, ախր ես ձեզ պատմել եմ... Դեհ, միայն Սերգեյ Իվանովիչը չէր համաձայնի... Նրբեք... Գի՞տես, թե նա երեկ գաղտնի ինձ ինչ ասաց։ «Ես,— ասում է,— նրան հետս կտանեմ,— ես,— ասում է,— նրա ամուսնանալուց չեմ քաշվի, ես,— ասում է...» Օ՛յ,— կանչեց մեկեն տերտերը, բերանն ափով ծածկելով և խորամանկորեն փայլեցնելով իր խելոք, փոքրիկ աչքերը։— Այ հիշողությո՛ւն։ Չէի ուզում ասել, բայց բերանիցս դուրս թռավ, չմատնեք,— և նա շինծու վախով ափերը շարժեց։ Եվ թեպետ բոլորն էլ, ինչպես նաև Մետելիցան, տեսան նրա ամեն մի խոսքի և շարժման կեղծիքն ու ծածուկ պատրաստակամությունը, բայց ոչ ոք այդ մասին չասաց նրան, և բոլորը ծիծաղեցին։

Մետելիցան, կռանալով և կողքանց ետ-ետ գնալով, հեռացավ լուսամուտից։ Նոր էր նա պտույտ արել դեպի լայնությամբ անցնող ծառուղին, երբ հանկարծ երես-երեսի դեմ առավ մի մարդու, որի մի ուսին ձգած էր կազակի շինել։ Նրա ետևում էլի երկու հոգի էին երևում։

— Դու ի՞նչ ես անում այստեղ,— զարմացած հարցրեց այդ մարդը՝ անգիտակցական շարժումով բռնելով շինելը, որը քիչ էր մնացել ընկներ, երբ նա հանդիպեց Մետելիցային։

Մետելիցան ցատկեց մի կողմ և վազեց դեպի թփերը։

— Կա՛ց։ Բռնի՛ր նրան։ Բռնի՛ր։ Այստե՞ղ ... է՛յ...— կանչեցին մի քանի ձայներ։ Սուր, կարճ տրաքոցներն աղմկեցին ետևից։

Մետելիցան, խճճվելով թփերում և գլխարկը կորցրած, նետվեց փախչելու պատահածին պես, բայց ձայները տրնքում էին, ոռնում առջևում, և փողոցից հասնում էր շների չար հաչոցը։

— Ահա՛ նա, բռնի՛ր,— կանչեց մեկը, Մետելիցայի կողմը նետվելով։ Գնդակը վզգաց հենց ականջի մոտ։ Մետելիցան էլ կրակեց։ Նրա վրա վազող մարդը սայթաքեց և ընկավ։

— Սո՛ւտ ես ասում, չե՛ս բռնի...— հաղիսավոր ասաց Մետելիցան, մինչև ամենավերջին բոպեն իսկապես չհավատալով, որ իրեն կարող են կապկպել։

Բայց մեծ և ծանր մեկը ետևից ընկավ նրա վրա ու տրորեց իր տակ։ Մետելիցան փորձեց ձեռքը ազատել նրա տակից, բայց գլխին հասցրած ուժգին հարվածը խլացրեց նրան...

Հետո նրան սկսեցին ծեծել հերթով, և, նույնիսկ ուշաթափ եղած, նա իր վրա զգում էր այդ հարվածներն էլի՛ ու էլի՛։

Ցածում, ուր քնած էր ջոկատը, մութ էր ու խոնավ, բայց խառնիխեճայի ետևում գտնվող նարնջագույն բացատից նայում էր արևը, և օրը, որ աշնան փտումի հոտն ուներ, բացվեց տայգայի վրա։

Օրապահը, որ կարճ ժամանակ քնել էր ձիերի մոտ, քնի մեջ լսեց մի համառ, միակերպ հնչյուն, որ նման էր գրնդացրի հեռավոր կտկտոցի, և վախեցած վեր թռավ՝ հրացանը ձեռքն առնելով։ Բայց այդ փայտփորն էր թխկթխկացնում ծեր լաստենու վրա, գետի մոտ. օրապահը հայհոյեց և, ցրտից կծկվելով, փաթաթվելով ծակծկված վերարկուի մեջ, դուրս եկավ դեպի բացատ։ Ոչ ո՛ք չզարթնեց այլևս. մարդիկ քնած էին խոր, անդեմ և անհույս քնով. այդպես քնում են քաղցած, տանջված մարդիկ, որոնց ոչինչ չի խոստանում նոր օրը։

«Գասակի հրամանատարը դեռ չկա... փորը լցրել է, ֆրևի և քնել մի խրճիթում, իսկ դու այստեղ նստիր անոթի»,— մտածեց օրապահը։ Սովորաբար նա ուրիշներից ոչ պակաս հիանում էր և պարծենում Մետելիցայով, իսկ այժմ նրան թվում էր, որ Մետելիցան բավականին ստոր մարդ է, և զուր են նրան դասակապետ կարգել։ Օրապահը մեկեն շուզեց տանջվել այստեղ՝ տայգայում, երբ ուրիշները, ինչպես Մետելիցան, վայելում են երկրային բոլոր ուրախությունները, բայց նա չհամարձակվեց անհանգստացնել Լևինսոնին առանց բավարար հիմքերի և դարթեցրեց Բակլանովին։

— Ի՞նչ... Չեկա՞վ...— շուռումուռ եկավ Բակլանովը, շոլելով քնաթաթախ, բան չհասկացող աչքերը։— Ինչպե՞ս չեկավ,— բղավեց նա հանկարծ, էլի դեռ ուշքի չգալով, բայց արդեն հասկանալով, թե խոսքը ինչի մասին է, և վախենալով դրանից։— Ոչ, դու, եղբայր, թո՛ղ, էդ չի՛ կարող

լինել... Ախ, հա՛, Դեհ, զարթեցրու Լևինսոնին։— Նա վեր կացավ թափով, արագ շարժումով փոկը քաշելով, քթի վերևում հավաքելով քնատ հոնքերը, մեկեն ամբողջովին ամրացավ և դոցվեց։

Լևինսոնը, չնայած որ խորունկ քնած էր, լսելով իր ազգանունը, իսկույն բացեց աչքերը և նստեց։ Նայելով օրապահին և Բակլանովին, նա հասկացավ, որ Մետելիցան չէր եկել, և որ արդեն վաղուց ժամանակն է ճանապարհ ընկնելու։ Առաջին րոպեին նա իրեն այնքան հոգնած ու ջարդված էր զգում, որ ուզեց գլուխը կոխել շինելի մեջ և նորից քնել՝ մոռանալ Մետելիցային ու իր ցավերը։ Բայց հենց նույն րոպեին նա, ծունկ չոքած, փաթաթելով շինելը, շոր ու անտարբեր եղանակով պատասխանում էր Բակլանովի անհանգիստ հարցմունքներին։

— Դեհ, ի՞նչ կա որ։ Ես այդպես էլ կարծում էի... Իհարկե, մենք նրան կհանդիպենք ճանապարհին։

— Իսկ եթե չհանդիպե՞նք։

— Եթե չհանդիպե՞նք... Լսի՛ր, ավելորդ թել չունե՞ս փաթաթելու համար։

— Վե՞ր կաց, վե՞ր կաց, մատակի՛կ։ Գնում ենք գյուղ,— կանչում էր օրապահը՝ ոտքերով հրելով քնածներին։

Խոտերի միջից վեր էին բարձրանում զգզված մազերով պարտիզանների գլուխները, և օրապահի ետևից թռչում էին առաջին՝ կես-քուն դրության մեջ դեռ չկազմակերպված, հայհոյանքները. լավ ժամանակ Դուբովը դրանք կոչում էր «լուսաբերներ»։

— Բոլորը շար են,— մտածկոտ ասաց Բակլանովը։— Խժռել են ուզում...

— Իսկ դո՞ւ,— հարցրեց Լևինսոնը։

— Ես ի՞նչ... Իմ մասին խոսք չկա։— Բակլանովը հոնքերը կիտեց։— Ինչպես դու, այնպես էլ ես՝ կարծես թե չգիտես...

— Ոչ, գիտեմ,— ասաց Լևինսոնը այնպիսի փափուկ և հեզ արտահայտությամբ, որ Բակլանովն առաջին անգամ ուշադրությամբ նայեց նրան։

— Իսկ դու, եղբայր, նիհարել ես,— ասաց նա անսպասելի խղճահարությամբ։— Միայն մորուքդ է մնացել. ես քո տեղը...

— Ավելի լավ է գնանք լվացվելու,— ընդհատեց նրան Լևինսոնը՝ ժպտալով հանցավոր և մոայլ ժպիտով։

Նրանք մոտեցան գետին։ Բակլանովը հանեց երկու շապիկն էլ և սկսեց ցողվել։ Երևում էր, որ նա պաղ ջրից չի վախենում։ Նրա մարմինն ամուր էր, պինդ, արևառ, ասես ձուլված, իսկ գլուխը կլոր և բարի, ինչպես երեխայի գլուխը, և նա լվանում էր այն միամիտ, մանկական շարժումով՝ ձեռքի ափով ջուրը լցնում էր վրան և մյուս ձեռքով շփում մարմինը։

«Ես երեկ ինչ-որ բանի մասին շատ խոսեցի ու ինչ-որ բան խոստացա, և հիմա մի տեսակ լավ չեմ,— մտածեց հանկարծ Լևինսոնը, աղոտ կերպով ու անախորժությամբ հիշելով երեկվա խոսակցությունը Մեչիկի հետ և իր մտքերը, որոնք կապված էին այդ խոսակցության հետ։ Չէ թե նրանք իրեն այժմ սխալ էին թվում, այսինքն՝ չէին արտահայտում այն, ինչ որ իսկապես կատարվում էր իր մեջ, ոչ, նա զգում էր, որ դրանք բավականին ճիշտ, խելոք, հետաքրքրքական մտքեր էին, և, այնուամենայնիվ, նազգում էր այժմ մի անորոշ դժգոհություն՝ դրանք հիշելիս։ «Այո՛, ես մի ուրիշ ձի խոստացա նրան... Բայց մի՞թե դրա մեջ վատ բան կա։ Ոչ, ես այսօր էլ այդպես կվարվեի, կնշանակի այստեղ ամեն ինչ կարգին է... էլ ինչո՞ւմն է բանը... Իսկ բանն այն է...»

— Ինչո՞ւ չես լվացվում,— հարցրեց Բակլանովը, վերջացնելով ցողվելը և կեղտոտ երեսսրբիչով կարմրացնելու չափ շփելով երեսն ու վիզը։— Պա՞ղ է ջուրը։ Լա՞վ է։

«...Իսկ բանն այն է, որ ես հիվանդ եմ և օրըստօրե ավելի վատ եմ իշխում ինձ»,— մտածեց Լևինսոնը՝ ցած իջնելով դեպի ջուրը։

Լվացվելով, գոտին կապելով և զգալով ազդրի վրա մաուզերի սովորական ծանրությունը, նա զգաց, որ, այնուամենայնիվ, հանգստացել է գիշերվա ընթացքում։

«Ի՞նչ պատահեց Մետելիցային»։— Այս միտքն այժմ ամբողջովին տիրեց նրան։

Լևինսոնը ամենևին չէր կարողանում երևակայել Մետե-

լիցային անշարժ և առհասարակ անկենդան։ Նա միշտ դեպի այդ մարդը մի անորոշ հակում էր զգում և շատ անգամ նկատել էր, որ իրեն հաճելի է գնալ նրա հետ կողք-կողքի, խոսել կամ նույնիսկ ուղղակի նայել նրան։ Մետելիցան նրան դուր էր գալիս ոչ թե ինչ-որ հասարակական-օգտակար, աչքի ընկնող հատկությունների պատճառով, որոնցից նա այնքան էլ շատ չուներ, և որքան ավելի մեծ չափով հատուկ էին իրեն՝ Լևինսոնին, այլ այն արտասովոր ֆիզիկական ճկունության, կենդանական, կենսական ուժի համար, որը կար նրա մեջ անսպառ աղբյուրի պես և որը իրեն՝ Լևինսոնին այնպես պակասում էր։ Երբ նա տեսնում էր իր առաջ նրա արագաշարժ, գործողության միշտ պատրաստ կերպարանքը կամ գիտեր, որ Մետելիցան գտնվում է այստեղ մոտերքում, կողքին, նա ակամա մոռանում էր իր տեսակետ ֆիզիկական թուլությունները, և նրան թվում էր, որ ինքը կարող է լինել նույնպես ամուր ու չհոգնող, ինչպես Մետելիցան։ Ծածուկ նա նույնիսկ հպարտանում էր, որ ղեկավարում է այդպիսի մի մարդու։

Այն միտքը, որ Մետելիցան կարող էր ընկնել թշնամու ձեռքը,— չնայած որ ինքը Լևինսոնը հետզհետե ավելի էր հավատում դրան,— դժվար էին ընդունում մարդիկ։ Ամեն մի հոգնած պարտիզան խնամքով և ահով քշում էր այն իրենից, որպես ամենավերջին միտք, որը խոստանում էր միայն դժբախտություններ և տանջանքներ, ուստի և, պարզ է, բոլորովին անհնարին մի միտք։ Ընդհակառակն, օրապահի ենթադրությունը, որ դասակի հրամանատարը, «կուշտ կերել է և քնած է մի խրճիթում»,— որքան էլ դա նման չէր արագաշարժ և գործարար Մետելիցային,— հետզհետե ավելի էր կողմնակիցներ հավաքում։ Շատերը բացարձակ տրտնջում էին Մետելիցայի «ստորության և անգիտակցության» պատճառով և ձանձրացնում էին Լևինսոնին իրենց պահանջներով՝ անհապաղ ճանապարհ ընկնել նրան ընդառաջ։ Եվ երբ Լևինսոնը, առանձին խնամքով կատարելով բոլոր առօրյա գործերը, մասնավորապես փոխելով Մեչիկի ձին, վերջապես շարժվելու հրաման արձակեց, ջոկատն այնպիսի ցնծություն զգաց, կարծես այդ հրամանով իսկապես վերջանում էին բոլոր փոքձանքներն ու չարչարանքները։

Նրանք մեկ-երկու ժամ ճանապարհ կտրեցին, իսկ խիզախ և ձյունաթափայլ մազափնջով դասակի հրամանատարը չէր երևում շավղի վրա։ Նրանք անցան է՛լի նույնքան, իսկ դասակապետը չկար ու չկար։ Եվ արդեն ոչ թե միայն Լևինսոնը, այլ նույնիսկ Մետելիցային ամենաթունդ նախանձողները և վատաբանողներն սկսեցին կասկածել նրա ճամփորդության հաջող ելքի մասին։

Ջոկատը ծանր ու նշանակալի լռության մեջ մոտեցավ տայգայի անառաջելիին։

15

ԵՐԵՔ ՄԱՀ

Մետելիցան իրեն գտավ մի մեծ, մութ մարագում. նա պառկած էր խոնավ գետնի վրա, և նրա առաջին զգացումը՝ մարմնի մեջ թափանցող գետնի ցուրտ խոնավությունն էր։ Նա մեկեն հիշեց այն բոլորը, ինչ կատարվել էր իր հետ։ Նրան հասցրած հարվածները դեռ աղմկում էին գլխում, մազերն իրար էին կպել արյունից. նա զգում էր այդ մակարդված արյունը ճակատի և այտերի վրա։

Առաջին քիչ թե շատ ձևակերպված միտքը, որ ծնվեց նրա գլխում, այն էր, թե արդյոք կարելի՞ է փախչել։ Մետելիցան ամենևին չէր կարող հավատալ, որ կյանքում իր ապրած ամեն ինչից հետո, բոլոր քաջագործություններից և հաջողություններից հետո, որոնք ուղեկցել էին իրեն ամեն մի գործի մեջ և հռչակել իր անունը, ինքը վերջ ի վերջո պետք է պառկի և փտի, ինչպես այդ մարդկանցից ամեն մեկը։ Նա շոշափեց ամբողջ մարագը, մատով զննեց բոլոր ծակերը, փորձեց նույնիսկ կոտրել դուռը՝ զուր ճիգեր... Նա ամեն տեղ հանդիպում էր մեռած, պաղ տախտակի, իսկ ծակերն այն աստիճան անհուսալի փոքր էին, որ նրանց միջից չէր թափանցում նույնիսկ հայացքը. դրանք դժվարությամբ էին ներս թողնում աշնանային առավոտի աղոտ լույսը։

Այնուամենայնիվ, նա շոշափելով փնտրում էր էլի ու էլի, մինչև անել, անողոք ճշտությամբ գիտակցեց, որ այս

անգամ իսկապես փախչելու հնար չկա։ Եվ երբ նա վերջնականապես համոզվեց դրանում, սեփական կյանքի և մահվան հարցը մեկեն դադարեց հետաքրքրել իրեն։ Եվ նրա բոլոր հոգեկան ու ֆիզիկական ուժերը կենտրոնացան՝ սեփական կյանքի և մահվան տեսակետից բոլորովին աննշան, բայց նրա համար այժմ ամենակարևոր դարձած այն հարցին, թե ինչպես ինքը՝ Մետելիցան, որը մինչև այժմ միայն խիզախ ու կորիճ մարդու համբավ էր վայելում, կկարողանա իրեն սպանող մարդկանց ցույց տալ, որ ինքը չի վախենում և արհամարհում է նրանց։

Նա դեռ չէր կարողացել դրա մասին խորհել, երբ դռան ետևում լսվեց աղմուկ, ճռնչաց դռան փակը, և առավոտյան զորշ, դողացող ու տկար լույսի հետ մարագ մտան երկու նույնպես տկար, կարծես տրորված կազակ՝ զենքով և լապտերներով։ Մետելիցան, ոտքերը տարածած, աչքերը կկոցելով նայեց նրանց։

Նկատելով Մետելիցային՝ նրանք անվճռականությամբ տատանվեցին դռան մոտ. նա, որ ետևում էր, անհանգիստ քիթը վեր քաշեց։

— Գնանք, երկրացի,— ասաց վերջապես առջևինը անշար կերպով, նույնիսկ մի քիչ հանցավորի պես։

Մետելիցան, գլուխը համառորեն թեքած, դուրս եկավ։

Մի փոքր հետո նա կանգնած էր իրեն ծանոթ սև փափախով և յափնջով մարդու առաջ, այն սենյակում, ուր նայում էր գիշերը տերտերի պարտեզից։ Հենց այդտեղ էլ բազկաթոռի վրա մեկնված, նստած էր այն գեղեցիկ, գեր և բարեսիրտ սպան, որին Մետելիցան ընդունել էր էսկադրոնի պետի տեղ։ Այժմ, երկուսին էլ լավ դիտելով, նա ինչոր անբմբռնելի նշաններից հասկացավ, որ ոչ թե այդ բարեսիրտ սպան էր պետը, այլ մյուսը՝ յափնջովը։

— Կարող եք գնալ,— կտրեց այդ մյուսը՝ նայելով դռան մոտ կանգնած կազակներին։

Նրանք, անշնորհք կերպով իրար հրելով, սենյակից դուրս ելան։

— Դու ի՞նչ էիր անում երեկ պարտեզում,— արագ հարցրեց նա՝ կանգնելով Մետելիցայի առաջ և նայելով նրան իր ուղիղ, անթարթ հայացքով։

Մետելիցան լուռ հեգնանքով աչքերը հառեց նրան, դիմանալով նրա հայացքին, թեթև շարժելով սև ատլասե հոնքերը և ամբողջ իր արտաքինով ցույց տալով, որ անկախ այն բանից, թե ինչ հարցեր պիտի առաջարկեն իրեն և ինչպես պիտի հարկադրեն պատասխանելու այդ հարցերին, ինքը ոչ մի այնպիսի բան չի ասի, որը կարողանար գոհացնել հարցնողներին։

— Թող այդ հիմարությունները,— նորից ասաց պետը, բոլորովին չբարկանալով և ձայնը չբարձրացնելով, բայց այնպես, որ ցույց էր տալիս, թե ինքը հասկանում է բոլորը, ինչ որ այժմ Մետելիցայի ներսում կատարվում է։

— Ինչո՞ւ զուր խոսեմ,— զիջողաբար ժպտաց դասակի հրամանատարը։

Էսկադրոնի պետը մի քանի վայրկյան ուսումնասիրում էր նրա մարած, ծաղկահար դեմքը, որը ծեփված էր չորացած արյունով։

— Ծաղկով վաղո՞ւց ես հիվանդ եղել,— հարցրեց նա։

— Ի՞նչ,— շփոթվեց դասակի հրամանատարը։ Նա շփոթվեց, որովհետև պետի հարցի մեջ ծաղր չէր զգացվում, այլ երևում էր, որ նա պարզապես հետաքրքրվեց իր ծաղկատար դեմքով։ Սակայն, հասկանալով այդ բանը՝ Մետելիցան բարկացավ ավելի սաստիկ, քան եթե նրան ծաղրած լինեին։

— Ինչ է, դու այստեղի՞ց ես, թե՞ ուրիշ տեղից ես եկել։

— Թող, ձերդ բարեձնություն...— վճռականորեն և զայրալից ասաց Մետելիցան՝ սեղմելով բռունցքները, կարմրելով և հազիվ իրեն զսպելով, որպեսզի չհարձակվի նրա վրա։ Նա ուզում էր էլի մի բան ավելացնել, բայց այն միտքը, թե ինչո՞ւ իսկապես չբռնի հիմա այդ սև մարդուն՝ այդպիսի զզվելի-հանգիստ, ուրած երեսով, այդպիսի անմաքուր և ողորմելի, շիկակարմրին տվող խողանով, և չխեղդի նրան. այդ միտքը այնպես պայծառորեն համակեց նրան, որ նա խոսքի կեսին կանգ առնելով, մի քայլ առաջ գնաց, ձեռքերը դողացին, և նրա ծաղկատար դեմքը մեկեն քրտնեց։

— Օհո՜,— առաջին անգամ զարմացած և բարձրաձայն բացականչեց այդ մարդը, սակայն ոչ մի քայլ դեպի ետ չգնալով և աչքերը չհեռացնելով Մետելիցայից։

Սա անվճռականության մեջ կանգ առավ՝ բիբերը փայլեց-

նելով։ Այն ժամանակ այդ մարդը պատյանից հանեց ատրճանակը և թափահարեց Մետելիցայի քթի առաջ։ Դասակի հրամանատարը զսպեց իրեն և, դեմքը լուսամուտին դարձնելով, քարացավ արհամարհական լռության մեջ։ Դրանից հետո որքան էլ նրան սպառնացին ատրճանակով՝ խոստանալով ապագայում ամենասոսկալի պատիժներ, որքան էլ համոզեցին ճշմարտաբար պատմել ամեն ինչ՝ խոստանալով կատարյալ ազատություն, նա ոչ մի խոսք չարտասանեց, նույնիսկ ոչ մի անգամ չնայեց հարցողներին։

Հարցափորձի ամենատաք ժամանակ դուռը թեթևակի բացվեց, և մեկի մաղոտ գլուխը, խոշոր ու հիմար աչքերով, սենյակ մտավ։

— Ահա,— ասաց էսկադրոնի պետը։— Արդեն հավաքվե՞լ եք։ Դեհ ինչ՝ ասա տղերքին, որ այս կտրիճին վերցնեն։

Նույն երկու կազակները Մետելիցային թողին բակ դուրս գալու և, ցույց տալով նրան դեպի՝ փողոց տանող դռնակը, գնացին նրա ետևից։ Մետելիցան ետ չէր նայում, բայց զգում էր, որ երկու սպաները նույնպես գալիս են ետևից։ Նրանք դուրս եկան եկեղեցու հրապարակը։ Այնտեղ երեցփոխի գերանաշեն խրճիթի մոտ խռնվել էր ամբոխը՝ բոլոր կողմերից ձիավոր կազակներով շրջապատված։

Մետելիցային միշտ թվում էր, թե ինքը չի սիրում և ատում է մարդկանց՝ ամբողջ նրանց ձանձրալի և մանր ունայնությամբ, այն ամենով, ինչ որ նրանց շրջապատում է։ Նա կարծում էր, որ իր համար բոլորին միևնույն է, թե նրանք ինչպես կվերաբերվեն իրեն և ինչ կասեն իր մասին. նա երբեք չէր ունեցել մտերիմներ և չէր էլ ցանում ունենալ։ Բայց միևնույն ժամանակ ամենամեծը և կարևորն այն բանից, ինչ որ նա անում էր կյանքում, առանց այդ բանը նկատելու, անում էր մարդկանց սիրուն և մարդկանց համար, որպեսզի նրանք նայեն իրեն, հպարտանան և հիանան իրենով, գովաբանեն իրեն։ Եվ այժմ, երբ նա բարձրացրեց գլուխը, հանկարծ ոչ միայն հայացքով, այլև ամբողջ սրտով ընդգրկեց այդ երերվող, խայտաբղետ, խաղաղ ամբոխը գեղջուկների, տղաների, շրջազգեստ հագած վախեցած կնիկների, սպիտակ, գունավոր աղլուխներով աղջիկների, մազափնջերով աշխույժ ձիավորների, որոնք մաքուր հագած-կապած էին, ասես ժողովրդական նկարներում, նրանց երկար, կենդանի առվերներին, որոնք պարում էին կանաչի վրա, և նույնիսկ եկեղեցու հին գմբեթներին, որոնք անշարժացել էին պաղ երկնքում, թուլ արևի շողերով ոգողված։

«Այ սա բան է՞»— քիչ մնաց բացականչեր նա, հանկարծ ամբողջովին բացվելով, ուրախանալով այդ ամբողջ կենդանի, պայծառ և աղքատիկ տեսարանով, որ շարժվում էր, շնչում և լուսավորում շուրջը, թրթռում իր մեջ։ Եվ նա արագ ու ազատ առաջ գնաց գազանի թեթև, գետնին չդիպչող քայլերով, երերվելով ճկուն մարմնով, և ամեն մեկը հրապարակում գեմքը դարձրեց նրան և նույնպես զգաց՝ շունչը պահած, թե այդ քայլերի նման ինչպիսի գազանային և թեթև ուժ է ապրում նրա ճկուն ու ազատ մարմնի մեջ։

Նա անցավ ամբոխի միջից՝ նայելով նրա գլխի վրայով, բայց զգալով նրա լուռ, կենտրոնացած ուշադրությունը, և կանգ առավ երեցփոխի խրճիթի արտասանդուղքի մոտ։ Սպաները, հասնելով նրա ետևից, բարձրացան սանդուղքի վրա։

— Այստե՛ղ, այստե՛ղ,— ասաց էսկադրոնի պետը՝ նրան իր կողքին տեղ ցույց տալով։

Այժմ նա լավ երևում էր բոլորին՝ պինդ և բարեկազմ, սև մազերով, եղջերվենու փափուկ ոտնամանեղով, վիզը չկոճկած վերնաշապիկով, մեջքին գոտի կապած՝ մուգ կանաչ ծոպերով, որոնք դուրս էին գալիս բաճկոնի տակից, իր թրուչկոտող աչքերի հեռավոր, գիշատիչ փայլով, այն աչքերի, որոնք նայում էին այնտեղ, ուր առավոտվա գորշ մշուշում քարացել էին վեհատեսիլ լեռնաշղթաները։

— Ո՞վ է ճանաչում այս մարդուն,— հարցրեց պետը՝ սուր, ծակող հայացքը գարձնելով բոլորին, մի վայրկյան կանգ առնելով մերթ այս մերթ այն դեմքի վրա։

Եվ ամեն մեկը, ուր վրա կանգ էր առնում այդ հայացքը, անհանգստանալով ու թարթելով, կախում էր գլուխը։ Մի այն կանայք, ուժ չունենալով աչքերը հեռացնելու, նայում էին նրան համբ ու քամի, վախկոտ և ազատ հետաքրքրությամբ։

— Ոչ ո՞ք չի ճանաչում,— հարցրեց պետը, ծաղրանքով ընդգծելով «ոչ ոք» խոսքը, կարծես թե նրան հայտնի էր, որ բոլորը, ընդհակառակն, ճանաչում են կամ պետք է ճանաչեն «այդ մարդուն»։— Դա մենք հիմա կպարզենք...— Նեչիտայլո,— կանչեց նա, ձեռքով ցույց տալով այն կողմը, ուր բաց շագանակագույն հովատակին նստած, քաջաբար ձիավարում էր մի բարձրահասակ սպա՝ կազակի երկար շինել հագած։

Ամբոխը խլաձայն հուզվեց։ Առջևում կանգնածները ետ նայեցին։ Մեկը, սև ժիլետով, վճռականորեն մարդկանց հրելով, առաջ էր անցնում, գլուխն այնպես թեքած, որ երևում էր միայն նրա տաք, մորթե գլխարկը։

— Թողեք անցնե՞մ, թողեք անցնե՞մ,— ասում էր նա շուտասելուկի պես, մի ձեռքով ճամփա բաց անելով, մյուսով ետևից տանելով մեկին։

Վերջապես նա հասավ հենց սանդուղքին, և երևաց, որ իր ետևից տանում էր մի վտիտ, սևագլուխ, երկար բաճկոն հագած տղայի, որը երկչոտությամբ ընդդիմանում էր և սև աչքերը չռում մերթ Մետելիցայի, մերթ էսկադրոնի պետի վրա։ Ամբոխը հուզվեց ավելի բարձր, լսվեցին հառաչներ և կանանց զսպված խոսակցություն։ Մետելիցան նայեց ներքև և հանկարծ ճանաչեց այն սևագլուխ փոքրիկ հովվին,— վախեցած աչքերով, նեղ, ծիծաղելի և մանկան վզով,— որին երեկ հանձնել էր իր ձին։

Գեղջուկը, որ բռնել էր նրա ձեռքը, հանեց գդակը, բանալով տափակ, շեկ գլուխը՝ ալեխառն մազերով (ասես նրան անհամաչափ կերպով աղել էին), և, ողջունելով պետին, նոր էր սկսել.

— Ահա, էստեղ, էս փոքրիկ հովիվը...

Բայց, երևի վախենալով, որ իրեն չեն լսի, նա թեքվեց դեպի տղան և, մատով ցույց տալով Մետելիցային հարցրեց.

— Էս է, հա՞։

Մի քանի րոպե փոքրիկ հովիվն ու Մետելիցան նայում էին ուղիղ իրար աչքերի. Մետելիցան՝ արհեստական անտարբերությամբ, հովիվը վախով, ցավակցությամբ և խըղճահարությամբ։ Հետո տղան հայացքը դարձրեց էսկադրոնի պետի կողմը, նայեց նրան, մի պահ ասես փայտանալով, հետո՝ գեղջուկին, որը բռնել էր նրա ձեռքից և սպասողաբար թեքվել դեպի նա, հառաչեց խորունկ ու ծանր և գլխով բացասական շարժում արավ... Ամբոխը, որ հանդարտվել էր այն աստիճան, որ լսվում էր, թե ինչպես է շարժվում եկեղեցու երեցփոխի հորթը իր խցիկում, թեթևակի օրորվեց և նորից քարացավ։

— Դու մի՛ վախիր, հիմար, մի՛ վախիր,— փաղաքշական դողով համոզում էր գեղջուկը, ինքը վախեցած ու անհանգիստ, մատով ցույց տալով Մետելիցային։— Բա ո՞վ է, թե որ նա չի... Դու խոստովանիր, խոստովանիր, մի՛ վա...ա-ա՛, գարշելի...— չարությամբ կտրեց նա հանկարծ և ամբողջ ուժով քաշեց տղայի թևից։— Դա նա է, ձերդ բարեձնություն, էլ ո՞վ պիտի լինի,— ասաց նա բարձր ձայնով, ասես արդարանալով և նվաստաբար գդակը տրորելով։— Միայն վախենում է տղան, բա էլ ո՞վ պիտի լինի, երբ ձին թամբով է և պայուսակում պատյան կա... Երեկ իրիկուն եկել է կրակի լույսին։ «Արածացրու,— ասում է,— իմ ձին»,— ու ինքը գյուղ է գալիս, իսկ տղան զուր է սպասել. արդեն լուսացել է, զուր է սպասել, ու քշել է ձին էստեղ, իսկ ձին թամբով է և պայուսակում պատյան կա՝ էլ ո՞վ պիտի լինի...

— Ո՞վ է եկել։ Ի՞նչ պատյան,— հարցրեց պետը, զուր փորձելով հասկանալ, թե խոսքը ինչի մասին է։ Գեղջուկը, է՛լ ավելի շփոթված, տրորեց գդակը և, նորից մոլորվելով ու շփոթվելով, պատմեց, թե ինչպես իր հովիվը առավոտյան գյուղ էր քշել մի օտար ձի՝ թամբով և պայուսակով, որի մեջ ատրճանակի պատյան կար։

— Այ թե ի՞նչ,— երկարացնելով ասաց էսկադրոնի պետը։— Բայց չէ՞ որ չի խոստովանում,— ասաց նա՝ գլխով ցույց տալով տղայի կողմը։— Ասենք, տուր նրան այստեղ, մենք հարցուփորձ կանենք մեր դիտեցածի պես...

Տղան, ետևից հրվելով, մոտեցավ սանդուղքին, չհամարձակվելով, այնուամենայնիվ, բարձրանալ նրա վրա։ Սպան աստիճաններով ցած վազեց բռնեց նրա նիհար, ցնցվող ուսերից և, դեպի իրեն քաշելով, իր թափանցող ու սարսափելի աչքերը հառեց վախից կլորացած նրա աչքերին։

— Ա՜-ա... ա՜...— մեկին գոռաց տղան՝ աչքերը չռելով։

— Բա էդ ո՞նց կլինի,— չդիմանալով՝ հառաչեց մի կին։

Նույն պահին մեկի սլացիկ և ճկուն մարմինը սանդուղքից ցած շպրտեց փրենն։ Ամբոխը վախեցած ետ-ետ գնաց։ Էսկադրոնի սրեցը սասսիկ հարվածից վայր ընկավ...

— Կրակեցե՛ք նրա վրա... Սա՞ ինչ բան է,— բղավեց գեղեցիկ սպան՝ անօգնական ցուցադրելով իր ափը, ինքն իրեն կորցնելով ու հիմարանալով և, ըստ երևույթին, մոռանալով, որ ինքն էլ կրակել գիտե։

Մի քանի ձիավորներ նետվեցին ամբոխի մեջ՝ ոտնատակ անելով մարդկանց։ Մետելիցան, ամբողջ մարմնով թշնամու վրա ընկնելով, աշխատում էր բռնել նրա կոկորդից, բայց սա շղթիկի պես պտույտներ էր անում՝ յափնջին սև թևերի պես բացած, և ջղաձգաբար ձեռքը գցում էր գոտուն, աշխատելով ատրճանակը դուրս քաշել։ Վերջապես նրան հաջողվեց բացել պատյանը և գրեթե նույն ակնթարթում, երբ Մետելիցան բռնել էր կոկորդից, մի քանի անգամ իրար ետևից կրակեց նրա վրա։

Երբ վրա հասած կազակները քաշում էին Մետելիցայի ոտքերից, նա դեռ ձեռքերով կառչում էր խոտերից, կրճատացնում ատամները, աշխատելով բարձրացնել գլուխը, որը, սակայն, անզոր ցած ընկավ և քաշ եկավ գետնի վրայով։

— Նեշիտա՛յո,— բղավեց գեղեցիկ սպան։— Հանգաքել էսկադրոնը... Գուք էՀ կգնաք,— քաղաքավարի հարցրեց պետին՝ խուսափելով, սակայն, նայել նրան։

— Այո՛։

— Չի տվեք հրամանատարին...

Կես ժամ հետո կազակների էսկադրոնը, լիակատար մարտական հանդերձանքով, դուրս եկավ գյուղից և սլացավ վերև, այն ճամփով, որով անցած գիշեր մեկել էր Մետելիցան։

* * *

Բակլանովը, որ բոլորի հետ ձիասին խիստ անհանգստանում էր, վերջապես չդիմացավ։

— Լսիր, թող ես առաջ գնամ,— ասաց նա Լևինսոնին։— Ախր սատանան գիտե, թե ինչ բան է, իսկապես...

Նա խթանեց ձիուն և սպասածից նույնիսկ առաջ դուրս եկավ անտառի ծայրը, դեպի խոտերով ծածկված մեղվանոցը։ Սակայն նրան հարկ չեղավ կտուրը բարձրանալ. կես վերստ այն կողմ բլրից իջնում էին մոտ հիսուն ձիավոր։ Նա տեսավ, որ դրանք կանոնավոր զորքերից էին։ դա երևում էր նրանց դեղին բծերով միատեսակ համազգեստից։ Զափավորելով իր անհամբերությունը՝ շուռտով վերադառնալու և նախազգուշացնելու վտանգի մասին (Լևինսոնը կարող էր իսկույն հայտնվել)։ Բակլանովը հապաղեց, ծածկվելով թփերի մեջ, կամենալով ճշտել, թե արդյոք բլրի ետևից նոր ջոկատներ չե՞ն երևա։ Էլ ոչ ոք չհայտնվեց։ Էսկադրոնն ընթանում էր դանդաղ, խանգարված շարքերով. դատելով մարդկանց ծուռ նստվածքից և այն բանից, թե ինչպես տաքացած ձիերը թափ էին տալիս գլուխները, էսկադրոնը արագ վարգով պետք է եկած լիներ։

Բակլանովը ձին ետ դարձրեց և քիչ մնաց ընկներ անտառի եզրը դուրս եկող Լևինսոնի վրա։ Նա նշան արավ, որ սա կանգ առնի։

— Շա՞տ են,— հարցրեց Լևինսոնը՝ նրան լսելուց հետո։

— Մի հիսուն մարդ։

— Հետևա՞կ։

— Ոչ, ձիավոր...

— Կուբրակ, Դուբով, ձիերից ցած իջնել,— հրամայեց Լևինսոնը կամացուկ։— Կուբրակ՝ դեպի աջ թևը, Դուբով՝ ձախ... Ես քեզ ցույց կտամ...— ֆշշաց նա մեկին, նկատելով, թե ինչպես այտը կապած մի պարտիզան գնաց մի կողմ՝ ուրիշներին էլ հրապուրելով։— Տե՛ղդ գնա,— և սպառնաց նրան մտրակով։

Մետելիցայի դասակի հրամանատարությունը հանձնելով Բակլանովին և պատվիրելով նրան այդտեղ մնալ՝ նա իջավ ձիուց և գնաց շղթայի առջևից։ Քիչ կապտլուկ ու ճոճելով մաուզերը։

Առանց թփերից դուրս գալու, նա դասավորեց շղթան, իսկ ինքը մի պարտիզանի ուղեկցությամբ մոտեցավ մեղվանոցին։ Էսկադրոնը շատ մոտիկ էր։ Դեղին լամպասներից, և

գլխարկների բոլորքներից Լևինսոնը հասկացավ, որ դրանք կազակներ են։ Նա նկատեց նաև սև յափունջով հրամանատարին։

— Ասա թող այստեղ սողան,— շշնջաց նա պարտիզանին,— միայն թող վեր չկենան, ապա թե ոչ... Դեհ, ի՞նչ ես նայում, շո՛ւտ...— և հրեց նրան՝ հոնքերը կիտելով։

Թեև կազակները քիչ էին, բայց Լևինսոնը հանկարծ սաստիկ հուզմունք զգաց, ինչպես իր ռազմական գործունեության առաջին շրջանում։

Իր մարտական կյանքում նա զանազանում էր երկու շրջան, որոնք խիստ սահմանագծով չէին բաժանվում իրարից, բայց նրա համար տարբեր էին ըստ այն զգացումների, որ ապրել էր ինքը։

Սկզբում, երբ նա, չունենալով ռազմական ոչ մի պատրաստություն, նույնիսկ կրակել չգիտենալով, ստիպված էր հրամանատարություն անել մեծաքանակ մարդկանց, զգում էր, որ ոչ թե իսկապես հրամանատարություն է անում, այլ բոլոր դեպքերը զարգանում են անկախ իրենից ու իր կամքից։ Ոչ թե նրա համար, որ ինքն իր պարտքը կատարում էր անաղնիվ կերպով,— ոչ, նա աշխատում էր տալ ամենաշատը, ինչ որ կարող էր տալ,— և ոչ թե նրա համար, որ կարծում էր, թե անհատ մարդը չի կարող ազդել դեպքերի վրա, որոնց մասնակցում են մարդկային զանգվածները,— ոչ, նա այդպիսի հայացքը համարում էր կեղծավորության արտահայտություն, որը ծածկում է մարդկանց սեփական թուլությունը, այսինքն՝ գործողության կամքի պակասությունը նրանց մեջ. այլ, որ նրա ռազմական գործունեության առաջին, կարճ շրջանում նրա հոգեկան բոլոր ուժերը գնում էին այն բանին, որ հաղթի և մարդկանցից ծածկի իր նկատմամբ ունեցած վախը, որը նա ակամա զգում էր կռվի մեջ։

Սակայն, նա շատ շուտով վարժվեց հանգամանքներին և հասավ այնպիսի դիրքի, երբ սեփական կյանքի վախը դադարեց խանգարել նրան՝ ուրիշների կյանքը տնօրինելու։ Եվ այս երկրորդ շրջանում նա հնարավորություն ստացավ ղեկավարելու դեպքերը՝ այնքան լիակատար և հաջող, որքան ավելի պարզ և ավելի կանոնավոր կերպով նա կարող էր շոշափել դրանց իսկական ընթացքը և դրանցում եղած ուժերի ու մարդկանց փոխհարաբերությունը։

Բայց այժմ նա նորից սաստիկ հուզվեց և զգաց, որ դա կապված էր իր նոր դրության հետ, իր մասին, Մետելիցայի մահվան մասին եղած իր բոլոր մտքերի հետ։

Մինչ շղթան սողալով մոտենում էր, ծածկվելով թփերի ետևում, նա, այնուամենայնիվ, տիրապետեց իրեն, և նրա փոքրիկ, հավաք կերպարանքը, վստահ ու ճիշտ շարժումներով, առաջվա պես ներկայացավ մարդկանց, որպես մարմնացում մի անսխալ ծրագրի, որին մարդիկ հավատում էին ըստ սովորության և ներքին անհրաժեշտության։

Էսկադրոնն արդեն այնքան մոտիկ էր, որ լսվում էր ձիերի դոփյունը և ձիավորների զուսպ խոսակցությունը. կարելի էր նույնիսկ տարբերել առանձին դեմքեր, Լևինսոնը տեսնում էր նրանց արտահայտությունները, առանձնապես մի գեղեցիկ և գեր սպայինը, որ հենց նոր առաջ անցավ՝ ծխամորճն ատամների մեջ, թամբի վրա շատ վատ նստած։

«Այ թե գազանն է երևում,— մտածեց Լևինսոնը, հայացքը կանգնեցնելով նրա վրա և ակամա վերագրելով այդ գեղեցիկ սպային բոլոր այն սոսկալի հատկությունները, որոնք սովորաբար վերագրում են թշնամուն։— Բայց ինչպես է թրթռում սիրտս... կրակե՞նք արդեն... կրակե՞նք... Ոչ, այն պլոկված կեղևով կեչու մոտ... Բայց ինչո՞ւ այնպես վատ է նստած... Ախր ինչպես անհար...»

— Դա-սա-ա՛-կ...— բղավեց նա հանկարծ բարակ, ձիգ ձայնով (հենց այդ ակնթարթին էսկադրոնը հավասարվեց պլոկված կեղևով կեչուն)։— Կրա՛կ...

Գեղեցիկ սպան, լսելով նրա ձայնի առաջին հնչյունները, զարմացած բարձրացրեց գլուխը։ Բայց հենց նույն վայրկյանին գլխարկը թռավ գլխից, և նրա դեմքն ընդունեց անասելի վախեցած ու անճարակ արտահայտություն։

— Կրա՛կ...— նորից բղավեց Լևինսոնը և ինքը կրակեց՝ աշխատելով խփել գեղեցիկ սպային։

Էսկադրոնը խառնվեց. շատերն ընկան գետին, բայց գեղեցիկ սպան մնաց թամբին, և ձին, ատամները մերկացնելով, նրա տակ ետ-ետ էր գնում։ Մի քանի վայրկյանի

ընթացքում շփոթված մարդիկ և ձիերը, որոնք ծառս էին լինում, թպրտում էին մի տեղում՝ ինչ-որ բան բղավելով, որ չէր լսվում տրաքոցների մեջ։ Հետո այդ իրարանցումից դուրս թռավ մի ձիավոր, սև փափախով և յափնջով, և խաղաց էսկադրոնի առաջ, զսպելով ձիուն լարված շարժումներով ու ճոճելով թուրը։ Մնացածները, ինչպես երևում էր, չէին հնազանդվում նրան, մի քանիսն արդեն հեռու էին սլանում՝ մտրակելով ձիերին։ Ամբողջ էսկադրոնը նետվեց նրանց ետևից՝ կրակելով ընթացքի ժամանակ։

— Ձիե՞ր...— բղավեց Լևինսոնը։— Բակլանով, եկ այստե՞ղ... Հեծե՞ք ձիերը...

Բակլանովը կատաղի, ծռված դեմքով սլացավ կողքից՝ ամբողջ մարմնով ձգված, թուր բռնած ձեռքը վայր թողած։ Թուրը պսպղում էր փայլարի պես։ Բակլանովի ետևից զրնգոցով ու աղմուկով թռչում էր Մետելիցայի դասակը՝ առաջ պարզած սվիններով։

Շուտով ամբողջ դասակը սլացավ նրանց ետևից։

Մեչիկը, ընդհանուր հոսանքով տարված, սլանում էր այդ հեղեղի կենտրոնում։ Նա ոչ միայն վախ չէր զգում, այլ նույնիսկ կորցրել էր իրեն հատուկ՝ սեփական մտքերն ու վարմունքները նկատելու և դրանք կողքից արժեքավորելու հատկությունը. նա իր առաջ տեսնում էր միայն մեկի ծանոթ թիկունքը՝ քաքուլավոր գլխով, զգում էր, որ Նիվկան նրանից ետ չի մնում, որ թշնամին փախչում է նրանից, և բոլորի հետ միասին բարեխղճորեն աշխատում էր հասնել թշնամու ետևից՝ ետ չմնալով ծանոթ թիկունքից։

Կազակների էսկադրոնը թաքնվեց կեչու պուրակում։ Որոշ ժամանակից հետո այնտեղից լսվեցին հրացանի հաճախակի կրակոցներ, բայց ջոկատը շարունակում էր առաջ գնալ ոչ միայն շարժումը չդանդաղեցնելով, այլ ավելի ևս տաքանալով ու գրգռվելով կրակոցներից։

Հանկարծ բրդոտ ձին, որ սլանում էր Մեչիկի առջևից, դնչով մեխվեց գետնի մեջ, և ծանոթ թիկունքը՝ քաքուլավոր գլխով, ձեռքերը պարզած, առաջ թռավ։ Մեչիկը ուրիշների հետ վազելով անցավ մի մեծ ու սև բանի մոտից, որ շարժվում էր գետնի վրա։

Այլևս ծանոթ թիկունքը չտեսնելով՝ նա աչքերը հառեց

պուրակին, որը շեշտակի գալիս էր նրա վրա... Փոքրիկ, մորուքավոր մի կերպարանք, նստած սևաթույր ձիուն, որ բղավում էր և թրով ինչ-որ բան էր ցույց տալիս, մի վայրկյան երևաց Մեչիկի աչքերին ու չքացավ... Մի քանի ձիավոր, որոնք սլանում էին կողքից, հանկարծ շրջվեցին դեպի ձախ, բայց Մեչիկը, գլխի չընկնելով, թե բանն ինչումն է, սլանում էր նախկին ուղղությամբ, մինչև որ ներս թռավ պուրակը և քիչ մնաց դիպչեր բներին ու ջարդվեր. դեմքն առավ մերկ ճյուղերին և ճանկոտվեց։ Նա հազիվ զսպեց Նիվկային, որը խենթացած մղվում էր առաջ։

Նա մենակ էր՝ կեչու մեղմ լռության, տերևների և խոտերի մեջ...

Նույն վայրկյանին նրան թվաց, որ պուրակը վխտում է կազակներով։ Նա նունիսկ ճչաց և իրեն կորցրած ետ նետվեց՝ առանց ուշադրություն դարձնելու, թե ինչպես սուր, ծակծկող ճյուղերը դաղում են դեմքը։

Երբ նա նորից դաշտ դուրս եկավ, ջոկատն այլևս այնտեղ չէր։ Երկու հարյուր քայլ նրանից հեռու ընկած էր մի ձի՝ ծռված թամբով։ Նրա մոտ, ոտքերը ծալած, ձեռքերով անհուսորեն գրկած իր ծնկները, որոնք սեղմված էին կրծքին, առանց շարժվելու նստած էր մի մարդ։ Նա Մորոզկան էր։

Մեչիկը, ամաչելով իր վախից, դանդաղ մոտեցավ նրան։

Միշկան պառկած էր կողքի վրա, ատամները ցցած, մեծ, սառած աչքերը չռած, սուր կճղակներով առջևի ոտքերը ծալած, ասես նույնիսկ անշունչ վիճակում պատրաստվում էր վազել։ Մորոզկան նայում էր նրա կողքով՝ փայլուն, չոր, չտեսնող աչքերով։

— Մորոզկա...— կամացուկ ձայն տվեց Մեչիկը, կանգ առնելով նրա մոտ ու հանկարծ արցունքոտ, բարի խղճահարությամբ լցվելով դեպի նա և դեպի այդ անշնչացած ձին։

Մորոզկան չշարժվեց։ Մի քանի բոպե նրանք մնացին այդպես, առանց մի խոսք ասելու, առանց դիրքը փոխելու։ Հետո Մորոզկան հառաչեց, դանդաղ բացեց ձեռքերը, կանգնեց ծնկների վրա և, առաջվա պես Մեչիկին չնայելով, սկսեց արձակել թամբը։ Մեչիկը, չհամարձակվելով այլևս խոսել, լուռ դիտում էր նրան։

Մորոզկան արձակեց թամբակալները,— նրանցից մեկը կտրված էր,— ուշադրությամբ զննեց կտրված, արյունոտված փոկը, շուռումուռ տվեց ձեռքի մեջ և դեն նետեց։ Հետո տնքալով շալակեց թամբը և գնաց պուրակի ուղղությամբ՝ կռացած և ծանր քայլելով ծուռ ոտքերով։

— Տուր ես տանեմ, կամ, ուզում ես, ինքդ նստիր՝ ես ոտքով կերթամ,— ձայն տվեց Մեչիկը։

Մորոզկան չնայեց նրա կողմը, միայն ավելի կռացավ թամբի ծանրության տակ։

Մեչիկը, աշխատելով այլևս նրա աչքին չընկնել, ավելորդ տեղը ահագին ճանապարհ անցավ դեպի ձախ, և երբ շրջանցեց պուրակը, քիչ հեռվում տեսավ հովտի լայնությամբ ձգված գյուղը։ Ընդարձակ հովտում, գյուղից դեպի աջ, մինչև լեռնապարը, որ դարձած էր մի կողմ և կորել էր պղտոր-գորշ հեռվում, երևում էր անտառը։ Երկինքը, որ առավոտյան այնքան պարզ էր, այժմ կախվել էր ցած, և անուրախ արևը հազիվ էր երևում։

Ճամփից հիսուն քայլ հեռու ընկած էին մի քանի սրախողխող արված կազակ։ Մեկը դեռ կենդանի էր. նա դժվարությամբ բարձրանում էր ձեռքերի վրա և նորից ընկնում ու տնքում։ Մեչիկը անցավ շատ հեռվից՝ աշխատելով չլսել նրա տնքոցները։ Գյուղից նրան ընդառաջ էին գալիս մի քանի ձիավոր պարտիզան։

— Մորոզկայի ձին սպանեցին...— ասաց Մեչիկը, երբ նրանք հավասարվեցին իրեն։

Ոչ ոք նրան չպատասխանեց։ Մեկը չափեց նրան կասկածոտ հայացքով, ասես ուզում էր հարցնել. «Իսկ դու ո՞ւր էիր, երբ մենք այստեղ կռվում էինք»։— Մեչիկը քիթը կախած առաջ գնաց։ Նա լի էր ամենավատ նախազգացումներով...

Երբ մտավ գյուղ, ջոկատից շատերն արդեն ցրվել էին բնակարաններում, մնացածները խառնվել էին մի մեծ՝ հինգպատյա խրճիթի մոտ, որն ուներ դրվագազարդ լուսամուտներ։ Լևինսոնը, արտասանդուղքում կանգնած, գդակը թեքած, քրտնած ու փոշոտ, հրամաններ էր արձակում։ Մեչիկը ձիուց իջավ ցանկապատի մոտ, ուր ձիեր էին կանգնած։

— Որտեղի՞ց բուսար,— ծաղրանքով հարցրեց ջոկապետը։— Սունկ հավաքելո՞ւ էիր գնացել, ինչ է։

— Ոչ, ես ետ մնացի,— ասաց Մեչիկը։ Նրա համար այժմ միևնույն էր, թե ինչ կմտածեն իր մասին, բայց ըստ սովորության արդարանում էր։— Ես պուրակն ընկա. դուք, կարծեմ, այնտեղ դեպի ձա՞խ դարձրիք։

— Դեպի ձա՞խ, դեպի ձա՞խ,— ուրախ-ուրախ հաստատեց մի խիստ խարտյաշ, փոքրիկ պարտիզան՝ միամիտ փոսիկներով ու գագաթին աքաղաղի անհնազանդ քաքուլով...— Ես քեզ կանչեցի, իսկ դու չլսեցիր երևի...— Եվ նա հիացմունքով նայեց Մեչիկին, ինչպես երևում է, հաճույքով հիշելով գործի բոլոր մանրամասնությունները։ Մեչիկը, ձին կապելով, նստեց նրա կողքին։

Նրբանցքից դուրս եկավ Կուբրակը՝ գեղջուկների մի բազմության ուղեկցությամբ. նրանք բերում էին երկու մարդ՝ ձեռքները ետևները ոլորած։ Մեկը սև ժիլետով էր, անճոռնի, ասես տափակացրած գլխի մազերն անհավասար կերպով սպիտակել էին. նա սաստիկ դողում էր և խնդրում։ Մյուսը մի վտիտ տերտեր էր, պատառոտված փարաջայով, որի միջից երևում էր տրորված վարտիքը՝ կախված ձվապարկով։ Մեչիկը նկատեց, որ Կուբրակի գոտուն ամրացրած է մի արծաթե շղթայիկ, ինչպես երևում է՝ խաչի վրայից պոկված։

— Սա՞ է, հա՞,— դժգունելով՝ հարցրեց Լևինսոնը, մատով ցույց տալով ժիլետ հագած մարդուն, երբ նրանք մոտեցան սանդուղքին։

— Նա՛ է... Նա ի՞նքը...— աղմկեցին գեղջուկները։

— Եվ ի՞նչ գարշելին է,— ասաց Լևինսոնը՝ դիմելով Ստաշինսկուն, որը նստած էր կողքին՝ բազրիքի վրա,— իսկ Մետելիցային էլ հարություն չես տա...— Նա հանկարծ արագ-արագ թարթեց աչքերը և շուռ եկավ. մի քանի վայրկյան լուռ նայում էր հեռուն՝ աշխատելով չհիշել Մետելիցայի մասին։

Ընկերնե՞ր... սիրելինե՞րս...— լալիս էր ձերբակալվածը՝ նայելով մերթ գեղջուկներին, մերթ Լևինսոնին՝ նվիրված շատ աչքերով։— Մի՞թե ես հոժարակամ... Տեր իմ... Սիրելի ընկերներ...

Ոչ ոք չէր լսում նրան։ Գեղջուկները երեսները շուռ էին տալիս։

— Էլ ի՞նչ. ամբողջ բազմությունը տեսավ, թե ինչպես դու ստիպում էիր հովվին,— խստորեն ասաց մեկը՝ չափելով նրան անտարբեր հայացքով։

— Ինքդ ես մեղավոր...— հաստատեց մի ուրիշը և, շփոթվելով, գլուխը թաքցրեց։

— Գնդակահարե՛լ նրան,— սառնությամբ ասաց Լևինսոնը։— Միայն հեռու տարեք։

— Իսկ տերտերի՞ն,— հարցրեց Կուբրակը։— Նույնպես ջուն է... սպաներին պատվել է...

— Բաց թողեք նրան, գրողը տանի...

Բազմությունը, որին միացել էին նաև շատ պարտիզաններ, գնաց Կուբրակի ետևից, որը քաշ տվեց ժիլետով մարդուն։ Սա համառում էր, լաց էր լինում, ցնցելով ներքևի ծնոտը։

Զիժը, ինչ-որ վատ բանով կեղտոտված գլխարկը գլխին, բայց անսքող հաղթական տեսքով, մոտեցավ Մեչիկին։

— Այ թե ուր ես դու,— ասաց նա ուրախացած և հպարտ։— Հա՜մա զարդարվել ես։ Գնանք մի տեղ՝ խժռելու... Հիմա նրա հաշիվը կմաքրե՞ն...— երկարացրեց նա բազմանշանակալից և սուլեց։

Խրճիթում, ուր նրանց ներս թողին ճաշելու, հատակը կեղտոտ էր և օդը խեղդուկ. հացի ու մանր ստրտված կաղամբի հոտ էր գալիս։ Վառարանի մոտի անկյունը լիքն էր կաղամբի կեղտոտ գլուխներով։ Զիժը, հացից և կաղամբապուրից տրաքվելով, առանց լռելու պատմում էր իր քաջագործությունների մասին և հոնքերի տակից շուտ-շուտ նայում էր երկար ծամերով նեղիրան աղջկան, որը սպասարկում էր նրանց։ Սա ամաչում էր և ուրախանում։ Մեչիկն աշխատում էր լսել, բայց ամբողջ ժամանակ զգուշանում էր ու ցնցվում ամեն մի չխկոցից։

— ...Հանկարծ նա մեկեն շուռ եկավ՝ ու վրա՛ս...— ճվճվաց Զիժը խեղդվելով և ճպճպացնելով,— էստեղ ես նրան որ տվի...

Այդ ժամանակ զնգացին ապակիները, և լսվեց հրացանների հեռավոր տրաքոց։ Մեչիկը ցնցվելով վայր գցեց գդալը և դժգունեց։

— Ե՞րբ պիտի վերջանա էս բոլորը...— բացականչեց նա հուսահատ և, ձեռքերով երեսը ծածկած, խրճիթից դուրս եկավ։

«...Նրանք սպանեցին ժիլետով մարդուն,— մտածում էր Մեչիկը՝ դեմքը շինելի օձիքի մեջ թաքցրած, ինչ-որ տեղ թփերում պառկած. նա նույնիսկ չէր հիշում, թե ինչպես էր այստեղ եկել։— Նրանք վաղ թե ուշ ինձ էլ կսպանեն... Բայց ես առանց այն էլ չեմ ապրում՝ ասես մեռած եմ. էլ չեմ տեսնի իմ հարազատներին և այն շեկ գանգուրներով սիրուն աղջկան, որի լուսանկարը կտոր-կտոր արի... իսկ նա, անշուշտ, լացեց, ժիլետով խեղճ մարդը... Աստվա՜ծ իմ, ինչո՞ւ կտոր-կտոր արի նկարը։ Եվ մի՞թե երբեք չեմ վերադառնա նրա մոտ։ Ի՜նչ դժբախտն եմ ես...»։

Արդեն երեկոյանում էր, երբ նա դուրս եկավ թփերի միջից չոր աչքերով, տանջահար դեմքով։ Մոտերքում լսվում էին հարբած ձայներ, նվագում էր հարմոնը։ Նա դարբասի մոտ հանդիպեց երկար ծամերով նեղիրան աղջկան. աղջիկը լծակով ջուր էր բերում՝ դալար ճյուղի պես կորացած։

— Օ՜հ, ի՜նչ քեֆ է անում ձեզնից մեկը մեր տղերանց հետ,— ասաց նա՝ բարձրացնելով մութ թարթիչները և ժպտալով։— Ա՜յ... լսո՞ւմ եք։— Եվ ուր-որ անկյունի ետևից եկող ուրախ երաժշտության հետ համաչափ նա ճոճեց իր սիրուն գլխիկը։ Դույլերը նույնպես ճոճվեցին, և ջուրը թափվեց։ Աղջիկն ամաչեց ու դռնակով փախավ բակ։

Իսկ մենք ինքներս աքսորական,
Դրան սպա-սում է՛ի-նք...

լսվում էր մեկի հարբած, Մեչիկին լավ ծանոթ ձայնը։ Մեչիկը նայեց դեպի այդ կողմը և տեսավ Մորոզկային՝ հարմոնով ու գզգզված մազափնջով, որ կախվել էր աչքերին և կպչում էր կարմիր, քրտնած երեսին։

Մորոզկան քայլում էր փողոցի մեջտեղով, անամոթ, անփույթ քայլվածքով, հարմոնը առջևում բռնած և ձգելով այնպիսի,— «ամբողջ սրտով»,— արտահայտությամբ, կար-

ծես լկտի խոսքեր էր ասում և հենց տեղնուտեղը զղջում. նրա ետևից քայլում էր ջահելների մի ամբողջ բազմություն՝ նույնպես հարբած, առանց գոտիների և գդակների։ Կողքերից, ամղկելով և փոշու ամպեր բարձրացնելով, վազում էին բոբիկ տղաներ, անողորմ ժիր, սատանի ճտերի պես։

— Ա-ա՜... Սիրելի բարեկամ...— հարբած, կեղծավոր հիացմունքով կանչեց Մորոզկան՝ տեսնելով Մեչիկին։— Ո՞ւր ես գնում, ո՞ւր։ Մի՛ վախենա՝ չենք ծեծի... Խմիր մեզ հետ։ Ա՜խ, հոգիդ դուրս գա՝ մեկտեղ պիտի կորչենք։

Նրանք ամբողջ բազմությամբ շրջապատեցին Մեչիկին, գրկում էին նրան, թեքում էին դեպի նա իրենց բարի, հարբած դեմքերը, գինու հոտը փչելով նրա երեսին. մեկը նրա ձեռքն էր խոթում շիշը և կրծած վարունգը։

— Ո՛չ, ո՛չ, ես չեմ խմում,— ասում էր Մեչիկը, փորձելով ազատվել,— ես չեմ ուզում խմել...

— Խմիր, թեկուզ հոգիդ դուրս գա,— կանչում էր Մորոզկան՝ ուրախ խելահեղությունից հազիվ լացը զսպելով։— Ա՜խ, հոգեհանգիստ... արյունը... երրորդությո՜ւնը... Մեկտե՜ղ պիտի կորչենք...

— Միայն թե, խնդրեմ քիչ, ախր ես չեմ խմում,— ասաց Մեչիկը՝ անձնատուր լինելով։

Նա մի քանի կում արավ։ Մորոզկան, քաշելով հարմոնը, երգեց խռպոտած ձայնով։ Տղաները ձայնակցեցին։

— Գնանք մեզ հետ,— ասաց մեկը՝ բռնելով Մեչիկի ձեռքից։— «... Իսկ ես ապ-ro՜ւմ եմ այստե-տեղ...»— քթի մեջ երգեց նա ինչ-որ պատահական մի տող և սեղմվեց Մեչիկին չսափրված այտով։

Եվ նրանք գնացին փողոցի երկարությամբ, կատակ անելով ու սայթաքելով, վախեցնելով շներին, անիծելով մինչև երկինք, որ կախված էր նրանց վրա անաստղ, մթնող գմբեթով, իրե՛նց, իրենց հարազատներին, մերձավորներին ու այդ անհաստատ, ծանր հողը։

16

ՃԱՀՃՈՒՏԸ

Վարյան, որ գրոհին չէր մասնակցել (նա մնացել էր տայգայում տնտեսական մասի հետ), գյուղ հասավ, երբ արդեն բոլորը ցրվել էին խրճիթներում։ Նա նկատեց, որ բնակարանների գրավումը կատարվել էր անկարգ. դասակները խառնվել էին, ոչ ոք չգիտեր, թե ով որտեղ է գտնվում, հրամանատարներին չէին լսում, ջոկատն ասես բաժանվել էր առանձին, իրար հետ կապ չունեցող մասերի։

Գյուղի ճանապարհին նա պատահմամբ տեսավ Մորոզկայի սպանված ձին. բայց ոչ ոք չկարողացավ որոշակի ասել, թե ինչ էր պատահել Մորոզկային։ Ոմանք ասում էին, թե նա սպանված է,— նրանք այդ բանը տեսել էին սեփական աչքերով,— ոմանք՝ թե նա միայն վիրավորված է, ոմանք էլ, Մորոզկայի մասին բան չգիտենալով, առաջին իսկ խոսքերից ուրախանում էին այն բախտավոր հանգամանքներից, որ իրենք կենդանի էին մնացել։ Եվ այս բոլորը, միասին առած, միայն սաստկացնում էր լքման և անհույս վհատության այն վիճակը, որի մեջ գտնվում էր Վարյան, Մեչիկի հետ հաշտվելու անհաջող փորձից հետո։

Շատ տանջվելով ու մաշվելով անվերջ հետապնդումներից, քաղցից, սեփական մտքերից և շարշարանքներից, էլ ուժ չունենալով թամբի վրա մնալու, գրեթե լալով, նա վերջապես գտավ Դուբովին՝ առաջին մարդուն, որն իսկապես ուրախացավ և ժպտաց նրան կարեկցական խիստ ժպիտով։

Եվ երբ տեսավ նրա ծերացած, մռայլ դեմքը, խիտ ու սև, վայր կախված ընչացքներով, և իրեն շրջապատող բոլոր մյուս ծանոթ, սիրելի, կոպիտ դեմքերը, նույնպես գորշ, ածխի փոշուց ընդմիշտ սևացած,— սիրտը ցնցվեց նրանց նկատմամբ ունեցած քաղցր ու վշտագին թախծից, սիրուց, և իր նկատմամբ եղած խղճահարությունից. նրանք հիշեցնում էին իրեն այն ջահել օրերը, երբ ինքը, գեղեցիկ և միամիտ մի աղջիկ, փարթամ ծամերով, մեծ ու տխուր աչքերով, վագոնիկներ էր գլորում ածխահանքի մութ, արտասվող անցքերով, պարում էր երեկույթներում, և նրանք նույնպես շրջ-

ջապատում էին իրեն այն ժամանակ, այդ դեմքերը՝ այնպես ծիծաղելի և տենչացող։

Այն ժամանակվանից, ինչ նա գժտվել էր Մորոզկայի հետ, կարծես բոլորովին կտրվել էր նրանցից, մինչդեռ դրանք իրեն միակ մտերիմներն էին, բնիկ-հանքափորներ, որոնք մի ժամանակ ապրում էին, աշխատում կողք-կողքի և իր ետևից էին ընկնում։

«Որքա՜ն ժամանակ նրանց չեմ տեսել,— բոլորովին մոռացել եմ... Ա՜խ, իմ սիրելի բարեկամներ...» — մտածեց նա սիրով ու ղղջումով, և քունքերում այնպես հաճելի ցավ զգաց, որ հազիվ զսպեց արտասուքը։

Այս անգամ միայն Դուբովին հաջողվեց կանոնավոր կերպով իր դասակը տեղավորել հարևան խրճիթներում։ Նրա մարդիկ հսկում էին գյուղից դուրս, օգնում էին Լևինսոնին՝ ուտելիքի պաշար հավաքելու։ Այդ օրը միանգամից պարզվեց այն, ինչ առաջ ծածկված էր ընդհանուր բարձր տրամադրության մեջ, բոլորի համար էլ հավասար լի օրերում. այն, որ ամբողջ ջոկատը հենվում է գլխավորապես Դուբովի դասակի վրա։

Վարյան տղաներից իմացավ, որ Մորոզկան կենդանի է և նույնիսկ վիրավորված չէ։ Ցույց տվին նրա նոր ձին, որ խլել էին սպիտակներից։ Դա մի բարձր, բարակ ոտքերով աշխետ հովատակ էր՝ կարճ խուզած բաշով և նուրբ պարանոցով, ուստի նա ուներ շատ անվստահելի, մատնիչ տեսք. նրան արդեն մկրտել էին «Հուդա» անունով։

«Ուրեմն նա կենդանի է...— մտածում էր Վարյան, ցրված նայելով երիվարին։— Է՜հ, ես ուրախ եմ...»։

Ճաշից հետո, երբ նա, խոտանոց բարձրանալով, մենակ պառկած էր անուշաբույր խոտի վրա, քնի միջից ականջ դնելով, թե արդյոք մեկը «ըստ նախկին մտերմության» չի՞ խցկվի իր մոտ, նորից փափուկ, քնկոտ ու ջերմ զգացմունքով հիշեց, որ Մորոզկան կենդանի է, և հենց այդ մտքով էլ քուն մտավ։

Նա զարթնեց հանկարծակի սաստիկ անհանգստացած, սառած ձեռքերով։ Համատարած մթության մեջ շարժվող գիշերը նայում էր կտուրից։ Պաղ քամին շարժում էր խոտը։

Իրար էր զարկում ճյուղերը, խշխշացնում պարտեզի տերևները...

«Աստված իմ, ո՞ւր է Մորոզկան. ո՞ւր են բոլոր մնացածները,— մտածում էր Վարյան սոսկումով։— Մի՞թե ես նորից մենակ մնացի, ինչպես մի խոտաբույս՝ այստեղ, այս սև փոսում...» Նա տենդային արագությամբ ու դողով, թևքերը չգտնելով, հագավ շինելը և արագ ցած իջավ խոտանոցից։

Դարպասի մոտ երևում էր օրապահի պատկերը։

— Էդ ո՞վ է օրապահում,— հարցրեց նա, ավելի մոտենալով։— Կո՞ստյա, դո՞ւ ես... Մորոզկան վերադարձա՞վ, չգիտե՞ս։

— Ուրեմն դու խոտանոցում քնա՞ծ էիր,— ասաց Կոստյան դժկամությամբ և հիասթափված։— Ափսո՜ս, չգիտեի։ Մորոզկային մի՛ սպասիր՝ խևի պես խմած է. ձիու հոգեհանգիստն է կատարում... Ցո՞ւրտ է, հա՞։ Լուցկի տուր...— Վարյան գտավ տուփը։ Կոստյան ծխեց՝ ծածկելով կրակը մեծ ափով, հետո լուսավորեց նրան.

— Իսկ դու նիհարել ես, ջահելիկ,— և ժպտաց։

— Վերցրու, քեզ լինի...— Վարյան բարձրացրեց օձիքը և դարպասից դուրս ելավ։

— Գնամ նրան փնտրելու։

— Ո՞ւր ես գնում։

— Մորոզկայի՞ն... Լավ է... Գուցե է՞ս նրան փոխարինեմ։

— Չէ, հազիվ թե...

— Էդ երբվանի՞ց։

Վարյան չպատասխանեց։ «Դեհ, մեր աղջիկն է»,— մտածեց օրապահը։

Այնպես մութ էր, որ Վարյան դժվարությամբ էր ջոկում ճանապարհը։ Անձրևն սկսել էր կաթկթել։ Պարտեզներն աղմկում էին հետզհետե ավելի անհանգիստ ու խուլ։ Մի տեղ, պատի տակ, աղիողորմ վնգստում էր մրսած մի շնիկ։ Վարյան շոշափելով գտավ նրան և վերցրեց, դրեց ծոցը. շինելի տակ, շնիկը սաստիկ դողում էր և դունչը ներս կոխում։ Մի խրճիթի մոտ Վարյան հանդիպեց Կուբրակի օրապահին և հարցրեց՝ արդյոք չգիտե՞ որտեղ է քեֆ

անում Մորոզկան։ Օրապահը նրան ուղարկեց եկեղեցու կողմը։ Նա շրջեց գյուղի կեսը, առանց որևէ արդյունքի և, բոլորովին սիրտը կոտրված, ետ դարձավ։

Նա այնքան շատ էր պտտվել մի նրբանցքից մյուսը, որ շփոթել էր ճանապարհը և այժմ գնում էր հենց այնպես, համարյա չմտածելով իր թափառումների նպատակի մասին, միայն տաքացած շնիկին ավելի ամուր էր սեղմում կրծքին։ Անցավ երևի մի ժամից ոչ պակաս, մինչև որ գտավ տուն տանող փողոցը։ Նա թեքվեց դեպի այդ փողոցը, ազատ ձեռքով բռնելով ցանկապատից, որպեսզի չսայթաքի, և մի քանի քայլ անելով՝ քիչ մնաց ընկներ Մորոզկայի վրա։

Նա պառկած էր փորի վրա, գլուխը ցանկապատի կողմը, ձեռքերը գլխի տակ, և հազիվ լսելի ձայնով տնքում էր,— ըստ երևույթին հենց նոր փսխել էր։ Վարյան ավելի շուտ ոչ թե ճանաչեց նրան, այլ զգաց, որ նա է. առաջին անգամը չէր, որ նրան գտնում էր այդպիսի վիճակում։

— Վանյա՜,— կանչեց նա՝ ծալապատիկ նստելով և իր փափլիկ ու բարի ձեռքը դնելով նրա ուսին։— Ինչո՞ւ ես պառկել այստեղ։ Վա՞տ ես զգում, հա՞։

Մորոզկան քիչ բարձրացրեց գլուխը, Վարյան տեսավ նրա տանջված, ուռած, դժգույն դեմքը և խղճաց նրան. Մորոզկան այնպե՜ս թույլ ու փոքրիկ թվաց։ Ճանաչելով Վարյային՝ նա ծուռ ժպտաց և, ուշադիր հետևելով իր շարժումների ճշտությանը, նստեց, թիկն տվեց ցանկապատին ու ոտքերը մեկնեց։

— Հա-ա՜... էդ դո՞ւք եք... Մ-մեր հարգանքը ձեզ...— թոթվեց նա թուլացած ձայնով, փորձելով, սակայն, անցնել նանձարձակ բարեհաջողության տոնի։— Մ-մեր հարգանքը ձեզ, ընկեր... Մորոզովա...

— Գնանք, Վանյա,— Վարյան բռնեց նրա ձեռքից։— Թե՞ դու, գուցե, ուժ չունես... Սպասիր, հիմա ամեն ինչ կկարգավորենք, ես դուռը կծեծեմ... Եվ նա վճռականորեն վեր թռավ, մտադրվելով խնդրել, որ հարևան խրճիթում իրենց տեղ տան։ Նա մի վայրկյան իսկ չտատանվեց, արդյոք հարմա՞ր է մութ գիշերով բախել անծանոթ մարդկանց դուռը, և ի՞նչ կարող են մտածել հենց իր մասին, երբ խրճիթ ընկնի հարբած մարդու հետ. նա երբեք ուշադրություն չի դարձնում այդպիսի բաների վրա։

Բայց Մորոզկան հանկարծ վախով օրորեց գլուխը և խռպոտ ձայնով ասաց.

— Ա-մե-նե-վին... Ես քեզ դուռ ծեծել ցույց կտա՞մ... Սո՜ւս...— և սեղմած բռունցքները ցնցեց իր քունքերի մոտ։ Վարյային նույնիսկ թվաց, թե նա վախից զգաստացավ։— Այստեղ Գոնչարենկոն է իջել, մի՞թե հ-հայտնի չէ... Բա ինչպես կ-կարելի է...

— Ի՞նչ անենք, որ Գոնչարենկոն է։ Շատ մեծ մարդ է, էլի...

— Ո-ոչ, դու չգիտես,— նա ցավագնորեն կնճռոտվեց և բռնեց իր գլուխը,— ախր դու չգիտես... Չէ՞ որ նա ինձ մարդու տեղ դրեց, իսկ ես... դեհ, ինչպե՞ս... ո-ոչ, մի՞թե կարելի է...

— Ի՞նչ ես անտեղի դուրս տալիս, սիրելիս,— ասաց Վարյան՝ նորից նրա կողքին ծալապատիկ նստելով։ Նայիր, անձրև է գալիս, խոնավ է, վաղը պետք է երթի դուրս գալ, գնանք, սիրելիս...

— Չէ, ես կորա,— ասաց նա արդեն ինչ-որ բոլորովին տխուր և զգաստ։— Դեհ ի՞նչ եմ ես հիմա, ո՞վ եմ ես, ինչո՞ւ՝ մտածեցեք, մարդիկ...— և նա հանկարծ խեղճացած նայեց ջուրը՝ ուռած, արտասվալի աչքերով։

Վարյան ազատ ձեռքով գրկեց նրան և, համարյա շրթունքներով դիպչելով նրա թարթիչներին, շշնջաց քնքուշ և հովանավորող ձայնով, ինչպես երեխայի.

— Դեհ ինչի՞ ես վշտանում։ Եվ ի՞նչդ է պակաս... Չի՞դ ես ափսոսում, հա՞... Չէ՞ որ ուրիշ ձի են տվել, այնքան լավ ձի... Դեհ, մի՛ վշտանար, սիրելիս, մի՛ լացիր, տե՛ս, շնիկ եմ գտել, նայի՛ր, ի՞նչ շնիկ է,— և նա, ետ տանելով շինելի փեշը, ցույց տվեց քնկոտ, կախականջ շնիկին։ Վարյան այնպես զգացված էր, որ ոչ թե միայն նրա ձայնը, այլ ինքը ամբողջովին ասես քչքչում էր և սիրալիր խոսում բարությունից։

— Ու-ո՜ւ, քուչիկ,— ասաց Մորոզկան հարբածի քնքշությամբ և խտտեց նրա ականջները։— Ո՞րտեղ գտար... Կ-կծում է, ա՜յ, սրիկա...

— Դեհ, տեսա՞ր... Գնանք, սիրելիս...

Վարյային հաջողվեց բարձրացնել նրան ու ոտքի կանգնեցնել, և այդպես, համոզելով ու վատ մտքերից հեռու պահելով, նրան տարավ դեպի տուն, և Մորոզկան արդեն չէր հակառակում, այլ հավատում էր նրան։

Ամբողջ ճամփին Մորոզկան ոչ մի անգամ չհիշեցրեց նրան Մեչիկի մասին, և Վարյան նույնպես ոչ մի խոսք չասաց, կարծես թե նրանց միջև ոչ մի Մեչիկ էլ չէր եղել։ Հետո Մորոզկան խոժոռվեց և բոլորովին լռեց. նա նկատելի կերպով զգաստանում էր։

Այդպես նրանք հասան այն խրճիթին, ուր իջել էր Դուբովը։

Մորոզկան, սանդուղքի բազրիքից ամուր բռնելով, փորձում էր բարձրանալ խոտանոցը, բայց ոտքերը չէին հնազանդվում։

— Գուցե պետք է օգնե՞լ,— հարցրեց Վարյան։

— Ոչ, ես ինքս, հիմա՞ր,— կոպիտ և ամոթահար պատասխանեց նա։

— Դեհ, ուրեմն, մնաս բարով...

Նա թողեց սանդուղքը և վախեցած նայեց նրան։

— Ինչպե՞ս թե «մնաս բարով»։

— Դե, մի կերպ,— ծիծաղեց Վարյան շինծու և տխուր։

Մորոզկան հանկարծ մի քայլ արավ դեպի նա և, անշնորհք գրկելով նրան, իր անվարժ այտով սեղմվեց նրա դեմքին։ Վարյան զգաց, որ նա ուզում է իրեն համբուրել և նա իսկապես ուզում էր, բայց ամաչեց, որովհետև հանքի ջահելները շատ քիչ էին փաղաքշում աղջիկներին, միայն մերձենում էին նրանց. մեկտեղ անցկացրած ամբողջ կյանքում Մորոզկան նրան համբուրել էր միայն մի անգամ՝ իրենց հարսանիքի օրը, երբ սաստիկ հարբած էր, և դրացիները կանչում էին. «Համբուրվե՞ք»։

«... Ահա և վերջ, և ամեն ինչ առաջվա պես դարձավ, ասես ոչինչ չէր էլ եղել,— մտածում էր Վարյան տխուր, կարոտալի զգացումով, երբ կշտացած Մորոզկան քնեց՝ հենվելով նրա ուսին։— Նորից հին շավղով, միևնույն լուծը, և միշտ դեպի նույն տեղը... Բայց աստվա՞ծ իմ, որքա՞ն քիչ ուրախություն կա դրանում»։

Նա թիկունքը դարձրեց Մորոզկային, աչքերը փակելով և որբի պես ոտքերն իրեն քաշելով, բայց նրան չհաջողվեց քնել... Հեռու, գյուղի ետևում, այն կողմից, ուր սկսվում էր Խաունիխեձայի շրջանի ճանապարհը, և ուր կանգնած էին ժամապահները, ազդանշանի երեք կրակոց լսվեց... Վարյան արթնացրեց Մորոզկային։ Նա նո՞ր էր բարձրացրել իր գանգուր գլուխը, երբ գյուղի ետևում նորից որոտացին հրացանները, և իսկույն, իբրև նրանց պատասխան, գիշերային մութն ու լռությունը ճեղքելով, թափվեցին, ոռնացին, տկտկային գնդացրի դայլային ոռնոցները...

Մորոզկան մռայլորեն ձեռքը թափ տվեց և Վարյայի ետևից իջավ խոտանոցից։ Անձրևը դադարել էր, բայց քամին սաստկանում էր. ինչ-որ տեղ լուսամուտի փեղկը շրխկում էր, և թաց, դեղին տերևը պտտվում էր մթության մեջ։ Խրճիթներում լույսեր էին վառվում։ Օրապահը բղավելով վազում էր փողոցով և ծեծում լուսամուտները։

Մի քանի րոպեի ընթացքում, մինչև Մորոզկան հասավ մարագ և դուրս բերեց իր Հուդային, նա նորից վերապրեց այն ամենը, ինչ որ երեկ պատահել էր իր հետ։ Նրա սիրտը սեղմվեց, երբ աչքերի առաջ պատկերացրեց սպանված Միշկային՝ սառած աչքերով, և հանկարծ նողկանքով ու ահով հիշեց երեկվա իր ամբողջ անարժան վարքը. նա հարբած քայլում էր փողոցներով, և բոլորը տեսան նրան՝ հարբած պարտիզանին. նա գոռգոռոցով ու ամբողջ գյուղին լսելի ձայնով լկտի երգեր էր երգում։ Եվ իր հետ էր Մեչիկը՝ իր թշնամին. նրանք քեֆ էին անում իբրև մտերիմներ, և ինքը՝ Մորոզկան, սեր երդվեց նրան և ներողություն խնդրեց նրանից՝ ինչո՞ւ, ինչի՞ համար... Նա այժմ զգում էր իր այդ վարմունքի ամբողջ անտանելի կեղծությունը։ Ի՞նչ կասի Լևինսոնը։ Եվ մի՞թե կարելի է, իսկապես, երևալ Գոնչարենկոյի աչքին այդպիսի սանձարձակ քեֆից հետո։

Նրա ընկերներից շատերն արդեն թամբում էին ձիերը և դարպասից դուրս բերում, իսկ նրա ոչ մի բանը կարգին չէր. թամբը կապ չուներ, հրացանը մնացել էր Գոնչարենկոյի խրճիթում։

— Տիմոֆեյ, բարեկամս, օգնիր,— խղճալի, գրեթե լալագին աղերսեց նա՝ տեսնելով Դուբովին, որ վազում էր

բակով։— Տուր ինձ պահեստի թամբակալդ. դու ունես, ես տեսա...

— Ի՞նչ,— գոռաց Դուբովը։— Իսկ ո՞ւր էիր մինչև հիմա...— կատաղի հայհոյելով և ձիերին հրելով այնպես, որ նրանք ծառս էին լինում, նա անցավ իր ձիու մոտ՝ թամբակալի համար։— Ա՜ռ...— բարկացած ասաց նա, քիչ հետո մոտենալով Մորոզկային, և հանկարծ ամբողջ ուժով թամբակալը զարկեց նրա թիկունքին։

«Իհարկե, այժմ նա կարող է ինձ ծեծել, ես դրան արժանի եմ»,— մտածեց Մորոզկան և նույնիսկ չընդդիմախոսեց, նա ցավ չզգաց։ Բայց աշխարհն ավելի մռայլ դարձավ նրա համար։ Եվ այդ կրակոցները, որոնք ճայթում էին մթնում, այդ մթությունը, այն վիճակը, որ սպասում էր նրան գյուղի ետևում՝ այդ ամենը թվում էին արժանի պատիժ այն բոլորի համար, ինչ որ նա արել էր իր կյանքում։

Մինչ դասակը հավաքվում էր և շարվում, հրաձգությունը կիսաշրջան բռնեց, գետափը, թնդացին ռմբանետները, և թպրտացող, փայլող ձկները ծառս եղան գյուղի վրա։ Բակլանովը, շինելը պինդ կապած, ատրճանակը ձեռքին, վազեց դեպի դարբասը. նա կանչում էր.

— Իջե՞ք ձիերից... կանգնեցեք մի շարքո՞վ... Մոտ քսան մարդ կթողնես ձիերի մոտ,— ասաց նա Դուբովին։

— Իմ ետևի՞ց։ Վազքո՞վ...— կանչեց նա մի քանի րոպեից հետո և նետվեց մթության մեջ։ Նրա ետևից, շինելների փեշերը հավաքելով, փամփշտակալները բանալով, վազեց շղթան։

Ճանապարհին նրանք հանդիպեցին փախչող ժամապահներին։

— Նրանց թիվ ու համար չկա,— բղավում էին նրանք՝ տագնապահար ճոճելով ձեռքերը։

Որոտաց թնդանոթային համազարկը, արկերը պայթում էին գյուղի կենտրոնում՝ մի պահ լուսավորելով երկնքի մի կտորը, ծռված զանգակատունը, տերտերի ցողափայլ պարտեզը։ Հետո երկինքը ավելի ևս մթնեց։ Արկերը պայթում էին այժմ իրար ետևից՝ կարճ, հավասար ընդմիջումներով։ Ինչ-որ տեղ բռնկվեց բոցը. սկսեց այրվել խոտի դեզը, կամ խրճիթը։

Բակլանովը պետք է կասեցներ թշնամուն, մինչև որ Լևինսոնը կարողանար ամբողջ գյուղում ցրված ջոկատը հավաքել։ Բայց Բակլանովին չհաջողվեց նույնիսկ դասակը մոտեցնել անասնանոցին. նա ռումբերի պայթելու ժամանակ տեսավ իր դեմ վազող թշնամու շղթաները։ Կրակոցների ուղղությունից և գնդակների սուլոցից դատելով՝ նա հասկացավ, որ թշնամին անցել է իրենց թիկունքը ձախ թևից, գետի կողմից, և, երևի, հիմա գյուղ կմտնի մյուս ծայրից։

Դասակն սկսեց պատասխան կրակ բանալ, շեղակի նահանջելով դեպի աջ անկյունը, վազելավազ անցավ օղակներով, խուսանավեց նրբանցքներով, պարտեզներով ու բանջարանոցներով։ Բակլանովը ականջ էր դնում գետի մոտ տեղի ունեցող կռվին,— նա շարժվում էր դեպի կենտրոնը,— ըստ երևույթին, մյուս ծայրը այժմ բռնել էր թշնամին։ Հանկարծ գլխավոր ճանապարհից սոսկալի աղմուկով սլացավ թշնամու հեծելազորը. երևում էր, թե ինչպես շեշտակի հորդում էր փողոցով մարդկանց և ձիերի մութ, որոտաձայն, բազմագլուխ լավան։

Արդեն չհոգալով այն մասին, թե պետք է թշնամուն կասեցնել, Բակլանովը դասակի հետ միասին, որ կորցրել էր մոտ տասը մարդ, վազեց դեպի չբռնված միջնակը՝ անտառի ուղղությամբ։ Եվ ձորի հենց զառիթափին, ուր խրճիթների վերջին շարքն էր ձգված, նրանք հանդիպեցին ջոկատին՝ Լևինսոնի հրամանատարությամբ, որը սպասում էր նրանց։ Ջոկատը նկատելի կերպով նոսրացել էր։

— Ահա՜ նրանք,— թեթևացած ասաց Լևինսոնը։— Շուտով ձի հեծեք։

Նրանք հեծան ձիերը և ամբողջ թափով ստացան դեպի անտառը, որ սևին էր տալիս ներքևում։ Ըստ երևույթին, նրանց նկատել էին. գնդացիրները տկտկացին ետևներից, և նրանց գլխավերևում միանգամից սկսեցին երգել գիշերային արճճե մեղուները։ Թպրտացող հրեղեն ձկները նորից թռթռացին երկնքում։ Դրանք ցած էին ընկնում բարձրից՝ թողնելով փայլուն պոչեր, և ուժգին ֆշշոցով գետին էին մղվում ձիերի ոտքերի մոտ։ Ձիերը ետ-ետ էին գնում, բարձրացնելով արնոտ տաք երախները և բղավելով կա-

նանց պես. ջոկատը սեղմվում էր, թողնելով ետևում վխտացող մարմիններ։

Ետ նայելով՝ Լևինսոնը տեսնում էր հսկայական մի հրացոլք, որ ձգվում էր գյուղի վրա. ամբողջ մի թաղ էր այրվում. այդ հրացոլքի ֆոնի վրա դես-դեն էին ընկնում մենակ և խմբերով մարդկանց սև, հրաղեմ կերպարանքները։

Ստաշինսկին, որ ձին քշում էր կողքից, հանկարծ գլորվեց ձիուց և մի քանի վայրկյան շարունակ քարշ էր գալիս նրա ետևից՝ ոտքը ասպանդակում. հետո նա ընկավ, իսկ ձին առաջ թռավ, և ամբողջ ջոկատն անցավ այդտեղով, չհամարձակվելով տրորել մեռած մարմինը։

— Լևինսո՜ն, նայի՛ր,— դրգռված կանչեց Բակլանովը և ձեռքով ցույց տվեց դեպի աջ։

Ջոկատն արդեն ներքևում էր և արագ մոտենում էր անտառին, իսկ վերևից, սև դաշտի և երկնքի սահմանագիծը կտրելով, նրանց ճանապարհը հատում էր թշնամու սլացող հեծելազորը։ Սև գլուխները առաջ ձգած ձիերը և նրանց վրա թեքված ձիավորները մի պահ երևում էին երկնքի ավելի լուսավոր ֆոնի վրա և իսկույն կորչում մթնում, իջնելով այստեղ՝ ցածրավայրը։

— Շո՜ւտ... Շո՜ւտ...— բղավում էր Լևինսոնը՝ անդադար ետ նայելով և հովատակին խթանելով։

Վերջապես նրանց հասան անտառի ծայրը և իջան ձիերից։ Բակլանովը Դուբովի դասակի հետ նորից մնաց նահանջը պաշտպանելու, իսկ մնացածները նետվեցին անտառի խորքը՝ սանձերից բռնած տանելով ձիերին։

Անտառում ավելի հանգիստ էր և լուռ. գնդացիրների տկտկոցը, հրացանների աղմուկը, թնդանոթային համազարկերը մնացին ետևում և արդեն երկրորդական բան էին թվում. նրանք ասես չէին խանգարում անտառի լռությունը։ Միայն երբեմն լսվում էր, թե ինչպես անտառի խորքում, ծառերը կոտրատելով, շառաչով ընկնում են արկերը։ Տեղտեղ հրդեհի փայլը, թափանցելով թավուտը, գետնի վրա և ծառերի բներին ձգում էր մուգ, պղնձե, եզրերը սև բծեր, և երևում էր բները պարուրող խոնավ, ասես արյունոտ մամուռը։

Լևինսոնը իր ձին հանձնեց Եֆիմկային և Կուբրակին թողեց առաջ անցնելու՝ ցույց տալով ուղղությունը (նա ընտրեց այդ ուղղությունը միայն նրա համար, որ պարտավոր էր ջոկատին տալ որևէ ուղղություն), իսկ ինքը կանգնեց մի կողմում, որպեսզի տեսնի, թե որքան մարդ է մնացել իր ջոկատում։

Նրանք անցնում էին Լևինսոնի առջևից, այդ մարդիկ՝ ճնշված, թաց և շար, ծանր ճկելով ծնկները և լարված նայելով մթության մեջ. նրանց ոտքերի տակ չփչփում էր ջուրը։ Երբեմն ձիերը սուզվում էին մինչև փորները. ցեխը շատ խորն էր։

Առանձնապես դժվար էր Դուբովի դասակի առաջնորդողների համար. նրանք տանում էին երեքական ձի, միայն Վարյան տանում էր երկուսը՝ իրենը և Մորոզկայինը։ Իսկ տանջված մարդկանց ամբողջ այս շարքի ետևից ձգվում էր մի կեղտոտ, հոտած, ոլոր-մոլոր հետք, ասես թե այնտեղից մի գարշահոտ, զզվելի սողուն էր անցել։

Լևինսոնը, երկու ոտքով կաղալով, գնում էր բոլորի ետևից։ Հանկարծ ջոկատը կանգ առավ...

— Ի՞նչ պատահեց այդտեղ,— հարցրեց նա։

— Չգիտեմ,— պատասխանեց պարտիզանը, որ գնում էր նրա առջևից։ Դա Մեչիկն էր։

— Իսկ դու իմացիր շղթայի միջոցով...

Քիչ անց եկավ պատասխանը, որ կրկնել էին մի քանի տասնյակ սպիտակած, թրթռացող շրթունքներ։

— Առաջ գնալու տեղ չկա, ճահճուտ է...

Լևինսոնը, ոտքերի հանկարծակի դողը հաղթահարելով, վազեց Կուբրակի մոտ։ Նա նոր էր ծածկվել ծառերի ետևում, երբ մարդկանց ամբողջ բազմությունը ետ գնաց և վազվզեց այս ու այն կողմ, բայց ամեն տեղ էլ ճանապարհը կտրելով, ձգվում էր կպչուն, մութ, անանցանելի ճահիճը։ Միայն մի ճանապարհ կար այստեղից. դա նրանց անցած ճամփան էր, որը տանում էր այնտեղ, ուր արիաբար կռվում էր հանքափորների դասակը։ Բայց հրաձգությունը, որ լսվում էր անտառի ծայրից, արդեն մի կողմնակի բան չէր թվում. դա այժմ անմիջականորեն վերաբերում էր իրենց, այդ հրաձգությունը կարծես թե նույնիսկ մոտենում էր իրենց։

Հուսահատությունն ու զայրույթը տիրեց մարդկանց։ Նրանք փնտրում էին մեղավորին. իհարկե՝ դա Լենինսոնն էր... Եթե այժմ կարողանային տեսնել նրան բոլորը միաժամանակ՝ կհարձակվեին նրա վրա իրենց երկյուղի բոլոր ուժերով. թող նա իրենց դուրս բերի այստեղից, եթե կարողացավ այստեղ բերել...

Եվ հանկարծ նա իսկապես հայտնվեց նրանց մեջ, մարդկային շաղախի հենց կենտրոնում, վեր պարզած վառվող ջահը, որը լուսավորում էր նրա մեռելային-դժգույն, մորուքավոր դեմքը, սեղմված ատամներով, մեծ, վառվող, կլոր աչքերով, որոնցով արագ անցնում էր մի դեմքից մյուսին։ Եվ վրա հասած լռության մեջ, ուր խուժում էին միայն ձայները այն մահացու խաղի, որ կատարվում էր այնտեղ՝ անտառի ծայրին, նրա ջղային, բարակ, սուր, խռպոտած ձայնը հնչեց բոլորի համար լսելի։

— Ո՞վ է այդտեղ շարքերը խանգարում... ե՜տ գնացեք... Միայն փոքրիկ աղջիկներն են խուճապի մատնվում... Լռեցե՜ք,— ճչաց նա հանկարծ, գայլի պես ատամները ժնգժնգացնելով ու թափով հանելով մաուզերը. բողոքող ձայները վայրկենապես քարացան շուրթերին։— Լսե՜լ իմ հրամանը։ Մենք պետք է գերանուղի գցենք ճահճի վրայով, այլ ելք չկա... Բորիսով (դա 3-րդ դասակի հրամանատարն էր), թող առաջնորդներին և գնա Բակլանովին օգնելու։ Ասա նրան դիմանա այնքան, մինչև որ նահանջի հրաման տամ... Կուբրակ։ Զոկել երկու մարդ Բակլանովի հետ կապ պահպանելու համար... Լսեցեք բոլորդ։ Ձիերը կապեք։ Երկու ջոկ ուռենիների թփուտի ետևից թող գնան։ Թրերը չխնայել... Բոլոր մնացածները՝ Կուբրակի կարգադրության տակ։ Լսել նրան առանց մի խոսքի։ Կուբրակ, եկ իմ ետևից...— Նա թիկունքը դարձրեց մարդկանց կողմը և թեքվելով գնաց դեպի ճահճուտը՝ գլխավերևում բռնած ծխացող ջահը։

Եվ սսկված, ճնշված, խմբված բազմությունն այն մարդկանց, որոնք դեռ նոր հուսահատության մեջ ձեռքերը վեր էին բարձրացնում, որոնք պատրաստ էին սպանելու ու լալու, հանկարծ գերմարդկային, արագ, հնազանդ, մոլեգին շարժման մեջ ընկավ։ Մի քանի ակնթարթում ձիերը կապված էին, կացինները աղմկեցին, թրերի հարվածների տակ ճոճը-

ռաց լաստենու պուրակը, Բորիսովի դասակը վազեց՝ խավարի մեջ զենքերը շաչեցնելով և սապոգներով չմփացնելով. նրան դեմհանդիման արդեն քարշ էին տալիս թաց ուռենու առաջին խտիտները... Լսվում էր ընկնող ծառի շառաչը, և ահագին, ճյուղաշատ, շաչող հսկան զարնվում էր մի կակուղ ու կործանիչ բանի, և վառված ջահի լույսով երևվում էր, թե ինչպես մութ-կանաչ, վրան ջրոսպ բուսած մակերևույթը փքվում էր առաձգական ալիքներով՝ հսկայական օձի մարմնի նման։

Այնտեղ, ճյուղերից ամուր բռնելով,— լուսավորված մխացող բոցով, որը մթության միջից դուրս էր խլում աղավաղված դեմքեր, կորացած թիկունքներ, ճյուղերի հսկայական կույտեր,— ջրի, ցեխի, կորստի մեջ խռնվում էին մարդիկ։ Նրանք աշխատում էին շինելները հանած, և նրանց պատառոտված վարտիքներից ու շապիկներից երևում էին լարված, ճանկռվելուց արյունոտված մարմինները։ Նրանք կորցրել էին ամեն տեսակ զգացում՝ ժամանակի՝ տարածության, սեփական մարմնի, ամոթի, ցավի, հոգնածության։ Նրանք տեղնուտեղը գդակներով վերցնում էին ճահճի՝ գորտաձուղպի հոտ արձակող ջուրը և խմում էին շտապ-շտապ ու ագահ, ինչպես վիրավոր գազաններ...

Իսկ կրակոցը հետզհետե ավելի ու ավելի էր մոտենում, դառնում ավելի լսելի ու տաք։ Բակլանովը մարդ մարդու ետևից էր ուղարկում և հարցնում՝ արդյոք շուտո՞վ, շուտո՞վ... Նա մարտիկների կեսը կորցրել էր, կորցրել էր անթիվ վերքերից արյունաքամ եղած Դուբովին և դանդաղ նահանջում էր՝ զիջելով քայլ-քայլի ետևից։ Վերջ ի վերջո նա կտ գնաց մինչև ուռենիները, որ ջարդում էին կամրջի համար. էլ նահանջելու տեղ չկար։ Թշնամու գնդակներն այժմ թանձրորեն սուլում էին ճահճի վերևում։ Աշխատողներից մի քանիսն արդեն վիրավորված էին. Վարյան նրանց վիրակապում էր։ Կրակոցներից վախեցած ձիերը կատաղի խրխնջում էին և ծառս լինում, մի քանիսը, երասանակները կտրելով, դես ու դեն էին նետվում տայգայում և, ճահճուտն ընկնելով, աղիողորմ օգնություն էին աղերսում։

Հետո ուռենու պուրակում թաքնված պարտիզանները, իմանալով, որ գերանուղին պատրաստ է, սկսեցին փախչել։

Բակլանովը՝ ներս ընկած այտերով, բորբոքված աչքերով, վառոդի ծխից սևացած, վազում էր նրանց ետևից, սպառնալով դատարկ ատրճանակով և կատաղությունից լաց լինելով։ Գոռգոռոցով և ջահերն ու զենքերը ճոճելով, ետևից քարշ տալով համառող ձիերին, ջոկատը գրեթե մեկեն գրոհ տվեց պատնեշի վրա։ Գրգռված ձիերը չէին հնազանդվում առաջնորդներին և ցնցվում էին ընկնավորների պես. ետևվինները խենթացած ելնում էին առջևինների վրա. գերանուղին ճռճռում էր և քանդվում։ Հանդիպակաց ափը ելնելու ժամանակ Մեչիկի ձին ցած գլորվեց գերանուղուց, և նրան դուրս հանեցին պարանների օգնությամբ, մոլեգին հայհոյանքներով։ Մեչիկը ջղաձգաբար բռնեց լպրծուն պարանից, որ նրա ձեռքերում դողում էր ձիու մոլեգնությունից, ու քաշում էր, քաշում, և նրա ոտքերը խճճվում էին ցեխոտ ուռենիների մեջ։ Իսկ երբ ձիուն վերջապես դուրս հանեցին, նա երկար ժամանակ չէր կարողանում արձակել նրա առջևի ոտքերին կապ ընկած հանգույցը, և կատաղի հաճույքով ատամները խրեց այդ դառն հանգույցի մեջ, որ ներծծված էր ճահճի հոտով ու զզվելի լորձունքով...

Ամենքից վերջը գերանուղին անցան Լևինսոնը և Գոնչարենկոն։

Պայթեցնողը կարողացավ ժամանակին դնել ուժանակը, և համարյա այն պահին, երբ թշնամին հասավ անցուղին, պատնեշը օդ թռավ...

Քիչ հետո մարդիկ ուշքի եկան և հասկացան, որ առավոտ է։ Նրանց առաջ փորված էր տայգան՝ փայլփլող, վարդագույն եղյամով ծածկված։ Ծառերի արանքներից երևում էին կապույտ երկնքի պայծառ կտորները. զգացվում էր, որ այնտեղ՝ անտառի մյուս կողմում, ծագում էր արևը։ Մարդիկ դեն նետեցին վառվող խանձողները, որ մինչև այժմ, չգիտես ինչու, տանում էին նրանք, և տեսան իրենց կարմիր, այլանդակված ձեռքերը, թաց, տանջված ձիերը, որոնցից ծխի պես ելնում էր քնքուշ, հալվող գոլորշին, ու զարմացած էին այն բանի վրա, ինչ-որ արին իրենք այդ գիշեր։

17

ՏԱՍՆԻՆԸ

Հինգ վերստ հեռու այն տեղից, ուր կատարվում էր անցումը, ճահճուտի վրայով կամուրջ էր ձգված. այնտեղով անցնում էր պետական ճանապարհը դեպի Տուգո-Վակա։ Դեռ երեկ երեկոյից, վախենալով, որ Լևինսոնը գյուղում չի գիշերի, կազակները դարան մտան հենց այն ճանապարհին, կամրջից ութ վերստ հեռու։

Նրանք այնտեղ նստած մնացին ամբողջ գիշերը, սպասելով ջոկատին, և լսում էին թնդանոթների հեռավոր համազարկերը։ Առավոտյան թռավ-հասավ սուրհանդակը և բերեց հրաման՝ մնալ տեղերում, որովհետև թշնամին, անցնելով ճահճուտը, գալիս է նրանց ուղղությամբ։ Իսկ սուրհանդակի գալուց մի տասը րոպե անց Լևինսոնի ջոկատը, որ ոչինչ չգիտեր դարանի և այն մասին, որ իր մոտով նոր սլացել էր թշնամու սուրհանդակը, նույնպես դուրս եկավ Տուգո-Վակայի ճանապարհը։

Արևն արդեն բարձրացել էր անտառի վրա։ Եղյամը վաղուց հալվել էր։ Երկինքը բացվել էր վերևում՝ հստակ-սառցային և կապույտ։ Թաց-ոսկեփայլ ծառերը թեքվել էին ճամփի վրա։ Բացվեց տաք, ոչ աշնանային օրը։

Լևինսոնը ցրված հայացքով նայեց ամբողջ այդ լուսավոր և մաքուր, փայլող գեղեցկությանը և չզգաց այն։ Տեսավ իր ջոկատը՝ տանջված ու եռակի նոսրացած, որ վհատ ձգվել էր ճամփի երկարությամբ, ու հասկացավ, որ ինքը անտանելի հոգնած է ու անզոր է հիմա մի բան անելու այս մարդկանց համար, որոնք վհատ քարշ են գալիս իր ետևից։ Նրանք դեռ միակ ցանկալի, մոտիկ մարդիկ էին իր համար՝ այդ շարշարված, հավատարիմ մարդիկ, բոլոր մնացածներից ամենամոտիկը, նույնիսկ իրենից ավելի մոտիկ, որովհետև նրանք ոչ մի րոպե չէին դադարում զգալ, որ ինքը մի բանով պարտական է իրենց, բայց նա, թվում էր, այլևս ոչինչ չէր կարող անել նրանց համար, այլևս չէր ղեկավարում նրանց, և միայն նրանք դեռ չգիտեին այդ բանը և հնազանդ մի կերպ գնում էին իր ետևից, ինչպես մի հոտ,

որ սովոր է իր առաջնորդին։ Եվ դա հենց այն ամենասոսկալի բանն էր, որից նա վախենում էր ամեն ինչից ավելի, երբ երեկ առավոտ մտածում էր Մետելիցայի մահվան մասին...

Նա փորձեց իշխել իրեն, կենտրոնանալ գործնականորեն անհրաժեշտ մի բանի վրա, բայց նրա միտքը շեղվում էր և շփոթվում, աչքերը փակվում էին, և տարօրինակ պատկերներ, հիշողությունների հատվածներ, շրջապատող իրականության աղոտ զգացմունքներ, մշուշոտ ու հակասող, ծառանում էին նրա գիտակցության մեջ անընդհատ փոփոխվող, անհնչյուն և անմարմին երամի ձևով... «Ինչի՞ համար է այս երկար, անվերջ ճանապարհը, և այս թաց սաղարթը, և այսպիսի մեռած ու ինձ համար այժմ անպետք երկինքը... Ի՞նչ պետք է անեմ ես այժմ... Հա՛, պարտավոր եմ դուրս գալ Տուգո-Վակայի հովիտը... Վա... կայի հովիտը, ինչ տարօրինակ բան է — Վա... կայի հովիտը... Բայց ինչպե՞ս հոգնած եմ ես, ինչպե՞ս է քունս տանում։ Էլ ի՞նչ կարող են ուզել այս մարդիկ ինձանից, երբ ես այնպե՞ս քնել եմ ուզում... Նա ասում է՝ դեպք... Այո, այո, դեպք էլ... Նրա գլուխն այնպես կլոր է ու բարի, ինչպես որդուս գլուխը, և, իհարկե, հարկավոր է դեպք ուղարկել, իսկ հետո արդեն քնել... քնել... և նույնիսկ ոչ այնպես, ինչպես որդուս գլուխը, այլ... ի՞նչ...»։

— Ինչ ասացի՞ր,— հարցրեց նա հանկարծ գլուխը բարձրացնելով։

Նրա կողքից գնում էր Բակլանովը։

— Ասում եմ, պետք է դեպք ուղարկել։

— Այո, այո, պետք է ուղարկել, կարգադրիր, խնդրեմ...

Մի բոպե անց մեկը ձիու հոգնած վարգով հասավ Լևինսոնի ետևից և առաջ քշեց ձին։ Լևինսոնը աչքերով ճամփեց կռացած թիկունքը և ճանաչեց Մեչիկին։ Նա ինչ-որ սխալ բան տեսավ նրանում, որ Մեչիկն է գնում դեպքի, բայց չկարողացավ ստիպել իրեն այդ անճշտությունը հասկանալու և իսկույն մոռացավ նրա մասին։ Հետո էլի մեկն անցավ նրա մոտից։

— Մորոզ՛կա,— կանչեց Բակլանովը ձիավորի ետևից։— Դուք, աստուծամենայնիվ, չկորցնեք իրար...

«Մի՞թե նա կենդանի մնաց,— մտածեց Լևինսոնը։— Իսկ Դուբովը մեռավ... խե՜ղճ Դուբով... Բայց Մորոզկայի՞ն ինչ պատահեց... Ա՜խ, հա՛, այդ երեկ երեկո պատահեց նրան։ Լավ որ այն ժամանակ ես նրան չտեսա...»։

Մեչիկը, որ բավականին հեռացել էր արդեն, ետ նայեց. Մորոզկան գնում էր մի հիսուն սաժեն նրանից հեռու, ջոկատն էլ դեռ երևում էր։ Հետո և՛ ջոկատը, և՛ Մորոզկան ծածկվեցին ոլորանի ետևում։ Նիվկան չէր ուզում արագ վազել, և Մեչիկը մեքենաբար քշում էր նրան. նա լավ չէր հասկանում, թե ինչու էին իրեն առաջ ուղարկել, բայց նրան պատվիրել էին վարգով գնալ, և նա հնազանդվել էր։

Ճանապարհը ոլորվում էր տամուկ զառիվայրերով, որոնց վրա խիտ շարքերով կանգնած էին ծիրանագույն սաղարթներով կաղնիներն ու թխկիները։ Նիվկան երկչոտությամբ ցնցվում էր ու սեղմվում դեպի թփերը։ Վերելքը նա բարձրացավ դանդաղ քայլերով։ Թամբի վրա նիրհած Մեչիկն էլ չէր դիպչում նրան։ Երբեմն նա ուշքի էր գալիս և շվարած տեսնում, որ շուրջը էլի նույն անանցանելի թավուտն է։ Ոչ վերջ ուներ, ոչ սկիզբ, ինչպես վերջ ու սկիզբ չուներ այն քնկոտ, բութ, շրջապատող աշխարհի հետ չկապված դրությունը, որի մեջ գտնվում էր ինքը...

Հանկարծ Նիվկան վախեցած փնչաց և ետ գնաց դեպի թփերը, Մեչիկին սեղմելով ինչ-որ դալար շիվերի... Նա միանգամից գլուխը բարձրացրեց, և քնկոտ վիճակը մի ակնթարթում չքացավ, փոխվելով ոչ մի բանի հետ չհամեմատվող կենդանի սարսափի. ճանապարհի վրա, նրանից մի քանի քայլ հեռու, կանգնած էին կաղակները։

— Իջի՛ր...— ասաց մեկը խեղդված, սուլող շշուկով։

Մեկը խլեց Նիվկայի սանձը։ Մեչիկը, կամաց ճչալով, թամբից վայր սահեց և, մի քանի ստորացուցիչ շարժումներ անելով, հանկարծ շեշտակի գլորվեց զառիվայրով։ Նա ցավագնորեն ձեռքերով զարնվեց մի թաց կոճղի, վեր ցատկեց, սայթաքեց, մի քանի վայրկյան սարսափից համրացած այս ու այն կողմ ընկավ շորեքթաթ և, վերջապես ուղղվելով, վազեց ձորի երկարությամբ, առանց իր մարմինն զգալու, կառչելով այն ամենից, ինչ որ պատահում էր, և անհավատալի ցատկումներ անելով։ Նրան հետապնդում

էին. ետևում ճրթճրթում էին թփերը, և մեկը հայհոյում էր չարությամբ...

Մորոզկան, գիտենալով, որ իր առջևից գնում է էլի մի դետք, նույնպես վատ էր հետևում, թե շուրջն ինչ է կատարվում։ Նա գտնվում էր ծայրահեղ հոգնած դրության մեջ, երբ բոլորովին չքանում են ամեն տեսակ նույնիսկ կարևորագույն մարդկային մտքերը և մնում է հանգստի միակ, անմիջական ցանկությունը — հանգիստ՝ ինչ էլ որ լինի։ Նա այլևս չէր մտածում ո՛չ իր կյանքի, ո՛չ Վարյայի, ո՛չ այն բանի մասին, թե ինչպես պիտի վերաբերվի իրեն Գոնչարենկոն. նա նույնիսկ ուժ չուներ ափսոսալու։ Դուբովի մահը, թեև Դուբովն իր ամենամոտիկ մարդկանցից մեկն էր. նա մտածում էր միայն այն մասին, թե ե՞րբ, վերջապես, իր առաջ պիտի բացվի Ավետյաց երկիրը, ուր կարելի լիներ հանգիստ տալ իր գլխին։ Այդ Ավետյաց երկիրը նրան պատկերանում էր իբրև մի մեծ և խաղաղ, արևի լույսով ողողված գյուղ, լի որոճող կովերով և լավ մարդկանցով, անասնի և խոտի բուրմունքով։ Նա երևակայությամբ ճաշակում էր, թե ինչպես կկապի ձին, կաթ կխմի մի կտոր հաճարի բուրյան հացով, իսկ հետո կբարձրանա խոտանոց և խոր կքնի, գլուխը ծածկած, տաք շինելը ոտքերին գցած...

Եվ երբ հանկարծակի նրա առաջ բուսան կազակական գլխարկների դեղին բոլորքները, և Հուդան ետ-ետ գնաց, խցկելով նրան փռունչի թփերի մեջ, որոնք արյունոտ թրթռացին աչքերի առաջ, մեծ, արևի լույսով ողողված գյուղի տեսիլը միախառնվեց դեռ նոր այստեղ կատարված, անլսելի ստոր մատնության վայրկենական զգացման հետ...

— Փախավ գարշելին...— ասաց Մորոզկան, հանկարծ մի անսովոր պարզությամբ պատկերացնելով Մեչիկի զզվելի ու մաքուր աչքերը և միևնույն ժամանակ զգալով մի ճմլող, թախծոտ խղճահարություն դեպի ինքն ու իր ետևից եկողները։

Նա ափսոսում էր ոչ թե այն, որ ինքը հիմա պիտի մեռնի, այսինքն՝ պիտի դադարի զգալ, տանջվել ու շարժվել,— նա նույնիսկ չէր կարողանում իրեն պատկերացնել այդպիսի արտասովոր և տարօրինակ դրության մեջ, որովհետև այդ բոպեին դեռ ապրում էր, տանջվում և շարժվում,— այլ

պարզ կերպով հասկացավ, որ երբեք ինքը չի տեսնի արևի լույսով ողողված գյուղը և այդ մերձավոր, թանկագին մարդկանց, որոնք գալիս էին իր ետևից։ Բայց նա այնպես պայծառ էր զգում նրանց իր մեջ՝ այդ հոգնած, ոչինչ չկասկածող, իրեն վստահած մարդկանց, որ նրա գլխում չծնվեց իր համար որևէ այլ միտք, քան այն, որ դեռևս հնարավոր է նախազգուշացնել նրանց վտանգի մասին... Նա թափով դուրս քաշեց ատրճանակը և, գլխից վեր բարձրացնելով, որպեսզի ավելի լսելի լինի, երեք անգամ կրակեց, ինչպես պայմանավորված էր...

Նույն ակնթարթում մի հնչուն բան փայլեց, զարկեց, աշխարհն ասես երկու կտոր եղավ, և նա Հուդայի հետ միասին ընկավ թփերի մեջ՝ գլուխը ետ ձգած...

Երբ Լևինսոնը լսեց կրակոցները,— այնպես անսպասելի հնչեցին դրանք և այնպես անտանելի էին նրա այժմվա դրության մեջ, որ նա նույնիսկ չըմբռնեց դրանք։ Միայն այն ժամանակ հասկացավ դրանց նշանակությունը, երբ հնչեց Մորոզկայի վրա ուղղված համազարկը, և ձիերը կանգնեցին՝ քար կտրած, գլուխները ետ ձգած, ականջները խլշկոտած։

Նա անօգնական շուրջը նայեց, առաջին անգամ որևէ տեղից օգնություն փնտրելով, բայց այն միակ, սարսափելի, համր-հարցական դեմքի վրա, որի մեջ նրա համար միացել էին պարտիզանների դժգունած և երկարած դեմքերը, կարգաց անօգնականության և վախի նույն միակ արտահայտությունը... «Ահա այն, ինչից որ ես վախենում էի»,— մտածեց նա և այնպիսի շարժում արավ ձեռքով, ասես փնտրել էր և չէր գտել այն, ինչից պետք է բռներ...

Եվ հանկարծ նա շատ որոշակի իր առաջ տեսավ Բակլանովի պարզ, մանկական, նույնիսկ քիչ միամիտ դեմքը, որը, սակայն, սև էր և հոգնածությունից ու ծխից կոպտացած. Բակլանովը, մի ձեռքում ատրճանակը բռնած, իսկ մյուսով՝ ձիու բաշը, այնպես ամուր, որ նրա վրա որոշակի դրոշմվել էին կարճ, երեխայական մատները, լարված նայում էին դեպի այն կողմը, որտեղից լսվել էր համազարկը։ Եվ նրա միամիտ, ցից այտոսկրերով երեսը, որը քիչ առաջ էր ձգվել՝ հրամանի սպասելով, վառվում էր այն իսկական

և մեծագույն կրքով, հանուն որի զոհվել էին նրանց ջոկատի լավագույն մարդիկ։

Լևինսոնը ցնցվեց, ուղղվեց, և մի բան ցավագնորեն ու քաղցր զողանջեց նրա մեջ... Հանկարծ նա թափով քաշեց թուրը և նույնպես առաջ ձգվեց ցոլացող աչքերով։

— Ձեղքենք, հա՞,— խռպոտ ձայնով հարցրեց նա Բակլանովին՝ անսպասելիորեն թուրը բարձրացնելով գլխից վեր, այնպես որ ամբողջովին փայլեց արևից։ Եվ բոլոր պարտիզանները, տեսնելով նրան, նույնպես ցնցվեցին ու ձգվեցին ասպանդակների վրա։

Բակլանովը կատաղած աչքի տակով նայելով թրին, կտրուկ շրջվեց դեպի ջոկատը և խլացուցիչ ու սուր ձայնով ինչ-որ բան բղավեց, որը Լևինսոնն արդեն չէր կարող լսել, որովհետև այդ պահին,— մղված նույն ներքին ուժից, որը ղեկավարում էր Բակլանովին, և որը նրան ևս ստիպեց բարձրացնել թուրը,— նա սլացավ ճանապարհով, զգալով, որ ամբողջ ջոկատը պետք է իսկույն նետվի իր ետևից...

Երբ մի քանի րոպե հետո նա ետ նայեց, մարդիկ իսկապես սլանում էին իր ետևից՝ թամբերի վրա թեքված, կզակները շեշտակի առաջ ցցած, և նրանց աչքերում նույն լարված ու կրքոտ արտահայտությունն էր, որը տեսել էր Բակլանովի աչքերում։

Դա վերջին կապակցված տպավորությունն էր, որը պահպանվել էր Լևինսոնի մտքում, որովհետև հենց նույն վայրկյանին մի կուրացնող-աղմկալի բան փուլ եկավ նրա վրա, զարկեց, պտտեցրեց, տրորեց, և նա, արդեն իրեն չզգալով, չիմանալով, որ դեռ ապրում է, թռավ մի նարնջագույն, եռացող անդունդի վրայով։

***

...Մեչիկը ետ չէր նայում, չէր լսում հետապնդումը, բայց գիտեր, որ իրեն հետապնդում են, և երբ իրար ետևից հնչեցին երեք կրակոցները ու թնդաց համազարկը, նրան թվաց, թե իր վրա են կրակում, և ավելի արագ վազեց։ Անսպասելիորեն ձորը լայնացավ՝ կազմելով մի ոչ լայն, անտառոտ հովիտ։ Մեչիկը մերթ աջ էր դարձնում ճամփան, մերթ՝ ձախ, մինչև որ հանկարծ նորից գլորվեց լանջն ի վար։ Այդ ժամանակ թնդաց մի նոր համազարկ, ավելի ուժեղ, հետո էլի ու էլի, առանց ընդմիջման։

Ամբողջ անտառը խոսեց ու կենդանացավ...

«Ա՜յ, աստվա՜ծ իմ, աստվա՜ծ իմ... Ա՜յ-ա՜յ... աստվա՜ծ իմ...» — մերթ շշնջում, մերթ կանչում էր Մեչիկը, ցնցվելով ամեն մի նոր խլացուցիչ համազարկից և դիտմամբ այնպես խղճալիորեն ծռմռելով իր ճանկռված դեմքը, ինչպես անում են երեխաները, երբ կամենում են լաց լինել։ Բայց նրա աչքերը զզվելի, ամոթալի կերպով չոր էին։ Նա ամբողջ ժամանակ վազում էր՝ լարելով վերջին ուժերը։

Հրաձգությունը հանդարտվեց, ասես ուղղվեց մի այլ կողմ։ Հետո բոլորովին լռեց։

Մեչիկը մի քանի անգամ ետ նայեց. էլ չէին հետապնդում։ Ոչ մի բան չէր խանգարում այն հեռավոր-արձագանքող լռությանը, որ տիրեց շուրջը։ Նա շնչասպառ նետվեց առաջին պատահած թփի ետևը։ Սիրտը զարկում էր արագ։ Կծիկ դարձած, ձեռքերի թաթերն այտի տակ դնելով և լարված իր առաջ նայելով՝ նա մի քանի րոպե պառկած էր անշարժ։ Նրանից մոտ տասը քայլ հեռու, մերկ, բարակ կեչու վրա, որ թեքվել էր մինչև գետին և լուսավորված էր արևով, նստած էր մի փոքրիկ, շերտավոր սկյուռ ու նայում էր նրան դեղնավուն, միամիտ աչքերով։

Հանկարծ Մեչիկը արագ նստեց, գլուխը բռնեց և բարձրաձայն տնքաց։ Սկյուռիկը, վախից ճչալով, ցատկեց խոտերի վրա։ Մեչիկի աչքերը բոլորովին անմիտ դարձան։ Նա խելահեղ մատներով պինդ բռնեց իր մազերից և աղիողորմ ոռնոցով գլորվեց գետնին... «Ի՜նչ արի ես... Օ՜... ի՜նչ արի ես,— կրկնում էր նա՝ գլորվելով արմունկների և փորի վրա ու ամեն րոպե է՛լ ավելի պարզ, զարհուրելի և խղճալի կերպով պատկերացնելով իր փախուստի իսկական նշանակությունը, առաջին երեք հարվածների և ամբողջ հետագա հրաձգության բուն նշանակությունը։— Ի՜նչ արի ես, ինչպե՜ս կարողացա այդ բանն անել, ե՜ս, այնպես լա՜վ, ազնիվ մարդ և ոչ ոքին չարիք չկամեցող... Օ-օ՜... Ինչպե՜ս այդ բանը կարողացա անել»։

Որքան ավելի զզվելի և ստոր էր երևում նրա արարքը,

այնքան ավելի լավ, մաքուր, ազնիվ էր թվում նա ինքն իրեն մինչև այդ վարմունքը։

Եվ տանջվում էր ոչ թե նրա համար, որ իր այդ վարմունքի պատճառով զոհ էին գնացել իրեն վստահած տասնյակ մարդիկ, այլ որ այդ վարմունքի չլվացվող-կեղտոտ, զզվելի բիծը հակասում էր այն բոլոր լավին ու մաքուրին, ինչ որ նա գտնում էր իր մեջ։

Նա մեքենաբար դուրս քաշեց ատրճանակը և երկար ժամանակ անմտությամբ ու սարսափով նայում էր դրան։ Բայց զգաց, որ երբեք չի սպանի, չի կարողանա սպանել իրեն, որովհետև ամեն բանից ավելի աշխարհիս երեսին նա էլի սիրում էր իրեն՝ իր սպիտակ և կեղտոտ, անզոր ձեռքը, իր տնքացող ձայնը, իր տանջանքները, իր արարքները, նույնիսկ դրանցից ամենազզվելիները։ Եվ նա գողի խաղաղ գարշելիությամբ, թալկանալով հրացանի յուղի լոկ զգացումից միայն, աշխատելով այնպես ձևացնել, իբրև թե ոչինչ չգիտի, շտապով ատրճանակը թաքցրեց գրպանում։

Նա արդեն չէր տնքում, չէր լալիս։ Դեմքը ձեռքերով ծածկած՝ խաղաղ պառկած էր փորի վրա, և բոլորը, ինչ որ վերապրել էր վերջին ամիսների ընթացքում, քաղաքից հեռանալուց հետո, նորից անցնում էր նրա առջևից հոգնած ու տխուր շարքով. նրա միամիտ ցնորքները, որոնցից նա այժմ ամաչում էր, առաջին հանդիպումների և առաջին վերքերի ցավը, Մորոզկան, հիվանդանոցը, երկաթյա նուրբ մազերով ծեր Պիկան, հանգուցյալ Ֆրոլովը, Վարյան՝ խոշոր, տխուր, անկրկնելի աչքերով, և այդ վերջին սոսկալի անցումը ճահճուտից, որի առաջ բոլոր մնացածն աղոտանում էր։

«Ես չեմ ուզում այլևս տանել այս ամենը»,— մտածեց Մեչիկն անսպասելի շիտակությամբ ու զգաստությամբ և շատ խղճաց ինքն իրեն։ «Ես ուժ չունեմ այլևս տանելու այդ ամենը, ես չեմ կարող այլևս ապրել այսպիսի ստոր, ոչ մարդկային, սարսափելի կյանքով», մտածեց նա նորից, որպեսզի ավելի ևս խղճահարվի և այդ խղճալի մտքերի լույսով թաղի սեփական մերկությունն ու ստորությունը։

Նա դեռ մեղադրում էր իրեն և զղջում, բայց արդեն չէր կարողանում ճնշել իր մեջ սեփական հույսերն ու ուրախությունները, որոնք իսկույն արթնացան նրա մեջ, երբ մտածեց այն մասին, որ այժմ բոլորովին ազատ է և կարող է գնալ այնտեղ, ուր այս սոսկալի կյանքը չկա և ուր ոչ ոք չգիտի նրա վարմունքի մասին։ «Այժմ ես կերթամ քաղաք, ինձ մնում է միայն այնտեղ գնալ»,— մտածեց նա՝ աշխատելով դրան տալ տխուր անհրաժեշտության բնույթ և դժվարությամբ խլացնելով ուրախության, ամոթի ու վախի այն զգացումը, որ դա կարող է չիրագործվել։

Արևը անցել էր թեքված բարակ կեչու մյուս կողմը. նա այժմ ամբողջովին ստվերի մեջ էր։ Մեչիկը հանեց ատրճանակը և նետեց թփերի մեջ։ Հետո գտավ մի աղբյուր, լվացվեց և նստեց նրա մոտ։ Նա էլի դեռ չէր համարձակվում դուրս գալ ճամփի վրա։ «Եթե հանկարծ սպիտակներին հանդիպե՞մ...» — մտածում էր նա թախծոտ։ Լսվում էր, թե ինչպես խոտերի մեջ կամացուկ խոխոջում էր փոքրիկ աղբյուրը...

«Բայց մի՞թե միևնույն չէ»,— հանկարծ մտածեց Մեչիկը այն շիտակությամբ և զգաստությամբ, որ այժմ գիտեր գտնել ամեն տեսակ բարի և խղճալի մտքերի ու զգացումների շեղջի տակ։

Նա խոր հառաչեց, կոճկեց շապիկը և դանդաղ քայլեց այն ուղղությամբ, ուր մնացել էր Տուգո-Վակայի ճանապարհը։

* * *

Լևինսոնը չգիտեր, թե որքան ժամանակ էր տևել իր կեսգիտակցական դրությունը. նրան թվում էր, թե շատ երկար էր տևել. այնինչ դա մի րոպեից ավելի չէր, բայց երբ ուշքի եկավ, զարմանքով զգաց, որ առաջվա պես նստած է թմբի վրա, միայն ձեռքում այլևս թուրը չկար։ Նրա առջևից սլանում էր իր ձիու սևաբաշ գլուխը՝ արյունոտ ականջով։

Այստեղ նա առաջին անգամ լսեց կրակոցները և հասկացավ, որ իր վրա են կրակում,— գնդակները անընդհատ վզզում էին գլխավերևում,— բայց հասկացավ նույնպես, որ ետևից են կրակում, և որ ամենասոսկալի պահը նույնպես

ետևում է մնացել։ Այդ ակնթարթին ևս երկու ձիավոր հավասարվեցին նրան։ Նա ճանաչեց Վարյային և Գոնչարենկոյին։ Պայթեցնողի ամբողջ այտն արյունոտ էր։ Լևինսոնը հիշեց իր ջոկատը և ետ նայեց, բայց ոչ մի ջոկատ չէր մնացել. ամբողջ ճանապարհը ծածկված էր ձիերի և մարդկանց դիակներով. մի քանի ձիավոր, Կուբրակի առաջնորդությամբ, դժվարությամբ շտապում էին Լևինսոնի ետևից, ավելի հեռու երևում էին էլի մի քանի փոքրիկ խմբեր. դրանք արագ հալվում էին։ Կաղ ձի հեծած մեկը, որ շատ ետ էր մնացել. ճոճում էր ձեռքերն ու կանչում։ Նրան շրջապատեցին դեղին բոլորքներով մարդիկ և սկսեցին ծեծել հրացանի կոթով. նա երերաց և ընկավ։ Լևինսոնը դեմքը կնճռոտեց ու շուռ եկավ։

Այդ րոպեին նա Վարյայի և Գոնչարենկոյի հետ հասավ կեոմանին, և հրաձգությունը մի քիչ հանդարտվեց. գնդակներն այլևս չէին վզզում ականջի մոտ։ Լևինսոնը սկսեց մեքենաբար զսպել իր հովատակին։ Այն պարտիզանները, որոնք կենդանի էին մնացել, մեկը մյուսի ետևից հասնում էին։ Գոնչարենկոն հաշվեց տասնինը մարդ՝ իր և Լևինսոնի հետ։ Նրանք երկար ժամանակ սլանում էին զառիվայրով դեպի ցած, առանց որևէ բացականչության, սարսափը պահած, բայց արդեն ուրախացող աչքերը հառած այն նեղ, դեղին, անձայն տարածությանը, որը շեշտակի և մենավոր կերպով վազում էր նրանց առջևից, ինչպես մի շիկակարմիր, հալածված շուն։

Աստիճանաբար ձիերն ավելի արագացրին վազքը, և սկսեցին նշմարվել առանձին այրված կոճղեր, թփեր, հեռագրական սյուներ, պարզ երկինքը անտառի վերևում։ Հետո ձիերը դանդաղեցրին ընթացքը։

Լևինսոնը գնում էր քիչ առջևից՝ մտածկոտ, գլուխը կախ։ Երբեմն նա անօգնական ետ էր նայում, ասես ուզում էր մի բան հարցնել և չէր կարողանում հիշել, ու տարօրինակ, տանջալից նայում էր բոլորին երկար, չտեսնող հայացքով։ Հանկարծ նա կտրուկ կանգնեցրեց ձին և նայեց ետ, ու առաջին անգամ բոլորովին իմաստավորված հայացքով նայեց մարդկանց իր մեծ, խորունկ, կապույտ աչքերով։

Տասնութ հոգին կանգ առան մի մարդու պես. խորին լռություն տիրեց։

— Ո՞ւր է Բակլանովը,— հարցրեց Լևինսոնը։

Տասնութ մարդ նայեցին նրան լուռ ու շվարած։

— Սպանեցին Բակլանովին...— ասաց վերջապես Գոնչարենկոն և խիստ նայեց իր՝ սանձը բռնած, կոշտապատ մատներով ձեռքին։

Վարյան, որ կորացած գնում էր նրա կողքից, հանկարծ ընկավ ձիու վզին և բարձր ձայնով, հիստերիկ հեկեկաց. նրա երկար, զզզված ծամերը կախվել էին համարյա մինչև գետին և ցնցվում էին։ Ձին հոգնած շարժեց ականջները և վեր քաշեց կախած շրթունքը։ Ջիժը, ծուռ նայելով Վարյային, նույնպես հեկեկաց և երեսը դարձրեց մի կողմ։

Լևինսոնի աչքերը դեռ մի քանի վայրկյան ուղղված էին մարդկանց։ Հետո նա ամբողջովին մի տեսակ կռացավ, կծկվեց, և բոլորը հանկարծ նկատեցին, որ նա շատ էր թուլացել ու ծերացել։ Բայց նա արդեն չէր ամաչում և չէր ծածկում իր թուլությունը. նա նստած էր՝ գետնին նայելով, դանդաղ թարթելով երկար, թաց թերթերունքները, և արտասուքները գլորվում էին նրա մորուքով... Մարդիկ սկսեցին նայել մի կողմ, որպեսզի իրենք էլ չլացեն։

Լևինսոնը շրջեց ձին և հանդարտ առաջ գնաց։ Ջոկատը շարժվեց նրա ետևից։

— Մի՛ լա, էլ ինչ...— Հանցավորի պես ասաց Գոնչարենկոն՝ բռնելով Վարյայի ուսերից։

Ամեն անգամ, երբ Լևինսոնին հաջողվում էր ինքնամոռացության մեջ ընկնել, նա սկսում էր նորից շփոթված նայել իր շուրջը և, հիշելով, որ Բակլանովը չկա, նորից սկսում էր լաց լինել։

Այդպես նրանք դուրս եկան անտառից՝ տասնինը հոգին։

Անտառը բացվեց նրանց առաջ բոլորովին անսպասելի՝ բարձր, կապույտ երկնքի և պայծառ, շիկակարմիր դաշտի ընդարձակությամբ, որ ողողված էր արևի լույսով ու հընձված էր. նա փռվել էր երկու կողմ, որքան մարդու աչքը կտրում էր։ Ուռենիների թփուտի այն կողմում, ուր կապտին էր տալիս ջրառատ գետակը, երևում էր կալը՝ պճնված պարարտ դեզերի ու շեղջերի ոսկեգույն գդակներով։ Այնտեղ ըն-

թանում էր սեփական՝ ուրախ, հնչուն և հոգսերավ լի կյանքը։ Ինչպես փոքրիկ, խայտաբղետ բլեզներ՝ խռնվում էին մարդիկ, թռչում էին խուրձերը, շոթ ու որոշակի տկտկում էր մեքենան, փայլուն մղեղի և փոշու ալոք ամպի միջից թռչում էին գրգռված ձայներ, թափվում էր ազգկա բարակ ծիծաղի մանր ուլունքը։ Գետի մյուս կողմում, երկնքին նեցուկ տալով, ճյուղավորումներով ներս մտնելով դեղնագանգուր կոպերի մեջ, կապտին էին տալիս լեռնաշղթաները, և նրանց սուր գագաթներից հավիտն էր թափվում թափանցիկ փրփուրը սպիտակ-վարդագույն ամպերի, որոնք աղի էին ծովից, բըշտիկաձև էին և փրփրուն, ինչպես նոր կթած կաթը։

Լևինսոնը լուռ, դեռ խոնավ հայացքով զրկեց այդ ընդարձակ երկինքն ու երկիրը, որ խոստանում էր հաց ու հանգստություն, կալի այդ հեռավոր մարդկանց, որոնց նա պետք է շուտով դարձնի իրեն նույնքան մոտ ու հարազատ, որպիսիներն էին այն տասնութ հոգին, որոնք լուռ գնում էին իր ետևից, և դադարեց լալուց. պետք էր ապրել ու կատարել իր պարտականությունները։

1927

Ն. Ա. ՕՍՏՐՈՎՍԿԻ

ԻՆՉՊԵՍ ԷՐ ԿՈՓՎՈՒՄ ՊՈՂՊԱՏԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

— Ձեզնից ո՞վ է տոներից առաջ եկել ինձ մոտ՝ տուն, դաս պատասխանելու, թող կանգնի։

Փարաջան հագին, հիվանդագին կերպով ուռած մարդը, վզից ծանր մի խաչ կախած, սպառնագին նայեց աշակերտներին։

Մանր, չար աչքերը ասես ծակում էին նստարաններից բարձրացած վեց հոգուն՝ չորս տղայի և երկու աղջկա։

Երեխաները երկյուղով նայում էին փարաջա հագած մարդուն։

— Դուք նստեցեք,— ձեռքը դեպի աղջիկները թափահարեց տերտերը։

Նրանք, թեթևացած շունչ քաշելով՝ արագ նստեցին։

Հայր Վասիլիի մանր աչքերը կենտրոնացան չորս փոքրիկ կերպարանքների վրա։

— Ապա մի այստեղ եկեք, աղավնյակներս։

Հայր Վասիլին վեր կացավ, աթոռը ետ հրեց և ընդհուպ մոտեցավ իրար սեղմված տղաներին։

— Ձեզնից ո՞վ է ծխում, սրիկանե՛ր։

Չորսն էլ ցածրաձայն պատասխանեցին.

— Մենք չենք ծխում, տե՛ր հայր։

Տերտերի դեմքը կարմրատակեց։

— Ձե՞ք ծխում, գարշելինե՛ր, ապա ո՞վ էր խմորի մեջ ծխախոտ լցրել։ Ձե՞ք ծխում, ա՛յ հիմա կտեսնենք։ Շուռ տվեք գրպաններդ։ Դե, շո՛ւտ։ Ի՞նչ եմ ասում։ Շո՛ւռ տվեք։

Եղեքը սկսեցին իրենց գրպանների պարունակությունը հանել և դասեր սեղանի վրա։

Տերտերն ուշադրությամբ զննում էր կարերը՝ ծխախոտի հետք փնտրելով, բայց ոչինչ չգտավ և դարձավ չորրորդին՝ սևաչյա, գորշ վերնաշապիկով ու ծնկները կարկատած կապույտ շալվարով մի տղայի։

— Իսկ դու ի՞նչ ես արձանի նման կանգնել։

Սևաչյան, թաքնված ատելությամբ նայելով նրան՝ խով պատասխանեց.

— Ես գրպաններ չունեմ,— ու ձեռքը տարավ կարերի վրայով։

— Հա-ա՜, գրպաններ չունե՞ս։ Ուրեմն կարծում ես չգիտե՞մ, թե ով կարող էր այդպիսի ստորություն անել՝ խմորը փչացնել։ Դու կարծում ես, թե հիմա՞ էլ ինձնաս դրպրոցում։ Չէ, աղավնյակս, սա քեզ էժան չի նստի։ Անցյալ անգամ մայրդ աղաչեց, որ թողնենք, իսկ այժմ արդեն վերջ։ Հայդա՛, դո՛ւրս դասարանից։— Նա պինդ բռնեց տղայի ականջից, դուրս շպրտեց միջանցք և դուռը փակեց նրա հետևից։

Դասարանը սկսվեց, կուչ եկավ։ Ոչ ոք չէր հասկանում, թե Պավկա Կորչագինին ինչու դուրս արին գլուխցից։ Միայն Սերյոժա Բրուզժակը, Պավկայի բարեկամն ու մտերիմն էր տեսել, թե ինչպես Պավկան տերտերի զատկի խմորի մեջ մի բուռ ծխախոտ լցրեց այնտեղ, խոհանոցում, որտեղ վեց թոռը աշակերտներ սպասում էին տերտերին։ Նրանք ստիպված էին դասը պատասխանել արդեն տերտերի բնակարանում։

Դուրս արված Պավկան նստեց արտասանդուղքի վերջին աստիճանի վրա։ Նա մտածում էր այն մասին, թե ինչպես տուն գնա և ինչ ասի մորը, որն այնպես հոգատար է և առավոտից մինչև ուշ գիշեր աշխատում է իբրև խոհարար՝ հարկային տեսչի տանը։

Արցունքները խեղդում էին Պավկային։

«Ի՞նչ ասեմ հիմա։ Ու բոլորն այդ անիծյալ տերտերի պատճառով։ Եվ ինչի՞ համար ծխախոտ լցրի։ Սերյոժկան գրգռեց։ Արի,— ասաց,— այդ գարշելի իժի խմորին ծխախոտ խառնենք։ Ահա և խառնեցինք։ Սերյոժկայի համար ոչինչ։ իսկ ինձ երևի դուրս կանեն»։

Հայր Վասիլիի հետ թշնամությունը վաղուց էր սկսվել։ Մի անգամ Պավկան Լեչուկով Միշկայի հետ կռվեց, ու նրան «անճաշ» թողեցին։ Որպեսզի դատարկ դասարանում չարություն չանի, ուսուցիչը շարաճճի տղային տարավ մեծերի մոտ՝ երկրորդ դասարան։ Պավկան նստեց հետևի նստարանին։

Ուսուցիչը՝ ան պիշակով մի շոր-շոր մարդ, պատմում էր երկրի, լուսատուների մասին։ Պավկան, զարմանքից բերանը բաց արած՝ լսում էր, որ երկիրը գոյություն ունի արդեն շատ միլիոն տարիներ, և որ աստղերն էլ Երկրի նման են։ Այնքան էր զարմացել լսածից, որ նույնիսկ ուզեց վեր կենալ և ասել ուսուցչին. «Ստրբ գրքում այդպես չի գրած», բայց վախեցավ, որ հանկարծ էլ բարկանան իր վրա։

Տերտերը Պավկային կրոնից միշտ հինգ էր դնում։ Բոլոր շարականները, Ներ ու Հին կտակարանները նա անգիր գիտեր. լավ գիտեր, թե աստված որ օրն ինչ է ստեղծել։ Պավկան որոշեց հարց ու փորձ անել հայր Վասիլիին։ Կրոնի հենց առաջին դասին, հազիվ էր տերտերը նստել իր բազկաթոռին, երբ Պավկան ձեռք բարձրացրեց ու, խոսելու թույլտվություն առնալով՝ վեր կացավ։

— Տե՛ր Հայր, ապա ինչո՞ւ բարձր դասարանում ուսուցիչն ասում է, թե միլիոն տարի է, ինչ երկիրը կա, և ոչ թե, ինչպես կրոնումն է ասված՝ հինգ հազ...— միանգամից նստեց հայր Վասիլիի ծղրտուն աղաղակից։

— Ի՞նչ ասացիր, արիկա՛։ Այ թե ինչպես ես կրոն սովորում։

Պավկան նույնիսկ ծպտալ չհասցրեց, երբ տերտերը բռնեց նրա երկու ականջներից և սկսեց գլուխը պատին խփել։ Մի բոպե հետո նրան, ծեծված ու վախեցած, դուրս շպրտեցին միջանցք։

Մայրն էլ մի լավ դնդստեց Պավկային։

Մյուս օրը մայրը գնաց դպրոց և խնդրեց հայր Վասիլիին՝ նա ընդունել արդուն։ Դրանից հետո Պավկան իր ամբողջ էությամբ ատեց տերտերին։ Ատում էր և վախենում։ Ոչ ոքի չէր ներում նա իրեն հասցրած վիրավորանքների համար։ Ջմոռացավ և տերտերի անտեղի ծեծը, չարացավ, ինքն իր մեջ ամփոփվեց։

Տղան էլի շատ մանր վիրավորանքներ կրեց հայր Վասիլիից. տերտերը նրան դռան հետևն էր քշում, դատարկ բանի համար ամբողջ շաբաթներով կանգնեցնում էր անկյունում ու ոչ մի անգամ նրան դաս չհարցրեց, իսկ զատկից առաջ, այդ պատճառով, թույլերի հետ նա ստիպված էր տերտերի տուն գնալ՝ պատասխանելու։ Այնտեղ, խոհանոցումն էլ Պավկան ծխախոտ լցրեց զատկի խմորի մեջ։

Ոչ ոք չտեսավ, բայց և այնպես տերտերն անմիջապես իմացավ, թե ում գործն է այդ։

...Դասը վերջացավ, երեխաները դուրս թափվեցին բակ և շրջապատեցին Պավկային։ Նա մռայլ լսում էր։ Սերյոժկա Բրուզժակը դասարանից դուրս չէր գալիս, զգում էր, որ ինքն էլ է մեղավոր, բայց ընկերոջը ոչնչով օգնել չէր կարող։

Ուսուցչանոցի բաց պատուհանից դուրս նայեց դպրոցի վարիչ Եֆրեմ Վասիլևիչի գլուխը, և նրա թավ բասը Պավկային ստիպեց ցնցվել։

— Անմիջապես ինձ մոտ ուղարկեցեք Կորշակինին,— գոչեց նա։

Ու Պավկան թպրտացող սրտով գնաց ուսուցչանոց։

Կայարանի բուֆետի տերը, մի հասակավոր, գունատ, խամրած աչքերով մարդ, թևթևակի նայեց մի կողմ կանգնած Պավկային։

— Քանի՞ տարեկան է։

— Տասներկու,— պատասխանեց մայրը։

— Լավ, թո՛ղ մնա։ Պայմանները սրանք են. ամսական ութ ռուբլի և աշխատանքի օրերը՝ ուտելիք, մի օր կաշխատի, մի օր տանը կմնա և չլինի թե գողություն անի։

— Ի՞նչ եք ասում, ի՞նչ եք ասում։ Նա գողություն չի անի, ես երաշխավորում եմ,— վախեցած պատասխանեց մայրը։

— Դե՛հ, թող հենց այսօրվանից էլ սկսի աշխատել,— հրամայեց բուֆետի տերը և, շուռ գալով դեպի իր կողքի վաճառասեղանի մոտ կանգնած վաճառողուհուն, խնդրեց.— Զինա, տղային տար ամանների լվացատունը, Ֆրոսենկային ասա, որ սրան աշխատանք տա Գրիշկայի փոխարեն։

Վաճառորդուհին ցած դրեց դանակը, որով ապուխտ էր կտրում ու, գլխով նշան անելով Պավկային, դահլիճի միջով անցավ դեպի կողքի դուռը, որ տանում էր ամանների լվացատուն։ Պավկան հետևեց նրան։ Մայրն արագ գնաց նրանց հետ, շտապ շշնջալով.

— Դե, դու էլ, Պավլուշա, լավ աշխատիր, որ չխայտառակվես։

Ու, տխուր հայացքով ճանապարհ դնելով որդուն՝ դուրս գնաց։

Լվացատանը աշխատանքը եռում էր։ Ափսեների, պատառաքաղների, դանակների սարեր էին դիզվել սեղանի վրա, ու մի քանի կանայք ուսներին զցած սրբիչներով սրբում էին դրանք։

Պավկայից քիչ մեծ մի տղա, խոնված, շեկ մազերով, զբաղված էր երկու վիթխարի ինքնաեռներով։

Լվացատունը լիքն էր գոլորշիով, որ բարձրանում էր եռացրած ջրով լի տաշտից, ուր լվանում էին ամանները, և Պավկան սկզբում չկարողացավ տարբերել աշխատող կանանց դեմքերը։ Նա կանգնել էր՝ չիմանալով, թե ինչ անի, ուր խցկվի։

Վաճառողուհի Զինան մոտեցավ ման լվացող կանանցից մեկին և, նրա ուսից բռնելով, ասաց.

— Ֆրոսե՛նկա, ահա ձեզ մի նոր տղա Գրիշկայի փոխարեն։ Դու նրան հասկացրու, թե ինչ պետք է անի։

Դառնալով Պավկային և ցույց տալով այն կնոջը, որին հենց նոր Ֆրոսենկա կոչեց, Զինան ասաց.

— Նա է այստեղ մեծը։ Ինչ որ քեզ ասի, այն էլ արա,— ապա շուռ եկավ ու գնաց բուֆետ։

— Լավ,— ցածր ձայնով ասաց Պավկան և հարցական նայեց իր առջև կանգնած Ֆրոսյային։ Սա, սրբելով ճակատի քրտինքը՝ նայում էր նրան ոտքից գլուխ՝ կարծես թե գնահատելով նրա արժանիքները, և արմունկից ցած սահող թևքը ծալելով՝ ասաց զարմանալի դուրեկան կրծքային ձայնով.

— Քո գործը, հոգիս, մեծ չի. ա՛յ այս կուրը, ուրեմն, առավոտները կտաքացնես այնպես, որ նրա մեջ միշտ եռացրած ջուր լինի, իհարկե, փայտ կկտրատես, հետո, ա՛յ, այս ինքնաեռներն էլ քո գործն են։ Հետո, երբ պետք լինի, դանակներն ու պատառաքաղները կմաքրես և կեղտոտ ջուրը դուրս կտանես։ Գործդ բոլ կլինի, սիրունս, կքրտնես,— ասում էր նա Կոստրոմայի բարբառով՝ շեշտելով «ա»-երը։ Ու

նրա այդ բարբառը, կճատ քթով կարմրած դեմքը, մի տեսակ ուրախացրին Պավկային։

«Այս մորաքույրը, երևում է՝ ոչինչ»,— ինքն իրեն որոշեց նա, և սիրտ առնելով դիմեց Ֆրոսյային.

— Իսկ Հիմա ի՞նչ անեմ, մորաքույր։

Ասաց ու կապ ընկավ։ Ամանների լվացատնում աշխատող կանանց բարձրաձայն ծիծաղը ծածկեց նրա վերջին խոսքերը։

— Հա-հա-հա՜... Ֆրոսենկան արդեն քեռորդի ունի։

— Հա-հա՜...— ամենքից ավելի ինքը՝ Ֆրոսյան էր ծիծաղում։

Գոլորշու պատճառով Պավկան լավ չէր տեսել նրա դեմքը, իսկ Ֆրոսյան ընդամենը տասնութ տարեկան էր։

Արդեն բոլորովին շվարված՝ Պավկան շուռ եկավ դեպի տղան և հարցրեց.

— Հիմա ի՞նչ պետք է անեմ։

Բայց տղան այս հարցի վրա կամացուկ հռհռաց։

— Դու մորաքրոջից հարցրու, նա ամեն բան տեղը տեղին կասի, իսկ ես էստեղ ժամանակավոր եմ։— Եվ շուռ գալով, դեպի խոհանոցը տանող դռնից դուրս թռավ։

— Արի այստեղ, օգնիր պատառաքաղները մաքրելուն,— լսեց Պավկան արդեն հասակավոր լվացարարուհիներից մեկի ձայնը։

— Ի՞նչ ենք խրթինջում։ Տղան ի՞նչ ասաց որ։ Ա՛յ, բրոնիր,— նա մի սրբիչ մեկնեց Պավկային,— մի ծայրն ատամներով բռնիր, իսկ մյուսը կողքանց քաշիր։ Ահա քեզ պատառաքաղ, էս կողմից, էն կողմից քսիր ու մաքրիր, միայն թե ոչ մի կեղտ չմնա։ Էստեղ փոքրա են։ Պարոնները զննում են պատառաքաղները և եթե կեղտ են նկատում, վայ մեղ, տիրուհուն իսկույն դուրս կանի։

— Ինչպե՞ս թե տիրուհուն,— չհասկացավ Պավկան։— Չէ՞ որ մեր տերը նա է, որն ինձ ընդունեց։

Լվացարարուհին ծիծաղեց։

— Մեր տերը, տղա՛ս, էստեղ անխոս իր է, ոնց որ մի մութաքա։ Ամեն ինչի գլուխը տիրուհին է։ Էսօր չկա։ Ա՛յ, կաշխատես, կտեսնես։

Լվացատան դուռը բացվեց, ու ներս մտան երեք մատուցող, որոնք կեղտոտ ամանների կույտեր էին բերում։

Նրանցից մեկը, լայնաթիկունք, շիլ աչքերաչ, խուշտ, քառանկյունի դեմքով, ասաց.

— Եռանդով շարժվեցե՛ք։ Շուտով առանձնարանի գնացքը կգա, իսկ դուք մյուսն եք տալիս։

Նայելով Պավկային՝ նա հարցրեց.

— Իսկ սա ո՞վ է։

— Սա նոր աշխատող է,— պատասխանեց Ֆրոսյան։

— Հա՛, նոր է,— ասաց նա։— Լավ, ահա թե ինչ,— նրա ծանր ձեռքն իջավ Պավկայի ուսին և հրեց նրան դեպի ինքնաեռները,— սրանք միշտ պատրաստ պիտի սպասեն, իսկ տե՛ս, մեկը հանգել է, մյուսն էլ հազիվ է շունչ քաշում։ Էսօր սա քեզ կներվի, իսկ եթե վաղը կրկնվի, ասա քիթ ու մատիթ կատանաս։ Հասկացա՞ր։

Առանց մի խոսք ասելու Պավկան սկսեց զբաղվել ինքնաեռներով։

Այսպես սկսվեց նրա աշխատանքային կյանքը։ Պավկան երբեք այնպես չէր աշխատել, ինչպես իր առաջին բանվորական օրը։ Նա հասկացավ, որ սա տունը չէ, ուր կարելի է մորը լսել։ Շիլաշքանին պարզ ասաց, որ եթե չլսի, քիթ ու մռութին կհասցնի։

Հաստափոր, չորս դույլանոց ինքնաեռներից կայծեր թռան, երբ Պավկան, ճտքավոր կոշիկը ոտքից հանելով՝ անցկացրեց խողովակին և սկսեց կրակը բորբոքել։ Փեղտաշրջով լի դույլերը վերցնելով, նա վազում էր դեպի փոսը, ջրով լի կոթի տակ փայտ էր դնում, հոացող ինքնաեռների վրա շորացնում էր սրբիչները, անում էր այն ամենը, ինչ առում էին իրեն։ Ուշ երեկոյան Պավկան գնաց ներքև՝ խոհանոց։ Տարիքավոր լվացարարուհի Անիսյան, նայելով այն դեմքը, ուր անհետացավ Պավկան, ասաց.

— Տես, է, տղան մի տեսակ աննորմալ է. խենթի նման դեսուդեն է ընկնում։ Երևում է, բարի պատեղ չի, որ ուղարկել են աշխատելու։

— Այո՛, գործ անող տղա է,— ասաց Ֆրոսյան,— պրան հետևելու, ստիպելու կարիք չի լինի։

— Կփախչի շուտով,— առարկեց Լուշան,— բոլորն էլ սկզբում լավ են աշխատում...

Առավոտյան ժամը յոթին գիշերն անքուն մնալուց և անընդհատ վազվզելուց տանջված Պավկան եռացող ինքնաեռները հանձնեց իրեն փոխարինողին՝ հաստամռութ, անպատկառ աչքերով մի տղայի։

Համոզվելով, որ ամեն ինչ կարգին է, և ինքնաեռները եռում են, տղան ձեռքերը գրպանները դրեց, սեղմած ատամների արանքից թքեց և մի քիչ սպիտակավուն աչքերով արհամարհական գերազանցությամբ նայելով Պավկային, առարկություն չվերցնող տոնով ասաց.

— Էյ, դո՛ւ, քնձոտ։ Էգուց ժամը վեցին կգաս հերթափոխության։

— Ինչո՞ւ վեցին,— հարցրեց Պավկան,— չէ՞ որ յոթին են փոխվում։

— Ով փոխվում է, թող փոխվի, իսկ դու վեցին արի։ Իսկ եթե շատ հաչաս, ձեռաց սֆաթդ կդրստեմ։ Մի սրան տես, քոսոտ, հլա նոր է ընդունվել, արդեն երևակայում է։

Լվացարարուհիները, որ իրենց հերթը հանձնում էին նոր եկածներին, հետաքրքրությամբ էին հետևում երկու երեխաների խոսակցությանը։ Տղայի անպատկառ տոնն ու գրգռող վերաբերմունքը բարկացրին Պավկային։ Նա մի քայլ արեց դեպի իրեն փոխարինողը՝ պատրաստվելով մի լավ հասցնել մռութին, բայց աշխատանքի հենց առաջին օրը վտարվելու ահը ետ պահեց նրան։

Ամբողջովին մթնելով, նա ասաց.

— Կամա՛ց, վրա մի՛ պրծնի, թե չէ կդաղվես։ Էգուց յոթին կգամ, իսկ կռվել քեզնից լավ գիտեմ, եթե փորձել կուզենաս՝ խնդրեմ։

Հակառակորդը մի քայլ ետ գնաց դեպի կուբը և զարմանքով նայեց կատաղած Պավկային։ Նա այդպիսի վճռական հակահարված չէր սպասում և մի քիչ շշմեց։

— Դե, լավ, կտեսնենք,— փնթփնթաց նա։

Առաջին օրը բարեհաջող անցավ, ու Պավկան տուն էր գնում ազնիվ աշխատանքով իր հանգիստը վաստակած մարդու զգացումով։ Հիմա նա էլ է աշխատում, և ոչ ոք նրան չի կարող ասել, թե ձրիակեր է։

Առավոտյան արևը ծուլորեն բարձրանում էր սղոցարանի վիթխարի շենքի հետևից։ Շուտով Պավկայենց տունն էլ կերևա։ Այ, այստեղ, Լեշչինսկու կալվածատան հենց ետևում։

«Մայրիկը, հավանորեն, քնած չէ, իսկ ես վերադառնում եմ աշխատանքից,— մտածեց Պավկան և, աշխույժ սուլելով, արագացրեց քայլերը։— Այնքան էլ վատ չեղավ, որ դպրոցից ինձ դուրս արին։ Մեկ է, անիծված տերտերը օր չէր տալու ինձ, իսկ հիմա թքած նրա վրա,— տանը մոռանալով խորհում էր Պավկան։ Իսկ պարտեզի դռնակը բանալիս հիշեց.— Իսկ էն շեկոյի մռութն անպայման կջարդեմ, անպայման»։

Մայրը բակում ինքնաեռով էր զբաղված։ Որդուն տեսնելով, նա անհանգիստ հարցրեց.

— Հը, ո՞նց է։

— Լավ է,— պատասխանեց Պավկան։

Մայրն ուզում էր ինչ-որ բան ասել նրան։ Պավկան հասկացավ՝ սենյակի բաց պատուհանից երևում էր եղբոր՝ Արտյոմի լայն թիկունքը։

— Ի՞նչ, Արտյո՞մն է եկել,— հարցրեց նա շփոթվելով։

— Երեկ է եկել և մնալու է այստեղ։ Դեպոյում է ծառայելու։

Պավկան անվստահ բաց արեց սենյակի դուռը։

Սեղանի մոտ թիկունքով դեպի նա նստած վիթխարի կերպարանքը շուռ եկավ, և եղբոր խիստ աչքերը խիտ ու սև հոնքերի տակից նայեցին Պավկային։

— Ա՜, ծխախոտի հերոսն եկա՞վ։ Բարև, բարև։

Եղբոր հետ ունենալիք զրույցը Պավկայի համար ոչ մի լավ բան չէր գուշակում։

«Արտյոմն ամեն բան գիտի,— մտածեց Պավկան,— Արտյոմը կարող է և՛ հայհոյել, և՛ դնքսել»։

Պավլիկը վախենում էր Արտյոմից։

Բայց Արտյոմը, ըստ երևույթին, կռվելու մտադրություն չուներ։ Աթոռակին նստած՝ նա արմունկները հենել էր սեղանին և անթարթ նայում էր Պավկային՝ ոչ այն է հեգնանքով, ոչ այն է, արհամարհանքով։

— Ուրեմն ասում ես, թե համալսարանն ավարտեցիր, բոլոր գիտություններն անցար, հիմա կեղտաջո՞ւր ես սկսել ուսումնասիրել,— ասաց Արտյոմը։

Պավկան աչքերը հառել էր հատակի տախտակի ճեղքված-

քին և ուշադրությամբ ուսումնասիրում էր դուրս եկած մեխի գլուխը։ Բայց Արտյոմը վեր կացավ սեղանի մոտից և գնաց խոհանոց։

«Ինչ որ թե առանց ծեծ ուտելու կարծնեմ»,— թեթևացած շունչ քաշեց Պավկան։

Թեյ խմելիս Արտյոմը հանգիստ հարց ու փորձ արեց Պավկային՝ դաստրանում պատահածի մասին։

Պավկան բոլորը պատմեց։

— Ի՞նչ պետք է լինի քո վերջը, եթե էդպես խուլիգան ես դառնում,— տխրությամբ ասաց մայրը։— Հը՞, ի՞նչ անենք սրան։ Եվ ո՞ւմ է քաշել։ Տեր աստված, ինչքան տանջանքներ եմ կրել էս տղայի ձեռքից,— գանգատվում էր նա։

Արտյոմը, իրենից հեռացնելով բաժակը՝ ասաց, դառնալով դեպի Պավկան.

— Էդպես, ուրեմն, ախպերս։ Քանի որ արդեն էդպես է պատահել, հիմա զգույշ կաց, աշխատանքում ֆոկուսներ չանես, այլ արա այն, ինչ պետք է. եթե քեզ էդտեղից էլ վռնդեն, էն ժամանակ ես քեզ այնպես կնախշեմ, որ էլ տեղ չմնա։ Հիշիր այս բանը։ Հերիք է մայրիկին տանջես։ Սատանի պես ուր քիթդ խոթես, մի թյուրիմացություն կպատահի, մի անախորժ բան։ Բայց հիմա արդեն վերջ։ Մի տարի կաշխատես, հետո կխնդրեմ, որ դեպոյում աշակերտ ընդունեն, որովհետև այդ կեղտաջրում մարդ չես դառնա։ Պետք է արհեստ սովորել։ Հիմա դեռ փոքր ես, բայց մի տարուց հետո կխնդրեմ՝ գուցե ընդունեն։ Ես այստեղ եմ տեղափոխվում և այստեղ պետք է աշխատեմ։ Մայրիկն այլևս չի ծառայելու։ Հերիք է, ինչքան մեջքը ծռեց ամեն տեսակ սրիկաների առաջ։ Իսկ դու, Պա՛վկա, տես, մարդ դարձիր։

Նա կանգնեց իր ամբողջ վիթխարի հասակով մեկ, աթոռի թիկունքին կախած պիջակը հագավ և ասաց մորը.

— Ես մի ժամով գնում եմ, գործ ունեմ։— Ու դռան մեջ կռանալով՝ դուրս գնաց։

Արդեն բակում, պատուհանի մոտից անցնելիս, ասաց.

— Քեզ համար կոշիկներ ու դանակ եմ բերել, մայրիկը կտա։

Կայարանի բուֆետն ամբողջ օրն անընդհատ առատուր էր անում։

Երկաթուղային այս հանգույցը վեց գիծ էր միացնում։ Կայարանը լեփ լեցուն էր լինում մարդկանցով և հանդարտվում էր միայն գիշերը երկու-երեք ժամով, երկու գնացքների միջև եղած ընդմիջման ժամանակ։ Այստեղ՝ կայարանում, իրար էին հանդիպում և ապա տարբեր կողմեր սլանում հարյուրավոր էշելոններ։ Նրանք գնում էին մի ճակատից մյուսը։ Այնտեղից գալիս էին խեզանդամված, բզկտված մարդկանցով, իսկ դեպի այնտեղ գնում էին գորշ, միատեսակ շինել հագած նոր մարդկանց հոսանքով։

Երկու տարի Պավկան պտույտ եկավ այդ աշխատանքում։ Խոհանոց և լվացատուն, ահա այն բոլորը, ինչ որ տեսավ նա այդ երկու տարում։ Ներքնահարկի վիթխարի խոհանոցում տենդային աշխատանք էր տարվում։ Այնտեղ քսանից ավելի մարդ էր աշխատում։ Տասը մատուցող վազվզում էին բուֆետից խոհանոց։

Պավկան արդեն ոչ թե ութ, այլ տասը ռուբլի էր ստանում։ Երկու տարում աճեց, ամրապինդ դարձավ։ Շատ տառապանքներ տեսավ նա այդ ժամանակամիջոցում։ Կես տարի խոհանոցում ծուխ կուլ տվեց իբրև խոհարարի օգնական, նորից լվացատուն նետվեց, ամենազոր շեֆը դուրս արեց, կամակոր տղան գուր չէր գալիս, թվում էր, թե ուր որ է, դանակով կհասցնի քիթ ու բերնիդ։ Դրա համար վաղուց վռնդած կլիներին աշխատանքից, բայց նրան փրկում էր անսպառ աշխատունակությունը։ Պավկան կարող էր առանց հոգնելու բոլորից երկար աշխատել։

Բուֆետի աշխատանքի ամենաառուն ժամերին խենթի նման էր դեսուդեն ընկնում, մատուցարանը ձեռքին սանդուղքների շորս-հինգ աստիճանից թռչում էր ցած՝ խոհանոց և հետ։

Գիշերը, երբ բուֆետի երկու դահլիճումն էլ դադարում էր հրմշտոցը, ներքևում, խոհանոցի մառաններում հավաքվում էին մատուցողները։ Սկսվում էր կատաղի, մոլի թղթախաղը՝ «աշկո» կամ «ինոց»։ Պավկան շատ անգամ էր տեսել սեղանի վրա կիտած թղթադրամներ։ Այդպիսի մեծ քանակությամբ դրամ տեսնելով՝ Պավկան չէր զարմանում, գիտեր, որ նրանցից ամեն մեկն իր հերթապահության օրը երեսուն-քառասուն ռուբլի թեյավճար է ստանում։ Հիսուն կոպեկով, ռուբլով էին հավաքում։ Իսկ հետո հարբում էին և մոլեգնորեն

թղթախաղով զբաղվում։ Զարանում էր Պավկան նրանց վրա։

«Անիծված սրիկանե՛ր,— մտածում էր նա։— Ա՛յ, Արտյոմը առաջին կարգի փականագործ է, բայց ստանում է քառասունութ ռուբլի, իսկ ես՝ տասը, նրանք մի օրումն են այդքան գուփում, և ինչի՞ համար։ Տանել-բերելու Հարբում են ու տարվում»։

Նրանց ևս, ինչպես տերտերին, Պավկան օտարներ, թշնամիներ էր համարում։

«Սրանք՝ այս ստոր մարդիկ, էստեղ լակեյություն են անում, իսկ սրանց կանայք ու որդիները քաղաքներում հարուստների պես են ապրում»։

Նրանք բերում էին գիմնազիայի տարազ հագած իրենց որդիներին, բերում էին և լիությունից ճարպակալած կանանց։ «Իսկ փող սրանք հավանորեն ավելի շատ ունեն, քան այն պարոնները, որոնց ծառայում են»,— մտածում էր Պավկան։

Նրան չէր զարմացնում և այն, ինչ գիշերները կատարվում էր խոհանոցի անկյուններում և բուֆետի պահեստներում։ Պավկան լավ գիտեր, որ ամեն մի աման լվացող կին ու վաճառորդուհի երկար չէր կարող աշխատել բուֆետում, եթե մի քանի ռուբլով չվաճառեր իրեն ամենքին, ով այստեղ իշխանություն և ուժ ուներ։

Պավկան տեսավ կյանքի ամենախոր հատակը, կեղտահորը, և փտած բորբոսի ու ճահճի խոնավության հոտ փչեց նրա վրա, նրա, որ ագահ էր դեպի ամեն մի նոր, չճաշակած, չփորձած բան։

Արտյոմին չհաջողվեց եղբորը տեղավորել դեպոյում որպես աշակերտ. տասնհինգ տարեկանից փոքրին չէին վերցնում։ Պավկան սպասում էր այն օրին, երբ դուրս կգա այստեղից. ծխապատ, քարե վիթխարի շենքը ձգում էր նրանին։

Հաճախ էր լինում նա այնտեղ, Արտյոմի մոտ, նրա հետ գնում էր վագոնները տեսնելու և աշխատում էր որևէ բանով օգնել։

Աշխատանքը ձանձրալի դարձավ հատկապես Ֆրոսյայի հեռանալուց հետո։

Էլ չկար այն ծիծաղկոտ, ուրախ աղջիկը, և Պավկան ավելի սուր էր զգում, թե որքան էր մտերմացել նրա հետ։ Առավոտները ամանների լվացատուն գալով, լսելով փախբստական կանանց կովարար ճիչերը՝ ինչ-որ դատարկություն ու մենակություն էր զգում։

Գիշերվա դադարի ժամանակ, կուբի տակ փայտ դարսելիս, Պավկան պպզեց վառարանի բաց դռան առջև։ Աչքերը կկոցած նա նայում էր կրակին. վառարանի տաքությունը դուրեկան էր։ Լվացատնում ոչ ոք չկար։

Ցնկատեց, թե ինչպես միտքը դարձավ վերջերս պատահածին՝ դեպի Ֆրոսյան, և պարզ կերպով աչքերի առաջ կանգնեց այդ պատկերը։

Շաբաթ օրը, գիշերվա դադարի ժամանակ, Պավկան սանդուղքով ներքև՝ խոհանոց էր իջնում։ Սանդուղքի ոլորապտույտում հետաքրքրությունից բարձրացավ ցախի վրա, որպեսզի մտիկ տա մառանը, ուր սովորաբար հավաքվում էին խաղացողները։

Իսկ խաղի ամենաեռուն ժամանակն էր։ Հուզմունքից գորշ գույն ստացած Զալիվանովը «բանկ» էր բռնել։

Սանդուղքի վրա քայլերի ձայն լսվեց։ Պավկան շուռ եկավ. վերևից իջնում էր Պրոխոշկան։ Պավկան մտավ սանդուղքի տակ, սպասելով, մինչև որ նա անցնի խոհանոց։ Սանդուղքի տակ մութն էր, և Պրոխոշկան չէր կարող նրան տեսնել։

Պրոխոշկան սանդուղքով ցած իջավ։ Պավկան տեսնում էր նրա լայն թիկունքն ու մեծ գլուխը։ Վերևից սանդուղքներով էլի մեկը վազեց շտապ, թեթև քայլերով, ու Պավկան լսեց ծանոթ ձայնը։

— Պրոխո՛շկա, սպասի՛ր։

Պրոխոշկան կանգ առավ և, շրջվելով, նայեց վերև։

— Ի՞նչ ես ուզում,— մրթմրթաց նա։

Քայլերը սանդուղքով դեպի ցած թխկթխկացրին, ու Պավկան ճանաչեց Ֆրոսյային։

Ֆրոսյան բռնեց մատուցողի թևից և կերկերուն, ճնշված ձայնով ասաց.

— Պրոխո՛շկա, ի՞նչ արիր պորուչիկի տված փողը։

Պրոխորը ձեռքը խստությամբ ետ քաշեց։

— Ի՞նչ։ Փո՞ղը։ Բայց չէ՞ որ տվեցի քեզ,— ասաց նա չարացած ու խիստ։

— Ախր նա քեզ երեք հարյուր ռուբլի տվեց,— ու Ֆրոսյայի ձայնի մեջ խեղդված հեկեկանք լսվեց։

— Ասում ես երեք հարյուր ռուբլի՞,— նենգորեն ասաց Պրոխոշկան։— Ի՞նչ է, ուզում ես քեզ տա՞մ։ Շատ թանկ չի՞, տիրուհիս, ման լվացողի համար։ Ես կարծում եմ այն հիսուն ռուբլին էլ է հերիք, որ տվեցի։ Ի՞նչ մի բախտավորություն էր։ Ավելի մաքուր ու կրթված տիկիններն անգամ էգքան չեն վերցնում։ Դրա համար էլ շնորհակալ եղիր, մի գիշեր քնել և հիսուն ռուբլի ձեռք գցել։ Հիմարի տեղ չգնես։ Մի երկու տասանոց էլ կտամ և վերջ, իսկ եթե հիմար չլինես, էլի կաշխատես, ես քեզ կհովանավորեմ։— Ու նետելով վերջին խոսքերը՝ Պրոխոշկան շուռ եկավ ու գնաց խոհանոց։

— Ստո՛ր, սողո՛ւն,— աղաղակեց նրա հետևից Ֆրոսյան և հենվելով փայտերին, խուլ հեկեկաց։

Պատմել ու նկարագրել չի լինի այն զգացմունքները, որոնք համակեցին Պավկային, երբ նա լսեց այս խոսակցությունը և մթության մեջ, սանգուղքի տակ կանգնած՝ տեսավ ցնցվող և գլուխը ծղաններին խփող Ֆրոսյային։ Պավկան իր ներկայությունը չմատնեց, լռեց, ջղաձգաբար բռնեց սանդուղքի թուջե հենարաններից, իսկ գլխով անցավ պարզ ու որոշ մի միտք.

«Սրան էլ վաճառեցին, անիծվածներ։ Է՜խ, Ֆրոսյա, Ֆրոսյա...»։ Էլ ավելի խոր և ուժեղ դարձավ ատելությունը դեպի Պրոխոշկան, և ամբողջ շրջապատը զզվելի ու ատելի դարձավ։ «Ա՜խ, ուժ ունենայի, այդ սրիկային սատկացնելու չափ կծեծեի։ Ինչո՞ւ Արտյոմի պես ուժեղ ու մեծ չեմ»։

Վառարանում կայծերը բոցկլտում էին ու հանգչում, դողում էին նրանց կարմիր լեզուները՝ հյուսվելով վերածվում երկարավուն կապուտակ գալարների։ Պավկային թվում էր, թե մեկը ծիծաղելով ու ծաղրելով լեզու է ցույց տալիս իրեն։

Սենյակում խաղաղ էր. միայն կրակարանում ճարճատում էր փայտը և լսվում էր ծորակից համաչափ կաթացող ջրի ձայնը։

Վերջին լավ մաքրած կաթսան գարակին գնելով՝ Կլիմկան մաքրեց ձեռքերը։ Խոհանոցում ոչ ոք չկար։ Հերթապահ խոհարարն ու խոհանոցում աշխատող կանայք քնած էին հանդերձարանում։ Գիշերը երեք ժամով խոհանոցը հանդարտվում էր, ու այդ ժամերը Կլիմկան միշտ անց էր կացնում վերևում՝ Պավկայի մոտ։ Փոքրիկ խոհարարը սևաչյա չուր եռացնողի մտերիմ բարեկամն էր դարձել։ Վեր բարձրանալով՝ Կլիմկան Պավկային տեսավ բաց կրակարանի առջև պպզած։ Պավկան պատի վրա նկատեց ծանոթ, զզզված կերպարանքի ստվերը և առանց շրջվելու ասաց.

— Նստի՛ր, Կլի՛մկա։

Փոքրիկ խոհարարը բարձրացավ դարսած փայտերին և պառկելով դրանց վրա՝ նայեց լուռ նստած Պավկային ու ժպտալով ասաց.

— Էդ ի՞նչ է, կրակով հմայո՞ւմ ես։

Պավկան դժվարությամբ կտրեց հայացքը կրակե լեզուներից։ Երկու ահագին փայլուն աչքեր նայում էին Կլիմկային։ Կլիմկան այնտեղ տեսավ շարտահայտված թախիծ։ Նա առաջին անգամն էր ընկերոջ աչքերում այդ թախիծը տեսնում։

— Այսօր մի տեսակ տարօրինակ ես, Պավկա...— և մի քիչ լռելուց հետո հարցրեց,— բան է պատահե՞լ։

Պավկան վեր կացավ և նստեց Կլիմկայի կողքին։

— Ոչինչ չի պատահել,— պատասխանեց նա խուլ ձայնով։— Ծանր է ինձ համար այստեղ, Կլի՛մկա,— ու ծնկներին ընկած ձեռքերը սեղմվեցին։

— Էդ ի՞նչ տրամադրության մեջ ես այսօր,— շարունակեց Կլիմկան՝ արմունկներին հենվելով։

— Այսո՞ր, ասում ես։ Միշտ էլ այս տրամադրության մեջ եմ էստեղ աշխատանքի գալուց հետո։ Մի տես, թե էստեղ ինչեր են կատարվում։ Ուղտի պես աշխատում ենք ու շնորհակալության փոխարեն, ում խելքին փչում է, փշրում է ատամներդ, և ոչ մի պաշտպան չկա։ Ինձ ու քեզ տերերը վարձել են, որ իրենց ծառայենք, իսկ ով ուժ ունի կարող է մեզ ծեծել։ Չէ՞ որ թեկուզ տրաքվես էլ, բոլորին միանգամից չես գոհացնի։ Իսկ ում չգոհացրիր, ինչիդ կհասցնի։ Արդեն առանց այն էլ էնպես ես աշխատում, որ ոչ ոք դրժգոհելու տեղիք չունենա, հազար կողմ ես նետվում, բայց միևնույն է, մեկն ու մեկին որ ուզածը ժամանակին չհասցրիր, վզակոթիդ կտա...

Կլիմկան վախեցած ընդհատեց նրան.

— Էդպես մի գոռա, մարդ կմտնի, կլսի։

Պավկան վեր թռավ։

— Թո՛ղ լսեն, միևնույն է, ես էստեղից կգնամ։ Ճանապարհները ձյունից մաքրելն անգամ սրանից լավ է, իսկ էստեղ... գերեզման է, խարդախներով լցված։ Բոլորն էլ ինչքա՜ն փող ունեն։ Իսկ մեզ ստոր արարածներ են համարում, աղջիկների հետ էլ անում են, ինչ ուզում են. իսկ ով լավն է ու չի ենթարկվում, ձեռաց վռնդում են։ Իսկ ո՞ւր գնան նրանք։ Հավաքում են փախստական կանանց, անապատաններին, քաղցածներին։ Սրանք էլ գալիս են մի կտոր հացի համար, այստեղ գոնե կարող են կշտանալ և քաղցից ամեն բանի համաձայնում են։

Նա այս բոլորն այնպիսի լրջությամբ էր ասում, որ Կլիմկան, վախենալով, թե որևէ մեկը կլսի իրենց խոսակցությունը, վեր թռավ ու դեպի խոհանոց տանող դուռը փակեց, իսկ Պավկան շարունակ խոսում էր իր հոգին հուզող այս հարցերի մասին։

— Ա՜յ, դու, Կլի՜մկա, երբ քեզ ծեծում են, լռում ես։ Ինչո՞ւ ես լռում։

Պավկան նստեց սեղանի մոտ դրած աթոռակին և հոգնած գլուխը խոնարհեց ձեռքերի ափերին։ Կլիմկան կրակի վրա փայտ դրեց և նույնպես սեղանի մոտ նստեց։

— Այսօր չե՞նք կարդալու,— հարցրեց նա Պավկային։

— Գիրք չկա,— պատասխանեց Պավկան,— կրպակը փակ է։

— Էսօր առևտուր չի՞ անում,— զարմացավ Կլիմկան։

— Գրավաճառին ժանդարմները տարան։ Նրա մոտ ինչոր բան են գտել,— պատասխանեց Պավկան։

— Ինչի՞ համար։

— Ասում են քաղաքականության համար։

Կլիմկան տարակուսած նայեց Պավկային։

— Իսկ այդ քաղաքականությունն ի՞նչ է նշանակում։

Պավկան ուսերը թոթվեց։

— Սատանան գիտի։ Ասում են, թե որ մեկը ցարին դեմ գնա, դա քաղաքականություն կկոչվի։

Կլիմկան վախեցած ցնցվեց։

— Իսկ մի՞թե էդպիսիները կան։

— Չգիտեմ,— պատասխանեց Պավկան։

Դուռը բացվեց, ու լվացատուն մտավ քնաթաթախ Գլաշան։

— Էդ ինչո՞ւ չեք քնել, տղաներ։ Մի ժամ կարելի է ննջել, քանի դեռ գնացք չկա։ Գնա՛, Պավկա, իսկ կուբին ես կհետևեմ։

Պավկայի ծառայությունն ավելի շուտ վերջացավ, քան ինքն էր սպասում և այնպես վերջացավ, ինչպես ինքը չէր էլ ենթադրում։

Հունվարյան ցուրտ օրերից մի օր Պավկան իր հերթի աշխատանքն ավարտել և պատրաստվում էր տուն գնալ, բայց իրեն փոխարինող տղան չկար։ Պավկան գնաց տիրուհու մոտ և հայտնեց, որ գնում է տուն, բայց սա չարձակեց։ Հոգնած Պավկան ստիպված եղավ երկրորդ օրն էլ վաղվզել ու գիշերվա դեմ բոլորովին ուժից ընկավ։ Դադարի ժամանակ պետք էր կուբերը լցնել և եռացնել ժամը երեքի գնացքի համար։

Պավկան ծորակը պտտեց, ջուր չէր գալիս։ Երևի ջրհան մեքենան չէր բանում։ Ծորակը բաց թողեց, պառկեց ծղանների վրա ու քնեց. հոգնածությունը հաղթեց։

Մի քանի րոպե հետո ծորակը կկլկլաց, քչքչաց, և ջուրը թափվեց բաքը, մինչև պռունկները լցրեց այն ու հախճասալի վրայով հոսեց լվացատան հատակի վրա, իսկ այնտեղ, սովորականի պես, ոչ ոք չկար։ Ջուրը շարունակ թափվում էր ու թափվում։ Հատակը ողողվեց, ու դռան տակով թափանցեց դահլիճ։

Առվակները հոսում էին քնած ճանապարհորդների իրերի ու ճամպրուկների տակ։ Ոչ ոք այդ չէր նկատում, և միայն այն ժամանակ, երբ ջուրը թրջեց հատակին պառկած մի ճանապարհորդի, ու նա վեր թռչելով ճչաց, բոլորը նետվեցին դեպի իրենց իրերը։ Իրարանցում սկսվեց։

Իսկ ջուրը շարունակ ավելանում էր ու ավելանում։

Պրոխոշկան, որ երկրորդ դահլիճում սեղան էր հավաքում, ճանապարհորդների աղմուկի վրա ներս վազեց և ջրերի միջով նետվեց դեպի դուռը ու թափով լայն բաց արեց։ Ջուրը, որի դեմը մինչ այդ դուռն էր պահում, հորդեց դեպի դահլիճ։

Աղաղակներն ուժեղացան։ Լվացատուն վազեցին հերթապահ մատուցողները։ Պրոխոշկան նեռվեց դեպի քնած Պավկան։

Հարվածները մեկը մյուսի հետևից տեղում էին ցավից բոլորովին իրեն կորցրած տղայի գլխին։

Նա քնաթաթախ ոչինչ չէր հասկանում։ Աչքերում կայծակներ էին բռնկվում, ու այրող ցավը թափանցում էր ամբողջ մարմինը։

Մեծված, հազիվ քարշ եկավ մինչև տուն։

Առավոտյան մոայլ, հոնքերը կիտած Արտյոմը հարց ու փորձ էր անում Պավկային ամբողջ պատահածի մասին։

Պավկան պատմեց բոլորն այնպես, ինչպես եղել էր։

— Ո՞վ ծեծեց քեզ,— խուլ ձայնով հարցրեց Արտյոմը։

— Պրոխոշկան։

— Լա՜վ, պառկի՛ր։

Արտյոմը քուրքը հագավ և առանց մի բառ ասելու դուրս գնաց։

— Կարո՞ղ եմ տեսնել մատուցող Պրոխորին,— հարցրեց Գլաշային մի անծանոթ բանվոր։

— Հիմա նա կգա, սպասեցե՛ք,— պատասխանեց Գլաշան։

Վիթխարի մարմինը հենվեց դռան շրջանակին։

— Լա՜վ, կսպասեմ։

Պրոխորը, որ մատուցարանով ամանների մի ահագին կույտ էր բերում, ոտքով հրեց դուռը և մտավ լվացատուն։

— Ա՜յ, հենց սա է,— ասաց Գլաշան՝ ցույց տալով Պրոխորին։

Արտյոմն առաջ քայլեց և, ձեռքը ծանրաբեռն իջեցնելով մատուցողի ուսին՝ հարցրեց շեշտակի նայելով նրան.

— Պավկային՝ իմ եղբորը, ինչո՞ւ ես ծեծել։

Պրոխորն ուզում էր ազատել ուսը, բայց բռունցքի մի սարսափելի հարված գետնին տապալեց նրան. նա փորձեց վեր կենալ, բայց առաջինից ավելի սարսափելի երկրորդ հարվածը գամեց նրան գետնին։

Ման լվացող կանայք վախեցած մի կողմ փախան։

Արտյոմը շուռ եկավ և գնաց դեպի ելքը։

Պրոխոշկան արյունլվա դեմքով թավալվում էր հատակին։

Երեկոյան Արտյոմը դեպոյից չվերադարձավ։

Մայրն իմացավ, որ նա նստած է ժանդարմական բաժանմունքում։

Վեց օր հետո երեկոյան, երբ մայրն արդեն քնած էր, Արտյոմը վերադարձավ։ Մոտեցավ մահճակալի վրա նստած Պավկային և քնքշությամբ հարցրեց.

— Հը՞, առողջացել ես, ախպերս։— Նստեց կողքին։— Ավելի վատ էլ է լինում։— Ու քիչ լռելուց հետո ավելացրեց.— Ոչինչ, կգնաս էլեկտրական, ես արդեն խոսել եմ քո մասին։ Այնտեղ բան կսովորես։

Պավկան երկու ձեռքով ամուր սեղմեց Արտյոմի ահագին ձեռքը։

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Փոքրիկ այգ քաղաքը փոթորկի նման ներխուժեց շշմեցուցիչ լուրը. «Ցարին գցել են»։

Քաղաքում հավատալ չէին ուզում։

Բքի մեջ սողացող գնացքից կառամատույց դուրս եկան երկու ուսանողներ՝ շինելի վրայից հրացան գցած, և հեղափոխական զինվորների մի ջոկատ՝ կարմիր թևակապերով։ Նրանք ձերբակալեցին կայարանի ժանդարմներին, ծեր գնդապետին և կայազորի պետին։ Ու քաղաքում հավատացին։ Ջյունոտ փողոցներով դեպի հրապարակ ձգվեցին հազարավոր մարդիկ։

Ազատորեն լսում էին նոր բառերը՝ ազատություն, հավասարություն, եղբայրություն։

Անցան օրեր՝ աղմկոտ, հուզմունքով ու բերկրանքով համակված օրեր։ Անգորրություն տիրեց, և միայն կարմիր դրոշակը քաղաքային վաբչության շենքի վրա, որին տիրացել էին մենշևիկներն ու բունդականները, հիշեցնում էր կատարված փոփոխության մասին։ Մնացած ամեն ինչ առաջվա նման էր։

Զմռան վերջերին քաղաքում տեղավորվեց գվարդիական հեծելապահնորդ գունդը։ Առավոտները էսկադրոններով գնում էին կայարան՝ հարավարևմտյան ճակատից փախած դասալիքներ որսալու։

Հեծելապահնորդների դեմքերը կուշտ արտահայտություն ունեին, նրանք բարձրահասակ, առողջ տեսքով մարդիկ էին։ Սպաների մեծ մասը կոմսեր ու իշխաններ էին, ոսկե ուսադիրներով, շալվարները արծաթե երիզներով, ամեն բան այնպես էր, ինչպես ցարի ժամանակ, կարծես հեղափոխությունը չէր էլ եղել։

Պավկայի, Կլիմկայի ու Սերյոժա Բրուզժակի համար ոչինչ չէր փոխվել։ Հին տերերը մնացին։ Միայն անձրևոտ նոյեմբերին սկսեցին ինչ-որ վատ բաներ կատարվել։ Կայարանում նոր մարդիկ շարժվեցին, որոնք մեծ մասամբ խրամատի զինվորներ էին, նրանց «բոլշևիկներ» տարօրինակ անունն էին տալիս։

Որտեղից էր այդ հաստատուն, ծանրակշիռ անունը, ոչ ոքի հայտնի չէր։

Գվարդիականները դժվարանում էին ճակատից փախած դասալիքներին բռնել։ Հրացանի ճայթյուններից կայարանի ապակիներն ավելի հաճախ էին ջարդվում։ Ճակատը լքում էին ամբողջ խմբերով և արգելակելու դեպքում ճանապարհ էին հարթում սվիններով։ Դեկտեմբերի սկզբներին հորդեցին ամբողջ էշելոններով։

Գվարդիականները փակեցին կայարանը, մտածելով առաջն առնել, բայց գնդացրի տկտկոցով նրանց շշմեցրին։ Վագոններից դուրս թափվեցին մահվանն ընտելացած մարդիկ։

Գորշ ճակատայինները գվարդիականներին քշեցին քաղաք։ Քշեցին և վերադարձան կայարան ու շարժվեցին առաջ՝ էշելոն էշելոնի հետևից։

Հազար ինը հարյուր տասնութ թվի գարնանը երեք ընկերները վերադառնում էին Սերյոժա Բրուզժակի տնից, ուր «վաթսունվեց» էին խաղում։ Ճանապարհին նրանք մտան Կորչագինենց պարտեզը։ Պառկեցին խոտի վրա։ Տաղտկալի էր։ Սովորական բոլոր զբաղմունքները ձանձրացրել էին։ Սկսեցին մտածել, թե ինչպես ավելի լավ անցկացնեն օրը։ Թիկունքում ձիու սմբակներ տկտկացին, և ճանապարհին հայտնվեց մի ձիավոր։ Ձին մի ոստյունով թռավ այն առուն, որ խճուղին բաժանում էր պարտեզի ցածրիկ ցանկապատից։

Ձիավորը մտրակով նշան արեց պառկած Պավկային ու Կլիմկային։

— Է՛յ, տղե՛րք, էստեղ եկեք։

Պավկան ու Կլիմկան վեր թռան և վազեցին դեպի ցանկապատը։ Ձիավորն ամբողջովին կորել էր փոշու մեջ. ճանապարհի գորշ փոշու հաստ շերտով էին ծածկված ծոծրակին ետ տարած գլխարկը, խաքի գույնի գիմնաստյորկան ու նույն գույնի շալվարը։ Զինվորական ամուր փոկից կախված էին նագանն ու գերմանական երկու նռնակ։

— Մի խմելու ջուր բերեք, տղե՛րք,— խնդրեց ձիավորը, ու երբ Պավկան վազեց տուն ջուր բերելու, դարձավ ակնարկեց իրեն նայող Սերյոժկային։— Ասա, ա՛յ տղա, քաղաքում ի՞նչ իշխանություն է։

Սերյոժկան շտապով սկսեց եկվորին պատմել քաղաքի բոլոր նորությունները։

— Արդեն երկու շաբաթ է մեզ մոտ ոչ մի իշխանություն չկա։ Ինքնապաշտպանությունն է մեր իշխանությունը։ Բոլոր բնակիչները հերթով կիշերը գնում են քաղաքը պաշտպանելու։ Իսկ դուք ովքե՞ր եք,— իր հերթին հարցրեց նա։

— Էհ՛, շատ բան որ իմանաս, շուտ կծերանաս,— ժըպտալով պատասխանեց ձիավորը։

Ջրով լի գավաթը ձեռքին՝ տնից դուրս վազեց Պավկան։ Զինվորն ագահությամբ, մի շնչով բոլորը խմեց, գավաթը հանձնեց Պավկային, ձգեց սանձը և միանգամից թափով սլացավ դեպի սոճու անտառը։

— Ո՞վ էր,— տարակուսանքով հարցրեց Պավկան Կլիմկային։

— Ի՞նչ իմանամ,— պատասխանեց նա, ուսերը թոթվելով։

— Հավանաբար, էլի իշխանության փոփոխություն կլինի։ Դրա համար էլ երեկ Լեշչինսկիները մեկնեցին։ Իսկ եթե հարուստները ծլկում են, կնշանակի պարտիզանները կգան,— վերջնականապես և հաստատուն կերպով այդ քաղաքական հարցը լուծեց Սերյոժկան։

Սերյոժկայի փաստարկներն այնքան համոզեցուցիչ էին, որ և՛ Պավկան, և՛ Կլիմկան անմիջապես համաձայնեցին նրա հետ։

Երեխաներն էլ, ինչպես հարկն է, չէին հասցրել այդ մասին խոսել, երբ խճուղում սմբակներ դոփեցին։ Երեքը միասին նետվեցին դեպի ցանկապատը։

Անտառից, մնտառատեսի տան հետևից, որը երեխաները հազիվ էին տեսնում, մարդիկ, սայլեր էին շարժվում, իսկ խճուղով, բոլորովին մոտիկ դալիս էին մոտ տասնհինգ ձիավորներ՝ հրացանները թամբերի վրա գցած։ Ձիավորների առաջից գնում էին երկուսը՝ մեկը տարիքավոր, խակի գույնի ֆրենչով, սպայի գոտի կապած, հեռադիտակը կրծքին, իսկ նրա կողքին՝ հենց նոր տեսած ձիավորը։ Տարիքավորի ֆրենչի վրա կարմիր ժապավեն կար։

— Ես ի՞նչ էի ասում,— արմունկով Պավկային հրեց Սերյոժկան,— տեսնո՞ւմ ես, կարմիր ժապավեն։ Պարտիզաններ են։ Թող աչքս դուրս գա, թե պարտիզաններ չեն են...— Եվ, ուրախությունից աղաղակելով՝ ցանկապատի վրայով թռչունի նման թռավ փողոց։

Երկու ընկերներն էլ հետևեցին նրան։ Այժմ երեքը միասին կանգնել էին խճուղու եզրին և նայում էին մոտեցողներին։

Ձիավորները բոլորովին մոտեցան։ Տղաների ծանոթը գլխով արեց նրանց և, մտրակով ցույց տալով Լեշչինսկիների տունը, հարցրեց.

— Այս տանն ո՞վ է ապրում։

Պավկան՝ աշխատելով ետ չմնալ հեծյալի ձիուց, պատասխանեց.

— Այստեղ իրավաբան Լեշչինսկին է ապրում։ Երեկ փախավ։ Երևի ձեզանից վախեցավ...

— Դու ի՞նչ գիտես, թե մենք ովքեր ենք,— ժպտալով հարցրեց տարիքավորը։

Պավկան ժապավենը ցույց տալով՝ պատասխանեց.

— Բա սա ի՞նչ է։ Իսկույն երևում է...

Բնակիչները փողոց թափվեցին և հետաքրքրությամբ դիտում էին քաղաք մտնող ջոկատը։ Մեր բարեկամներն էլ կանգնել էին խճուղու մոտ և նույնպես նայում էին փոշոտ, հոգնած կարմիրգվարդիականներին։

Երբ քարերի վրայով թխկթխկալով անցան ջոկատի միակ թնդանոթը և գնդացիրը բարձած սայլերը, տղաները գնացին պարտիզանների հետևից և իրենց տները ցրվեցին այն ժամանակ միայն, երբ ջոկատը կանգ առավ քաղաքի կենտրոնում և սկսեց տեղավորվել բնակարաններում։

Ջոկատի շտաբը կանգ էր առել Լեշչինսկիների տանը։ Երեկոյան նրանց մեծ հյուրասենյակում, քանդակազարդ սաքերով մեծ սեղանի շուրջը նստած էին չորս հոգի՝ հրամկազմից երեք հոգի և ջոկատի հրամանատար ընկեր Բուլգակովը՝ տարիքավոր, արդեն սպիտակող մազերով մի մարդ։

Բուլգակովը, սեղանի վրա փռելով նահանգի քարտեզը՝ եղունգներով գծեր էր քաշում և խոսում էր՝ դիմելով իր դիմացը նստած լայն այտոսկրերով ու ամուր ատամներով մարդուն.

— Ընկեր Երմաչենկո, դու ասում ես, թե հարկ կլինի այստեղ կռվել, իսկ ես կարծում եմ, որ առավոտյան պետք է հեռանալ։ Ավելի լավ կլիներ նույնիսկ, եթե գիշերը հեռանայինք, բայց մարդիկ հոգնած են։ Մեր խնդիրն է՝ նահանջել դեպի Կազատին, քանի դեռ գերմանացիները մեզնից շատ այնտեղ չեն հասել։ Դիմադրություն ցույց տալ մեր ուժերով՝ դա հո ծիծաղելի՞ է... Մի թնդանոթ և երեսուն արկ, երկու հարյուր սվին և վաթսուն թուր. ահե՜ղ ուժ է... Գերմանացիները երկաթե հեղեղի նման են գալիս։ Մենք կռվել կարող ենք մյուս նահանջող կարմիր զորամասերի հետ միանալուց հետո միայն։ Չէ՞ որ, ընկե՛ր, մենք պետք է նկատի ունենանք, որ գերմանացիներից բացի, մեր ճանապարհին բազմաթիվ զանազան հակահեղափոխական բանդաներ կան։ Իմ կարծիքն է՝ հենց վաղն առավոտ նահանջել՝ պայթեցնելով կայարանի մոտի կամուրջը։ Մինչև գերմանացիները կամուրջը սարքեն, երկու-երեք օր կանցնի։ Նրանց առաջխաղացումը եթկաթուղով՝ կկասեցվի։ Դուք ի՞նչ եք կարծում, ընկերներ։ Եկեք որոշենք,— դարձավ նա սեղանի շուրջը նստածներին։

Բուլգակովից ոչ հեռու նստած Ստրուժկովը շրթունքները կծոտեց, նայեց քարտեզին, հետո՝ Բուլգակովին և վերջապես դժվարությամբ արտասանեց կոկորդում մնացած բառերը.

— Ես համա... ձայն եմ Բուլգակովի հետ։

Ամենից երիտասարդը, որ բանվորական վերնաշապիկ էր հագել, համաձայնեց.

— Խելոք բան է ասում Բուլգակովը։

Ու միայն Երմաշենկոն, նա, որ ցերեկը խոսում էր տղաների հետ, գլուխը բացասաբար շարժեց։

— Ապա էլ ո՞ր սատանի համար մենք ջոկատ հավաքեցինք։ Որպեսզի գերմանացիների առաջ առանց կռվի նահանջե՞նք։ Իմ կարծիքով մենք պետք է այստեղ նրանց հետ կռվենք։ Զանձրացանք փախչելուց... Եթե ինձ մնա, ես այստեղ անպայման կկռվեմ...— Նա կտրուկ ետ հրեց աթոռը, վեր կացավ և սկսեց քայլել սենյակում։

Բուլգակովը հավանություն չտվող հայացքով նայեց նրան։

— Կռիվն էլ պետք է իմաստ ունենա, Երմաշենկո։ Իսկ բացահայտ ջարդի ու ոչնչացման նետել մարդկանց՝ չենք կարող։ Դա ծիծաղելի էլ է։ Մեր հետևից շարժվում է մի ամբողջ դիվիզիա՝ ծանր հրետանիներով, զրահապատ մեքենաներով... Երեխայություն չպետք է անել, ընկեր Երմաշե՛նկո...— Ու, դառնալով արդեն մյուսներին, վերջացրեց.

— Այսպես, որոշված է, վաղն առավոտյան նահանջում ենք... Հաջորդ հարցը կապի մասին է,— խորհրդակցությունը շարունակեց Բուլգակովը։— Քանի որ մենք առաջին նահանջողներն ենք, մեզ վրա է ընկնում գերմանացիների թիկունքում աշխատանքը կազմակերպելու խնդիրը։ Սա երկաթուղային խոշոր հանգույց է, քաղաքը երկու կայարան ունի։ Մենք պետք է հոգանք այն մասին, որ կայարանում հուսալի ընկեր աշխատի։ Այժմ մենք կորոշենք, թե մերոնցից ում թողնենք այստեղ՝ գործը կարգավորելու համար։ Թեկնածուներ տվեք։

— Ես կարծում եմ, որ այստեղ պետք է մնա նավաստի Ժուխրայը,— սեղանին մոտենալով, ասաց Երմաշենկոն։— Նախ՝ Ժուխրայը այս կողմերից է։ Երկրորդ՝ նա փականագործ է ու մոնտյոր, կարող է աշխատանքի տեղավորվել կայարանում։ Ֆյոդորին ոչ ոք չի տեսել մեր ջոկատի հետ, նա գիշերը միայն կգա։ Նա խելքը գլխին տղա է և գործն այստեղ կարգի կբերի։ Իմ կարծիքով, նա ամենահարմար մարդն է։

Բուլգակովը գլխով արեց։

— Ճիշտ է, ես քեզ հետ համաձայն եմ, Երմաշենկո։ Ընկերնե՛ր, դուք չե՞ք առարկում,— դարձավ նա մյուսներին։— Ոչ։ Կնշանակի հարցն սպառված է։ Մենք Ժուխրային փող ու

աշխատելու մանդատ ենք թողնում... Այժմ, երկրորդ՝ վերջին հարցը, ընկերնե՛ր,— ասաց Բուլգակովը։— Դա քաղաքում գտնվող զենքի հարցն է։ Այստեղ հրացանների մի ամբողջ պահեստ կա՝ քսան հաղար հատ, որ մնացել է դեռ ցարական պատերազմից։ Հրացանները դարսած են մի գյուղացու փայտանոցում և ընկած են այնտեղ ամենքից մոռացված։ Ինձ այդ մասին հայտնեց մի գյուղացի՝ փայտանոցի տերը։ Ուզում է ազատվել դրանից... Այդ պահեստը գերմանացիներին թողնել, իհարկե, չի կարելի։ Ես կարծում եմ պետք է վառել պահեստը։ Ու հենց հիմա, որպեսզի առավոտվա դեմ ամեն ինչ պատրաստ լինի։ Միայն թե հրդեհելը վտանգավոր է. փայտանոցը գտնվում է քաղաքի ծայրում, չքավոր տների մեջ։ Կարող են գյուղացիների շինությունները վառվել։

Վաղուց չածիլված մորուքի կոշտ մազը դեմքին՝ Ստրուժկովը հանկարծ շարժվեց.

— Ի... ին... չո՞ւ վառել։ Ես կ...արծում եմ զենքը պիտի բա...բաժանել բնակչությանը։

Բուլգակովը արագ շրջվեց դեպի նա.

— Ասում ես, բաժանե՞նք։

— Ճիշտ է։ Այ, դա ճիշտ է,— հիացած բացականչեց Երմաշենկոն,— բաժանել բանվորներին և մնացած բնակչությանը՝ ով ցանկանա։ Համենայն դեպս մի բան կունենան գերմանացիների կողերը սրորելու, երբ սրանք շատ սեղմեն։ Չէ՞ որ նրանք թունդ կսեղմեն։ Իսկ երբ արդեն անտանելի լինի, տղերքը զենքի կդիմեն։ Ստրուժկովը ճիշտ ասաց։ Բաժանել։ Լավ կլիներ նույնիսկ գյուղերն էլ տանել։ Գյուղացիք ավելի խոր կթաքցնեն, իսկ երբ գերմանացիները սկսեն ամեն ինչ բռնագրավել, այս հրացանները լավ պետք կգան։

Բուլգակովը ծիծաղեց.

— Այո՛, բայց չէ՞ որ գերմանացիները կհրամայեն հանձնել զենքերը, ու բոլորն էլ կհանձնեն։

Երմաշենկոն դժգոհեց.

— Ո՛չ, բոլորը չեն հանձնի։ Ոմանք կհանձնեն, ոմանք էլ կպահեն։

Բուլգակովը հարցական հայացքով նայեց նստածներին։

— Բաժանենք, բաժանենք հրացանները։— Երմաշենկո-

յին և Ստրուժկովին պաշտպանեց երիտասարդ բանվորը։

— Դեհ, լավ, ուրեմն բաժանենք,— համաձայնեց Բուլգակովը։— Ահա և բոլոր հարցերը,— ասաց նա՝ վեր կենալով սեղանի մոտից։— Այժմ մենք կարող ենք մինչև առավոտ հանգստանալ։ Երբ ժուխրայը գա, թող ինձ մոտ անցնի։ Ես կխոսեմ նրա հետ։ Իսկ դու, Երմաշե՛նկո, գնա պահակակետերն ստուգիր։

Մենակ մնալով՝ Բուլգակովն անցավ տանտերերի ննջարանը, որը կից էր հյուրասենյակին, և ներքնակի վրա փռելով իր շինելը՝ պառկեց։

Առավոտյան Պավկան վերադառնում էր էլեկտրակայանից։ Արդեն մի ամբողջ տարի էր, որ աշխատում էր իբրև հնոցապանի օգնական։

Փոքրիկ քաղաքում անսովոր աշխուժություն էր տիրում։ Այդ աշխուժությունը նա անմիջապես նկատեց։ Ճանապարհին ավելի ու ավելի հաճախ էին պատահում բնակիչներ, որոնք մեկական, երկուական և նույնիսկ երեքական հրացան էին տանում։ Պավկան շտապեց տուն, չհասկանալով, թե դա ինչ բան է։ Լեշչինսկու կալվածատան մոտ ձի էին հեծնում նրա երեկվա ծանոթները։

Տուն վազելով՝ արագ լվացվեց և մորից իմանալով, որ Արայոմը դեռ չի եկել, Պավկան դուրս թռավ և սլացավ Սերյոժկա Բրուղժակի մոտ, որն ապրում էր քաղաքի մյուս ծայրին։

Սերյոժկան մեքենավարի օգնականի տղան էր։ Նրա հայրը սեփական փոքրիկ տուն ուներ և նույնչափ փոքրիկ տնտեսություն։

Սերյոժան տանը չէր։ Նրա մայրը, որ մի լիքը, սպիտակ դեմքով կին էր, դժկամությամբ նայեց Պավկային։

— Սատանան գիտե, թե որտեղ է նա։ Լույսը հազիվ բացված՝ դուրս է ընկել, ոնց որ շարքերը հետևից ընկած լինեն։ Ասում է, ինչ-որ տեղ զենք են բաժանում, ուրեմն նա էլ էնտեղ է։ Ձեզ պետք է մի լավ ծեծ տալ, փսլնքոտ կովարարներ։ Բոլորովին կապներդ կտրել եք, ձեռքից գնացել։ Բոյներդ մի թիզ է, բայց զենքի հետևից եք վազում։ Դու էն սրիկային ասա, որ եթե մի փամփուշտ անգամ տուն բերի,

գլուխը կպոկեմ։ Ամեն տեսակ անպետք բան կբերի, հետո նրա փոխարեն պատասխան տուր։ Իսկ դու, դո՞ւ էլ ես պատրաստվել էնտեղ գնալ։

Բայց Պավկան արդեն չէր լսում Սերյոժկայի կովարար մայրիկին, նա դուրս թռավ փողոց։

Եռուզեռով մի տղամարդ էր անցնում, և ամեն ուսին մի հրացան էր տանում։

— Քեռի՛, որտեղի՞ց վերցրիր, ասա՛,— մոտ թռավ Պավկան։

— Ա՜յ, էնտեղ, Վերխովինոյում են բաժանում։

Պավկան շնչակտուր սլացավ դեպի ցույց տված հասցեն։ Երկու փողոց վազելով նա հանդիպեց մի տղայի, որ մի ծանր սվինավոր հետևակային հրացան էր քարշ տալիս։

— Որտեղի՞ց վերցրիր այդ հրացանը,— կանգնեցրեց նրան Պավկան։

— Դպրոցի դիմաց ջոկատայիններն են բաժանում, բայց արդեն ոչինչ չկա։ Բոլորը տարան։ Ամբողջ գիշերը տալիս էին, միայն դատարկ արկղեր են ընկած։ Իսկ ես երկրորդն եմ տանում,— հպարտ վերջացրեց տղան։

Հաղորդված նորությունը սաստիկ վշտացրեց Պավկային։

«Է՛խ, գրողը տանի, պետք էր անմիջապես այստեղ վազել և ոչ թե տուն գնալ,— հուսահատությամբ մտածեց նա։— Եվ էդ ինչպե՞ս ձեռքից բաց թողի»։

Ու հանկարծ գլխում մի միտք ծագեց. նա կորուկ շրջվեց և երեք ոստյունով հասնելով հեռացող տղային՝ ուժով քաշեց հրացանը նրա ձեռքից։

— Դու արդեն մեկն ունես, բավական է։ Իսկ սա ինձ,— անառարկելի տոնով հայտարարեց Պավկան։

Տղան օրը ցերեկով կատարվող այդ կողոպուտից կատաղած՝ հարձակվեց Պավկայի վրա, բայց սա մի քայլ ետ թռավ և սվինն առաջ մեկնելով՝ գոչեց.

— Հեռու կաց, թե չէ փորդ կխոթեմ։

Տղան զայրույթից լաց եղավ և անզոր չարությամբ հայհոյելով ետ վազեց, իսկ Պավկան ձեռք բերածով գոհ՝ սլացավ տուն։ Ցանկապատի վրայով ցատկեց, ներս վազեց ցախաուն, հրացանը տեղավորեց առատաղի դերանների արանքում և, ուրախ սուլելով՝ մտավ տուն։

Գեղեցիկ են Ուկրաինայի ամռան երեկոներն այնպիսի փոքրիկ քաղաք-ավաններում, ինչպիսին Շեպետովկան է, որտեղ միջին մասը քաղաք է, իսկ ծայրամասերը՝ գյուղեր։

Այդպիսի խաղաղ ամառային երեկոներին ամբողջ երիտասարդությունը փողոցում է լինում։ Աղջիկները, տղաները, բոլորն իրենց արտասանդուղքների մոտ, այգիներում, պարտեզներում, ուղղակի փողոցում՝ շենքի համար թափած գերանների վրա են՝ խմբերով կամ զույգերով։ Հնչում են ծիծաղն ու երգը։

Օդը դողում է խտությունից ու ծաղիկների բուրմունքից։ Երկնքի խորքում լուսատտիկների նման հազիվ փայլփլում են աստղերը, և ձայները լսելի են հեռո՛ւ, հեռո՛ւ...

Պավկան սիրում է իր հարմոնը։ Սիրով է դնում իր ծնկանը երդեցիկ, երկշարք, վիեննական հարմոնը։ Ճարպիկ են մատները՝ հազիվ են դիպչում ստեղներին ու արագ վազում են վերևից ներքև։ Հառաչում են բասերը, և հարմոնից հորդում է կրակոտ, գեղգեղուն եղանակը...

Գայարվում է հարմոնը, ու էլ ինչպե՞ս պարի մեջ չնետվես։ Չես համբերի, ոտքերդ իրենք իրենց են շարժվում։ Կրակ է թափում հարմոնը. ի՞նչ լավ է ապրել աշխարհում...

Այսօր երեկոյան հատկապես ուրախ էր։ Այն տան մոտ, ուր ապրում էր Պավկան, գերանների վրա հավաքվել էր ծիծաղկոտ երիտասարդություն, իսկ ամենից ղիլ ծիծաղում էր Գալոչկան՝ Պավկայի հարևանուհին։ Քարտաշի աղջիկը սիրում է տղաների հետ պարել, երգել։ Նրա ձայնը կրծքային, թավշի պես փափուկ ալտ է։

Պավկան վախենում է նրանից։ Սուր լեզու ունի։ Նստում է գերանների վրա, Պավկայի կողքին, պինդ գրկում է նրան ու քրքջում.

— Ա՜խ դու, կտրիճ հարմոնիստ։ Ափսո՜ս, մի քիչ փոքր ես, թե չէ ինձ համար լավ մարդ կլիներիր։ Սիրում եմ հարմոնիստներին, սիրտս հալվում է նրանց առաջ։

Պավկան կարմրում է մինչև մազարմատները, լավ է դեռ, որ երեկո է, չի երևում։ Ետ է քաշվում երես առածից, իսկ սա նրան ամուր է բռնել, չի թողնում։

— Դե, սիրելի՛ս, ո՞ւր ես փախչում։ Այ քեզ փեսացո՜ւ,— կատակում է նա։

Պավկան զգում է իր ուսին հենված նրա պիրկ կուրծքը և դրանից մի տեսակ անհանգստություն, հուզմունք է տիրում նրան, իսկ շուրջը ծիծաղն է վրդովում սովորաբար խաղաղ փողոցը։

Պավկան ձեռքով հրում է Գալոչկայի ուսն ու ասում.

— Խանգարում ես նվագել, դենը գնա։— Ու նորից պոռթկում են ծիծաղը, ծաղրը, կատակները։

Մեջ է ընկնում Մարուսյան.

— Պա՛վկա, մի տխուր բան նվագիր, որ մարդու հոգուն հասնի։

Դանդաղ ձգվում է հարմոնը, մատները շարժվում են մեղմիկ։ Եղանակը բոլորին ծանոթ է ու հարազատ։ Ամենից առաջ Գալինան է սկսում ձայնակցել։ Նրան հետևում են Մարուսյան և մյուսները.

Բուլվարներն են հավաքվել
Ձայրենի խրճիթում,
Եվ ի՞նչ լավ է այստեղ,
Ի՞նչ հաճելի է այստեղ,
Մեր բախտն ենք մենք երգում...

Ու երգողների զիլ, ջահել ձայները գնում են հեռու, դեպի անտառը։

— Պավկա՛։— Դա Արտյոմի ձայնն է։

Պավկան փակում է հարմոնը, փոկերն ամրացնում։

— Կանչում են, ես գնացի։

Մարուսյան ասում է աղերսանքով.

— Մի քիչ էլ նստիր, էլի նվագիր. տունը չի փախչի։

Բայց Պավկան շտապում է։

— Ո՛չ։ Վաղն էլի կնվագենք, իսկ հիմա պետք է գնալ։ Արտյոմը կանչում է,— ու փողոցի մեջտեղով վազում է տուն։

Սենյակի դուռը բանալով՝ տեսնում է, որ սեղանի մոտ նստած են Արտյոմի ընկեր Ռոմանովը և մի երրորդը՝ անծանոթ մի մարդ։

— Ինձ կանչեցի՞ր,— հարցնում է Պավկան։

Արտյոմը գլխով արեց Պավկային և դարձավ անծանոթին.

— Ա՛յ, հենց սա է եղբայրս։

Սա Պավկային մեկնեց իր կոշտացած ձեռքը։

— Այ թե ինչ, Պավկա,— դիմեց Արտյոմը եղբորը։— Ասում ես՝ ձեր էլեկտրականի մոնտյորը հիվանդացե՞լ է։ Վաղն իմացիր՝ արդյոք նրա տեղը այդ գործն իմացող մարդ չե՞ն ընդունի։ Եթե հարկավոր է, ապա կգաս ու կասես։

Անծանոթը մեջ մտավ։

— Ոչ, ես նրա հետ միասին կգնամ։ Ինքս էլ տիրոջ հետ կխոսեմ։

— Իհարկե, հարկավոր է։ Չէ՞ որ էսօր կայանը չաշխատեց, որովհետև Ստանկովիչը հիվանդացել է։ Տերը երկու անգամ ներս վազեց. շարունակ մարդ էր փնտրում, որ նրան փոխարինի, բայց չգտավ։ Իսկ կայանը մեծայն հնոցապանի օգնությամբ աշխատեցնել չկարողացավ։ Մոնտյորը տիֆով է հիվանդացել։

— Դե, ահա և գործը պրոբլեմ եկավ,— ասաց անծանոթը։— Վաղը ես կգամ քո հետևից ու միասին կգնանք,— դիմեց նա Պավկային։

— Լավ։

Պավկան հանդիպեց անծանոթի մոխրագույն ու հանգիստ աչքերին, որոնք ուշադիր ուսումնասիրում էին իրենց։ Համառ, անթարթ հայացքը մի քիչ շփոթեցրեց Պավկային։ Վերևից ներքև կոճկած գորշ պիջակը խիստ ձգված էր լայն ու ամուր թիկունքին, երևում է, որ նեղ է տիրոջ համար։ Ուսերը գլխին էր միացնում ամուր, եղան վզի նմանող պարանոցը։ Իսկ ինքն ամբողջապես հագեցած էր ուժով, ինչպես հին հաստաբուն կաղնի։

Հրաժեշտ տալիս Արտյոմն ասաց.

— Առայժմ հաջողություն, ժուխրա՛յ։ Վաղը եղբորս հետ կգնաս և ամբողջ գործը կկարգավորես։

Գերմանացիները քաղաք մտան ջոկատի հետևանքով երեք օր հետո։ Նրանց ժամանելու մասին հաղորդեց կայարանի շոգեքարշի սուլիչը, կայարանի, որ վերջին օրերս որբացել էր։ Քաղաքով մեկ տարածվեց լուրը.

— Գերմանացիներն են գալիս։

Ու քաղաքը գրգռված մրջնանոցի նման իրար անցավ, թեև վաղուց գիտեին, որ գերմանացիները պիտի գան։ Բայց դրան մի տեսակ քիչ էին հավատում։ Եվ ահա այդ սարսափելի գերմանացիները ոչ թե ինչ-որ մի տեղ առաջ են շարժվում, այլ արդեն այստեղ են, քաղաքում։

Բոլոր բնակիչները կպան ցանկապատերին, վանդակաձևերին։ Փողոց դուրս գալուց վախենում էին։

Իսկ գերմանացիները քայլում էին ճանապարհի երկու կողմով շղթա կազմած՝ աղատ թողնելով խճուղին։ Նրանք մուգ կանաչ համազգեստով էին, հրացանները՝ հորիզոնական դիրքով մեկնած։ Հրացանների վրա դանակի նման լայն սուրիներ կային։ Գլխներին դրել էին ծանր, պողպատե սաղավարտներ։ Թիկունքներին՝ ահագին պայուսակներ։ Ու նրանք կայարանից քաղաք էին գալիս անվերջ շարքով՝ ժապավենի պես, գալիս էին զրահատ, ամեն բոպե պատրաստ դիմադրության, թեև ոչ ոք չէր էլ մտածում դիմադրության ցույց տալու մասին։

Առջևից քայլում էին երկու սպա՝ մատուցողները ձեռքներին։ Խճուղու մեջտեղով քայլում էր հետամնացական ավագը, ոտրաթնական կապույտ ժապանով և փափախով։ Նա թարգմանի դեր էր կատարում։

Գերմանացիները հավաքվեցին հրապարակի քաղաքապետարանում, քաղաքի կենտրոնում։ Թմբուկ խփեցին։ Համարձակություն ստացած քաղաքացիների մի փոքրիկ ամբոխ հավաքվեց։ Ժապան հագած հետամնացականը բարձրացավ դեղատան արտասանդուղքը և բարձրաձայն կարդաց արտաքին՝ մայոր Կորֆի, հրամանը։

Հրամանն ասում էր.

Հրամայում եմ.

§ 1

Քաղաքի բոլոր քաղաքացիներին՝ 24 ժամվա ընթացքում հանձնել իրենց ունեցած հրազենը և ատաղձները։ Այս հրամանը չկատարելու դեպքում՝ դնդակահարություն։

§ 2

Քաղաքում հայտարարվում է զինվորական դրություն և երեկոյան ժամը 8-ից հետո շրջելն արգելվում է։

Քաղաքի պարետ՝ մայոր Կորֆ

Այն տանը, ուր առաջ քաղաքային վարչությունն էր, իսկ հեղափոխությունից հետո տեղավորված էր բանվորական դեպուտատների սովետը, բնակություն հաստատեց գերմանական պարետությունը։ Արտասանդուղքի մոտ կանգնած պահակն արդեն ոչ թե պողպատե սաղավարտով էր, այլ զորահանդեսային կասկայով, վիթխարի կայսերական արծիվը վրան։ Հենց այդտեղ էլ՝ բակում, դարսում էին հանձնվող զենքը։

Գնդակահարության սպառնալիքից վախեցած բնակիչներն ամբողջ օրը զենք էին կրում։ Հասակավորները չէին երևում։ Զենքը բերում էին երիտասարդներն ու փոքր տղաները։ Գերմանացիները ոչ ոքի չէին պահում։

Նրանք, ովքեր չէին ուզում տանել, գիշերը զենքերը շպրտում էին ուղղակի խճուղու վրա, և առավոտը գերմանական պահակախումբը հավաքում էր, դարսում սայլի մեջ և տանում պարետատուն։

Ցերեկվա ժամը 1-ին, երբ զենք հանձնելու ժամկետը լրացավ, գերմանական զինվորները հաշվեցին իրենց ավարը։ Հանձնված էր տասնչորս հազար հրացան։ Այսպիսով վեց հազար հրացան գերմանացիները ետ չստացան։ Նրանց կատարած ընդհանուր խուզարկությունը շատ աննշան արդյունք տվեց։

Հաջորդ օրվա լուսաբացին, քաղաքից հեռու, հրեական հին գերեզմանատան մոտ, գնդակահարեցին երկու երկաթուղային բանվորի, որոնց մոտ խուզարկության ժամանակ թաքցրած հրացան էին գտել։

Արտյոմը, հրամանը լսելով, շտապեց տուն։ Բակում նա պատահեց Պավկային, բռնեց նրա ուսից և հանգիստ, բայց հաստատուն ձայնով հարցրեց.

— Պահեստից որևէ բան բերե՞լ ես տուն։

Պավկան ուզում էր լռել հրացանի մասին, բայց եղբորը խաբել չկամեցավ և ամեն ինչ պատմեց։

Միասին գնացին փայտանոցը։ Արտյոմը գերանների ետևանքում դրած հրացանն իջեցրեց, փակաղակը և սվինը հանեց, ապա հրացանի փողից բռնելով՝ ամբողջ ուժով զարկեց ցանկապատի սյանը։ Խզակոթը ցրիվ եկավ։ Հրացանի մնացորդները շպրտվեցին պարտեզի հետևի ամայի վայրը։ Սվինն ու փակաղակը Արտյոմը գցեց արտաքնոցը։

Այս բոլորը կատարելուց հետո Արտյոմը շուռ եկավ դեպի եղբայրը.

— Դու արդեն փոքրիկ չես, Պա՛վկա, հասկանում ես, որ զենքի հետ խաղալ պետք չէ։ Ես քեզ լուրջ եմ ասում՝ ոչինչ չբերես տուն։ Դու գիտես, որ հիմա դրա համար կյանքով կարող ես վճարել։ Տե՛ս, ինձ չխաբես, թե չէ կբերես, կգտնեն ու առաջինն ինձ կգնդակահարեն։ Քեզ, փսլնքոտիդ, ձեռք չեն տա։ Շան ժամանակ է հիմա, հասկանո՞ւմ ես։

Պավկան խոստացավ ոչինչ չբերել։

Երբ երկուսը միասին բակի միջով տուն էին գնում, Լեշչինսկիների դռան մոտ մի կառք կանգնեց։ Այնտեղից իջան փաստաբանը, կինը և նրանց զավակները՝ Նելլին ու Վիկտորը։

— Թռչունները վերադարձան։ Ա՜խ, այ թե խառնաշփոթություն կսկսվի, շան բաժին կդառնա ամեն ինչ,— չարությամբ ասաց Արտյոմը և մտավ տուն։

Ամբողջ օրը Պավկան թախծում էր հրացանի համար։ Այդ նույն ժամանակ նրա բարեկամ Սերյոժկան, ինչքան ուժ ուներ, աշխատում էր հին, աչքաթող արված փայտանոցում. պատի տակ բահով փորում էր գետինը։ Վերջապես փոսը պատրաստ էր։ Սերյոժկան փալասների մեջ փաթաթված երեք բոլորովին նոր հրացանները, որ նա ձեռք էր բերել զենքը բաժանելու ժամանակ, դրեց այնտեղ։ Գերմանացիներին հանձնել չէր ցանկանում. դրա համար չէր ամբողջ գիշերը չարչարվել, որպեսզի իր ավարից բաժանվի։

Փոսը հողով լցնելով՝ նա հողը լավ ամրացրեց, հավասարեցրեց, ապա նրա վրա մի ամբողջ կույտ աղբ ու հին ցնցոտիներ լցրեց. քննադատաբար զննելով իր աշխատանքի արդյունքն ու գոհացուցիչ գտնելով այն՝ գլխարկը գլխից վերցրեց և սրբեց ճակատի քրտինքը։

«Դե, հիմա թող փնտրեն։ Իսկ եթե գտնեն, ապա ո՞ւմ փայտանոցն է, հայտնի չէ»։

Պավկան աննկատ կերպով մտերմացավ խստաբարո

մենայորի հետ, որն արդեն մի ամիս էր, ինչ աշխատում էր էլեկտրակայանում։

Ժուխրայը հնոցապանի օգնականին ցույց էր տալիս դինամոյի կազմությունը և վարժեցնում էր աշխատանքին։

Խելացի տղան դուր եկավ նավաստուն։ Ժուխրայը հաճախ ազատ օրերին գալիս էր Արտյոմի մոտ։

Խոհուն և լուրջ նավաստին համբերությամբ լսում էր նրա բոլոր պատմությունները օր ու ապրուստի մասին, մանավանդ երբ մայրը գանգատվում էր Պավկայի չարաճճիությունների։ Նա այնպես հանգստացուցիչ ազդել գիտեր Մարիա Յակովլևնայի վրա, որ սա մոռանում էր իր ձախորդությունները և աշխուժանում էր։

Մի անգամ Ժուխրայը Պավկային կանգնեցրեց էլեկտրակայանի բակում, փայտերի դարսակների արանքում և ժպտալով ասաց.

— Մայրդ պատմում է, որ կռվել սիրում ես։ «Նա,— ասում է,— աքլորի պես կռվարար է»,— Ժուխրայը խրախուսանքով ծիծաղեց։— Կռվելն ընդհանրապես վնաս չէ, բայց պետք է իմանալ ում խփել և ինչի համար։

Պավկան չհասկացավ՝ Ժուխրայը ծիծաղում է իր վրա, թե լուրջ է ասում, բայց պատասխանեց.

— Ես իզուր տեղը չեմ կռվում, միշտ արդարության համար։

Ժուխրայը հանկարծ առաջարկեց.

— Ուզո՞ւմ ես, ես քեզ կռվարարեցնեմ իսկական կռվի ձևով։

Պավկան զարմանքով նայեց նրան։

— Ինչպե՞ս թե իսկական կռվի։

— Ա՛յ, կտեսնես։

Ու Պավկան լսեց անգլիական բոքսի մասին առաջին համառոտ դասախոսությունը։

Հեշտ չէր այդ գիտությունը Պավկայի համար, բայց նա հիանալի յուրացրեց այն։ Շատ անգամ էր նա գլուխկոնծի տալիս Ժուխրայի բռունցքի հարվածից, բայց ջանասեր ու համբերատար աշակերտ դուրս եկավ։

Մի շոգ օր Պավկան կլիմկայի մոտից գալով՝ սենյակում դեսուդեն արեց և, ոչ մի զբաղմունք չգտնելով՝ որոշեց

բարձրանալ իր սիրած տեղը՝ տան հետևը, պարտեզի անկյունում կանգնած պահատնակի կտուրը։ Նա անցավ բակի միջով, մտավ պարտեզ և հասնելով տախտակից շինած փայտանոցին՝ ցցվածքներով մագլցեց կտուրը։ Անցնելով փայտանոցի վրա թեքված բալենիների խիտ ճյուղերի միջով՝ դուրս եկավ տանիքի մեջտեղը և պառկեց արևի տակ։

Մի կողմով պահատնակը նայում էր Լեշչինսկիների պարտեզը, և եթե կանգնեիր կտուրի ծայրին՝ նրանց ամբողջ սպին և տան մի կողմը կերևային։ Պավկան գլուխը բարձրացրեց ցցվածքից և տեսավ բակի մի մասը, այնտեղ կանգնած ֆաետոնը։ Երևում էր, թե ինչպես Լեշչինսկիների բնակարանում տեղավորված գերմանական ապայի սպասյակը խանդավառությամբ մաքրում էր իր պետի իրերը։ Պավկան շատ անգամ էր տեսել ապային տան դուռն մոտ։

Սպան կարճահասակ էր, կարմրաթուշ, փոքրիկ, ծայրերը կորած բեղիկներով, աչքերին պենսնե և գլխին լաբն հոլարով գլխարկ։ Պավկան գիտեր, որ լեյտենանտը բնակվում է կողքի սենյակում, որի լուսամուտը նայում է պարտեզ և կտուրից երևում է։

Այժմ սպան նստած էր սեղանի մոտ և ինչ-որ բան էր գրում, հետո գրածը վերցրեց ու դուրս եկավ։ Նամակը հանձնելով սպասավորին՝ նա պարտեզի ծառուղիով գնաց դեպի այն դռնակը, որ տանում էր փողոց։ Ճյուղերից հյուսված տաղավարի մոտ լեյտենանտը կանգ առավ, ըստ երևույթին խոսում էր մեկի հետ։ Տաղավարից դուրս եկավ Նելլի Լեշչինսկայան։ Թեռանցուկ անելով նրան՝ սպան նրա հետ գնաց դեպի դռնակը, և երկուսն էլ փողոց դուրս եկան։

Պավկան դիտում էր այս բոլորը։ Նա արդեն ուզում էր քնել, երբ տեսավ, որ սենյակ մտավ սպասյակը, որը սպայի համազգեստը կախեց կախարանից, բաց արեց դեպի այգին նայող պատուհանը և սենյակը հավաքելով դուրս եկավ ու դուռն իր հետևից փակեց։ Անմիջապես հետո Պավկան նրան տեսավ ախոռատան մոտ, ուր կանգնած էին ձիերը։

Բաց լուսամուտից Պավկան շատ լավ տեսնում էր ամբողջ սենյակը։ Սեղանի վրա լցված էին ուսապոկեր և էլի ինչ-որ փայլուն բան։

Անդուստ հետաքրքրությունից դրդված՝ Պավկան տանիքից

կամացուկ սողաց կեռասենու բնի վրա և իջավ Լեշչինսկիների պարտեզը։ Կռացած՝ նա մի քանի ոստյունով հասավ բաց լուսամուտին և նայեց սենյակի ներսը։ Սեղանի վրա ընկած էին մի գոտի՝ ուսերակալով, և մի սքանչելի տասներկու փամփուշտ վերցնող «մանլիխյոր» սիստեմի ատրճանակ՝ իր պատյանով։

Պավկայի շունչը կտրվեց։ Մի քանի վայրկյան նրա մեջ պայքար էր գնում, բայց խիզախ հանդգնությամբ տարված՝ ետ ձգվեց, վերցրեց պատյանը և նրա միջից հանելով նոր, սևաթույր ատրճանակը, ցատկեց պարտեզ։ Շուրջը նայելով, ատրճանակը զգուշությամբ խոթեց գրպանը և պարտեզի միջով նետվեց դեպի կեռասենին։ Կապկի նման արագ մագլցելով տանիքը՝ Պավկան ետ նայեց։ Սպասյակը հանգիստ զրուցում էր ձիապանի հետ։ Պարտեզում խաղաղ էր... Նա իջավ փայտանոցից և սլացավ տուն։

Մայրը խոհանոցում զբաղված էր ճաշ պատրաստելով և Պավկայի վրա ուշադրություն չդարձրեց։

Սնդուկի ետևը ընկած փալասը վերցնելով՝ Պավկան այն խոթեց գրպանը, աննկատելի կերպով դուրս սողաց դռնից, վազելով անցավ պարտեզը, ցատկեց ցանկապատի վրայով և դուրս եկավ դեպի անտառը տանող ճանապարհը։ Ձեռքով բռնելով ծանրորեն ոտքին խփվող ատրճանակը՝ ինչքան ուժ ուներ սլացավ դեպի հին, ավերված աղյուսի գործարանը։

Ոտքերը հազիվ էին գետնին կպչում, ականջներում քամին էր սուլում։

Աղյուսի հին գործարանի մոտ խաղաղ էր։ Տեղ-տեղ քանդված փայտե տանիքը, ջարդված աղյուսի կույտերը և ավերված հնոցները թախիծ էին առաջացնում։ Ամենուրեք մոլախոտ էր աճել։ Միայն երեք ընկերներն էին երբեմն հավաքվում այստեղ խաղալու։ Պավկան շատ գաղտնի տեղեր գիտեր, ուր կարելի է թաքցնել գողացած գանձը։

Վառարանի ճեղքվածքը մտնելով՝ նա զգուշաբեն շուրջը նայեց, բայց ճանապարհը դատարկ էր։ Սոճիներն էին հանգիստ աղմկում, թեթև քամին պտտեցնում էր ճանապարհի փոշին։ Խեժի հոտ էր գալիս։

Փալասի մեջ փաթաթած ատրճանակը Պավկան դրեց վառարանի հատակի մի անկյունում, ծածկեց հին աղյուսների մի փոքրիկ բուրգով։ Այնտեղից դուրս գալով՝ նա հին վառարանի մուտքը փակեց աղյուսներով, աղյուսների դասավորման մեջ նշան արեց և դուրս գալով՝ ճանապարհով դանդաղ վերադարձավ։

Ծնկները մի քիչ դողում էին։

«Ինչո՞վ կվերջանա այս բոլորը»,— մտածում էր նա, և սիրտը մի տեսակ տագնապով կծկվում էր։

Էլեկտրական գնաց ժամանակից շուտ, միայն թե տանը չլինի։ Պահակից վերցրեց բանալին և բացեց լայն դուռը, որ տանում էր դեպի այն շենքը, ուր դրված էին շարժիչները։ Ու մինչ մաքրում էր սնդուն, կաթսայի մեջ ջուր էր քաշում և վառում էր հնոցը, մտածում էր.

«Հիմա ի՞նչ է կատարվում Լեշչինսկիների ամառանոցում»։

Շատ ուշ, ժամը տասնմեկին, Պավկայի մոտ մտավ Ժուխրայը, նրան կանչեց բակ և ցածր ձայնով հարցրեց.

— Այսօր ինչո՞ւ են ձեր տունը խուզարկել։

Պավկան վախեցած ցնցվեց.

— Ինչպե՞ս թե խուզարկել։

Ժուխրայը մի պահ լռեց ու ավելացրեց.

— Դե, կարևոր բան չէ։ Դու չգիտե՞ս, թե նրանք ինչ էին փնտրում։

Պավկան լավ գիտեր, թե ինչ էին փնտրում, բայց ատրճանակը գողանալու մասին Ժուխրային չուզեց պատմել։ Տագնապահար ցնցվելով, նա հարցրեց.

— Արտյոմին ձերբակալե՞լ են։

— Ոչ ոքի չեն ձերբակալել, բայց տանն ամեն ինչ տակնուվրա են արել։

Այս խոսքերը նրան մի քիչ թեթևություն բերին, բայց տագնապը չէր անցնում։ Մի քանի րոպե ամեն մեկն իր մտքով էր տարված։ Նրանցից մեկը խուզարկության պատճառն իմանալով՝ անհանգստանում էր հետևանքների համար, մյուսը չգիտեր և դրա համար էր լարված։

«Գրողը դրանց տանի, գուցե իմ մասին մի բա՞ն են իմացել։ Իմ մասին Արտյոմը ոչինչ չգիտե, իսկ ինչո՞ւ պետք է

նրանց տանը խուզարկություն լիներ։ Ավելի զգույշ պետք է լիներ»,— մտածում էր ժուխրայը։

Լուռ բաժանվեցին և ամեն մեկն ուղղվել իր աշխատանքին։

Իսկ կալվածատանը մեծ իրարանցում էր։

Տեսնելով, որ ատրճանակը չկա, ոստան կանչեց սպասյակին. իմանալով, որ ատրճանակը կորել է, նա, որ սովորաբար քաղաքավարի ու զուսպ մարդ էր, ամբողջ թափով հարվածեց սպասյակի ականջին։ Սա հարվածից ճոճվեց, բայց լարի նման ձգված կանգնեց և մեղավոր տխրությամբ աչքերը թարթելով՝ հլու սպասում էր, թե ինչ է լինելու հետո։

Բացատրության համար կանչված փուստաբանը նույնպես վրդովվեց և ներողություն խնդրեց ասելով, որ իր տանն այդպիսի անախորժ դեպք է պատահել։

Այստեղ ներկա եղող Վիկտոր Լեշչինսկին հորն ասաց, թե ատրճանակը կարող էին գողանալ հարևանները, հատկապես խուլիգան Պավել Կորշագինը։ Հայրը որդու միտքն շտապ սկսեց բացատրել ոստիկանին, և սա անմիջապես կարգադրություն արեց, որ զինախումբը գա խուզարկության համար։

Խուզարկությունը ոչ մի արդյունք չտվեց։ Ատրճանակի կորչելու դեպքը Պավլային համոզեց, որ նույնիսկ այդպիսի հանդուգն ձեռնարկումները երբեմն բարեհաջող են վերջանում։

ՍԱՐՈՐ ԳԼՈՒԽ

Տոնյան կանգնած էր բաց պատուհանի մոտ։ Նա ձանձրույթով նայում էր ծանոթ ու հարազատ այգուն, այգին շրջապատող բարձր ու սլացիկ բարդիներին, որ դողում էին թեթև քամուց։ Ու հոգնատանջը չէր գալիս, որ մի ամբողջ տարի նա չի տեսել հարազատ տունն ընտանիքը։ Նրան թվում էր, որ հենց երեկ է նա թողել այս բոլորը, մանկությունից ծանոթ տեղերը և վերադարձել է այսօր առավոտյան գնացքով։

Այստեղ ոչինչ չէր փոխվել. կանոնավոր խուզված թփերի նույն շարքերը, երկրաչափորեն գծված նույն շավիղները,

որոնց եզրերին՝ մայրիկի սիրած հնգատերև մանուշակը։ Այգում ամեն ինչ մաքուր է և կանոնավոր։ Ամեն տեղ երևում է գիտնական անտառագետի քծարանքը ձեռքը։ Ու Տոնյային տաղտուկ են բերում մաքրած, գծագրված այս շավիղները։

Տոնյան վերցրեց կիսատ թողած վեպը, բացեց պատշգամբի դուռը, ասանդուղքով իջավ այգին, հրեց փայտիկ նիրկած դռնակը և դանդաղ գնաց գեպի ջրհան կայանի մատի լճակը։

Կամրջակն ասոցնելով՝ նա դուրս եկավ ճանապարհը։ Ճանապարհը ծառուղու նման էր։ Աջ կողմը ուռենիներով փակուած լիճն էր։ Ձախ կողմից սկսվում էր անտառը։

Նա ուզում էր գնալ դեպի լիճը, դեպի հին քարհանքերը, բայց նկատելով ներքևում լիճը նետվող կարմիր՝ կանգ առավ։

Թեքվելով՝ նա ձեռքով նա տարավ ծուռ ուռենու ճյուղերը և տեսավ արևառ դեմքով, բոբիկ և շապիկը ծնկներից վեր ծալած մի պատանու։ Կողքին դրած էր արդեն լի մի ժանդոտ ցինկե տուփ։ Պատանին տարված էր իր գործով և Տոնյայի ներսումը հայացքը չէր նկատում։

— Այստեղ մի՞թե հնարավոր է ձուկ բռնել։

Պավլան բարկացած հետ նայեց։

Ուռենուց բռնած՝ ջրի վրա էր կռացել մի ութամյա աղջիկ։ Նա հագել էր կապույտ շերտավոր ծալիք ունեցող սպիտակ մատրոսկա և բաց մոխրագույն կարճ յուբկա։ Գրգռավոր կարճ գուլպանները ոտքերի վրա էին բարձրացրել տրեսաս ոտքերը։ Կիսակոշիկները դարձնագույն էին։ Շագանակագույն մազերը ծանր հյուսքով էին հավաքված։

Կարթը բռնած ձեռքը թեթևակի ցնցվեց, ասես փնտրելիս շինած կարթաբլթանիկը գլխով ուրախ, և նրա մատից հարթ մակերևույթը հուզող ջրի օղակներ վազեցին ամեն կողմ։

Իսկ թեթևանքից նույն հուզված ձայնն էր լսվում.

— Ձուկն ընկել է, տեսե՛ք, ընկել է...

Պավելը բոլորովին շփոթվեց, կարթը ձիգ ավեց։ Ջրի ցայտերի հետ գուրս քաշեց կարթի վրա պատռված ոլորը։

«Հիմա լավ որս կանես, ա՛յ, ո՞ր սատանան բերեց սրան»,— զգրգռված մտածում էր Պավլան և որպեսզի իր շփոթությունը թաքցնի, կարթը ավելի հեռու գցեց, երկու կատ-

տուկների մեջ, հենց այնտեղ, որտեղ չպետք է գցեր, կեռը կարող էր արմատների կառչել։

Գլխի ընկավ և առանց շրջվելու ֆշշաց վերևում նստած աղջկա կողմը.

— Ի՞նչ եք գոռգոռում։ Էդ հո բոլոր ձկները կփախչեն։

Ու վերևից լսեց հեգնող, ծաղրող պատասխանը.

— Նրանք վաղուց արդեն փախել են հենց միայն ձեր տեսքից։ Ցերեկը ձուկ կբռնե՞ն։ Է՛խ դուք, վայ-ձկնորս։

Սա արդեն չափից ավելի էր վայելչություն պահպանել ցանկացող Պավկայի համար։ Նա վեր կացավ և գլխարկն աչքերը քաշելով, մի բան, որ նրա մոտ միշտ չարության նշան էր, ասաց, ընտրելով ամենաքաղաքավարի բառերը.

— Դուք գուցե մի կողմի վրա կշուլալվեի՞ք, օրիո՛րդ։

Ցոնյայի աչքերը թեթևակի նեղացան, փայլատակեցին մի վայրկյան առկայծող ժպտից։

— Մի՞թե ես ձեզ խանգարում եմ։

Նրա ձայնի մեջ արդեն հեգնանք չկար, այլ ինչ-որ բարեկամական, հաշտեցնող բան, և Պավկան, որ պատրաստվում էր կոպտել սատանան գիտե թե որտեղից հայտնված այդ «օրիորդին», դինաթափ եղավ։

— Լավ, ինչ արած, թե որ ուզում եք, նայեցեք։ Ես տեղը չեմ ափսոսում,— համաձայնեց նա և նստելով՝ նորից նայեց կարթախցանին։ Վերջինս կպել էր կռատուկին, և պարզ էր, որ կեռը կառչել էր արմատից։ Պավկան չէր համարձակվում այն քաշել։

«Եթե դեմ է առել, էլ պոկել չես կարող։ Իսկ սա, իհարկե, կծիծաղի։ Գոնե գնար»,— մտածում էր նա։

Իսկ Ցոնյան ավելի հարմար նստելով մի քիչ ճոճվող կեռ ուռենու վրա՝ գիրքը դրեց ծնկներին և սկսեց դիտել այդ արևավառ, սևաչյա, կոպիտ տղային, որ այնպես անբարեհամբույր դիմավորեց իրեն և այժմ էլ դիտմամբ իր վրա ուշադրություն չի դարձնում։

Հայելանման ջրում Պավկան շատ լավ է տեսնում նստած աղջկա արտացոլումը։ Աղջիկը կարդում է, իսկ Պավկան կամացուկ ձգում է կարթաթելը։ Կարթախցանը սուզվում է, կարթաթելը դեմ է ընկնում, ձգում։

«Դեմ է առել անիծվածը»,— անցնում է նրա մտքով, իսկ թեք հայացքով ջրի մեջ տեսնում է ծիծաղող դնչիկը։

Ջրհանի մոտի կամրջակով երկու երիտասարդներ անցան։ Դրանք յոթերորդ դասարանցի գիմնազիստներ են։ Մեկը դեպոյի պետին՝ ինժեներ Սուխարկոյի որդին է, մի շատ շեկ, պեպենոտ տասնյոթամյա ավարա ու ստահակ, չեչոտ Շուրկան, ինչպես կոչում էին նրան դպրոցում։ Նրա ձեռքին մի լավ կարթ կար, բերանին կտրիճորեն ծամծմած ծխախոտ։ Կողքինը Վիկտոր Լեշչինսկին էր, մի բարեկազմ, փափկասուն պատանի։

Սուխարկոն, դեպի Վիկտորը կռացած, աչքով անելով, ասում էր.

— Շատ լավիկն է, այստեղ նրա նման ուրիշը չկա։ Հավատացնում եմ, ռո-ման-տիկ անձնավորություն է։ Սովորում է Կիևում՝ վեցերորդ դասարանում և ամռանը հոր մոտ է եկել։ Հայրն այստեղի գլխավոր անտառապետն է։ Աղջիկը ծանոթ է իմ քրոջ՝ Լիզայի հետ։ Մի անգամ ես նրան մի նամակ ուղարկեցի, այնպես, գիտես, էլի, վերամբարձ ոգով, իբր խելագարի պես սիրահարված եմ և սրտի դողով սպասում եմ ձեր պատասխանին։ Եվ նույնիսկ Նադսոնից էլ համապատասխան մի ոտանավոր խզբզեցի։

— Լավ, իսկ հետո՞,— հետաքրքրությամբ հարցրեց Վիկտորը։

Սուխարկոն ասաց մի քիչ շփոթված տեսքով.

— Կոտրատվում է, գիտես, նազ է անում։ Թուղթ մի փշացնի, ասում է։ Բայց դե սկզբում միշտ այդպես է լինում։ Ես այդ գործերում փորձված աղվես եմ։ Գիտես, քարշ գալու գլուխ չկա, հետամտիր, ջուր ծեծիր։ Շատ ավելի լավ է, երբ երեկոյան գնում ես նորոգման բարաքները և երեք ռուբլով այնպիսի մի գեղեցկուհի ես ընտրում, որ պառաղներդ կլիզես։ Եվ առանց կոտրատվելու։ Ես ու Վալկա Տիխոնովը գնացել ենք, դու Երկաթգծի վարպետին գիտե՞ս։

Վիկտորն արհամարհանքով կնճռոտվեց.

— Այդպիսի գարշելի բաներո՞վ ես զբաղվում, Շուրա։

Շուրան ծխախոտը ծամծմեց, թքեց և հեգնանքով ասաց.

— Սրան տես, թունդ մաքրասերն է։ Գիտենք, թե ինչով եք զբաղվում...

Նրան ընդհատելով, Վիկտորը հարցրեց.

— Ուրեմն խած հետ նրան կծանոթացնե՞ս։

— Իհարկե, արագ գնանք, քանի դեռ չի գնացել։ Երեկ առավոտյան նա ինքն էր ձուկ որսում։

Ընկերներն արդեն մոտեցել էին Տոնյային։ Միախոտը բերանից հանելով՝ Սուխարկոն ագենտմոլի նման մեջքը խոնարհելով՝ ողջունեց։

— Բարև ձեզ, մարգարտագել Տուման՝նոփա։ Ինչ է, ձո՞ւկ եք որսում։

— Ո՛չ, դիտում եմ, թե ինչպես են որսում,— պատասխանեց Տոնյան։

— Իսկ դուք ծանոթ չե՞ք,— շտապեց Սուխարկոն՝ բռնելով Վիկտորի ձեռքից։— Իմ բարեկամն է, Վիկտոր Լեշչինսկին։

Վիկտորը շփոթված ձեռքը տվեց Տոնյային։

— Այսօր ինչո՞ւ չեք որսում,— աշխատում էր խոսակցությունն սկսել Սուխարկոն։

— Ես կարթ չեմ վերցրել,— պատասխանեց Տոնյան։

— Ես հիմա մենք էլ կբերեմ,— շտապեց Սուխարկոն։— Դուք առայժմ իմ կարթով որսացեք, իսկ ես հիմա կբերեմ։

Նա կատարել էր Վիկտորին տված խոսքը՝ ծանոթացրել էր Տոնյայի հետ և աշխատում էր նրանց երկուսին մենակ թողնել։

— Ո՛չ, մենք կխանգարենք։ Այստեղ արդեն որսում են,— պատասխանեց Տոնյան։

— Ո՞ւմ կխանգարենք,— հարցրեց Սուխարկոն։— Ա՜խ, որտե՞ղ։— Նա մի ոտքն այժմ նկատեց թփի մոտ նստած Պավկային։— Ես նրան մի վայրկյանում այստեղից կքշեմ։

Տոնյան նրան խանգարել չհաջողեց։ Սուխարկոն իջավ ներքև՝ Պավկայի մոտ։

— Անմիջապես կարթդ հանիր,— գոռաց նա Պավկային։— Դե, շո՛ւտ, շո՛ւտ,— ասաց նա՝ տեսնելով, որ Պավկան հանդիստ շարունակում է իր գործը։

Պավկան գլուխը բարձրացրեց և նայեց Սուխարկոյին մի հայացքով, որը ոչ մի լավ բան չէր խոստանում։

— Իսկ դու մի քիչ կամաց, ի՞նչ ես բերանդ շաղ տվել։

— Ի՞նչ,— քորոքվեց Սուխարկոն։— Դու դեռ խոսո՞ւմ էլ ես, քրջոտ թշվառական։ Կո-րի՛ր այստեղից,— և կոշիկի ծայրով ուժգին խփեց որդերի ամանին։ Ամանն օդ թռավ և ապա շրմփաց ջրի մեջ։ Ջրի ցայտերը թռան և դիպան Տոնյայի դեմքին։

— Սուխա՛ռկո, ինչպե՞ս չեք ամաչում,— գոչեց նա։

Պավկան վեր թռավ։ Նա գիտեր, որ Սուխարկոն դեպոյի պետի տղան է, դեպոյի, որտեղ աշխատում էր Արտյոմը, և եթե ինքն այժմ խփի այդ փափուկ, շեկակարմիր մռութին, ապա գիմնազիստը կգանգատվի հորը, և գործն անպայման կհասնի Արտյոմին։ Դա միակ պատճառն էր, որ զսպեց նրան և չթողեց, որ անհապաղ դատաստան տեսնի։

Զգալով, որ Պավկան հիմա իրեն կխփի, Սուխարկոն առաջ նետվեց և երկու ձեռքով հրեց ջրի ափին կանգնած Պավկային։ Սա թևերը թափահարեց, թեքվեց, բայց կարողացավ իրեն պահել և ջուրը չընկավ։

Սուխարկոն Պավկայից երկու տարով մեծ էր և առաջնակարգ կովարարի ու սկանդալիստի հռչակ ուներ։

Կրծքին հարված ստանալով՝ Պավկան ինքն իրենից դուրս եկավ։

— Ա՛խ, այդպե՞ս։ Դե ա՛ռ,— ու ձեռքի կտրուկ թափահարումով Սուխարկոյի դեմքին ծեփեց մի հարված։ Հետո ուշքի գալու ժամանակ չտալով՝ ամուր բռնեց գիմնազիստի համազգեստի բաճկոնից, ձգեց դեպի իրեն և քաշեց ավելց դեպի ջուրը։

Մինչև ծնկները ջրի մեջ կանգնած, թրջելով իր փայլուն կոշիկներն ու շալվարը՝ Սուխարկոն ամեն կերպ աշխատում էր դուրս պրծնել Պավկայի ամուր ձեռքերից։ Գիմնազիստին ջուրը հրելով՝ Պավկան ափ դուրս թռավ։

Կատաղած Սուխարկոն նետվեց Պավկայի հետևից՝ պատրաստ կտոր-կտոր անելու նրան։

Ափ թռչելով և արագ շրջվելով դեպի իր վրա գրոհող Սուխարկոն՝ Պավկան հիշեց.

«Հենվել ձախ ոտքին, աջը լարված է և մի քիչ ծալված։ Հարվածել ոչ մի այլ ձեռքով, այլև ամբողջ մարմնով, ներքևից վերև՝ կզակի տակ»։

Թրա՜խ...

Ատամները կափկափեցին։ Կզակի և կծած լեզվի սարսափելի ցավից կապկանձելով՝ Սուխարկոն անմիտ կերպով

թևերը թափահարեց և ծանրորեն, ամբողջ մարմնով շրմփաց ջրի մեջ։

Իսկ ափին անզուսպ ծիծաղում էր Տոնյան։

— Բռավո՜, բռավո՜,— բղավում էր նա ծափ տալով։— Հիանալի էր։

Շտապ վերցնելով կարթը՝ Պավկան ձիգ տվեց այն, կտրեց կառչած կարթաթելը և թռավ դեպի ճանապարհը։

Հեռանալիս լսեց, թե ինչպես Վիկտորն ասում էր Տոնյային.

— Դա ամենաթունդ խուլիգանն է, Պավկա Կորչագինը։

Կայարանն անհանդիստ էր դառնում։ Գծից լուրեր էին գալիս, թե երկաթուղայիններն սկսում են գործադուլ անել։ Հարևան մեծ կայարանում դեպոյի բանվորները այնպիսի՜ շիլափլավ սարքեցին... Գերմանացիք ձերբակալեցին երկու մեքենավարների՝ կասկածելով նրանց կոչեր բերելու մեջ։ Գյուղի հետ կապված բանվորների մեջ մեծ հուզումներ առաջացան. դրա պատճառը բռնագրավումները և կալվածատերերի՝ իրենց կալվածքները վերադառնալն էր։

Հետմանական պահնորդների մարակները նախշում էին գեղջկական թիկունքները։ Նահանգում ծավալվում էր պարտիզանական շարժումը։ Արդեն մինչև տասի էր հասնում բոլշևիկների կազմակերպած պարտիզանական ջոկատների թիվը։

Ժուխրայն այդ օրերին հանգիստ չուներ։ Այդ փոքրիկ քաղաքում գտնվելու ժամանակամիջոցում նա մեծ աշխատանք էր կատարել։ Նա ծանոթացել էր շատ երկաթուղային բանվորների հետ, եղել էր այն երեկույթներում, ուր երիտասարդությունն էր հավաքվում, և դեպոյի փականագործներից ու սղոցարանի բանվորներից մի հաստատուն խումբ էր ստեղծել։ Փորձել էր շոշափել նաև Արտյոմին։ Նրա այն հարցին, թե Արտյոմն ինչպես է նայում բոլշևիկների գործին ու կուսակցությանը, հաղթանդամ փականագործը պատասխանել էր.

— Գիտես, Ֆյո՜դոր, ես էդ կուսակցությունների հարցում

բան չեմ հասկանում։ Բայց եթե պետք լինի, միշտ պատրաստ եմ օգնել։ Ինձ վրա կարող ես հույս դնել։

Ֆյոդորը այդքանով էլ էր գոհ, նա գիտեր, որ Արտյոմը յուրային է և եթե մի բան ասաց, ուրեմն կանի։ Իսկ կուսակցության մեջ մտնելու գիտակցությանը մարդն, ըստ երևույթին, դեռ չի հասել։ «Ոչինչ, հիմա ժամանակներն այնպես են, որ շուտ գլխի կընկնի...»,— մտածում էր նավաստին։

Ֆյոդորը էլեկտրականից փոխադրվեց դեպոյում աշխատելու։ Այստեղ աշխատելն ավելի հարմար էր, էլեկտրականում նա երկաթուղուց կտրված էր։

Երկաթուղու վրա վիթխարի շարժում կար։ Գերմանացիք հազարավոր վագոններով Գերմանիա էին ուղարկում այն բոլորը, ինչ կողոպտում էին Ուկրաինայում՝ տարեկան, ցորեն, անասուն...

Կայարանում հետմանական պահնորդներն անսպասելի կերպով ձերբակալեցին հեռագրիչ Պոնոմարենկոյին։ Պարեպանոցում նրան դաժանորեն ծեծել էին, և նա, ըստ երևույթին, պատմել էր Ռոման Սիդորենկոյի՝ Արտյոմի դեպոյական ընկերոջ, ագիտացիայի մասին։

Աշխատանքի ժամին Ռոմանի հետևից եկան երկու գերմանացի և մի հետմանական՝ կայարանի պարետի օգնականը։ Մոտենալով այն դազգահին, որի մոտ աշխատում էր Ռոմանը, հետմանականը, առանց մի խոսք ասելու, մտրակով խփեց նրա դեմքին։

— Ե՛կ մեր ետևից, սրիկա՜։ Այնտեղ քեզ հետ ինչ-որ պետքն է, կլոսենք,— ասաց նա։ Եվ սարսափ ազդող տեսքով ատամները բացելով՝ քարշ տվեց փականագործին։— Այնտեղ մեզ մոտ ագիտացիա կանես։

Արտյոմը, որ աշխատում էր հարևան մամլակի վրա, խարտոցը նետեց և իր ահագին հասակով առաջանալով դեպի հետմանականը, զսպելով կուտակվող զայրույթը՝ խռպոտած ձայնով ասաց.

— Ինչպե՞ս ես համարձակվում խփել, սողո՜ւն։

Հետմանականը ետ-ետ գնաց և սկսեց արձակել ատրճանակի պատյանը։ Ցածրահասակ, կարճ ոտքերով գերմանացին ուսից ցած բերեց լայն սվինով ծանր հրացանը և փակաղակը չխկացրեց։

— Հա՛լտ,— հաչեց նա՝ պատրաստ կրակելու առաջին իսկ շարժման դեպքում։

Վիթխարի փակուանագործն անոգնական տեսքով կանգնած էր այդ նողկալի զինվորի առջև և որևէ բան անել անկարող էր։

Երկուսին էլ տարան։ Արտյոմին մի ժամ հետո թողնցին, իսկ Ռոմանին փակեցին բաղանիքի նկուղում։

Տասը թարմ հետո դեպոյում ոչ ոք չէր աշխատում։ Դեպոյականները հավաքվեցին կայարանի այգում։ Նրանց մեքենան սլաքավարները և նյութերի պահեստում աշխատող այլ բանվորներ։ Բոլորն էլ սաստիկ զրգռված էին։ Ինչ-որ մեկը կոչ գրեց՝ պահանջելով բաց թողնել Ռոմանին ու Պոնոմարենկոյին։

Վրդովմունքն ավելի ուժեղացավ, երբ մի խումբ պահնորդականների հետ դեպի այդին սլացող հետամանականը ատրճանակը թափահարելով՝ բղավեց.

— Եթե չգնաք, անմիջապես տեղն ու տեղը բոլորիդ կձերբակալենք, ոմանց էլ կգնդակահարենք։

Բայց շարացած բանվորների գոռում-գոչումը նրան ստիպեց նահանջել դեպի կայարան։ Քաղաքից արդեն խճաղով սլանում էին գերմանական զինվորներով լեցուն բեռնատար մեքենաներ, որոնց կանչել էր կայարանի պարետը։

Բանվորներն սկսեցին շտապ ցրվել տները։ Աշխատանքը թողեցին բոլորը, նույնիսկ կայարանի հերթապահը։ Ժուխրայի աշխատանքը երևում էր։ Դա առաջին մասսայական ելույթն էր կայարանում։

Գերմանացիք կառամատույցի վրա ծանր գնդացիր դրեցին։ Գնդացիրը որսի շան պես պատրաստ կանգնած էր։ Ձևոքը բռնատեղին դրած՝ նրա մոտ պպզել էր գերմանական մի կապրալ։

Կայարանն ամայացավ։

Դիշերը ձերբակալություններ սկսվեցին։ Ձերբակալեցին նաև Արտյոմին։ Ժուխրայը տանը չէր գիշերել, նրան չգտան։

Բոլորին հավաքեցին մի վիթխարի ապրանքային պահեստում և ուլտիմատում տվին՝ կամ վերադառնալ աշխատանքի, կամ՝ ռազմադաշտային դատարանին կհանձնվեն։

Գծի վրա գործադուլ էին արել համարյա բոլոր երկաթուղային բանվորները։ Օրվա ընթացքում ոչ մի գնացք չանցավ, իսկ հարյուր քսան կիլոմետրի վրա մարտ էր տեղի ունենում մի խոշոր պարտիզանական ջոկատի հետ, որ փչացրել էր գիծը և պայթեցրել կամուրջները։

Դիշերը կայարան եկավ գերմանական զինվորների մի էշելոն, բայց մեքենավարը, նրա օգնականն ու հնոցապանը շղթաքարշից փախան։ Բացի զինվորական այդ էշելոնից՝ կայարանում ուղևորման համար հերթի էին սպասում ևս երկու գնացք։

Գակհաուզի ծանր դռները բանալով՝ ներս մտան կայարանի պարետը, գերմանական մի սպա, նրա օգնականը և մի խումբ գերմանացիներ։

Պարետի օգնականը կանչեց.

— Կորչա՛ք դուք, Պոլիտո՛վսկի, Բրուդժա՛կ։ Դուք հիմա կմեկնեք որպես գնացքի բրիգադ։ Հրաժարման դեպքում՝ գնդակահարություն տեղնուտեղը։ Գնո՛ւմ եք։

Երեք բանվորներն ընկճված տեսքով գլխով արին։ Նրանց պահակախմբի ուղեկցությամբ տարան դեպի շոգեքարշը, իսկ պարետի օգնականն արդեն մյուս գնացքի մեքենավարի, օգնականի և հնոցապանի ազգանուններն էր բղավում։

Շոգեքարշը բարկացած՝ փայլուն կաղապարների շիթեր էր ֆրոթացնում, շնչում էր ծանր և, խավարը ճեղքելով՝ սլանում էր ռելսերով դեպի գիշերվա խորքը։ Հնոցն ածուխ նետելով՝ Արտյոմը ոտքով փակեց երկաթե դռնակը, արկղի վրա դրված կարճաքիթ թեյնիկից մի ումպ ջուր խմեց և դարձավ ծեր մեքենավար Պոլիտովսկուն.

— Ասում ես, տանո՞ւմ ենք, էլի, պապա՛շա։

Վերջինս կախված հոնքերի տակ բարկացած թարթեց աչքերը։

— Կտանենք, այո՛, երբ թիկունքից սվին են դեմ անում։

— Ամեն ինչ թողնենք և շոգեքարշից ծլկենք,— առաջարկեց Բրուդժակը՝ խեթ նայելով լարված նստած գերմանական զինվորին։

— Ես էլ եմ էդպես կարծում,— փնթփնթաց Արտյոմը,— բայց ա՛յ, այս տիպը ցցված է նստում։

— Այո՛,— անորոշ ձգեց Բրուզժակը՝ գլուխը դուրս հանելով լուսամուտից։

Մոտենալով Արտյոմին՝ Պոլիտովսկին շշնջաց.

— Մենք չպիտի տանենք, հասկանո՞ւմ ես։ Էնտեղ կռիվ է գնում, ապստամբները ճանապարհներն են պայթեցրել։ Իսկ մենք այս շներին որ տանենք, սրանք իսկույն նրանց հաշիվը կտեսնեն։ Գիտես, տղա՛ս, ես ցարի ժամանակ գործադուլների դեպքում չէի տանում։ Հիմա էլ չեմ տանի։ Մինչև կյանքներիս վերջը մեղ անարգած կլինենք, եթե մերոնց հետ դատաստան տեսնողներին տանենք։ Չէ՞ որ շոգեքարշի բրիգադը փախել է։ Իրենց կյանքն են վտանգի ենթարկել, բայց փախել են տղերքը։ Մենք ոչ մի կերպ չենք կարող գնացքը տեղ հասցնել։ Ի՞նչ ես կարծում։

— Ես համաձայն եմ, պապա՛շա, բայց այ սրա հետ ի՞նչ կանես,— և նա հայացքով ցույց տվեց զինվորին։

Մեքենավարը կնճռոտվեց, խծուծ սրբեց քրտնած ճակատը և բորբոքված աչքերով նայեց մանոմետրին՝ կարծես հուսալով այնտեղ գտնել իրեն տանջող հարցի պատասխանը։ Հետո չարությամբ, հուսահատ զայրույթով հայհոյեց։

Արտյոմը թնչնիկից ջուր խմեց։ Երկուսն էլ նույն բանի մասին էին մտածում, բայց ոչ ոք չէր վճռում առաջինն արտահայտվել։

Արտյոմը հիշեց Ժուխրայի ասածը.

— Ի՞նչ ես մտածում, ախպե՛ր, բոլշևիկյան կուսակցության և կոմունիստական գաղափարների մասին։

Եվ իր՝ Արտյոմի, պատասխանը.

— Օգնելու միշտ պատրաստ եմ, կարող ես ինձ վրա հույս դնել...

«Լավ օգնություն է, պատժիչ ջոկատ ենք տանում...»

Պոլիտովսկին կռանալով գործիքների արկղի վրա, ուղիղ Արտյոմի կողքին, դժվարությամբ արտասանեց.

— Իսկ սրան հարկավոր է վերացնել։ Հասկանո՞ւմ ես։

Արտյոմը ցնցվեց։ Պոլիտովսկին, ատամները կրճտացնելով, ավելացրեց։

— Ուրիշ ելք չկա։ Կթրխկացնենք, հետո կարգավորիչը կնետենք հնոցը, լծակները՝ հնոցը, շոգեքարշը դանդաղ ընթացքի կբերենք և կծլկենք շոգեքարշից։

Եվ կարծես ուսերից մի ծանր բեռ նետելով՝ Արտյոմն ասաց.

— Լա՛վ։

Թեքվելով դեպի Բրուզժակը՝ Արտյոմը նրան պատմեց կայացրած վճռի մասին։

Բրուզժակը անմիջապես չպատասխանեց։ Նրանցից յուրաքանչյուրը շատ մեծ վտանգի էր ենթարկվում։ Բոլորն էլ տանը ընտանիք էին թողել։ Բազմամարդ ընտանիք ուներ Պոլիտովսկին. նա տանը թողել էր ինը հոգի։ Բայց յուրաքանչյուրը գիտակցում էր, որ գնացքը տանել չի կարելի։

— Դե ի՞նչ. ես համաձայն եմ,— ասաց Բրուզժակը,— բայց ո՞վ նրան...— Նա չավարտեց Արտյոմի համար հասկանալի նախադասությունը։

Արտյոմը շրջվեց դեպի ծերունին, որն ինչ-որ բան էր անում կարգավորիչի մոտ, և նրան գլխով արեց, կարծես ասելով, թե Բրուզժակը նույնպես համամիտ է իրենց, բայց անմիջապես էլ, չլուծված հարցից տանջվելով, մոտեցավ Պոլիտովսկուն.

— Բայց ինչպե՞ս պիտի անենք այդ։

Պոլիտովսկին նայեց Արտյոմին։

— Դու սկսիր։ Դու բոլորիցս ուժեղն ես։ Լինգով մի հատ կհասցնես, և վերջ։— Ծերունին շատ էր հուզվում։

Արտյոմը հոնքերը կիտեց։

— Ես չեմ կարող անել։ Մի տեսակ՝ ձեռքս չի բարձրանա։ Չէ՞ որ, եթե մտածենք, զինվորը մեղավոր չէ։ Նրան էլ սվինով են քշել։

Պոլիտովսկու աչքերը փայլատակեցին։

— Մեղավոր չէ՞, ասում ես։ Բայց չէ՞ որ մենք էլ մեղավոր չենք, որ մեզ այստեղ են քշել։ Չէ՞ որ պատժիչ ջոկատ ենք տանում։ Այս անմեղները պարտիզաններին պիտի գնդակահարեն, իսկ նրա՞նք են, ինչ է, մեղավորները... էֆ դու, անզոր ածդահա... Արջի առողջություն ունես, բայց ձեռքիցդ բան չի գալիս...

— Լա՛վ,— խզված ձայնով ասաց Արտյոմը և վերցրեց լինգը, բայց Պոլիտովսկին շշնջաց.

— Ես կվերցնեմ, իմ հարվածն ավելի հաստատուն կլինի։ Դու վերցրու բահը և բարձրացիր տենդերը՝ ածուխ թափելու։

Եթե պետք լինի, քահով կհասցնես գերմանացուն։ Իսկ ես կգնամ իրր թե ածուխը մանրելու։

Բրուզժակը գլխով արեց.

— Ճիշտ է, ծերո՛ւկ։— Եվ կանգնեց կարգավորիչի մոտ։

Կարմիր բոլորը ունեցող մահուդե անհովար գլխարկ դրած գերմանացին նստել էր ռանդեքի եզրին և հրացանը պրկ ոտների արանքը. նա ծխախոտ էր ծխում և երբեմն նայում շոգեքարշում աշխատող բանվորներին։

Երբ Արտյոմը վար թարթացավ ածուխ թափելու, պահակը դրա վրա առանձին ուշադրություն չդարձնեց։ Իսկ հետո, երբ Պոլիտովսկին, իրր ցանկանալով ածխի մեծ կտորները տենդերի եզրից թափել, նշանացի խնդրեց նրան մի կողմ քաշվել, գերմանացին հլու-հնազանդ քաշվեց նեղքի, որտեղ շոգեքարշի խցիկը ասանող գրանակը։

Լինդի խուլ, կարծես հաբաբած, որ ճնշեցնող գերմանացու գանգը, աչքուքթի պես շշմեցրեց Արտյոմին ու Բրուզժակին։ Զինվորի մարմինը պարզի պես պրոթվեց դեպի անդունդին։

Գորշ մահուդե գլխարկն արագորեն արյունով նետվեցավ։ Լավեց շոգեքարշի երկաթե կողին խոխոջող հրացանի պրնդոցը։

— Վե՛րջ,— շշնջաց Պոլիտովսկին և նստեց ջինջը, ապա ջղաձգվելով ավելացրեց։— Այսմ այլևս վերադարձ ճանապարհ չունենք։

Նրա ձայնը խզվեց, բայց անմիջապես էլ հաղթահարելով բոլորին ճնշող լռությունը՝ վերածվեց ճչոցի։

— Թուլացրո՛ւ կարգավորիչի պտուտակը, ասա՛ գ,— գոչեց նա։

Տասը րոպե հետո ամեն ինչ արված էր։ Դեկավարությունից զրկված շոգեքարշը ստորգետնյա դանդաղությամբ էր ընթացքը։

Մանրորեն ջարժվելով՝ շոգեքարշի լուսյա օղակների մեջ էին մտնում ճանապարհի եզրի ծառերի ուրվագծերը և անմիջապես նորից վազում էին դեպի կույր խավարը։ Շոգեքարշի լապտերները ձգտում էին թափանցել խավարը, բայց դեռ էին տանում նրա թանձր հյուսվածքին և գիշերից միայն ասանդակ մետրեր էին կարողանում խլել։ Շոգեքարշը, կարծես իր վերջին ուժերը ծախսելով՝ ավելի ու ավելի դանդաղ էր ընթանում։

Ցատկի՛ր, ասա՛ս,— լսեց Արտյոմը Պոլիտովսկու ձայնն իր հետևից և բաց թողեց բռնակը։ Հզոր մարմինն իներցիայով առաջ նետվեց, և ոտքերն ամուր խփվեցին թափով նրանց տակից փախչող գետնին։ Երկու քայլ վազելով՝ Արտյոմն ընդունվեց և ծանրորեն շուռ եկավ գլխի վրա։

Շոգեքարշի երկու տանուտեղերից միաժամանակ ևս երկու ստվերներ ցատկեցին։

Տխուր էր Բրուզժակների տունը։ Սերյոժկայի մայրը՝ Անտոնինա Վասիլևնան, վերջին չորս օրը բոլորովին հոգեմաշ եղավ։ Ամուսնուց լուր չկար։ Նա գիտեր, որ նրան Կարշագինի ու Պոլիտովսկու հետ գերմանացիք վերցրել էին որպես գնացքի ղեկավար։ Երեկ հետամնաց պատմություններից երեքը եկան ու կատիպ կերպով, հայհոյելով սկսեցին հարցաքննել իրեն։

Նրանց խոսքերից Անտոնինա Վասիլևնան ազոտ կերպով գլխի էր ընկնում, որ ինչ-որ մի վատ բան է պատահել, և երբ պահնորդությունը գնաց, ծանր անորոշությունից տառապած կինը գիշերը կապեց և պատրաստվեց գնալ Մարիա Յակովլևնայի մոտ՝ հասալով նրանից մի բան իմանալ ամուսնու մասին։

Մեծ աղջիկը՝ Վալյան, որը խոհանոցն էր հավաքում, տանելով դեպի սպասարկող մորը՝ հարցրեց.

— Հետո՞ ասեցիր գնամ, մայրի՛կ։

Արտասուքով լի աչքերով նայելով դռները, Անտոնինա Վասիլևնան պատասխանեց.

— Գնամ եմ Կարշագինների մոտ։ Գուցե նրանց մոտ մի բան իմանամ հորդ մասին։ Եթե Սերյոժկան գա, նրան ասա, թող գան կայարան՝ Պոլիտովսկիների մոտ։

Վալյան ջանասիրեն գրկեց մոր ուսերը, հանգստացրեց նրան և, ուղեկցելով մինչև դուռը՝ ասաց.

— Մի՛ անհանգստանա, մայրի՛կ։

Մարիա Յակովլևնան, ինչպես միշտ, Բրուզժակին սիրալիր ընդունեց։ Երկու կանայք էլ սպասում էին, որ մյուսն ինչ-որ նոր բան կասի, բայց առաջին իսկ բառերից հետո այդ հույսը չքացավ։

Կարշագինների մոտ նույնպես գիշերը խուզարկություն էր կատարվել։ Արտյոմին էին փնտրում։ Գնալիս Մարիա Յակով-

լենային հրամայեցին, որ տղան վերադառնալուն պես այդ մասին հայտնի պարետանոց։

Պահակախմբի գիշերային այցելությունից Կորշագինան սաստիկ վախեցած էր։ Նա մենակ էր։ Պավելը, ինչպես միշտ, գիշերն աշխատում էր էլեկտրակայանում։

Պավկան եկավ վաղ առավոտյան։ Գիշերվա խուզարկությունն ու Արտյոմին որոնելու մասին մոր պատմածը լսելով՝ նա զգաց, թե ինչպես եղբոր համար ճնշող տագնապը համակում էր նրա ամբողջ էությունը։ Ջնայած բնավորությունների տարբերությանը և Արտյոմի թվացող խստությանը՝ եղբայրներն իրար շատ էին սիրում։ Դա խստասիրտ մի սեր էր, սեր առանց խոստովանությունների, և Պավելը պարզ գիտակցում էր, որ չկա այնպիսի մի զոհաբերություն, որը նա առանց տատանվելու չկատարի, եթե միայն դա եղբորը պետք լինի։

Նա առանց հանգստանալու վազեց կայարան, դեպի՝ ժուխրային որոնելու, բայց նրան չգտավ, իսկ ծանոթ բանվորներից ոչինչ չկարողացավ իմանալ գնացողներից և ոչ մեկի մասին։ Ոչինչ չգիտեր նաև մեքենավար Պոլիտովսկու ընտանիքը։ Պավկան բակում հանդիպեց Պոլիտովսկու ամենակրտսեր որդուն՝ Բորիսին։ Նրանից իմացավ, որ գիշերը Պոլիտովսկիների մոտ էլ է խուզարկություն կատարվել, հորն են փնտրելիս եղել։

Պավկան այդպես էլ առանց արդյունքի վերադարձավ մոր մոտ, հոգնած մեկնվեց մահճակալին և անմիջապես էլ անհանգիստ քնի ալիքների մեջ սուզվեց։

Թակոցը լսելով՝ Վալյան դեպի դուռը շրջվեց։

— Ո՞վ է,— հարցրեց նա և դռան կեռը ետ նետեց։

Բաց դռան մեջ երևաց Մարչենկոյի շիկակարմիր, գզգզված գլուխը։ Կլիմկան, ըստ երևույթին, արագ էր վազել։ Նա հեռանում էր և վազուց կարմրել էր։

— Մայրդ տա՞նն է,— հարցրեց նա Վալյային։

— Ո՛չ, գնաց։

— Իսկ ո՞ւր գնաց։

— Կարծես Կորշագինների մոտ,— Վալյան բռնեց վազելու պատրաստվող Կլիմկայի թևը։

Վերջինս անվճռական կերպով նայեց աղջկան։

— Հենց էնպես, գիտես, նրա հետ գործ ունեմ։

— Ի՞նչ գործ,— Վալյան սկսեց քաշքշել տղային,— դե շո՛ւտ ասա, շեկլի՛կ արջ, ի՞նչ ես հոգի հանում,— հրամայական տոնով կարգադրեց աղջիկը։

Կլիմկան մոռացավ բոլոր նախազգուշացումները, ժուխրայի կտրուկ հրամանը՝ երկտողը տալ միայն Անտոնինա Վասիլևնային անձամբ և գրպանից դուրս քաշեց թղթի կեղտոտված մի կտոր ու տվեց աղջկան։ Նա չէր կարող մերժել Սերյոժկայի շիկահեր քույրիկին, որովհետև շիկակարմիր Կլիմկան այդ հիանալի աղջկա հետ իր հարաբերությունները գժվարանում էր պարզել։ Ճիշտ է, փոքրիկ, համեստ խոհարարը նույնիսկ ինքն իրեն ոչ մի դեպքում չէր խոստովանի, որ Վալյան իրեն դուր է գալիս։ Նա թուղթը հանձնեց Վալյային, վերջինս արագ աչքի անցկացրեց։

«Թանկագին Տո՛նյա, մի անհանգստանա։ Ամեն ինչ լավ է։ Ողջ ենք և անվնաս։ Շուտով ավելին կիմանաս։ Հաղորդիր մյուսներին, որ ամեն ինչ բարեհաջող է, որ չանհանգստանան։ Երկտողս ոչնչացրու։ Զ ա խ ա ր։

Երկտողը կարդալով՝ Վալյան նետվեց դեպի Կլիմկան.

— Շեկլիկ արջ, անուշի՛կս, սա որտեղի՞ց ձեռքդ ընկավ։ Ասա՛, որտեղի՛ց, ծուռթա՛թ արջուկ։— Եվ Վալյան ամբողջ ուժով սկսեց քաշքշել շփոթված Կլիմկային։ Վերջինս գլխի չընկավ, թե ինչպես երկրորդ սխալը թույլ տվեց։

— Կայարանում ժուխրայը տվեց։— Ապա հիշելով, որ այդ պետք չէր ասել, ավելացրեց.— Միայն թե նա ասաց, որ ոչ ոքի չտամ։

— Դե լա՛վ լա՛վ,— ծիծաղեց Վալյան։— Ես ոչ ոքի չեմ ասի։ Դե, շեկլի՛կ, վազի՛ր Պավկայի մոտ, մորս էլ այնտեղ կգտնես։— Նա թեթևակի հրեց փոքրիկ խոհարարին։

Մի վայրկյան հետո Կլիմկայի շեկլիկ գլուխը երևաց և անհետացավ պարտեզի դռնակի ետևում։

Երեքից ոչ մեկը տուն չվերադարձավ։ Երեկոյան ժուխրայը եկավ Կորշագինների մոտ և Մարիա Յակովլևնային պատմեց շոգեքարշի մեջ ամբողջ անցած-դարձածը։ Ինչքան որ կարող էր, հանգստացրեց վախեցած կնոջը՝ հաղորդելով, որ երեքն էլ հեռու տեղ են տեղավորվել, խուլ մի գյուղում, Բրուզժակի

մի ազգականի մոտ, որ նրանք այնտեղ ապահով են, տուն վերադառնալ նրանք այժմ, իհարկե, չեն կարող, բայց գերմանացիք էլ ծանր վիճակում են, մոտ ապագայում փոփոխություններ կարելի է սպասել։

Այս բոլոր իրադարձությունները է՛լ ավելի մտերմացրին մեկնածների ընտանիքներին։ Մեծ բերկրանքով էին կարդացվում այն հազվադեպ երկտողները, որ ստանում էին ընտանիքները, բայց սներն ավելի էին դատարկվել ու լուռ դարձել։

Մի անգամ իբր պատահաբար այցելելով Պոլիտովսկու պատավին, ժուխրայը փող հանձնեց նրան։

— Ահա՛, մերի՛կ, մարդդ ձեզ օգնություն է ուղարկում, միայն թե տեսեք, մերի՛կ, ոչ ոքի ոչ մի խոսք։

Պառավը շնորհակալությամբ սեղմեց նրա ձեռքը։

— Ա՛յ, շնորհակալ եմ, թե չէ ուղղակի փորձանք է, երեխաներն ուտելու բան չունեն։

Այդ դրամը Բուլգակովի թողած գումարից էր։

«Դե՛հ, տեսնենք հետո ինչ կլինի։ Թեև գործադուլը վիժեց, գնդակահարության սարսափի տակ, թեև բանվորներն աշխատում են, բայց կրակը բորբոքվել է, այլևս չես հանգցնի, իսկ այս երեքը կեցցեն, ա՛յ դրանք պրոլետարներ են»,— Պոլիտովսկիների մոտից դեպի դեպո քայլելով, հիացմունքով մտածում էր նավաստին։

Խարխուլ մի դարբնոցում, որն իր ծխոտ պատով նայում էր ճանապարհին, Վորոբյովի Բալկա գյուղից քիչ հեռու, հնոցի հրե երախի առաջ կանգնած և պայծառ լույսից աչքերը թեթևակի կկոցելով՝ Պոլիտովսկին երկար ունելիով շուռումուռ էր տալիս արդեն շիկացած երկաթի կտորը։ Արտյոմը սեղմում էր շեղաձայտից կախված լծակը, փչում կաշվե փուքսը։

Քթի տակ բարձրաձայնորեն ծիծաղելով՝ մեքենավարն ասում էր.

— Արհեստավորն այժմ գյուղում չի կորչի, աշխատանք կգտնվի, ինչքան ասես, պլիտ կթափեն։ Ա՛յ, մեկ-երկու շաբաթ կաշխատեմ, և ահա կկարողանանք մերոնց ճարպ ու աղյուր ուղարկել։ Գյուղացու մոտ, տղա՛ս, դարբինը միշտ էլ պատիվ ունի։ Այստեղ բուրժույների նման կկերակրվենք։

Հի՛-հի՛։ Իսկ Զախարն ուրիշ տեսակի մարդ է, նա գյուղացիությանն է ավելի հենվում, իր ազգականի հետ գետինն է փորում։ Դե ինչ, դա էլ է հասկանալի։ Ես ու դու, Արտյո՛մ, ոչ տուն ունենք, ոչ տեղ, մենք ենք ու մեր ձեռքերը, ինչպես ասում են, դարավոր պրոլետարներ, հի՛-հի՛, իսկ Զախարը երկու կես է եղել, մի ոտքը շոգեքարշի վրա է, մյուսը՝ գյուղում։— Պոլիտովսկին ունելիով շոշափեց երկաթի շիկացած կտորը և արդեն լրջորեն, մտախոհ ավելացրեց։— Իսկ մեր բանը բուրդ է, որդյա՛կ։ Եթե գերմանացոց շուտով նեղը չդնեն, ատիպված պիտի լինենք մեր ճամփան շուռ տալ դեպի Եկատերինոսլավ կամ Ռոստով, թե չէ կբռնեն մեր ականջներից և կկախեն երկնքի ու երկրի միջև այնպես հեշտ, ինչպես մի կոմ ջուր խմես։

— Այո՛,— փնթփնթաց Արտյոմը։

— Տեսնես մերոնք ինչպես են դիմանում, հայրամակները չե՞ն նեղում, արդյոք։

— Հա՛, պապաշա՛, ճաշը եփեցինք, դե ուրեմն հիմա տնից պիտի հրաժարվենք։

Մեքենավարը հնոցից դուրս քաշեց կապտավուն, կիսաթող երկաթի կտորը և արագորեն դրեց սալի վրա։

— Դե, ապա՛, թրխկացրո՛ւ, որդյա՛կս...

Արտյոմը խլեց սալի մոտ դրված ծանր կռանը, թափով տարավ գլխից վերև և հարվածեց։ Պայծառ կայծերի խուրձը թեթև շրշացող ճայթյունով ցրիվ եկավ դարբնոցում՝ մի վայրկյան լուսավորելով նրա խավար անկյունները։

Պոլետովսկին երկաթի շիկացած կտորը շուռումուռ էր տալիս հզոր հարվածների տակ, և երկաթը մոմի նման հնազանդ կռանվում էր։

Դարբնոցի բաց դարպասից խավար գիշերը տաք քամի էր փչում։

Ներքևում լիճը խավար է ու ահագին. ամեն կողմից այն շրջափակող սոճիներն իրենց հզոր կատարներով գլխով են անում։

«Կարծես կենդանի էակներ լինեն»,— մտածում է Տոնյան։ Նա պառկած է գրանիտե ափի խոտով ծածկված փոսում։ Փոսի վերևում եղևնուտն է, իսկ ներքևում, ուղղակի զառի-

թափի ստորոտում՝ լիճը։ Շրջափակող ժայռերի ստվերները լճի ափերն ավելի են խավար դարձնում։

Դա Տոնյայի սիրելի անկյունն է։ Այստեղ, կայարանից մի վերստի վրա, հին քարհանքերում, աչքաթող արված խորունկ խանդակներում աղբյուրներ են ցայտել և այժմ գոյացել են երեք հոսող լճեր։ Ներքևում, դեպի լիճը տանող վայրէջքի մոտ ճողփյուն է լսվում։ Տոնյան բարձրացնում է գլուխը և, ձեռքով ճյուղերը ետ տանելով՝ ցած է նայում։ Ափից ուժգին շարժումներով դեպի լճի մեջտեղն է լողում արևառ, ճկուն մի մարմին։ Տոնյան տեսնում է լողորդի թուխ թիկունքը և սև գլուխը։ Լողորդը ծովացուլի նման փնչացնում է, սաժենանոց հարվածներով ճեղքում է ջուրը, շրժվում է, թավալվում, սուզվում և վերջապես հոգնելով՝ պառկում է մեջքի վրա, արևի պայծառ լույսից կկոցում աչքերը և ձեռքերը տարածելով ու թեթևակի կորանալով՝ արշարժանում։

Տոնյան բաց է թողնում ճյուղերը։ «Ես հո անվայել բան եմ անում»,— հեգնանքով մտածեց նա և սկսեց կարդալ։

Տարված գրքով, որ նրան Լեշչինսկին էր տվել, Տոնյան չնկատեց, թե ինչպես ինչ-որ մեկը մագլցեց գրանիտե ցցվածքին, որն անջատում էր հարթակը եղևնուտից, և միայն այն ժամանակ, երբ այդ մագլցողի ոտքի տակից փոքրիկ մի քար ընկավ գրքի վրա, նա հանկարծակիի եկած ցնցվեց, գլուխը բարձրացրեց և տեսավ հարթակին կանգնած Պավկա Կորշագինին։ Նա կանգնած էր անսպասելի հանդիպումից զարմացած և նույնպես շփոթված, պատրաստվում էր հեռանալ։

«Սա էր նոր լողանում»,— կռահեց Տոնյան՝ մի հայացք նետելով Պավկայի թաց մազերին։

— Ի՞նչ, ձեզ վախեցրի։ Չգիտեի, որ այստեղ եք, այնպես որ պատահմամբ եկա այստեղ։— Այդ ասելով Պավկան ձեռքը մեկնեց դեպի ցցվածքը։ Նա ևս ճանաչեց Տոնյային։

— Դուք ինձ չեք խանդարում։ Եթե ցանկանում եք, կարող եք նույնիսկ որևէ բանի մասին խոսել։

Պավկան նայում էր Տոնյային՝ զարմացած։

— Ինչի՞ մասին պիտի խոսենք։

Տոնյան ժպտաց։

— Դե՛, էլ ի՞նչ եք կանգնել։ Կարող եք նստել այ այստեղ,— և նա մատնացույց արեց քարը։— Ասացե՛ք, ձեր անունն ի՞նչ է։

— Ես Պավկա Կորշագինն եմ։

— Իսկ իմ անունը Տոնյա է։ Ահա և մենք ծանոթացանք։ Պավկան, շփոթված, կեպկան էր տրորում։

— Ուրեմն ձեր անունը Պավկա է,— լռությունը խզեց Տոնյան։— Իսկ ինչո՞ւ Պավկա։ Դա գեղեցիկ չի հնչում, ավելի լավ է՝ Պավել։ Ես ձեզ այդպես էլ կկոչեմ։ Իսկ դուք հաճա՞խ եք այստեղ գալիս...— Նա ուզում էր ասել՝ լողանալու, բայց չցանկացավ խոստովանել, որ նրան տեսել է լողանալիս, ավելացրեց՝ զբոսնելու։

— Ո՛չ, ոչ հաճախ, հենց որ ազատ ժամանակ է պատահում,— պատասխանեց Պավելը։

— Իսկ դուք որևէ տեղ աշխատո՞ւմ եք,— հարցուփորձ էր անում Տոնյան։

— Էլեկտրակայանում հնոցապան եմ։

— Ասացե՛ք, որտե՞ղ եք սովորել այդպես վարպետորեն կռվել,— անսպասելի հարց տվեց Տոնյան։

— Իսկ դուք ի՞նչ գործ ունեք իմ կռվելու հետ,— ակամա փնթփնթաց Պավելը։

— Մի՛ բարկացեք, Կորշագի՛ն,— ասաց աղջիկը՝ զգալով, որ Պավկան դժգոհ է նրա հարցից։— Ինձ շատ է հետաքրքրում։ Այ դա հարվա՛ծ էր։ Չի կարելի այդպես անողորմ լինել,— և նա քրքջաց։

— Իսկ դուք խղճո՞ւմ եք, ինչ է,— հարցրեց Պավելը։

— Ո՛չ, բոլորովին էլ չեմ խղճում, ընդհակառակն։ Սուխարկոն ըստ արժանվույն ստացավ։ Իսկ ինձ այդ տեսարանը մեծ բավականություն պատճառեց։ Ասում են, դուք հաճախ եք կռվում։

— Ո՞վ է ասում,— ուշադրությունը լարեց Պավկան։

— Ա՛յ, Վիկտոր Լեշչինսկին ասում է, որ դուք պրոֆեսիոնալ կռվարար եք։

Պավելը մռայլվեց։

— Վիկտորը սրիկա է, փափկասունի մեկը։ Թող շնորհակալ լինի, որ այն ժամանակ իրեն էլ չհասավ։ Ես լսեցի, թե նա իմ մասին ինչ էր խոսում, միայն թե ձեռքերս կեղտոտել չեմ ուզում։

— Ինչո՞ւ եք այդպես հայհոյում, Պավելը։— Դա լավ չէ,— ընդհատեց նրան Տոնյան։

Պավելը փետուրները ցցեց։

«Ի՞նչ սատանա ինձ դրդեց այս տարօրինակ աղջկա հետ խոսակցել։ Մի տե՛ս, հրամաններ է արձակում. մեկ նրան «Պավլկան» չի դուր գալիս, մեկ՝ մի՞ հայհոյիր»,— մտածեց նա։

— Լեշչինսկու վրա ինչո՞ւ եք չարացած,— հարցրեց Տոնյան։

— Շալվար հագած օրիորդ է, պանի տղա, հոգի ասած բանը չունի։ Էդպիսիների վրա իմ ձեռքերը քոր են գալիս։ Ոտ կոխելու տեղ է փնտրում, որովհետև հարուստ է, և նրան ամեն ինչ կարելի է, իսկ ես թքել եմ նրա հարստության վրա։ Եթե երբեք դիպչի ինձ, անմիջապես փոխարենը տեղը տեղին կստանա։ Էդպիսիներին բռունցքով պիտի սովորեցնես,— ասաց նա զրգռված։

Տոնյան զղջաց, որ խոսակցության մեջ շոշափեց Լեշչինսկու անունը։ Այս տղան, ըստ երևույթին, հին հաշիվներ ուներ փափկասուն գիմնազիստի հետ, և աղջիկը խոսակցությունը դարձրեց ավելի խաղաղ թեմայի վրա, սկսեց Պավելին հարցուփորձ անել նրա ընտանիքի ու աշխատանքի մասին։

Իր համար ամենակատելի Պավելն սկսեց հանգամանորեն պատասխանել աղջկա հարցերին՝ մոռանալով իր գնալու ցանկության մասին։

— Ասացե՛ք, Ինչո՞ւ եք ոստումը Լիստ թողել,— հարցրեց Տոնյան։

— Դպրոցից դուրս արին։

— Ինչի՞ համար։

Պավլկան կարմրեց։

— Ես տերտերի խմորի մեջ Ծխախոտ լցրեցի, դե ինձ էլ դուրս արին։ Չար տերտեր էր, օր չէր տալիս մեզ։— Եվ Պավելը բոլորը պատմեց աղջկան։

Տոնյան հետաքրքրությամբ էր լսում։ Պավլկան մոռացել էր իր ամբողջ շփոթմունքը, պատմում էր նրան, ինչպես կպատմեր մի հին ծանոթի, թե ինչպես եղբայրը չի վերադարձել։ Նրանցից ոչ մեկը չնկատեց, թե ինչպես մարմրական

աշխույժ զրույցով տարված՝ նրանք հարթակի վրա նստեցին մի քանի ժամ։ Վերջապես Պավլկան ուշքի եկավ և ցատկեց տեղից։

— Չէ՞ որ իմ աշխատանքի գնալու ժամանակն է արդեն։ Այ թե շատախոսեցի, հնոցը պիտի վառեմ։ Հիմա Դանիլոն զոռզոռոցը կգցի։— Եվ նա անհանգստացած ասաց.— Դե՛, մնաք բարով, օրիո՛րդ, հիմա ես պիտի մի շնչով քաղաք հասնեմ։

Տոնյան, ժակետը հագնելով, արագ ոտքի կանգնեց։

— Իմ գնալու ժամանակն էլ է, միասին կգնանք։

— Ո՛չ, ես վազելով պիտի գնամ, ձեզ համար ձեռնտու չէ ինձ հետ գալը։

— Ինչո՞ւ։ Մենք միասին կվազենք, մրցելով. տեսնենք, ով ավելի արագ կվազի։

Պավլկան քամահրանքով նայեց նրան։

— Մրցելո՞վ։ Ինձ հետ ո՞նց պիտի մրցեք։

— Ա՛յ, կտեսնենք, եկեք նախ այստեղից դուրս գանք։

Պավելը ցատկեց քարի վրայից, ձեռքը մեկնեց Տոնյային, և նրանք վազեցին դեպի անտառի լայն, հարթ ուղատը, որը տանում էր դեպի կայարան։

Տոնյան կանգնեց ճանապարհի մեջտեղում։

— Դե՛, հիմա կվազենք՝ մե՛կ, երկո՛ւ, երե՛ք։ Բռնեցեք,— և հողմի պես առաջ սուրաց։ Շուռ-շուռ երևում ու անհետանում էին նրա կոշիկների նեղրանները, քամուց ծածանվում էր կապույտ ժակետը։

Պավելը սլացավ նրա ետևից։

«Չեռաց կհասնեմ»,— մտածեց նա, թռչելով նշմարվող ժակետի ետևից, բայց նրան հասավ միայն ուղատի վերջում, կայարանի մոտերքում։ Թափով վրա փաթեց և ամուր բռնեց ուսերից։

— Ահա՛, թռչնակը բռնվեց,— բղավեց ուրախ-ուրախ և հևասպառ։

— Թողե՛ք, ցավում է,— պաշտպանվում էր Տոնյան։

Երկուսն էլ կանգնած հևում էին, երկուսի սրտերն էլ արագ էին բաբախում, և խելագար վազքից ուժասպառ եղած Տոնյան, թեթևակի, իբր պատահմամբ սեղմվեց Պավելին և

դրանից դարձավ ավելի մոտիկ մարդ։ Այդ մի վայրկյան տևեց, բայց մնաց հիշողության մեջ։

— Ինձ ոչ ոք հասնել չի կարողացել,— ասաց նա, ազատվելով տղայի ձեռքերից։

Անմիջապես բաժանվեցին։ Եվ, որպես հրաժեշտի նշան կեղծկան թափահարելով՝ Պավկան վազեց քաղաք։

Երբ Պավելը բացեց հնոցարանի դուռը, արդեն հնոցը վառող հնոցապան Դանիլոն, բարկացած ետ շրջվեց.

— Դու գուցե մի քիչ էլ ավելի ուշ գայիր։ Ի՞նչ է, պիտի քո փոխարեն վառե՞մ։

Բայց Պավկան ուրախ-ուրախ խփեց հնոցապանի ուսին և հաշտարար տոնով ասաց.

— Մի բոպեում, ծերո՛ւկ, հնոցը կարգի կընկնի։— Եվ գործի անցավ փայտի դարսակների մոտ։

Կեսգիշերին, երբ Դանիլոն, փայտերի վրա պառկած՝ ձիու նման խռմփալ սկսեց, Պավելն ամբողջովին յուղով օծելով շարժիչը՝ խծուծով մաքրեց ձեռքերը և արկղից հանելով «Ջուզեպպե Գարիբալդիի» վաթսուներկուերորդ պրակը՝ մխրճվեց Նեապոլիտանական «Կարմիր շապկավորների» լեգենդար առաջնորդ Գարիբալդիի անվերջ արկածների մասին գրավիչ վեպի ընթերցանության մեջ։

«Նայեց նա հերցոգին իր սքանչելի կապույտ աչքերով...»

«Սրա աչքերն էլ են կապույտ,— հիշեց Պավելը։— Ինչ-որ առանձնահատուկ աղջիկ է, հարուստների նման չէ,— մտածում էր նա,— սատանայի պես է վազում»։

Ցերեկվա հանդիպման հիշողությունների մեջ խորասուզված՝ Պավելը չէր լսում շարժիչի աճող աղմուկը։ Շարժիչը լարումից դողում էր, վիթխարի թափանիվը կատաղորեն պտտվում, և բետոնե պլատֆորմը, որի վրա կանգնած էր շարժիչը, ջղաձգորեն ցնցվում էր։

Պավկան մի հայացք նետեց մանոմետրին, սլաքը ազդանշանային կարմիր գծից մի քանի դիծ վերև էր թռել։

— Ա՜խ դու, սատանա՛,— Պավելն արկղից պոկվեց և նետվեց դեպի շոգին դուրս մղող լծակը, երկու անգամ շրջեց այն, և հնոցապանի պատի ետևում խռպոտ թշշաց խողովակից դեպի գետը դուրս մղված գոլորշին։ Լծակը ցած թողնելով՝ նա փոկը փոխանցեց ջրհանը շարժող անիվի վրա։

Պավելը նայեց Դանիլոյին. սա քնած էր անխռով, բերանը լայն բաց էր արել և քթով սարսափելի ձայն էր արձակում։

Կես բոպե հետո մանոմետրի սլաքը նախկին տեղը վերադարձավ։

Պավելից բաժանվելով՝ Տոնյան տուն ուղևորվեց։ Նա մտածում էր այդ սևաչյա պատանու հետ հենց նոր տեղի ունեցած հանդիպման մասին, և ինքն էլ այդ չգիտակցելով՝ ուրախ էր այդ հանդիպման համար։

«Ինչքան կրակ ու համառություն կա նրա մեջ։ Եվ նա բոլորովին էլ այնպես կոպիտ չէ, ինչպես ինձ թվում էր։ Համենայն դեպս սա բնավ նման չէ բոլոր այն փսլնքոտ գիմնազիստներին...»։

Պավելն այլ տեսակի մարդ էր, այն միջավայրից, որի հետ մինչև այժմ Տոնյան մոտիկից չէր շփվել։

«Նրան կարելի է ձեռնասուն դարձնել,— մտածում էր նա,— և դա հետաքրքրական մտերմություն կլինի»։

Տանը մոտենալով, Տոնյան տեսավ պարտեզում նստած Լիզա Սուխարկոյին, Նելլի և Վիկտոր Լեշչինսկիներին։ Վիկտորը կարդում էր։ Նրանք, ըստ երևույթին, Տոնյային էին սպասում։

Վերջինս բարևեց բոլորին, նստեց նստարանին։ Դատարկ, թեթևամիտ զրույցի միջոցին Վիկտոր Լեշչինսկին, մոտ նստելով Տոնյային՝ ցածր ձայնով հարցրեց.

— Դուք վեպը կարդացի՞ք։

— Ա՜խ հա, վեպը,— գլխի ընկավ Տոնյան։— Իսկ ես այն...— Նա հազիվ չասաց, որ գիրքը մոռացել է լճի մոտ։

— Դե, ինչպե՞ս է, ձեզ դուր եկա՞վ։— Վիկտորն ուշադիր նայեց նրան։

Տոնյան մտածեց և կոշիկի քթով ճամփի ավազի վրա դանդաղորեն ինչ-որ անհասկանալի բան գծելով՝ գլուխը բարձրացրեց և նայեց նրան։

— Ո՛չ, ուրիշ վեպ եմ սկսել, ավելի հետաքրքրական վեպ, քան այն, որ դուք եք ինձ բերել։

— Ահա թե ինչ,— վիրավորված տոնով ձգեց Վիկտորը։— Իսկ հեղինակն ո՞վ է,— հարցրեց նա։

Տոնյան նայեց նրան առկայծող, հեգնող աչքերով։

— Ոչ ոք...

— Տոնյա, հյուրերին ներս հրավիրիր, թեյը ձեզ է սպասում,— պատշգամբից կանչեց Տոնյայի մայրը։

Թևանցուկ անելով երկու աղջիկներին՝ Տոնյան ուղղվեց դեպի տուն։ Իսկ Վիկտորը նրանց ետևից ընթանալով՝ գլուխ էր շարդում Տոնյայի ասածի վրա, չհասկանալով դրա իմաստը։

Աննկատելիորեն երիտասարդ հնոցապանի կյանքի մեջ մտած առաջին, դեռ չգիտակցված զգացումը նոր էր և անհասկանալիորեն հուզող։ Այդ զգացումն անհանգստացնում էր հանդուգն, խռովահույզ պատանուն։

Տոնյան գլխավոր անտառապետի աղջիկն էր, իսկ գլխավոր անտառապետը նրա համար նույնն էր, ինչ փաստաբան Լեշչինսկին։

Աղքատության և քաղցի ճիրաններում մեծացած լինելով՝ Պավելը թշնամաբար էր վերաբերվում նրանց, ովքեր նրա հասկացողությամբ հարուստ էին։ Նա իր զգացմանը մոտենում էր զգուշորեն և երկյուղով, նա Տոնյային չէր համարում յուրային, պարզ, հասկանալի, ինչպես քարտաշի աղջիկ Գալինան էր, և նրան վերաբերվում էր թերահավատությամբ, պատրաստ կտրուկ հարված տալու ամեն մի հեգնանքի և արհամարհանքի, որ այդ գեղեցիկ ու կրթված աղջիկը հանդես կբերեր իր՝ հնոցապանի նկատմամբ։

Ամբողջ մի շաբաթ Պավելը չէր տեսնվել անտառապետի աղջկա հետ և այսօր որոշեց գնալ դեպի լիճը։ Դիտմամբ նրա տան մոտով գնաց, հույս ուներ հանդիպել։ Դանդաղորեն ընթանալով առանձնատան ցանկապատի երկարությամբ՝ պարտեզի վերջում նկատեց ծանոթ մատրոսկան։ Վերցրեց ցանկապատի մոտ ընկած եղևնու կոնը և, սպիտակ բլուզը նշան բռնելով՝ նետեց այն։

Տոնյան արագ շրջվեց։ Պավելին նկատելով՝ վազեց ցանկապատի մոտ։ Ուրախ ժպտալով, ձեռքը նրան մեկնեց։

— Վերջապես եկա՞ք,— ուրախացած ասաց նա։— Որտե՞ղ էիք կորել այսքան ժամանակ։ Ես եղա լճակի մոտ, գիրքս էի այնտեղ մոռացել։ Մտածում էի, թե դուք կգաք։ Եկե՛ք այստեղ, մեր պարտեզը։

Պավելն գլուխը բացասաբար թափահարեց։

— Չեմ գա։

— Ինչո՞ւ— Աղջկա հոնքերը զարմանքից բարձրացան։

— Գե՛ղ, հայրդ, հավանորեն, կհայհոյի։ Իմ պատճառով ձեզ էլ կհասնի։ Կասի, ինչո՞ւ ես այդպիսի անպետքին բերել։

— Գատարկ բաներ եք խոսում, Պավե՛լ,— բարկացավ Տոնյան։— Անմիջապե՛ս այստեղ եկեք։ Հայրս երբեք ոչինչ չի ասի, ա՛յ դուք հիմա կտեսնեք։ Գնանք։

Նա վազեց, բացեց պարտեզի դռնակը, և Պավելը, ոչ այնքան վստահ, գնաց նրա ետևից։

— Գիրք կարդալ սիրո՞ւմ եք,— հարցրեց Տոնյան, երբ նրանք նստեցին գետնի մեջ խրված կլոր սեղանի շուրջը։

— Շատ եմ սիրում,— աշխուժացավ Պավելը։

— Ձեր կարդացած գրքերից ո՞րն է ձեզ ամենից շատ դուր գալիս։

Մի քիչ խորհելով, Պավելը պատասխանեց.

— Ջուզեպպա Գարիբալդին։

— Ջուզեպպե Գարիբալդին,— ուղղեց Տոնյան։— Ձեզ այդ գիրքը շա՞տ է դուր գալիս։

— Այո՛, ես այդ գրքի վաթսունութ պրակը կարդացել եմ, ամեն ոռճիկի մի հինգ հատ գնում եմ։ Ա՛յ թե մարդ է եղել Գարիբալդին,— հիացմունքով ասաց Պավելը։— Ա՛յ հերոս։ Ա՛յ դա հասկանում եմ։ Ինչքա՞ն է կռվել թշնամիների հետ, և միշտ հաղթել է նրանց։ Բոլոր երկրներում եղել է։ Ա՜խ, եթե նա հիմա լիներ, կմիանայի նրան։ Նա արհեստավորներին իր շուրջն էր հավաքում և շարունակ չքավորների համար էր կռվում։

— Կուզե՞ք, ես ձեզ ցույց կտամ մեր գրադարանը,— ասաց Տոնյան և բռնեց նրա ձեռքից։

— Ո՛չ, տուն չեմ գա,— կտրականապես հրաժարվեց Պավելը։

— Ինչո՞ւ եք համառում։ Թե՞ վախենում եք։

Պավելը նայեց իր բոբիկ ոտներին, որոնք մաքրությամբ չէին փայլում և ծոծրակը քորեց։

— Իսկ մայրդ կամ հայրդ ինձ այստեղից չե՞ն վռնդի։

— Թողեք վերջապես այդ խոսակցությունները, թե չէ վերջնականապես կբարկանամ,— բորբոքվեց Տոնյան։

— Լեշչինսկին մեզ նմաններին իրենց տուն չի թողնում, խոհանոցում է զրուցում։ Ես մի գործով նրանց մոտ գնացի։ Նելլին նույնիսկ սենյակ չթողեց, հավանորեն նրա համար, որ իրենց գորգերը չփչացնեմ, սատանան գիտե,— ժպտաց Պավկան։

— Գնա՛նք, գնա՛նք,— Տոնյան բռնեց նրա ուսերից և մտերմորեն հրեց դեպի պատշգամբը։

Սեղանատան միջով նրան առաջնորդելով վիթխարի կաղնեփայտի պահարանով մի սենյակ՝ Տոնյան բացեց այդ պահարանի դռները։ Պավելը տեսավ հավասար շարքով կանգնած մի քանի հարյուր գիրք և զարմացավ այդ չտեսնված հարստության վրա։

— Մենք հիմա ձեզ համար մի հետաքրքրական գիրք կգտնենք, իսկ դուք խոստացեք միշտ գալ և մեր տնից գիրք վերցնել։ Լա՞վ։

Պավկան ուրախ գլխով արեց։

— Ես գրքեր սիրում եմ։

Մի քանի ժամ նրանք հաճելի և ուրախ անցկացրին։ Տոնյան տղային ծանոթացրեց իր մոր հետ։ Դա այնքան էլ սարսափելի չեղավ, և Տոնյայի մայրը դուր եկավ Պավելին։

Տոնյան Պավելին տարավ իր սենյակը, նրան ցույց տվեց իր գրքերը և դասագրքերը։

Արդուլարդի սեղանի վրա մի փոքրիկ հայելի կար։ Պավելին մոտեցնելով հայելուն՝ Տոնյան ծիծաղելով ասաց.

— Մազերդ ինչո՞ւ են այդպես զզզված։ Երբե՞ք չեք կտրում ու սանրում։

— Երբ աճում են, մաքուր ածիլում եմ։ Էլ ինչպե՞ս վարվեմ նրանց հետ,— անհարմար զգալով արդարանում էր Պավկան։

Տոնյան ծիծաղելով արդուլարդի սեղանից վերցրեց սանրը և արագ շարժումներով սանրեց նրա զզզված գանգուրները։

— Ա՛յ, հիմա բոլորովին այլ է,— ասում էր նա դիտելով Պավելին։— Իսկ մազերը պետք է գեղեցիկ խուզել, թե չէ ման եք գալիս վայրենի մենակյացի պես։

Տոնյան քննադատական հայացքով նայեց նրա գունատ

թափ, դեղնավուն վերնաշապիկին և քրքրված շալվարին, բայց ոչինչ չասաց։

Պավելը նկատեց այդ հայացքը և հագուստների պատճառով իրեն վատ զգաց։

Նրանից բաժանվելիս Տոնյան հրավիրեց տուն գալ։ Եվ խոսք վերցրեց նրանից երկու օր հետո գնալ միասին ձուկ բռնելու։

Պավելը լուսամուտից մի ցատկով թռավ պարտեզ. նորից սենյակներից անցնել և Տոնյայի մորը հանդիպել չէր ուզում։

Արտյոմի բացակայության պատճառով Կորչագինների ընտանիքում ապրուստը դժվարացավ, Պավելի աշխատավարձը չէր բավականացնում։

Մարիա Յակովլևնան որոշեց խոսել որդու հետ, պետք չէ՞, արդյոք, նորից աշխատանքի անցնել։ Ի դեպ, Լեշչինսկիներին խոհարարուհի է պետք։ Բայց Պավելը բողոքեց.

— Ոչ, մայրիկ, ես ինձ համար էլի լրացուցիչ աշխատանք կգտնեմ։ Սղոցարանում տախտակներ դարսողներ են պետք։ Կես օր այնտեղ կաշխատեմ, իսկ դա ինձ ու քեզ կբավականացնի, դու այլևս աշխատանքի մի՛ գնա, թե չէ Արտյոմը ինձ վրա կբարկանա, կասի՝ չկարողացավ այնպես անել, որ մորն աշխատանքի չուղարկի։

Մայրն ապացուցում էր իր աշխատելու անհրաժեշտությունը, բայց Պավելը համառեց, և մայրը համաձայնեց։

Հաջորդ օրը Պավելը արդեն աշխատում էր սղոցարանում, նոր սղոցած տախտակներ էր դարսում, որ չորանան։ Այնտեղ նա հանդիպեց ծանոթ տղաների՝ Միշկա Լիչուկովին, որի հետ միասին էին սովորել դպրոցում, և Կուլիշով Վանյային։ Միշայի հետ միասին նրանք սկսեցին գործարքով աշխատել։ Բավական լավ աշխատավարձ ստացվեց։ Պավելը ցերեկը անց էր կացնում սղոցարանում, իսկ երեկոյան վազում էր էլեկտրակայան։

Տասներորդ օրվա վերջին Պավելը մորը բերեց վաստակած դրամը։

Դրամը հանձնելիս նա շփոթված մի ոտքից մյուսին էր հենվում և վերջապես խնդրեց.

— Գիտես ինչ, մայրիկ, ինձ համար մի սատինե վերնա-

շապիկ գնիր, կապույտ, հիշում ես, այնպիսին, որ անցյալ տարի ունեի։ Դրա վրա փողի կեսը կգնա, բայց ես էլի կվաստակեմ, մի վախենա, թե չէ սա արդեն հին է,— արդարանում էր նա, կարծես թե ներողություն էր խնդրում իր խընդքանքի համար։

— Իհարկե, իհարկե կգնեմ, Պավլո՛ւշա, հենց այսօր, իսկ վաղը կկարեմ։ Ճիշտ է, դու նոր վերնաշապիկ չունես։— Նա քնքշանքով նայեց որդուն։

Պավելը կանգ առավ վարսավիրանոցի մոտ և գրպանում մի ռուբլի շոշափելով՝ դռնից ներս մտավ։

Վարսավիրը, որ մի գեր տղա էր, տեսնելով ներս եկողին՝ սովորական շարժումով գլխով ցույց տվեց բազկաթոռը.

— Նստեցե՛ք։

Խորունկ, հարմար բազկաթոռին նստելով՝ Պավելը հայելու մեջ տեսավ իր շփոթված, շշկլված կերպարանքը։

— Մեքենայո՞վ,— հարցրեց վարսավիրը։

— Այո՛, այսինքն՝ ո՛չ, մի խոսքով խուզեցեք։ Էն ո՞նց եք ասում, է՛,— և ձեռքով մի հուսահատ շարժում արեց։

— Հասկանում եմ,— ժպտաց վարսավիրը։

Քառորդ ժամից Պավելն այնտեղից դուրս եկավ քրտնած, տանջված, բայց կանոնավոր խուզված ու սանրված մազերով։ Վարսավիրը երկար ու համառ աշխատում էր անհնազանդ դանդուրների վրա, բայց ջուրն ու սանրը հաղթանակեցին, և մազերը հիանալի նստեցին։

Փողոցում Պավելը ազատ շունչ առավ և կեպկան ավելի խոր քաշեց գլխին։

«Ի՞նչ կասի մայրիկը, երբ տեսնի»։

Զուկ սրսալու, ինչպես խոստացել էր, չգնաց Պավելը, և դա Տոնյային վիրավորեց։

«Այնքան էլ ուշադիր չէ այդ հնոցապան տղան»,— բարկությամբ մտածեց նա, բայց երբ Պավելը հաջորդ օրերին էլ չեկավ, աղջիկն սկսեց ձանձրույթ զգալ։

Նա արդեն պատրաստվել էր զբոսնելու գնալ, երբ մայրը բանալով սենյակի դուռը, ասաց.

— Տոնե՛չկա, քեզ մոտ հյուր է եկել։ Կարելի՞ է։

Դռան մեջ կանգնած էր Պավելը, և Տոնյան նրան նույնիսկ չճանաչեց։

Նա հագել էր կապույտ սատինից վերնաշապիկ և սև շալվար։ Մաքուր կոշիկները պսպղում էին, և Տոնյան անմիջապես նկատեց՝ մազերը խուզել էր, նրանք այլևս առաջվա նման փնջերով չէին ցցվում, և թխագեմ հնոցապանը բոլորովին այլ տեսքով երևաց աղջկան։

Տոնյան ուզեց իր զարմանքն արտահայտել, բայց չցանկանալով շփոթեցնել առանց այն էլ իրեն անհարմար զգացող տղային, ձևացրեց, թե չի նկատում զարմանալի փոփոխությունը։

Նա սկսեց հանդիմանել տղային.

— Ինչպե՞ս չեք ամաչում։ Ինչո՞ւ չեկաք ձուկ տրտրելու։ Այդպե՞ս եք ձեր խոսքը կատարում։

— Ես այս քանի օրն աշխատում էի սղոցարանում, գալ չէի կարող։

Նա հո չէր կարող ասել, թե որպեսզի իր համար վերնաշապիկ ու շալվար գնի, նա այդ վերջին օրը աշխատում էր ուժասպառ լինելու չափ։

Բայց Տոնյան ինքն այդ կռահեց, և Պավելի նկատմամբ ունեցած բարկությունն անհետ կորավ։

— Գնանք լճակի մոտ զբոսնելու,— առաջարկեց աղջիկը։ և նրանք գնացին պարտեզ, իսկ այնտեղից դուրս եկան ճանապարհ։

Եվ արդեն որպես մտերմի, որպես մի մեծ գաղտնիք, Պավելը Տոնյային պատմեց սպայից գողացած ատրճանակի մասին և խոստացավ մոտ օրերս գնալ նրա հետ անտառի խորքը և կրակել։

— Տի՛ս, ինձ չմատնես,— հանկարծ ասաց նա «գուս»-ով։

— Ես քեզ երբեք, երբեք չեմ մատնի,— հանդիսավոր կերպով խոստացավ Տոնյան։

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Դասակարգերի սուր, անողոք պայքարը համակել էր Ուկրաինան։ Հետզհետե ավելի ու ավելի մեծ թվով մարդիկ

էին վենք վերցնում, և յուրաքանչյուր ճակատամարտ նոր մասնակիցներ էր ծնում։

Քաղաքի բնակչի համար հանգիստ օրերը հեռավոր անցյալ էին դարձել։

Գալարվում էր բուքը, հրանոթների կրակոցներից ցնցվում էին խարխուլ տնակները, և մարդիկ սեղմվում էին ներքնահարկերի պատերին, փորված ինքնաշեն խրամատներին։

Նահանգը ողողեց տարբեր գույների ու երանգների պետլյուրովյան բանդաների հոսանքը՝ մեծ ու փոքր բատկոներ, զանազան գոլուբներ, արխանգելներ, անգելներ, գորդիաններ և անհամար թվով այլ բանդաներ։

Նախկին սպաներ, աջ և ձախ ուկրաինական էսէռներ, ամեն տեսակ կատարյալ ավանտյուրիստ, որն իր շուրջն էր համախմբում թոկից փախածների մի խումբ, իրեն ատաման էր հռչակում, երբեմն պարզվում էր պետլյուրականների դեղնակապույտ դրոշակը և իր ուժերի ու հնարավորությունների սահմաններում գրավում էր իշխանությունը։

Այս խայտաճամուկ բանդաներից, որոնց օժանդակում էին կուլակությունն ու ատաման Կոնովալցի պաշարողական կորպուսի դալիցիական գնդերը, իր գնդերն ու դիվիզիաներն էր ստեղծում «գլխավոր ատաման Պետլյուրան»։ Էսէռա-կուլակային այդ տականքի վրա էին նետվում պարտիզանական կարմիր ջոկատները, և այն ժամանակ գետինը դողում էր հարյուրավոր ու հազարավոր սմբակներից, ռազմասայլերից ու հրետանային սայլակներից։

Այդ անհանգիստ տասնինը թվի ապրիլ ամսին մահու չափ սարսափած, շշմած քաղքենին, առավոտյան քնած աչքերը դժվարությամբ բաց ու խուփ անելով և իր տնակի լուսամուտները բանալով՝ տագնապով հարցնում էր իրենից ավելի վաղ արթնացած հարևանին...

— Ավտոնոմ Պետրովի՛չ, քաղաքում ի՞նչ իշխանություն է։

Եվ Ավտոնոմ Պետրովիչը, շալվարը քաշելով, վախեցած շուրջն էր նայում.

— Չգիտեմ, Աֆանաս Կիրիլովի՛չ։ Գիշերն ինչ-որ մարդիկ եկան։ Տեսնենք. թե որ հրեաներին կողոպտել սկսեն, նշանակում է, ուրեմն, պետլյուրականներն են, իսկ եթե «ընկերներն» են, խոսակցությունից անմիջապես կհասկացվի։

Ահա ես էլ հետևում եմ, որպեսզի իմանամ, թե ինչ պատկեր կախեմ, որ փորձանքի մեջ չընկնեմ, թե չէ, գիտե՞ք, Գերասիմ Լեոնտիչը, իմ հարևանը, լավ չէր գլխի ընկել և վերցրել ու կախել էր Լենինի պատկերը։ Եվ ահա ներս են պրծնում երեք հոգի ու պարզվում է, որ պետլյուրականների ջոկատից են։ Հենց որ պատկերը տեսնում են, հարձակվում են տանտիրոջ վրա։ Մտրակի մի քսան հարված են հասցնում նրան, հասկանում եք։ «Մենք,— ասում են,— քեզանից, շան որդի, կոմունիստական մոութ, յոթ կաշի կքերթենք»։ Էլ ինչքան էլ որ արդարանում է, բղավում, ոչինչ չի օգնում։

Նկատելով խճուղով անցնող զինված խմբերի, բնակիչները փակում էին լուսամուտները և թաքնվում։ Խառը ժամանակ է...

Իսկ բանվորները թաքցրած ատելությամբ էին նայում պետլյուրական ջարդարարների դեղնակապույտ դրոշակներին։ Անզոր լինելով ինքնակա շովինիզմի այդ ալիքի դեմ՝ նրանք միայն այն ժամանակ էին աշխուժանում, երբ սեպի պես քաղաք էին մտնում անցնող կարմիր զորամասերը՝ դաժանորեն կովելով ամեն կողմից իրենց շրջապատող ժովտոբլակիտանիկների[1] հետ։ Մեկ-երկու օր հարազատ դրոշը կարմրին էր տալիս քաղաքային վարչության շենքի վրա, բայց զորամասը հեռանում էր, և խավարն էր իշխում նորից։

Այժմ քաղաքի տերը գնդապետ Գոլուբն էր, Անդրդնեպրյան դիվիզիայի «փառքն ու պարծանքը»։

Երեկ նրա թոկից փախածների երկու հազարանոց ջոկատը հանդիսավոր կերպով քաղաք մտավ։ Պան գնդապետն ընթանում էր ջոկատի առջևից՝ մի հիանալի սևաթույր հովատակ հեծած և, չնայած ապրիլյան տաք օրերին, հագել էր կովկասյան այծենակաճ, և զապորոժյան գառան մորթուց գլխարկ՝ մորու գույնի վերամասով, չերքեզկա՝ իր բոլոր զենքերով՝ դաշույն և արծաթաքանդակ սուր։

Գեղեցիկ է պան գնդապետ Գոլուբը, հոնքերը սև են, դեմքը գունատ, անընդհատ հարբեցողությունից թեթևակի դեղնած։ Ատամների արանքում՝ ծխամորճ։ Հեղափոխությունից առաջ պան գնդապետը գյուղատնտես էր եղել շաքարի գործարանի պլանտացիաներում, բայց այդպիսի կյանքը տաղտ-

[1] Ուկրաիներեն նշանակում է դեղնակապույտ։ (Ս.Հ.)։

կալի էր, ատամանի վիճակի հետ չի կարելի համեմատել, և երկրում փոթորկվող պղտոր տարերքի միջից գյուղատնտես գուրս լողաց որպես պան գնդապետ Գոլուբ։

Փոքրիկ քաղաքի միակ թատրոնում ժամանածների պատվին շքեղ երեկույթ էր կազմակերպված։ Պետլյուրական ինտելիգենցիայի ամբողջ «ծաղիկը» ներկա էր այնտեղ։ Ներկա էին ուկրաինական ուսուցիչները, տերտերի երկու աղջիկները, մեծը՝ գեղեցկուհի Անյան, և կրտսերը՝ Դինան, գրաֆ Պոտոցկու նախկին ծառայողները և քաղքենիների մի խումբ, որն իրեն անվանում էր «ազատ կազակություն» — ուկրաինական էսէռների վերջնեկները։

Թատրոնը լեփ-լեցուն էր։ Ուսուցչուհիները, տերտերի աղջիկները և քաղքենուհիները, որոնք հագել էին ուկրաինական ազգային վառ, վրան ծաղիկներ ասեղնագործած, խայտաբղետ հուլունքներով ու ժապավեններով տարազներ, շրջապատված էին խթանները զրնգացնող ավագների խմբով, այս բոլորը կարծես արտանկարված լիներ զապորոժցիներ պատկերող հին նկարից։

Թնդում էր գնդի նվագախումբը։ Բեմի վրա տենդագին պատրաստում էին «Նազար Ստոդոլի» բեմադրությունը։

Էլեկտրականություն չկար։ Պան գնդապետին այդ մասին զեկուցեցին շտաբում։ Սա, որ պատրաստվում էր անձամբ իր ներկայությամբ պատվել երեկոն, լսեց իր համհարզ խորունժի Պալյանիցյային, բայց իրականում՝ նախկին ենթասպա Պոլյանցևին, և անփութորեն, բայց տիրաբար նետեց.

— Լույս պետք է լինի։ Մեռի՛ր, բայց մոնտյոր գտիր և էլեկտրակայանը գործի գցիր։

— Լսում եմ, պան գնդապետ։

Խորունժի Պալյանիցյան շմեռավ և մոնտյորներ գտավ։ Մի ժամ հետո երկու պետլյուրականներ Պավելին տանում էին էլեկտրակայան։ Նույն ձևով տարան նաև մոնտյորին և մեքենավարին։

Պալյանիցյան կարճ ասաց.

— Եթե մինչև ժամը 7-ը լույս չլինի, երեքիդ էլ կկախեմ,— նա ձեռքով ցույց տվեց երկաթե ձողը։

Կարճ ձևակերպված այդ եզրակացություններն իրենց գործը տեսան, և նշանակված ժամկետին լույս տրվեց։

Երեկույթն արդեն իր լեռն ընթացքի մեջ էր, երբ երեվաց գնդապետն իր ընկերուհու՝ բուֆետապանի աղջկա հետ, որի տանն ինքն ապրում էր։ Սա փարթամ կրծքով և հաճարի գույնի մազերով մի աղջիկ էր։

Հարուստ բուֆետապանն իր աղջկան ուսման էր տվել նահանգական քաղաքի գիմնազիայում։

Նստելով պատվավոր տեղում, ուղղակի բեմի մոտ, պան գնդապետը նշան տվեց, թե կարելի է սկսել, և վարագույրն անմիջապես վեր սլացավ։ Հանդիսատեսների աչքերի առաջ երևաց ու անհետացավ բեմից փախչող ռեժիսորի թիկունքը։

Ներկայացման ժամանակ այնտեղ գտնվող ավագներն իրենց տիկնանց հետ բուֆետում բավականաչափ վայելեցին առաջին տեսակի ինքնաքաշ օղի, որն այնտեղ էր բերել տվել ամեն տեղ հասնող Պալյանիցյան, ինչպես նաև ամեն տեսակի ուտելիքներ, որ ձեռք էին բերված բռնագանձման կարգով։ Ներկայացման վերջում բոլորը թունդ հարբած էին։

Բեմ թռչող Պալյանիցյան թատերական ձևով ձեռքը թափահարեց և հայտարարեց.

— Հարգելի պարոննե՛ր, հիմա կսկսենք պարերը։

Դահլիճում համերաշխ ծափահարեցին։ Բոլորը բակ դուրս եկան, հնարավորություն տալով պետլյուրական զինվորներին, որոնք մոբիլիզացված էին երեկույթը պաշտպանելու, դուրս քաշել աթոռները և ազատել դահլիճը։

Կես ժամ հետո թատրոնում ամեն ինչ իրար էր խառնվել։

Տաքացած պետլյուրական ավագները կտրիճորեն հոպակ էին պարում շոգից կարմրատակած տեղական գեղեցկուհիների հետ, և նրանց ծանր ոտքերի դոփյունից դողում էին խարխուլ թատրոնի պատերը։

Այդ ժամանակ ջրաղացի կողմից քաղաք էր մտնում զինված ձիավոր մի ջոկատ։

Քաղաքի ծայրամասում պետլյուրականների ուղեկալը, որ զինված էր գնդացիրներով, նկատելով շարժվող հեծելախումբը՝ անհանգստացավ և նետվեց դեպի գնդացիրը։ Փակաղակները շրխկացին, գիշերվա մեջ հնչեց սուր կանչը.

— Կա՛ց։ Ո՞վ է գալիս։

Խավարից առաջացան երկու մուգ կերպարանքներ, և

նրանցից մեկը, մոտենալով ուղեկային՝ բարձր, արբշիռ բասով մոնչաց.

— Ես՝ ատաման Պավլյուկս, իմ ջոկատով, իսկ դուք գուլուրկաններ՞ եք։

— Այո՛,— պատասխանեց առաջ անցած ավագը։

— Որտե՞ղ տեղավորեմ ջոկատս,— հարցրեց Պավլյուկը։

— Ես հիմա հեռախոսով շտաբին հարցում կանեմ,— պատասխանեց նրան ավագը և անհետացավ ճանապարհի մոտի փոքրիկ տնակում։

Մի րոպե հետո այնտեղից դուրս վազեց և հրամայեց.

— Գնդացիրը ճանապարհից վերցրե՛ք, տղե՛րք, ճանապարհ տվեք պան ատամանին։

Պավլյուկը սանձը ձգեց և ձին կանգնեցրեց լուսավորված թաարոնի մոտ, որի շուրջը աշխույժ դրոսանք էր։

— Ոչո՜, այստեղ ուրախ է,— ասաց նա, շրջվելով դեպի իր կողքին կանգնած հսաուլը։— Իջնենք, Գուկմա՛ն, մենք էլ ի դեպ, քեֆ կանենք։ Մեզ համապատասխան կանայք կընտրենք, այստեղ, ինչքան ուզես, կան։ Է՛յ, Սատելեժկո — գոչեց նա,— տեղավորի՛ր տղերքին բնակարաններում։ Մենք մնում ենք այստեղ։ Ուղեկցորդ պահակախումբը կմնա ինձ հետ։— Եվ նա ծանրորեն գետին ցատկեց սայթաքող ձիուց։

Թաարոնի մուտքի մոտ Պավլյուկին կանգնեցրին երկու զինված պետլյուրականներ։

— Տո՛մս։

Բայց Պավլյուկն արհամարհանքով նայեց նրանց, մեկին ուսով դեն հրեց, նրա հետևից նույն կարգով առաջ շարժվեցին նրա ջոկատից մոտ տասներկու մարդ։ Սրանց ձիերը ցանկապատից կապված կանգնած էին հենց այստեղ։

Նոր ժամանածներին անմիջապես նկատեցին։ Հատկապես իր վիթխարի կերպարանքով աչքի էր ընկնում Պավլյուկը, որ հագել էր լավ մահուդից կարված սպայական ֆրենչ, գվարդիական կապույտ շալվար և բրդոտ փափախ։ Ուսից կախված էր մաուզերը, գրպանից ցցվել էր ձեռքի նռնակը։

— Սա ո՞վ է,— շշնջացին պարողների շրջանի եռևում կանգնածները. շրջանում այժմ կտրիճաբար մրրկապար էր պարում Գոլուբի օգնականը։

Նրա հետ պտտվում էր տերտերի մեծ աղջիկը։ Հովհարաձև վեր բարձրացած շրջազգեստը հիացած զորականների աչքերի առաջ բաց էր անում տերտերի չափը կորցրած աղջկա մետաքսե տրիկոն։

Ուսով դեսուդեն հրելով ամբոխին՝ Պավլյուկն ուղղակի շրջանի մեջ մտավ։

Պղտոր հայացքը նա հառեց տերտերի աղջկա ոտքերին, լիզեց չորացած շրթունքները և ուղղակի շրջանի միջով գնաց դեպի նվագախումբը, կանգնեց բեմերի մոտ ու թափահարեց հյուսված նագայկան.

— Հոպա՛կ թեժացրու։

Նվագախմբի դիրիժորը դրա վրա ուշադրություն չդարձրեց։

Այն ժամանակ Պավլյուկը կտրուկ շարժումով ձեռքը թափահարեց, և դիրիժորի մեջքի երկարությամբ իջավ նագայկայի հարվածը։ Նա օձից խայթվածի պես վեր թռավ։

Երաժշտությունն անմիջապես ընդհատվեց, դահլիճը վայրկենապես պապանձվեց։

— Դա հանդգնություն է,— փրփրեց բուֆետապանի դուստրը։— Դու այդ չպիտի թույլ տաս,— նա ջղայնորեն սեղմեց իր կողքին նստած Գոլուբի արմունկը։

Գոլուբը ծանրորեն բարձրացավ, ոտքով հրեց իր առաջ կանգնած աթոռը, երեք քայլ արեց դեպի Պավլյուկը և, ընդհուպ մոտենալով նրան՝ կանգ առավ։ Նա անմիջապես ճանաչեց Պավլյուկին։ Գոլուբը դեռ չմաքրած հաշիվներ ուներ գավառի իշխանության հարցում իր այդ մրցակցի հետ։

Մի շաբաթ առաջ Պավլյուկն ամենաստոր ձևով պան գնդապետի ոտքի տակը քար էր նետել։

Կովի թեժ պահին կարմիր գնդի հետ, սա առաջին անգամ չէր, որ թակում էր գոլուբականներին, Պավլյուկը փոխանակ բոլշևիկներին թիկունքից հարվածելու, խուժեց բնակավայրը, տրորեց կարմիրների թեթև ուղեկալները և պաշտպանական առաջակալ նշանակելով՝ չտեսնված կողոպուտ կազմակերպեց բնակավայրում։ Իհարկե, ինչպես և վայել էր իսկական պետլյուրականին, հրեա ազգաբնակչության ջարդ ևս կազմակերպեց։

Կարմիրներն այդ ժամանակ հողմացրիվ արին գոլուբովցիների աջ թևը և հեռացան։

Իսկ այժմ այդ լկտի ռոմիսարը խուժել է այստեղ և դեռ համարձակվում է իր՝ պան գնդապետի ներկայությամբ ծեծել հենց նրա կապելմեյստրին։ Ոչ, այդ նա հանդուրժել չի կարող։ Գոլուբը հասկանում էր, որ եթե նա այժմ զոռոզացած ատամանիկին իր տեղը ցույց չտա, իր հեղինակությունը գնդում ոչնչացած կլինի։

Աչքերն իրար հառած՝ նրանք մի քանի վայրկյան լուռ կանգնած էին։

Ամուր սեղմելով ձեռքում թրի երախակալը և մյուս ձեռքով գրպանում շոշափելով նագանը՝ Գոլուբը ծղրտաց.

— Ինչպե՞ս ես համարձակվում իմ մարդկանց խփել, սրիկա՛։

Պավլյուկի ձեռքը դանդաղորեն սահեց դեպի մաուզերի պատյանը։

— Կամաց, պա՛ն Գոլուբ, մի քիչ կամաց, թե չէ ոտքդ կսայթաքի։ Կոշտուկս մի կոխիր, կբարկանամ։

Դա համբերության բաժակը լցրեց։

— Վերցնել սրանց, թատրոնից դուրս շպրտել և յուրաքանչյուրին քսանական հարված ուտեցնել,— բղավեց Գոլուբը։

Պավլյուկականների վրա որսի շների ոհմակի նման ամեն կողմից թափվեցին ավագները։

Հատակին նետված էլեկտրալամպի պես ճայթեց ինչ-որ մեկի կրակոցը, և դահլիճում շների երկու ոհմակի նման պտտվեցին, իրար խառնվեցին կովողները։ Կույր ծեծկռտուքի մեջ թրերով հարվածում էին իրար, բռնում իրար մազափնջերից և ուղղակի կոկորդից, իսկ մահու չափ ահաբեկված կանայք խոճկորի ճղավոցով մի կողմ էին փախչում իրար կոկորդ բռնած այդ մարդկանցից։

Մի քանի րոպե հետո զինաթափ արված պավլյուկականներին ծեծելով քարշ տվեցին բակ և նետեցին փողոց։

Պավլյուկը կովում կորցրեց իր փափախը, նրա դեմքը արյունլվիկ էին արել, զինաթափել նրան. նա կատաղել էր։ Իր ջոկատի հետ թռչելով ձիերի վրա՝ նա սլացավ փողոցով։

Երեկույթը խանգարված էր։ Այս ամբողջ անցուդարձից հետո ոչ ոքի մտքով չէր անցնում ուրախանալ։ Կանայք պարելուց կտրականապես հրաժարվեցին և պահանջեցին իրենց տուն տանել, բայց Գոլուբը ծառս եղավ։

— Ոչ ոքի դահլիճից դուրս չթողնել, պահակներ դնել,— հրամայեց նա։

Պալյանիցյան շտապով կատարեց հրամանները։

Ամեն կողմից թափվող բողոքներին Գոլուբը համառորեն պատասխանում էր.

— Պարերը մինչև առավոտ են տևելու, հարգելի տիկնա՛յք և պարոնա՛յք։ Ես ինքս եմ պարում վալսի առաջին տուրը։

Երաժշտությունը նորից նվագեց, բայց այնուամենայնիվ հնարավոր չեղավ ուրախանալ։

Գնդապետը տերտերի դստեր հետ հազիվ մի շրջան էր արել, երբ ներս խուժած պահակները բղավեցին։

— Պավլյուկականները շրջապատո՞ւմ են թատրոնը։

Բեմի մոտի լուսամուտի փեղկը, որ նայում էր փողոց, շառաչյունով դուրս թռավ։ Ջարդված շրջանակից ցցվեց գնդացրի բութ շունչը։ Նա շուռումուռ էր գալիս, շոշափում էր դեսուդեն ընկնող կերպարանքները և նրանից, ինչպես սատանայից, նետվում էին դեպի դահլիճի մեջտեղը։

Պալյանիցյան կրակեց առաստաղի հազար մոմանոց լամպի վրա, և լամպը ռումբի պես պայթելով՝ բոլորին ողողեց ապակու մանր անձրևով։

Տիրեց խավարը։ Փողոցից բղավում էին.

— Բոլորը բա՛կ դուրս գան,— և հետևում էր սարսափելի հայհոյանքը։

Կանանց վայրենի, հիստերիկ ճիչերը, դահլիճում դեսուդեն նետվող Գոլուբի կատաղի հրամանները, որն աշխատում էր հավաքել շփոթված ավագներին, բակի կրակոցներն ու ճիչերը, այս բոլորը միախառնվել և վեր էին ածվել մի աներևակայելի աղմուկ-աղաղակի։ Ոչ ոք չնկատեց, թե ինչպես Պալյանիցյան վարպետորեն դուրս թռավ, հետևի մուտքից սլացավ հարևան ամայի փողոցը և սուրաց դեպի Գոլուբի շտաբը։

Կես ժամ հետո քաղաքում կատարյալ ճակատամարտ էր։ Գիշերվա խաղաղությունն ալեկոծվեց կրակոցների անընդհատ դղրդյունով։ Մանրահատիկ կտկտացնում էին գնդացիրները։ Բոլորովին շվարած բնակիչները վեր թռան իրենց տաք մահճակալներից, կպան լուսամուտներին։

— Շուտով կրակոցները հանդարտվեցին, միայն քաղաքի ծայրում շան պես, ընդհատ-ընդհատ դեռ հաչում էր գնդացիրը։

Կռիվը դադարեց։ Բացվում էր լույսը...

Քաղաքում լուրեր տարածվեցին ջարդի մասին։ Այդ լուրերը հասան մինչև հրեական տնակները, որոնք մանր, ցածրիկ, շեղաչք լուսամուտներով շենքեր էին, ինչ-որ ձևով տեղավորված դեպի գետը տանող զառիթափի վրա։ Տուն կոչվող այդ տուփերում անհավանական թվացող խտությամբ ապրում էին չքավոր հրեաները։

Տպարանում, ուր արդեն երկրորդ տարին էր, ինչ աշխատում էր Սերյոժա Բրուզդակը, գրաշարներն ու բանվորները հրեաներ էին։ Սերյոժան ընտելացել էր նրանց, ինչպես հարազատների։ Համերաշխ ընտանիք կազմած՝ նրանք պաշտպանվում էին տիրոջից՝ պարարտ, ինքնաբավական պարոն Բլյումշտեյնից։ Տիրոջ և տպարանի աշխատողների միջև անընդհատ պայքար էր գնում։ Բլյումշտեյնն առիթ էր փնտրում նրանցից ավելի շատ պոկելու, ավելի քիչ վճարելու, և այդ հողի վրա մի քանի անգամ տպարանը երկու-երեք շաբաթով փակվել էր. տպարանի բանվորները գործադուլ էին արել։ Նրանք տասնչորս հոգի էին։ Սերյոժան, որ ամենից փոքրն էր, օրական տասներկու ժամ պտտեցնում էր տպագրական մեքենայի անիվը։

Այսօր Սերյոժան նկատեց բանվորների անհանգստությունը։ Վերջին անհանգիստ ամիսներին տպարանն աշխատում էր պատվերից պատվեր։ Տպագրում էին «գլխավոր» ատամանի կոչերը։

Սերյոժային մի անկյուն կանչեց թոքախտավոր գրաշար Մենդելը։

Նայելով Սերյոժային իր թախծոտ աչքերով՝ նա ասաց.

— Գիտե՞ս, որ քաղաքում ջարդ է լինելու։

Սերյոժան զարմացած նայեց նրան։

— Ո՛չ, չգիտեմ։

Մենդելը շորացած, դեղին ձեռքը դրեց Սերյոժկային ուսին և խոսեց հայրական վստահությամբ.

— Ջարդ կլինի, դա փաստ է։ Հրեաներին կկոտորեն։ Ես քեզ հարցնում եմ. դու ցանկանո՞ւմ ես քո ընկերներին օգնել այդ դժբախտության մեջ, թե ոչ։

— Իհարկե, ցանկանում եմ, եթե կարող եմ։ Ասա՛, Մենդել։

Գրաշարները սկսեցին ականջ դնել խոսակցությանը։

— Դու հիանալի տղա ես, Սերյո՛ժա, մենք քեզ հավատում ենք։ Չէ՞ որ քո հայրն էլ է բանվոր։ Տո՛ւն վազիր հիմա և խոսիր հորդ հետ, թե կհամաձայնի՞ նա, արդյոք, իր մոտ թաքցնել մի քանի ծերունիների ու կանանց, իսկ մենք նախապես կպայմանավորվենք, թե ով ձեզ մոտ թաքնվի։ Հետո խոսիր ընտանիքիդ անդամների հետ, թե էլ ում մոտ կարելի է թաքնվել։ Այդ բանդիտները ռուսներին առայժմ ձեռք չեն տալիս։ Վազի՛ր, Սերյոժա, ժամանակը չի սպասում։

— Լա՛վ, Մենդել, վստահ եղիր, ես հիմա կվազեմ Պավկայի ու Կլիմկայի մոտ, նրանց մոտ անպայման կընդունեն։

— Մի բոպե սպասիր,— անհանգստացավ Մենդելը՝ նա պահելով հեռանալու պատրաստվող Սերյոժային։— Ովքե՞ր են այդ Պավկան ու Կլիմկան։ Դու նրանց լա՞վ գիտես։

Սերյոժան վստահորեն գլխով արեց։

— Դե, իհարկե, իմ ընկերներն են։ Պավկա Կորչագինը. նրա եղբայրը փականագործ է։

— Հա՛, Կորչագինը,— հանգստացավ Մենդելը։— Դրան ես գիտեմ, նրա հետ մի տան մեջ ենք ապրել։ Դրան կարելի է։ Գնա՛, Սերյո՛ժա, և շո՛ւտ վերադարձիր ու պատասխան բեր։

Սերյոժկան փողոց թռավ։

Ջարդն սկսվեց պավլյուկականների ջոկատի գոլուբականների հետ տեղի ունեցած կռվի երրորդ օրը։

Ջարդված ու քաղաքից ետ մղված Պավլյուկը հեռացավ և գրավեց հարևան բնակավայրը՝ գիշերային կռվում կորցնելով երկու տասնյակ մարդ։ Այդքան մարդ էլ կորցրին գոլուբականները։

Սպանվածներին շտապով գերեզմանատուն տարան և նույն օրն ևեթ թաղեցին առանց հատուկ հանդիսավորության, որովհետև այստեղ պարծենալու բան չկար։ Երկու թափառական շների նման իրար կծոտել էին երկու ատամանները, և

Թաղման շուրջն աղմուկ սարքելն անհարմար էր։ Պալյանիցյան ցանկանում էր աղմուկով թաղել՝ Պավլյուկին հայտարարելով կարմիր բանդիտ, բայց նրան դեմ էր էսէռական կոմիտեն, որի գլուխ էր կանգնած տեր Վասիլին։

Գիշերային ընդհարումը Գոլուբի գնդում դժգոհություն էր առաջացրել հատկապես Գոլուբի պահակախումբը կազմող հարյուրյակում, որտեղ սպանվածներն ամենից ավելի էին, և որպեսզի այդ դժգոհությունը մարի, ու գնդի ոգին բարձրանա, Պալյանիցյան Գոլուբին առաջարկեց «թեթևացնել կյանքը», ինչպես ծաղրանքով արտահայտվում էր նա ջարդի մասին։ Նա Գոլուբին ապացուցում էր դրա անհրաժեշտությունը՝ հենվելով ջոկատում եղած դժգոհության փաստի վրա։ Այդ ժամանակ գնդապետը, որը սկզբում չէր ցանկանում բուֆետապանի աղջկա հետ իր հարսանիքի նախօրյակին խանգարել քաղաքի հանգստությունը, Պալյանիցյայի սպառնալիքների տակ համաձայնեց։

Ճիշտ է, պան գնդապետին այդ օպերացիան մի քիչ շփոթեցնում էր, որովհետև նա մտել էր էսէռների կուսակցության մեջ, և հետո թշնամիները կարող էին նրա անվան շուրջը անցանկալի խոսակցություններ ստեղծել, թե ահա նա՝ գնդապետ Գոլուբը, ջարդարար է, և անպայման կբամբասեն նրան «գլխավոր» ատամանի մոտ։ Բայց առայժմ Գոլուբը «գլխավորից» քիչ կախում ուներ և իր ջոկատով մատակարարվում էր ինչպես կարողանում էր։ Բայց «գլխավորն» ինքն էլ հիանալի գիտեր, թե ինչ տղերք են իրեն ծառայում, և ինքն էլ հաճախ դիրեկտորիայի կարիքների համար փող էր պահանջում այսպես կոչված ռեկվիզիցիաներից, իսկ ինչ վերաբերում է ջարդարարի հոչակին, ապա Գոլուբն արդեն բավական պատկառելի հոչակ ուներ։ Դրա վրա նա շատ քիչ բան կարող էր ավելացնել։

Կողոպուտն սկսվեց վաղ առավոտից։

Փոքրիկ քաղաքը լողում էր աղջամուղջի գորշ մեգի մեջ։ Դատարկ փողոցներն անկենդան էին և հիշեցնում էին քաթանի թրջված շերտեր, որ անկարգ պարուրել էին անհեթեթ ձևով շինված հրեական թաղը։ Կիսակույր աչքեր հիշեցնող լուսամուտները վարագուրված էին կամ կրկնափեղկերով ամուր փակված։

Արտաքուստ թվում էր, թե թաղը քնած էր լուսադեմի խորունկ քնով, բայց տնակներում քնած չէին։ Ընտանիքները, հագուստները հագին, պատրաստվում էին սկսվող դժբախտությանը, հավաքվում էին որևէ փոքրիկ սենյակում, և միայն ոչինչ չհասկացող մանր երեխաներն էին անխոով, հանգիստ քնով քնած իրենց մայրերի ձեռքերի վրա։

Այդ առավոտ Գոլուբի համհարզ Պալյանիցյային երկար ժամանակ արթնացնել էր փորձում Գոլուբի թիկնապահ խմբի պետ Սալոմիգան, սև, գնչուական դեմքով մի մարդ, այտին դաշույնի հարվածից մնացած մի թխակապույտ սպիով։

Համհարզը դժվար էր արթնանում։ Ոչ մի կերպ չէր կարողանում ազատվել այդ հիմար երազից։ Դեռևս ճանկերով նրա կոկորդն էր շանգռում ծոմավող սապատավոր սատանան, որից պրծում չուներ ամբողջ գիշերը։ Եվ երբ վերջապես բարձրացրեց ցավից պայթող գլուխը, հասկացավ, որ այդ Սալոմիգան է իրեն արթնացնում։

— Դե վե՛ր կաց, է՛, խոլերա՛,— նրա ուսը թափահարեց Սալոմիգան։— Արդեն ուշ է, սկսելու ժամանակն է։ Մի քիչ էլ ավելի կիմեիր, էլի։

Պալյանիցյան բոլորովին արթնացավ, նստեց և այրոցքից ծամածռվելով՝ թքեց դառը թուքը։

— Ի՞նչը պիտի սկսենք,— անմիտ աչքերը Սալոմիգային հառեց նա։

— Ինչպե՞ս թե ինչը։ Հրդեհների փոր թափելը։ Չգիտե՞ս։

Պալյանիցյան հիշեց, այո՛, ճիշտ է, նա բոլորովին մոռացել էր, երեկ մի լավ խմեցին գյուղակում, ուր գնացել էր պան գնդապետն իր հարսնացուի և բաժակակիցների մի խմբի հետ։

Գոլուբի համար հարմար էր ջարդի ժամանակ քաղաքից հեռանալը։ Հետո կարելի կլիներ ասել, թե իր բացակայությամբ թյուրիմացություն է տեղի ունեցել, իսկ Պալյանիցյան կհասցնի ամեն ինչ անել, ինչպես պետք է։ Օ՜, այդ Պալյանիցյան «թեթևացման» գծով մեծ մասնագետ է։

Նա մի դույլ ջուր լցրեց գլխին և հասկանալու ընդունակությունը վերականգնեց։ Սկսեց վազվզել շտաբում՝ զանազան հրամաններ տալով։

Պահակախումբ հարյուրյակն արդեն ձի էր հեծել։ Շրջահայաց Պալյանիցյան, հնարավոր բարդություններից խուսափելու համար, հրամայեց ուղեկալ դնել, որը պիտի քաղաքից անջատեր բանվորական ավանը և կայարանը։

Լեշչինսկիների պարտեզում դնդացիր էր դրված, որը դեպի ճանապարհն էր նայում։

Եթե բանվորները մտածեին միջամտել, նրանց արճիճով կդիմավորեին։

Երբ բոլոր նախապատրաստությունները վերջացած էին, ադյուտանտն ու Սալոմիգան թռան ձիերին։

Արդեն ճանապարհ ընկնելիս Պալյանիցյան հիշեց.

— Սպասիր, քիչ մնաց մոռանայի։ Երկու սայլ բերեք, մենք Գոլուբի համար օժիտ կսարքենք։ Հա... հա... հա՞... Առաջին ավարն, ինչպես միշտ, հրամանատարին, իսկ առաջին կնիկը, հա-հա-հա՞, ինձ՝ համհարզիս։ Հասկացա՞ր, անտաշ դմբո։

Վերջինը վերաբերում էր Սալոմիգային։

Սա նայեց նրան իր փայլատակող դեղնավուն աչքերով։

— Բոլորին կհերիքի։

Շարժվեցին խճուղով։ Առջևից՝ համհարզն ու Սալոմիգան, հետևից՝ անկարգ խմբով պահակախմբերի զինվորները։

Վաղորդյան մեղը ցրվեց։

Երկհարկանի տան մոտ, որի վրա կար «Ֆուքս — արդուզարդի վաճառք» ցուցանակը, Պալյանիցյան սանձը ձգեց։

Նրա մոխրագույն բարակոտն զամբիկը սմբակն անհանգիստ խփեց քարին։

— Դե, աստծո օգնությամբ այստեղից էլ կսկսենք,— ասաց Պալյանիցյան և գետին ցատկեց։

— Է՛յ, աղերք, ձիերից իջե՛ք,— շրջվեց նա դեպի իր շուրջը հավաքված պահակախումբը։— Ներկայացումն սկսվում է,— բացատրեց նա։— Տղե՛րք, ոչ ոքի գլխին չտաք, դրա ժամն էլ կգա, կանանց նույնպես, եթե ցանկությունը շատ մեծ չէ, մինչև երեկո դիմացեք։

Պահակախմբի զինվորներից մեկը, ամուր ատամները բացելով՝ բողոքեց.

— Այդ ինչպե՞ս կլինի, պան խորունժի, իսկ եթե խաղաղ համաձայնությամբ լինի՞։

Չորս կողմը խրխնջացին։ Պալյանիցյան խոսողին նայեց հիացմունքով ու հավանությամբ։

— Դե, իհարկե, եթե խաղաղ համաձայնությամբ, արեք ինչ ուզում եք, այդ ոչ ոք իրավունք չունի արգելելու։

Մոտենալով խանութի դռանը, Պալյանիցյան ոտքով ուժեղ հրեց այն, բայց կաղնեփայտե ամուր դուռը նույնիսկ չդողաց։

Պետք չէր այստեղից սկսել։ Համհարզը անցավ փողոցի մյուս կողմը և ուղևորվեց դեպի այն դուռը, որը տանում էր Ֆուքսի բնակարանը։ Ձեռքը դրել էր թրին։ Նրա հետևից շարժվեց Սալոմիգան։

Տանն անմիջապես լսեցին սմբակների դոփյունը սալարկին, և երբ այդ դոփյունը մարեց խանութի մոտ և պատի հետևից ձայներ լսվեցին, նրանց սրտերը կարծես թե պոկվեցին, և մարմիններն անզգայացան։ Տանը երեք հոգի էին։

Հարուստ Ֆուքսը դեռ երեկ էր ծլկել քաղաքից իր աղջիկների ու կնոջ հետ, իսկ տան բարիքին հսկելու էր թողել սպասուհի Ռիվային, մի հանդարտ, խեղճ, տանջիննամյա աղջկա։ Եվ որպեսզի նա չվախենա դատարկ բնակարանում, Ֆուքսն առաջարկել էր բերել ծերուկներին՝ հորն ու մորը, թող երեքով միասին ապրեն մինչև իր վերադարձը։

Խորամանկ վաճառականը թեթևակի առարկող Ռիվային հանգստացրել էր, թե դուցե և ջարդ չլինի. ի՞նչ պիտի վերցնեն աղքատներից։ Իսկ նա վերադարձին Ռիվային մի հագուստի փող կնվիրի։

Երեքն էլ տանջալի հույսով ականջ էին դնում. դուցե թե կանցնեն կգնան, դուցե նրանք սխալվել են, դուցե նրանք կանգ են առել ոչ իրենց տան մոտ, դուցե այդ ուղղակի թվաց իրենց։ Բայց, կարծես թե հերքելով այդ հույսերը, խուլ հարվածեցին խանութի դռանը։

Արծաթազօծ գլխով, ահաբեկ մանկան կապույտ աչքերով ծերունի Պեյսախը կանգնել էր դեպի խանութը տանող դռան մոտ և աղոթք էր շշնջում։ Նա աղոթում էր ամենազոր Եհովային համոզված ֆանատիկոսի ամբողջ կրքոտությամբ։ Նա աղերսում էր հեռու վանել դժբախտությունն այդ տնից, և

նրա կողքին կանգնած պառավն ամուսնու աղոթքի շշունջի միջից անմիջապես չջոկեց մոտեցող քայլերի աղմուկը։

Ռիվան կծկվել էր ամենահեռավոր սենյակում, մեծ կաղնեփայտե բուֆետի հետևը։

Կտրուկ, կոպիտ հարվածը դռանը՝ ջղաձիգ դողով արձագանքեց ծերունիների մարմնում։

— Բաց արա։— Առաջինից ավելի խիստ հարված հասցրին, և լսվեց չարացած մարդկանց հայհոյանք։

Բայց ձեռքերը բարձրացնելու և փականը ետ տանելու ուժ չկար։

Դրսից սկսեցին դուռը ծեծել խզակոթերով։ Դուռն սկսեց ցատկոտել ծխնիների վրա և տեղի տալով ճռնչաց։

Տունը լցվեց զինված մարդկանցով, որոնք անկյունից անկյուն էին վազվզում։ Խանութի դուռը տեղահան արեցին խզակոթի հարվածով։ Մտան այնտեղ, բաց արին արտաքին դռան նիգերը։

Սկսվեց կողոպուտը։

Երբ սայլերը մինչև գլուխ բեռնել էին կտոր-եղենով, կոշիկով ու այլ ավարով, Սալոմիգան ուղևորվեց Գոլուբի բնակարանը և երբ նորից վերադարձավ Ֆուքսի տունը՝ վայրենի մի ճիչ լսեց։

Պալյանիցյան յուրայիններին թողնելով խանութի դատարկելը՝ մտավ սենյակ։ Իր կանաչավուն լուսանի աչքերը պտտեցնելով երեքի վրա՝ ասաց, դիմելով ծերունիներին.

— Կորե՛ք։

Ոչ հայրը, ոչ մայրը տեղից չշարժվեցին։

Պալյանիցյան քայլ արեց դեպի առաջ և դանդաղորեն պատյանից քաշեց թուրը։

— Մայրի՛կ,— սրտապատառ ձայնով ճչաց աղջիկը։

Այդ ճիչն էլ հենց լսեց Սալոմիգան։

Պալյանիցյան շրջվեց դեպի վրա հասնող ընկերները և կարճ նետեց.

— Դուրս նետեցեք սրանց։— Նա մատնացույց արեց ծերունիներին։ Եվ երբ սրանց ուժով դռնից դուրս էին հրել, Պալյանիցյան ասաց վրա հասած Սալոմիգային։— Դու կանգնիր այստեղ դռան մոտ, իսկ ես աղջկա հետ որոշ խոսելիք ունեմ։

Երբ ծերուկ Պեյսախը ճիչը լսելով դեպի դուռը նետվեց, կրծքին հասած ծանր հարվածը նրան դեպի պատը նետեց։ Սերունին ցավից շնչահեղձ եղավ, բայց այդ ժամանակ էգ գայլի պես Սալոմիգային կպավ միշտ հանդարտ պառավ Տոյբան։

— Վա՜յ, թողեք, ի՞նչ եք անում։

Պառավ նետվեց դեպի դուռը, և Սալոմիգան չկարողացավ պոկել իր ժուպանից նրա ծերունական ամուր կառչած մատները։

Ուշքի եկած Պեյսախը կնոջն օգնության նետվեց։

— Թողե՛ք, թողե՛ք... Օ՜, աղջիկս...

Նրանք երկուսով Սալոմիգային դռնից հրեցին։ Նա կատաղորեն գոռուց դուրս քաշեց նագանը և կռած կոթով խփեց ծերունու սպիտակահեր գլխին։ Պեյսախն անձայն ընկավ։

Իսկ սենյակից լսվում էր Ռիվայի ճիչը։

Երբ խելքը կորցրած Տոյբային փողոց քարշ տվին, փողոցը լցվեց ոչ մարդկային աղաղակներով և օգնության աղերսներով։

Տնից լսվող ճիչերն ընդհատվեցին։

Սենյակից դուրս գալով՝ Պալյանիցյան, առանց Սալոմիգային նայելու, որն արդեն ձեռքը դրել էր դռան բռնակին, նրան կանգնեցրեց.

— Մի՛ գնա, խեղդվեց. ես նրան բարձով մի քիչ ծածկեցի։— Եվ ցատկելով Պեյսախի դիակի վրայով՝ ոտքը դրեց մուգ, թանձր խյուսի մեջ։

— Ինչ-որ անհաջող սկսվեց,— փողոց դուրս գալով՝ դժվարությամբ ասաց նա։

Լուռ նրան հետևեցին նաև մյուսները, և նրանց ոտքերից սենյակի հատակին ու սանդուղքների վրա արյունոտ հետքեր մնացին։

Իսկ քաղաքում արդեն ավերածությունն սկսվել էր։ Կարճ, գայլային կռիվներ էին բռնկվում ավարն իրար մեջ բաժանող ջարդարարների միջև, այստեղ-այնտեղ բարձրանում էին մերկացրած սրեր։ Եվ համարյա ամեն տեղ քիթ ու մռութ էր ջարդվում։

Գարեջրատնից սալարկի վրա էին գլորում կաղնեփայտից ջինված տասը գույլանոց տակառներ։

Հետո տները մտան։

Ոչ ոք դիմադրություն չէր ցույց տալիս։ Վաղվղում էին սենյակներում, շտապ խուզարկում էին տան անկյունները և հեռանում էին բեռնավորված՝ իրենց հետևից թողնելով ցնցոտիների և պատառոտված բարձերի ու ներքնակների փետուրների կույտեր։ Առաջին օրը միայն երկու զոհ եղավ՝ Ռիվան ու նրա հայրը, բայց վրա հասնող գիշերը իր հետ բերեց անդարձ կործանում։

Երևկոյան դեմ զանազանակերպ շնագայլերի այդ ամբողջ ոհմակը հարբեց կապտելու աստիճան։ Խմելուց խելքը կորցրած պետլյուրականներն սպասում էին գիշերվան։

Մութը ձեռքերն արձակեց։ Սև խավարի մեջ մարդուն ոչընչացնելն ավելի հեշտ է։ Շնագայլն անգամ գիշերն է սիրում, իսկ չէ՞ որ նա ևս միայն դատապարտվածների վրա է հարձակվում։

Շատերը չեն մոռանա այդ սարսափելի երկու գիշերն ու երեք ցերեկը։ Որքան խեղաթյուրված, աղճատված կյանքեր, որքան պատանի գլուխներ սպիտակեցին այդ արյունոտ ժամերի ընթացքում, որքան արցունք թափվեց, և ով գիտե, երջանի՞կ էին արդյոք նրանք, որ մնացին ապրելու ամայացած հոգով, անջնջելի անարգանքի ու ծաղրուծանակի առաջացրած անլուր տառապանքով, մի այնպիսի կսկիծով, որ հնարավոր չէ հաղորդել, կսկիծ անվերադարձ զոհված հարազատների համար։ Անտարբեր ամեն ինչի նկատմամբ՝ նեղ ներբանցքներում ընկած էին պատանի աղջիկների մարմիններ, ձեռքերը ջղաձգորեն տարածած, լկված ու խոշտանգված։

Եվ միայն գետակի մոտ, դարբին Նաումի տնակում, նրա ջահել կնոջ՝ Սառայի վրա նետվող շնագայլերը դաժան հակահարված ստացան։ Կռանահարի պողպատե մկաններով, քսանչորսամյա երիտասարդի ուժով առլեցուն ըմբիշ դարբինը չտվեց իր ընկերուհուն։

Փոքրիկ տնակում տեղի ունեցած կարճատև, բայց ահավոր կռվում փտած ձմերուկների պես դեսուդեն թռան երկու պետլյուրականների գլուխները։ Դատապարտյալի իր ցասման մեջ սարսափելի դարձած դարբինը մոլեգնորեն պաշտպանում էր երկու կյանք, և չոր կրակոցները երկար ժամանակ ճայթում էին գետակի մոտ, ուր վազել-եկել էին վտանգի հոտն առած գոլուբականները։ Բոլոր փամփուշտները կրակելուց հետո՝ Նաումը վերջին փամփուշտով սպանեց Սառային, իսկ ինքը սվինը հորիզոնական դիրքով բռնած՝ նետվեց մահվանն ընդառաջ։ Արճիճե կարկուտից հնձված՝ նա ընկավ հենց առաջին աստիճանի վրա՝ ճնշելով գետինն իր ծանր մարմնով։

Կուշտ ձիերով մերձակա գյուղերից քաղաք եկան ուներոր գյուղացիներ, բարձեցին սայլերն այն բոլորով, ինչ հավանել էին, և Գոլուբի ջոկատում գտնվող իրենց տղաների կամ ազգականների ուղեկցությամբ շտապեցին երկու-երեք անգամ գյուղ գնալ և վերադառնալ։

Սերյոժա Բրուժակը, որ հոր հետ միասին նկուղում և ձեղնահարկում թաքցրել էր տպարանի ընկերների կեսին, բանջարանոցի միջով տուն էր դառնում։ Հանկարծ նա տեսավ խճուղով փախչող մի մարդու։

Թևերը թափահարելով, երկարաքղանցք, կարկատած սերթուկով, առանց գլխարկի, սարսափից մեռելային դեմքով՝ հևասպառ վազում էր մի ծերունի հրեա։ Նրա ետևից, զորշ ձի հեծած, հարվածի համար թեքված՝ կրկնակոխ սլանում էր մի պետլյուրական։ Լսելով իր թիկունքում ձիու սմբակների դոփյունը՝ ծերունին կարծես պաշտպանվելու համար բարձրացրեց ձեռքերը։ Սերյոժան վազեց դեպի ճանապարհը, նետվեց ձիու առաջ և իր մարմնով պաշտպանեց ծերունուն։

— Ձեռք չտա՛ս, բանդի՛տ, շո՛ւն։

Ցցանկանալով թրի հարվածը ետ պահել՝ հեծյալը թրի տափակ կողմով հարվածեց պատանեկան շեկլիկ գլխին։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Կարմիրները համառորեն նեղում էին «գլխավոր» ատաման Պետլյուրայի զորքերին։ Գոլուբի գունդը ռազմաճակատ կանչվեց։ Փոքրիկ քաղաքում մնացին թիկունքային պահպանության ոչ մեծ մի զորամաս և պարետատունը։

Մարդիկ շարժվել սկսեցին։ Հրեա բնակչությունը ժամա-

նակավոր դադարից օգտվելով՝ թաղեց սպանվածներին, և հրեական թաղամասի մանրիկ տնակներում նորից կյանքը երևան եկավ։

Խաղաղ երեկոներին խով դղրդյունը քաղաք էր հասնում։ Ինչ-որ մոտիկ տեղերում մարտեր էին տեղի ունենում։

Երկաթուղայինները կայարանից տարածվեցին գեպի գյուղերը՝ աշխատանք փնտրելու։

Գիմնազիան փակ էր։

Քաղաքում ռազմական գրություն էր հայտարարված։

Մռայլ ու անհաճո գիշեր էր։

Այդպիսի գիշերներին լայն բացած բիբերն անգամ չեն հաղթահարում խավարը, և մարդիկ շարժվում են խարխափելով, կուրորեն, ամեն մի առվում գլուխ ջարդելու վտանգին ենթարկվելով։

Քաղքենին գիտե, որ այդպիսի ժամանակ պետք է տանը նստել և լույս էլ չվառել։ Լույսը կարող է գեպի ինքը ձգել որևէ մարդու։ Ամենից լավը խավարի մեջ նստելն է, ավելի հանգիստ է։ Մարդիկ կան, որոնք միշտ անհանգիստ են։ Ուզում են, թող շրջեն, քաղքենին նրանց հետ գործ չունի։ Բայց նա ինքը դուրս չի գա։ Վստահ եղեք, դուրս չի գա։

Եվ ահա այդպիսի գիշերով մի մարդ էր քայլում։

Հասնելով Կորշագինի տանը՝ նա զգուշորեն թակեց լուսամուտի շրջանակը և, պատասխան չստանալով՝ երկրորդ անգամ ավելի ուժեղ ու համառորեն թակեց։

Պավկան երազ էր տեսնում, մարդու չնմանող տարօրինակ մի էակ իր վրա էր ուղղել գնդացիրը։ Պավկան փորձում էր փախչել, բայց փախչելու տեղ չկար, իսկ գնդացիրը սարսափելի կերպով թխկացնում էր...

Համառ թակոցից զնգում է ապակին։

Անկողնից վեր թռչելով՝ Պավելը մոտենում է լուսամուտին և փորձում է տեսնել, թե ով է թակում։ Բայց անորոշ, մուգ ուրվագծից բացի ոչինչ չի տեսնում։

Նա տանը մենակ է։ Մայրը մեկնել է ավագ աղջկա մոտ, որի ամուսինն աշխատում էր շաքարի գործարանում որպես մեքենավար։ Իսկ Արտյոմը դարբին է դարձել հարևան գյուղում՝ կռանով վաստակելով իր ապրուստը։

Միայն Արտյոմը կարող էր թակել լուսամուտը։

Պավելը որոշեց բանալ։

— Ո՞վ է,— ձայն տվեց նա դեպի խավարը։

Լուսամուտի տակի կերպարանքը շարժվեց և կոպիտ, խեղդված թավ ձայնը պատասխանեց.

— Ես եմ, ժուխրայը։

Երկու ձեռքեր հենվեցին լուսամուտի գոգին, և Պավելի դեմքի կողքին բռնեց Ֆյոդորի գլուխը։

— Եկել եմ քեզ մոտ գիշերելու։ Ընդունո՞ւմ ես, ախպերի՛կս,— շշնջաց նա։

— Իհարկե,— պատասխանեց Պավելը բարեկամաբար։— Ինչ խոսք կարող է լինել։ Ուղղակի պատուհանից ներս եկ։

Ֆյոդորի ծանր մարմինը խցկվեց լուսամուտից ներս։

Իր մարմնով ծածկելով լուսամուտը՝ Ֆյոդորն անմիջապես չհեռացավ։

Նա կանգնած ականջ էր դնում, և երբ լուսինը դուրս լողաց ամպերի միջից, ու ճանապարհը տեսանելի դարձավ, նա ուշադիր դիտեց այն, ապա շրջվեց դեպի Պավելը։

— Մայրիկին չե՞նք արթնացնի։ Նա, երևի, քնած է։

Պավելը Ֆյոդորին ասաց, որ տանն իրենից բացի ոչ ոք չկա։ Նավաստին իրեն ավելի ազատ զգաց և սկսեց ավելի բարձրաձայն խոսել։

— Այդ կաշի քերթողները, ախպերի՛կս, լրջորեն են իմ հետևից ընկել։ Կայարանում կատարված վերջին գործերի համար հաշիվ են մաքրում։ Եթե մերոնք ավելի համերաշխ լինեին, հրեական ջարդի ժամանակ մենք կկարողանայինք լավ ընդունելություն սարքել «գորշ ժուպանավորների» համար։ Բայց, հասկանո՞ւմ ես, ժողովուրդը դեռ կրակի մեջ մտնել չի համարձակվում։ Գործը ձախողվեց։

Հիմա իմ հետևից են ընկել։ Երկու անգամ ինձ համար շուրջկալ են սարքել։ Այսօր հազիվ թակարդից պրծա։ Մոտենում եմ, հասկանո՞ւմ ես, մի տան, իհարկե, հետնաբակից, կանգնում եմ փայտանոցի մոտ։ Նայում եմ. ինչ-որ մեկը կանգնած է պարտեզում և սեղմվել է ծառին, բայց սվինը մատնեց նրան։ Ես, անշուշտ, ծլկեցի։ Ահա և քեզ մոտ եկա։ Այստեղ ես, ախպերս, մի քանի օրով խարիսխ կգցեմ։ Առարկություններ չունե՞ս։ Դե, ուրեմն, լավ է։

Ժուխրայը փնչացնելով հանեց ցեխոտված կոշիկները։ Պավելը ուրախ էր Ժուխրայի գալու առիթով։ Վերջին ժամանակները էլեկտրականությունը չէր աշխատում, և Պավելը դատարկ բնակարանում մենակ տխրում էր։

Պառկեցին քնելու։ Պավելն անմիջապես քնեց, իսկ Ֆյոդորը երկար ծխում էր։ Հետո մահճակալից վեր կացավ և բարձի տակ խոթած ձեռքը դրված էր ծանր քոլտի վրա և ջերմացնում էր նրան իր տաքությամբ։

Ժուխրայի անսպասելի գալը գիշերով և ութ օրվա ընթացքում նրա հետ համատեղ կյանքը Պավելի համար շատ նշանակալից եղան։ Նա նավաստուց առաջին անգամ այդքան շատ հուզող, կարևոր ու նոր բաներ լսեց, և ջահել հնոցապանի համար այդ օրերը վճռական եղան։

Նավաստին, մկան թակարդն ընկածի պես, երկու դարաններով սեղմված, օգտվելով իր հարկադրական անգործությունից, երկիրը խեղդող «ժողտորլակիանիկների» նկատմամբ ունեցած իր ցասման ու այրող ատելության ամբողջ հուրը հաղորդում էր իրեն ագահորեն լսող Պավելին։

Ժուխրայը խոսում էր զուսեղ, որոշակի, հասկանալի ու հասարակ լեզվով։ Նրա համար անլուծելի հարց չկար։ Նավաստին հաստատ գիտեր իր ճանապարհը, և Պավելն սկսեց հասկանալ, որ գեղեցիկ անուններով (սոցիալ-դեմոկրատներ, սոցիալիստ-հեղափոխականներ, լեհական սոցիալիստների կուսակցություն) զանազան կուսակցությունների ամբողջ այդ կծիկը բանվորների չարամիտ թշնամին է, և կա միայն մի հեղափոխական, անսասան բոլոր հարուստների դեմ պայքարող կուսակցություն, և դա բոլշևիկների կուսակցությունն է։

Առաջ Պավելն այդ բոլորն անհուսալիորեն շփոթում էր։

Եվ այդ մեծ, ուժեղ մարդը, համոզված բոլշևիկը, որին հողմահարել էին ծովային փոթորիկները, ՌՍԴԲ(բ) կուսակցության անդամը՝ հազար ինը հարյուր տասնհինգ թվից, բալթիական նավաստի Ֆյոդոր Ժուխրայը կյանքի դաժան ճըշմարտությունն էր պատմում հմայված հայացքով իրեն նայող երիտասարդ հնոցապանին։

— Ես, ախպերի՛կս, երեխա ժամանակ նույնպես, ա՛յ, քեզ նման էի,— ասում էր նա։— Զգիտեի, թե ուժս որտեղ դնեմ, անհնազանդ բնավորությունս դուրս էր պըրծնում։ Աղքատ էի ապրում։ Նայում ես, պատահում է, պարոնների կուշտ ու զարդարված տղաներին, և ատելությամբ ես համակվում։ Հաճախ էի ես նրանց անողոքաբար ծեծում, բայց դրանից ոչինչ դուրս չէր գալիս, բացի այն, որ հայրս ինձ սարսափելի դնքսում էր։ Առանձին մարդկանց միայնակ պայքարով կյանքը շուտ տալ չի լինի։ Դու, Պավլուշա, բանվորական գործի լավ մարտիկ դառնալու համար ամեն ինչ ունես, միայն թե շատ ես ջահել և դասակարգային պայքարի մասին շատ թույլ հասկացողություն ունես։ Ես քեզ կպատմեմ, ախպերի՛կս, իսկական ճանապարհի մասին, որովհետև գիտեմ, որ քեզանից բան դուրս կգա։ Սուսիկ-փուսիկներին տանել չեմ կարող։ Այժմ ամբողջ աշխարհում հրդեհ է սկըսվել։ Ստրուկներն ապստամբվել են, և հին կյանքը պետք է անողոքաբար գլորել։ Բայց դրա համար խիզախ մարդիկ են հարկավոր, ոչ թե մոր փեշի տակ մեծացած տղաներ, այլ ամուր, հաստատուն ժողովուրդ, որը կռիվ տեսնելով ծակը չի մտնի, չի փախչի, ինչպես ուտիճն է լույսից փախչում, այլ անողոք հարված կհասցնի։

Ժուխրայը բռունցքն ուժեղ խփեց սեղանին։

Նա ոտքի կանգնեց, ձեռքերը խոթեց գրպանները և խոժոռված քայլեց սենյակում։

Անգործությունը ճնշում էր Ֆյոդորին։ Նա շատ էր ափսոսում, որ մնացել էր այդ չնչին քաղաքում, և, հետագայում իր այստեղ մնալն անօգուտ համարելով, հաստատ որոշել էր ապրմաճակատով անցնել կարմիր զորամասերին ընդառաջ։

Քաղաքում էր մնում կուսակցության ինն անդամներից կազմված մի խմբակ, որը պետք է տաներ աշխատանքը։

«Առանց ինձ էլ յոլա կգնաք, իսկ ես այլևս ձեռքերս ծալած նստել չեմ կարող։ Բավական է, առանց այն էլ տասը ամիս կորցրի»,— ջղայնանում էր Ժուխրայը։

— Ո՞վ ես դու, Ֆյոդոր,— հարցրեց նրան մի անգամ Պավելը։

Ժուխրայը կանգնեց, ձեռքերը դրեց գրպանները։ Նա հարցն անմիջապես չհասկացավ։

— Մի՞թե դու չգիտես, թե ես ով եմ։

— Ես կարծում եմ, որ դու բոլշևիկ ես կամ կոմունիստ,— կամացուկ ասաց Պավելը։

Ժուխրայը ծիծաղեց և կատակով խփեց իր լայն կրծքին, որը ծածկված էր շերտավոր շապկով։

— Դա պարզ է, ախպերի՛կս։ Դա նույնպիսի փաստ է, ինչպես և այն, որ բոլշևիկն ու կոմունիստը նույնն բանն են։— Եվ նա անմիջապես լրացավ։— Դե որ այդ հասկանում ես, ապա ուրեմն հիշիր, որ՞ ոչ մի տեղ և ոչ ոքի այդ մասին չի կարելի ասել, եթե չես ուզում, որ իմ աղիքները թափեն։ Հասկացա՞ր։

— Հասկացա,— հաստատուն ձայնով պատասխանեց Պավելը։

Բակում ձայներ լսվեցին, և գուռն առանց բախելու բաց արին։ Ժուխրայի ձեռքն արագորեն սահեց դեպի գրպանը, բայց անմիջապես էլ դուրս եկավ այնտեղից։ Դլուխը փաթաթած սենյակ մտավ նիհարած, գունատ Սերյոժա Բրուզժակը։ Նրան հետևեցին Վալյան և Կլիմկան։

— Բարև, սատանա,— ժպտալով ձեռքը Պավկային մեկնեց Սերյոժան։— Մենք երեքով քեզ մոտ հյուր ենք եկել։ Վալյան ինձ մենակ չի թողնում, վախենում է։ Իսկ Կլիմկան էլ Վալյային մենակ չի թողնում, նույնպես վախենում է։ Նա թեև շեկլիկ է, բայց, այնուամենայնիվ, ջոկում է, թե ում որտեղ է մենակ թողնելը վտանգավոր։

Վալյան ձեռքի ափով կատակով փակեց նրա բերանը։

— Ա՛յ քեզ շաղակրատ,— ծիծաղեց նա։— Սա այսօր Կլիմկային հանգիստ չի տալիս։

Կլիմկան, սպիտակ ատամները ցուցադրելով, քարեհոգաբար ծիծաղում էր։

— Հիվանդ մարդուց ի՞նչ պահանջես։ Վերնահարկն է վնասվել, ահա և դուրս է տալիս։

Բոլորը ծիծաղեցին։

Հարվածից դեռ լրիվ չառողջացած Սերյոժան տեղավորվեց Պավկայի մահճակալին, և շուտով ընկերների միջև աշխույժ զրույց սկսվեց։ Միշտ ուրախ, անվհատ Սերյոժան այժմ սսկված ու ճնշված՝ ժուխրային պատմում էր, թե ինչպես պետլյուրականն իրեն հարվածեց։

Ժուխրայը ճանաչում էր Պավելի մոտ եկած այդ բոլոր պատանիներին։ Նա շատ անգամ էր եղել Բրուզժակների տանը։ Նրան դուր էր գալիս այդ երիտասարդությունը, որը դեռ պայքարի շրջապտույտի մեջ չէր գտել իր ուղին, բայց պարզորոշ արտահայտում էր իր դասակարգի ձգտումը։ Եվ նա ուշադիր լսում էր պատանիների պատմածն այն մասին, թե նրանցից յուրաքանչյուրն ինչպես է օգնել իրենց մոտ հրեական ընտանիքներ թաքցնելուն՝ փրկելով նրանց կոտորածից։ Այդ երեկո ժուխրայը շատ խոսեց բոլշևիկների մասին, Լենինի մասին՝ օգնելով նրանցից յուրաքանչյուրին հասկանալու տեղի ունեցող անցուդարձը։

Ուշ երեկոյան Պավելը ճանապարհ դրեց հյուրերին։

Երեկոները ժուխրայը գնում էր և վերադառնում գիշերը։ Նա մեկնելուց առաջ մնացող ընկերների հետ պայմանավորվում էր նրանց աշխատանքի մասին։

Այդ գիշեր ժուխրայը չվերադարձավ։ Առավոտյան արթնանալով՝ Պավելը տեսավ դատարկ մահճակալը։

Ինչ-որ անորոշ նախազգացումով համակված՝ Կորշագինն շտապ հագնվեց և տնից դուրս եկավ։ Բնակարանը փակելով և բանալին պայմանավորված տեղը դնելով՝ Պավելը գնաց Կլիմկայի մոտ՝ հույս ունենալով այնտեղ որևէ բան իմանալ Ֆյոդորի մասին։ Կլիմկայի մայրը, կարճահասակ, ծաղկատար, լայն դեմքով մի կին, սպիտակեղեն էր լվանում և Կորշագինի այն հարցին, թե չգիտե՞ արդյոք Ֆյոդորի տեղը, կցկտուր պատասխանեց.

— Ի՞նչ է, ես քո Ֆյոդորին նայելուց բացի ուրիշ բան ու գործ չունե՞մ։ Նրա, այդ անպետք սատանայի պատճառով Զոզուլիխայի ամբողջ տունն են տակնուվրա արել։ Քո ինչի՞ն է պետք նա։ Դա ի՞նչ ընկերություն է։ Ընկերներ է գտել՝ Կլիմկան, դու...— Նա չարացած ճմռեց լվացքը։

Կլիմկայի մայրը լեզվանի, կռվարար կին էր։

Կլիմկայենց տնից Պավելը շուտ եկավ դեպի Սերյոժայենց

տուն։ Պատմեց իր անհանգստության մասին։ Վալյան խառնվեց խոսակցությանը.

— Ի՞նչ ես անհանգստանում։ Գուցե նա ծանոթների մոտ է մնացել։— Բայց նրա ձայնի մեջ վստահություն չկար։

Պավելը չկարողացավ մնալ Բրուժակների մոտ։ Գնաց, թեև համոզում էին մնալ ճաշելու։

Տանը մոտեցավ ժուխրային տեսնելու հույսով։

Դուռը կողպեքով փակած էր։ Մանր զգացումով կանգ առավ. դատարկ բնակարանը մտնել չէր ցանկանում։

Մի քանի րոպե նա կանգնած մնաց բակում մտածմունքների մեջ խորասուզված, ապա ինչ-որ անորոշ բանից դրդված գնաց դեպի փայտանոց։ Մագլցելով տանիքի տակ, խուսափելով ոստայնների ժանյակներից՝ նա նվիրական անկյունից դուրս քաշեց փալասների մեջ փաթաթված ծանր «մանլիխյորը»։

Փայտանոցից դուրս գալով և գրպանում զգալով ատրճանակի հուզող ծանրությունը, նա գնաց կայարան։

Ժուխրայի մասին ոչինչ չիմացավ և վերադարձին անտառապետի ծանոթ առանձնատան մոտ քայլերը դանդաղեցրեց։ Իր համար անորոշ մի հույսով նա նայում էր տան լուսամուտներին, բայց տունն ու պարտեզն ամայի էին։ Երբ առանձնատունը ետ մնաց՝ նայեց պարտեզի անցյալ տարվա ժանգոտած տերևներով ծածկված շավիղներին։ Պարտեզը ևս աչքաթող արված, լքված տեսք ուներ։ Երևում էր, որ հոգատար տիրոջ ձեռք չէր դիպչում նրան։ Եվ այդ մեծ, հին տան ամայությունն ու լռությունն ավելի տխրեցրեց Պավելին։

Տոնյայի հետ ունեցած վերջին տարաձայնությունը նախորդ բոլոր տարաձայնություններից ամենից ավելի լուրջն էր։ Այն տեղի ունեցավ անսպասելիորեն, համարյա մի ամիս առաջ։

Դանդաղորեն քայլելով դեպի քաղաք, ձեռքերը գրպանները խոթած՝ Պավելը վերհիշում էր, թե ինչպես բռնկեց այդ տարաձայնությունը։

Ճանապարհի վրա պատահական հանդիպումներից մեկի ժամանակ Տոնյան նրան իր մոտ հյուր կանչեց։

— Հայրս ու մայրս գնում են Բոլշանսկիների մոտ անվանակոչության։ Տանը միայն ես կլինեմ։ Ե՛կ, Պավլո՛ւշա։

Մենք կկարդանք Լեոնիդ Անդրեևի շատ հետաքրքիր մի գիրքը՝ «Սաշա Ժիգուլյովը»։ Ես արդեն կարդացել եմ, բայց քեզ հետ սիրով նորից կկարդամ։ Մենք երեկոն շատ լավ կանցկացնենք, կգա՞ս։

Սպիտակ գլխարկի տակից, որը կիպ գրկել էր նրա խիտ շագանակագույն մազերը, սպասողական հայացքով Կորչագինին էին նայում նրա մեծ աչքերը։

— Կգամ։

Եվ նրանք բաժանվեցին։

Պավելն շտապում էր դեպի մեքենաները և այն մտքից, թե առջևում մի ամբողջ երեկո է՝ Տոնյայի ընկերակցությամբ, թվում էր, որ հնոցներն ավելի պայծառ են վառվում և փայտերն ավելի ուրախ են ճարճատում։

Նույն երեկոյան, երբ նա բախեց լայն շքամուտքի դուռը, դուրս եկավ Տոնյան։ Նա մի քիչ շփոթված ասաց.

— Ինձ մոտ հյուրեր կան։ Ես նրանց չէի սպասում, Պավլո՛ւշա, բայց դու չպետք է հեռանաս։

Կորչագինը շրջվեց դեպի դուռը՝ պատրաստվելով գնալ։

— Գնա՛նք,— բռնեց աղջիկը նրա թևից։— Նրանց համար օգտակար կլինի քեզ հետ ծանոթանալը։— Եվ նա քարշ տալով՝ Պավելին սեղանատան միջով տարավ իր սենյակը։

Մտնելով ներսը՝ նա դարձավ նստած երիտասարդներին և ժպտալով ասաց.

— Դուք ծանոթ չե՞ք։ Իմ բարեկամ Պավել Կորչագինը։

Սենյակի մեջտեղում դրած փոքրիկ սեղանի շուրջը նստած էին՝ Կոլա Սուխարկոն, մի սիրունիկ, թխավուն, քմահաճ գծագրություն ունեցող բերանով և պչրանք արտահայտող սանրվածքով գիմնազիստուհի, Պավելին անծանոթ մի ինչ-որ լողլող պատանի, սև, վայելուչ պիջակով, վեժևտալից փայլող լպստած մազերով, մոխրագույն աչքերով և ձանձրացող հայացքով, իսկ նրանց արանքում՝ Վիկտոր Լեշչինսկին, գիմնազիստական նրբագեղ բաճկոնով։ Հենց որ Տոնյան դուռը բաց արեց, Պավելն առաջինը Լեշչինսկուն նկատեց։

Լեշչինսկին Կորչագինին անմիջապես ճանաչեց, և նրա նուրբ սլաքանման հոնքերը զարմանքից բարձրացան։

Պավելը մի քանի վայրկյան լուռ կանգնած էր դռան մոտ՝ այրելով Վիկտորին իր շար հայացքով։ Այդ անհարմար լռու-

թյունն շտապեց խախտել Տոնյան՝ հրավիրելով Պավելին ներս մտնել, ապա դառնալով Լիզային ասաց.

— Ծանոթացի՛ր։

Սուխարկոն, հետաքրքրությամբ դիտելով ներս եկողին՝ տեղից բարձրացավ։

Պավելը կտրուկ շրջվեց, կիսախավար սեղանատան միջով արագ գնաց դեպի ելքը։ Տոնյան նրան հասավ արդեն արտասանդուղքի վրա և բռնելով նրա ուսերից՝ հուզված ասաց.

— Ինչո՞ւ դուրս եկար։ Չէ՞ որ ես դիտմամբ էի ուզում նրանց քեզ հետ ծանոթացնել։

Բայց Պավելը նրա ձեռքերն իր ուսերից հեռացրեց և կտրուկ պատասխանեց.

— Ինձ այդ ավարաների առաջ ցուցադրելու հարկ չկա։ Այդ խմբի հետ նստելն ինձ ձեռնտու չէ։ Նրանք քեզ համար զուցե և հաճելի են, բայց ես նրանց ատում եմ։ Զգիտեի, թե դու նրանց հետ բարեկամություն ես անում, թե չէ երբեք քեզ մոտ չէի գա։

Տոնյան վրդովմունքը զսպելով, ընդհատեց նրան։

— Ո՞վ է քեզ ինձ հետ այդպես խոսելու իրավունք տվել։ Ես քեզ չեմ հարցնում, թե դու ում հետ ես բարեկամություն անում, և ով է քեզ մոտ գալիս։

Սանդուղքներից պարտեզ իջնելով, Պավելը կտրուկ նետեց.

— Դե, ուրեմն, թող իրենց համար գան, բայց ես այլևս չեմ գա։— Եվ վազեց դեպի պարտեզի դռնակը։

Այդ օրվանից Տոնյային չէր տեսել։ Հրեական ջարդի ժամանակ, երբ Պավելն ու մոնտյորը էլեկտրակայանում թաքցրնում էին փրկված հրեական ընտանիքներին, այդ գրժությունը մոռացվեց։ Այսօր ահա նա նորից ցանկանում է տեսնվել Տոնյայի հետ։

Ժուխրայի անհետանալն ու բնակարանում նրան սպասող մենակությունը ճնշող տպավորություն էին գործում։ Գորշ խճուղին, ուր դեռ չէր չորացել գարնան ցեխը, և որի վրայի փոսերը թխագույն ցեխաջրով էին լցված, թեքվում էր դեպի աջ։

Անհեթեթ կերպով ուղղակի ճանապարհի վրա կանգնած, ծեփը թափած, քոսոտ տան հետևը միանում են երկու փողոցները։

Փողոցների խաչմերուկում կանգնած քարուքանդ եղած, ջարդված դռնով և գլխիվայր շուռ եկած «Հանքային ջրերի վաճառք» ցուցանակով կրպակի մոտ Վիկտոր Լեշչինսկին հրաժեշտ էր տալիս Լիզային։

Նրա ձեռքն իր ափի մեջ պահած՝ Լեշչինսկին ասում էր, արտահայտիչ հայացքով նայելով նրա աչքերին.

— Կգա՞ք։ Չե՞ք խաբի։

Լիզան կոտրատվելով պատասխանեց.

— Կգամ, կգամ, սպասեցեք։

Եվ, հեռանալով, ժպտաց նրան իր խոստում արտահայտող շագանակագույն խումար աչքերով։

Մի տասը քայլ անցնելով՝ Լիզան տեսավ ճանապարհի ոլորանից խճուղին դուրս եկող երկու մարդու։ Առջևից գնում էր լայնակուրծք, թիկնեղ մի բանվոր, բաճկոնի կուրծքը բաց, բաճկոնի տակից երևում էր շերտավոր շապիկը։ Սև կեպկան իջեցրել էր ճակատին, աչքի տակ մի մեծ, մուգ կապտուկ կար։

Նա քայլում էր իր մի քիչ կոր ոտքերի հաստատուն քայլքով, հագին ուներ դեղին, կարճ ճտքերով կոշիկներ։

Նրա հետևից, երեք քայլի վրա, սվինը համարյա նրա թիկունքին կպցնելով՝ քայլում էր գորշ ժուպան հագած մի պետլյուրական, գոտու վրա երկու փամփշտակալ։

Բրդոտ գլխարկի տակից ձերբակալվածի ծոծրակին էին նայում երկու նեղ, զգաստ աչքեր։ Մխախոտից դեղնած բեղերը ցցված էին երկու կողմի վրա։

Մի քիչ դանդաղեցնելով քայլերը՝ Լիզան անցավ խճուղու մյուս կողմը։ Նրանից անմիջապես հետո խճուղի դուրս եկավ Պավելը։

Շրջվելով աջ, դեպի տան ճանապարհը, նա ևս տեսավ եկողներին։

Ոտքերը ծանրացան։ Հանձին առաջինի նա անմիջապես ճանաչեց Ժուխրային։

«Ահա թե ինչու չէր վերադարձել նա»։

Ժուխրայը մոտենում էր։ Կորշագինի սիրտը սարսափելի ուժով սկսեց տրոփել։ Մտքերն արագ հաջորդում էին իրար, նրանց բռնել ու ձևակերպել չէր լինում։ Որոշում կայացնելու

համար ժամանակը շատ քիչ էր։ Մի բան պարզ էր։ Ժուխրայը կորած է։

Եվ, նայելով մոտեցողներին՝ Պավելը մոլորվեց իրեն համակող զգացմունքների շփոթում։

«Ի՞նչ անել»։

Վերջին րոպեին հիշեց՝ գրպանում ատրճանակ կա։ Հենց որ կանցնեն կողքից, կկրակի՛ այս հրացանավորի թիկունքին, և Ֆյոդորն ազատ է։ Եվ վայրկենական որոշման հետևանքով մտքերի պարը դադարեց։ Ատամներն ամուր, ցավելու աստիճան սեղմված էին։ Չէ որ դեռ երեկ Ֆյոդորը ասում էր իրեն. «Իսկ դրա համար խիզախ տղաներ են պետք»։

Պավելն արագ ետ նայեց։ Դեպի քաղաք տանող փողոցն ազատ էր։ Այստեղ ոչ մի շունչ չկար։ Առջևից շտապով անցնում էր կանացի մի կերպարանք՝ գարնանային կարճ վերարկուով։ Կինը չի խանգարի։ Խաչմերուկից մի կողմ գնացող երկրորդ փողոցը նա տեսնել չէր կարող։ Միայն հեռվում, դեպի կայարան տանող ճանապարհի վրա մարդկային կերպարանքներ էին երևում։

Պավելը մոտեցավ խճուղու եզրին։ Ժուխրայը Կորշագինին տեսավ, երբ վերջինս նրանից մի քանի քայլ տարածության վրա էր։

Մի խեթ հայացք նետեց նրա վրա։ Թավ հոնքերը ցնցվեցին։ Ճանաչեց և հանկարծակիի գալով, քայլերը դանդաղեցրեց։ Նրա թիկունքը դեմ առավ սվինի ծայրին։

— Է՜յ, շարժվիր, թե չէ խզակոթով կհասցնեմ,— սուր ձայնով ճղճղաց ուղեկցող պետլյուրականը։

Ժուխրայը լայն քայլ արավ։ Նա ինչ-որ բան էր ուզում ասել Պավելին, բայց իրեն զսպեց և կարծես որպես ողջույնի նշան՝ ձեռքը թափահարեց։

Վախենալով, թե կարող է գրավել շիկաբեղի ուշադրությունը, Պավելը, թողնելով, որ Ժուխրայն իր կողքից անցնի, շրջվեց մի կողմ, իբր թե անտարբեր էր ամբողջ անցուդարձի նկատմամբ։

Բայց ուղեղը շաղափում էր տագնապալի միտքը. «Եթե ես կրակեմ նրա վրա ու վրիպեմ, ապա գնդակը կարող է դիպչել Ժուխրային...»։

Բայց մի՞թե կարելի էր խորհել, երբ պետլյուրականն արդեն կողքին է։

Եվ այսպես եղավ. շիկաբեղ ուղեկցողը հավասարվեց Պավելին. Կորշագինն անսպասելիորեն նետվեց դեպի նա և, բռնելով հրացանը՝ կտրուկ շարժումով թեքեց դեպի գետին։

Սվինը զնգոցով դիպավ քարին։

Պետլյուրականը հարձակում չէր սպասում և մի ակնթարթ շշմեց, բայց անմիջապես էլ ամբողջ ուժով հրացանը դեպի իրեն քաշեց։ Ամբողջ մարմնով հրացանի վրա ընկնելով՝ Պավելը պահում էր այն։ Որոտաց կրակոցը։ Գնդակը դիպավ քարին և, ետ ցատկելով, ընկավ առուն։

Կրակոցից Ժուխրայը մի կողմ ցատկեց ու շրջվեց։ Ուղեկցորդ զինվորը կատաղի թափով քաշում էր հրացանը, որ ազատի Պավելի ձեռքից։ Նա ոլորում էր, ջարդում պատանու ձեռքերը։ Բայց Պավելը հրացանը ձեռքից չէր թողնում։ Այն ժամանակ գազազած պետլյուրականը կտրուկ մի շարժումով Պավկային գետնին գլորեց։ Բայց հրացանն ազատելու այդ փորձը ևս չհաջողվեց։ Սալարկի վրա ընկնելով՝ Պավելն իր հետևից տարավ նաև ուղեկցող զինվորին, և չկար մի ուժ, որը կարողանար ստիպել նրան այդ րոպեին բաց թողնել հրացանը։ Երկու ցատկումով Ժուխրայը հայտնվեց նրա կողքին։ Նրա երկաթե բռունցքը օդում մի աղեղ գծելով՝ իջավ ուղեկցորդի գլխին, իսկ մի վայրկյան հետո պետլյուրականն արդեն պոկված էր գետնին ընկած Կորշագինից. արճիճի պես ծանր երկու հարված ստանալով դեմքին՝ նա ծանր պարկի պես գլորվեց առուն։

Այդ նույն վորեղ բազուկները Պավելին բարձրացրին գետնից և ոտքի կանգնեցրին։

Խաչմերուկից հարյուր քայլ հեռանալով՝ Վիկտորն սկսեց քայլել, սուլելով «Գեղեցկուհիների սիրտն անհավատարմության է հակված» երգը։ Նա դեռ Լիզայի հետ ունեցած հանդիպման և վաղը՝ լքված գործարանի մոտ տեսակցության գալու նրա խոստման ազդեցության տակ էր։

Գիմնազիայի մոլի սիրաթովողների մեջ լուրեր էին պտտվում Լիզա Սուխարկոյի մասին, թե նա սիրո հարցերում խիզախ աղջիկ է։

Լկտի և ինքնավստահ Սեմյոն Զալիվանովը մի անգամ Վիկտորին պատմեց, որ նա տիրել է Լիզային։ Ու թեև Լեշչինսկին այնքան չէր հավատում Սյոմկային, այնուամենայնիվ, Լիզան շատ հետաքրքրական և հրապուրիչ օբյեկտ էր, և նա որոշել էր վաղն ստուգել, թե ճշմարիտ է ասում, արդյոք, Զալիվանովը։

«Եթե միայն դա, ապա ես վճռական կլինեմ։ Չէ՞ որ նա թույլ է տալիս իրեն համբուրել։ Եվ եթե Սյոմկան չի ստում...»։ Նրա մտքերն ընդհատվեցին։ Նա մի կողմ քաշվեց՝ ճանապարհ տալով երկու պետլյուրականների։ Նրանցից մեկը գնում էր կարճապոչ ձի հեծած՝ թափահարելով բրեզենտի դույլը, ըստ երևույթին, ձին էր տանում ջրելու։ Մյուսը, որ կարճ անթև բաճկոն և լայն կապույտ շալվար էր հագել, ձեռքը դրել էր ձիավորի ծնկանը և ուրախ-ուրախ ինչ-որ բան էր պատմում։

Ճանապարհ տալով նրանց, Վիկտորը պատրաստվում էր առաջ ընթանալ, երբ խղճուց լսվող կրակոցի ձայնը կանգնեցրեց նրան։ Նա շրջվելով, Վիկտորը տեսավ, թե ինչպես հեծյալը ձին քշեց և սլացավ կրակոցի կողմը։ Նրա հետևից վազեց մյուսը՝ ձեռքով պահելով թուրը։

Լեշչինսկին վազեց նրանց հետևից և, երբ արդեն խճուղու մոտ էր, լսեց երկրորդ կրակոցը։ Ուղեպտույտից զժվածի պես Վիկտորի վրա նետվեց ձիավոր պետլյուրականը։ Նա ոտներով ու բրեզենտի դույլով հարվածում էր ձիուն և ցատկելով առաջին դարբասից ներս՝ բղավեց բակում դտնվածներին.

— Ի՞նչ, տղե՛րք, այնտեղ մերոնցից մեկին սպանեցին։

Մի բոպեից փակաղակները չիկացնելով, բակից դուրս վազեցին մի քանի հոգի։

Վիկտորին ձերբակալեցին։

Խճուղու վրա մի քանի մարդ հավաքվեց։ Նրանց մեջ էին Վիկտորն ու Լիզան. վերջինիս պահել էին որպես վկայի։

Երբ նրա կողքից փախան Ժուխրայն ու Կորշագինը՝ Լիզան ահից մնաց տեղում կանգնած։ Նա, հանձին պետլյուրականի վրա հարձակված պատանու, զարմանքով ճանաչեց նրան, ում հետ իրեն ծանոթացնել էր ցանկանում Տոնյան։

Մեկը մյուսի հետևից նրանք ինչ-որ մեկի կալվածատան

ցանկապատի վրայով թռան, և անմիջապես հետո խճուղու վրա երևաց ձիավոր պետլյուրականը։ Տեսնելով հրացանը ձեռքին փախչող ժուխրային և ուղեկցորդ զինվորին, որն ուժ էր գործադրում գետնից բարձրանալու համար, նա ձին քշեց դեպի ցանկապատը։

Ժուխրայը ետ շրջվեց, հրացանը մեկնեց և կրակեց նրա վրա։ Հեծյալն ընկրկեց։

Հազիվ շարժելով ջարդված շրթունքները՝ ուղեկցորդ զինվորը պատմեց տեղի ունեցածի մասին։

— Քթիդ տակից կալանավորին ո՞նց բաց թողիր, դմբո։ Հիմա շամփուրի քսանհինգ հարված կստանաս հետևիդ։

Ուղեկցորդը շարացած վրա պրծավ։

— Շատ խելոքն ես, տեսնում եմ։ Քթիդ տակից բաց թողիր։ Ո՞վ գիտեր, թե այդ գարշելի լեշը սատանի պես ինձ վրա կնետվի։

Լիզային ևս հարցուփորձ արին։ Նա պատմեց նույնը, ինչ որ ուղեկցորդը, բայց թաքցրեց այն, որ ճանաչում է հարձակվողին։ Նրանց, այնուամենայնիվ, տարան պարետատուն։

Միայն երեկոյան պարետի հրամանով նրանց թողեցին։

Պարետը նույնիսկ առաջարկեց անձամբ մինչև տուն ուղեկցել Լիզային, բայց վերջինս հրաժարվեց։ Պարետից օդու հոտ էր գալիս, և նրա առաջարկը ոչ մի լավ բան չէր խոստանում։

Լիզային ուղեկցեց Վիկտորը։

Կայարանը հեռու էր, և Լիզայի հետ թևանցուկ քայլելով՝ Վիկտորն ուրախանում էր պատահածի համար։

— Իսկ դուք գիտե՞ք, թե ով ազատեց ձերբակալվածին,— հարցրեց Լիզան, երբ մոտենում էին տանը։

— Ո՛չ, որտեղի՞ց պիտի իմանամ։

— Դուք հիշո՞ւմ եք այն երեկոն, երբ Տոնյան ցանկանում էր մեզ ծանոթացնել մի երիտասարդ տղայի հետ։

Վիկտորը կանգ առավ։

— Պավել Կորշագինի՞ հետ,— զարմացած հարցրեց նա։

— Այո՛, կարծեմ նրա ազգանունը Կորշագին է։ Հիշո՞ւմ եք, նա այնպես տարօրինակ կերպով հեռացավ։ Ահա նա էր ձերբակալվածին ազատողը։

Վիկտորն ապշած կանգնած էր։

— Իսկ դուք չե՞ք սխալվում,— հարցրեց նա Լիզային։

— Ո՛չ, ես հրաշալի հիշում եմ նրա դեմքը։

— Ապա ինչո՞ւ այդ մասին պարետին չասացիք։

Լիզան վրդովվեց։

— Դուք կարծում եք, որ ես կարող եմ այդպիսի ստորություն անել։

— Ի՞նչն եք ստորություն համարում։ Պատմել, թե ով հարձակվեց ուղեկցորդի վրա, ձեր կարծիքով, ստորությո՞ւն է։

— Իսկ ձեր կարծիքով ազնի՞վ բան է։ Դուք մոռացել եք, թե նրանք ինչեր են անում։ Դուք չգիտեք, թե գիմնազիայում որքան որբ հրեաներ կան, և ցանկանում եք, որ ես դեռ նրանց պատմեի Կորշագինի՞ մասին։ Շնորհակալ եմ, մյուքովս էլ չի անցնում։

Լեշչինսկին այդպիսի պատասխանի չէր սպասում։ Լիզայի հետ գժտվելը նրա հաշիվների մեջ չէր մտնում, և նա աշխատեց խոսակցության նյութը փոխել։

— Մի բարկացե՛ք, Լիզա, ես կատակ արի։ Ես չգիտեի, որ դուք այդքան սկզբունքային եք։

— Ձեր կատակը լավ չստացվեց,— չոր-չոր պատասխանեց Լիզան։

Սուխարկոների տան մոտ Վիկտորը, հրաժեշտ տալիս, հարցրեց.

— Դուք կգա՞ք, Լիզա։

Եվ լսեց նրա անորոշ պատասխանը.

— Չգիտեմ։

Դեպի քաղաք քայլելով, Վիկտորը խորհում էր. «Դե, եթե դուք, մադմուազե՛լ, անազնիվ բան եք համարում, ապա ես այդ մասին բոլորովին այլ կարծիք ունեմ։ Իհարկե, ինձ համար մեկ է, թե ով է ում ազատել»։

Նրա՝ լեհական տոհմական շլյախտիչ Լեշչինսկու համար զզվելի էին և՛ մեկը, և՛ մյուսը։ Միևնույն է, ջուտով կգան լեհական լեգեոնները, և այն ժամանակ էլ ահա իսկական իշխանություն կլինի, Ռեչ Պոսպոլիտայի ճշմարիտ ազնվականական իշխանությունը։ Բայց տվյալ դեպքում հնարավորություն կա սրիկա Կորշագինին վերացնելու։ Պետլյուրաականներն անմիջապես նրա վիզը կոլորեն։

Վիկտորը մենակ էր մնացել քաղաքում։ Ապրում էր մորաքրոջ՝ շաքարի գործարանի վիցեդիրեկտորի մոտ։ Իսկ հայրը, մայրը ու Նելլին վաղուց արդեն Վարշավայում էին ապրում, ուր Սիգիզմունդ Լեշչինսկին աչքի ընկնող դիրք ուներ։

Մոտենալով պարետատանը՝ Վիկտորը բաց դռնից ներս մտավ։

Որոշ ժամանակ հետո նա չորս պետլյուրականների ուղեկցությամբ գնում էր դեպի Կորշագինների տունը։

Ցույց տալով լուսավորված պատուհանը՝ նա կամացուկ ասաց.

— Ահա այստեղ է։— Եվ դառնալով կողքին կանգնած խորունժիին, հարցրեց.— Ես կարո՞ղ եմ գնալ։

— Խնդրեմ։ Մենք մենակ էլ գլուխ կբերենք։ Շնորհակալություն ձեր օգնության համար։

Վիկտորն արագ հեռացավ մայթով։

Վերջին հարվածն ստանալով թիկունքին՝ Պավելն իր առաջ մեկնած ձեռքերով դիպավ մութ սենյակի պատին, ուր բերին նրան։ Ձեռքերով շոշափելով որմնաթախտի նման մի բան՝ նա նստեց տանջված, ծեծված ու ճնշված տեսքով։

Նրան ձերբակալեցին այն ժամանակ, երբ նա այդ չէր սպասում։ «Ինչպե՞ս կարող էին իմանալ իր մասին պետլյուրականները։ Չէ՞ որ նրան ոչ ոք չէր տեսել։ Այժմ ի՞նչ կլինի։ Որտե՞ղ է ժուխրայը»։

Նա նավաստուց բաժանվեց Կլիմկայի տանը։ Պավելը գնաց Սերյոժայի մոտ, իսկ ժուխրայն սպասում էր մութն ընկնելուն, որպեսզի հեռանա քաղաքից։

«Ինչ լավ եղավ, որ ես ատրճանակը թաքցրի ագռավի բնում,— մտածեց Պավելը։— Չէ՞ որ եթե ատրճանակը գըտնեին, այդ դեպքում բանս բուրդ էր։ Բայց ինչպե՞ս են իմացել»։ Այդ անհայտ մնացած հարցը տանջում էր նրան։

Կորշագինների ունեցվածքից պետլյուրականները շատ քիչ օգուտ տեսան։ Կոստյումն ու հարմոնը եղբայրը գյուղ էր տարել։ Մայրը տարել էր իր սնդուկը, և անկյունները քարուքանդ անող պետլյուրականների ձեռքը շատ քիչ բան ընկավ։

Սակայն Պավելը երբեք չի մոռանա տնից մինչև պարետատուն ընկած ճանապարհը։ Գիշերը խավար էր. աչքդ մատ կոխեին, չէիր տեսնի։ Երկինքն ամպերով էր ծածկված։ Եվ կողքերից ու թիկունքից ստացած անողորմ քացիներից մըղված՝ նա քայլում էր անգիտակցաբար, ինչ-որ անզգայական վիճակում։

Դուռն հետևում ձայներ լսվեցին։ Հարևան սենյակում տեղավորված էր պարետատան պահակախումբը։ Դռան տակից լույսի մի պայծառ շերտ էր երևում։ Կորշագինը բարձրացավ և խարխափելով, պատերի երկարությամբ՝ շրջեց սենյակում։

Որմնաթախտի դիմաց շոշափեց լուսամուտի ամուր, ատամնավոր վանդակը։ Ձեռքով շարժեց, ամուր էր շինված։ Երևում էր, որ այստեղ առաջ մառան է եղել։

Մոտենալով դռանը՝ մի րոպե կանգնեց, ականջ դրեց։ Հետո բռնակը թեթևակի սեղմեց։ Դուռն անախորժ կերպով ճռռաց։

— Ժանդոտ սրիկա,— հայհոյեց Պավելը։

Բացված նեղ ճեղքից որմնաթախտի եզրին տեսավ ինչ-որ մեկի գոսացած, չոռած մատներով ոտները։ Բռնակի էլի մի թեթև սեղմում, և դուռն արդեն առանց քաշվելու ճռնչաց։ Որմնաթախտից բարձրացավ մի քնակոլոլ, գզգզված կերպարանք և հինգ մատներով գազանաբար քորելով ոչխոտ գլուխը՝ վրա տվեց։ Երբ ծույլ, միապաղաղ ձայնով արտասանված ութ հարկանի հայհոյանքը վերջացավ, կերպարանքն իր գլխի մոտ դրված հրացանը շոշափելով՝ սառնարյուն տոնով արտասանեց.

— Դուռը ծածկի՛ր, իսկ թե մեկ էլ նայել ես, հինգ գընդակ կստանաս։

Պավելը դուռը ծածկեց. հարևան սենյակում քոքռալ սկսեցին։

Այդ գիշեր նա շատ բան մտածեց։ Պայքարին խառնվելու նրա առաջին փորձն իր՝ Կորշագինի համար այդպես անհաջող վերջացավ։ Առաջին իսկ քայլից նրան բռնեցին ու փակեցին, ինչպես մկանն են փակում արկղում։

Եվ երբ նստած՝ անհանգիստ թաղվեց ներքի մեջ, այնտեղից դուրս լողաց մոր կերպարանքը, նրա նիհարիկ, խորշոմած դեմքն այնպես ծանոթ, հարազատ աչքերով։ «Լավ է, որ նա այստեղ չէ, դարդս քիչ կլինի»,— անցավ մտքով։

Լուսամուտից հատակի վրա մի գորշ քառակուսի նկատվեց։

Խավարն աստիճանաբար նահանջում էր։ Այդպարացը մոտենում էր։

ՎԵՑՆԹՈՐԴ ԳԼՈՒԽ

Մեծ, հին տանը միայն մի պատուհան էր լուսավորված, պատուհանի վարագույրն իջեցված էր։ Բակում աղդու, թավ ձայնով հաչեց շղթայակապ Տրեզորը։

Նիրհի միջից Տոնյան լսում է մոր ցածր ձայնը։

— Ո՛չ, նա դեռ քնած չէ։ Նե՛րս մտեք, Լի՛զա։

Թեթև քայլերն ու ընկերուհու քնքուշ, բուռն գրկախառնությունը ցրում են նիրհի բեկորները։

Տոնյան ժպտում է հոգնած ժպիտով։

— Լավ է, որ եկար, Լի՛զա, մեր տանն ուրախություն է, երեկ հայրիկիս ճգնաժամն անցավ, և նա այսօր ամբողջ օրը հանգիստ քնած է։ Ես ու մայրիկն հանգստացել ենք անքուն գիշերներից։ Պատմիր բոլոր նորությունները, Լի՛զա։— Տոնյան քաշում է ընկերուհուն իր մոտ, գահավորակի վրա։

— Օ՜, նորությունները շատ-շատ են։ Նրանց մի մասը ես կարող եմ պատմել միայն քեզ,— ծիծաղում է Լիզան՝ խորամանկորեն նայելով Եկատերինա Միխայլովնային։

Տոնյայի մայրը, որ մի վայելչակազմ, չնայած իր երեսունվեց տարեկան լինելուն՝ երիտասարդ աղջկա աշխույժ շարժումներով, մոխրագույն խելացի աչքերով, ոչ գեղեցիկ, բայց հաճելի ու եռանդուն դեմքով տիկին էր, ժպտաց։

— Ես հաճույքով մի քանի րոպե հետո ձեզ մենակ կթողնեմ։ Իսկ առայժմ պատմեցեք հանրամատչելի նորությունները,— կատակեց նա՝ աթոռը մոտեցնելով գահավորակին։

— Առաջին նորությունն այն է, որ մենք այլևս չենք պարապելու։ Դպրոցական խորհուրդը որոշել է յոթերորդ դասարանին ավարտական ատեստատ տալ։ Ես շատ ուրախ եմ,— աշխուժորեն պատմում էր Լիզան։— Այնպես են ձանձրացրել այդ հանրահաշիվն ու երկրաչափությունը։ Եվ ինչի՞ համար են այդ բոլորը սովորեցնում։ Տղաները դեռ դուցե շարունա-

կեն սովորելը, թեև իրենք էլ չգիտեն, թե որտեղ։ Ամենուրեք ռազմաճակատներ են, կռիվներ։ Սարսափելի է... Մեզ կամուսնացնեն, իսկ կնոջից ոչ մի հանրահաշիվ չի պահանջվում։— Այս ասելով, Լիզան ծիծաղեց։

Մի քիչ աղջիկների հետ նստելուց հետո Եկատերինա Միխայլովնան գնաց իր սենյակը։

Լիզան Տոնյային ավելի մոտ նստեց և շշունջով պատմեց նրան խաչմերուկի վրա տեղի ունեցած ընդհարման մասին։

— Պատկերացրու իմ զարմանքը, Տո՛նեչկա, երբ ես հանձին այդ վազողի ճանաչեցի... ի՞նչ ես կարծում, ո՞ւմ։

Տոնյան, որ հետաքրքրությամբ էր լսում պատմությունը, տարակուսանքով ուսերը թոթվեց։

— Կորչագինին,— միանգամից վրա տվեց Լիզան։

— Կորչագինի՞ն։

Տոնյան ցնցվեց և հիվանդագին կծկվեց։

Լիզան իր ասածի տպավորությունից գոհ՝ արդեն նկարագրում էր իր վեճը Վիկտորի հետ։

Պատմությամբ տարված Լիզան չէր նկատում, թե Տոմանովայի դեմքն ինչպիսի գունատություն պատեց, թե ինչպես նրա բարակ մատները ջղայնորեն շոշափում էին կապույտ բլուզի գործվածքը։ Չգիտեր Լիզան, թե ինչպես անհանգիստ կծկվում էր Տոնյայի սիրտը, չգիտեր, թե ինչու են այդպես անհանգիստ ցցվում սքանչելի աչքերի խիտ արտևանունքները։

Տոնյան արդեն չէր լսում հարված խորունժիի մասին պատմությունը, միայն մի միտք էր զբաղեցնում նրան. «Վիկտոր Լեշչինսկին գիտե, թե ով է եղել հարձակվողը։ Ինչո՞ւ է Լիզան նրան ասել»։ Եվ ակամա այդ նախադասությունը նա բարձրաձայն արտասանեց։

— Ի՞նչ ասացիր,— չհասկացավ Լիզան։

— Ինչո՞ւ պատմեցիր Լեշչինսկուն Պավլուշայի, այսինքն՝ Կորչագինի մասին։ Ախր նա նրան կմատնի...

Լիզան առարկեց.

— Դե չէ։ Չեմ կարծում։ Վերջ ի վերջո ինչո՞ւ պիտի այդ անի։

Տոնյան ընդոստ նստեց՝ ձեռքերով ցավեցնելու ատամների սեղմելով ծնկները։

— Դու ոչինչ չես հասկանում, Լիզա։ Նա ու Կորչագինը թշնամիներ են, և դրան ավելանում է ևս մի հանգամանք... Եվ դու մեծ սխալ ես գործել՝ Վիկտորին Պավլուշայի մասին պատմելով։

Լիզան այժմ միայն նկատեց Տոնյայի հուզմունքը, իսկ այդ պատահականորեն ասված «Պավլուշայի մասին»-ը նրա աչքերը բաց արեց այնպիսի բաների նկատմամբ, որոնց մասին նա միայն անորոշ կասկածներ ուներ։

Ակամա իրեն մեղավոր զգալով՝ նա շփոթված սկսվեց։

«Ուրեմն, այդ ճշմարիտ է,— մտածում է նա։— Տարօրինակ է, Տոնյան հանկարծ այդպես հրապուրվել է ումո՞վ։ Հասարակ մի բանվորով...»։ Նա շատ էր ուզում խոսել այդ թեմայի շուրջը, բայց փափկանկատ լինելու զգացումը զսպում էր նրան։ Աշխատելով որևէ բանով իր հանցանքը քավել, նա բռնեց Տոնյայի ձեռքերը։

— Դու շատ ես անհանգստանո՞ւմ, Տոնե՛չկա։

Տոնյան ցրված պատասխանեց.

— Ո՛չ, գուցե Վիկտորն ավելի ազնիվ է, քան ես նրա մասին մտածում եմ։

Շուտով եկավ Դեմյանովը, համեստ, ծանրակշիռ մի պատանի, նույն դասարանի աշակերտ։

Մինչև նրա գալը աղջիկների խոսակցությունը չէր կապվում։

Ընկերներին ճանապարհ դնելուց հետո Տոնյան երկար մենակ կանգնած էր։ Պարտեզի դռնակին հենված՝ նա նայում էր դեպի քաղաք տանող ճանապարհի խավար շերտին։ Նրա երեսին էր փչում սառը խոնավությամբ ու գարնանային բորբոսով հագեցած հավերժական թափառաշրջիկը՝ քամին։ Ջար, պղտոր, կարմիր բիբերի նման հեռվում թարթում էին քաղաքի տների մանր լուսամուտները։ Ահա այնտեղ է նրան խորթ փոքրիկ այդ քաղաքը։ Այնտեղ, հարկերից մեկի տակ է վտանգին անտեղյակ իր խռովարար ընկերը։ Եվ հնարավոր է, որ մոռացել է աղջկա մասին։ Որքան օրեր են հերթով եկել անցել իրենց վերջին տեսակցությունից հետո։ Նա այն ժամանակ իրավացի չէր, բայց ամեն ինչ վազուց արդեն մո-

ռացված է։ Վաղը նա նորից կտեսնի Պավելին, և նորից կվերադառնա հուզիչ, լավ մտերմությունը։ Այդ մտերմությունը կվերադառնա, Տոնյան այդ գիտե։ Միայն թե գիշերը չդավի։ Գիշերն ինչ-որ շար է, կարծես թե թաքնվել, սպասում է... Ցուրտ է։

Վերջին մի հայացք նետելով ճանապարհին՝ Տոնյան տուն մտավ։ Անկողնում, վերմակի մեջ փաթաթված, նա քնեց մի մթոր ունենալով՝ միայն թե գիշերը չդավի...

Վաղ առավոտյան, երբ տանը դեռ քնած էին, Տոնյան արթնացավ, արագ հագնվեց։ Կամացուկ, որպեսզի ոչ ոքի չարթնացնի, նա բակ դուրս եկավ, արձակեց Տրեզորին՝ մեծ, բրդոտ շանը, և նրա հետ քաղաք գնաց։ Կորշագինների տան դիմաց մի բոպե անվճռական կանգ առավ։ Հետո դրոնակը հրելով, ներս մտավ։ Տրեզորը պոչը թափահարելով վազում էր առջևից...

Նույն այդ վաղ առավոտյան գյուղից վերադարձավ Արտյոմը։ Նա եկավ սայլով այն դարբնի հետ, որի մոտ աշխատում էր։ Ուսին դրեց վաստակած ալյուրի պարկը, քայլեց բակով։ Նրա հետևից դարբինը տանում էր մնացած իրերը։ Բայց դուռն մոտ Արտյոմը ուսից իջեցրեց պարկը, կանչեց.

— Պա՛վկա։

Բայց պատասխան չստացավ։

— Նե՛րս տար, էլ ինչ ես կանգնել,— ասաց նրան մոտեցած դարբինը։

Իրերը իրհանոցում դնելով՝ Արտյոմը սենյակ մտավ և քարացավ։ Ամեն ինչ տակնուվրա էր արված, շուռ ու մուռ տված, հին ցնցոտիները շաղ էին եկել հատակին։

— Սա ի՞նչ բան է,— տարակուսանքով մրթմրթաց Արտյոմը, շրջվելով դեպի դարբինը։

— Այո՛, անկարգություն է,— համաձայնեց դարբինը։

— Ո՞ւր է կորել ապան,— շաբանալ էր սկսում Արտյոմը։ Բայց բնակարանը դատարկ էր, ոչ ոք չկար, որ հարցներ։

Դարբինը հրաժեշտ տվեց ու գնաց։

Արտյոմը բակ դուրս եկավ և սկսեց շուրջը նայել։

«Ջեմ հասկանում, թե ի՞նչ իրարանցում է։ Բնակարանը բաց է, Պավկան չկա»։

Նրա թիկունքում ոտնաձայն լսվեց։ Արտյոմը շրջվեց։ Նրա առաջ ականջները ցցած կանգնած էր մի ահագին շուն։ Պարտեզի դռնից դեպի տուն էր գալիս անծանոթ մի աղջիկ։

— Ես ուզում եմ տեսնել Պավել Կորշագինին,— Արտյոմին դիմելով, ասաց նա ցածր ձայնով։

— Ես էլ եմ ուզում նրան տեսնել։ Սատանան գիտե, թե ուր է կորել։ Ահա ես եկել եմ, բնակարանը բաց է, իսկ նա չկա։ Իսկ դուք նրա մո՞տ եք եկել, ինչ է,— դիմեց նա աղջկան։

Իրեն պատասխան լսեց նրա հարցը.

— Դուք Կորշագինի եղբա՞յրն եք, Արտյո՞մը։

— Այո՛, իսկ ի՞նչ կա։

Բայց աղջիկն առանց նրան պատասխանելու տագնապով նայում էր բաց դռանը։ «Ինչո՞ւ ես երեկ չեկար։ Մի՞թե, մի՞թե...»։ Եվ կրծքում եղած ծանրությունն ավելի ուժեղացավ։

— Դուք բնակարանը բաց գտաք, իսկ Պավելը չկա՞ր,— հարցրեց նա զարմացած իրեն նայող Արտյոմին։

— Իսկ դուք ի՞նչ գործ ունեք Պավելի հետ։

Տոնյան ավելի մոտեցավ նրան և շուրջը նայելով, շնչակտուր ասաց.

— Ես հաստատ չգիտեմ, բայց եթե Պավելը տանը չէ, ուրեմն նրան ձերբակալել են։

— Ինչի՞ համար,— ջղայնորեն ցնցվեց Արտյոմը։

— Մտնենք սենյակ,— ասաց Տոնյան։

Արտյոմը լուռ լսեց նրան։ Երբ աղջիկը նրան հաղորդեց բոլորն, ինչ գիտեր, Արտյոմը հուսահատության մեջ ընկավ։

— Ա՜խ, երիցս անիծյալ լինես։ Քիչ հոգս ունեինք, այս էլ վրա եկավ...— ճնշված ձայնով փնթփնթաց նա։— Այժմ հասկանալի է, թե բնարանում ինչու է այդպիսի շփոթ տիրում։ Սատանան է խառնել տղային այդ պատմության մեջ... Հիմա որտե՞ղ փնտրենք նրան։ Իսկ դուք, օրիորդ, ո՞ւմ աղջիկն եք։

— Ես անտառապետ Տումանովի աղջիկն եմ։ Պավելին ես գիտեմ։

— Հա՞,— անորոշ ձգեց Արտյոմը։— Ահա, ալյուր եմ բերել տղային կերակրելու համար, իսկ այստեղ ահա թե ինչ է...

Տոնյան ու Արտյոմը լուռ իրար էին նայում։

— Ես գնամ։ Դուք գուցե նրան կգտնեք,— կամացուկ ասաց Տոնյան։— Երեկոյան կանցնեմ ձեզ մոտ, դուք ինձ կպատմեք։

Արտյոմը լուռ գլխով արեց։

Լուսամուտի անկյունում բզզում էր ձմռան բքից արթնացած նիհար մի ճանճ։ Հին, մաշված գահավորակի ծայրին նստած էր ջահել մի գեղջկուհի։ Նա ձեռքերը դրել էր ծնկներին և անմիտ հայացքը հառել կեղտոտ հատակին։

Պարետը բերանի անկյունում ծամծմելով ծխախոտը՝ լայնլայն գրեց, վերջացրեց թերթը և «Շեպետովկա քաղաքի պարետ-խորունժի» մակագրության տակ հաճույքով դրեց իր պերճագեղ, վերջում խորամիտ կեռեր ունեցող ստորագրությունը։ Դոների մոտ իթանների զրնգոց լսվեց։ Պարետը գլուխը բարձրացրեց։

Նրա առաջ կանգնած էր Սալոմիգան՝ փաթաթած ձեռքով։

— Ո՞ր քամին է բերել,— ողջունեց նրան պարետը։

— Լավ քամի է, ձեռքս մինչև ոսկորը ցրիվ տվեց։

Ուշադրություն չդարձնելով կնոջ ներկայությանը՝ Սալոմիգան թունդ հայհոյեց։

— Դու ինչ է, այստեղ առողջանալո՞ւ ես եկել։

— Մյուս աշխարհում կառողջանանք։ Ռազմաճակատում էնպես են սեղմում, որ ջուր է կաթում։

Պարետն ընդհատեց նրան՝ գլխով կնոջը ցույց տալով.

— Հետո կխոսենք։

Սալոմիգան ծանրորեն նստեց աթոռակին և հանեց կոկարդավոր գլխարկը, որի վրա էմալե եռաժանի քանդակ կար՝ УНР (Ուկրաինական ժողովրդական հանրապետություն)։

— Ինձ Գոլուբն է ուղարկել,— ցածր ձայնով սկսեց նա։— Շուտով սիեչյան ստրելեցների դիվիզիան այստեղ կփոխադրվի։ Առհասարակ ճաշ է եփվելու այստեղ, ես էլ կարդ պիտի հաստատեմ։ Հնարավոր է, որ «գլխավորը» գա և նրա հետ ինչ-որ արտասահմանյան թռչուն, այնպես որ այստեղ ոչ մի խոսք չլինի «թեթևացման» մասին։ Իսկ դու ի՞նչ ես գրում։

Պարետը ծխախոտը բերանի մյուս անկյունը տեղափոխեց։

— Այստեղ մի անզգամ կա նստած, լակոտի մեկը։ Հպատականում ես, կայսրանում բռնվեց հենց։ Նույն այն ժուխրայը, հիշում ես, որը երկաթուղայիններին մեր դեմ էր գրգռում։

— Հետո՞, հետո՞,— հետաքրքրված մոտ նստեց Սալոմիգան։

— Դե, հասկանում ես, Օմելչենկոն, դմբոն, կայսրանի պարետը, մի կազակի հետ նրան ուղարկում է մեզ մոտ, իսկ սա, որ հիմա ինձ մոտ նստած է, օրը ցերեկով փախցնում է նրան։ Զինաթափ են անում կազակին, ջարդում են նրա ատամները և ծլկում։ Ժուխրայի հետքը կորավ, իսկ սա բռնվեց։ Ահա, կարդա նյութերը,— նա դեպի Սալոմիգան հրեց գրոտած թղթերի մի կապոց։

Սա թռուցիկ նայեց թղթերը՝ թերթելով առողջ ձախ ձեռքով։

Կարդալուց հետո հայացքը հառեց պարետին.

— Եվ դու սրանից ոչինչ չհասկացա՞ր։

Պարետը ջղայնորեն ձգեց գլխարկի հովարը։

— Հինգ օր է տանջվում եմ նրա հետ։ Լռում է։ «Ոչինչ չգիտեմ,— ասում է,— ես չեմ ազատել»։ Ինչ-որ ավազակային վիժվածք է։ Հասկանում ես, ուղեկցորդ զինվորը նրան ճանաչեց, քիչ մնաց խեղդեր այստեղ իժի ծնունդին։ Հազիվ պոկեցի նրան։ Օմելչենկոն կազակին այդ կալանավորի պատճառով քսանհինգ շամփուր է քաշել տվել, նա էլ կատաղությունից սրան տվեց։ Պահելն այլևս միտք չունի, ես ուղարկում եմ շտաբ, որպեսզի թույլ տան ելից անել։

Սալոմիգան արհամարհանքով թքեց։

— Իմ ձեռքին որ լիներ, կխոսեր։ Տերտերի՛ տղա, խոստովանեցնելը քո բանը չի։ Սեմինարիստից ի՞նչ պարետ։ Դու նրան հրացանի շամփուրով հասցրե՞լ ես։

Պարետը բորբոքվեց.

— Դու արդեն քեզ շատ ես թույլ տալիս։ Ծաղրանքներդ քեզ պահիր։ Այստեղ ես եմ պարետը և խնդրում եմ չխառնվել։

Սալոմիգան նայեց աքլորացած պարետին և հռհռաց.

— Հա-հա՛... տերտերի՛ տղա, մի փքվիր, թե չէ կպայթես։ Գրողը տանի քեզ էլ, գործերդ էլ, դու ավելի լավ է, ասա, ո՞րտեղից մի-երկու շիշ օղի ճարենք։

Պարետը քմծիծաղ տվեց։

— Դա հնարավոր է։

— Իսկ սրան,— Սալոմիգան մատնացույց արեց թուղթը,— եթե ուզում ես, որ սեղմեն, տասնվեցի փոխարեն տասնութ տարիկան գրիր։ Խորամանկություն արա էստեղ, թե չէ՝ չեն հաստատի։

Մառանում երեք հոգի էին։ Մաշված կաֆտան հագած մորուքավոր Ծերունին կողքի վրա պառկել էր որմնաթախտին և կծկել նիհար ոտքերը. նրա հագին քաթանե լայն շալվար էր։ Ծերունուն նստեցրել էին, որովհետև նրա մարագից էր կորել կենվոր պետյուրականի ձին։ Հատակին նստած էր տարիքոտ մի կին՝ խորամանկ, գողի աչքերով ու սուր կզակով. նա օղի քաշող էր, մեղադրվում էր ժամացույց և այլ թանկագին իրեր գողանալու մեջ։ Լուսամուտի տակի անկյունում գլուխը ճմռթած գդակի վրա դրած՝ կիսաուշագնաց պառկած էր Կորչագինը։

Մառան բերեցին գեղջկական ձևով գունավոր գլխաշոր կապած, ահաբեկ, մեծ աչքերով ջահել մի կնոջ։

Կինը մի բոպկ կանգնեց, ապա նստեց օղի քաշողի մոտ։

Վերջինս փորձող հայացքով ուսումնասիրելով նորեկին՝ արագախոսությամբ նետեց.

— Նստեցրի՞ն, աղջի՛։

Պատասխան չստանալով, նա ձեռք չքաշեց.

— Քեզ ինչի՞ համար են էստեղ բերել, հը՞։ Պատահմամբ հո օղի քաշելու համար չի՞։

Գեղջկուհին ոտքի ելավ և նայելով անհրաժեշտ կնոջը՝ կամացուկ ասաց.

— Ո՛չ, ինձ եղբորս համար են նստեցրել։

— Իսկ նա ի՞նչ է արել,— կպել էր կնիկը։

Ծերունին միջամտեց.

— Ի՞նչ ես նրան անհանգստացնում։ Մարդը, գուցե, աշխարհի երեսն անգամ տեսնել չի ուզում, իսկ դու ճռճռում ես։

Կինն արագ շրջվեց դեպի որմնաթախտը։

— Իսկ դու ի՞նչ ես ինձ խրատներ տալիս։ Քեզ հետ եմ խոսո՞ւմ, ինչ է։

Ծերունին թքեց։

— Ասում եմ, մարդու զահլա մի տանի։

Մառանում լռություն տիրեց։ Ջահել կինը փռեց մեծ գլխաշորը, պառկեց և գլուխը դրեց թևին։

Օղի քաշողն սկսեց ուտել։ Ծերունին ոտքերը թախտից իջեցրեց, անշտապ մի այծապճեղ փաթաթեց և սկսեց ծխել։ Մառանը լցվեց սուր հոտ ունեցող ծխի քուլաներով։

Լիքը բերանը չփչփացնելով՝ կինը փնթփնթաց.

— Գոնե թողներ մարդ հանգիստ հաց ուտի առանց էդ գարշելի հոտի, ծխում է առանց դադարի։

Ծերունին թունոտ ծիծաղեց.

— Վախենում ես լղարե՞ս։ Հրեն շուտով էս գանից էլ չես մտնի։ Գոնե տղային ուտելու բան տայիր, թե չէ մի գլուխ ինքդ ես դիտավում։

Կինը վիրավորված պաշտպանվեց.

— Ես նրան ասում եմ կեր, չի ուտում։ Իսկ իմ հասցեին բերանդ շաղ մի տուր, քո հացը չեմ ուտում։

Ջահել կինը շրջվեց դեպի օղի քաշողը և գլխով անելով դեպի Կորչագինը՝ հարցրեց.

— Դուք չգիտե՞ք, թե ինչու է նստած։

Կինն ուրախացավ, որ իր հետ խոսեցին և սիրով հաղորդեց.

— Սա էստեղացի տղա է, Կորչագինայի՝ խահաբարուհու փոքր տղան։

Կռանալով դեպի կնոջ ականջը՝ օղի քաշողը շշնջաց.

— Բոլշևիկ է ազատել։ Էստեղ մի նավաստի կար, իմ հարևանուհու՝ Զոզուլիխայի մոտ էր բնակվում։

Կինը հիշեց. «Ես ուղարկում եմ շտաբ, որպեսզի թույլ տան ելից անել...»։

Մեկը մյուսի հետևից էշելոնները կայարան էին լցվում։ Անկարգ ամբոխով այնտեղից դուրս էին թափվում սիբիրյան սարելեցների գումարտակները։ Երկաթուղով դանգաղ սողում էր ամբողջովին պողպատ հագած չորս վագոնանոց «Զապորոժեց» զրահագնացքը։ Հարթակներից հրանոթներ էին իջեցնում։

Ապրանքատար վագոններից ձիեր էին դուրս բերում։ Հենց այդտեղ էլ թամբում էին, նստում և հրմշտելով հետևակային-

ների խառնիճաղանջ ամբոխը՝ դուրս էին գալիս կայարանի բակը, ուր շարվում էր հեծյալ ջոկատը։

Ավագներն իրար էին անցել՝ բղավելով իրենց ստորաբաժանումների համարները։

Կայարանը բղղում էր իշամեղվի պարսի նման։ Իրար խառնված մարդկանց բազմաժխոր ու անձև կույտերից աստիճանաբար ստեղծվում էին դասակների քառակուսիները, և շտապով զինված մարդկանց հոսանքն ուղղվեց դեպի քաղաք։ Խճուղու վրա մինչև երեկո դիկդիկում էին սայլերը, և նրանց հետևից քարշ էին գալիս քաղաք մտած սիբիրյան ստրելեցների դիվիզիայի թիկունքային պոչերը։

Վերջապես, երթը փակելով, առաջ շարժվեց շտաբային վագոնը՝ բղավելով հարյուր քսան կոկորդով.

Ի՞նչ աղմուկ ու աղազակ է
Աշխարհը բռնել.
Այդ Պետլյուրան է Ուկրաինայում
Երևացել...

Կորշագինը բարձրացավ դեպի լուսամուտը։ Երեկոյան աղջամուղջի միջից նա լսեց փողոցով անցնող անիվների դղրդյուն, բազմաթիվ ոտքերի դոփյուն, բազմաձայն երգեր։

Թիկունքում կամացուկ ասացին.

— Երևում է, որ զորք է մտնում քաղաք։

Կորշագինը ետ շրջվեց։

Խոսում էր այն աղջիկը, որին երեկ բերեցին։

Կորշագինը լսել էր նրա պատմությունը։ Օղի քաշող կինն իր ուզածին հասավ։ Աղջիկը քաղաքից յոթ վերստ հեռավորության վրա գտնվող գյուղից է։ Նրա ավագ եղբայրը՝ Գրիցկոն, կարմիր պարտիզան է, սովետների ժամանակ շքավորական կոմիտեն էր ղեկավարում։

Երբ կարմիրները հեռացան, գնդացրի ժապավենը մեջքին կապելով հեռացավ նաև Գրիցկոն։ Իսկ այժմ ընտանիքն օր չունի։ Մի ձի ունեին, այն էլ խլեցին։ Հորը շարունակ քաղաք են տանում-բերում, տանջվեց բանտերում։ Տանուտերը նրանցից է, որոնց Գրիցկոն սեղմում էր։ Տեղը հանելու համար նրանց մոտ շարունակ զանազան մարդկանց էր

բերում իջևանելու։ Ընտանիքը վերջնականապես աղքատացել էր։ Երեկ շուրջկալի համար գյուղում հայտնվեց պարետը։ Տանուտերը նրան սրանց մոտ բերեց։ Աղջիկը պարետին դուր եկավ, և ահա առավոտյան բերեց քաղաք՝ «հարցաքննության համար»։

Կորշագինը քնել չէր կարողանում, հանգիստն անհետ կորավ, և մի համառ միտք, որից ազատվել չէր կարողանում, պտտվում էր գլխում՝ ինչ կլինի հետո։

Ծեծված մարմինը մղկտում էր։ Ուղեկցորդ զինվորը անասնական չարությամբ ծեծեց նրան։

Որպեսզի անտանելի դարձած մտքերից ազատվի, սկսեց լսել հարևանուհիների փսփսոցը։

Աղջիկը բոլորովին ցածր ձայնով պատմում էր, թե ինչպես էր հետամտում իրեն պարետը, սպառնում, համոզում, իսկ հակահարված ստանալով՝ գազանացավ։ «Կնստեցնեմ նկուղում,— ասում է,— դու էլ այնտեղից դուրս չես գա»։

Խավարը պատեց անկյունները։ Առջևում գիշերն է, հեղձուցիչ, անհանգիստ։ Նորից մտքերն անհայտ վազվզ մասին։ Յոթերորդ գիշերն է, իսկ թվում է, թե ամիսներ են անցել։ Տեղը կոշտ է, պառկել չի լինում, մարմնի ցավը չի մեղմանում։ Մառանում գիմա միայն երեք հոգի են։ Պապիկը որմնաթախտի վրա խոմփում է, կարծես իր տան վառարանի վրա լինի։ Պապիկը խելացիորեն հանգիստ է և գիշերները պինդ քնում է։ Օղի քաշող կնոջը խորունժին թողել է, որ գնա օղի գտնի։ Խրիստինան ու Պավելը հատակին են, համարյա հոգք կողքի։ Երեկ լուսամուտից տեսավ Սերյոժկային։ Նա երկար կանգնած էր փողոցում և տրտմությամբ նայում էր տան լուսամուտներին։

«Երևի գիտի, որ ես այստեղ եմ»։

Երեք օր է, որ սև, թթու հացի կտորներ են հանձնում։ Ո՞վ է բերում, չեն ասում։ Երկու օր պարետն անհանգստացնում էր հարցաքննությամբ։

Ի՞նչ կարող է նշանակել այս բոլորը։

Հարցաքննությունների ժամանակ նա ոչինչ չասաց, ամեն ինչից հրաժարվեց։ Ինչո՞ւ լռեց, ինքն էլ չգիտեր։ Ուզում էր խիզախ լինել, ուզում էր ամուր լինել, ինչպես նրանք, որոնց մասին կարդացել է գրքերում, իսկ երբ ձերբակալեցին, բե-

ռում էին գիշերով, և շոգեաղացի վիթխարի զանգվածի մոտ բերողներից մեկն ասաց՝ «Ի՞նչ միտք ունի սրան քարշ տալը, պանե խորունժի։ Թիկունքին մի գնդակ և վերջ»,— սարսափեց։ Այո՛, տաանվից տարեկան հասակում մեռնելը սարսափելի է։ Չէ՞ որ մեռնել, նշանակում է ընդմիշտ չապրել։

Խրիստինան ևս մտածում է։ Նա այս տղայից ավելի բան գիտի։ Տղան, հավանորեն, դեռ չգիտի... Իսկ ինքը լսեց։

Տղան չի քնում, գիշերները շուռումուռ է գալիս։ Մեղք է, ա՜խ, ինչպես է նրան խղճում Խրիստինան, բայց աղջիկն էլ իր վիշտն ունի, չի կարողանում մոռանալ պարետի սարսափելի խոսքերը. «Վաղը ես քեզ հետ հաշիվ կտեսնեմ։ Ինձ հետ չե՞ս ուզում, պահակների մոտ կգնաս։ Կազակները չեն հրաժարվի։ Ընտրություն կատարիր»։

Ա՜խ, ինչ ծանր է, և ոչ մի տեղից գթություն մի սպասիր։ Նա ինչո՞վ է մեղավոր, որ Գրիցկոն կարմիրների հետ է գնացել։ «Օ՜խ, ինչ դժվար է աշխարհում ապրելը»։

Բութ ցավը սեղմում է կոկորդը, անօգ հուսահատությունն ու ահը համակեցին նրան, և Խրիստինան խուլ հեկեկաց։

Խելահեղ վշտից ու հուսահատությունից ցնցվում է ջահել մարմինը։

Անկյունում, պատի մոտ, մի ստվեր շարժվեց։

— Ի՞նչ ես անում։

Խրիստինայի տաք շշունջը. նա իր վիշտն է հեղում լռակյաց հարևանի առջև։ Տղան լսում է, լսում, միայն նրա ձեռքն է հանգչում Խրիստինայի ձեռքի վրա։

— Ինձ կշարշարեն նզովյալները,— արցունքները կուլ տալով անգիտակից սարսափով շշնջում էր նա։— Ես կորած եմ, ուժը նրանցն է։

Ի՞նչ կարող էր ասել նա՝ Պավելը, այդ աղջկան։ Խոսքեր չկան։ Ասելու բան չկա։ Կյանքը սեղմում էր օղակապի պես։

Չթողնե՞լ վաղը նրան, պայքարե՞լ։ Մահու չափ կծեծեն, գուցե և թրի հարվածով կտան գլխին և վերջ։ Եվ որպեսզի գոնե մի քիչ հանգստացնի այդ վշտով թունավորված աղջկան, քնքշորեն շոյել սկսեց նրա ձեռքը։ Աղջկա հեկեկանքը դադարեց։ Երբեմն միայն լսվում էր, թե ինչպես մուտքի մոտ ժամապահն անցորդներին հարցնում էր իր սովորական «ով է գալիս»-ը, և նորից լռություն էր տիրում։ Պապիկը խորը

քնած է։ Դանդաղ սահում են անորսալի բոպեները։ Չհասկացավ, թե երբ թևերն ամուր գրկեցին իրեն։

— Լսիր, աղավնյա՛կս,— շշնջում են ջերմ շրթունքները,— ես, միևնույն է, պիտի կորչեմ, եթե ոչ սպան, մյուսները կտանջեն։ Վերցրու ինձ, սիրելի՛ տղա, որ այն շունը իմ կուսությանը չտիրանա։

— Ի՞նչ ես խոսում, Խրիստինա։

Բայց ամուր ձեռքերը նրան բաց չեն թողնում։ Ջերմ են շրթունքները, լեցուն են շրթունքները, նրանցից փախչելը դժվար է։ Աղջկա խոսքերը հասարակ, քնքուշ խոսքեր են, չէ՞ որ տղան շատ լավ գիտե, թե ինչի համար են այդ խոսքերը։

Եվ ա՜հա այսօրվանն ինչ-որ մի կողմ է փախչում։ Մոռացված է դռան վրայի կողպեքը, մոռացված են շիկամորթ կազակը, պարետը, գազանային ծեծը, յոթ խեղդուկ, անքուն գիշերները, և այս վայրկյանին մնացել են միայն այս ջերմ շրթունքները և արցունքներից խոնավ այս դեմքը։

Հանկարծ Տոնյային հիշեց։

«Ինչպե՞ս կարող էր նրան մոռանալ... Սքանչելի, հարազատ աչքերը»։

Պոկվելու ուժ ունեցավ։ Հարբածի պես բարձրացավ և ձեռքով բռնեց լուսամուտի վանդակը։ Խրիստինայի ձեռքերը գտան նրան։

— Ինչո՞ւ հեռացար։

Ինչքան զգացում կար այդ հարցի մեջ։ Տղան թեքվեց դեպի նա և ամուր սեղմելով ձեռքերը, ասաց.

— Ես չեմ կարող, Խրիստի՛նա։ Դու լավն ես։— Եվ էլի ինչ-որ բաներ ասաց, որ ինքն էլ չհասկացավ։

Հետո ուղղվեց և, որպեսզի խզի անտանելի լռությունը, մոտեցավ որմնաթախտին։ Նստելով նրա ծայրին՝ քաշքշեց պապիկին.

— Պապի՛, ծխախոտ տուր, խնդրում եմ։

Անկյունում գլխաշորի մեջ փաթաթված հեկեկում էր աղջիկը։

Ցերեկը պարետը եկավ, և կազակները տարան Խրիստինային։ Նա հայացքով հրաժեշտ տվեց Պավելին։ Այդ հայացքի մեջ կշտամբանք կար։ Եվ երբ դուռը նրա հետևից փակվեց, Պավելի հոգուն տիրեց ծանր ու անթափանց խավարը։

Պասլիկը մինչև երեկո պատանուց ոչ մի խոսք չլսեց։ Ժամապահը և պարետատան պահակախումբը փոխվեցին։ Երեկոյան նոր մարդ բերին։ Պավելը ճանաչեց Դոլիննիկին՝ շաքարի գործարանի ատաղձագործին։ Ամուր կազմվածքով, ցածրահասակ մի մարդ էր նա, բաճկոնի տակից հագել էր գունաթափված դեղին վերնաշապիկ։ Ուշադիր հայացքով դիտեց մառանը։

Պավելը նրան տեսել էր 1917 թվին, փետրվարին, երբ հեղափոխության ալիքը մինչև այդ փոքր քաղաքը հասավ։ Աղմկոտ ցույցերի ժամանակ նա միայն մի բոլշևիկի լսեց, և դա Դոլիննիկն էր։ Ճանապարհի ցանկապատին բարձրացած՝ նա ճառով դիմում էր զինվորներին։ Հիշողության մեջ մնացել էին նրա եզրափակիչ խոսքերը։

— Հետևեցե՛ք բոլշևիկներին, զինվորնե՛ր, նրանք ձեզ չեն ծախի։

Դրանից հետո ատաղձագործին չէր հանդիպել։

Ծերունին ուրախացավ, որ նոր հարևան է եկել։ Ըստ երևույթին նրա համար ծանր էր ամբողջ օրը լուռ նստելը։ Դոլիննիկը նստեց նրա կողքին որմնաթախտի վրա, նրա հետ մի ծխախոտ վառեց և հարցուփորձ արեց ամեն ինչի մասին։

Հետո մոտեցավ Կորչագինին։

— Իսկ դու ի՞նչ լավ բան կասես,— հարցրեց նա պատանուն։— Ի՞նչ կերպ ընկար այստեղ։

Միավանկ պատասխաններ ստանալով, Դոլիննիկն զգաց, որ իր զրուցակիցն իրեն չի վստահում, դրա համար էլ խոսքի մեջ այդպես ժլատ է։ Բայց երբ ատաղձագործն իմացավ, թե ինչ մեղադրանք են առաջադրում նրան, իր խելացի աչքերը զարմացած հառեց Կորչագինին։ Նստեց կողքին։

— Ասում ես, ուրեմն ժուխրայի՞ն ես ազատել։ Ահա թե ինչ։ Ես չգիտեի էլ, որ քեզ ձերբակալել են։

Պավելը հանկարծակիի գալով, բարձրացավ ու հենվեց արմունկին։

— Ի՞նչ ժուխրայ, ես ոչինչ չգիտեմ։ Շատ բան կարող են ինձ վրա դնել։

Բայց Դոլիննիկը ժպտալով, ավելի մոտեցավ նրան։

— Թող, բարեկամս, ինձանից մի թաքնվիր։ Ես քեզանից ավելի բան գիտեմ։

Եվ կամացուկ, որպեսզի ծերունին չլսի, ավելացրեց.

— Ես ինքս ուղեկցեցի ժուխրային, նա, երևի, արդեն տեղ է հասել։ Ֆյոդորն ինձ ամեն ինչ պատմել է այդ դեպքի մասին։

Մի քիչ լռեց, մտածելով ինչ-որ բանի մասին, ապա ավելացրեց.

— Պարզվում է, որ դու կտրիճ տղա ես։ Բայց ահա այն, որ դու նստած ես, որ նրանք ամեն ինչ գիտեն, դա արդեն բանի նման չէ, դա ուղղակի վատ է։

Նա բաճկոնը հանեց, փռեց գետնին, նստեց՝ թիկունքը պատին հենելով, և նորից սկսեց ծխախոտ ծխել։

Դոլիննիկի վերջին բառերը Պավելին ամեն ինչ ասացին։ Պարզ էր, որ Դոլիննիկը յուրային է։ Եթե ուղեկցել է ժուխրային, ուրեմն...

Երեկոյան նա արդեն գիտեր, որ Դոլիննիկը ձերբակալվել է պետլյուրական կալվածների մեջ ագիտացիա անելու համար։ Բռնվել էր ուղղակի հանցանքի մեջ, այն ժամանակ, երբ նահանգական հեղկոմի թռուցիկներն էր բաժանում, որոնք կոչ էին անում հանձնվել և անցնել կարմիրների կողմը։

Զգուշավոր Դոլիննիկը շատ բան չպատմեց Պավելին։

«Ով գիտե,— մտածում էր նա,— կսկսեն տղային շամփուրներով հասցնել։ Դեռ ջահել է»։

Ուշ երեկոյան, արդեն քնելու պատրաստվելով, կարճ, ընդհանուր մի նախադասությամբ արտահայտեց իր երկյուղը.

— Իմ ու քո դրությունը, Կորչագին, կարելի է ասել, որ շատ վատ է։ Տեսնենք, թե սրանից ինչ դուրս կգա։

Հաջորդ օրը մառանում հայտնվեց մի նոր կալանավոր, ամբողջ քաղաքին հայտնի՝ վարսավիր Շլեմա Զելցերը, վիթխարի ականջներով ու բարակ վզով մի մարդ։ Նա տաքանալով ու ձեռքերը թափահարելով պատմեց Դոլիննիկին.

— Դե այսպես, ուրեմն, Ֆուքսը, Բլումշտեյնը, Տրախտենբերգը նրան աղ ու հաց պիտի տանեն։ Ես ասում եմ, տանել եք ուզում, տարեք, բայց ով կստորագրի ամբողջ հրեա բնակչության կողմից։ Ներեցեք, ոչ ոք։ Նրանք հաշիվ ունեն։ Ֆուքսը խանութ ունի, Տրախտենբերգը՝ աղաց, իսկ ես ի՞նչ ունեմ։ Իսկ մյուս տկլորնե՞րը։ Այդ չքավորները ոչինչ չունեն։ Դե, իմ լեզուն երկար է։ Այսօր ես սափրում եմ մի

ավագի, նորեկներից, որ վերջերս են ուղարկել։ «Ասացեք, խնդրեմ,— ասում եմ,— ասաման Պետլյուրան հրեական ջարդերի մասին գիտե՞, թե՞ ոչ։ Նա այդ պատգամավորությանը կընդունի՞»։ Ա՜խ, քանի անգամ եմ ես իմ լեղվի պատճառով տհաճություններ ունեցել։ Ի՞նչ եք կարծում, ի՞նչ արեց այդ ավագը, երբ ես նրան սափրեցի, դիմափոշի քսեցի, և ամեն ինչ առաջին տեսակի։ Նա իր համար վեր է կենում և փոխանակ ինձ փող վճարելու, ձերբակալում է իշխանության դեմ ագիտացիա անելու համար։— Զելցերը բռունցքով խփեց իր կրծքին։— Ի՞նչ ագիտացիա։ Ես ի՞նչ եմ ասել որ։ Ես միայն հաբցրի մարդուց... Եվ դրա համար ինձ նստեցնել...

Տաքանալով, Զելցերը ոլորում էր Դոլինինիկի վերնաշապիկի կոճակը, քաշում էր նրա մեկ այս, մեկ այն թևից։

Վրդովված Շլեմային լսելով՝ Դոլինինիկը ակամա ժպտաց։ Երբ վաբսավիրը լռեց, Դոլինինիկը լուրջ տոնով ասաց.

— Է՜խ, Շլեմա, ա՛յ դու խելոք տղա ես, բայց հիմար քան ես արել։ Ժամանա՞կ էիր գտել լեղուդ չափ գցելու։ Ես քեզ խորհուրդ չէի տա այստեղ ընկնել։

Զելցերը նայեց նրան հասկացող մարդու հայացքով և հուսահատաբար ձեռքը թափ տվեց։ Դուռը բացվեց, և մառան հրեցին Պավելին ծանոթ օղի քաշողին։ Նա կատաղած հայհոյում էր իրեն բերող կազակին։

— Կրակը լափի ձեզ ու ձեր պաբետին։ Թող իմ օղուց սատկի։

Ժամապահը դուռը նրա հետևից շրխկացրեց, լսելի էր, թե ինչպես է փականքը փակում։

Կինը նստեց որմնաթախտին։ Ներունին կատակով ողջունեց նրան.

— Հը՞, նոքից մեզ մոտ բնկար, չաչանա՛կ։ Նստի՛ր, հյուր կլինես։

Օղի քաշող կինը անբարյացակամ հայացքով նայեց ծերունուն և, վերցնելով իր կապոցը, նստեց հատակին, Դոլինինիկի կողքին։

Նրանից մի քանի շիշ օղի ստանալուց հետո նորից նստեցրել էին։

Դռան հետևը, ժամապահանոցում աղմուկ, իրարանցում լսվեց։ Ինչ-որ մեկի կտրուկ ձայնը հրամաններ էր տալիս։ Մառանի բոլոր կալանավորները գլուխները դեպի դուռը դարձրին։

Հրապարակում, հին զանգակատուն ունեցող փոքրիկ, անշուք եկեղեցու մոտ փոքր քաղաքի համար անսովոր մի դեպք էր տեղի ունենում։ Երեք կողմից հրապարակը շրջապատելով՝ կանոնավոր եռանկյան ձևով տեղավորվում էին սիլեսյան ստրելեցների դիվիզիայի զորամասերը՝ լրիվ մարտական հանդերձանքով։

Առջևում, եկեղեցու մուտքից սկսած, շարքերով հենվելով դպրոցի ցանկապատին, շախմատի քառակուսիների նման ձգվում էին երեք հետևակ գնդեր։

Հրացանները ոտների մոտ դրած, մեջտեղից կիսած դղումների նմանող ռուսական անհեթեթ երկաթե սաղավարտները գլխներին, ամբողջ մարմինը փամփշտակալներով պատած՝ զորշ, կեղտոտ զանգվածով կանգնած էին «դիբեկտորիայի» ամենից ավելի մարտունակ դիվիզիայի պետլյուրական զինվորները։

Նախկին ցարական բանակի պաշարների միջոցով լավ հագցված այս դիվիզիան, որի կեսից ավելին կազմում էին գիտակցորեն սովետների դեմ պայքարող կուլակներ, ուղարկվել էր այս քաղաքը՝ կարևորագույն ստրատեգիական երկաթուղային հանգույցը պաշտպանելու համար։

Շեպետովկայից հինգ տարբեր ուղղությամբ վազում էին երկաթուղու փայլուն գծերը։ Պետլյուրայի համար այդ կետը կորցնելը նշանակում էր ամեն ինչի կորուստ։ Դիրեկտորիայի ձեռքում առանց այն էլ շատ չնչին մի տերիտորիա էր մնացել։ Պետլյուրականների մայրաքաղաքն էր դարձել Վիննիցա համեստ ու փոքրիկ քաղաքը։

Գլխավոր ատամանը որոշել էր անձամբ ստուգել զորամասերը։ Ամեն ինչ պատրաստ էր նրան դիմավորելու համար։

Հետին շարքերում, հայացքներից հեռու, հրապարակի անկյունում տեղավորվել էին նարակոչիկների գունդը։ Այստեղ բոբիկ, խայտաբղետ հագնված երիտասարդություն էր։ Գիշերային շուրջկալների ժամանակ վառարանի վրայից քարշ

տված կամ փողոցում բռնված գյուղի ջահել այդ տղաներից ոչ մեկը չէր մտածում կռիվ գնալու մասին։

— Հիմարներ գտեք,— ասում էին նրանք։

Ամենաշատը, ինչ հաջողվել էր պետլյուրական սպաներին, այդ այն էր, որ նրանք զինակոչիկներին պահակախմբով քաղաք էին բերել, բաժանել էին վաշտերի ու գումարտակների և ղենք էին տվել ձեռքները։

Բայց հենց հաջորդ օրը բերվածների մեկ երրորդը չքացել էր, և ամեն օր նրանք ավելի ու ավելի էին պակասում։

Կոշիկներ տալն ավելի քան թեթևամիտ բան կլիներ, և կոշիկ էլ արդեն շատ չկար։ Հրաման էր տրված զորակոչին ներկայանալ կոշիկներով։ Այդ հրամանը զարմանալի հետևանքներ ունեցավ։ Եվ որտեղից էին ճարում այն աներևակայելի ցնցոտիները, որոնք ոտների վրա պահվում էին երկաթալարերի կամ պարանի օգնությամբ։

Նրանց շքերթի բերին բոբիկ ոտներով։

Հետևակից Գիտո ձգվում էր Գոլուբի հեծյալ գունդը։ Հեծելազորայինները պահում էին հետաքրքրվողների խառն ամբոխը։ Բոլորը ցանկանում էին շքերթը տեսնել։

Ինքը՝ «գլխավոր» ատամանն է գալու։ Փոքրիկ քաղաքում սյդպիսի դեպքեր Գաղվագյուտ էին, և ոչ ոք չէր ցանկանում ձեռքից թողնել այդ ձրի ներկայացումը։

Եկեղեցու սանդուղքների վրա հավաքվել էին գնդապետները, հասարները, տերտերի երկու աղջիկները, ուկրաինական ուսուցիչների մի խումբ, «ազատ» կազակների խմբակը, քաղաքային վարչության մի քիչ սապատավոր նախագահը. մի խոսքով, «հասարակայնությունը» ներկայացնող ընտրյալները, և նրանց մեջ՝ հետևակի գլխավոր տեսուչը՝ չերքեզկա հագած։ Նա էր շքերթի հրամանատարը։

Եկեղեցում զատկի հանդերձանքով էր զգեստավորվում տեր Վասիլին։

Ճանդիսավոր ընդունելություն էր կազմակերպվում Պետլյուրայի համար։ Բերեցին ու տնկեցին դրոշը՝ դեղին ու երկնագույն։ Զորակոչիկներն այդ դրոշին պետք է երդում տային։

Դիվիզիայի հրամանատարը մի մաշված, քոստոտած «ֆորդ»-ով գնաց կայարան՝ Պետլյուրայի հետևից։

Հետևակի տեսուչն իր մոտ կանչեց բարեկազմ, պճնամոլաբար ոլորած բեղիկներով գնդապետ Զեռնյակին։

— Վերցրեք ձեզ հետ որևէ մեկին, ստուգեցեք պարետատունն ու թիկունքը, որպեսզի ամեն ինչ մաքուր ու կարգին լինի։ Եթե կալանավորներ կան, նայեցեք, թե ովքեր են, խուժանը վռնդեցեք։

Զեռնյակը կրունկները շրխկացրեց, իր հետ վերցրեց առաջին պատահած հասուլին, ու սլացան։

Տեսուչը սիրալիր տոնով դարձավ ավագ տերտերադստերը.

— Իսկ ճաշի հարցն ի՞նչ վիճակում է, ամեն ինչ կարգի՞ն է։

— Օ՜, այո՜, այնտեղ պարետն է ջանք թափում,— պատասխանեց տերտերադուստրը՝ աչքերը հառելով գեղեցիկ տեսչին։

Հանկարծ ամեն ինչ շարժվեց, խճուղով, ձիու պարանոցին կպած, սլանում էր մի հեծյալ։ Նա ձեռքը թափահարում էր ու բղավում։

— Գալի՞ս են։

— Տեղե-բո՜ւմ,— ծղրտաց տեսուչը։

Ավագները վազեցին դեպի շարքերը։

Երբ «ֆորդը» փոշոտոցով կանգ առավ եկեղեցու մուտքի մոտ, նվագախումբը նվագեց «Դեռ չի մեռել Ուկրաինան»։

Դիվիզիայի հրամանատարի հետևից ավտոմոբիլից անշնորհք ձևով դուրս սողաց «ինքը՝ գլխավոր ատաման Պետլյուրան», միջին հասակի մի տղամարդ, կաս-կարմիր պարանոցի վրա ամուր նստած անկյունավոր գլխով։ Նա հագել էր գվարդիական լայն մահուդից կարված կապույտ ժուպան, մեջքը սեղմված դեղին գոտիով, որին ամրացված էր զամշե պատյանով շատ փոքրիկ մի բրաունինգ։ Գլխին խակի գույնի «կերենկա», վրան էմալե եռաժանի կոկարդ։

Սիմյոն Պետլյուրայի կերպարանքի մեջ ոչ մի ռազմատենչ բան չկար։ Նա բոլորովին զինվորական տեսք չուներ։

Ինչ-որ բանից անբավական՝ նա լսեց տեսչի կարճ զեկույցը։ Հետո ողջույնով նրան դիմեց քաղաքային ինքնավարության նախագահը։

Պետլյուրան լսում էր ցրված տեսքով՝ նրա գլխի վրայով դիտելով շարված գնդերը։

— Զորատեսն սկսենք,— նա գլխով արեց տեսչին։

Բարձրանալով դրոշակի մոտ գտնվող փոքրիկ լաստակի վրա՝ Պետլյուրան տասը բոպեանոց մի ճառով դիմեց զինվորներին։

Ճառը համոզեցուցիչ չէր։ Պետլյուրան այն արտասանում էր առանց հատուկ ոգևորության, ըստ երևույթին ճանապարհից հոգնած էր։ Ավարտեց զինվորների «փա՞ռք, փա՞ռք» պաշտոնական կոչերի տակ։ Լաստակից իջավ և թաշկինակով սրբեց քրտնած ճակատը։ Հետո տեսչի և դիվիզիայի հրամանատարի հետ դիտեց զորամասերը։

Զինակոչիկների շարքերի երկարությամբ անցնելիս արհամարհանքով աչքերը կկոցեց՝ ջղայնորեն կծոտելով շրթունքները։

Զորատեսի վերջում, երբ զինակոչիկները դասակ դասակի հետևից անհավասար շարքերով մոտենում էին դրոշակին, որի մոտ ավետարանը ձեռքին կանգնած էր տեր Վասիլին, և նախ համբուրում էին ավետարանը, հետո դրոշակի ծայրը, տեղի ունեցավ անսպասելի մի բան։

Հայտնի չէ, թե ինչ ձևով հրապարակ թափանցեց և Պետլյուրային մոտեցավ մի պատգամավորություն։ Աղ ու հացը ձեռքին հանդես եկավ հարուստ անտառարդյունաբերող Բլուվշտեյնը, նրա հետևից՝ արդուզարդավաճառ Ֆուքսը և էլի երեք ծանրակշիռ առևտրականներ։

Բլուվշտեյնը, լաքեյի նման խոնարհվելով՝ մատուցարանը հրամցրեց Պետլյուրային։ Այն վերցրեց Պետլյուրայի կողքին կանգնած ավագը։

— Հրեա ազգաբնակչությունը յուր անկեղծ երախտագիտությունն ու հարգանքն է մատուցում ձեզ, պետության գլո՞ւխ։ Ահա, խնդրեմ, շնորհավորական թերթը։

— Բարի,— մրթմրթաց Պետլյուրան՝ թռուցիկ հայացք ձգելով թղթին։

Բայց այստեղ հանդես եկավ Ֆուքսը։

— Մենք խոնարհաբար խնդրում ենք ձեզ, որ մեզ հնարավորություն տրվի ձեռնարկությունները բանալ և պաշտպանել ջարդից,— մի կերպ արտասանեց Ֆուքսը դժվար բառը։

Պետլյուրան շարությամբ խոժոռվեց։

— Իմ բանակը ջարդերով չի զբաղվում։ Դուք այդ պետք է հիշեք։

Ֆուքսը անզոր տարածեց ձեռքերը։

Պետլյուրան ջղայնորեն ուսը թոթվեց։ Նա չարացած էր։ այդպես անժամանակ ներկայացած պատգամավորության վրա։ Ետ շրջվեց։ Նրա թիկունքում կանգնած էր Գոլուբը. և իր սև բեղն էր կրծոտում.

— Այստեղ ձեր կազակների դեմ բողոքում են, պանե գնդապետ։ Պարզեցեք, թե բանն ինչն է, և միջոցներ ձեռք առեք,— ասաց Պետլյուրան և, դիմելով տեսչին, հրամայեց.— սկսում ենք զորահանդեսը։

Զարաբաստ պատգամավորությունը ոչ մի կերպ չէր սպասում, թե կհանդիպի Գոլուբին և շտապեց ծլկել։

Հանդիսատեսների ամբողջ ուշադրությունը դարձված էր հանդիսավոր տողանցի նախապատրաստմանը։ Հնչեցին հրամանի հատու բառերը։

Դեպի Բլուվշտեյնն առաջանալով՝ Գոլուբը արտաքնապես հանգիստ, պարզորոշ շշնջյունով ասաց.

— Հետքերդ չտեսնեմ, անկնունք սրիկաներ, թե չէ ձեզ քուֆտա կշինեմ։

Նվագախումբը թնդաց, և առաջին զորամասերն սկսեցին անցնել հրապարակով։ Մոտենալով այն տեղին, ուր Պետլյուրան էր կանգնած, զինվորները մեխանիկորեն «փառք» էին գոռում և խճուղով շրջվում էին դեպի կողքի փողոցները։ Վաշտերի առջևից, խաքի գույնի նոր կոստյումներ հագած, անփույթ տեսքով քայլում էին ավագները՝ շարժելով ձեռնափայտիկներն այնպես, կարծես զբոսանքի դուրս եկած լինեին։ Ձեռնափայտիկներով զինվորական երթի դուրս գալու մոդան, ինչպես և զինվորներին շամփուրներով դաղելը, առաջինը սիչևյանները մտցրին։

Պոչից քայլում էին զինակոչիկները, քայլում էին անկարգ զանգվածով, քայլերը խառնելով, իրար դիպչելով։

Բոբիկ ոտքերի ձայնը մեղմ էր։ Ավագներն ամեն կերպ աշխատում էին կարգ հաստատել, բայց այդ անհնարին էր։

Երբ երկրորդ վաշտն էր մոտենում, շարքի աջ կողմի երիտասարդ տղան, քաթանե վերնաշապիկով, զարմանքից բերանը բաց արած այնպես էր ապշած նայում «գլխավորին», որ ոտքն ընկավ փոսի մեջ, և նա ամբողջ թափով թրմփաց խճուղու վրա։

Հրացանը ղրնգոցով գլորվեց քարերի վրա։ Տղան աշխատում էր բարձրանալ, բայց նրան նորից ցած էին գցում հետևից եկողները։

Հանդիսականների մեջ քրքիջ լսվեց։ Դասակի կարգը խանձվեց։ Արդեն հրապարակն անցնում էին ինչպես պատահեր։ Անհաջողակ տղան, հրացանը վերցնելով, հասավ յուրայիններին։

Պետլյուրան այդ տհաճ տեսարանից հայացքը շրջեց։ Զսպասելով, որ զորասյան երթն ավարտվի, նա քայլեց դեպի ավտոմոբիլը։ Տեսուչը նրան հետևելով զգուշորեն հարցրեց։

— Պան ատամանը ճաշելու չի՞ մնա։

— Ո՛չ,— նետեց Պետլյուրան կտրուկ։

Եկեղեցու բարձր շրջապարսպի հետևից, հանդիսականների ամբոխի մեջ շքերթն էին դիտում Սերյոժա Բրուզժակը, Վալյան և Կլիմկան։

Զեռքերով վանդակապատի ճաղերն ամուր գրկած, ատելությամբ լի հայացքով Սերյոժան դիտում էր ներքևում կանգնածների դեմքերը։

— Գնանք, Վա՛լյա, խանութը փակում են,— դիտավորյալ բարձր ձայնով, այնպես, որ բոլորը լսեն, ասաց նա, պոկվելով վանդակապատից։ Ոմանք զարմացած շրջվեցին դեպի նա։

Ոչ ոքի վրա ուշադրություն չդարձնելով՝ նա գնաց դեպի դռնակը։ Նրան հետևեցին նաև քույրը և Կլիմկան։

Սլանալով դեպի պարետատունը՝ գնդապետ Զեռնյակն ու եսաուլը վայր ցատկեցին ձիերից։ Ձիերը բանբերին հանձնելով՝ արագ պահակատուն մտան։

— Ո՞րտեղ է պարետը,— կտրուկ տոնով հարցրեց Զեռնյակը բանբերին։

— Զգիտեմ,— ծամծմեց սա։— Ինչ-որ տեղ է գնացել։

Զեռնյակը դիտում է կեղտոտ, թափթփված տեսքով պահակատունը, տակնուվրա եղած անկողինները, որոնց վրա անփույթ թավալված էին պարետատան կազակները։ Նրանք չմտածեցին նույնիսկ ոտքի կանգնել՝ ավագ հրամանատարների ներս մտնելու ժամանակ։

— Այս ի՞նչ գոմ եք սարքել,— մռնչաց Զեռնյակը։— Ի՞նչ եք փռվել խոճկորամայրերի նման,— հարձակվեց նա պառկածների վրա։

Կազակներից մեկը նստեց, կուշտ բղկաց և անբարյացակամ տոնով խորդաց։

— Ի՞նչ ես գոռում։ Մենք էլ կոկորդ ունենք։

— Ի՞նչ,— մոտ ցատկեց Զեռնյակը։— Ո՞ւմ հետ ես խոսում, կովի մոռ՛ութ։ Ես գնդապետ Զեռնյակն եմ։ Լսեցի՞ր, շա՛ն որդի։ Անմիջապես ոտքի, թե չէ բոլորիդ շամփուրներ հասցնել կտամ,— վազվզում էր պահակատանը տաքացած գնդապետը։— Մի բոպեում մաքրել ամբողջ կեղտը, մահճակալները կարգի բերել, մոռթներդ մարդկային կերպարանքի բերել։ Ինչի՞ նման եք դուք։ Կազակներ չեք, այլ մեծ ճանապարհի ավազակախումբ։

Նրա զայրույթը սահման չուներ։ Նա կատաղությամբ ոտքով հրեց իր ճամփի վրա գտնվող կեղտաջրով լի ամանը։

Եսաուլը նրանից ետ չէր մնում, նա եռանդագին մայր էր հայհոյում և, համոզիչ կերպով թափահարելով եռաճյուղ մտրակը՝ անկողիններից քշում էր ծույլ ու անհոգ կազակներին։

— Գլխավոր ատամանը շքերթն է ընդունում, կարող է այստեղ մտնել։ Շո՛ւտ շարժվեցեք։

Տեսնելով, որ գործը լուրջ ընթացք է ստանում, և որ իսկապես կարող են շամփուրներ վաստակել, Զեռնյակի անունը բոլորին լավ էր հայտնի, կազակները դաղվածների նման դեսուդեն ընկան։

— Պետք է կալանավորներին նայել,— առաջարկեց եսաուլը։— Ո՞վ գիտե, թե ում են սրանք այստեղ պահում։ Հանկարծ գլխավորը կայցելի, կարող է հիմար բան ստացվել։

— Բանալին ո՞ւմ մոտ է,— հարցրեց Զեռնյակը ժամապահին։— Անմիջապես բաց արեք։

Ավագն շտապով մոտ ցատկեց և կողպեքը բացեց։

— Իսկ պարետը որտե՞ղ է։ Ինչ է, նրան շա՞տ պիտի սպասեմ։ Անմիջապես գտնել նրան և ուղարկել այստեղ,— հրամայում էր Զեռնյակը։— Պահակախումբը բակ դուրս բերել, շարքով կանգնեցնել... Ինչո՞ւ հրացանները սվին չունեն։

— Մենք երեկ ենք միայն փոխվել,— արդարանում էր ավագը։

Նա նետվեց դեպի դուռը՝ պարետին որոնելու։

Եսաուլը ոտքով հրեց մառանի դուռը։ Հատակից բարձրացան մի քանի մարդ, մյուսները մնացին պառկած։

— Դռները բաց արեք,— հրամայեց Զեռնյակը,— այստեղ լույսն աղոտ է։

Նա ուշադիր նայեց կալանավորների դեմքերին։

— Ինչո՞ւ ես նստած,— կտրուկ տոնով հարցրեց նա որմնաթախտին նստած ծերունուն։

Վերջինս բարձրացավ, շալվարը վեր քաշեց և մի քիչ կակազելով, սուր ճիչից վախեցած ծամծմեց.

— Ինքս էլ չգիտեմ։ Նստեցրել են, ես էլ նստած եմ։ Չի է կորել բակից, ես հո դրանում մեղավոր չեմ։

— Ո՞ւմ ձին,— ընդհատեց եսաուլը։

— Պետական։ Իմ կենվորները ծախել-խմել են և ինձ վրա են գցում։

Զեռնյակը ոտքից գլուխ արագ հայացքով չափեց ծերունուն՝ անհամբեր ուսը թոթվելով։

— Ունեցած-չունեցածդ հավաքիր և հայդա այստեղից,— բղավեց նա և դարձավ դեպի օղի քաշող կինը։

Ծերունին անմիջապես չհավատաց, որ նրան ազատ են արձակում և դառնալով դեպի եսաուլը՝ սկսեց թարթել կիսակույր աչքերը։

— Ուրեմն, կարող եմ գնա՞լ։

Վերջինս գլխով արեց՝ շո՛ւտ, շո՛ւտ կորիր։

Ծերունին շտապով արձակեց իր պարկը որմնաթախտից և կողքանց դուրս թռավ դռնից։

— Իսկ քեզ ինչո՞ւ են նստեցրել,— արդեն օղի քաշողին էր հարցուփորձում Զեռնյակը։

Սա կարկանդակի կտորը ուտել շարունակելով՝ բլբլացրեց.

— Ինձ, պա՛նե պետ, անարդարությամբ են նստեցրել։ Ես այրի կին եմ, իմ օղին խմեցին, հետո էլ ինձ նստեցրին։

— Ի՞նչ է, տնաքաշ օղու առևտո՞ւր ես անում,— հարցրեց Զեռնյակը։

— Ի՞նչ առևտուր,— վիրավորվեց կինը։— Նա, պարետը, չորս շիշ վերցրեց և մի գրոշ էլ չվճարեց։ Բոլորն էլ էդպես, օղին խմում են, իսկ փող չեն վճարում. էլ որտեղի՞ առևտուրն է։

— Բավակա՞ն է, անմիջապես կորի՛ր գրողի ծոցը։

Կինը չստիպեց հրամանը երկու անգամ կրկնել և, վերցնելով զամբյուղը՝ շնորհակալությամբ խոնարհվելով ետ-ետ գնաց դեպի դուռը։

— Աստված ձեզ առողջություն տա, պարո՛ն պետ։

Դոլիննիկն այդ կատակերգությանը նայում էր լայն բացված աչքերով։ Կալանավորներից ոչ մեկը չէր հասկանում, թե բանն ինչ է։ Մի բան պարզ էր. այս նոր եկած մարդիկ ինչ-որ պետեր են, որ իշխանություն ունեն կալանավորների վրա։

— Իսկ դո՞ւ ինչի համար,— դեպի Դոլիննիկը դարձավ Զեռնյակը։

— Ոտքի կանգնել պան գնդապետի առաջ,— ծղրտաց եսաուլը։

— Ինչո՞ւ ես նստած, հարցնում եմ,— հրամանը կրկնեց Զեռնյակը։

Մի քանի վայրկյան Դոլիննիկը նայում էր գնդապետի ոլորված բեղերին, նրա մաքուր սափրված դեմքին, հետո էմալե կոկարդ ունեցող «կերենկայի» հովարին, և հանկարծ շշմեցնող մի միտք անցավ նրա գլխով. «Իսկ եթե հաջողվի՞»։

— Ձերբակալեցին նրա համար, որ ժամը ութից հետո շրջում էի քաղաքում,— ասաց նա գլուխն եկած առաջին բանը։

Ամբողջովին տանջալի լարվածության մեջ՝ սպասում էր։

— Իսկ ինչո՞ւ ես գիշերները թափառում։

— Գիշեր չէր, ժամը տասնմեկն էր։

Ասում էր և այլևս չէր հավատում անհեթեթ թվացող հաջողությանը։

Ծնկները դողացին, երբ կարճ լսեց հրամանը.

— Գնա՛։

Մոռանալով իր բաճկոնը՝ նա քայլեց դեպի դուռը, իսկ եսաուլը արդեն հաջորդին էր հարցնում։

Կորչագինը վերջինն էր։ Նա նստել էր հատակին բոլորովին շփոթված այն բոլորից, ինչ տեսնում էր և նույնիսկ չհասցրեց ըմբռնել, որ Դոլիննիկին ազատ արձակեցին։ Նա չէր կարողանում հասկանալ, թե ինչ է կատարվում։ Բոլորին ազատ են արձակում։ Դոլիննիկը, Դոլիննիկը... Նա ասաց, որ ձերբակալված է գիշերը շրջելու համար... Վերջապես հասկացավ։

Գնդապետը նիհարիկ Զելցերի հարցաքննությունն սկսեց սովորական հարցով.

— Ինչի՞ համար ես նստած։

Գունատ, հուզվող վարսավիրը պատասխանեց բուռն թափով.

— Ինձ ասում են, որ ես ագիտացիա եմ անում, բայց ես չեմ հասկանում, թե իմ ագիտացիան որն է։

Զեռնյակը ուշադրությունը լարեց։

— Ի՞նչ։ Ագիտա՞ցիա։ Ինչի մասին ես ագիտացիա անում։

— Ես չգիտեմ, ես միայն ասել եմ, թե հրեա բնակչության կողմից ստորագրություններ են հավաքում գլխավոր ատամանին տարվելիք խնդրագրի համար։

— Ի՞նչ խնդրագիր,— Զելցերին մոտեցան եսաուլն ու Զեռնյակը։

— Ջարդերը վերացնելու մասին խնդրագիր։ Դուք գիտեք, մեզ մոտ սարսափելի ջարդ եղավ։ Ազգաբնակչությունը վախենում է։

— Հասկանալի է,— նրան ընդհատեց Զեռնյակը,— մենք քեզ համար խնդրագիր կգրենք, ջհուդի մոռ՛ութ։— Եվ շրջվելով դեպի եսաուլը՝ նետեց։— Այս պտուղին պետք է ավելի հեռու տեղ թաքցնել։ Կորցնել շտաբ։ Այնտեղ ես ինքս անձամբ կզրուցեմ սրա հետ, կիմանանք, թե ով է պատրաստվում խնդրագիր տալ։

Զելցերը փորձում էր առարկել, բայց եսաուլը ձեռքը կտրուկ թափահարեց և մտրակով հարվածեց նրա թիկունքին։

— Լռի՛ր, անզգա՛մ։

Ցավից ծամածռվելով, Զելցերը հեռացավ դեպի անկյունը։ Նրա շրթունքները դողում էին, նա հավիվ էր զսպում պոռթկացող հեկեկանքը։

Վերջին տեսարանի ժամանակ Կորչագինը ոտքի կանգնեց։ Կալանավորների մառանում էին մնացել միայն նա ու Զելցերը։

Զեռնյակը կանգնած էր պատանու առաջ և շոշափում էր նրան իր սև աչքերով։

— Դե, իսկ դու ինչո՞ւ ես այստեղ։

Եվ հարցին հետևեց հապճեպ պատասխանը։

— Ես թամբի ծայրից կտրեցի ներբաննների համար։

— Ո՞ր թամբից,— չհասկացավ գնդապետը։

— Մեզ մոտ երկու կազակ են կենում, ես էլ հին թամբի ծայրից կտրեցի ներբաննների համար, կազակներն էլ դրա համար ինձ այստեղ բերին։— Եվ ազատություն ձեռք բերելու խելահեղ հույսով համակված՝ ավելացրեց.— Ես որ իմանայի, թե չի կարելի...

Գնդապետն արհամարհանքով նայում էր Կորչագինին։

— Եվ ինչո՞վ է զբաղվել այդ պարետը, սատանան գիտե նրան, կալանավորնե՞ր է հավաքել։— Եվ շրջվելով դեպի դուռը՝ բղավեց.— Կարող ես տուն գնալ և հորդ ասա, որ քեզ մի լավ դնքսի։ Դե, դուրս թռի՛ր։

Ինքն իրեն չհավատալով՝ Կորչագինը վերցրեց Դոլիննիկի բաճկոնը, որ ընկած էր հատակին, և նետվեց դեպի դուռը։ Սիրտը պատրաստ էր դուրս թռչել կրծքից։ Վազելով անցավ պահակատունը, այնտեղից դուրս եկող Զեռնյակի թիկունքով դուրս սահեց բակը, այնտեղից էլ՝ փողոց։

Մառանում մնաց մենակ դժբախտ Զելցերը։ Նա տանջալի թախիծով նայեց շուրջը, բնազդաբար մի քանի քայլ արեց դեպի դուռը, բայց ժամապահը մտավ պահակատուն, դուռը փակեց, կողպեքը կախեց և նստեց դռան մոտ դրված աթոռակին։

Արտասանդուղքի մոտ Զեռնյակը գոհունակությամբ դիմեց եսաուլին.

— Լավ է, որ մենք աչք ածեցինք այստեղ։ Մի տե՛ս, թե ինչքան խուժան էր հավաքել։ Իսկ պարետին երկու շաբաթով կնստեցնենք։ Դե գնանք, հը՞։

Բակում իր ջոկատն էր դասավորում ավագը։ Գնդապետին տեսնելով, նա մոտ վազեց և զեկուցեց.

— Ամեն ինչ կարգին է, պանե գնդապետ։

Զեռնյակը ոտքը դրեց ասպանդակին, թեթևորեն ցատկեց թամբին։ Եսաուլը շարժվում էր իր կամակոր ձիու հետ։ Սանձը ձգելով, Զեռնյակն ասաց ավագին.

— Պարեռին ասա, որ ես դուրս թափեցի այն ամբողջ աղբը, որ նա լցրել էր այստեղ։ Եվ հաղորդիր, որ երկու շաբաթով կնստեցնեմ նրան այն բանի համար, ինչ նա կատարել է այստեղ։ Իսկ այն մեկին, որ այնտեղ նստած է, անմիջապես թող շտաբ փոխադրի։ Պահակախումբը թող պատրաստ լինի։

— Լսում եմ, պանե գնդապե՛տ,— պատվի առավ ավագը։

Խթանելով ձիերին՝ գնդապետն ու եսաուլը քառատրոփ արշավեցին դեպի հրապարակը, ուր արդեն վերջանում էր զորահանդեսը։

Յոթերորդ ցանկապատի վրայից ցատկելուց հետո Կորչագինը կանգ առավ։ Այլևս վազելու ուժ չուներ։ Խեղդուկ, չօդափոխվող մառանում անցկացրած սոված օրերն ուժասպառ էին արել նրան։ Տուն գնալ չի կարելի, իսկ եթե Բրուժակների մոտ գնա և իմանան՝ ամբողջ ընտանիքը կկործանեն։ Ո՞ւր գնա, ուրեմն։

Նա չգիտեր, թե ինչ անի, և վազում էր՝ հետևը թողնելով առանձնատների բանջարանոցներն ու հետնաբակերը։ Ուշքի եկավ միայն այն ժամանակ, երբ կուրծքը դեմ առավ ինչ-որ շրջապարսպի։

Նայեց ու քարացավ, բարձր տախտակե ցանկապատից այն կողմ սկսվում էր գլխավոր անտառապետի պարտեզը։ Ահա թե ուր էին բերել նրան բոլորովին հոգնած ոտները։ Մի՞թե նա մտածել էր վազել մինչև այստեղ։ Ո՛չ։

Բայց ինչո՞ւ նա ուշքի եկավ հենց անտառապետի առանձնատան մոտ։

Դրան պատասխան տալ չէր կարող։

Հարկավոր էր որևէ տեղ շունչ առնել, իսկ հետո մտածել, թե ուր գնա, պարտեզում տախտակից շինած տաղավար կա, այնտեղ ոչ ոք նրան չի տեսնի։

Կորչագինը վեր ցատկեց, ձեռքով բռնեց տախտակի ծայրը, մագլցեց ցանկապատի վրա և ընկավ պարտեզը։ Նայելով ծառերի միջից հազիվ երևացող տանը՝ նա գնաց դեպի տաղավարը։ Վերջինս համարյա բոլոր կողմերից բաց էր։ Ամռանն այն փաթաթված էր լինում վայրի խաղողի թփերով, այժմ ամեն ինչ մերկ էր։

Շրջվեց դեպի ցանկապատը, բայց արդեն ուշ էր, իր թիկունքում նա լսեց կատաղի հաչոց։ Տան կողքից տերևներով ծածկված ճանապարհով նրա վրա էր սլանում ամեհի մի շուն՝ պարտեզը լցնելով իր սպառնագին մռնչյունով։

Պավելը պատրաստվեց պաշտպանվելու։

Առաջին հարձակումը ետ մղեց ոտքի մի հարվածով, բայց շունը պատրաստվում էր երկրորդին։ Ով գիտե, թե ինչով կվերջանար այդ մենամարտը, եթե Պավելին ծանոթ, ղենդուն ձայնը չբղավեր.

— Տրեզո՛ր, ե՛տ։

Ճանապարհով վազում էր Տոնյան։ Տրեզորին վզաթոկից բռնած ետ քաշելով՝ նա դիմեց ցանկապատի մոտ կանգնած Պավելին.

— Ինչպե՞ս ընկաք այստեղ։ Չէ՞ որ շունը կարող էր ձեզ կծել։ Դեռ լավ է, որ ես...

Նա կմկմաց։ Աչքերը լայն բացվեցին։ Ինչքա՞ն է նման Կորչագինին այս պատանին, որ հայտնի չէ, թե ինչպես է ընկել այստեղ։

Ցանկապատի մոտ կերպարանքը շարժվեց և ցածր ձայնով ասաց.

— Դու... դուք ինձ չե՞ք ճանաչում։

Տոնյան ճչաց և թափով նետվեց դեպի Կորչագինը։

— Պավլո՛ւշա, դո՞ւ ես։

Տրեզորն այդ ճիչն ընդունեց որպես հարձակման ազդանշան և ուժգին ցատկումով առաջ նետվեց։

— Կորի՛ր։

Տրեզորը մի քանի քայլ ստանալով Տոնյայից՝ վիրավորված տեսքով պոչը քաշեց և քարշ եկավ դեպի առանձնատունը։

Տոնյան սեղմելով Կորչագինի ձեռքերը՝ արտասանեց.

— Դու ազա՞տ ես։

— Իսկ դու մի՞թե գիտես։

Տոնյան, դեռ չկարողանալով իր հուզմունքը զսպել, բուռն զգացումով պատասխանեց.

— Ամեն ինչ գիտեմ։ Ինձ Լիզան պատմեց։ Բայց ինչպե՞ս ընկար այստեղ։ Քեզ աղատե՞լ են։

Կորշագինը հոգնած պատասխանեց.

— Սխալմամբ են աղատել։ Ես փախել եմ։ Ինձ, հավանորեն, արդեն փնտրում են։ Պատահմամբ ընկա այստեղ։ Ուզում էի տաղավարում հանգստանալ։— Եվ կարծես ներումն հայցելով, ավելացրեց.— Ես շատ եմ հոգնել։

Աղջիկը մի քանի վայրկյան նայում էր նրան և ամբողջովին խղճահարության, ջերմ քնքշանքի, տագնապի ու բերկրանքի հորձանքով համակված՝ սեղմում էր նրա ձեռքերը։

— Պավլո՜ւշա, սիրելի՜, սիրելի՜ Պավկա, իմ հարազա՜տ, իմ լա՜վ... Ես քեզ սիրում եմ... Լսո՞ւմ ես... Իմ համառ տղա, ինչո՞ւ այն ժամանակ գնացիր։ Այժմ կգաս մեզ մոտ, ինձ մոտ։ Ես քեզ ոչ մի պայմանով բաց չեմ թողնի։ Մեզ մոտ հանգիստ է, կմնաս ինչքան որ պետք լինի։

Կորշագինը գլուխը բացասաբար շարժեց։

— Եթե ինձ ձեզ մոտ գտնեն, ի՞նչ կլինի այն ժամանակ։ Չեմ կարող ձեզ մոտ գալ։

Ձեռքերն ավելի ուժեղ սեղմեցին տղայի մատները, արտևանունքները ցնցվեցին, աչքերը փայլատակեցին։

— Եթե չգաս, ինձ այլևս երբեք չես տեսնի։ Չէ որ Արտյոմն այստեղ չէ, նրան պահակախմբով տարել են շոգեքարշի վրա աշխատելու։ Բոլոր երկաթուղայիններին մոբիլիզացիայի են ենթարկում։ Ո՞ւր պիտի գնաս։

Կորշագինը հասկանում էր նրա անհանգստությունը, բայց իր համար թանկ աղջկան հարվածի տակ դնելու ահը ետ էր պահում նրան։ Իր բոլոր քաշածները հոգնեցրել էին նրան, ուզում էր հանգստանալ, տանջվում էր քաղցից։ Եվ նա անձնատուր եղավ։

Երբ նստած էր Տոնյայի սենյակի գահավորակին, խոհանոցում աղջկա և մոր միջև հետևյալ խոսակցությունն էր տեղի ունենում.

— Լսի՞ր, մայրի՛կ։ Իմ սենյակում հիմա նստած է Կորշագինը, հիշո՞ւմ ես։ Իմ աշակերտը։ Ես քեզանից ոչինչ չեմ

ծածկի։ Նա ձերբակալված էր մի բոլշևիկ նավաստու աղատելու համար։ Նա փախել է և ապաստարան չունի։— Նրա ձայնը դողաց։— Ես քեզ խնդրում եմ համաձայնել, մայրի՛կ, որ նա այժմ մնա մեզ մոտ։

Դստեր աչքերն աղերսանքով էին նայում մորը։

Վերջինս փորձող հայացքով նայեց Տոնյայի աչքերին։

— Լա՜վ, ես չեմ առարկում։ Իսկ որտե՞ղ կտեղավորես նրան։

Տոնյան շիկնեց և շփոթված, հուզվելով արտասանեց.

— Ես նրան կտեղավորեմ իմ սենյակում, գահավորակի վրա։ Հայրիկին առայժմ կարելի է չասել։

Մայրն ուղիղ նայեց Տոնյայի աչքերին։

— Հենց դա էլ քո արցունքների պատճա՞ռն էր։

— Այո՛։

— Նա դեռ բոլորովին երեխա է։

Տոնյան ջղայնորեն տրորում էր բլուզի թևքը։

— Այո՛, բայց եթե նա չփախչեր, նրան կգնդակահարեին որպես չափահասի։

Եկատերինա Միխայլովնան անհանգստացած էր տանը Կորշագինի ներկայության պատճառով։ Նրան անհանգստացնում էին և՛ նրա ձերբակալությունը, և՛ Տոնյայի բացահայտ համակրանքն այդ տղայի նկատմամբ, և՛ այն, որ նա Պավելին բոլորովին չգիտեր։

Իսկ Տոնյային համակել էին տնտեսական հոգսերը։

— Նա պետք է լողանա, մայրի՛կ։ Ես հիմա դա կկազմակերպեմ։ Նա կեղտոտ է, ինչպես իսկական հնոցապան։ Այնքան ժամանակ չի լվացվել։

Նա վազվզում էր, իրար խառնվում, լողարանն էր տաքացնում, սպիտակեղեն էր պատրաստում։ Եվ վրա տալով, խուսափելով բացատրություններից, բռնեց Պավելի ձեռքից ու քարշ տվեց լողանալու։

— Վրայիցդ ամեն ինչ պիտի հանես։ Ահավասիկ կոստյում։ Քո հագուստը հարկավոր է լվանալ։ Ահա սա կհագնես,— ասաց նա, ցույց տալով աթոռը, ուր կանոնավոր կերպով դարսված էին նավաստու կապույտ մի բլուզ՝ շերտավոր սպիտակ օձիքով, և լայն փողքերով շալվար։

Պավելը զարմացած ետ նայեց։ Տոնյան ժպտում էր։

— Սա իմ դիմակահանդեսի կոստյումն է։ Եվ քեզ վրա լավ կլինի։ Դե, տիրություն արա, ես քեզ մենակ եմ թողնում։ Մինչև լողանաս, ես ուտելու բան կպատրաստեմ։

Նա դուռը շրխկացրեց։ Ուրիշ ճար չկար։ Կորչագինն արագ հանվեց և մտավ լոգարան։

Մի ժամ հետո երեքը միասին՝ մայրը, աղջիկն ու Կորչագինը, խոհանոցում ճաշում էին։

Քաղցած Պավելն իր համար աննկատելի երրորդ պնակը մաքրազարդեց։ Սկզբում նա Եկատերինա Միխայլովնայից քաշվում էր, բայց հետո, տեսնելով նրա բարեկամական վերաբերմունքը՝ ընտելացավ։

Երբ ճաշից հետո նրանք հավաքվեցին Տոնյայի սենյակում, Պավելը Եկատերինա Միխայլովնայի խնդրանքով պատմեց իր քաշած տառապանքների մասին։

— Ի՞նչ եք մտածում անել այսուհետև,— հարցրեց Եկատերինա Միխայլովնան։

Պավելը մտքի մեջ ընկավ։

— Ուզում եմ Արտյոմին տեսնել, իսկ հետո այստեղից հեռանալ։

— Ո՞ւր։

— Մտածում եմ Ուման գնալ կամ Կիև։ Ինքս էլ դեռ չգիտեմ, բայց այստեղից անպայման պետք է հեռանալ։

Պավելի հավատալը չէր գալիս, որ ամեն ինչ այդպես արագ փոխվեց։ Դեռ առավոտյան բանտն էր, իսկ այժմ Տոնյան է կողքին, մաքուր հագուստ կա վրա և գլխավորը՝ ազատ է։

Ահա թե ինչպես է շրջվում կյանքը. մեկ անթափանց խավար, մեկ էլ նորից արևն է ժպտում։ Եթե նոր ձերբակալության սպառնալիքը կախված չլիներ նրա գլխին, նա հիմա ամենաբախտավոր մարդը կլիներ։

Բայց հենց այժմ, երբ նա այստեղ է, այս մեծ ու խաղաղ տանը, նրան կարող էին տեղնուտեղը բռնել։

Հարկավոր էր հեռանալ ուր որ պատահի, բայց այստեղ չմնալ։

Իսկ այստեղից նա բոլորովին չի ուզում հեռանալ, սատանան տանի։ Ինչքան հետաքրքրական կլիներ կարդալ հերոս Գարիբալդիի մասին։ Ինչպես էր նա նախանձում Գարիբալդիին, իսկ չէ՞ որ նրա կյանքը ծանր էր եղել, նրան հալածել են ամբողջ աշխարհով մեկ։ Ահա ինքը՝ Պավելը, ընդամենը միայն յոթ օր է ապրել սարսափելի տանջանքներով, իսկ թվում է, թե տասը տարի է անցել։

Ըստ երևույթին նրանից, Պավկայից, իսկական հերոս չի ստացվում։

— Ի՞նչ ես մտածում,— դեպի նա թեքվելով՝ հարցրեց Տոնյան։ Աղջկա աչքերն իրենց մուգ կապույտի մեջ նրան անհատակ են թվում։

— Տո՛նյա, ուզում ես քեզ կպատմեմ Խրիստինկայի մասին...

— Պատմի՛ր,— աշխույժ տոնով ասաց Տոնյան։

— ... Եվ նա այլևս չվերադարձավ։— Վերջին բառերը նա դժվարությամբ արտասանեց։

Սենյակում լսելի էր ժամացույցի համաչափ տկտկոցը։ Տոնյան գլուխը թեքած պատրաստ էր հեծկլտալու և ցավեցնելու աստիճան կծոտում էր շրթունքները։

Պավելը նայեց նրան։

— Ես այստեղից պետք է հեռանամ հենց այսօր,— վճռական տոնով ասաց Պավելը։

— Ո՛չ, ո՛չ, այսօր ոչ մի տեղ չես գնա։

Նրա ջերմ, բարակ մատները կամացուկ խրվեցին տղայի անհնազանդ մազերի մեջ, քնքշորեն սկսեցին շոյել գլուխը...

— Տո՛նյա, դու ինձ պետք է օգնես, պետք է դեպոյում տեղեկություն իմանալ Արտյոմի մասին և մի երկտող տանել Սերյոժկային։ Ագռավի բնում պահված է իմ ատրճանակը։ Ես գնալ չեմ կարող։ Սերյոժկան պետք է այն վերցնի։ Դու կարո՞ղ ես այդ անել։

Տոնյան վեր կացավ։

— Ես հիմա կգնամ Սուխարկոյի մոտ։ Նրա հետ կգնանք դեպո։ Դու երկտող գրիր, ես կտանեմ Սերյոժկային։ Որտե՞ղ է ապրում նա։ Իսկ եթե գալ ցանկանա, նրան ասե՞մ քո տեղը։

Մի քիչ մտածելուց հետո Պավելը պատասխանեց.

— Թող ինքը երեկոյան պարտեզ բերի։

Տոնյան ուշ վերադարձավ տուն։ Պավելը քնած էր խո-

ռունկ քնով։ Աղջկա ձեռքի հպումից նա արթնացավ։ Տոնյան ուրախ-ուրախ ժպտում էր։

— Հիմա Արտյոմը կգա։ Նա հենց նոր է վերադարձել։ Նրան Լիզայի հոր երաշխավորությամբ մի ժամով բաց թողեցին։ Շոգեքարշը դեպոյում է գտնվում։ Ես նրան չկարողացա ասել, որ դու այստեղ ես, ասացի, որ պետք է շատ կարևոր մի բան հաղորդեմ։ Ահա և նա։

Տոնյան վազեց դեպի դուռը։ Իր աչքերին չհավատալով՝ Արտյոմը մեխվածի պես կանգնել էր դռների մեջ։ Տոնյան փակեց դուռը, որպեսզի աշխատասենյակում տիֆով հիվանդ պառկած հայրը չլսի։

Երբ Արտյոմի թևերն իրենց գիրկն առան Պավելին, վերջինիս ոսկորները ճռռացին։

— Ախպերի՛կս, Պա՛վկա։

Վճռված էր. վաղը Պավելը սենկնում էր. Արտյոմը նրան կտեղավորի Բրուզժակի շոգեքարշում, որն ուղևորվում է Կազատին։

Ընդհանրապես խստադեմ Արտյոմը, տանջվելով եղբոր համար, ոչինչ չիմանալով նրա վիճակի մասին՝ հավասարակշռությունը կորցրել էր։ Այժմ նա անչափ երջանիկ էր։

— Ուրեմն՝ առավոտը ժամը հինգին դու գալիս ես նյութեղենի պահեստը։ Շոգեքարշը փայտով կբեռնեն, և դու էլ կնստես։ Շատ եմ ուզում քեզ հետ խոսել, բայց վերադառնալու ժամանակն է։ Վաղը ճանապարհ կգցեմ։ Մեզանից երկաթուղային գումարտակ են կազմակերպում։ Այնպես է, ինչպես գերմանացիների ժամանակ, պահակներով ենք շրջում։

Արտյոմը հրաժեշտ տվեց և գնաց։

Մթնշաղն արագորեն վրա հասավ։ Սերյոժան պիտի գար պարտեզի շրջապարսպի մոտ։ Նրան սպասելով՝ Կորչագինը քայլում էր մութ սենյակում՝ անկյունից անկյուն։ Տոնյան ու մայրը Տոմանովի մոտ էին։

Սերյոժկայի հետ հանդիպեցին մթության մեջ և ամուր սեղմեցին միմյանց ձեռքերը։ Նրա հետ եկել էր նաև Վալյան։ Խոսում էին ցածր ձայնով։

— Ես ատրճանակը չբերեցի։ Քո տան բակը լիքն էր

պետլյուրականներով։ Սայլեր են կանգնած, կրակ են արել։ Ոչ մի կերպ չէր լինի ծառ բարձրանալ։ Ա՛յ քեզ անհաջողություն,— արդարանում էր Սերյոժան։

— Սատանան նրա հետ,— հանգստացնում էր նրան Պավելը։— Գուցե այդպես ավելի լավ է։ Ճամփին կարող են գլխի ընկնել և գլուխս պոկել։ Բայց հետո անպայման վերցրու։

Վալյան մոտեցավ նրան։

— Ե՞րբ ես գնում։

— Վաղը լուսադեմին, Վա՛լյա։

— Բայց ինչպե՞ս դուրս պրծար, պատմի՛ր։

Պավելն արագ շշնջյունով պատմեց իր կրած տառապանքների մասին։

Ջերմ հրաժեշտ տվին իրար։ Սերյոժան լրջորեն հուզվում էր։

— Բարի ճանապարհ, Պավե՛լ, մեզ չմոռանաս,— դժվարությամբ արտասանեց Վալյան։

Գնացին՝ անմիջապես հալվելով խավարում։

Տանը խաղաղություն է տիրում։ Միայն ժամացույցն է քայլում հատու, անխոնջ քայլերով։ Երկուսից ոչ մեկի մտքով անգամ չի անցնում քնել, երբ վեց ժամից հետո նրանք պետք է բաժանվեն և, գուցե, այլևս երբեք չեն տեսնի միմյանց։ Կարելի՞ է, միթե, այդ կարճ ժամանակամիջոցում պատմել այն միլիոն մտքերն ու բառերը, որ կրում է իր մեջ նրանցից յուրաքանչյուրը։

Պատանեկություն, սքանչելի պատանեկություն, երբ կիրքը դեռ անհասկանալի է և միայն աղոտ զգացվում է սրտերի արագ բաբախման մեջ. երբ ձեռքն ահով ցնցվում է և մի կողմ փախչում՝ պատահաբար հպվելով ընկերուհու կրծքին, և երբ պատանեկան մտերմությունը պահպանում է վերջին քայլից։ Ի՞նչը կարող է ավելի հարազատ լինել սիրելիի թևերից, որ գրկում են պարանոցդ, և համբույրից, որ այրում է էլեկտրական հոսանքի հարվածի պես։

Ամբողջ մտերմության ընթացքում այդ երկրորդ համբույրն է։ Մորից բացի ոչ ոք չի փայփայել Կորչագինին, իսկ ծեծել են շատերը։ Դրա համար էլ գուրգուրանքն ավելի էր զգալի։

Խեղճ, դաժան կյանքի մեջ նա չգիտեր, որ այդպիսի բերկրանք էլ կա։ Իսկ այս աղջիկն իր ճանապարհին մեծ երջանկություն է։

Նա զգում է աղջկա մազերի բույրը և կարծես տեսնում է նրա աչքերը։

— Ես այնպես եմ քեզ սիրում, Տո՛նյա։ Չեմ կարող ես քեզ այդ մասին պատմել, չի լինում։

Նրա մտքերն ընդհատվում են։ Ինչ հնազանդ է ճկուն մարմինը... Բայց պատանեկան մտերմությունն ամեն ինչից բարձր է։

— Տո՛նյա, երբ այս խառնաշփոթը վերջանա, ես անպայման մոնաստր կդառնամ։ Եթե դու ինձանից չհրաժարվես, եթե դու իսկապես լրջորեն ես ինձ վերաբերվում և ոչ թե խաղի համար, այդ դեպքում ես քեզ համար լավ ամուսին կլինեմ։ Երբեք չեմ ծեծի, թող ես մեռնեմ, եթե քեզ որևէ բանով վիրավորեմ։

Եվ վախենալով, որ այդպես էլ գրկախառնված կքնեն, և որպեսզի մայրը չտեսնի ու հանկարծ վատ բան չմտածի, նրանք բաժանվեցին։

Ցերեկն լույսը բացվում էր, երբ նրանք, իրար չմոռանալու ամուր դաշինք կնքելով՝ քնեցին։

Վաղ առավոտյան Եկատերինա Միխայլովնան Կորչագինին արթնացրեց։

Նա արագ ոտքի ելավ։

Երբ վաննայի սենյակում նա հագավ իր հագուստները, կոշիկները և Դոլիննիկի բաճկոնը, մայրն արթնացրեց Տոնյային։

Ճռավոտվա խոնավ մշուշի միջով, շտապ գնացին դեպի կայարան։ Փայտի պահեստներին մոտեցան, շրջանցելով մարդաշատ փողոցները։ Փայտ բեռնած շոգեքարշի մոտ նրանց անհամբեր սպասում էր Արտյոմը։

Շաչող շոգու քուլաներով պարուրված դանդաղ մոտենում էր «Գայլաձուկ» կոչվող հզոր շոգեքարշը։

Շոգեքարշի խցիկի լուսամուտից նայում էր Բրուզժակը։

Արագ հրաժեշտ տվին իրար։ Պավելն ամուր բռնեց շոգեքարշի սանդղակի երկաթե բազրիքից, վեր բարձրացավ։ Ետ շրջվեց։ Գծանցի մոտ կանգնած էին երկու ծանոթ կերպարանքներ։ Մեկը բարձրահասակ՝ Արտյոմինը, իսկ նա կողքին՝ բարեկազմ, փոքրիկ՝ Տոնյայի կերպարանքը։

Քամին զայրույթով քաշքշում էր աղջկա բլուզի օձիքը, գզգզում շագանակագույն մազերի խոպոպները։ Աղջիկը թափահարում էր ձեռքը։

Արտյոմը մի թեք հայացք նետելով հեկեկանքը զսպող Տոնյային՝ հառաչեց.

«Կամ ես բոլորովին հիմար եմ, կամ սրանց տախտակն է պակաս։ Ա՛յ քեզ Պավկա։ Ա՛յ քեզ երեխա»։

Երբ գնացքը ուղեպտույտն անցավ, Արտյոմը շրջվեց դեպի Տոնյան.

— Դե լավ, բարեկամներ լինենք։— Եվ Տոնյայի փոքրիկ ձեռքը թաքնվեց նրա ահագին ձեռքի մեջ։

Հեռվից լսվում էր ընթացքն արագացնող գնացքի աղմուկը։

ՅՈԹՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Ամբողջ մի շաբաթ խրամատներով գոտևորված և փշալարափակոցների ոստայնով պատած փոքրիկ քաղաքը քնում և արթնանում էր հրանոթների թնդյունների և հրաձգության աղմուկի տակ։ Միայն ուշ գիշերին էր խաղաղություն տիրում։ Երբեմն խաղաղությունը խախտում էին ահաբեկ համազարկերը. առաջապահ պահակախմբերն էին իրար շոշափում։ Իսկ արշալույսին կայարանում մարտկոցների մոտ վխտում էին մարդիկ։ Հրանոթի սև երախը հազում էր շար ու սարսափելի։ Մարդիկ աշխատում էին նրան կերակրել արճճի նոր բաժնով։ Ռմբաձիգը ձգում էր թելը, գետինը ցնցվում էր։ Քաղաքից երեք վերստ հեռու, այն գյուղի վրայով, որ գրավել էին կարմիրները, արկերը թռչում էին ոռնոցով ու սուլոցով և խլացնում ամեն ինչ, իսկ ընկնելով՝ վեր էին նետում պայթեցրած հողակոշտերը։

Լեհական հին վանքի բակում տեղավորված էր կարմիրների մարտկոցը։ Վանքը կանգնած էր գյուղամիջում մի բարձր բլրի վրա։

Մարտկոցի զինկոմ ընկեր Զամոստինը վեր թռավ։ Նա քնել էր՝ գլուխը դրած հրանոթի կնճիթին։ Ամուր ձգելով ծանր մաուզերի փոկը՝ ականջ դրեց արկի թռիչքին և սպա-

սեց պայթյունին։ Բակը թնդաց նրա զրնգուն ձայնից.

— Վաղը կուշտ կքնենք, ընկերնե՛ր։ Վեր կա-ա-ա՜ց։

Մարտկոցի զինվորները քնել էին հենց այդտեղ՝ հրանոթների մոտ։ Նրանք ևս արագ վեր թռան, ինչպես իրենց զինկոմը։ Միայն Սիդորչուկն էր դանդաղում, նա չուզենալով էր բարձրացնում քնաթաթախ գլուխը։

— Ա՛յ թե գարշելիներն են, հա, հազիվ է լույսը բացվում, արդեն հաշում են։ Ինչ ստոր ժողովուրդ են։

Զամոստինը քրքջաց.

— Անգիտակից էլեմենտներ են, Սիդորչո՛ւկ։ Հաշվի չեն նստում այն բանի հետ, որ դու քնել ես ուզում։

Մարտկոցայինը դժգոհ մրթմրթալով վեր կացավ։

Մի բանի բոպե հետո վանքի բակում որոտում էին հրանոթները, իսկ քաղաքում պայթում էին արկերը։ Շաքարի գործարանի ամենաբարձր ծխնելույզին դրված տախտակների վրա տեղավորվել էին պետլյուրական մի սպա և հեռախոսավարը։

Նրանք բարձրանում էին երկաթե սանդուղքով, որ դրված էր ծխնելույզի մեջ։

Ամբողջ քաղաքը պարզ երևում էր։ Այստեղից էին նրանք ղեկավարում հրետանային կրակը։ Նրանք տեսնում էին քաղաքը պաշարող կարմիրների բոլոր շարժումները։ Այսօր բոլշևիկների մոտ մեծ աշխուժություն է նկատվում։ Հեռադիտակի մեջ երևում է նրանց զորամասերի շարժումը։ Երկաթուղու երկարությամբ դանդաղորեն դեպի Պոդոլսկի կայարանն է սահում զրահագնացքը՝ չդադարեցնելով հրետանաձգությունը։ Նրա հետևից երևում էին հետևակի շղթաները։ Մի քանի անգամ կարմիրները գրոհի էին նետվել, աշխատելով գրավել քաղաքը, բայց սիչևականները ամրացել էին մատույցներում, խրամատավորվել։ Եվ խրամատները մրրկանման կրակ էին տեղում։ Շուրջն ամեն ինչ հրաձգության խելահեղ դղրդյունով էր լցվում։ Այդ դղրդյունը վերաճում էր մի համատարած մռնչյունի՝ գրոհի պահին հասնելով իր լարման գագաթնակետին։ Եվ արճիճե հեղեղով ողողված, չդիմանալով գերմարդկային այդ լարվածությանը՝ բոլշևիկների շղթաները ետ էին քաշվել՝ դաշտում թողնելով անշարժ մարմիններ։

Այսօր քաղաքի վրա տեղացող հարվածներն ավելի համառ են, ավելի հաճախակի։ Հրաձգություններից օդն անհանգիստ տարուբերվում է։ Գործարանի ծխնելույզի բարձրությունից երևում է, թե ինչպես գետնին կպչելով, գայթելով՝ անզուսպ կերպով առաջ են ընթանում բոլշևիկների շղթաները։ Նրանք համարյա գրավել են կայարանը։ Սիչևականները կռվի մեջ քաշեցին իրենց բոլոր առկա պահեստի ուժերը, բայց չկարողացան կայարանում առաջացած ճեղքվածքը լցնել։ Հանդուգն վճռականությամբ լի բոլշևիկյան զորաշղթաները թափանցում էին մերձկայարանային փողոցները։ Հատու և սարսափելի մի հարվածով դուրս մղվելով իրենց վերջին դիրքերից՝ քաղաքամերձ այգիներից ու բանջարանոցներից, սիչևական սուրելեցների երրորդ գնդի պետլյուրականները, որոնք կայարանն էին պաշտպանում, անկարգ, մասնատված խմբերով քաղաք նետվեցին։ Թույլ չտալով նրանց ուշքի գալ և կանգ առնել, սվինի հարվածներով հողին հավասարեցնելով արգելափակոցները՝ կարմիրբանակայինների շղթաները հորդեցին դեպի քաղաքի փողոցները։

Ոչ մի ուժ չէր կարող Սերյոժա Բրուզժակին պահել այն ներքնահարկում, ուր հավաքվել էին նրա ընտանիքն ու ամենամոտիկ հարևանները։ Նա դեպի վեր էր ձգտում։ Զնայած մոր բողոքներին՝ դուրս եկավ զով մառանից։ Տան մոտով, բոլոր ուղղություններով կրակելով, դղրդոցով սլացավ «Սագայդաչնի» կոչվող զրահապատ ավտոմոբիլը։ Նրա հետևից ցաք ու ցրիվ վազում էին պետլյուրականների խուճապահար շղթաները։ Վազելով Սերյոժայենց բակը մտավ մի սիչևական։ Նա տենդագին շտապողականությամբ իր վրայից նետեց փամփշտակալը, սաղավարտն ու հրացանը և ցատկելով ցանկապատի վրայով՝ անհետացավ բանջարանոցներում։ Սերյոժան որոշեց դուրս նայել փողոց։ Պետլյուրականները ճանապարհով դեպի հարավարևմտյան կայարանն էին փախչում։ Զրահապատը պաշտպանում էր նրանց նահանջը։ Դեպի քաղաք տանող խճուղին դատարկ էր։ Բայց ահա ճանապարհի վրա թռավ մի կարմիրբանակային։ Նա կպավ գետնին և կրակեց խճուղու երկարությամբ։ Նրա հետևից երկրորդը, երրորդը... Սերյոժան նրան տեսնում է. նրանք կռանում են և կրակում հենց քայլելիս։ Առանց քողարկվելու վազում է մի

արևառ, բորբոքված աչքերով չինացի, ներքնաշապկով, որի վրայից կպել է գնդացրային ժապավեններ. չինացու երկու ձեռքերում էլ նռնակներ կան։ Բոլորի առջևից, ձեռքի գնդացիրն առաջ մեկնած, սլանում է դեռ բոլորովին ջահել մի կարմիրբանակային։ Դա քաղաք եկած կարմիրների առաջին շղթան է։ Բերկրանքի զգացումը համակեց Սերյոժային։ Նա նետվեց դեպի խճուղին և ամբողջ ուժով բղավեց.

— Կեցցե՛ն ընկերները։

Հանկարծակիի եկած չինացին քիչ էր մնում, որ նրան գետին գլորի։ Նա արդեն ուզում էր կատաղությամբ նետվել Սերյոժայի վրա, բայց պատանու խանդավառ տեսքը նրան կանգնեցրեց։

— Ո՞ւր փախչում ա Պետյուրա,— հևալով բղավեց չինացին։

Բայց Սերյոժան նրան չէր լսում։ Նա արագ բակ վազեց, շտապով վերցրեց սիչևականի նետած փամփշտակալն ու հրացանը և սլացավ հասնելու շղթային։ Նրան նկատեցին միայն այն ժամանակ, երբ մտան հարավարևմտյան կայարանը։ Արկերով ու հանդերձանքով բեռնված մի քանի էշեր կտրելուց, հակառակորդին դեպի անտառ շպրտելուց հետո կանգ առան, որպեսզի հանգստանան ու վերակազմավորվեն։ Պատանի գնդացրորդը մոտեցավ Սերյոժային և զարմացած հարցրեց.

— Որտեղի՞ց են, ընկե՛ր։

— Ես տեղացի եմ, այս քաղաքից, ես անհամբեր սպասում էի ձեր դարուն։

Կարմիրբանակայինները շրջապատեցին Սերյոժային։

— Ես նրան ճանաչում,— ուրախ ժպտում էր չինացին։— Նա կանչում. «Կեսսե ընկեր»։ Նա բոլսևիկ, մեր, ջահել լավ,— ավելացրեց նա՝ հիացմունքով խփելով Սերյոժայի ուսին։

Իսկ Սերյոժայի սիրտը բաբախում էր բերկրանքով։ Նրան անմիջապես ընդունեցին որպես յուրային։ Ինքը նրանց հետ միասին գրոհեց և սվինամարտով գրավեց քաղաքը։

Քաղաքը կենդանացավ։ Տանջված բնակիչները դուրս էին գալիս ներքնահարկերից ու նկուղներից և շտապում դեպի դարպասները՝ տեսնելու քաղաք մտնող կարմիր զորամասերը։ Անտոնինա Վասիլևնան ու Վալյան կարմիրբանակայինների շարքում նկատեցին նրանց հետ միասին քայլող Սերյոժային։ Նա գնում էր առանց գլխարկի, փամփշտակալը կապած, հրացանը ուսին։

Անտոնինա Վասիլևնան զայրույթով ձեռքերն իրար խփեց։

Սերյոժան, նրա որդին, խառնվել է կռվին։ Օ՜, դա նրան էժան չի նստի։ Մի մտածեցե՛ք, ամբողջ քաղաքի աչքի առաջ հրացանով է քայլում։ Իսկ հետո ի՞նչ կլինի։

Եվ այդ մտքերով համակված՝ Անտոնինա Վասիլևնան արդեն իրեն զսպել չկարողանալով, բղավեց.

— Սերյո՜ժկա, անմիջապես տո՛ւն եկ, շո՛ւտ։ Ես քեզ ցույց կտամ, սրիկա՜։ Ես քեզ կռվել ցույց կտամ։— Եվ նա գնաց դեպի տղան՝ նրան կանգնեցնելու մտադրությամբ։

Բայց Սերյոժան, նրա Սերյոժան, որի ականջները նա շատ անգամ էր քաշել, զայրացած նայեց մորը, և, ամոթի ու վիրավորանքի կարմրությունը դեմքին, խստորեն ասաց.

— Մի՛ բղավիր։ Այստեղից ես ոչ մի տեղ էլ չեմ գնա։— Եվ առանց կանգ առնելու անցավ մոտով։

Անտոնինա Վասիլևնան բռնկեց.

— Ա՜խ, ահա թե ինչպես ես խոսում մորդ հետ։ Դե որ այդպես է, էլ չհամարձակվես տուն վերադառնալ։

— Եվ չեմ էլ վերադառնա,— առանց ետ շրջվելու բղավեց Սերյոժան։

Շփոթված Անտոնինա Վասիլևնան մնաց ճանապարհին կանգնած։ Իսկ նրա մոտով շարժվում էին արևառ, փոշոտված մարտիկների շարքերը։

— Լաց մի լինի, մերի՛կ։ Որդուդ կոմիսար կընտրենք,— հնչեց ինչ-որ մեկի ուժգին ու հեգնական ձայնը։

Դասակով մեկ տարածվեց ուրախ ծիծաղը։ Վաշտի առջևում մի քանի ուժեղ ձայներ համերաշխ հնչեցրին երգը.

Անվախ ընկեր, քայլենք շար-շար,
Հոգով կռվում ամրանանք,
Ազատության մեծ ճանապարհը
Կրծքով հարթենք մեզ համար...

Շարքերը հուժկու ձայնով ձայնակցեցին երգին, և ընդհանուր խմբերգի մեջ լսվում էր Սերյոժայի զրնգուն ձայնը։ Նա

նոր ընտանիք էր գտել։ Եվ այդ ընտանիքում մի սվինն իրենն է՝ Սերյոժայինը։

Լեշչինսկու կալվածատան դարպասի վրա սպիտակ մի խավաքարտ է փակցված։ Վրան կարճ մակագրություն՝ «Հեղկոմ»։

Կողքին բոսորագույն մի պլակատ։ Կարդացողի ուղղակի կրծքին են ուղղված մի կարմիրբանակայինի մատն ու աչքերը։ Եվ մակագրություն.

«Դու մտե՞լ ես կարմիր բանակի շարքերը»։

Գիշերը դիվիզիայի քաղբաժնի աշխատողները փակցրել են այս համար ագիտատորներին։ Հենց այստեղ էլ փակցված է հեղկոմի առաջին կոչը՝ ուղղված Շեպետովկա քաղաքի բոլոր աշխատավորներին.

Ընկերնե՞ր։ Պրոլետարական զորքերը գրավել են քաղաքը։ Սովետական իշխանությունը վերականգնված է։

Ազգաբնակչությանը կոչ ենք անում հանգիստ մնալ։ Արնախում շարքարարները ետ են շպրտված, բայց որպեսզի նրանք այլևս երբեք չվերադառնան, որպեսզի նրանք վերջնականապես ոչնչանան, մտե՞ք կարմիր բանակի շարքերը։ Բոլոր ուժերով օժանդակեցեք աշխատավորների իշխանությանը։ Քաղաքում զինվորական իշխանությունը պատկանում է կայազորի պետին։ Քաղաքացիական իշխանությունը՝ հեղափոխական կոմիտեին։

Հեղկոմի նախագահ՝ Դոլինենկո։

Լեշչինսկու կալվածատանը նոր մարդիկ երևացին։ «Ընկեր» բառը, որի համար դեռ երեկ կյանքով էին վճարում, այժմ հնչում էր ամեն քայլափոխին։ Անասելիորեն հուզող «ընկեր» բա՜ռը։

Դոլիննիկը մոռացել էր և՛ քունը, և՛ հանգիստը։

Ատաղձագործը հեղափոխական իշխանությունն էր կարգավորում։

Ամառանոցի փոքրիկ մի սենյակի դռան վրա թղթի մի կտոր է փակցված։ Վրան մատիտով գրված է. «Կուսակցական կոմիտե»։ Այստեղ նստած է ընկեր Իգնատևան՝ հանգիստ, զուսպ մի կին։ Դիվիզիայի քաղբաժինը նրան ու Դոլիննիկին է հանձնարարել սովետական իշխանության օրգանների կազմակերպումը։

Մի օր է անցել, և արդեն սեղանների մոտ նստած են աշխատակիցները, կրամեքենան չխկչխկում է, պարենավորման կոմիսարիատը կազմակերպված է։ Կոմիսար Պիժիցկին շարժուն, ջղային մարդ է։ Նա աշխատել էր շաքարի գործարանում, որպես մեխանիկի օգնական։ Սովետական իշխանության հենց առաջին օրերից նա բացառիկ համառությամբ սկսեց ջախջախել գործարանային վարչության աղնվական վերնախավին, որը թաքնվել էր դեպի բոլշևիկներն ունեցած իր գաղտնի ատելությամբ միասին։

Գործարանային ժողովում բռունցքով ցրգոված խփելով ամբիոնին, նա իրեն շրջապատող բանվորներին նետում էր դաժան, անհաշտ լեհերեն բառեր.

— Իհարկե,— ասում էր նա,— այն, ինչ եղել է, այլևս չի լինի։ Բավական է, որքան մեր հայրերը և մենք ինքներս մեր ամբողջ կյանքում բատրակություն ենք արել Պոտոցկու համար։ Մենք նրանց համար պալատներ ենք կառուցել, իսկ դրա դիմաց պայծառափայլ կոմսը մեզ ավել է ճիշտ այնքան, որ մենք աշխատանքում քաղցից չսատկենք։

Քանի տարի է, որ կոմս Պոտոցկիններն ու իշխան Սանգուշկիները մեր վզին նստած գվարճանում են։ Մի՞թե քիչ կան մեր՝ լեհերի մեջ այնպիսի բանվորներ, որոնց Պոտոցկին լծել էր, ինչպես նաև ռուս, ուկրաինացի բանվորներին։ Եվ ահա այդ բանվորների մեջ շրջում են կոմսի հաճոյակատարների տարածած լուրերը, իբր սովետական իշխանությունը նրանց բոլորին երկաթե բռունցքի մեջ է սեղմելու։

Դա ստոր զրպարտություն է, ընկերնե՞ր։ Տարբեր ազգությունների բանվորները երբեք այնպիսի ազատություններ չեն ունեցել, ինչպես այժմ։

Բոլոր պրոլետարները եղբայրներ են, իսկ պաներին մենք արդեն կսեղմենք, հավատացած եղեք։— Նրա ձեռքը մի աղեղ է գծում և նորից հարվածում ամբիոնին։— Իսկ ո՞վ է ստիպում եղբայրական արյուն թափել։ Արքաներն ու ազնվականները հին-հին դարերից սկսած լեհ գյուղացիներին ուղարկել են Բուրքերի վրա, և միշտ մի ժողովուրդը հարձակվել ու ջարդել է մյուսին։ Որքան ժողովուրդներ են ոչնչացվել, ինչ դժբախտություններ ասես, որ չեն պատահել։ Եվ ում էր դա պետք, մի՞թե մեզ։ Բայց շուտով դրան վերջ կլինի։

Այդ գարշելիների վերջը եկել է։ Բոլշևիկներն ամբողջ աշխարհին են նետել բուրժուաների համար սարսափելի խոսքերը. «Պրոլետարներ բոլոր երկրների՛, միացե՛ք»։ Ահա թե ինչի մեջ է մեր փրկությունը, երջանիկ կյանքի մեր հույսը, որպեսզի բանվորը բանվորի համար եղբայր լինի։ Կոմունիստական կուսակցության մեջ մտեք, ընկերնե՛ր։

Կլինի նաև լեհական հանրապետություն, միայն սովետական, առանց Պոտոցկիների, որոնց մենք արմատից կոչընչացնենք. իսկ սովետական Լեհաստանում մենք ինքներս տերեր կդառնանք։ Զեզանից ով չի ճանաչում Բրոնիկ Պոտաշինսկուն։ Նրան հեղկոմը նշանակել է մեր գործարանի կոմիսար։ «Ով ոչինչ էր, հիմա կդառնա ամեն ինչ»։ Մեզ մոտ էլ տոն կլինի, ընկերնե՛ր, միայն թե մի լսեք այդ թաքնված օձերին։ Եվ եթե մեր բանվորական վստահությունը գործին կօգնի, ապա բոլոր ժողովուրդների եղբայրություն կկազմակերպենք ամբողջ աշխարհում։

Վացլավն այդ նոր խոսքերն ասում էր պարզ, իր բանվորական սրտի խորքից։

Երբ նա ամբիոնից իջավ, երիտասարդությունը նրան ուղեկցեց հավանության բացականչություններով։

Միայն մեծերն էին վախենում արտահայտվել։ Ո՞վ գիտե։ Գուցե վաղը բոլշևիկները կնահանջեն, և այն ժամանակ իր յուրաքանչյուր բառի համար մարդ ստիպված կլինի հատուցել։ Եթե կախաղան էլ չբարձրանաս, համենայն դեպս գործարանից հաստատ կվռնդեն։

Լուսավորության կոմիսարը նիհարիկ, բարեկազմ ուսուցիչ Զեռնոպիսկին է։ Սա տեղական ուսուցչությունից առայժմ առաջին մարդն է, որ հավատարիմ է բոլշևիկներին։ Հեղկոմի դիմաց տեղավորվել է հատուկ նշանակման վաշտը։ Այս վաշտի կարմիրբանակայինները հերթապահում են հեղկոմում։ Երեկոյան պարտեզում, մուտքի առաջ արդեն դրված է զգաստ «մաքսիմը»՝ իր օձանման ժապավենով, որը սողում է դեպի փամփշտարկղունարանը։ Կողքին կանգնած են երկու հրացանավորներ։

Հեղկոմ է գնում ընկեր Իգնատևան։ Նա ուշադրություն է դարձնում ջահել կարմիրբանակայինի վրա և հարցնում է.

— Քանի՞ տարեկան եք, ընկեր։

— Տասնյոթի մեջ եմ։

— Տեղացի՞ եք։

Կարմիրբանակայինը ժպտում է.

— Այո՛, ես միայն անցյալ օրը, կռվի ժամանակ եմ բանակ մտել։

— Ո՞վ է ձեր հայրը։

— Մեքենավարի օգնականը։

Վանդակադռնից ներս է մտնում Դոլիննիկը ինչ-որ զինվորականի հետ։ Իգնատևան, նրան դիմելով, ասում է.

— Ահա և ես կոմսոմոլի շրջկոմի գլխավոր գտա, սա տեղացի է։

Դոլիննիկն արագ մի հայացք նետեց Սերգեյի վրա։

— Ո՞ւմ տղան ես։ Հա՜, Զախարի տղան։ Դե ինչ, քշիր, շուրջդ հավաքիր տղաներին։

Սերյոժան զարմացած նրանց նայեց։

— Իսկ վաշտն ինչպե՞ս։

Արդեն սանդուղքով վեր բարձրանալով, Դոլիննիկը նետեց.

— Այդ մենք կկարգավորենք։

Հաջորդ օրը երեկոյան ստեղծվեց Ուկրաինայի կոմունիստական երիտասարդական միության տեղական կոմիտեն։

Նոր կյանքն անսպասելի ու արագ ներխուժեց։ Այդ կյանքն ամբողջովին համակեց Սերյոժային, իր շրջապտույտի մեջ առավ նրան։ Սերյոժան մոռացավ ընտանիքը, թեև այն բոլորովին մոտ էր իրեն։

Նա՝ Սերյոժա Բրուզժակը, բոլշևիկ է։ Եվ տասներորդ անգամ արդեն դուրս էր քաշում գրպանից սպիտակ թղթի շերտը, որտեղ Ուկրաինայի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության կոմիտեի բլանկի վրա գրված էր, որ նա, Սերյոժան, կոմերիտական է և կոմիտեի քարտուղար։ Իսկ եթե որևէ մեկը համարձակվեր կասկածել, ապա գիմնաստյորկայի վրայից, բրեզենտի տնայնագործական պատյանի մեջ գոտուց կախված էր ազդու «մանլիխյոր» ատրճանակը, թանկագին Պավկայի պարգևը։ Դա ամենահամոզիչ մանդատն է։ Է՜խ, ափսոս, որ չկա Պավլուշան։

Հեղկոմի հանձնարարությամբ Սերյոժան ամբողջ օրերով վազվզում էր։ Հենց հիմա էլ Իգնատևան նրան է սպասում։ Նրանք գնում են կայարան, դիվիզիայի քաղբաժին, որտեղ

հեղկոմի համար գրականություն և թերթեր կտան։ Նա արագորեն դուրս է վազում փողոց։ Քաղաքամջի աշխատակիցն ավտոմոբիլով սպասում է նրանց հեղկոմի դարպասի մոտ։

Կայարանը հեռու է։ Այնտեղ վագոնների մեջ էին տեղավորված ուկրաինական սովետական առաջին դիվիզիայի շտաբն ու քաղաքամջինը։ Իգնատևան ուղևորությունն օգտագործում է Սերյոժային հարցուփորձ անելու համար։

— Ի՞նչ ես արել քո բնագավառում։ Կազմակերպություն ստեղծե՞լ ես։ Դու պետք է ագիտացիա անես քո ընկերների, բանվորների երեխաների մեջ։ Ամենամոտիկ ժամանակում պետք է կազմել կոմունիստական երիտասարդության մի խումբ։ Վաղը մենք կկազմենք և տպագրել կտանք կոմերիտմիության կոչը։ Հետո երիտասարդությանը կհավաքենք թատրոնում, միտինգ կկազմակերպենք։ Մի խոսքով, ես դիվիզիայի քաղաքամջնում քեզ կծանոթացնեմ Ուստինովիչի հետ։ Նա, կարծեմ, ձեր ջահելների մեջ է աշխատանք տանում։

Բանից երևաց, որ Ուստինովիչը մի տասնութամյա աղջիկ է, կարճ կտրած մուգ գույնի մազերով, խաքի գույնի նոր գիմնաստյորկա հագած և մեջքին նեղլիկ մի գոտի կապած։ Սերյոժան նրանից շատ նոր բան իմացավ և խոսքում ստացավ, որ աղջիկը նրան աշխատանքում կօգնի։ Հրաժեշտի ժամանակ աղջիկը նրան բեռնեց մի ամբողջ հակ գրականությամբ և հատկապես փոքրիկ մի գրքույկով՝ կոմերիտմիության ծրագիրը ու կանոնադրությունը։

Ուշ երեկոյան հեղկոմ վերադարձան։ Պարտեզում նրան էր սպասում Վալյան։ Նա հանդիմանությամբ հարձակվեց Սերգեյի վրա.

— Ինչպե՞ս չես ամաչում։ Ինչ է, բոլորովի՞ն ես հրաժարվել տնից։ Մայրիկը քո պատճառով ամեն օր լաց է լինում, հայրիկը բարկանում է։ Խայտառակություն կլինի։

— Ոչինչ էլ չի լինի, Վա՛լյա։ Տուն գալու ժամանակ չկա։ Ազնիվ խոսք, չկա։ Այսօր էլ չեմ գա։ Իսկ ա՛յ, քեզ հետ խոսել է հարկավոր։ Գնանք ինձ մոտ։

Վալյան եղբորը չէր ճանաչում։ Նա բոլորովին փոխվել էր։ Կարծես մեկը նրան էլեկտրական լիցք էր տվել։

Քրոջը նստեցնելով աթոռին՝ Սերյոժան անմիջապես, առանց դեսուդեն ընկնելու սկսեց.

— Բանն այսպես է։ Մտիր կոմերիտմիության մեջ։ Անհասկանալի՞ է։ Կոմունիստական երիտասարդության միություն։ Ես էդ գործում նախագահի տեղ եմ։ Չե՞ս հավատում։ Այ ա՛ռ, կարդա՛։

Վալյան կարդաց և շփոթված նայեց եղբորը։

— Ես այս կոմերիտմիության մեջ ի՞նչ պիտի անեմ։

Սերյոժան ձեռքերը տարածեց։

— Ի՞նչ։ Անելու բա՞ն չկա։ Սիրելի՛ս։ Ես հո ամբողջ գիշերներ չեմ քնում։ Հարկավոր է ագիտացիա բորբոքել։ Իգնատևան ասում է. բոլորին հավաքենք թատրոնում և պատմենք սովետական իշխանության մասին, իսկ ինձ էլ ասում է, որ պիտի ճառ արտասանեմ։ Ես կարծում եմ, որ իզուր է ասում, որովհետև, հասկանալի է, չգիտեմ, թե ինչպես պետք է ճառ ասել։ Եվ, ինչպես ասում են, կտապալվեմ։ Դե, հիմա ասա՛, ի՞նչ ես մտածում կոմերիտմիության մեջ աշխատելուդ մասին։

— Չգիտեմ։ Մայրիկն այն ժամանակ հո բոլորովին կբարկանա։

— Մայրիկին մի նայիր, Վա՛լյա,— առարկեց Սերյոժան։— Նա այդ հարցերը չի հասկանում։ Նա ուզում է միայն, որ երեխաներն իր մոտ լինեն։ Նա սովետական իշխանության դեմ ոչինչ չունի։ Ընդհակառակը, համակրում է։ Միայն թե թող ռազմաճակատում ուրիշները կռվեն, ոչ թե նրա զավակները։ Իսկ դա մի՞թե արդարացի է։ Հիշո՞ւմ ես, ժուխրայը մեզ ինչպես էր պատմում։ Ա՛յ, Պավկան, նա մորը չէր նայում։ Իսկ այժմ մենք իրավունք ենք ստացել ապրել աշխարհում այնպես, ինչպես պետք է։ Դե, մի՞թե դու կհրաժարվես, Վա՛լյուշա։ Իսկ ինչ լավ կլիներ, եթե համաձայներ։ Դու աղջիկների, իսկ ես տղաների մեջ գործ կձեռնարկենք։ Շեկլիկ սատանա Կլիմկային հենց այսօր գործի կլծեմ։ Դե, ի՞նչ ես ասում, Վալյա, միանո՞ւմ ես մեզ, թե չէ։ Այ, ահա այստեղ մի գրքույկ կա այդ գործի մասին։

Նա գրպանից հանեց և նրան տվեց։ Վալյան հայացքը եղբորից չկտրելով, կամացուկ հարցրեց.

— Իսկ ինչ կլինի, եթե հանկարծ նորից պետլյուրականները գան։

Սերյոժան առաջին անգամ անդրադարձավ այդ հարցին։

— Ես, իհարկե, բոլորի հետ կհեռանամ, բայց ա՛յ, քեզ հետ ինչպես վարվենք։ Մայրիկն իսկապես դժբախտ կլինի։

Նա լռեց։

— Դու ինձ գրիր, Սերյոժա, բայց այնպես, որ մայրիկը չիմանա, և ոչ ոք չիմանա, միայն ես ու դու։ Ես ամեն ինչում կօգնեմ, այդպես ավելի լավ կլինի։

Սենյակ մտավ Իգնատևան։

— Սա իմ քույրիկն է, ընկեր Իգնատև, Վալյան։ Ես նրա հետ խոսակցություն ունեցա գաղափարի մասին։ Նա շատ հարմար է, բայց այ, հասկանո՞ւմ եք, մեր մայրը շատ է լուրջ։ Կարելի՞ է սրան այնպես ընդունել, որ ոչ ոք այդ մասին չիմանա։ Եթե մենք, ասենք, նահանջելու լինենք, ապա ես հրացան կվերցնեմ և հայդա, իսկ նա, այ, մայրիկին խղճում է։

Իգնատևան նստել էր սեղանի եզրին և ուշադիր լսում էր նրան։

— Լա՛վ։ Այդպես ավելի լավ կլինի։

Թատրոնը լեփ-լեցուն էր զրուցասեր երիտասարդությամբ, որին այստեղ էր հրավիրել առաջիկա միտինգի մասին քաղաքում փակցված հայտարարությունը։ Նվագում էր շաքարի գործարանի բանվորների փողային նվագախումբը։ Դահլիճում ամենից ավելի շատ են սովորողները՝ գիմնազիստուհիներ, գիմնազիստներ, բարձրագույն տարրական ուսումնարանի աշակերտներ։

Սրանց բոլորին այստեղ է հրապուրել ոչ այնքան միտինգը, որքան ներկայացումը։

Վերջապես վարագույրը բարձրացավ, և ամբիոնի վրա երևաց գավառից հենց նոր եկած գավկոմի քարտուղար ընկեր Ռազինը։

Փոքրիկ, նիհարիկ, սուր քթով այդ մարդն իր վրա գրավեց բոլորի ուշադրությունը։ Նրա ճառը լսեցին մեծ հետաքրքրությամբ։ Նա խոսում էր այն պայքարի մասին, որով համակվել էր ամբողջ երկիրը, և կոչ էր անում երիտասարդությանը՝ համախմբվել կոմունիստական կուսակցության շուրջը։ Նա խոսում էր որպես իսկական հռետոր, նրա ճառի մեջ չափազանց շատ կային այնպիսի բառեր, ինչպես «օրթոդոքս մարքսիստներ», «սոցիալ-շովինիստներ» և այլն, որոնք ունկընդիրներն, իհարկե, չհասկացան։

Երբ վերջացրեց, նրան բուռն ծափահարություններով պարգևատրեցին։ Նա ձայն տվեց Սերյոժային և գնաց։

Պատահեց հենց այն, ինչից որ Սերյոժան վախենում էր։ Ճառը չէր ստացվում։ «Ի՞նչ խոսեմ, ինչի՞ մասին»,— տանջվում էր նա բառեր որոնելով և չէր գտնում այդ բառերը։

Իգնատևան նրան փրկեց՝ սեղանի մոտից շշնջալով.

— Խոսիր բջիջ կազմակերպելու մասին։

Սերյոժան անմիջապես անցավ գործնական միջոցառումներին։

— Դուք արդեն ամեն ինչ լսեցիք, ընկերնե՛ր, այժմ մենք պետք է բջիջ ստեղծենք։ Ձեզանից ո՞վ է դրան կողմնակից։

Դահլիճում լռություն տիրեց։

Օգնության եկավ Ուստինովիչը։ Նա սկսեց ունկնդիրներին պատմել Մոսկվայի երիտասարդական կազմակերպության մասին։ Շփոթված Սերյոժան մի կողմ էր կանգնել։

Բջջի կազմակերպման նկատմամբ այդ վերաբերմունքը հուզում էր նրան, և Սերյոժան անբարյացակամ հայացքով էր նայում դահլիճին։ Ուստինովիչին անուշադիր էին լսում։ Զալիվանովն ինչ-որ շշնջում էր Լիզա Սուխարկոյի ականջին և արհամարհանքով նայում Ուստինովիչին։ Առաջին շարքում բարձր դասարանների գիմնազիստուհիները, շպարված քթիկներով ու խորամանկորեն աչքերն ամեն կողմ խաղացնելով, զրուցում էին իրար հետ։ Անկյունում, դեպի բեմը տանող մուտքի մոտ գտնվում էին մի խումբ երիտասարդ կարմիրբանակայիններ։ Նրանց մեջ Սերյոժան տեսավ ծանոթ պատանի գնդացրորդին։ Նա նստել էր բեմեղրի մոտ, ջղայնորեն շարժվում էր տեղում և ատելությամբ նայում էր պճնված Լիզա Սուխարկոյին ու Աննա Ադամովսկայային։ Նրանք առանց քաշվելու զրուցում էին իրենց կավալերների հետ։

Զգալով, որ իրեն չեն լսում, Ուստինովիչն արագորեն վերջացրեց իր ճառը և տեղը զիջեց Իգնատևային։ Իգնատևայի հանգիստ ճառն ունկնդիրներին հանգստացրեց։

— Ընկե՛ր երիտասարդներ,— ասում էր նա,— ձեզանից յուրաքանչյուրը կարող է մտածել այն բոլորի մասին, ինչ նա լսեց այստեղ, և ես հավատացած եմ, որ ձեր մեջ կգտնվեն

ընկերներ, որոնք կընդգրկվեն հեղափոխության մեջ որպես նրա ակտիվ մասնակիցներ և ոչ որպես հանդիսատեսներ։ Ձեր առաջ դռները բաց են, որոշողն այժմ դուք եք։ Մենք ուզում ենք, որ դուք ինքներդ արտահայտվեք։ Ցանկացողներին հրավիրում ենք այստեղ։

Դահլիճում նորից լռություն տիրեց։ Բայց ահա հետին շարքերից հնչեց մի ձայն.

— Ես ուզում եմ խոսել։

Եվ դեպի բեմն ընթացավ արջուկի նման, մի քիչ շիլ աչքերով Միշա Լևչուկը։

— Դե որ բանն էդպես է, պետք է բոլշևիկներին օգնել, ես չեմ հրաժարվում։ Սերյոժկան ինձ ճանաչում է։ Ես կոմսոմոլ եմ գրվում։

Սերյոժան ուրախ ժպտաց։

— Ա՛յ, տեսնում եք, ընկերնե՛ր,— անմիջապես բեմի կենտրոնը նետվեց նա։— Ախր ես ասում էի, ա՛յ, Միշան յուրային է, որովհետև նրա հայրը սլաքավար էր, վագոնի տակ ընկավ, դրա համար էլ Միշկան կրթություն չստացավ։ Իսկ մեր գործն իսկույն հասկացավ, գլխի ընկավ, թեև գիմնազիա չի վերջացրել։

Դահլիճում աղմուկ և կանչեր լսվեցին։ Խոսք խնդրեց գիմնազիստ Օկուշևը, դեղագործի որդին, ջանասիրաբար մազափունջը ոլորած մի տղա։ Գիմնաստյորկան ուղղելով, նա սկսեց.

— Ես ներումն եմ խնդրում, ընկերնե՛ր։ Ես չեմ հասկանում, թե մեզանից ինչ են ուզում։ Որ մենք քաղաքականությա՞մբ զբաղվենք։ Իսկ ե՞րբ պիտի սովորենք։ Մենք պետք է գիմնազիան ավարտենք։ Այլ բան է, եթե ստեղծեին ինչ-որ մի սպորտային ընկերություն, ակումբ, ուր հնարավոր լիներ հավաքվել, կարդալ։ Թե չէ քաղաքականությամբ զբաղվիր, հետո էլ դրա համար քեզ կախեն։ Ներեցե՛ք։ Ես կարծում եմ, որ դրան ոչ ոք չի համաձայնի։

Դահլիճում ծիծաղ հնչեց։ Օկուշևը բեմից ցած թռավ և նստեց։ Նրա տեղը գրավեց երիտասարդ գնդացրորդը։ Ցասումով գլխարկը ճակատին իջեցնելով, շարացած հայացքը շարքերին նետելով՝ նա ուժգին բղավեց.

— Սիծաղո՞ւմ եք, հա, սողունները։

Աչքերը կարծես երկու վառվող ածուխներ լինեին։ Խոր շունչ առնելով, զայրույթից ամբողջովին դողալով, նա ասաց.

— Իմ ազգանունն է Ժարկի, անունս՝ Իվան։ Ես ոչ հայր եմ տեսել, ոչ մայր, անապաստան եմ եղել։ Մուրացիկ, որ թավալվում է ցանկապատերի տակ։ Սոված էի և ոչ մի տեղ ապաստան չունեի։ Շան կյանք էր և ոչ այնպիսին, ինչպիսին դուք եք ունեցել, մոր փեշի տակ մեծացածներդ։ Բայց ահա եկավ սովետական իշխանությունը, ինձ վերցրին կարմիրբանակայինները։ Ամբողջ դասակով ինձ որդեգրեցին, հագցրին-կապեցին, գրագիտություն սովորեցրին, իսկ ամենագլխավորը՝ մարդկային հասկացողություն տվեցին։ Նրանց շնորհիվ բոլշևիկ դարձա և մինչև մահս բոլշևիկ կմնամ։ Ես շատ լավ գիտեմ, թե ինչի համար է մղվում այս պայքարը. մե՛զ համար. չքավորների համար, բանվորական իշխանության համար։ Ա՛յ, դուք քուռակների նման խրխնջում եք և չգիտեք այն, որ քաղաքի մոտ երկու հարյուր ընկերներ ընկան, ընդմիշտ զոհվեցին...— Ժարկիի ձայնը ջրնգաց պրկված լարի նման։— Առանց տատանվելու իրենց կյանքը տվին մե՛ր երջանկության համար, մե՛ր գործի համար... Ամբողջ երկրում են ընկնում, բոլոր ռազմաճակատներում, իսկ դուք այդ ժամանակ այստեղ կարուսել էիք պտտում։ Դուք ահա սրանց եք դիմում, ընկերնե՛ր,— շրջվեց նա հանկարծ դեպի նախագահության սեղանը,— ա՛յ սրանց,— մատնացույց արեց նա դահլիճը,— բայց մի՞թե սրանք կհասկանան։ Ո՛չ։ Կուշտը քաղցածին ընկեր չի կարող լինել։ Այստեղ միայն մեկը գտնվեց, որովհետև նա չքավոր էր, որբ։ Առանց ձեզ էլ յոլա կգնանք,— կատաղությամբ հարձակվեց նա ժողովի վրա,— չենք խնդրի, մեր ինչի՞ն են պետք այսպիսիները։ Այսպիսիներին միայն գնդացրով պիտի շուլալես,— խեղդված ձայնով գոչեց նա վերջում և առանց որևէ մեկին նայելու իջավ բեմից և ուղղվեց դեպի ելքի դուռը։

Նախագահությունից ոչ ոք չմնաց երեկույթին։ Երբ դեպի հեղկոմ էին գնում, Սերյոժան վշտացած տոնով ասաց.

— Ա՛յ թե ինչ աղմուկ ստացվեց։ Ժարկին իրավացի է։

Ոչինչ էլ դուրս չեկավ այդ դիմնազիստներից։ Միայն շարանում ես։

— Զարմանալու բան չկա,— ընդհատեց նրան Իգնատեվան,— այստեղ համարյա պրոլետարական երիտասարդություն չկա։ Չէ՞ որ մեծամասնությունը կամ մանր բուրժուա է, կամ քաղաքային ինտելիգենցիա, քաղքենիներ։ Հարկավոր է բանվորների մեջ աշխատել։ Հենվիր սղոցարանի և շաքարի գործարանի վրա։ Իսկ միտինգից, այնուամենայնիվ, օգուտ կլինի։ Սովորողների մեջ լավ ընկերներ կան։

Ուստինովիչը պաշտպանեց Իգնատևայի ասածը.

— Մեր խնդիրն է, Սերյո՛ժա, անխոնջ կերպով յուրաքանչյուրի գիտակցությանը հասցնել մեր գաղափարները, մեր լոզունգները։ Ամեն մի նոր իրադարձության վրա կուսակցությունը կդարձնի բոլոր աշխատավորների ուշադրությունը։ Մենք մի ամբողջ շարք միտինգներ, խորհրդակցություններ, համագումարներ կկազմակերպենք։ Դիվիզիայի քաղբաժինը կայարանում ամառային թատրոն է բաց անում, օրերս ագիտգնացքը կժամանի, և ամբողջ թափով աշխատանքը կծավալենք։ Հիշեցեք, Լենինն ասել է, որ մենք չենք հաղթանակի, եթե պայքարի մեջ չքաշենք աշխատավորների բազմամիլիոն մասսաներին։

Ուշ գիշերին Սերգեյն Ուստինովիչին ուղեկցեց մինչև կայարան։ Հրաժեշտի ժամանակ ամուր սեղմեց նրա ձեռքը, մի վայրկյան իր ափի մեջ պահեց այն։ Ուստինովիչը հաղիվ նկատելի ժպտաց։

Քաղաք վերադառնալով՝ Սերգեյը շրջվեց դեպի իրենց տուն։

Լուռ, առանց առարկելու տարավ Սերյոժան մոր հարձակումները։ Բայց երբ հայրը հանդես եկավ, Սերյոժան ինքն ակտիվ գործողություններ անցավ և անմիջապես Զախար Վասիլևիչին փակուղու առաջ կանգնեցրեց։

— Լսի՛ր, հերի՛կ, երբ գերմանացիների ժամանակ դուք գործադուլ արիք և շոգեքարշի վրա ժամապահին սպանեցիք, դու ընտանիքիդ մասին մտածո՞ւմ էիր։ Մտածո՞ւմ էիր։ Բայց, այնուամենայնիվ, արեցիր, որովհետև քո բանվորական խիղճն էր ստիպում։ Ես էլ ընտանիքի մասին մտածել եմ։ Ես հասկանում եմ, որ եթե նահանջենք, ապա իմ պատճառով ձեզ կհետապնդեն։ Բայց եթե մենք հաղթանակենք, ապա էլ ո՞վ կարող է մեզ հետապնդել։ Իսկ տանը նստել չեմ կարող։ Դու, հերի՛կ, ինքդ էլ դա լավ ես հասկանում։ Աղմուկ անելու ի՞նչ կարիք կա։ Ես լավ գործ եմ ձեռնարկել, դու պիտի ինձ պաշտպանես, օգնես, իսկ դու աղմկում ես։ Ե՛կ, հերի՛կ, հաշտվենք, այն ժամանակ մայրիկն էլ ինձ վրա բղավելը կդադարեցնի։— Նա նայում էր հորը իր հստակ, լուրթ աչքերով և, իր արդարացիության վրա վստահ, քնքշալի ժպտում էր։

Զախար Վասիլևիչը թախտի վրա անհանգիստ շարժվեց և թավ բեղերի ու չսափրված մորուքի կոշտ մազերի միջից ժպտաց՝ ցուցադրելով դեղնավուն ատամները։

— Գիտակցությա՞նս ես դիմում, ստահա՛կ։ Կարծում ես, որ ատրճանակ ես կապել, ես քեզ գոտիով չեմ հասցնի՞։

Բայց նրա ձայնի մեջ սպառնալիք չկար։ Շփոթված ու վարանելով նա ավելացրեց՝ վճռականորեն որդուն մեկնելով իր կոշտացած ձեռքը.

— Քշի՛ր, Սերյո՛ժա, քանի որ վերելքում ես, չեմ արգելակի, միայն թե դու մեղանից մի՛ կտրվիր, Ե՛կ։

Գիշեր է։ Բաց դռնից լույսի մի շերտ է ընկած սանդուղքի վրա։ Փափուկ, թավշապատ դահավորակներով կահավորված մեծ սենյակում, փաստաբանի լայն սեղանի շուրջը հինգ հոգի են նստած։ Հեղկոմի նիստն է։ Դոլիննիկը, Իգնատևան, արտակարգ հանձնաժողովի (Չեկա) նախագահ Տիմոշենկոն, որը կուրանկա է հագել և նմանում է կիրգիզի, ու հեղկոմի երկու անդամները՝ երկաթուղային լոզոզ Շուդիկը և տափակ քթով Օստապչուկը՝ դեպոյից։

Սեղանի վրա թեքված և իր համառ հայացքն Իգնատևային հառած՝ Դոլիննիկը խուլոտած ձայնով վրա էր բերում բառը բառի հետևից.

— Ռազմաճակատին մատակարարել է պետք։ Բանվորներին կերակրել է պետք։ Հենց որ մենք եկանք, շարքիներն ու շուկայի սպեկուլյանտները գներն ուցրին։ Սովետական դրամանիշները չեն ընդունում։ Առևտուր են անում կամ հին նիկոլևյան փողով, կամ կերենկաներով։ Այսօր իսկ պետք է հաստատուն գներ սահմանել։ Մենք հիանալի հաս-

կանում ենք, որ սպեկուլյանտներից ոչ մեկն այդ հաստատուն գներով չի վաճառի։ Կթաքցնեն։ Այդ ժամանակ մենք խուզարկություններ կկատարենք և կբռնագրավենք այդ կաշի քերթողների ամբողջ ապրանքը։ Այստեղ անվճռական լինել չի կարելի։ Մենք չենք կարող թույլ տալ, որ սրանից հետո էլ բանվորները քաղցեն։ Ընկեր Իգնատևան նախազգուշացնում է, որ մենք փայտը շատ էլ չծռենք։ Այդ, ես կասեի, նրա մոտ ինտելիգենտական թուլամորթություն է։ Դու չվիրավորվես, Զո՛յա, ես ասում եմ այն, ինչ կա։ Ընդ որում, բանը մանր առևտրականները չեն։ Ա՛յ, ես այսօր տեղեկություն եմ ստացել, որ պանդոկապետ Բորիս Զոնի տանը գաղտնի ներքնատուն կա։ Այդ ներքնատանը, դեռ պետլյուրականներից էլ առաջ, խոշոր խանութպանները դարսել են ապրանքների վիթխարի պաշարներ։— Նա ազդու, թունավոր հեգնանքով նայեց Տիմոշենկոյին։

— Որտեղի՞ց ես իմացել,— շփոթված հարցրեց վերջինս։

Նա չարանում էր, որ բոլոր տեղեկությունները Դոլիննիկն իրենից առաջ էր ստանում այն ժամանակ, երբ այդ մասին առաջինը պիտի իմանար նա՝ Տիմոշենկոն։

— Հե-հե՛յ,— ծիծաղեց Դոլիննիկը։— Ես, ախպերս, ամեն ինչ տեսնում եմ։ Ոչ միայն ներքնատան մասին գիտեմ,— շարունակեց նա,— ես այն էլ գիտեմ, որ դու երեկ դիվհրամի վարարդի հետ միասին կես շիշ տնաքաշ օղի ես գոլորշիացրել։

Տիմոշենկոն անհանգիստ շարժվեց աթոռի վրա։ Նրա դեղնավուն դեմքի վրա կարմրություն երևաց։

— Ա՛յ թե փո՛ւշ ես,— հիացած ասաց նա։ Բայց, մի հայացք նետելով խոժոռված Իգնատևային՝ լռեց։ «Ա՛յ, սատանի ստաղձագործ։ Նա իր Զեկան ունի»,— մտածեց Տիմոշենկոն՝ նայելով հեղկոմի նախագահին։

— Իմացա Սերգեյ Բրուզժակից,— շարունակեց Դոլիննիկը։— Նա մի ընկեր ունի, թե ինչ, որը բուֆետում է աշխատել։ Սա խոհարարներից իմացել է, որ Զոնը առաջ սրանց անհրաժեշտ բոլոր բաները հայթայթել է անսահմանափակ քանակությամբ։ Իսկ երեկ Սերյոժան ճշգրիտ տեղեկություններ է հավաքել. նկուղը կա, միայն հարկավոր է այն գտնել։ Ա՛յ, դու, Տիմոշե՛նկո, վերցրու տղաներին, Սերյոժային։ Այնպես որ այսօր ամեն ինչ գտնվի։ Հաջողության դեպքում մենք կմատակարարենք բանվորներին և դիվիզիայի հրամանատարության մատակարարման բաժնին։

Կես ժամ հետո ութ զինված մարդ մտան պանդոկապետի տունը, երկու հոգի մնացին փողոցում, մուտքի մոտ։

Տանտերը, մի կարճահասակ, տասը դույլանոց տակառի նման կլոր մարդ, դեմքին շեկ մազերի ստև, փայտե ոտքը թիկթիկացնելով և ծծնելով ներս մտնողներին՝ խռպոտ կոկորդային բասով հարցրեց.

— Բանն ի՞նչ է, ընկերներ։ Ինչո՞ւ այսպիսի ուշ ժամի։

Խալաթները վրաները նետած, Տիմոշենկոյի էլեկտրական լապտերի լույսից աչքերը կկոցելով՝ Զոնի թիկունքում կանգնել էին նրա աղջիկները։ Իսկ հարևան սենյակում ախ ու վախ անելով հագնվում էր կինը։

Տիմոշենկոն երկու բառով բացատրեց։

— Խուզարկություն ենք կատարելու։

Հատակի յուրաքանչյուր թիզը զննեցին։ Ընդարձակ փայտանոցը, որը լցված էր սղոցած փայտով, մառանները, խոհանոցն ու ընդարձակածավալ նկուղը՝ բոլորը մանրակրկիտ հետազոտության ենթարկվեցին։ Սակայն գաղտնի նկուղի ոչ մի հետք չհայտնաբերվեց։

Խոհանոցի մոտի շատ փոքրիկ սենյակում խոր քնով քնած էր պանդոկապետի աղախինը։ Այնպես խորն էր քնած, որ չլսեց, թե ինչպես ներս մտան։ Սերյոժան զգուշորեն նրան արթնացրեց։

— Դու այստե՞ղ ես ծառայում,— հարցրեց նա քնաթաթախ աղջկան։

Վերմակն ուսերին քաշելով, լույսից ձեռքով ծածկելով աչքերը և ոչինչ չհասկանալով՝ աղջիկը զարմացած պատասխանեց.

— Ծառայում եմ։ Իսկ դուք ո՞վ եք։

Սերյոժան բացատրեց ու հեռացավ՝ առաջարկելով նրան հագնվել։

Ընդարձակ սեղանատունը Տիմոշենկոն հարցաքննում էր տանտիրոջը։ Պանդոկապետը փնչում էր, խոսում էր հուզված, թուքը շաղ տալով.

— Ի՞նչ եք ուզում։ Ես ուրիշ նկուղ չունեմ։ Դուք իզուր ժամանակ եք վատնում։ Հավատացնում եմ՝ իզուր։ Ես պանդոկ ունեի, բայց այժմ մի չքավոր մարդ եմ։ Պետլյուրականներն ինձ կողոպտեցին, քիչ մնաց սպանեին։ Ես շատ ուրախ եմ սովետական իշխանության համար, բայց ինչ որ ունեմ, ձեր աչքի առաջ է,— նա տարածում էր իր կարճ, հաստ ձեռքերը։ Իսկ արյունակալած հայացքը Չեկայի նախագահի դեմքից անցնում էր Սերյոժային, Սերյոժայից ինչ-որ անկյուն կամ առաստաղին։

Տիմոշենկոն ջղայնորեն շրթունքներն էր կրծոտում։

— Ուրեմն՝ շարունակում եք թաքցնե՞լ։ Վերջին անգամ եմ առաջարկում՝ ցույց տվեք նկուղի տեղը։

— Ա՜խ, ինչ եք ասում, ընկե՛ր զինվորական,— միջամտեց պանդոկապետի ամուսինը,— մենք ինքներս ենք ուզղակի քաղցում։ Մեզանից ամեն ինչ խլել են։— Նա ուզեց լաց լինել, բայց ոչինչ չստացվեց։

— Քաղցում եք, իսկ աղախին եք պահում,— վրա բերեց Սերյոժան։

— Ա՜խ, ինչ աղախին։ Պարզապես աղքատ մի աղջիկ է և մեզ մոտ է ապրում։ Ուրիշ տեղ չունի։ Թող ինքը՝ Խրիստինկան ձեզ ասի։

— Լա՛վ,— համբերությունը կորցրած բղավեց Տիմոշենկոն,— գործ ենք անցնում։

Դրսում արդեն լույսը բացվել էր, իսկ պանդոկապետի տանը խուզարկությունը դեռ համառորեն շարունակվում էր։ Ֆասներեքժամյա ապարդյուն որոնումների անհաջողությունից չարացած Տիմոշենկոն որոշել էր խուզարկությունը դադարեցնել, բայց աղախնի փոքրիկ սենյակում արդեն հեռանալու պատրաստվող Սերյոժան հանկարծ լսեց աղջկա ցածրաձայն փսփսոցը.

— Հավանորեն խոհանոցումն է, վառարանի մեջ։

Տասը րոպե հետո ռուսական տակնավրա արած վառարանի մեջ հայտնաբերվեց անցքի երկաթե խուփը։ Իսկ մի ժամ հետո տակառներով ու պարկերով բեռնավորված երկտոննանոց բեռնատար ավտոմոբիլն, պարապ ամբոխով շրջապատված, հեռանում էր պանդոկապետի տնից։

Տապ մի օր փոքրիկ կապոցով կայարանից եկավ Մարիա Յակովլևնան։ Լսելով Արտյոմի պատմածը Պավկայի մասին՝ դառնորեն լաց եղավ։ Նրա համար մոայլ օրեր ձգվեցին։ Ապրուստի միջոց չկար։ Եվ Մարիա Յակովլևնան սկսեց կարմիրբանակայինների սպիտակեղենը լվանալ, որի շնորհիվ վերջիններս նրա համար զինվորական օրապահիկ հաշողեցրին։

Մի անգամ երեկոյան դեմ Արտյոմը սովորականից ավելի արագ թխթխացրեց լուսամուտի տակ։ Եվ դուռը հրելով դեռ շեմքից նետեց.

— Պավկայից լուր կա։

«Թանկագին եղբայրս՝ Արտյոմ,— գրում էր Պավկան։— Հաղորդում եմ քեզ, սիրելի եղբայր, որ ես կենդանի եմ, թեև ոչ լրիվ առողջ։ Գնդակը դիպել է ազդրիս, բայց ես առողջանում եմ։ Բժիշկն ասում է, որ ոսկորը վնասված չէ։ Ինձ համար մի անհանգստանա, ամեն ինչ կանցնի։ Գուցե արձակուրդ ստանամ, այդ դեպքում հիվանդանոցից հետո կգամ։ Ես մայրիկի մոտ չընկա, այլ այնպես ստացվեց, որ այժմ ընկեր Կոտովսկու անվան, որը հավանորեն ձեզ հայտնի է իր հերոսության շնորհիվ, հեծյալ բրիգադի կարմիրբանակային եմ։ Այդպիսի մարդկանց ես դեռ չեմ տեսել և մեծ հարգանք ունեմ բրիգադի հրամանատարի նկատմամբ։ Եկե՞լ է, արդյոք, մեր մայրը։ Եթե տանն է, ապա՝ ջերմ ողջույն նրան իր կրտսեր որդուց։ Եվ ներումն եմ խնդրում անհանգստություն պատճառելու համար։ Քո եղբայր։

Արտյո՛մ, անցիր անտառապետի տուն և պատմիր նամակի մասին»։

Շատ արցունք թափեց Մարիա Յակովլևնան։ Իսկ փուչ որդին նույնիսկ հասցեն չէր գրել, թե որտեղ է պառկած։

Սերյոժան հաճախ էր այցելում կայարանում կանաչ, մարդատար վագոնը, որի վրա կար «Դիվքաղբաժնի ագիտպրոպ» մակագրությունը։ Այստեղ փոքրիկ մի կուպեում են աշխատում Ուստինովիչը ու Իգնատեան։ Վերջինս, անբաժան ծխախոտն ատամների արանքում, շրթունքների անկյունով խորամանկորեն ժպտում է։

Կոմերիտմիության շրջկոմի քարտուղարն աննկատելիո-

բեն մտերմացել էր Ուստինովիչի հետ և գրականության ու թերթերի հակերից բացի, կայարանից իր հետ տանում էր կարճատև հանդիպումից ստացած բերկրանքի անորոշ մի զգացում։

Դիվիզիայի քաղաքամնի բացօթյա թատրոնն ամեն օր լցվում էր բանվորներով ու կարմիրբանակայիններով։ Երկաթգծի վրա կանգնած էր 12-րդ բանակի վառ պլակատներով ծածկված ագիտգնացքը։ Ագիտգնացքն ամբողջ օրն ապրում էր եռուն կյանքով։ Տպարանն աշխատում էր, լույս էին տեսնում թերթեր, թռուցիկներ, կոչեր։ Ռազմաճակատը մոտիկ էր։ Մի երեկո Սերյոժան պատահմամբ թատրոն ընկավ։ Կարմիրբանակայինների մեջ տեսավ Ուստինովիչին։

Ուշ գիշերին նրան կայարան ուղեկցելով, ուր ապրում էին դիվքաղբաժնի աշխատակիցները, Սերյոժան իր համար էլ անսպասելի հարցրեց.

— Ընկեր Ռիտա, ինչո՞ւ եմ շարունակ ուզում քեզ տեսնել։— Եվ ավելացրեց.— Քեզ հետ այնքա՜ն լավ է։ Հանդիպումից հետո ավելի առույգ եմ լինում և անվերջ աշխատել եմ ուզում։

Ուստինովիչը կանգ առավ։

— Ահա թե ինչ, ընկեր Բրուզժա՛կ, եկ պայմանավորվենք, որ հետագայում այլևս լիրիկայի չես դիմի։ Ես այդ չեմ սիրում։

Սերյոժան նկատողություն ստացած աշակերտի պես կարմրեց։

— Ես քեզ, որպես բարեկամի, ասացի,— պատասխանեց նա,— իսկ դու ինձ... Ի՞նչ մի հակահեղափոխական բան ասացի որ։ Իհարկե, այլևս չեմ խոսի, ընկեր Ուստինովիչ։

Եվ արագորեն ձեռքը նրան մեկնելով՝ Սերյոժան համարյա վազելով դեպի քաղաք դիմեց։

Մի քանի օր իրար ետևից Սերյոժան կայարանում չէր երևում։ Երբ Իգնատևան նրան կանչում էր, նա, աշխատանքը պատրվակ բռնելով, հրաժարվում էր։ Իսկապես էլ նա շատ էր զբաղված։

Մի անգամ գիշերը կրակեցին Շուդիկի վրա, որը տուն էր վերադառնում այն փողոցով, ուր ապրում էին գերազանցապես շաքարի գործարանի բարձրաստիճան ծառայողները։

լեհեր։ Այդ կապակցությամբ խուզարկություններ կատարվեցին։ Պիլսուդչիկների «Ստրելեց» կազմակերպության փաստաթղթեր ու զենք գտան։

Հեղկոմ խորհրդակցության եկավ Ուստինովիչը։ Մի կողմ տանելով Սերյոժային՝ նա հանգիստ հարցրեց.

— Ի՞նչ է, քաղքենիական ինքնասիրության ե՞ս անձնատուր եղել։ Անձնական խոսակցությունն աշխատանքի ասպարեզն ես փոխադրում։ Դա, ընկե՛ր, բանի նման չէ։

Եվ նորից Սերյոժան առիթ լինելիս սկսեց այցելել կանաչ վագոնը։

Եղավ գավառական կոնֆերանսում։ Երկու օր տաք վեճերի մեջ էր։ Երկրորդ օրն ամբողջ պլենումի հետ զինվեց և մի քանի օր անընդհատ գետափնյա անտառներում հետապնդում էին պետլյուրական՝ դեռ մինչև վերջ չջախջախված ավազակ Զարուդնու ավազակախմբին։ Վերադարձավ, Իգնատեվայի մոտ հանդիպեց Ուստինովիչին։ Ուղեկցելով նրան կայարան և հրաժեշտ տալով՝ ամուր-ամուր սեղմեց նրա ձեռքը։

Ուստինովիչը բարկացած քաշեց ձեռքը։ Եվ նորից երկաթ ժամանակ չէր այցելում ագիտպրոպի վագոնը։ Դիտմամբ չէր հանդիպում Ռիտային նույնիսկ այն ժամանակ, երբ պետք էր։ Իսկ երբ նա համառորեն պահանջեց բացատրել իր վարմունքը, Սերյոժան կտրուկ պատասխանեց.

— Ի՞նչ խոսեմ քեզ հետ։ Էլի ինչ-որ քաղքենիություն կամ բանվոր դասակարգին դավաճանություն կկպցնես ինձ։

Կայարան ժամանեցին Կովկասյան Կարմրադրոշ դիվիզիայի էշելոնները։ Հեղկոմ եկան երեք թիատեմ հրամանատարներ։ Բարձրահասակ, նիհար, նախշուն գոտի կապածը հարձակվեց Դոլինինիկի վրա.

— Ինձ ոչինչ չասես։ Հարյուր սայլ խոտ տուր։ Ձիերը սատկում են։

Սերյոժան երկու կարմիրբանակայինների հետ միասին ուղարկվեց խոտ գտնելու։ Մի գյուղում հանդիպեցին կուլակային ավազակախմբի։ Կարմիրբանակայիններին զինաթափարին և կիսամեռ անելու աստիճան ծեծեցին։ Սերյոժային գյուղացիներից ավելի քիչ բաժին ընկավ. նրա երիտասարդու-

թյանը խնայեցին։ Նրանց քաղաք բերին չքավորական կոմիտեի անդամները։

Զոկատ ուղարկվեց այդ գյուղը։ Հաջորդ օրը խոտը ճարվեց։

Սերյոժան պառկել էր Իգնատևայի սենյակում, չէր ցանկանում անհանգստացնել իրենց ընտանիքը։ Եկավ Ուստինովիչը։ Այդ երեկո նա առաջին անգամ զգաց աղջկա ձեռքի քնքուշ ու ամուր սեղմումը, ինչպես նա ինքը երբեք չէր համարձակվի սեղմել։

Շոգ կեսօրին ներս վազելով վագոն՝ Սերյոժան Ռիտային կարդաց Կորչագինի նամակը, պատմեց ընկերոջ մասին։ Գնալիս նետեց.

— Գնամ անտառ, լողանամ լճում։

Ուստինովիչն աշխատանքն ընդհատելով, ետ պահեց նրան.

— Սպասի՛ր։ Միասին կգնանք։

Հանդարտ, հայելանման լճի մոտ կանգ առան։ Տաք, հրատակ ջրի թարմությունը հրապուրում էր։

— Գնա դեպի ճանապարհի ելքը և սպասիր։ Ես պիտի լողանամ,— կարգադրեց Ուստինովիչը։

Սերյոժան նստեց կամրջակի մոտի քարի վրա և դեմքը տվեց արևին։

Ետևում ճողփում էր ջուրը։

Ծառերի արանքից նա ճանապարհին տեսավ Տոնյա Տումանովային և ագիտացնացքի զինկոմ Զուժանինին։ Գեղեցիկ, պճնագեղ ֆրենչով, որի վրայից կապել էր բազմաթիվ փոկերով սրակալը, խրոմե ճոճռան կոշիկներով՝ նա քայլում էր Տոնյայի հետ թևանցուկ և ինչ-որ բան էր պատմում։

Սերյոժան ճանաչեց Տոնյային։ Նա իր հետ բերել էր Պավլուշայի նամակը։ Աղջիկը ևս ուշադիր նայեց Սերյոժային, ըստ երևույթին ճանաչեց։ Երբ նրանք հավասարվեցին Սերյոժային, նա գրպանից հանեց նամակը և կանգնեցրեց Տոնյային։

— Մի րոպե, ընկե՛ր։ Ես նամակ եմ ստացել, որը մասամբ վերաբերում է նաև ձեզ։

Նա աղջկան մեկնեց գրոտված թերթիկը։ Ձեռքն ազատելով, Տոնյան սկսեց կարդալ նամակը։ Թերթիկը հաղիվ նկատելի ցնցվում էր նրա ձեռքում։ Այն Սերյոժային հանձնելով՝ Տոնյան հարցրեց.

— Նրա մասին ուրիշ ոչինչ չգիտե՞ք։

— Ո՛չ,— պատասխանեց Սերգեյը։

Ետևում, Ուստինովիչի ոտքերի տակ ճոճռաց խճաքարը։ Զուժանինը նկատեց Ռիտային և դիմելով Տոնյային, շշնջաց.

— Գնանք։

Ուստինովիչի հեգնական, արհամարհական ձայնն ընդհատեց նրան.

— Ընկե՛ր Զուժանին։ Գնացքում ձեզ ամբողջ օրը որոնում են։

Զուժանինն անբարյացակամ հայացքով թեք նայեց նրան.

— Ոչինչ։ Առանց ինձ էլ յոլա կգնան։

Նայելով Տոնյայի ու զինկոմի ետևից՝ Ուստինովիչն ասաց.

— Ե՞րբ պիտի վոնդեն այս սրիկային։

Անտառն աղմկում էր՝ խոնարհելով կաղնիների հզոր գլուխները։ Լիճը հրապուրում էր իր թարմությամբ։ Սերյոժային ձգում էր լողանալու ցանկությունը։

Լողանալուց հետո նա Ուստինովիչին գտավ բացատից ոչ հեռու մի տապալված կաղնու վրա նստած։

Խոսելով գնացին դեպի անտառի խորքը։ Բարձր, թարմ խոտով ծածկված մի փոքրիկ բացատում որոշեցին հանգըստանալ։ Անտառում խաղաղ էր։ Կաղնիներն էին փսփսում ինչ-որ բանի մասին։ Ուստինովիչը պառկեց փափուկ խոտի վրա և թեք դրեց գլխի տակ։ Հին, կարկատած կոշիկներ հագած նրա բարեկազմ ոտները թաքնվեցին բարձե խոտի մեջ։ Սերյոժան պատահական մի հայացք նետեց նրա ոտներին, տեսավ նրա կոշիկների կանոնավոր կարկատանները, նայեց իր կոշիկի ահագին պատռվածքին, որից դուրս էր ցցվել ոտքի մատը, և ծիծաղեց։

— Ի՞նչ ես ծիծաղում։

— Այսպիսի կոշիկներով ինչպե՞ս պիտի կռվենք։

Սերյոժան ցույց տվեց իր կոշիկը։

Ռիտան չպատասխանեց։ Խոտի ցողունը կծոտելով, նա մտածում էր մի այլ բանի մասին։

— Զուժանինը վատ կոմունիստ է,— վերջապես ասաց

նա։— Մեր բոլոր քաղաշխատողները ցնցոտիներով են շրջում, իսկ նա միայն իր մասին է հոգում։ Պատահական մարդ է նա մեր կուսակցության մեջ... Իսկ ա՛յ, ռազմաճակատում իսկապես որ դրությունը լուրջ է։ Մեր երկիրը դեռ երկար պիտի դիմանա դաժան կռիվների։— Մի քիչ լռելուց հետո ավելացրեց։— Մենք, Սերգեյ, պիտի գործենք և՛ խոսքով, և՛ հրացանով։ Գիտե՞ս Կենտկոմի որոշման մասին՝ կոմերիտմիության կազմի քառորդ մասը մոբիլիզացնել և ճակատ ուղարկել։ Ես այնպես եմ կարծում, Սերգեյ, որ մենք այստեղ երկար չենք դիմանա։

Սերյոժան լսում էր նրան և զարմանքով նրա ձայնի մեջ ինչ-որ անսովոր երանգներ էր որսում։ Նա իր սև, խոնավ, փայլ արձակող աչքերը հառել էր տղային։

Սերյոժան քիչ մնաց, որ մոռանար իրեն և ասեր թե նրա աչքերը հայելու նման են, այնտեղ ամեն ինչ երևում է, բայց ժամանակին զսպեց իրեն։

Սերգեյը վշտացած տեսքով իր գոտին շոշափեց։

— Որտե՞ղ է ատրճանակդ։

Ռիտան բարձրացավ ու հենվեց արմունկներին։

— Գյուղում կուլակային ավազակախումբը խլեց։

Ռիտան ձեռքը խոթեց գիմնաստյորկայի գրպանը և հանեց փայլուն բրաունինգը։

— Տեսնում ես այն կաղնին, Սերգե՛յ,— ատրճանակի փողով ցույց տվեց նա ամբողջովին ակոսներով փորփրված բունը, որը նրանցից մի քսանհինգ քայլի վրա էր գտնվում։ Եվ ձեռքն աչքի ուղղությամբ մեկնելով, համարյա առանց նշան բռնելու, կրակեց։ Պոկոտված կեղևը ցրիվ եկավ։

— Տեսնո՞ւմ ես,— բավարարված ասաց նա և նորից կրակեց։

Նորից կեղևը շրշալով թափվեց խոտի վրա։

— Ա՛ռ,— ատրճանակը նրան տալով, հեգնանքով ասաց Ռիտան,— տեսնենք դո՞ւ ինչպես ես կրակում։

Սերյոժայի մոտ երեք կրակոցից մեկը վրիպեց։ Ռիտան ժպտաց։

— Ես կարծում էի, որ ավելի վատ կկրակես։

Ատրճանակը գետնին դրեց և պառկեց խոտին։ Գիմնազիստյորկայի գործվածքի տակից գծագրվում էր նրա պիրկ կուրծքը։

— Սերգե՛յ, ե՛կ այստեղ,— ասաց նա կամացուկ։

Սերգեյը մոտեցավ նրան։

— Տեսնո՞ւմ ես երկինքը։ Ինչ լուրթ է։ Իսկ չէ՞ որ քո աչքերն էլ այդ գույնի են։ Դա լավ չէ։ Քո աչքերը պիտի լինեն գորշ, պողպատափայլ։ Լուրթը ինչ-որ շատ քնքուշ է։

Եվ հանկարծ, գրկելով նրա շիկահեր գլուխը՝ տիրաբար համբուրեց նրա շուրթերը։

Անցավ երկու ամիս։ Վրա հասավ աշունը։

Գիշերն իջավ աննկատելիորեն՝ սև քողով պարուրելով ծառերը։ Դիվիզիայի շտաբի հեռագրիչը կռացած սպարատի վրա, որը կարկտի պես «մորզե» էր թափում, ընդունում էր ժապավենը, որը նեղլիկ դալարներով դուրս էր սողում նրա մատների տակից։ Հեռագրիչը բլանկի վրա արտագրում էր նախադասությունները, որ նա կազմում էր կետերից ու գծերից։

«Առաջին դիվիզիայի շտաբի պետին, պատճենը՝ Շեպետովկա քաղաքի հեղկոմի նախագահին։ Հրամայում եմ այս հեռագիրն ստանալուց տասը ժամ հետո քաղաքի բոլոր հիմնարկություններն էվակուացնել։ Քաղաքում թողնել մի գումարտակ, որը պետք է ենթարկվի ռազմական տեղամասի հրամանատար № գնդի պետի տնօրինությանը։ Դիվիզիայի շտաբին, դիվիզիայի քաղաքաժնին, բոլոր ռազմական հիմնարկություններին՝ քաշվել Բարանչև կայարանը։ Կատարման մասին հաղորդել դիվիզիայի պետին։ Ստորագրություն»։

Տասը րոպե հետո քաղաքի լռիկ փողոցներով, ացետիլենի լապտերի աչքը փայլեցնելով, սլանում էր մի մոտոցիկլետ։

Մոտոցիկլետը փնչալով կանգ առավ հեղկոմի դռան պառաջ։ Մոտոցիկլիստը հեռագիրը հանձնեց հեղկոմի նախագահ Դոլիննիկին։ Եվ մարդիկ վազվզել սկսեցին։ Հատուկ վաշտը շարք կանգնեց։ Մի ժամ հետո քաղաքի փողոցներով թրխկ-թրխկոցով գնում էին հեղկոմի գույքով բարձված սայլերը։ Պոդոլսկի կայարանում այդ գույքը բարձում էին վագոնները։

Լսելով հեռագիրը՝ Սերյոժան մոտոցիկլիստի ետևից դուրս վազեց։

— Ընկե՛ր, կարելի՞ է ձեզ հետ կայարան գնալ,— հարցրեց նա մոտոցիկլիստին։

— Նստիր ետևը, միայն պինդ բռնիր։

Արդեն գնացքին կցած վագոնից տասը քայլ հեռավորության վրա Սերյոժան գրկեց Ռիտայի ուսերը և զգալով, որ մի թանկ, անգին բան է կորցնում, շշնջաց.

— Գնաս բարով, Ռիտա, իմ թանկագին ընկեր։ Մենք դեռ կհանդիպենք, միայն թե դու ինձ մի մոռացիր։

Նա սարսափով զգաց, որ հիմա կհեկեկա։ Պետք էր հեռանալ։ Այլևս խոսելու ուժ չունենալով, միայն ցավեցնելու չափ սեղմում էր աղջկա ձեռքերը։

Առավոտյան քաղաքն ու կայարանն արդեն ամայի ու որբացած տեսք ունեին։ Կարծես հրաժեշտ տալով շաչեցին վերջին գնացքի շոգեքարշերը, և կայարանից այն կողմ, գծի երկու կողմերին պառկեց քաղաքում թողնված զումարտակի պաշտպանողական շղթան։

Դեղնած տերևները թափվում էին և մերկացնում ծառերը։ Քամին թոցնում էր թափված տերևները և կամացուկ գլորում ճանապարհով։

Սերյոժան՝ կարմիրբանակայինի շինել հագած, ամբողջովին փաթաթված կտավե փամփշտակալներով՝ մի տասնյակ կարմիրբանակայինների հետ գրավել էր շաքարի գործարանի մոտի խաչմերուկը։ Սպասում էին լեհերին։

Ավտոնոմ Պետրովիչը թակեց իր հարևան Գերասիմ Լեոնտևիչի դուռը։ Վերջինս դեռ չհագնված դուրս նայեց բաց դռնից։

— Ի՞նչ է պատահել։

Մատնացույց անելով հրացանները հորիզոնական դիրքով բռնած քայլող կարմիրբանակայիններին՝ Ավտոնոմ Պետրովիչն աչքով արեց իր բարեկամին.

— Հեռանում են։

Գերասիմ Լեոնտևիչը մտահոգ նայեց նրան.

— Դուք չգիտե՞ք, արդյոք, թե լեհերի զինանիշը որն է։

— Կարծեմ միգլխանի արծիվ։

— Որտեղի՞ց գտնենք։

Ավտոնոմ Պետրովիչը չարացած ծոծրակը քորեց։

— Նրանց համար ինչ,— ասաց նա մի քիչ մտածելուց հետո,— վեր կացան ու գնացին։ Իսկ դու էստեղ գլուխ ջարդիր, թե ինչպես հարմարվես նոր իշխանությանը։

Լռությունը վրդովելով, տկտկաց գնդացիրը։ Կայարանի մոտ անսպասելի սուլեց մի շոգեքարշ, և այնտեղից ծանր մի հարվածով թնդաց հրանոթը։ Ոռնալով, տնքալով բարձր, երկինք սլացավ ծանր արկը։ Ընկավ գործարանի ետևը, ճանապարհի վրա, և թխակապույտ ծխով պարուրեց ճանապարհամերձ թփերը։ Փողոցով, ստեպ-ստեպ շուրջը նայելով, լուռ ետ էին քաշվում կարմիրբանակայինների մռայլ շղթաները։

Սերյոժայի այտի վրայով գլորվեց սառած արցունքի կաթիլը։ Նա շտապով սրբեց արցունքի հետքը, նայեց ընկերներին։ Ո՛չ, ոչ ոք չտեսավ։

Սերյոժկայի կողքից քայլում է սղոցարանի, բանվոր, բարձրահասակ, նիհար Անտեկ Կլոպոտովսկին։ Նա մատը դրել էր հրացանի ձգանին։ Անտեկը մռայլ էր, մտահոգ։ Նրա հայացքը հանդիպեց Սերյոժայի հայացքին, և Անտեկը մատնեց իր թաքուն մտքերը...

— Կհալածեն մերոնց, մանավանդ իմոնց։ «Լեհ է,— կասեն,— բայց լեհական լեգեոնների դեմ է դուրս եկել»։ Ծերուկին կվտարեն սղոցարանից և մտրակի հարվածներ կհասցրնեն նրան։ Ասում էի ծերուկին, որ գա մեզ հետ, բայց հայրս ընտանիքը թողնելու ուժ չունեցավ։ Է՜խ, նզովյալնե՛ր, գոնե շուտ բախվեինք նրանց հետ։— Եվ Անտեկը նյարդայնորեն ուղղեց աչքին իջած կարմիրբանակայինի սաղավարտը։

... Մնաս բարով, աննշան, կեղտոտ, տգեղ տնակներով, ծուռումուռ խճուղով հայրենի քաղաքի՛կ։ Մնաք բարով, հարազատնե՛ր, մնաս բարով, Վա՜լյա, մնաք բարով, ընդհատակ անցած ընկերնե՛ր։ Վրա են հասնում օտար, չարացած, խնայել չիմացող սպիտակ լեհերի լեգեոնները։

Տրտում հայացքով են ուղեկցում կարմիրբանակայիններին դեպոյի մազութոտ վերնաշապիկներով բանվորները։

— Մենք դեռ կգանք, ընկերնե՛ր,— հուզված գոչեց Սերյոժան։

ՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Աղջամուղջի մշուշում աղոտ փայլ է արձակում գետը, խոխոջում՝ մերձափնյա լերկ քարերին դիպչելով։ Ափերից դեպի մեջտեղը գետը հանդարտ է, նրա մակերևույթը թվում է անշարժ, իսկ գույնը՝ գորշ, փայլուն։ Մեջտեղում նա մուգ է, անհանգիստ, երևում է, որ շարժվում է, շտապում դեպի ներքև։ Գետը գեղեցիկ է, վեհապանծ։ Այդ նրա մասին է Գոգոլը գրել իր անզուգական «Հրաշալի է Դնեպրը...» Զառիթափ քարափով դեպի ջուրն է իջնում բարձր աջ ափը։ Նա լեռան պես շարժվել է դեպի Դնեպրը, ասես իր շարժման մեջ կանգ է առել գետի լայնության առաջ։ Ձախ ափը ներքևում ամբողջովին ավազե շերտով է ծածկված։ Դնեպրն այդ ավազի շերտերը թողնում է գարնանային հեղեղումներից հետո, երբ վերադառնում է իր ափերի մեջ։

Գետի մոտ նեղ մի դիրքում խրամատավորվել են հինգ հոգի։ Համերաշխ պառկած են բութ մոութով «մաքսիմկայի» մոտ։ Դա 7-րդ հրաձգային դիվիզիայի առաջապահ «գաղտնաջոկատն» է։ Գնդացրի մոտ, դեմքը դեպի գետը դարձրած՝ կողքի վրա պառկել է Սերյոժա Բրուզժակը։

Երեկ, անվերջ ընդհարումներից ուժասպառ, լեհերի հրետանու մրրկային կրակով ցաքուցրիվ եղած՝ հանձնեցին Կիևը։ Անցան ձախ ափը, ամրացան։

Բայց նահանջը, մեծ կորուստները և, վերջապես, Կիևը հակառակորդին տալը ծանր էին ազդել մարտիկների վրա։ 7-րդ դիվիզիան հերոսաբար դուրս էր եկել շրջապատումից, անցել էր անտառներով և Մալին կայարանի մոտ դուրս գալով դեպի երկաթգիծը՝ կատաղի մի հարվածով հողմացրիվ էր արել կայարանը գրաված լեհական զորամասերին, շրջրտել էր նրանց դեպի անտառը և ազատել Կիև տանող ճանապարհը։

Այժմ, երբ քաղաք-գեղեցկուհին թողել էին, կարմիրբանակայինները մռայլ էին։

Լեհերը մի փոքրիկ պլացդարմ էին գրավել ձախ ափին, երկաթուղային կամրջի մոտ և կարմիր զորամասերին դուրս քշել Դառնիցայից։

Բայց, չնայած բոլոր ջանքերին, առաջ շարժվել չկարողացան, հանդիպեցին կատաղի հակահարձակումների։

Նայում է Սերյոժան, թե ինչպես է հոսում գետը և չի կարողանում չմտածել անցած օրվա մասին։

Երեկ կեսօրին, ընդհանուր կատաղությամբ համակված, հակագրոհով դիմավորեց սպիտակ լեհերին։ Երեկ էլ հենց առաջին անգամ դեմառդեմ ընդհարվեց մի անբեղ լեգեոնների հետ։ Նա թռչում էր դեպի ինքը՝ թրի պես երկար ֆրանսիական սվին ունեցող հրացանն առաջ մեկնած, վազում էր նապաստակի ոստյուններով՝ ինչ-որ անկապ բան բղավելով։ Մի ակնթարթ Սերգեյը տեսավ նրա կատաղությունից լայնացած աչքերը։ Եվ մի ակնթարթ, և Սերգեյն իր սվինի ծայրով հարվածեց լեհացու սվինին։ Եվ ֆրանսիական փայլուն շեղբը մի կողմ շպրտվեց։

Լեհն ընկավ...

Սերգեյի ձեռքը չցնցվեց։ Նա գիտե, որ դեռ էլի կսպանի, նա, Սերգեյը, որը գիտե այնպես քնքշորեն սիրել, այնպես լավ ընկերություն անել։ Նա չար, դաժան տղա չէ, բայց գիտե, որ գաղանային ատելությամբ հարազատ հանրապետության վրա են շարժվել համաշխարհային պարազիտների կողմից ուղարկված այդ խաբված և չարակամորեն գրգռված զինվորները։

Եվ նա, Սերգեյը, սպանում է, որպեսզի մոտեցնի այն օրը, երբ երկրի վրա այլևս իրար չեն սպանի։

Պարամոնովը շարժում է նրա ուսը.

— Պիտի ետ քաշվենք, Սերգե՛յ, շուտով մեզ կնկատեն։

Արդեն մի տարի է, ինչ Պավել Կորչագինը չափչփում է հայրենի երկիրը՝ գորշ, ականջը կտրած ձի լծած հրետասայլի վրա, նրա առաջամասում նստած։ Առնականացել, ամրացել է նա։ Աճել է տառապանքների ու ձախորդությունների մեջ։

Արդեն բուժվել էր ծանր փամփշտակալներից արյունոտվելու աստիճանի հարված մաշկը, և այլևս չէր անհետանում հրացանի փոկից առաջացած կոշտուկների սպին։

Շատ սարսափելի բաներ է տեսել Պավելն այդ մի տարվա ընթացքում։ Իր նման գջլտված ու կիսամերկ, բայց իր

գասակարգի իշխանության համար պայքարի անմար բոցով համակված հազարավոր այլ մարտիկների հետ միասին նա ոտքով ետ ու առաջ է քայլել իր հայրենիքում և միայն երկու անգամ է կտրվել այդ մրրիկից։

Առաջին անգամ ազդրից վիրավորվելու պատճառով, երկրորդ անգամ՝ քսան թվի սառնամանիքային փետրվարին, երբ կպչուն, տապ տիֆը գալարում էր նրան անկողնում։

Լեհական գնդացիրներից ավելի սարսափելի կերպով ոլորտ տիֆն էր հնձում 12-րդ բանակի գնդերի ու դիվիզիաների շարքերը։ Բանակը ձգված էր հսկայական տարածության վրա, համարյա ամբողջ հյուսիսային Ուկրաինայի վրայով, արգելակելով լեհերի հետագա առաջշարժումը։ Հազիվ կազդուրված Պավելը վերադարձավ իր զորամասը։

Այժմ գունդը դիրք էր գրավում Ֆրոնտովկա կայարանի մոտ, Կազատինից դեպի Ուման գնացող գծի վրա։

Կայարանն անտառի մեջ է։ Կայարանային փոքրիկ մի շենք, որի շուրջը պատապարվել են կիսավեր, բնակիչներից լքված տնակներ։ Այս տեղերում ապրելն անհնարին է դարձել։ Երկրորդ տարին է, ինչ մեկ հանդարտվում, մեկ նորից բորբոքվում են կռիվները։ Ում ասես չի տեսել Ֆրոնտովկան այդ ժամանակամիջոցում։

Նորից մեծ իրադարձություններ են հասունանում։ Այն ժամանակ, երբ սաստիկ նոսրացած շարքերով, մասամբ կազմալուծված 12-րդ բանակը լեհական բանակների ճնշման տակ դեպի Կիև էր նահանջում, պրոլետարական հանրապետությունը հաղթական առաջընթացից արբած, սպիտակ լեհերի համար կործանիչ հարված էր պատրաստում։

Հեռավոր Հյուսիսային Կովկասից, պատերազմների պատմության մեջ իր օրինակը չունեցող արշավանքով, Ուկրաինա էին նետվում մարտերում կոփված 1-ին հեծյալ բանակի դիվիզիաները։ Չորրորդ, վեցերորդ, տասնմեկերորդ և տասնչորսերորդ հեծյալ դիվիզիաները մեկը մյուսի ետևից մոտենում էին Ումանի շրջանին, խմբվում մեր ռազմաճակատի թիկունքում և վճռական մարտերի ճանապարհին իրենց ճամփից մաքրում էին մախնոյական բանդաներին։

Տասնվեց ու կես հազար սուր, բարկ տափաստանում խանձված տասնվեց ու կես հազար մարտիկներ։

Բարձրագույն կարմիր հրամանատարության և հարավարևմտյան ռազմաճակատի հրամանատարության ամբողջ ուշադրությունը կենտրոնացված էր այն բանի վրա, որ նախապատրաստվող այդ վճռական հարվածը պիլսուդչիկները չկանխեն։ Հանրապետության ու ռազմաճակատների շտաբը խնամքով պահպանում էր այդ հեծյալ մասսայի խմբավորումը։

Ումանի հատվածում ակտիվ գործողությունները դադարեցին։ Անընդհատ տեղեկացնում էին ուղիղ հեռագրալարերը Մոսկվայից ռազմաճակատի շտաբին՝ Խարկով, այստեղից 14-րդ և 12-րդ բանակների շտաբներին։ Հեռագրաժապավենների նեղ շերտերի վրա «մորզեի» ապարատները թիկթիկացնում էին ծածկագիր հրամանները. «Թույլ չտալ, որ լեհերի ուշադրությունը հրավիրվի հեծյալ բանակի խմբավորման վրա»։ Եթե ակտիվ կռիվներ առաջանում էին, ապա միայն այնտեղ, ուր լեհերի առաջացումը սպառնում էր մարտի մեջ քաշել բուդյոնովյան հեծյալ դիվիզիաներին։

Շեկ ծվեններով տարուբերվում է խարույկը։ Գորշ օղակներով պարուրաձև դեպի վեր է ձգվում ծուխը։ Մլակները ծուխ չեն սիրում, անհանգիստ, արագասլաց, դեսուդեն են նետվում շարժուն պարսերով։ Մի քիչ հեռու, կրակի շուրջը հովհարաձև ձգվել են մարտիկները։ Խարույկը պղնձի գույնով է ներկել նրանց դեմքերը։

Խարույկի մոտ, բաց կապտավուն մոխրի մեջ տաքանում են նրանց կաթսայիկները։

Կաթսայիկների մեջ ջուրը պղպջակներ է արձակում։ Վառվող գերանի տակից գողունի դուրս սողաց բոցի լեզվակը և իր ծայրով լիզեց ինչ-որ մեկի գանգրահեր գլուխը։ Գլուխը ետ քաշվեց, դժգոհ փնթփնթաց.

— Թու, սատանա։

Շուրջը ծիծաղեցին։

Մահուդե գիմնաստյորկայով, խուզած բեղերով մի տաբեքոտ կարմիրբանակային, որ հենց նոր կրակի լույսով զննում էր հրացանի փողը, թավ ձայնով ասաց.

— Ա՛յ, տղան գիտության ետևից է ընկել և կրակը չի զգում։

— Կորչագի՛ն, պատմիր, թե ի՞նչ կարդացիր այդտեղ։

Երիտասարդ կարմիրբանակայինը, շոշափելով խանձված մազերի փունջը, ժպտաց։

— Իսկապես որ գիրքը լավն է, ընկեր Անդրոշչո՛ւկ։ Հենց որ սկսեցի, էլ ոչ մի կերպ պոկվել չեմ կարողանում։

Կորչագինի հարևանը, մի կճատ պատանի, ջանասիրաբար կարելով պայուսակի փոկը, ատամներով կտրելով խամ թելը՝ հետաքրքրությամբ հարցրեց.

— Իսկ ո՞ւմ մասին է գրած։— Եվ սաղավարտի մեջ խրած ասեղի վրա փաթաթելով թելի կտորը՝ ավելացրեց.— Շատ եմ հետաքրքրվում, եթե սիրո մասին է։

Շուրջը հռհռացին։ Մատվեյչուկը բարձրացրեց իր կարմ խուզած մազերով գլուխը և իր մի քիչ խորամանկ աչքերը նենգորեն կկոցելով՝ դարձավ դեպի պատանին.

— Ինչ կա որ, սերը լավ բան է, Սերե՛դա։ Դու գեղեցիկ տղա ես, ոնց որ պատկեր։ Ուր որ գնում ենք, աղջիկները վազ են տալիս քո ետևից։ Միայն մի փոքրիկ պակասություն ունես, քիթդ է տափակ։ Դե դա էլ կարելի է ուղղել։ Քթիդ ծայրից որ Նովիցկու տասը ֆունտանոցը[1] քարշ տանք, մի գիշերվա մեջ քիթդ ցած կքաշի։

Սիծաղի ձայնից գնդացրային սայլակներին կապած ձիերը վախեցած փնչացրին։

Սերեդան ծուլորեն շրջվեց։

— Բանը գեղեցկությունը չէ, այլ խելքը,— արտահայտիչ ձևով թիկթիկացրեց նա իր ճակատը։— Ա՛յ, լեզուդ ոնց որ եղինջ, իսկ ինքդ դմբոների դմբոն ես, և ականջներդ էլ անզգա են։

Կպչելու պատրաստ ընկերներին բաժանեց ջոկապետ Տատարինովը։

— Դե՛, դե՛, տղերք, ի՞նչ եք իրար կծոտում։ Ավելի լավ է, թող Կորչագինը կարդա, եթե լավ բան է։

— Վրա տուր, Պավլո՛ւշա, վրա տուր,— լսվեց բոլոր կողմերից։

Կորչագինը թամբը մոտեցրեց կրակին, նստեց նրա վրա և ծնկների վրա դրեց փոքրիկ, բայց հաստ մի գիրք։

[1] Նովիցկու ձեռքի նռնակը, մոտ 4 կիլոգրամ քաշ ուներ, որով լարափակոցներ էին պայթեցնում։

— Այս գիրքն, ընկերներ, կոչվում է «Բոռ»։ Ձեռք եմ բերել գումարտակի զինկոմից։ Ինձ վրա շատ է ազդում այս գիրքը։ Եթե սուս նստեք, կկարդամ։

— Վրա տուր։ Խոսելս որն է։ Ոչ ոք չի խանգարի։

Երբ աննկատելիորեն խարույկին մոտեցավ գնդի հրամանատար ընկեր Պուզիրևսկին՝ իր կոմիսարի հետ, տեսավ տասնմեկ զույգ աչք, որ անթարթ նայում էին կարդացողին։

Պուզիրևսկին գլուխը շրջեց դեպի կոմիսարը և ձեռքով ցույց տվեց խումբը։

— Ահա գնդի հետախույզների կեսը։ Ես այնտեղ չորս հոգի ունեմ, բոլորովին խակ կոմերիտականներ, բայց ամեն մեկը մի լավ մարտիկ արժե։ Ա՛յ նա, որ կարդում է, խակ ահա և այն մյուսը, տեսնո՞ւմ ես։ Աչքերը ոնց որ գայլի ձագի աչքեր։ Դրանք Կորչագինն ու Ժարկին են։ Նրանք բարեկամներ են։ Սակայն նրանց մեջ գաղտնի խանդը չի մարում։ Առաջ Կորչագինն իմ առաջին հետախույզն էր։ Հետո նա շատ վտանգավոր մրցակից ունի։ Ա՛յ հիմա, տե՛ս, աննկատելիորեն են քաղաքխատանք կատարում, բայց ազդեցությունը շատ մեծ է։ Նրանց համար լավ խոսք են հնարել՝ «երիտասարդ գվարդիա»։

— Դա հետախույզների քաղքե՞կն է կարդում,— հարցրեց կոմիսարը։

— Ո՛չ, քաղքեկը Կրամերն է։

Պուզիրևսկին ձին առաջ շարժեց։

— Բարև ձեզ, ընկերնե՛ր,— գոչեց նա բարձր ձայնով։

Բոլորը շրջվեցին։ Թամբի վրայից թեթևորեն վայր ցատկելով՝ հրամանատարը մոտեցավ նստածներին։

— Տաքանո՞ւմ եք, բարեկամնե՛րս,— հարցրեց նա լայնորեն ժպտալով, և նրա քիչ մոնղոլական, նեղ աչքերով առնական դեմքը կորցրեց իր խստությունը։

Հրամանատարին դիմավորեցին սիրալիր, բարեկամաբար, ինչպես լավ ընկերոջ։ Զինկոմը մնաց ձիու վրա, պատրաստվելով շարունակել ճանապարհը։

Պուզիրևսկին, ետ նետելով մաուզերն իր պատյանով, նստեց Կորչագինի կողքին, թամբի վրա և առաջարկեց.

— Ծխենք, հը։ Ես լավ ծխախոտ եմ գտել։

Ծխախոտը վառելով նա դարձավ կոմիսարին։

— Դու գնա, Դորոնին, ես կմնամ այստեղ։ Եթե շտաբում հարկավոր կլինեմ, իմաց տվեք։

Երբ Դորոնինը գնաց, Պուզիրևսկին դիմելով Կորշագինին, առաջարկեց.

— Շարունակիր կարդալ. ես էլ կլսեմ։

Վերջին էջերը կարդալով՝ Պավելը գիրքը դրեց ծնկներին և մտածկոտ նայեց բոցին։

Մի քանի րոպե ոչ ոք ոչ մի բառ չարտասանեց։ Բոլորը Բոռի կրծանման տպավորության տակ էին գտնվում։

Պուզիրևսկին ծխախոտից ծուխ արձակելով, կարծիքների փոխանակման էր սպասում։

— Ծանր պատմություն է,— լռությունը խզեց Սերեդան։— Ուրեմն աշխարհում այդպիսի մարդիկ կան։ Այնպես մարդ չի դիմանա, բայց հենց որ գաղափարի ետևից է գնում, էդ բոլորը նրա մոտ ստացվում է։

Նա խոսում էր նկատելիորեն հուզվելով։ Գիրքը նրա վրա մեծ տպավորություն էր թողել։

Անդրյուշա Ֆոմիչևը, Բելայա Ցերկովից եկած կոշկակարի աշակերտը, զայրույթով գոչեց.

— Թե ձեռքս կընկներ էդ քսենձը, որ խաչով նրան խաբեց. ես էդ անիծվածին անմիջապես կսատկացնեի։

Անդրոշչուկը կաթսայիկը փայտի կտորով կրակին մոտեցնելով՝ համոզված ասաց.

— Մեռնելը, թե գիտես ինչի համար է, ուրիշ բան է։ Էստեղ մարդ ուժ էլ է ստանում։ Մեռնել պետք է նույնիսկ անպայման համբերությամբ, եթե գիտես, որ ճշմարտությունը քո կողմն է։ Էստեղից էլ հերոսություն է ստացվում։ Ես մի տղա էի ճանաչում։ Պորայկա էր անունը։ Նա, երբ Օդեսայում սպիտակները նրան ծեծում են, կատաղությունից ուղղակի մի ամբողջ դասակի վրա է հարձակվում։ Չեն հասցնում նրան սվինով խփել, երբ նա նռնակը պայթեցնում է իր ոտքերի տակ։ Ինքն էլ է կտոր-կտոր լինում, սպիտակներին էլ չորս կողմը փռում։ Իսկ վրան որ նայեիր, կկարծեիր բանի պետք չէ։ Ա՛յ, նրա մասին ոչ ոք գիրք չի գրում, իսկ արժի գրել։ Շատ նշանավոր մարդիկ կան մերոնց մեջ։

Գդալով կաթսայիկը խառնեց, շրթունքները երկարացնելով փորձեց թեյի համը և շարունակեց.

— Շան մահ էլ է լինում։ Կեղտոտ, անպատիվ մահ։ Մեզ մոտ կռիվ էր գնում Իզյասլավլի մոտ, էդպես մի հին քաղաք կա, դեռ իշխանների ժամանակ շինված։ Գորին գետի վրա է։ Էնտեղ լեհական կաթոլիկական մի եկեղեցի կա, բերդի նման, անմատչելի։ Դե, էդպես ուրեմն՝ մենք էնտեղ թռանք։ Շղթա կազմած մուտք ենք գործում նրբանցքներով։ Մեր աջ թևը լատիշներն էին պահում։ Մենք, ուրեմն, դուրս ենք թռչում խճուղին, տեսնենք մի պարտեզի մոտ երեք ձիեր են կանգնած, կապված են ցանկապատից, թամբած են։

Դե, պարզ բան է, մենք մտածում ենք, որ կխփենք լեհուկներին։ Մի տասը մարդ մեզանից դեպի բակը նետվեցին։ Առջևից, մի մեծ մաուզեր ձեռքին, քշում է նրանց լատիշների վաշտի հրամանատարը։

Հասանք տանը, դուռը բաց է, մենք՝ այնտեղ։ Մտածում ենք՝ լեհեր են, իսկ ստացվում է հակառակը։ Մեր հեծելազորն է էստեղ տեղավորվել։ Նրանք մեզանից առաջ են հասել։ Տեսեք էստեղ ինչ-որ տխուր բան է կատարվում։ Փաստն աչքերիս առջևն է. մի կնոջ են նեղում։ Էնտեղ լեհական մի սպայիկ էր ապրում։ Դե, նրանք, ուրեմն, էդ սպայիկի կնկան գետնին են փռել։ Լատիշը հենց որ էդ բոլորը տեսավ, իրենց լեզվով ինչ-որ բղավեց։ Բռնեցին էդ երեքին ու բակ քարշ տվին։ Մենք, ռուսներս, միայն երկու հոգի էինք, իսկ մնացած բոլորը լատիշներ էին։ Հրամանատարի ազգանունը Բրեդիս էր։ Թեև ես նրանց լեզուն չեմ հասկանում, բայց տեսնում եմ, որ բանը պարզ է, կսպանեն։ Էդ լատիշները պինդ ժողովուրդ են, կայծքարի նման։ Դրանք նրանց քարշ տվին քարաշեն ախոռի մոտ։ Պարզ է, մտածում եմ, անպայման կշրմփացնեն։ Իսկ էդ բռնվածներից մեկը առողջ մի տղա է, պնդակազմ, պահել չի լինում, դեսուդեն է խփում իրեն։ Օխտը պորտ է հայհոյում։ Կնկա պատճառով, ասում է, գնդակահարե՞լ։ Մյուսներն էլ են խնդրում խնայել։

Էդ բոլորն իմ մեջ սարսուռ առաջացրեց։ Ես մոտ եմ վազում Բրեդիսին և ասում եմ. «Ընկե՛ր վաշտի հրամանատար, թող դրանց տրիբունալը դատի։ Ինչո՞ւ ես ձեռքերդ դրանց արյունով կեղտոտում։ Քաղաքում կռիվը դեռ չի վերջացել, իսկ մենք էստեղ սրանց հե՞տ ենք հաշիվ տեսնում»։ Նա որ

իմ կողմը շրջվեց, ես ասած խոսքերիս համար զղջացի։ Աչքերը ոնց որ վագրի աչքեր։ Մաուզերն ատամներիս դեմ արեց։ Յոթ տարի է կռվում եմ, բայց վատ ստացվեց, վախ զգացի։ Տեսնում եմ, որ առանց մտածելու կսպանի։ Նա բղավեց ինձ ռուսերեն։ Ասածը հաղիվ է հասկացվում. «Դրոշը արյունով է ներկված, իսկ սրանք անարգանք են ամբողջ բանակի համար։ Բանդիտը մահով է հատուցում»։

Ես չդիմացա, բակից վազեցի դեպի փողոց, իսկ ետևից լսում եմ կրակոցը։ Վերջացավ, մտածում եմ։ Երբ շղթային միացանք, քաղաքն արդեն մերն էր։ Ահա թե ինչ ստացվեց։ Մարդիկ շան պես սատկեցին։ Էդ հեծելազորը նրանցից էր, որ մեզ միացրել էին Մելիտոպոլի մոտ։ Առաջ Մախնոյի մոտ էին եղել, խաժամուժ ամբոխ էր։

Կաթսայիկը ոտքերի մոտ դնելով՝ Անդրոշչուկն սկսեց բացել հացի պարկը։

— Էպիսի անպետքություններ երբեմն մեզ փաթաթվում են։ Բոլորին հետևել չի լինում։ Իբր թե նույնպես հեղափոխության համար է ջանք թափում։ Նրանց կեղտը բոլորին է կպչում։ Իսկ նայելը ծանր է։ Մինչև հիմա էլ չեմ մոռանում,— վերջացրեց նա և սկսեց թեյ խմել։

Ուշ գիշերին միայն հեծյալ հետախույզների խումբը քոմ մտավ։ Քնած Սերեգան քթից գեղգեղանքներ էր արձակում։ Գլուխը թամբին դրած քնել էր նաև Պուզիրևսկին, իսկ քաղղեկ Կրամերն ինչ-որ բան էր գրում հուշատետրում։

Մյուս օրը հետախուզությունից վերադառնալով՝ Պավելը ձին կապեց ծառին, իր մոտ կանչեց Կրամերին, որը հենց նոր էր վերջացրել թեյ խմելը։

— Լսի՛ր, քաղղե՛կ, էսպիսի մի գործի մասին ինչ կարծիքի ես, ա՛յ, ես ուզում եմ թռչել-գնալ առաջին հեծելազորը։ Նրանք առաջիկայում տաք գործեր են անելու։ Չէ՞ որ զբոսանքի համար չեն նրանք էդքան հավաքվել։ Իսկ մենք էստեղ դեռ պիտի նույն տեղում քարշ գանք։

Կրամերը զարմացած նայեց նրան։

— Ինչպե՞ս թե թռչել-գնալ։ Կարմիր բանակը քեզ համար կինո՞ է, ինչ է։ Ինչի՞ նման է դա։ Եթե մենք բոլորս սկսենք մի զորամասից մյուսը վազել, գործերս լավ էլ կլինի։

— Մեկ չէ՞, թե որտեղ ենք կռվում,— Կրամերին ընդհատեց Պավելը։— Այստեղ լինի, թե այնտեղ, միևնույն բանն է։ Ես հո թիկունք չե՞մ փախչում։

Կրամերը վճռականորեն բողոքեց։

— Իսկ կարգապահությունը, քո կարծիքով, ի՞նչ է։ Քեզ մոտ, Պավե՛լ, ամեն ինչ կարգին է, իսկ ինչ վերաբերում է անարխիային, դա մեզդ կա։ Ուզեցիր, կանես։ Իսկ կուսակցությունը և կոմերիտմիությունը երկաթե կարգապահություն են պահանջում։ Կուսակցությունը՝ ամենից առաջ։ Եվ յուրաքանչյուրը պիտի լինի ոչ թե այնտեղ, որտեղ ինքն է ուզում, այլ այնտեղ, որտեղ պետք է։ Պուզիրևսկին մերժել է քեզ փոխադրելը, նշանակում է՝ վերջակետ։

Բարձրահասակ, բարակ, դեղնավուն դեմքով Կրամերը հուզմունքից հաղաց։ Տպարանի արճիճի մուրն ամուր էր նստել թոքերում, հաճախ էր նրա այտերի վրա վառվում հիվանդագին կարմրությունը։

Երբ Կրամերը հանգստացավ, Պավելը ցած ձայնով, բայց հաստատուն տոնով ասաց.

— Այդ բոլորը ճիշտ է, բայց ես կգնամ բուդյոնովցիների մոտ, դա փաստ է։

Մյուս օրը երեկոյան Պավելն արդեն խարույկի մոտ չկար։

Հարևան գյուղակում, դպրոցի մոտ, բլրակի վրա լայն շրջան էին կազմել հեծելազորայինները։ Սայլակի հետնամասին, գլխարկը ծոծրակին նետած մի առողջակազմ բուդյոնովցի տանջում էր հարմոնը։ Հարմոնը նրա ձեռքին կլանչում էր, տակտը կորցնում, և շրջանի մեջ էլ կատաղի հոսակի ընթացքն էր շփոթում լայնածավալ կարմիր գալիֆե հագած կտրիճ հեծելազորայինը։

Սայլերի և հարևան ցանկապատերի վրա էին մագլցել հետաքրքրասեր աղջիկներն ու գյուղական տղաները՝ դիտելու հենց նոր իրենց գյուղը մտած հեծյալ բրիգադի կտրիճ պարողներին։

— Հո՛պ տուր, Տոպտա՛լ։ Թա՛փ տուր գետինը։ Է՛խ, տաքացրու, ախպե՛ր։ Հարմոնի՛ստ, թեժացրո՛։

Բայց հարմոնիստի վիթխարի մատները, որ կարող էին պայտը ծռել, ստեղների վրա դժվարությամբ էին շարժվում։

— Փրթում էր Մախնոն Կուլյաբկա Աֆանասիին,— ափսոսանքով ասաց մի արևակեղ հեծելազորային։— Առաջին կարգի հարմոնիստ էր։ Էսկադրոնում աջ թևից էր քայլում։ Ափսոս տղա։ Լավ մարտիկ էր և լավագույն հարմոնիստ։

Պավելը կանգնած էր շրջանում։ Վերջին բառերը լսելով՝ նա սրան-նրան հրմշտելով մոտեցավ սայլին և ձեռքը դրեց հարմոնի վրա։ Հարմոնը լռեց։

— Ի՞նչ ես ուզում,— խնթ նայեց հարմոնիստը։

Տոպտալոն կանգ առավ։ Չորս կողմից դժգոհ ձայներ լսվեցին.

— Ի՞նչ պատահեց։ Ինչո՞ւ դադարեցրիր։

Պավելը ձեռքը մեկնեց փոկին։

— Տուր մի քիչ նվագեմ։

Բուդյոնովցին անվստահ նայեց անծանոթ կարմիրբանակայինին և անվճռական տեսքով ուսից հանեց հարմոնի փոկը։

Պավելը վարժ շարժումով հարմոնը նետեց ծնկանը, հովհարաձև ձգեց վետվետուն կողերը և հարմոնի ամբողջ կարողությամբ ձգեց գեղգեղուն եղանակը.

Է՛խ դու, խնձորիկ,
Ո՞ւր էս գլորվում,
Թե որ Չեկա ընկնես,
Էլ չես դառնա տուն։

Տոպտալոն անմիջապես ձայնակցել սկսեց ծանոթ եղանակին։ Եվ թռչնի նման թևերը թափահարելով սլացավ շրջանի միջով՝ անհավատալի պտույտներ կատարելով, ճարպկորեն խփելով իր կոշիկների ճտքերին, ծնկներին, ծոծրակին, ձեռքի ափով խլացուցիչ աղմուկով հարվածելով ներբաններին և վերջապես բաց արած բերանին։

Իսկ հարմոնն իր բուռն, արբած ռիթմով խարազանում, քշում էր, ու Տոպտալոն հոլի պես պտտվում էր, ոտքերը դեսուդեն նետում, հևում։

— Է՛խ, ա՛խ, է՛խ, ա՛խ։

1920 թ. հունիսի 5-ին, մի քանի կարճատև, բայց կատաղի ճակատամարտերից հետո, Բուդյոննու առաջին հեծյալ բանակը լեհական 3-րդ և 4-րդ բանակների միացման տեղում

ճեղքեց լեհական ռազմաճակատը, ջախջախեց իր ճանապարհը փակող գեներալ Սավիցկու հեծյալ բրիգադը և շարժվեց Ռուժինի ուղղությամբ։

Ճեղքվածքը վերացնելու համար լեհական հրամանատարությունը տենդային արագությամբ ստեղծեց հարվածային մի խումբ։ Պոզրեբիշչե կայարանի պլատֆորմից հենց նոր հանված հինգ զրահապատ, թրթուրավոր տանկեր շտապեցին ճակատամարտի վայրը։

Բայց հեծյալ բանակը շրջանցեց Զարուդնիցին, որտեղից պատրաստվում էր հարվածը, և դուրս եկավ լեհական բանակների թիկունքը։

1-ին հեծյալ բանակի ետևից նետվեց գեներալ Կոռնիցկու հեծյալ դիվիզիան։ Նրան հրամայված էր հարվածել 1-ին հեծյալ բանակի թիկունքին, իսկ այդ բանակը, լեհական հրամանատարության կարծիքով, պետք է ձգտեր դեպի լեհերի թիկունքի կարևորագույն ստրատեգիական կետը՝ Կազատին։ Բայց դա սպիտակ լեհերի դրությունը չէր թեթևացնում։ Թեև մյուս օրը նրանք ռազմաճակատում բաց արած անցքը կարկատեցին, և հեծյալ բանակի ետևից ռազմաճակատի գիծը փակվեց, բայց նրանց թիկունքում հանդես եկավ մի հզոր հեծյալ կոլեկտիվ, որը ոչնչացնելով հակառակորդի թիկունքային բազաները՝ պետք է ամբողջ թափով հարձակվեր կիևյան խմբի վրա։ Հեծյալ դիվիզիաներն իրենց առաջընթացի ճանապարհին ոչնչացնում էին երկաթուղային ոչ մեծ կամուրջները և ավերում էին երկաթուղագծերը, որպեսզի լեհերին զրկեն նահանջի ուղիներից։

Գերիներից տեղեկություններ ստանալով, որ Ժիտոմիրում է գտնվում բանակի շտաբը, իսկ իրականում այնտեղ էր նույնիսկ ռազմաճակատի շտաբը, հեծյալ բանակի հրամանատարը որոշեց գրավել կարևոր երկաթուղային հանգույցները և վարչական կենտրոններ Ժիտոմիրն ու Բրդիչևը։ Հունիսի յոթի լուսաբացին արդեն դեպի Ժիտոմիր էր արշավում չորրորդ հեծյալ դիվիզիան։

Էսկադրոններից մեկում զոհված Կուլյաբկոյի փոխարեն աջ թևով սլանում էր Կորչագինը։ Նա էսկադրոն ընդունվեց մարտիկների կոլեկտիվի խնդրանքով, որոնք չէին ցանկանում ձեռքից թողնել այդպիսի նշանավոր հարմոնիստին։

Առանց տաքացած ձիերին սանձահարելու՝ հովհարի նման բացազատվեցին Ժիտոմիրի մոտ, արևի տակ արծաթի փայլով կայծկլտացին սրերը։

Հողը տնքաց, ձիերը հևացին, մարտիկները ձգվեցին ասպանդակների վրա։

Գետինն արագորեն փախչում էր ոտքերի տակից։ Եվ պարտեզներով ծածկված մեծ քաղաքն ընդառաջ էր շտապում դիվիզիային։ Թռան անցան առաջին պարտեզները, խուժեցին քաղաքի կենտրոնը, և ահավոր, մահու չափ սարսափելի «առա՜ջ»-ը թնդացրեց օդը։

Շիտթված լեհերը համարյա դիմադրություն ցույց չտվեցին։ Տեղական կայազորը ջախջախվեց։

Կորշագինը թռչում էր ձիու պարանոցին կռացած։ Նրա կողքից՝ Տոպտալոն, սևաթույր, բարակոտն ձիով։

Խիզախ մի բուդյոնովական Պավելի աչքի առաջ անողոք մի հարվածով սրածեց մի լեգեոների, որը չհասցրեց անգամ հրացանն ուսին դնել։

Կրճտոցով սալարկի քարերին էին խփվում պայտած սմբակները։ Եվ հանկարծ փողոցների խաչմերուկում, ուղղակի ճանապարհի մեջտեղում, գնդացիր՝ և նրա վրա կռացած երեք հոգի՝ բաց կապույտ համազգեստով ու քառանկյուն կոնֆեդերատկաններով։ Օձիքի վրա օձագալար ոսկե քուղ ունեցող չորրորդը տեսնելով արշավողներին՝ առաջ նետեց այն ձեռքը, որով բռնել էր մաուզերը։

Ո՜չ Տոպտալոն, ո՜չ Պավելը ձիերը սանձահարել չկարողացան և նետվեցին ուղղակի դեպի մահվան ճիրանը, դեպի գնդացիրը։ Սպան կրակեց Կորշագինի վրա... Վրիպեց... Ճընճղուկի պես ճկաց գնդակն այտի մոտ, և ձին իր կրծքով մի կողմ շպրտեց սպային, որը գլխով խփելով քարերին՝ ընկավ մեջքի վրա։

Հենց նույն վայրկյանին, տենդորեն շտապելով, վայրենաբար հռհռաց գնդացիրը։ Եվ իր սևաթույր, տասնյակ բրեաներից խայթված նժույգի հետ միասին ընկավ Տոպտալոն։

Պավելի նժույգը ծառս եղավ, վախեցած փնչաց և մի ոստյունով հեծյալին թոցրեց ուղղակի գնդացրի մոտ ընկած մարդկանց վրայով, և սուրը, կայծկլտուն մի աղեղ գծելով, մխրճվեց գլխարկի բաց կապույտ քառակուսու մեջ։

Նորից սուրն օդ բարձրացավ՝ պատրաստ իջնելու հաջորդի գլխին։ Բայց տաքացած նժույգը մի կողմ թռավ։

Լեռնային կատաղի գետի նման էսկադրոնը հեղեղեց խաչմերուկը, և տասնյակ սրեր օդը թրատեցին։

Բանտի երկար, նեղ միջանցքներն աղաղակներով լցվեցին։

Բանտախցերում, որոնք լեփ-լեցուն էին տանջված, ուժասպառ դեմքեր ունեցող մարդկանցով, հուզմունք էր տիրում։ Քաղաքում կռիվ է։ Միթե կարելի է հավատալ, որ դա ազատությունն է, որ դա հայտնի չէ թե որտեղից հայտնված յուրայիններն են։

Կրակոցներն արդեն բակում են։ Միջանցքներով մարդիկ են վազվզում։ Եվ հանկարծ հարազատ, անասելի հարազատ խոսքը. «Ընկերնե՛ր, դուրս եկե՛ք»։

Պավելը մոտ վազեց փոքրիկ պատուհան ունեցող փակ դռանը, որին տասնյակ աչքեր էին հառված։ Խզակոթով կատաղի թափով հարվածեց դռանը։ Նորից ու նորից։

— Սպասի՛ր, ռումբով կջարդեմ,— կանգնեցրեց Պավելին Միրոնովը և գրպանից դուրս քաշեց նռնակը։

Դասակապետ Ցիգանչենկոն խլեց նռնակը։

— Կա՜ց, խելառ, ի՞նչ է, խելքդ թոցրե՞լ ես։ Հիմա բանալիները կբերեն։ Որտեղ կոտրել չի լինի, բանալիներով կբանանք։

Միջանցքով արդեն բերում էին հսկիչներին՝ նագաններով առաջ քշելով նրանց։ Միջանցքը լցվում էր ցնցոտիապատ, անլվա, խելահեղ ուրախությամբ համակված մարդկանցով։

Լայն դուռը կրնկի վրա բանալով՝ Պավելը ներս վազեց բանտախուցը։

— Ընկերնե՛ր, դուք ազատ եք։ Մենք բուդյոնովականներ ենք, մեր դիվիզիան գրավեց քաղաքը։

Արցունքից թաց աչքերով ինչ-որ մի կին նետվեց դեպի Պավելը և գրկելով նրան ինչպես հարազատի՝ հեկեկաց։

Դիվիզիայի մարտիկների համար բոլոր ավարներից թանկը, հաղթանակից էլ թանկը հինգ հազար յոթանասունմեկ բոլշևիկներին,,— որոնց սպիտակ լեհերը քարե տուփերն էին քշել և որոնց գնդակահարություն կամ կախաղան էր սպասում,— և կարմիր բանակի երկու հազար քաղաշխատողներին

աղատելն էր։ Յոթ հազար հեղափոխականների համար անթափանց գիշերն անմիջապես հունիսյան տապ օրվա պայծառ արևի փոխարկվեց։

Բանտարկյալներից մեկը, որի դեմքը լիմոնի կեղևի նման դեղին էր, բերկրանքով դեպի Պավելը նետվեց։ Դա Սամուել Լեխերն էր՝ Շեպետովկայի տպարանի գրաշարներից։

Պավելը լսում էր Սամուելի պատմածը։ Նրա դեմքը կարծես գորշ փառով էր ծածկվել։ Սամուելը պատմում էր հայրենի քաղաքի արյունոտ ողբերգության մասին, և նրա խոսքերը Պավելի սիրտն էին մխրճվում՝ հալված մետաղի կաթիլների նման։

— Մեզ բոլորիս միասին ձերբակալեցին գիշերը, մի սրիկա պրովոկատոր էր մատնել։ Մեկ էլ տեսանք բոլորս զինվորական ժանդարմերիայի թաթերի մեջ ենք։ Սարսափելի ծեծեցին, Պավե՛լ։ Ես մյուսներից ավելի քիչ տանջվեցի. առաջին իսկ հարվածներից մեռածի պես գետնին ընկա, իսկ մյուսներն ավելի պինդ էին։ Թաքցնելու բան չունեինք։ Ժանդարմերիան ամեն ինչ մեզանից լավ գիտեր։ Գիտեին մեր յուրաքանչյուրի քայլը։

Իհարկե, կիմանային, երբ մեր մեջ մատնիչ էր գտնվում։ Պատմել չի լինի այդ օրերի մասին։ Դու շատերին ես ճանաչում, Պավե՛լ։ Վալյա Բրուժակին, Ռոզա Գրիցմանին՝ գավառական քաղաքից բոլորովին փոքրիկ մի աղջիկ, տասնյոթ տարեկան, լավ աղջիկ էր, ի՜նչ վստահություն արտահայտող աչքեր ուներ, հետո Սաշա Բունչաֆտին, գիտես, հենց մեր գրաշարը, մի ուրախ տղա, որ միշտ մեր տիրոջ ծաղրանկարն էր նկարում։ Ահա նա, հետո երկու գիմնազիստներ՝ Նովոսելսկին ու Տուժիցը։ Դե դու սրանց ճանաչում ես։ Իսկ մյուսները բոլորը գավառական քաղաքից ու ավանից։ Ընդամենը ձերբակալված էր քսանինը մարդ, դրանց մեջ՝ վեց կին։ Նրանց բոլորին գաղանաբար խոշտանգեցին, Վալյային ու Ռոզային հենց առաջին օրը բռնաբարեցին։ Սողոմոնո՛ր, ծաղրուծանակում էին նրանց, ինչպես որ ցանկանում էին։ Կիսամեռ բանտախուց քարշ տվին։ Դրանից հետո Ռոզան սկսեց ինքն իրեն խոսել, իսկ մի քանի օրից հետո բոլորովին խելքը կորցրեց։

Նրա խելագարությանը չէին հավատում, սիմուլյանտ էին համարում և յուրաքանչյուր հարցաքննության ժամանակ ծեծում էին։ Երբ նրան գնդակահարում էին, նայելը սոսկալի էր։ Ծեծերից դեմքը սևացել էր, հայացքը վայրի, խելագար, ասես պառավ լիներ։

Վալյա Բրուժակը մինչև վերջին բոպեն լավ պահեց իրեն։ Նրանք մեռան որպես իսկական մարտիկներ։ Ես չգիտեմ, թե որտեղից էին նրանք ուժ ստանում, բայց մի՞թե հնարավոր է պատմել նրանց մահվան մասին, Պավե՛լ։ Հնարավոր չէ։ Նրանց մահը բառերից սարսափելի էր... Բրուժակն ամենավտանգավոր բանի մեջ էր խառն. այդ նա էր կապ պահպանում լեհական շտաբի ռադիոընդունիչների հետ, և նրան կապ պահպանելու համար գավառ էին ուղարկում, իսկ խուզարկության ժամանակ նրա մոտ գտել էին երկու ռումբ և բրաունինգ։ Ռումբերը նրան տվել էր նույն այդ պրովոկատորը։ Ամեն ինչ այնպես էր սարքված, որ մեղադրեն շտաբը պայթեցնելու դիտավորության մեջ։

Է՜խ, Պավե՛լ, ես չեմ կարող պատմել վերջին օրերի մասին, բայց քանի որ դու պահանջում ես, կասեմ։ Դաշտային դատարանը որոշեց. Վալյային և մյուս երկուսին՝ կախել, մյուս ընկերներին՝ գնդակահարել։

Իսկ լեհ զինվորներին, որոնց մեջ մենք աշխատանք էինք տանում, մեզանից երկու օր առաջ էին դատել։

Երիտասարդ կապրալ ռադիոհեռագրիչ Սենգուրկոյին, որը պատերազմից առաջ աշխատում էր Լոձում, որպես էլեկտրամոնտյոր, մեղադրեցին հայրենիքին դավաճանելու և զինվորների մեջ կոմունիստական պրոպագանդա ծավալելու մեջ և գնդակահարության դատապարտեցին։ Նա ներման խնդրագիր չներկայացրեց, և դատավճիռը կայացնելուց քսանչորս ժամ հետո գնդակահարեցին։

Նրա գործով, որպես վկա, կանչեցին Վալյային։ Սա մեզ պատմեց, թե Սենգուրկոն ընդունել է, որ կոմունիստական պրոպագանդա է արել։ Բայց կտրուկ ժխտել է հայրենիքին դավաճանելու մեղադրանքը։ «Իմ հայրենիքը,— ասել է նա,— դա Լեհական սովետական սոցիալիստական հանրապետությունն է։ Այո՛, ես Լեհաստանի կոմունիստական կուսակցության անդամ եմ, ինձ բռնի կերպով են զինվոր դարձրել։ Եվ

Ես բացում էի ինձ նման զինվորների աչքերը, որոնց դուք ոգեշնչակատ էիք քշում։ Դրա համար կարող եք ինձ կախել, բայց ես հայրենիքիս չեմ դավաճանել և չեմ դավաճանի։ Միայն թե մեր հայրենիքները տարբեր են։ Ձերը՝ պանական է, իսկ իմը՝ բանվորագյուղացիական։ Եվ իմ այն հայրենիքում, որը կլինի, ես դրանում խորապես համոզված եմ, ոչ ոք ինձ դավաճան չի կոչի»։

Դատավճռից հետո մեզ բոլորիս արդեն միասին էին պահում։ Իսկ մահապատժից առաջ քշեցին բանտ։ Գիշերվա ընթացքում կախաղան պատրաստեցին բանտի դիմաց, հիվանդանոցի մոտ, հենց անտառի մոտ, ճանապարհից մի քիչ հեռու, որտեղ զառիթափն է, ընտրեցին գնդակահարության վայրը։ Այնտեղ էլ ընդհանուր փոս փորեցին մեզ համար։

Դատավճիռը կախել էին քաղաքում, բոլորին հայտնի էր, իսկ մեզ հետ դատաստանը լեհերը որոշել էին տեսնել օրը ցերեկով, ժողովրդի առաջ, որպեսզի յուրաքանչյուրը տեսնի ու վախենա։ Եվ առավոտից ժողովրդին քաղաքից սկսեցին քշել դեպի կախաղանը։ Ոմանք գնում էին հետաքրքրությունից դրդված, թեև սարսափելի էր, բայց գնում էին։ Կախաղանների մոտ հսկայական բազմություն է։ Ինչքան աչք կտրում է, ամեն տեղ մարդկային գլուխներ են։ Բանտը, գիտես, ցանկապատով է շրջապատված։ Հենց այդտեղ, բանտի մոտ, կախաղաններ էին կանգնեցրել, իսկ մենք լսում էինք աղմուկը։ Փողոցում ետևի կողմից գնդացիրներ էին դրել, ամբողջ շրջանից քշել բերել էին հեծյալ և հետիոտն ժանդարմերիան։ Ամբողջ մի գումարտակ շղթայել էր բանջարանոցներն ու փողոցները։ Կախաղանի դատապարտվածների համար հատուկ փոս էին փորել հենց այդտեղ, կախաղանի մոտ։ Մենք լուռ սպասում էինք վերջին, երբեմն միայն խոսք էինք փոխանակում։ Ամեն ինչի մասին խոսել էինք նախօրյակին, այն ժամանակ էլ հրաժեշտ էինք տվել իրար։ Միայն Ռոդան էր բանտախցիկի անկյունում ինչ-որ անհասկանալի բան շշնջում՝ խոսելով ինքն իր հետ։ Բռնաբարությունից ու ծեծերից խոշտանգված Վալյան քայլել չէր կարող և մեծ մասամբ պառկած էր։ Իսկ ավանից բերված հարազատ քույրեր կոմունիստուհիները գրկախառնված հրաժեշտ տվին իրար և այլևս դիմանալ չկարողանալով՝ հեկեկացին։ Գավառից բերված երիտասարդ, ուժեղ ըմբշի նման Ստեպանովը, մի տղա, որ ձերբակալության ժամանակ պաշտպանվելով երկու ժանդարմի էր վիրավորել, համառորեն քույրերից պահանջում էր. «Արտասուքներ պետք չե՛ն, ընկերնե՛ր։ Այստեղ լաց եղեք, որպեսզի այնտեղ լաց չլինեք։ Արյունախում շներին պետք չէ ուրախացնել։ Միևնույն է, մեզ չեն խնայի, միևնույն է, պետք է զոհվենք, դե եկեք լավ մեռնենք։ Թող մեզանից ոչ ոք ծնկների վրա չսողա։ Ընկերնե՛ր, հիշեցե՛ք, պետք է լավ մեռնել»։

Եվ ահա եկան մեր ետևից։ Առջևից գնում է Շվարկովսկին, հակահետախուզության պետը, ռադիստ, մի կատաղած շուն։ Եթե նա ինքը չէր բռնաբարում, ապա ժանդամներին էր թույլատրում բռնաբարել, իսկ ինքը հաճույքով նայում էր։ Բանտից դեպի կախաղանը ճանապարհի միջով ժանդարմներից միջանցք էին ստեղծել։ Եվ այդ «դեղձանիկները» (ինչպես նրանց անվանում էին դեղին ուսակապերի պատճառով) կանգնած էին մերկացրած թրերով։

Խպակոթերով մեզ դուրս քշեցին բանտի բակը, չորս-չորս կանգնեցրին, և դարպասները բաց անելով՝ փողոց դուրս բերին։ Մեզ կանգնեցրին կախաղանի առաջ, որպեսզի տեսնենք մեր ընկերների մահը, իսկ հետո գալիս էր նաև մեր հերթը։ Կախաղանը բարձր էր, հաստ գերաններից շինված։ Նրա վրա հաստ, ոլորած պարանից երեք օղակ կար, լաստակն ու սանդուղքը հենվում էին ետ քաշվող մի սյունի։ Մարդկային ծովը հազիվ լսելի աղմկում, ծփում է։ Բոլորի հայացքները մեզ վրա են հառած։ Ճանաչում ենք յուրայիններին։

Մի քիչ հեռու, արտասանդուղքի վրա հավաքվել են լեհական ազնվականները՝ հեռադիտակներով, սպաներն էլ նրանց հետ։ Եկել են դիտելու, թե ինչպես պիտի կախեն բոլշևիկներին։

Մեր ոտքերի տակ փափուկ ձյունն է, ձյունից անտառն ալեհեր է թվում, ծառերին կարծես բամբակ են ցանել, փաթիլները պտտվում են, դանդաղ իջնում, մեր տաք դեմքերի վրա հալվում, կախաղանի ոտնատեղն էլ է ձյունով ծածկված։ Մենք բոլորս համարյա մերկ ենք, բայց ոչ ոք ցուրտ չի զգում, իսկ Ստեպանովը չի էլ նկատում նույնիսկ, որ կանգնած է միայն գուլպաներով։

Կախաղանի մոտ են զինվորական դատախազը և բարձրաստիճան պաշտոնյաներ։ Վերջապես բանտից դուրս բերեցին Վալյային և այն երկու ընկերներին, որոնք կախաղանի էին դատապարտված։ Երեքն էլ թևանցուկ էին։ Վալյան մեջտեղումն էր, քայլելու ուժ չուներ, ընկերներն օգնում էին, իսկ նա աշխատում էր ուղիղ քայլել, հիշում էր Ստեպանովի խոսքերը։ «Լա՛վ պետք է մեռնել»։ Նա առանց վերարկուի էր, մի գործված բլուզով։

Ըստ երևույթին Շվարկովսկուն դուր չեկավ, որ թևանցուկ էին գալիս, նա հրեց եկողներին։ Վալյան ինչ-որ բան ասաց, և այդ խոսքերի համար ձիավոր ժանդարմը մտրակով ամբողջ թափով հարվածեց նրա դեմքին։

Ամբոխի մեջ ինչ-որ մի կին սարսափելի ճչաց, խելագար աղաղակով դեսուդեն խփվեց, շղթայի միջով նետվեց դեպի գնացողները, բայց նրան բռնեցին, քարշ տվեցին ինչ-որ տեղ։ Հավանորեն Վալյայի մայրն էր։ Երբ կախաղանին մոտեցան, Վալյան երգել սկսեց։ Ես երբեք այդպիսի ձայն չեմ լսել, այդպիսի կրքով կարող է երգել միայն մահվան գնացողը։ Նա երգեց «Վարշավյանկա»-ն, նրա ընկերները ևս ձայնակցեցին։ Ձիավորների մտրակները շաչում էին, նրանք հարվածում էին դատապարտվածներին մի բութ մոլեգնությամբ։ Բայց վերջիններս կարծես հարվածները չէին զգում։ Գետնին գցելով՝ նրանց պարկերի պես քարշ տվին կախաղանի մոտ։ Շտապ կարդացին դատավճիռը և սկսեցին օղակները պարանոցներին անցկացնել։ Այդ ժամանակ մենք երգել սկսեցինք.

Նլի՛ր, ում կյանքը անիծե՛լ է...

Բոլոր կողմերից մեզ վրա նետվեցին, և միայն տեսա, թե ինչպես մի զինվոր խղակոթով դեն հրեց ոտնատեղերը պահող փոքրիկ սյունը, և երեքն էլ օղակների մեջ ցնցվել սկսեցին...

Մեզ, տասիս, ուղղակի պատի տակ կարդացին դատավճիռն այն մասին, որ գերմանական ողորմածությամբ մահվան դատավճիռը փոխարինվում է քսանամյա տաժանակրությամբ։ Մնացածներին՝ տասնյոթ մարդու, գնդակահարեցին։

Սամուելը ձգեց վերնաշապիկի օձիքը, կարծես թե օձիքը խեղդում էր նրան։

Երեք օր կախվածներին չէին հանում։ Գիշեր-ցերեկ կախաղանի մոտ պահակախումբ էր կանգնած։ Հետո մեզ մոտ բանտ բերեցին նոր ձերբակալվածներ։ Նրանք պատմում էին. «Չորրորդ օրը կտրվեց և ընկավ ընկեր Տոբոլդինը, որը ամենից ծանրն էր, և այդ ժամանակ մյուսներին էլ հանեցին ու հենց այնտեղ էլ թաղեցին»։

Բայց կախաղանը շարունակ կանգնած էր։ Եվ երբ մեզ այստեղ էին բերում, մենք այն տեսանք։ Այդպես էլ կանգնած էր իր օղակներով և նոր զոհերի էր սպասում։

Սամուելը լռեց և անշարժ հայացքը հառեց անորոշ հեռուն։ Պավելը չնկատեց, որ պատմությունը վերջացել է։

Նրա աչքերի առաջ պարզ գծագրված էին մարդկային սարսափելի, մի կողմ թեքված գլուխներով երեք մարմինները, որոնք անձայն ճոճվում էին։

Փողոցում ուժգին հնչեց հավաքի շեփորը։ Այդ ձայնը Պավելին ստիպեց ուշքի գալ։ Նա կամացուկ, հազիվ լսելի ձայնով ասաց.

— Գնանք այստեղից, Սամուե՛լ։

Փողոցով ձիավորներով շղթայված՝ գնում էին գերի լեհ զինվորները։ Բանտի դարպասի առաջ կանգնած էր գնդի կոմիսարը և իր ռազմադաշտային գրքույկում գրում էր հրամանը։

— Վերցրե՛ք, ընկե՛ր Անտիպով,— երկտողը էսկադրոնի թիկնեղ հրամանատարին հանձնեց նա։— Հեծելադետ նշանակեցեք և բոլոր գերիներին ուղարկեցեք Նովոգրադ-Վոլինսկի։ Վիրավորների վերքերը կապել, սայլ նստեցնել և նույնպես այդ ուղղությամբ ուղարկել։ Քաղաքից մի քսան կիլոմետր հեռու տարեք և թող ուր ուզում են, գնան։ Մենք նրանց հետ գլուխ դնելու ժամանակ չունենք։ Հետևեցեք, որ գերիների նկատմամբ ոչ մի կոպիտ վերաբերմունք չլինի։

Թամբին նստելով՝ Պավելը շրջվեց դեպի Սամուելը.

— Լսեցի՞ր։ Նրանք մերոնց կախում են, իսկ մենք նրանց յուրայիններին մոտ պիտի ուղեկցենք առանց կոպիտ վերաբերմունքի։ Ինչպե՞ս դիմանաս։

Գնդի կոմիսարը գլուխը շրջեց դեպի Պավելը, ուշադիր նայեց։ Եվ Պավելը լսեց նրա հաստատուն, չոր խոսքը. գնդի կոմիսարն արտասանեց կարծես թե ինքն իրեն.

— Անդեն ոլորիների նկատմամբ դաժան վերաբերմունքի դեպքում կգնդակահարենք։ Մենք սպիտակներ չենք։

Եվ դարպասից հեռանալով, Պավելը հիշեց ամբողջ գնդի առաջ կարդացված Ռազմահեղափոխական խորհրդի հրամանի վերջին բառերը.

«Բանվորագյուղացիական երկիրը սիրում է իր կարմիր բանակը։ Նա հպարտանում է այդ բանակով։ Նա պահանջում է, որ կարմիր բանակի դրոշի վրա ոչ մի բիծ չլինի»։

— Ոչ մի բիծ,— շշնջում են Պավելի շրթունքները։

Այն ժամանակ, երբ չորրորդ հեծյալ դիվիզիան գրավեց Ժիտոմիրը, Օկունինովո գյուղի շրջանում Դնեպր գետն էր անցնում ընկեր Գոլիկովի հարվածային խմբի մեջ մտնող 7-րդ հրաձգային դիվիզիայի 20-րդ բրիգադը։

Քսանհինգերորդ հրաձգային դիվիզիայից և բաշկիրական հեծյալ բրիգադից կազմված խմբին հրամայված էր անցնել Դնեպրը, Իրշա կայարանի մոտ կտրել Կիև—Կորոստեն երկաթուղագիծը։ Այդ մանևրով կտրվում էր լեհերի Կիևից նահանջելու միակ ուղին։ Այստեղ գետանցի ժամանակ զոհվեց Շեպետովկայի կոմերիտական կազմակերպության անդամ Միշա Լևչուկովը։

Երբ վազում էին երերուն կամրջանավի վրայով, չարանենգ ֆշշոցով գլուխների վրայով թռավ լեռան ետևից նետված արկը և պայթելով՝ ծվատեց ջուրը։ Եվ հենց նույն վայրկյանին կամրջանավի մակույկի տակ սուզվեց Միշան։ Ջուրը կլանեց նրան և այլևս ետ չտվեց, միայն հովարը պոկված գլխարկով մի շիկավուն կարմիրբանակային՝ Յակիմենկոն, զարմացած բղավեց.

— Ի՞նչ եղավ, էս հո Միշկան ջրի տակ գնաց, կորավ տղան, հետքն էլ չմնաց,— նա ուզեց կանգ առնել. վախեցած հայացքը հառեց մութ ջրերին, բայց ետևից վազելով եկան, հրեցին նրան։

— Ի՞նչ ես բերանդ բացել, տխմա՛ր։ Առա՛ջ գնա։

Ընկերոջ մասին մտածելու ժամանակ չկար։ Բրիգադը առանց այն էլ ետ էր մնացել մյուսներից, որոնք արդեն գրավել էին աջ ափը։

Եվ Միշայի զոհվելու մասին Սերյոժան իմացավ չորս օր հետո, երբ բրիգադը կռվով գրավեց Բուչա կայարանը և, ճակատը շրջելով դեպի Կիև՝ դիմացավ լեհերի կատաղի գրոհներին, որոնք աշխատում էին ճեղքել անցնել դեպի Կորոստեն։

Շղթայի մեջ Սերյոժայի կողքին պառկեց Յակիմենկոն։ Կատաղի հրաձգությունը դադարեցնելով՝ դժվարությամբ բացեց շիկացած հրացանի փակաղակը և գլուխը գետնին կռացնելով՝ շրջվեց դեպի Սերյոժան.

— Հրացանն էլ է հանգիստ ուզում, ոնց որ կրակ լինի։

Սերգեյը կրակոցների դղրդյունի միջից հաղիվ լսեց նրան։ Երբ շուրջը մի քիչ խաղաղվեց, Յակիմենկոն մի տեսակ հարևանցիորեն հաղորդեց.

— Իսկ քո ընկերը խեղդվեց Դնեպրում, ես չտեսա էլ, թե ինչպես ջրի տակ սուզվեց,— ավարտեց նա իր խոսքը և ձեռքով շոշափելով փակաղակը, փամփշտակալից հանեց մի պահունակ ու սկսեց գործնականորեն հրացանի պահեստատուփի մեջ մտցնել։

Բերդիչևը գրավելու ուղարկված տասնմեկերորդ դիվիզիան քաղաքում հանդիպեց լեհերի կատաղի դիմադրությանը։

Փողոցներում արյունահեղ կռիվ սկսվեց։ Հեծելազորի ճանապարհն արգելակելով՝ կրակ էին տեղում գնդացիրները։ Բայց քաղաքը գրավվեց, և լեհական ջարդված զորքերի մնացորդները փախան։ Կայարանում դրավեցին գնացքները։ Սակայն լեհերի համար ամենասարսափելի հարվածը միլիոնի հասնող հրետանային արկերի, լեհական ռազմամթերքի կրակային քաղաքի պայթեցումն էր։ Քաղաքում ապակիները թափվում էին մանր խճաքարի նման, և տները դողում էին պայթյուններից, կարծես ստվարաթղթից շինված լինեին։

Ժիտոմիրին ու Բերդիչևին հասցված հարվածը լեհերի համար թիկունքից հասցված հարված էր, և նրանք երկու հոսանքով հապճեպ նահանջեցին Կիևից՝ երկաթե օղակից կատաղորեն ճանապարհ բանալով իրենց համար։

Պավելը կորցրեց առանձին անհատ լինելու զգացողությունը։ Բոլոր այդ օրերը հագեցված էին թեժ կռիվներով։

Նա՝ Կորչագինը, ձուլվեց մասսայի մեջ և, ինչպես մարտիկներից յուրաքանչյուրը, կարծես թե մոռացավ «ես» բառը, մնաց միայն «մենք»-ը, մեր գունդը, մեր էսկադրոնը, մեր բրիգադը։

Իսկ դեպքերը մրրկային արագությամբ էին սլանում։ Յուրաքանչյուր օրը նոր բան էր բերում։

Բուդյոնովականների հեծելազորային հեղեղն անդադար, հարված հարվածի ետևից էր հասցնում՝ քայքայելով ու ջարդելով ամբողջ լեհական թիկունքը։

Հաղթանակից արբած հեծելազորային դիվիզիաները կրքոտ կատաղությամբ հարձակման էին նետվում դեպի Նովոգրադ-Վոլինսկ՝ լեհական թիկունքի սիրտը։

Զառիթափի ափից գլորվող ալիքի նման ետ էին քաշվում և ապա նորից ահավոր կանչով գրոհի նետվում. «Առա՜ջ»։

Ոչ մի բան չօգնեց լեհերին, ո՛չ փշալարերի արգելափակոցները, ո՛չ քաղաքում ամրացած կայազորի կատաղի դիմադրությունը։ Հունիսի 27-ի առավոտյան հեծյալ շարքով անցնելով Ալուշ գետը՝ բուդյոնովականները ներխուժեցին Նովոգրադ-Վոլինսկ՝ հետապնդելով լեհերին Կորեց ավանի ուղղությամբ։ Նույն այդ ժամանակ քառասունհինգերորդ դիվիզիան անցավ Ալուշ գետը Նովոմիրոպոլի մոտ, իսկ Կոտովսկու հեծյալ բրիգադը նետվեց Լյուբար ավանի վրա։

1-ին հեծյալ բանակի ռադիոկայանն ընդունեց ռազմաճակատի հրամանատարի հրամանը՝ ամբողջ հեծելազորը Ռովնոն գրավելու ուղարկելու մասին։ Կարմիր դիվիզիաների անհաղթահարելի հարձակումը քշում էր լեհերին, որոնք վեր էին ածվել անջատ-անջատ, բարոյալքված, փրկություն որոնող խմբերի։

Մի անգամ, երբ բրիգադի հրամանատարը նրան ուղարկեց կայարան, որտեղ զրահագնացքն էր կանգնած, Պավելը հանդիպեց նրան, ում ոչ մի կերպ չէր սպասում հանդիպել։ Ձին վազքով բարձրացավ թումբը։ Պավելը սանձը ձգեց գորշ գույնով ներկված առաջին վագոնի մոտ։ Իր անմատչելիությամբ, աշտարակներում թաքնված հրանոթների սև փողաբերաններով ահավոր՝ կանգնած էր զրահագնացքը։ Նրա մոտ աշխատում էին մի քանի յուղոտված կերպարանքներ, նրանք

բարձրացնում էին անիվների մոտի ծանր, պողպատե ծածկոցը։

— Որտե՞ղ կարելի է գտնել զրահագնացքի հրամանատարին,— հարցրեց Պավելը կաշվե բաճկոնով կարմիրբանակայինին, որը դույլով ջուր էր տանում։

— Ա՛յ, այնտեղ,— ձեռքը դեպի շոգեքարշը մեկնեց վերջինս։

Կանգ առնելով շոգեքարշի մոտ՝ Կորչագինը հարցրեց.

— Ո՞վ է հրամանատարը։

Ոտքից գլուխ կաշի հագած՝ չեչոտ դեմքով մի մարդ շրջվեց դեպի Պավելը։

— Ես։

Պավելը գրպանից դուրս քաշեց ծրարը։

— Ահա բրիգադի հրամանատարի հրամանը։ Ծրարն ստորագրեցեք։

Ծրարը ծնկան վրա հարթելով՝ հրամանատարն ստորագրեց։

Շոգեքարշի միջին անիվի մոտ յուղամանը ձեռքին պատվում էր ինչ-որ մի կերպարանք։

Պավելը տեսնում էր միայն լայն թիկունքը, կաշվե անդրբավարտիքի գրպանից դուրս էր ցցվել նագանի կոթը։

— Ահա՛, ա՛ռ ստացականը,— ծրարը Պավելին մեկնեց կաշվեզգեստ մարդը։

Պավելը, սանձը ձգելով՝ պատրաստվում էր հեռանալ։ Շոգեքարշի մոտի մարդն ամբողջ հասակով ուղղվեց և շրջվեց։ Նույն վայրկյանին Պավելը ձիուց ներքև ցատկեց, կարծես քամին ցած նետեց նրան։

— Արայո՛մ, ախպերս։

Ամբողջովին մազոտի մեջ թաթախված մեքենավարն արագ ցած դրեց յուղամանը և իր արջի թաթերի մեջ առավ երիտասարդ կարմիրբանակայինին։

— Պա՛վկա։ Անպիտա՛ն։ Էս հո դո՛ւ ես,— բղավեց նա՝ իր աչքերին չհավատալով։

Զրահագնացի հրամանատարը զարմանքով նայում էր այդ տեսարանին։ Հրետանավոր կարմիրբանակայինները ծիծաղեցին.

— Տեսնում ես, ախպերներն իրար հանդիպեցին։

Օգոստոսի տասներեքին Լվովի շրջանում Պավելը կովում կորցրեց իր գլխարկը։ Նա ձին կանգնեցրեց, բայց առջևում էսկադրոններն արդեն լեհական շղթայի մեջ էին խրվում։ Հովտի թփերի միջից դուրս թռավ Դեմիդովը։ Նա սլացավ ներքև, դեպի գետը՝ ընթացքի հետ բղավելով.

— Դիվիզիայի հրամանատարն սպանվե՞ց։

Պավելը ցնցվեց։ Զոհվեց Լետունովը, նրա հերոսական դիվհրամը, բացառիկ խիզախ մի ընկեր։ Վայրենի կատաղությունը համակեց Պավելին։

Սրի բութ կողմով հարվածելով տանջված, սանձն արյունոտած աշխետին, սլացավ դեպի կռվի ամենաթեժ տեղը։

— Կոտորի՛ր սողուններին, կոտորի՛ր դրանց։ Խփի՛ր լեհական շլյախտային։ Լետունովին են սպանել։— Ու կույր-կույր, առանց զոհին տեսնելու՝ թրատեց կանաչ համազգեստ հագած մի կերպարանք։ Դիվհրամի մահվան համար խելահեղ զայրույթով համակված՝ էսկադրոնի զինվորները կոտորեցին լեգեոներների դասակը։

Փախչողներին հետապնդելով դաշտ սլացան, բայց դաշտն արդեն կրակի տակ էր առել մարտկոցը, և մահ սփռելով օդն էին ծվատում արկերը։

Պավելի աչքերի առաջ բռնկվեց մագնեզիումի կանաչ բոցը, աղմուկով հարվածեց ականջներին, հրաշեկ երկաթով այրեց գլուխը։ Սարսափելի, անհասկանալի կերպով պտտվեց գետինը և սկսեց շուռ գալ, կողքի վրա ընկնել։

Պավելը ծեղի նման դուրս նետվեց թամբից։ Աշխետի գլխի վրայով թռչելով՝ ծանրորեն խփվեց գետնին։

Եվ անմիջապես վրա հասավ գիշերը։

ԻՆՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Ծովահրեշն ուռուցիկ աչք ունի, կատվի գլխի չափ, պղտոր կարմիր, մեջտեղը կանաչ, այրվում, շողշողում է վառ լույսով։ Նա շարժվում է տասնյակ շոշափուկներով։ Շոշափուկներն օձերի կծիկի նման գալարվում են, զզվելիորեն շրշում իրենց մաշկի թեփուկներով։ Ծովահրեշը շարժվում է։ Նա տեսնում է հրեշին համարյա աչքերի մոտ։ Նրա շոշափուկները սողում են իր մարմնի վրայով, նրանք սառն են և եղին-

ջի պես կծում են։ Ծովահրեշը մեկնում է խայթը, և այն տրզրուկի նման կպչում է իր գլխին և ջղաձգորեն փոքրանալով՝ ծծում է նրա արյունը։ Նա զգում է, թե ինչպես իր մարմնից արյունը հոսում է ծովահրեշի ուռած մարմնի մեջ։ Իսկ խայթը ծծում է, ծծում, և այն տեղը, ուր այդ խայթը խրվել է գլխի մեջ, անտանելի ցավում է։

Ինչ-որ հեռո՞ւ-հեռո՞ւ մի տեղ մարդկային ձայներ են լսվում.

— Այժմ զարկերակն ինչպե՞ս է։

Եվ ավելի ցածր ձայնով պատասխանում է այլ, կանացի մի ձայն.

— Զարկերակը հարյուր երեսունութ է։ Ջերմաստիճանը երեսունինը և կես։ Շարունակ զառանցում է։

Ծովահրեշն անհետացավ, բայց խայթի ցավը մնում է։ Պավելն զգում է՝ ինչ-որ մեկի մատները հպվում են իր թևին՝ դաստակից վերև։ Նա աշխատում է աչքերը բանալ, բայց կոպերն այնքան ծանր են, որ իրարից բաժանել չի կարողանում։ Ինչո՞ւ է այսպես շոգ։ Մայրիկը, երևի, վառարանն է վառել։ Բայց նորից ինչ-որ մի տեղ մարդիկ են խոսում.

— Զարկերակն այժմ հարյուր քսաներկուս է։

Նա աշխատում է կոպերը բարձրացնել։ Իսկ ներսում կրակ է։ Տոթ է։

Խմել, ինչպե՞ս է խմել ուզում։ Նա հիմա ոտքի կելնի, ջուր կխմի։ Բայց ինչո՞ւ չի ելնում։ Ուզեց շարժվել, բայց մարմինն օտար է իրեն, անհնազանդ, իր մարմինը չէ։ Մայրիկը հիմա ջուր կբերի։

Ինքը նրան կասի. «Ջուր եմ ուզում»։ Ինչ-որ մի բան է շարժվում իր կողքին։ Չլինի թե նորից ծովահրեշն է մոտենում։ Ահա նա, ահա նրա աչքի կարմիր գույնը...

Հեռվից լսվում է մի մեղմ ձայն.

— Ֆրո՞սյա, ջուր բերեք։

«Այդ ո՞ւմ անունն է»,— աշխատում է հիշել Պավելը, բայց լարված ջանքերից սուզվում է խավարի մեջ։ Դուրս է լողում խավարից և նորից հիշում. «Ծարավ եմ»։

Ձայներ է լսում.

— Կարծես ուշքի է գալիս։

Եվ արդեն ավելի որոշ, ավելի մոտ քնքուշ մի ձայն.

— Դուք ծարա՞վ եք, հիվա՛նդ։

«Մի՞թե ես հիվանդ եմ, թե դա ինձ չեն ասում։ Այո՛, չէ՞ որ ես տիֆով եմ հիվանդ, ահա թե ինչ»։ Եվ երրորդ անգամն է աշխատում կոպերը բանալ։ Վերջապես հաջողվում է։ Բացված աչքի նեղ ճեղքից առաջին բանը, որ տեսնում է, դա գլխավերևի կարմիր գունդն է, բայց ինչ-որ մուգ մի բան ծածկում է այդ գունդը, հետո այդ մուգ բանը կռանում է նրա վրա, և շրթունքներն զգում են բաժակի եզրը և հեղուկը, կենսատու հեղուկը։ Ներսի կրակը մարում է։

Գոհունակությամբ շշնջում է.

— Ա՛յ, հիմա լավ է։

— Հիվա՛նդ, դուք ինձ տեսնո՞ւմ եք։

Այդ հարցնում է իր գլխավերևում կանգնած այն մուգ բանը, և արդեն ներքհելով՝ Պավելը հասցնում է պատասխանել.

— Չեմ տեսնում, բայց լսում եմ...

— Ո՞վ կարող էր ասել, թե նա կապրի։ Իսկ նա, տեսեք, կառչում է կյանքից։ Զարմանալի ամուր օրգանիզմ է։ Դուք կարող եք պարծենալ, Նի՛նա Վլադիմիրովնա։ Ուղղակի փրկեցիք նրան։

Եվ կանացի մի ձայն, հուզվելով.

— Օ՜, ես շատ ուրախ եմ։

Տասներեք օր տևող ուշագնացությունից հետո Կորչագինն ուշքի եկավ։

Երիտասարդ մարմինը չցանկացավ մեռնել, և ուժերը դանդաղորեն վերադառնում էին։ Դա երկրորդ ծնունդ էր։ Ամեն ինչ թվում էր նոր, անսովոր։ Միայն գլուխն էր անհաղթահարելի ծանրությամբ անշարժ պառկած գիպսի աթոռի մեջ, և այն տեղից շարժելու ուժ չկար։ Բայց մարմնի զգացողությունը վերադարձավ, և ձեռքերի մատներն արդեն բաց ու խուսի էին լինում։

Նինա Վլադիմիրովնան, զինվորական կլինիկական հիվանդանոցի կրտսեր բժիշկը, իր քառակուսի սենյակում փոքրիկ սեղանի մոտ նստած՝ թերթում էր յասամանի գույնի կազմով հաստ տետրակը։ Տետրակում մանր, շեղ ձեռագրով կարճ գրանցումներ էին արված։

1920 թվի օգոստոսի 26

Այսօր սանիտարական գնացքից մեզ մոտ բերեցին ծանր վիրավորների մի խումբ։ Լուսամուտի մոտ, անկյունի մահճակալին պառկեցրին ջարդված գլխով մի կարմիրբանակայինի։ Նա ընդամենը տասնյոթ տարեկան է։ Ինձ հանձնեցին նրա փաստաթղթերի կապոցը, որ գտել էին նրա գրպաններում։ Փաստաթղթերը դրված էին ծրարի մեջ՝ բժշկական գրանցումների հետ միասին։ Նրա ազգանունը Կորչագին է, Պավել Անդրեևիչ։ Կապոցի մեջ էր Ուկրաինայի կոմունիստական երիտասարդության միության № 967 տոմսը, ճմռթված վիճակում, կարմիրբանակայինի պատառոտված մի դրքույկ և գնդից տրված հրամանի մի քաղվածք։ Քաղվածքի մեջ ասված էր, որ կարմիրբանակային Կորչագինին հետախուզության մարտական կատարման համար շնորհակալություն է հայտարարվում։ Կար և մի գրություն, որ ըստ երևույթին գրել էր ինքը՝ տերը.

«Ընկերներիս խնդրում եմ իմ մահվան դեպքում գրել իմ հարազատներին. քաղաք Շեպետովկա, դեպո, փականագործ Արտյոմ Կորչագինին»։

Վիրավորն օգոստոսի 19-ից, բեկորի հարվածն ստանալու վայրկյանից ուշագնաց է։ Վաղը նրան կնայի Անատոլի Ստեպանովիչը։

Օգոստոսի 27

Այսօր նայեցինք Կորչագինի վերքը։ Վերքը շատ խորն է, գանգի ոսկրը ծակված է, դրանից էլ կաթվածահար է գլխի ամբողջ աջ կողմը։ Աջ աչքի մեջ արյուն է ներհոսել։ Աչքն ուռած է։

Անատոլի Ստեպանովիչը ցանկանում էր աչքը հեռացնել, որպեսզի բորբոքում տեղի չունենա, բայց ես նրան համոզեցի այդ չանել, քանի դեռ հույս կա, որ ուռուցքը կիջնի։ Նա համաձայնեց։

Ինձ ղեկավարում է բացառապես էսթետիկական զգացումը։ Եթե պատանին ապրի, ինչո՞ւ աչքը հանելով այլանդակել նրան։

Վիրավորը շարունակ զառանցում է, շուռումուռ գալիս, անընդհատ պետք է հերթապահել նրա մոտ։ Ես նրան շատ

ժամանակ եմ նվիրում։ Շատ եմ ափսոսում նրա պատանեկությունը և ուզում եմ մահվան ճիրաններից ազատել նրան, եթե ինձ այդ հաջողվի։

Երեկ հերթափոխությունից հետո ես մի քանի ժամ մնացի պալատում. նա բոլորից ծանր վիրավորն է։ Ականջ եմ դնում նրա զառանցանքին։ Երբեմն նա այնպես է զառանցում, կարծես պատմում է։ Ես շատ բան եմ իմանում նրա կյանքից, բայց երբեմն սարսափելի հայհոյում է։ Այդ հայհոյանքը սոսկալի է։ Չգիտեմ ինչու ինձ ցավ է պատճառում նրանից այդպիսի ահավոր հայհոյանքներ լսելը։ Անատոլի Ստեպանովիչն ասում է, որ նա չի ապրի։ Մերունին բարկացած փնթփնթում է. «Ես չեմ հասկանում, ինչպե՞ս կարելի է համարյա երեխաներին բանակ ընդունել։ Դա վրդովեցուցիչ է»։

Օգոստոսի 30

Կորշագինը դեռ գիտակցության չի եկել։ Նա պառկած է հատուկ պալատում, այնտեղ պառկած են մեռնողները։ Համարյա անընդհատ նրա կողքին նստած է սանիտարուհի Ֆրոսյան։ Պարզվում է, որ Ֆրոսյան նրան ճանաչում է։ Ինչոր մի ժամանակ, վաղուց, նրանք միասին են աշխատել։ Ի՞նչ չերմ ուշադրությամբ է վերաբերվում Ֆրոսյան հիվանդին։ Այժմ ես էլ եմ զգում, որ նրա դրությունն անհուսալի է։

Սեպտեմբերի 2

Երեկոյան ժամը տասնմեկն է։ Այսօր ինձ համար հիանալի օր է։ Իմ հիվանդը՝ Կորշագինը, ուշքի եկավ, կենդանացավ։ Դժվարությունը հաղթահարված է։ Վերջին երկու օրը ես տուն չէի գնում։

Այժմ չեմ կարող ասել, թե որքան եմ ուրախ, որ մեկը ևս փրկված է։ Մեր պալատում մի մահ պակաս կլինի։ Իմ հյուծող աշխատանքի մեջ ամենաուրախալին հիվանդների առողջանալն է։ Նրանք երեխաների նման կապվում են ինձ։

Նրանց բարեկամությունն անկեղծ է ու պարզ, և երբ մենք բաժանվում ենք, երբեմն նույնիսկ լաց եմ լինում։ Դա մի քիչ ծիծաղելի է, բայց ճշմարտություն է։

Սեպտեմբերի 10

Այսօր Կորշագինի համար գրեցի նրա առաջին նամակը հարազատներին։ Նա գրում է, որ թեթևակի վիրավորված է, շուտով կառողջանա և կգա։ Նա շատ արյուն է կորցրել, գունատ է բամբակի պես, դեռ շատ թույլ է։

Սեպտեմբերի 14

Կորշագինն առաջին անգամ ժպտաց։ Լավ ժպիտ ունի։ Սովորաբար նա իր տարիքին անհամապատասխան խիստ է։ Շշմեցուցիչ արագությամբ է կաղդուրվում։ Ֆրոսյայի հետ բարեկամներ են։ Ես հաճախ եմ Ֆրոսյային տեսնում նրա անկողնու մոտ։ Նա, ըստ երևույթին, հիվանդին պատմել է իմ մասին, իհարկե, չափից ավելի է գովել, և հիվանդն ինձ դիմավորում է հազիվ նկատելի մի ժպիտով։ Երեկ նա հարցրեց.

— Այդ ի՞նչ սև բծեր են ձեր ձեռքին, բժի՞շկ։

Ես լռեցի, չասացի, որ այդ նրա մատների հետքերն են, որոնցով զառանցանքի ժամանակ ցավեցնելու ասոիճան սեղմում էր իմ ձեռքը։

Սեպտեմբերի 17

Կորշագինի ճակատի վերքը լավ վիճակում է։ Մեզ՝ բժիշկներիս, զարմացնում է այդ հիրավի անսահման համբերությունը, որով վիրավորը տանում է վիրակապությունը։

Նման դեպքերում սովորաբար շատ ախ ու վախ և քմահաճություններ են անում։ Սա լռում է, և երբ յոդ են քսում բաց վերքին, լարի նման ձգվում է։ Հաճախ գիտակցությունը կորցնում է, բայց ընդհանրապես ամբողջ այդ ընթացքում՝ ոչ մի տնքոց։

Բոլորն արդեն գիտեն՝ եթե Կորշագինը տնքում է, ուրեմն, գիտակցությունը կորցրել է։ Որտեղի՞ց է նրա այդ հաստատակամությունը։ Չգիտեմ։

Սեպտեմբերի 21

Այսօր առաջին անգամ Կորշագինին սայլակով դուրս բերեցին հիվանդանոցի մեծ պատշգամբը։ Ինչ հայացքով էր նա-

յում նա այգուն, ինչպիսի ագահությամբ էր թարմ օդ շնչում։ Մառլյայով փաթաթված նրա դեմքի վրա մի աչքն է միայն բաց։ Այդ փայլուն, շարժուն աչքը աշխարհին նայում էր այնպես, կարծես թե առաջին անգամն էր աշխարհը տեսնում։

Սեպտեմբերի 26

Այսօր ինձ կանչեցին ներքև, ընդունարան, այնտեղ ինձ երկու աղջիկ էին սպասում։ Նրանցից մեկը շատ գեղեցիկ էր։ Տեսակցություն խնդրեցին Կորչագինի հետ։ Նրանց անունազգանուններն են՝ Տոնյա Տումանովա և Տատյանա Բուրանովսկայա։ Տոնյայի անունն ինձ հայտնի է։ Կորչագինն իր զառանցանքի մեջ երբեմն կրկնում էր այդ անունը։ Ես տեսակցությունը թույլ տվեցի։

Հոկտեմբերի 8

Այսօր առաջին անգամ Կորչագինն ինքնուրույն է զբոսնում։ Նա շարունակ հարցնում էր ինձ, թե երբ կկարողանա դուրս գալ հիվանդանոցից։ Ես պատասխանեցի, թե շուտով երկու ընկերուհիներն ամեն ընդունելության օր գալիս են հիվանդի մոտ։ Ես գիտեմ, թե նա ինչու չէր տնքում և առհասարակ չի տնքում։ Իմ հարցին նա պատասխանեց.

— Կարդացեք «Բոռ» վեպը և կիմանաք։

Հոկտեմբերի 14

Կորչագինը հիվանդանոցից գնաց։ Մենք նրանից շատ շերմ բաժանվեցինք։ Աչքի վիրակապը հանված է, մնում է միայն ճակատինը։ Աչքը կուրացել է, բայց արտաքուստ նորմալ տեսք ունի։ Ես շատ տխրեցի այդ լավ ընկերոջից բաժանվելու համար։

Միշտ այդպես է. բուժվում և հեռանում են մեզանից, աշխատելով, ըստ հնարավորին, այլևս մեզ չհանդիպել։ Հրաժեշտ տալիս նա ասաց.

— Ավելի լավ կլիներ, եթե ձախը կուրանար, հիմա ինչպես պիտի կրակեմ։

Նա դեռ ռազմաճակատի մասին է մտածում։

Զինվորական հիվանդանոցից դուրս գալուց հետո Պավելն սկզբում ապրում էր Բուրանովսկու տանը, ուր իջևանել էր նաև Տոնյան։

Նա անմիջապես փորձեց Տոնյային ընդհանուր աշխատանքի մեջ քաշել։ Նրան հրավիրեց կոմերիտմիության քաղաքային ժողովին։ Տոնյան համաձայնեց, բայց երբ Տոնյան դուրս եկավ այն սենյակից, որտեղ հագնվում էր, Պավելը շրթունքները կծեց։ Նա շատ շքեղ, հատկապես երբագեղ էր հագնվել, և Պավելը տատանվում էր նրան իր ընկերներով մոտ տանել։

Այդ ժամանակ էլ տեղի ունեցավ առաջին ընդհարումը։ Պավելի հարցից, թե ինչու է նա այդպես հագնվել, աղջիկը վիրավորվեց.

— Ես երբեք ընդհանուր տոնին չեմ հաճախվում. եթե դու անհարմար ես զգում ինձ հետ գնալ, այդ դեպքում ես կմնամ։

Այդ օրն ակումբում Պավելի համար ծանր էր գունաթափ գիմնազիստուհիների ու բլուզների մեջ Տոնյային այդպես պճնված տեսնելը։ Տղաները Տոնյային որպես օտարի ընդունեցին։ Նա այդ զգալով՝ բոլորին արհամարհանքով և գոգոնչ հայացքով էր նայում։

Ապրանքային նավահանգստի կոմերիտմիության քարտուղարը, կոշտ բրեզենտի վերնաշապիկ հագած թիկնեղ մի տղա, բեռնող բանվոր Պանկրատովը, մի կողմ կանչեց Պավելին։ Նա անբարյացակամորեն նայեց Պավելին։ Ապա խեթ նայելով Տոնյային՝ ասաց.

— Դո՞ւ ես այս գեղեցկուհուն այստեղ բերել։

— Այո՛, ես,— կոշտ-կոշտ պատասխանեց Կորչագինը։

— Այո՞-ո...— ձգեց Պանկրատովը։— Նրա տեսքը մեզ անհամապատասխան է, բուրժույի է նման։ Ինչպես են նրան այստեղ թողել։

Արյունը խփեց Պավելի քունքերին։

— Նա իմ ընկերն է, և ես եմ նրան այստեղ բերել։ Հասկանո՞ւմ ես։ Նա մեզ թշնամի մարդ չէ, միայն թե ճիշտ է, որ զարդարվել սիրում է, բայց չէ՞ որ միշտ չի կարելի հագուստի հիման վրա պիտակ կպցնել։ Ես էլ եմ հասկանում, թե

ում կարելի է այստեղ բերել, և իրար անցնելու կարիք չկա, ընկե՛ր։

Նա ուզում էր էլի ինչ-որ մի կոպիտ բան ասել, բայց իրեն զսպեց, որովհետև հասկացավ, որ Պանկրատովն ընդհանուր կարծիքն է արտահայտում, և իր ամբողջ վրդովմունքը Տոնյայի վրա թափեց։

«Չէ՞ որ ես նրան ասացի։ Ո՞ր սատանային է պետք այս պարծենկոտ պճնամոլությունը»։

Այդ երեկոն մտերմության քայքայման սկիզբը հանդիսացավ։ Դառնությամբ և զարմանքով էր տեսնում Պավելը, թե ինչպես է փշրվում այդպիսի, թվում էր, թե հաստատուն մտերմությունը։

Մի քանի օր էլ անցավ։ Յուրաքանչյուր հանդիպում, յուրաքանչյուր զրույց ավելի շատ խորթություն և խուլ թշնամանք էր մտցնում նրանց հարաբերությունների մեջ։ Պավելի համար անտանելի էր դառնում Տոնյայի էժանագին անհատապաշտությունը։

Հարաբերությունների խզման անհրաժեշտությունը երկուսի համար էլ պարզ էր։

Այսօր նրանք երկուսն էլ եկան մուգ դարչնագույն չոր տերևներով ծածկված Վաճառականական այգին, որպեսզի վերջին խոսք ասեն իրար։ Կանգնել էին զառիթափի վանդակապատի մոտ։ Ներքևում իր ջրերի գորշ զանգվածով պրպտվում էր Դնեպրը։ Վիթխարի կամրջի տակից դուրս սողաց բուքսիրային շոգենավը և իր անիվների թևերով ճեղքելով ջուրը, իր հետևից քարշ տալով երկու հաստափոր բարժա՝ գնաց հոսանքին հակառակ։ Մայր մտնող արևը ոսկե գույներով ներկեց Տուրխանով կղզին, և պայծառ բոցով շողացին տնակների ապակիները։

Տոնյան նայեց ոսկեղեն ճառագայթներին և ասաց խորունկ թախիծով.

— Մի՞թե մեր մտերմությունն էլ կմարի այնպես, ինչպես այժմ այս արևն է մարում։

Պավելն անթարթ նրան էր նայում. հոնքերը խոժոռելով, նա կամացուկ պատասխանեց.

— Տո՜նյա, մենք այդ մասին արդեն խոսել ենք։ Դու, իհարկե, գիտես, որ ես քեզ սիրում էի և այժմ էլ դեռ իմ սերը կարող է վերադառնալ։ Բայց դրա համար դու պետք է մեզ հետ լինես։ Ես այժմ այն Պավլուշան չեմ, ինչ առաջ էի։ Եվ ես վատ ամուսին կլինեմ, եթե դու կարծում ես, որ ես նախ պիտի քեզ պատկանեմ, հետո կուսակցությանը։ Իսկ ես ամենից առաջ կուսակցությանը պիտի պատկանեմ և ապա միայն քեզ ու մյուս մոտ մարդկանց...

Տոնյան տրտմությամբ նայում էր գետի կապույտին. նրա աչքերն արցունքով լցվեցին։

Պավելը նայեց նրա ծանոթ կիսադեմին, նրա խիտ շագանակագույն մազերին, և նրա սիրտը լցվեց խղճահարության ալիքով դեպի այդ աղջիկը, որը մի ժամանակ այնքան թանկ ու մոտ էր իրեն։

Նա զգուշությամբ ձեռքը դրեց աղջկա ուսին։

— Դեն նետիր այն ամենը, ինչ քեզ կապում է։ Եկ մեզ մոտ։ Միասին մինչև վերջ կշարդենք տերերին։ Մեզ մոտ շատ լավ աղջիկներ կան, նրանք մեզ հետ միասին են տանում կատաղի պայքարի ամբողջ ծանրությունը, մեզ հետ միասին են կրում բոլոր զրկանքները։ Նրանք, գուցե, քեզ նման կրթված չեն, բայց ինչո՞ւ, ինչո՞ւ չես ուզում մեզ հետ լինել։ Դու ասում ես, որ Զուժանինը քեզ բռնությամբ է ուզել տիրանալ, բայց չէ՞ որ նա այլասերվածի մեկն է և ոչ թե մարտիկ։ Ասում ես, թե քեզ անբարյացակամ ընդունեցին, իսկ դու ինչո՞ւ այնպես հագնվեցիր, կարծես բուրժուական պարահանդես էիր գնում։ Հպարտություն բռնեց, իբր թե չեմ հարմարվի ձեր կեղտոտ գիմնաստյորկաներին։ Դու բանվորին սիրելու համարձակությունն ունեցար, իսկ գաղափարը սիրել չես կարողանում։ Ես ցավում եմ, որ բաժանվում եմ քեզանից և կուզենայի քո մասին լավ հիշել։

Նա լռեց։

Մյուս օրը փողոցում Պավելը մի հրաման տեսավ, որն ստորագրել էր Նահանգական Չեկայի նախագահ Ժուխրայը։

Նրա սիրտը թունդ առավ։ Հազիվ կարողացավ ընկնել նավաստու մոտ, չէին թողնում։ Այնպիսի մի աղմուկ բարձրացրեց, որ պահակները ձերբակալել էին ուզում։ Այնուամենայնիվ, հաջողվեց Ժուխրայի մոտ ընկնել։ Ֆյոդորի հետ ջերմ հանդիպեցին։ Արկը պոկել էր Ֆյոդորի թևը։ Տեղն ու տեղը համաձայնության եկան աշխատանքի մասին.

— Միասին հակառերին կխեղդենք այստեղ, ռազմաճակատ գնալու ուժ չունես դու։ Հենց վաղն էլ եկ,— ասաց Ժուխրայը։

Սպիտակ լեհերի դեմ պայքարն ավարտվեց։ Կարմիր բանակները, որ հասել էին Համարյա Վարշավայի պատերի մոտ, ծախսելով իրենց բոլոր նյութական և ֆիզիկական ուժերը, կտրված իրենց բազաներից՝ չկարողացան վերջին սահմանը վերցնել և ետ քաշվեցին։ «Վիսլայի վրա հրաշք կատարվեց»,— ինչպես լեհերն էին անվանում կարմիրների նահանջը Վարշավայից։ Սպիտակ պանների Լեհաստանը կենդանի մնաց։ Լեհական Սովետական Սոցիալիստական Հանրապետության երազանքն առայժմ իրականացնել չհաջողվեց։

Արյունով ողողված երկիրը հանգիստ էր պահանջում։

Պավերին նորից չհաջողվեց յուրայինների հետ տեսնվել, որովհետև Շեպետովկա փոքրիկ քաղաքը վերստին գրավել էին սպիտակ լեհերը, և այն դարձել էր ռազմաճակատի ժամանակավոր տեսման։ Հաշտության բանակցություններ էին տեղի ունենում։ Գիշեր-ցերեկ Պավելն արտակարգ հանձնաժողովում էր լինում, զանազան հանձնարարություններ կատարում։ Նա ապրում էր Ժուխրայի սենյակում։ Իմանալով, որ հայրենի քաղաքը լեհերը գրավել են, Պավելը տխրեց։

— Այդ ինչպես, Ցյո՞դոր, եթե զինադադարն այսպես կնքվի, ուրեմն մայրս արտասահմանո՞ւմ կմնա։

— Հավանաբար սահմանը գետով կանցնի, Գորինով, այնպես որ քաղաքը մերը կլինի։ Շուտով կիմանանք։

Լեհական ճակատից դիվիզիաները հարավ էին նետվում։ Դաղարից օգտվելով՝ Ղրիմից դուրս սողաց Վրանգելը։ Եվ այն ժամանակ, երբ հանրապետությունն իր բոլոր ուժերը լարում էր լեհական ճակատում, վրանգելականները շարժվեցին հարավից հյուսիս՝ աշխատելով Դնեպրի ափով ճանապարհ բանալ դեպի Եկատերինոսլավի նահանգը։

Օգտվելով այն բանից, որ լեհերի հետ պատերազմը վերջացել էր, երկիրը Ղրիմ նետեց իր բանակները՝ հակահեղափոխության այս վերջին բույնը լիկվիդացնելու համար։

Կիևի վրայով դեպի հարավ էին շարժվում մարդկանցով, սայլերով, խոհանոցներով, հրանոթներով բեռնված էշելոնները։ Գծամասի տրանսպորտային Չեկայում տենդագին աշխատանք էր գնում։ Գնացքների այս ամբողջ հոսանքը «խցան» էր առաջացնում, կայարանները լցվում էին գնացքներով, ու շարժումը խախտվում էր, որովհետև ոչ մի ազատ ճանապարհ չէր լինում։ Իսկ հեռագրական ապարատները դուրս էին թափում ժապավենների շերտիկները ուլտիմատիվ հեռագրերով։ Դրանց մեջ հրամայվում էր գիծն ազատել այսինչ դիվիզիայի համար։ Անվերջ սողում էին շերտիկները՝ գծիկներով բծավորված ժապավենները, և նրանցից յուրաքանչյուրի մեջ ասվում էր. «Ամեն տեսակի հերթից դուրս... մարտական հրամանի կարգով... անհապաղ ազատել ճանապարհը...»։ Եվ նրանցից համարյա յուրաքանչյուրում հիշեցվում էր, թե չկատարելու դեպքում մեղավորները կհանձնվեն ռազմահեղափոխական տրիբունալին։

Իսկ խցանների համար պատասխանատու էր գծամասային տրանսպորտային Չեկան։

Նապանը թափահարելով այստեղ էին խուժում զորամասերի հրամանատարները՝ պահանջելով բանակի հրամանատարի այսինչ համարով, այսինչ հեռագրի հիման վրա անմիջապես շարժվելու հնարավորություն տալ իրենց էշելոններին։

Նրանցից ոչ մեկը չէր ուզում լսել, որ այդ անելն անհնարին է։ «Թող հոգիդ դուրս գա, բայց առաջ գնալու հնարավորություն տուր»։ Եվ սկսվում էր սարսափելի հայհոյանքը։ Հատկապես բարդ դեպքերում շտապ կանչում էին Ժուխրային։ Եվ այդ ժամանակ իրար վրա կրակելու պատրաստ տաքացած մարդիկ խաղաղվում էին։

Ժուխրայի սառն ու հանդարտ երկաթե կերպարանքը և լարված, առարկությունն թույլ չտվող ձայնը ստիպում էր պատյանների մեջ դնել հանված նագանները։

Պավելը սենյակից կառամատույց էր դուրս գալիս սուր գլխացավով։ Չեկիստի աշխատանքը քայքայիչ ազդեցություն էր ունենում նրա նյարդերի վրա։

Մի անգամ ռումբերի արկղերով լեցուն գնացքի պլատֆորմի վրա Պավելը տեսավ Սերյոժային։ Բրուզժակը պլատֆորմից ուղղակի նրա վրա ընկավ, քիչ մնաց գետնին գլորի նրան, և ամուր սեղմեց գրկում։

— Պա՜վկա։ Սատանա՜, ես քեզ իսկույն ճանաչեցի։

Ընկերները չգիտեին, թե ինչ հարցնեն իրար, ինչի մասին պատմեն։ Չէ՞ որ այնքան շատ բան էին ապրել նրանք այդ ժամանակամիջոցում։ Հարցնում էին և պատասխանի չսպասելով՝ իրենք էին պատասխանում։ Եվ լսեցին շչակների ձայնը։ Միայն այն ժամանակ, երբ վագոնները դանդաղ սողացին, նրանք իրար գրկից պոկվեցին։

Ի՞նչ կարելի էր անել։ Հանդիպումն ընդհատվեց, գնացքը շարունակ արագացնում էր ընթացքը։ Եվ որպեսզի ետ չմնա, Սերյոժան վերջին անգամ ինչ-որ բան բղավեց ընկերոջը, վազեց կառամատույցով՝ կառչելով վագոնի բաց դռնից. մի քանի ձեռքեր բռնեցին նրան, ներս քաշեցին։ Իսկ Պավելը կանգնել նայում էր հետևից և այժմ միայն հիշեց, որ Սերյոժան Վալյայի զոհվելու մասին չգիտե։ Չէ՞ որ Սերյոժան հայրենի քաղաքում չի եղել։ Իսկ ինքը՝ Պավելը, հանդիպումից շշմած՝ այդ նրան չասաց։

«Թող հանգիստ գնա, լավ է, որ չգիտե»,— մտածում էր Պավելը։ Նա չգիտեր, որ իր բարեկամին վերջին անգամ է տեսնում։ Սերգեյն էլ չգիտեր, որ վագոնի կտուրին կանգնած, կուրծքը աշնան քամուն տված՝ շարժվում է մահվանն ընդառաջ։

— Նստի՛ր, Սերյո՜ժա,— համոզում էր նրան Դորոշենկոն՝ այրված թիկունքով շինել հագած մի կարմիրբանակային։

— Ոչինչ, ես ու քամին բարեկամներ ենք։ Թո՛ղ փչի,— ծիծաղելով պատասխանեց Սերյոժան։

Իսկ մի շաբաթ հետո զոհվեց առաջին կռվում, ուկրաինական աշնանային տափաստանում։

Հեռվից եկավ կույր դնդակը։

Սերյոժան հարվածից ցնցվեց։ Ընդառաջ քայլեց այրող ցավին, որը պատռեց նրա կուրծքը, երերաց, չբղավեց, օդը գրկեց, ձեռքերն ամուր սեղմեց կրծքին և թեքվելով, ասես ցատկի պատրաստվելով, քարացած մարմնով խփվեց գետնին և տափաստանի անսահմանությանը հառեց անշարժացած երկնագույն աչքերը։

Չեկայի աշխատանքի նյարդային հանգամանքներն ազդեցին Պավելի դեռ չամրապնդված առողջության վրա։ Կոնտուզիայից առաջացած ցավերն սկսեցին հաճախակի դառնալ, և վերջապես երկու անքուն գիշերներից հետո՝ նա ուշագնաց եղավ։

Դրանից հետո նա դիմեց Ժուխրային.

— Ի՞նչ ես կարծում, Ֆյոդոր, ճի՞շտ կլինի, արդյոք, եթե ես այլ աշխատանքի փոխադրվեմ։ Ես շատ եմ ուզում գնալ գլխավոր արհեստանոցներն իմ մասնագիտության գծով աշխատելու, թե չէ զգում եմ, որ այստեղ իմ բանը չէ։ Հանձնաժողովում ինձ ասացին, որ զինվորական ծառայության համար ես անպետք եմ։ Բայց այստեղ ռազմաճակատից էլ վատ է։ Այ, այս երկու օրվա ընթացքում, ինչ լիկվիդացնում էինք Տուտիրի բանդան, բոլորովին ուժից ընկա։ Ես պետք է հանգստանամ այս աղմուկից։ Հասկանում ես, Ֆյոդոր, որ ես վատ չեկիստ կլինեմ, եթե ոտքի վրա հաղիվ եմ կանգնում։

Ժուխրայը մտահոգ նայեց Պավելին։

— Այո՜, տեսքդ լավ չէ։ Քեզ ավելի շուտ էր պետք աղատել, դրանում ես եմ մեղավորը, աշխատանքի մեջ թաղված՝ չեմ նկատել։

Այդ խոսակցության հետևանքն այն եղավ, որ Պավելը գնաց կոմերիտմիության նահանգական կոմիտե՝ մի թուղթ ձեռքին, ուր գրված էր, որ նա՝ Կորչագինը, ուղարկվում է կոմիտեի տրամադրության տակ։

Կեպկան չարաճճիորեն քթին քաշած, շարժուն մի տղա հայացք նետելով թղթին՝ ուրախ-ուրախ աչքով արեց Պավելին։

— Չեկայի՞ց։ Հաճելի հիմնարկություն է։ Խնդրեմ, մենք իսկույն քեզ համար մի աշխատանք գլուխ կբերենք։ Մեզ մոտ տղերքի սով է։ Ո՞ւր ուղարկենք քեզ։ Նահանգական պարենկոմ ուզո՞ւմ ես։ Ո՞չ։ Պետք չէ։ Նավահանգստի ագիտբազան կգնա՞ս։ Ո՞չ։ Իզուր։ Լավ տեղ է, հարվածային մթերաբաժին կստանաս։

Պավելն ընդհատեց տղային.

— Ես ուզում եմ աշխատել երկաթուղում, գլխավոր արհեստանոցում։

Տղան զարմացած նայեց Պավելին։

— Գլխավոր արհեստանոցները։ Հըմ... այնտեղ մարդու

կարիք չունենք։ Մի խոսքով՝ գնա Ուստինովիչի մոտ, նա քեզ որևէ գործի կտեղավորի։

Բուխ աղջկա հետ կարճ զրույցից հետո որոշվեց. Պավելը գնում է արհեստանոցները որպես կոմերիտական կոլեկտիվի քարտուղար, առանց արտադրությունից կտրվելու։

Իսկ այդ ժամանակ Ղրիմի դարպասների մոտ, Թերեկղղու նեղ պարանոցին, մի ժամանակ Ղրիմի թաթարներին զապորոժյան զյուղացիներից բաժանող հին սահմանների վրա կանգնած էր նորոգված և իր ամրություններով ահռելի սպիտակգվարդիական ամրոցը՝ Պերեկոպը։

Պերեկոպից այն կողմ՝ Ղրիմում, կատարելապես ապահով զգալով իրեն, գինու մշուշի մեջ ընչահեղձ էր լինում երկրի բոլոր ծայրերից այստեղ քշված և կործանման դատապարտված հին աշխարհը։

Եվ աշնանային ամպամած մի գիշեր աշխատավոր ժողովրդի բյուրավոր որդիները նեղուցի սառը ջրերի մեջ մտան, որպեսզի գիշերով անցնեն Սիվաշը և Թիկունքից հարձակվեն ամրություններում թաքնված թշնամուն։ Հարձակվողների թվում էր նաև Ժարկի Իվանը, որը գլխից վերև բռնած՝ հոգատարությամբ տանում էր իր գնդացիրը։

Եվ երբ արշալույսի հետ խելահեղ տենդի մեջ եռաց Պերեկոպը, ճակատ առ ճակատ արգելափակոցների միջով կռվի նետվեցին հազարները, սպիտակների թիկունքում Լիտովսկ Թերակղղու ափ դուրս եկան Սիվաշն անցած առաջին գորասյունները։ Եվ կայծքարոտ ափը դուրս սողացողների մեջ առաջիններից մեկը Ժարկին էր։

Իր դաժանությամբ չտեսնված մի ճակատամարտ բորբոքվեց։ Սպիտակների այրուձին վայրենի, գաղանային մոլուցքով նետվում էր ջրից դուրս եկողների վրա։ Ժարկին առանց դադարեցնելու վազքը՝ գնդացրով մահ էր սփռում։ Եվ արճիճե անձրևից փոփում էին մարդկանց և ձիերի կույտերը։ Տենդագին արագությամբ Ժարկին շարունակ նորանոր սկավառակներ էր հաղցնում գնդացրին։

Հարյուրավոր հրանոթներից Պերեկոպը թնդում էր։ Թվում էր, թե անհատակ անդունդն էր վիժում ինքը՝ երկիրը, և վայրի կաղկանձյունով երկինքն ահռելով դեսուդեն էին նետվում հաղարավոր արկեր, որոնք ամենամանր բեկորների

վերածվելով՝ մահ էին տարածում։ Փորփրված, վիրավոր գետինը վերև էր շպրտվում և սև հողակույտերով վարագուրում արևը։

Հրեշի գլուխը ջախջախված էր, և դեպի Ղրիմ հորդեց կարմիր հոսանքը, հորդեց իր վերջին հարվածի մեջ ահռելի 1-ին հեծելազորայինը։ Ջղաձիգ երկյուղով բռնված սպիտակգվարդիականները խուճապահար գրոհում էին նավահանգստից հեռացող շոգենավերի վրա։

Հանրապետությունը մաշված գիմնաստյորկաների վրա, այնտեղ, ուր սիրան է բաբախում, ամրացնում էր կարմիր դրոշի ոսկե շրջանակները, և դրանց մեջ էր նաև կոմերիտական գնդացրորդ Իվան Ժարկիի գիմնաստյորկան։

Լեհերի հետ հաշտություն կնքվեց, և փոքրիկ քաղաքը, ինչպես որ ենթադրում էր Ժուխրայը, մնաց սովետական Ուկրաինային։ Սահման դարձավ քաղաքից երեսունհինգ կիլոմետրի վրա գտնվող գետը։ 1920 թվի անմոռանալի մի առավոտ Պավելը մոտեցավ ծանոթ վայրերին։

Դուրս եկավ ձյունով ծածկված կառամատույցը, Թուցիկ հայացք նետեց «1-ին Շեպետովկա» ցուցանակին, անմիջապես թեքվեց դեպի ձախ՝ դեպոն։ Հարցրեց Արտյոմի մասին, բայց փականագործն այնտեղ չէր։ Շինելի փեշերն իրար վրա քաշեց և անտառի միջով արագորեն դեպի քաղաք քայլեց։

Դռան թակոցը լսելով՝ Մարիա Յակովլևնան շրջվեց՝ հրավիրելով ներս մտնել։ Եվ երբ դռան մեջ երևաց ձնակոլոլ կերպարանքը, նա ճանաչեց հարազատ որդու դեմքը, ձեռքերով բռնեց կուրծքը և անչափ ուրախությունից չկարողացավ խոսել։ Իր ամբողջ նիհարիկ մարմնով սեղմվեց որդու կրծքին և անթիվ համբույրներով ծածկելով նրա դեմքը՝ լաց եղավ երջանկության արցունքներով։

Իսկ Պավելը գրկել էր նրան, նայում էր մոր վշտից ու սպասումից տառապած դեմքին, որն ակոսված էր կնճիռներով, և ոչինչ չէր ասում, սպասում էր, որ նա հանգստանա։

Երջանկությունը նորից փայլեց տառապած կնոջ աչքերում, և այդ բոլոր օրերին մայրը չէր կշտանում խոսելուց, որդուն նայելուց, որին տեսնելու հույսը նա արդեն կորցրել էր։ Նրա ուրախությունն անսահման դարձավ, երբ երեք օր

հետո, գիշերով, զինվորական պայուսակն ուսին՝ փոքրիկ սենյակը խուժեց նաև Արտյոմը։

Կորշագինների փոքրիկ բնակարանն էին վերադառնում նրա բնակիչները։ Նանր փորձություններից ու ձախորդություններից հետո, կործանումից փրկվելով՝ եղբայրները հանգիպեցին իրար...

— Հիմա ի՞նչ եք անելու,— հարցնում էր Մարիա Ցակովլևնան որդիներին։

— Էլի առանցքակալներ կշինենք, մայրիկ,— պատասխանում էր Արտյոմը։

Իսկ Պավելը երկու շաբաթ տանը մնալուց հետո նորից կիև վերադարձավ, ուր նրան աշխատանքն էր սպասում։

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Մ Ա Ս

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Կեսգիշեր է։ Վաղուց արդեն իր ջարդված մարմինը քարշ է տվել վերջին տրամվայը։ Լուսինն անկենդան լույսով ողողել է լուսամուտի գոգը։ Նրա ճաճանչները կապտավուն քողով փռվել են մահճակալի վրա՝ կիսախավարին մատնելով սենյակի մնացած մասը։ Անկյունի սեղանին՝ լույսի մի շրջանակ, որ ընկել է սեղանի լամպի լուսամփոփից։ Ռիտան խոնարհվել է մի հաստ տետրակի վրա. դա նրա օրագիրն է։

«Մայիսի 24,— խազմզում է նրա մատիտի սուր ծայրը։— Ես նորից փորձում եմ գրի առնել իմ տպավորությունները։ Նորից դատարկ տարածություն։ Մեկնկես ամիս է անցել, և ոչ մի բառ չի գրվել։ Ստիպված եմ համակերպվել այս ընդհատման հետ։

Ինչպես ժամանակ գտնեմ օրագրի համար։ Ահա հիմա գիշեր է, իսկ ես գրում եմ։ Քունս փախչում է։ Ընկեր Սեգալը գնում է կենտկոմում աշխատելու։ Այդ լուրը մեզ բոլորիս վշտացրեց։ Հիանալի մարդ է մեր Լազար Ալեքսանդրովիչը։ Այժմ եմ միայն հասկանում, թե ինչ հարստություն էր մեզ համար նրա բարեկամությունը։ Իհարկե, Սեգալի մեկնումով կքայքայվի դիտամատի խմբակը։ Երեկ մինչև ուշ գիշեր նրա մոտ էինք, ստուգում էինք մեր «ենթաշեֆերի» նվաճումները։ Եկան կոմերիտմիության նահանգական կոմիտեի քարտուղար Ակիմը և հաշվառման բաժնի վարիչ անտանելի Տուֆտան։ Տանել չեմ կարող այդ ամենագետին։ Սեգալը փայլում էր։

Նրա աշակերտ Կորշագինը փառավորապես կտրեց Տուֆտային հնամենության պատմությունից։ Ա՛խ, այս երկու

ամիսն իզուր չի կորել։ Չես ափսոսում ուժերի վատնումը, եթե այն այսպիսի արդյունք է տալիս։ Լուրեր կան, որ ժուխրայը փոխադրվում է ռազմական շրջանի Հատուկ բաժնում աշխատելու։ Ինչո՞ւ, չգիտեմ։

Լազար Ալեքսանդրովիչն իր աշակերտին ինձ հանձնեց։

— Սկսածը վերջացրեք,— ասաց նա,— կես ճանապարհին կանգ մի առեք։ Ե՛վ դուք, Ռիտա, և՛ նա իրարից սովորելու շատ բան ունեք։ Պատանին տարերայնությունից դեռ բոլորովին չի հեռացել։ Ապրում է զգացմունքներով, որոնք նրա մեջ ըմբոստանում են, և այդ զգացմունքների մրրիկները շեղում են նրան։ Որքան ես ձեզ գիտեմ, Ռիտա, դուք նրա համար ամենահարմար ղեկավարը կլինեք։ Հաջողություն եմ ցանկանում։ Զմոռանաք գրել ինձ՝ Մոսկվա,— ասաց ինձ Մեգալը հրաժեշտի ժամանակ։

Այսօր Կենտկոմից նոր քարտուղար են ուղարկել Սոլոմենսկի շրջկոմի համար։ Ժարկիին։ Ես նրան ճանաչում եմ բանակից...

Վաղը Դմիտրին կբերի Կորշագինին։ Նկարագրեմ Դուբավային։ Միջին հասակ ունի։ Ուժեղ, մկանուտ։ Կոմերիտմիության մեջ է տասնութ թվականից, կուսակցության մեջ՝ քսանից։ Սա այն երեքից մեկն է, որոնց կոմերիտմիության նահանգական կոմիտեն հեռացրել էր՝ «բանվորական օպոզիցիային» պատկանելու համար։ Նրա հետ պարապելը դժվար էր։ Ամեն օր նա վիժեցնում էր պլանը՝ հարցերի տարափ տեղալով, հեռացնելով մեզ թեմայից։ Յուրինևայի, իմ երկրորդ աշակերտի, և Դուբավայի միջև հաճախ տարաձայնություններ էին առաջանում։ Հենց առաջին երեկոյան, ոտքից գլուխ չափելով Օլգային, նկատեց.

— Քո զգեստավորումը լրիվ չէ, պառա՛վ։ Հարկավոր է կաշվե շալվար, խթաններ, բուդյոնովկա և թուր, թե չէ՝ ոչ այս ես, ոչ այն։

Օլգան խոսքի տակ չմնաց, և ես ստիպված եղա նրանց բաժանել։ Կարծեմ Դուբավան Կորշագինի մտերիմն է... Այսօր բավական է։ Պետք է քնել»։

Տապն ուժասպառ է արել երկիրը։ Կիզելու աստիճան շիկացել է կայարանի վրայի կամրջի երկաթե ճաղաշարը։

Կամուրջ էին բարձրանում թմրած, շոգից թուլացած մարդիկ։ Դրանք ուղևորներ չէին։ Կամրջով գերազանցապես երկաթուղային շրջանից դեպի քաղաք էին գնում։

Վերևի աստիճանից Պավելը տեսավ Ռիտային։ Սա տղայից առաջ էր եկել գնացքը դիմավորելու և նայում էր ներքև իջնող մարդկանց։

Ուստինովիչից երեք քայլի վրա Պավելը կանգ առավ։ Աղջիկը նրան չէր նկատում։ Պավելը դիտում էր նրան ինչ-որ տարօրինակ հետաքրքրությամբ։ Ռիտան հագել էր շերտավոր բլուզկա, հասարակ գործվածքից կապույտ կարճ յուբկա, փափուկ խրոմից կարված բաճկոնը գցել էր ուսին։ Անհնապանդ մազերի փունջը բոլորապատում էր նրա արևառ դեմքը։ Նա կանգնած էր գլուխը մի քիչ ետ գցած և պայծառ լույսից աչքերն էր կկոցում։ Կորշագինն առաջին անգամն էր այդպիսի հայացքով նայում իր բարեկամին և ուսուցչին, և առաջին անգամ նրա գլխում ծագեց այն միտքը, որ Ռիտան ոչ միայն նահանգական կոմիտեի բյուրոյի անդամ է, այլև... Եվ ինքն իրեն բռնելով այդպիսի «մեղավոր» մտքերի մեջ՝ բարկացած ձայն տվեց աղջկան.

— Ես մի ամբողջ ժամ է արդեն, ինչ նայում եմ քեզ, իսկ դու ինձ չես տեսնում։ Գնալու ժամանակն է, գնացքն արդեն կանգնած է։

Նրանք մոտեցան դեպի կառամատույց տանող դռանը։

Երեկ նահանգական կոմիտեն Ռիտային նշանակեց իր ներկայացուցիչը գավառական կոֆերանսներից մեկում։ Կորշագինին նշանակեցին նրան օգնական։ Այսօր նրանք պետք է անպայման գնացք նստեն, մի բան, որ այնքան էլ հեշտ լուծելի խնդիր չէր։ Կայարանը հազվադեպ գնացքների մեկնելու ժամերին գտնվում էր ուղևորությունը կարգավորող ամենավոր հնգյակի իշխանության տակ։ Առանց այդ հանձնաժողովի անցագրի ոչ ոք կառամատույց դուրս գալու իրավունք չուներ։ Բոլոր մատույցներն ու անցքերը գրավել էր հանձնաժողովի արգելափակող ջոկատը։ Մարդկանցով լեփ-լեցուն գնացքը տանել կարող էր ցանկացողների միայն մեկ տասներորդ մասին։ Ոչ ոք չէր ցանկանում մնալ, օրերով սպասել պատահական գնացքի։ Հազարավոր մարդիկ գրոհում էին դեպի կառամատույց տանող մուտքերը, աշխատում էին

ճեղքել-անցնել դեպի անմատչելի կանաչ վագոնները։ Այդ օրերին կայարանն իսկապես պաշարման վիճակ էր ապրում, և գործը երբեմն ձեռնամարտի էր հասնում։

Պավելն ու Ռիտան իզուր էին փորձում կառամատույց դուրս գալ։

Իմանալով բոլոր մուտքերն ու ելքերը՝ Պավելն իր ուղեկցուհուն տարավ բազմի բաժնի միջով։ Նրանք դժվարությամբ դուրս եկան № 4 վագոնի մոտ։ Վագոնի դռների մոտ կանգնած էր շոգից խաշված մի չեկիստ և զսպելով խիստ ամբոխին՝ կրկնում էր հարյուրերորդ անգամ։

— Ես ձեզ ասում եմ, որ վագոնը լեփ-լեցուն է, իսկ բուֆերների և տանիքի վրա, հրամանի համաձայն, ոչ ոքի չեն թողնում։

Զայրացած մարդիկ հարձակվում էին նրա վրա, քիթն էին խոթում չորրորդ վագոնի համար հանձնաժողովի տված տոմսակները։ Կատաղի հայհոյանք, աղաղակ, հրմշտոց էր յուրաքանչյուր վագոնի առաջ։ Պավելը տեսնում էր, որ սովորական կարգով այդ գնացքը նստել չի լինի, բայց գնալն անհրաժեշտ էր, թե չէ կոնֆերանսը կվիժեր։

Մի կողմ կանչելով Ռիտային՝ Պավելը նրան հաղորդեց իր գործողությունների ծրագիրը. նա մի կերպ կմանի վագոն, բաց կանի լուսամուտը և այնտեղից ներս կքաշի Ռիտային։

Այլ կերպ ոչինչ չի դուրս գա։

— Տուր ինձ քո բաճկոնը, դա ամեն մի մանդատից ավելի լավ է։

Պավելը վերցրեց աղջկա կաշվե բաճկոնը, հագավ, բաճկոնի գրպանը դրեց իր նագանը՝ դիտմամբ դուրս թողնելով կոթն ու փոկը։ Պաշարելենի պայուսակը թողնելով Ռիտայի ոտքերի մոտ՝ գնաց դեպի վագոնը։ Ուղևորներին առանց քաշվելու հրելով՝ բռնեց սանդուղքի բռնակից։

— Է՛յ, ընկեր, ո՞ւր ես գնում։

Պավելը շրջվեց ու նայեց թիկնեղ չեկիստին։

— Ես շրջանային Հատուկ բաժնից եմ։ Ա՛յ հիմա կստուգենք, բոլո՞ր նստածները հանձնաժողովի տոմսեր ունեն,— ասաց Պավելն այնպիսի մի տոնով, որ նրա լիազորությունների նկատմամբ ոչ մի տարակույս չէր թողնում։

Չեկիստը նայեց նրա գրպանին, թեքով սրբեց ճակատի քրտինքը և անտարբեր տոնով ասաց.

— Դե ինչ, ստուգիր, եթե ներս մտնել կարողանաս։

Թևերով, ուսերով, տեղ-տեղ էլ բռունցքներով աշխատելով, սրա-նրա ուսերին բարձրանալով, ձեռքերի օգնությամբ ձգվելով, վերին մահճակալներից բռնելով, հայհոյանքի կարկուտի տակ՝ Պավելը, այնուամենայնիվ, մի կերպ հասավ վագոնի մեջտեղը։

— Ո՞ւր ես քշում, երի՛ցս անիծյալ,— բղավեց նրա վրա մի պարարտ մորաքույր, երբ Պավելը վերևից իջնելով՝ ոտքը դրեց նրա ծնկանը։ Մորաքույրն իր յոթփթանոց ամուսնին մարմնով խցկվել էր ներքևի մահճակալի մի անկյունը և ոտների արանքում պահում էր յուղի մի բիդոն։ Այդպիսի բիդոններ, արկղեր, պարկեր ու զամբյուղներ կային բոլոր մահճակալների վրա։ Վագոնում շունչ քաշել չէր լինում։

Մորաքրոջ հայհոյանքին Պավելը պատասխանեց հարցով.

— Ձեր տոմսը, քաղաքացուհի՛։

— Ի՞նչ,— կատաղեց նա անկոչ վերահսկիչի վրա։

Ամենավերին մահճակալից կախվեց ոճրագործի նմանող մեկի գլուխը և թավ ձայնով որոտաց.

— Վա՛սկա, ի՞նչ պտուղ է էստեղ երևացել։ Դրան մի «ռադ լինելու» ուղեգիր տուր։

Ուղիղ Կորշագինի գլխավերևում հայտնվեց նա, որն, ըստ երևույթին, Վասկան էր։ Մազոտ կրծքով հաղթանդամ մի տղա իր եղան աչքերը հառեց Կորշագինի վրա։

— Ի՞նչ ես կպել կնկան։ Ի՞նչ տոմս ես ուզում։

Կողքի մահճակալից կախվեցին չորս զույգ ոտներ։ Այդ ոտքերի տերերը նստել էին կրկված և եռանդով արևածաղկի սերմ էին շրթում։ Այս վագոնով, ըստ երևույթին, գնում էր հմուտ շարժիների, երկաթուղային փորձված կողոպտիչների համերաշխ մի ընկերություն։ Նրանց հետ գլուխ դնելու ժամանակ չկար։ Հարկավոր էր վագոն նստեցնել Ռիտային։

— Ո՞ւմ արկղն է սա,— հարցրեց նա մի տարիքավոր երկաթուղայինի՝ մատնացույց անելով լուսամուտի մոտի փայտե արկղը։

— Այ էն աղջկանը,— ցույց տվեց վերջինս շագանակագույն գուլպաներով հաստ ոտքերը։

Հարկավոր էր բաց անել լուսամուտը։ Արկղը խանգարում էր։ Ուրիշ տեղ դնելու տեղ չկար։ Արկղը ձեռքը վերցնելով՝ Պավելն այն հանձնեց տիրուհուն, որը նստած էր վերին մահճակին։

— Մի՛ բոպե պահեցեք, քաղաքացուհի, ես լուսամուտը բաց անեմ։

— Դու ի՞նչ ես ուրիշների իրերին ձեռք տալիս,— ճղռվեց տափակաքիթ աղջիկը, երբ Պավելը նրա ծնկանը դրեց արկղը։

— Մո՛տկա, էս քաղաքացին ո՞վ է, որ աղմուկ է բարձրացնում,— դիմեց նա իր հարևանի օգնությանը։

Վերջինս, առանց մահճակից իջնելու, սանդալ հագած ոտքով հարվածեց Պավելի մեջքին։

— Է՛յ, դու, ճաղատ հրեշ, քաշվիր էստեղից, քանի դեռ մի լավ չեմ հասցրել։

Պավելը լուռ տարավ մեջքին տրված քացին։ Շրթունքը կծելով, նա լուսամուտն էր բաց անում։

— Ընկե՛ր, մի կողմ քաշվիր մի քիչ,— խնդրեց նա երկաթուղայինին։

Տեղ ազատելով՝ մի կողմ քշեց ինչ-որ մեկի բիդոնը և ընդհուպ մոտեցավ լուսամուտին։ Ռիտան վագոնի մոտ էր և արագորեն նրան տվեց պայուսակը։ Պայուսակը նետելով բիդոնով կնոջ ծնկներին՝ Պավելը խոնարհվեց դեպի ներքև և բռնելով Ռիտայի ձեռքերից՝ նրան դեպի իրեն ձգեց։ Արգելակող ջոկատի կարմիրբանակայինը հազիվ էր նկատել կարգի այդ խախտումը և դեռ չէր հասցրել այն արգելել, իսկ Ռիտան արդեն վագոնում էր։ Ծանրաշարժ կարմիրբանակայինին ուրիշ ոչինչ չէր մնում, եթե ոչ հայհոյել ու հեռանալ լուսամուտից։ Վագոնում Ռիտայի հայտնվելը շարքիների ամբողջ ընկերության կողմից այնպիսի մի աղմուկ աղաղակով ընդունվեց, որ Ռիտան շփոթվեց և անհանգստացավ։ Նա կանգնելու տեղ չուներ և կանգնել էր ներքևի մահճակի ծայրին, բռնել վերինի բռնակը։ Ամեն կողմից հայհոյանք էր տեղում։ Վերևից թավ ձայնը վրա բերեց.

— Այ քեզ գարշելի, ինքը խցկվեց և աղջկան էլ է իր հետևից քաշում տալիս։

Իսկ անտեսանելի ինչ-որ մեկը վերևից ծվաց.

— Մո՛տկա, մի դրա աչքերի մեջտեղին հասցրու։

Աղջիկը փայտե արկղը Կորշագինի գլխին դրեց։ Ջորա կողմը օտար, լկտի դեմքեր էին։ Պավելը ցավում էր, որ Ռիտան այստեղ է, բայց պետք էր մի կերպ տեղավորվել։

— Քաղաքացի, տոպրակներդ ճանապարհի վրայից վերցրու, ընկերն այստեղ կկանգնի,— դիմեց նա այն մարդուն, որին Մոտկա էին ասում, բայց ի պատասխան այնպիսի մի ցինիկ նախադասություն ստացավ, որ ամբողջովին փրփրեց։ Աջ հոնքի վերևն սկսեց ստեպ-ստեպ և ցավագին շամփրել։— Սպասի՛ր, սրիկա՛, դու դրա համար դեռ ինձ պատասխան կտաս,— հավիվ իրեն զսպելով ասաց նա խուլիգանին, բայց անմիջապես էլ վերևից ոտքի մի հարված ստացավ գլխին։

— Վա՛սկա, էլի հասցրու դրան,— վրա ավելին ամեն կողմից։

Այն, ինչ այնպես երկար զսպում էր իր մեջ Պավելը, դուրս ժայթքեց, և, ինչպես միշտ այդպիսի բռնկումներին, նրա շարժումները դարձան հատու և դաժան։

— Դուք ի՞նչ է, գարշելի սպեկուլյանտներ, ծաղրո՞ւմ եք ինձ։— Զսպանակի նման ձգվելով ձեռքերի վրա՝ Պավելը բարձրացավ երկրորդ մահճակին և բռունցքով ուժգին հարվածեց Մոտկայի լկտի դեմքին։ Այնպիսի ուժով հարվածեց, որ սպեկուլյանտն ընկավ ինչ-որ մեկի գլխին։

— Ցա՛ծ թշնք մահճակներից, գարշելի սորտանե՛ր, թե չէ շան նման կգնդակահարեմ,— կատաղած բղավում էր Կորշագինը՝ թափահարելով նագանը քաղաքակի քթերի առաջ։

Գործը բոլորովին այլ ընթացք ստացավ։ Ռիտան ուշադիր դիտում էր ամեն ինչ և պատրաստ էր կրակելու յուրաքանչյուրի վրա, ով կփորձեր բռնել Կորշագինին։ Վերին մահճակն արագ մաքրվեց։ Ոճրագործի նմանող գլուխն շտապով տեղափոխվեց վագոնի հարևան բաժանմունքը։

Ռիտային նստեցնելով ազատ մահճակին՝ Պավելը նրան շշնջաց.

— Դու այստեղ նստիր, իսկ ես սրանց հետ հաշիվ կտեսնեմ։

Ռիտան նրան կանգնեցրեց.

— Մի՞թե էլի պիտի կռվես։

— Ո՛չ, ես հիմա կվերադառնամ,— հանդարտացրեց նա։

Լուսամուտը նորից բացվեց, և Պավելն այնտեղից կառամատույց իջավ։ Մի քանի րոպե հետո նա արդեն կանգնած էր գծամասի տրանսպորտային Չեկայի իր նախկին պետ Բուրմեյստերի սեղանի առաջ։ Լատիշը նրան լսելուց հետո կարգադրեց ամբողջ վագոնը բեռնաթափել, ստուգել բոլորի փաստաթղթերը։

— Սխր ասում էի, գնացքները կառամատույց են բերվում արդեն չարչիներով լեցուն,— փնթփնթում էր Բուրմեյստերը։

Մի տասնյակ չեկիստներից բաղկացած ջոկատն արդեն դատարկում էր վագոնը։ Պավելը հին սովորության համաձայն օգնեց ստուգելու ամբողջ գնացքը։ Չեկայից հեռանալով՝ նա չխզեց իր կապերն ընկերների հետ, իսկ երիտասարդական կոլեկտիվի քարտուղար եղած շրջանում գծամասի տրանսպորտային Չեկա աշխատելու էր ուղարկել լավագույն շատ կոմերիտականների։ Ստուգումը վերջացնելուց հետո Պավելը վերադարձավ Ռիտայի մոտ։ Վագոնը լիքն էր նոր ուղևորներով՝ գործուղվածներով և կարմիրբանակայիններով։

Երկրորդ յարուսի մի անկյունում էր միայն տեղ մնացել Ռիտայի համար։ Մնացած տեղերը բռնել էին լրագրերի կապոցները։

— Ոչինչ, մի կերպ կտեղավորվենք,— ասաց Ռիտան։

Գնացքը շարժվեց։

Լուսամուտից երևաց այն մորաքույրը՝ բազմած պարկերի կույտի վրա։

— Մա՜նկա, որտեղ է իմ բիդոնը,— լսվում էր նրա աղաղակը։

Նեղ տարածության վրա նստած, հարևաններից կապոցներով պատնեշված՝ Պավելն ու Ռիտան ախորժակով ուտում էին հացն ու խնձորը և ուրախ-ուրախ հիշում քիչ առաջվա ոչ այնքան էլ ուրախ միջադեպը։

Գնացքը դանդաղ սողում էր։ Ծանրաբեռնված, խախտված վագոնները ճռռալով ու ճարճատելով իրենց չոր թափքերով՝ ցնցվում էին կցվածքներում։ Երեկոն վագոն թափանցեց իր թանձր կապույտով։ Նրա հետևից գիշերն իր խավարը քաշեց բաց պատուհաններին։ Վագոնում մութ էր։

Հոգնած Ռիտան՝ գլուխը պայուսակին դրած, նիրհում է։ Պավելը նստել է թախտի ծայրին, կախ է գցել ոտքերը և ծխում է։ Նա ևս հոգնած է, բայց պառկելու տեղ չկա։ Լուսամուտից գիշերվա զովն է փչում։ Ցնցումից Ռիտան արթնացավ։ Նա նկատեց Պավելի ծխախոտի կրակը։ «Նս այդպես էլ մինչև առավոտ կարող է նստել։ Պարզ է, ինձ նեղել չի ուզում»,— մտածեց Ռիտան։

— Ընկե՛ր Կորշագին, դեն նետեք բուրժուական պայմանականությունները, պառկեցեք հանգստանալու,— կատակի տոնով ասաց նա։

Պավելը պառկեց նրա կողքին և հաճույքով մեկնեց իր ուռած ոտքերը։

— Վաղը մենք ահագին աշխատանք ունենք։ Քնի՛ր, ամբարի՛շտ,— Ռիտայի ձեռքը վստահությամբ գրկեց ընկերոջը, և ուղղակի այտի մոտ Պավելն զգաց նրա մազերի հպումը։

Նրա համար Ռիտան անձեռնմխելի էր։ Նա իր նպատակի բարեկամն ու ընկերն էր, իր քաղղեկը, և, այնուամենայնիվ, նա կին էր։ Կորշագինն այդ առաջին անգամ զգաց կամրջի մոտ, ահա թե ինչու նրան այդպես հուզում է աղջկա իրեն գրկելը։ Պավելն զգում էր նրա խոր, հանգիստ շնչառությունը, ինչ-որ բոլորովին մոտիկ տեղ են նրա շրթունքները։ Մոտիկությունից այդ շրթունքները գտնելու անհաղթահարելի մի ցանկություն առաջացավ։ Կամքը լարելով, նա ճնշեց այդ ցանկությունը։

Ռիտան, կարծես թե գուշակելով նրա զգացմունքները՝ մթության մեջ ժպտաց։ Նա արդեն ապրել էր և՛ կրքի բերկրանքը, և՛ կորուստի սարսափը։ Երկու բոլշևիկների էր տվել նա իր սերը։ Եվ երկուսին էլ խլել էին իրենից սպիտակգվարդիական գնդակները։ Մեկը՝ քաջարի մի հսկա, բրիգադի հրամանատար, մյուսը՝ պայծառ աչքերով մի պատանի։

Շուտով անիվների թիկթիկոցի տակ քնեց Պավելը։ Առավոտյան միայն նրան արթնացրեց շոգեքարշի մռնչյունը։

Ռիտան սկսեց ուշ վերադառնալ իր սենյակը։ Հազվագեպ բացվող տետրում երևացին էլի մի քանի կարճ գրանցումներ։

Օգոստոսի 11

Նահանգական կոնֆերանսն ավարտեցինք։ Ակիմը, Միխայլոն և ուրիշները մեկնեցին Խարկով՝ համաուկրաինակա-

նին մասնակցելու։ Տեխնիկական ամբողջ աշխատանքն ինձ վրա է ընկել։ Դուբավան ու Պավելը նահանգական կոմիտեի մանդատներ ստացան։ Այն օրից, ինչ Դմիտրիին ուղարկել են Պեչորսկի շրջկոմի քարտուղար, նա երեկոներն այլևս պարապմունքի չի գալիս։ Խրվել է աշխատանքի մեջ։ Պավելը դեռ փորձում է պարապել, բայց մերթ ես ժամանակ չունեմ, մերթ նրան են որևէ տեղ ուղարկում։ Երկաթուղագծում սրված գրությունն ստեղծվելու կապակցությամբ նրանց մոտ անընդհատ մոբիլիզացիաներ են։ Երեկ երեկոյան Ժարկին էր ինձ մոտ։ Դժգոհ է, որ նրանից տղաներ ենք վերցրել, ասում է, որ այդ տղաներն քրեն էլ անչափ հարկավոր են։

Օգոստոսի 23

Այսօր միջանցքով անցնում եմ, տեսնեմ գործերի կառավարչի դռանը կանգնած են Պանկրատովը, Կորշագինը և մի անծանոթ։ Մոտենում եմ։ Լսում եմ, որ Պավելը պատմում է.

«Այնտեղ այնպիսի տիպեր են նստած, գնդակահարես էլ չես ափսոսա։ «Դուք,— ասում է,— իրավունք չունեք մեր կարգադրություններին խառնվելու։ Այստեղ տեր ու տիրականը երկաթուղային անտառակոմն է և ոչ թե ինչ-որ կոմսոմոլ։ Իսկ նրա դունչը, եղբայրնե՛ր... Ահա թե որտեղ են նստել պարազիտները»։

Եվ ես լսեցի ընտրովի մի հայհոյանք։ Պանկրատովն ինձ տեսնելով՝ Պավելին հրեց։ Սա ետ շրջվեց, ինձ տեսնելով՝ գունատվեց։ Աչքերիս չնայելով՝ անմիջապես գնաց։ Այժմ ես երկար ժամանակ նրան ինձ մոտ չեմ տեսնի։ Չէ՞ որ նա գիտե, որ ես հայհոյանքը ոչ ոքի չեմ ներում։

Օգոստոսի 27

Բյուրոյի փակ նիստ էր։ Դրությունը բարդանում է։ Առայժմ ամեն ինչ լրիվ գրանցել չեմ կարող, չի կարելի։ Ակիմը գավառից եկավ մռայլ տեսքով։ Երեկ Տետերևի մոտ նորից խորտակել են պարենգնացքը։ Կարծեմ գրելը կթողնեմ, շարունակ կցկտուր եմ գրում։ Սպասում եմ Կորշագինին։ Տեսա նրան. Ժարկիի հետ հինգ հոգով կոմունա են կազմակերպում։

Ցերեկը արհեստանոցում Պավելին հեռախոսի մոտ կանչեցին։ Ռիտան հաղորդեց, որ ազատ երեկո ունի և կարելի է ավարտել «Փարիզի Կոմունայի ջախջախման պատճառները» թեմայի մշակումը։

Երեկոյան մոտենալով Կրուգլո-Ունիվերսիտետսկի փողոցի տան մուտքին՝ Պավելը վերև նայեց։ Ռիտայի լուսամուտը լուսավորված է։ Վաղելով բարձրացավ սանդուղքներով, ինչպես միշտ՝ բռունցքով խփեց դռանը և պատասխանի չսպասելով՝ ներս մտավ։

Մահճակալին, որի վրա տղաներից ոչ մեկը նստելու իրավունք անգամ չուներ, պառկած էր զինվորական համազգեստով մի տղամարդ։ Ատրճանակը, երթային պայուսակն ու աստղակիր գլխարկը դրված էին սեղանին։ Նրա կողքին և նրան ամուր գրկած նստած էր Ռիտան։ Նրանք ինչ-որ բանի մասին աշխույժ խոսում էին... Ռիտան դեպի Պավելը շրջեց իր ուրախ դեմքը։

Նրա գրկից ազատվելով՝ զինվորականը ոտքի կանգնեց։

— Ծանոթացե՛ք,— ասաց Ռիտան բարևելով Պավելին,— սա...

— Դավիդ Ուստինովիչ,— նրա փոխարեն պարզ կերպով ասաց զինվորականը՝ ամուր սեղմելով Կորշագինի ձեռքը։

— Նկավ, բոլորովին անսպասելի,— ծիծաղում էր Ռիտան։

Կորշագինը սառնորեն սեղմեց նրա ձեռքը։ Կայծքարի ցոլքի պես աչքերում փայլատակեց անլուր վիրավորանքը։ Դավիդի թևքի վրա հասցրեց տեսնել շորս քառակուսին։

Ռիտան ուզում էր խոսել, բայց Կորշագինը նրան ընդհատեց.

— Ես վաղեցի քեզ ասելու, որ այսօր աշխատում եմ նավահանգստում, փայտ ենք բեռնաթափում։ Որպեսզի չսպասես... Ի դեպ, դու էլ հյուր ունես։ Դե, ես գնացի, տղաները ներքևում սպասում են։

Պավելն անհետացավ դռան հետևում նույնչափ հանկարծակի, որչափ հանկարծակի հայտնվել էր։ Սանդուղքի վրա ակտիվային արագ քայլերը։ Ներքևում խուլ թխկաց դռտը։ Ամեն ինչ հանդարտվեց։

— Ինչ-որ բան է պատահել նրան,— անվստահ պատասխանեց Ռիտան Դավիդի տարակուսող հայացքին։

... Ներքևում, կամրջի տակ, խորունկ շունչ քաշեց շոգեքարշը՝ իր հուժկու կրծքից ոսկե լուսատտիկների մի պարս արձակելով։ Նրանց տարօրինակ շուրջպարը դեպի վեր նետվեց և ծխի մեջ հանգավ։

Ճաղաշարին հենված՝ Պավելը նայում էր սլաքների ազդանշանող լապտերների գույնզգույն լույսերի առկայծմանը։ Ապա կկոցեց աչքերը։

«Այնուամենայնիվ, անհասկանալի է, ընկե՛ր Կորչագին, ինչո՞ւ է ձեզ այդպես ցավ պատճառում այն հանգամանքը, որ Ռիտան ամուսին ունի։ Մի՞թե երբևէ նա ասել է, թե ամուսին չունի։ Դե, եթե նույնիսկ ասել է, դրանից ի՞նչ է բխում։ Ինչո՞ւ է դա ձեզ հանկարծ այդպես ցավ պատճառում։ Իսկ դուք չէ՞ որ կարծում էիք, թանկագին ընկե՛ր, որ գաղափարական բարեկամությունից բացի ոչինչ չկա... Ինչպե՞ս էիք այս աչքաթող արել, հը՞,— հեգնանքով ինքն իրեն հարցաքննում էր Կորչագինը։— Իսկ եթե հանկարծ նա ամուսինը չէ։ Դավիդ Ուստինովիչ կարող է լինել և՛ եղբայրը, և՛ հորեղբայրը... Այդ դեպքում, դու, խենթուկ, իզուր տեղն ես մարդու վրա գաղազել։ Դու էլ, ըստ երևույթին, նույն սրիկան ես, ինչպես ամեն մի տղամարդ։ Եղբայրը լինելու մասին կարելի է իմանալ։ Ենթադրենք, թե դա եղբայրն է կամ հորեղբայրը, այդ դեպքում ի՞նչ կասես նրան ա՛յ հենց այս մասին։ Ո՞չ, դու նրա մոտ այլևս չես գնա»։

Սուլիչի ձայնն ընդհատեց նրա մտքերի ընթացքը։

«Ուշ է, տուն գնալու ժամանակն է, հերիք ջուր ծեծենք»։

Սոլոմենկայում (այդպես էր կոչվում երկաթուղային բանվորական շրջանը) հինգ հոգով փոքրիկ մի կոմունա կազմակերպեցին։ Այդ հինգ հոգին էին՝ ժարկին, Պավելը, ուրախ շիկահեր չեխ Կլավիչեկը, դեպոյի կոմերիտական քարտուղար Օկունև Նիկոլայը և երկաթուղային Չեկայի գործակալ Ստյոպա Արտյուխինը, որը մինչև վերջերս միջին վերանորոգման կաթսայագործ էր։

Սենյակ ձեռք բերեցին։ Երեք օր աշխատանքից հետո ներկում էին, սպիտակեցնում, լվանում։ Դուլլերի մի այնպիսի իրարանցում էր, որ հարևանները հրդեհ ենթադրեցին։ Թախտեր շինեցին, զբոսայգու թխկիների տերևներով պարկերը լցրեցին ու դարձրին ներքնակ։ Եվ չորրորդ օրը Պետրովսկու նկարով և հսկայական մի քարտեզով զարդարված սենյակը փայլեց դեռ կուսական մի սպիտակությամբ։

Երկու լուսամուտների արանքում դրված էր մի դարակ՝ դրքերի կույտով։ Ստվարաթղթով պատած երկու արկղ— դրանք աթոռներ են։ Ավելի մեծ մի արկղ պահարանն է։ Սենյակի մեջտեղում մի ահագին բիլիարդ, առանց մահուդի։ Այդ բիլիարդը կոմունալ տնտեսությունից այստեղ են բերել իրենց ուսերի վրա։ Ցերեկը դա սեղան է, գիշերը՝ Կլավիչեկի մահճակալը։ Այստեղ տեղափոխեցին իրենց ունեցվածքը։ Տնտես Կլավիչեկը կազմեց կոմունայի ամբողջ ունեցվածքի ցուցակը և ուզում էր փակցնել պատին, բայց բոլորի համերաշխ բողոքից հետո դրանից հրաժարվեց։ Սենյակում ամեն ինչ ընդհանուր դարձավ։ Աշխատավարձը, մթերաբաժինը և պատահական ծախսերը՝ ամեն ինչ հավասարապես էին բաժանում։ Մասնավոր սեփականություն մնաց միայն զենքը։ Կոմունարները համերաշխ որոշում կայացրին. կոմունայի այն անդամը, որը կխախտի սեփականության վերացման օրենքը և կխաբի ընկերների վստահությունը, կվտարվի կոմունայից։ Օկունևը և Կլավիչեկը պնդեցին, որ ավելացվի նաև՝ և կհեռացվի սենյակից։

Կոմունայի բացմանը հավաքվեց շրջանային կոմսոմոլի ամբողջ ակտիվը։ Հարևան բակից տվել էին մի վիթխարի ինքնաեռ, և թեյի վրա սպառեցին սախարինի ամբողջ պաշարը, իսկ թեյը վերջանալուց հետո խմբովին որոտացին.

Անեղբ աշխարհը լի արցունքով,
Ամբողջ կյանքը մեր՝ ծանր աշխատանքով,
Բայց կգա, կգա օրն անխուսափելի...

Սխախոտի գործարանում աշխատող Տալյան դիրիժորուհին է անում։ Նրա կարմիր գլխաշորը թեթևակի մի կողմ է ծռվել, աչքերը կարծես չարաճճի տղայի աչքեր լինեն։ Դեռ ոչ ոքի չի հաջողվել մոտիկից դիտել այդ աչքերը։ Վարակիչ ծիծաղ ունի Տալյա Լագուտինան։ Փթթող պատանեկան հասակի տասնութերորդ աստիճանից է նայում աշխարհին ստվարաթղթից իրեր պատրաստող այս աղջիկը։ Դեպի վեր

է խոյանում նրա ձեռքը, և հնչում է երգը, ինչպես շեփորի ազդանշան.

Սլացիր հեռու, դու՝ մեր երգ,
Աշխարհի վրա մեր դրոշն է փողփողում։
Վառվում է նա ու պայծառ կարմրին տալիս,
Այդ մեր արյունն է կրակ դառած վառվում...

Ուշ ցրվեցին՝ իրենց կանչերի ձայներով արթնացնելով լուռ փողոցները։

Ժարկին ձեռքը մեկնեց հեռախոսին։

— Կամաց, տղերք, ոչինչ չի լսվում,— բղավեց նա ձայնեղ կոմերիտականներին, որոնք լցվել էին կուսքարտուղարի սենյակը։

Ձայները երկու տոնով իջան։

— Ես լսում եմ։ Հա, այդ դո՞ւ ես։ Այո՛, այո՛, այժմ։ Ծանուցագի՞ր։ Միշտ նույնն է՝ փայտ տեղափոխել նավահանգստից։ Ի՞նչ։ Ո՛չ, ոչ մի տեղ չի ուղարկված։ Այստեղ է։ Կանչե՞մ։ Լա՛վ։

Ժարկին մատով իր մոտ կանչեց Կորշագինին։

— Ընկեր Ուստինովիչն է քեզ կանչում։— Եվ հեռախոսափողը նրան հանձնեց։

— Ես կարծում էի, որ դու այստեղ չես։ Իմ երեկոն պատահաբար ազատ է։ Եղբայրս անցնելիս այցելության էր եկել ինձ, մենք երկու տարի իրար չէինք տեսել։

Եղբա՞յրը։

Պավելը նրա ասածը չէր լսում։ Հիշեց և՛ այն երեկոն, և՛ այն, ինչ նա որոշել էր հենց այդ ժամանակ կամրջի վրա։ Այո՛, հարկավոր է այսօր գնալ նրա մոտ և այրել կամուրջները։ Սերը շատ տագնապներ և վշտեր է բերում։ Մի՞թե հիմա սիրո մասին խոսելու ժամանակն է։

Ձայնը հեռախոսափողից.

— Դու ի՞նչ է, ինձ չե՞ս լսում։

— Ո՛չ, ո՛չ, ես լսում եմ։ Լավ։ Այո՛, բյուրոյից հետո։— Եվ ցած դրեց հեռախոսափողը։

Տղան ուղիղ աչքերին էր նայում և կաղնեփայտե սեղանի ծայրը սեղմելով՝ ասաց.

— Հավանորեն, այլևս քեզ մոտ գալ չեմ կարողանա։

Ասաց և տեսավ, թե ինչպես ցնցվեցին խիտ արտևանունքները։ Աղջկա մատիտը թղթի վրայի իր վազքը դադարեցրեց և անշարժ մնաց բաց տետրակի վրա։

— Ինչո՞ւ։

— Ավելի ու ավելի դժվար է դառնում ժամեր գտնելը։ Ինքդ էլ գիտես, ծանր օրեր են մեզ համար։ Ցավալի է, բայց ստիպված կլինենք հետաձգել...

Ինքն ականջ դրեց իր վերջին բառերին և զգաց նրանց անհաստատ լինելը։

«Ի՞նչ ես ջուր ծեծում։ Ուրեմն քաջություն չունե՞ս սրտիդ հարվածելու»։

Եվ Պավելը համառորեն շարունակեց.

— Բացի դրանից՝ վաղուց էի ուզում քեզ ասել, որ ես քեզ վատ եմ հասկանում։ Ա՛յ, երբ Սեգալն էր ինձ հետ պարապում, իմ գլխում ամեն ինչ մնում էր, իսկ քեզ հետ ոչինչ դուրս չի գալիս։ Ամեն անգամ քեզանից հետո գնում էի Տոկարևի մոտ, որպեսզի բան հասկանամ։ Գլուխս չի մտնում։ Դու ավելի խելացի մեկի հետ պարապիր։

Եվ նրա ուշադիր հայացքից խուսափելու համար երեսը շրջեց։

Փակելով աղջկա մոտ վերադառնալու ճանապարհը՝ համառորեն ավելացրեց.

— Եվ ահա ստացվում է, որ ես ու դու իզուր ժամանակ չպիտի կորցնենք։

Ոտքի ելավ, ոտքով զգուշորեն մի կողմ հրեց աթոռը և վերից վար նայեց աղջկա խոնարհած գլխին, լամպի լույսի տակ գունատված դեմքին։ Գլխարկը դրեց։

— Դե լավ, մնաս բարև, ընկեր Ռի՛տա։ Ցավում եմ, որ այդքան ժամանակ խաբել եմ քեզ։ Հարկավոր էր անմիջապես ասել։ Դա արդեն իմ հանցանքն է։

Ռիտան մեխանիկորեն ձեռքը տվեց նրան և նրա անսպասելի սառնությունից շշմած՝ կարողացավ միայն արտասանել.

— Ես քեզ չեմ մեղադրում, Պավե՛լ։ Քանի որ ես չեմ կարողացել մոտենալ քեզ և հասկանալի լինել, ուրեմն և արժանի եմ այսօրվանին։

Ոտքերը ծանր էին քայլում։ Առանց թրխկացնելու փակեց դուռը։ Մուտքի մոտ մի պահ կանգ առավ, դեռ կարելի է վերադառնալ, պատմել... ինչի՞ համար։ Նրա համար, որ արհամարհական մի խոսքով երեսիդ հարված ստանաս և նորի՞ց հայտնվես այս մուտքի մոտ։ Ո՛չ։

Փակուղիներում աճում էին քայքայված վագոնների և սառը շոգեքարշերի գերեզմանատները։ Քամին պտտեցնում էր փայտի դատարկ պահեստների մանր թեփը։

Իսկ քաղաքի շուրջը, անտառային շավիղներում, խորունկ կիրճերում թափառում էր Օուլիկի գիշատիչ բանդան։ Ցերեկները թաքնվում էր շրջակա խուտորներում, անտառային հարուստ մեղվանոցներում, իսկ գիշերը դուրս էր սողում դեպի ճանապարհները, իր ճիրաններով պեղում էր դրանք և, սոսկալի աշխատանք կատարելով, նորից իր ապաստարանն էր սողում։

Եվ հաճախ էին խորտակվում պողպատե նժույգները։ Փշուր-փշուր էին լինում արկղանման վագոնները, քնած մարդիկ խմորի պես տափակում էին, և արյան ու հողի հետ էր խառնվում թանկագին հացահատիկը։

Բանդան հարձակվում էր գավառակային խաղաղ ավանների վրա. փողոցից վախեցած կչկչոցով փախչում էին հավերը։ Թրխկում էր շար մի կրակոց։ Ոտքի տակ խշրտացող չոր ցախի պես ճռճռում էր կարճատև հրաձգությունը գավառային սովետի սպիտակ տան մոտ։ Կուշտ ձիեր հեծած բանդիտները դեսուդեն էին նետվում գյուղում և սրածում բռնված մարդկանց։ Սրածում էին սուլելով, ինչպես փայտ ջարդելիս։ Հազվադեպ էին կրակում, փամփուշտները խնայում էին։

Անհետանում էին նույնչափ արագ, որչափ արագ հայտնվել էին։ Բանդան ամեն տեղ իր աչքերը, իր ականջներն ուներ։ Այդ աչքերը շաղափում էին գավառային սովետի սպիտակ տնակը, հսկում էին նրան տերտերի բակից ու կուլակային լավ կառուցված խրճիթից։ Եվ դեպի այնտեղ՝ անտառային թավուտներն էին ձգում անտեսանելի թելերը։ Դեպի այնտեղ էին հոսում փամփուշտներ, թարմ խոզի մսի կտորներ, առաջին տեսակի օղու թխակապույտ շշեր և վերջապես այն, ինչը կամացուկ հաղորդվում էր կրտսեր ատամանների ականջին, իսկ հետո ամենաբարդ մի ցանցի միջոցով՝ իրենց՝ Օուլիկին։

Բանդայում ընդամենը երկու-երեք հարյուր թոկից փախածներ էին, բայց նրանց բռնել չէր լինում։ Մի քանի մասերի բաժանվելով՝ բանդան գործում էր միաժամանակ երկու-երեք գավառում։ Բոլորին շոշափել, գտնել չէր լինում։ Գիշերվա բանդիտը ցերեկը խաղաղ մի գյուղացի էր, որն իր բակում հողն էր փորում, ձիուն էր կեր տալիս և դարպասի մոտ քթի տակ ծիծաղելով ծծում իր չիբուխը՝ պղտոր հայացքով ուշադրություն հեծյալ պահակախմբերին։

Քունն ու հանգիստը կորցրած՝ Ալեքսանդր Պուզիրևսկին իր գնդով սրընթաց դեսուդեն էր նետվում երեք գավառներով։ Հետապնդելու իր համառության մեջ անխոնջ՝ նա երբեմն կոխ էր տալիս բանդայի պոչը։

Իսկ մի ամիս հետո Օուլիկը երկու գավառներից քաշեց իր ավազակախմբերին։ Նա թպրտում էր մի նեղ օղակում։

Քաղաքում կյանքն իր սովորական դանդաղ ընթացքով էր գնում։ Հինգ շուկաներում աղմուկ-աղաղակի մեջ վխտում էր խառնիճաղանջ ամբոխը։ Այստեղ իշխում էին երկու ձգտումներ. մեկը՝ ավելի շատ կորզելու ձգտումը, մյուսը՝ ավելի պակաս վճարելու։ Այստեղ իրենց ուժերի և ընդունակությունների ամբողջ թափով գործում էին տարբեր մասշտաբների սրիկաներ։ Լվերի պես թափառում էին հարյուրավոր ճարպիկ մարդուկներ, որոնց աչքերում կարելի էր ամեն ինչ տեսնել, բացի խղճից։ Այստեղ, ինչպես աղբակույտի մեջ, հավաքվել էր քաղաքի ամբողջ տականքը՝ ունենալով միայն մի ձգտում՝ «ճանկել» որչ նորելուկին։ Հազվադեպ գնացքներ իրենց արգանդից դուրս էին նետում պարկերով բեռնավորված մարդկանց խմբեր։ Ամբողջ այդ ամբոխը ուղևորվում էր դեպի շուկաները։

Եբեկյան շուկաները դատարկվում էին, և առևտրական նրբանցքների, դարակաթախտերի և կրպակների սև շարքերը վայրենացած էին թվում։

Ամեն համարձակ մարդ սիրտ չի անի գիշերով թափանցել այդ մեռած թաղամասը, ուր յուրաքանչյուր փայտե տնակի հետևում համր սպառնալիք կա։ Եվ քիչ չէր պատահում,

որ գիշերը թիթեղին խփվող մուրճի հարվածի պես թրխկա ատրճանակի կրակոցը, և արյունով լցվի ինչ-որ մեկի կոկորդը։ Իսկ մինչև հարևան պոստերից այստեղ կհասնի միլիցիոներների փոքրիկ խմբակը (մենակ չէին շրջում), ապա, բացի ջղաձգված դիակից, ուրիշ ոչ ոք չի լինի։ Գողերի խումբը «թաց» տեղից ով գիտե որքան է հեռու, իսկ բարձրացված աղմուկը քամու պես քշել է շուկայի թաղամասի գիշերային բոլոր բնակիչներին։ Այստեղ դիմացն է հենց «Օրիոն» կինոն։ Փողոցն ու մայթը լուսավորված են էլեկտրական լույսով։ Մարդիկ են խառնված։

Իսկ դահլիճում ճտճտում է կինոապարատը։ Էկրանի վրա անհաջող սիրահարները իրար են սպանում, և երբ նկարը կտրվում է, հանդիսականները վայրենի ոռնոցով են պատասխանում դրան։ Կենտրոնում և ծայրամասերում կարծես թե կյանքը իր գծած հունից դուրս չէր գալիս և նույնիսկ այնտեղ, որ հեղափոխական իշխանության ուղեղն էր,— նահանգական կոմիտեում,— ամեն ինչ սովորական ընթացքով էր գնում։ Բայց այդ միայն արտաքին հանգստություն էր։

Քաղաքում փոթորիկ էր հասունանում։

Այդ փոթորիկի մոտենալու մասին գիտեին շատերը նրանցից, որոնք քաղաք էին մտնում բոլոր ծայրերից՝ գեղջկական հագուստի տակ թաքցնել փորձելով մարտական հրացանը։ Գիտեին նաև նրանք, որոնք շարքու տեսքով գալիս էին գնացքների կտուրների վրա և հետո բռնում էին ոչ թե շուկայի ուղին, այլ պարկերը տանում էին իրենց հիշողության մեջ գրանցված փողոցներն ու տները։

Եթե սրանք գիտեին, ապա բանվորական թաղամասերը, նույնիսկ բոլշևիկները, չէին կռահում ամպրոպի մոտենալը։

Քաղաքում միայն հինգ բոլշևիկներ կային, որոնք գիտեին բոլոր այդ նախապատրաստությունների մասին։

Պետյուրականների մնացորդները, որոնց կարմիր բանակը քշել էր սպիտակ Լեհաստան, սերտ համագործակցելով Վարշավայի օտարերկրյա միսիաների հետ, պատրաստվում էին մասնակցել ենթադրվող ապստամբությանը։

Պետյուրական գնդերի մնացորդներից գաղտնաբար արշավախմբեր էին կազմավորվում։

Կենտրոնական ապստամբական կոմիտեն Շեպետովկայում ևս ուներ իր կազմակերպությունը։ Այդ կազմակերպության մեջ էին մտել քառասունյոթ մարդ, մեծ մասամբ անցյալի ակտիվ հակահեղափոխականներ, որոնց տեղական Չեկան դյուրահավատությամբ ազատ էր թողել։

Կազմակերպությունը ղեկավարում էին տեր Վասիլին, պրապորշչիկ Վիննիկը, պետյուրական սպա Կուզմենկոն։ Իսկ տերտերի աղջիկները, Վիննիկի եղբայրն ու հայրը և իրրև գործավար գործկոմ խցկված Սամոտիյան հետախուզությունն էին վարում։

Որոշված էր ապստամբության գիշերը ձեռքի նռնակներ նետել սահմանագծի Հատուկ բաժինը, ազատել ձերբակալվածներին և, եթե հաջողվի, գրավել կայարանը։

Մեծ քաղաքում, ապագա ապստամբության կենտրոնում, ամենախոր գաղտնապահությամբ տեղի էր ունենում սպայական ուժերի կենտրոնացումը, իսկ արվարձանային անտառներն էին հավաքվում բանդիտական ավազակախմբերը։ Այստեղից ստուգված «վայրի ցուլեր» էին ուղարկվում Ռուսինիա, հենց իր՝ Պետյուրայի մոտ։

Շրջանի Հատուկ բաժնում նավաստին արդեն վեցերորդ գիշերն էր, որ ոչ մի րոպե չէր քնում։ Նա այն բոլշևիկներից էր, որոնք ամեն ինչ գիտեին։ Ֆյոդոր Ժուխրայը այն մարդու զգացողությունն ուներ, որը հետևում է արդեն ցատկելու պատրաստ գիշատչին։

Բղավել, տագնապ առաջացնել չի կարելի։ Արնածարավ դազանը պետք է սպանվի։ Այն ժամանակ միայն հնարավոր կլինի հանգիստ աշխատել, առանց յուրաքանչյուր թփի տակ նայելու։ Դազանին վախեցնել չի կարելի։ Այստեղ, այս անհաշտ պայքարում հաղթանակ են բերում միայն մարտիկի տոկունությունը և նրա ձեռքի հաստատունությունը։

Ժամկետը մոտենում էր։

Ինչ-որ մի տեղ այստեղ, քաղաքում, գաղտնի հանդիպումների և կոնսպիրացիաների լաբիրինթոսում, որոշեցին՝ վաղը գիշերը։

Այն հինգ բոլշևիկները, որ գիտեին, կանխեցին։ Ո՛չ, այս գիշեր։

Երեկոյան անձայն, առանց սուլոցների, դեպոյից դուրս եկավ զրահագնացքը և նույնպես անձայն նրա հետևից փակվեց դեպոյի հսկայական դարպասը։

Ուղիղ հեռագրալարերը շտապեցին հաղորդել ծածկագիր հեռագրերը, և ամենուր, ուր թռչում էին այդ հեռագրերը, հանրապետության պահապանները քունը մոռացած՝ անվնաս էին դարձնում կրեմների բույնը։

Ժարկին հեռախոսի մոտ կանչեց Ակիմը։

— Բջջային ժողովներն ապահովվա՞ծ են։ Այո՞։ Լա՛վ։ Ինքդ այժմ կուսշրջկոմի քարտուղարի հետ խորհրդակցության եկ։ Վառելափայտի հարցն ավելի վատ է, քան մենք կարծում էինք։ Կգաս, կիսոսենք,— լսեց Ժարկին Ակիմի հաստատուն արագախոսությունը։

— Այո՛, փայտը շուտով բոլորիս կգժվեցնի,— փնթփնթաց նա՝ հեռախոսափողը վայր դնելով։

Երկու քարտուղարները դուրս եկան ավտոմեքենայից, որով նրանց բերեց Լիտկեն։ Երկրորդ հարկը բարձրանալով՝ նրանք անմիջապես հասկացան, որ բանը փայտը չէ։

Գործերի վարիչի սեղանին դրված էր «Մաքսիմը», նրա շուրջն էին խոնվել Զոն-ի (հատուկ նշանակման զորամասի) գնդացրորդները։ Միջանցքներում լուռ պահակներ՝ կուսակցության և կոմերիտմիության քաղաքային ակտիվից։ Նահանգական կոմիտեի քարտուղարի կաբինետում ավարտվում էր կուսակցության նահանգական կոմիտեի բյուրոյի արտակարգ նիստը։

Օդանցքի միջով փողոցից հեռախոսալարեր էին գալիս միանում երկու դաշտային հեռախոսներին։

Խլաձայն խոսակցություն է։ Ժարկին սենյակում գտավ Ակիմին, Ռիտային ու Միխայլոյին։ Ռիտան, ինչպես այն ժամանակ, երբ վաշտի քաղղեկ էր, կարմիրբանակայինի գլխարկով է, հագել է խակի գույնի յուրքա, կաշվե բաճկոնի վրայից ձգված է ծանր մաուզերի փոկը։

— Այս բոլորն ինչպե՞ս հասկանալ,— զարմացած հարցրեց նրան Ժարկին։

— Փորձնական տագնապ է, Վանյա՛։ Հիմա կգնանք ձեր շրջանը։ Տագնապի առիթով հավաքը հետևակի հինգերորդ դպրոցում է լինելու։ Ուղղակի բջջային ժողովներից տղաները շարժվում են այնտեղ։ Գլխավորն այն է, որ այդ բոլորն արվի աննկատ»,— պատմում էր Ռիտան Ժարկիին։

«Կադետական» պուրակում լռություն է։

Բարձր, լռակյաց կաղնիներ՝ դարավոր հսկաներ։ Նիրհած լիճ՝ պատած կռատուկի և ջրային եղինջի ծածկոցով։ Լայն, բարձիթողի արված ծառուղիներ։ Պուրակի մեջտեղում, բարձր սպիտակ պատից այն կողմ կադետական կորպուսի հարկերն են։ Այժմ այստեղ կարմիր հրամանատարների հինգերորդ հետևակային դպրոցն է։ Ուշ երեկո է։ Վերին հարկը լուսավորված չէ։ Արտաքուստ այստեղ ամեն ինչ հանգիստ է։ Շենքի կողքից անցնող յուրաքանչյուրը կմտածի, թե պատից այն կողմը քնած են։ Բայց այդ դեպքում ինչո՞ւ է բաց թուչե դարպասը և այդ ի՞նչ բաներ են դարպասի մոտ, նման երկու վիթխարի գորտերի։ Երկաթուղային շրջանի զանազան ծայրերից այստեղ եկող մարդիկ գիտեին, որ դպրոցում քնած լինել չեն կարող, քանի որ գիշերային տագնապ է բարձրացված։ Այստեղ էին գալիս ուղղակի բջջային ժողովներից, կարճ հաղորդումից հետո, գալիս էին առանց իրար հետ խոսելու, մեկ-մեկ և զույգ-զույգ, բայց երբեք մարդուց ոչ ավելի։ Նրանց գրպաններում անպայման գտնվում էին «Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության» կամ «Ուկրաինայի կոմունիստական երիտասարդություն միություն» խորագրերն ունեցող գրքույկներ։ Թուչե դարպասից ներս կարելի էր մտնել այդպիսի գրքույկ ցույց տալուց հետո միայն։

Ակտերի դահլիճում արդեն շատ մարդ կա։ Այստեղ լույս է։ Լուսամուտները վարագուրված են բրեզենտե վրաններով։ Տագնապի այս պայմանականությունների շուրջը կատակելով՝ այստեղ հավաքված բոլշևիկները հանգիստ ծխում են իրենց «այծապճեղները»։ Ոչ ոք ոչ մի տագնապ չի զգում։ Հենց այնպես, համենայն դեպս հավաքում են, որպեսզի հատուկ նշանակման զորամասերի կարգապահությունն զգացվի։ Բայց փորձված ճակատայինները դպրոցի բակը մտնելով ինչ-որ զգում են, որ սա պայմանական տագնապի այնքան էլ նման չէ։ Ջափից ավելի սուսուփուս է արվում ամեն ինչ։ Շշունջով ասված հրամանի համաձայն՝ լուռ շարժվում են կուրսանտների դասակները։ Ձեռքերի վրա դուրս են բերվում

գնդացիրները, և դրսից ամբողջ կորպուսում ոչ մի լույս չի երևում։

— Ինչ-որ լո՞ւրջ բան է, Միտյայ,— Դուբավային մոտենալով, ցածր ձայնով հարցրեց Կորշագինը։

Միտյայը նստել էր լուսամուտի գոգին, անծանոթ մի աղջկա կողքին։ Կորշագինը երկու օր առաջ հարևանցի տեսել էր նրան ժարկիի մոտ։

Դուբավան կատակով խփեց Պավելի ուսին։

— Ի՞նչ է, սիրտդ փո՞րդ ընկավ, ասում ես։ Ոչի՜նչ, մենք ձեզ կռվել կսովորեցնենք։ Դու ինչ է, ծանո՞թ չես սրա հետ,— գլխով աղջկա կողմը ցույց տվեց նա։— Անունը Աննա է. ազգանունը չգիտեմ, իսկ աստիճանը՝ ագիտացիոն բազայի վարիչ։

Ականջ դնելով Դուբավայի կատակով իրեն ներկայացնելուն՝ աղջիկը դիտում էր Կորշագինին։ Ուղղեց յասամանագույն գլխաշորի տակից դուրս եկած մազերի փունջը։

Հայացքը հանդիպեց Կորշագինի հայացքին. մի քանի վայրկյան տևեց մրցությունը։ Նրա մուգ աչքերը կայծկլտում էին, կարծես մարտահրավեր կարդալով։ Արտևանունքները թավ էին։ Պավելը հայացքը շրջեց դեպի Դուբավան։ Զգալով, որ կարմրում է, դժգոհ խոժոռվեց։

— Ձեզանից ո՞վ է ում ագիտացիա անում,— ջանալով ժպտալ՝ հարցրեց Պավելը։

Դահլիճում աղմուկ լսվեց։ Վաշտի հրամանատարը աթոռին բարձրանալով բղավեց.

— Առաջին վաշտի կոմունարնե՛ր, շարվել այս դահլիճում։ Արագ-արագ, ընկերնե՛ր։

Դահլիճ էին մտնում Ժուխրայը, նահանգական գործկոմի նախագահը և Ակիմը։ Նրանք հենց նոր էին եկել։ Դահլիճը լեփ-լեցուն էր շարք կանգնած մարդկանցով։

Նահանգական գործկոմի նախագահը կանգնեց վարժական գնդացրի հարթակի վրա և, ձեռքը բարձրացնելով, ասաց.

— Ընկերնե՛ր, մենք ձեզ այստեղ ենք հավաքել լուրջ և պատասխանատու գործի համար։ Այժմ կարելի է ասել այն, ինչ դեռ երեկ ասել չէր կարելի, քանի որ դա ռազմական մեծ գաղտնիք էր։ Վաղը դիշերը մեր քաղաքում, ինչպես նաև Ուկրաինայի այլ քաղաքներում, պետք է հակահեղափոխական ապստամբություն բռնկի։ Քաղաքը լցվել է սպաներով։ Քաղաքի շուրջն են համակենտրոնանում բանդիտական ավազակախմբերը։ Դավադիրներից ոմանք թափանցել են զրահադիվիզիան և աշխատում են այնտեղ որպես վարորդներ։ Բայց արտակարգ հանձնաժողովը դավադրությունը հայտնաբերել է, և այժմ մենք կզինենք ամբողջ կուսակազմակերպությունն ու կոմերիտմիությունը։ Կուրսանտներից փորձված զորամասերի և Չեկայի ջոկատների հետ համատեղ կգործեն կոմունիստական առաջին և երկրորդ գումարտակները։ Կուրսանտներն արդեն դուրս են եկել, այժմ ձեր հերթն է, ընկերնե՛ր։ Տասնհինգ րոպե է տրվում զենք ստանալու և շարք կանգնելու համար։ Օպերացիան կղեկավարի ընկեր Ժուխրայը։ Հրամանատարները նրանից ճշգրիտ ցուցումներ կստանան։ Ես ավելորդ եմ համարում կոմունիստական գումարտակին բացատրել այս մոմենտի լրջությունը։ Վաղվա խռովությունը մենք պետք է այսօր կանխենք։

Քառորդ ժամ հետո զինված գումարտակը շարվեց դպրոցի բակում։

Ժուխրայը հայացքով չափեց գումարտակի անշարժ շարքերը։

Շարքից երեք քայլ առաջ կանգնած են փոկերն ուսերին երկու հոգի. գումարտակի հրամանատար Մենյայլոն, մի հրսկա, Ուրալի ձուլող բանվոր, իսկ կողքին՝ կոմիսար Ակիմը։ Ձախում առաջին վաշտի դասակներն են։ Երկու քայլ առաջ՝ երկու հոգի՝ վաշտի հրամանատարն ու քաղղեկը։ Նրանց թիկունքում կոմունիստական գումարտակի լուռ շարքերն են։ Երեք հարյուր սվին։

Ֆյոդորը նշան տվեց։

— Դուրս գալու ժամանակն է։

Երեք հարյուրը քայլում էին ամայի փողոցներով։

Քաղաքը քնած էր։

Լվովսկի փողոցում, Դիկայա[1] փողոցի դիմաց գումարտակը կանգ առավ։ Այստեղ էին սկսվում նրա գործողությունները։

[1] Дикая — վայրի։

Թաղամասերը անձայն շղթայվում էին։ Շտաբը տեղավորվեց խանութի աստիճանների վրա։

Լվովսկի փողոցի վերևից, քաղաքի կենտրոնից, լուսարձակով լուսավորելով խճուղին, սլացավ մի ավտոմեքենա։ Շտաբի մոտ կանգ առավ։

Այս անգամ Լիտկեն բերեց իր հորը։ Պարեսը ցատկեց մայթին և լատիշերեն մի քանի հատու ֆրազներ նետեց որդուն։ Մեքենան առաջ նետվեց և մի ակնթարթում անհետացավ Դմիտրևսկի փողոցի անկյունում։ Գուգո Լիտկեն ամբողջովին տեսողություն է։ Ձեռքերը ձուլվել են ղեկանիվին՝ մերթ դեպի աջ են ուղղություն վերցնում, մերթ՝ դեպի ձախ։

Ահա թե որտեղ պետք եկավ նրա՝ Լիտկեի, կատաղի վազքը։ Ոչ ոքի մտքով չի անցնի երկու գիշերվա կալանք տալ նրան՝ խելահեղ պտույտների համար։

Եվ Գուգոն ասուպի նման թռչում է փողոցներով։

Ծոմբրայը, որին երիտասարդ Լիտկեն մի ակնթարթում քաղաքի մի ծայրից մյուս ծայրը նետեց, չէր կարող իր հավանությունը չարտահայտել։

— Եթե այսպիսի երթով այսօր ոչ ոքի գլուխը չուտես, վաղը ոսկի ժամացույց կստանաս, Գուգո՛։

Գուգոն հրճվում է։

— Իսկ ես կարծում էի մի տասը օրվա կալանք կստանամ պտույտներիս համար...

Առաջին հարվածներն ուղղվեցին դավադիրների շտաբի վրա։ Հատուկ բաժին բերվեցին առաջին կալանավորները և խլած փաստաթղթերը։

Դիկայա փողոցում, նույնպիսի տարօրինակ անուն կրող նրբափողոցի № 11 տունը ապրում էր Ցյուրբերտ աղգանունով ինչ-որ մեկը։ Ձեկայի տվյալների համաձայն նա փոքր դեր չէր խաղում սպիտակ դավադրության մեջ։ Նրա մոտ էին պահվում սպայական այն ջոկատների ցուցակները, որոնք պետք է գործեին Պոդոլի շրջանում։

Ինքը՝ Լիտկեն, Դիկայա եկավ՝ Ցյուրբերտին ձերբակալելու։ Լուսամուտներով այն այգուն նայող բնակարանում, որը նախկին կուսանոցից բաժանվում էր մի պատով։ Ցյուրբերտին չգտան։ Հարևանների ասածի համաձայն, նա այդ օրը տուն չէր վերադարձել։ Խուզարկություն կատարվեց։ Ձեռքի նոնակների մի արկղի հետ միասին գտան նաև ցուցակներն ու հասցեները։ Հրամայելով դարան մտնել՝ Լիտկեն մի բոպե կանգ առավ սեղանի մոտ և սկսեց աչքի անցկացնել գտած նյութերը։

Այգում ժամապահ էր կանգնած մի երիտասարդ կուրսանտ։ Նա տեսնում էր լուսավորված պատուհանը։ Հաճելի չէ այստեղ անկյունում կանգնելը, ահ է ազդում։ Նրան հրամայել են դիտել պատի կողմը։ Բայց այստեղից մինչև լուսամուտի հանգստացնող լույսը հեռու է։ Իսկ այդ սատանա լուսինն էլ այնքան հազվադեպ է լուսավորում։ Խավարի մեջ թփերը կենդանի արարածներ են թվում։ Կուրսանտը սվինով շոշափում է շուրջը։ Ամայություն է։

«Ինչո՞ւ են ինձ այստեղ կանգնեցրել։ Միևնույն է, ոչ ոք չի կարող պատի վրա բարձրանալ, բարձր է։ Գուցե մոտենամ լուսամուտի՞ն, նայե՞մ»։ Մի անգամ ևս դիտելով պատի գլուխը՝ նա դուրս եկավ բորբոսնած սնկի հոտ փչող անկյունից։ Մի բոպե կանգ առավ լուսամուտի մոտ։ Լիտկեն արագորեն թղթերն էր հավաքում և պատրաստվում էր սենյակից դուրս գալ։ Այդ բոպեին պատի գլխին մի ստվեր երևաց։ Այնտեղից մարդը տեսավ լուսամուտի տակի ժամապահին և մյուսին, որ գտնվում էր սենյակում։ Ստվերը կատվի ճարպկությամբ պատից անցավ ծառի վրա, հետո գետնին իջավ։ Կատվի նման գաղտագողի մոտեցավ իր զոհին, ձեռքը թափահարեց և կուրսանտը գետնին փռվեց։ Մինչև կոթը նրա վիզն էր խրված ծովային կարճ սրի շեղբը։

Այգուց լսվող կրակոցը էլեկտրական հոսանքի պես հարվածեց թաղամասը շղթայած մարդկանց։

Վեց հոգի սապոգները թխկթխկացնելով դեպի տունը վազեցին։

Արյունով ողողված գլուխը սեղանին դրած՝ բազկաթոռի մեջ նստած էր մեռած Լիտկեն։ Լուսամուտի ապակին ջարդված էր։ Թշնամին փաստաթղթերն այդպես էլ չէր կարողացել փրկել։

Վանքի պատի մոտ իրար ետևից կրակոցներ լսվեցին։ Դա մարդասպանն էր, որ փողոց ցատկելով՝ կրակոցներով պաշտպանվելով, նետվեց դեպի Լուկյանովսկի պարապուտները։

Բայց փախչել չկարողացավ, ինչ-որ մեկի գնդակը հասավ նրան։

Ամբողջ գիշերը համատարած խուզարկություններ եղան։ Տնային գրքույկներում չգրանցված, կասկածելի փաստաթղթեր ու զենք ունեցող մարդիկ Չեկա ուղարկվեցին։ Այնտեղ աշխատում էր ընտրություն կատարող հանձնաժողովը. տեսակավորում էր։

Մի քանի տեղ դավադիրները զինված դիմադրություն ցույց տվեցին։ Ժիլյանսկի փողոցում մի տան մեջ խուզարկություն կատարելիս տեղն ու տեղը սպանվեց Անտոշա Լեբեդևը։

Սոլոմենսկի դումարտակն այդ գիշեր հինգ մարդ կորցրեց, իսկ Չեկայից պակասեց Յան Լիտկեն՝ հին բոլշևիկը, հանրապետության հավատարիմ պահապանը։

Ապստամբությունը կասեցված է։

Այդ նույն գիշերը Շեպետովկայում ձերբակալեցին տեր Վասիլիին ու նրա աղջիկներին և մնացած գործակիցներին։

Տագնապն անցավ։

Բայց նոր թշնամի էր սպառնում քաղաքին՝ պողպատե ուղիների կաթվածը, իսկ նրա հետևից՝ սովն ու սառնամանիքը։

Հացն ու վառելափայտն էին որոշում ամեն ինչ։

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Ֆյոդորը մտախոհ բերանից հանեց կարճ ծխամորճը և մատներով զգուշորեն շոշափեց մոխրի կույտը։ Ծխամորճը հանգել էր։

Տասնյակ ծխախոտների սպիտակավուն ծուխը ամպի պես պտտվում էր անփայլ առաստաղի տակ, նահանգական գործկոմի նախագահի բազկաթոռի վերևում։ Սեղանի շուրջը և կաբինետի անկյուններում նստած մարդկանց դեմքերը կարծես մշուշի մեջ են։

Նահանգական գործկոմի նախագահի կողքին, կրծքով սեղանին ընկած, փռվել է Տոկարևը։ Ներուկը բարկացած քաշքշում է իր մորուքը, երբեմն խեթ նայում է ցածրահասակ ճաղատ մարդուն, որի բարձր տենորը շարունակում է հյուսել բազմաբառ, դատարկ ֆրազների օղակը։

Ակիմը նկատեց փականագործի խեթ հայացքը և հիշեց իր մանկությունը։ Նրանք տանն ունեին մի կովարար աքաղաղ՝ «Աչք հանող»-ը։ Նա էլ հարձակում գործելուց առաջ ճիշտ այդպես էր նայում։

Երկրորդ ժամն էր արդեն, որ շարունակվում էր կուսակցության նահանգական կոմիտեի նիստը։ Ճաղատ մարդը երկաթուղային անտառային կոմիտեի նախագահն էր։

Արագաշարժ մատներով քրքրելով թղթերի կույտը՝ ճաղատ մարդը վրա էր տալիս.

— ...Եվ ահա այս օբյեկտիվ պատճառները հնարավորություն չեն տալիս կատարելու նահանգական կոմիտեի և ճանապարհային վարչության որոշումը։ Կրկնում եմ, մի ամիս հետո էլ չենք կարող չորս հարյուր խորանարդ մետրից ավելի տալ։ Դե, իսկ հարյուր ութսուն հազար խորանարդ մետրի առաջադրանքը...— ճաղատը հարմար բառ էր որոնում,— ուտոպիա է։— Ասաց և շրթունքների վիրավորված մի ծալքով փակեց իր փոքրիկ բերանը։

Թվում էր, թե լռությունը շատ երկար տևեց։

Ֆյոդորը եղունգով խփում էր ծխամորճին, որպեսզի մոխիրը դուրս թափվի։ Կոկորդային զսպված բասով լռությունը խզեց Տոկարևը։

— Այստեղ որոճալու բան էլ չկա։ Երկաթուղու անտառային կոմիտեում փայտ չի եղել, չկա և այսուհետև էլ չի լինելու... Այդպես պետք է հասկանալ, այնպես չէ՞։

Ճաղատն ուսը ցնցեց։

— Ներողություն, ընկե՛ր, մենք փայտ մթերել ենք, բայց փոխադրական միջոցների բացակայությունը...— մարդը խեղդվելով հազաց, վանդակավոր թաշկինակով սրբեց ողորկ գլուխը և երկար ժամանակ ձեռքով գրպանը գտնել չկարողանալով՝ թաշկինակը նյարդայնորեն խրեց պորտֆելի տակ։

— Դուք ի՞նչ եք արել փայտը տեղ հասցնելու համար։ Չէ՞ որ դավադրությանը մասնակից ղեկավար մասնագետների ձերբակալությունից հետո շատ օրեր են անցել,— անկյունից ասաց Դեննեկոն։

Ճաղատը շրջվեց դեպի նա։

— Ես երեք անգամ ճանապարհի վարչությանը հաղորդել եմ, առանց տրանսպորտի անհնարին...

Տոկարևը ընդհատեց նրան։

— Այդ մենք արդեն լսել ենք,— թշնամական հայացքով խոցելով ճաղատին՝ թունոտ մի «հրմ» արեց փականագործը։— Դուք մեզ հիմարների տե՞ղ եք դնում, ի՞նչ է։

Այդ հարցից ճաղատի թիկունքով կարծես մրջյուններ վազեցին։

— Ես հակահեղափոխականների գործողությունների համար պատասխանատու չեմ,— արդեն մեղմ ձայնով պատասխանեց ճաղատը։

— Բայց դուք գիտեի՞ք, որ աշխատանքը ճանապարհից հեռու էին կազմակերպում,— հարցրեց Ակիմը։

— Լսել եմ, բայց ես չէի կարող ղեկավարությանը ցույց տալ ուրիշի տեղամասում կատարվող աննորմալությունները։

— Քանի՞ ծառայող ունեք,— հարց տվեց արհեստակցական խորհրդի նախագահը ճաղատին։

— Մոտ երկու հարյուր։

— Ամեն մի ձրիակերին տարեկան մի խորանարդ մետր,— կատաղած թքեց Տոկարևը։

— Մենք երկաթուղու անտառային ամբողջ կոմիտեին հարվածային մթերաբաժին ենք տալիս. բանվորներից ենք կտրում, իսկ դուք ինչո՞վ եք զբաղվում։ Ի՞նչ եք արել այն երկո՛ւ վագոն ալյուրը, որ ձեզ տվել ենք բանվորների համար,— շարունակեց արհխորհրդի նախագահը։

Ճաղատի վրա ամեն կողմից տեղում էին սուր հարցերը, իսկ նա դրանցից խուսափում էր այնպես, ինչպես կխուսափեն աներես պարտապաններից, որոնք պահանջում են մուրհակները վճարել։

Օձաձուկի պես խուսափում էր ուղղակի պատասխաններից, բայց հայացքը դեսուդեն էր պտտվում։ Ներքուստ զգում էր վտանգի մոտենալը։ Վախկոտ ներվայնությամբ միայն մի բան էր ցանկանում՝ շուտով այստեղից հեռանալ, գնալ այնտեղ, ուր կուշտ ընթրիքը պատրաստած իրեն է սպասում դեռևս երիտասարդ կինը՝ Պոլ դը Կոկի վեպով կարճելով երեկոն։

Զղջադարելով ունկնդրել ճաղատի պատասխանները՝ Ֆյոդորը գրեց բլոկնոտի մեջ. «Ես կարծում եմ, որ այս մարդուն ավելի խոր պիտի ուսումնասիրել, այստեղ պարզապես աշխատել չկարողանալ չէ։ Ինձ մոտ նրա մասին որոշ բաներ արդեն կան... Եկ նրա հետ խոսակցությունը դադարեցնենք. թող նա կորչի գնա, և գործի անցնենք»։

Նահանգական գործկոմի նախագահը կարդաց իրեն հանձնված տոմսը և գլխով արեց Ֆյոդորին։

Ժուխրայը վեր կացավ և դուրս եկավ միջանցք, հեռախոսի մոտ։ Երբ նա վերադարձավ, նահանգական գործկոմի նախագահը կարդում էր բանաձևի վերջը.

«...բացահայտ սաբոտաժի համար հանել երկաթուղային անտառկոմի ղեկավարությունը։ Անտառմշակման գործը հանձնել քննչական մարմիններին»։

Ճաղատն ավելի վատ բան էր սպասում։ Ճիշտ է, սաբոտաժի համար աշխատանքից հանելը կասկածի տակ է դնում նրա բարեհուսության հարցը, բայց դա դատարկ բան է, իսկ Բոյարկայի գործը, դե նա դրա համար հանգիստ է, դա նրա տեղամասում չէ։ «Թո՛ւ, սատանան տանի, ինձ թվաց, թե սրանք փորփրել և ինչ-որ բան են իմացել...»։

Թղթերը պորտֆելի մեջ հավաքելով և համարյա արդեն հանգստացած՝ նա ասաց.

— Ինչ արած, ես անկուսակցական մասնագետ եմ, և դուք իրավունք ունեք ինձ չվստահելու։ Բայց իմ խիղճը հանգիստ է։ Եթե ես չեմ արել, նշանակում է չեմ կարողացել։

Ոչ ոք չպատասխանեց նրան։ Ճաղատը դուրս եկավ, շտապ իջավ սանդուղքներից և թեթևության մի զգացումով բացեց փողոցի դուռը։

— Ձեր աղդանո՞ւնը, քաղաքացի,— հարցրեց նրան շինելով մի մարդ։

Ճաղատը սրտապատառ կմկմաց.

— Ձեր... վինսկի...

Նահանգական գործկոմի նախագահի կաբինետում, օտար մարդու հեռանալուց հետո, մեծ սեղանի շուրջը խմբվեցին տասներեք հոգին։

— Ա՛յ, տեսնում եք...— փռված քարտեզը մատով սեղմեց Ժուխրայը։— Ահա Բոյարկա կայարանը, անտառմշակման վայրից վեց կիլոմետրի վրա է։

Այստեղ կիտված է երկու հարյուր տասը հազար խորանարդ մետր փայտ։ Ութ ամիս աշխատել է աշխատանքային բանակը, ահագին աշխատանք է ծախսված, իսկ արդյունքը՝ դավաճանություն, երկաթուղին ու քաղաքն առանց փայտի են մնացել։ Այդ փայտը վեց կիլոմետրից պիտի բերել կայարան։ Դրա համար պետք է հինգ հազարից ոչ պակաս սայլ, որոնք պիտի աշխատեն ամբողջ մի ամիս, այդ էլ այն պայմանով, եթե օրական երկու անգամ գնան գան։ Ամենամոտ դյուղը տասնհինգ կիլոմետրի վրա է։ Ընդ որում՝ այս վայրերում է թափառում Օուիկն իր բանդայով... Հասկանո՞ւմ եք, թե դա ինչ է նշանակում... Նայեցե՛ք, ըստ պլանի փայտ կտրելը պետք է սկսվեր ահա թե որտեղ և ընթանար դեպի կայարան, իսկ այդ սրիկաները տարել են դեպի անտառի խորքը։ Ճիշտ հաշիվ է. չենք կարող մթերված փայտը երկաթուղուն մոտեցնել։ Եվ իսկապես, մենք հարյուր սայլ էլ չենք գտնի։ Ահա թե որտեղից հարվածեցին մեզ նրանք... Ա՜խ ապստամբության կոմիտեից փոքր բան չէ։

Ժուխրայի սեղմած բռունցքը ծանրորեն իջավ մոմաթղթին։ Տասներեքից յուրաքանչյուրը պարզ պատկերացնում էր վրա հասնող դրության ամբողջ սարսափը, որի մասին Ժուխրայը չասաց։ Զմեռ է դռանը։ Հիվանդանոցները, դպրոցները, հիմնարկությունները և հարյուր հազարավոր մարդիկ սառնամանիքի իշխանության տակ են, իսկ կայարանները կդառնան մարդկային մրջնանոցներ, գնացքը կշարժվի շաբաթը մի անգամ միայն։

Ամենքը խոր մտածմունքի մեջ ընկան։

Ֆյոդորը բռունցքը բացեց։

— Մի ելք կա, ընկերնե՛ր. երեք ամսվա ընթացքում կայարանից մինչև անտառամշակման վայրը նեղգիծ երկաթուղի կառուցել, յոթ վերստ, այն հաշվով, որ մեկուկես ամիս հետո արդեն նա հասած լինի այն տեղին, որտեղից սկսված է անտառ կտրելը։ Ես արդեն մի շաբաթ է, ինչ զբաղված եմ դրանով։ Դրա համար հարկավոր է,— Ժուխրայի շորացած կոկորդում ձայնը խզաց,— երեք հարյուր հիսուն բանվոր և երկու ինժեներ։ Ռելսեր և յոթ շոգեքարշ կա Պուշչե-Վոդիցայում։ Այդ ռելսերն ու շոգեքարշերը պահեստներից կոմերիտականներն են հայտնաբերել։ Պատերազմից առաջ այստեղից մինչև քաղաք նեղգիծ երկաթուղի են ուզել անցկացնել։ Բայց Բոյարկայում բանվորներն ապրելու տեղ չունեն. միայն մի ավերակ կա՝ անտառային դպրոցը։ Բանվորներին ստիպված պիտի լինենք խումբ-խումբ ուղարկել երկուական շաբաթով, ավելին չեն դիմանա։ Կոմերիտականներին այնտեղ չուղարկե՞նք, Ակի՛մ։

Եվ առանց պատասխանի սպասելու շարունակեց.

— Կոմերիտմիությունն այնտեղ կնետի ամեն ինչ, ինչ-որ կարող է. նախ՝ Սոլոմենսկի կազմակերպությունը և քաղաքի կազմակերպության մի մասը։ Շատ դժվար խնդիր է. բայց եթե պատմենք տղաներին, թե դա կփրկի քաղաքը և երկաթուղին, նրանք կանեն։

Երկաթուղու պետն անվստահությամբ գլուխը տարուբերեց։

— Հազիվ թե դրանից բան դուրս գա։ Այժմվա պայմաններում, աշուն, անձրևներ, հետո սառնամանիք, մերկ տեղում յոթ վերստ ճանապարհ կառուցել,— հոգնած ասաց նա։

Առանց գլուխը նրա կողմը շրջելու՝ Ժուխրայն ասաց.

— Դու ավելի լավ պիտի նայած լիներիր անտառամշակմանը, Անդրեյ Վասիլևիչ։ Առբերման ուղին մենք կկառուցենք։ Հո ձեռքներս ծալած չե՞նք սառչելու։

Գործիքների վերջին արկղերը բարձված են։ Գնացքի բրիգադը իր տեղերը գրավեց։ Բարակ անձրև էր մաղում։ Ռիտայի՝ թացությունից փայլող բաճկոնի վրայից ապակու հատիկների նման գլորվում էին անձրևի կաթիլները։ Տոկարևին հրաժեշտ տալով՝ Ռիտան ամուր սեղմեց նրա ձեռքը և մեղմ ձայնով ասաց.

— Հաջողություն ենք ցանկանում։

Ծերուկը սպիտակավուն հոնքերի ծոպերի տակից ջերմությամբ նայեց նրան։

— Այո՛, խառը գործի մեջ գցեցին մեզ, վառվի նրանց սիրտը,— փնթփնթաց նա՝ բարձրաձայն պատասխանելով իր մտքերին։— Էստեղ լավ նայեցեք։ Եթե որևէ բան խառնվի, որտեղ պետքն է, սեղմեցեք։ Ախր էդ անպետքներն առանց քաշքշուկի չեն կարող աշխատել։ Դե, նստելու ժամանակն է, աղջիկս։

Ներունին պիջակն ամուր վրա քաշեց։ Վերջին բոպեին Ռիտան իբր թե պատահմամբ հարցրեց.

— Մի՞թե Կորշագինը ձեզ հետ չի գալիս։ Տղաների մեջ նա չի երևում։

— Նա երեկ տեխնիկական ղեկավարի հետ դրեզինով գնաց, որ մինչև մեր գնալը որոշ բաներ նախապատրաստի։

Կառամատույցով շտապով դեպի նրանց կողմն էին գալիս Ժարկին, Դուբավան, իսկ նրանց հետ, ժակետն անփութորեն ուսերին գցած, հանգած ծխախոտը բարակ մատների արանքում՝ Աննա Բորխարտը։

Նայելով մոտեցողներին՝ Ռիտան մի վերջին հարց էլ տվեց.

— Ինչպե՞ս են ընթանում ձեր պարապմունքները Կորշագինի հետ։

Տոկարևը զարմացած նրան նայեց։

— Ի՞նչ պարապմունք, չէ որ տղան քո խնամակալության տակ է։ Նա շատ անգամ է ինձ ասել քո մասին։ Գովելուց չի կշտանում։

Ռիտան անվստահությամբ էր ականջ դնում նրա խոսքերին։

— Այդպե՞ս է, արդյոք, ընկեր Տոկարև։ Չէ՞ որ նա ինձանից հետո քեզ մոտ էր գալիս նորից սովորելու։

Ներունին ծիծաղեց։

— Ի՞նձ մոտ... Ես նրա երեսն էլ չեմ տեսել։

Շոգեքարշը մռնչաց։ Կլավիչեկը վագոնից բղավում էր.

— Ընկե՛ր Ուստինովիչ, բաց թող մեր պապաշային, այդպես չի կարելի։ Առանց նրան ի՞նչ պիտի անենք։

Ջեխն էլի ինչ-որ բան էր ուզում ասել, բայց, տեսնելով երեք մոտեցողներին՝ լռեց։ Մի վայրկյան հայացքը հանդիպեց Աննայի անհանգիստ փայլող աչքերին, տխրությամբ որսաց նրա հրաժեշտի ժպիտը Դուբավային և ընդոստ հեռացավ լուսամուտից։

Աշնան անձրևը մարդու դեմքն էր ձաղկում. մուգ գորշ խոնավությունից ուռած ամպերը սողում էին ներքևում, երկրի վրա։ Ուշ աշունը մերկացրել էր անտառը, խոժոռ կանգնած էին ծերուկ բոխիները՝ իրենց կեղևի կնճիռները թաքցնելով թուխ մամուռի տակ։ Անխիղճ աշունը պոկել էր նրանց ճոխ զգեստները, և նրանք կանգնած էին մերկ ու բարակ։

Անտառի մեջ միայնակ ապաստանել է փոքրիկ կայարանը։ Ապրանքային քարե պլատֆորմից դեպի անտառ էր գնում փխրունացած հողի մի շերտ։ Մարդիկ մրջյունների պես վրխտում էին այնտեղ։

Մածուցիկ կավն անախորժ չփչփում էր կոշիկների տակ։ Մարդիկ կատաղի թափով փորում էին հողաթմբի մոտ։ Խուլ զրնգում էին նիգերը։ Քարերն էին քերում բահերը։

Իսկ անձրևը մաղում էր ասես խիտ մաղից, և սառը կաթիլները հագուստից ներս էին թափանցում։ Անձրևը քշում տանում էր մարդկանց աշխատանքը։ Թանձր շիլայի պես կավը սահում իջնում էր հողաթմբից։

Ծանր ու սառն է մինչև վերջին թելը՝ թրջված հագուստը. սակայն մարդիկ աշխատանքը թողնում էին միայն ուշ երեկոյան։

Եվ օրեցօր փորփրած ու փխրացրած հողաշերտը ավելի ու ավելի հեռուն էր գնում անտառում։

Կայարանից ոչ հեռու մոայլ կոացել էր շենքի քարե կմախքը։ Ամեն բան, ինչ կարելի էր պոկել, հանել կամ պայթեցնել, այդ բոլորը վաղուց արդեն կողոպտել էր հափշտակիչի ձեռքը։ Լուսամուտների և դռների փոխարեն անցքեր են. վառարանների դռնակների փոխարեն՝ սև խոռոչներ։ Պոկոտված կտուրի անցքերի միջից երևում են տանիքի գերանների կողերը։

Անձեռնմխելի մնացել են միայն չորս ընդարձակ սենյակների բետոնե հատակները։ Գիշերը այդ հատակներին էլ պառկում էին մինչև վերջին թելը թրջված և ցեխոտված հագուստներով չորս հարյուր հոգին։ Դռների մոտ մարդիկ քամում էին իրենց հագուստները, նրանցից կեղտոտ առվակներ էին հոսում։ Ընտրովի հայհոյանքներ էին թափում նրանք անիծյալ անձրևի և ճահճի հասցեին։ Խիտ շարքերով պառկում էին մի քիչ հարդ ցանած բետոնե հատակին։ Մարդիկ աշխատում էին իրար տաքացնել։ Հագուստից գոլորշի էր բարձրանում, բայց չէր չորանում։ Իսկ լուսամուտների շրջանակներին փակցրած պարկերի միջից ջուրը հոսում էր հատակին։ Անձրևը խիտ կոտորակի պես թափվում էր կտուրի թիթեղի մնացորդներին, իսկ ճեղքված դռներից փչում էր քամին։

Առավոտյան թեյ էին խմում խարխուլ բարաքում, ուր խոհանոցն էր, և գնում էին դեպի հողաթումբը։ Ճաշին ուտում էին իր միատեսակությամբ սպանիչ պասուց ոսպ, մեկուկես ֆունտ անտրացիտի նման սև հաց։

Այս էր այն բոլորը, ինչ քաղաքը կարող էր տալ։

Չոր-չոր, բարձրահասակ, այտերին երկու խորունկ կնճիռներով տեխնիկական ղեկավարը՝ Վալերիան Նիկոդիմովիչ Պատոշկինը և տեխնիկ Վակուլենկոն՝ ամրակազմ, կոպիտ կերտված դեմքին մսեղ քթով մի մարդ, տեղավորվել էին կայարանի պետի բնակարանում։

Տոկարևը գիշերում էր կայարանի չեկիստ Խոլյավայի սենյակում։ Խոլյավան կարճ ոտքերով, սնդիկի նման շարժուն մի մարդ էր։

Շինարարական ջոկատը կատաղի մի համառությամբ էր տանում զրկանքները։

Հողաթումբն օրեցօր ավելի էր դեպի անտառի խորքը գնում։

Ջոկատն արդեն ինը դասալիք էր հաշվում։ Մի քանի օր հետո հինգ հոգի էլ փախան։

Շինարարությունն առաջին հարվածն ստացավ երկրորդ շաբաթվա մեջ. երեկոյան գնացքով քաղաքից հաց չեկավ։

Դուբավան Տոկարևին արթնացրեց և հաղորդեց այդ մասին։

Կուսակցության կոլեկտիվի քարտուղարը, մազոտ ոտները հատակին իջեցնելով, կատաղորեն քորել սկսեց իր անութը։

— Խաղերն սկսվում են,— փնթփնթաց նա քթի տակ, արագ-արագ հագնվելով։

Սենյակ գլորվեց գնդաձև Խոլյավան։

— Վա՛ղ տուր դեպի հեռախոսը և կապվիր Հատուկ բաժնի հետ,— հրամայեց նրան Տոկարևը։— Իսկ դու ոչ ոքի հացի մասին ոչ մի բառ չասես,— նախազգուշացրեց Դուբավային։

Գծային հեռախոսավարների հետ կես ժամ կռիվ տալուց հետո համառ Խոլյավան կարողացավ կապվել Հատուկ բաժնի վարիչի տեղակալ Ժուխրայի հետ։ Նրա հայհոյանքները լսելով՝ Տոկարևն անհամբեր մի ոտքից մյուսին էր հենվում։

— Ի՞նչ։ Հա՞ց չեն բերել։ Ես հիմա կիմանամ, թե այդ ով է արել,— սպառնագին որոտաց Ժուխրայը հեռախոսափողում։

— Դու ինձ ասա, վաղը մենք մարդկանց ինչո՞վ ենք կերակրելու,— բարկացած բղավում էր Տոկարևը հեռախոսափողի մեջ։

Ժուխրայն ըստ երևույթին ինչ-որ բան էր խորհում։ Երկարատև լռությունից հետո կուսակցական կոլեկտիվի քարտուղարը լսեց.

— Գիշերը հաց կհասցնենք։ Ես կուղարկեմ Լիտկեի մեքենայով, նա ճանապարհը գիտե։ Առավոտվա դեմ դուք հաց կունենաք։

Լույսը հազիվ բացված՝ կայարանին մոտեցավ ամբողջովին ցեխոտված մեքենան՝ հացի պարկերով բեռնավորված։ Մեքենայից հոգնած տեսքով դուրս եկավ անքուն գիշեր անցկացնելուց գունատ Լիտկե-որդին։

Գծի կառուցման համար պայքարը սրվում էր։ Ճանապարհի վարչությունից հաղորդեցին, թե կոճափայտ չկա։ Քաղաքում միջոցներ չէին գտնում ռելսերն ու փոքրիկ շոգեքարշերը շինարարության վայրը փոխադրելու, իսկ շոգեքարշերն էլ, պարզվում էր, որ զգալի նորոգման կարիք ունեն։ Առաջին խումբն իր աշխատանքը վերջացնում էր, բայց հերթափոխ չկար, իսկ իրենց բոլոր ուժերն սպառած մարդկանց էլի պահելն անհնարին էր։

Հին բարաքում, ծխացող ճրագի լույսի տակ, մինչև ուշ գիշեր խորհրդակցում էր ակտիվը։

Առավոտյան Տոկարևը, Դուբավան, Կլավիչեկը քաղաք գնացին՝ իրենց հետ տանելով ևս վեց հոգու, որպեսզի շոգեքարշերը նորոգեն և ռելսերը բերեն։ Պրոֆեսիայով հացթուխ Կլավիչեկն ուղարկվեց մատակարարման բաժին, որպես հսկիչ աշխատելու, իսկ մյուսները՝ Պուշչե-Վոդիցա։

Իսկ անձրևն անընդհատ տեղում էր։

Կորչագինը մածուցիկ կավից դժվարությամբ դուրս քաշեց ոտքը և թաթում զգացած սուր ցրտից հասկացավ, որ կոշիկի փտած ներբանը բոլորովին է պոկվել։ Այստեղ գալու օրից ի վեր նա տանջվում էր մաշված կոշիկների պատճառով, որոնք միշտ թաց էին և ցեխ էին չմփացնում։ Այժմ ներբաններից մեկը բոլորովին պոկվեց, և մերկ ոտքը քայլում էր կտրող սառնություն ունեցող կավե շիլայի միջով։ Կոշիկը նրան շարքից դուրս բերեց։ Ցեխից դուրս քաշելով ներբանի

մնացորդը՝ Պավելը հուսահատորեն նայեց վրան և խախտեց ինքն իրեն տված խոստումը՝ չհայհոյել։ Կոշիկի մնացորդով գնաց բարաք։ Նստեց շարժական խոհանոցի մոտ, բացեց ամբողջովին ցեխոտված փաթաթանը և դեպի վառարանը մեկնեց ցրտից փայտացած ոտքը։

Օդարկան՝ երկաթուղու պահակի կինը, որին խոհարարը իրեն օգնական էր վերցրել, խոհանոցի սեղանի վրա ճակնդեղ էր կտրատում։ Բնությունն այդ դեռ երիտասարդ կնոջն ամեն ինչ առատորեն էր շնորհել. տղամարդու պես թիկնեղ, հսկայի կրծքով, պիրկ ու հզոր ազդրերով այդ կինը ճարպկորեն էր բանեցնում դանակը, և սեղանի վրա արագորեն աճում էր կտրտված բանջարեղենի կույտը։

Օդարկան անփույթ մի հայացք նետեց Պավելի վրա և անբարյացակամորեն հարցրեց.

— Դու ի՞նչ է, ճաշելո՞ւ ես եկել։ Շուտ չի՞։ Ա՛յ տղա, ջինի աշխատանքից ծլկել ես։ Ոտքերդ ո՞ւր ես խոթում։ Էստեղ խոհանոց է, ոչ թե բաղնիք,— կշտամբում էր նա Կորշագինին։

Ներս մտավ տարիքոտ խոհարարը։

— Կոշիկս ցաք ու ցրիվ եկավ,— բացատրեց Պավելն իր ներկայությունը խոհանոցում։

Խոհարարը դիտեց այլանդակված կոշիկը և գլխով ցույց տվեց Օդարկային։

— Սրա ամուսինը կիսով չափ կոշկակար է, նա կարող է ձեզ օժանդակել, թե չէ առանց կոշիկի կորած եք։

Խոհարարին ականջ դնելով՝ Օդարկան ուշադիր նայեց Պավելին և մի քիչ շփոթվեց։

— Իսկ ես ձեզ լոդրի տեղ դրեցի,— խոստովանեց նա։

Պավելը ներողամտաբար ժպտաց։ Օդարկան գիտակ մարդու հայացքով զննեց կոշիկը։

— Ամուսինս սա չի կարկատի, միտք չունի, իսկ որպեսզի ոտքդ չհաշմես, ես մի հին կրկնակոշիկ կբերեմ, մեզ մոտ մի այդպիսին ընկած է։ Որտեղ է տեսնված, որ մարդ էսպես տանջվի։ Այսօր-վաղը սառնամանիքը վրա կտա, կկորչեք,— արդեն զգացված ասաց Օդարկան և դանակը ցած դնելով՝ դուրս գնաց։

Շուտով նա վերադարձավ մի խոր կրկնակոշիկ և մի կտոր կտավ ձեռքին։ Երբ կտավի մեջ փաթաթված ու տաքացած

ոտքը տեղավորվեց տաք կրկնակոշիկի մեջ, Պավելը լուռ շնորհակալությամբ նայեց պահակի կնոջը։

Տոկարևը քաղաքից վերադարձավ գրգռված, ակտիվը հավաքեց Խոլյավայի սենյակում և տխուր լուրեր հաղորդեց նրան։

— Ամեն տեղ արդելքներ են։ Ուր էլ նետվում ես, ամեն տեղ էլ դատարկ ջուր են ծեծում։ Ինչպես երևում է, էդ սպիտակ սագերին քիչ ենք որսացել, դեռ բավական կան,— զեկուցում էր ծերունին հավաքվածներին։— Ես, տղանե՛ր, պատրաստ կասեմ, գործերս վատ է։ Երկրորդ հերթափոխը դեռ չեն հավաքել, իսկ թե ինչքան մարդ կուղարկեն, անհայտ է։ Սառնամանիքն ուր որ է, վրա կհասնի։ Մինչև այդ, թեկուզ մեռնենք, հարկավոր է ճահիճն անցնել, թե չէ հետո գետինն ատամներով էլ չես կրծի։ Դե ուրեմն լդպես, տղանե՛ր, քաղաքում կվերցնեն մեջտեղից բոլոր նրանց, որոնք էնտեղ խառնում են. իսկ մենք էստեղ պիտի արագությունը կրկնապատկենք։ Թեկուզ հինգ անգամ սատկենք, բայց գիծը հարկավոր է կառուցել։ Թե չէ էլ ինչ բոլշևիկներ ենք, պարզապես ցեխ ենք, էլի,— ասում էր Տոկարևը ոչ թե իր համար սովորական խռպոտ բասով, այլ լարված պողպատե ձայնով։ Խոժոռված հոնքերի տակից փայլող աչքերը խոսում էին վճռականության և համառության մասին։

— Այսօր ևեթ դոնփակ ժողով կհրավիրենք, մերոնց կբացատրենք, և վաղը բոլորս աշխատանքի դուրս կգանք։ Առավոտյան անկուսակցականներին ազատ ենք արձակում, իսկ ինքներս մնում ենք։ Ահա նահանգական կոմիտեի որոշումը,— նա Պանկրատովին հանձնեց քառածալ մի թերթ։

Բեռնող բանվորի ուսի վրայից Կորշագինը կարդաց. «Անհրաժեշտ համարել կոմերիտմիության բոլոր անդամներին շինարարության վրա թողնելը, նրանց փոխարինումը թույլատրել առաջին փայտն ստանալուց հետո միայն։ Կոմերիտմիության նահանգական կոմիտեի քարտուղարի փոխարեն՝ Ռ. Ուստինովիչ»։

Նեղ բարաքը լեփ-լեցուն էր։ Հարյուր քսան մարդ լցվել

են բարաքը։ Կանգնել են պատերի տակ, բարձրացել են սեղաններին և նույնիսկ շարժական խոհանոցի վրա։

Ժողովը բաց է անում Պանկրատովը։ Տոկարևը երկար չի խոսում, բայց նրա ճառի վերջը հարվածում է բոլորին.

— Վաղը կոմունիստներն ու կոմերիտականները քաղաք չեն վերադառնա։

Մերուկի ձևքն օդում ընդգծեց որոշման ամբողջ անխախտելիությունը։ Այդ շարժումը քաղաք, յուրայինների մոտ վերադառնալու, այս կեղտից դուրս պրծնելու բոլոր հույսերը դեն շպրտեց։ Առաջին բոպկին աղաղակների միջից ոչինչ չէր կարելի հասկանալ։ Մարմինների շարժումից անհանգիստ թարթել սկսեց կիսակույր ճրագը։ Խավարը թաքցնում էր մարդկանց դեմքերը։ Ձայների աղմուկն աճում էր, ոմանք երաշանքով խոսում էին «տան հանգստակեցության» մասին, ուրիշները վրդովվում, հոգնածության մասին էին աղաղակում։ Շատերը լուռ էին։ Եվ միայն մեկը հայտարարեց դասալիք դառնալու մասին։ Նրա գրգռված ձայնն անկյունից նետում էր հայհոյանքի հետ խառը բառերը.

— Գրողի ծոցը։ Ես այստեղ մի օր էլ չեմ մնա։ Մարդկանց տաժանակրության են ուղարկում, բայց գոնե ոճրագործության համար։ Իսկ մեզ ինչի՞ համար։ Երկու շաբաթ պահեցին մեզ, հերիք է։ Այլևս հիմարներ չկան։ Ով որ որոշել է, թող ինքը գա և կստուգի։ Ով ցանկանում է, թող քարշ գա այս կեղտի մեջ, իսկ ես մի կյանք ունեմ, ես վաղը գնում եմ։

Օկունևը, որի թիկունքում էր կանգնած աղմկողը, լուցկին վառեց, որպեսզի տեսնի դասալիքին։ Լուցկին մի ակնթարթ խավարից խլեց չար ծամածռությամբ աղավաղված դեմքը և բաց բերանը։ Օկունևը ճանաչեց. նահանգական կարանտինի հաշվապահի տղան էր։

— Ի՞նչ ես նայում։ Ես չեմ թաքնվում, գող չեմ։

Լուցկին հանգավ։ Պանկրատովը ամբողջ հասակով բարձրացավ։

— Այդ ո՞վ է այնտեղ վայրահաչում։ Այդ ո՞ւմ համար է կուսակցական առաջադրանքը տաժանակրություն,— խուլ ձայնով ասաց նա՝ ծանր հայացքով դիտելով մոտ կանգնածներին։— Եղբայրնե՛ր, մենք քաղաք գնալ ոչ մի կերպ չենք կարող, մեր տեղն այստեղ է։ Եթե մենք այստեղից ծլկենք, մարդիկ կսառչեն։ Եղբայրնե՛ր, ինչքան շուտ վերջացնենք, այնքան շուտ կվերադառնանք քաղաք, իսկ այստեղից ծլկել, ինչպես մի նվնվացող է այնտեղ ցանկանում, մեզ թույլ չեն տա մեր գաղափարը և կարգապահությունը։

Բեռնող բանվորը երկար ճառեր չէր սիրում, բայց նույնիսկ այդ կարճն ընդհատեց միևնույն ձայնը.

— Իսկ անկուսակցականները գնո՞ւմ են։

— Այո՛— կտրեց Պանկրատովը։

Մի կերպ ճանապարհ բանալով՝ սեղանին մոտեցավ քաղաքային կարճ վերարկու հագած մի տղա։ Փոքրիկ տոմսը շղթիկի նման գլուխկոնծի տվեց սեղանի վրա, խփվեց Պանկրատովի կրծքին և ետ ցատկելով դեպի սեղանը՝ կողքի վրա կանգնեց։

— Ահա՛ տոմսս, վերցրե՛ք խնդրեմ, ստվարաթղթի այս կտորի համար ես առողջություն չեմ զոհի։

Նախադասության վերջը խլացավ բարաքի այս ու այն կողմերից հնչող ձայներից.

— Այդ ի՞նչ ես շպրտում։

— Ա՛խ, դու, ծախու արարած։

— Խցկվել ես կոմսոմոլի մեջ ու աչքդ տաք տեղի վրա՞ դրել։

— Քշի՛ր դրան էստեղից։

— Մենք քեզ էնպես տաքացնենք որ, տիֆի՛ ոչիլ։

Նա, որը տոմսը նետեց, գլուխը խոնարհած դեպի դուռն էր գնում։ Նրան ճամփա էին տալիս և մի կողմ քաշվում նրանից, ասես ժանտախտավոր լիներ։ Ճռռաց նրա հետևից փակվող դուռը։

Պանկրատովը մատներով ճիլտեց նետված տոմսը և խցկեց այն ծխոտ ճրագի մեջ։

Ստվարաթուղթը բռնկվեց և վերածվեց ածխացած մի խողովակի։

Անտառում կրակոց լսվեց։ Խարխուլ բարաքի մոտից անտառի խավարի մեջ սուզվեցին ձին ու հեծյալը։ Մարդիկ դուրս վազեցին դպրոցից ու բարաքից։ Ինչ-որ մեկը պատահմամբ դիպավ դռան ճեղքը խցկված մի ֆանների։ Զրթա-

ցին լուցկիները։ Հագուստի փեշերով ծածկելով քամուց տատանվող բոցը, կարդացին՝ «Կորեք գնացեք բոլորդ կայարանից այնտեղ, որտեղից եկել եք։ Ով մնա, նա ճակատին գնդակ կստանա։ Բոլորիդ մինչև վերջին մարդը կկոտորենք, ոչ ոքի չենք խնայի։ Եվ ստորագրված է. «Ատաման Չեսնոկ»։

Չեսնոկն Օռլիկի բանդայից էր։

Ռիտայի սենյակում սեղանի վրա դրված է բաց օրագիրը։

Դեկտեմբերի 2

Առավոտյան առաջին ձյունը տեղաց։ Թունդ սառնամանիք է։ Սանդուղքի վրա հանդիպեցի Վլասևսկուն։ Քայլեցինք միասին։

— Ես միշտ հիանում եմ առաջին ձյունով։ Ի՞նչ էլ սառնամանիք է։ Ուղղակի սքանչելի է, ճիշտ չէ՞,— ասաց Օլշինսկին։

Ես հիշեցի Բոյարկան և նրան պատասխանեցի, թե սառնամանիքն ու ձյունն ինձ բոլորովին չեն ուրախացնում, ընդհակառակն, ընկճում են։ Պատմեցի, թե ինչու։

— Դա սուբյեկտիվ մոտեցում է։ Եթե ձեր մտքերը շարունակենք, ապա անթույլատրելի պիտի համարենք ծիծաղն ու ընդհանրապես կենսուրախության արտահայտությունը, ասենք, պատերազմի ժամանակ։ Բայց կյանքում այդպես չի լինում։ Ողբերգությունն այնտեղ է, որտեղ ռազմաճակատի շերտն է։ Այնտեղ մահվան մոտիկությունը ճնշում է կյանքի զգացողությունը։ Բայց այնտեղ էլ նույնիսկ ծիծաղում են։ Իսկ ռազմաճակատից հեռու կյանքը նույնն է՝ ծիծաղ, արցունք, վիշտ ու բերկրանք, տեսարանների ու վայելքների ծարավ, հուզմունք, սեր։

Օլշինսկու խոսքերի մեջ դժվար է հեգնանքը ջոկել։ Օլշինսկին Ս-տզործժոդկոմատի լիազորն է։ Կուսակցության մեջ է 1917 թվից։ Հագնված է եվրոպական տարազով, միշտ մաքուր սափրված է, թեթևակի օծված։ Ապրում է մեր տանը, Սեգալի բնակարանում։ Երեկոներն այցելում է ինձ։ Նրա հետ զրուցելը հետաքրքիր է։ Ծանոթ է Արևմուտքին, երկար ժամանակ ապրել է Փարիզում, բայց ես չեմ կարծում, որ մենք

լավ բարեկամներ դառնանք։ Պատճառն այն է, որ նա իմ մեջ ամենից առաջ կնոջն է տեսնում և հետո միայն կուսակցական ընկերոջը։ Ճշմարիտ է, նա իր ձգտումներն ու մտքերը չի քողարկում, նա բավականաչափ արի է, որպեսզի ճշմարտությունն ասի, և նրա հակումները կոպիտ չեն։ Նա կարող է դրանք գեղեցիկ դարձնել։ Բայց նա ինձ դուր չի գալիս։

Ժուխրայի կոպիտ պարզությունն անհամեմատ ավելի է ինձ մոտ, քան Օլշինսկու եվրոպական փայլը։

Բոյարկայից կարճ ամսագրեր ենք ստանում։ Հարյուր սաժեն ճանապարհ յուրաքանչյուր օր։ Կոճափայտերը դնում են ուղղակի սառած գետնի վրա, նրանց համար փորված բներում։ Այնտեղ ընդամենը երկու հարյուր քառասուն մարդ է։ Երկրորդ հերթափոխի կեսը փախավ։ Պայմաններն իսկապես որ ծանր են։ Ինչպե՞ս պիտի աշխատեն սառնամանիքի մեջ... Դուբավան արդեն մի շաբաթ է, որ այնտեղ է։ Պուշչև-Վոդիցայում ութ շոգեքարշերից հինգն արդեն հավաքել են։ Մյուսների համար մասեր չկան։

Դմիտրիի դեմ տրամվայի վարչությունը քրեական գործ է ստեղծել. նա իր բրիգադով Պուշչև-Վոդիցայում բռնի կանգնեցրել է այնտեղից քաղաք գնացող տրամվայի բոլոր հարթակները։ Ուղևորներին իջեցնելով՝ նա պլատֆորմները բարձել է նեղգիծ երկաթուղու ռելսով։ Տասնինը հարթակները քաղաքային գծով բերվել են կայարան։ Տրամվայի աշխատողներն օգնել են իրենց ամբողջ ուժով։

Կայարանում Սոլոմենսկի կոմերիտմիության այնտեղ մնացած անդամները մի դիշերվա մեջ բեռնել են վագոնները, և Դմիտրին յուրայինների հետ ռելսերը տարել է Բոյարկա։

Ակիմը հրաժարվեց Դուբավայի հարցը բյուրոյում դնելուց։ Դմիտրին մեղ պատմեց տրամվայի վարչության մեջ տիրող խայտառակ քաշքշուկի ու բյուրոկրատիզմի մասին։ Այնտեղ կտրականապես հրաժարվել են երկու հարթակից ավելի տալ։ Տուֆտան Դուբավայի գլխին բարոյախոսություն կարդաց.

— Պարտիզանական արարքներից հրաժարվելու ժամանակն է արդեն, այժմ դրա համար մարդ կարող է նույնիսկ բանտ նստել։ Կարծես թե չի կարելի համաձայնության գալ և գործը գլուխ բերել առանց զենքի օգնությամբ բռնագրավման դիմելու։

Ես Դուբավային դեռ այդպես կատաղած չէի տեսել։

— Ապա ինչո՞ւ դու համաձայնության չեկար, թղթակե՛ր։ Նստել է այստեղ թանաքի տղրուկը և դուրս է տալիս լեզվով։ Առանց ռելսերի որ գնայի, Բոյարկայում իմ մոռթը կջարդեին։ Իսկ որպեսզի դու այստեղ ոտքի տակ չընկնես, քեզ պետք է շինարարության վրա աշխատելու ուղարկել, Տոկարևի մոտ, որ մի լավ չորացնի,— որոտում էր Դմիտրին նահանգական կոմիտեով մեկ։

Տուֆտան Դուբավայի դեմ դիմում գրեց, բայց Ակիմը, խնդրելով, որ ես դուրս գամ, մի տասը րոպե խոսեց նրա հետ։ Տուֆտան Ակիմի սենյակից դուրս եկավ կարմրած ու չար տեսքով։

Դեկտեմբերի 3

Նահանգական կոմիտեում արդեն նոր գործ կա տրանսպորտային Չեկայից։ Պանկրատովը, Օկունևը և էլի մի քանի ընկերներ եկել են Մոտովիլովկա կայարանը և դատարկ շենքերից հանել տարել են դռներն ու լուսամուտների շրջանակները։ Այս բոլորը բանվորական գնացքը բարձելիս։ Կայարանի չեկիստը փորձել է նրանց ձերբակալել։ Նրանք չեկիստին զինաթափ են արել և այն ժամանակ միայն, երբ գնացքը շարժվել է, ատրճանակը նրան են վերադարձրել՝ հանելով նրա միջից փամփուշտները։ Դռներն ու լուսամուտները տարել են։ Տոկարևին երկաթգծի նյութեղենի բաժինը մեղադրում է Բոյարկայի պահեստից ինքնակամ քսան փութ մեխ վերցնելու մեջ։ Նա այդ մեխը որպես աշխատավարձ տվել է այն գյուղացիներին, որոնք անտառամշակման վայրից փոխադրել են երկար փայտեր, որ դրվում են կոճափայտերի փոխարեն։

Ես ընկեր Ժուխրայի հետ խոսեցի այդ գործերի մասին։ Նա ծիծաղում է. «Բոլոր այդ գործերը մենք կջարդենք»։

Շինարարության վայրում դրությունը ծայրահեղորեն լարված է, և թանկ է ամեն մի օրը։ Ամեն մի շնչին բանի համար ստիպված ենք սեղմել։ Շարունակ արգելակողներին նահանգական կոմիտե ենք քարշ տալիս։ Շինարարության տղաներն ավելի ու ավելի հաճախ են դուրս գալիս ֆորմալիստիկայի շրջանակներից։

Օլշինսկին ինձ համար մի փոքրիկ էլեկտրական վառարան բերեց։ Ես ու Օլգա Յուրենևան նրա վրա մեր ձեռքերն ենք տաքացնում։ Բայց դրանից սենյակն ավելի տաք չի դառնում։ Ինչպե՞ս կանցնի այս գիշերն այնտեղ՝ անտառում։ Օլգան պատմում է, որ հիվանդանոցում շատ ցուրտ է, և հիվանդները վերմակների տակից դուրս չեն գալիս։ Երեք օրը մի անգամ են վառում։

Ո՛չ, ընկեր Օլշինսկի, ռազմաճակատի ողբերգությունը ողբերգություն է դառնում նաև թիկունքում։

Դեկտեմբերի 4

Ամբողջ գիշեր ձյուն էր գալիս։ Գրում են, որ Բոյարկայում ամեն ինչ ծածկել է։ Աշխատանքը կանգ է առել։ Ճանապարհն են մաքրում։ Նահանգական կոմիտեն այսօր որոշում կայացրեց. առաջին հերթի շինարարությունը, մինչև անտառամշակման սահմանները, ավարտել 1922 թվի հունվարի 1-ից ոչ ուշ։ Երբ այդ որոշումը հաղորդել են Բոյարկա, ասում են, որ Տոկարևը պատասխանել է. «Եթե չսատկոտենք, ապա կկատարենք»։

Կորչագինի մասին ոչ մի լուր չկա։ Զարմանալի է, որ նրա վրա էլ Պանկրատովի գործի նման «գործ» չկա։ Ես մինչև այժմ էլ չգիտեմ, թե ինչո՞ւ նա ինձ հետ հանդիպել չի ուզում։

Դեկտեմբերի 5

Երեկ բանդան գնդակոծել է շինարարության վայրը։

Զիներն զգուշությամբ են ոտքերը դնում փափուկ, տեղի տվող ձյան մեջ։ Երբեմն ձյան տակ շարժվում է սմբակով գետնին սեղմված մի ճյուղ, ճթճթում, և այդ ժամանակ ձին փնչում, նետվում է մի կողմ, բայց սեղմված ականջներին հարված ստանալով՝ անցնում է քառատրոփի և հասնում առջևից գնացողներին։

Տասի չափ ձիավորներ անցան այն բլրաշարը, որին հենվում էր սև, դեռ ձյունով չծածկված բլրակը։

Հեծյալներն այստեղ ձիերը պահեցին։ Ասպանդակներն իրար դիպչելով զրնգացին։ Ամբողջ մարմինն աղմուկով թա-

մահարեց առաջին հնձյալի հովատակը, որը երկար վազքից դրտնել էր։

— Սատանան է սրանց էստեղ քշել,— ասաց առաջինը։— Հիմա մենք նրանց էնպիսի մի ցուրտ կկերցնենք որ։ Բատկոն ասաց, որ այս մորեխին էգուց էստեղ չլինի, երևում է, որ էդ սրիկա բանվորներն արդեն փայտին են հասնում...

Կայարանին մոտեցան իրար հետևից, երկաթգծի եզրերով։ Դանդաղ քայլով մոտեցան հին դպրոցի մոտի բացատին. դուրս չեկան բացատը, մնացին ծառերի հետևում։

Համաղարկը ցրիվ տվեց խավար գիշերվա լռությունը։ Լուսնի տակ արծաթին տվող կեչու ճյուղից սկյուռի պես ցատ սահեց ձյան կոշտը։ Ծառերի արանքում կայծեր արձակեցին կարճապոչ հրացանները, գնդակները փորփրեցին թափվող ծերը, խղճալի կերպով ընդաց Պանկրատովի բերած լուսամուտների ջարդվող ապակին։

Այդ համաղարկը սրեկեց մարդկանց բետոնե հատակից, ոտքի կանգնեցրեց նրանց, բայց երբ սենյակներում թռչել սկսեցին սարսափելի ծղրիդները, ահը մարդկանց նորից ընտանին փռեց։

Ընկան իրար վրա։

— Ո՞ւր,— Գավելի շինելից բռնեց Դուբավան։

— Բակը։

— Պառկի՛ր, ապո՛ւշ։ Տեղն ու տեղը կփռեն, հենց որ երևաս,— զայրացած շշնջաց Դմիտրին։

Նրանք սենյակում պառկած էին կողք կողքի, հենց դռան մոտ։ Դուբավան սեղմվել էր հատակին և դեպի դուռը մեկնել ձեռքի ատրճանակը։ Կորչագինը պպզել էր և նյարդայնորեն շոշափում էր նագանի թմբուկի փամփուշտաբները։ Այնտեղ հինգ փամփուշտ կա։ Դատարկությանը հասնելով, թմբուկը շուռ տվեց։

Կրակոցն ընդհատվեց։ Առաջացած լռությունը զարմանք առաջացրեց։

— Տղե՛րք, ով որ զենք ունի, թող հավաքվի այստեղ,— շշնջալով՝ պառկածներին հրամաններ էր տալիս Դուբավան։

Կորչագինն զգուշությամբ բաց արեց դուռը։ Բացատն ամայի է։ Դանդաղ պտտվելով իջնում են ձյան փաթիլները։

Իսկ անտառում տասը հնձյալներ քշում էին ձիերին։

Ճաշին քաղաքից սլացավ եկավ ավտոդրեզինը։ Դրեզինից դուրս եկան Ժուխրայն ու Ակիմը։ Նրանց դիմավորեցին Տոկարևն ու Խոլյավան։ Դրեզինից հանեցին ու կառամատույցին դրեցին «Մաքսիմ» գնդացիրը, մի քանի տուփ գնդացրային ժապավեններ և երկու տասնյակ հրացան։

Շտապով գնացին դեպի աշխատանքի վայրը։ Ֆյոդորի շինելի փեշերը կեռմաններ էին գծում ձյան վրա։ Նրա քայլվածքն արջային է, օրորուն, դեռ շարունակում է ոտքերը կարկինի պես դնել, ասես ոտքերի տակ դեռ ականակրի օրորվող տախտակամածն է։ Տոկարևն ստիպված էր շարունակ վազել իր ուղեկիցների հետևից։ Բարձրահասակ Ակիմը քայլում էր Ժուխրայի հետ ոտք ոտքի։

— Բանդայի հարձակումը դեռ դժբախտության կեսն է։ Այստեղ ահա մի սարալանջ է փռվել մեր ճանապարհին։ Գլխացավանք է դարձել, գրողը դրան տանի։ Ստիպված ենք շատ հող հանել։

Ներսունին կանգ առավ, թիկունքը դարձրեց քամուն, ձեռքի ափերը նավակ դարձնելով վառեց ծխախոտը և մի երկու անգամ ծուխը ներս քաշելով՝ հասավ առաջ անցածներին։ Ակիմը կանգ առավ և սպասեց նրան։ Ժուխրայն առանց քայլերը դանդաղեցնելու առաջ էր ընթանում։

Ակիմը Տոկարևին հարցրեց.

— Կբավարարե՞ն, արդյոք, մեր ուժերը, որ ժամկետին կառուցենք առբերման գիծը։

Տոկարևն անմիջապես չպատասխանեց։

— Գիտես ինչ, տղա՛ս,— վերջապես ասաց նա,— եթե ընդհանրապես խոսենք, ապա կառուցել հնարավոր չէ, բայց չկառուցել չի կարելի։ Ահա այստեղից էլ ստացվում է...

Նրանք հասան Ֆյոդորին և քայլեցին նրա կողքից։ Փականագործը հուզված խոսեց.

— Ահա այստեղից էլ հենց սկսվում է այդ «բայցը»։ Չէ՞ որ միայն երկու հոգի՝ ես և Պատոշկինը գիտենք, որ այսպիսի շան պայմաններում, այսպիսի սարքավորման և բանվորական ուժի այսպիսի քանակի պայմաններում կառուցել հնարավոր չէ։ Բայց դրա փոխարեն բոլորը՝ մինչև վերջին մարդը գիտեն, որ չկառուցել չի կարելի։ Ահա թե ինչու ես կարողացա ասել. «Եթե չսառչենք, կանենք»։ Ինքներդ դիտեցեք, երկրորդ

ամիսն է, որ այստեղ աշխատում ենք, չորրորդ հերթափոխն ենք անցկացնում, իսկ հիմնական կազմը առանց շունչ առնելու աշխատում է. միայն երիտասարդ լինելու շնորհիվ են դիմանում։ Իսկ չէ՞ որ նրանց կեսը մրսած է։ Նայում ես այդ տղաներին, սրտիցդ արյուն է գնում։ Անգին տղաներ են... Այս անիծյալ թավուտը նրանցից շատերին գերեզման կքշի։

Կայարանից մի կիլոմետրի վրա վերջանում էր լրիվ պատրաստ նեղգիծ երկաթուղին։

Նրանցից այն կողմ հարթած պաստառի վրա դրված էին գետնի մեջ խրված երկար ձողեր, ասես քամու շրջած ցանկապատ լինի։ Դրանք կոճափայտերն են։ Ավելի հեռուն, մինչև լեռնալանջը միայն հարթ ճանապարհն էր գնում։

Այստեղ աշխատում էր Պանկրատովի առաջին շինարարական բրիգադը։ Քառասուն հոգի կոճափայտերն էին գնում։ Նոր տրեխներ հագած շիկամորուս մի գյուղացի անշտապ քաշում էր ձողերը բաց սահնակից և նետում էր երկաթուղու պաստառին։ Մի քանի այդպիսի սահնակներ էլ բեռնաթափվում էին քիչ հեռվում։ Երկու երկար երկաթե ձողեր ընկած էին գետնին։ Դրանք ռելսերի կաղապարներն էին, դրանց հարմարեցնելով էին կոճափայտերը հավասարեցնում։ Հողն ամրացնելու համար կացիններ, նիգեր, բահեր էին գործադրում։

Մանրակրկիտ ու դանդաղ ընթացող գործ է կոճափայտեր դնելը։ Կոճափայտերը գետնի վրա պետք է դրված լինեն ամուր ու կայուն և այնպես, որ ռելսերը նրանցից յուրաքանչյուրի վրա հավասարապես հենվեն։

Կոճափայտերն ամրացնելու տեխնիկան միայն մի ծերունի գիտեր, որը չնայած իր հիսունչորս տարեկան լինելուն, ոչ մի սպիտակ մազ չուներ, նրա մորուքը ձյութի սևություն ուներ և բաժանված էր երկու մասի, դա ճանապարհների շինարարության տասնապետ Լագուտինն էր։ Նա կամավոր կերպով աշխատում էր արդեն չորս հերթափոխ, երիտասարդության հետ միասին տանում էր բոլոր ձախորդությունները և ջոկատում ընդհանուր հարգանք էր վաստակել։ Այդ անկուսակցականը (Տալյայի հայրը) միշտ բոլոր կուսակցական խորհրդակցություններում պատվավոր տեղ էր գրավում։

Հպարտանալով դրանով՝ ծերունին խոսք տվեց շինարարությունը չքել։

— Դե ես ինչպես կարող եմ ձեզ թողնել, ասացեք խընդրեմ։ Առանց ինձ գործը կխառնեք, այստեղ աչք է պետք, պրակտիկա։ Իսկ ես այդ կոճափայտերից կյանքումս ինչքա՞ն եմ դարսել Ռուսաստանով մեկ...— բարեհոգությամբ ասում էր նա յուրաքանչյուր հերթափոխի ժամանակ և մնում էր։

Պատոշկինը վստահում էր նրան և նրա տեղամասը հազվադեպ էր այցելում։ Երբ երեք հոգի մոտեցան աշխատողներին, քրտնած ու-կարմրատակած Պանկրատովը կոճափայտի համար կացնով բույն էր սարքում։

Ակիմը հազիվ ճանաչեց նրան։ Պանկրատովը նիհարել էր, նրա լայն այտոսկրերն ավելի սուր էին գծագրվում, իսկ վատ լվացված դեմքն ինչ-որ մթնել ու վատ տեսք էր ստացել։

— Ա՜, նահանգն է եկել,— ասաց նա և Ակիմին մեկնեց տաք ու խոնավ ձեռքը։

Բահերի թխկթխկոցն ընդհատվեց, Ակիմն իր շուրջը տեսավ գունատ դեմքեր։ Հանված շինելներն ու կիսամուշտակներն ընկած էին հենց այդտեղ, ուղղակի ձյան վրա։

Լագուտինի հետ խոսելուց հետո Տոկարևն իրենց հետ վերցրեց նաև Պանկրատովին և եկվորներին տարավ դեպի փորվածքը։ Բեռնող բանվորը քայլում էր Ֆյոդորի կողքից։

— Պատմիր, Պանկրատով, այդ ի՞նչ է պատահել չեկիստի ու ձեր միջև Մոտովիլովկայում։ Ի՞նչ ես կարծում, զինաթափելով նրան՝ մի քիչ փայտը չե՞ք ծռել,— լրջորեն հարցրեց Ֆյոդորը լռակյաց բանվորին։

Պանկրատովը շփոթված ժպտաց։

— Մենք նրան իր համաձայնությամբ ենք զինաթափել, նա ինքը մեզ խնդրեց։ Չէ՞ որ նա մեր տղաներից է։ Մենք նրան ամեն ինչ բացատրեցինք այնպես, ինչպես որ կա, նա էլ ասաց. «Ես, տղերք, իրավունք չունեմ ձեզ թույլ տալու, որ լուսամուտներն ու դռները տանեք։ Ընկեր Ջերժինսկու հրամանը կա՝ թե պետք է կատեցնել ճանապարհային գույքի կողոպուտը։ Այստեղ կայարանի պետի հետ թուր ու դանակ ենք, սրիկան գողանում է, իսկ ես խանգարում եմ նրան։ Թե որ ձեզ բաց թողնեմ, անպայման կտեղեկացնի իմ ծառայության գծով, և ինձ հեղտրիբունալի կտան։ Իսկ դուք ինձ զի-

Նաթափ արեք և գնացեք։ Եվ եթե կայարանի պետը չտեղեկացնի, ապա գործը դրանով էլ կվերջանա»։ Մենք այդպես էլ արինք։ Չէ՞ որ դռներն ու լուսամուտները մեզ համար չէինք տանում։

Ծիծաղի մի կայծ նկատելով Ժուխրայի աչքերում՝ Պանկրատովն ավելացրեց.

— Թող միայն մեզ հասնի, դուք տղային չսեղմեք, ընկեր Ժուխրայ։

— Այդ բոլորը լիկվիդացված է։ Հետագայում այդպիսի բան անել չի կարելի, դա կարգապահությունն է քայքայում։ Մենք բավականաչափ ուժ ունենք, որպեսզի բյուրոկրատիզմը կազմակերպված ձևով ջարդենք։ Լա՛վ, ավելի կարևոր բանի մասին խոսենք։— Եվ Ֆյոդորն սկսեց հարցուփորձել հարձակման մանրամասնությունների մասին։

Կայարանից չորսակես կիլոմետրի վրա մոլեգնությամբ գետնին էին խրվում բահերը։ Մարդիկ կտրում էին սարալանջը, որ կանգնել էր նրանց ճանապարհին։

Իսկ երկու կողմերում կանգնած էին յոթ հոգի՝ զինված Խոլյավայի կարաբինով և Կորչագինի, Պանկրատովի, Դուբավայի ու Խոմուտովի ատրճանակներով։ Դա ջոկատի ամբողջ զենքն էր։

Պատոշկինը նստել էր թեքության վրա և թվերն էր գրում իր ծոցատետրում։ Ինժեները մենակ է մնացել։ Վակուլենկոն առավոտյան քաղաք էր փախել՝ դասալքության համար դատի տրվելը գերադասելով բանդիտի գնդակով մեռնելուց։

— Փորման վրա կես ամիս կգնա, գետինը սառած է,— ցածր ձայնով ասաց Պատոշկինը իր առաջ կանգնած Խոմուտովին՝ միշտ մռայլ, խոսքի մեջ ժլատ, դանդաղկոտ մի տղայի։

— Մեզ ճանապարհի համար ընդամենը քսանհինգ օր են տալիս, իսկ դուք տասնհինգը փորելո՞ւն եք հատկացնում,— բարկացած պատասխանեց Խոմուտովը՝ շրթունքով բռնելով բեղի ծայրը։

— Այդ ժամկետը ռեալ չէ, ճիշտ է, ես իմ կյանքում երբեք այսպիսի իրադրության մեջ և մարդկանց այսպիսի կազմով չեմ կառուցել, ինչպիսին սա է։ Ես կարող եմ և սխալվել, մի բան, որ ինձ հետ արդեն երկու անգամ պատահել է։

Այդ ժամանակ Ժուխրայը, Ակիմը և Պանկրատովը մոտենում էին փորվածքին։ Սարալանջում նրանց նկատեցին։

— Մի տես, թե ո՞վ է,— մատով սարալանջից ներքև ցույց տալով, արմունկով Կորչագինին հրեց թևերը պատռտրված, հին սվիտրով մի շիլ տղա, Պետկա Տրոֆիմովը, որն աշխատում էր արհեստանոցներում որպես բոլտահատ։ Նույն վայրկյանին, առանց բահը ձեռքից ցած դնելու, Կորչագինը սարից ցած սլացավ։ Սաղավարտի հովարի տակից նրա աչքերը ջերմ ժպտացին, և Ֆյոդորը մյուսներից ավելի երկար սեղմեց նրա ձեռքը։

— Բարև, Պավե՛լ։ Դե եկ ու ճանաչիր սրան այսպիսի տարբեր տրամաչափի զգեստների մեջ։

Պանկրատովը քմծիծաղ տվեց։

— Հինգ մատի կոմբինացիան վատ չէ, և հինգն էլ աչքի առաջ են։ Հետո դասալիքները նրա շինելն են թոցրել։ Սրանք Օկունևի հետ կոմունա են կազմել. նա իր հին պիջակն է Պավելին տվել։ Ոչինչ, Պավլուշան տաք տղա է։ Մի շաբաթ բետոնի վրա կտաքանա, հարդը համարյա չի օգնում, իսկ հետո «մի արկղ կշահի»,— անուրախ տոնով ասաց բեռնող բանվորը Ակիմին։

Մի քիչ կճատ քթով սևահոն Օկունևը, խորամանկ աչքերը կկոցելով, առարկեց.

— Մենք չենք թողնի, որ Պավլուշան կորչի։ Կքվեարկենք և խոհանոց կուղարկենք նրան որպես խոհարար, Օդարկայի մոտ ուղերվի։ Նա այնտեղ, եթե հիմար չինի, և՛ կուտի, և՛ կտաքանա կամ վառարանի մոտ, կամ Օդարկայի։

Միահամուռ ծիծաղը ծածկեց նրա խոսքերը։

Այդ օրն առաջին անգամն էին ծիծաղում։

Ֆյոդորը դիտեց սարալանջը. Տոկարևի և Պատոշկինի հետ սահնակով գնաց անտառամշակման վայրը և վերադարձավ։ Սարալանջում նույն համառությամբ փորում էին գետինը։ Ֆյոդորը նայեց փոքրիկ բահերին, լարված ջանքերից կռացած թիկունքներին և ցածր ձայնով ասաց Ակիմին.

— Միտինգ պետք չէ։ Այստեղ ագիտացիա անելու մարդ չկա։ Տո՛կարև, ճիշտ ասացիր, թե սրանք անգին են։ Ահա թե որտեղ է կոփվում պողպատը։

Ժուխրայի աչքերը հիացմունքով և խստասիրտ սիրո հպարտությամբ էին նայում հող փորողներին։ Չէ՞ որ դեռ վերջերս՝ խորվության նախօրյակի գիշերը, այս փորողների մի մասը սվիններով զինվեց։ Իսկ այժմ նրանք մի միասնական ձգտումով են համակված՝ ռելսերի պողպատե երակները հասցնել փայտի նվիրական հարստություններին՝ ջերմության ու կյանքի աղբյուրին։

Պատոշկինը քաղաքավարի, բայց համոզված ապացուցում էր Ֆյոդորին, թե երկու շաբաթից առաջ փորվածքն ավարտել հնարավոր չէ։ Ֆյոդորը լսում էր նրա հաշվումները և ինքն իր մեջ ինչ-որ բան էր որոշում։

— Մարդկանց սարալանջերից վերցրեք, ծավալեք ճանապարհի աշխատանքն ավելի հեռու, իսկ բլուրը մենք այլ կերպ կգրավենք։

Կայարանում Ժուխրայը երկար նստած էր հեռախոսի մոտ։ Խոլյավան հսկում էր դռան մոտ։ Նա իր թիկունքում լսում էր Ֆյոդորի խուլ բասը.

— Անմիջապես իմ անունից զանգահարիր օկրուգի շտաբի պետին, թող անհապաղ Պուզիրևսկու գունդն ուղարկի կառուցման սեկտորը։ Անհրաժեշտ է շրջանը մաքրել բանդաներից։ Բազայից ուղարկեցեք զրահապատ գնացք և պայթեցնողներ։ Մնացածի վերաբերյալ ես ինքս կարգադրություններ կանեմ։ Կվերադառնամ գիշերը։ Լիտկեին մեքենայով կայարան ուղարկեցեք տասներկուսի գնացքին։

Բարաքում Ակիմի կարճ ճառից հետո խոսեց Ժուխրայը։ Ընկերական զրույցի մեջ աննկատելիորեն մի ժամ անցավ։ Ֆյոդորը կառուցողներին ասում էր, թե անհնարին է փոխել կառուցման ավարտման հունվարի մեկին նշանակված ժամկետը։

— Մենք կառուցումը զինվորական դրության կփոխադրենք։ Կոմունիստները կկազմեն ՀՆՄ[1] վաշտը։ Վաշտի հրամանատար է նշանակվում ընկեր Դուբավան։ Շինարարական բոլոր վեց խմբերն էլ կայուն առաջադրանք են ստանում։ Կառուցման մնացած աշխատանքները բաժանվում են վեց հավասար մասերի։ Յուրաքանչյուր խումբ ստանում է իր մասը։ Մինչ հունվարի մեկը բոլոր աշխատանքները պիտի

[1] Հատուկ նշանակման մասեր։

ավարտված լինեն։ Այն խումբը, որն աշխատանքն ավելի առաջ կավարտի, հանգստանալու և քաղաք գնալու իրավունք ստանա։ Բացի դրանից՝ նահանգական դործկոմի նախագահությունը հարց կհարուցի Ուկրաինական Կենտգործկոմի առաջ՝ այդ խմբի լավագույն բանվորներին Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրելու։

Շինարարական խմբերի պետեր հաստատվեցին՝ առաջինինը՝ ընկեր Պանկրատովը, երկրորդինը՝ ընկեր Դուբավան, երրորդինը՝ ընկեր Խոմուտովը, չորրորդինը՝ ընկեր Լագուտինը, հինգերորդինը՝ ընկեր Կորշագինը, վեցերորդինը՝ ընկեր Օկունևը։

— Շինարարության պետ,— վերջացրեց իր ճառը Ժուխրայը,— նրա գաղափարական ղեկավար ու կազմակերպիչ մնում է անփոփոխ Անտոն Նիկիֆորովիչ Տոկարևը։

Ասես թռչունների մի երամ թռավ, ձեռքերը ծափահարեցին, խստադեմ դեմքերը ժպտացին, և լուրջ մարդու այդ վերջին մտերմական կատակ-նախադասությունը երկարատև ուշադրությունը փոխարինեց ծիծաղի պոռթկումով։

Մոտ քսան մարդ խմբովին Ակիմին ու Ֆյոդորին ուղեկցեցին մինչև ավտոդրեզինը։

Հրաժեշտ տալով Կորշագինին և նայելով նրա ձյունով լցված կրկնակոշիկին՝ Ֆյոդորը ցածր ձայնով ասաց.

— Կոշիկներ կուղարկեմ։ Դեռ ոտքերդ չես ցրտահարե՞լ։

— Ինչ-որ նման բան կա, սկսել են ուռչել,— պատասխանեց Պավելը և հիշելով իր վաղեմի խնդիրքը՝ բռնեց Ֆյոդորի թևքից.— ինձ մի քիչ փամփուշտ կտա՞ս նագանի համար։ Ես միայն երեք վստահելի փամփուշտ ունեմ։

Ժուխրայը գլուխն անհույս տարուբերեց, բայց տեսնելով Պավելի աչքերում երևան եկած վիշտը՝ առանց երկար մտածելու բաց արեց իր մաուզերը։

— Ահա քեզ իմ նվերը։

Պավելն անմիջապես չհավատաց, թե իրեն պարգևում են այն, ինչի մասին նա վաղուց երազում էր, բայց Ժուխրայը նրա ուսին նետեց փոկը։

— Վերցրո՛ւ, վերցրո՛ւ, ես հո գիտեմ, որ քո աչքը վաղուց է դրա վրա։ Միայն թե զգույշ վարվիր դրա հետ, յուրայիններից վրա չկրակես։ Առ ահա երեք լիքը պահունակ։

Պավելին հավելեցին բացահայտ նախանձոտ հայացքներ։ Ինչ-որ մեկը բղավեց։

— Պա՛վկա, արի փոխենք կոշիկների հետ. կիսամուշտակն էլ վրան։

Պանկրատովը չարաճճիությամբ բոթեց Պավելի մեջքը.

— Փոխիր վալենկաների հետ, սատանա՛։ Մեկ է, կրկնակոշիկով մինչև Քրիստոսի ծնունդը չես ապրի։

Ոտքը դրեզինի ոտնատեղին դրած՝ Ժուխրայը թույլտվություն էր գրում պարգևած ատրճանակի համար։

Վաղ առավոտյան սլաքների վրա խուլ չխկչխկալով՝ կայարանին մոտեցավ զրահագնացքը։ Շքեղ ցցունքի պես դուրս էր հորդում սպիտակ, կարապի աղվամազի նմանող, ազատ թողնված գոլորշին, որն անմիջապես էլ անհետանում էր սառնամանիքային հստակ օդում։ Զրահապատ արկղերից դուրս էին գալիս կաշվեզգեստ մարդիկ։ Մի քանի ժամ հետո զրահագնացքի կազմից երեք պայթեցնողներ սարալանջում խոր թաղեցին երկու մուգ գույնի վիթխարի դդումներ, նրանցից երկար լարեր տարան և ազդանշանի համար կրակեցին։ Այն ժամանակ հիմա արդեն սարսափելի դարձած սարալանջից ամեն կողմ մարդիկ փախան։ Լուցկուց լարի ծայրը բռնկեց ֆոսֆորային կրակով։

Հարյուրավոր մարդկանց սրտերը մի վայրկյան սեղմվեցին։ Տանջալի սպասման մեկ-երկու րոպե, և... գետինը ցնցվեց, ահավոր մի ուժ ցրիվ տվեց բլրի գագաթը՝ երկինք շպրտելով հողի ահագին կոշտեր։ Երկրորդ պայթյունն առաջինից ավելի ուժգին եղավ։ Ահռելի դղրդյունը գլորվեց անտառի թավուտով և այն լցրեց ծվեն-ծվեն եղած սարալանջի ձայների քաոսով։

Այնտեղ, ուր հենց նոր բլուրն էր, սևին էր տալիս խորունկ մի փոս, և տասնյակ մետրերի վրա ձյան շաքարանման սպիտակությունը ծածկված էր խփրուն հողով։

Դեպի պայթյունից առաջացած փոսն շտապեցին քլունգներով ու բահերով զինված մարդիկ։

Ժուխրայի գնալուց հետո շինարարության վրա համառ մրցություն ծավալվեց՝ պայքար առաջնության համար։

Դեռ լուսաբացից շատ առաջ կամացուկ, առանց ոչ ոքի

արթնացնելու, Կորչագինը վեր կացավ և ցուրտ հատակի վրա հազիվ շարժելով փայտացած ոտքերը, ուղղվեց դեպի խոհանոց։ Բաքի մեջ թեյի համար ջուր եռացնելով՝ վերադարձավ և արթնացրեց իր ամբողջ խմբին։

Երբ ամբողջ ջոկատն արթնացավ, դրսում արդեն լույս էր։

Առավոտյան թեյի ժամանակ բարաքում այն սեղանին մոտեցավ Պանկրատովը, որի մոտ նստել էր Դուբավան իր զինապահեստայիների հետ։

— Տեսա՞ր, Միտյա՛յ, Պավկան իր տղերքին լույսը հազիվ բացված ոտքի է հանել։ Երևի մի տասը սաժեն արդեն սարքել են։ Տղաներն ասում են, որ նա գլխավոր արհեստանոցներից եկած իր տղաներին այնպես է լարել, որ նրանք որոշել են իրենց տեղամասը ամսի քսանհինգին վերջացնել։ Բոլորիս քթին խփել է ուզում։ Բայց դա, ներողություն, մենք դեռ կտեսնենք,— վրդովված ասում էր նա Դուբավային։

Միտյայը թթու-թթու ժպտաց։ Նա հիանալի կերպով հասկանում էր, թե ինչու գլխավոր արհեստանոցների խմբի արարքը այդպես թունդ կպչում էր գետային նավահանգստի կոլեկտիվի քարտուղարին։ Եվ հենց իրեն՝ Դուբավային էլ սիրելի Պավլուշան մտրակի հարված տվեց. առանց մի բառ ասելու՝ մարտահրավեր նետեց ամբողջ ջոկատին։

— Բարեկամությունը՝ բարեկամություն, բայց հաշիվն էլ՝ հաշիվ, էստեղ «ով՝ ում»,— ասաց Պանկրատովը։

Կեսօրին մոտ Կորչագինի խմբի եռանդուն աշխատանքը անսպասելի կերպով ընդհատվեց։ Պահակը, որ կանգնած էր հրացաններից կազմված խաչմերուկի մոտ, ծառերի միջև հեծյալների մի խումբ նկատեց և տագնապի ազդանշան տվեց։

— Ի զե՛ն, տղե՛րք։ Բանդան է,— գոչեց Պավելը և բահը դեն նետելով՝ նետվեց դեպի ծառը, որից կախված էր նրա մաուզերը։

Զենքերն արագորեն վերցնելով՝ խումբը պառկեց ուղղակի ձյան մեջ, ճանապարհի եզրին։ Առջևի ձիավորները գլխարկները թափահարեցին։ Նրանցից մեկը գոչեց.

— Սպասեցե՛ք, ընկերնե՛ր։ Յուրայիննե՛ր ենք։

Հինգուն հեծյալ, կարմիր աստղակիր բուդյոնովկաները գլխներին, ճանապարհով մոտենում էին։

Պարզվեց, որ Պուզիրևսկու գնդի մի դասակ եկել էր տեսնելու շինարարությունը։ Պավելն ուշադրություն դարձրեց հրամանատարի ձիու կտրված ականջին։ Ճակատին սպիտակ բիծ ունեցող գեղեցիկ, գորշ զամբիկը տեղում չէր կանգնում, «խաղում» էր հեծյալի տակին։ Նա վախեցած ընկրկեց, երբ Պավելը դեպի ձին նետվելով՝ բռնեց նրա երասանից։

— Լի՜սկա, երես առա՛ծ, ահա թե որտեղ հանդիպեցինք։ Գնդակներից փրկվել ես, իմ միականջ գեղեցկուհի։

Նա քնքշորեն գրկեց ձիու բարակ պարանոցը և սկսեց ձեռքով շոյել նրա դողդոջուն ռունգները։

Հրամանատարն ուշադիր նայեց Պավելին և, ճանաչելով, զարմացած գոչեց.

— Սա հո Կորչագինն է... Ջիուն ճանաչեց, իսկ Սերեդային չտեսավ։ Բարև, ախպերի՛կ։

Քաղաքում «բոլոր լծակները սեղմում էին»։ Այդ անմիջապես անդրադարձավ շինարարության վրա։ Ժարկին շրջկոմն ամայացրեց՝ կազմակերպության մնացած մասն էլ Բոյարկա ուղարկելով։ Սոլոմենկայում միայն աղջիկներ էին մնացել։ Ճանապարհային տեխնիկումում Ժարկին հաջողացրեց ուսանողների մի նոր խումբ ուղարկել շինարարության վրա աշխատելու։

Այս բոլորի մասին հաղորդելով Ակիմին՝ Ժարկին կիսակատակ ասաց.

— Մնացել եմ միայն կին պրոլետարիատի հետ։ Լագուտինային կնստեցնեմ իմ տեղը։ Դռան վրա կգրենք. «Կինբաժին», և ինքս էլ կլվեմ Բոյարկա։ Անհարմար եմ զգում, գիտես, միակ տղամարդն եմ ու պտտվում եմ կանանց մեջ։ Աղջիկներն ինձ վրա կնսկածով են նայում։ Հավանորեն էդ կաշաղակներն իրենք իրենց մեջ ասում են. «Բոլորին դեսուդեն է ուղարկել, իսկ ինքը, խորամանկը, մնացել է» կամ նույնիսկ որևէ ավելի վիրավորական բան։ Խնդրում եմ, թույլ տուր, որ ես էլ գնամ։

Ակիմը, ծիծաղելով, մերժեց։

Բոյարկա շարունակ ժողովուրդ էր գալիս։ Եկան նաև վաթսուն ուսանող՝ ճանապարհային տեխնիկումից։

Ժուխրայը երկաթգծի վարչությանը համոզեց չորս մարդատար վագոն ուղարկել Բոյարկա, որպեսզի նոր ուղարկված բանվորները դրանց մեջ ապրեն։

Դուբավայի խումբը աշխատանքից հանվեց և ուղարկվեց Պուշչևոդիցա։ Նրանց հրամայված էր շինարարության վայրը տեղափոխել փոքր շոգեքարշեր և վաթսունհինգ նեղգիծ պլատֆորմներ։ Այդ աշխատանքը հաշվի էր առնվում որպես տեղամասով տարված առաջադրանք։

Մեկնելուց առաջ Դուբավան Տոկարևին խորհուրդ տվեց Կլավիչեկին նորից ետ կանչել շինարարություն և նրան հանձնել նոր կազմակերպված խումբը։ Տոկարևն այդ հրամանը տվեց՝ առանց բացատրելու իսկական պատճառի մասին, որը դրդել էր զինապահեստի բանվորին հիշել չեխի գոյությունը։ Իսկ պատճառը Աննայի տոմսակն էր, որ նա ուղարկել էր նոր եկած սալոմենցիների միջոցով։

«Դմիտրի՛,— գրում էր Աննան,— ես ու Կլավիչեկը ձեզ համար ահագին քանակությամբ գրականություն ենք ընտրել։ Ձեզ և Բոյարկայի բոլոր գրոհայիններին հղում ենք մեր ջերմ ողջույնը։ Ի՞նչ կտրիճներ եք դուք բոլորդ։ Ուժ և եռանդ ենք ցանկանում ձեզ։ Երեկ պահեստներից տվեցին փայտի վերջին պաշարները։ Կլավիչեկը խնդրում է ձեզ իր ողջույնը հաղորդել։ Հիանալի տղա է։ Նա ինքն է ձեզ համար հաց թխում։ Փոում ոչ ոքի չի վստահում։ Ինքն է ալյուրը մաղում, ինքն է մեքենայով խմորը հունցում։ Ինչ-որ տեղից լավ ալյուր է ձեռք բերել, և նրա պատրաստած հացը հիանալի է ստացվում, ոչ այնպիսին, ինչպիսին ես եմ ստանում։ Երեկոներն ինձ մոտ են հավաքվում մերոնք՝ Լագուտինան, Արտյուխինը, Կլավիչեկը և երբեմն Ժարկին։ Կամաց-կամաց մեր ուսումն ենք առաջ տանում, բայց ավելի շատ խոսում ենք ամեն ինչի և ամենքի մասին, իսկ ամենից հաճախ՝ ձեր մասին։ Աղջիկները զայրացած են, որ Տոկարևը հրաժարվել է նրանց շինարարության վրա աշխատանքի ընդունել։ Նրանք հավատացնում են, որ բոլորին հավասար կկարողանան կրել զրկանքները։ Տալյան ասում է. «Հորս հագուստները կհագնեմ և կներկայանամ նրան, թող փորձի ինձ այնտեղից քշել»։

Հավանորեն նա այդպես էլ կանի։ Իմ ողջույնը հաղորդիր սևաչյային։ Ա ն ն ա»։

Բուքը միանգամից վրա տվեց։ Երկինքը ծածկվեց գորշ, ցածում լողացող ամպերով, խիտ ձյուն եկավ։ Երեկոյան քամին ոռնաց ծխնելուզներում, շաչեց ծառերի մեջ, ընկավ ձյան ճարպիկ գալարների հետևից, խռովեց անտառն իր սպառնագին սուլոցով։

Ձյունահողմն ամբողջ գիշերը մոլեգնում ու ասպատակում էր։ Մարդիկ սառել էին մինչև ոսկորները, թեև վառարանները ամբողջ գիշեր վառվում էին։ Կայարանի ավերակը ջերմություն չէր պահում։

Առավոտյան աշխատանքի դուրս եկած ջոկատը թաղվում էր խոր ձյան մեջ. իսկ ծառերից վերև հրդեհում էր արևը, և բաց կապույտ երկնքում ոչ մի ամպ չկար։

Կորշագինի խումբը մաքրում էր իր տեղամասը ձյան կույտերից։ Պավելը միայն այժմ զգաց, թե որքան տանջալի են ցրտից առաջացած տառապանքները։ Օկունևի հին պիջակը նրան չէր տաքացնում, իսկ կրկնակոշիկի մեջ ձյուն էր լցվում։ Նա մի քանի անգամ ձյան կույտերի մեջ այն կորցրեց։ Մյուս ոտքի կոշիկը սպառնում էր բոլորովին քայքայվել։ Հատակին քնելու հետևանքով նրա պարանոցի վրա երկու մեծ ուռուցքներ էին առաջացել։ Շալի փոխարեն Տոկարևը իր սրբիչը տվեց նրան։

Նիհար, բորբոքված աչքերով Պավելը կատաղորեն թափահարում էր փայտե լայն բահը՝ մաքրելով ձյունը։

Այդ ժամանակ կայարանին մոտեցավ մարդատար գնացքը։ Շնչասպառ շոգեքարշը հազիվ էր գնացքը քարշ տվել մինչև կայարան։ Տենդերի վրա փայտի ոչ մի կտոր չկար, իսկ հնոցում վառվում էին վերջին մնացորդները։

— Փայտ կտաք, կգնանք, իսկ եթե ոչ, քանի դեռ շարժելը հնարավոր է, գնացքը փոխադրեցեք պահեստի գիծը,— բղավելով ասում էր մեքենավարը կայարանապետին։

Գնացքը փոխադրեցին պահեստի գիծը։ Ընկճված ուղևորներին հաղորդեցին կանգ առնելու պատճառը։ Լեփ-լեցուն վագոններում սկսեցին աղ ու վաղ անել ու հայհոյել։

— Խոսեցեք ծերունու հետ, ահա գնում է կառամատույցով։ Նա շինարարության պետն է։ Նա կարող է հրամայել, որ սահնակով փայտ բերեն շոգեքարշի մոտ։ Նրանք այդ

փայտը որպես կոճափայտ են օգտագործում,— խորհուրդ տվեց կայարանապետն ուղեկցորդներին։

Վերջիններս Տոկարևին ընդառաջ գնացին։

— Փայտ կտամ, բայց ոչ ձրի։ Չէ՞ որ դա մեր շինությունն է։ Մեզ մոտ ձյուն է կիտվել։ Գնացքում վեց-յոթ հարյուր ուղևոր կա։ Երեխաներն ու կանայք կարող են մնալ գնացքում, իսկ մնացածները թող բահը ձեռքներին մինչև երեկո ձյուն մաքրեն։ Դրա փոխարեն փայտ կստանան։ Եթե կհրաժարվեն, թող նստեն մինչև նոր տարի,— ասաց Տոկարևը ուղեկցորդներին։

— Մի տե՛ս, տղե՛րք, ինչքան ժողովուրդ է գալիս։ Նայիր, կանայք էլ,— զարմացած խոսեցին Կորշագինի թիկունքում։

Պավելը շրջվեց։

— Ահա քեզ հարյուր մարդ, աշխատանք տուր և հետևիր, որ չնստեն,— մոտենալով ասաց Տոկարևը։

Կորշագինն աշխատանք տվեց նորեկներին։ Երկաթուղայինի տարազի շինել հագած, մորթե օձիքով և տաք կարակուլի գլխարկով ինչ-որ մի բարձրահասակ տղամարդ ձեռքին զայրացած պտտեցնում էր բահը և բողոքում՝ դիմելով կողքին կանգնած երիտասարդ կնոջը, որը ծովարջի մորթուց կարած գլխարկ էր դրել՝ գագաթին խավոտ բոժոժով։

— Ես ձյուն մաքրել չեմ կարող, ոչ ոք իրավունք չունի ինձ ստիպելու։ Եթե ինձ խնդրեն, ես որպես ճանապարհների ինժեներ կարող եմ աշխատանքը ղեկավարել, բայց ո՛չ ես, ո՛չ դու պարտավոր չենք ձյուն փորել, դա հրահանգով չի նախատեսված։ Ծերունին ապօրինի է վարվում։ Ես նրան պատասխանատվության կկանչեմ։ Ո՞վ է այստեղ տասնապետը,— հարցրեց նա իրեն ամենից ավելի մոտ գտնվող բանվորին։

Մոտեցավ Կորշագինը։

— Ինչո՞ւ չեք աշխատում, քաղաքացի։

Տղամարդը արհամարհական մի հայացքով ոտքից գլուխ չափեց Պավելին։

— Իսկ դուք ձեզանից ի՞նչ եք ներկայացնում։

— Ես բանվոր եմ։

— Այդ դեպքում ես ձեզ հետ խոսելիք չունեմ։ Ուղարկեցեք ինձ մոտ տասնապետին կամ ով որ այստեղ ձեր...

Կորչագինը աչքի տակից նայեց նրան։

— Աշխատել չեք ուզում, պետք էլ չէ։ Երկաթուղու տոմսի վրա առանց մեր նշումի գնացք նստել չեք կարող։ Այդպիսին է շինարարության պետի հրամանը։

— Իսկ դուք, քաղաքացուհի, նո՞ւյնպես հրաժարվում եք,— դեպի կինը շրջվեց Պավելը և մի վայրկյան քարացավ. նրա առաջ կանգնած էր Տոնյա Տումանովան։

Ցնցոտիներով պատած այդ մարդու մեջ աղջիկը դժվարությամբ ճանաչեց Կորչագինին։ Պատառոտված, քրքրված հագուստով և ինչ-որ ֆանտաստիկ կոշիկներով, պարանոցին կեղտոտ մի սրբիչ, վաղուց չլվացված դեմքով՝ նրա առաջ կանգնած էր Պավելը։ Միայն աչքերն էին առաջվա նման անմար կրակով փայլում։ Նրա աչքերը։ Եվ ահա այդ ցնցոտիազգեստին, որը շրջմոլիկի է նման, մինչև վերջերս էլ նա սիրում էր։ Ինչպե՞ս է ամեն ինչ փոխվել։

Նա իր ամուսնու հետ, վերջերս կայացած հարսանիքից հետո, գնում է մի մեծ քաղաք, ուր ամուսինն աշխատում է ճանապարհային վարչությունում, պատասխանատու մի պոստում։ Եվ ահա թե որտեղ հանդիպեց իր պատանեկան հրապուրանքի առարկային։ Նույնիսկ անհարմար է զգում ձեռք տալ նրան։ Ի՞նչ կմտածի Վասիլին։ Ինչ տհաճ է, որ Կորչագինն այդքան իջել է։ Ըստ երևույթին հնոցապանը կյանքում հող փորելուց ավելի առաջ չի գնացել։

Աղջիկն անվճռական կանգնած էր՝ շփոթմունքից կարմրած։ Ինժեներին կատաղեցրեց ցնցոտիազգեստի լկտի, ինչպես ինքն էր կարծում, վերաբերմունքը, որը աչքը չէր հեռացնում նրա կնոջից։ Նա բահը գետնին շպրտեց և մոտեցավ Տոնյային։

— Գնանք, Տո՛նյա, ես չեմ կարող հանգիստ նայել այդ լացարոնին[1]։

Կորչագինը «Ջուզեպպե Գարիբալդի» վեպից գիտեր, թե ով է լացարոնին։

— Եթե ես լացարոնի եմ, ապա դու պարզապես կիսամորթ բուրժույ ես,— խուլ պատասխանեց նա ինժեներին և, հայացքը շրջելով դեպի Տոնյան, չոր-չոր ու կտրուկ ասաց.— Վերցրեք բահը, ընկեր Տումանո՛վա, և շարքի կանգնեցեք։

[1] Լացարոնի — մուրացկան։

Օրինակ մի վերցրեք այդ գիրացած գոմեշից։ Ներողություն եմ խնդրում, չգիտեմ ձեր ինչն է նա։

Նայելով Տոնյայի մորթե երկարաճիտ կրկնակոշիկներին՝ Պավելը ոչ սիրալիր տեսքով ժպտաց և հարնանցիորեն ավելացրեց.

— Խորհուրդ չեմ տալիս մնալ։ Օրերս բանդան այցելության եկավ այստեղ։

Շրջվեց և կրկնակոշիկները շրմփացնելով՝ գնաց յուրայինների մոտ։

Վերջին խոսքերն ազդեցին նաև ճանապարհային ինժեների վրա։

Տոնյան համոզեց նրան մնալ աշխատելու։

Երեկոյան, աշխատանքը վերջացնելով՝ կայարան վերադարձան։ Տոնյայի ամուսինն առաջ ընկավ՝ շտապելով տեղ գրավել գնացքում։ Տոնյան կանգ առավ, ճանապարհ տալով բանվորներին։ Բահին հենվելով՝ բոլորից հետո գալիս էր հոգնած Պավելը։

— Բարև, Պավլյուշա՛։ Ես, խոստովանում եմ, չէի սպասում, թե քեզ այս վիճակում կտեսնեմ։ Մի՞թե դու իշխանության մոտ գետին փորելուց ավելի լավ բանի չարժանացար։ Ես կարծում էի, թե դու վաղուց արդեն կոմիսար ես կամ այդպիսի մի բան։ Ինչ անհաջող է դասավորվել քո կյանքը...— խոսեց Տոնյան՝ քայլելով նրա կողքից։

Պավելը կանգ առավ և զարմացած մի հայացքով դիտեց Տոնյային։

— Ես ևս չէի սպասում քեզ հանդիպել այդպես... թթու դրած,— Պավելը վերջապես գտավ ավելի մեղմ համապատասխան բառ։

Տոնյայի ականջների բլթակները կարմրեցին։

— Դու էլի՞ այդպես կոպիտն ես։

Կորչագինը բահն ուսին դրեց և քայլեց։ Մի քանի քայլ անելուց հետո միայն պատասխանեց.

— Իմ կոպտությունը, ընկե՛ր Տումանովա, անհամեմատ ավելի թեթև է ձեր, թող թույլ տրվի ասել, քաղաքավարությունից։ Իմ կյանքի մասին անհանգստանալու պատճառ չկա, այստեղ ամեն ինչ կարգին է։ Իսկ, ա՛յ, ձեր կյանքը շատ ավելի վատ է դասավորված, քան ես սպասում էի։ Մի երկու տարի

առաջ դու ավելի լավ մարդ էիր. բանվորին ձեռք տալ չէիր համարձակվի։ Իսկ այժմ քեզանից նաֆթալինի հոտ է գալիս։ Եվ, խղճով ասած, ես քեզ հետ խոսելու բան չունեմ։

Պավելը նամակ ստացավ Արտյոմից։ Եղբայրը գրում էր, որ շուտով իր հարսանիքն է լինելու և խնդրում էր, ինչ գնով էլ որ լինի, գալ։

Քամին Կորչագինի ձեռքից խլեց սպիտակ թերթիկը, և այն աղավնու պես վեր սլացավ։ Նա հարսանիք գնալ չի կարող։ Ի՞նչ միտք ունի գնալը։ Դեռ երեկ այդ արջ Պանկրատովը նրա խմբից առաջ անցավ և այնպիսի մի արագությամբ, որ բոլորը խիստ զարմացան։ Բեռնող բանվորը շեշտակի թափով դեպի առաջնություն էր գնում։ Նա կորցրել էր իր սովորական հանգստությունը և իր «նավահանգստային-ներին» խելահեղ թափի էր մղում։

Պատոշկինը դիտում էր կառուցողների այդ լուռ, կատաղի պայքարը։ Զարմանքով քունքերը տրորելով, ինքն իրեն հարցնում էր. «Ի՞նչ մարդիկ են սրանք։ Այս ի՞նչ անհասկանալի ուժ է։ Եթե եղանակը էլի մի օր էլ պահպանվի, մենք հո կմոտենանք անտառամշակման վայրին։ Ստացվում է այնպես, որ եթե ամբողջ կյանքումդ էլ սովորես, ծերության օրով էլի դեռ հիմար ես։ Այս մարդիկ իրենց աշխատանքով բոլոր հաշիվներն ու նորմաները խախտում են»։

Քաղաքից եկավ Կլավիչեկը և բերեց իր թխած վերջին հացը։ Տոկարևի հետ տեսնվելուց հետո՝ նա որոնեց և գտավ Կորչագինին աշխատանքի վայրում։ Բարեկամաբար ողջունեցին իրար։ Կլավիչեկը ժպտալով պարկից հանեց մի հիանալի, դեղին, մորթեպատ շվեդական բաճկոն և ձեռքի ափով խփելով առաձգական խրոմին՝ ասաց.

— Սա քեզ։ Չե՞ս հասկանում, թե ումից... Հա-հա՜։ Այ թե հիմարն ես, ա՛յ տղա։ Սա քեզ ընկեր Ուստինովիչն է ուղարկում, որ դու, հիմար, չսառչես։ Բաճկոնը ընկեր Օլշինսկին նվիրեց նրան, նա էլ Օլշինսկու ձեռքից վերցրեց և ինձ հանձնեց, թե տար Կորչագինին։ Ակիմը նրան ասել էր, որ դու այս սառնամանիքին պիջակով ես աշխատում։ Օլշինսկին մի քիչ քիթը կնճռոտեց։ «Ես,— ասում է,— կարող եմ այդ ընկերոջը շինել ուղարկել»։ Իսկ Ռիտան ծիծաղում էր՝ ոչինչ,

բաճկոնով աշխատելը նրա համար ավելի հարմար կլինի։ Դե, ստացիր։

Պավելը թանկագին իրը ձեռքն առավ և անվճռականորեն հագավ իր սառած մարմնի վրա։ Շուտով փափուկ մորթին տաքացրեց նրա ուսերն ու կուրծքը։

Ռիտան գրում էր.

Դեկտեմբերի 20

Բուքի շրջան է սկսվել։ Ձյուն է և քամի։ Բոյարցիները համարյա արդեն նպատակակետի մոտ էին, բայց սառնամանիքն ու բուքը նրանց կանգնեցրին։ Խրվում են ձյան մեջ։ Սառած գետին փորելը դժվար է։ Մնացել է միայն երեք քառորդ կիլոմետր, բայց ամենադժվարինը։

Տոկարևը հաղորդում է. շինարարության վայրում տիֆ է երևան եկել, երեք հոգի հիվանդացել են։

Դեկտեմբերի 22

Կոմերիտմիության նահանգական կոմիտեի պլենումին Բոյարկայից ոչ ոք չեկավ։ Բանդիտները հաց բարձած մի էշերլոն են խորտակել Բոյարկայից տասնյոթ կիլոմետրի վրա։ Պարենժողկոմատի լիազորի հրամանով կառուցողների ամբողջ ջոկատը այնտեղ է ուղարկված։

Դեկտեմբերի 23

Բոյարկայից քաղաք բերեցին տիֆով հիվանդ էլի յոթ հոգու։ Նրանց մեջ և Օկունևը։ Եղա կայարանում։ Խարկովից եկած գնացքի բուֆերներից փայտացած դիակներ էին հանում։ Հիվանդանոցներում ցուրտ է։ Անիծյալ բուք։ Ե՞րբ կվերջանա։

Դեկտեմբերի 24

Հենց նոր եկա ժուլպրայի մոտից։ Պարզվում է, որ ճիշտ է. Օռլիկն իր ամբողջ բանդայով երեկ գիշեր հարձակվել է Բոյարկայի վրա։ Երկու ժամ է տևել կռիվը բանդայի և մերոնց միջև։ Բանդան կտրած է եղել հաղորդակցությունը և

ժուխրային այսօր առավոտյան է միայն հաջողվել ճշգրիտ տեղեկություններ ստանալ։ Բանդային ետ են մղել։ Տոկարևը վիրավորված է կրծքից, գնդակը ծակել անցել է կուրծքը։ Նրան այսօր կբերեն։ Սրածել են Ֆրանց Կլավիշեկին, որն այդ գիշերը պահակախմբի պետն է եղել։ Այդ նա է նկատել բանդան ու տագնապ բարձրացրել, բայց հարձակվողներից հրաձգությամբ պաշտպանվելով՝ չի հասցրել հասնել մինչև դպրոց և սրի է քաշվել։ Կառուցողների ջոկատում տասնմեկ մարդ վիրավորված է։ Այժմ այնտեղ զրահագնացք և հեծյալ երկու էսկադրոն է ուղարկված։

Շինարարության պետ է դարձել Պանկրատովը։ Ցերեկը Պուշիրևակին վրա է հասել բանդային Գլուբոկի խուտորի մոտ և սրածել բոլորին, մինչև վերջին մարդը։ Անկուսակցական կադրայինների մի մասը գնացքի չոգեասելով՝ կոճափայտերի վրայով ոտքով է հեռացել։

Դեկտեմբերի 25

Տոկարևին և մյուս վիրավորներին բերեցին։ Նրանց տեղավորեցին կլինիկական հիվանդանոցում։ Բժիշկները խոստացել են ծերուկին փրկել։ Նա ուշագնաց է։ Մյուսների կյանքին վտանգ չի սպառնում։

Կուսակցության նահանգական կոմիտեն և մենք Բոյարկայից հետևյալ հեռագիրն ենք ստացել. «Ի պատասխան բանդիտական հարձակման, մենք, նեղգիծ երկաթուղու կառուցողներս, որ միտինգի ենք հավաքվել «Հանուն սովետների իշխանության» զրահագնացքի հրամանատարության և հեծյալ գնդի կարմիրբանակայինների հետ միասին, հավատացնում ենք ձեզ, որ չնայած բոլոր խոչընդոտներին՝ քաղաքին հունվարի մեկին փայտ կտանք։ Լարելով մեր բոլոր ուժերը՝ ձեռնարկում ենք աշխատանքը։ Կեցցե՛ մեզ ուղարկող կոմունիստական կուսակցությունը։ Միտինգի նախագահ՝ Կորշագին։ Քարտուղար՝ Բերգին»։

Մալոմենկայում զինվորական պատիվներով թաղեցինք Կլավիշեկին։

Բաղձալի փայտն արդեն մոտ էր, բայց դեպի այդ փայտը

շարժվում էին տանջալիորեն դանդաղ։ Տիֆն ամեն օր տասնյակ պետական ձեռքեր էր խլում։

Հարբածի պես օրորվելով, ծալվող ոտքերով՝ Կորշագինը կայարան էր վերադառնում։ Վաղուց արդեն նա աշխատում էր բարձր տաքությամբ, բայց այսօր տաքությունը սովորականից ավելի էր զգացվում։

Ջոկատն արյունաքամ անող որովայնային տիֆը Պավելին էլ հասավ։ Բայց նրա ամուր մարմինը դիմադրում էր, և հինգ օր նա իր մեջ ուժ էր գտնում, որպեսզի բարձրանա հարդով ծածկված բետոնե հատակից և բոլորի հետ միասին աշխատանքի գնա։ Նրան չփրկեցին ո՛չ տաք բաճկոնը, ո՛չ Ֆյոդորի ուղարկած վալենկաները, որ նա հագավ արդեն ցրտահարված ոտքերին։

Ցուրաքանչյուր քայլի հետ ինչ-որ մի բան սուր ծակում էր կուրծքը, դողից ատամներն իրար էին խփվում, աչքերը շաղվում էին, և թվում էր, թե ծառերը կարուսելի պես պտտվում են։

Հաղիվ կայարան հասավ։ Անսովոր աղմուկը նրան զարմացրեց։ Ուշադիր նայեց. մի երկար գնացք էր ձգվել կայարանով մեկ։ Կառամատույցների վրա կանգնած էին փոքրիկ շոգեքարշեր, դրված էին ռելսեր, կոճափայտեր, այդ բոլորը բեռնաթափում էին գնացքի հետ եկած մարդիկ։ Նա մի քանի քայլ էլ արեց և հավասարակշռությունը կորցրեց։ Թեթևակի ղրաց, որ գրունտը գետնին խփեց։ Հաճելի սառնությամբ ձյունը ուռմվեց նրա տաք այտին։

Մի քանի ժամ հետո միայն նրան գտան։ Բերեցին բարաք։ Կորշագինը ծանր էր շնչում և իրեն շրջապատողներին չէր ճանաչում։ Զրահագնացքից կանչված բուժակը հայտարարեց. «Թոքերի կրուպոզ բորբոքում և որովայնային տիֆ։ Ջերմությունը՝ 41,5։ Բորբոքված հոդերի և պարանոցի ուռուցքի մասին խոսել էլ շարժ, մանրուք են։ Առաջին երկուսը միանգամայն բավական են, որպեսզի նրան մյուս աշխարհն ուղարկեն»։

Պանկրատովն ու նոր եկած Դուբավան ամեն ինչ արին, որպեսզի Պավելին փրկեն։

Կորշագինի հայրենակից Ալյոշա Կոխանսկուն հանձնարարվեց հիվանդին տանել իր հայրենի քաղաքը։

Միայն Կորչագինի ամբողջ խմբի օգնությամբ և, որ գլխավորն է, Խոլյավայի, Պանկրատովի և Դուբավայի ճնշման տակ հաջողվեց ուշագնաց Կորչագինին և Ալյոշային լեփ-լեցուն վագոնի մեջ տեղավորել։ Նրանց ներս չէին թողնում՝ սարսափելով բծավոր տիֆի վարակից, դիմադրում էին, սպառնում տիֆով հիվանդին ճանապարհին դուրս ձգել։

Խոլյավան՝ նագանը թափահարելով նրանց քթի տակ, որոնք խանգարում էին հիվանդին վագոն մտցնել, բղավում էր.

— Հիվանդը վարակիչ չէ։ Նա կգնա, եթե նույնիսկ դրա համար պետք լինի ձեզ բոլորիդ դուրս նետել։ Հիշեցեք, մորթապաշտնե՛ր, եթե որևէ մեկը նրան թեկուզ մատ դիպցնի, ես ամբողջ գծին կհաղորդեմ, բոլորիդ գնացքից կիջեցնենք և կնստեցնենք վանդակի հետևը։ Ահա քեզ Պավկայի մաուզերը, Ալյոշկա, ուղղակի կրակիր ամեն մեկի վրա, ում խելքին կփչի նրան իջեցնել,— սաստելու համար ասաց Խոլյավան։

Գնացքը շարժվեց։ Դատարկված կառամատույցում Պանկրատովը մոտեցավ Դուբավային։

— Ի՞նչ ես կարծում, կապրի՞։

Եվ պատասխան չստացավ։

— Գնանք, Միտյա՛յ, ինչ որ լինելու է, կլինի։ Այժմ մենք ենք ամեն ինչի համար պատասխանատու։ Պետք է գիշերը շոգեքարշերը բեռնել, իսկ առավոտյան կփորձենք տաքացնել դրանք։

Խոլյավան զանգահարեց ամբողջ գծի իր ընկեր չեկիստներին։ Նա ջերմորեն խնդրում էր նրանց, որ թույլ չտան ուղևորներին՝ գնացքից իջեցնել հիվանդ Կորչագինին, և հաստատ խոստում ստանալուց հետո միայն, թե «թույլ չեն տա», գնաց քնելու։

Երկաթուղու հանգուցային մի կայարանում մարդատար գնացքից ուղղակի կառամատույց հանեցին վագոններից մեկում մեռած անծանոթ շիկահեր երիտասարդ մի տղայի դիակը։ Ով էր և ինչից էր մեռել՝ ոչ ոք չգիտեր։

Կայարանի չեկիստները, հիշելով Խոլյավայի խնդրանքը, վազեցին դեպի վագոնը, որպեսզի խանգարեն իջեցնելու, բայց համոզվելով, որ տղան մեռել է, կարգադրեցին դիակը վերցնել և տանել էվակուացիոն ընդունարանի մեռելատունը։

Անմիջապես զանգահարեցին Բոյարկա, Խոլյավային՝ հաղորդելով նրան մտերմի մահը, որի կյանքի համար նա այնպես անհանգստանում էր։

Բոյարկայից ստացած կարճ հեռագիրը նահանգական կոմիտեին հաղորդում էր Կորչագինի զոհվելու մասին։

Ալյոշկա Կոխանսկին հիվանդ Կորչագինին հասցրեց իր հարազատների մոտ և ինքը ևս պառկեց՝ տիֆով ծանր հիվանդ։

Հունվարի 9

Ինչո՞ւ է այսպես ծանր։ Սեղանի մոտ նստելուց առաջ ես լալիս էի։ Ո՞վ կարող էր մտածել, թե Ռիտան էլ կարող է հեկեկալ և այն էլ ինչպես ցավագին։ Մի՞թե արցունքները միշտ կամքի թուլության նշան են։ Այսօր այդ արցունքների պատճառն այրող վիշտն է։ Ինչո՞ւ եկավ այդ վիշտը։ Ինչո՞ւ վիշտը եկավ այսօր, մեծ հաղթանակի օրը, երբ ցրտի սարսափը պարտված է, երբ երկաթուղային կայարանները լցված են թանկագին վառելանյութով, երբ ես հենց նոր հաղթանակի հանդեսումն էի, քաղսովետի ընդլայնված պլենումում, որտեղ մեծարում էին հերոս կառուցողներին։ Դա հաղթանակ է, բայց այդ հաղթանակին իրենց կյանքը զոհեցին երկուսը՝ Կլավիչեկը և Կորչագինը։

Պավելի կորուստն ինձ համար բացահայտեց ճշմարտությունը, նա ինձ համար ավելի թանկ էր, քան ես կարծում էի։

Այստեղ ընդհատում եմ գրառումներս։ Զգիտեմ, երբևէ կվերադառնամ, արդյոք, նոր գրառումների։ Վաղը գրում եմ խարկով, որ համաձայն եմ աշխատել Ուկրաինայի կոմերիտմիության կենտկոմում։

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Ջահելությունը հաղթեց։ Տիֆը չսպանեց Կորչագինին։ Պավելը չորրորդ անգամ անցավ մահվան սահմանը և դեպի կյանք վերադարձավ։ Մի ամիս հետո միայն, նիհար ու գունատ, նա կանգնեց իր դողդոջուն ոտներին և պատերից բռնելով փորձեց քայլել սենյակում։ Մոր օգնությամբ նա հա-

սավ լուսամուտին և երկար նայեց ճանապարհին։ Պսպղում էին հալվող ձյան ջրափոսերը։ Դրսում առաջին նախագարնանային հալոցն էր սկսվել։

Ուղղակի լուսամուտի առաջ, բալենու ճյուղին փաթվել նստել էր գորշափոր մի ճնճղուկ՝ անհանգիստ նայելով Պավելին իր գողի աչքերով։

— Հը՞, ես ու դու ձմեռն անցկացրինք, հա՞,— կամացուկ ասաց Պավելը՝ մատով լուսամուտը թխկթխկացնելով։

Մայրը վախեցած նայեց նրան։

— Ո՞ւմ հետ ես էնտեղ խոսում։

— Ճնճղուկին եմ ասում... թռավ, էնպես մի խարդախն էր երևում,— և թույլ ժպտաց։

Գարնան ամենատաք օրերն էին։ Կորշագինն ափսեց մտածել քաղաք վերադառնալու մասին։ Նա բավականաչափ ամրապնդվել էր, որպեսզի քայլել կարողանար, բայց նրա օրգանիզմում ինչ-որ վատ բան էր կատարվում։ Մի անգամ պարտեզում զբոսնելիս՝ նա հանկարծ դժանին ընկավ ոլնաշարում զգացած սուր ցավից։ Դժվարությամբ սենյակ հասավ։ Հաջորդ օրը բժիշկն ուշադիր քննեց նրան։ Ողնաշարում խոր մի խոռոչ շոշափելով՝ զարմացած «հըմ» արեց։

— Որտեղի՞ց է սա ձեզ մոտ։

— Սա, բժիշկ, սալարկի քարի հետքն է։ Ռովնո քաղաքի մոտ երեք դյույմանոց հրանոթով մեր թիկունքում խճուղին էին ավերում...

— Ինչպե՞ս էիր քայլում։ Սա ձեզ չէ՞ր անհանգստացնում։

— Ո՛չ։ Այն ժամանակ մի երկու ժամ պառկեցի և նորից ձի հեծա։ Ա՛յ, այժմ միայն առաջին անգամ հիշեցրեց։

Բժիշկը խոժոռված զննում էր խոռոչը։

— Այո՛, սիրելի՛ս, շատ տհաճ բան է։ Ողնաշարն այսպիսի ցնցումներ չի սիրում։ Հուսանք, որ այսուհետև նա իրեն չի հիշեցնի։ Հագնվեցեք, ընկե՛ր Կորշագին։

Եվ նա համակրանքով ու վատ թաքցրած վշտակցությամբ նայեց իր հիվանդին։

Արտյոմն ապրում էր իր կնոջ՝ անշուք տեսքով ջահել Ստեշայի ընտանիքում։ Սա դյուղացիական աղքատիկ մի ընտանիք էր։ Մի անգամ Պավելն այցելեց Արտյոմին։ Փոքրիկ,

կեղտոտ բակում վազվզում էր մի պստիկ, կեղտոտ, շիլ տղա։ Պավելին տեսնելով, նա առանց քաշվելու իր աչուկները հառեց նրան և լարված քչփորելով քիթը՝ հարցրեց.

— Ի՞նչ ես ուզում։ Եկել ես, որ գողությո՛ւն անե՞ս։ Ավելի լավ է գնաս, թե չէ մայրիկը բարկացկոտն է։

Հին, ցածրիկ խրճիթի փոքրիկ լուսամուտը բացվեց, և Արտյոմը ձայն տվեց.

— Նե՛րս եկ, Պավլո՛ւշա։

Վառարանի մոտ ակիշը ձեռքին ինչ-որ բան էր անում դեղնած, մագաղաթի նմանող դեմքով մի պառավ։ Մի ակնթարթ նրա անսիրալիր հայացքը դիպավ Պավելին, հետո ճանապարհ տալով հյուրին՝ չխկչխկացրեց իր կաթսաները։

Երկու անչափահաս աղջիկներ, կարճապոչ հյուսերով, արագորեն բարձրացան վառարանի վրա և վայրենի հետաքրքրությամբ սկսեցին այնտեղից նայել։

Սեղանի մոտ նստած էր մի քիչ շփոթված Արտյոմը։ Նրա ամուսնությանը ո՛չ մայրը, ո՛չ եղբայրը հավանություն չէին տալիս։ Սերնդեսերունդ պրոլետար Արտյոմը, հայտնի չէ, թե ինչու խզեց իր եռամյա մտերմությունը քարտաշի աղջիկ, բանվոր-դերձակուհի, գեղեցկուհի Գալյայի հետ և տնփեսա գնաց գորշ Ստեշայի մոտ, մի ընտանիք, որ հինգ բերան ուներ և ոչ մի աշխատող ձեռք։ Այստեղ, դեպոյի աշխատանքից հետո, նա իր ամբողջ ուժը գութանի վրա էր գործադրում՝ նորոգելով քայքայված տնտեսությունը։

Արտյոմը գիտեր, որ Պավելը հավանություն չի տալիս նրա նահանջին, ինչպես նա էր արտահայտվում, դեպի «մանրբուրժուական տարերքը» և այժմ դիտում էր, թե եղբայրն ինչպես է ընկալում այն ամենը, ինչ շրջապատում է իրեն այստեղ։

Նստեցին, հանդիպման ժամանակ սովորական դարձած մի քանի աննշան խոսքեր փոխանակեցին, և Պավելը պատրաստվեց գնալու։ Արտյոմը նրան պահեց.

— Կա՛ց, հաց կուտենք միասին, հիմա Ստեշան կաթ կբերի։ Ուրեմն՝ վաղը գնո՞ւմ ես։ Դեռ թույլ ես, Պա՛վկա։

Սենյակ մտավ Ստեշան, բարևեց, Արտյոմին կալատեղ կանչեց օգնելու, որ ինչ-որ բան տեղափոխեն։ Պավելը մե-

նակ մնաց պառավի հետ, որը խոսել չէր սիրում։ Լուսամուտից լսվեց եկեղեցու զանգերի ձայնը։ Պառավը ակիշը ցած գրեց և անբավական քրթմնջաց.

— Տեր Հիսուս, էս սատանի աշխատանքի պատճառով աղոթելու ժամանակ էլ չի մնում։— Եվ վզի թաշկինակը հանելով ու խեթ նայելով եկվորին՝ մոտեցավ սենյակի այն անկյունին, ուր դրված էին ժամանակից մուգ գույն ստացած, վհատ դեմքով սրբապատկերները։ Երեք ոսկրոտ մատները ոլորունց անելով՝ խաչակնքեց։

— Հայր մեր, որ հերկինս ես, սուրբ եղիցի անուն քո,— շշնջաց նա չորացած շրթունքներով։

Բակում փոքրիկ տղան հանկարծակի թռավ հեծավ սև, կախականջ խոզին։ Բոբիկ ոտներով ամուր խթանելով նրան, թաթիկներով պինդ բռնած կոշտ մազերից՝ տղան բղավում էր պտտվող ու խորդացող կենդանու վրա.

— Դե-ե՜, գնա, գնացինք։ Դե հա՜, երես մի՛ առնի։ Տղան մեջքին՝ խոզը սլանում էր բակում, աշխատում էր նրան վայր նետել, բայց թոկից փախած շլդիկը իրեն պինդ էր պահում։

Պառավն աղոթքն ընդհատեց և գլուխը դուրս հանեց լուսամուտից։

— Ես քեզ հեծնել ցույց կտամ, այ հերդ գերեզմանում չդադարի, հա՜։ Ցա՜ծ արի խոզից, գրող մտնի կողդ, գետինը մտնի քեզ նման խելառը։

Խոզին, վերջապես, հաջողվեց իր հեծյալին ցած նետել, և բավարարված պառավը նորից շրջվեց դեպի սրբապատկերները։ Աստվածավախ դեմք ընդունելով՝ նա շարունակեց.

— Եղիցի արքայություն քո...

Դռների մեջ երևաց լաց եղած երեխան։ Թևքով սրբելով ջարդված քիթը, ցավից հեծկլտալով՝ նա նվնվաց.

— Մայրի-ի՜կ, բլիթ տո՜ւր։

Պառավը չարացած ետ նայեց.

— Չի թողնում մարդ աղոթի, շլդի՜կ սատանա։ Շան լակոտ, ես քեզ հիմա էնպես կերակրեմ որ...— Եվ նա նստարանի վրայից վերցրեց մտրակը։ Տղան վայրկենապես անհետացավ։ Վառարանի հետևում աղջիկները կամացուկ փոթկացրին։

Պառավը երրորդ անգամ սկսեց աղոթքը։

Պավելը, եղբորը չսպասելով, վրե կացավ և դուրս եկավ։ Վանդակադուռը փակելիս ծայրի լուսամուտում նկատեց պառավի գլուխը։ Նա հայացքով հետևում էր Պավելին։

«Ո՞ր սատանան է Արտյոմին այստեղ ձգել։ Այժմ նա մինչև մահը դուրս չի պրծնի։ Ստեշան ամեն տարի երեխա կբերի։ Խրվել է, ինչպես բզեզը գոմաղբի մեջ։ Դեռ որ դեպոն էլ հանկարծ թողնի,— խորհում էր ընկճված Պավելը՝ քայլելով փոքրիկ քաղաքի ամայի փողոցներով։— Իսկ ես մտածում էի նրան քաղաքական կյանքի մեջ ներգրավել»։

Նա ուրախ էր, որ վաղը կմեկնի այնտեղ, մեծ քաղաքը, ուր մնացել են իր ընկերները և իր սրտին մոտ մարդիկ։ Մեծ քաղաքը ձգում է իր հզորությամբ, կենսունակությամբ, մարդկային անընդհատ հոսանքների իրարանցումով, տրամվայների դղրդյունով և ավտոմոբիլների սուլիչներով։ Իսկ որ գլխավորն է, ձգում էին քարե վիթխարի կարպուսները, ծխոտված արտադրամասերը, մեքենաները, անվակների մեղմ շըրշյունը։ Ձգում էին նրան այնտեղ, ուր սրընթաց վազքով պտտվում էին հսկա թափանիվները, և մեքենայի յուղի հոտ էր գալիս, դեպի այն, ինչի հետ արդեն հարազատացել էր։ Իսկ այստեղ, փոքրիկ ու խաղաղ քաղաքում թափառելով փողոցներում՝ Պավելն ինչ-որ ճնշվածություն էր զգում։ Զարմանալի չէր, որ քաղաքը նրա համար օտար, տաղտկալի էր դարձել։ Ցերեկը զբոսանքի դուրս գալը նույնիսկ տհաճ էր։ Արտասանդուղքների վրա նստած շաղակրատ սանամերների կողքից անցնելիս Պավելը լսում էր նրանց հապշտապ խոսակցությունը.

— Զարմանում եմ, կնանի՜ք, որտեղի՞ց է էս վախենալուն։

— Երևում է բերկուլոզ ունի, թոքախտավոր է։

— Իսկ վրայի տուժուրկան հարստի է, անպայման գողացած կլինի...

Եվ շատ ուրիշ բաներ, որոնցից զզվանք էր առաջանում։

Վաղուց արդեն արմատով կտրվել էր այստեղից։ Մեծ քաղաքն ավելի մոտ ու հարազատ էր դարձել։ Հաստատուն ու կենսուրախ եղբայրություն և աշխատանք։

Կորշագինն սննկատելիորեն հասավ եղևնիների պուրակին և ճամփաբաժանման կետում կանգ առավ։ Աջում, անտառից բարձր, սրածայր ցանկապատնեշով անջատված, մռայլ, հին բանտն էր, նրա հետևում՝ հիվանդանոցի սպիտակ կորպուսները։

Ահա այստեղ, այս ընդարձակ հրապարակում են օդակների մեջ շնչահեղձ եղել Վալյան ու նրա ընկերները։ Լուռ կանգնած էր նա այն վայրում, ուր կախաղանն էր եղել, հետո գնաց դեպի զառիթափը։ Ներքև իջավ և դուրս եկավ եղբայրական գերեզմանի փոքրիկ հրապարակը։

Ինչ-որ մեկի հոգատար ձեռքերը շիրմաշարքը զարդարել էին կանաչ ցանկապատով։ Զառիթափից վեր էին բարձրանում գեղուղեղ եղևնիները։ Զորակի լանջերին փռված էր դալար խոտի կանաչ մետաքսը։

Այստեղ քաղաքի ծայրն է։ Լուռ է և տխուր։ Անտառային թարմ տատփյունն է մի այն և վերածնված հողի գարնանային բուրբոսը։ Այստեղ արիաբար մեռան մեր եղբայրները, որպեսզի կյանքը գեղեցիկ դառնա նրանց համար, ով ծնվել է աշխատության մեջ, նրանց համար, ում ծնունդը արդեն ստրկության ակիզբն էր։

Պավելի ձեռքը դանդաղորեն գլխից ցած բերեց գլխարկը, և թախիծը, մեծ թախիծը համակեց նրա սիրտը։

Մարդու համար ամենաթանկ բանը կյանքն է։ Այն մարդուն մի անգամ է տրվում, և պետք է ապրել այնպես, որ տանջալի ցավ չզգաս աննպատակ ապրած տարիների համար, որպեսզի քեզ չայրի ստոր և մանր անցյալի ամոթանքը, և որպեսզի մեռնելիս կարողանաս ասել՝ ամբողջ կյանքս և բոլոր ուժերս նվիրել եմ աշխարհում ամենագեղեցիկ բանին՝ մարդկության ազատագրման համար մղվող պայքարին։ Եվ պետք է շտապել ապրել։ Չէ՞ որ անհեթեթ մի հիվանդություն կամ որևէ ողբերգական պատահականություն կարող են ընդհատել կյանքդ։

Կորշագինը եղբայրական գերեզմանից հեռացավ այս մտքերով համակված։

Տանը մայրը տխուր տրտում որդուն ճանապարհ գցելու պատրաստություն էր տեսնում։ Դիտելով նրան՝ Պավելը տեսավ, որ նա իրենից թաքցնում է արցունքները։

— Գուցե կմնա՞ս, Պավլո՛ւշա։ Ծերությանդ օրով մենակ ապրելը դառն է ինձ համար։ Քանի երեխա ունեմ, բայց հենց որ մի քիչ մեծանում են, դեսուդեն են ցրվում։ Ի՞նչն է քեզ քաշում քաղաք։ Այստեղ էլ կարելի է ապրել։ Թե՞ դու էք ես քեզ համար մի կտրած մազերով լոր գտել։ Ինձ՝ պառավիս հոգ ոչ ոք բան չի պատմի։ Արտյոմն ամուսնացավ, մի բան էլ չասաց, իսկ դու արդեն ավելի ես։ Ես ձեզ տեսնում եմ միայն այն ժամանակ, երբ հաշմանդամ եք դառնում,— ցածր ձայնով ասում էր մայրը՝ մաքուր պայուսակի մեջ դարսելով որդու աղքատիկ ունեցվածքը։

Պավելը բռնեց նրա ուսերից, քաշեց դեպի իրեն։

— Լոր չկա, մայրի՛կ։ Իսկ դու գիտե՞ս, պատռվի՛կս, որ թռչուններն իրենց տեսակից են ընկերուհի ընտրում։ Ես քո կարծիքով ինչ եմ, լո՞ր։

Մորն ստիպեց ժպտալ։

— Ես, մայրի՛կ, ինքս ինձ խոսք եմ տվել աղջիկներին չփաղաքշել, մինչև որ ամբողջ աշխարհում բուրժույներին ոչնչացնենք։ Ասում ես, երկա՞ր պիտի սպասենք։ Ո՞չ, մայրի՛կ, բուրժույը երկար չի դիմանա... Բոլոր մարդկանց համար մի հանրապետություն կլինի, իսկ ձեզ՝ պառավներիդ ու ծերուկներիդ, որոնք աշխատավոր են, Իտալիա կուղարկենք, մի էդպիսի տաք երկիր կա, ծովի մոտ է գտնվում։ Էնտեղ, մայրի՛կ, երբեք ձմեռ չկա։ Ձեզ կբնակեցնենք բուրժույների պալատներում, և ձեր պառավ ոսկորները արևի տակ կտաքացնենք։ Իսկ մենք կգնանք Ամերիկա՝ բուրժույներին վերջացնելու։

— Ես մինչև քո հեքիաթը չեմ ապրի, տղա՛ս... Քո պապն էլ էդպես միշտ առաջ էր վազում, նավաստի էր։ Իսկական ավազակ, մեղա՝ ասածս։ Բանն էնտեղ հասցրեց, որ Սևաստոպոլի կռվից առանց ոտ ու ձեռքի տուն վերադարձավ։ Կրծքից երկու խաչ էին կախել և ժասրավենով ցարական երկու հիսունկոպեկանոց, բայց ծերուկը մեռավ սարսափելի աղքատության մեջ։ Ըմբոստ էր, ինչ-որ իշխանության մարդու գլխին ձեռնափայտով խփել էր, համարյա մի տարի բանտ նստեց։ Խցկեցին բանտը, խաչերն էլ չոգնեցին։ Նայում եմ ես քեզ, անպատճառ պապիդ ես քաշել։

— Էս ի՞նչ է, մայրի՛կ, հրաժեշտն ինչո՞ւ ենք էսպես անուրախ դարձնում։ Տուր ինձ հարմոնը, վաղուց ձեռքս չեմ առել։

Գլուխը խոնարհեց ստեղների սուտակե շարքերին։ Մայրը զարմացավ նրա երաժշտության նոր տոնների վրա։

Այնպես չէր նվագում, ինչպես առաջ։ Չկային այն անհոգ կտրիճությունը, կորովի ճիչերն ու ճարպիկ անցումները, այն գինով խիզախումները, որոնք ամբողջ քաղաքում հռչակել էին երիտասարդ հարմոնիստ Պավկային։ Երաժշտությունը հնչում էր մելոդիկ, ուժը չկորցնելով, դարձել էր ավելի խորունկ։

Կայարան եկավ մենակ։

Մորը համոզեց տանը մնալ, չէր ուզում, որ նա հրաժեշտ տալիս արցունք թափի։

Գնացք լցվեցին բոլորը միասին վրա տալով։ Պավելն ազատ թախտ գրավեց ամենավերևում և այնտեղից դիտում էր անցքերում ճչացող և գրգռված մարդկանց։

Բոլորը դարձյալ պարկեր էին քարշ տալիս և խոթում էին նստարանների տակ։

Երբ գնացքը շարժվեց, մի քիչ խաղաղվեցին, և ինչպես միշտ այդպիսի դեպքերում, ագահորեն սկսեցին ուտել։

Պավելը շուտով քնեց։

Առաջին տունը, որ նա ուզում էր այցելել, քաղաքի կենտրոնում էր, Կրեշչատիկում։ Դանդաղ բարձրանում էր աստիճաններով։ Շուրջն ամեն ինչ ծանոթ է, ոչինչ չի փոխվել։ Անցավ կամրջով, ձեռքը սահեցրեց ողորկ ճաղաշարով։ Մոտեցավ վայրէջքին։ Կանգ առավ. կամրջի վրա ոչ մի շունչ։ Անեզր բարձրության վրա գիշերը՝ կախարդված աչքերի առաջ փառահեղ մի տեսարան է բացել։ Խավարը սև թավիշով է պատել հորիզոնը, անհամար աստղերը թեքվելով առկայծում էին ֆոսֆորային լույսով, այրվում։ Իսկ ավելի ներքև, այնտեղ, որ անտեսանելի սահմանում ձուլվում են երկնակամարն ու երկիրը, քաղաքը մթության մեջ միլիոնավոր ճրագներ է սփռում...

Աստիճաններով Կորշագինին ընդառաջ մի քանի մարդ էին բարձրանում։ Վիճաբանությամբ տարված մարդկանց սուր

ձայները խախտեցին գիշերվա լռությունը, և Պավելը հայացքը պոկելով քաղաքի կրակներից՝ սկսեց սանդուղքով ցած իջնել։

Կրեշչատիկում, շրջանի Հատուկ բաժնի անցաթուղթի բյուրոյում հերթապահ պարեսը Կորշագինին հաղորդեց, որ Ժուխրայը վաղուց արդեն քաղաքում չէ։

Նա հարցերով երկար շոշափում էր Պավելին և միայն այն ժամանակ, երբ համոզվեց, որ տղան անձամբ ծանոթ է Ժուխրայի հետ, պատմեց. արդեն երկու ամիս է, ինչ Ֆյոդորը ուղարկված է աշխատանքի՝ Տաշքենդ։ Թուրքեստանի ռազմաճակատը։ Կորշագինի վիշտն այնքան մեծ էր, որ նա նույնիսկ մանրամասնություններ չհարցրեց, այլ լուռ շրջվեց և փողոց դուրս եկավ։ Հոգնածություն իջավ նրա վրա և ստիպեց նրան նստել շքամուտքի աստիճանի վրա։

Փողոցն աղմուկով ու դղրդյունով լցնելով՝ անցավ տրամվայը։ Մայթերին մարդկային անվերջ հոսանք է։ Քաղաքը կենդանացել էր. մե՛րթ կանանց երջանիկ ծիծաղ, մե՛րթ թավ, առնական ձայնի բեկորներ, մե՛րթ պատանու տենոր, մերթ ծերունու խլթխլթացող խռպոտ ձայն։ Մարդկային հոսանքն անվերջ է, քայլը՝ միշտ հապշտապ։ Պայծառ լուսավորված տրամվայներ, ավտոմոբիլների լապտերների բռնկումներ, էլեկտրալամպերի հրդեհ հարևան կինոյի ռեկլամի շուրջը։ Եվ ամեն տեղ մարդիկ, որոնք անլսելի զրույցով լցնում են փողոցը։ Դա մեծ քաղաքի երեկոն է։

Պողոտայի աղմուկն ու իրարանցումը մեղմացնում էին Ֆյոդորի մեկնելու մասին լուրի առաջացրած վշտի սրությունը։ Ո՞ւր գնալ։ Վերադառնալ Սոլոմենկա, ուր ընկերներն էին, հեռու է։ Եվ ինքն իրեն հիշողության միջից դուրս լողաց այստեղից ոչ հեռու գտնվող Կրուգլո-Ունիվերսիտետսկի փողոցի տունը։ Իհարկե, ինքն այժմ այնտեղ կգնա։ Չէ՞ որ Ֆյոդորից հետո առաջին ընկերը, որին նա կցանկանար տեսնել, Ռիտան էր։ Այնտեղ Ակիմի մոտ էլ կարելի կլինի գիշերել։

Դեռ հեռվից վերևի անկյունի լուսամուտում լույս նկատեց։ Աշխատելով հանգիստ լինել՝ դեպի իրեն ձգեց կաղնեփայտե դուռը։ Մի քանի վայրկյան կանգ առավ սանդուղքի հարթակի վրա։ Դռան հետևում, Ռիտայի սենյակից ձայներ են լսվում, ինչ-որ մեկը կիթառ է նվագում։

«Օհո՜, ուրեմն կիթա՞ռն էլ է թույլատրված։ Ռեժիմը մեղմացել է»,— եզրափակեց Կորշագինը և բռունցքով թեթևակի թակեց դուռը։ Զգալով, որ հուզվում է, շրթունքն ատամներով սեղմեց։

Դուռը բացեց երիտասարդ, քունքերին խոպոպներ ունեցող մի անծանոթ կին։ Հարցական նայեց Կորշագինին։

— Ո՞ւմ եք ուզում։

Նա դուռը չէր փակել և անծանոթ կահ-կարասիի վրա նետված թոռցիկ հայացքն արդեն պատասխանը հուշեց.

— Կարելի՞ է տեսնել Ուստինովիչին։

— Նա այստեղ չէ. դեռ հունվարին նա Խարկով է մեկնել, իսկ այնտեղից էլ, ինչպես ես լսել եմ, Մոսկվա։

— Իսկ ընկեր Ակիմն այստե՞ղ է ապրում, թե նույնպես մեկնել է։

— Ընկեր Ակիմն էլ այստեղ չէ։ Նա այժմ Օդեսայի կոմերիտմիության նահանգական կոմիտեի քարտուղարն է։

Պավելին ոչինչ չէր մնում անել, եթե ոչ ետ դառնալ։ Քաղաք վերադառնալու բերկրանքը խամրեց։

Այժմ հարկավոր էր լրջորեն մտածել գիշերելու մասին։

— Այսպես որ ընկերների մոտ շրջես, հալից կընկնես և ոչ ոքի էլ չես տեսնի,— մռայլ քրթմնջում էր Կորշագինը՝ զառնությունը հաղթահարելով։ Բայց, այնուամենայնիվ, որոշեց մի անգամ էլ բախտը փորձել՝ Պանկրատովին գտնել։ Բեռնող բանվորն ապրում էր նավահանգստի մոտ, և նրա տունն ավելի մոտ էր, քան Սոլոմենկան։

Բոլորովին հոգնած վերջապես հասավ Պանկրատովի բնակարանին և թակելով մի ժամանակ ստվերաներկով ներկված դուռը՝ որոշեց. «Եթե սա էլ չկա, այլևս չեմ թափառի։ Կմրսնեմ մի մակույկի տակ ու կգիշերեմ։

Դուռը բաց արեց հասարակ հագուստով, կզակի տակ կապած գլխաշորով մի պառավ կին՝ Պանկրատովի մայրը։

— Իգնատը տա՞ն է, մայրի՛կ։

— Հենց նոր եկավ։ Դուք նրա՞ մոտ եք եկել։

Նա Պավելին չճանաչեց և ետ շրջվելով բղավեց.

— Գե՛նկա, քեզ են հարցնում։

Պավելը նրա հետ սենյակ մտավ, պարկը դրեց հատակին։ Պանկրատովը պատառն ուտել շարունակելով՝ սեղանի մոտից շրջվեց դեպի նա։

— Եթե ինձ հետ է գործդ, նստիր և պատմիր, իսկ ես առայժմ մի ման բորշչ խժռեմ, թե չէ առավոտվանից միայն ջրով եմ ապրում։— Եվ Պանկրատովն իր ձեռքը վերցրեց փայտե ահագին գդալը։

Պավելը նստեց մի կողմ, ջարդված աթոռին։ Գլխից հանելով գլխարկը՝ հին սովորությամբ նրանով սրբեց ճակատը։

«Մի՞թե ես այնքան եմ փոխվել, որ Գենկան էլ ինձ չճանաչեց»։

Պանկրատովը մի երկու գդալ բորշչ ուղարկեց բերանը և, հյուրից պատասխան չստանալով, դեպի նա շրջեց գլուխը։

— Դե պատմի՛ր, ի՞նչ ունես ասելու։

Հացի կտորը բռնած ձեռքը բերանի կես ճանապարհին կանգ առավ։ Պանկրատովը շփոթված թարթեց աչքերը.

— Է՜... սպասիր... թո՛ւ, այ քեզ խաթա։

Տեսնելով լարումից կարմրատակած նրա դեմքը՝ Կորշագինը չհամբերեց և քրքջաց։

— Պա՛վկա։ Չէ՞ որ մենք քեզ կորած էինք համարում... Սպասիր։ Անունդ ի՞նչ է։

Պանկրատովի աղաղակները լսելով՝ հարևան սենյակից դուրս վազեցին ավագ եղբայրն ու մայրը։ Երեքն էլ վերջապես համոզվեցին, որ նրանց առջև իսկական Կորշագինն է կանգնած։

Տանը վաղուց արդեն քնած էին, իսկ Պանկրատովը դեռ պատմում էր շորս ամսվա իրադարձությունների մասին։

— Դեռ ձմեռը Ժարկին ու Միտյայը Խարկով գնացին։ Եվ ոչ թե հասարակ մի տեղ, անզգամները, այլ կոմունիստական համալսարան։ Վանկան ու Միտյայը՝ նախապատրաստական, իսկ Միխայլոն՝ առաջին կուրս։ Մի տասնհինգ մարդ հավաքվեցինք։ Տաքացած՝ ես էլ մի դիմում գրեցի։ Պետք է, մտածում եմ, ուղեղի միջուկը մի քիչ թանձրացնել. թե չէ ջրիկ է։ Բայց, հասկանում ես, հանձնաժողովում ես ավագի վրա նստեցի։

Բարկացած փնչացնելով՝ Պանկրատովը շարունակեց.

— Սկզբից իմ գործը յուղի պես էր գնում։ Բոլոր հոդվածներով համապատասխան էի. կուստոմս ունեմ, կոմերիտ-

միության ստաժս բավարարում է, դրության և ծագման հարցում խոսելու տեղ չունեն, բայց հենց որ գործը հասավ քաղաստուգման, էստեղ ինձ մոտ տհաճ բան ստացվեց։

Հանձնաժողովի անդամներից մեկի հետ իրար կծոտեցինք։ Նա ինձ էսպիսի մի հարց է նետում. «Ասացե՛ք, ընկեր Պանկրատով, փիլիսոփայությունից ի՞նչ տեղեկություններ ունեք»։ Հասկանում ես, իսկ ես ոչ մի տեղեկություն էլ չունեմ։ Բայց հենց այդտեղ էլ հիշեցի, որ մի բեռնող բանվոր կար մեզ մոտ, գիմնազիստ, շրջմոլիկ։ Նա ցուցամոլության համար էր բեռնող դարձել։ Մի անգամ նա մեզ պատմեց. սատանան գիտե, թե երբ Հունաստանում էդպիսի գիտուններ են եղել, որ իրենց մասին շատ բան են իմացել, նրանց փիլիսոփաներ են անվանել։ Մի էդպիսի տիպ, ազգանունը չեմ հիշում, կարծես Իդեոգեն, ամբողջ իր կյանքում տակառի մեջ է ապրել և այլն... Նրանց մեջ լավագույն մասնագետը նա էր համարվում, ով քառասուն անգամ կապացուցեր, թե սևը սպիտակ է, իսկ սպիտակը՝ սև։ Մի խոսքով՝ դրանք դատարկախոս մարդիկ էին։ Դե, ես ահա դիմնազիստի պատմածը հիշեցի և մտածեցի։ «Այս հանձնաժողովի անդամն ինձ աջ կողմից սեղմում է»։ Իսկ նա խորամանկ հայացքով ինձ է նայում։ Դե, ես էլ այդտեղ դուրս տվեցի. «Փիլիսոփայությունը, ասում եմ, դա դատարկախոսություն է միայն, և ոնց որ ստվերների վրա նշան բռնես։ Ես, ընկե՛ր, այդ զալմաղալով զբաղվելու ոչ մի ցանկություն չունեմ։ Ա՛յ, կուսակցության պատմության համար ամբողջ հոգով ուրախ կլինեմ»։ Էստեղ դրանք իմ գլխին հարսանիք սարքեցին, որտեղի՞ց ինձ մոտ, իբր, փիլիսոփայության մասին այդ նորությունները։ Էստեղ ես էլի ինչ-որ բաներ ավելացրի գիմնազիստից լսածներիցս, որից ամբողջ հանձնաժողովը քրքջալ սկսեց։ Ես չարացա։ «Ի՞նչ եք,— ասում եմ,— էստեղ ինձ հիմարացնում»։ Գլխարկս վերցրի և՝ դեպի տուն։

Հետո հանձնաժողովի այդ անդամն ինձ նահանգական կոմիտեում հանդիպեց և մի երեք ժամ զրուցեց ինձ հետ։ Պարզվում է, որ գիմնազիստը ամեն ինչ իրար է խառնել։ Դուրս է գալիս, որ փիլիսոփայությունը մեծ, իմաստուն գործ է։

Իսկ այ, Դուբավան ու Ժարկին անցան։ Դե, Միտյայը, ասենք, լավ էր սովորում, իսկ Ժարկին ինձանից այնքան էլ հեռու չէր անցել։ Անպայման շքանշանն է Վանկային օգնել։ Մի խոսքով, ես դատարկ նստեցի։ Ինձ էստեղ նավահանգստային տնտեսությունը վարելու են նշանակել։ Փոխարինում եմ ապրանքային նավահանգստի պետին։ Առաջ միշտ պետերի հետ կռվի էի դուրս գալիս զանազան երիտասարդական գործերով, իսկ այժմ ինքս պիտի տնտեսական գործը ղեկավարեմ։ Երբեմն այսպես էլ է լինում։ Ձեռքի տակ մի լոդր է ընկնում կամ անճարակ ցրվածի մեկը, դու էլ սեղմում ես և՛ որպես պետ, և՛ որպես քարտուղար։ Նա արդեն ինձ խաբել չի կարողանա, ներեցեք։ Իմ մասին հետո։ Ի՞նչ նորություններ կան, որոնց մասին դեռ քեզ չեմ պատմել։ Ակիմի մասին գիտես, հներից նահանգական կոմիտեում միայն Տուֆտան է նույն տեղում ցցված մնացել։ Տոկարևը Սոլոմենկայի կուսշրջկոմի քարտուղարն է։ Կոմերիտմիության շրջկոմում Օկունևն է, ձեր կոմունայից։ Քաղլուսվարը Տալյան է։ Արհեստանոցներում քո տեղը Ցվետաևն է, ես նրան լավ չեմ ճանաչում, նահանգական կոմիտեում ենք հանդիպում, կարծես հիմար տղա չէ, բայց ինքնասեր է։ Եթե հիշում ես Բորխարտ Աննային, նա ևս Սոլոմենկայումն է, կուսշրջկոմի կինբաժնի վարիչն է։ Մյուսների մասին ես քեզ արդեն պատմեցի։ Այո՛, Պավլյո՛ւշա, կուսակցությունը շատ մարդ ուղարկեց սովորելու։ Նահանգական կոմկուսդպրոցում այժմ ամբողջ հին ակտիվը գիրք է առել ձեռքը։ Ինձ ևս խոստանում են հաջորդ տարի ուղարկել։

Կեսգիշերից շատ ուշ քնեցին։ Առավոտյան, երբ Կորչագինն արթնացավ, Իգնատն արդեն տանը չէր, գնացել էր նավահանգիստ։ Դուսյան, նրա քույրը, դեմքով եղբորը նման, ամրակազմ մի աղջիկ, հյուրին թեյով հյուրասիրեց՝ ուրախուրախ բլբլացնելով ամեն տեսակի դատարկ բաների մասին։ Պանկրատովի հայրը, որ նավի մեքենավար էր, ուղևորության էր գնացել։

Կորչագինը գնալու պատրաստվեց։ Հրաժեշտ տալիս Դուսյան հիշեցրեց.

— Չմոռանաք, որ ճաշին ձեզ սպասում ենք։

Նահանգական կոմիտեում սովորական աշխուժություն է տիրում։ Մուտքի դուռը հանգիստ չունի։ Միջանցքներում և սենյակներում շատ մարդ կա, գործերի վարիչի դռան հետևից լսվում է նրա գրամեքենայի խուլ չխկչխկոցը։

Պավելը կանգ առավ միջանցքում և շուրջը նայեց. ծանոթ դեմքի չի՞ պատահի արդյոք, և ոչ ոքի չգտնելով՝ մտավ քարտուղարի սենյակը։ Մեծ գրասեղանի առաջ, կապույտ վերնաշապիկը հագին նստած էր նահանգական կոմիտեի քարտուղարը։ Մի պահ նայեց Կորչագինին և առանց գլուխը բարձրացնելու շարունակեց գրել։

Պավելը նստեց նրա դիմաց և սկսեց ուշադիր զննել Ակիմին փոխարինողին։

— Ի՞նչ հարցով,— հարցրեց քարտուղարը՝ վերջակետ դնելով գրոտած թղթի վերջում։

Պավելը նրան պատմեց իր պատմությունը։

— Անհրաժեշտ է, ընկե՛ր, կազմակերպության ցուցակներում ինձ հարություն տալ և ուղարկել արհեստանոցները։ Այդ մասին կարգադրություն արա։

Քարտուղարը ետ ընկավ աթոռի թիկունքին։ Պատասխանեց անվճռական.

— Կվերականգնենք, իհարկե, այդ մասին խոսք լինել չի կարող։ Բայց քեզ արհեստանոցներն ուղարկել անհարմար կլինի, այնտեղ արդեն Ցվետաևն է աշխատում, նահանգական կոմիտեի վերջին գումարման անդամ։ Մենք քեզ մի այլ տեղ կօգտագործենք։

Կորչագինի աչքերը նեղացան.

— Ես նրա համար չեմ արհեստանոցները գնում, որպեսզի խանգարեմ Ցվետաևին աշխատել։ Ես գնում եմ ցեխում իմ մասնագիտության գծով աշխատելու և ոչ թե որպես կոլեկտիվի քարտուղար։ Եվ քանի որ դեռ ֆիզիկապես թույլ եմ, խնդրում եմ այլ աշխատանքի չուղարկել։

Քարտուղարը համաձայնեց։ Թղթի վրա մի քանի բառ գրեց։

— Հանձնեցեք ընկեր Տուֆտային, նա ամեն ինչ կկարգավորի։

Հաշվառման ու բաշխման բաժնում Տուֆտան հոգմացրիվ էր անում իր «գնդակն» հաշվառին։ Մի կես րոպե Պավելը

լսում էր նրա նախատինքները, բայց տեսնելով, որ դա երկար է տևելու, ընդհատեց չափը կորցրած հաշվառաբաշխման բաժնի վարիչին.

— Հետո կավարտեք նրա հետ փոխադարձ նախատինքները, Տուֆտա՛։ Ահա քեզ տոմսակ, եկ իմ փաստաթղթերը ձևակերպենք։

Տուֆտան երկար ժամանակ մերթ թղթին էր նայում, մերթ Կորչագինին։ Վերջապես հասկացավ։

— Էհե՛, ուրեմն չե՞ս մեռել։ Հիմա ինչպես անենք։ Դու ցուցակներից հանված ես, ես ինքս եմ քարտդ Կենտկոմ ուղարկել։ Եվ հետո, չէ՞ որ դու համառուսական ցուցակագրությանը չես ենթարկվել։ Կոմերիտմիության Կենտկոմի շրջաբերականի համաձայն բոլոր նրանք, որոնք ցուցակագրման չեն ենթարկվել, հեռացվում են։ Դրա համար էլ քեզ մի բան է մնում՝ ընդհանուր հիմունքներով նորից ընդունվել,— անառարկելի տոնով ասաց Տուֆտան։

— Դու միշտ նո՞ւյնն ես։ Երիտասարդ տղա ես, բայց նահանգական արխիվի հին առնետից ավելի վատ ես։ Ե՞րբ ես մարդ դառնալու, Վոլո՛դկա։

Տուֆտան վեր թռավ, ասես լու կծեց նրան։

— Խնդրում եմ իմ գլխին խրատներ չկարդալ, ես եմ իմ աշխատանքի համար պատասխանատու։ Շրջաբերականները նրա համար չեն գրվում, որ ես խախտեմ։ Իսկ վիրավորելու համար, «առնետի» կապակցությամբ, պատասխանատվության կկանչեմ։

Վերջին բառերը Տուֆտան արտասանեց սպառնագին, ցուցադրաբար առջևը քաշեց փոստի չնայված ծրարների մի ամբողջ դեզ՝ իր ամբողջ տեսքով ցույց տալով, որ խոսակցությունն ավարտված է։

Պավելն առանց շտապելու ուղղվեց դեպի դուռը, բայց ինչ-որ բան հիշելով, սեղանի մոտ վերադարձավ, ետ վերցրեց Տուֆտայի առաջ դրված այն երկտողը, որ տվել էր քարտուղարը։ Հաշվառաբաշխիչը հետևում էր Պավելին։ Զարմանալի մանրախնդիր այդ երիտասարդ ծերուկը, մեծ ականջները միշտ ուշադրությամբ լարված, անհաճո մարդ էր և միաժամանակ ծիծաղելի։

— Լավ,— ծաղրական հանդգնությամբ ասաց Կորչագի-

նը։— Ինձ, իհարկե, կարելի է «վիճակագրության կազմալուծում» կպցնել, բայց ասա ինձ, այդ ինչպե՞ս ես կարողանում տույժ տալ նրանց, ովքեր վերցնում ու մեռնում են՝ առանց այդ մասին նախապես հայտարարություն անելու։ Չէ՞ որ դա ամեն մեկն էլ կարող է, կուզենա՝ կհիվանդանա, կուզենա՝ կմեռնի, իսկ այդ մասին, հավանորեն, շրջաբերական չկա։

— Հա՜-հա-հա,— ուրախ խրխնջաց Տուֆտայի օգնականը՝ չկարողանալով չեզոքություն պահպանել։

Տուֆտայի ձեռքի մատիտի ծայրը կոտրվեց։ Նա մատիտը շպրտեց հատակին, բայց իր հակառակորդին պատասխանել չհասցրեց։ Բարձրաձայն խոսելով ու ծիծաղելով խմբովին սենյակ խուժեցին մի քանի մարդ։ Դրանց մեջ էր նաև Օկունևը։ Ուրախ զարմանքին ու հարցուփորձին վերջ չկար։ Մի քանի բոպե հետո սենյակ մտավ երիտասարդության էլի մի խումբ և խմբի մեջ՝ Յուրենևան։ Նա երկար շփոթված, բայց ուրախ սեղմում էր Պավելի ձեռքը։

Պավելին նորից ստիպեցին ամեն ինչ սկզբից պատմել։ Ընկերների անկեղծ ուրախությունը, անխարդախ բարեկամությունն ու համակրանքը, ձեռքի ամուր սեղմումները, ծանրակշիռ կերպով ու մտերմաբար մեջքին խփելը, այս բոլորն ստիպեցին մոռանալ Տուֆտային։

Իր պատմության վերջում Կորչագինն ընկերներին հաղորդեց նաև իր խոսակցությունը Տուֆտայի հետ։ Չորս կողմից զայրագին բացականչություններ լսվեցին։ Օլգան ոչընչացնող մի հայացք պարգևելով Տուֆտային՝ գնաց քարտուղարի սենյակը։

— Գնանք Նեժդանովի մոտ։ Նա սրա փուքսը կնստեցնի։— Այս խոսքերի հետ Օկունևը գրկեց Պավելի ուսը, և նրանք ընկերների խմբով գնացին Օլգայի հետևից։

— Նրան հարկավոր է հանել և ուղարկել Պանկրատովի մոտ նավահանգիստ, որ մի տարի որպես բարձող աշխատի։ Չէ՞ որ Տուֆտան դրոշմված բյուրոկրատ է,— տաքանում էր Օլգան։

Նահանգական կոմիտեի քարտուղարը ներողամտաբար ժպտում էր՝ լսելով Օկունևին, Օլգային և մյուսներին, որոնք պահանջում էին հանել Տուֆտային հաշվառաբաշխման բաժնից։

— Կորչագինին վերականգնելու մասին չարժե խոսել, նրան անմիջապես տոմս դուրս կգրեն,— հանգստացնում էր Օլգային Նեժդանովը։— Ես ևս ձեզ հետ համաձայն եմ, որ Տուֆտան ֆորմալիստ է,— շարունակեց նա։— Դա նրա հիմնական թերությունն է։ Բայց չէ՞ որ պետք է խոստովանել, նա գործը լավ է կազմակերպել։ Ուր որ ես աշխատել եմ, կոմերիտական կոմիտեներում հաշվառումն ու վիճակագրությունը մի անանցանելի թավուտ է, և ոչ մի թվի հավատալ չի կարելի։ Իսկ մեր հաշվառման ու բաշխման բաժնում վիճակագրությունը լավ է դրված։ Դուք ինքներդ էլ գիտեք, որ Տուֆտան երբեմն իր բաժնում նստում է մինչև գիշեր։ Եվ ես այսպես եմ մտածում. նրան միշտ էլ կարելի է հանել, բայց եթե նրա փոխարեն այնտեղ մի հոգի-տղա, բայց անպետք հաշվառ դնենք, ապա բյուրոկրատիզմ չի լինի, բայց հաշվառում էլ չի լինի։ Թող աշխատի։ Ես նրա գլուխն, ինչպես պետք է, կլվանամ։ Դա մի որոշ ժամանակ կներգործի, իսկ հետո կտեսնենք։

— Լավ, սատանան նրա հետ,— համաձայնեց Օկունևը։— Գնանք, Պավլո՛ւշա, Սոլոմենկա։ Այսօր մեր ակումբում ակտիվի ժողով է։ Դեռ ոչ ոք քո մասին չգիտե, և հանկարծ՝ «Զայնը տրվում է Կորչագինին»։ Կեցցես, Պավլո՛ւշա, որ չես մեռել։ Պրոլետարիատն այն ժամանակ ի՞նչ օգուտ կստանար քեզանից, հը՞,— կատակի տոնով խոսակցությունն ամփոփեց Օկունևը և թևով գրկելով Կորչագինին՝ հրեց նրան դեպի միջանցքը։

— Օլգա՛, դու կգա՞ս։

— Անպայման։

Պանկրատովները ճաշին իզուր սպասեցին Կորչագինին, նա գիշերն էլ չվերադարձավ։ Օկունևը ընկերոջը բերեց իր բնակարանը։ Խորհրդի տանը նա առանձին սենյակ ուներ։ Ինչով որ կարող էր կերակրեց և սեղանի վրա Պավելի առաջ լրագրերի մի կապոց՝ կոմերիտմիության ու շրջկոմի բյուրոյի նիստերի արձանագրությունների երկու հաստ գիրք դնելով՝ խորհուրդ տվեց։

— Այս ամբողջ արտադրանքը նայիր։ Երբ դու տիֆի պատճառով իզուր ժամանակ էիր կորցնում, այստեղ շատ ջուր է հոսել։ Կարդա՛, ծանոթացի՛ր այն բոլորի հետ, ինչ

եղել է և ինչ կա։ Ես երեկոյան դեմ կգամ և ամբողջը կգնանք, իսկ որ հոգնես, պառկիր ու մրափիր։

Փաստաթղթերի, տեղեկանքների, գրությունների մի կույտ գրպանը խոթելով (Օկունևը սկզբունքորեն մերժում էր պորտֆելը, և վերջինս ընկած էր մահճակալի տակ)՝ կոմերիտմիության շրջկոմի քարտուղարը հրաժեշտի մի շրջան կատարեց սենյակում և դուրս եկավ։

Երեկոյան, երբ նա վերադարձավ սենյակի հատակը ծածկված էր բացված լրագրերով, մահճակալի տակից դուրս էր հանված գրքերի մի կույտ։ Սրանց մի մասը կապոցով դրված էր սեղանին։ Պավելը նստել էր մահճակալին և Կենտրոնական Կոմիտեի վերջին նամակներն էր կարդում, որ նա գտել էր ընկերոջ բարձի տակից։

— Ավազա՛կ, այս ինչ օրն ես գցել իմ գլխին,— շինծու զայրույթով բղավեց Օկունևը։— Է՛, սպասի՛ր, սպասի՛ր, ընկե՛ր։ Դու հո փաստաթղթեր ես կարդում։ Դե արի ու էսպիսի մարդուն տուն ընդունիր։

Պավելը ժպտալով նամակը մի կողմ դրեց։

— Այստեղ ոչ մի գաղտնիք չկա, իսկ ես քո լամպի վրա լուսամփոփի փոխարեն խանդավառ հրատարակման չենթարկվող փաստաթուղթ է։ Նույնիսկ ծայրերից մի քիչ այրվել է։ Տեսնո՞ւմ ես։

Օկունևը վերցրեց այրված թերթը և նայելով վերնագրին՝ ձեռքը խփեց ճակատին։

— Իսկ ես երեք օր փնտրում էի, գրողը տանի։ Անհետացավ, ոնց որ ջրի տակն անցնի։ Հիմա սկսում եմ հիշել, այդ Վոլինցևն էր նախանցյալ օրը դրանից լուսամփոփ սարքել, իսկ հետո իր հոգին էլ դուրս եկավ որոնելով։— Օկունևը խնամքով ծալեց թերթիկը և ներքնակի տակ խոթեց։— Հետո ամեն ինչ կարգի կբերենք,— հանգստացնող տոնով ասաց նա,— հիմա մի քիչ բան ուտենք և դեպի ակումբ։ Մո՛տ նրստիր, Պավլո՛ւշա։

Օկունևը մի գրպանից հանեց լրագրերի մեջ փաթաթված մի երկար վոբլա, իսկ մյուսից՝ երկու կտոր հաց։ Թուղթը սեղանի ծայրը քաշեց, ազատ տարածության վրա լրագիր փռեց, բռնեց վոբլայի գլխից և սկսեց այն խփել սեղանին։

Սեղանի մոտ նստած և ծնոտներով եռանդագին աշխատելով՝ կմկմալուրախ Օկունևը Պավելին հաղորդում էր նորությունները՝ խառնելով կատակն ու գործարար զրույցը։

Ակումբում Օկունևը Կորշագինին ծառայողների մոտից տարավ կուլիսների հետևը։ Ընդարձակ դահլիճի մի անկյունում, բանից դեպի աջ, դաշնամուրի մոտ, երկաթուղու կոմերիտականների սեղմ շրջանում նստած էին Տալյա Լագուտինան ու Թորխարտը։ Աննայի դիմաց աթոռի վրա ճոճվելով թաղմել էր Վոլինցևը՝ դեպոյի կոմերիտմիության քարտուղարը։ Նա տգոստոսի ինձորի պես կարմիր էր, ծայր աստիճան մաշված, մի ժամանակ սև, կաշվե բաճկոնով։ Վոլինցևը ցորնագույն մազեր և նույն գույնի էլ հոնքեր ուներ։

Նրա կողքին, անփութորեն դաշնամուրի կափարիչին հենված, նստած էր Ցվետաևը՝ խստորեն գծագրված շրթունքների կտրվածքով մի գեղեցիկ շատեն։ Նրա վերնաշապիկի օձիքը բաց էր։

Մոտենալով ընկերների խմբին՝ Օկունևը լսեց Աննայի խոսքի վերջը.

— Ոչինչ ցանկանում են ամեն կերպ բարդացնել նոր ընկերների ընդունելությունը։ Ցվետաևի մոտ դա ակնբախ է։

— Կոմերիտմիությունը միջանցիկ բակ չէ,— համառորեն, մի քիչ կոպիտ քամահրանքով ասաց Ցվետաևը։

— Նայեցե՛ք, նայեցե՛ք Նիկոլայն այսօր մաքրած ինքնաեռի նման փայլում է,— Օկունևին տեսնելով՝ բացականչեց Տալյան։

Օկունևին շրջանի մեջ քաշեցին և հարցերի տարափ տեղացին նրա վրա։

— Եկ սկսենք։

— Որտե՞ղ էիր։

Օկունևը հանգստացնող շարժումով ձեռքն առաջ մեկնեց.

— Մի փրփրեք, եղբայրներ։ Հիմա Տոկարևը կգա, և կսկսենք։

— Ահա և նա,— նկատեց Աննան։

Իսկապես, դեպի նրանց էր գալիս կուսշրջկոմի քարտուղարը։ Օկունևը նրան ընդառաջ վազեց։

— Գնանք, հա՛յր, կուլիսների հետևում ես քեզ քո մի ծանոթի պիտի ցույց տամ։ Այ թե կզարմանա՞ս։

— Էլի ի՞նչ կա,— քրթմնջաց ծերուկը՝ ծխախոտը փստացնելով, բայց Օկունևն արդեն ձեռքից բռնած քարշ էր տալիս նրան։

... Օկունևի ձեռքում զանգն այնպես կատաղորեն զրնգաց, որ ամենաթունդ շատախոսներն էլ շտապեցին խոսակցությունը դադարեցնել։

Տոկարևի թիկունքում կանաչ փշատերևների շքեղ շրջակի մեջ «Կոմունիստական մանիֆեստի» հանճարեղ ստեղծողի առյուծաբաշ գլուխն էր։ Մինչ Օկունևը ժողովն էր բացանում, Տոկարևը կուլիսների անցքում կանգնած Կորչագինին էր նայում։

— Ընկերնե՛ր, նախքան կազմակերպության հերթական խնդիրների քննարկմանն անցնելը, այստեղ հերթից դուրս ձայն է խնդրում մի ընկեր, և ես ու Տոկարևը կարծում ենք, որ նրան պետք է ձայն տալ։

Դահլիճից հավանության ձայներ լսվեցին, և Օկունևը միանգամից վրա բերեց.

— Ողջունելու համար խոսքը տրվում է Պավկա Կորչագինին։

Դահլիճում գտնվող հարյուր մարդուց ութսունից ոչ պակասը Կորչագինին ճանաչում էին, և երբ բեմեզրին երևաց ծանոթ կերպարանքը, և բարձրահասակ, գունատ պատանին խոսել սկսեց, դահլիճում նրան դիմավորեցին ուրախ բացականչություններով և բուռն օվացիաներով։

— Թանկագին ընկերնե՛ր։

Կորչագինի ձայնը հանդարտ է, բայց հուզմունքը թաքցնել չի հաջողվում։

— Այնպես պատահեց, բարեկամնե՛րս, որ ես ձեզ մոտ վերադարձա և գրավում եմ իմ տեղը շարքում։ Ես երջանիկ եմ, որ վերադարձել եմ։ Այստեղ տեսնում եմ իմ ընկերների ամբողջ մի շարք։ Ես Օկունևի մոտ կարդացի, որ մեզ մոտ՝ Սոլոմենկայում մեկ երրորդով ավելացել է մեր նոր եղբայրների թիվը, որ արհեստանոցներում և դեպոյում բոցհանի «մասնագետներին» վերջ են տվել, և որ շոգեքարշերի գերեզմանատնից մեռյալներին քարշ են տալիս դեպի հիմնական նորոգման ցեխը։ Այդ նշանակում է, որ մեր երկիրը նորից է ծնվում և ուժ հավաքում։ Արժե ապրել աշխարհում։ Դե, մի՞թե ես կարող էի այդպիսի ժամանակ մեռնել։— Եվ Կորչագինի աչքերը բախտավոր մի ժպիտով առկայծեցին։

Ողջույնների աղաղակների տակ Կորչագինն իջավ դահլիճ և ուղղվեց դեպի այն կողմը, որտեղ նստած էին Բորխարտն ու Տալյան։ Արագ սեղմեց մի քանիսի ձեռքը։ Ընկերները սեղմվեցին, և Կորչագինը նստեց։ Նրա ձեռքի վրա իջավ Տալյայի ձեռքը և ամուր-ամուր սեղմեց այն։

Աննայի աչքերը լայն բացված են, արտևանունքները թեթևակի ցնցվում են, և նրա հայացքի մեջ զարմանք ու ողջույն կա։

Օրերը սահում էին։ Դրանք սովորական օրեր անվանել չէր կարելի։ Յուրաքանչյուր օր ինչ-որ նոր բան էր բերում, և առավոտյան իր ժամանակը բաշխելով՝ Կորչագինը ցավով նշում էր, որ օրվա մեջ ժամանակի տևողությունը քիչ է, և ծրագրածից ինչ-որ մի բան մնում է անկատար։

Պավելն Օկունևի մոտ բնակություն հաստատեց։ Աշխատում էր արհեստանոցում որպես էլեկտրամոնտյորի օգնական։

Նիկոլայի հետ Պավելը երկար վիճեց, մինչև որ նրան համոզեց համաձայնել ժամանակավորապես ղեկավար աշխատանքից իր հեռանալուն։

— Մեզ մոտ մարդկանց պակաս է, իսկ դու ուզում ես ցեխում զովանալ։ Դու ինձ քո հիվանդությունը մի մատնացույց արա, ես ինքս էլ տիֆից հետո մի ամիս փայտով էի շրջկոմ գնում։ Չէ՞ որ ես քեզ գիտեմ, Պա՛վկա, դա չէ պատճառը։ Դու ինձ ուղղակի հարցի արմատն ասա,— հարձակվում էր նրա վրա Օկունևը։

— Արմատ կա, Կո՛լյա, սովորել եմ ցանկանում։

Օկունևը հաղթականորեն մռնչաց.

— Հա-ա՜... Ահա թե ի՞նչ։ Դու ցանկանում ես, իսկ ես, քո կարծիքով, չե՞մ ցանկանում։ Դա, եղբայր, եսասիրություն է։ Ուրեմն՝ մենք անիվ պիտի պատեցնենք, իսկ դու սովորես։ Ո՛չ, սիրելիս, վաղը ևեթ կգնաս կազմհրահանգչական բաժին։

Բայց երկարատև վիճաբանությունից հետո Օկունևն անձնատուր եղավ։

— Երկու ամիս ձեռք չեմ տա։ Իմացիր իմ բարությունը։ Բայց Ցվետաևի հետ աշխատել չես կարողանա, նա շատ մեծ կարծիք ունի իր մասին։

Կորչագինի վերադարձն արհեստանոցները Ցվետաևն ընդունեց ուշադրությունը լարած։ Նա համոզված էր, որ Կորչագինի գալուն պես պայքար կսկսվի ղեկավարության համար, և հիվանդագին ինքնասեր լինելով՝ պատրաստվեց հակահարվածի։ Բայց հենց առաջին օրերի ընթացքում նա համոզվեց, որ իր ենթադրությունները սխալ են։ Իմանալով, որ կոլեկտիվի բյուրոն մտադիր է նրան իր կազմի մեջ մտցնել, Կորչագինն ինքը եկավ կուսքարտուղարի սենյակը և, հենվելով Օկունևի հետ պայմանավորված լինելու վրա՝ համոզեց, որ այդ հարցը օրակարգից հանեն։ Կոմերիտմիության ցեխային բջիջում Կորչագինն իր վրա վերցրեց քաղգրագիտության խմբակը, բայց բյուրոյում աշխատել չէր ձգտում։ Եվ, այնուամենայնիվ, չնայած պաշտոնական ղեկավարությունից հեռու էր կանգնած, Պավելի ազդեցությունն զգացվում էր կոլեկտիվի ամբողջ աշխատանքի վրա։ Աննկատելիորեն, բարեկամաբար շատ անգամ էր նա Ցվետաևին ծանր դրությունից դուրս բերել։

Մի անգամ արտադրամաս մտնելով՝ Ցվետաևը զարմանքով տեսավ, որ երիտասարդական ամբողջ բջիջը և մի երեք տասնյակ անկուսակցական տղաներ լվանում են լուսամուտները, մաքրում են մեքենաները, քերում են նրանց վրայի բազմամյա կեղտը, բակ են քարշ տալիս մետաղի լոմն ու անպետք բաները։ Պավելը մի վիթխարի շվաբրով կատաղի թափով տրորում էր մազութով ու ճարպով ողողված ցեմենտի հատակը։

— Այս ի՞նչ առիթով եք զարդարվում,— տարակուսանքով հարցրեց Ցվետաևը Պավելին։

— Կեղտի մեջ աշխատել չենք ուզում։ Քսան տարի այստեղ ոչ ոք չի լվացել, մենք մի շաբաթվա ընթացքում արտադրամասը նոր կդարձնենք,— կարճ պատասխանեց նրան Կորչագինը։

Ցվետաևը, ուսերը ցնցելով, հեռացավ։

Էլեկտրատեխնիկները դրանով չհանգստացան և ձեռք զարկեցին բակը մաքրելուն։ Այդ մեծ բակը վաղուց ի վեր դարձել էր ամեն ինչ կիտելու տեղ։ Ինչ ասես, որ չկար այնտեղ։ Վագոնների հարյուրավոր անիվներ, ժանգոտ երկաթի ամբողջ սարեր, ռելսեր, բուֆերներ, օղեր. մի քանի հազար տոննա մետաղ էր ժանգոտում բաց երկնքի տակ։ Բայց այդ կիտվածքի վրա գրոհը վարչությունը կանգնեցրեց.

— Ավելի կարևոր խնդիրներ կան, իսկ բակն շտապ չէ։

Այն ժամանակ էլեկտրիկներն իրենց արտադրամասի մուտքի մոտ որոշ տարածություն ազատելով պատեցին, նրա վրա լարացանց ամրացրին, որպեսզի կոշիկի ցեխը մաքրեն և այդտեղ էլ կանգ առնեն։ Բայց արտադրամասի ներսում երեկոները, աշխատանքից հետո, մաքրությունը շարունակվում էր։ Երբ մի շաբաթ հետո այստեղ մտավ գլխավոր ինժեներ Ստրիժը, արտադրամասն ամբողջովին լույսով էր ողողված։ Ապակեպակների երկաթե շրջանակով վիթխարի լուսամուտները, մազութի հետ խառնված դարավոր փոշուց ազատված, ճամփա էին բացել արևի ճառագայթների համար, և վերջիններս մեքենայական դահլիճը թափանցելով՝ պայծառ արտացոլվում էին դիզելների մաքրված պղնձե մասերի մեջ։ Մեքենաների ծանր մասերը ներկված էին կանաչ ներկով, և նույնիսկ անիվների ճյուղերի վրա ինչ-որ մեկը հոգատարությամբ դեղին սլաքներ էր գծել։

— Հըմ-հա...— զարմացավ Ստրիժը։

Արտադրամասի հեռավոր անկյունում մի քանի մարդ ավարտում էին աշխատանքը։ Ստրի՜ժն անցավ այնտեղ։ Բացված ներկով լցրած ամանը ձեռքին նրան ընդառաջ էր գալիս Կորչագինը։

— Սպասեցե՛ք, սիրելի՛ս,— կանգնեցրեց նրան ինժեները։— Ձեր արածին ես հավանություն եմ տալիս։ Բայց ո՞վ է ներկ տվել ձեզ։ Չէ՞ որ ես արգելել եմ առանց իմ թույլտվության այդ հազվագյուտ նյութը գործածել։ Շոգեքարշի մասերի ներկումն ավելի կարևոր է այն բանից, ինչ դուք եք անում։

— Իսկ ներկը մենք ձեռք ենք բերել դեն նետված ներկատուփերից։ Երկու օր չարչարվեցինք հին ամանների վրա և մոտ քսանհինգ ֆունտ քերեցինք։ Այստեղ ամեն ինչ օրինական է արված, ընկեր տեխնիկական ղեկավա՛ր։

Ինժեները մի անգամ էլ «հըմ» արեց, բայց արդեն շփոթված։

— Այդ դեպքում, իհարկե, արեք։ Հըմ-հա... Այնուամենայնիվ, հետաքրքրական է... Ինչո՞վ բացատրել այդպիսի, ինչպես արտահայտվեմ, կամավոր ձգտումը դեպի արտադրամասի մաքրությունը։ Չէ՞ որ դուք այդ արել եք ձեր աշխատանքային ժամերից դուրս։

Կորչագինը տեխնիկական ղեկավարի ձայնի մեջ անկեղծ տարակուսանքի երանգներ որսաց։

— Իհարկե։ Ապա ի՞նչ էիք կարծում։

— Այո՛, բայց...

— Ահա ձեզ և «բայց», ընկե՛ր Ստրիժ։ Ձեզ ո՞վ է ասել, որ բոլշևիկներն այս կեղտը հանգիստ կթողնեն։ Սպասեցե՛ք, մենք այդ գործին դեռ ավելի լայն ընթացք կտանք։ Դուք դեռ շատ բան կտեսնեք և կզարմանաք։

Եվ զգուշորեն շրջանցելով ինժեներին, որպեսզի չներկոտի նրան, Կորչագինը գնաց դեպի դուռը։

Երեկոները Կորչագինը երկար նստում էր հանրային գրադարանում։ Նա այստեղ ամուր ծանոթություն էր հաստատել բոլոր երեք գրադարանավարուհիների հետ և պրոպագանդայի բոլոր միջոցները գործի դնելով՝ վերջապես ստացել էր գրքերը աղատ նայելու ցանկալի իրավունքը։ Սանդուղքը հենելով գրքի վիթխարի պահարաններին՝ Պավելը ժամերով նստում էր նրա վրա, թերթում էր գիրք գրքի հետևից՝ որոնելով հետաքրքրականն ու հարկավորը։ Գրքերը մեծ մասամբ հին էին։ Նոր գրականությունը համեստորեն տեղավորված էր մի ոչ մեծ պահարանում։ Այստեղ էին հավաքված քաղաքացիական պատերազմի շրջանի՝ պատահականորեն այստեղ ընկած բրոշյուրներ, Մարքսի «Կապիտալը», «Երկաթե կրունկը» և էլի մի քանի գիրք։ Հին գրքերի մեջ Կորչագինը գտավ «Սպարտակ» վեպը։ Երկու գիշերվա մեջ այն կարդալով՝ Պավելը գիրքը տեղափոխեց պահարանը և դրեց Մ. Գորկու գրքերի կողքին։ Ամենից ավելի հետաքրքրական և սրտին մոտ գրքերի այսպիսի տեղաշարժն ամբողջ ժամանակ շարունակում էր։

Գրադարանավարուհիները դրան չէին խանգարում, նրանց համար մեկ էր։

Կոմերիտական կոլեկտիվի միապաղաղ անդորրը խստորեն խախտեց, ինչպես սկզբում թվաց, աննշան մի դեպք։ Միջին նորոգման ցեխի բջջի բյուրոյի անդամ Կոստկա Ֆիդինը, կճատ, ծաղկից չեչոտված դեմքով դանդաղաշարժ մի տղա, երկաթե սալը շաղափելիս կոտրեց ամերիկյան թանկագին շաղափը։ Կոտրեց իր վրդովեցուցիչ անփութության պատճառով։ Նույնիսկ ավելի վատ՝ համարյա դիտմամբ։ Այդ տեղի ունեցավ առավոտյան։ Միջին նորոգման ցեխի ավագ վարպետ Խոդորովը Կոստկային առաջարկում է սալի վրա մի քանի անցք շաղափել։ Կոստկան սկզբում հրաժարվում է, բայց վարպետի ճնշման տակ վերցնում է սալը և սկսում շաղափել։ Ցեխում Խոդորովին չէին սիրում իր բծախնդիր պահանջկոտության համար։ Նա մի ժամանակ մենշևիկ էր եղել։ Հասարակական կյանքին ոչ մի մասնակցություն չէր բերում, կոմերիտականների վրա խեթ էր նայում, բայց իր գործը գիտնալի գիտեր և իր պարտականությունները բարեխղճորեն էր կատարում։ Վարպետը նկատում է, որ Կոստկան «չոր-չոր» է շաղափում, շաղափը չի յուղում։ Նա շուտով մոտենում է շաղափող դազգահին և այն կանգնեցնում։

— Դու ի՞նչ է, կուրացե՛լ ես, թե երեկ ես այստեղ եկել,— բղավում է նա Կոստկայի վրա՝ իմանալով, որ այդպես վարվելու դեպքում շաղափն անխուսափելիորեն շարքից դուրս կգա։

Բայց Կոստկան հայհոյում է վարպետին և նորից է դազգահը գործի գցում։ Խոդորովը գնում է բողոքելու ցեխի պետին, իսկ Կոստկան առանց դազգահը կանգնեցնելու վազում է յուղամանը որոնելու, որպեսզի մինչև ղեկավարության գալն ամեն ինչ կարգին լինի։ Մինչև որ նա գտնում է յուղամանը և վերադառնում, շաղափն արդեն կոտրված է լինում։ Ցեխի պետը ռապորտ է տալիս Ֆիդինի հեռացման վերաբերյալ։ Կոմերիտական բջջի բյուրոն պաշտպանում է Կոստկային՝ հենվելով այն բանի վրա, որ Խոդորովը ճնշում է երիտասարդական ակտիվին։ Ղեկավարությունը պնդում է, և գործի քննությունն անցնում է կոլեկտիվի բյուրոյին։ Այստեղից էլ սկսվեց։

Բյուրոյի հինգ անդամներից երեքը կողմնակից էին, որ Կոստկային նկատողություն անեն և տեղափոխեն այլ աշխատանքի։ Դրանց մեջ էր և Ցվետաևը։ Երկուսը Կոստկային առհասարակ մեղավոր չէին համարում։

Բյուրոյի նիստը տեղի էր ունենում Ցվետաևի սենյակում։ Այստեղ կար կարմիր կտորով ծածկված մի մեծ սեղան, մի քանի երկար նստարան և աթոռակներ, որ շինել էին առաջ-ձագործական արհեստանոցի տղաներն իրենք, պատերին փակցված էին առաջնորդների նկարները, սեղանի հետևին ամբողջ պատով մեկ՝ կոլեկտիվի բաց դրոշը։

Ցվետաևն «աղաղված աշխատող» էր։ Մասնագիտությամբ դարբին լինելով՝ նա իր ընդունակությունների շնորհիվ վերջին չորս ամսվա ընթացքում առաջ քաշվեց երիտասարդական կոլեկտիվում ղեկավար աշխատանքի։ Ընտրվեց կոմերիտմիության շրջկոմի բյուրոյի անդամ և նահանգական կոմիտեի անդամ։ Որպես դարբին նա աշխատել էր մեխանիկական գործարանում, արհեստանոցներում նոր մարդ էր։ Առաջին իսկ օրերից նա սանձերն ամուր հավաքեց իր ձեռքը։ Անապատան ու վճռական լինելով՝ նա անմիջապես խեղդեց տղաների անձնական նախաձեռնությունը, ամեն ինչի ինքն էր ձեռ-գում և ի վիճակի չլինելով ամբողջ աշխատանքն ինքն անելու, սկսում էր անգործության համար կատաղած կշտամբել իր օգնականներին։

Սենյակն էլ նույնիսկ նրա անձնական հսկողության տակ էր կահավորվում։

Ցվետաևը նիստը վարում էր միակ փափուկ բազկաթոռին փռված, որ այստեղ էին բերել կարմիր անկյունից։ Նիստը գունփակ էր։ Երբ ձայն խնդրեց կուսակազմակերպիչ Խոմուտովը, ինչ-որ մեկը բախեց կեռիկով փակված դուռը։ Ցվետաևն ակամա խոժոռվեց։ Թակոցը կրկնվեց։ Կատյուշա Զելենովան վեր կացավ և բաց արեց կեռիկը։ Դռան հետևում կանգնած էր Կորշագինը։ Կատյուշան նրան ներս թողեց։

Պավելն արդեն ուղղվում էր դեպի ազատ աթոռը, երբ Ցվետաևը նրան ձայն տվեց.

— Կորշա՛գին, այժմ մեզ մոտ գունփակ բյուրո է։

Պավելի այտերը կարմիր ներկվեցին, և նա դանդաղորեն շրջվեց դեպի սեղանը։

— Ես այդ գիտեմ։ Ինձ հետաքրքրում է ձեր կարծիքը Կոստկայի գործի վերաբերյալ։ Ես այդ կապակցությամբ նոր հարց եմ ուզում դնել։ Իսկ դու իմ ներկայությանը դե՞մ ես, ինչ է։

— Ես դեմ չեմ, բայց քեզ հո հայտնի է, որ գունփակ նիստերում միայն բյուրոյի անդամներն են ներկա լինում։ Երբ շատ մարդ կա, քննարկելն ավելի դժվար է։ Բայց քանի որ եկել ես, նստիր։

Այսպիսի ապտակ Կորշագինն առաջին անգամն էր ստանում։ Նրա ճակատին, հոնքերի միջև մի ծալք առաջացավ։

— Ինչի՞ համար են այս ձևականությունները,— իր դժգոհությունն արտահայտեց Խոմուտովը, բայց Կորշագինը ձեռքի շարժումով կանգնեցրեց նրան և նստեց աթոռակին։— Ես ահա թե ինչ էի ուզում ասել,— խոսեց Խոմուտովը։— Խոդորովի նկատմամբ ճիշտ եք, նա մի կողմ կանգնած մարդ է, բայց մեզ մոտ գարգապահությունը լավ չէ։ Եթե բոլոր կոմերիտականներն այդպես սովորեն շաղափներ ջարդել, մենք աշխատելու բան չենք ունենա։ Իսկ անկուսակցականների համար բոլորովին վատ օրինակ կլինի։ Ես կարծում եմ, որ տղային նախազգուշացում պետք է անել։

Ցվետաևը թույլ չտվեց, որ նա վերջացնի և սկսեց առարկել։ Մի տասը րոպեի չափ լսելուց հետո Կորշագինը բյուրոյի մտադրությունը հասկացավ։ Երբ արդեն քվեարկման էին անցնում, նա հանդես եկավ մի հայտարարությամբ։ Ցվետաևն ինքն իրեն ստիպելով, նրան ձայն տվեց։

— Ես ուզում եմ ձեզ հաղորդել, ընկերնե՞ր, իմ կարծիքը Կոստկայի գործի մասին։

Կորշագինի ձայնն ավելի խիստ էր, քան նա այդ ցանկանում էր։

— Կոստկայի գործը՝ դա ազդանշան է, իսկ գլխավորը Կոստկան չէ։ Ես երեկ մի քիչ թվեր հավաքեցի,— Պավելը գրպանից հանեց հուշատետրը։— Այդ թվերը ցուցակավարն է ինձ տվել։ Ուշադիր լսեցեք. կոմերիտականների քսանվեցերորդ տոկոսն ամեն օր աշխատանքից ուշանում է հինգից մինչև տասնհինգ րոպե։ Սա արդեն օրենք է։ Կոմերիտականների տասնյոթ տոկոսը պարբերաբար ամսվա մեջ մեկից-երկու օր գործալքություն է, այն ժամանակ, երբ անկուսակցական երիտասարդությունը գործալքության տասնչորս տոկոս է տալիս։ Թվերը խարազանից էլ վատ են։ Ես անցողակի էլի ինչ-որ բաներ եմ գրանցել. կուսակցականների մեջ գործալքները չորս տոկոս են կազմում, ամիսը մեկ օրով ուշանում

է նույնպես չորս տոկոսը։ Հասակավոր անկուսակցականների մեջ գործալիքները տասնմեկ տոկոս են կազմում և գործը լքում են ամսվա մեջ մեկ օր, իսկ ուշանում է տասներեք տոկոսը։ Գործիքները կոտրելու իննսուն տոկոսն ընկնում է երիտասարդության վրա, որոնց մեջ նոր միայն աշխատանքի ընդունվածները յոթ տոկոս են կազմում։ Այստեղից եզրակացություն. մենք կուսակցականներից ու հասակավոր բանվորներից շատ ավելի վատ ենք աշխատում։ Բայց այս դրությունն ամեն տեղ միակերպ չէ։ Դարբնոցին կարելի է միայն նախանձել, էլեկտրիկների մոտ բավարար է, իսկ մյուսների մոտ ավելի կամ նվազ չափով հավասար է։ Իմ կարծիքով, ընկեր Խոմուտովը կարգապահության մասին միայն մի քառորդով ասաց։ Մեր առաջ խնդիր է դրված՝ հարթել այդ կեռմանները։ Ես ձեզ ագիտացիա չեմ անի և միտինգային ճառ չեմ ասի, բայց մենք պետք է մեր ամբողջ կայծաղությամբ զբոսնենք թափթփվածության և անփութության վրա։ Հին բանվորներն ուղղակի ասում են. տիրոջ համար ավելի լավ էինք աշխատում, կապիտալիստի համար ավելի կանոնավոր էինք աշխատում, իսկ այժմ, երբ մենք ինքներս ենք տերեր դարձել, այդպես աշխատելն արդարացում չունի։ Եվ առաջին հերթին ոչ այնքան Կոստկան է հանցավոր կամ ինչ-որ մի ուրիշը, այլ մենք ձեզ հետ, որովհետև մենք ոչ միայն այդ չարիքի դեմ, ինչպես պետքն է, պայքար չենք տարել, այլև, ընդհակառակն, այս կամ այն պատրվակով երբեմն պաշտպանել ենք այնպիսիներին, ինչպիսին Կոստկան է։

Այստեղ հենց նոր Սամոխինն ու Բուտիլյակն ասում էին, թե Ֆիդինը «ախպեր տղա» է։ Ինչպես ասում են՝ «մինչև մահ» մերը՝ ակտիվիստ, հասարակական բեռ է տանում։ Դե չարդել է շաղափը, ինչ մի մեծ բան է, ում հետ չի պատահում։ Բայց դե տղան մերն է, իսկ վարպետը՝ օտար... Թեև ոչ ոք Խոդորովի հետ աշխատանք չի տանում... Այդ մանրախնդիր մարդը երեսուն տարվա բանվորական ստաժ ունի։ Նրա քաղաքական դիրքերի մասին չենք խոսի։ Այժմ նա իրավացի է։ Նա, այդ խորթ մարդը, պետական բարիքը պահպանում է, իսկ մենք փշրում ենք արտասահմանյան գործիքները։ Գործի այսպիսի շրջադարձն ինչպե՞ս անվանենք։ Ես կարծում եմ, որ մենք այժմ առաջին հարվածը կհասցնենք և հարձակում կսկսենք այդ բնագավառում։

Առաջարկում եմ Ֆիդինին, որպես լոդրի, անփույթ և արտադրությունը կազմալուծողի՝ կոմերիտմիությունից վտարել։ Նրա գործի մասին գրել պատի թերթում և բացահայտորեն, առանց որևէ խոսակցությունից վախենալու, այ այս թվերը ցետեղել առաջնորդող հոդվածում։ Մենք ուժ ունենք, մենք դիտենք, թե ում վրա պիտի հենվենք։ Կոմերիտականների հիմնական մասսան արտադրության լավ բանվորներ են։ Նրանցից վոթսուն մարդ անցել է Բոյարկայով, իսկ դա ամենավստահելի դպրոցն է։ Նրանց օգնությամբ և նրանց մասնակցությամբ մենք այդ կեռմանները կհարթենք։ Միայն թե մեկ-ընդմիշտ պետք է դեն նետել այնպիսի մոտեցումը գործին, ինչպիսին այժմ կա։

Սովորաբար հանգիստ ու լռակյաց Կորշագինն այժմ խոսում էր կրակոտ ու կտրուկ։ Ցվետաևն առաջին անգամն էր էլեկտրիկին տեսնում իր իսկական տեսքով։ Նա գիտակցում էր Պավելի արդարացի լինելը, բայց նրա հետ համաձայնվելուն խանգարում էր զգույշ կենալու միշտ նույն զգացումը։ Նա Կորշագինի ելույթն ըմբռնեց որպես կազմակերպության ընդհանուր վիճակի սուր քննադատություն, որպես նրա, Ցվետաևի, հեղինակության խախտում, և որոշեց ջախջախել մոնտյորին։ Իր առարկությունները նա ուղղակի սկսեց նրանից, որ մեղադրեց Կորշագինին մենշևիկ Խոդորովին պաշտպանելու մեջ։

Երեք ժամ շարունակվեց կրքոտ վիճաբանությունը։ Ուշ երեկոյան այդ վիճաբանության արդյունքներն ի մի բերվեցին. փաստերի անողոք տրամաբանությամբ ջարդված և մեծամասնությունը կորցրած, որն անցել էր Կորշագինի կողմը, Ցվետաևն անճիշտ քայլ արեց, խախտեց դեմոկրատիան. վճռական քվեարկումից առաջ նա Կորշագինին առաջարկեց սենյակից դուրս գալ։

— Շատ լավ, ես դուրս կգամ, թեև դա քեզ պատիվ չի բերում, Ցվետա՜ևս։ Ես միայն նախազգուշացնում եմ, որ եթե դու, այնուամենայնիվ, քո կարծիքի վրա պնդես, վաղը ես հանդես կգամ ընդհանուր ժողովում, և, հավատացած եմ, դու այնտեղ ձայների մեծամասնություն չես ունենա։ Դու անի-

բավացի ես, Ցվետա՛և։ Ես կարծում եմ, ընկեր Խո՛մուտով, որ դու պարտավոր ես այս հարցը կուսկոլեկտիվ փոխադրել ընդհանուր ժողովից առաջ։

Ցվետաևը գրգռիչ տոնով բղավեց.

— Ինչո՞վ ես ինձ վախեցնում։ Առանց քեզ էլ ճանապարհն այնտեղ գիտեմ, քո մասին էլ մենք կխոսենք։ Եթե ինքդ չես աշխատում, գոնե ուրիշներին էլ մի՛ խանգարիր։

Դուռը ծածկելով, Պավելը ձեռքով տրորեց այրվող ճակատը և դատարկ գրասենյակի միջով գնաց դեպի ելքի դուռը։ Փողոցում ամբողջ կրծքով շունչ քաշեց։ Մի ծխախոտ վառելով գնաց դեպի Բատիի բլրի փոքրիկ տնակը, ուր Տոկարևն էր ապրում։

Կորշագինը փականագործին գտավ ընթրելիս։

— Պատմիր լսենք, թե ի՞նչ նոր բան կա ձեզ մոտ։ Դա՛ր-յա, մի ման շիլա բեր սրան,— ասաց Տոկարևը՝ Պավելին սեղանի մոտ նստեցնելով։

Դարյա Ֆոմինիչնան՝ Տոկարևի կինը, որը, ամուսնուն հակառակ, բարձրահասակ, լիքը մարմնով մի կին էր, մի ման ցորենի շիլա դրեց Պավելի առջև և սպիտակ գոգնոցով սրբելով շրթունքները՝ բարևստորեն ասաց.

— Կեր, աղավնյա՛կս։

Առաջ, երբ Տոկարևն արհեստանոցներում էր աշխատում, Կորշագինը հաճախ էր մինչև ուշ գիշեր նստում այստեղ։ բայց այժմ, քաղաք վերադառնալուց հետո, նա առաջին անգամն էր լինում ծերուկի մոտ։

Փականագործն ուշադիր լսում էր Պավելին։ Ինքը ոչինչ չէր ասում. ջանասիրությամբ աշխատում էր գդալով՝ ինքն իրեն «հրմ» անելով։ Շիլան վերջացնելով, նա թաշկինակով բեղերը սրբեց և հազաց.

— Դու, իհարկե իրավացի ես։ Վաղուց ժամանակն է, որ մենք այդ գործը դնենք այնպես, ինչպես պետքն է։ Արհեստանոցները շրջանի հիմնական կոլեկտիվն են կազմում, այստեղից էլ պետք է սկսել։ Ուրեմն Ցվետաևի հետ իրար կպա՞ք։ Վատ է։ Նա ուժեղ տղա է, բայց չէ՞ որ դու կարողանում էիր տղաների հետ աշխատել։ Ի դեպ, դու արհեստանոցներում ի՞նչ ես անում։

— Ցեխում եմ։ Այնպես ընդհանրապես ամեն տեղ էլ մի քիչ շարժվում եմ։ Իմ բջիջում քաղգրագիտության խմբակն եմ ղեկավարում։

— Իսկ բյուրոյում ի՞նչ ես անում։

Կորշագինը կոծկեց։

— Ես առայժմ, քանի դեռ ուժերս քիչ են, հետո նաև մտածում էի սովորել, պաշտոնապես ղեկավարությանը չեմ մասնակցում։

— Ա՛յ քեզ բան,— հավանություն չտալով բացականչեց Տոկարևը։— Գիտե՞ս ինչ, որդյա՛կ, մի բան է միայն քեզ հանդիմանությունից փրկում, դա չամրապնդված առողջությունդ է։ Իսկ հիմա ինչպե՞ս, մի քիչ կազդուրվե՞լ ես։

— Այո՛։

— Դե ուրեմն, ինչպես որ պետքն է, գործի անցիր։ Ջուր ծեծելու կարիք չկա։ Ո՞վ է տեսել, որ կողքից հնարավոր լինի ինչ-որ կարգին բան անել։ Ամեն մեկն էլ քեզ կասի, թե պատասխանատվությունից ես խուսափում, և քեզ ոչնչով չի լինի պաշտպանել։ Վաղը դու այնտեղ ամեն ինչ ուղղիր, իսկ ես Օկունևի ականջը կոլորեմ,— ձայնի մեջ անբավականության երանգով ավարտեց Տոկարևը։

— Նրան ձեռք մի տուր, հայր,— նրան պաշտպան կանգնեց Պավելը,— ես ինքս էի խնդրել ինձ չբեռնել։

Տոկարևն արհամարհանքով սուլեց։

— Խնդրել ես, և նա քո խնդիրքը հարգե՞լ է։ Դե լավ, ինչ կարող ես անել կոմերիտներիդ հետ... Արի՛, որդյակ, հին սովորությամբ թերթեր կարդա... Աչքերս կաղում են։

Կուսկոլեկտիվի բյուրոն հավանություն տվեց երիտասարդական բյուրոյի մեծամասնության կարծիքին։ Կուսակցական և երիտասարդական կոլեկտիվների առաջ կարևոր և դժվարին մի հարց դրվեց՝ անձնական աշխատանքով աշխատանքային կարգապահության օրինակ տալ։ Բյուրոյում Ցվետաևին հիմնավորապես գզեցին։ Սկզբում նա մի քիչ աքլորացավ, բայց պատասխանատու քարտուղար Լոպախինի ելույթով պատին սեղմվեց։ Լոպախինը հասակավոր, իրեն այրող տուբերկուլյոզից դեղին ու գունատ դեմքով մի մարդ էր,

Ցվետաևն անձնատուր եղավ և իր սխալը կիսով չափ ընդունեց։

Մյուս օրը արհեստանոցների պատի թերթում հոդվածներ երևան եկան, որոնք գրավեցին բանվորների ուշադրությունը։ Այդ հոդվածները կարդում էին բարձրաձայն և տաքտաք քննարկում։ Երեկոյան երիտասարդական կոլեկտիվի անսովոր բազմամարդ ժողովում խոսակցությունը շարունակ դրանց շուրջն էր։

Կոստկային վտարեցին, իսկ կոլեկտիվի բյուրոյի մեջ մտցրին նոր ընկերոջ, նոր քաղլուսին՝ Կորչագինին։

Անսովոր կերպով լուռ ու համբերատար լսում էին Նեժդանովին։ Իսկ նա խոսում էր նոր խնդիրների, այն նոր փուլի մասին, որի մեջ թևակոխել էին երկաթուղային արհեստանոցները։

Ժողովից հետո Կորչագինը փողոցում սպասում էր Ցվետաևին։

— Միասին գնանք, մենք խոսելու բաներ ունենք,— մոտեցավ նա կուսքարտուղարին։

— Ինչի՞ մասին ենք խոսելու,— խուլ հարցրեց Ցվետաևը

Պավելը նրան թևանցուկ արեց և նրա հետ մի քանի քայլ անելով՝ կանգ առավ նստարանի մոտ։

— Նստենք մի րոպե։— Եվ առաջինն ինքը նստեց։ Ցվետաևի ծխախոտի կրակը մերթ բռնկվում, մերթ մարում էր։

— Ասա՛, Ցվետա՛և, ինչո՞ւ դու իմ դեմ ատամ ունես։

Մի քանի րոպե լռություն տիրեց։

— Ահա թե ինչի մասին ես խոսում, իսկ ես կարծում էի գործի մասին պիտի խոսես,— Ցվետաևի ձայնն անհավասար էր, շինծու զարմացած։

Պավելը ձեռքը հաստատակամորեն նրա ծնկան վրա դրեց։

— Թո՛ղ, Դի՛մկա, խորամանկություն մի անի։ Այդ դիվանագետներն են միայն այդպես խոսքը շուռ տալիս։ Դու ահա պատասխանիր. ինչո՞ւ քեզ դուր չեմ գալիս։

Ցվետաևն անհամբեր շարժվեց.

— Ի՞նչ ես կպել։ Ի՞նչ ատամ, ի՞նչ բան։ Ես ինքս քեզ առաջարկեցի աշխատել։ Հրաժարվեցիր, իսկ հիմա դուրս է գալիս, որ իբր ես եմ քեզ մեկուսացնում։

Պավելը նրա ձայնի մեջ անկեղծություն չորսաց և առանց նրա ծնկից ձեռքը հեռացնելու՝ հուզվելով ասաց.

— Չես ուզում պատասխանել, ես կասեմ։ Դու կարծում ես, որ ես քո ճամփան եմ ուզում կտրել, կարծում ես, որ քարտուղարի տեղի մասի՞ն եմ երազում։ Չէ որ եթե դա չլիներ, Կոստկայի պատճառով տուրուդմբոցն էլ չէր լինի։ Այդպիսի հարաբերություններն ամբողջ աշխատանքն են այլանդակում։ Եթե այդ միայն մեզ երկուսիս խանգարեր, սատանան իր հետ, կարևոր չէր լինի, մտածիր, ինչ որ ուզում ես։ Բայց չէ՞ որ վաղը միասին ենք աշխատելու։ Ի՞նչ կստացվի դրանից։ Դե լսի՛ր։ Մենք կիսելու բան չունենք։ Ես ու դու բանվոր տղաներ ենք։ Եթե քեզ համար մեր գործն ամեն ինչից թանկ է, դու ձեռքդ ինձ կտաս, և վաղն էլ հենց բարեկամաբար կսկսենք աշխատել։ Իսկ եթե այս ամբողջ հիմարությունը գլխիցդ դուրս չես նետի և բանսարկության շավղով կգնաս, ապա գործի մեջ առաջացած յուրաքանչյուր ճեղքվածքի համար, որ դրա հետևանքով կառաջանա, կատաղի կերպով կկռվենք։ Ահա քեզ իմ ձեռքը, սեղմի՛ր, քանի դեռ դա ընկերոջ ձեռք է։

Կորչագինը մեծապես բավարարվեց, երբ իր ափի մեջ զգաց Ցվետաևի կոշտացած մատները։

Մի շաբաթ անցավ։ Կուսշրջկոմում աշխատանքն ավարտվում էր. բաժինները խաղաղվում էին։ Բայց Տոկարևը դեռ չէր գնացել։ Ներունին նստել էր բազկաթոռում և կենտրոնացած կարդում էր նոր ստացված նյութերը։ Դուռը բախեցին։

— Մտե՛ք,— պատասխանեց Տոկարևը։

Ներս մտավ Կորչագինը և քարտուղարի առաջ դրեց երկու լրացված անկետա։

— Ի՞նչ բան է։

— Սա, հա՛յր, անպատասխանատվության վերացումն է։ Կարծում եմ, որ ժամանակն է։ Եթե դու էլ նույն կարծիքին ես, ապա քո օժանդակությունն եմ խնդրում։

Տոկարևը նայեց վերնագրին, հետո մի քանի վայրկյան նայեց պատանուն և լուռ՝ գրիչը ձեռքը վերցրեց։ Եվ այն սյունակում, որտեղ հարցվում էր ընկեր Կորչագին Պավել Անդրեևիչին ՌԿ(բ)Կ թեկնածության համար երաշխավորողի կուս-

ստաժի մասին, հաստատուն գրեց. «1903 թիվ» և կողքին իր պարզ ստորագրությունը։

— Առ, որդյա՛կ։ Հավատում եմ, երբեք չես խայտառակի իմ սպիտակահեր գլուխը։

Սենյակում տոթ էր, և միայն մի բանի մասին էին մտածում. ինչպես անել, որպեսզի շուտով հասնեն այնտեղ՝ կայարանամերձ Սոլոմենկոյի շագանակենիների ծառուղին։

— Պա՛վկա, վերջացրու, էլ ուժ չկա,— աղերսեց Ցվետաևը քրտինքով ողողված։ Կատյուշան և մյուսներն էլ պաշտպանեցին Ցվետաևին։

Կորչագինը գիրքը փակեց։ Խմբակն իր աշխատանքը վերջացրեց։

Երբ ամբողջ խմբով վեր կացան, պատի վրա անհանգիստ զնգաց հին «էրքիստոնը»։ Ջանալով սենյակում խոսողներից ավելի բարձր գոռալ՝ Ցվետաևը բանակցություններ էր վարում։

Լսափողը կախելով, նա դիմեց Կորչագինին.

— Կայարանում կանգնած են լեհական հյուպատոսության երկու դիվանագիտական վագոններ։ Նրանց լույսը հանգել է, գնացքը մի ժամից մեկնում է, հարկավոր է հաղորդալարը կարգավորել։ Պա՛վել, վերցրու գործիքների մի արկղ և գնա այնտեղ։ Շտապ գործ է։

Միջազգային հաղորդակցության երկու փայլուն վագոն կանգնած էին կայարանի առաջին կառամատույցում։ Լայն լուսամուտներով սալոն-վագոնը պայծառ լուսավորված էր։ Բայց նրա հարևան վագոնը խավարի մեջ էր թաղված։

Պավելը մոտեցավ շքեղ պուլմանյան վագոնին և, պատրաստվելով ներս մտնել՝ ձեռքը մեկնեց բռնակին։

Կայարանի պատից շտապով պոկվեց մի մարդ և բռնեց նրա ուսից։

— Ո՞ւր քաղաքացի։

Ձայնը ծանոթ է, Պավելը շրջվեց։ Կաշվե բաճկոն, գլխարկի լայն հովար, բարակ, սապատավոր քիթ և զգուշավոր, անվստահ հայացք։

Արտյուխինն այժմ միայն ճանաչեց Պավելին, և ձեռքն ուսից իջավ, դեմքի արտահայտությունն իր շարությունը կորցրեց, բայց հարցական հայացքը մնաց արկղի վրա։

— Ո՞ւր էիր գնում։

Պավելը կարճ բացատրեց։ Վագոնի հետևից երևան եկավ երկրորդ կերպարանքը։

— Հիմա ես նրանց վագոնի ուղեկցորդին կկանչեմ։

Սալոն-վագոններում, ուր ուղեկցորդի հետևից մտավ Կորչագինը, նստած էին մի քանի հոգի՝ ճանապարհի շքեղ կոստյումներով։ Մետաքսե ծաղկավոր սփռոցով ծածկված սեղանի մոտ, մեջքով դեպի դուռը դարձած՝ նստել էր մի կին։ Երբ Կորչագինը ներս մտավ, նա զրուցում էր իր դեմ կանգնած մի բարձրահասակ սպայի հետ։ Հենց որ մոնտյորը ներս մտավ, խոսակցությունն ընդհատվեց։

Արագ զննելով այն լարերը, որոնք վերջին լամպից գնում էին դեպի միջանցք, և գտնելով դրանք կարգին վիճակում՝ Կորչագինը դուրս եկավ սալոն-վագոնից, շարունակելով որոնել վնասված տեղը։ Նրան աննահանջ հետևում էր դեր, բանցքամարտիկի պարանոցով ուղեկցորդը, որի համազգեստի վրա կային բազմաթիվ խոշոր պղնձե կոճակներ՝ միգլխանի արծվի պատկերով։

— Անցնենք հարևան վագոնը, այստեղ ամեն ինչ կարգին է, ակումուլյատորն աշխատում է։ Ըստ երևույթին վնասվածքն այնտեղ է։

Ուղեկցորդը պտտեց դռան բանալին, և նրանք մտան մութ միջանցքը։ Հաղորդալարը էլեկտրական լապտերով լուսավորելով՝ Պավելը շուտով գտավ կարճ միացման տեղը։ Մի քանի րոպե հետո միջանցքում վառվեց առաջին լամպը՝ գունատ ու անփայլ լույսով ողողելով միջանցքը։

— Պետք է կուպեն բաց անել, անհրաժեշտ է այնտեղ փոխել լամպերը, նրանք այրվել են,— դեպի իր ուղեկիցը դարձավ Կորչագինը։

— Այդ դեպքում պետք է կանչել պանիին, բանալին նրա մոտ է,— և ուղեկցորդը չցանկանալով Կորչագինին մենակ թողնել՝ նրան տարավ իր հետ։

Առաջինը կուպե մտավ կինը, նրա հետևից՝ Կորչագինը։ Ուղեկցորդը մնաց դռան մեջ կանգնած՝ իր մարմնով փակելով այն։ Պավելի աչքին ընկան ցանցերի մեջ դրված երկու շքեղ

ճամպրուկները, անփութորեն բազմոցի վրա նետված մետաքսե վերարկուն, լուսամուտի մոտ փոքրիկ սեղանին դրված օծանելիքի սրվակը և մալախիտե շատ փոքրիկ դիմափոշու տուփը։ Կինը նստեց բազմոցի մի անկյունում և իր վշագույն մազերն ուղղելով՝ սկսեց դիտել մոնտյորի աշխատանքը։

— Պանիին խնդրում եմ ինձ թույլ տալ մի րոպեով բացակայել. պան մայորը սառը գարեջուր է ցանկանում,— հաճոյակատարությամբ ասաց ուղեկցորդը՝ խոնարհվելիս դժվարությամբ թեքելով իր եզային պարանոցը։

Կինը երգեցիկ սեթևեթանքով ձգեց.

— Կարող եք գնալ։

Խոսակցությունը լեհերեն էր։

Միջանցքի լույսի շերտն ընկնում էր կնոջ ուսին։ Պանիի շքեղ, լիոնի ամենանուրբ մետաքսից փարիզյան վարպետների կարած հագուստը մերկ էր թողնում նրա ուսերն ու թևերը։ Փոքրիկ ականջից կախված, առկայծելով ու փայլատակելով, ճոճվում էր կաթիլանման ադամանդը։ Կորշագինը տեսնում էր միայն կնոջ ուսն ու ձեռքը, որոնք կարծես փղոսկրից էին շինված։ Դեմքն ստվերի մեջ էր։ Պտուտակահանով արագորեն աշխատելով՝ Պավելը փոխեց առաստաղի հախճապակե օղակը, և մի րոպե հետո կուպեն լուսավորվեց։ Մնում էր ստուգել երկրորդ էլեկտրալամպը բազմոցի վերևում, որտեղ նստած էր կինը։

— Այս լամպը ևս պետք է ստուգեմ,— ասաց Կորշագինը, կանգնելով նրա դիմաց։

— Ա՜խ, այո՛, չէ որ ես ձեզ խանգարում եմ,— մաքուր ռուսերենով ասաց պանին և թեթևորեն բարձրացավ բազմոցից՝ կանգնելով համարյա Կորշագինի կողքին։ Այժմ կինն ամբողջովին տեսանելի էր։ Հոնքերի ծանոթ սլաքանման գծեր և գոռոզ սեղմված շրթունքներ։ Կասկած լինել չէր կարող. նրա առաջ կանգնած էր Նելի Լեշչինսկայան։ Փաստաբանի դուստրը չէր կարող չնկատել նրա զարմացական հայացքը։ Բայց եթե Կորշագինը նրան ճանաչեց, ապա Լեշչինսկայան չնկատեց, որ այդ չորս տարվա ընթացքում մեծացած մոնտյորը հենց նրա անհանգիստ հարևանն է։

Ի պատասխան նրա զարմանքի՝ արհամարհանքով հոնքերը խոժոռելով՝ կինը գնաց դեպի կուպեի դուռը և կանգ առավ այնտեղ՝ լաքե կոշիկի քթով անհամբեր թխկթխկացնելով։ Պավելն սկսեց երկրորդ լամպը կարգավորել։ Պտուտակը հանելով՝ լույսի տակ դիտեց այն և իր համար, ու առավել ևս Լեշչինսկայայի համար անսպասելի՝ լեհերեն հարցրեց.

— Վիկտո՞րն էլ է այստեղ։

Հարցնելիս Կորշագինը չշրջվեց։ Նա Նելիի դեմքը չէր տեսնում, բայց երկարատև լռությունը խոսում էր նրա շփոթության մասին։

— Դուք մի՞թե նրան ճանաչում եք։

— Նույնիսկ շատ լավ եմ ճանաչում։ Չէ՞ որ մենք ձեզ հետ հարևաններ էինք։— Պավելը շրջվեց դեպի նա։

— Պավելը չե՞ք, որդին...— Նելին կակազեց։

— Խոհարարուհու,— հուշեց Կորշագինը։

— Ինչպես մեծացել եք։ Հիշում եմ՝ մի վայրի տղա էիք։

Նելին առանց քաշվելու ոտքից գլուխ զննում էր նրան։

— Իսկ Վիկտորն ինչո՞ւ է ձեզ հետաքրքրում։ Որքան ես հիշում եմ, դուք նրա հետ հաշտ չէիք,— իր երգեցիկ սոպրանոյով ասաց Նելին՝ հույս ունենալով անսպասելի հանդիպմամբ ցրել իր ձանձրույթը։

Պտուտակահանն արագորեն պտտին էր ամրացնում փայտե պտուտակը։

— Վիկտորն ինձ չվճարված պարտք ունի։ Երբ դուք հանդիպեք նրան, ասացեք, որ ես նրա հետ հաշիվը մաքրելու հույսը չեմ կորցնում։

— Ասացե՛ք, ինչքան է պարտք, ես նրա փոխարեն կվճարեմ։

Նա հասկանում էր, թե ինչ «հաշվի» մասին է խոսում Կորշագինը։ Նրան հայտնի էր պետլյուրականների հետ պատահած ամբողջ պատմությունը, բայց այդ «գյադային» գրգռելու ցանկությունը նրան մղում էր ծաղրանքի։

Կորշագինը լուռ էր։

— Ասացեք, ճի՞շտ է, որ մեր տունը կողոպտված է և ավերվում է։ Հավանորեն տաղավարն ու ծաղկաթմբերն ամբողջովին քարուքանդ են արված,— տխրությամբ հարցրեց Նելին։

— Տունն այժմ մերն է և ոչ ձերը, և մենք այն ավերելու հաշիվ չունենք։

Նելին սարկաստիկ ծիծաղեց։

— Օհո՜, ինչպես երևում է ձեզ էլ են սովորեցրել։ Բայց, ի միջի այլոց, այստեղ լեհական միխիայի վագոնն է, և այս կուպեում տիրուհին ես եմ, իսկ դուք ինչպես որ ստրուկ էիք, այնպես էլ մնացել եք։ Ա՛յ, այժմ աշխատում եք, որպեսզի ես լույս ունենամ, որպեսզի ինձ համար այս բազմոցի վրա կարդալը հարմար լինի։ Առաջ ձեր մայրը մեզ համար սպիտակեղեն էր լվանում, իսկ դուք ջուր էիք բերում։ Այժմ մենք նորից էլի նույն վիճակներում հանդիպեցինք։

Նա այդ ասում էր հաղթական շարախնդությամբ։ Պավելը դանակով էլեկտրալարի ծայրը մաքրելով՝ չթաքցրած հեգնանքով էր նայում լեհուհուն։

— Ես, քաղաքացուհի, ձեզ համար մի ժանգոտ մեխ էլ չէի խփի, բայց քանի որ բուրժույները դիվանագետներ են հնարել, ապա մենք մեզ պահում ենք և նրանց գլուխները չենք կտրում, նույնիսկ կոպիտ խոսքեր չենք ասում՝ ի տարբերություն ձեզ։

Նելիի այտերը կաս-կարմիր կտրեցին։

— Ի՞նչ կանեիք ինձ, եթե ձեզ հաջողվեր Վարշավան գրավել։ Ինձ էլ կոտլետի պես կհոշոտեիք, թե՞ ձեզ հարճ կվերցնեիք։

Նա նազանքով կռացած կանգնած էր դռների մեջ. կոկաինի վարժված զգայուն ռունգները ցնցվում էին։ Բազմոցի վրայի լույսը վառվեց։ Պավելը շտկվեց։

— Ո՞ւմ եք պետք։ Առանց մեր սրերի էլ կոկաինից կատկեք։ Ես ձեզ նույնիսկ իբրև կնոջ չէի տիրանա։

Արկղը ձեռքին, երկու քայլ արեց դեպի դուռը։ Նելին մի կողմ քաշվեց, և արդեն միջանցքի ծայրին Պավելը լսեց նրա ճնշված ձայնը.

— Անիծյա՛լ բոլշևիկ։

Մյուս օրը երեկոյան, երբ Կորշագինը ուղևորվում էր գրագրաբան, փողոցում հանդիպեց Կատյուշային։ Տղայի բլուզի թևքը բռունցքի մեջ սեղմելով՝ Զելենովան կատակով փակեց նրա ճանապարհը։

— Ո՞ւր ես վազում, քաղաքականությո՛ւն ու լուսավորությո՛ւն։

— Գրագրաբան, մայրի՛կ, ճանապարհ ազատիր,— նույն տոնով պատասխանեց Կորշագինը և հոգատարությամբ բռնելով Կատյուշայի ուսերից՝ զգուշությամբ քաշեց դեպի սալարկը։ Նրա ձեռքերից ազատվելով՝ Կատյուշան քայլեց նրա կողքից։

— Լսի՛ր, Պավլո՛ւշա։ Հո չի կարելի անվերջ սովորել... Գիտե՞ս ինչ։ Եկ այսօր երեկույթի գնանք, այսօր տղերքը հավաքվելու են Զինա Գլադիշի մոտ։ Աղջիկները վաղուց սրդեն խնդրում են ինձ, որ քեզ տանեմ։ Դու հենց միայն քաղաքականությամբ ես զբաղվում, մի՞թե չես ցանկանում ուրախանալ, քեֆ անել։ Դե, այսօր որ չկարդաս, հենց քա՛ զլուխք թեթև կլինի,— համառորեն համոզում էր Կատյուշան։

— Ի՞նչ երեկույթ է։ Ի՞նչ են անելու այնտեղ։

Կատյուշան հեգնանքով ծաղրեց.

— Ի՞նչ են անելու։ Հո աստծուն չեն աղոթելու, այլ ուրախ ժամանակ են անցկացնելու, ուրիշ ոչինչ։ Դու հա նվագո՞ւմ ես բայանի վրա։ Իսկ ես ոչ մի անգամ չեմ լսել։ Ինձ բավականություն պատճառիր, լա՞վ։ Զինկայի քեռին բայան ունի, բայց վատ է նվագում։ Աղջիկները քեզանով հետաքրքրվում են, իսկ դու չթանում ես գրքի վրա։ Այդ արտե՞ղ է գրված, որ կոմերիտականը չի կարող զվարճանալ։ Գնանք, քանի դեռ չեմ ձանձրացել քեզ համոզելուց, թե չէ մի ամսով կխռովեմ քեզ հետ։

Խոշորակն ներկարար Կատյան լավ ընկեր և ոչ վատ կոմերիտական է։ Կորշագինը չէր ուզում աղջկան վիրավորել, և նա համաձայնեց, թեև անսովոր և տարօրինակ էր թվում։

Շոգեքարշի մեքենավար Գլադիշի բնակարանում շատ մարդ կար և աղմկոտ էր։ Հասակավորները տեղափոխվեցին երկրորդ սենյակը, որպեսզի երիտասարդներին չխանգարեն, իսկ առաջին մեծ սենյակում և պարտեզին նայող փոքրիկ պատշգամբում հավաքվեցին մոտ տասնհինգ տղաներ ու աղջիկներ։ Երբ Կատյուշան պարտեզի միջով Պավելին բերեց պատշգամբ, այնտեղ արդեն խաղում էին այսպես կոչված «աղավնիների կերակրում» խաղը։ Պատշգամբի մեջտեղում թիկունք թիկունքի դրված էին երկու աթոռ։ Խաղը վարող տանտիրուհու կանչով այդ աթոռների վրա նստում էին մի տղա և մի աղջիկ։ Տանտիրուհին բղավում էր. «Կերակրեցե՛ք

աղավնիներին», և երիտասարդները, որոնք նստած էին թիկունք թիկունքի, գլուխները ետ էին շրջում, նրանց շրթունքները հանդիպում էին, և նրանք բոլորի ներկայությամբ համբուրվում էին։ Հետո սկսեցին «մատանի» և «փոստատար» խաղալ, և այդ խաղերից յուրաքանչյուրին անպայման ուղեկցում էին համբույրները, ընդ որում «փոստատար» խաղալիս, հասարակական հսկողությունից խուսափելու համար, համբույրները լուսավորված պատշգամբից տեղափոխվում էին սենյակը, ուր այդ ժամանակ լույսը հանգցնում էին։ Ում այդ խաղերը չէին բավարարում, նրանց համար անկյունում, կլոր սեղանի վրա դրված էր «ծաղիկների սիրախաղի» քարտերի կապոցը։ Պավելի հարևանուհին, որն իրեն Մուրա էր անվանում, տասնվեց տարեկան մի աղջիկ, երկնագույն աչքերի սեթևեթանքով նրան մեկնեց մի քարտ և կամացուկ ասաց.

— Մանուշա՞կ։

Մի քանի տարի առաջ Պավելը դիտել էր այդպիսի երեկույթներ և եթե նրանցում անմիջական մասնակցություն չէր ունեցել, այնուամենայնիվ, համարել էր նորմալ երևույթ։ Իսկ այժմ, երբ նա ընդմիշտ պոկվել էր փոքրիկ քաղաքի քաղքենիական կյանքից, այդ երեկույթը ինչ-որ բանով նրան այլանդակ և մի քիչ էլ ծիծաղելի թվաց։

Ինչպես էլ որ լիներ, «սիրախաղի» քարտը նրա ձեռքին էր։

«Մանուշակ»-ի դիմաց նա կարդաց. «Դուք ինձ շատ եք դուր գալիս»։

Պավելը նայեց աղջկան։ Նա առանց շփոթվելու դիմավորեց այդ հայացքը։

— Ինչո՞ւ։

Հարցը փոքր-ինչ չոր ստացվեց, Մուրան պատասխանը նախապես էր պատրաստել։

— Վա՞րդ,— Պավելին մեկնեց նա երկրորդ քարտը։

Վարդի դիմաց գրված էր. «Դուք իմ իդեալն եք»։ Կորչագինը շրջվեց դեպի աղջիկը և աշխատելով տոնը մեղմել՝ հարցրեց.

— Ինչո՞ւ ես այս դատարկությամբ զբաղվում։

Մուրան շփոթվեց և իրեն կորցրեց։

— Մի՞թե իմ խոստովանությունը ձեզ տհաճ է,— նրա շրթունքները քմահաճությամբ սեղմվեցին։

Կորչագինը նրա հարցն անպատասխան թողեց։ Բայց նա ցանկացավ իմանալ, թե ով է իր հետ զրուցողը։ Եվ սկսեց հարցեր տալ, որոնց աղջիկը սիրով էր պատասխանում։ Մի քանի րոպեից նա արդեն գիտեր, որ աղջիկը սովորում է յոթնամյակում, որ նրա հայրը վագոնների ստուգող է, և որ նա Պավելին վաղուց գիտե ու ցանկանում էր նրա հետ ծանոթանալ։

— Աղգանունդ ի՞նչ է,— հարցրեց Կորչագինը։

— Վոլինցևա Մուրա։

— Նրբայրդ դեպոյի բջիջի քարտուղա՞րն է։

— Այո՛։

Այժմ Կորչագինը գիտեր, թե ում հետ գործ ունի։ Շրջանի ամենաակտիվ կոմերիտականներից մեկը՝ Վոլինցևը, ինչպես երևում է, ոչ մի ուշադրություն չի դարձնում իր քրոջ վրա, և վերջինս դառնում է մի գորշ քաղքենուհի։ Վերջին տարին սկսել է հաճախել իր ընկերուհիների մոտ կազմակերպվող երեկույթներին, ուր շշմելու չափ համբուրվում էին։ Կորչագինին նա մի քանի անգամ տեսել է իր եղբոր մոտ։

Այժմ Մուրան զգաց, որ հարևանը հավանություն չի տալիս նրա վարքին, և երբ նրան կանչեցին «աղավնիներ կերակրելու», որսալով Կորչագինի խեթ հեգնաժպիտը, կտրականապես հրաժարվեց։ Մի քանի րոպե ևս նստեցին։ Մուրան պատմում էր իր մասին։ Նրանց մոտեցավ Զելենովան։

— Բայանը բերեմ կնվագե՞ս։— Եվ խորամանկորեն աչքերը կկոցելով, նայեց Մուրային։— Ծանոթացաք, հա՞։

Պավելը Կատյուշային նստեցրեց իր կողքին և օգտվելով այն բանից, որ չորս կողմը ծիծաղում ու բղավում էին, ասաց նրան.

— Չեմ նվագի, ես ու Մուրան հիմա այստեղից կգնանք։

— Օհո՛։ Ուրեմն բռնե՞ց,— բազմանշանակ տոնով ձգեց Զելենովան։

— Այո՛, բռնեց։ Դու ինձ ասա, ինձնից ու քեզանից բացի այստեղ էլի կոմերիտականներ կա՞ն։ Թե՞ միայն ես ու դու ենք «աղավնատուն» ընկել։

Կատյուշան հաշտեցնող տոնով հաղորդեց.

— Հիմարություններն արդեն թողեցին, հիմա կպարենք։

Կորչագինը ոտքի ելավ։

— Լավ, պարի՛ր, պառա՛վ, իսկ ես ու Վալինեցան, այնուամենայնիվ, կհեռանանք։

Մի անգամ երեկոյան Բորխարտը մտավ Օկունևի մոտ։ Սենյակում միայն Կորշագինն էր նստած։

— Դու շա՞տ ես զբաղված, Պա՛վել։ Կուզես գնանք քաղսովետի պլենումին։ Երկուսով ավելի ուրախ կլինի, բայց ուշ կվերադառնանք։

Կորշագինն արագորեն պատրաստվեց։ Մահճակալի գլխին կախված էր մաուզերը, որը շատ ծանր էր։ Սեղանի գզրոցից նա հանեց Օկունևի բրաունինգը և գրպանը դրեց։ Տոմսակ թողեց Օկունևին։ Բանալին թաքցրեց պայմանավորված տեղում։

Թատրոնում հանդիպեցին Պանկրատովին և Օլգային։ Բոլորը միասին նստեցին, ընդմիջումներին զբոսնում էին հրապարակում։ Նիստը, ինչպես որ սպասում էր Աննան, ձգձգվեց մինչև ուշ գիշեր։

— Գուցե գնանք ի՞նձ մոտ քնելու։ Արդեն ուշ է, իսկ տունը հեռու է,— առաջարկեց Յուրենևան։

— Ո՛չ, ես Պավելի հետ արդեն պայմանավորվել եմ,— հրաժարվեց Աննան։

Պանկրատովն ու Օլգան պողոտայով դեպի ներքև ուղղվեցին, իսկ սոլոմենցիք դեպի բլուր գնացին։

Գիշերը տոթ ու խավար էր։ Քաղաքը քնած էր։ Լուռ փողոցներով տարբեր կողմեր բաժանվեցին պլենումի մասնակիցները։ Նրանց քայլերն ու ձայներն աստիճանաբար մարեցին։ Պավելն ու Աննան արագորեն հեռանում էին կենտրոնական փողոցներից։ Դատարկ շուկայում նրանց կանգնեցրեց պարեկը։ Փաստաթղթերն ստուգելով՝ թողեց, որ անցնեն։ Բուլվարը կտրեցին անցան և դուրս եկան պարապուտով անցնող խավար, ամայի փողոցը։ Շրջվեցին դեպի ձախ և առաջ գնացին խճուղիով, կենտրոնական ճանապարհային պահեստներին զուգահեռ։ Դրանք բետոնե երկար շենքեր էին, մռայլ ու խժռոտ։ Աննային մի ակամա անհանգստություն համակեց։ Նա քննախույզ դիտում էր խավարը, Կորշագինին պատասխանում էր կցկտուր և անպատեհ։ Երբ պարզվեց, որ կասկածելի թվացող մի ստվեր ընդամենը հեռաձրասյունն է, Բորխարտը ծիծաղեց և Կորշագինին պատմեց իր վիճակի մասին։ Նա թևանցուկ արեց տղային և ուսը նրա ուսին հպելով հանգստացավ։

— Ես քսաներեք տարեկան եմ, բայց պառավի նեվրասթենիա ունեմ։ Դու կարող ես ինձ վախկոտ համարել։ Բայց դա ճիշտ չի լինի։ Այսօր ես հատկապես լարված վիճակում եմ։ Ա՛յ հիմա, երբ քեզ իմ կողքին եմ զգում, տագնապս անհետանում է, և նույնիսկ անհարմար եմ զգում այդ ամբողջ երկյուղի համար։

Պավելի հանգստությունը, նրա ծխախոտի կրակի առկայծումները, որոնք մի ակնթարթ լուսավորում էին նրա դեմքի մի անկյունը, հոնքերի առնական կորությունը՝ այս բոլորը ցրեցին այն ահը, որ իջել էր Բորխարտի վրա խավար գիշերվա, պարապուտի վայրի տեսքի և Պոդոլում երեկվա մղձավանջային սպանության մասին թատրոնում լսած պատմության հետևանքով։

Պահեստները ետ մնացին։ Գետակի վրա ձգված կամուրջն անցան և մերձկայարանային խճուղով ընթացան դեպի թունելի անցքը, որն ընկած էր ներքևում՝ երկաթուղային գծերի տակ, և քաղաքի այս մասը միացնում էր երկաթուղային շրջանի հետ։

Կայարանը մնաց հեռվում, աջ կողմում։ Անցուղին մրտնում էր դեպոյի փակուղին։ Դրանք արդեն իրենց վայրերն էին։ Վերևում, ուր երկաթուղու գծերն էին, սլաքների ու սիմաֆորների վրա առկայծում էին երփներանգ լույսերը, իսկ դեպոյի մոտ հոգնած հնում էր գիշերային հանգստի գնացող մանևրող շոգեքարշը։

Թունելի մուտքի վերևում ժանգոտ մի կեռից լապտեր էր կախված։ Նա զեփյուռից հազիվ նկատելի ճոճվում էր, և նրա դեղնապղտոր լույսը թունելի մի պատից դեպի մյուս պատն էր շարժվում։

Թունելի մուտքից տասը քայլ հեռավորության վրա, հենց խճուղու մոտ կանգնած էր մի մենավոր տնակ։ Երկու տարի առաջ ծանր մի արկ էր ընկել նրա վրա և ներսը ցրիվ տալով՝ արտաքին կողմերը վեր էր ածել մի ավերակի, ու այժմ այդ ավերակը բացվել էր որպես մի վիթխարի երախ, ասես ճանապարհի մոտ կանգնած մի մուրացկան լիներ, որը ցու-

ցադրել է իր ամբողջ թշվառությունը։ Երևում էր, թե ինչպես վերևում հողաթմբի վրայով անցավ գնացքը։

— Ահա և մենք համարյա տանն ենք,— թեթևացած ասաց Աննան։

Պավելն աննկատելիորեն աշխատեց ազատել իր թևը։ Բայց Աննան թևը բաց չթողեց։ Անցան ավերված տնակի մոտով։

Թիկունքում հանկարծ ինչ-որ բան պոկվեց։ Ոտքերի սրընթաց դոփյուն։ Խոպոտ շնչառություն։ Նրանց հասնում էին։

Կորչագինը կտրուկ շարժումով քաշեց թևը, բայց սարսափած Աննան թևն իրեն սեղմեց։ Եվ երբ Պավելն, այնուամենայնիվ, ուժով պոկեց թևը, արդեն ուշ էր. ինչ-որ մեկի մատները երկաթի նման սեղմեցին նրա պարանոցը։ Կտրուկ շարժվելով մի կողմի վրա՝ Պավելը շրջվեց դեմքով դեպի հարձակվողը։ Ձեռքը սողաց դեպի կոկորդը և լարան դարձնելով գիմնաստյորկայի օձիքը՝ Պավելին պահեց մի ատրճանակի փողի դիմաց, որը դանդաղորեն աղեղ էր գծում։

Հմայվածի նման էլեկտրիկի աչքերը ոչ մարդկային մի լարվածությամբ հետևում էին այդ աղեղին։ Մահն աչքերին էր նայում ատրճանակի փողի տեսքով, և ուժ չկար, կամքը չէր բավարարում, որ թեկուզ մեկ հարյուրերորդական վայրկյան հայացքը կտրի փողից։ Հարվածի էր սպասում։ Բայց կրակոց չեղավ, և Պավելի լայն բացված աչքերը տեսան բանդիտի դեմքը։ Մեծ գանգ, զորեղ ծնոտ, չսափրած մորուքի և բեղերի սևություն, իսկ աչքերը գլխարկի լայն հովարի ստվերի մեջ էին մնացել։

Կորչագինի աչքի ծայրը տեսավ կավճի պես գունատ Աննայի դեմքը, որին նույն վայրկյանին տան վիհը քաշեց երեքից մեկը։ Թևերը ոլորելով գետնին գլորեց։ Դեպի Պավելը նետվեց ևս մի ստվեր, այս ստվերը Կորչագինը տեսավ միայն թունելի պատի վրա արտացոլված։ Հետևում՝ տան վիհում, պայքար էր տեղի ունենում. Աննան հուսահատ դիմադրում էր, նրա խեղդված ճիչը ճեղքում էր բերանը փակող գլխարկը։ Մեծագլուխը, որի ձեռքին էր Կորչագինը, չէր ցանկանում մնալ բռնաբարության անմասնակից վկա միայն, գազանի պես ձգտում էր դեպի իր որսը։ Դա, ըստ երևույթին, պարագլուխն էր, և դերերի այսպիսի բաժանումը նրան դուր

չեկավ։ Պատանին, որին նա պահում էր իր դեմ, բոլորովին խակ էր, տեսքից դատելով՝ «դեպոյի քնձոտներից»։ Այդ տղան իրենից ոչ մի վտանգ չէր ներկայացնում։

«Երկու-երեք անգամ, ինչպես պետքն է, ճակատին խփես և ցույց տաս պարապուտի ճամփան, երկու ոտ էլ փոխ կառնի մինչև քաղաք, առանց ետ նայելու»։ Եվ նա բռունցքը թուլացրեց։

— Ձդի՛... Քաշվի՛ր էնտեղ, որտեղից եկել ես, իսկ թե ձեն ես հանել, գնդակ կուտես։— Եվ մեծագլուխն ատրճանակի փողով խփեց Կորչագինի ճակատին։— Դե՛, ձդի։— խրոպոտ ձայնով ասաց նա և պարարելլումը ցած իջեցրեց, որպեսզի չվախեցնի, թե թիկունքին կարող է կրակել։

Կորչագինը ետ նետվեց, առաջին երկու քայլը կողքի, հայացքը չհեռացնելով մեծագլխից։ Բանդիտը հասկացավ, որ պատանին դեռ շարունակում է վախենալ թիկունքին գնդակ ստանալուց, և շրջվեց դեպի տունը։

Կորչագինը ձեռքը արագ գրպանը տարավ. «Միայն թե հասցնեմ, միայն թե հասցնեմ»։ Կտրուկ շրջվեց և առաջ նետելով ցարդած ձախ ձեռքը, մի ակնթարթում փողի ծայրով որսաց մեծագլխին և կրակեց։

Բանդիտն ուշ հասկացավ իր սխալը։ Գնդակը նրա կողը խրվեց ավելի առաջ, քան նա ձեռքը կբարձրացներ։

Հարվածից նա խփվեց թունելի պատին և խուլ ոռնալով, ձեռքով պատից կառչելով՝ դանդաղորեն իջավ դետնին։ Տան փոսից մի ստվեր սահեց դեպի ներքև, դեպի զառիթափը։ Նրա հետևից պայթեց Կորչագինի կրակոցը։ Երկրորդ ստվերը կռացած, ոստյուններով հեռանում էր դեպի թունելի մթությունը։ Կրակոց։ Գնդակի փշրած բետոնի փոշով ծածկված՝ ստվերը մի կողմ նետվեց և սուզվեց խավարի մեջ։ Նրա հետևից բրաունինգը երեք անգամ վրդովվեց գիշերը։ Պատի տակ, որդի պես գալարվելով, իր հոգեվարքն էր ապրում մեծագլուխը։

Տեղի ունեցածի սարսափից ցնցված Աննան, որին Կորչագինը բարձրացրեց գետնից, նայում էր ջղաձգվող բանդիտին՝ չհավատալով իր փրկությանը։

Կորչագինը ուժով նրան քաշեց դեպի խավարը, ետ, դեպի քաղաք, դուրս բերեց լուսավորված շրջանակից։ Նրանք վազում էին դեպի կայարան։ Իսկ թունելի մոտ, ուղեթմբի

վրա արդեն կրակներ էին առկայծում, և երկաթգծի վրա ծանրորեն հնչեց հրացանի տագնապալի կրակոցը։

Երբ վերջապես հասան Աննայի բնակարանին, Բատիկ լեռան վրա ինչ-որ մի տեղ աքաղաղներ կանչեցին։ Աննան պառկեց մահճակալին։ Կորշագինը նստեց սեղանի մոտ։ Նա ծխում էր՝ կենտրոնացած դիտելով, թե ինչպես է դեպի վեր լողում ծխի դորշավուն պարույրը... Հենց նոր նա սպանեց իր կյանքում չորրորդ մարդուն։

Առհասարակ կա՞, արդյոք, արիություն, որը միշտ արտահայտվում է իր կատարյալ ձևի մեջ։ Հիշելով իր բոլոր զգացողություններն ու ապրումները՝ նա ինքն իրեն խոստովանում էր, որ առաջին վայրկյաններին ատրճանակի փողի սև հայացքը նրա սիրտը սառեցրեց։ Իսկ այն բանում, որ երկու ստվերներն անպատիժ հեռացան, մի՞թե միայն աչքի կուրությունն ու ձախ ձեռքով կրակելու անհրաժեշտությունն էին մեղավոր։ Ո՛չ։ Մի քանի քայլ տարածության վրա կարելի էր ավելի հաջող կրակել, բայց միշտ նույն լարվածությունն ու շտապողականությունը, որ շփոթված լինելու անտարակուսելի նշաններն են, դրան խոչընդոտ հանդիսացան։

Սեղանի լամպի լույսը լուսավորում էր նրա գլուխը, իսկ Աննան դիտում էր նրան՝ աչքաթող չանելով նրա դեմքի և ոչ մի մկանի շարժումը։ Ի դեպ, նրա աչքերը հանգիստ էին, և մտքի լարվածության մասին վկայում էր միայն ճակատի կնճիռը։

— Ի՞նչ ես մտածում, Պավե՛լ։

Հարցից վախեցած՝ նրա մաքերը ծխի պես լռեցին լուսավոր կիսաշրջանից այն կողմ, և նա ասաց այն առաջինը, ինչ այժմ մտածեց։

— Անհրաժեշտ է, որ ես գնամ պարեստատուն։ Այս բոլորը պետք է հայտնել այնտեղ։

Եվ դժվարությամբ, հոգնությունը հաղթահարելով, ոտքի ելավ։

Աղջիկը անմիջապես նրա ձեռքը չթողեց, մենակ մնալ չէր ուզում։ Հետո ուղեկցեց մինչև դուռը և այն փակեց միայն այն ժամանակ, երբ Կորշագինը, որն այժմ այնպես թանկ ու մոտիկ մարդ էր դարձել նրա համար, անհետացավ խավարում։

Կորշագինի պարեստատուն գալը բացատրեց երկաթուղային պահեստախմբի համար անհասկանալի այդ ոպանությունը։ Դիակն անմիջապես ճանաչեցին, դա քրեական հետախուզությանը լավ հայտնի Ֆիմկա Չերեպն էր, ելուզակ ու մարդասպան, ռեցիդիվիստ։

Թունելի մոտի դեպքը մյուս օրը հայտնի դարձավ բոլորին։ Այդ հանգամանքն անսպասելի ընդհարում առաջ բերեց Պավելի և Ցվետաևի միջև։

Աշխատանքի ամենաեռուն ժամանակ արտադրամաս մտավ Ցվետաևը և իր մոտ կանչեց Կորշագինին։ Ցվետաևը նրան տարավ միջանցք և, կանգ առնելով մի խուլ անկյունում, հուզվելով ու չիմանալով, թե ինչից սկսի, վերջապես ասաց.

— Պատմի՛ր, երեկ ի՞նչ է եղել։

— Դու հո գիտես։

Ցվետաևն անհանգիստ շարժեց ուսերը։ Մոնտյորը չգիտեր, որ Թունելի մոտի դեպքը Ցվետաևին ուրիշներից ավելի սուր կերպով էր հուզում։ Մոնտյորը չգիտեր, որ, հակառակ իր արտաքին անտարբերության, այդ դարբինն անտարբեր չէր Բարխարտի նկատմամբ։ Աննան միայն նրա մոտ չէր, որ համակրանքի զգացում էր առաջացրել, բայց Ցվետաևի մոտ դա ավելի բարդ ձևով էր տեղի ունենում։ Թունելի մոտի դեպքը, որի մասին նա հենց նոր էր իմացել Լագուտինայից, նրա գիտակցության մեջ թողել էր տանջալի ու չլուծված մի հարց։ Այդ հարցը նա ուղղակի չէր կարող տալ մոնտյորին, բայց պատասխանը ցանկանում էր իմանալ։ Գիտակցության մի ծայրով նա հասկանում էր իր անհանգստության էգոիստական մանրությունը, բայց զգացումների հակասական պայքարում այս անգամ նրա մեջ հաղթանակեց պրիմիտիվը, գաղանայինը։

— Լսի՛ր, Կորշագի՛ն,— խոսեց նա խուլ ձայնով։— Խոսակցությունը մեր մեջ կմնա։ Ես հասկանում եմ, որ դու այդ մասին չես պատմում, որպեսզի Աննային տառապանք չպատճառես, բայց ինձ դու կարող ես վստահել։ Ասա՛, երբ բանդիտը քեզ բռնել էր, մյուսները Աննային բռնաբարեցի՞ն։

Նախադասության վերջում Ցվետաևը չդիմացավ և հայացքը մի կողմ փախցրեց։

Կորշագինն սկսեց աղոտ կերպով հասկանալ նրան։ «Եթե ինտարբեր լիներ դեպի Աննան, Ցվետաևն այդպես չէր հուզվի։ Իսկ եթե Աննան թանկ է նրա համար, ապա..»։ Պավելն իրեն Աննայի փոխարեն վիրավորված զգաց։

— Ինչո՞ւ ես հարցնում։

Ցվետաևն ինչ-որ անկապ բաներ ասաց և զգալով, որ իրեն հասկացել են, շարացավ.

— Ի՞նչ ես խուսափում։ Ես քեզ խնդրում եմ պատասխանել, իսկ դու սկսում ես ինձ հարցաքննել։

— Սիրո՞ւմ ես Աննային։

Լռություն։ Հետո Ցվետաևը դժվարությամբ արտասանեց.

— Այո՛։

Հազիվ զսպելով իր զայրույթը՝ Կորշագինը շրջվեց և առանց ետ նայելու քայլեց միջանցքով։

Մի անգամ երեկոյան Օկունևն ընկերոջ մահճակալի մոտ շփոթված մլուլ տալուց հետո՝ նստեց մահճակալի եզրին և ձեռքը դրեց այն գրքի վրա, որ կարդում էր Պավելը։

— Գիտես, Պավլո՛ւշա, քեզ պետք է պատմեմ մի բանի մասին։ Մի կողմից կարծես թե դատարկ բան է, իսկ մյուս կողմից՝ ճիշտ հակառակը։ Իմ և Տալյա Լագուտինայի միջև թյուրիմացություն է պատահել։ Սկզբում, Գասկանո՞ւմ ես, նա ինձ դուր եկավ։— Օկունևը մեղավոր տեսքով քունքը քորեց, բայց տեսնելով, որ ընկերը չի ծիծաղում, ավելի համարձակ դարձավ։— Իսկ հետո Տալյայի մոտ էլ... նման մի բան։ Մի խոսքով, ես այդ բոլորը քեզ չեմ պատմի, ամեն ինչ առանց լապտերի էլ տեսանելի է։ Երեկ մենք վճռեցինք մեր բախտը փորձել, երկուսս միասին կառուցել մեր կյանքը։ Ես քսաներկու տարեկան եմ, մենք երկուսս էլ քվեարկելու իրավունք ունենք։ Ես ուզում եմ Տալյայի հետ մեր կյանքը կառուցել հավասարության սկզբունքով։ Ինչպե՞ս ես նայում այդ հարցին։

Կորշագինը մտածմունքի մեջ ընկավ։

— Ի՞նչ կարող եմ պատասխանել։ Կո՛ւյա։ Դուք երկուսդ էլ իմ բարեկամներն եք, ծագումով միևնույն ցեղից եք։ Մնացած բաներն էլ նույնպես ընդհանուր են, իսկ Տալյան էլ հատկապես լավ աղջիկ է... Այստեղ ամեն ինչ հասկանալի է։

Մյուս օրը Կորշագինն իր իրերը տեղափոխեց տղաների մոտ, դեպոյին կից հանրակացարանը, իսկ մի քանի օր հետո Աննայի մոտ առանց կերուխումի ընկերական երեկո կազմակերպվեց։ Կոմունիստական երեկույթ՝ ի պատիվ Տալյայի ու Նիկոլայի ընկերության։ Դա հուշերի, ամենից ավելի հուզող գրքերից հատվածների ընթերցանության երեկո էր։ Խմբովին՝ շատ և լավ երգեցին։ Նրանց մարտական երգերի ձայնը հեռուներն էր տարածվում, իսկ ավելի ուշ Կատյուշա Զելենովան ու Վոլինցևան բայան բերեցին, և թավ բասերի թնդյունը ու ստեղնաշարի արծաթե զողանջը լցրեցին սենյակը։ Այդ երեկո Պավկան բացառիկ լավ էր նվագում, իսկ երբ ի զարմանս բոլորի՝ պարի մեջ նետվեց լողող Պանկրատովը, Պավկան ինքնամոռացության մեջ ընկավ, և հարմոնը կորցնելով իր ոճը՝ կրակոտ թափով վրա տվեց.

Է՜խ, փողոցը, փողո՛ցը,
Դենիկինի ոռնոցը...
Փրթեց Սիբիրի Զեկան
Կոլչակի տղերոցը...

Հարմոնը նվագում էր անցյալի մասին, կրակե տարիների մասին և այսօրվա մտերմության, պայքարի ու բերկրանքի մասին։ Բայց երբ հարմոնը հանձնեցին Վոլինցևին, ու փականագործը թնդացրեց բուռն «Խնձորիկ»-ը, սրընթաց պարի մեջ նետվեց ոչ այլ ոք, եթե ոչ ինքը՝ էլեկտրիկը։ Խելագար չեչոտկա պարեց Կորշագինն իր կյանքում երրորդ և վերջին անգամ։

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Սահմանագիծը երկու սյուն է։ Դրանք կանգնած են իրար դիմաց, լուռ ու թշնամական, իրենց մեջ անձնավորելով երկու աշխարհ։ Մեկը տաշված ու հղկված, ոստիկանական տնակի նման սև ու սպիտակ գույներով ներկած։ Վերևում

ամուր մեխերով գամված է միգլխանի գիշատիչը։ Թևատարած, ոտքերի մատիլներով ասես թե գրկած շերտավոր սյունը՝ միգլխանի գիշակեր թռչունը չար հայացքով նայում է դիմացի մետաղյա վահանակին, նրա կեռ կտուցը ձգված ու լարված է։ Վեց քայլի վրա հակառակ կողմում մի այլ սյուն կա։ Հողի մեջ խոր թաղված է մի կլոր, տաշված կաղնե վիթխարի սյուն։ Սյան վրա երկաթաձույլ մի վահանակ կա, նրա վրա՝ մուրճ ու մանգաղ։ Երկու աշխարհների միջև անդունդ է ընկած, թեև սյուները խրված են հարթ գետնի վրա։ Մարդ չի կարող այդ վեց քայլն անցնել առանց կյանքը վտանգի ենթարկելու։

Այստեղ սահմանն է։

Սև ծովից սկսած մինչև ծայր հյուսիս, դեպի Սառուցյալ օվկիանոսը հազարավոր կիլոմետրերի վրա շարված է Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների այդ լուռ ժամապահների շղթան՝ աշխատանքի խորհրդանիշը երկաթե վահանակների վրա։ Այն սյունից, որին գամված է փետրավոր գիշատիչը, սկսվում են Սովետական Ուկրաինայի և պանական Լեհաստանի սահմանագծերը։ Խորունկ վայրերում կորել է Բերեզդով փոքրիկ ավանը։ Նրանից տասը կիլոմետրի վրա, լեհական Կորեց ավանի դիմաց սահմանն է։ Սլավուտա ավանից մինչև Անապոլյա ավանը № սահմանապահ գումարտակի շրջանն է։

Սահմանային սյունները վաղում են ձյունապատ դաշտերով, թափանցում են անտառային բացատները, ցած են վազում զառիթափերով, մագլցում են դեպի վեր, երևում ու անհետանում են բլրակների վրա և հասնելով գետին՝ բարձրադիր ափից դիտում են օտար երկրի ձյունածածկ հարթավայրը։

Սառնամանիք է։ Վալենկաների տակ ձյունը ճռճռում է։ Մուրճ ու մանգաղ ունեցող սյունից անջատվում է հսկայի սաղավարտով մի վիթխարի կերպարանք։ Ծանրորեն քայլելով նա շարժվում է ստուգելու իր տեղամասը։ Պարթև կարմիրբանակայինը հագել է կանաչ մերակներով գորշ շինել և վալենկաներ։ Շինելի վրայից ձգված է ոչխարենու մի ահագին մուշտակ՝ լայն օձիքով, իսկ գլուխը գրկում է մահուդե տաք գլխարկը։ Ձեռքերին ոչխարենուց կարված ձեռնոցներ են։ Մուշտակը երկար է, մինչև կրունկները, նրա մեջ տաք է նույնիսկ կատաղի բուքի ժամանակ։ Մուշտակի վրայից ուսին գցված է հրացանը։ Մուշտակի փեշերով ձյունը քերելով՝ կարմիրբանակայինը քայլում է պահակային շավղով և ախորժակով ներս քաշում մախորկայի ծուխը։ Սովետական սահմանում, բաց դաշտում, պահակները կանգնած են իրարից մի կիլոմետր տարածության վրա, որպեսզի աչքով տեսնեն իրենց հարևանին։ Լեհական կողմում մի կիլոմետրի վրա երկուսն են։

Կարմիր բանակայինին ընդառաջ, իր պահակային շավղով շարժվում է լեհական ժոլները։ Նա հագել է զինվորի կոպիտ կոշիկներ, գորշ կանաչավուն մունդիր ու անդրավարտիք, իսկ վրայից սև շինել՝ երկշարք փայլուն կոճակներով։ Գլխին կոնֆեդերատկա կոչվող գլխարկ։ Գլխարկի վրա՝ սպիտակ արծիվ, մահուդե ուսադիրներին՝ արծիվներ, օձիքի մերակների վրա՝ արծիվներ, բայց դրանից զինվորը չի տաքանում։ Դաժան սառնամանիքը մինչև ոսկորներն է թափանցել։ Նա տրորում է փայտացած ականջները, քայլելիս կրունկը կրնկին է խփում, իսկ բարակ ձեռնոցների մեջ ձեռքերն ընդարմացել են։ Ոչ մի բոպե լեհը կանգ առնել չի կարող. սառնամանիքն անմիջապես կաշկանդում է նրա հոդերը, և զինվորն ամբողջ ժամանակ շարժվում է, երբեմն վազքի դիմում։ Ժամապահները հավասարվեցին, լեհը շրջվեց և քայլեց կարմիրբանակայինին զուգահեռ։

Սահմանում խոսակցել չի կարելի, բայց եթե չորս կողմն ամայի է, և միայն մի կիլոմետրի վրա մարդկային կերպարանքներ կան, ով կիմանա՝ այդ երկուսը լուռ են քայլում, թե խախտում են միջազգային օրենքները։

Լեհը ծխել է ուզում, բայց լուցկին զորանոցում է մոռացել, իսկ թեթև քամին էլ, հակառակի պես, սովետական կողմից բերում է մախորկայի գայթակղիչ բույրը։ Լեհը ցրտահարված ականջը տրորելուց դադարեց և ետ նայեց. պատահում է, որ հեծելազորը վախիստորի, իսկ երբեմն էլ պան սպայի հետ թափառելով սահմանի վրա՝ անսպասելի դուրս է պրծնում բլրակի հետևից՝ պահակակետերն ստուգելու։

Բայց շուրջն ամայի է։ Արևի տակ ձյունը կուրացուցիչ փայլ է արձակում։ Երկնքում ձյան ոչ մի փաթիլ։

— Ընկե՛ր, պշեպալից տուր,— օրենքի սրբությունն առաջինը լեհն է խախտում և իր բազմալիցք, թուր-սվինով ֆրանսիական հրացանը մեջքին գցելով՝ սառած մատներով շինելի գրպանից դժվարությամբ դուրս է քաշում էժան ծխախոտների մի տուփ։

Կարմիրբանակայինը լսում է լեհի խնդրանքը, բայց սահմանային ծառայության դաշտային կանոնադրությունը արգելում է մարտիկներին բանակցությունների մեջ մտնել արտասահմանցիներից որևէ մեկի հետ, բացի այդ, նա լրիվ չի հասկանում այն, ինչ ասաց զինվորը։ Եվ նա շարունակում է իր ճանապարհը՝ տաք ու փափուկ վալենկաներ հագած ոտքերը հաստատուն կերպով դնելով ճռճռացող ձյան վրա։

— Ընկե՛ր բոլշևիկ, մի տուփ լուցկի գցիր ծխախոտս կպցնեմ,— այս անգամ արդեն ռուսերեն է ասում լեհը։

Կարմիրբանակայինն ուշադիր դիտում է իր հարևանին։ «Ըստ երևույթին, սառնամանիքը «պանի» մինչև երիկամներն է թափանցել։ Թեև բուրժուական զինվորիկ է, բայց նրա կյանքը բանի նման չէ։ Այսպիսի սառնամանիքին դուրս են քշել մի շենելով, ահա և ցատկոտում է նապաստակի պես, իսկ առանց ծխախոտի բոլորովին բանի նման չէ»։ Եվ կարմիրբանակայինն առանց շրջվելու նետում է լուցկու տուփը։ Զինվորն այն բռնում է օդում և մի քանի լուցկի ջարդելուց հետո, վերջապես վառում է ծխախոտը։ Տուփը նույն ճանապարհով նորից է սահմանն անցնում, և այդ ժամանակ կարմիրբանակայինն անսպասելիորեն խախտում է օրենքը.

— Քե՛զ պահիր, ես ունեմ։

Բայց սահմանի այն կողմից լսվում է.

— Ո՛չ, շնորհակալ եմ, այդ տուփի համար մի երկու տարի ստիպված կլինեմ բանտ նստել։

Կարմիրբանակայինը նայում է տուփին։ Նրա վրա ինքնաթիռ է նկարած։ Պրոպելլերի փոխարեն հզոր մի բռունցք է և գրված. «Ուլտիմատում»։

«Այո՛, իսկապես, նրանց համար հարմար չէ»։

Զինվորը շարունակում է գնալ նրա հետ նույն ուղղությամբ։ Ամայի դաշտում նա մենակ տխրում է։

Թամբերը ռիթմիկ ճռճռում են, ձիերի վարգը հանգստացնող համաչափ է։ Սևաթույր հովատակի դնչին, ռունգների շուրջը, մազերի վրա սառնամանիքի եղյամն է, ձիու շունչը սպիտակ գոլորշու պես հալվում է օդում։ Գումարտակի հրամանատարի աշխետ զամբիկը գեղեցիկ է դնում ոտքը, խաղում է սանձի հետ, աղեղի պես կորացնում բարակ պարանոցը։ Երկու հեծյալներն էլ գորշ շինելներով են, գոտկատեղը սրակալներով ձգած, թևքերի վրա երեքական կարմիր քառակուսի. բայց գումարտակի հրամանատար Գավրիլովի մերակները կանաչ են, իսկ նրա ուղեկցինը՝ կարմիր։ Գավրիլովը սահմանապահ է։ Այդ նրա գումարտակն է իր պոստերը ձգել յոթանասուն կիլոմետրի վրա, այստեղ նա է «տերը»։ Նրա ուղեկիցը Բերեզդովից եկած հյուր է, ընդհանուր ռազմական ուսուցման գումարտակի զինվորական կոմիսար Կորչագինը։

Գիշերը ձյուն է եկել։ Այժմ այդ ձյունը նստած էր թավ ու փափուկ, նրան դեռ ոչ մի սմբակ, ոչ մի մարդկային ոտք չի դիպել։ Հեծյալները մատղաշ անտառակից դուրս եկան, և ձիերը վարգեցին դաշտով։ Քառասուն քայլի վրա նորից երկու սյուն են կանգնած։

— Ռ-ռ-ռ-...

Գավրիլովը ձիգ քաշում է սանձը։ Կորչագինը շրջում է իր սևուկին, որպեսզի իմանա կանգ առնելու պատճառը։ Գավրիլովը կախվում է թամբից և ուշադիր զննում հետքերի տարօրինակ շղթան ձյան վրա. կարծես թե ինչ-որ մեկը ատամնավոր անվակ է քաշել։ Այստեղով մի փոքրիկ խորամանկ գազան է անցել և իր հետքը կորցրել հնարամիտ պտույտներով։ Դժվար է հասկանալ, թե հետքը որտեղից է սկսվում, բայց գազանի հետքը չէ, որ գումարտակի հրամանատարին կանգնել ստիպեց։ Շղթայից երկու քայլ հեռու ձյան փոշով ծածկված այլ հետքեր են։ Այստեղից մարդ է անցել։ Նա իր հետքը չի խառնել, այլ ուղղակի ընթացել է դեպի անտառը, և հետքը որոշակի ցույց է տալիս, որ մարդը եկել է Լեհաստանից։ Գումարտակի հրամանատարը ձին

քշում է, և հետքը նրան բերում է պահակային շավղի մոտ։ Լեհական կողմում մի տասը քայլ ևս երևում է ոտքերի դրոշմը։

— Գիշերն ինչ-որ մեկն անցել է սահմանը,— քրթմնջաց գումարտակի հրամանատարը։— Երրորդ դասակում նորից ձեռքից թողել են, իսկ առավոտյան հաղորդագրության մեջ ոչինչ չկա։ Գրողը տանի։— Գավրիլովի բեղերն սպիտակ թելեր ունեն, իսկ տաք շնչառությունից առաջացած եղյամը արծաթազօծել է դրանք, և բեղերը խստորեն կախվել են շրթունքի վրա։

Ձիավորներին ընդառաջ են շարժվում երկու կերպարանք։ Մեկը փոքրիկ է, սև, արևի տակ բոցկլտացող ֆրանսիական սվինի շեղբով, մյուսն իր դեղին ոչխարենու մուշտակի մեջ՝ ահագին։ Աշխետ զամբիկն զգում է հեծյալի սրունքների հպումը և արագացնում է ընթացքը։ Հեծյալներն արագորեն մոտենում են ընդառաջ եկողներին։ Կարմիրբանակայինն ուղղում է ուսի փոկը և ծխախոտի մնացորդը թքում ձյան վրա։

— Բարև ձեզ, ընկե՛ր։ Ինչպե՞ս է այստեղ ձեր տեղամասում։— Եվ գումարտակի հրամանատարը համարյա առանց կռանալու, քանի որ կարմիրբանակայինը պարթև է, ձեռքը տալիս է նրան։ Հսկան շտապով ձեռքից պոկում է ձեռնոցը։ Գումարտակի հրամանատարը սեղմում է սահմանապահի ձեռքը։

Լեհը հեռվից դիտում է։ Երկու կարմիր սպաներ բարևում են զինվորին որպես մոտ բարեկամներ։ Մի վայրկյան իրեն պատկերացնում է, թե ինչպես ինքը ձեռքը կտար իր մայոր Զակրժևսկուն, և այդ անհեթեթ մտքից ակամա շուրջն է նայում։

— Հենց նոր պոստը ընդունեցի, ընկեր գումարտակի հրամանատա՛ր,— զեկուցում է կարմիրբանակայինը։

— Այ, այնտեղ հետքը տեսե՞լ եք։

— Ո՛չ, դեռ չեմ տեսել։

— Գիշերը երկուսից մինչև վեցը ո՞վ էր կանգնած։

— Սուրոտենկոն, ընկեր գումարտակի հրամանատար։

— Դե լա՛վ, աչքերդ չորս արեք։

Եվ արդեն հեռանալ պատրաստվելով՝ խստորեն նախազգուշացնում է.

— Սրանց հետ քիչ ճեմեք։

Երբ ձիերը վարգուն ընթացքով քայլեցին սահմանի և Բերեզդով ավանի միջև ձգված լայն ճանապարհով, գումարտակի հրամանատարը պատմեց.

— Սահմանի վրա աչք է պետք։ Մի քիչ որ քնով անցնես, դառնորեն կզղջաս։ Մերն անքուն ծառայություն է։ Ցերեկը սահմանն անցնելն այնքան էլ հեշտ չէ, բայց գիշերն ականջդ սրած պահիր։ Այ, ինքներդ դատեցեք, ընկեր Կորչա՛գին։ Իմ տեղամասում չորս գյուղ է կիսված։ Այստեղ շատ դժվար է։ Շղթադ ինչպես կուզես դասավորի, այնուամենայնիվ, յուրաքանչյուր հարսանիքի կամ տոնի ժամանակ կորդոնից այն կողմ եղած բոլոր ազգականները ներկա են լինում։ Եվ ինչպես չանցնեն. խրճիթը խրճիթից քսան քայլի վրա է, իսկ առուն հավն էլ ոտքով կանցնի։ Մաքսանենգություն էլ է լինում։ Ճիշտ է, այս բոլորը մանրուք են։ Ինչ-որ մի կին երկու շիշ լեհական քառասուն աստիճանի օղի կբերի։ Բայց գե խոշոր մաքսանենգներ էլ շատ կան, որոնց մեջ գործում են մեծ փող ունեցող մարդիկ։ Իսկ գիտե՞ս լեհերն ինչ են անում։ Բոլոր սահմանային գյուղերում ունիվերսալ խանութներ են բացել, ինչ ուզում ես, այն էլ գնիր։ Իհարկե, դա իրենց աղքատ գյուղացիների համար չի արված։

Կորչագինը հետաքրքրությամբ էր լսում գումարտակի հրամանատարին։ Սահմանապահների կյանքն անընդհատ հետախուզության է նման։

— Ասացեք, ընկեր Գավրի՛լով, միայն մաքսանենգ ապրանքների փոխանակությա՞մբ է գործը սահմանափակվում։

Գումարտակի հրամանատարը մռայլ պատասխանեց.

— Ա՛յ, բանն էլ հենց այդ է։

Բերեզդովը փոքրիկ ավան է։ Գավառական մի խուլ անկյուն, հրեական նախկին նստակեցության սահմանը։ Երկուերեք հարյուր տնակներ անկարգ փռված են ուր պատահի։ Շուկայի վիթխարի հրապարակ, հրապարակի մեջտեղում՝ երկու տասնյակ կրպակներ։ Ավանը գոտևորում են գյուղացիական տնտեսությունները։ Հրեական կենտրոնում, դեպի

սպանդանոցը տանող ճանապարհին, հին սինագոգն է, Այդ հին շենքից տաղտուկ է փչում։ Ճիշտ է, շաբաթ օրերը սինագոգը դատարկ չի լինում, բայց դա արդեն այն չէ, ինչ առաջ էր լինում, և ռաբբիի կյանքն էլ այն չէ, ինչ նա կցանկանար։ Ըստ երևույթին, ինչ-որ շատ վատ բան էր պատահել ինը հարյուր տասնյոթ թվին, եթե նույնիսկ այստեղ, այս ետ ընկած վայրում, երիտասարդությունն առանց պատշաճ հարգանքի է նայում ռաբբիի վրա։ Ճիշտ է, ծերունիները դեռևս արգելվածը չեն ուտում, բայց որքան տղաներ են ուտում աստծուց նզովված խոզի երշիկը։ Թյո՛ւ, մտածելն անգամ նողկալի է։ Ռաբբի Բորուխը ոտքով զայրացած խփում է խոզին, որը կեր որոնելու նպատակով ջանասիրաբար փորփրում է աղբակույտը։ Այո՛, նա՝ ռաբբին, այնքան էլ գոհ չէ, որ Բերեզդովը դարձել է շրջանային կենտրոն։ Սատանան գիտե, թե որտեղից հավաքվել եկել են այս կոմունիստները և քշում ու քշում են, և ամեն օր մի նոր տհաճություն։ Երեկ նա, ռաբբին, տերտերի տան դարպասին նոր ցուցանակ տեսավ. «Ուկրաինայի Կոմունիստական երիտասարդության միության Բերեզդովի շրջանային կոմիտե»։

Այդ ցուցանակից որևէ լավ բան սպասել չի կարելի։ Իր մտքերով տարված՝ ռաբբին չնկատեց, թե ինչպես դեմ առավ մի ոչ մեծ հայտարարության, որ փակցված էր նրա սինագոգի դռներին։

«Այսօր ակումբում հրավիրվում է աշխատավոր երիտասարդության դռնբաց ժողով։ Զեկուցումով հանդես կգա գործադիր կոմիտեի նախագահ Լիսիցինը և կոմերիտմիության շրջանային կոմիտեի քարտուղարի պաշտոնակատար ընկեր Կորչագինը։ Ժողովից հետո իննամյակի աշակերտների ուժերով կկազմակերպվի համերգ»։

Ռաբբին թերթիկը դռան վրայից կատաղորեն պոկեց։

«Ահա և սկսվում է»։

Ավանի եկեղեցին երկու կողմից շրջապատում է տերտերի առանձնատան մեծ պարտեզը, իսկ պարտեզի մեջ հին ձևի ընդարձակ մի տուն է։ Փտած, տաղտկալի դատարկ սենյակներում ապրում էին տերտերն ու կինը, իրենց տան նման հին ու տաղտկալի, իրար վաղուց ձանձրացրած։

Բայց տաղտուկն անմիջապես չքացավ, երբ տուն մտան նոր տերերը։ Մեծ դահլիճը, ուր բարեպաշտ տերերը միայն թագավորական տոներին էին հյուրեր ընդունում, այժմ միշտ մարդկանցով լիքն է։ Տերտերի տունը դարձել է Բերեզդովի կուսակցական կոմիտե։ Շքամուտից դեպի աջ փոքրիկ մի սենյակի դռան վրա կավիճով գրված է. «Կոմերիտմիության շրջանային կոմիտե»։ Իր օրվա մի մասն այստեղ է անցկացնում Կորչագինը, որն ընդհանուր ռազմական ուսուցման երկրորդ գումարտակի զինկոմի աշխատանքի հետ միասին համատեղության կարգով կատարում է նաև կոմերիտմիության հենց նոր ստեղծված շրջանային կոմիտեի քարտուղարի պարտականությունները։

Ութ ամիս է անցել այն օրից, երբ նրանք ընկերական երեկո ունեցան Աննայի մոտ։ Իսկ թվում է, թե դա բոլորովին վերջերս էր։ Կորչագինը թղթերի կույտը մի կողմ դրեց և բաղկաթոռի թիկնակին ետ ընկնելով՝ խոհերի մեջ թաղվեց...

Լուռ է տունը։ Ուշ գիշեր է, կուսկոմը դատարկվել է։ Քիչ առաջ վերջինը հեռացավ Տրոֆիմովը՝ կուսշրջկոմի քարտուղարը, և Կորչագինն այժմ տանը մենակ է։ Սառնամանիքը լուսամուտի վրա քմահաճ նախշեր է հյուսել։ Սեղանի վրա նավթի լամպ է, վառարանը թունդ վառվում է։ Կորչագինը հիշում է մոտիկ անցյալը։ Օգոստոսին արհեստանոցների կոլեկտիվը նրան, որպես երիտասարդության կազմակերպչի, նորոգման գնացքով Եկատերինոսլավ ուղարկեց։ Եվ մինչև ուշ աշուն, հարյուր հիսուն մարդ կայարանից կայարան էին շարժվում՝ բեռնաթափելով կայարանները պատերազմի ու ավերածության հետքերից, վառված ու ջարդված վագոններից։ Նրանց ուղին անցավ Սինելնիկովից մինչև Պոլոգ։ Այստեղ, բանդիտ Մախնոյի նախկին թագավորության մեջ, յուրաքանչյուր քայլափոխին ավերածության ու կոտորածի հետքեր էին։ Գուլյայ-Պոլեում մի շարաթ վերականգնում էին ջրհանի քարե շենքը, երկաթե կարկատաններ էին դնում ջրի ցիստեռնի՝ դինամիտից ճեղքված կողերին։ Փականագործական աշխատանքի վարպետությունն ու ծանրությունը էլեկտրիկը չգիտեր, բայց բանալիով զինված նրա ձեռքերը շատ հազար ժանգոտ պնդօղակներ պտուտակեցին։

Խոր աշնանը գնացքը մոտեցավ հարազատ արհեստանոցներին։ Ցեխերն իրենց կորպուսների մեջ ետ ընդունեցին հարյուր հիսուն զույգ ձեռք...

Սկսեցին էլեկտրիկին հաճախ տեսնել Աննայի մոտ։ Ճապատի կնճիռը հարթվեց, և հաճախ էր լսվում նրա վարակիչ ծիծաղը։

Մազութի եղբայրները խմբակներում նորից սկսեցին լսել նրա պատմությունները՝ պայքարի վաղուց անցած տարիների մասին։ Խոովարար, ստրկացած, չուխա հագած Ռուսաստանի փորձերի մասին՝ գահընկեց անելու թագադիր հրեշին։ Ստենկա Ռազինի և Պուգաչովի ապստամբությունների մասին։

Մի երեկո, երբ Աննայի մոտ շատ երիտասարդներ էին հավաքվել, էլեկտրիկն անսպասելի ազատագրվեց մի հին, անառողջ ժառանգությունից։ Նա, որ ծխախոտին վարժվել էր համարյա մանկական տարիներից, խստորեն ու անդարձ ասաց.

— Ես այլևս չեմ ծխում։

Դա շատ անսպասելի տեղի ունեցավ։ Ինչ-որ մեկը վեճ սկսեց այն մասին, թե սովորությունը մարդուց ավելի ուժեղ է, և որպես օրինակ բերեց ծխելը։ Ձայները բաժանվեցին։ Էլեկտրիկը վեճին չէր խառնվում, բայց Տալյան նրան վեճի մեջ քաշեց. ստիպեց խոսել։ Նա ասաց այն, ինչ մտածում էր.

— Մարդն է ղեկավարում սովորությունը և ոչ թե հակառակը։ Այլ կերպ ինչպես մենք համաձայնության կգանք։

Ցվետաևն անկյունից բղավեց.

— Զրնգուն խոսք է։ Կորշագինն այն սիրում է։ Իսկ ա՛յ, եթե այդ մեծախոսությունն իր ուժերին համապատասխանում է, ապա ի՞նչ է դուրս գալիս։ Նա ինքը ծխո՞ւմ է։ Ծխում է։ Գիտե՞, որ ծխելը լավ բան չէ։ Գիտե։ Իսկ ա՛յ, թողնելու համար կարողությունը փոքր է։ Վերջերս նա խմբակներում «կուլտուրա էր արմատավորում»։— Եվ տոնը փոխելով սառը քմծիծաղով՝ Ցվետաևը հարցրեց.— Ավելի լավ է թող նա մեզ պատասխանի, թե հայհոյանքի գործը նրա մոտ ինչպես է։ Ով Պավկային գիտե, նա կասի. քիչ է

հայհոյում, բայց դիպուկ է հայհոյում։ Քարոզ կարդալն ավելի հեշտ է, քան սուրբ լինելը։

Լռություն տիրեց։ Ցվետաևի տոնի խստությունը տհաճ ազդեցություն թողեց բոլորի վրա։ Էլեկտրիկն անմիջապես չպատասխանեց։ Բերանից դանդաղորեն հանեց ծխախոտը, ճխլտեց և ցածր ձայնով ասաց.

— Ես այլևս չեմ ծխում։

Քիչ լռելուց հետո ավելացրեց.

— Այս ես ինձ համար եմ անում և մի քիչ էլ Դիմկայի համար։ Գրոշի արժեք ունի նա, ով չի կարող վատ սովորությունը վերացնել։ Մնում է հայհոյելու սովորությունը։ Ես, եղբայրնե՛ր, այդ խայտառակությունը դեռ լրիվ չեմ հաղթահարել, բայց նույնիսկ Դիմկան է խոստովանում, որ իմ հայհոյանքը հազվադեպ է լսում։ Խոսքն ավելի հեշտ է դուրս թռչում, քան ծխախոտ ծխելն է, ահա թե ինչու հիմա չեմ ասի, թե դրա հետ էլ է հաշիվը փակված։ Բայց, այնուամենայնիվ, ես հայհոյանքին էլ վերջ կտամ։

Հենց ձմռան դեմ գետը պատվարեցին փայտի լուղարկները, աշնանային վարարումը բաժան-բաժան էր անում դրանք, և վառելափայտը փչանում էր. գետը քշում, ցած էր տանում։ Սոլոմենկան նորից իր կոլեկտիվներն ուղարկեց, որպեսզի փայտեղեն հարստությունը փրկեն։

Կոլեկտիվից ետ չմնալու ցանկությունը Կորշագինին ստիպեց ընկերներից թաքցնել, որ ինքը սաստիկ մրսած է, և երբ մի շաբաթ հետո նավահանգստի ափերին բարձրացան դարսված փայտի սարերը, սառը ջուրն ու աշնանային խոնավությունն արթնացրին նրա մեջ նիրհող թշնամուն, և Կորշագինն սկսեց տաքության մեջ վառվել։ Սուր ռևմատիզմը երկու շաբաթ այրեց նրա մարմինը, իսկ երբ հիվանդանոցից վերադարձավ՝ գելարանների մոտ կարող էր աշխատել միայն «հեծած»։ Վարպետը միայն գլուխն էր տարուբերում։ Իսկ մի քանի օր հետո անաչառ հանձնաժողովը նրան անաշխատունակ ճանաչեց, և նա աշխատանքից ազատվեց ու կենսաթոշակի իրավունք ստացավ, որից նա զայրույթով հրաժարվեց։

Ծանր սրտով թողեց նա իր արհեստանոցները։ Փայտին

հենված շարժվում էր դանդաղ ու տանջալի ցավով։ Մայրը շատ անգամ էր գրում, խնդրում այցելել, և այժմ նա նորից հիշեց իր պառավին, հրաժեշտի ժամանակ ասած նրա խոսքը։

— Ձեզ այն ժամանակ եմ միայն տեսնում, երբ հաշմանդամ եք դառնում։

Նահանգական կոմիտեում ստացավ խողովակի նման ոլորած իր երկու անձնական գործերը՝ կոմերիտական և կուսակցական, և համարյա ոչ ոքի հրաժեշտ չտալով, որպեսզի վիշտը չբորբոքի, գնաց մոր մոտ։ Երկու շաբաթ պառավը տաք ջրի մեջ էր դնում ու տրորում նրա ուռած ոտքերը, և մի ամիս հետո նա արդեն առանց փայտի էր քայլում, իսկ կրծքում հորդում էր բերկրանքը, մթնշաղը նորից այգաբաց էր դարձել։ Գնացքը նրան հասցրեց նահանգական կենտրոն։ Երեք օր հետո կազմբաժնում նրան մի փաստաթուղթ հանձնեցին՝ որով նա ուղարկվում էր նահանգական զինկոմիսարիատ՝ կազմակերպվող ռազմական ուսուցման բնագավառում որպես քաղաշխատող օգտագործվելու համար։

Իսկ մի շաբաթ էլ հետո նա եկավ այստեղ, ձյունածածկ այս ավանը, որպես 2-րդ գումարտակի զինկոմ։ Օկրուգի կոմերիտմիության կոմիտեում առաջադրանք ստացավ՝ հավաքել ցանուցիր կոմերիտականներին, նոր շրջանում կազմակերպություն ստեղծել։ Ահա թե ինչպես էր շրջվում կյանքը։

Դրսում տապ է։ Գործկոմի նախագահի կաբինետի բաց պատուհանից ներս է նայում բալենու ճյուղը։ Արևի տակ հուրհրատին է տալիս կաթոլիկական եկեղեցու գոթական զանգակատան ոսկեզօծ խաչը. եկեղեցին գտնվում է ճանապարհից այն կողմ, գործկոմի դիմաց։ Պատերազմում, լուսամուտի առաջ ճարպկորեն կեր են որոնում գործկոմի պահակուհու փոքրիկ սագիկները, որոնք ծածկված են փափուկ աղվամազով և իրենց շրջապատող խոտի նման կանաչավուն են։

Գործկոմի նախագահը կարդում էր հենց նոր ստացված հեռագիրը։ Նրա դեմքով մի ստվեր անցավ։ Մեծ, կոշտացած ձեռքը սահեց դեպի փարթամ գանգուր մազերը և թաղվեց նրանց մեջ։

Բերեզդովի գործկոմի նախագահը՝ Նիկոլայ Նիկոլաևիչ Լիսիցինը, ընդամենը քսանչորս տարեկան է, բայց նրա աշխատակիցներից և կուսակցական աշխատողներից ոչ մեկը այդ չգիտե։ Նա՝ այդ մեծ և ուժեղ մարդը, խստադեմ, իսկ երբեմն նաև սպառնալից տեսքով, երեսունհինգ տարեկանի տեսք ունի։ Առողջ մարմին, զորեղ պարանոցի վրա նստած մեծ գլուխ, շագանակագույն, սառը, թափանցող աչքեր, կզակի եռանդուն, կտրուկ գիծ։ Կապույտ հեծելաշալվար, գորշ «շատ բան տեսած» ֆրենչ, կրծքի ձախ գրպանում՝ Կարմիր դրոշի շքանշան։

Հոկտեմբերից առաջ Լիսիցինը խառատի դազգահի «հրամանատար» էր Տուլայի զինագործարանում, որտեղ նրա պապը, հայրը և նա ինքը համարյա մանկական հասակից երկաթ են կտրել ու սրել։

Իսկ աշնանային այն գիշերներից, երբ առաջին անգամ ձեռքն առավ այն զենքը, որը մինչ այդ միայն պատրաստում էր, Կոլյա Լիսիցինը փոթորկի մեջ ընկավ։ Հեղափոխությունն ու կուսակցությունը նրան մի հրդեհից մյուսի մեջ էին նետում։ Կարմիրբանակայինից մինչև գնդի մարտական հրամանատար ու կոմիսար՝ ահա այն փառապանծ ուղին, որն անցավ Տուլայի զինագործը։

Անցյալ դարձան հրդեհներն ու հրանոթների դղրդյունը։ Այժմ Նիկոլայ Լիսիցինն այստեղ, սահմանամերձ շրջանում է։ Կյանքը խաղաղ է հոսում։ Մինչև ուշ երեկո նստում է նա բերքի տեղեկագրերի վրա, բայց ահա այս հեռագիրը մի վայրկյան վերակենդանացնում է մոտիկ անցյալը։ Հեռագրային ժլատ լեզվով այն նախազգուշացնում է.

Խիստ գաղտնի։ Բերեզդովի գործկոմի նախագահ Լիսիցինին։ Սահմանում նկատվում է, որ լեհերը եռանդուն կերպով այստեղ են տեղափոխում մի խոշոր բանդա, որը կարող է սահմանամերձ շրջանները տեռորի ենթարկել։ Զգուշանալու միջոցներ ձեռք առեք։ Առաջարկվում է ֆինբաժնի արժեքներն ուղարկել օկրուգ, հարկային գումարները չպահել ձեզ մոտ։

Առանձնասենյակի լուսամուտից Լիսիցինը տեսնում է գործկոմ մտնող յուրաքանչյուրին։ Արտասանդուղքում Կորչագինն է։ Մի բոպե հետո դռան բախյուն։

— Նստիր խոսենք,— և Լիսիցինը սեղմում է Կորչագինի ձեռքը։

Ամբողջ մի ժամ գործկոմի նախագահը ոչ ոքի չի ընդունում։

Երբ Կորչագինը կաբինետից դուրս եկավ, արդեն կեսօր էր։ Պարտեզից դուրս վազեց Լիսիցինի փոքրիկ քույրը՝ Նյուրան։ Պավելը նրան Անյուտկա էր անվանում։ Ամոթխած ու տարիքին անհամապատասխան լուրջ փոքրիկ աղջիկը Կորչագինին հանդիպելիս միշտ սիրալիր ժպտում էր։ Այժմ էլ նա անհարմար զգալով, երեխայի նման բարևեց՝ ճակատի վրայից ետ նետելով կտրած մազերի փունջը։

— Գոլյայի մոտ ոչ ոք չկա՞։ Մարիա Միխայլովնան վաղուց է նրան ճաշի սպասում,— ասաց Նյուրան։

— Գնա՛, Անյո՛ւտկա, նա մենակ է։

Մյուս օրը լուսաբացից շատ առաջ գործկոմին մոտեցան կուշտ ձիեր լծված երեք սայլ։ Սայլերի վրա մարդիկ խոսակցում էին ցածր ձայնով։ Ֆինբաժնից դուրս բերեցին մի քանի կնքած պարկեր, դրեցին սայլերի վրա, և մի քանի բոպե հետո անիվները դղրդացին խճուղով։ Սայլերը շրջապատեց մի ջոկատ՝ Կորչագինի հրամանատարությամբ։ Մինչև օկրուգի կենտրոնն ընկած քառասուն կիլոմետրը (քսանհինգն անտառով) անցան հաջողությամբ, արժեքները տեղափոխվեցին օկրուգի ֆինբաժնի սեյֆերը։ Իսկ մի քանի օր հետո սահմանի կողմից Բերեզդով սլացավ մի հեծյալ։ Հեծյալին և նրա փրփրած ձիուն ուղեկցում էին ավանի բերանբացների տարակուսական հայացքները։

Գործկոմի դարպասի մոտ հեծյալը պարկի պես գետնին գլորվեց և, ձեռքով սուրը բռնած, իր ծանր կոշիկներով թխկթխկացրեց աստիճանները։ Լիսիցինը խոժոռվելով նրանից ընդունեց փաթեթը, բաց արեց և ծրարի վրա դրեց ստացականը։ Ձիուն շունչ քաշելու ժամանակ չտալով՝ սահմանապահը ցատկեց թամբին և անմիջապես թափով ետ սլացավ։

Ոչ ոք չգիտեր ծրարի բովանդակությունը, բացի գործկոմի նախագահից, որը հենց նոր կարդաց այն։ Բայց ավանի բնակիչներն ինչ-որ շան հոտառություն ունեն։ Երեք մանր առևտրականներից երկուսն այստեղ անպայման մանր մաքսանենգներ են, և այդ գործը նրանց մեջ ինչ-որ վտանգը կռահելու բնազդական ընդունակություն է մշակում։

Մայթով արագ դեպի ընդհանուր ռազմական ուսուցման գումարտակի շտաբը գնացին երկու մարդ։ Նրանցից մեկը Կորչագինն է։ Քաղաքացիները նրան ճանաչում են, նա միշտ զինված է։ Բայց որ կուսկոմի քարտուղար Տրոֆիմովն էլ սրակալով ուներ, դա արդեն վատ է։

Մի քանի բոպե հետո շտաբից դուրս վազեցին մեկուկես տասնյակ մարդ և սվինները վրան հագցրած հրացանները բռնած՝ փայլքով նետվեցին դեպի ջրաղացը, որ կանգնած էր խաչմերուկում։ Մնացած կոմունիստներն ու կոմերիտականները կուսկոմում զինվում էին։ Ձիով, կուբանկան գլխին և անբաժան մաուզերը կողքին՝ սլացավ եկավ գործկոմի նախագահը։ Պարզ է, ինչ-որ մի վատ բան էր կատարվում, և մեծ հրապարակն ու խուլ նրբանցքները կարծես ամայացան, ոչ մի կենդանի շունչ։ Մի ակնթարթում փոքրիկ կրպակների դռների վրա երևացին միջնադարյան վիթխարի կողպեքներ, կրկնափեղկերը փակվեցին։ Միայն անահ հավերը և շոգից թուլացած խոզերն էին ջանասիրաբար տեսակավորում աղբակույտի բովանդակությունը։

Շրջակայքի այդիներում ուղեկալ տեղավորվեց։ Այստեղից են սկսվում դաշտերը, և ճանապարհի ուղիղ գիծը տեսանելի է հեռու հեռվում։ Լիսիցինի ստացած տեղեկագիրը համառոտ էր.

> Այս գիշեր Պոդդուբեցի շրջանում կռվով սահմանը ճեղքեց և սովետական տերիտորիան մտավ մի հեծյալ բանդա, մոտավորապես հարյուր մարդ՝ թրերով և ձեռքի երկու գնդացրով։ Միջոցներ ձեռք առեք։ Բանդայի հետքը կորչում է Սլավուտսկի անտառներում։ Նախազգուշացնում եմ, ցերեկը բանդային հետապնդելու նպատակով Բերեզդովով կանցնի կարմիր կազակների մի հարյուրակ։ Զշփոթեք։
>
> Հատուկ սահմանապահ գումարտակի հրամանատար՝
>
> Գավրիլով։

Մի ժամ հետո արդեն դեպի ավանը բերող ճանապարհի վրա երևաց մի ձիավոր, իսկ նրանից մի կիլոմետրի վրա՝ ձիավորների մի խումբ։ Կորշագինն ուշադիր առաջ էր նայում։ Ձիավորն զգույշ էր մոտենում, բայց այգիների ուղեկալին չնկատեց։ Դա երիտասարդ մի կարմիրբանակային էր՝ կարմիր կազակների յոթերորդ գնդից։ Հետախուզությունը նրա համար նոր բան էր, և երբ հանկարծ նրան շրջապատեցին այգիներից դուրս թափված մարդիկ, նա սրանց գիմնաստյորկաների վրա КИМ նշանը տեսնելով՝ շփոթված ժպտաց։ Կարճ բանակցություններից հետո ձին շրջեց և սլացավ դեպի արշավող հարյուրյակը։ Ուղեկալը ճանապարհ տվեց կարմիր կազակներին և նորից պառկեց այգիներում։

Անցան մի քանի տագնապալի օրեր։ Լիսիցինը տեղեկագիր ստացավ, որի մեջ ասվում էր, թե բանդիտներին չի հաջողվել դիվերսիոն գործողություններ ծավալել։ Կարմիր հեծելազորայինների հետապնդումը բանդային ստիպել է շտապով նահանջել կորդոնից այն կողմ։

Բոլշևիկների շատ փոքրիկ մի խումբ՝ տասնինը մարդ, ամբողջ շրջանում լարված աշխատում էր սովորական շինարարության վրա։ Երիտասարդ, հենց նոր միայն կազմակերպված շրջանը պահանջում էր, որ ամեն ինչ նորից ստեղծվի։ Սահմանի մոտիկությունը բոլորին ստիպում էր մշտապես զգոն լինել։

Սովետների վերընտրություններ, պայքար բանդիտների դեմ, կուլտաշխատանք, պայքար մաքսանենգության դեմ, ռազմակուսակցական և կոմերիտական աշխատանք՝ ահա այն շրջագիծը, որում լուսաբացից մինչև ուշ գիշեր պտտվում էր Լիսիցինի, Տրոֆիմովի, Կորշագինի և նրանց հավաքած սակավաթիվ ակտիվի կյանքը։

Ձիուց դեպի գրասեղան, սեղանից հրապարակ, ուր շաբաթին երթ են կատարում սովորող երիտասարդության դասակները, ակումբ, դպրոց, երկու-երեք նիստ, իսկ գիշերը՝ ձի, մաուզերն ազդրի մոտ և կարուկ. «Կաց, ո՞վ է գալիս», կորդոնի այն կողմից բերված ապրանքով բարձած փախչող սայլերի անիվների թխկթխկոց՝ սրանցից էին կազմված 2-րդ գումարտակի օրերն ու շատ գիշերները։

Կոմերիտմիության Բերեզդովի շրջկոմը Կորշագինն է, Լիդա Պոլևիխը՝ նեղաչ մի վոլգացի, կինաբաժնի վարիչը, և Ժենկա Ռազվալիխինը՝ բարձրահասակ, գեղեցիկ, երեկվա գիմնազիստ, ջահել, բայց փորձված, վտանգավոր արկածների սիրահար, Շերլոկ Հոլմսին և Լուի Բուսսենարին լավագիտակ մի տղա։ Ռազվալիխինն աշխատում էր որպես կուսշրջկոմի գործերի վարիչ, մի չորս ամիս առաջ էր մտել կոմերիտմիության մեջ, բայց կոմերիտականների մեջ իրեն պահում էր որպես «հին բոշևիկ»։ Մարդ չկար, որ ուղարկեին Բերեզդով, և երկար խորհելուց հետո օկրուգի կոմիտեն Ռազվալիխինին ուղարկեց որպես «քաղլուսվար»։

Արևը զենիթին հասավ։ Տապը թափանցում էր ամենածածուկ անկյունները, կենդանի ամեն էակ թաքնվեց կտուրների տակ, ու նույնիսկ շները սողացին դեպի մառանները, շոգից թուլացած, ծույլ ու քնկոտ պառկեցին այնտեղ։ Թվում էր, թե ամեն մի կենդանի շունչ լքել էր գյուղը, և միայն ջրհորի մոտի ջրափոսում հաճույքով խռխռացնում էր ցեխի մեջ թաղված խոզը։

Կորշագինը ձիու կապը քանդեց և ծնկում զգացած ցավից շրթունքը կրծոտելով՝ նստեց թամբին։ Ուսուցչուհին կանգնել էր դպրոցի աստիճանների վրա և ձեռքով աչքերը պաշտպանում էր արևից։

— Ցնոր տեսություն, ընկե՛ր զինկոմ,— ժպտաց նա։

Ձին ոտքով անհամբեր դոփեց և պարանոցը կորացնելով՝ սանձը ձգեց։

— Ցտեսություն, ընկեր Ռակի՛տին։ Այսպես, ուրեմն, որոշված է. վաղը դուք առաջին դասն եք անցկացնում։

Ձին զգում է սանձի թուլանալը, անմիջապես թեթև արշավի է անցնում։ Այդ ժամանակ Կորշագինի ականջին են հասնում վայրենի ողբի ձայներ։ Կանայք այդպես աղաղակում են գյուղում հրդեհ եղած ժամանակ։ Դաժան սանձը ձիուն կտրուկ շրջում է, և զինկոմը տեսնում է, որ գյուղի ծայրից հևասպառ վազում է մի երիտասարդ գեղջկուհի։ Փողոցի մեջտեղը դուրս գալով՝ Ռակիտինան նրան կանգնեցրեց։ Հարևան խրճիթների շեմքերին մարդիկ երևացին,

մեծ մասամբ ծերունիներ ու պառավներ։ Ամբողջաղմ մարդիկ բոլորն էլ դաշտում են։

— Օ՜յ, բարի մարդիկ, ի՞նչ է կատարվում։ Ա՞յ չեմ կարող, չեմ կարող։

Երբ Կորչագինը սլացավ եկավ, ամեն կողմից արդեն մարդիկ էին վազում։ Կնոջը շրջապատել էին, քաշքշում էին սպիտակ բլուզի թևքերից, վախեցած հարցնում էին ուղում, բայց նրա անկապ խոսքերից ոչինչ հասկանալ չէր լինում։ «Սպանեցի՛ն։ Կոտորում են իրա՜ր»,— միայն բղավում էր նա։ Ինչ-որ մի պապիկ գզգզված մորուքով, քաշամանշալվաքը ձեռքով պահելով, անհեթեթ ցատկումներով հարձակվում էր ջահել կնոջ վրա։

— Գժի պես մի՛ բղավիր։ Որտե՞ղ են սպանում։ Ինչի՞ համար են սպանում։ Հերիք ճղավես։ Թո՛ւ, սատանա՛։

— Մեր գյուղը պոդդուբցիների հետ է կռվում... միջնակների համար։ Պոդդուբցիները մերոնց կոտորում են։

Բոլորն ըմբռնեցին աղետը։ Փողոցում կանգնած վայրենուն բարձրացավ, ծերունիները կատաղորեն մռնչացին։ Մի գյուղով մեկ անցավ, խրճիթից խրճիթ պտտվեց ահազանգի նմանող կանչը. «Պոդդուբցիները միջնակների համար մերոնց գերանդիներով կտրատում են»։ Խրճիթներից փողոց թռան բոլոր նրանք, ովքեր կարող էին քայլել, և մեղանիներով, կացիններով կամ ուղղակի ցանկապատի ցցափայտերով զինված՝ վազեցին դեպի գյուղի ծայրը, դեպի դաշտերը, որտեղ արյունահեղ կռվում էին մեր ամեն տարվա դասը երկու գյուղերի միջնակների միջև։

Կորչագինն այնպես հարվածեց ձիուն, որ սա ամբողջ ուժ քառատրոփի անցավ։ Հեծյալի աղաղակով մոտավորված՝ սևուկը սրընթաց ոստյուններով առաջ նետվեց՝ ետ թողնելով վազողներին։ Ականջներն ամուր գլխին կպցրած, ոտքերը բարձր նետելով՝ ձին ավելի և ավելի էր տրտատում ընթացքը։ Բլրակի վրա հողմաղացը, կարծես փակելով ճանապարհը, ձեռքերի նման տարածել էր իր թևերը։ Հողմաղացից դեպի աջ, հարթավայրում, գետի մոտ մարգագետիններն են։ Դեպի ձախ, ինչքան որ մարդու աչքը կտրում է, տարածված էր տարեկանի արտը, որ մերթ բարձրանում էր բլրակների վրա, մերթ իջնում ձորը։ Հասած տարեկանի արտի միջով անցավ զեփյուռը, ասես ձեռքով շոյեց նրան։ Ճանապարհի եզրերին պայծառ կարմրին էին տալիս կակաչները։ Այստեղ խաղաղ էր և անասելի շոգ։ Հեռվից միայն, ներքևից, այնտեղից, ուր արծաթե օձի պես արևի տակ տաքանում էր գետը, աղաղակներ էին լսվում։

Ներքև, դեպի մարգագետինները ձին սլացավ ահավոր թափով։ «Մտքը բանի որ դեմ առնի, թե իր, թե իմ համար գերեզման կլինի»,— անցավ Պավելի մտքով։ Բայց ձիուն այլևս կանգնեցնել չէր կարելի, և կռանալով նրա պարանոցին՝ Պավելը լսում էր, թե ինչպես է քամին սուլում իր ականջներում։

Մարգագետին դուրս եկավ խենթի պես։ Մարդիկ այստեղ կռվում էին մի բութ, դաղանային կատաղությամբ։ Մի քանի հոգի արյունաշաղախ ընկած էին գետնին։

Նժույգն իր կրծքով գետնին գլորեց ինչ-որ մի մորուքավորի, որը գերանդու կոթի մնացորդը ձեռքին վազում էր դեմքն արյունլվա դարձրած ջահել մի տղայի հետևից։ Արևվառ, ամրակազմ մի գյուղացի գետնին ընկած հակառակորդին հունցում էր իր ահագին ծանր կոշիկներով՝ եռանդագին աշխատելով ոտքով «հոգուն» հասցնել։

Կորչագինն իր ձիու ամբողջ ծանրությամբ մարդկանց կույտի վրա թռավ, կռվողներին դեսուդեն նետեց։ Ուշքի գալու ժամանակ չտալով՝ կատաղորեն ձին շուռ տվեց, գնաց գազանացած մարդկանց վրա և, զգալով, որ մարդկանց այդ արնաշաղախ շիտակը կարելի է բաժանել միայն նույնպիսի վայրենությամբ ու սարսափ ազդելով, կատաղությամբ գոռաց՝

— Ցրվեցե՛ք, գարշելինե՛ր։ Կգնդակահարեմ, բանդիտնե՛ր։

Եվ պատյանից դուրս քաշելով մաուզերը՝ թափահարեց ինչ-որ մեկի չարությունից աղավաղված դեմքի մոտ։ Ձիու մի ցատկ ու կրակոց։ Ոմանք գերանդիները նետելով ետ շրջվեցին։ Այսպես, ձիով կատաղած դեսուդեն ընկնելով մարգագետնում, մաուզերին լռելու հնարավորություն չտալով՝ զինկոմը հասավ իր նպատակին։ Մարդիկ մարգագետնից տարբեր կողմեր նետվեցին, որպեսզի թաքնվեն պատասխանատվությունից և չգիտես որտեղից հայտնված ու

իր կառաղության մեջ սարսափելի այս մարդուց, որն իր «խոլերայի նման մեքենայով» անվերջ կրակում է։

Շուտով Պոդդուբեց գնաց շրջանային դատարանը։ Շատ դեսուդեն ընկավ ժողդատավորը վկաներին հարցաքննելիս, բայց այդպես էլ նախաձեռնողներին չհայտնաբերեց։ Կրուվից ոչ ոք չմեռավ, վիրավորներն ապրեցին։ Համառ կերպով, բոլշևիկյան համբերությամբ դատավորն աշխատեց իր առաջ մռայլ տեսքով կանգնած գյուղացիներին բացատրել նրանց կազմակերպած ջարդի ամբողջ վայրենությունն ու անթույլատրելիությունը։

— Միջնակներն են մեղավոր, ընկեր դատավո՛ր, մեր միջնակները խառնվել են։ Դրանց պատճառով ենք ամեն տարի իրար հետ կռվում։

Այնուամենայնիվ, ոմանք ստիպված եղան պատասխան տալ։

Իսկ մի շաբաթ անց խոտհարքով հանձնաժողով էր անցնում և երկպառակության վայրերում ցցեր տնկում։ Քրտինքի մեջ ողողված, շոգից ու երկար քայլելուց տանջված ծեր հողաչափը ռուլետկան փաթաթելով, Կորչագինին ասում էր.

— Երեսուն տարի է, որ հողաչափ եմ, և միշտ ու ամենուրեք միջգյուղյա միջնակներն են երկպառակության պատճառը։ Նայեցեք մարգագետնի բաժանման գծին, սա հո մի անհավատալի բան է։ Հարբածն էլ սրանից ուղիղ կքայլեր։ Իսկ արտերում ի՞նչ է։ Երեք քայլ լայնությամբ մի շերտ, մեկը մյուսի վրա է հեծնում, իսկ պիտի բաժանես, դժվել կարելի է։ Եվ այս բոլորը տարեցտարի տրոհվում ու տրոհվում է։ Տղան հորից բաժանվեց, շերտը կիսիր։ Ես ձեզ հավատացնում եմ, որ էլի մի քսան տարի որ անցնի, արտերը կդառնան համատարած միջնակներ, և ցանելու տեղ չի լինի։ Չէ՞ որ այժմ էլ հողի տասը տոկոսը որպես միջնակ է մնում։

Կորչագինը ժպտաց.

— Քսան տարի հետո մեզանում ոչ մի միջնակ չի մնա, ընկեր հողաչա՛փ։

Ծերունին ներողամտաբար նայեց իր խոսակցին։

— Կոմունիստական հասարակության մասին ե՞ք խոսում։ Դե, գիտեք, դա դեռ ինչ-որ հեռավոր ապագայում է։

— Իսկ Բուդանովսկի կոլտնտեսության մասին դուք գիտե՞ք։

— Ա՜, ահա թե ինչի մասին եք խոսում։

— Այո։

— Բուդանովկայում եղել եմ... Բայց, այնուամենայնիվ, դա բացառություն է, ընկեր Կորչագին։

Հանձնաժողովը չափում էր։ Երկու պատանի փոքրիկ ցցեր էին խփում։ Իսկ խոտհարքի երկու կողմերին կանգնել էին գյուղացիները և արթուն հետևում էին, որպեսզի ցցիկները խփվեն նախկին միջնակների տեղում, որը հավիվ էր նկատվում խոտի միջից այստեղ-այնտեղ դուրս ցցված կիսով չափ փտած փայտերի շնորհիվ։

Իր ահագին մտրակով խարազանելով լծված սակավուժ ձիուն՝ խոսելու սիրահար սայլապանը շրջվեց դեպի նստածները և սկսեց պատմել.

— Ո՞վ է հասկանում, թե մեզանում էդ կոմսոմոլները երբ լուս աշխարհ ընկան։ Առաջ էդպես բան չկար։ Իսկ էդ բանն սկսվեց, երևում է, վարժուհուց, նրա ազգանունը Ռակիտինա է, գուցե ճանաչո՞ւմ եք։ Դեռ ջահել կնիկ է, բայց կարելի է ասել՝ վտանգավոր է։ Նա գյուղի բոլոր կանանց ոտքի է հանում, հավաքում է նրանց և ջուր ծեծում, դրանից էլ միայն անհանգստություն է առաջանում։ Բարկացած ժամանակ կնկանդ դնչին մի հատ հասցնում ես, առանց դրան չի լինի, առաջ որ լինում էր, բերանը սրբում էր ու սուս անում, իսկ հիմա, թե որ ձեռք ես տվել, էլ աղմուկ-աղաղակից չես ազատվի։ Ժողդատարանի մասին էլ կխոսեն, իսկ որը ավելի ջահել է, բաժանվելու մասին էլ կխոսի և բոլոր օրենքներն էլ ոչխիդ կկարդա։ Իսկ իմ Գանկան, որ տեղից շատ սուս ու փուս կնիկ է, հիմա պատգամավորուհի է դարձել։ Դա ոնց որ կնիկների վրա մեծ լինի, թե ինչ։ Եվ ամբողջ գյուղից գալիս են նրա մոտ։ Ես սկզբում ուզեցի Գանկային սանձով մի լավ փայփայեմ, իսկ հետո թքեցի։ Սատանան դրանց հետ։ Թող կռկռան։ Իսկ իմ կնիկը կարգին է, թե՛ տնտեսության մեջ է լավ և թե՛ ընդհանրապես։

Սայլապանը քորեց իր մազոտ կուրծքը, որ երևում էր քաթանի վերնաշապկի ճեղքից և կարգը պահած լինելու

համար մտրակով հարցրեց ձիու փորին։ Սայլով գնում էին Ռազվալիխինն ու Լիդան։ Պողոտաբեցում նրանցից ամեն մեկն իր գործն ուներ. Լիդան ուզում էր պատգամավորուհիների խորհրդակցություն անցկացնել, իսկ Ռազվալիխինն էլ գնում էր բջջի աշխատանքը կարգավորելու։

— Իսկ կոմերիտականները ձեզ դուր չե՞ն գալիս,— կատակով հարցրեց Լիդան սայլապանին։

Սա մորուքը քաշքշեց և առանց շտապելու պատասխանեց։

— Չէ, ինչի՞... ջահելներն ուրախանալ կարող են։ Թատրոն սարքեն կամ մի ուրիշ բան, ես ինքս էլ եմ սիրում կոմեդիա նայել, թե որ լավն է լինում։ Մենք սկզբում կարծեցինք, թե աղաները կսկսեն չարություններ անել, բայց, արի տես, հակառակը դուրս եկավ։ Մարդկանցից լսել ենք, որ հարբեցողության, խուլիգանության և նման բաներում նրանց մոտ խիստ է։ Նրանք ավելի շատ սովորելու կողմն են։ Մի՞այն թե ա՛յ, աստծու են կպչում և աշխատում են, որ եկեղեցին ակումբ դարձնեն։ Էդ արդեն իզուր են անում, ծերունիները դրա համար են խեթ աչքով նայում և կոմերիտականների վրա ատամ ունեն։ Իսկ էնպես, ի՞նչ կա որ։ Նրանց մոտ անկարգություն ա՛յ թե որն է. ինչքան որ աղքատ ու տկլոր կա՝ նրանց են ընդունում, որ առաջ բատրակ են եղել կամ անպետք տնտեսություն են ունեցել։ Կարգին տնտեսություն ունեցողների տղաներին մոտ չեն թողնում։

Սայլը բլրակից ցած իջավ և մոտեցավ դպրոցին։

Դոնապանուհին եկվորների համար իր տանն անկողին փռեց, իսկ ինքը գնաց խոտանոցում քնելու։ Լիդան ու Ռազվալիխինը հենց նոր էին եկել երկարաձգված ժողովից։ Խրճիթում մութ էր։ Կոշիկները հանելով՝ Լիդան տեղավորվեց մահճակալին և անմիջապես քնեց։ Նրան արթնացրեց Ռազվալիխինի ձեռքերի կոպիտ և իր նպատակների նկատմամբ ոչ մի ստաբակույս չթողնող հպումը։

— Ի՞նչ ես անում։

— Կամաց, Լի՛դկա, ի՞նչ ես գոռում։ Էդպես մենակ պառկելն ինձ համար ճանճրալի է, հասկանո՞ւմ ես, գրողի ծոցը։ Մի՞թե ոչ մի ավելի հետաքրքրական բան չես գտնում, քան մրափելը։

— Ձեռքերդ քաշիր և անմիջապես կորիր իմ մահճակալից գրողի ծոցը։— Լիդան հրեց նրան։ Ռազվալիխինի լկտի ժպիտը նա առաջ էլ չէր տանում։ Այժմ Լիդան ուզում է Ռազվալիխինին ինչ-որ մի վիրավորական ու ծաղրական բան ասել, բայց քունը նրան հաղթահարում է, և նա փակում է աչքերը։

— Ի՞նչ ես կոտրատվում։ Սրան նայեք, ինչ ինտելիգենտական վարք ունի։ Դուք պատահմամբ աղնվատոհմ օրիորդների ինստիտուտից չե՞ք։ Ի՞նչ է, դու կարծում ես, թե ես քեզ հավատացի, էլի։ Հիմար մի ձևացիր։ Եթե դու գիտակից մարդ ես, ապա նախ բավարարիր իմ պահանջը, իսկ հետո քնիր, ինչքան որ խելքիդ փչի։

Բառեր ծախսելն ավելորդ համարելով՝ նա նորից նստարանից տեղափոխվեց մահճակալին և ձեռքը տիրապետ ու պահանջկոտ տեսքով դրեց Լիդայի ուսին։

— Գրողի ծո՛ցը կորիր,— անմիջապես արթնանալով ասաց վերջինս։— Ազնիվ խոսք, ես վազը Կորշագինին կպատմեմ։

Ռազվալիխինը բռնեց նրա թևը և ջղայնացած շշնջաց.

— Թքել կուզենայի ես քո Կորշագինի վրա, իսկ դու մի՛ համարիր, թե չէ միևնույն է, ուժով կվերցնեմ։

Նրա և Լիդայի միջև մի կարճ պայքար տեղի ունեցավ, և խրճիթի լռության մեջ զիլ հնչեց ապտակի ձայնը՝ մեկ, երկու... Ռազվալիխինը մի կողմ թռավ, Լիդան ենթադրությամբ մթության մեջ դեպի դուռը վազեց և այն բանալով՝ բակ նետվեց։ Կանգնեց նա այնտեղ, լուսնի լույսով ողողված, զայրույթից ինքն իրենից դուրս եկած։

— Տուն եկ, հիմա՛ր,— չարությամբ բղավեց Ռազվալիխինը։

Նա իր անկողինը տարավ չարդախի տակ և մնաց բակում գիշերելու։ Իսկ Լիդան դռան փակը գցելով՝ կծկվեց մահճակալի վրա։

Առավոտյան, երբ տուն էին վերադառնում, ծենկան սայլի վրա նստած էր ծերունի սայլապանի կողքին և ծխախոտի հետևից էր վառում։

«Իսկ այս անմատչելին իսկապես որ կարող է Կորչագինի մոտ դուրս տալ։ Այ քեզ թթված տիկնիկ։ Գոնե տեսքով մի գեղեցկուհի լիներ, թե չէ թյուրիմացություն է միայն։ Հարկավոր է նրա հետ հաշտվել, այլ կերպ կարող է աղմուկ ստեղծվել։ Կորչագինն առանց այն էլ վրաս խեթ է նայում»։

Ռազվալիխինը տեղափոխվեց Լիդայի մոտ։ Նա շփոթված ձևացավ, աչքերը համարյա տխուր են, ինչ-որ անորոշ արդարացումներ է թոթովում, արդեն ղղջում է։

Ռազվալիխինն իր նպատակին հասավ. ավանի ծայրամասում Լիդան խոստացավ երեկվա դեպքի մասին ոչ ոքի չպատմել։

Սահմանամերձ գյուղերում մեկը մյուսի հետևից կոմերիտական բջիջներ էին ծնունդ առնում։ Կոմունիստական շարժման այդ առաջին ծիլերին կոմերիտմիության շրջկոմի աշխատողները շատ ուժեր էին նվիրում։ Կորչագինն ու Լիդա Պոլևիխն այդ գյուղերում ամբողջ օրեր էին անցկացնում։

Ռազվալիխինը գյուղեր գնալ չէր սիրում, նա գյուղի տղաների հետ մտերմանալ, նրանց վստահությունը վաստակել չէր կարողանում և միայն փչացնում էր գործը։ Իսկ Պոլևիխի և Կորչագինի մոտ դա պարզ ու բնական էր ստացվում։ Լիդան իր շուրջն էր հավաքում աղջիկներին, ընկերուհիներ էր գտնում իր համար և այլևս նրանց հետ կապը չէր կորցնում, աննկատելիորեն աղջիկներին շահագրգռում էր կոմերիտմիության կյանքով ու աշխատանքով։ Կորչագինին շրջանում ամբողջ երիտասարդությունն էր ճանաչում։ Ընդհանուր ռազմական ուսուցման 2-րդ գումարտակն իր մեջ ընդգրկում էր հազար վեց հարյուր նախազորակոչիկներ։ Դեռ երբեք հարմոնն այդպիսի մեծ դեր չէր խաղացել պրոպագանդայի մեջ, ինչպես այստեղ, փողոցներում կազմակերպվող գյուղական երեկույթներում։ Հարմոնը Կորչագինին «մեր տղա» էր դարձնում, մազափնջավոր շատ տղաների ճանապարհը դեպի կոմերիտմիություն սկսվում էր հենց այստեղից, երգեցիկ, կախարդ հարմոնից, որը մե՛րթ կրքոտ էր և սիրտ էր խռովում մարշի սրընթաց տեմպով, մերթ քնքուշ փաղաքշում էր ուկրաինական երգերի թախծոտ

գեղգեղանքով։ Լսում էին հարմոնը, լսում էին և հարմոնիստին՝ բանվորին, այժմվա զինկոմին ու կոմերիտմիության քարտուղարին։ Սրտերում ներդաշնակորեն միահյուսվում էին և՛ հարմոնի երգերը, և՛ այն, ինչ ասում էր երիտասարդ կոմիսարը։ Գյուղում նոր երգեր սկսեցին լսվել, խրճիթներում, սաղմոսագրքերից ու երազագրքերից բացի, այլ գրքեր էլ երևան եկան։

Դժվարացավ մաքսանենգների գործը, պետք էր լինում զգուշանալ ոչ միայն սահմանապահներից. սովետական իշխանությունը երիտասարդ բարեկամներ և ջանասեր օգնականներ ձեռք բերեց։ Երբեմն, թշնամուն իրենց ձեռքով բռնելու ցանկությամբ տարված, սահմանամերձ բջիջները չափն անցնում էին, և այդ դեպքում Կորչագինն ստիպված էր լինում իր ենթաշեֆերին նեղ դրությունից դուրս բերել։ Մի անգամ Գրիշուտկա Խորովոդկոն՝ Պոդդուբեցի բջջի կապտաչյա քարտուղարը, տաքգլուխ, կատաղի վիճող, հակակրոնական մի տղա, իրեն հատուկ ճանապարհով տեղեկություն ստանալով, թե գիշերը գյուղի ջաղացպանի մոտ մաքսանենգ ապրանք են բերելու, ամբողջ բջիջը ոտքի է հանում։ Վարժական հրացանով և երկու սվինով զինված բջիջը Գրիշուտկայի գլխավորությամբ գիշերն զգուշորեն պաշարում է ալրաղացը և սպասում գազանին։ Մաքսանենգության մասին իմանում է պետքաղվարչության սահմանապահ պահակակետը և ուղեկալ է կանչում։ Գիշերը երկու կողմերն ընդհարվում են, և սահմանապահների զսպվածության շնորհիվ է, որ տեղի ունեցած իրարանցման մեջ կոմերիտականներին չեն գնդակահարում։ Տղաներին միայն զինաթափ են անում և, տանելով չորս կիլոմետրի վրա գտնվող հարևան գյուղը՝ փակի տակ են նստեցնում։

Կորչագինն այդ ժամանակ Գավրիլովի մոտ էր։ Առավոտյան գումարտակի հրամանատարը հաղորդեց հենց նոր ստացած տեղեկության մասին, և շրջկոմի քարտուղարը սլացավ տղաներին ազատելու։

Պետքաղվարչության լիազորը ծիծաղելով նրան պատմեց գիշերվա անցուդարձը։

— Ահա թե ինչ կանենք, ընկեր Կորչագին։ Նրանք լավ տղաներ են, նրանց վրա գործ չենք սարքի։ Իսկ որպեսզի

հետագայում նրանք մեր ֆունկցիաները չկատարեն, դու նրանց մի լավ դաս տուր։

Ժամապահը գոմի դուռը բացեց, և առանձնակ ազատները գետնից բարձրացան, շփոթված սկսեցին ոտքից ոտք կանգնել։

— Ահա նայեցեք սրանց,— վշտացած ձեռքերը տարածեց լիազորը։— Գործ են սարքել, իսկ ես ստիպված պետք է լինեմ սրանց օկրուգ ուղարկել։

Այն ժամանակ Գրիշուտկան հուզված ասաց.

— Ընկե՛ր Սախարով, ինչ մի առանձին բան ենք արել։ Սովետական իշխանության համար էինք ուզում ջանք թափել։ Այդ կուլակին վաղուց էինք հետևում, իսկ դուք բանտարկեցիք մեզ, կարծես բանդիտներ լինենք։— Եվ նա վիրավորված տեսքով երեսը շրջեց։

Լուրջ բանակցություններից հետո Կորշագինն ու Սախարովը, որոնք դժվարությամբ էին զուսպ տոնը պահում, «դաս տալը» դադարեցրին։

— Եթե դու նրանց համար երաշխավորում ես և մեզ խոստանում, որ նրանք այլևս սահմանի մոտ չեն գնա, այլ իրենց օգնությունն այլ կերպ ցույց կտան, այդ դեպքում նրանց բաց կթողնեմ,— Կորշագինին գիմեց Սախարովը։

— Լավ, ես նրանց համար պատասխանատու եմ։ Հույս ունեմ, որ նրանք ինձ այլևս թյուրիմացության մեջ չեն գցի։

Բշիջը Պոդդուբեց վերադարձավ երգելով։ Միջադեպը չհրապարակվեց։ Իսկ ջաղացպանին, այնուամենայնիվ, շուտով բռնեցին։ Այս անգամ օրենքի համաձայն։

Մայդան-Վիլլայի անտառամերձ գյուղակներում գերմանացի կոլոնիստները հարուստ են ապրում։ Իրարից կես կիլոմետրի վրա փռված են կուլակային հաստատուն տնտեսությունները, տներն ու կցորդ շենքերը։ Կարծես փոքրիկ բերդեր լինեն։ Մայդան-Վիլլայում էր թաքցրել իր պոչը Անտոնյուկի բանդան։ Ցարական այդ ֆելֆեբելն իր ազգականներից բանդիտական մի յոթնյակ էր կազմել և շրջակա ճանապարհների վրա աշխատում էր նագանով, չէր քաշվում արյուն թափելուց, չէր խորշում սպեկուլյանտներից, բայց աչքից չէր թողնում նաև սովետական աշխատողներին։ Արագ էր շարժվում Անտոնյուկը։ Այսօր նա գյուղական կոոպերատիվի երկու աշխատողի էր մեջտեղից վերացնում, վաղն արդեն մի քանի կիլոմետր հեռվում փոստատարին էր ղինաթափ անում և մինչև վերջին կոպեկը կողոպտում։ Անտոնյուկը մրցակցում էր իր կոլեգա Գորդիի հետ, մեկը մյուսին արժեին, և երկուսը միասին օկրուգի միլիցիայից և պետքաղվարչությունից քիչ ժամանակ չէին խլում։ Անտոնյուկը թափառում էր ուղղակի Բերեզդովի քթի տակ։ Դեպի քաղաք տանող ճանապարհները վտանգավոր դարձան։ Բանդիտին բռնելը դժվար էր. երբ նա նեղն էր ընկնում, անցնում էր կորդոնը, նստում էր այնտեղ և նորից երևան գալիս այն ժամանակ, երբ նրան ամենից ավելի քիչ էին սպասում։ Ամեն անգամ, երբ լուր էին բերում իր անորսալիությամբ վտանգավոր այդ գազանի արյունահեղ հարձակման մասին, Լիսիցինը ջղայնորեն շրթունքներն էր կծոտում։

— Մինչև ե՞րբ պետք է այդ սողունը մեզ խայթի։ Այդ լիրբն այնտեղ կհասցնի, որ ես ինքս նրանով կզբաղվեմ,— սեղմված ատամների արանքից ասում էր նա։ Եվ երկու անգամ գործկոմի նախագահը նետվել էր բանդիտի թարմ հետքերով, իր հետ վերցնելով նաև Կորշագինին ու Էլի երեք կոմունիստների, բայց Անտոնյուկը փախչում էր։

Օկրուգից, բանդիտիզմի դեմ պայքարելու համար, Բերեզդով ուղարկեցին մի ջոկատ։ Ջոկատի հրամանատարն էր մի քիչ պճնամոլ Ֆիլատովը։ Չահել աքաղաղի պես ամբարտավան լինելով՝ նա հարկավոր չհամարեց գրանցվել գործկոմի նախագահի մոտ, ինչպես պահանջում էին սահմանային կանոնները, և իր ջոկատը տարավ մոտակա Սեմակի գյուղը։ Գիշերն այնտեղ հասնելով՝ ջոկատի հետ միասին տեղավորվեց գյուղի եզրի առաջին խրճիթում։ Այդպես ծածկաբար գործող անծանոթ զինված մարդիկ գրավեցին հարևան կոմերիտականի ուշադրությունը, և նա վազեց գյուղսովետի նախագահի մոտ։ Ջոկատի մասին ոչինչ չիմանալով՝ նախագահը նրան բանդայի տեղ դրեց, և կոմերիտական ձիավոր-սուրհանդակը շրջան սլացավ։ Ֆիլատովի քյալագյոզությունը քիչ մնաց, որ շատերի մահվան պատճառ դառնար։ Լիսիցինը «բանդայի» մասին իմա-

ցավ գիշերը, անմիջապես ոտքի հանեց միլիցիային և մի տասը մարդով սլացավ դեպի Սեմակի։ Հասան բանկին, ձիերից ցած թռան և ցանկապատի վրայով դեպի տունը նետվեցին։ Մաուզերի կոթով գլխին հարված ստանալով՝ Լիսիցինի ուսի ժամապահը պարկի պես գետնին փռվեց, Լիսիցինի ուսի ծանր հարվածից դուռը տեղից դուրս թռչելով բացվեց, և մարդիկ խուժեցին սենյակը, որն աղոտ լուսավորված էր առաստաղից կախված լամպով։ Ձեռքը ետ նետելով, ձեռքի նոնակով հարվածելու պատրաստ, մաուզերը մյուս ձեռքի մեջ սեղմելով՝ Լիսիցինն այնպես մռնչաց, որ ապակիները զրնգացին։

— Հանձնվի՛ր, թե չէ՝ ծվեն-ծվեն կանեմ։

Եվս մի վայրկյան, և ներս խուժածները գնդակների կարկուտ կտեղային գետնից վեր թռչող քնաթաթախ մարդկանց վրա։ Բայց ռումբով զինված մարդու ահավոր տեսքը դեպի վեր բարձրացրեց տասնյակ ձեռքեր։ Իսկ մի բոպե հետո, երբ ջոկատայիններին միայն սպիտակեղենով բակ էին քշում, Լիսիցինի ֆրենչի շքանշանը բացեց Ֆիլատովի լեզուն։

Լիսիցինը կատաղորեն թքեց և ոչնչացնող արհամարհանքով նետեց.

— Փալա՛ս։

Գերմանական հեղափոխության արձագանքները եկան հասան շրջանը։ Համբուրգի բարիկադների փոխհրաձգության լուրերը լսվեցին նաև այստեղ։ Սահմանում անհանգստություն սկսվեց։ Թերթերը կարդացվում էին լարված սպասումով։ Արևմուտքից հոկտեմբերյան քամիներ էին փչում։ Դիմումներ էին թափվում կոմերիմիության շրջկոմ, որոնց մեջ խնդրում էին իրենց կարմիր բանակ ուղարկել որպես կամավորներ։ Կորշագինը բջիջներից եկողներին երկար համոզում էր, որ սովետական երկրի քաղաքականությունը խաղաղության քաղաքականություն է և որ նա իր հարևաններից և ոչ մեկի հետ առայժմ պատերազմել չի պատրաստվում։ Բայց դա քիչ էր օգնում։ Յուրաքանչյուր կիրակի ավան էին հավաքվում բոլոր բջիջների կոմերիտականները, և տերտերի մեծ բակում շրջանային ժողովներ

էին տեղի ունենում։ Մի անգամ կեսօրին, կարգը պահպանելով, ռազմերթի քայլքով և լրիվ կազմով շրջկոմի ընդարձակ բակը մտավ Պոդդուբեցի կոմերիտական բջիջը։ Կորշագինը լուսամուտից նկատեց և արտասանդուղք դուրս եկավ։ Տասնմեկ պատանիներ՝ Խորովոդկոյի գլխավորությամբ, երկարաճիտ կոշիկներով, ուսներին մի-մի ահագին պայուսակ՝ կանգ առան մուտքի մոտ։

— Ի՞նչ է պատահել, Գրի՛շա,— զարմացած հարցրեց Կորշագինը։

Բայց Խորովոդկոն նրան աչքով նշան արեց և Կորշագինի հետ ներս մտավ։ Երբ Լիդան, Ռազվալիխինը և էլի երկու կոմերիտականներ շրջապատեցին Խորովոդկոյին, նա դուռը փակեց և իր անգույն հոնքերը լրջորեն խոժոռելով հաղորդեց.

— Ես սա մարտական ստուգում եմ կատարում, ընկերնե՛ր։ Այսօր մերոնց հայտարարեցի. շրջանից հեռագիր է եկել, խիստ գաղտնի, իհարկե, պատերազմ է սկվսում գերմանական բուրժույների դեմ, իսկ շուտով կսկսվի նաև պանների դեմ։ Եվ ահա Մոսկվայից հրաման կա՝ բոլոր կոմերիտականներին ռազմաճակատ ուղարկել, իսկ ով վախենում է, թող դիմում գրի, նրան տանը կթողնեն։ Պատվիրեցի, որ պատերազմի մասին ոչ ոքի ոչ մի խոսք չասեն, այլ վերցնեն հացի մեկական բոքոն և մի կտոր ճարպ, իսկ ով ճարպ չունի, սխտոր կամ պրաս. որպեսզի մի ժամ հետո գաղտնի հավաքվեն գյուղից դուրս։ Կգնանք շրջան, իսկ այնտեղից էլ՝ օկրուգ, որտեղ և զենք կստանանք։ Դա հիանալի ազդեց տղաների վրա։ Նրանք սկսեցին դեսուդենից ինձ հարցուփորձել, իսկ ես ասացի՝ առանց խոսակցության և վե՛րջ։ Իսկ ով հրաժարվում է, թող թուղթ գրի։ Արշավը կամավոր է։ Տղաները ցրվեցին, իսկ իմ սիրտը խփում է. իսկ ի՞նչ կլինի, եթե ոչ ոք չգա։ Այդ դեպքում բջիջը պիտի ցրեմ և ինքս էլ ուրիշ տեղ կորչեմ։ Նստել եմ գյուղից դուրս և նայում եմ։ Մեկ-մեկ գալիս են։ Ոմանց դնչից երևում է, որ լաց են եղել, բայց ցույց չեն տալիս։ Տասն էլ եկան, ոչ մի դասալիք։ Ահա նա՝ Պոդդուբեցի բջիջը,— հիացմունքով վերջացրեց Գրիշուտկան և բռունցքը հպարտությամբ իր կրծքին խփեց։

Իսկ երբ վրդովված Պոլևիխը սկսեց նրան «մշակել», Գրիշան նայեց նրան ոչինչ չհասկացող աչքերով։

— Ի՞նչ ես անում։ Դա հո ամենահարմար ստուգումն է։ Այստեղ խաբել չեն կարող, ամեն մեկին տեսնում ես։ Դեռ հանդիսավոր դարձնելու համար ես նրանց օկրուգ էի ուղում քարշ տալ, բայց տղերքը հոգնել են։ Թող տուն գնան։ Միայն թե դու, Կորշա՛գին, անպայման ճառ ասա նրանց համար, թե չէ ինչպե՞ս կարելի է։ Առանց ճառի հարմար չէ... Ասա՛, իբր զորահավաքը չի լինելու, իսկ հերոսության համար փառք ու պատիվ նրանց։

Կորշագինը հազվադեպ էր գնում օկրուգային կենտրոն։ Այդ ճամփորդությունները մի քանի օր էին խլում, իսկ աշխատանքը պահանջում էր, որ նա ամեն օր շրջանում լինի։ Դրա փոխարեն Ռազվալիխինն էր յուրաքանչյուր հարմար առիթով քաղաք վազում։ Ոտքից գլուխ զինված, մաքում իրեն Կուպերի հերոսներից որևէ մեկի հետ համեմատելով, նա հաճույքով էր կատարում այդ ուղևորությունները։ Անտառում կրակում էր ագռավների կամ կայտառ մի սկյուռի վրա, կանգնեցնում էր մենավոր անցորդներին և իսկական քննիչի նման հարցաքննում՝ ով է, որտեղից է և որտ է գնում։ Քաղաքի մոտ Ռազվալիխինը զինաթափ էր լինում, հրացանը խոտի մեջ էր պահում, ատրճանակը՝ գրպանը, և կոմերիտմիության օկրուգային կոմիտե էր ներկայանում իր ստվորական տեսքով։

— Դե, ձեզ մոտ՝ Բերեզդովում, ի՞նչ նոր բան կա։

Ֆեդոտովի՝ օկրուգային կոմիտեի քարտուղարի սենյակը միշտ լիքն է մարդկանցով։ Բոլորը խոսում են իրար խոսք կտրելով։ Պետք է կարողանալ այդպիսի իրադրության մեջ աշխատել՝ միանգամից չորս հոգու լսել, գրել և հիշեցնողներին պատասխանել։ Իսկ Ֆեդոտովը բոլորովին երիտասարդ է, թեև նրա կուստոմը 1919 թվից է։ Միայն այն հուզումնալից ժամանակներում տասնհինգամյա պատանին կարող էր կոսակցության անդամ դառնալ։

Ֆեդոտովի հարցին Ռազվալիխինն անփութորեն պատասխանեց.

— Բոլոր նորությունները պատմել չի լինի։ Առավոտից մինչև ուշ գիշեր պատմում եմ։ Բոլոր ծակուծուկերը պիտի փակել, չէ՞ որ մերկ տեղում ենք ստիպված ամեն ինչ անել։ Նորից հրկու նոր բջիջ ստեղծեցինք։ Ինչո՞ւ եք կանչել,— և նա գործնական տեսքով նստեց բաղկաթոռին։

Տնտեսական բաժնի վարիչ Կրիմսկին մի բոպե աչքը թղթերի կույտից հեռացնելով՝ ետ նայեց։

— Մենք Կորշագինին ենք կանչել և ոչ թե քեզ։

Ռազվալիխինը բերանից ծխախոտի ծխի թանձր մի քուլա բաց թողեց։

— Կորշագինն այստեղ գալ չի սիրում, նույնիսկ այդ հարցում ես եմ ստիպված նրա փոխարեն տանջվել... Առհասարակ տրոշ քարտուղարների գործը լավ է. ոչինչ չեն անում, իսկ ինձ նման էշերին հեծած քշում են։ Երբ Կորշագինը սահմանի մոտ է գնում, էլ երկու-երեք շաբաթ չի երևա, իսկ ամբողջ աշխատանքը ես եմ տանում։

Ռազվալիխինն անընկրա հասկացնել էր տալիս, որ հենց ինքը կլիներ Կոմերիտմիության շրջկոմի համար հարմար քարտուղար։

— Ինձ այս դազը ինչ-որ դուր չի գալիս,— անկեղծորեն խոստովանեց Ֆեդոտովը օկրուգային կոմիտեի աշխատողներին, Ռազվալինի դուրս գալուց հետո։

Ռազվալիխինի այդ նենգամտությունները պատահմամբ բացվեցին։ Մի անգամ փոստը վերցնելու համար Ֆեդոտովի մոտ մտավ Լիսիցինը։ Ամեն մեկը, ով գալիս էր շրջանից, փոստն ստանում էր բոլորի համար։ Ֆեդոտովը Լիսիցինի հետ երկարատև զրույց ունեցավ, Ռազվալիխինը մերկացվեց։

— Բայց դու, այնուամենայնիվ, Կորշագինին ուղարկիր։ Չէ որ մենք համարյա անծանոթ ենք իրար,— հրաժեշտ տվեց Ֆեդոտովը գործկոմի նախագահին։

— Լա՛վ։ Միայն մի պայմանով. նրան մեզանից վերցնելու մասին չմտածեք։ Կտրականապես կառարկենք դրան։

Այդ տարի հոկտեմբերյան տոները սահմանում չտեսնված ոգևորությամբ անցան։ Կորշագինն ընտրված էր սահմանամերձ գյուղերի հոկտեմբերյան հանձնաժողովի նախա-

գահ։ Պոդդուբեցում կայացած միտինգից հետո երեք հարեան գյուղերի գյուղացիների ու գեղջկուհիների հինգ հազարանոց մասսան, կեսկիլոմետրանոց շարասյան կազմած, փողային նվագախմբի ու ընդհանուր ռազմական ուսուցման գումարտակի գլխավորությամբ, դրոշների բոսորափայլ թևքերը տարածած՝ շարժվեց գյուղից դուրս, դեպի սահմանը։ Խստագույն կարգ ու կազմակերպվածություն պահպանելով՝ շարասյունն սկսեց իր երթը սովետական հողի վրա, սահմանային սյուների երկարությամբ՝ ուղևորվելով դեպի այն գյուղերը, որոնք սահմանագծով երկու մասի էին բաժանված։ Լեհերի սահմանի վրա այդպիսի տեսարան երբեք չէին տեսել, Շարասյան առջևից ձի հեծած գնում էին Գավրիլովն ու Կորշագինը, նրանց ետևից պղնձե փողերի որոտ, դրոշների շրշյուն և ե՜րգ, ե՜րգ։ Տոնական է հագնված գյուղական երիտասարդությունը, ուրախություն, գյուղական աղջիկներ, աղջկական ծիծաղի արծաթե կարկաչ, հասակավորների լուրջ և ծերունիների հանդիսավոր դեմքեր։ Հեռու, ինչքան որ աչքը կտրում է, հոսում է մարդկային այդ գետը, նրա ափը սահմանն է, ոչ մի քայլ սովետական հողից դուրս, ոչ ոք արգելված գծից դուրս ոտք չի դնում։ Կորշագինը ճանապարհ է տալիս մարդկային հոսանքին։

Կոմերիտական երգին՝

Տայգաներից մինչև ծովերը Բրիտանական՝
Կարմիր բանակն է բոլորից հաղթական։

Փոխարինում է աղջիկների խմբերգը...

Օ՜յ, էն սարին հնձվորուհիքն են հնձում...

Բերկրալից ժպիտով են ողջունում շարասյանը սովետական ժամապահները, և շվար-շփոթմունքով են հանդիպում լեհականները։ Սահմանի վրայի երթը, թեև այդ մասին վաղօրոք նախազգուշացրել էին լեհական հրամանատարությանը, այնուամենայնիվ, այն կողմում տագնապ է առաջացնում։ Դաշտային ժանդարմերայի հեծելադետները շտապով վազվզում էին, պահակախմբերի կազմը հնգապատիկ ուժեղացվեց, իսկ ձորակներում, համենայն դեպս, պահեստի

զորք թաքցվեց։ Սակայն շարասյունը քայլում էր իր հողով, աղմկոտ և ուրախ, երգի հնչյուններով լցնելով օդը։

Բլրակի վրա լեհական ժամապահն է։ Շարասյան քայլքը համաչափ է։ Ճախրում են քայլերգի առաջին հնչյունները։ Լեհն ուսից իջեցնում է հրացանը և ոտքի մոտ դնելով՝ պատվի է առնում։ Կորշագինը որոշակի լսում է.

— Նյեխ ժիե կոմունա[1]։

Զինվորի աչքերն են վկայում, որ նա արտասանեց այդ խոսքը։ Պավելն առանց հայացքը կտրելու նայում է նրան։

Նա մերն է։ Զինվորի շինելի տակ սիրտը շարասյան սրտին համաչափ է բաբախում։ Եվ Կորշագինը ցածր ձայնով լեհերեն ասում է.

— Ողջույն, ընկե՜ր։

Ժամապահը ետ է մնում։ Նա շարասյանը ճանապարհ է դնում՝ հրացանը նույն դիրքով պահած։ Պավելը մի քանի անգամ շրջվում է և նայում այդ սև, փոքրիկ կերպարանքին։ Ահա և մյուս լեհը։ Սպիտակող բեղերը, կոնֆեդերատկայի հովարի նիկելազօծ շրջանակի տակից նայում են անշարժ, ասես խունացած աչքերը։ Հենց նոր լսածի տպավորության տակ Կորշագինը, կարծես ինքն իր համար, առաջինն է լեհերեն ասում.

— Բարև, ընկե՜ր։

Եվ պատասխան չի ստանում։

Գավրիլովը ժպտում է։ Պարզվում է, որ նա ամեն ինչ լսել է։

— Շատ բան ուզեցիր,— ասում է նա։— Բացի հասարակ հետևակի զինվորներից, այստեղ է նաև հետևակ ժանդարմերիան։ Նրա թևքի շևրոնը տեսա՞ր։ Նա ժանդարմ է։

Շարասյան գլուխն արդեն սարից իջնում էր դեպի այն գյուղը, որը սահմանը երկու մասի էր բաժանել։ Գյուղի սովետական կեսը հյուրերի հանդիսավոր դիմավորում էր կազմակերպել։ Սահմանագծի կամրջի մոտ, փոքրիկ գետակի ափին, հավաքվել է սովետական ամբողջ գյուղը։ Աղջիկներն ու տղաները շարվել էին ճանապարհի եզրերին։ Լեհական կեսում խրճիթների ու մարագների կտուրները ծեփված են

[1] Լեհերեն՝ կեցցե՛ կոմունան։

մարդկանցով, որոնք ուշադիր դիտում են այն, ինչ տեղի է ունենում գետի մյուս ափին։ Խրճիթների շեմքերին և ցանկապատերի տակ գյուղացիների խմբեր են։ Երբ շարասյունը մարդկային միջանցքն է մտնում, նվագախումբը «Ինտերնացիոնալ» է նվագում։ Ինքնաշեն, կանաչով զարդարված ամբիոնի վրա հուզիչ ճառեր են ասում և՛ դեռ բոլորովին երիտասարդները, և՛ ալեհեր ծերունիները։ Հաբաղատ ուկրաիներեն լեզվով ճառ ասաց նաև Կորշագինը։ Նրա խոսքը թռչում անցնում էր սահմանը և լսվում էր մյուս ափում։ Այնտեղ որոշեցին թույլ չտալ, որ այդ ճառը բորբոքի ոմանց սրտերը։ Գյուղում դեսուդեմ սկսեց նետվել ժանդարմական հեծելապարեկը և բնակիչներին մտրակներով տները քշել։ Կտուրների վրա կտկտացին կրակոցները։

Փողոցներն ամայացան։ Գնդակներից փախչելով, կտուրներից անհետացավ երիտասարդությունը, իսկ սովետական կողմից նայում էին այդ բոլորին ու մռայլվում։ Տղաների օգնությամբ ամբիոն բարձրացավ ծերուկ մի հովիվ և վերդովմունքի պոռթկումից ալեկոծված հուզված ասաց.

— Լա՜վ է։ Տեսե՛ք, զավակներս։ Մի ժամանակ, էսպես մեզ էլ էին ծեծում, իսկ հիմա գյուղում ոչ ոք չի տեսնի էդպես բան. պաներին վերջացրին, մեր մեջքի մտրակն էլ վերջացավ։ Պինդ պահեցեք էս իշխանությունը, զավակնե՜ր։ Ես ծեր եմ, խոսել չեմ իմանում։ Բայց շատ բան եմ ուզում ասել, Մեր ամբողջ կյանքի համար, որ ցարի իշխանության տակ ենք քարշ տվել, ոնց որ եզը սայլն է քարշ տալիս, էնպես վիրավորական է նրանց փոխարեն...— Եվ ոսկրոտ ձեռքը թափահարեց դեպի գետակի մյուս կողմը ու լաց եղավ, ինչպես լաց են լինում միայն փոքրիկ երեխաներն ու ծերունիները։

Պապիկին փոխարինեց Գրիշուտկա Խորովոդկոն։ Եվ նրա զայրագին ճառը լսելով՝ Գավրիլովը ձին շրջեց և սկսեց նայել, թե ոչ ոք գրի չի՞ առնում, արդյոք, մյուս ափին։ Բայց ափը դատարկ է, նույնիսկ կամրջի մոտ ժամապահն է հանված։

— Երևում է, որ կանցնի առանց արտաքին գործերի ժողկոմին նոտա ուղարկելու,— կատակեց նա։

Աշնանային անձրևոտ մի գիշեր, երբ նոյեմբերն էր վերջանում, դաղստանցին արյունոտ հետքեր թողնել բանդիտ Անտոնյուկը և այն յոթ հոգին, որ նրա հետ էին։ Գայլի ծնունդը ծուղակն ընկավ Մայդան-Վիլլայում, հարուստ մի կուլակի հարսանիքում։ Նրան այնտեղ թրխկացրին Խրոլինի կոմունարները։

Կոլոնիաների հարսանիքի այս հյուրերի մասին լուրը կանանց ելքուն տեղ հասցրեց։ Մի վայրկյանում հավաքվեցին բջջի անդամները, ընդամենը տասներկու հոգի, զինված ով ինչով կարողացել էր։ Սայլերով նետվեցին դեպի Մայդան-Վիլլա, իսկ սուրհանդակը գլխապատառ թերեզդով սլացավ, Սեմակինում տուրհանդակը պատահեց Ֆիլատովի ջոկատին, և սա յուրայինների հետ վարգով նետվեց թարմ հետքով։ Խրոլինի կոմունարները գրաղակը շրջապատեցին և հրացանային խոսակցությունն սկսվեց Անտոնյուկի խմբի հետ։ Անտոնյուկը յուրայինների հետ դիրք էր մտել փոքրիկ կողաշենքում և արձակով շպպացնում էր բոլոր նրանց, ովքեր ընկնում էին նրա տեսադաշտը, նետվեց ճեղքել-անցնելու, բայց խրոլինցիները նրանց նորից կողաշենքը քշեցին և յոթին էլ մեկից գնդակահարեցին։ Շատ անգամ էր Անտոնյուկը այսպիսի հրաձգության մեջ ընկել, բայց միշտ ողջառողջ էր դեռացել։ փրկում էին միշտ ձեռքի նռնակներն ու գիշերը։ Բացի այս անգամ էլ դուրս պրծներ, փոխհրաձգության մեջ կոմունարներն արդեն երկու մարդ էին կորցրել, բայց դյուրակ հասավ Ֆիլատովը։ Անտոնյուկը հասկացավ, որ թունդ է խրվել և այս անգամ ելք չունի։ Մինչև առավոտ կողաշենքի բոլոր լուսամուտներից արձիճ էր թափվում, բայց լույսը բացվելուն պես նրան բռնեցին։ Ցոթից ոչ մեկն անձնատուր չեղավ։ Գայլի ծնունդի վախճանը չորս կյանք արժեցավ։ Չորսից երեքը Խրոլինի կոմերիտմիության երիտասարդ բջիջը տվեց։

Կորշագինի գումարտակը տերիտորիալ զորամասերի աշնանային զորաշարժերի կանչվեց։ Մինչև տերիտորիալ դիվիզիայի ճամբարն ընկած քառասուն կիլոմետրը գումարտակն անցավ մի օրում, հորդ անձրևի տակ, իր երթն սկսելով վաղ առավոտյան և վերջացնելով ուշ երեկոյան։

Գումարտակի հրամանատար Գուսևը և նրա կոմիսարն այդ ճանապարհն անցան ձիով։ Ութ հարյուր նախազինակոչիկները հաղիվ հասան զորանոց և անմիջապես պառկեցին քնելու։ Տերիտորիալ դիվիզիայի շտաբն ուշ էր կանչել գումարտակը, զորախաղերն սկսվում էին հենց առավոտյան։ Նոր ժամանած գումարտակը ստուգման էր ենթակա։ Գումարտակը շարք կանգնեցրին հրապարակում։ Շուտով դիվիզիայի հանդերձանք և հրացաններ ստացած գումարտակը կերպարանափոխվեց։ Ե՛վ Գուսևը՝ մարտական հրամանատարը, և՛ Կորշագինը, երկուսն էլ իրենց գումարտակին շատ ուժեր և ժամանակ էին հատկացրել և հանգիստ էին իրենց վստահված զորամասի համար։ Երբ պաշտոնական ստուգումը վերջացավ, և գումարտակն իր մանևրելու ու վերադասավորվելու ընդունակությունը ցույց տվեց, հրամանատարներից մեկը, որ գեղեցիկ, բայց թարշամ դեմք ուներ, խստությամբ հարցրեց Կորշագինին.

— Դուք ինչո՞ւ եք ձիով։ Մեր ընդհանուր ռազմական ուսուցման գումարտակների հրամանատարներն ու զինկոմները ձի չպիտի ունենան։ Հրամայում եմ ձիերն ախոռ հանձնել, մանևրները կատարել ոտքով։

Կորշագինը գիտեր, որ եթե նա ձիուց իջնի, ապա մանևվրներին մասնակցել չի կարող, նա ոտքով մի կիլոմետր էլ անցնել չի կարող։ Ինչպե՞ս ասեր այդ մասին տասնյակ կապեր ու փոկեր ունեցող այս աղմկարար պճնամոլին։

— Առանց ձիու ես զորախաղերի մասնակցել չեմ կարող։

— Ինչո՞ւ։

Հասկանալով, որ այլ կերպ չի կարող բացատրել իր հրաժարումը, Կորշագինը խուլ ձայնով ասաց.

— Ոտքերս ուռել են, մի ամբողջ շաբաթ վաղվզել չեմ կարող։ Եվ հետո ես չգիտեմ, թե դուք ո՞վ եք, ընկե՛ր։

— Ես ձեր գնդի շտաբի պետն եմ, այս մեկ։ Երկրորդ՝ նորից եմ հրամայում ձիուց իջնել, իսկ եթե դուք հաշմանդամ եք, ապա ե՛ս չեմ մեղավոր, որ դուք զինվորական ծառայության մեջ եք։

Կորշագինին կարծես մտրակով հարվածեցին։ Ձիու սանձն ուժգին թափահարեց, բայց Գուսևի ամուր ձեռքը պահեց նրան։ Պավելի մեջ մի քանի բոպե երկու զգացում էին

պայքարում՝ վիրավորվածությունը և զսպվածությունը։ Բայց Պավել Կորշագինն արդեն այն կարմիրբանակայինը չէր, որն առանց տատանվելու կարող էր զորամասից զորամաս տեղափոխվել։ Կորշագինը գումարտակի զինկոմ էր, այդ գումարտակը կանգնած էր նրա թիկունքում։ Կարգապահության ի՞նչ օրինակ ցույց կտա նա այդ գումարտակին իր վարքով։ Չէ՞ որ այս պճնամոլի համար չի դաստիարակել նա իր գումարտակը։ Նա ոտքերն ազատեց ասպանդակից, ձիուց իջավ և, հոդերի սուր ցավը հաղթահարելով՝ գնաց դեպի աջ թևը։

Մի քանի օր բացառիկ լավ եղանակ էր։ Մանևրները իրենց վախճանին էին մոտենում։ Հինգերորդ օրը այդ մանևրները տեղի էին ունենում Շեպետովկայի շուրջը, որը նրանց վերջին կետն էր։ Բերեզդովի գումարտակը առաջադրանք ստացավ՝ Կլիմենտովիչի գյուղի կողմից գրավել կայարանը։

Տեղանքին լավ ծանոթ լինելով՝ Կորշագինը Գուսևին մատնանշեց բոլոր ուղիները։ Երկու մասի բաժանված գումարտակը, մեծ շրջան կատարելով, առանց հակառակորդի կողմից նկատվելու անցավ նրա թիկունքը և «ուռա» բղավելով ներխուժեց կայարան։ Միջնորդների վճիռով այդ ընդունվեց որպես փայլուն կերպով կատարված գործողություն։ Կայարանը մնաց բերեզդովցիներին, իսկ այն պաշտպանող գումարտակը պայմանական կերպով կորցնելով իր կազմի հիսուն տոկոսը՝ նահանջեց դեպի անտառ։ Կորշագինն իր վրա վերցրեց գումարտակի կեսի հրամանատարությունը։ Շղթայի երկարությամբ հրաման տալով՝ Կորշագինը կանգնել էր փողոցի մեջտեղում երրորդ վաշտի հրամանատարի ու քաղղեկի հետ։

— Ընկեր, կոմիսար,— նրանց մոտ վազեց մի կարմիրբանակային,— գումարտակի հրամանատարը հարցնում է, թե գնդացրորդները գրավե՞լ են, արդյոք, անցուղիները։ Հիմա հանձնաժողովը կգա,— հեռալով հաղորդեց նա Կորշագինին։

Պավելը հրամանատարների հետ գնաց դեպի անցուղիները։

Այստեղ էր հավաքված գնդի հրամանատարությունը։ Գուսևին շնորհավորում էին հաջող գործողության համար։ Ջամիջանիանի գումարտակի ներկայացուցիչները շփոթված ոտքից ոտք էին հենվում՝ չփորձելով անգամ արդարանալ։

— Դա իմ վաստակը չէ, այլ ահա Կորշագինը տեղացի է, նա էլ մեղ դերեց։

Շտաբի պետը ընդհուպ մոտեցավ Պավելին ու հեգնոտ ժպիտով ասաց.

— Պարզվում է, որ դուք Ֆիանալի վաղել եք կարողանում, ընկե՛ր, իսկ ձին նստել էիք, ըստ երևույթին, ցուցամոլության համար։— Նա էլի ինչ-որ բան էր ուզում ասել, բայց Կորշագինի հայացքը նրան կանգնեցրեց, և նա կակազեց։

Երբ հրամանատարությունը հեռացավ, Կորշագինը կամացուկ հարցրեց Գուսևին.

— Դու նրա ազգանունը գիտե՞ս։

Գուսևը խփեց նրա ուսին։

— Թո՛ղ, այդ սրիկայի վրա ուշադրություն մի դարձրու։ Իսկ ազգանունը Զուժանին է, կարծեմ նախկին պրապորշչիկ է։

Մի քանի անգամ այդ օրը Կորշագինը ջանաց հիշել, թե որտե՞ղ է նա լսել այդ ազգանունը, բայց այդպես էլ չհիշեց։

Զորախաղերը վերջացան։ Գերազանց գնահատական ստանալով՝ գումարտակը գնաց Բերեզդով, իսկ ֆիզիկապես բոլորովին ջարդված Կորշագինը երկու օր մնաց մոր մոտ։ Ձին Արտյոմի մոտ էր։ Երկու օր Պավելը տասներկուական ժամ քնեց, երրորդ օրը գնաց դեպո՝ Արտյոմի մոտ։ Այստեղ, այս մրոտ շենքում, նա հարազատ շունչ զգաց։ Ագահորեն ներս քաշեց ածխի ծուխը։ Տիրաբար դեպի իրեն էր քաշում այս մանկությունից ծանոթ միջավայրը, որի մեջ աճել և որի հետ հարազատացել էր։ Կարծես թե ինչ-որ թանկ բան էր կորցրել։ Քանի ամիս էր արդեն, որ չէր լսել շոգեքարշի ճիչը. և ինչպես ծովագնացին ամեն անգամ երկարատև անջատումից հետո հուզում է անափ ծովի փիրուզյա կապույտը, այնպես էլ այժմ հնոցապանին ու մոնտյորին կանչում էր հարազատ տարերքը։ Երկար ժամանակ չէր կարողանում իր մեջ այդ զգացումը հաղթահարել։ Եղբորը հետ քիչ էր խոսում։ Արտյոմի ճակատին նոր կընճիռ նկատեց։ Նա աշխատում էր շարժական հնոցի մոտ։ Նա երկրորդ երեխան ունի արդեն։ Ըստ երևույթին, ծանր է կյանքը։ Այդ մասին Արտյոմը չի խոսում, բայց դա առանց խոսքի էլ երևում է։

Մեկ-երկու ժամ միասին աշխատեցին։ Բաժանվեցին։ Անցուդարձում Պավելը ձին կանգնեցրեց և երկար նայում էր կայարանին, հետո մտրակեց սևուկին, ամբողջ թափով քշեց նրան անտառի ճանապարհով։

Անտառային ճանապարհները այժմ անցուդարձի համար անվտանգ էին դարձել։ Բոլշևիկները մեծ ու փոքր բանդիտներին արմատախիլ էին արել, այրել էին նրանց բները» և շրջանի գյուղերում կյանքն ավելի հանգիստ էր դարձել։

Կորշագինը Բերեզդով հասավ կեսօրին։ Շտաբի արտասանդուղքների մոտ ուրախ-ուրախ նրան դիմավորեց Պոլևիխը։

— Վերջապես եկա՞ր։ Մենք արդեն տխրում էինք առանց քեզ։— Եվ գրկելով նրա ուսերը՝ կիդան նրա հետ առուն եկավ։

— Որտե՞ղ է Ռազվալիխինը,— հարցրեց նրան Կորշագինը՝ շինելը հանելով։

Լիդան ինչ-որ դժկամությամբ պատասխանեց.

— Չգիտեմ որտեղ է նա։ Հա, հիշեցի։ Նա առավոտյան ասաց, թե կգա դպրոց քո փոխարեն հասարակագիտություն պարապելու։ «Դա,— ասում է,— ուղղակի իմ ֆունկցիան է և ոչ թե Կորշագինի»։

Այդ նորությունը Պավելին անախորժ զարմանք պատճառեց։ Ռազվալիխինը միշտ էլ դուր չէր գալիս նրան։ «Այդ տիպն ի՞նչ է անելու դպրոցում», տհաճությամբ մտածեց Պավելը։

— Դե լա՛վ։ Պատմիր, ինչ լավ բան կա ձեզ մոտ։ Գրուշևկայում եղա՞ր։ Տղաների գործերն ինչպե՞ս են այնտեղ։

Պոլևիխը նրան ամեն ինչ պատմեց։ Կորշագինը հանգստանում էր բազմոցի վրա, տրորելով հոգնած ոտքերը։

— ...Անցյալ օրը կուսակցության թեկնածու ընդունեցին Ռակիտինային։ Դա Պոդդուբնցի մեր բջջի ավելի կուժեղացնի։ Ռակիտինան հիանալի աղջիկ է, նա ինձ շատ է

դուր գալիս։ Տեսնում ես, ուսուցիչների մեջ արդեն բեկում է սկսվում, նրանցից ոմանք ամբողջովին մեր կողմն են անցնում։

Երբեմն երեկոները Լիսիցինի մոտ մեծ սեղանի շուրջը մինչև ուշ գիշեր նստում էին երեքով, ինքը՝ Լիսիցինը, Կորշագինը և կուսշրջկոմի նոր քարտուղար Լիչիկովը։

Ննջարանի դուռը ծածկված է։ Անյուտան և գործկոմի նախագահի կինը քնած են, իսկ սեղանի շուրջը նստած երեք հոգին կռացել են մի փոքրիկ գրքի վրա։ Լիսիցինը սովորելու ժամանակ էր գտնում միայն գիշերները։ Այն օրերը, երբ Պավելը վերադառնում էր գյուղերից, նա երեկոները Լիսիցինի մոտ էր անցկացնում և վշտով էր իմանում, որ Լիչիկովն ու Նիկոլայն արդեն առաջ են անցել։

Պոդդուբեցից լուր հասավ. գիշերը անհայտ մարդիկ սպանել են Գրիշուտկա Խորովոդկոյին։ Այդ լսելով՝ Կորշագինը նետվեց դեպի գործկոմի ախոռը և մոռանալով ոտքերի ցավը՝ այնտեղ վազեց մի քանի րոպեի ընթացքում։ Կատաղի շտապողականությամբ թամբեց ձիուն և կաշվե մտրակով հարվածելով երկու կողերին էլ՝ սուրաց դեպի սահմանը։

Գյուղսովետի ընդարձակ խրճիթում, կանաչով զարդարված սեղանի վրա պառկած էր Գրիշուտկան՝ սովետի դրոշակով ծածկված։ Մինչև իշխանության ներկայացուցիչների գալը նրա մոտ ոչ ոքի չէին թողնում, շեմքի մոտ ժամապահ էին կանգնել մի սահմանապահ կարմիրբանակային և մի կոմերիտական։ Կորշագինը խրճիթ մտավ, մոտեցավ սեղանին և ետ քաշեց դրոշը։

Մեղրամոմի պես դեղին, լայն բացված աչքերով, որոնց մեջ դրոմշվել էր հոգեվարքի տանջանքը, գլուխը մի կողմ թեքած պառկած էր Գրիշուտկան։ Ինչ-որ սուր բանով ջարդված ծոծրակը ծածկված էր եղևնու ոստով։

Ո՞ւմ ձեռքն էր բարձրացել այս պատանու վրա, այրի Խորովոդկոյի միակ որդու վրա, այն կնոջ, որը հեղափոխության ընթացքում կորցրել էր իր ամուսնուն՝ ալրաղացի տիրոջ բատրակին, իսկ ավելի ուշ՝ գյուղի չքավորական կոմիտեի անդամին։

Որդու մահվան լուրը գետնին տապալեց պառավ մորը, և

հարևաններն էին խնամում նրան, որ կիսամեռ վիճակում էր։ Իսկ որդին լուռ պառկած էր՝ պահելով իր ղոհվելու գաղտնիքը։

Գրիշուտկայի մահը վրդովեց գյուղը։ Կոմսոմոլի պատանի պարագլխի ու բատրակների պաշտպանի բարեկամներն ավելի շատ էին գյուղում, քան թշնամիները։

Այդ մահվան փաստից ցնցված՝ Ռակիտինան իր սենյակում լաց էր լինում, և երբ Կորշագինը նրա մոտ մտավ, նա գլուխն անգամ չբարձրացրեց։

— Ի՞նչ ես կարծում։ Ռակիտինա, ո՞վ է սպանել նրան,— խուլ ձայնով հարցրեց Կորշագինը և ծանրորեն նստեց աթոռին։

— Էլ ուրիշ ո՞վ, եթե ոչ ալրաղացի խումբը։ Չէ՞ որ Գրիշուտկան կանգնել էր այդ մաքսանենգների կոկորդին։

Գրիշուտկային թաղելու եկան երկու գյուղի բնակիչները։ Կորշագինը բերեց իր գումարտակը, կոմերիտական ամբողջ կազմակերպությունը եկավ իր վերջին պարտքը հատուցելու ընկերոջը։ Գավրիլովը սահմանապահ վաշտի երկու հարյուր հիսուն զինվոր շարք կանգնեցրեց գյուղսովետի հրապարակում։ Հրաժեշտի քայլերգի թախծոտ հնչյունների տակ դուրս բերեցին կարմիր կտորով պատած դագաղը և դրեցին հրապարակում, որտեղ քաղաքացիական պատերազմի ժամանակ թաղված բոլշևիկ-պարտիզանների կողքին փորված էր գերեզմանը։

Գրիշուտկայի արյունը համախմբել էր նրանց, որոնց թիկունքին նա միշտ կանգնում էր սարի պես։ Բատրակ երիտասարդությունն ու չքավորները բջջին օգնություն էին խոստանում, և բոլորը, ովքեր խոսում էին, զայրույթով, բորբոքված պահանջում էին գտնել նրանց և դատել այս հրապարակում, այս շիրմի մոտ, որպեսզի յուրաքանչյուրը տեսներ թշնամու դեմքը։

Երեք անգամ որոտաց համաղարկը, և թարմ գերեզմանի վրա փշատերև ծառերի ճյուղեր դրվեցին։ Նույն օրվա երեկոյան բջջին նոր քարտուղար ընտրեց՝ Ռակիտինային։ Պետքաղվարչության սահմանային պահակակետից հայտնեցին Կորշագինին, որ այնտեղ գտել են մարդասպանների հետքը։

Մի շաբաթ հետո ավանի թատրոնում բացվեց սովետների երկրորդ շրջանային համագումարը։ Լիսիցինը խստագին ու հանդիսավոր սկսեց իր զեկուցումը։

— Ընկերնե՛ր, ես բավականությամբ կարող եմ հաղորդել համագումարին, որ մի տարվա ընթացքում մենք բոլորս շատ աշխատանք ենք կատարել։ Մենք շրջանում խորապես ամրացրել ենք սովետական իշխանությունը, արմատից ենք ոչնչացրել բանդիտիզմը և կոտրել ենք մաքսանենգության ոտքերը։ Գյուղերում աճել են գյուղական չքավորության հաստատուն կազմակերպություններ, տասնապատիկ աճել են կոմերիտական կազմակերպությունները և ընդլայնվել են կուսակցական կազմակերպությունները։ Պոդդուբովցում կուլակային վերջին ոտնձգությունը, որի գոհը դարձավ մեր ընկեր Խորովոդկոն, հայտնաբերված է, մարդասպանները՝ ջաղացպանն ու նրա փեսան, ձերբակալված են. և մոտ օրերս նրանց կդատի նահանգական դատարանի շրջիկ սեսիան։ Մի շարք գյուղական պատգամավորներ նախագահությունից պահանջում են, որ համագումարը որոշում կայացնի և պահանջի բանդիտ-տեռորիստների նկատմամբ պատժի գերագույն չափի կիրառում...

Դահլիճն աղաղակներից դղրդաց.

— Համամիտ ենք։ Մա՛հ սովետական իշխանության թշնամիներին։

Կողքի դռներում երևաց Պոլեֆիխը։ Նա մատով կանչեց Պավելին։

Միջանցքում Լիդան նրան տվեց «շտապ» մակագրությամբ մի ծրար։ Բաց արեց։

> Բերեզովի կոմերիտմիության շրջկոմին։ Պատճենը՝ կուսշրջկոմին։
>
> Նահանգական կոմիտեի բյուրոյի որոշմամբ ընկեր Կորչագինը շրջանից հետ է կանչվում Նահանգական կոմիտեի տրամադրության տակ՝ կոմերիտական պատասխանատու աշխատանքի ուղարկելու համար։

Կորչագինը հրաժեշտ տվեց շրջանին, ուր աշխատել էր մի տարի։ Կուսշրջկոմի վերջին նիստում երկու հարց քննարկեցին. առաջինը՝ կոմունիստական կուսակցության անդամ փոխադրել ընկեր Կորչագինին, երկրորդը՝ ազատելով կոմերիտմիության շրջկոմի քարտուղարի աշխատանքից՝ հաստատել նրա բնութագիրը։

Ամուր, ցավեցնելու չափ ամուր սեղմեցին Պավելի ձեռքը Լիսիցինն ու Լիդան, եղբոր պես գգկախառնվեցին, իսկ երբ ձին բակից շրջեց ճանապարհը, մի տասնյակ ատրճանակներ ողջույնի համազարկ տվեցին։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Տրամվայի վագոնը էլեկտրամոտորի լարված աղմուկի տակ մագլցում էր Ֆունդուկլեևսկայա փողոցով դեպի վեր։ Օպերայի թատրոնի մոտ կանգ առավ։ Տրամվայից իջավ երիտասարդների մի խումբ, իսկ վագոնը նորից դեպի վեր սողաց։

Պանկրատովն շտապեցնում էր ետ մնացողներին.

— Գնա՞նք, տղե՛ր։ Մենք ուշացել ենք, փաստ է։

Օկունևը նրան հասավ թատրոնի հենց մուտքի մոտ։

— Հիշո՞ւմ ես, Գենկա, երեք տարի առաջ քեզ հետ միասին նույն ձևով այստեղ եկանք։ Այն ժամանակ Պուբավան «բանվորական օպոզիցիայի» հետ մեզ մոտ էր վերադառնում։ Լավ երեկո էր։ Իսկ այսօր նորից պիտի կռվենք Պուբավայի հետ։

Պանկրատովը Օկունևին պատասխանելու արդեն դահլիճում, ուր նրանք մտան՝ մուտքի մոտ կանգնած հնկող խմբակին ցույց տալով իրենց մանդատները։

— Այո՛, Միտյայի հետ պատմությունը կրկնվեց նորից այստեղ։

Նրանց վրա ֆշշացին։ Ստիպված եղան դրավել ամենամոտ տեղերը. կոնֆերանսի երեկոյան նիստն արդեն սկսվել էր։ Ամբիոնի վրա կանացի մի կերպարանք էր։

— Ճիշտ ժամանակին եկար։ Նստիր և լսիր, թե կինդ ինչ կասի,— շշնջաց Պանկրատովը՝ արմունկով հրելով Օկունևի կողքը։

— ...Ճիշտ է, դիսկուսիային մենք շատ ուժ տրամադրեցինք, բայց դրա փոխարեն այդ դիսկուսիային մասնակցող երիտասարդությունը շատ բան սովորեց։ Մենք մեծ գոհունակությամբ ենք նշում այն փաստը, որ մեր կազմակեր-

պությանմեջ Տրոցկու կողմնակիցների ջախջախումն ակնբախ է։ Նրանք չեն կարող դանդատվել, թե նրանց արտահայտվելու, իրենց հայացքները լրիվ շարադրելու հնարավորություն չեն տվել։ Ոչ, նույնիսկ հակառակն է ստացվել. գործողությունների այն ապատությունը, որ նրանք էին մեզ մոտ ստացել, հանգեցրեց նրանց կողմից կուսակցական կարգապահության մի ամբողջ շարք կոպիտ խախտումների։

Տալյան հուզվում էր, մազերի մի փունջ ընկնում էր դեմքին և խոսելուն խանգարում։ Նա թափով գլուխը ետ նետեց։

— Մենք այստեղ լսեցինք շրջանների շատ ընկերների, և նրանք բոլորն էլ խոսում էին այն մեթոդների մասին, որ օգտագործում էին տրոցկիստները։ Այստեղ՝ կոնֆերանսում, նրանք ներկայացված են բավական մեծ թվով։ Շրջանները գիտակցաբար նրանց մանդատ են տվել, որպեսզի մի անգամ ևս այստեղ, քաղաքային կուսկոնֆերանսում, լսեն նրանց։ Մեր հանցանքը չէ, թե նրանք քիչ են հանդես գալիս։ Լիակատար ջախջախումը շրջաններում և բջիջներում ինչ-որ բան սովորեցրել է նրանց։ Դժվար է այժմ դուրս գալ և այս ամբիոնից կրկնել այն, ինչ նրանք ասում էին դեռ երեկ։

Պարտերի աջ անկյունից ինչ-որ մեկի կտրուկ ձայնը ընդհատեց Տալյային.

— Մենք դեռ կասենք։

Լազուտինան շրջվեց։

— Շատ լավ, Դուբա՛վա, դուրս եկ և ասա՛, մենք կլսենք,— առաջարկեց նա։

Դուբավան իր ծանր հայացքը հառեց նրա վրա և ջղայնորեն ծռմռեց շրթունքները։

— Ժամանակը կգա, կասե՛նք,— գոչեց նա և հիշեց երեկվա ծանր պարտությունն իր շրջանում, ուր նրան ճանաչում էին։

Դահլիճով մեկ քրթմնջյուն անցավ։ Պանկրատովը չհամբերեց.

— Ի՞նչ, մի անգամ է՞լ եք ուզում կուսակցությունը ցրնցել։

Դուբավան նրա ձայնը ճանաչեց, բայց չշրջվեց նույնիսկ, միայն ցավեցնելու չափ կծկեց շրթունքը և գլուխը խոնարհեց։

Տալյան շարունակեց.

— Ցայտուն օրինակ այն բանի, թե տրոցկիստներն ինչպե՞ս են խախտում կուսակցական կարգապահությունը, կարող է ծառայել թեկուզ հենց Դուբավան։ Նա մեր հին կոմերիտական աշխատողներից է. շատերն են նրան ճանաչում, հատկապես զինարանցիք։ Դուբավան Խարկովի կոմունիստական համալսարանի ուսանող է, բայց մենք բոլորս գիտենք, որ նա Շումսկու հետ միասին արդեն երեք շաբաթ է, որ գտնվում է այստեղ։ Համալսարանի պարապմունքների այս եռուն շրջանում ի՞նչն է նրանց այստեղ բերել։ Քաղաքում մի շրջան չկա, ուր նրանք հանդես եկած չլինեն։ Ճիշտ է, Միխայլոն վերջին օրերն սկսել է զգաստանալ։ Ո՞վ է նրանց այստեղ ուղարկել։ Նրանցից բացի, տարբեր կազմակերպություններից մի ամբողջ շարք տրոցկիստներ կան մեզ մոտ։ Նրանք բոլորն ինչ-որ մի ժամանակ այստեղ աշխատել են և այժմ եկել են, որպեսզի բորբոքեն ներկուսակցական պայքարի հուրը։ Կուսակցական կազմակերպությունը նրանց որտեղ լինելը գիտե՞ արդյոք։ Իհարկե ոչ։

Կոնֆերանսը տրոցկիստներից սպասում էր, որ նրանք հանդես կգան իրենց սխալների խոստովանությամբ։ Տալյան աշխատում էր նրանց մղել դեպի սխալների խոստովանության ուղին և խոսում էր կարծես ոչ թե ամբիոնից, այլ ընկերական զրույց էր անում։

— Հիշեցե՛ք, երեք տարի սրանից առաջ նույն այս թատրոնում Դուբավան «բանվորական օպերացիայի» նախկին խմբակով մեզ մոտ վերադարձավ։ Հիշեցեք նրա խոսքերը. «Կուսակցական դրոշը մեր ձեռքից երբեք վայր չենք նետի», և երեք տարի չանցած՝ Դուբավան այն վայր նետեց։ Այո՛, ես հայտարարարում եմ՝ Դուբավան այն վայր նետեց։ Չէ՞ որ նրա բառերը՝ «մենք դեռ կասենք», վկայում են այն մասին, որ նա և իր համախոհ տրոցկիստները ավելի հեռուն կգնան։

Վերջին բազկաթոռներից լսվեց.

— Թող Տուֆոտան ծանրաչափի մասին խոսի, նա սրանց օդերևութաբանն է։

Վրդովված ձայներ հնչեցին.

— Բավական է կատակ անեք։

— Թող պատասխանեն՝ կուսակցության դեմ պայքարը դադարեցնո՞ւմ են, թե ոչ։

— Թող ասեն, ո՞վ է գրել հակակուսակցական դեկլարացիան։

Հուզումն աճում էր, նախագահողը երկար զանգահարում էր։

Ձայների աղմուկի մեջ Տալյայի խոսքերը կորչում էին, բայց շուտով փոթորիկը մեղմացավ, և Լագուտինայի ձայնը նորից լսելի դարձավ։

— Մենք ծայրամասերի մեր ընկերներից նամակներ ենք ստանում. նրանք մեզ հետ են, և դա մեզ ոգևորում է։ Թույլ տվեք ինձ կարդալ նամակներից մեկից մի հատված։ Նամակն Օլգա Յուրենևայից է, այստեղ նրան շատերն են ճանաչում, նա այժմ կոմերիտմիության օկրուգային կոմիտեի կազմբաժնի վարիչն է։

Տալյան թղթերի շերտից մի թերթիկ հանեց և, հայացքը վրայով սահեցնելով՝ կարդաց.

— «Գործնական աշխատանքը թողել ենք, չորրորդ օրն է արդեն, որ շրջաններում շարունակ բյուրոյի նիստեր ենք անում, տրոցկիստներն աննախընթաց սրությամբ են պայքար ծավալել։ Երեկ մի դեպք տեղի ունեցավ, որը վրդովեց ամբողջ կազմակերպությանը։ Օպոզիցիոներները, քաղաքում ոչ մի բջիջում մեծամասնություն չստանալով, որոշեցին միացյալ ուժերով ճակատամարտ տալ օկրուգի զինվորական կոմիսարիատի բջիջում, որի մեջ մտնում են օկրուգպլանի և լուսաշխի կոմունիստները։ Բջիջը քառասուներկու անդամ ունի, բայց այստեղ էին հավաքվել բոլոր տրոցկիստները։ Մենք այդպիսի հակակուսակցական ճառեր, ինչպիսիք լսեցինք այդ նիստում, դեռ չէինք լսել։ Զինկոմատայիններից մեկը հանդես եկավ և ուղղակի ասաց. «Եթե կուսակցական ապարատն անձնատուր չլինի, մենք այն ուժով կջարդենք»։ Օպոզիցիոներներն այդ հայտարարությունը դիմավորեցին ծափահարություններով։ Այն ժամանակ հանդես եկավ Կորշագինը և ասաց. «Ինչպե՞ս կարող եք դո՛ւք, լինելով կուսակցության անդամ, ծափահարել այս ֆաշիստին»։՝ Կորշագինին թույլ

չտվեցին այլևս խոսել. աթոռներն էին թխկացնում, բղավում էին։ Բջջի անդամներն այդ խուլիգանությունից վրդովված՝ պահանջում էին լսել Կորշագինին, բայց երբ Պավելը խոսել սկսեց, նորից օբստրուկցիա սարքեցին։ Պավելը բղավեց նրանց վրա. «Լավն է ձեր դեմոկրատիան։ Միևնույն է, ես խոսելու եմ»։ Այն ժամանակ մի քանի հոգի բռնեցին նրան և աշխատում էին ամբիոնից ցած քաշել։ Ինչ-որ մի վայրենի բան ստացվեց։ Պավելն աշխատում էր նրանց ձեռքից ազատվել և շարունակում էր խոսել, բայց նրան բեմի հետևը քարշ տվեցին և, կողքի դուռը բաց անելով, նետեցին սանդուղքի վրա։ Ինչ-որ մի սրիկա նրա դեմքն արյունլվա անելու չափ ջարդել էր։ Համարյա ամբողջ բջիջը ժողովից հեռացավ։ Այդ դեպքը շատերի աչքերը բացեց...»

Տալյան իջավ ամբիոնից։

Սեգալն արդեն երկու ամիս էր, որ աշխատում էր կուսակցության նահանգական կոմիտեում որպես ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ։ Այժմ նա նստած էր նախագահությունում, Տոկարևի կողքին, և ուշադրությամբ լսում էր քաղաքային կուսկոնֆերանսի պատգամավորների ելույթները։ Առայժմ խոսում էր բացառապես երիտասարդությունը, որը դեռ կոմերիտմիության մեջ էր։

«Ինչպե՞ս են աճել այս տարիների ընթացքում»,— մտածում էր Սեգալը։

— Օպոզիցիոներներն արդեն քրտնել են,— ասաց նա Տոկարևին,— իսկ ծանր հրետանին դեռ գործողության մեջ չի մտցված, տրոցկիստներին երիտասարդությունն է ջախջախում։

Ամբիոն թռավ Տուֆտան։ Դահլիճում նրա հանդես գալն ընդունեցին հավանություն չտվող աղմուկով, ծիծաղի կարճ պայթյունով։ Տուֆտան շրջվեց դեպի նախագահությունը, ուզեց բողոք հայտնել իրեն այդպես դիմավորելու դեմ, բայց դահլիճում արդեն լռություն էր տիրում։

— Ինչ-որ մեկն այստեղ ինձ օդերևութաբան անվանեց։ Ահա, ընկե՛ր մեծամասնություն, ահա թե ինչպես եք դուք ծաղրում իմ քաղաքական հայացքները,— վրա տվեց նա մի շնչով։

Միահամուռ ծիծաղը ծածկեց նրա խոսքերը։ Տուֆտան զայրույթով նախագահությանը ցույց տվեց դահլիճը։

— Ինչքան էլ որ ծիծաղեք, իսկ ես էլի կասեմ, որ երիտասարդությունը ծանրաչափ է։ Լենինը մի քանի անգամ այդ մասին գրել է։

Դահլիճում վայրկենապես լռություն տիրեց։

— Ի՞նչ է գրել,— լսվեց դահլիճից։

Տուֆտան աշխուժացավ։

— Երբ հոկտեմբերյան ապստամբությունն էր նախապատրաստվում, Լենինը դիրեկտիվ տվեց, որ հավաքեն վճռական բանվորական երիտասարդությանը, զինեն նրան և նավաստիների հետ միասին նետեն ամենապատասխանատու տեղամասերը։ Ուզո՞ւմ եք, ես ձեզ կկարդամ այդ տեղը։ Ես բոլոր ցիտատները գրել եմ քարտեզի վրա։— Եվ Տուֆտան սկսեց պորտֆելը քրքրել։

— Մենք այդ գիտենք։

— Իսկ ի՞նչ է գրել Լենինը միասնականության մասին։

— Իսկ կուսակցական կարգապահությա՞ն մասին։

— Որտե՞ղ է Լենինը երիտասարդությանը հակադրել հին գվարդիային։

Տուֆտան թելը կորցրեց և այլ թեմայի անցավ։

— Լապուտինն այստեղ կարդաց Յուրենևայի նամակը։ Մենք չենք կարող պատասխանատու լինել դիսկուսիայի որոշ աննորմալությունների համար։

Շումսկու կողքին նստած Ցվետաևը կատաղությամբ շշնջաց.

— Հիմարին ուղարկեցինք, որ աստծուն աղոթի, նա ճակատը ջարդեց։

Շումսկին նույնպես ցածր ձայնով պատասխանեց.

— Այո՛։ Այս հիմարի գլուխը մեզ վերջնականապես կկործանի։

Տուֆտայի բարակ, ճչացող ձայնը շարունակում էր ականջ ծակել։

— Եթե դուք կազմակերպել եք մեծամասնության ֆրակցիա, ապա մենք էլ իրավունք ունենք կազմակերպելու փոքրամասնության ֆրակցիա։

Դահլիճում փոթորիկ բարձրացավ։

Տուֆտան խլացավ զայրագին բացականչությունների կարկուտից։

— Ի՞նչ բան է։ Նորի՞ց բոլշևիկներ ու մենշևիկներ։

— Ռկկ-ն պառլամենտ չէ։

— Սրանք աշխատում են բոլորի համար՝ Մյասնիկովից մինչև Մարտով։

Տուֆտան թևերը թափահարեց, ասես լող տալ սկսելով, և մոլեգին վրա տվեց բառերը.

— Այո՛, խմբավորումների ազատություն է պետք։ Հակառակ դեպքում մենք՝ այլ կերպ մտածողներս, ինչպես կարող ենք մեր հայացքների համար պայքարել այսպիսի կազմակերպված, կարգապահությամբ միաձույլ մեծամասնության հետ։

Դահլիճում աղմուկն աճում էր։ Պանկրատովը բարձրացավ և բղավեց։

— Թույլ տվեք նրան արտահայտվել, այդ իմանալն օգտակար է։ Տուֆտան դուրս է տալիս այն, ինչի մասին ուրիշները լռում են։

Լռություն տիրեց։ Տուֆտան հասկացավ, որ չափն անցավ։ Այժմ այդ, թերևս, չարժեր ասել։ Նրա միտքը ուրիշ կողմ թեքվեց և, իր ելույթը վերջացնելով, նա ունկնդիրների վրա բառերի կարկուտ թափեց.

— Դուք, իհարկե, կարող եք մեզ վտարել և անկյուն խոթել։ Այդ արդեն սկսվում է։ Ինձ արդեն դուրս են արել կոմերիտմիության նահանգկոմից։ Ոչինչ, շուտով կտեսնենք, թե ով էր իրավացին։— Եվ նա բեմից դահլիճ գլորվեց։

Դուբավան երկտող ստացավ Ցվետաևից.

«Միտյայ, հիմա հանդես եկ։ Ճիշտ է, դա գործը չի փոխի, մեր պարտությունն այստեղ ակնհայտ է։ Անհրաժեշտ է ուղղել Տուֆտային։ Չէ՞ որ նա հիմար է ու շաղակրատ»։

Դուբավան խոսք խնդրեց, և նրան անմիջապես ձայն տվեցին։

Երբ նա ամբիոն բարձրացավ, դահլիճում լարված լռություն տիրեց։ Օտարացման սառնություն էր փչում Դուբավայի վրա՝ ճառից առաջ տիրող այս սովորական լռությունից։ Նա չուներ այլևս այն ավյունը, որով նա հանդես էր

դալիս բջիջներում։ Կրակն օրեցօր մարում էր, և այժմ նա նման էր ջրով հանգցրած խարույկի, կծու ծխով էր պարուրվում, և այդ ծուխը հիվանդոտ ինքնասիրությունն էր, որին դիպել էր բացահայտ պատմությունն ու հին ընկերների դաժան հակահարվածը, ինչպես նաև այն, որ համառորեն չէր ցանկանում իրենց անիրավացի ճանաչել։ Նա որոշեց ծայրահեղության դիմել, թեև գիտեր, որ այդ նրան է՛լ ավելի կհեռացնի մեծամասնությունից։ Նա խոսում էր խուլ ձայնով, բայց որոշակի.

— Ես խնդրում եմ չընդհատել և ռեպլիկներով չբզկտել։ Ես ուզում եմ ամբողջությամբ շարադրել մեր դիրքը, թեև նախապես գիտեմ, որ դա անօգուտ է. դուք մեծամասնություն եք։

Երբ նա վերջացրեց, դահլիճում կարծես ռումբ պայթեց։ Աղաղակների մրրիկ պայթեց Դուբավայի գլխին։ Այտերին խիվող մտրակի հարվածների պես Դմիտրիին խարազանում էին զայրալից բացականչությունները.

— Խայտառակությո՛ւն։

— Թո՛ղ կորչեն պառակտիչները։

— Բավակա՛ն է։ Հերի՛ք ցեխ շաղ տաք։

Երբ նա իջավ ամբիոնից, հեգնական ծիծաղն ուղեկցեց Դմիտրիին, և այդ ծիծաղը սպանեց նրան։ Եթե վրդովված ու կատաղի բղավեին, դա նրան կբավարարեր։ Իսկ չէ՞ որ նրան ծաղրեցին, ինչպես այն արտիստին, որը կեղծ նոտա է վերցնում, և ձայնը խզվում է այդ նոտայի վրա։

— Խոսք ունի ընկեր Շումսկին,— ասաց նախագահողը։

Միխայլոն ոտքի ելավ։

— Ես հրաժարվում եմ իմ ելույթից։

Հետին շարքերից որոտաց Պանկրատովի բասը.

— Խոսք եմ խնդրում։

Ձայնի տեմբրից Դուբավան հասկացավ Պանկրատովի հոգեվիճակը։ Բեռնող բանվորն այդպես էր խոսում այն ժամանակ, երբ որևէ մեկը ծանրորեն վիրավորում էր նրան։ Եվ մոայլ հայացքով ուղեկցելով Իգնատի բարձր, մի քիչ կռացած կերպարանքը, որ արագորեն դեպի ամբիոն էր գնում, Դուբավան անհանգստություն զգաց։ Նա գիտեր, թե Իգնատն ինչ կասի։ Հիշեց Սոլոմենկայում Ֆրեկվա իր հանդիպումը հին ընկերների հետ, երբ տղաները մտերմական զրույցի մեջ աշխատում էին նրան ստիպել, որ կապերը խզի օպոզիցիայի հետ։ Նրա հետ էին Ցվետաևն ու Շումսկին։ Հավաքվել էին Տոկարևի մոտ։ Այնտեղ էին՝ Իգնատը, Օկունևը, Տալյան, Վոլինցևը, Զելենովան, Ստարովերովը, Արտյուխինը։ Միասնականությունը վերականգնելու այդ փորձերի նկատմամբ Դուբավան խուլ ու համր մնաց։ Զրույցի ամենաեռուն պահին նա Ցվետաևի հետ միասին հեռացավ՝ դրանով ընդգծելով, որ չի ուզում ընդունել իր հայացքների սխալ լինելը։ Շումսկին մնաց։ Այժմ նա հրաժարվեց ելույթ ունենալուց։ «Փափկամարմին ինտելիգենտ։ Նրանք սրան, իհարկե, հակառակ պրոպագանդա են արել»,— չարությամբ մտածում էր Դուբավան։ Այս անգութ պայքարում նա կորցրեց իր բոլոր ընկերներին։ Կոմհամալսարանում խզվեց վաղեմի մտերմությունը Ժարկիի հետ, որը բյուրոյում սուր ելույթ ունեցավ «քառասունվեցի» հայտարարության դեմ։ Հետագայում, երբ տարաձայնությունները սրվեցին, նա դադարեց Ժարկիի հետ խոսել։ Մի քանի անգամ նա Ժարկիին տեսել է իր բնակարանում՝ Աննայի մոտ։ Աննա Բորխարտն արդեն մի տարի էր, որ նրա կինն էր։ Նա և Աննան առանձին սենյակներ ունեին։ Դուբավան գտնում էր, որ իր լարված հարաբերություններն Աննայի հետ, որը չէր բաժանում ամուսնու հայացքները, օրեցօր վատթարանում են նաև այն պատճառով, որ Ժարկին հաճախակի հանդիպող հյուր է դարձել Աննայի մոտ։ Այստեղ խանդ չկար, բայց մտերմությունն Աննայի և Ժարկիի միջև, որի հետ Դուբավան չէր խոսում, նրան գրգռում էր։ Նա ասաց այդ մասին Աննային։ Աղմկոտ խոսակցություն տեղի ունեցավ, և նրանց հարաբերությունները է՛լ ավելի լարված դարձան։ Դուբավան եկավ այստեղ՝ այդ մասին նրան չհայտնելով։

Նրա մտքերի արագ ընթացքն ընդհատեց Իգնատը։ Նա սկսում էր իր ճառը։

— Ընկերնե՛ր,— հաստատուն կերպով արտասանեց Պանկրատովն այդ բառը։ Նա բարձրացավ ամբիոն և կանգնեց ուղղակի բեմեզրին։— Ընկերնե՛ր, ինն օր մենք լսեցինք օպոզիցիոներների ելույթները։ Ես ուղղակի կասեմ, նրանք ելույթ էին ունենում ոչ թե որպես զինակիցներ, հեղափոխական մարտիկներ, մեր դասակարգի ու պայքարի ըն-

կերներ, նրանց ելույթները խորապես թշնամական էին, անհաշտ, ոխակալ ու զրպարտչական։ Այո՛, ընկերնե՛ր, զրպարտչական։ Մեզ՝ բոլշևիկներիս, փորձում էին ներկայացնել որպես կուսակցության մեջ մահակի ռեժիմի կողմնակիցների, որպես մարդկանց, որոնք դավաճանում են իրենց դասակարգի ու հեղափոխության շահերին։ Մեր կուսակցության լավագույն, ամենափորձված ջոկատին, փառապանծ հին բոլշևիկյան գվարդիային, նրանց, որոնք կոփել, դաստիարակել են ՌԿԿ-ն, նրանց, որոնց բանտերում տանջել է ցարական բռնակալությունը, նրանց, որոնք ընկեր Լենինի գլխավորությամբ անողոք պայքար են տարել համաշխարհային մենշևիզմի և Տրոցկու դեմ, նրանց փորձեցին ներկայացնել որպես կուսակցական բյուրոկրատիզմի ներկայացուցիչների։ Ո՞վ կարող էր ասել այսպիսի խոսքեր, եթե ոչ թշնամին։ Կուսակցությունը և նրա ապարատը մի՞թե ամբողջություն չեն։ Ինչի՞ նման է սա, ասացե՛ք։ Ինչպե՞ս կանվանեիք նրանց, ովքեր երիտասարդ կարմիրբանակայիններին կգրգռեին հրամանատարների ու կոմիսարների դեմ, շտաբի դեմ, և այդ բոլորն այն ժամանակ, երբ ջոկատը թշնամիներով է շրջապատված։ Ի՞նչ է, եթե այսօր փականագործ եմ, ապա ես, տրոցկիստների կարծիքով, դեռ կարող եմ «կարգին» համարվել, իսկ եթե վաղը ես կոմիտեի քարտուղար դառնում, ապա ես արդեն «բյուրոկրատ» և «ապարատայի՞ն» եմ։ Զարմանալի չէ՞, արդյոք, ընկերներ, որ բյուրոկրատիզմի դեմ, դեմոկրատիայի համար պայքարող ծպոզիցիոներների մեջ են, օրինակ, այնպիսի դեմքեր, ինչպիսին Տուֆտան է, որին վերջերս աշխատանքից հանեցին բյուրոկրատիզմի համար։ Ցվետաևը, որը սոլոմենցիներին լավ է հայտնի իր «դեմոկրատիայով», կամ Աֆանասևը, որին նահանգական կոմիտեն երեք անգամ հանել է աշխատանքից՝ Պոդոլսկի շրջանում հրամայելու և ճնշելու համար։ Բայց չէ՞ որ փաստ է, որ կուսակցության դեմ պայքարի մեջ համախմբվել են բոլոր նրանք, ում կուսակցությունը հարվածել է։ Տրոցկու «բոլշևիզմի» մասին թող հին բոլշևիկները խոսեն։ Անհրաժեշտ է, որ երիտասարդությունն իմանա բոլշևիկների դեմ Տրոցկու պայքարի պատմությունը, նրա անընդհատ անցումները մի բանակից մյուսը, Օպոզիցիայի դեմ պայքարը համախմբեց մեր շարքերը, գաղափարապես ամրապնդեց երիտասարդությանը։ Մանրբուրժուական հոսանքների դեմ պայքարում կոփվեցին բոլշևիկյան կուսակցությունն ու կոմերիտմիությունը։ Օպոզիցիայի հիստերիկ պանկիյորները մեզ տնտեսական ու քաղաքական լիակատար կրախ են գուշակում։ Մեր վաղն այդ մարգարեության արժեքը ցույց կտա։ Նրանք պահանջում են մեր ծերունիներին, օրինակ՝ Տոկարևին, ուղարկել դազգահի վրա աշխատելու, իսկ նրանց տեղը դնել Դուբավայի նման պտուտակները թուլացած ծանրաչափերին, որը կուսակցության դեմ պայքարն ուզում է ներկայացնել որպես հերոսություն։ Ոչ, ընկերնե՛ր, մենք այդ չենք անի։ Ծերունիները հերթափոխ կստանան, բայց նրանց կփոխարինեն ոչ նրանք, որոնք ամեն մի դժվարության դեպքում կատաղորեն հարձակում են գործում կուսակցության գծի վրա։ Մենք թույլ չենք տա քայքայել մեծ կուսակցության միասնությունը։ Երբեք չեն պառակտվի հին ու երիտասարդ գվարդիաները։ Լենինի դրոշի տակ անհաշտ պայքար մղելով մանրբուրժուական հոսանքների դեմ՝ մենք կհասնենք հաղթանակի։

Պանկրատովը իջավ ամբիոնից։ Նրան կատաղի թափով ծափահարեցին։

Մյուս օրը մոտ տասը մարդ հավաքվեց Տուֆտայի մոտ։ Դուբավան ասաց.

— Ես և Շումսկին այսօր խարկով ենք մեկնում։ Այստեղ մենք այլևս անելիք չունենք։ Աշխատեք չտրոհվել։ Մեզ մնում է միայն սպասել, թե դեպքերն ինչպես կընթանան։ Պարզ է, որ համառուսական կոնֆերանսը մեզ կդատապարտի, բայց ես կարծում եմ, որ ռեպրեսիաների սպասելը վաղաժամ է։ Մեծամասնությունը որոշել է մեզ մի անգամ էլ ստուգել աշխատանքի մեջ։ Այժմ բացահայտ պայքար շարունակելը, մասնավորապես կոնֆերանսից հետո, նշանակում է կուսակցությունից դուրս թռչել, մի բան, որ մեր գործողությունների պլանի մեջ չի մտնում։ Դժվար է դատել, թե հետագայում ինչ կլինի։ Կարծես թե էլ ասելու բան չկա։— Եվ Դուբավան ոտքի ելավ՝ պատրաստվելով մեկնել։

Նիհար, բարակ շրթունքներով Ստարովերովը նույնպես ոտքի ելավ։

— Ես քեզ չեմ հասկանում, Միտյա՛յ,— ասաց նա մի քիչ թոթովախոսելով ու կակազելով։— Ուրեմն ի՞նչ, կոնֆերանսի որոշումները մեզ համար պարտադիր չե՞ն։

Նրան խիստ ձայնով ընդհատեց Ցվետաևը.

— Չևականորեն պարտադիր են, հակառակ դեպքում կուստոմսդ կխլեն։ Բայց մենք դեռ կտեսնենք, թե ինչ քամի կփչի, իսկ այժմ ցրվենք։

Տուֆտան անհանգիստ շարժվեց աթոռի վրա։ Շումսկին, մռայլ ու գունատ, անքուն գիշերներից աչքերի շուրջը կապույտ շրջանակներով, նստել էր լուսամուտի մոտ և եղունգներն էր կրծոտում։ Ցվետաևի վերջին խոսքերի ժամանակ նա տոկվեց իր տանջալի զբաղմունքից և շրջվեց դեպի ժողովը։

— Ես այդպիսի կոմբինացիաներին դեմ եմ,— ասաց նա խուլ ձայնով, հանկարծ գրգռվելով։— Անձամբ ես կարծում եմ, որ կոնֆերանսի որոշումները մեզ համար պարտադիր են։ Մենք մեր համոզմունքները պաշտպանեցինք, բայց կոնֆերանսի որոշումներին պետք է ենթարկվենք։

Ստարովերովը հավանություն տվող հայացքով նայեց նրան։

— Ես ինքս էլ այդ էի ուզում ասել,— շշնջաց նա։

Դուբավան սևեռուն հայացքը հառեց Շումսկուն և դիտավորյալ ծաղրանքով ատամների արանքից նետեց.

— Քեզ առհասարակ ոչ ոք ոչինչ չի առաջարկում։ Դու դեռ նահանգական կոնֆերանսում «մեղա գալու» հնարավորություն ունես։

Շումսկին ոտքի ցատկեց։

— Այդ ի՞նչ տոն է, Դմիտրի։ Ես ուզեցի կասեմ, որ խոսքերն ինձ քեզանից հրում են և սոսկում են խորհել երեկվա դիրքավորումների մասին։

Դուբավան ձեռքը թափահարեց.

— Քեզ միայն այդ է մնում։ Գնա մեղա եկ, քանի դեռ ուշ չէ։

Եվ Դուբավան, հրաժեշտ տալով, ձեռքը մեկնեց Տուֆտային և մյուսներին։

Նրա հետևից շուտով գնացին նաև Շումսկին ու Ստարովերովը։

Սառցային ցրտությամբ նշանավորեց իր մուտքը պատմության մեջ հազար ինը հարյուր քսանչորս թիվը։ Հունվարը մոլեգնեց ձյունածածկ երկրի վրա և իր երկրորդ կեսից ոռնաց մրրիկներով ու երկարատև բուքով։

Հարավարևմտյան երկաթուղիներում ձյունը փակել էր ճանապարհները։ Մարդիկ կովում էին գազանացած տարերքի դեմ։ Ձյուն մաքրող մեքենաների պողպատե պրոպելլերները խրվում էին ձյան սարերի մեջ և ճանապարհ բացում գնացքների համար։ Սառնամանիքից ու ձյունախառն մրրիկից կտրտվում էին սառցապատված հեռագրալարերը, քսան գծից աշխատում էին միայն երեքը՝ հնդեվրոպական հեռագրագիծը և ուղիղ հեռագրալարերի երկու գծեր։

Առաջին Շեպետովկա կայարանի հեռագրատան սենյակում մորզեի երեք ապարատները չեն ընդհատում իրենց անդադրում զրույցը, որ միայն փորձված ականջին է հասկանալի։

Հեռագրուհիները երիտասարդ են, ծառայության օրից նրանց տկտկացրած ժապավենի երկարությունը քսան կիլոմետրից ավելի չի լինի, մինչդեռ նրանց կոլեգա ծերուկն արդեն կիլոմետրերի երրորդ հարյուրակն էր սկսում։ Ծերուկը նրանց նման չի կարդում ժապավենները, ճակատը չի կնճռոտվում դժվարին տառերն ու նախադասությունները շաղկապելիս։ Նա բլանկի վրա գրում է բառը բառի հետևից՝ ականջ դնելով ապարատի տկտկոցին։ Նա լսողությամբ է ընդունում. «Բոլորի՞ն, բոլորի՞ն, բոլորի՞ն»։

Գրի առնելով հեռագիրը՝ խորհում է. «Հավանորեն նորից ձյան կիտվածքների դեմ պայքարելու մասին շրջաբերական է»։ Լուսամուտից այն կողմ բուք է, քամին բռերով ձյուն է խփում ապակիներին։ Հեռագրիչին թվաց, թե ինչ-որ մեկը լուսամուտը թակեց, նա գլուխը շրջեց և ակամա հիացավ ապակիների սառցե նկարների գեղեցկությամբ։ Մարդկային

ոչ մի ձեռք չէր կարող այդ տարօրինակ տերևների ու ցողունների նրբագույն գծանկարը անել։

Այդ տեսարանով հրապուրված՝ նա դադարեց լսել ապարատի հաղորդածը, և երբ հայացքը հեռացրեց լուսամուտից, ձեռքը վերցրեց ժապավենը, որպեսզի կարդա բաց թողած բառերը։

Ապարատը հաղորդում էր.

«Հունվարի քսանմեկին, ժամը վեցն անց հիսուն րոպեին...»։

Հեռագրիչը արագորեն գրի առավ կարդացածը և ժապավենը նետելով, ձեռքերն ափին հենած՝ սկսեց լսել։

«Երեկ Գորկայում վախճանվեց...»։ Հեռագրիչը դանդաղորեն գրում էր։ Ինչքա՞ն էր նա իր կյանքում բերկրալի և ողբերգական հաղորդումներ լսել, առաջինն էր իմանում ուրիշի վիշտն ու երջանկությունը։ Վաղուց արդեն դադարել էր մտածել ժլատ, կցկտուր նախադասությունների իմաստի մասին, ականջով որսում էր դրանք և մեխանիկորեն փոխադրում թղթին՝ առանց նրանց բովանդակության մասին խորհելու։

Ահա այժմ էլ ինչ-որ մեկը մեռել է, ինչ-որ մեկին հաղորդում են այդ մասին։ Հեռագրիչը մոռացել էր վերնագրի մասին. «Բոլորի՞ն, բոլորի՞ն, բոլորի՞ն»։ Ապարատը տրկտրկացնում է «Վ-լ-ա-դ-ի-մ-ի-ր, Ի-լ-յ-ի-չ», մուրճիկի տրկտրկոցը ծերուկ հեռագրիչը տառերի է վերածում։ Նա նրստած է հանգիստ, մի քիչ հոգնած տեսքով։ Ինչ-որ մի տեղ վախճանվել է ինչ-որ Վլադիմիր Իլյիչ, ինչ-որ մեկին ինքն այսօր կգրի ողբերգական բառեր, ինչ-որ մեկը հուսահատությունից ու վշտից կհեկեկա, իսկ իր համար այդ բոլորն օտար է, նա կողմնակի վկա է միայն։ Ապարատը տկտկացնում է՝ կետ, գիծ, նորից կետեր, նորից գիծ, իսկ նա ծանոթ հնչյուններից արդեն կազմեց առաջին տառը և գրանցեց այն բլանկի վրա, դա «Լ» տառն է։ Դրանից հետո նա գրեց երկրորդը՝ «Ե», նրա կողքին ջանսիրաբար գծեց «Ն», երկու անգամ ընդգծեց ռուսերեն Н տառի ձողիկների միջի գիծը, անմիջապես նրան միացրեց «Ի» և արդեն ինքնաբերաբար որսաց վերջին «Ն»-ն։

Ապարատը ընդմիջում էր տկտկացնում, և հեռագրիչի հայացքը մի տասներորդական վայրկյան կանգ առավ իր գրած բառի վրա.

«ԼԵՆԻՆ»։

Ապարատը շարունակում էր տկտկացնել, բայց պատահաբար ծանոթ անվան դեմ առնելով՝ միտքը նորից դեպի նա վերադարձավ։ Հեռագրիչը մի անգամ էլ նայեց վերջին բառին՝ «ԼԵՆԻՆ»։ Ի՞նչ, Լենի՞ն։ Աչքի ոսպնյակն իր հեռանկարում արտացոլեց հեռագրի ամբողջ տեքստը։ Մի քանի վայրկյան հեռագրիչը նայում էր թերթիկին և երեսուներկու տարվա աշխատանքի ընթացքում առաջին անգամ գրածին չհավատաց։

Երեք անգամ նա արագորեն աչքի անցկացրեց տողերը, բայց բառերը համառորեն կրկնվում էին. «Վախճանվեց Վլադիմիր Իլյիչ Լենինը»։ Ծերունին ցատկեց ոտքի, բարձրացրեց ժապավենի պարուրաձև գալարը, հայացքը հառեց դրան։ Երկումետրանի շերտիկը հաստատեց այն, ինչին նա չէր կարողանում հավատալ։ Նա դեպի ընկերուհիները շրջեց իր մեռելագույն դեմքը, և նրանք լսեցին ծերունու վախեցած ճիչը.

— Լենինը մեռել է։

Մեծ կորստյան բոթը ապարատների սենյակի բաց դռնով դուրս սողաց, մրրկահողմի արագությամբ պտտվեց կայարանում, դուրս նետվեց դեպի ձյունաբուքը, պտույտ եկավ գծերով ու սյաքներով և միջանցիկ սառնաշունչ քամու պես ներս խուժեց դեպոյի՝ երկաթով կռանված կիսաբաց դարպասից։

Դեպոյում նորոգման առաջին խրամատում մի շոգեքարշ էր կանգնած, որին բուժում էր թեթև նորոգման բրիգադը։ Ծերունի Պոլիտուլսկին ինքն էր մտել խրամատը, իր շոգեքարշի փորի տակ և փականագործներին ցույց էր տալիս հիվանդ տեղերը։ Զախար Բրուզժակը Արտյոմի հետ միասին հավասարեցնում էր կրակակալների ծռված հյուսվածքները։ Նա ցանցը բռնել էր ղնդանի վրա և տրամադրել Արտյոմի մուրճի հարվածներին։

Զախարը վերջին տարիները ծերացել էր, ապրած, դառնությունները խոր ծալք էին առաջացրել նրա ճակատին, իսկ քունքերն արծաթաղօծվել էին։ Մեջքը կռացել էր, և խորն ընկած աչքերին մթնշաղն էր իջել։

Դեպոյի դռան լուսավոր ճեղքում երևաց և անցավ մի մարդ, և իրիկնադեմի ստվերները կլանեցին նրան։ Երկաթին սրվող հարվածները խլացրին առաջին աղաղակը, բայց երբ մարդը վազեց հասավ շոգեքարշի մոտի մարդկանց, բարձրացրած մուրճն Արտյոմն այլևս չկարողացավ իջեցնել.

— Ընկերնե՛ր, Լենի՛նն է մեռել։

Մուրճը դանդաղորեն սահեց ուսից, և Արտյոմի ձեռքն այն անշշուկ իջեցրեց ցեմենտե հատակին։

— Ի՞նչ ասացիր։— Արտյոմի ձեռքն աքցանի պես բռնեց սարսափելի բոթը բերող մարդու կիսամաշտակի կաշին։

Իսկ սա, ձյունաթաթախ, ծանր շնչելով, կրկնեց արդեն խուլ և խզվող ձայնով.

— Այո՛, ընկերնե՛ր, Լենի՛նն է մեռել։

Եվ որովհետև մարդն արդեն չէր բղավում, Արտյոմը հասկացավ հոգեմաշ ճշմարտությունը և նոր միայն տեսավ մարդու դեմքը. դա կուսկոլեկտիվի քարտուղարն էր։

Խրամատներից դուրս էին գալիս մարդիկ, լուռ լսում էին այն մարդու մահվան մասին, ում անունը գիտեր ամբողջ աշխարհը։

Իսկ դարպասի մոտ բոլորին հարկադրելով ցնցվել՝ մոընչաց շոգեքարշը։ Նրան կայարանի ծայրից արձագանքեց մի ուրիշը, երրորդը... Նրանց հզոր և տագնապով լեցուն կանչին միացավ էլեկտրակայանի բարձր ու ականջ ծակող սուլոցը, որ շրապնելի թռիչքի էր նման։ Պղնձե մաքուր գոնգոցով նրանց խլացրեց արագընթաց ու գեղեցիկ «Ս»-ն՝ կիև մեկնելու պատրաստ մարդատար գնացքի շոգեքարշը։

Անսպասելիությունից ցնցվեց պետքաղվարչության գործակալը, երբ Շեպետովկա—Վարշավա ուղիղ հաղորդակցության լեհական շոգեքարշի մեքենավարը, իմանալով տագնապալի սուլոցների պատճառը, մի բոպե ականջ դրեց, հետո դանդաղորեն ձեռքը բարձրացրեց և դեպի ներքև ձգեց այն շղթան, որը բաց էր անում շչակի կափարիչը։ Նա գիտեր, որ սուլում էր վերջին անգամ, որ նա՝ այլևս այս մեքենայի վրա չի ծառայի, բայց նրա ձեռքը շղթայից չէր պոկվում, և նրա շոգեքարշի մանչյունը կուպեների փափուկ բազմոցներից բարձրացնում էր լեհական վախեցած թղթատարներին ու դիվանագետներին։

Դեպոն լցվում էր մարդկանցով։ Նրանք լցվում էին բոլոր դարպասներից, և երբ վիթխարի շենքը լիքը լցվեց, սգավոր լռության մեջ հնչեցին առաջին բառերը։

Խոսում էր կուսակցության Շեպետովկայի օկրուգային կոմիտեի քարտուղար, հին բոլշևիկ Շարաբրինը.

— Ընկերնե՛ր, մեռավ համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ Լենինը։ Կուսակցությունը անդառնալի կորուստ կրեց, մեռավ նա, ով ստեղծեց և թշնամիների նկատմամբ անհաշտության ոգով դաստիարակեց բոլշևիկյան կուսակցությունը... Կուսակցության ու դասակարգի առաջնորդի մահը պրոլետարիատի լավագույն զավակներին մեր շարքերն է կանչում...

Սգո քայլերգի հնչյուններ, հարյուրավոր մերկացած գլուխներ, և Արտյոմը, որ վերջին տասնհինգ տարում լաց չէր եղել, զգաց, թե ինչպես կծիկը խեղդում է կոկորդը, և հզոր ուսերը ցնցվեցին։

Թվում էր, թե երկաթուղու ակումբի պատերը մարդկային զանգվածի ճնշմանը չեն դիմանա։ Դրսում դաժան սառնամանիք է, ձյունով և սառցե ասեղներով ծածկված երկու ճյուղատարած եղևնիներ են մուտքի մոտ, բայց դահլիճում հոլանդական լավ վառված վառարանից ու վեց հարյուր մարդու շնչառությունից, որոնք ցանկացել են մասնակցել կուսկոլեկտիվի սգո նիստին, անտանելի տոթ է։

Դահլիճում սովորական աղմուկն ու խոսակցությունը չկա։ Մեծ վիշտը ձայները խլացրել է, մարդիկ խոսակցում են ցածր ձայնով, և հարյուրավոր աչքերում վշտալի տագնապ է կարդացվում։ Թվում էր, թե այստեղ հավաքվել է այն նավի անձնակազմը, որը կորցրել է իր փորձված շտուրմանին, և որին փոթորիկը ծովն է քշել։

Նույնպես անձայն՝ նախագահության սեղանի մոտ իրենց տեղերը գրավեցին բյուրոյի անդամները։ Թիկնեղ Սիրոտենկոն զգուշությամբ բարձրացրեց զանգը, մի թեթև զնգաց-

րեց և նորից սեղանին դրեց։ Դա արդեն բավական էր, և ճնշող լռությունն աստիճանաբար թագավորեց դահլիճում։

Զեկուցումից անմիջապես հետո սեղանի մոտից բարձրացավ կոլեկտիվի պատասխանատու քարտուղար Սիրոտենկոն։ Այն, ինչ նա ասաց, ոչ ոքի չզարմացրեց, թեև սգո նիստում դա արտակարգ բան էր։ Իսկ Սիրոտենկոն ասաց.

— Մի խումբ բանվորներ խնդրում են, որ նիստը քննի նրանց դիմումը, որ ստորագրել են երեսունյոթ ընկերներ։

Եվ նա կարդաց դիմումը.

> Հարավարևմտյան երկաթուղու Շեպետովկա կայարանի բոլշևիկների կոմունիստական կուսակցության երկաթուղային կոլեկտիվին։
>
> Առաջնորդի մահը մեզ բոլշևիկների շարքը կոչեց, և մենք խնդրում ենք՝ այսօրվա նիստում ստուգել մեզ և ընդունել Լենինի կուսակցության մեջ։

Այս տողերին հետևում էին կարճ բառերով ստորագրությունների երկու սյունակ։

Սիրոտենկոն կարդում էր այդ ստորագրությունները և յուրաքանչյուրից հետո մի քանի վայրկյան կանգ առնում, որպեսզի դահլիճում հավաքվածները կարողանային հիշել ծանոթ անունները։

— Պոլիտովսկի Ստանիսլավ Զիգմունդովիչ, շոգեքարշի մեքենավար, երեսունվեց տարվա արտադրական ստաժ։

Դահլիճով հավանության բզզոց անցավ։

— Կորշագին Արտյոմ Անդրեևիչ, փականագործ, տասնութ տարվա արտադրական ստաժ։

— Բրուզժակ Զախար Ֆիլիպովիչ, շոգեքարշի մեքենավար, քսանմեկ տարվա արտադրական ստաժ։

Դահլիճում բզզոցն աճում էր, իսկ սեղանի մոտ մարդը շարունակում էր ազգանուններ թվել, և դահլիճը լսում էր երկաթուղու և մազութի աշխարհի կադրային բանվորների անունները։

Դահլիճում լիակատար լռություն տիրեց, երբ սեղանին մոտեցավ նա, ով առաջինն էր դրել իր ստորագրությունը։

Ծերունի Պոլիտովսկին չէր կարող չհուզվել, երբ պատմում էր իր կյանքի պատմությունը։

— ...էլ ինչ ասեմ, ընկերնե՛ր։ Հին ժամանակ բանվոր մարդու կյանքը հայտնի է, թե ինչպիսին էր։ Ստրկության մեջ էր ապրում և ծերության օրով մուրացկանի պես կորչում։ Դե ինչ, խոստովանում եմ, երբ հեղափոխությունը վրա հասավ, ես ինձ արդեն ծեր էի համարում։ Ընտանիքն էր ուսերս ճնշում, և ես դեպի կուսակցությունը տանող ուղին չտեսա։ Թեև կռվի մեջ թշնամուն երբեք չեմ օգնել, բայց կռվի էլ հազվադեպ էի բռնվում։ Ինը հարյուր հինգին Վարշավայի արհեստանոցներում գործադուլային կոմիտեում էի և բոլշևիկների հետ էի գնում։ Երիտասարդ էի այն ժամանակ և կռվելու մեջ էլ տաք։ Հինը հիշել չարժե։ Իլյիչի մահն ուղղակի սրտիս հարվածեց, ընդմիշտ կորցրեցինք մեր բարեկամին ու հոգածուին, և ես ծերության մասին այլևս չեմ կարող խոսել... Թող ուրիշ մեկն ավելի գեղեցիկ ասի, ես խոսքի վարպետ չեմ։ Մի բան եմ միայն կրկնում. իմ ճանապարհը բոլշևիկների հետ է և ոչ ուրիշ կերպ։

Մեքենավարի ալեհեր գլուխը համառորեն տարուբերվեց, և սպիտակած հոնքերի տակից հաստատուն ու անթարթ հայացքը սևեռվեց դահլիճին, որից նա կարծես որոշում էր սպասում։

Ոչ մի ձեռք չբարձրացավ մերժելու այդ ցածրահասակ, ալեհեր գլխով մարդուն, և ոչ ոք ձեռնպահ չմնաց քվեարկության ժամանակ, երբ բյուրոն խնդրեց, որ անկուսակցականներն էլ ասեն իրենց խոսքը։

Պոլիտովսկին սեղանից հեռացավ որպես կոմունիստ։

Դահլիճում ամեն մեկն էլ հասկանում էր, որ այժմ արտակարգ բան է տեղի ունենում։ Այնտեղ, ուր հենց նոր մեքենավարն էր կանգնած, արդեն բարձրանում էր Արտյոմը՝ բարձրահասակ, թիկնեղ։ Փականագործը չզիտեր, թե ուր խցկեր իր երկար ձեռքերը և նրանցով սեղմում էր ականջակալավոր գլխարկը։ Կրծքածալերը մաշված ոչխարենու կիսամուշտակը բաց էր, իսկ զինվորական գորշ գիմնաստյորկայի օձիքը կանոնավոր կոճկված երկու պղնձե կոճակներով, որը փականագործի կերպարանքը դարձնում էր տոնականորեն մաքուր։ Արտյոմը դեմքը դեպի դահլիճը դարձրեց և անցողակի որսաց կանացի ծանոթ մի դեմք. կարի արհեստանոցից եկած յուրայինների մեջ նստած էր

Գալինան՝ քարտաշի աղջիկը։ Նա ժպտաց Արտյոմին ներող ժպիտով, այդ ժպիտի մեջ հավանություն կար և էլի ինչ-որ մինչև վերջ չասված, շրթունքների անկյուններում թաքցրած բան։

— Պատմիր կենսագրությունդ, Արտյո՛մ,— լսեց փականագործը Սիրուտենկոյի ձայնը։

Դժվարությամբ սկսեց իր պատմությունն ավագ Կորչագինը, որը չէր վարժվել մեծ ժողովներում խոսելուն։ Այժմ միայն զգաց, որ չի կարող հաղորդել այն բոլորն, ինչ կուտակել է կյանքի ընթացքում։ Խոսքերը դժվար էին շաղկապվում, հուզմունքն էլ էր խանգարում խոսել։ Երբեք նա նման բան չէր զգացել։ Նա որոշակի գիտակցում էր, որ իր կյանքը կտրուկ բեկում է կատարում, որ նա՝ Արտյոմը, այժմ վերջին քայլն է կատարում դեպի այն, ինչը կջերմացնի և կիմաստավորի նրա հետամնաց ու մռայլ գոյությունը։

— Չորսն էինք մորս խնամքի տակ,— սկսեց Արտյոմը։

Դահլիճում լռություն է։ Վեց հարյուր հոգին ուշադիր լսում են բարձրահասակ, արծվաքիթ, հոնքերի սև ծոպերի տակ թաքնված աչքերով բանվորին։

— Մայրս տերերի համար խոհարարություն էր անում։ Հորս քիչ եմ հիշում, մորս ու նրա հարաբերությունները լավ չէին։ Նա պետք եղածից ավելի էր կոկորդը թրջում։ Մենք մորս հետ էինք ապրում։ Նրա ուժից վեր էր այդքան բերան կերակրելը։ Տերերը նրան ամիսը չորս ռուբլի էին տալիս և կերակրում էին, ու նա լուսաբացից մինչև ուշ գիշեր մեջք էր ծռում։ Երկու ձմեռ բախտ ունեցա տարրական դպրոց հաճախելու, ինձ գրել ու կարդալ սովորեցրին, իսկ երբ տասը տարիս լրանալուն մոտեցավ, մայրս էլ ուրիշ փրկություն չուներ. տարավ ինձ փականագործի արհեստանոց, տվեց որպես աշակերտ սովորելու։ Երեք տարի առանց ռոճիկի, մի փոր հացով... Արհեստանոցի տերը գերմանացի էր, Ֆերստեր ազգանունով։ Փոքրությանս պատճառով նա ինձ չէր ուզում վերցնել, բայց ես առողջ տղա էի, և մայրս երկու տարի ավելի ասաց։ Երեք տարի մնացի այդ գերմանացու մոտ։ Ինձ արհեստ չէին սովորեցնում, այլ տնտեսության գործերով դեսուդեն էին քշում կամ օղու ուղարկում։ Խմում էր ուշքը կորցնելու աստիճան... Քշում էր և՛ ածուխի, և՛ երկաթի։

Տիրուհիս ինձ իր ծառան էր դարձրել. ես նրա կաթսաներն էի քարշ տալիս, կարտոֆիլ մաքրում։ Ամեն մեկն էլ ինձ մի քացի տալու հնար գտնում էր, երբեմն բոլորովին առանց պատճառի, հենց այնպես, սովորության համաձայն. որևէ բանով տիրուհուս չէի գոհացնում, ամուսնու հարբեցողության պատճառով նա բոլորի դեմ չարացած էր լինում, դնչիս հասցնում էր մի երկու անգամ։ Նրա ձեռքից փողոց էի փախչում, բայց դե ո՞ւր գնաս, ո՞ւմ գանգատվես։ Մայրս քառասուն վերստի վրա էր, հետո նրա մոտ էլ ապաստան չէի գտնի... Արհեստանոցներում ավելի լավ չէր։ Այնտեղ ամեն բան մեր տիրոջ եղբայրն էր կառավարում։ Այդ սողունը սիրում էր իմ գլխին օյիններ խաղալ։ «Տուր,— ասում էր,— այ էն տափօղակը»,— և ցույց էր տալիս գետինը, այն անկյունը, ուր դարբնոցի քուրան էր։ Ես նետվում էի այնտեղ, ձեռքով վերցնում տափօղակը, իսկ նա դա հենց նոր է կոել և քուրայից հանել։ Գետնին ընկած նա սև գույն ուներ, բայց վերցնում էի թե չէ, մատներս մինչև ոսկորն այրում էին։ Դուցավից բղավում ես, իսկ նա խրխնջում է, հռհռում։ Էդպես տանջվելուն էլ չդիմացա, փախա մորս մոտ։ Իսկ նա չգիտի, թե ուր տեղավորի ինձ։ Նորից գերմանացու մոտ տարավ, տանում է ու լաց լինում։ Երրորդ տարին սկսեցին փականագործությունից ինչ-որ բաներ սովորեցնել, իսկ դունչս ջարդելը շարունակում էին։ Ես նորից փախա, գնացի Ստարոկոնստանտինով։ Այդ քաղաքում վարձվեցի երշիկի արհեստանոցում և շան կյանք վարեցի այնտեղ, մեկուկես տարուց ավելի աղիքներ էի լվանում։ Մեր տերն իր ձեռնարկությունը տանուլ տվեց, չորս ամսվա մեր աշխատավարձից ոչ մի գրոշ չվճարեց և ինչ-որ տեղ փախավ։ Էդ հետնախորշից էսպես դուրս պրծա։ Նստեցի գնացք, Ժմերինկայում ցած իջա և գնացի աշխատանք որոնելու։ Շնորհակալ եմ դեպոյի մի բանվորից, նա իմ դրության մեջ մտավ։ Իմացավ, որ ես փականագործությունից քիչումիչ հասկանում եմ, զբաղվեց ինձանով, իշխանավորների մոտ միջնորդեց ինձ համար, իբր թե եղբորորդին եմ։ Հասակիս նայելով՝ ինձ տասնյոթ տարեկան հաստատեցին, և ես դարձա փականագործի աշակերտ։ Այստեղ ես իններորդ տարին է, ինչ աշխատում եմ։

Ահա իմ նախկին կյանքի մասին, իսկ այստեղի կյանքս բոլորդ գիտեք։

Արտյոմը գլխարկով ճակատը սրբեց և խորը շունչ քաշեց։ Հարկավոր էր ասել նաև ամենագլխավորը, իր համար ամենածանրը, չսպասելով որևէ մեկի հարցին։ Եվ թանձր հոնքերն է՛լ ավելի խոժոռելով՝ նա շարունակեց իր պատմությունը.

— Ամեն մեկն էլ ինձ կարող է հարցնել՝ ինչո՞ւ ես բոլշևիկների շարքում չեմ դեռ այն ժամանակվանից, երբ կրակը բորբոքվեց։ Ի՞նչ պատասխան տամ դրան։ Չէ որ ծերությունը դեռ հեռու է ինձանից, և ահա այսօր միայն գտա իմ ճանապարհը։ Ի՞նչ պիտի թաքցնեմ։ Ցնկատեցինք մենք այդ ճանապարհը, դեռ տասնութ թվին, երբ գերմանացու դեմ էինք գործադուլ անում, պիտի սկսեինք։ Ժուխրայը՝ նավաստին, շատ անգամ է մեզ հետ խոսել։ Քսան թվին միայն ես հրացան վերցրի։ Խառնաշփոթը վերջացավ, սպիտակներին Սև ծովը թափեցինք, մենք ետ վերադարձանք։ Էստեղ էլ ընտանիք, երեխաներ... Բռնվեցի ես տնային գործերով։ Բայց երբ զոհվեց մեր ընկեր Լենինը, և հուսակցությունը կոչ արեց, նայեցի ես իմ կյանքին և հասկացա, թե այնտեղ ինչն է պակասում։ Մեր իշխանությունը պաշտպանելը քիչ է, հարկավոր է ամբողջ ընտանիքով Լենինին փոխարինել, որպեսզի սովետական իշխանությունը երկաթե սարի պես կանգնի։ Մենք պետք է բոլշևիկներ դառնանք. չէ՞ որ կուսակցությունը մերն է։

Փականագործը վերջացրեց պարզ, բայց խորունկ անկեղծությամբ։ Իր ճառի անսովոր ոճի համար շփոթվելով, վերջացրեց, և կարծես ուսերից մի բեռ ընկավ, ամբողջ հասակով մեկ ուղղվեց և հարցերի սպասեց։

— Գուցե որևէ մեկը ինչ-որ բանի մասին հարցնե՞լ է ուզում,— լռությունը խզեց Սիրոտենկոն։

Մարդկանց շարքերը շարժվեցին, բայց դահլիճից անմիջապես չպատասխանեցին։ Բզեզի պես սև մի հնոցապան, որ ժողովի էր եկել ուղղակի շոգեքարշից, վճռական տոնով ասաց.

— Ի՞նչ հարցնենք։ Մենք նրան չե՞նք ճանաչում, ինչ է։ Ուղեգիր տալ նրան և վերջ։

Թիկնավետ, շոգից ու լարվածությունից կարմրած դարբին Գիլյական ցրտահարված ձայնով խոխոջացրեց.

— Էդպիսին ճամփից չի շեղվի, ամուր կլինի ընկերը։ Քվեարկիր, Սիրոտենկո։

Հետին շարքերում, ուր կոմերիտականներն էին նստած, կիսախավարի մեջ հազիվ նկատելի մեկը բարձրացավ և հարցրեց.

— Թող ընկեր Կորչագին ասի, թե ինչո՞ւ է հողին կպել։ և գյուղացի դառնալը նրան պրոլետարական հոգեբանությունից չի՞ կարում, արդյոք։

Դահլիճով հավանություն չտվող թեթև շշուկ անցավ, և ինչ-որ մեկի ձայնը բղավեց.

— Պարզ լեզվով ասա։ Աղմկելու տեղ է գտել...

Բայց Արտյոմն արդեն պատասխանում էր.

— Ոչինչ, ընկե՛ր։ Այդ տղան ճիշտ է ասում, թե ես հողին եմ կպել։ Դա ճիշտ է, բայց դրանից ես իմ բանվորական խիղճը չեմ կորցրել։ Այսօրվանից դրան վերջ։ Տեղափոխվում եմ ընտանիքովս դեպոյին ավելի մոտիկ, այստեղ այդ տեսակետից ավելի ապահով կլինի։ Թե չէ այդ հողի պատճառով ես դժվար եմ շնչում։

Մի ակնթարթ էլ Արտյոմի սիրտը խփեց, երբ նա նայեց բարձրացած ձեռքերի անտառին, և արդեն չզգալով իր մարմնի ծանրությունը, մեջքը չկորացնելով՝ գնաց դեպի իր տեղը։ Թիկունքում լսեց Սիրոտենկոյի ձայնը.

— Միաձա՛յն։

Սրբոյրը Զախար Բրուզժակը կանգնեց նախագահության սեղանի մոտ։ Պոլիտովկու հին, լուսկյաց օգնականը, որ վալուց արդեն ինքն էլ մեքենավար էր դարձել, ավարտում էր իր աշխատանքային կյանքի պատմությունը և երբ հասավ վերջին օրերին՝ արտասանեց կամացուկ, բայց բոլորը լսեցին.

— Ես իմ երեխաների փոխարեն պարտավոր եմ վերջացնել։ Նրա համար չմեռան, որ ես իմ վշտի հետ հետնաքակերում կանգ առնեմ։ Նրանց կորստյան տեղը ես չլրացրի, բայց առաջնորդի մահն ահա իմ աչքերը բաց արեց։ Նրա մասին դուք ինձանից հաշիվ մի պահանջեք, մեր իսկական կյանքը նոր է սկսվում։

Հիշողություններից անհանգստացած Զախարը մռայլորեն խոժոռվեց, բայց երբ նրան, ոչ մի խիստ հարցով չանհանգստացնելով, ձեռքերը վեր նետելով կուսակցության մեջ ընդունեցին, նրա աչքերը պարզվեցին, և ալեհեր դարձող գլուխն այլևս չխոնարհվեց։

Մինչև ուշ գիշեր դեպոյում շարունակվում էր այն մարդկանց ստուգատեսը, որոնք փոխարինելու էին գալիս։ Կուսակցության մեջ էին ընդունում միայն լավագույններին, նրանց, որոնց լավ էին ճանաչում, ամբողջ կյանքով էին ստուգել։

Լենինի մահը հարյուրհազարավոր մարդկանց բոլշևիկներ դարձրեց։ Առաջնորդի մահը կուսակցության շարքերը չքայքայեց։ Իր հզոր արմատներով խոր հողի մեջ մտած ծառը չի կործանվում, եթե կտրում են նրա կատարը։

ՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Հյուրանոցի համերգային դահլիճի մուտքի մոտ երկու հոգի էին կանգնած։ Բարձրահասակ, պենսնեով մարդու թևքին կարմիր կապ կա՝ «պարետ» մակագրությամբ։

— Այստե՞ղ է ուկրաինական դելեգացիայի նիստը,— հարցրեց Ռիտան։

Բարձրահասակը պատասխանեց պաշտոնական տոնով.

— Այո՛։ Իսկ ի՞նչ կա։

— Թույլ տվեք անցնել։

Բարձրահասակը կիսով չափ փակում էր մուտքը։ Նա ուշադիր նայեց Ռիտային և ասաց.

— Ձեր մանդա՞տը։ Թողնում են միայն վճռական և խորհրդակցական ձայնի քարտ ունեցող պատգամավորներին։

Ռիտան պայուսակից հանեց ոսկեդրոշմ տոմսը։ Բարձրահասակը կարդաց. «Կենտրոնական կոմիտեի անդամ»։ Պաշտոնականությունն իսկույն անհետացավ, անմիջապես դարձավ քաղաքավարի ու «յուրային»։

— Խնդրեմ, անցեք, այ, ձախ կողմում ազատ տեղեր կան։

Ռիտան անցավ աթոռների շարքի միջով և ազատ տեղ նկատելով նստեց։

Պատգամավորների խորհրդակցությունն ըստ երևույթին

վերջանում էր։ Ռիտան ականջ դրեց նախագահի ճառին։ Ձայնը ծանոթ թվաց նրան։

— Այսպես ուրեմն, ընկերնե՛ր, պատգամավորների կողմից համառուսական համագումարի սենյորեն-կոնվենտի ներկայացուցիչներն ընտրված են նաև պատգամավորների խորհրդում։ Մինչև համագումարի սկիզբը երկու ժամ է մնում։ Թույլ տվեք մի անգամ էլ ստուգել համագումար եկած պատգամավորների ցուցակը։

Ռիտան ճանաչեց Ակիմին. այդ նա էր շտապով կարդում ազգանունների ցուցակը։

Նրան որպես պատասխան բարձրանում էին ձեռքերը՝ կարմիր կամ սպիտակ մանդատներով։

Ռիտան լարված ուշադրությամբ լսում էր։

Ահա մի ծանոթ ազգանուն.

— Պանկրատով։

Ռիտան շրջվեց դեպի բարձրացած ձեռքը, բայց նստածների շարքերի մեջ չկարողացավ տեսնել բեռնող բանվորի ծանոթ դեմքը։ Անունները վազում անցնում են, և նրանց մեջ նորից ծանոթ անուն՝ «Օկունև» և անմիջապես նրանից հետո մի ուրիշը՝ «Ժարկի»։

Ժարկիին Ռիտան տեսնում է։ Նա նստած է բոլորովին մոտիկ, կիսով չափ դեպի Ռիտան դարձած։ Ահա և նրա մոռացված կիսադեմը... Այո՛, դա Վանյան է։ Մի քանի տարի է, որ նրան չի տեսել։

Անունների ցանկը արագ աչքի է անցկացնում, և հանկարծ նրանցից մեկը Ռիտային ստիպում է ցնցվել։

— Կորշագին։

Հեռու առջևում մի ձեռք բարձրացավ և իջավ, տարօրինակ է. Ուստինովիչը տանջալիորեն ցանկացավ տեսնել նրան, ով իր զոհված ընկերոջ անունն է կրում։ Նա առանց հայացքը կտրելու նայում էր այնտեղ, որտեղից բարձրացավ ձեռքը, բայց բոլոր գլուխները միատեսակ էին թվում։ Ռիտան ոտքի ելավ և պատի մոտի անցուղու երկարությամբ գնաց դեպի առջևի շարքերը։ Ակիմը լռեց։ Դղրդացին ետ քաշվող աթոռները, պատգամավորները սկսեցին բարձրաձայն խոսել, երիտասարդական ծիծաղ հնչեց, և Ակիմը, աշխատելով հաղթահարել դահլիճում տիրող աղմուկը, բղավեց.

— Զուշանաք... Մեծ թատրոն... ժամը յոթին...

Ելքի դռան մոտ խոնվածք առաջացավ։

Ռիտան հասկացավ, որ այդ հոսանքի մեջ նա չի գտնի ոչ մեկին նրանցից, որոնց անունները հենց նոր լսեց։ Մնում էր աչքից չկորցնել Ակիմին և նրա միջոցով գտնել նաև մյուսներին։ Նա գնաց դեպի Ակիմը՝ ճանապարհ տալով պատգամավորների վերջին խմբին։

— Դե, Կորչագի՛ն, մենք էլ գնանք, ծերուկս,— լսեց նա իր թիկունքում։

Եվ այնքան ծանոթ, այնքան անմոռանալի ձայնը պատասխանեց.

— Գնացինք։

Ռիտան արագ ետ նայեց։ Նրա առաջ կանգնած էր մի բարձրահասակ, թխադեմ երիտասարդ՝ խաքի գույնի գիմնաստյորկայով, մեջքին կապած կովկասյան բարակ գոտի, կապույտ հեծելաշալվարով։

Լայն բացված աչքերով նրան էր նայում Ռիտան, և երբ թևերը նրան ջերմորեն գրկեցին ու դողահար ձայնը կամացուկ «Ռիտա» ասաց, նա հասկացավ, որ դա Պավել Կորչագինն էր։

— Դու կենդանի՞ ես։

Այդ բառերն ամեն ինչ ասացին նրան։ Ռիտան դեռ չգիտեր, որ նրա մահվան լուրը սխալ էր։

Դահլիճն ամայացավ, բայց լուսամուտից գալիս էր Տվերսկոյ բուլվարի, քաղաքի այդ հզոր երակի աղմուկը։ Ժամացույցը վեց անգամ զիլ զրնգաց, բայց երկուսին էլ թվում էր, թե միայն մի քանի րոպե առաջ են հանդիպել։ Սակայն ժամացույցը Մեծ թատրոն էր հրավիրում։ Երբ լայն սանդուղքով դեպի ելքի դուռն էին գնում, Ռիտան մի անգամ էլ հայացքով չափեց Պավելին։ Նա այժմ կես գլխով բարձր էր Ռիտայից։ Ճիշտ նույնն էր, ինչ որ առաջ, միայն ավելի առնական ու զուսպ։

— Տեսնում ես, ես նույնիսկ քեզ չհարցրի, թե որտե՞ղ ես աշխատում։

— Ես կոմերիտմիության օկրուգային կոմիտեի քարտուղար եմ. կամ ինչպես Դուբավան է ասում, «ապարատային»,— և Պավելը ժպտաց։

— Դու նրան տեսե՞լ ես։

— Այո՛, տեսա, և այդ հանդիպումը տհաճ հիշողություն է թողել։

Նրանք փողոց դուրս եկան։ Սլացող ավտոների շչակների սույլ, ամբոխի շարժում ու աղաղակ։ Մինչև Մեծ թատրոնը նրանք գնացին համարյա առանց խոսելու, մի բանի մասին մտածելով։ Իսկ թատրոնը պաշարել էր մարդկային մոլեգին ու համառ ծովը։ Այդ ծովը ձգտում էր դեպի թատրոնի քարե զանգվածը, աշխատում էր խուժել կարմիրբանակայինների կողմից պահպանվող նվիրական մուտքերից, բայց անողոք ժամապահները միայն պատգամավորներին էին թույլ տալիս անցնել, և նրանք քայլում էին մուտքը փակող շղթայի միջով՝ հպարտությամբ ներկայացնելով իրենց մանդատները։

Թատրոնի շուրջը կոմերիտականների ծով է։ Դրանք բոլորը նրանք են, որոնք հյուրի հրավիրատոմս ձեռք չեն բերել, բայց ձգտում են ինչ գնով էլ լինի ներկա լինել համագումարի բացմանը։ Ճարպիկ կոմերիտականները սեղմվում էին պատգամավորների խմբերի մեջտեղը և նույնիսկ ինչոր կարմիր թուղթ էին ցույց տալիս, որն իբր մանդատ էր, և երբեմն մինչև դռներն էին հասնում։

Մի քանիսին հաջողվում էր նույնիսկ դռներից ներս սպրդել։ Բայց այստեղ նրանք ընկնում էին Կենտկոմի հերթապահ անդամի կամ պարետի ձեռքը, որոնք հյուրերին ուղարկում էին յարուսները, իսկ պատգամավորներին՝ պարետեր։ Եվ այն ժամանակ նրանց, ի մեծ ուրախություն մնացած «անտոմսավորների», դռնից դուրս էին անում։

Թատրոնը չէր կարող տեղավորել քսաներորդ մասն անգամ նրանց, ովքեր ցանկանում էին այնտեղ ներկա գտնվել։

Ռիտան ու Պավելը դժվարությամբ մոտեցան դռներին։ Պատգամավորները շարունակ գալիս ու գալիս էին։ Նրանց բերում էին տրամվայները, ավտոմեքենաները։ Դռների մոտ հրմշտոց է։ Կարմիրբանակայիններ, որոնք նույնպես կոմերիտականներ են, գործը դժվարանում է, նրանց սեղմել են ուղղակի պատին, իսկ շքամուտքից հնչում է մի հզոր կանչ.

— Հո՛ւպ տվեք, բաումանցի՛ք, հո՛ւպ տվեք։

— Հո՛ւպ տուր, ախպե՛ր, մենք ենք հաղթելու։

— Ա-ռա՜ջ...

Կորշագինի ու Ռիտայի հետ միասին ձկան պես ներս լողաց սրաշք մի տղա՝ «Կիմ» նշանը կրծքին, և, պարետից խույս տալով, գլխապատառ նետվեց դեպի ճանապարհ։ Մի վայրկյան, և նա արդեն անհետացել էր պատգամավորների հոսանքի մեջ։

— Նստենք այստեղ,— Ռիտան մատնանշեց բազկաթոռների նեղ տեղերը, երբ նրանք պարտեր մտան։

Նստեցին անկյունում։

— Ես ուզում եմ մի հարցի պատասխանը ստանալ,— ասաց Ռիտան։— Թեև դա անցած օրերի գործ է, բայց ես կարծում եմ, որ դու ինձ կասես. ինչո՞ւ այն ժամանակ մեր պարապմունքներն ու մեր մտերմությունն ընդհատեցիր։

Այդ հարցին նա սպասում էր հանդիպման առաջին րոպեից և, այնուամենայնիվ, շփոթվեց։ Նրանց հայացքները հանդիպեցին, և Պավելը հասկացավ, Ռիտան գիտե։

— Ես կարծում եմ, որ ամեն ինչ գիտես, Ռիտա։ Դա երեք տարի առաջ էր, իսկ այժմ ես միայն դատապարտել կարող եմ Պավկային դրա համար։ Ընդհանրապես Կորշագինն իր կյանքում մեծ ու փոքր սխալներ է կատարել, և դրանցից մեկն այն է, ինչի մասին դու հարցնում ես։

Ռիտան ժպտաց։

— Դա լավ առաջաբան է։ Բայց ես պատասխանին եմ սպասում։

Պավելը խոսեց ցածր ձայնով.

— Դրանում մեղավոր եմ ոչ միայն ես, այլև «Բոռը», նրա հեղափոխական ռոմանտիկան։ Այն գրքերը, որոնցում գունեղ կերպով նկարագրված են քաջարի, հոգով ու կամքով ուժեղ հեղափոխականներ, անվախ, մեր գործին անվերապահորեն նվիրված, ինձ վրա անջնջելի տպավորություն էին թողնում և ցանկություն առաջացնում լինել այնպիսին, ինչպիսին նրանք էին։ Ահա ես դեպի քեզ ունեցած զգացմանը վերաբերվեցի «Բոռին» համապատասխան։ Այժմ դա ինձ համար ծիծաղելի է, բայց ավելի շատ՝ զայրացուցիչ։

— Ուրեմն «Բոռը» գերագնահատվա՞ծ է։

— Ո՛չ, Ռի՛տա, հիմնականում՝ ոչ։ Դեն է նետված միայն սեփական կամքն ստուգելու տանջալի վիրահատության ավելորդ ողբերգականությունը։ Բայց ես հիմնականում «Բոռի» կողմնակիցն եմ, նրա արիության, նրա անսահման տոկունության, մարդկային այդ տիպի կողմնակիցը, որ կարողանում է տառապանքները տանել՝ առանց ցույց տալու յուրաքանչյուրին ու բոլորին։ Ես հեղափոխականի այդ կերպարի կողմնակիցն եմ, որի համար ընդհանուրի համեմատությամբ անձնականը ոչինչ է։

— Մնում է ափսոսալ, Պավե՛լ, որ այս խոսակցությունը տեղի է ունենում երեք տարի հետո այն ժամանակից, երբ այն պետք է տեղի ունենար,— ասաց Ռիտան ինչ-որ մտախոհ ժպտալով։

— Նրա համար չե՞ս ափսոսում, արդյոք, Ռի՛տա, որ ես երբեք քեզ համար չէի լինի ավելին, քան ընկեր։

— Ո՛չ, Պավել, կարող էիր և ավելին լինել։

— Դա կարելի է ուղղել։

— Մի քիչ ուշ է, ընկեր Բո՛ռ։

Ռիտան ժպտաց իր կատակի վրա և բացատրեց այն.

— Ես մի շատ փոքրիկ աչիկ ունեմ։ Այդ աչիկը հայր ունի, որն իմ լավ բարեկամն է։ Մենք երեքս շատ մտերիմ ենք, և այդ եռյակն առայժմ անխախտ է։

Նրա մատները շոշափեցին Պավելի ձեռքը։ Դա նրա համար անհանգստանալու շարժում էր, բայց Ռիտան անմիջապես էլ հասկացավ, որ իր շարժումն իզուր էր։ Այո՛, այդ երեք տարիների ընթացքում նա աճել էր ոչ միայն ֆիզիկապես։ Աղջիկը գիտեր, որ նա այժմ ցավ է զգում, այդ մասին վկայում էին նրա աչքերը, բայց նա ասաց առանց ձևանալու, ճշմարտացիորեն.

— Այնուամենայնիվ, ինձ անհամեմատ ավելի շատ է մնում, քան այն, ինչ հենց նոր ես կորցրիր։

Պավելն ու Ռիտան ոտքի ելան։ Ժամանակն էր բեմին ավելի մոտիկ տեղեր գրավելու։ Նրանք գնացին դեպի բազկաթոռները, որտեղ տեղավորվում էր ուկրաինական պատգամավորությունը։ Նվագախումբը նվագել սկսեց։ Վիթխարի պաստառները վառվում էին ալ կարմիր գույնով, և լուսացոլ տառերը ազդարարում. «Ապագան մեզ է պատկանում»։ Հազարավոր մարդիկ լցրեցին պարտերը, օթյակները, յարուսները։ Այդ հազարներն այստեղ ձուլվում էին երբեք

չմարող էներգիայի մի միասնական, հզոր տրանսֆորմատորի մեջ։ Հսկա թատրոնն իր պատերի մեջ էր ընդունել մեծ, ինդուստրիալ ցեղի երիտասարդ գվարդիայի ծաղիկը։ Հազարավոր աչքեր, և նրանց յուրաքանչյուր զույգի մեջ առկայծելով արտացոլվում է այն, ինչ վառվում է ծանր վարագույրի վերևում։ «Ապագան մեզ է պատկանում»։ Իսկ հորձանքը շարունակվում է. էլի մի քանի րոպե, և վարագույրի թավիշը դանդաղորեն կբացվի, Կենտկոմի քարտուղարը հուզվելով, անասելի հանդիսավոր րոպեի առաջ մի վայրկյան ինքնատիրապետությունը կորցնելով՝ կսկսի.

— Ռուսաստանի կոմունիստական երիտասարդության միության վեցերորդ համագումարը հայտարարում եմ բացված։

Երբեք ավելի պայծառ, ավելի խոր չէր զգացել Կորշագինը հեղափոխության մեծությունն ու հզորությունը, բառերով անբացատրելի այն հպարտությունն ու անկրկնելի ուրախությունը, որ տվեց նրան կյանքը՝ որպես մարտիկի ու կառուցողի, բերելով նրան այստեղ, բոլշևիզմի երիտասարդ գվարդիայի այս հաղթական հանդեսին։

Համագումարն իր մասնակիցներից խլում էր նրանց ամբողջ ժամանակը՝ վաղ առավոտից մինչև ուշ գիշեր, և Պավելը Ռիտային նորից հանդիպեց վերջին նիստերից մեկում, նա տեսավ աղջկան ուկրաինացիների խմբում։

— Վաղը համագումարը փակվելուց հետո ես անմիջապես մեկնում եմ,— ասաց նա։— Չգիտեմ, կհաջողվի արդյոք հրաժեշտ տալուց առաջ խոսել։ Դրա համար էլ ես այսօր քեզ համար պատրաստել եմ հուշերի երկու տետրակ, որ վերաբերում են անցյալին, և մի փոքրիկ նամակ։ Դու դրանք կարդա և փոստով ետ ուղարկիր։ Իմ գրածներից դու կիմանաս այն բոլորը, ինչ ես քեզ չպատմեցի։

Կորշագինը սեղմեց նրա ձեռքը և նայեց նրան անթարթ, կարծես աշխատելով հիշել նրա դիմագծերը։

Նրանք հանդիպեցին, ինչպես որ պայմանավորվել էին, հաջորդ օրը, գլխավոր մուտքի մոտ, և Ռիտան նրան հանձնեց մի կապոց և փակ մի ծրար։ Չորս կողմը մարդիկ էին, դրա համար էլ նրանք իրար զուսպ հրաժեշտ տվին և միայն աղջկա աչքերում, որոնք թեթևակի մշուշված էին, Պավելը տեսավ մեծ ջերմություն և մի քիչ թախիծ։

Մի օր հետո գնացքները նրանց տարբեր կողմեր էին տանում։

Ուկրաինացիք մի քանի վագոններով էին գնում։ Կորշագինը կիևցիների խմբում էր։ Երեկոյան, երբ բոլորը պառկեցին, և հարևան թախտին քնած Օկունևը քթով սկսեց սուլել, Կորշագինը նստեց լույսի մոտ և բացեց նամակը։

«Պավլուշա՛, սիրելի՛ս։

Ես կարող էի այս քեզ անձամբ ասել, բայց այսպես ավելի լավ կլինի։ Ես միայն մի բան եմ ցանկանում, որ այն, ինչի մասին մենք խոսեցինք համագումարն սկսվելուց առաջ, քո կյանքում ծանր հետք չթողնի։ Ես գիտեմ, որ քո ուժը մեծ է, դրա համար էլ հավատում եմ քո ասածին։ Ես կյանքի վրա ձևականորեն չեմ նայում, երբեմն կարելի է անձնական հարաբերությունների մեջ բացառություն անել, ճիշտ է, շատ հազվադեպ, եթե այդ հարաբերություններն առաջանում են մեծ, խոր զգացման հետևանքով։ Դու դրան արժանի ես, բայց ես մեր պատանեկությանը տուրք տալու առաջին ցանկությունից հրաժարվեցի։ Զգում եմ, որ դա մեզ մեծ ուրախություն չէր բերի։ Պետք չէ իր նկատմամբ այդպես խիստ լինել, Պավե՛լ։ Մեր կյանքում ոչ միայն պայքար կա, այլև լավ զգացման բերկրանք։

Քո կյանքի մնացած մասի նկատմամբ, այսինքն՝ այդ կյանքի հիմնական բովանդակության նկատմամբ ես ոչ մի անհանգստություն չեմ զգում։ Ամուր սեղմում եմ ձեռքդ։

Ռիտա»։

Պավելը մտախոհ տեսքով պատառոտեց նամակը, և ձեռքը լուսամուտից դուրս բերելով, զգաց, թե քամին ինչպես նրա մատների միջից պոկեց ու տարավ թղթի կտորները։

Առավոտյան դեմ երկու տետրակներն էլ կարդացված էին, փաթաթված թղթի մեջ ու կապված։ Խարկովում ուկրաինացիների մեծ մասը գնացքից իջավ, դրանց թվում՝ Օկունևը, Պանկրատովը և Կորշագինը։ Նիկոլայը պետք է գնար Կիև, Տալլայի հետևից, որ մնացել էր Աննայի մոտ։ Պանկրատովը, որ ընտրվել է կոմերիտմիության Ուկրաինայի Կենտկոմի անդամ, իր գործերն ուներ։ Կորշագինը որոշեց նրա հետ գնալ մինչև Կիև, ի դեպ, լինել նաև Ժարկիի ու Աննայի մոտ։ Նա մի քիչ ուշացավ կայարանի փոստի բաժանմունքից

քոռ, որպեսզի Ռիտային ուղարկի նրա տետրակները, և երբ դուրս եկավ գնացքի մոտ, ընկերներից ոչ մեկը չկար։

Տրամվայը տարավ դեպի այն տունը, ուր ապրում էին Աննան ու Դուբավան։ Պավելը սանդուղքով բարձրացավ երկրորդ հարկը և բախեց ձախ կողմի դուռը, Աննայինը։ Բախումին ոչ ոք չպատասխանեց։ Վաղ առավոտ էր, և Աննան աշխատանքի գնացած լինել դեռ չէր կարող։ «Նա հավանորեն դեռ քնած է»,— մտածեց Պավելը։ Կողքի դուռը բացվեց և սանդղահարթակ դուրս եկավ քնաթաթախ Դուբավան։ Դեմքը գորշ էր, աչքերի տակ կապույտ շրջանակներով։ Նրանից սոխի և, որ իսկույն որսաց Կորչագինի նուրբ հոտառությունը, օղու հոտ էր գալիս։ Կիսաբաց դռնից Կորչագինը մահճակալի վրա ինչ-որ մի հաստ կնոջ տեսավ, ավելի ճիշտ՝ նրա գեր մերկ ոտքը և ուսերը։

Պավելի հայացքը նկատելով՝ Դուբավան ոտքի հարվածով դուռը փակեց։

— Դու ի՞նչ է, ընկեր Բորխարտի մո՞տ ես եկել,— հարցրեց նա խոպոտ ձայնով, նայելով ինչ-որ մի տեղ, անկյունը։

— Նա այլևս այստեղ չէ։ Մի՞թե դու այդ մասին չգիտես։

Խոժոռված Կորչագինը դիտում էր նրան փորձող հայացքով։

— Ես այդ չգիտեի։ Ո՞ւր է տեղափոխվել,— հարցեց Պավելը։

Դուբավան հանկարծ չարացավ։

— Դա ինձ չի հետաքրքրում։— Եվ զգուշալով, խեղդված չարությամբ ավելացրեց։— Իսկ դու նրան մխիթարելո՞ւ ես եկել։ Դե ինչ, ճիշտ ժամանակն է։ Տեղն այժմ ազատ է, գործի՛ր։ Մանավանդ որ քեզ չեն մերժի։ Չէ՞ որ նա ինձ շատ անգամ է ասել, դու նրան դուր էիր գալիս... կամ ինչպես է դա կանանց մոտ կոչվում։ Մոմենտը բռնիր, ձեզ համար և՛ հոգու, և՛ մարմնի միասնություն կլինի։

Պավելն այտերին տաքություն զգաց։ Իրեն զսպելով՝ ցածր ձայնով ասաց.

— Ո՞ւր ես հասել, Միտյա՛յ։ Ես չէի սպասում, թե քեզ կտեսնեմ այսպիսի մի սրիկա դարձած։ Չէ՞ որ դու մի ժամանակ վատ տղա չէիր։ Ինչո՞ւ ես վայրենանում։

Դուբավան հենվեց պատին։ Երևում էր, որ բոբիկ ոտքերով ցեմենտի վրա կանգնելուց մրսում էր և կծկվել էր։

Դուռը բացվեց և այնտեղից դուրս նայեց մի քնաթաթախ, թմբլիկ այտերով կին։

— Փիսի՛կ, ներս եկ, ի՞նչ ես կանգնել այդտեղ...

Դուբավան թույլ չտվեց, որ նա վերջացնի, դուռը խփեց և իր մարմնով հենվեց նրան։

— Լավ սկիզբ է...,— ասաց Պավելը։— Ո՞ւմ ես քեզ մոտ թողնում և ո՞ւր կհասցնի դա քեզ։

Ըստ երևույթին բանակցությունները Դուբավային ձանձրացրին, և նա գոչեց.

— Դուք դեռ ինձ ցուցո՞ւմ կտաք, թե ես ում հետ պիտի քնեմ։ Հերիք է գլխիս քարոզ կարդաք։ Կարող ես կորչել այնտեղ, որտեղից եկել ես։ Գնա և պատմիր, որ Դուբավան խմում է և անառակ աղջկա հետ քնում։

Պավելը մոտեցավ նրան և հուզվելով ասաց.

— Միտյա՛յ, դուրս արա այդ կնոջը, ես ուզում եմ մի վերջին անգամ էլ խոսել քեզ հետ...

Դուբավայի դեմքը մթնեց։ Նա շրջվեց և սենյակ մտավ։

— Է՛խ, գարշելի՛,— շշնջաց Կորչագինը և դանդաղորեն իջավ սանդուղքից։

Երկու տարի անցավ։ Անաչառ ժամանակն օրերն ու ամիսներն էր հաշվում, իսկ սրընթաց, բալմերանգ կյանքը արտաքուստ միակերպ այդ օրերը լցնում էր միշտ ինչ-որ նոր, երևակվանից տարբեր բանով։ Մի վիթխարի ժողովուրդ կազմող հարյուր վաթսուն միլիոն մարդ, աշխարհում առաջին անգամ դառնալով իրենց անծայրածիր երկրի և նրա անհաշիվ բնական հարստությունների տերը, հերոսական ու լարված աշխատանքով վերածնում էին պատերազմից քայքայված իրենց ժողովրդական տնտեսությունը։ Երկիրն ամրապնդվում էր, ուժ էր առնում, և այլևս չէին երևում դեռ մինչև վերջերս անկենդան գործարանների ծխաղուրկ ծխնելույզները, գործարաններ, որ աչքաթող արված լինելու հետևանքով այնքան մռայլ տեսք ունեին։

Կորչագինի համար այդ երկու տարին անցավ սրընթաց շարժման մեջ, և նա նույնիսկ չնկատեց այդ տարիները։ Նա չէր կարող հանգիստ ապրել, վաղ առավոտը դիմավորել չափավոր հորանջով և քնել ուղիղ տասին։ Նա շտապում էր ապրել։ Եվ ոչ միայն ինքն էր շտապում, այլև ուրիշներին էր քշում։

Քնելու համար ժլատորեն էր ժամանակ հատկացնում։ Հաճախ կարելի էր մինչև ուշ գիշեր լուսավորված տեսնել նրա սենյակի պատուհանը, իսկ սենյակում տեսնել սեղանին կռացած մարդկանց։ Այնտեղ սովորում էին։ Երկու տարվա ընթացքում մշակվեց «Կապիտալի» երրորդ հատորը։ Հասկանալի դարձավ կապիտալիստական շահագործման ամենանուրբ մեխանիկան։

Այն օկրուգում, ուր Կորչագինն էր աշխատում, հայտնվեց Ռազվալիխինը։ Նրան ուղարկել էր նահանգական կոմիտեն՝ առաջարկելով օգտագործել որպես շրջկոմի քարտուղար։ Կորչագինը ուղևորության մեջ էր, և նրա բացակայությամբ բյուրոն Ռազվալիխինին ուղարկեց շրջկոմներից մեկը։ Կորչագինը եկավ, այդ մասին իմացավ, բայց ոչինչ չասաց։

Մի ամիս անցավ, և Կորչագինը հանկարծ գնաց Ռազվալիխինի շրջանը։ Նա քիչ փաստեր ձեռք բերեց, բայց դրանց մեջ արդեն կային՝ հարբեցողություն, իր շուրջը ստորաքարշ մարդկանց հավաքագրում և լավ տղաների հալածանք։ Կորչագինն այս բոլորը դրեց բյուրոյում, և երբ բոլորն արտահայտվեցին Ռազվալիխինին խիստ նկատողություն անելու օգտին, անսպասելի ասաց.

— Հեռացնել առանց նորից ընդունվելու իրավունքի։

Դա բոլորին զարմացրեց, չափազանց խիստ թվաց, բայց Կորչագինը կրկնեց.

— Հեռացնել անդգամին։ Այդ անպետք գիմնազիստին մարդ դառնալու հնարավորություն տրվեց, բայց նա խցկվել է մեր մեջ...— Պավելը պատմեց Բերեզդովի մասին։

— Ես վճռականապես բողոքում եմ Կորչագինի հայտարարության դեմ։ Դրանք անձնական հաշիվներ են, ով ասես կարող է իմ մասին դուրս տալ։ Թող Կորչագինը փաստաթղթեր, տվյալներ, փաստեր ներկայացնի։ Ես ևս կարող

եմ հնարել, թե նա մաքսանենգությամբ է զբաղվել, ուրեմն նրան պետք է վտարե՞լ։ Ո՛չ։ Թող նա փաստաթուղթ ներկայացնի,— բղավում էր Ռազվալիխինը։

— Սպասիր, փաստաթուղթ էլ կգրենք,— պատասխանեց նրան Կորչագինը։

Ռազվալիխինը դուրս եկավ։ Կես ժամ հետո Կորչագինը կարողացավ այսպիսի բանաձև ընդունել տալ. «Կոմերիտմիության շարքերից վտարել որպես խորթ տարրի»։

Ամռանը մեկը մյուսի հետևից ընկերներն արձակուրդ էին գնում։ Ում առողջությունն ավելի վատ էր, գնում էր ծովափ։ Ամռանը հանգստի մասին երազանքը համակում էր բոլորին, և Կորչագինն իր տղաներին ուղարկում էր հանգստանալու, նրանց համար առողջարանների ուղեգրեր ու օժանդակություն էր ձեռք բերում, նրանք մեկնում էին գունատ, տանջված, բայց ուրախ։ Նրանց աշխատանքը թափվում էր Կորչագինի ուսերին, և վերջինս տանում էր այդ այնպես, ինչպես լավ ձին է սայլը դեպի վեր տանում։ Մեկնողները վերադառնում էին արևառ տեսքով, կենսուրախ, եռանդով լի։ Այն ժամանակ մեկնում էին ուրիշները։ Ամբողջ ամառը որևէ մեկը չէր լինում, իսկ կյանքն իր ընթացքը չէր կանգնեցնում, և անիմաստ էր թվում այն օրը, երբ Կորչագինը բացակայում էր իր սենյակից։

Այսպես էր անցնում ամառը։

Աշունն ու ձմեռը Պավելը չէր սիրում. նրանք շատ ֆիզիկական տանջանք էին բերում իրեն։

Այս ամառանը նա հատկապես անհամբեր էր սպասում։ Նրա համար տանջալիորեն ծանր էր նույնիսկ ինքն իրեն խոստովանելը, թե ուժերը տարեցտարի նվազում են։ Երկու ելք կար. կամ լարված աշխատանքի ծանրությունը տանելու անընդունակ ճանաչել իրեն, ընդունել, որ հաշմանդամ է, կամ մնալ պոստում այնքան ժամանակ, որքան դա հնարավոր կլինի։ Եվ նա ընտրեց երկրորդը։

Մի անգամ կուսակցության օկրուգային կոմիտեի բյուրոյում նրա մոտ նստեց ծերունի ընդհատակյա աշխատող բժիշկ Բարտելիկը՝ օկրուգային առողջապահության բաժնի վարիչը։

— Տեսքդ լավ չէ, Կորշագի՛ն։ Բուժհանձնաժողովում եղե՞լ ես։ Ինչպե՞ս է առողջությունդ։ Չէ՞ որ չես եղել։ Ահա թե ինչու չեմ հիշում, իսկ քեզ քննել է հաթկավոր, բարեկա՛մս։ Հինգշաբթի օրը երեկոյան դեմ եկ։

Պավելը հանձնաժողովի չգնաց, զբաղված էր, բայց Բարտելիկը նրա մասին չմոռացավ և մի անգամ իր մոտ տարավ։ Բժշկական քննության (Բարտելիկն անձամբ մասնակցում էր քննությանը որպես նկրոպաթորոգ) եզրակացության մեջ գրված էր.

«Բուժհանձնաժողովն անհրաժեշտ է համարում անհապաղ արձակուրդ ու երկարատև բուժում Ղրիմում և Հետագա լուրջ բուժում, հակառակ դեպքում ծանր հետևանքներն անխուսափելի են»։

Սրան նախորդում էր լատիներեն գրված հիվանդությունների երկար մի ցանկ, որից Կորշագինը հասկացավ միայն, որ գլխավոր դժբախտությունը ոչ թե ոտքերն են, այլ կենտրոնական ներվային սիստեմի ծանր վնասվածքը։

Բարտելիկը հանձնաժողովի որոշումն անցկացրեց բյուրոյով, և ոչ ոք չառարկեց Կորշագինին անհապաղ աշխատանքից ազատելու դեմ, բայց Կորշագինն ինքն առաջարկեց սպասել, մինչև արձակուրդից վերադառնա կոմերիտմիության օկրուգային կոմիտեի կազմբաժնի վարիչ Սբիտնևը։ Կորշագինը վախենում էր կոմիտեն ամայացնել։ Համաձայնեցին, թեև Բարտելիկն առարկում էր։

Երեք շաբաթ էր մնում կյանքում առաջին անգամ տրվող արձակուրդին։ Սեղանի գզրոցում արդեն դրված էր Եվպատորիայի ուղեգիրը։

Կորշագինն այդ օրերին եռանդուն աշխատանք էր ծավալել, կոմերիտմիության օկրուգային կոմիտեի պլենում հրավիրեց և առանց ուժերը խնայելու ամեն ինչ կարգավորում էր, որպեսզի հանգիստ մեկնի։

Եվ ահա այդ ժամանակ, իր կյանքում երբեք չտեսած հանգստի ու ծովը տեսնելու նախօրյակին, պատահեց այն անհեթեթ ու զզվելի բանը, որին երբեք չէր սպասում։

Պարապմունքից հետո Պավելը եկավ կոտակցության ագիտպրոպի սենյակը և նստեց բաց լուսամուտի դոգին, դրքի պահարանի հետևում՝ սպասելով ագիտպրոպի հրավիրված խորհրդակցությանը։ Երբ նա նեղս մտավ, սենյակում ոչ ոք չկար։ Շուտով մի քանի հոգի եկան։ Պավելը պահարանի հետևից նրանց չէր տեսնում, բայց մեկի ձայնը ճանաչեց։ Դա Ֆայլոն էր, օկրուգի ժողովրդական մնտեսության բաժնի վարիչը, մի բարձրահասակ, զինվորական կեցվածքով գեղեցիկ մարդ։ Պավելը շատ անգամ էր լսել նրա մասին, որ սիրում է խմել և ամեն մի սիրուն աղջկա հետևից թրև գալ։

Ֆայլոն մի ժամանակ պարտիզան էր եղել և հարմար առիթներին ծիծաղելով պատմում էր, թե ինչպես էր նա ամեն օր տասնյակներով մախնոյականների գլուխ կտրում։ Գորշագինը նրան տանել չէր կարող։ Մի անգամ Պավելի մոտ եկավ մի կոմերիտուհի և լաց լինելով պատմեց, թե ինչպես Ֆայլոն խոստացել է ամուսնանալ նրա հետ, բայց մի շաբաթ նրա հետ ապրելուց հետո դադարել է նույնիսկ բարևել։ Վերահսկիչ հանձնաժողովում Ֆայլոն կարողացավ դուրս պրծնել, աղջիկն ապացույցներ չուներ, բայց Պավելը հավատում էր նրան։ Կորշագինն ականջ դրեց։ Սենյակ մտնողները չէին էլ կասկածում, թե նա ներկա է։

— Դե, Ֆայլո, գործերդ ինչպե՞ս են։ Ի՞նչ նոր խենթություն ես արել։

Հարցնում էր Գրիբովը, Ֆայլոյի բարեկամներից մեկը, նրա տիպի մի մարդ։ Չգիտես թե ինչու Գրիբովը համարվում էր պրոպագանդիստ, թեև շատ անզարգացած, սահմանափակ լավ էլ դմբո մարդ էր, բայց պրոպագանդիստի կոչումով պարծենում էր և ամեն մի հարմար ու ոչ հարմար առիթով այդ մասին հիշեցնում։

— Կարող ես ինձ շնորհավորել, երեկ ես մշակեցի Գորոտանային։ Իսկ դու ասում էիր, թե ոչինչ դուրս չի գա։ Ո՞չ, եղբա՛յր, երբ ես մեկից կառչում եմ, արդեն հավատացած եղեք,— և Ֆայլոն ավելացրեց անպատկառ մի խոսք։

Գորշագինը ներվային դող զգաց, որ սաստիկ գրգռված լինելու նշան էր։ Կորոտանան օկրուգային կինբաժնի վարիչն էր։ Նա այստեղ էր եկել Պավելի հետ միասին, և Պավելը համաաեղ աշխատանքի միջոցին մտերմացել էր այդ համակրելի կուսակցական կնոջ հետ, որը կարեկից ու ուշադիր էր ամեն մի կնոջ նկատմամբ և նրանց նկատմամբ,

ովքեր գալիս էին նրա մոտ պաշտպանություն կամ խորհուրդ որոնելու։ Կոմիտեի աշխատակիցների մեջ Կորոտաևան հարգանք էր վայելում։ Նա ամուսնացած չէր։ Ֆայլոն անտարակույս նրա մասին էր խոսում։

— Իսկ դու չե՞ս ստում, Ֆայլո՛։ Ինչ-որ նրան նման չէ։

— Ե՞ս եմ ստում։ Ո՞ւմ տեղն ես դրել ինձ։ Ես այնպիսիներին եմ կոտրե՛լ որ։ Հարկավոր է միայն կարողանալ։ Ամեն մի կին հատուկ մոտեցում է պահանջում։ Մեկը անձնատուր է լինում հենց հաջորդ օրը, բայց էդպիսին, ճիշտն ասած, անպետք բան է։ Իսկ մի ուրիշի հետևից պետք է լինում մի ամիս վազվզել։ Գլխավորն այն է, որ հոգեբանությունն իմանաս։ Ամեն տեղ հատուկ մոտեցում պետք է լինի։ Դա, եղբա՛յր, մի ամբողջ գիտություն է, բայց ես այդ գործում պրոֆեսոր եմ։ Հա-հա-հա-հա...

Ֆայլոն ինքնագոհությունից խեղդվում էր։ Ունկնդիրների փոքրիկ խումբը գրգռում էր նրան, որ պատմի։ Նրանք անհամբեր մանրամասնություններ էին ուզում իմանալ։

Բոունցքները սեղմած Կորշագինը վեր կացավ՝ զգալով, թե ինչպես սիրտն սկսեց անհանգիստ բաբախել։

— Կորոտաևային հենց այնպես, մի «աստված» կանչելով տիրելու մասին խոսք լինել չէր կարող, իսկ ձեռքից թողնել էլ չէի ուզում, մանավանդ որ Գրիբովի հետ մի դյուժին պորտվեյնի վրա գրազ էի եկել։ Դե, ես էլ դիվերսիա սկսեցի։ Այցելեցի մի անգամ, երկրորդ անգամ։ Տեսնեմ խեթ է նայում։ Հետո էստեղ իմ մասին ինչ ասես խոսում են, գուցե նրան էլ է հասել... մի խոսքով, թևերից անհաջողության հանդիպեցի։ Ես էլ այն ժամանակ սկսեցի շրջանցել։ Հա-հա... Հասկանում ես, ասում եմ, կովել եմ, ահագին մարդ եմ սպանել, թափառել եմ աշխարհով մեկ, շատ վիշտ եմ, իբր, կրել, իսկ, այ, ինձ համար կին չեմ գտել, ապրում եմ միայնակ շան նման, ոչ գգվանք, ո՛չ սիրալիր խոսք... Եվ շարունակ այդ ոգով վրա եմ տալիս, վրա տալիս։ Մի խոսքով, թույլ տեղին եմ խփում։ Շատ գլուխ դրի նրա հետ։ Մի ժամանակ ուզեցի թքել, գրողի ծոցը, և վերջ տալ կատակերգությանը։ Բայց այստեղ հարցն սկզբունքն էր, սկզբունքի պատճառով ես նրանից ձեռք չէի քաշում... Վերջապես գլուխ բերեցի։ Ի հատուցումն իմ համբերության՝

կնոջ փոխարեն աղջկա հանդիպեցի։ Հա-հա... Այ թե ծիծաղ է։

Եվ Ֆայլոն շարունակեց նողկալի պատմությունը։

Կորշագինը լավ չէր հիշում, թե ինչպես հայտնվեց Ֆայլոյի կողքին։

— Անասո՛ւն,— մոնչաց Պավելը։

— Ե՞ս եմ անասունը, թե՞ դու, ծածուկ լսում ես ուրիշների խոսակցությունները։

Ըստ երևույթին, Պավելն էլի ինչ-որ բան ասաց, քանի որ Ֆայլոն բռնեց նրա կրծքից։

— Ուրեմն դու ինձ վիրավորե՞լ ես ուզում։

Եվ բռունցքով խփեց Կորշագինին։ Նա մի քիչ հարբած էր։

Կորշագինը վերցրեց կաղնեփայտից շինված աթոռակը և մի հարվածով Ֆայլոյին գետնին տապալեց։ Կորշագինի գրպանում ատրճանակ չկար, և այդ միայն փրկեց Ֆայլոյի կյանքը։

Բայց անհեթեթ բանն, այնուամենայնիվ, պատահեց. այն օրը, երբ Կորշագինը Ղրիմ պիտի մեկներ, նա կանգնած էր կուսակցական դատարանի առաջ։

Ամբողջ կուսակազմակերպությունը քաղաքային թատրոնում էր։ Ագիտպրոպում պատահած դեպքը բոլորին վրդովել էր, և դատավարությունը ծավալվեց ու վերածվեց կենցաղային սուր վիճաբանության։ Կենցաղը, անձնական փոխհարաբերությունների և կուսակցական էթիկայի հարցերն իրենցով ծածկեցին քննվող գործը։ Այն դարձավ մի ազդանշան։ Ֆայլոն դատարանում իրեն պահում էր գրգռիչ, լրկտիաբար ժպտում էր, ասում էր, որ իր գործը կքննի ժողովրդական դատարանը, և Կորշագինը նրա չարդված գլխի համար հարկադիր աշխատանք կստանա։ Հարցերին պատասխանել կտրականապես հրաժարվեց։

— Ի՞նչ, ուզում եք իմ հասցեին լեզուներդ քորե՞լ։ Ներեցեք։ Ինչ ուզում եք, կարող եք կպցնել, իսկ այն, որ այստեղ կանայք են իմ դեմ կատաղած, այդ նրանից է, որ ես նրանց վրա ուշադրություն չեմ դարձնում։ Իսկ գործը մի գրոշ էլ չարժի։ Թե որ տասնութ թվին պատահած լիներ,

ես այդ անհորմալ Կորչագինի հետ իմ ուղածին պես հաշիվ կտեսնեի։ Իսկ հիմա այստեղ առանց ինձ էլ յոլա կգնաք։— Եվ գնաց։

Երբ նախագահողը Կորչագինին առաջարկեց ընդհարման մասին պատմել, Պավելը խոսեց հանգիստ, բայց զգում էր, որ դժվարությամբ է զսպում իրեն։

— Այն ամենը, ինչի մասին այստեղ խոսք եղավ, պատահեց, որովհետև ես ինձ զսպել չկարողացա։ Վաղուց է անցել այն ժամանակը, երբ ես բռունցքներով ավելի շատ էի աշխատում, քան գլխով։ Վթար տեղի ունեցավ, և մինչև ես այդ կհասկանայի, Ֆայլոն գանգին հարված ստացավ։ Վերջին մի քանի տարիների ընթացքում սա պարտիզանություն անելու միակ դեպքն է ինձ մոտ, ես այն դատապարտում եմ, թեև հարվածը, ըստ երևույթին, տեղին էր։ Ֆայլոն մեր կոմունիստական կենցաղի մեջ նողկալի մի երևույթ է։ Ես չեմ կարող ըմբռնել, երբեք չեմ հաշտվի այն բանի հետ, որ կոմունիստ-հեղափոխականը կարող է միաժամանակ նաև ամենալկտի անասունը և անզգամը լինել։ Այս դեպքն ստիպեց մեզ խոսել կենցաղի մասին, դա միակ դրականն է ամբողջ գործի մեջ։

Ճնշող մեծամասնությամբ կուսակցական կոլեկտիվը քվեարկեց հօգուտ Ֆայլոյին կուսակցությունից վտարելուն։ Գրիբովին կեղծ ցուցմունքներ տալու համար խիստ նկատողություն արվեց՝ նախազգուշացումով։ Խոսակցության մյուս մասնակիցները խոստովանեցին։ Նրանց հանդիմանություն արվեց։

Բարտելիկը պատմեց Պավելի նյարդերի վիճակի մասին։ Ժողովը բուռն կերպով բողոքեց, երբ կուսակցական քննիչն առաջարկեց Կորչագինին նկատողություն հայտարարել։ Քննիչն իր առաջարկը ետ վերցրեց։ Պավելն արդարացվեց։

Մի քանի օր հետո գնացքը Պավելին խարկով էր տանում։ Կուսակցության օկրուգային կոմիտեն համաձայնեց նրա համառ խնդրանքին՝ ազատել իրեն և ուղարկել Ուկրաինայի կոմերիտմիության Կենտկոմի տրամադրության տակ։ Նրան լավ բնութագիր տվեցին, և նա մեկնեց։ Կոմերիտմիության Կենտկոմի քարտուղարներից մեկն էլ Ակիմն էր։ Պավելն անցավ նրա մոտ և ամեն ինչ պատմեց։

Բնութագրի մեջ, «անվերապահորեն նվիրված է կուսակցությանը» բառերից հետո, Ակիմը կարդաց. «Կուսակցական կայունություն ունի, խիստ բացառիկ դեպքերում միայն ինքնատիրապետումը կորցնելու չափ բռնկվող է։ Դրա պատճառը նյարդային սիստեմի ծանր վիճակն է»։

— Այնուամենայնիվ, լավ է փաստաթղթի մեջ գրել այդ փաստը, Պավլո՛ւշա։ Դու մի վշտացիր, այդպիսի բաներ պատահում են երբեմն նաև ամուր մարդկանց հետ։ Գնա հարավ, ուժերդ հավաքիր։ Կվերադառնաս, այն ժամանակ կխոսենք, թե որտեղ պիտի աշխատես։

Եվ Ակիմն ամուր սեղմեց նրա ձեռքը։

Կենտկոմի «Կոմունար» առողջարանը։ Վարդերի թմբեր, շատրվանի կայծկլտուն գունախաղ, այգում խաղողի որթերով պատած կորպուսներ։ Հանգստացողների սպիտակ բաճկոններ և լողի հագուստներ։ Երիտասարդ բժշկուհին գրանցում է անուն-ազգանունը։ Անկյունի կորպուսում ընդարձակ մի սենյակ, անկողնի կուրացուցիչ սպիտակություն, մաքրություն և ոչնչով չխանգարվող լռություն։ Հագուստները փոխած, ընդունած լոգանքից թարմացած Կորչագինը շտապում է դեպի ծովը։

Ինչքան որ աչքդ կտրում է՝ հղկած մարմարի նմանող, կապտասև, լայնածավալ ծովի հոյակապ խաղաղությունն է։ Ինչ-որ տեղ, հեռավոր երկնագույն ծխի մեջ կորչում են նրա սահմանները, բոցավառ արևը նրա մակերեսին արտացոլվում է շողշողուն հրդեհով։ Հեռվում, առավոտյան շամանդաղի մեջ գծագրվում են լեռնաշղթայի հոծ զանգվածները։ Կուրծքը խոր շնչում է ծովային զեփյուռի կենարար թարմությունը, իսկ աչքերը չեն կարողանում կտրվել այդ մեծ, կապտամած խաղաղությունից։

Ծույլ ալիքը քնքշանքով ոտքերին է մոտենում, լիզում ափի ոսկե ավազը։

Կենտկոմի առողջարանի կողքին կենտրոնական պոլիկլինիկայի մեծ պարտեզն է։ Կոմունարցիները ծովափից վերադառնալիս այդ պարտեզով էին անցնում։ Այստեղ, աղարթախիտ չինարու ստվերի տակ, գորշ կրաքարով շարված բարձր պատի մոտ Կորշագինը սիրում էր հանգստանալ։ Հաղվադեպ էր որևէ մեկն այստեղ գալիս։ Այստեղից կարելի էր դիտել մարդկանց աշխույժ շարժումն այգու ծառուղիներում ու շավիղներում, երեկոները երաժշտություն լսել, բայց և հեռու գտնվել մեծ ամառանոցի ջղայնացնող իրարանցումից։

Այսօր էլ Կորշագինն այստեղ էր եկել։ Նա հաճույքով պառկեց հյուսված ճոճաթոռին և ծովային լոգանքից ու արևից թմրած՝ սկսեց ննջել։ Թավ սրբիչն ու Ֆուրմանովի «Խռովությունը», որ դեռ չէր վերջացրել, ընկած էին հարևան ճոճաթոռին։ Առողջարանում գտնված առաջին օրերին լարված նյարդային վիճակը չէր անցնում, գլխացավերը չէին պակասում։ Պրոֆեսորները դեռևս շարունակում էին ուսումնասիրել նրա բարդ ու հազվադեպ հիվանդությունը։ Նրանց երկարատև թխկթխկացնելն ու քննումը Պավելին ձանձրացրել ու հոգնեցրել էին։ Երուսալիմչիկ տարօրինակ ազգանուն ունեցող բուժող բժիշկը, որ մի համակրելի կուսակցական կին էր, դժվարությամբ էր գտնում իր հիվանդին և համբերատարությամբ համոզում էր նրան իր հետ գնալ այս կամ այն մասնագետի մոտ։

— Ազնիվ խոսք, ես այդ բոլորից հոգնել եմ,— ասում էր Պավելը։— Օրը հինգ անգամ պատմիր միևնույն բանը։ Եելուզար չի՞ եղել, արդյոք, ձեր տատը, հոդացավով չի՞ հիվանդացել, արդյոք, ձեր նախապապը։ Սատանան գիտե, թե նա ինչով է հիվանդացել. ես նրա երեսն էլ չեմ տեսել։ Հետո ամեն մեկն աշխատում է ինձ համոզել, որ խոստովանեմ, թե ես հիվանդացել եմ գոնորեայով կամ մի ինչ-որ ավելի վատ բանով, իսկ ես, խոստովանում եմ, դրա համար ուզում եմ մեկն ու մեկի ճաղատին հասցնել։ Ինձ հանգստանալու հնարավորություն տվեք։ Թե չէ եթե ամբողջ

մեկուկես ամիսն էլ ինձ ուսումնասիրեն, ես սոցիալապես վտանգավոր մարդ կդառնամ։

Երուսալիմչիկը ծիծաղում էր, կատակով պատասխանում, բայց մի քանի բոպե հետո նրան թևանցուկ անելով և ճանապարհին որևէ հետաքրքրական բան պատմելով՝ բերում էր վիրաբույժի մոտ։

Այսօր ոչ մի քննություն չէր նախատեսվում։ Մինչև ճաշ մի ժամ կար։ Նիրհի միջից Պավելը որսաց ինչ-որ մեկի քայլերի ձայնը։ Աչքը չբացեց. «Կմտածի, որ քնած եմ և կգնա»։ Զուր հույս. ճոճաթոռը ճռճռաց, ինչ-որ մեկը նստեց։ Օծանելիքի նուրբ հոտն ասում էր, որ կողքին կին է նստած։ Աչքերը բաց արեց։ Առաջին բանը, որ նա տեսավ, կուրացուցիչ սպիտակություն ունեցող հագուստն էր և սեկե չուստերով արևախանձ ոտքերը, հետո տղայի պես կտրած մազերով գլուխը, երկու մեծ աչքերը, մկան ատամների պես սուր ատամների շարքը։ Կինը շփոթված ժպտաց.

— Ներեցեք, ես ձեզ, կարծեմ, խանգարեցի՞։

Կորշագինը լռեց։ Դա այնքան էլ քաղաքավարի բան չէր, բայց նա դեռ հույս ուներ, թե հարևանուհին կհեռանա։

— Սա ձե՞ր գիրքն է։

Նա թերթում էր «Խռովությունը»։

— Այո՛, իմն է։

Մի բոպե լռություն։

— Ասացեք, խնդրեմ, ընկեր, դուք «Կոմունար» առողջարանի՞ց եք։

Կորշագինն անհամբեր շարժվեց։ «Ո՞ր քամին բերեց սրան։ Սա էլ կոչվում է հանգստանալ։ Այժմ հավանորեն կհարցնի, թե ես ինչով եմ հիվանդ։ Ստիպված պիտի լինեմ հեռանալ»։ Նա անբարեհամբույր տոնով ասաց.

— Ո՛չ։

— Իսկ ես կարծես թե ձեզ այնտեղ եմ տեսել։

Պավելն արդեն վեր էր կենում գնալու, երբ նրա թիկունքում կանացի կրծքային մի ձայն հարցրեց.

— Դու ինչո՞ւ ես այստեղ եկել, Դորա։

Ճոճաթոռի եզրին նստեց արևաո, գեր ու շիկահեր մի կին, առողջարանային լողի հագուստով։ Նա հարևանցի նայեց Կորշագինին։

— Ես ինչ-որ տեղ ձեզ տեսել եմ, ընկե՛ր։ Դուք Խարկովո՞ւմ եք աշխատում։

— Այո՛, Խարկովում։

Կորչագինը վճռեց վերջ տալ այդ երկարատև բանակցություններին։

— Ի՞նչ աշխատանքի եք։

— Աղբահանության գումակում,— և ակամա ցնցվեց նրանց քրքիջից։

— Չի կարելի ասել, թե դուք շատ քաղաքավարի եք, ընկե՛ր։

Այսպես սկսվեց նրանց մտերմությունը, և Խարկովի կուսքաղկոմի բյուրոյի անդամ Դորա Ռոդկինան հաճախ էր հիշում իրենց ծանոթության այդ ծիծաղելի սկիզբը։

«Տալաս» առողջարանի պարտեզում, ուր Կորչագինը եկել էր հետաճշյա մի համերգ լսելու, անսպասելի հանդիպեց Ժարկիին։ Եվ որքան էլ տարօրինակ թվա, նրանց հանդիպեցրեց ֆոքստրոտը։

Դեր երգչուհուց հետո, որը կատաղի շարժումներով երգեց՝ «Գիշերն էր բորբոքվում կրքերի բերկրանքով», էստրադա ցատկեց մի զույգ։ Տղամարդը կարմիր ցիլինդրով, կիսամերկ, ազդրերի վրա ինչ-որ գունավոր ճարմանդներ, բայց կուրացուցիչ սպիտակության ժաքոյով ու փողկապով։ Մի խոսքով, վայրենու վատ պարոդիա։ Կինը սիրունատես, մարմնի վրա մեծ քանակությամբ կտորեղեն։ Եզան ծոծրակով նեպմանների հիացական աղաղակների տակ, որոնք կանգնել էին առողջարանային հիվանդների բազկաթոռների ու ձեռնասայլերի հետևում, այդ զույգը ցնցվելով, ճոճվելով՝ ֆոքստրոտ էր պարում։ Ավելի նողկալի պատկեր չէր կարելի երևակայել։ Ապուշային ցիլինդրով պարարտ տղամարդը և կինը իրար կպած, անվայել դիրքեր ընդունելով գալարվում էին։ Պավելի թիկունքում ինչ-որ մի հաստափոր մարդ ծանր էր շնչում։ Կորչագինը շրջվեց, որ հեռանա, երբ առաջին շարքում հենց էստրադայի մոտ ինչ-որ մեկը ոտքի ելավ և ցասկոտ բղավեց.

— Վե՛րջ պոռնկությանը։ Գրողի ծո՛ցը։

Պավելը ճանաչեց Ժարկիին։

Դաշնամուր նվագողն ընդհատեց նվագը, ջութակը վերջին անգամ ծղրտաց և հանդարտվեց։

Էստրադայի վրայի զույգը դադարեց գալարվել։ Բղավոցի վրա բազկաթոռների հետևից շարացած ֆշշացին.

— Ի՞նչ գռեհկություն՝ ընդհատեց համարը։

— Ամբողջ Եվրոպան է պարում։

— Ձայրացուցի՛չ է։

Բայց կոմունարցիների խմբից ավազակի նման չորս մատներով սուլեց Ջերեպովեցկի կոմերիտմիության գավկոմի քարտուղար Սերյոժա Ժբանովը։ Նրան օգնության եկան ուրիշները ևս, և զույգի հետքն էլ չմնաց էստրադայում։ Դատարկախոս կոնֆերանսյեն, որը ճարպիկ լակեյի էր նման, հասարակությանը հայտարարեց, թե խումբը մեկնում է։

— Գնալներդ լինի, գալներդ չլինի։ Կրունկներդ դեսը լինի,— ընդհանուր քրքիջի տակ նրան ճանապարհ դրեց առողջարանային խալաթով մի ջահել տղա։

Կորչագինն առաջին շարքում որոնեց ու գտավ Ժարկիին։ Երկար նստեցին Պավելի սենյակում։ Վանյան աշխատում էր կուսակցության օկրուգային կոմիտեներից մեկում որպես ագիտպրոպ։

— Իսկ գիտե՞ս, ես կին ունեմ։ Շուտով աղջիկ կամ տղա կունենամ,— ասաց Ժարկին։

— Օհո՛, ո՞վ է կինդ,— զարմացավ Կորչագինը։

Ժարկին կողքի գրպանից հանեց մի լուսանկար և զույգ տվեց Պավելին։

— Ճանաչո՞ւմ ես։

Նկարում Ժարկին ու Աննա Բորխարտն էին։

— Իսկ Դուբավան որտե՞ղ է,— ավելի ևս զարմանալով հարցրեց Պավելը։

— Դուբավան Մոսկվայում է։ Կուսակցությունից վտարվելուց հետո նա կոմհամալսարանից հեռացավ և այժմ սովորում է Մոսկվայի բարձրագույն տեխնիկական ուսումնարանում։ Ըստ տեղեկությունների, նրան վերականգնել են, սակայն իզուր։ Նա թունավորված մարդ է... Գիտե՞ս Իգնատը որտեղ է։ Նա այժմ նավաշինական գործարանի դիրեկտորի տեղակալն է։ Մյուսների մասին քիչ բան գիտեմ։ Իրարից կտրվել ենք։ Աշխատում ենք երկրի տարբեր անկյուններում,

բայց ինչ հաճելի՞ է հանդիպելն ու հինը հիշելը,— ասում էր Ժարկին։

Սենյակ մտավ Դորան և նրա հետ մի քանի հոգի ևս։ Բարձրահասակ տամբովցին դուռը ծածկեց։ Դորան նայեց Ժարկիի շքանշանին և հարցրեց Պավելին.

— Ընկերդ կուսակցության անդա՞մ է։ Որտե՞ղ է աշխատում։

Չհասկանալով, թե բանն ինչ է, Կորշագինը կարճառոտ պատմեց Ժարկիի մասին։

— Այդ դեպքում թող մնա։ Հենց նոր Մոսկվայից ընկերներ են եկել։ Նրանք մեզ կպատմեն կուսակցական վերջին նորությունները։ Որոշեցինք հավաքվել քեզ մոտ յուրատեսակ դոնփակ նիստի,— բացատրեց Դորան։

Համարյա բոլոր հավաքվածները, բացի Պավելից ու Ժարկիից, հին բոլշևիկներ էին։ Մոսկվայի վերահսկիչ հանձնաժողովի անդամ Բարտաշևը պատմեց նոր օպոզիցիայի մասին, որը գլխավորում էին Տրոցկին, Զինովևը և Կամենևը։

— Այսպիսի լարված պահին մեր ներկայությունը տեղերում անհրաժեշտ է,— իր խոսքն ավարտեց Բարտաշևը։— Ես վաղը մեկնում եմ։

Պավելի սենյակում տեղի ունեցած ժողովից երեք օր հետո առողջարանը ժամանակից շուտ դատարկվեց։ Սահմանված ժամանակից առաջ մեկնեց նաև Պավելը։

Կոմերիտմիության Կենտկոմում նրան երկար չպահեցին։ Կորշագինը նշանակվեց արդյունաբերության օկրուգներից մեկի կոմերիտմիության կոմիտեի քարտուղար, և մի շաբաթ հետո արդեն կազմակերպության քաղաքային ակտիվը լսում էր նրա առաջին ճառը։

Ուշ աշնանը կուսակցության օկրուգային կոմիտեի ավտոմեքենան, որով Կորշագինն ու երկու ուրիշ աշխատողներ գնում էին քաղաքից հեռու գտնվող շրջաններից մեկը, ընկավ ճանապարհի կողքի առուն և շուռ եկավ։

Բոլորն էլ խեղանդամվեցին։ Պարզվեց, որ ջարդվել է Կորշագինի աջ ոտքի ծունկը։ Մի քանի օրից նրան բերեցին Խարկովի վիրաբուժության ինստիտուտը։ Ուռած ծունկը զննելուց և ռենտգենյան նկարահանումից հետո բժշկական

խորհրդակցությունն ասաց, որ անհապաղ վիրահատում է անհրաժեշտ։

Կորշագինը համաձայնեց։

— Այդ դեպքում վաղն առավոտյան,— եզրակացրեց ծանրամարմին պրոֆեսորը, որը գլխավորում էր կոնսուլտացիան, և ոտքի ելավ։ Նրան հետևեցին նաև մյուսները։

Փոքրիկ, լուսավոր պալատ՝ մի հոգու համար։ Անբասիր մաքրություն և հիվանդանոցի վաղուց մոռացված առանձնահատուկ հոտ։ Կորշագինը շուրջը նայեց։ Սպիտակ սփռոցով կողասեղանիկ, սպիտակ աթոռակ և ուրիշ ոչինչ։

Սանիտարուհին ընթրիք բերեց։

Պավելն ընթրիքից հրաժարվեց։ Մահճակալին թիկն տված՝ նա նամակներ էր գրում։ Ոտքի ցավը խանգարում էր մտածել, ուտելու ախորժակ չուներ։

Երբ չորրորդ նամակը գրեց վերջացրեց, պալատի դուռը հանդարտ բացվեց, և Կորշագինն իր մահճակալի մոտ տեսավ սպիտակ խալաթով և նույնպիսի թասակով երիտասարդ մի կնոջ։

Իրիկնամուտի մթնշաղում նկատեց նուրբ գծագրություն ունեցող հոնքերը և մեծ, սև թվացող աչքերը։ Մի ձեռքին նա պորտֆել ուներ, մյուսում՝ մի թերթ թուղթ և մատիտ։

— Ես ձեր բուժող բժիշկն եմ,— ասաց նա,— այսօր հերթապահ եմ։ Հիմա հարցաքննությամբ կզբաղվեմ, և դուք, կամա թե ակամա, ստիպված կլինեք ամեն ինչ ինձ պատմել։

Կինը սիրալիր ժպտաց։ Ժպիտը «հարցաքննությունը» նվազ տհաճ դարձրեց։ Մի ամբողջ ժամ Կորշագինը պատմում էր ոչ միայն իր մասին, այլև նախատատերի։

Վիրահատման սենյակում քթները մառլայով կապած մի քանի մարդ կա։

Վիրաբուժական գործիքների նիկելի փայլը, նեղ սեղան, նրա տակ վիթխարի մի թաս։ Երբ Կորշագինը պառկեց սեղանին, պրոֆեսորը վերջացնում էր ձեռքերը լվանալը։ Թիկունքում շտապ-շտապ վիրահատության նախապատրաստումն էր ընթանում, Կորշագինը ետ նայեց։ Քույրը նըշ-

տարներ, շպրիցներ էր դասավորում։ Բժիշկ Բաժանովան բացում էր ոտի փաթաթանը։

— Այնտեղ մի նայեք, ընկեր Կորշագին, դա վատ է անդրադառնում նյարդերի վրա,— մեղմ ձայնով ասաց նա։

— Դուք ո՞ւմ նյարդերի մասին եք խոսում, բժի՛շկ,— և Կորշագինը հեգնորեն ժպտաց։

Մի քանի րոպե հետո բարձր դիմակը ծածկեց նրա դեմքը, պրոֆեսորն ասաց.

— Մի հուզվեք, հիմա քլորոֆորմ պիտի տանք։ Խոր շնչեք քթով և հաշվեցեք։

Դիմակի տակից խլացած ձայնը հանգիստ պատասխանեց.

— Լա՛վ։ Նախապես նախազգուշություն եմ խնդրում հնարավոր, հրապարակման ոչ ենթակա արտահայտությունների համար։

Պրոֆեսորը ժպիտը չկարողացավ պահել։

Քլորոֆորմի առաջին կաթիլները, հեղձուցիչ, գարշելի հոտ։

Կորշագինը խոր շնչեց և ջանալով հստակ արտասանել՝ սկսեց հաշվել։ Այսպես նա ոտք դրեց իր ողբերգության առաջին գործողության մեջ։

Արտյոմը ծրարը ճիշտ երկու մասի բաժանելով պատռեց և, չգիտես ինչու հուզվելով՝ նամակը բաց արեց։ Հայացքով խլեց առաջին տողերը, սկսեց վազել նրանց վրայով առանց հայացքը կտրելու։

«Արտյոմ, մենք շատ հազվադեպ ենք իրար գրում։ Տարին մեկ, երբեմն երկու անգամ։ Մի՞թե հարցը քանակի մեջ է։ Դու գրում ես, որ Շեպետովկայից ընտանիքով գնացել ես Կազատինսկի դեպոն, որպեսզի արմատները կտրես։ Հասկանում եմ, որ այդ արմատները Ստեշայի, նրա ազգականների և այլոց հետամնաց, մանր սեփականատիրական հոգեբանությունն է։ Ստեշայի տիպի մարդկանց վերափոխելը դժվար է, վախենում եմ, որ այդ քեզ նույնիսկ չհաջողվի։ Ասում ես, որ «ծերության օրերին սովորելը դժվար է», բայց քեզ մոտ դա վատ չի ընթանում։ Դու իրավացի չես, երբ այդպես համառորեն հրաժարվում ես արտադրությունից գնալ քաղսովետի նախագահի աշխատանքին։ Դու կովե՞լ ես իշխանության համար։ Ուրեմն վերցրու այն։ Հենց վաղն էլ ստանձնիր քաղսովետը և գործը ակսիր։

Այժմ իմ մասին։ Ինձ հետ ինչ-որ վատ բան է կատարվում։ Ես սկսել եմ հաճախ լինել հիվանդանոցներում, ինձ երկու անգամ կտրատել են, բավականաչափ արյուն եմ թափել, բավականաչափ ուժ եմ ծախսել, բայց դեռ ոչ ոք ինձ չի պատասխանել, թե ե՞րբ կգա այս բոլորի վերջը։

Ես կտրվել եմ աշխատանքից, ինձ համար նոր պրոֆեսիա եմ ձեռք բերել՝ «հիվանդանալ», ահագին տանջանք եմ կրում, և այս բոլորի հետևանքն այն է, որ աջ ոտքիս ծունկը այլևս չի շարժվում, մարմնիս վրա մի քանի կարեր կան, և վերջապես բժշկական վերջին հայտնագործությունը՝ յոթ տարի առաջ ողնաշարիս հարված եմ ստացել, իսկ հիմա ինձ ասում են, թե հարվածը կարող է թանկ նստել։ Ես պատրաստ եմ ամեն ինչ տանել, միայն թե շարք վերադառնամ։

Ինձ համար կյանքում չկա ավելի սարսափելի բան, քան շարքից դուրս գալը։ Այդ մասին մտածել անգամ չեմ կարող։ Ահա թե ինչու ես ամեն ինչի ընդառաջ եմ գնում, բայց բարելավում չկա, և ամպերն ավելի և ավելի են խտանում։ Առաջին վիրահատումից հետո հենց որ սկսեցի քայլել, աշխատանքի վերադարձա, բայց շուտով ինձ նորից հիվանդանոց բերեցին։ Այժմ տոմս եմ ստացել Ծվպատորիայի «Մայակ» առողջարանը գնալու համար։ Վաղը մեկնում եմ։ Մի վհատվիր, Արտյոմ, չէ որ ես հեշտությամբ կործանվողներից չեմ։ Իմ կյանքը լրիվ կբավարարի երեք մարդու համար։ Մենք դեռ կաշխատենք, ախպերս, առողջությունդ պահպանիր, տասը փութ բեռ միանգամից մի վերցրու։ Կուսակցությանը հետո նորոգումը թանկ է նստում։ Տարիները մեզ փորձ են տալիս, ուսումը՝ գիտելիքներ, և այդ բոլորը ոչ նրա համար, որ հիվանդանոցներին հյուր լինենք։ Սեղմում եմ ձեռքդ։

Պավել Կորշագին»։

Այն ժամանակ, երբ Արտյոմը իր թանձր հոնքերը խոժոռելով կարդում էր նամակը, Պավելը հիվանդանոցում հրա-

ժեշտ էր տալիս Բաժանովային։ Ձեռքը տալով նրան, Բաժանովան հարցրեց.

— Վա՞ղն եք Ղրիմ մեկնում։ Որտե՞ղ եք անցկացնելու ձեր այսօրվա օրը։

Կորշագինը պատասխանեց.

— Հիմա կգա ընկեր Ռոդկինան։ Այս օրն ու գիշերը նրանց ընտանիքում կանցկացնեմ, իսկ առավոտյան նա ինձ կուղեկցի կայարան։

Բաժանովան ճանաչում էր Դորային, որը հաճախ էր գալիս Պավելի մոտ։

— Հիշեցեք, ընկեր Կորշագի՛ն, մեր խոսակցությունն այն մասին, որ դուք մեկնելուց առաջ կհանդիպեք իմ հոր հետ։ Ես նրան մանրամասնորեն պատմել եմ ձեր հիվանդության մասին։ Ես ուզում եմ, որ նա ձեզ քննի։ Այդ կարելի է անել այսօր երեկոյան։

Կորշագինն անհապաղ համաձայնեց։

Նույն երեկոյան Իրինա Վասիլևնան Պավելին ներս էր տանում իր հոր ընդարձակ կաբինետը։

Նշանավոր վիրաբույժն աղջկա ներկայությամբ ուշադիր քննեց Կորշագինին։ Իրինան կլինիկայից բերել էր ռենտգենյան նկարները և բոլոր անալիզները։ Պավելը չէր կարող չնկատել Իրինա Վասիլևնայի հանկարծական գունատությունը հոր մի տարօրինակ ռեպլիկից հետո, որ նա արտասանեց լատիներեն։ Կորշագինը նայում էր պրոֆեսորի մեծ, ճաղատ գլխին, աշխատում էր որևէ բան կարդալ նրա սուր աչքերի մեջ, բայց Բաժանովն անթափանցելի էր։

Երբ Պավելը հագնվեց, Բաժանովը քաղաքավարի հրաժեշտ տվեց նրան. նա ինչ-որ նիստի էր գնում և դստերը հանձնարարեց պատմել իր եզրակացությունը։

Իրինա Վասիլևնայի սենյակում, որը նուրբ ճաշակով էր կահավորված, Կորշագինը պառկեց բազմոցին՝ սպասելով, թե երբ կխոսի Բաժանովան։ Բայց նա չգիտեր, թե ինչպես սկսի, ինչ ասի։ Նրա համար շատ ծանր էր։ Հայրը նրան հայտարարեց, թե բժշկությունը չունի դեռ այնպիսի միջոցներ, որոնք կարողանան կանգնեցնել Կորշագինի օրգանիզմում տեղի ունեցող բորբոքման պրոցեսի կործանարար աշխատանքը։ Վիրաբուժական միջամտությանը նա դեմ

էր արտահայտվել։ «Այս երիտասարդ մարդուն սպասում է անշարժության ողբերգությունը, և մենք այն կանխելու գործում անզոր ենք»։

Որպես բժիշկ և բարեկամ, նա հնարավոր չհամարեց ամեն ինչ ասել և զգույշ արտահայտություններով Կորշագինին հաղորդեց ճշմարտության մի փոքրիկ մասը միայն։

— Ես համոզված եմ, ընկեր Կորշագին, որ Եվպատորիայի ցեխը բեկում կստեղծի, և դուք աշնանը կկարողանաք աշխատանքի վերադառնալ։

Այդ ասելիս նա մոռացել էր, որ երկու սուր աչքեր շարունակ դիտում են իրեն։

— Ձեր խոսքերից, ավելի ճիշտ այն բոլորից, ինչ դուք մինչև վերջ չեք ասում, ես տեսնում եմ դրության ամբողջ լրջությունը։ Հիշո՞ւմ եք, ես ձեզ խնդրել եմ, որ ինձ հետ միշտ շիտակ խոսեք։ Ինձանից ոչինչ թաքցնել պետք չէ, ես չեմ ուշաթափվի և ոչ էլ ինձ կմորթեմ։ Բայց ես շատ եմ ցանկանում իմանալ, թե առչևում ինձ ինչ է սպասում,— ասաց Պավելը։

Բաժանովան կատակի տվեց։

Այդ գիշեր Պավելն այդպես էլ չիմացավ ճշմարտությունն իր վաղվա օրվա մասին։ Երբ նրանք իրար հրաժեշտ տվին, Բաժանովան մեղմ ձայնով ասաց.

— Մի մոռացեք ձեր նկատմամբ իմ բարեկամական վերաբերմունքի մասին, ընկեր Կորշագին։ Ձեր կյանքում ամեն տեսակ դրություններ հնարավոր են։ Եթե իմ օգնությունը կամ խորհուրդը պետք լինի, գրեցեք ինձ։ Ես կանեմ ամեն բան, ինչ իմ ուժերը կներեն։

Նա լուսամուտից դիտում էր, թե ինչպես կաշվե բաճկոնով բարձրահասակ կերպարանքը ձեռնափայտին դժվարությամբ հենվելով՝ շքամուտքից շարժվում էր դեպի կառքը։

Նորից Եվպատորիա։ Հարավային տապ։ Արևառ աղմկոտ մարդիկ՝ գլխներին ոսկեկար թասակներ։ Ավտոմեքենան տասը րոպեի ընթացքում ուղևորներին հասցնում է «Մայակ» առողջարանի զորշ կրաքարից կառուցված երկհարկանի շենքը։

Հերթապահ բժիշկը նորեկներին բաժանում է ըստ սենյակների։

— Դուք ի՞նչ ուղեգրով եք, ընկե՛ր,— հարցրեց նա Կորչագինին՝ կանգ առնելով № 11 սենյակի դեմ։

— Ուկրաինայի Կ(բ)Կ Կենտկոմի։

— Այդ դեպքում մենք ձեզ կտեղավորենք այստեղ ընկեր էբների հետ միասին։ Նա գերմանացի է և խնդրել է, որ իրեն ռուս հարևան տանք,— բացատրեց բժիշկը և դուռը բախեց։ Սենյակից կոտրված ռուսերենով պատասխանեցին.

— Մտե՛ք։

Սենյակում Կորչագինը դրեց իր ճամպրուկը և շրջվեց դեպի մահճակալին պառկած շիկահեր, գեղեցիկ, կապույտ ու աշխույժ աչքերով տղամարդը։ Գերմանացին բարեհոգի ժպիտով դիմավորեց նրան։

— Գուտ մորգեն, գենոսսեն։ Ես ուզում աշել բարև,— ուղղեց նա և Պավելին մեկնեց իր գունատ, երկար մատներով ձեռքը։

Մի քանի րոպե հետո Պավելը նստած էր նրա մահճակալի մոտ, և նրանց միջև աշխույժ զրույց էր տեղի ունենում այն «միջազգային լեզվով», երբ բառերն օժանդակ դեր են կատարում, իսկ անհասկանալի ֆրազը լրացնում են կռահումը, շարժուձևերը, դիմախաղը, առհասարակ չգրված էսպերանտոյի բոլոր միջոցները։ Պավելն արդեն գիտեր, որ էբները գերմանացի բանվոր է։

1923 թ. Համբուրգի ապստամբության ժամանակ էբների աղդրին դնդակ էր դիպել, և այժմ ահա հին վերքը բացվել էր և նրան անկողին գցել։ Չնայած տանջանքներին՝ նա իրեն առույգ էր պահում և դրանով անմիջապես վաստակեց Պավելի հարգանքը։

Ավելի լավ հարևան Կորչագինը չէր էլ երազում ունենալ։ Սա առավոտից մինչև երեկո իր հիվանդությունների մասին չի պատմի և չի նվնվա։ Ընդհակառակը, նրա հետ քո ձախորդություններն էլ կմոռանաս։

«Միայն ափսոս, որ ես գերմաներենի մեջ խեղճ եմ»,— մտածեց նա։

Պարտեզի մի անկյունում մի քանի ճոճաթոռներ կան, բամբուկից պատրաստված սեղան և երկու սայլակ։ Բուժման պրոցեդուրաներից հետո իրենց ամբողջ օրն այստեղ էին անցկացնում այն հինգ հոգին, որոնց հիվանդները «Կոմինտերնի գործկոմ» էին անվանում։

Մի սայլակում թիկն էր տալիս էբները, մյուսում՝ Կորչագինը, որին քայլելն արգելել էին, մյուս երեքն էին՝ ծանրաշարժ էստոնացի Վայմանը՝ Ղրիմի հանրապետության տուտրի ժողկոմատի աշխատակից, Մարթա Լաուրինը՝ լատիշուհի, խած աչքերով երիտասարդ մի կին, որ նման էր տասնութամյա աղջկա, և Լեդենևը, սպիտակած քունքերով բարձրահասակ մի հսկա սիբիրցի։ Իսկապես, այստեղ հինգ ազգությունների ներկայացուցիչներ կային՝ գերմանացի, էստոնացի, լատիշուհի, ռուս և ուկրաինացի։ Մարթան և Վայմանը տիրապետում էին գերմաներենին, և էբները օգտագործում էր նրանց որպես թարգմանիչների։ Պավելին և էբներին մտերմացրել էր ընդհանուր սենյակը, Մարթային և Վայմանին էբների հետ մոտեցրել էր գերմաներեն իմանալը, իսկ Լեդենևին ու Կորչագինին՝ շախմատը։

Մինչև Ինոկենտի Պավլովիչ Լեդենևի գալը Կորչագինը առողջարանում շախմատի «չեմպիոն» էր։ Առաջնության համար մղվող երկարատև պայքարից հետո նա այդ կոչումը խլեց Վայմանից։ Վայմանը պարտվեց, և այդ բանը սառնարյուն էստոնացուն հավասարակշռությունից դուրս բերեց։ Նա երկար ժամանակ չէր կարողանում իր պարտությունը Կորչագինին ներել։ Բայց շուտով առողջարանում հայտնվեց մի բարձրահասակ ծերունի, որը չնայած իր հիսուն տարեկան լինելուն՝ շատ երիտասարդ տեսք ուներ, և Կորչագինին առաջարկեց մի պարտիա խաղալ։ Կորչագինը, կասկած անգամ չունենալով վտանգի մասին, հանգիստ սկսեց թագուհու գամբիտով, որին Լեդենևը պատասխանեց կենտրոնական զինվորների դեբյուտով։ Որպես «չեմպիոն» Պավելը պիտի խաղար ամեն մի նոր եկող շախմատիստի հետ։ Այդ պարտիաները դիտելու համար միշտ շատ մարդ էր հավաքվում։ Իններորդ քայլից արդեն Կորչագինը տեսավ, թե ինչպես Լեդենևի կանոնավոր հարձակվող զինվորները ճնշում են իրեն։ Նա հասկացավ, որ իր առաջ վտան-

գավոր հակառակորդ է կանգնած. իզուր Պավելն այդպես անզգույշ վերաբերվեց այդ խաղին։

Երեք ժամ տևող մարտից հետո, չնայած իր բոլոր ջանքերին, իր ամբողջ լարմանը՝ Պավելն ստիպված եղավ անձնատուր լինել։ Նա իր տանուլ տալն ավելի շուտ տեսավ, քան շրջապատողներից որևէ մեկը։ Նայեց իր խաղակցին։ Լեդենևը ժպտաց ծերունական բարի ժպիտով։ Պարզ էր, որ նա ևս տեսնում էր Պավելի պարտությունը։ Էստոնացին, որ հուզմունքով և չթաքցրած ցանկությամբ սպասում էր Կորչագինի պարտությանը, դեռ ոչինչ չէր նկատում։

— Ես միշտ մինչև վերջին զինվորը դիմանում եմ,— ասաց Պավելը, և Լեդենևն ի պատասխան նրան միայն հասկանալի այդ նախադասության՝ գլխի շարժումով հավանություն տվեց։

Հինգ օրվա ընթացքում Կորչագինը Ինոկենտի Պավլովիչի հետ տասը պարտիա խաղաց, որից յոթը տարվեց, երկուսը տարավ, իսկ մեկն էլ ոչ ոքի եղավ։

Վայմանը հրճվում էր.

— Ա՛յ, շնորհակալություն, ընկեր Լեդենև։ Ինչ լավ խփեցիք դրան։ Այդպես էլ պետք էր։ Մեզ՝ հին շախմատիստներիս, բոլորիս էլ տարավ, բայց ինքն էլ ծերունուց պարտվեց։ Հա-հա-հա...

— Հը՞, տարվելը տհա՞ճ է,— ձեռ էր առնում նա իր պարտված հաղթողին։

Կորչագինը կորցրեց «չեմպիոնի» կոչումը, բայց այդ խաղալիքային պատվի փոխարեն հանձին Ինոկենտի Պավլովիչի գտավ մի մարդու, որը հետագայում նրա համար մոտ ու թանկ մարդ դարձավ։ Շախմատի դաշտում Կորչագինի պարտությունը պատահական չէր։ Նա հասկացել էր շախմատային խաղի մակերեսային ստրատեգիան միայն. շախմատիստը տարվեց վարպետին, որ գիտեր խաղի բոլոր գաղտնիքները։

Կորչագինն ու Լեդենևը մի ընդհանուր թվական ունեին. Կորչագինը ծնվել էր այն թվականին, երբ Լեդենևը կուսակցության մեջ էր մտել։ Երկուսն էլ բոլշևիկների երիտասարդ և հին գվարդիայի տիպիկ ներկայացուցիչներն էին։ Մեկն ուներ կենսական ու քաղաքական մեծ փորձ, ընդհատակի,

ցարական բանտերի, հետո՝ մեծ պետական աշխատանքի տարիներ, մյուսը՝ վառվռուն պատանեկություն, և ընդամենը պայքարի ութ տարի, որոնք կարող էին այրել շատ կյանքեր։ Եվ նրանք երկուսն էլ՝ ծերն ու երիտասարդը, ջերմ սիրտ ունեին և քայքայված առողջություն։

Երեկոները էբների ու Կորչագինի սենյակն ակումբ էր դառնում։ Այստեղից էին դուրս գալիս քաղաքական բոլոր նորությունները։ Երեկոները № 11 սենյակն աղմկոտ էր լինում։ Սովորաբար Վայմանն աշխատում էր ոչ այնքան վայելուչ անեկդոտ պատմել, այդպիսի անեկդոտների մեծ սիրահար էր նա, բայց անմիջապես էլ Մարիայի և Կորչագինի կրկնակի գնդակոծությանն էր ենթարկվում։ Մարթան կարողանում էր նրան նուրբ ու խայթող հեգնանքով կտրել. երբ այդ չէր օգնում, Կորչագինն էր միջամտում։

— Վա՛յման, լավ կլինի հարցնես, գուցե քո «սրամտությունը» բոլորովին էլ մեր ճաշակով չէ։— Ես առհասարակ չեմ հասկանում, այդ ինչպես է քեզ մոտ համատեղվում...— անհանգիստ տոնով սկսում էր Կորչագինը։

Վայմանը կախ էր գցում մոտ շրթունքը, և նրա նեղ աչքերը հեգնաբար նայում էին նրանց դեմքերին։

— Ստիպված ենք գլխաքաղուսվարչությանը կից բարոյականության տեսչություն հաստատել և Կորչագինին էլ հանձնարարել որպես ավագ տեսուչ։ Մարթային ես դեռ հասկանում եմ, նրանը կանացի պրոֆեսիոնալ օպոզիցիա է, բայց Կորչագինն ուզում է անմեղ տղա երևալ, ինչ-որ կոմերիտական մանկան նման մի բան... Եվ հետո ես առհասարակ չեմ սիրում, երբ ձուն է հավին սովորեցնում։

Կոմունիստական բարոյականության մասին այսպիսի վրդովված վեճից հետո անվայել անեկդոտների հարցը սկզբունքային քննարկման դրվեց։ Մարթան տեսակետները թարգմանեց էբներին։

— Էրոտիկ անեկդոտ՝ այնքան էլ լավ չէ, ես Պավլուշայի հետ համաձայն եմ,— արտահայտվեց Ադամը։

Վայմանն ստիպված եղավ նահանջել։ Նա ամեն կերպ կատակի էր տալիս, բայց այլևս անեկդոտներ չէր պատմում։

Կորչագինը Մարթային կոմերիտուհի էր համարում։ Աչքի չափով նրան համարում էր մի տասնինը տարեկան։ Որքան

զարմացավ նա, երբ մի անգամ նրա հետ ունեցած խոսակցությունից իմացավ, որ նա տասնյոթ թվից կուսակցության անդամ է, որ երեսունմեկ տարեկան է և որ եղել է լատիշական կոմկուսակցության ակտիվ աշխատողներից մեկը։ Տասնութ թվին սպիտակները նրան գնդակահարության են դատապարտած եղել, բայց անմիջապես հետո սովետական կառավարությունը նրան ուրիշ ընկերների հետ միասին փոխանակել է գերիների հետ։ Այժմ նա աշխատում է «Պրավդա»-ում և միաժամանակ բուհ է վերջացնում։ Թե ինչպես սկսվեց նրանց մտերմությունը, Կորչագինը գլխի չընկավ, բայց փոքրիկ լատիշուհին, որ հաճախ էր լինում էբների մոտ, «հընգյակից» անբաժան դարձավ։

Ընդհատակային էգլիտը, որ նույնպես լատիշ էր, խորամանկորեն ու կատակով ծաղրում էր նրան.

— Մարթո՛ չկա, իսկ խեղճ Օղոլը Մոսկվայում ի՞նչ պիտի անի։ Այդպես հո չի կարելի։

Առավոտները զանգից մի րոպե առաջ առողջարանում ուժեղ ձայնով կանչում էր մի աքաղաղ։ Էբները գերազանց նմանակում էր աքաղաղի կանչը։ Անձնակազմի բոլոր ջանքերը՝ գտնելու հայտնի չէ թե ինչպես առողջարան ընկած աքաղաղին, ապարդյուն էին։ Էբներին դա մեծ բավականություն էր պատճառում։

Ամսի վերջին Կորչագինն իրեն վատ զգաց։ Բժիշկները նրան պառկեցրին անկողնում։ Դա շատ վշտացրեց էբներին։ Նա սիրեց այդ չվհատվող, կենսախինդ, այնպիսի մեծ եռանդի տեր և այդպես վաղ իր առողջությունը կորցրած երիտասարդ բոլշևիկին։ Իսկ երբ Մարթան էբներին պատմեց, որ բժիշկները Կորչագինին ողբերգական ապագա են գուշակում, Ադամը հուզվեց։

Մինչև առողջարանից մեկնելը Կորչագինին թույլ չտվեցին քայլել։

Պավելին հաջողվում էր իր տանջանքները թաքցնել շրջապատողներից. միայն Մարթան էր նրա դեմքի անսովոր գունատությունից կռահում այդ մասին։ Մեկնելուց մի շաբաթ առաջ Ուկրաինայի Կենտկոմից Պավելը նամակ ստացավ, որի մեջ հաղորդվում էր, թե նրա արձակուրդը երկու ամսով երկարաձգված է, և որ առողջարանային եղրակացության համաձայն, նրա աշխատանքի վերադառնալն առողջության ներկա պայմաններում անհնարին է։ Նամակի հետ փող էին ուղարկել։

Պավելն այդ առաջին հարվածն ընդունեց այնպես, ինչպես մի ժամանակ Ժուխրայի հարվածներն էր ընդունում, որը նրան բոքս էր սովորեցնում. այն ժամանակ էլ էր ընկնում, բայց անմիջապես ոտքի էր ելնում։

Անսպասելի կերպով նամակ ստացավ մորից։ Պառավը գրում էր, թե Ծվպատորիայից ոչ հեռու նավահանգստային մի քաղաքում ապրում էր նրա վաղեմի ընկերուհին՝ Ալբինա Կյուցամը, որի հետ մայրն արդեն տասնհինգ տարի չէր տեսնվել, և որ ինքը շատ է խնդրում որդուն այցելել նրան։ Այդ պատահական նամակը մեծ դեր խաղաց Պավելի կյանքում։

Մի շաբաթ հետո առողջարանի «հայրենակիցները» Կորչագինին ջերմորեն դեպի նավահանգիստ ուղեկցեցին։ Հրաժեշտի ժամանակ էբները սրտագին գրկեց ու համբուրեց Պավելին, որպես եղբոր։ Իսկ Մարթան անհետացել էր, և Պավելը մեկնեց առանց նրան հրաժեշտ տալու։

Իսկ հաջորդ առավոտյան Կորչագինին նավահանգստից բերող կառքը կանգ առավ ոչ մեծ պարտեզի մեջ գտնվող փոքրիկ տնակի մոտ, և Կորչագինն իր ուղեկցորդին ուղարկեց հարցնելու, թե այդտե՞ղ են ապրում, արդյոք, Կյուցամները։

Կյուցամների ընտանիքը հինգ հոգուց էր բաղկացած. Ալբինա Կյուցամը՝ մայրը, տարիքով, լիքը-լիքը մի կին, սև աչքերի ծանր, ճնշող հայացքով և ծերացած դեմքի վրա վաղեմի գեղեցկության հետքերով, նրա երկու աղջիկները՝ Լյոլյան և Տայան, Լյոլյայի փոքրիկ որդին և ծերունի Կյուցամը՝ վարազի նմանություն ունեցող անդուրեկան ու հաստալիկ մի մարդ։

Ծերունին կոոպերատիվում էր ծառայում, կրտսեր դուստրը սև աշխատանքի էր գնում, ավագը՝ Լյոլյան, որն անցյալում մեքենագրուհի էր եղել, վերջերս բաժանվել էր իր հարբեցող ու խուլիգան ամուսնուց և նստած էր առանց աշխատանքի։ Իր օրերը նա տանն էր անցկացնում, իր տղայի հետ էր զբաղվում, մորն էր օգնում տնտեսության մեջ։

Աղջիկներից բացի, նրանք մի որդի էլ ունեին, Ժորժը, բայց նա գտնվում էր Լենինգրադում։

Կյուցամների ընտանիքը Կորշագինին սրտաբաց ընդունեց։ Ծերունին միայն հյուրին նայեց մի շար, ղգուշավորություն արտահայտող հայացքով։

Կորշագինն Ալբինային համբերությամբ պատմեց այն բոլորը, ինչ նա գիտեր Կորշագինների ընտանեկան խրոնիկայից, միաժամանակ ինքն էլ հարցուփորձ արեց նրանց կյանքի ու ապրուստի մասին։

Լյոլյան քսաներկու տարեկան էր։ Նա կարճ կտրած շագանակագույն մազերով, հասարակ, լայն ու բաց դեմքով մի աղջիկ էր։ Լյոլյան անմիջապես բարեկամացավ Պավելի հետ և սիրով նրան հաղորդակից էր դարձնում ընտանեկան բոլոր գաղտնիքներին։ Նրանից Կորշագինն իմացավ, որ ծերունին բռնակալական կոպտությամբ սեղմել է ամբողջ ընտանիքը, սպանում է ամեն մի նախաձեռնություն և կամքի ամեն մի արտահայտություն։ Սահմանափակ, նեղմիտ, ծայրահեղորեն մանրախնդիր լինելով՝ նա մշտական ահի մեջ էր պահում ընտանիքը և դրանով վաստակում իր երեխաների խոր թշնամանքը և կնոջ բուռն ատելությունը, որն ամբողջ քսանհինգ տարի պայքարել էր նրա բռնակալության դեմ։ Աղջիկները միշտ մոր կողմն էին պահում, և ընտանեկան այդ անընդհատ վեճերը թունավորում էին նրանց կյանքը։ Այսպես անցնում էին մանր ու մեծ անվերջ վիրավորանքներով լեցուն օրերը։

Երկրորդ այլանդակն ընտանիքում Ժորժն էր։ Լյոլյայի պատմածներից դատելով, դա մի տիպիկ թեթևսոլիկ էր, կավարար ու պոռոտախոս, լավ ուտելու ու պճնվելու սիրահար, խմելուն հակված։ Տասնամյակն ավարտելուց հետո Ժորժը՝ մոր սիրելին, նրանից փող պահանջեց մայրաքաղաք գնալու համար։

— Ես համալսարան եմ գնալու։ Թող Լյոլյան իր մատանին վաճառի, և դու էլ քո իրերը։ Ինձ փող է հարկավոր, իսկ թե դուք որտեղից ձեռք կբերեք, ինձ համար միևնույն է։

Ժորժը լավ գիտեր, որ մայրը նրան ոչինչ չի մերժի, և դրանից անխիղճ կերպով օգտվում էր։ Քույրերին արհամարհանքով էր վերաբերվում, վերևից, նրանց իրենից ցածր էր համարում։ Բոլոր միջոցները, որ կարողանում էր ծերունուց պոկել, և Տայայի վաստակած փողը մայրն ուղարկում էր որդուն։ Իսկ նա քննությունների ժամանակ խայտառակ կերպով կտրվելուց հետո՝ ուրախ-զվարթ ապրում էր իր քեռու մոտ և մորը տեռորի ենթարկում փող պահանջող հեռագրերով։

Կրտսեր աղջկան՝ Տայային, Կորշագինը ուշ երեկոյան միայն տեսավ։ Մայրը գավթում շշնջալով պատմում էր նրան հյուրի գալու մասին։ Պավելին բարևելով՝ նա շփոթված ձեռքը տվեց և մինչև փոքրիկ ականջների ծայրերը կարմրեց անծանոթ երիտասարդ մարդու առջև։ Պավելն անմիջապես չթողեց նրա ամուր, կոշտուկների զգալի թմբիկներ ունեցող ձեռքը։

Տայան տասնիններ մեջ էր։ Նա գեղեցկուհի չէր, բայց մեծ, խաժ աչքերը, նուրբ, մոնղոլական գծագրությամբ հոնքերը, քթի գիծը և թարմ ու համառ շրթունքները նրան գրավիչ էին դարձնում։ Երիտասարդ, առաձգական կրծքի համար շերտավոր բանվորական բլուզը նեղ էր։

Քույրերն ապրում էին երկու փոքրիկ սենյակներում։ Տայայի սենյակում կար մի նեղ երկաթե մահճակալ, կոմոդ, որի վրա դրված էին զանազան մանր-մունր իրեր, փոքրիկ մի հայելի, իսկ պատին՝ մոտ երեք տասնյակ լուսանկարներ ու նկարներ։ Լուսամուտին դրված էին կարմիր խորդենու և բաց վարդագույն աստղածաղկի երկու ծաղկամաններ։ Մուսլինե վարագույրը հավաքվում էր երկնագույն երիզակով։

— Տայան չի սիրում արական սեռի ներկայացուցիչներին իր սենյակը թողնել, իսկ ձեզ համար, տեսնո՞ւմ եք, բացառություն է արվում,— կատակում էր քրոջ հասցեին Լյոլյան։

Հաջորդ օրը երեկոյան ընտանիքը թեյում էր ծերունիների հարկաբաժնում։ Տայան իր սենյակում էր և այնտեղից ականջ էր դնում ընդհանուր խոսակցությանը։ Կյուցամը կենտրոնացած տեսքով բաժակի մեջ խառնում էր շաքարը և ակնոցների վերևից շար-շար նայում իր առջև նստած հյուրին։

— Այժմյան ընտանեկան օրենքները դատապարտում եմ,— ասում էր նա։— Ուզեց՝ ամուսնացավ, չուզեց՝ բա-

ժանվեց։ Լիակատար աղատություն։— Ներունին խեղդվելով հազաց։ Շունչ առնելուց հետո Էյոլյային ցույց տվեց։

— Իր սիրեկանի հետ ամուսնացավ առանց թույլտվության և բաժանվեց առանց հարցնելու։ Իսկ այժմ բարեհաճեցեք ուրախանալ, կերակրիր նրան և ինչ-որ մեկի երեխային։ Խայտառակություն։

Էյոլյան տանջալիորեն կարմրեց և արցունքով լի աչքերը թաքցրեց Պավելից։

— Իսկ ի՞նչ, ձեր կարծիքով նա պիտի ապրե՞ր այդ պարազիտի հետ,— հարցրեց Պավելը՝ իր վայրի կրակներով բռնկվող հայացքը չհեռացնելով ծերունուց։

— Հարկավոր էր նայել, թե ո՞ւմ հետ է ամուսնանում։

Ալբինան խառնվեց խոսակցությանը։ Դժվարությամբ զսպելով իր զայրույթը՝ նա ընդհատվող ձայնով ասաց.

— Լսի՛ր, ծերո՛ւկ, ինչո՞ւ ես օտար մարդու մոտ սկսում այդ խոսակցությունները։ Կարելի է մի ուրիշ բանի մասին խոսել և ոչ թե այդ մասին։

Ներունին կտրուկ շարժումով նրա կողմը շրջվեց։

— Ես գիտեմ, թե ինչ եմ ասում։ Այդ ո՞ր ժամանակից են սկսել ինձ նկատողություններ անել։

Գիշերը Պավելը երկար մտածում էր Կյուցամների ընտանիքի մասին։ Պատահաբար այստեղ ընկնելով՝ նա ակամա դառնում էր ընտանեկան դրամայի մասնակից։ Նա մտածում էր այն մասին, թե ինչպես օգնի մորն ու աղջիկներին՝ այդ ստրկությունից դուրս գալու։ Նրա անձնական կյանքի ընթացքն արգելակվում էր, հենց իր առջև կանգնում էին չլուծված հարցեր, և այժմ ավելի քան երբևէ, դժվար էր վճռական գործողություններ նախաձեռնելը։

Մի ելք կար. պառակտել ընտանիքը, մայրն ու աղջիկները պետք է ընդմիշտ հեռանային ծերունուց։ Բայց դա այնքան էլ հեշտ չէր։ Նա ի վիճակի չէր ընտանեկան այդ հեղափոխությամբ զբաղվել, մի քանի օրից նա պետք է հեռանար և գուցե այլևս երբեք չհանդիպեր այս մարդկանց։ Չթողնի՞, արդյոք, ամեն ինչ իր նորմալ ընթացքին և փոշի չբարձրացնի այս ցածրիկ ու նեղվածք տան մեջ։ Բայց ծերունու նոզկալի պատկերը նրան հանգիստ չէր տալիս։ Պավելը մի քանի պլաններ գծեց, բայց դրանք բոլորն էլ անիրագործելի էին թվում։

Հաջորդ օրը կիրակի էր, և երբ Կորշագինը քաղաքից վերադարձավ, տանը միայն Տայային գտավ։ Մյուսները աղգականների մոտ հյուր էին գնացել։

Պավելը մտավ նրա սենյակը և հոգնած նստեց աթոռին։

— Դու ինչո՞ւ ոչ մի տեղ զբոսնելու, զվարճանալու չես գնում,— հարցրեց նա Տայային։

— Իսկ ես ոչ մի տեղ գնալ չեմ ուզում,— կամացուկ պատասխանեց նա։

Պավելը հիշեց իր գիշերային ծրագրերը և որոշեց գրանք ստուգել։ Շտապելով, որպեսզի ոչ ոք չխանգարի, նա ուղղակի սկսեց.

— Լսի՛ր, Տա՛յա, եկ իրար «դու» ասենք, ինչի՞ համար են չինական այդ ձևականությունները։ Ես շատով կգնամ։ Ես ձեզ, հակառակի պես, վատ ժամանակ պատահեցի, երբ ինքս եմ նեղ տեղն ընկել, թե չէ մենք գործն այլ կերպ կշրջեինք։ Մի տարի առաջ լիներ այդ, մենք բոլորս միասին այստեղից կմեկնեինք։ Այնպիսի ձեռքերի համար, ինչպիսին քոնն ու Էյոյայինն են, աշխատանք կճարվի։ Ներունու հետ պետք է վերջացնել, նրան չես համոզի։ Բայց այժմ այդ անել չի կարելի։ Ես դեռ ինքս էլ չգիտեմ, թե ինձ հետ ինչ կլինի, ահա թե ինչու ես, այսպես ասած, զինաթափ եմ։ Ի՞նչ անենք այժմ։ Ես, ես ամեն կերպ կձգտեմ աշխատանքի վերադառնալ, բժիշկներն այնտեղ իմ մասին, սատանան գիտե, թե ինչ են գրել, և ընկերներս ինձ ստիպում են անվերջ բժշկվել։ Դե՛, դա մենք այնտեղ կկաղմակերպենք... Ես կգրեմ մորս, և կտեսնենք, թե այս շիլափլավն ինչպես կվերջացնենք։ Ես, այնուամենայնիվ, ձեզ այսպես չեմ թողնի։ Միայն ահա թե ինչ, Տայո՛ւշա, ձեր, մասնավորապես քո կյանքը հարկավոր է շուտ տալ։ Դրա համար դու ուժ և ցանկություն ունե՞ս։

Տայան բարձրացրեց խոնարհած գլուխը և կամացուկ ասաց.

— Ցանկություն ունեմ, իսկ ուժ՝ չգիտեմ։

Այդ անվճռականությունը Կորշագինին հասկանալի էր։

— Ոչինչ, Տայո՜ւշա։ Այդ մենք կհարթենք, միայն թե ցանկություն լինի։ Իսկ ասա ինձ, ընտանիքը քեզ շա՞տ է կապում։

Հանկարծակիի եկած Տայան անմիջապես չպատասխանեց։

— Ես մորս եմ շատ խղճում,— վերջապես ասաց նա։— Հայրս նրան իր ամբողջ կյանքում տանջել է, այժմ էլ Ժորկան է նրան հալումաշ անում, իսկ ես նրան շատ եմ խղճում... Թեև նա ինձ այնպես չի սիրում, ինչպես Ժորկային...

Շատ խոսեցին նրանք այդ օրը և մյուսների գալուց քիչ առաջ Պավելը կատակով ասաց.

— Զարմանալի է, ինչպես է, որ ծերունին քեզ չի ստիպել որևէ մեկի հետ ամուսնանալ։

Տայան վախեցած ձեռքը թափ տվեց։

— Ես չեմ ամուսնանա։ Լյուլյային տեսնելով, կշտացա։ Ոչ մի դեպքում չեմ ամուսնանա։

Պավելը ծիծաղեց։

— Ուրեմն ուխտել ես ամբողջ կյանքումդ չամուսնանա՞լ։ Իսկ եթե հանկարծ որևէ առարկություն չվերցնող տղա պատահի, մի խոսքով՝ լավ տղա, այն ժամանակ ինչպե՞ս։

— Չեմ ամուսնանա։ Նրանք բոլորն էլ լավն են, երբ դեռ լուսամուտների տակ են պտտվում։

Պավելը հաշտվողաբար ձեռքը նրա ուսին դրեց։

— Լավ, առանց ամուսնու էլ կարելի է լավ ապրել։ Միայն թե դու տղաների հետ արդեն շատ ես անբարեհամբույր։ Լավ է դեռ, որ ինձ չես կասկածում փեսայանալու ցանկության մեջ։ Թե չէ գլխիս ընկույզ կջարդեիր,— և նա իր սառը ձեռքով բարեկամաբար շոյեց շփոթված աղջկա ձեռքը։

— Քեզ նմաններն իրենց համար այլ կին են փնտրում։ Մենք նրանց ինչին ենք պետք,— կամացուկ ասաց նա։

Մի քանի օր հետո գնացքը Կորշագինին Խարկով էր տանում։ Կայարանում նրան ուղեկցում էին Տայան, Լյուլյան և Ալբինան իր քրոջ՝ Ռոզայի հետ։ Հրաժեշտ տալիս Ալբինան նրանից խոսք վերցրեց, որ երիտասարդներին չի մոռանա,

կոգնի նրանց փոսից դուրս գալու։ Նրան հրաժեշտ տվին այնպես, կարծես հարազատ լիներ, իսկ Տայայի աչքերում արցունքներ կային։ Լուսամուտից դեռ երկար ժամանակ տեսնում էր Լյուլյայի ձեռքի սպիտակ թաշկինակը և Տայայի շերտավոր բլուզը։

Խարկովում իջևանեց իր բարեկամ Պետյա Նովիկովի մոտ՝ չցանկանալով անհանգստացնել Դորային։ Հանգստացավ և գնաց Կենտկոմ։ Սպասեց Ակիմին, և երբ մենակ մնացին, խնդրեց, որ անմիջապես աշխատանքի ուղարկի։ Ակիմը գլուխը բացասաբար տարուբերեց։

— Այդ անել չի կարելի, Պավե՛լ։ Մեզ մոտ կա բժշկական հանձնաժողովի և կուսակցության Կենտկոմի որոշումը, որտեղ գրված է. «Նկատի ունենալով առողջության ծանր վիճակը՝ բուժման համար ուղարկել նևրոպաթոլոգիկ ինստիտուտ և թույլ չտալ վերադառնալ աշխատանքի»։

— Նրանք շատ բան կարող են գրել։ Ակի՛մ։ Ես քեզ խնդրում եմ՝ ինձ աշխատելու հնարավորություն տուր։ Կլինիկայից կլինիկա թափառելն անօգուտ է։

Ակիմը հրաժարվում էր։

— Մենք չենք կարող որոշումները բեկանել։ Հասկացի՛ր, Պավլո՜ւշա, որ դա հենց քեզ համար է ավելի լավ։

Բայց Կորշագինն այնպես ջերմորեն էր պնդում, որ Ակիմը դիմանալ չկարողացավ և ի վերջո համաձայնեց։

Մյուս օրն արդեն Կորշագինն աշխատում էր Կենտկոմի քարտուղարության գաղտնի բաժնում։ Նրան թվում էր, թե բավական է, որ սկսի աշխատել, սպառված ուժերն արդեն ետ կգան։ Բայց հենց առաջին օրից տեսավ, որ սխալվել է։ Նա իր բաժնում նստում էր ութ ժամ անընդմեջ՝ առանց որևէ բան ուտելու, որովհետև պարզվեց, որ նախաճաշի և ճաշի ժամերին երրորդ հարկից հարևան ճաշարանն իջնելը նրա ուժից վեր էր։ Հաճախ անզգայանում էր կամ ձեռքը, կամ ոտքը։ Երբեմն ամբողջ մարմինը շարժվելու ընդունակությունը կորցնում էր, և նա ջերմել էր սկսում։ Երբ հարկավոր էր լինում աշխատանքի գնալ, նա հանկարծ անկողնից բարձրանալու ուժ չէր գտնում իր մեջ։ Մինչև դա անցնում էր, նա հուսահատությամբ համոզվում էր, որ ամբողջ մի ժամ ուշանում է աշխատանքից։ Վերջ ի վերջո

այդ ուշացումները մատնացույց արին նրան, և նա հասկացավ, որ դա իր կյանքի ամենասարսափելի բանի՝ շարքից դուրս գալու սկիզբն է։

Ակիմը երկու անգամ ևս նրան օգնեց՝ այլ աշխատանքի փոխադրեց, բայց անխուսափելին պատահեց, երկրորդ ամսին Պավելն անկողին ընկավ։ Այն ժամանակ նա հիշեց Բաժանովայի հրաժեշտի խոսքերը և նրան նամակ գրեց։ Սա նույն օրն ևեթ եկավ, և Պավելը նրանից իմացավ ամենահիմնականը, որ պարտադիր չէ կլինիկայում պառկելը։

— Ուրեմն իմ գործերն այնքան լավ են, որ բուժվել է՛լ չարժե,— փորձեց կատակել նա, բայց կատակը չստացվեց։

Հենց որ ուժերը մի քիչ վերադարձան, Պավելը նորից Կենտկոմ գնաց։ Այս անգամ Ակիմն անողոք էր։ Նրա կըտրուկ առաջարկին՝ պառկել կլինիկայում, Կորչագինը խուլ ձայնով պատասխանեց.

— Ոչ մի տեղ էլ չեմ գնա։ Դա անօգուտ է։ Իմացել եմ հեղինակավոր աղբյուրներից։ Ինձ մի բան է մնում՝ կենսաթոշակ ստանալ և պաշտոնաթող լինել։ Բայց այդ համարը չի անցնի։ Դուք չեք կարող ինձ աշխատանքից կըտրել։ Ես ընդամենը քսանչորս տարեկան եմ և ես չեմ կարող կյանքիս մնացորդն ապրել աշխատանքի հաշմանդամի գրքույկով, թափառել բուժարանից բուժարան, իմանալով, որ դրանից ոչինչ չի ստացվի։ Դուք պարտավոր եք ինձ տալ իմ պայմաններին համապատասխան աշխատանք։ Ես կարող եմ տանն աշխատել կամ ապրել որևէ տեղ հիմնարկության մեջ... միայն ոչ իբրև գրագիր, որը ելից համարներ է դնում։ Աշխատանքն իմ սրտին որևէ բան պիտի տա, որ ես ինձ մի կողմ մնացած չզգամ։

Պավելի ձայնը ավելի ու ավելի հուզված ու զրնգուն էր հնչում։

Ակիմը հասկանում էր, թե ինչ զգացումներ են շարժում դեռ մինչև վերջերս կրակոտ պատանուն։ Նա ըմբռնում էր Պավելի ողբերգությունը, հասկանում էր, որ Կորչագինի համար, որն իր կարճ կյանքը նվիրաբերել էր կուսակցությանը, պայքարից կտրվելն ու խոր թիկունք անցնելը սարսափելի էր, և նա վճռեց անել այն ամենը, ինչ ներում էին նրա ուժերը։

— Լա՛վ։ Պավե՛լ, մի՛ հուզվիր։ Վաղը քարտուղարության նիստ ունենք։ Ես քո հարցը կդնեմ։ Խոսք եմ տալիս, որ ամեն ինչ կանեմ։

Կորչագինը դժվարությամբ ոտքի ելավ և ձեռքը տվեց նրան։

— Մի՞թե դու կարող ես մտածել, Ակի՛մ, որ կյանքն ինձ մի անկյուն կքշի և բլիթի պես կփափկացնի։ Քանի դեռ այստեղ իմ սիրտը բաբախում է,— և նա ուժով ձգեց Ակիմի ձեռքը դեպի իր կուրծքը, և Ակիմը որոշակի զգաց տարագ ու խուլ հարվածները,— քանի դեռ բաբախում է, ինձ կուսակցությունից արտաքսել չի կարելի։ Միայն մահն ինձ շարքից դուրս կբերի։ Հիշիր այդ, ախպերս։

Ակիմը լուռ էր։ Նա գիտեր, որ դա փայլուն ֆրազ չէ, այլ ծանր վիրավոր մարտիկի ճիչ։ Նա հասկանում էր, որ այդպիսի մարդիկ այլ կերպ խոսել ու զգալ չեն կարող։

Երկու օր հետո Ակիմը Պավելին հաղորդեց, որ նրան կենտրոնական օրգանի խմբագրությունում պատասխանատու աշխատանքի հնարավորություն է տրվում, բայց դրա համար անհրաժեշտ է ստուգել գրական ճակատում նրան օգտագործելու հնարավորությունը։ Խմբագրական կոլեգիայում Պավելին սիրալիր հանդիպեցին։ Խմբագրի տեղակալը, հին ընդհատակյա աշխատող, Ուկրաինայի կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի անդամ մի կին, նրան մի քանի հարցեր տվեց.

— Ձեր կրթությո՞ւնը, ընկեր։

— Երեք տարի տարրական դպրոցում։

— Կուսակցական դաստիարակներում չե՞ք եղել։

— Ոչ։

— Դե ինչ, երբեմն առանց դրան էլ են լավ լրագրող դառնում։ Ձեր մասին ընկեր Ակիմն է մեզ ասել։ Մենք կարող ենք ձեզ աշխատանք տալ ոչ անպայման այստեղ, այլ տանը կատարելու, և ընդհանրապես ձեզ համար համապատասխան պայմաններ կստեղծենք։ Բայց այդ աշխատանքի համար, այնուամենայնիվ, մեծ գիտելիքներ են անհրաժեշտ։ Հատկապես գրականության և լեզվի բնագավառում։

Այդ բոլորը Պավելին պարտություն էր գուշակում։ Կեսժամյա զրույցից պարզվեց, որ նրա գիտելիքներն անբավարար են, իսկ նրա գրած հոդվածի մեջ կինը կարմիր մատիտով երեք տասնյակից ավելի ոճական անճշտություններ և շատ ուղղագրական սխալներ ընդգծեց։

— Ընկեր Կորշագի՛ն, դուք մեծ տվյալներ ունեք։ Եթե լրջորեն աշխատեք ձեր ինքնազարգացման վրա, դուք ապագայում կարող եք դառնալ գրական աշխատող, բայց այժմ դուք կիսագրագետ եք գրում։ Հոդվածից երևում է, որ դուք ռուսաց լեզուն չգիտեք։ Դա զարմանալի չէ, դուք սովորելու ժամանակ չեք ունեցել։ Բայց ձեզ մենք, ցավոք սրտի, օգտագործել չենք կարող։ Սակայն նորից եմ կրկնում՝ դուք մեծ տվյալներ ունեք։ Եթե ձեր հոդվածը, առանց բովանդակությունը փոխելու, մշակվի, ապա այն հիանալի կլինի։ Իսկ մեզ պետք են այնպիսի մարդիկ, որոնք կարողանան ուրիշների հոդվածները մշակել։

Ձեռնափայտին հենվելով՝ Կորշագինը վեր կացավ։ Նրա աջ հոնքը ջղաձգորեն ցնցվում էր։

— Ինչ արած, ես ձեզ հետ համաձայն եմ։ Ինձանից ի՞նչ գրականագետ։ Ես լավ հնոցապան եմ եղել, ոչ վատ մոնտյոր։ Կարողացել եմ լավ ձի նստել, կոմերիտմիությունը ոտքի հանել, բայց ձեր ճակատում ես հարմար մարդիկ չեմ։

Հրաժեշտ տալով՝ նա դուրս եկավ։

Միջանցքի շրջապտույտում քիչ մնաց ընկնի։ Ինչ-որ պորտֆելավոր կին նրան բռնեց։

— Ի՞նչ է պատահել, ընկե՛ր։ Ձեր երեսին գույն չկա։

Մի քանի վայրկյան Կորշագինն ուշքի էր գալիս։ Հետո կամացուկ հեռացրեց կնոջը և, ձեռնափայտին հենվելով, գնաց։

Այդ օրվանից Կորշագինի կյանքում վայրէջք սկսվեց։ Աշխատանքի մասին խոսք չէր կարող լինել։ Ավելի և ավելի հաճախ էր նա օրերը մահճակալում անցկացնում։ Կենտկոմը նրան աշխատանքից ազատեց և գլխսոցապին խընդրեց, որ նրան կենսաթոշակ նշանակեն։ Նրան կենսաթոշակ տրվեց աշխատանքի հաշմանդամի գրքույկի հետ միասին։

Կենտկոմը նրան փող տվեց և անձնական գործերը հանձնեց՝ իրավունք տալով գնալ, ուր ցանկանում է։ Մարթայից նամակ եկավ։ Նա Պավելին հրավիրում էր իր մոտ հյուրընկալվելու և հանգստանալու։ Պավելն առանց այն էլ պատրաստվում էր Մոսկվա գնալ աղոտ մի հույսով՝ բախտ որոնել Համամիութենական Կենտկոմում, այսինքն՝ շարժում չպահանջող աշխատանք գտնել։ Բայց Մոսկվայում ևս նրան առաջարկեցին բժշկվել, խոստացան լավ բուժարանում տեղավորել։ Նա դրանից հրաժարվեց։

Աննկատելիորեն անցան այն տասնինն օրերը, որ նա ապրեց Մարթայի և նրա ընկերուհի Նադյա Պետերսոնի բնակարանում։ Ամբողջ օրերով նա մենակ էր մնում։ Մարթան ու Նադյան առավոտյան գնում էին և երեկոյան վերադառնում։ Պավելն անընդհատ կարդում էր, Մարթայի մոտ շատ գրքեր կային։ Իսկ երեկոները գալիս էին ընկերուհիները և ընկերներից ոմանք։

Նավահանգստային քաղաքից նամակներ էին գալիս։ Կյուցամների ընտանիքը նրան իր մոտ էր հրավիրում։ Կյանքը ձգում էր իր ամուր հանգույցը։ Այնտեղ նրա օգնությանն էին սպասում։

Մի առավոտ Գուսյատնիկովո նրբափողոցի խաղաղ բնակարանից Պավելը մեկնեց։ Գնացքը նրան հարավ, դեպի ծովն էր տանում, խոնավ, անձրևոտ աշունից դեպի հարավային Ղրիմի տաք ափերը։

Նա հետևում էր, թե ինչպես էին հեռագրասյուները վազում լուսամուտի մոտով։ Հոնքերը խոռոչված էին, և մութ աչքերում թաքնվել էր համառությունը։

ՈՒԹՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Ցածում, անկանոն կույտերով իրար վրա թափված քարերի մոտ ծփում է ծովը։ Հեռավոր Թուրքիայից այստեղ հասնող չոր «ծովայինը» հողմահարում է դեմքդ։ Կոտրված աղեղի պես ափն է խցկվել նավահանգիստը, որը ծովից անջրպետված է երկաթբետոնային ծովապատնեշով։ Լեռնանցքն իր շղթան ընդհատում է ծովի մոտ։ Եվ հեռու, դեպի

վեր, լեռների մեջ են բարձրացել քաղաքի ծայրամասերի խաղալիքանման սպիտակ տնակները։

Հին արվարձանային պուրակում խաղաղ է։ Վաղուց չմաքրված ուղիներում խոտն է աճել, և նրանց վրա դանդաղորեն իջնում են թխկենու դեղին տերևները, որոնց սպանում է աշունը։

Կորշագինին քաղաքից այստեղ բերեց մի ծեր պարսիկ կառապան և իր տարօրինակ ուղևորին ցած իջեցնելով՝ չհամբերեց և ասաց.

— Ինչի՞ էկար։ Էստեղ օրիորդ չկա, թատրոն չկա։ Մենակ շնագայլ է ման գալիս... Ի՞նչ անես, չեմ հասկանում։ Ետ գնանք, պարոն ընկե՛ր։

Կորշագինը նրան վճարեց, և ծերունին մեկնեց։

Պուրակն ամայի է։ Ծովի ելուստի մոտ Պավելը մի նստարան գտավ, նստեց, դեմքը դեմ արեց արդեն ոչ տաք արևի ճառագայթներին։

Նա եկավ այստեղ, այս խաղաղ անկյունը, որպեսզի խորհի այն մասին, թե ինչպես է դասավորվում կյանքը, և ինչպես վարվի այդ կյանքի հետ։ Հանրագումարի բերելու և մի որոշում կայացնելու ժամանակն էր արդեն։

Իր երկրորդ անգամ այստեղ գալուց հետո Կյուցամների ընտանիքում հակասությունները ծայր աստիճան սրվել էին։ Նրա գալու մասին իմանալով՝ ծերունին կատաղեց և տանն աներևակայելի աղմուկ բարձրացրեց։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ Կորշագինի վրա ընկավ դիմադրության ղեկավարությունը։ Աղջիկների ու կնոջ կողմից ծերունին անսպասելի եռանդուն հակահարվածի հանդիպեց, և Կորշագինի երկրորդ անգամ գալու հենց առաջին օրվանից տունն իրար նկատմամբ թշնամական և ատելությամբ լեցուն երկու մասի բաժանվեց։ Ծերունիների հարկաբաժնի մուտքը փակվեց, իսկ կողքի սենյակներից մեկը տրվեց Կորշագինին, որպես կենվորի։ Բնակարանի վարձը ծերունուն տրվեց նախապես, և նա շուտով նույնիսկ կարծես թե հանգստացավ այն բանով, որ իրենից բաժանված աղջիկներն ապրուստի միջոցներ չեն պահանջի։

Ալբինան դիվանագիտական նկատառումներով մնաց ծերունու հարկաբաժնում։ Ծերունին երիտասարդների մոտ

չէր մտնում, որովհետև չէր ցանկանում հանդիպել ատելի մարդուն, բայց դրա փոխարեն բակում նա շողեքարշի պես փնչացնում էր, ցույց տալով, որ ինքն է այստեղ տերը։

Կոոպերատիվում ծառայելուց առաջ ծերունին երկու մասնագիտություն ուներ՝ կոշկակարություն և հյուսնություն, ու փայտանոցում իր համար արհեստանոց շինելով՝ ազատ ժամերին աշխատում էր։ Կենվորին բարկացնելու համար նա շուտով իր դազգահը փոխադրեց ուղիղ նրա լուսամուտի տակ։ Մեխերը կատաղորեն խփելով՝ նա հրճվում էր։ Նա լավ գիտեր, որ Կորշագինին խանգարում է կարդալ։

— Սպասի՛ր, ես քեզ այստեղից կքշեմ...— ֆշշացնում էր նա քթի տակ։

Հեռվում, համարյա հորիզոնում, մուգ ամպի պես փրփրվում էր շոգենավի ծխահետքը։ Ծովը նետվելով՝ սուր ճչում էր ճայերի երամը։

Կորշագինը գլուխը ձեռքերի մեջ առած՝ ծանր խոհերի մեջ էր։ Նրա աչքերի առջևով անցավ ամբողջ կյանքը՝ սկսած մանկությունից մինչև վերջին օրերը։ Արդյոք լա՞վ, թե վա՞տ է ապրել նա իր քսանչորս տարին։ Քրքրելով տարին տարվա հետևից, նա որպես անաչառ դատավոր ստուգեց իր կյանքը և խորին բավականությամբ վճռեց, որ կյանքն այնքան էլ վատ չի անցկացրել։ Բայց եղել էին և շատ սխալներ, որոնք արվել էին հիմարության, երիտասարդության հետևանքով, իսկ ամենից ավելի՝ անգիտությամբ։ Եվ ամենագլխավորը՝ այն թեժ օրերին չի քնել, իշխանության համար մղվող կատաղի կռիվների մեջ գտել է իր տեղը, և հեղափոխության բոսորագույն դրոշի վրա կա և իր արյան մի քանի կաթիլը։

Նա չի հեռացել շարքից, մինչև որ չեն սպառվել ուժերը։ Այժմ, ջարդված վիճակում, նա չի կարող ռազմաճակատում մնալ, և նրան միայն մի բան է մնում՝ թիկունքի հիվանդանոցները։ Նա հիշեց, թե ինչպես, երբ սրընթաց գնում էին Վարշավայի տակ, գնդակը տապալեց մի մարտիկի։ Եվ մարտիկն ընկավ գետնին, ձիու ոտքերի տակ։ Ընկերներն շտապ վիրակապեցին վիրավորին, հանձնեցին սանիտարներին և ոլացան առաջ՝ հասնելու թշնամու հետևից։ Էսկադրոնն իր վազքը չկանգնեցրեց մարտիկի կորստյան պատճառով։ Մեծ

դործի համար մղվող պայքարում այդպես է եղել և այդպես պիտի լինի։ Ճիշտ է, բացառություններ եղել են։ Նա տեսել է նաև ոտքերից զուրկ գնդացրորդների՝ սայլակների վրա, դրանք թշնամու համար զարհուրելի մարդիկ էին, նրանց գընդացիրները մահ ու ոչնչացում էին բերում։ Երկաթե տոկունության և անվրեպ աչքի շնորհիվ նրանք դառնում էին գնդերի հպարտությունը։ Բայց այդպիսիք հազվադեպ էին պատահում։

Ինչպես պիտի վարվի ինքն իր հետ այժմ, ջախջախումից հետո, երբ շարք վերադառնալու հույս այլևս չկա։ Չէ՞ որ նա Բաժանովային ստիպեց խոստովանել, որ հետագայում նա է՛լ ավելի սարսափելի բանի պիտի սպասի։ Ի՞նչ անել։ Սպառնալի, սև փոսի պես կանգնել էր նրա առաջ այդ լուծված հարցը։

Ինչի՞ համար ապրել, երբ նա արդեն կորցրել է ամենաթանկ բանը՝ պայքարելու կարողությունը։ Ինչպե՞ս արդարացնի իր կյանքն այժմ և անմխիթար վաղը։ Ինչո՞վ լցնի այն։ Պարզապես ուտի, խմի և շնչի՞։ Մնա որպես անօգնական վկան այն բանի, թե ինչպես ընկերները կռվով առաջ են շարժվո՞ւմ։ Դառնա բե՞ռ ջոկատի համար։ Ի՞նչ, դո՞ւրս գրել իրեն դավաճանած մարմինը։ Մի գնդակ սրտին, և այլևս ոչ մի խոսք։ Կարողացել ես լավ ապրել, կարողացիր և ժամանակին վերջացնել։ Ով կդատապարտի այն մարտիկին, որը հոգեվարք ապրել չի ցանկանում։

Նրա ձեռքը գրպանում շոշափեց բրաունինգի տափակ մարմինը, մատները վարժ շարժումով բռնեցին կոթից։ Դանդաղորեն դուրս քաշեց ատրճանակը։

— Ո՞վ կարող էր մտածել, որ այս օրին կհասնես։

Բրաունինգի փողն արհամարհանքով նայում էր նրա աչքերին։ Պավելն ատրճանակը դրեց ծնկանը և չարությամբ հայհոյեց։

— Այս բոլորը թղթե հերոսություն է, ախպե՛ր։ Ամեն հիմար էլ միշտ և ամեն ժամանակ կարող է իրեն թրխկացնել։ Դա դրությունից ամենավախկոտ ու հեշտ ելքն է։ Ապրելը դժվար է, դու թրխկացրու։ Իսկ դու փորձե՞լ ես հաղթել այդ կյանքին։ Ամե՞ն ինչ ես արել, որ երկաթե օղակից դուրս պրծնես։ Իսկ մոռացե՞լ ես, թե ինչպես Նովոդրադ-Վոլինսկի

տակ մի օրվա մեջ տասնյոթ անգամ գրոհի գնացիք և հակառակ բոլորի՝ այնուամենայնիվ գրավեցիք։ Ատրճանակդ պահիր և երբեք ոչ ոքի այդ մասին մի պատմիր։ Կարողացիր ապրել նաև այն ժամանակ, երբ կյանքն անտանելի է դառնում։ Օգտակար դարձրու այն։

Վեր կացավ և գնաց ճանապարհով։ Մի լեռնցի անցորդ իր սայլով նրան տարավ մինչև քաղաք։ Եվ այնտեղ, խաչմերուկներից մեկում նա գտնեց տեղական լրագիրը։ Այնտեղ հաղորդվում էր, որ Դեմյան Բեդնու անվան ակումբում կայանալու է քաղաքի կուսկոլեկտիվի ժողովը։ Պավելը տուն վերադարձավ ուշ գիշերին։ Ակտիվում, ինքն էլ այդ չիմանալով, նա արտասանեց իր վերջին ճառը մեծ ժողովում։

Տայան քնած չէր։ Կորչագինի այդքան երկար բացակայելը նրան տագնապով էր համակել։ Ի՞նչ է պատահել նրան։ Որտե՞ղ է նա։ Առաջ միշտ աշխույժ նրա աչքերում այսօր ինչ-որ խիստ ու սառը բան էր նկատվում։ Նա իր մասին քիչ էր պատմում, բայց Տայան զգում էր, որ ինչ-որ դրժբախտություն տանջում է նրան։

Մոր հարկաբաժնում ժամացույցը երկուսը խփեց, երբ պարտեզի դռնակը թխկաց, և Տայան, ժակետը վրան ձգելով, գնաց դուռը բանալու։ Լյոլյան իր սենյակում քնած էր և քնի մեջ ինչ-որ բան էր քրթմնջում։

— Իսկ ես արդեն անհանգստանում էի քեզ համար,— ուրախանալով, որ նա եկավ, շշնջաց աղջիկը, երբ Կորչագինը գավիթ մտավ։

— Մինչև մահ ինձ ոչինչ չի պատահի, Տայո՛ւշա։ Լյոլյան քնա՞ծ է։ Իսկ ես, գիտես, բոլորովին քնել չեմ ուզում, ես քեզ այսօրվա մասին որոշ բան եմ ուզում պատմել։ Գնանք քո սենյակը, թե չէ Լյոլյային կարթնացնենք,— նույնպես շշնջալով պատասխանեց նա։

Տայան տատանվում էր։ Այդ ինչպե՞ս, գիշերով ինքը նրա հետ զրուցի՞։ Իսկ եթե մայրիկն այդ մասին իմանա, ի՞նչ կմտածի իր մասին։ Բայց Պավելին այդ ասել չի կարելի, չէ՞, որ նա կվիրավորվի։ Եվ ինչի մասին է ուզում խոսել։ Այդ մասին մտածելով, նա արդեն դեպի իր սենյակն էր գնում։

— Ահա թե բանն ինչ է, Տայա,— սկսեց Պավելը խուլ ձայնով, երբ նրանք նստեցին մութ սենյակում դեմ դիմաց այնքան մոտիկ, որ աղջիկն զգում էր նրա շնչառությունը։— Կյանքն այնպես է շրջվում, որ ինձ համար նույնիսկ մի քիչ տարօրինակ է։ Այս բոլոր օրերը ես վատ ապրեցի։ Ինձ համար պարզ չէր, թե այսուհետև ինչպես կապրեմ աշխարհում։ Դեռ իմ կյանքը երբեք այնպես մթին չէր եղել, ինչպես այս օրերին։ Բայց այսօր ես «քաղբյուրոյի նիստ» հրավիրեցի և ահագին կարևորություն ներկայացնող որոշում կայացրի։ Դու մի զարմացիր, որ ես քեզ հաղորդակից եմ դարձնում։

Նա պատմեց Տայային այն բոլորի մասին, ինչ ապրել էր նա վերջին ամիսներին, ինչպես նաև արվարձանային պուրակում մտածածներից շատ բան։

— Դրությունն այսպես է։ Անցնում եմ հիմնականին։ Ընտանիքում իրարանցումը նոր է սկսվում։ Այստեղից հարկավոր է թարմ օդ դուրս գալ, հեռանալ այս բնից։ Կյանքը նորից պիտի սկսել։ Քանի որ ես այս կռվի մեջ արդեն մտել եմ, ուրեմն այն մինչև վերջ կհասցնեմ։ Ե՛վ քո, և՛ իմ անձնական կյանքն այժմ անմխիթար է։ Ես որոշեցի այն կրակով լցնել։ Դու հասկանո՞ւմ ես, թե դա ինչ է նշանակում։ Դու կդառնա՞ս իմ ընկերուհին, կինը։

Տայան մինչև այժմ նրան լսում էր խորին հուզմունքով։ Վերջին բառի վրա նա անսպասելիությունից ցնցվեց։

— Ես այսօր քեզանից պատասխան չեմ պահանջում, Տա՛յա։ Ամեն ինչի մասին լավ մտածիր։ Քեզ համար անհասկանալի է, թե այդ ինչպես առանց զանազան սիրահետումների այդպիսի բաներ են ասում։ Այդ ամբողջ շաղակրատանքը ոչ ոքի պետք չէ, ես իմ ձեռքը տալիս եմ քեզ, աղջի՛կս, ահա այն։ Եթե այս անգամ դու հավատաս, ապա չես խաբվի։ Ես շատ բան ունեմ, որ քեզ է պետք և ընդհակառակն։ Ես արդեն վճռել եմ. մեր դաշինքը կնքվում է այնքան ժամանակով, մինչև որ դու աճես և դառնաս իսկական մեր մարդը, իսկ ես այդ կանեմ, թե չէ մի գրող էլ չարժեմ։ Մինչ այդ մենք մեր դաշինքը չպիտի խզենք։ Իսկ երբ կաճես, ամեն տեսակի պարտավորություններից ազատ ես։ Ո՞վ գիտե, կարող է այնպես պատահել, որ ես

ֆիզիկապես բոլորովին ավերակ դառնամ, և դու հիշիր, որ այդ դեպքում էլ քո կյանքը ես չեմ կապում։

Մի քանի վայրկյան լռելուց հետո նա ջերմորեն, քնքշությամբ շարունակեց.

— Իսկ այժմ ես քեզ բարեկամություն և սեր եմ առաջարկում։

Նա աղջկա մատներն իր ձեռքից բաց չէր թողնում և այնպես հանգիստ էր, կարծես վերջինս արդեն տվել էր իր համաձայնությունը։

— Իսկ դու ինձ չե՞ս թողնի։

— Բառերն ապացույց չեն, Տա՛յա։ Քեզ մի բան է մնում, հավատալ, որ այնպիսի մարդիկ, ինչպիսին ես եմ, իրենց բարեկամներին չեն դավաճանում... միայն թե նրանք ինձ չդավաճանեն,— դառնությամբ վերջացրեց նա։

— Ես այսօր քեզ ոչինչ չեմ ասի, այս բոլորն այնպես անսպասելի է,— պատասխանեց նա։

Կորշագինը ոտքի ելավ։

— Պառկի՛ր, Տա՛յա, շուտով կլուսանա։

Եվ գնաց իր սենյակը։ Առանց հանվելու պառկեց և գլուխը բարձին դնելուն պես քնեց։

Կորշագինի սենյակում, լուսամուտի տակ դրված սեղանին դարսված են կուսակցական դրադարանից բերված գրքերի կույտեր, թերթերի կապոց, մի քանի գրոտած բլոկնոտներ։ Տանտիրոջը պատկանող մի մահճակալ, երկու աթոռ, իսկ դեպի Տայայի սենյակը տանող դռան վրա Չինաստանի ահագին քարտեզը, որի վրա սև և կարմիր փոքրիկ դրոշակներ են տնկած։ Կուսակցական կոմիտեում Կորշագինը պայմանավորվել էր, որ նրան գրականություն կհայթայթեն կուսկաբինետից, բացի այդ, խոստացել էին գրքի շնֆության համար նրան ամրացնել քաղաքի ամենամեծ՝ նավահանգստի գրադարանի վարիչին։ Շուտով նա այնտեղից ամբողջ կապոցներով գրքեր սկսեց ստանալ։ Լյոլյան զարմանքով էր դիտում, թե ինչպես նա վաղ առավոտից սկսած, ճաշի ու նախաճաշի փոքրիկ ընդմիջումներով, կարդում ու գրում էր մինչև երեկո, իսկ երեկոն նրանք միշտ երեքով միասին Լյոլյայի սենյակում էին անցկացնում։ Կորշագինը միշտ իր կարդացածի մասին պատմում էր քույրերին։

Կեսգիշերն անց բակ դուրս գալով՝ ծերունին միշտ անկոչ հյուրի սենյակի կրկնափեղկերի արանքից լուսավոր մի շերտ էր տեսնում։ Ոտքերի ծայրերի վրա կամացուկ լուսամուտին էր մոտենում ծերունին և ճեղքից դիտում էր սեղանին հակված գլուխը։

«Մարդիկ քնած են, իսկ սա ամբողջ գիշերն անընդհատ ճրագ է վառում։ Շրջում է տան մեջ, ասես տանտերը լինի։ Աղջիկները կոպտել են սկսել»,— չարամտորեն խորհում էր ծերունին և հեռանում։

Ութ տարվա ընթացքում առաջին անգամն էր, որ Կորչագինն այդքան շատ ազատ ժամանակ ուներ և ոչ մի պարտավորություն չուներ։ Եվ նա կարդում էր այդ գործին նոր ձեռնադրված մարդու ագահ հետաքրքրությամբ։ Այդ աշխատանքին նվիրում էր օրական տասնութ ժամ։ Հայտնի չէ, թե դա ինչպես կանդրադառնար նրա առողջության վրա, եթե Տայան մի անգամ, ասես իմիջիայլոց, չասեր այս մի քանի բառը.

— Ես կոմոդն ուրիշ տեղ եմ տեղափոխել, այժմ դեպի քո սենյակը տանող դուռը բացվում է։ Եթե քեզ պետք լինի որևէ բանի մասին ինձ հետ խոսել, կարող ես ուղղակի գալ, առանց Լյուլյայի մոտ մտնելու։

Պավելը բռնկվեց։ Տայան ուրախ ժպտաց նրան։ Դաշինքը կնքված էր։

Կեսգիշերվա ժամերին ծերունին այլևս լույսի շերտ չէր տեսնում անկյունի լուսամուտում, իսկ մայրը Տայայի աչքերում վատ թաքցրած ուրախություն սկսեց նկատել։ Ներքին կրակից փայլող աչքերի տակ հազիվ նկատելի գծով մուգ շրջանակներ էին առաջացել, անքուն գիշերներն էին արտահայտվում։ Փոքրիկ բնակարանում սկսեցին հաճախ հնչել կիթառի ձայնն ու Տայայի երգերը։

Աղջկա մեջ արթնացած կինը տանջվում էր այն բանից, որ նրա սերը կարծես թե գողացված էր։ Նա յուրաքանչյուր խշշոցից ցնցվում էր, շարունակ թվում էր, թե մոր քայլերն է լսում։ Տանջվում էր այն բանից, թե ինչ կպատասխանի, եթե հարցնեն՝ ինչու է սկսել գիշերներն իր սենյակի դուռը

փակել։ Կորչագինն այդ տեսնում էր և քնքշորեն, հանգստացնող տոնով ասում.

— Ինչի՞ց ես վախենում։ Չէ որ եթե լավ մտածես, ես ու դու ենք այստեղ տերը։ Հանգիստ քնիր։ Ուրիշները մեր կյանքը մուտք չունեն։

Աղջիկն այտը սեղմում էր Պավելի կրծքին և հանգստացած քնում էր իր սիրելուն գրկած։ Պավելը երկար ժամանակ ականջ էր դնում նրա շնչառությանը և չէր շարժվում՝ վախենալով, թե կփախցնի նրա քունը, խորին քնքշանքն այդ աղջկա նկատմամբ, որն իր կյանքը վստահել էր նրան, համակում էր Պավելին։

Տայայի աչքերի անմարելի կրակի պատճառն առաջինը քույրն իմացավ, և այդ օրվանից քույրերի մեջ օտարացման սառեր ընկավ։ Իմացավ նաև մայրը։ Ավելի ճիշտ՝ գուշակեց։ Ուշադրությունը լարեց։ Կորչագինից նա այդ չէր սպասում։

— Տայուշան նրա համար զույգ չէ,— ասաց նա մի անգամ Լյուլյային։— Ի՞նչ պիտի դուրս գա այս բոլորից։

Անհանգիստ մտքերը վխտում էին նրա ուղեղում, բայց նա սիրտ չէր անում խոսել Կորչագինի հետ։

Կորչագինի մոտ երիտասարդներ սկսեցին երևալ։ Երբեմն փոքրիկ սենյակում նեղվածք էր լինում։ Ասես մեղվի բզզոց էր հասնում ծերունու ականջին։ Հաճախ էին ներդաշնակ խմբերգով երգում.

Մարդամոտ չէ ծովը մեր,
Աղմկում է օր ու գիշեր...

և Պավելի սիրած՝

Արցունքով է ողողված աշխարհն անծայր...

Այդ բանվորական կուսակտիվի խմբակն էր հավաքվում։ Խմբակը Կորչագինին էր հանձնարարել կուսակցության կոմիտեն նրա նամակից հետո, որով պահանջում էր իրեն պրոպագանդիստական աշխատանք տալ։ Այսպես էին անցնում Պավելի օրերը։

Նորից Կորչագինը երկու ձեռքով բռնեց ղեկը, և կյանքը, որ մի քանի սուր կեռմաններ էր արել, դեպի նոր

նպատակ շրջվեց. Դա ուսման և գրականության միջոցով նորից դեպի կյանք վերադառնալու երազանքն էր։

Բայց կյանքը մի խոչընդոտը մյուսի վրա էր կիտում, և այդ խոչընդոտների հանգեպ գալը նա դիմավորում էր մի անհանգիստ մտքով, թե որքանով դրանք կարգելակեն իր շարժումը դեպի նպատակը։

Անսպասելի կերպով Մոսկվայից եկավ անհաջողակ ուսանող Ժորժն իր կնոջ հետ։ Բնակություն հաստատեց իր աներոջ՝ երդվյալ հավատարմատարի մոտ, և այնտեղից գալիս էր մորից փող կորզելու։

Ժորժի գալը նկատելիորեն վատացրեց ընտանիքի ներքին հարաբերությունները։ Ժորժն առանց մտածելու անցավ հոր կողմը և իր կնոջ հակասովետական տրամադրություններ ունեցող ընտանիքի հետ միասին դավադիր աշխատանք սկսեց, աշխատելով, ինչ գնով էլ որ լինի, տնից քշել Կորշագինին և նրանից կտրել Տայային։

Ժորժի գալուց երկու շաբաթ հետո Լյոլյան աշխատանք ստացավ մոտակա շրջաններից մեկում։ Մոր և տղայի հետ նա մեկնեց այնտեղ, իսկ Կորշագինն ու Տայան տեղափոխվեցին ծովափնյա մի հեռավոր ու փոքրիկ քաղաք։

Արտյոմը եղբորից հազվագեպ էր նամակներ ստանում, բայց այն օրերին, երբ քաղսովետում իր սեղանի վրա գտնում էր ծանոթ անվարժ ձեռագրով գրված գորշ ծրարը, սովորական հանգստությունը կորցնում էր և թաքուն քնքշությամբ մտածում. «Է՜խ, Պավլուշա, Պավլուշա։ Թե որ մենք իրար մոտիկ ապրեինք, քո խորհուրդներն, այ տղա, ինձ շատ պետք կգային»։

«Արտյո՜մ, ուզում եմ պատմել այն մասին, ինչ կրել եմ։ Քեզանից բացի, կարծես թե, ոչ ոքի այսպիսի նամակներ չեմ գրում։ Դու ինձ գիտես և իմ ամեն մի խոսքը կհասկանաս։ Կյանքը առողջության համար պայքարի ճակատում շարունակում է ինձ նեղել։

Հարված հարվածի հետևից է գալիս։ Հազիվ եմ հաստատում մեկից աչք բացել՝ և արդեն նոր, առաջինից ավելի անողոք է վրա տալիս։ Ամենասարսափելին այն է, որ ես գիմադրելու ուժ չունեմ։ Ձախ ձեռքս հրաժարվեց ինձ ենթարկվել։ Դա ծանր էր, բայց նրա հետևից դավաճանեցին նաև ոտքերս, և ես, որ առանց այն էլ հազիվ էի շարժվում (սենյակի սահմաններում միայն), այժմ դժվարությամբ եմ մահճակալից մինչև սեղանի մոտ հասնում։ Բայց չէ՞ որ հավանորեն դա բոլորը չէ։ Վաղն ինչ կբերի ինձ՝ անհայտ է։

Տնից ես այլևս դուրս չեմ գալիս և լուսամուտից դիտում եմ ծովի մի կտորը միայն։ Կարո՞ղ է, արդյոք, ավելի դաժան ողբերգություն լինել, քան այն, երբ մի մարդու մեջ միացած են դավաճան, ծառայելուց հրաժարվող մարմինը և բոլշևիկի սիրտը, նրա կամքը, որն անդուսպ կերպով ձգտում է դեպի աշխատանք, դեպի ձեզ, դեպի ամբողջ ճակատով հարձակվող գործող բանակը, այնտեղ, ուր ծավալվում է գրոհի երկաթե հոծ զանգվածը։

Ես դեռ հավատում եմ, որ շարք կվերադառնամ, որ գրոհող զորասյուների մեջ կբարձրանա և իմ սվինը։ Ես չեմ կարող չհավատալ, ես իրավունք չունեմ։ Կուսակցությունը և կոմերիտմիությունն ինձ տասը տարի շարունակ դիմադրելու արվեստով են դաստիարակել, և առաջնորդի խոսքերը վերաբերում են նաև ինձ. «Չկան այնպիսի ամրոցներ, որ բոլշևիկները չգրավեն»։

Իմ կյանքն այժմ սովորելն է։ Գրքե՜ր, գրքե՜ր, էլի գրքեր։ Շատ բան եմ արել, Արտյո՜մ։ Մշակել եմ ամբողջ գեղարվեստական դասական գրականությունը։ Ավարտել եմ և հանձնել հեռակա կոմունիստական համալսարանի առաջին կուրսի աշխատանքները։ Երեկոները պարապում եմ կուսակցական երիտասարդության խմբակի հետ։ Կազմակերպության գործնական աշխատանքի հետ կապն այդ ընկերների միջոցով է տարվում։ Հետո Տայուշան, նրա զարգացումն ու առաջշարժումը, և հետո՝ սերը, իմ քնքուշ ընկերուհու փաղաքշանքները։ Նրա հետ համերաշխ ենք ապրում։ Մեր տնտեսությունը հասարակ ու պարզ է՝ երեսունհինգ ռուբլի իմ կենսաթոշակը և Տայայի աշխատավարձը։ Տայան դեպի կուսակցություն է ընթանում իմ ճանապարհով. ծառայում էր իբրև տնային տնտեսուհի, այժմ ճաշարանում ամանեղ լվացող է (այս փոքրիկ քաղաքում արդյունաբերություն չկա)։

Մոտ օրերս Տայան հանդիսավոր կերպով ինձ ցույց տվեց կինոթաժնի առաջին պատգամավորական քարտը։ Նրա համար դա ստվարաթղթի հասարակ մի կտոր չէ։ Ես հետևում եմ նրա մեջ նոր մարդու ծնունդին և օգնում եմ դրան, ինչքան որ կարողանում եմ։ Ժամանակը կգա, և մի մեծ գործարան, բանվորական կոլեկտիվը կավարտի նրա ձևավորումը։ Քանի դեռ մենք այստեղ ենք, Տայան ընթանում է միակ հնարավոր ուղիով։

Երկու անգամ եկել է Տայայի մայրը։ Իր համար աննկատելիորեն՝ մայրը Տայային ետ է քաշում դեպի այն կյանքը, որն ստեղծված է մանրուքից, մխրճված է նեղ անձնականի, իր սեփականի, մեկուսացածության մեջ։ Ես աշխատում էի Ալբինային համոզել, որ նրա կյանքի խավարը ստվեր չպիտի ձգի աղջկա ճանապարհին։ Բայց այդ բոլորն անօգուտ եղան։ Զգում եմ, որ մայրը երբևէ կկանգնի դեպի նոր կյանք գնացող աղջկա ճանապարհին, և որ նրա դեմ պայքարն անխուսափելի է։

Սեղմում եմ ձեռքդ։ Քո Պավել»։

№ 5 առողջարանը Հին Մացեստայում։ Ծայրի մեջ կըտրած հարթության վրա բարձրանում է եռահարկ քարե շենքը։ Ջորս կողմն անտառ է, ներքևում կեռմաններով ձգվում է առբերման ուղին։ Լ'նյակի լուսամուտները բաց են, քամին ներքևից բերում է ծծմբաղբյուրների հոտը։ Կորշագինը մենակ է իր սենյակում։ Վաղը նոր ընկերներ են գալու, և նա հարևան կունենա։ Լուսամուտի տակ քայլեր և ինչ-որ մեկի ծանոթ ձայնը։ Մի քանի հոգի են խոսում։ Բայց որտե՞ղ է նա լսել այդ թավ ձայնը։ Հիշողությունը լարված աշխատում է և մեկուսացած մի անկյունից դուրս քաշում այնտեղ թաքցրած, բայց չմոռացված անունը. «Լեդենև Ինոկենտի Պավլովիչ, դա նա է և ոչ այլ ոք»։ Եվ դրանում վստահ Պավելը ձայն է տալիս։ Մի րոպե հետո Լեդենևն արդեն նստած էր նրա մոտ և ուրախ-ուրախ թափահարում էր նրա ձեռքը։

— Ահա, դեռ կենդանի՞ ենք։ Դե, ինչ ուրախ բան կասես։ Այս ինչ է, խելքիդ փչել է լրջորե՞ն հիվանդանալ։ Հավանություն չեմ տալիս։ Ա՛յ, դու ինձանից՝ օրինակ վերցրու։ Բժիշկներն ինձ էլ էին կանխագուշակում, որ հրաժարական պիտի տամ, իսկ ես ի հեճուկս նրանց շարունակում եմ ոտքի վրա մնալ,— և Լեդենևը բարեհոգությամբ ծիծաղեց։

Այդ ծիծաղի տակ թաքցրած ցավակցությունն ու վշտանալու երանգները Կորշագինն զգում էր։

Աշխույժ զրույցով նրանք երկու ժամ անցկացրին։ Լեդենևը պատմում էր Մոսկվայի նորությունները։ Կորշագինը նրանից առաջին անգամ իմացավ գյուղատնտեսության կոլեկտիվացման, գյուղի վերակառուցման վերաբերյալ կուսակցության ընդունած կարևորագույն որոշումների մասին, նա ագահորեն իր մեջ էր ներծծում ամեն մի բառը։

— Իսկ ես արդեն կարծում էի, թե դու ինչ-որ մի տեղ, ձեզ մոտ, Ուկրաինայում գործում ես։ Եվ ահա այսպիսի տհաճ բան։ Դե ոչինչ, իմ գործերն ավելի վատ էին, ես համարյա ամբողջովին թիկնաթոռի էի անցել, իսկ հիմա տեսնո՞ւմ ես, աշխուժացել եմ։ Այժմ ոչ մի կերպ չի կարելի, հասկանում ես, անտարբեր ապրել։ Չի ստացվում։ Ես երբեմն մտածում եմ, մեղքս ինչ թաքցնեմ, թե հարկավոր է, գուցե, հանգստանալ, մի քիչ շունչ քաշել։ Չէ՞ որ այլևս այն տարիքը չէ, տասը-տասներկու ժամվա աշխատանքն էլ արդեն երբեմն դժվար է լինում։ Դե, բավական է, որ մտածես և նույնիսկ սկսես գործերը նայել, որպեսզի մի քիչ բեռնաթափվես, և ամեն անգամ միևնույն բանն է ստացվում։ Սկսում ես «բեռնաթափվել» և այնպես ես խրվում այդ բեռնաթափման մեջ, որ ժամը տասներկուսից շուտ տուն չես վերադառնում։ Որքան մեքենայի ընթացքն ուժեղ է, այնքան էլ ավելի արագ է անվակների ընթացքը, իսկ մեզ մոտ օրը օրին շարժումն ավելի արագընթաց է դառնում, և ստացվում է, որ մենք՝ ծերունիներս, ստիպված ենք ապրել այնպես, ինչպես երիտասարդ ժամանակ։

Լեդենևը ձեռքով շփեց իր բարձր ճակատը և հայրական ջերմությամբ ասաց.

— Դե՛, հիմա պատմիր քո գործերի մասին։

Լեդենևը լսում էր Կորշագինի պատմությունն իր կրածների մասին, և Պավելը որսում էր նրա հավանություն տվող, աշխույժ հայացքը։

Փարթամ ծառերի ստվերի տակ, դարավանդի մի անկյունում հավաքվել է առողջարանայինների մի խումբ։ Փոքրիկ սեղանի մոտ, խիտ հոնքերը խոժոռած «Պրավդա» էր կարդում Խրիստոֆ Զեռնոկոզովը։ Նրա սև, փակ օձիքով բլուզը, հին կեպկան, արևառ, նիհար, վաղուց չսափրված դեմքը, խորն ընկած կապույտ աչքերը՝ այդ բոլորը մատնում էին նրա հին հանքափոր լինելը։ Տասներկու տարի առաջ կանչվելով երկրամասը ղեկավարելու աշխատանքին՝ այդ մարդը ցած դրեց իր մուրճը, բայց թվում էր, թե հենց նոր է դուրս եկել հանքից։ Դա արտահայտվում էր իրեն պահելու, խոսելու ձևերի մեջ, արտահայտվում էր նրա բառապաշարի մեջ։

Զեռնոկոզովը կուսակցության երկրային կոմիտեի բյուրոյի անդամ էր և կառավարության անդամ։ Տանջալի ախտ՝ ոտքի գանգրենան, սպառում էր նրա ուժերը։ Զեռնոկոզովն ատում էր իր հիվանդ ոտքը, որ նրան ստիպել էր համարյա արդեն կես տարի անկողնում անցկացնել։

Նրա դիմաց, մտախոհ, ծուխ արձակելով իր գլանակից, նստել էր Ժիգիրևան։ Ալեքսանդրա Ալեքսեևնա Ժիգիրևան երեսունյոթ տարեկան է, տասնինը տարի է, որ նա կուսակցության մեջ է։ «Մետաղագործ Շուրոչկան», ինչպես նրան կոչում էին Պետերբուրգի ընդհատակում, դեռ համարյա փոքրիկ աղջիկ էր, երբ ծանոթացավ Սիբիրի աքսորի հետ։

Սեղանի մոտ երրորդը Պանկովն է։ Գեղեցիկ, անտիկ կիսադեմ ունեցող գլուխը սեղանին հակած՝ նա կարդում է գերմանական մի ամսագիր և մերթ ընդ մերթ քթի վրա ուղղում մեծ, եղջերաշրջանակ ակնոցը։ Անհեթեթ էր թվում, երբ այդ երեսնամյա ըմբիշը դժվարությամբ էր բարձրացնում իրեն չենթարկվող ոտքը։ Միխայիլ Վասիլևիչ Պանկովը խմբագիր է, գրող, լուսժողկոմատի աշխատող, գիտե Եվրոպան, տիրապետում է մի քանի օտար լեզուների։ Նրա գլխում շատ գիտելիքներ էին պահված, և նույնիսկ զուսպ Զեռնոկոզովը հարգանքով էր վերաբերվում նրան։

— Դա էլ քո սենյակի ընկե՞րն է,— ցածր ձայնով հարցրեց Ժիգիրևան Զեռնոկոզովին և գլխով ցույց տվեց ձեռնասայլակը, որի մեջ նստած էր Կորշագինը։

Զեռնոկոզովը պոկվեց լրագրից, նրա դեմքը կարծես միանգամից պայծառացավ։

— Այո՛, դա Կորշագինն է։ Հարկավոր է, որ դուք ծանոթանաք նրա հետ, Շո՛ւրա։ Հիվանդությունը նրա անիվի մեջ փայտ է խրել, թե չէ այդ տղան նեղ տեղերում մեզ պետք կգար։ Նա կոմերիտմիության առաջին սերնդից է։ Մի խոսքով, եթե մենք այդ տղային օգնենք, իսկ ես այդ վճռել եմ, ապա նա դեռ կաշխատի։

Պանկովն ականջ էր դնում նրա պատմությանը։

— Ինչո՞վ է հիվանդ,— նույն ցածր ձայնով հարցրեց Շուրա Ժիգիրևան։

— Քսան թվի հետևանքներն են։ Ողնաշարում անկանոնություններ կան։ Ես այստեղ խոսեցի բժշկի հետ, վախենում են, հասկանո՞ւմ ես, որ կոնտուզիան բացարձակ անշարժություն կառաջացնի։ Դե, արի ու տես։

— Ես հիմա նրան այստեղ կբերեմ,— ասաց Շուրան։

Այսպես սկսվեց նրանց ծանոթությունը։ Պավելը չգիտեր, որ Ժիգիրևան և Զեռնոկոզովը նրա համար թանկագին մարդիկ կդառնան և իրեն սպասող ծանր հիվանդության տարիներին նրանք իր առաջին հենարանը կլինեն։

Կյանքն ընթանում էր առաջվա նման։ Տայան աշխատում էր։ Կորշագինը սովորում էր։ Դեռ նոր էր ձեռնամուխ եղել խմբակի աշխատանքին, երբ անձայն ու գաղտագողի մի նոր դժբախտություն վրա եկավ։ Ոտքերը կաթվածահար եղան։ Այժմ միայն աջ ձեռքն էր նրան ենթարկվում։ Արյունոտելու չափ կծոտեց նա շրթունքները, երբ զուր ջանքերից հետո հասկացավ, որ այլևս շարժվելու անընդունակ է։ Տայան արիաբար թաքցնում էր նրան օգնելու անկարողությունից առաջացած իր հուսահատությունն ու վիշտը։ Իսկ նա մեղավորի պես ժպտալով ասում էր.

— Ես ու դու, Տայո՛ւշա, պետք է իրարից բաժանվենք։ Չէ՞ որ մենք այսպիսի անհաջողության պայմանագիր չենք կնքել։ Այդ հարցի մասին, աղջի՛կս, ես այսօր ինչպես պետքն է կմտածեմ։

Տայան թույլ չտվեց, որ նա խոսի։ Հեկեկանքը զսպել

դժվար էր։ Գլուխը Պավելի կրծքին սեղմած՝ նա հեծկլտալով լաց էր լինում։

Արտյոմն իմացավ եղբորը պատահած նոր դժբախտությունը, գրեց մորը, և Մարիա Յակովլևնան, ամեն ինչ թողնելով՝ եկավ նրա մոտ։ Սկսեցին երեքով միասին ապրել։ Պառավն ու Տայան համերաշխ էին ապրում։

Կորչագինը շարունակում էր սովորել։

Մի երեկո, ձմեռային վատ եղանակին, Տայան բերեց իր առաջին հաղթանակի լուրը՝ քաղսովետի անդամության տոմսը։ Դրանից հետո Կորչագինը նրան հազվադեպ էր տեսնում։ Առողջարանի խոհանոցից, որտեղ նա աշխատում էր, Տայան գնում էր կինաժին, քաղսովետ և վերադառնում էր ուշ երեկոյան հոգնած՝ բայց տպավորություններով լիցուն։ Մոտենում էր նրա՝ կուսակցության մեջ որպես թեկնածու ընդունվելու օրը։ Նա մեծ հուզմունքով էր պատրաստվում այդ օրվան։ Բայց այդ ժամանակ նոր դժբախտություն վրա հասավ։ Հիվանդությունն իր գործը տեսնում էր։ Անտանելի ցավն այրեց Կորչագինի աջ աչքը. նրանից բռնկվեց նաև ձախը։ Եվ իր կյանքում առաջին անգամ Պավելը հասկացավ, թե ինչ է կուրությունը. շուրջը ամեն ինչ խավարի քողով պատվեց։

Ճանապարհի լայնքով անաղմուկ առաջ շարժվեց իր անհաղթահարելիությամբ սոսկալի խոշընդոտը և փակեց ճանապարհը։ Մոր և Տայայի հուսահատությունը սահման չուներ, իսկ Պավելը սառն հանգստությամբ որոշեց.

«Հարկավոր է սպասել։ Եթե իսկապես այլևս առաջ շարժվելու հնարավորություն չկա, եթե այն ամենն, ինչ արված է աշխատանքի վերադառնալու համար, կուրությունը ջնջեց, և այլևս շարք վերադառնալն անհնարին է, այդ դեպքում պետք է վերջ տալ»։

Կորչագինը գրեց իր բարեկամներին։ Բարեկամներից նամակներ էին գալիս, որոնք տոկունության և պայքարը շարունակելու էին կոչում։

Նրա համար այդ ծանր օրերին Տայան հուզված և ուրախ հաղորդեց.

— Պավլո՜ւշա, ես արդեն կուսակցության թեկնածու եմ։

Եվ Պավելը լսեց նրա պատմածը, թե բջիջն ինչպես նոր

ընկեր ընդունեց իր շարքերը, հիշեց իր առաջին կուսակցական քայլերը։

— Այսպես, ուրեմն, ընկեր Կորչագինա, ես և դու կոմֆրակցիա ենք կազմում,— ասաց նա՝ սեղմելով Տայայի ձեռքը։

Հաջորդ օրը նա նամակ գրեց շրջկոմի քարտուղարին՝ խնդրելով իր մոտ անցնել։ Երեկոյան տան մոտ կանգ առավ ացեխոտված մի ավտոմոբիլ, և Վոլմերը՝ կզակից մինչև ականջները հասած մորուքով տարիքոտ մի լատիշ, սկսեց թափահարել Կորչագինի ձեռքը։

— Դե, ինչպե՞ս ենք ապրում։ Ի՞նչ ես քեզ այդպես խայտառակ ձևով պահում։ Ոտքի կանգնիր, մենք քեզ անմիջապես գործի կքշենք։

Շրջկոմի քարտուղարը երկու ժամ Կորչագինի մոտ անցկացրեց՝ մոռանալով նույնիսկ, որ նա երեկոյան խորհրդակցություն ունի։ Լատիշը, Պավելի հուզված խոսքերը լսելով՝ քայլում էր սենյակում, վերջապես նա ասաց.

— Խմբակի մասին խոսելուն վերջ տուր։ Քեզ հարկավոր է հանգստանալ, հետո պարզել աչքերիդ հարցը։ Գուցե դեռ ամեն ինչ կորած չէ։ Գուցե Մոսկվա՞ գնաս, հը՞։ Մտածիր...

Կորչագինը նրան ընդհատեց։

— Ինձ մարդիկ են պետք, ընկեր Վոլմեր, կենդանի մարդիկ։ Ես մենակ չեմ կարող ապրել։ Այժմ ավելի են պետք, քան երբևէ։ Երիտասարդներ ուղարկիր ինձ մոտ, նրանց, ովքեր ավելի խակ են։ Նրանք քեզ մոտ գյուղերում դեպի ձախ են ծռում, կոմունա են ուզում, նրանց համար կոլխոզը նեղ է։ Չէ՞ որ կոմսոմոլին որ չհետևես, հաճախ առիթ է որոնում, որ շղթայից առաջ անցնի։ Եվ ինքս էլ եմ այդպիսին եղել, գիտեմ։

Վոլմերը կանգ առավ։

— Դու դա որտեղի՞ց ես իմացել։ Չէ՞ որ այդ նորությունն այսօր են միայն շրջանից բերել։

Կորշագինը ժպտաց։

— Գուցե հիշո՞ւմ ես իմ կնոջը։ Երևի են կուսակցության մեջ ընդունել։ Նա պատմեց։

— Հա՜, Կորշագինա՜ն, ամեն լվացո՞ղը։ Ուրեմն դա քո կինն է։ Իսկ ես չգիտեի։— Եվ մի քիչ մտածելուց հետո Վոլմերը ձեռքը խփեց ճակատին։— Ահա թե ում կուղարկենք քեզ մոտ՝ Բերսենև Լևին։ Դրանից ավելի լավ ընկեր չես գտնի։ Դուք բնավորությամբ էլ եք իրար հարմար։ Կոստացվի բարձր հաճախականության երկու տրանսֆորմատորի նման մի բան։ Ես, հասկանո՞ւմ ես, մի ժամանակ մոնտյոր եմ եղել, այստեղից էլ գալիս են իմ այս բառերը, համեմատությունները։ Այո՛, Լևը քեզ համար ռադիո էլ կսարքի, ռադիոյի ասպարեզում նա պրոֆեսոր է։ Ես հաճախ, հասկանո՞ւմ ես, մինչև գիշերվա ժամը երկուսը նստում եմ նրա մոտ ականջակալներով։ Կինս նույնիսկ կասկածների մեջ էր ընկել, թե էդ ուր ես, իբր, գիշերները քարշ գալիս, պառավ սատանա՜։

Կորշագինը ժպտալով հարցրեց.

— Բերսենևն ո՞վ է։

Վաղվզելուց հոգնած Վոլմերը նստեց աթոռին և պատմեց.

— Բերսենևը մեզ մոտ նոտար է, բայց նա այնքան է նոտար, որքան ես պարուհի եմ։ Դեռ մինչև վերջերս Լևը պատասխանատու աշխատող էր։ Հեղափոխական աշխատանքի մեջ է տասներկու թվից, կուսակցության մեջ՝ Հոկտեմբերից։ Քաղաքացիական պատերազմի ժամանակ բանակի մասշտաբով էր գործում, երկրորդ հեծելազորային հեղտրիբունալում էր. սպիտակ ոջիլն էր ոչնչացնում Կովկասում։ Եղել է և՛ Ցարիցինում, և՛ հարավային ճակատում, Հեռավոր Արևելքում հանրապետության գերագույն ռազմական դատարանն է գործի գցել։ Շատ դժվարություններ է կրել։ Թոքախտը տղային ցած է գլորել։ Նա Հեռավոր Արևելքից եկել է այստեղ։ Այստեղ, Կովկասում, նահանգական դատարանի նախագահ է եղել. երկրամասային դատարանի նախագահի տեղակալ։ Թոքերը վերջնականապես նեղել են տղային։ Հիմա, սպառնալով, թե վերջը եկել է, քշել են այստեղ։ Ահա թե որտեղից է մեր այդ արտակարգ նոտարը։ Այդ պաշտոնը խաղաղ պաշտոն է, ահա և շունչ է քաշում։ Սուս ու փուս էստեղ նրան մի բջիջ ենք տվել, հետո շրջկոմի մեջ մտցրինք, քաղդպրոց տվեցինք, հետո վերահսկիչ հանձնաժողով տարանք, նա անփոփոխ անդամն է բոլոր խճճված ու բանսարկուական գործերի համար ստեղծված պատասխանատու հանձնաժողովների։ Այդ բոլորից բացի, նա որսորդ է, հետո կրքոտ ռադիոսիրող, ու թեև մի թոքը չկա, բայց դժվար է հավատալ, թե նա հիվանդ է։ Եռանդն ուղղակի ցայտում է նրանից։ Նա հավանորեն կմեռնի ինչ-որ մի տեղ շրջկոմից դատարան վազելու ճանապարհին։

Պավելը նրան ընդհատեց խիստ տոնով տրված մի հարցով.

— Իսկ ինչո՞ւ եք նրան այդպես բեռնել։ Նա այստեղ ձեզ մոտ ավելի շատ է աշխատում, քան առաջ։

Վոլմերը իր կկոցած աչքերով ծուռ-ծուռ նայեց Կորշագինին։

— Ահա, քեզ էլ որ խմբակ և էլի ինչ-որ մի բան տանք, Լևն էլ առիթը եկած դեպքում կասի. «Ինչո՞ւ եք նրան բեռնում»։ Իսկ ինքն ասում է. «Ավելի լավ է թեժ աշխատանքի մեջ մի տարի ապրել, քան հինգ տարի հիվանդանոցային գորշ կյանք վարել»։ Ըստ երևույթին, մարդկանց խնայել կկարողանանք այն ժամանակ միայն, երբ սոցիալիզմ կկառուցենք։

— Դա ճիշտ է։ Ես էլ եմ քվեարկում հօգուտ մի տարվա կյանքի, ընդդեմ հինգ տարվա գորշության, բայց այստեղ էլ երբեմն հանցավոր կերպով շռայլ ենք վերաբերվում ուժերը ծախսելուն։ Եվ դրա մեջ, ես այժմ եմ հասկանում, այնքան հերոսականություն չկա, որքան տարերայնություն

և անպատասխանատվություն։ Ես այժմ եմ միայն սկսել հասկանալ, որ ոչ մի իրավունք չունեի այդպես դաժանորեն վերաբերվելու իմ առողջությանը։ Պարզվում է, որ դրանում ոչ մի հերոսականություն չկա։ Գուցե և մի քանի տարի էլ դիմանայի, եթե այդ սպարտացիությունը չլիներ։ Մի խոսքով՝ ձախության մանկական հիվանդություն, ահա իմ վիճակի համար հիմնական վտանգներից մեկը։

«Ահա, այսպես է խոսում, բայց հենց որ ոտքի կանգնեցնեմ, աշխարհում ամեն ինչ կմոռանա»,— մտածեց Վոլմերը, բայց լռեց։

Հաջորդ օրը երեկոյան Պավելի մոտ եկավ Լևը։ Նրանք իրարից բաժանվեցին կեսգիշերին։ Իր նոր բարեկամից Լևը հեռացավ այնպիսի մի զգացումով, կարծես հանդիպել էր շատ տարիներ առաջ կորցրած եղբորը։

Առավոտյան կտուրի վրայով մարդիկ էին մագլցում, ռադիոկայմ էին ամրացնում, իսկ Լևը բնակարանում էր մոնտաժանում, իր անցյալից հետաքրքիր դրվագներ պատմում։ Պավելը նրան չէր տեսնում, բայց Տայայի պատմածներից գիտեր, որ նա բաց դույնի աչքերով շիկահեր մարդ է, բարեկազմ, շարժումների մեջ բուռն, այսինքն՝ հենց այնպիսին, ինչպիսին որ պատկերացնում էր նրան Պավելը ծանոթության առաջին իսկ րոպեներից։

Լևը հանդիսավոր կերպով Պավելին տվեց ականջակալները։

Մթնշաղին սենյակում երեք «միկրո» լամպեր վառվեցին։ Եթերում հնչյունների քաոս էր տիրում։ Նավահանգստային «մորզյանկաները» թռչունների պես ճտճտում էին, ինչ-որ մի տեղ (հավանորեն մոտիկ, ծովի վրա) գործում էր շոգենավային ռադիոհեռագիրը։ Աղմուկի ու հնչյունների այդ կույտի մեջ վարիոմետրի կոճը գտավ և բերեց հանգիստ ու վստահ մի ձայն.

— Լսեցե՛ք, լսեցե՛ք, խոսում է Մոսկվան...

Փոքրիկ ապարատն իր անտենայով աշխարհի վաթսուն

կայան էր բռնում։ Կյանքը, որից Պավելը դուրս էր նետված, պողպատե մեմբրանի միջոցով ներս խուժեց, և Կորշագինն զգաց նրա հզոր շունչը։

Տեսնելով, թե ինչպես վառվեցին նրա աչքերը, հոգնած Բերսենևը ժպտաց։

Մեծ տանը քնած են։ Քնի մեջ անհանգիստ ինչ-որ բան է շշնջում Տայան։ Ուշ է տուն գալիս նա, գալիս է հոգնած ու մրսած։ Պավելը նրան քիչ է տեսնում։ Ինչքան շատ է նա աշխատանքի մեջ թաղվում, այնքան ավելի քիչ ազատ երեկոներ է ունենում, և Պավելը հիշում է Բերսենևի խոսքերը.

«Եթե բոլշևիկի կինը կուսակցական ընկեր է, նրանք իրար հազվադեպ են տեսնում։ Այստեղ երկու պլյուս կա՝ իրար չեն ձանձրացնում, և կռվելու ժամանակ չկա»։

Ի՞նչ կարող է նա առարկել։ Դրան պետք էր սպասել։ Մի ժամանակ Տայան իր բոլոր երեկոները նրան էր տրամադրում։ Այն ժամանակ ավելի շատ ջերմություն, ավելի շատ քնքշանք կար։ Բայց այն ժամանակ նա միայն ընկերուհի, կին էր, իսկ այժմ նա սանուհի է և կուսակցական ընկեր։

Նա հասկանում էր, որ որքան ավելի աճի Տայան, այնքան ավելի քիչ ժամեր կհատկացնի իրեն, և ընդունում էր, որ այդպես էլ պետք է։

Պավելը խմբակ ստացավ։

Երեկոները նորից տունն աղմկոտ էր։ Երիտասարդության հետ անցկացրած ժամերը Պավելի համար աշխուժության, լիցք ստանալու ժամեր էին։

Մնացած ժամանակը մայրը դժվարությամբ էր նրանից ականջակալները խլում, որպեսզի կերակրի նրան։

Ռադիոն նրան տալիս էր այն, ինչ խլել էր կուրությունը՝ սովորելու հնարավորությունը, և սահման չճանաչող այդ ձգտման մեջ նա մոռանում էր այրվող մարմնի տանջալի

ցավերը, մոռանում էր աչքերի հրդեհը և ամբողջ՝ իր նկատմամբ դաժան, անբարեհամբույր կյանքը։

Երբ անտենայի ճառագայթը Մագնիտոստրոյից բերեց պատանի եղբայրակիցների սխրագործությունների լուրը, որոնք ԿԻՄ-ի դրոշի տակ փոխարինել էին Կորչագինների սերնդին, Պավելը խորապես երջանիկ զգաց իրեն։

Պատկերացնում էր գայլերի ոհմակի պես վայրագ բուքը, ուրալյան դաժան սառնամանիքը։ Քամին ոռնում է, իսկ ձյունահողմի մեջ կոմերիտական սերնդի մի ջոկատ, լապտերների աղեղի հրդեհի տակ, հսկա շենքերի կորպուսների կտուրները ապակիով է պատում, որպեսզի ձյունից ու ցրտից փրկի համաշխարհային կոմբինատի առաջին ցեխերը։ Փոքրիկ մի բան էր թվում անտառային այն կառուցումը, որտեղ Կիևի կոմերիտմիության առաջին սերունդը պայքարում էր փոթորիկի դեմ։ Ահել է երկիրը, ահել են և մարդիկ։

Իսկ Դնեպրի վրա ջուրը ճեղքել էր պողպատե պատնեշները և հորդել՝ իր տակ ընկղմելով մեքենաները և մարդկանց։ Եվ նորից կոմերիտմիությունը տարերքի դեմ նետվեց ու երկօրյա կատաղի կռվից հետո, առանց քնի ու հանգստի, սանձազերծ տարերքը ետ քշեց պողպատե պատնեշներից այն կողմ։ Այդ վիթխարի պայքարի մեջ առջևից ընթանում էր կոմերիտմիության նոր սերունդը։ Հերոսների անունների շարքում Պավելն ուրախությամբ լսեց հարազատ մի անուն՝ Իգնատ Պանկրատով։

ԻՆՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Մոսկվայում մի քանի օր նրանք ապրում էին հիմնարկություններից մեկի արխիվի նկուղում, որի պետն օգնեց, որպեսզի Կորչագինին անեղավորեն հատուկ մի կլինիկայում։

Պավելն այժմ միայն հասկացավ, որ բավական հնշտ ու պարզ բան է տոկուն լինելն այն ժամանակ, երբ ուժեղ մարմին ունես և պատանի ես։ Բայց դիմանալն այժմ, երբ

կյանքը սեղմում է քեզ իր երկաթե օղակով, դա արդեն պատվի գործ է։

Մեկուկես տարի է անցել այն երեկոյից, որ անցկացրեց Կորչագինը արխիվի նկուղում։ Անասելի տանջանքների տասնութ ամիս։

Պրոֆեսոր Ավերբախը կլինիկայում Պավելին ուղղակի ասաց, որ տեսողությունը վերադարձնելն անհնարին է։ Մշուշապատ ապագայում, երբ բորբոքումը կանգ առնի, վիրաբուժությունը կփորձի բիբերը վիրահատել։ Բորբոքումը ճնշելու համար առաջարկեցին վիրաբուժական կարգի միջոցներ ձեռնարկել։

Նրա համաձայնությունը հարցրին, և Պավելը թույլ տվեց անել իր հետ այն բոլորը, ինչ բժիշկներն անհրաժեշտ կգտնեին։

Վիրահատման սեղանների վրա անցկացրած ժամերին, երբ նշտարները կտրատում էին նրա պարանոցը, հեռացնում մերձվահանաձև գեղձը, մահվան սև թևը երեք անգամ դիպավ նրան։ Կյանքն ամուր էր կառչել Կորչագինից։ Տայան սպասման սարսափելի ժամերից հետո իր բարեկամին գտնում էր մահու չափ գունատ, բայց կենդանի և, ինչպես միշտ, հանգիստ ու սիրալիր։

— Մի՛ անհանգստացիր, աղջի՛կս, ինձ թաղելն այնքան էլ հեշտ բան չէ, ես դեռ կապրեմ և կաղմկեմ, թեկուզ ի հեճուկս գիտուն էսկուլապների թվաբանական հաշիվների։ Իմ առողջության հարցում նրանք լրիվ իրավացի են, միայն թե խորապես սխալվում են, երբ իմ հարյուր տոկոսանոց անաշխատունակության մասին են փաստաթուղթ գրում։ Այդ մենք դեռ կտեսնենք։

Պավելը հաստատապես ընտրեց այն ճանապարհը, որով վճռել էր վերադառնալ նոր կյանք կառուցողների շարքերը։

Ձմեռը վերջացավ, գարունը բաց արեց լուսամուտների շրջանակները, և վերջին վիրահատությունից փրկված, արնաքամ Կորշագինը հասկացավ, որ ինքն այլևս հիվանդանոցում մնալ չի կարող։ Ապրել այդքան ամիսներ մարդկային տառապանքների շրջապատում, դատապարտված մարդկանց տնքոցների ու ողբի մեջ, ավելի դժվար է, քան սեփական տանջանքները կրելը։

Նոր վիրահատության առաջարկին նա սառն ու կտրուկ պատասխանեց.

— Վե՛րջ։ Հերիք է։ Ես գիտությանը տվեցի իմ արյան մի մասը, իսկ այն, ինչ մնացել է, ինձ այլ բանի համար է հարկավոր։

Նույն օրը Պավելը նամակ գրեց Կենտկոմ՝ խնդրելով օգնել նրան Մոսկվայում մնալու, ուր աշխատում է իր ընկերուհին, քանի որ հետագա թափառումներն անօգուտ են։ Առաջին անգամն էր նա կուսակցությանը դիմում օգնության համար։ Նրա նամակին ի պատասխան՝ Մոսսովետը նրան սենյակ տվեց։ Պավելը հիվանդանոցը թողեց մի ցանկությամբ՝ այլևս երբեք չվերադառնալ այնտեղ։

Կրոպոտկինսկայա փողոցի խաղաղ նրբանցքի համեստ սենյակը շքեղության գագաթ թվաց։ Հաճախ գիշերն արթնանալով՝ Պավելը չէր հավատում, թե հիվանդանոցը ետ է մնացել ինչ-որ մի տեղ։

Տայան կուսակցության անդամ փոխադրվեց։ Աշխատանքի մեջ համառ՝ նա, չնայած իր անձնական կյանքի ամբողջ ողբերգությանը, ետ չէր մնում հարվածայիններից, և կոլեկտիվն այդ լռակյաց բանվորուհուն արժանացրեց իր վստահությանը՝ նա ընտրվեց գործարկոմի անդամ։ Հպարտությունն իր ընկերուհու համար, որը բոլշևիկ էր դարձել, մեղմում էր Պավելի ծանր դրությունը։

Բաժանովան, որ գործուղմամբ Մոսկվա էր եկել, այցելեց Պավելին։ Երկար զրուցում էին։ Պավելը եռանդով պատմում էր այն ուղու մասին, որով նա մոտիկ ապագայում կվերադառնա մարտիկների շարքը։

Բաժանովան նկատեց Կորշագինի քունքերի արծաթե շերտը և մեղմ ձայնով ասաց.

— Տեսնում եմ, շատ բան եք կրել։ Բայց այնուամենայնիվ չեք կորցրել անմար խանդավառությունը։ Էլ ի՞նչ եք ուզում։ Այդ լավ է, որ վճռել եք սկսել այն աշխատանքը, որին պատրաստվում եք հինգ տարի։ Բայց ինչպե՞ս կաշխատեք։

Պավելը հանգստացնող ձևով ժպտաց։

— Վաղն ինձ համար կբերեն ստվարաթղթից պատրաստված մի տողացույց։ Առանց դրան ես գրել չեմ կարողանա։ Տողը տողի վրա կգա։ Ես երկար ելք էի որոնում և գտա. ստվարաթղթից կտրված շերտիկները թույլ չեն տա, որ իմ մատիտը դուրս գա ուղիղ տողի շրջանակից։ Առանց գրածը տեսնելու գրելը դժվար է, բայց անհնարին չէ։ Ես դրանում համոզվեցի։ Շատ երկար ժամանակ ոչինչ չէր ստացվում, բայց այժմ ես ավելի դանդաղ եմ գրում, խնամքով գծում եմ յուրաքանչյուր տառը, և բավական լավ է ստացվում։

Պավելն սկսեց աշխատել։

Նա մտածեց գրել մի վիպակ, նվիրված Կոտովսկու հերոսական դիվիզիային։ Վերնագիրն ինքն իրեն եկավ.

«Փոթորկածիները»։

Այդ օրվանից նրա ամբողջ կյանքը լծվեց գիրքն ստեղծելու աշխատանքին։ Դանդաղորեն, տող առ տող ծնունդ էին առնում էջերը։ Գտնվելով պատկերների իշխանության տակ և առաջին անգամ ապրելով ստեղծագործական տանջանքներ, երբ այնպես որոշակի շոշափվող պայծառ, անմոռանալի պատկերները չէր հաջողվում թղթին հանձնել, և տողերն անգույն, հրից ու կրքից զուրկ էին ստացվում, նա մոռանում էր ամեն ինչ։

Ինչ որ գրում էր, նա պիտի բառ առ բառ հիշեր։ Թելը կորցնելն արգելակում էր աշխատանքը։ Մայրն ահով էր նայում որդու զբաղմունքին։

Աշխատանքի ընթացքում նա հարկադրված էր լինում հիշողությամբ ամբողջ էջեր կարդալ, երբեմն նույնիսկ գլուխներ, և մորը երբեմն թվում էր, թե որդին խելագարվել է։ Քանի նա գրում էր, մայրը չէր համարձակվում նրան մոտենալ, և միայն դետին սահող թերթերը հավաքելիս անհամարձակ ձայնով ասում էր։

— Գոնե մի ուրիշ բանով զբաղվեիր, Պավլո՛ւշա։ Թե չէ էդ որտեղ է տեսնված անվերջ գրել...

Պավելը սրտանց ծիծաղում էր նրա տագնապի վրա և հավատացնում պառավին, որ ինքը դեռ լրիվ չի գժվել։

Ծրագրված գրքի երեք գլուխներն ավարտված էին։ Պավելն այն ուղարկեց Օդեսա՝ հին կոտովցիներին, որպեսզի նրանք գնահատեն, և շուտով նրանցից դրական կարծիք արտահայտող նամակ ստացավ, բայց վերադարձի ճանապարհին փոստն այն կորցրեց։ Վեցամյա աշխատանքը կորավ։ Դա Կորչագինի համար մեծ ցնցում էր։ Նա դառնորեն ափսոսաց, որ ուղարկել էր միակ օրինակը և իր համար պատճեն չէր պահել։ Նա իր կորստի մասին պատմեց Լեգենկին։

— Ինչո՞ւ ես այդպես անզգույշ վարվել։ Հանգստացիր, այժմ արդեն հայհոյելու կարիք չկա։ Նորից սկսիր։

— Բայց, Ինոկենտի Պավլովիչ, գողացված է վեց ամսվա աշխատանքը։ Այդ նշանակում է ամեն օր ութժամյա լարում։ Ահա թե որտեղ են պարագիտները, երիցս նզովված լինեն նրանք։

Լեգենկն աշխատում էր նրան հանգստացնել։

Ստիպված եղավ ամեն ինչ նորից սկսել Լեգենկը թուղթ ձեռք բերեց, օգնեց, որ գրածը մեքենագրվի։ Մեկուկես ամսից հետո առաջին գլուխը վերածնվեց։

Նրանց հետ մի բնակարանում էր ապրում Ալեքսեևների ընտանիքը։ Սրանց ավագ որդին՝ Ալեքսանդրը, աշխատում էր որպես կոմերիտմիության քաղաքային շրջկոմներից մեկի քարտուղար։ Սա ուներ տասնութամյա մի քույր՝ Գալյան, որն ավարտել էր ֆաբգործուսը։ Գալյան կենսախինդ մի աղջիկ էր։ Պավելը մորը հանձնարարեց նրա հետ խոսել, թե չի՞ համաձայնի, արդյոք, իրեն օգնել որպես «քարտուղար»։ Գալ-

յան մեծ սիրով համաձայնեց։ Նա եկավ ժպտուն ու սիրալիր և, իմանալով, որ Պավելը վիպակ է գրում, ասաց.

— Ես ձեզ հաճույքով կօգնեմ, ընկեր Կորչա՛գին։ Դա հո չի կարելի համեմատել հորս համար՝ բնակարաններում մաքրություն պահպանելու մասին ձանձրալի շրջաբերականներ գրելու հետ։

Այդ օրվանից գրական գործերը կրկնապատկված արագությամբ առաջ շարժվեցին։ Մի ամսվա մեջ այնքան շատ բան արվեց, որ Պավելը նույնիսկ զարմացավ։ Գալյան իր ամենաեռանդուն մասնակցությամբ և համակրանքով օգնում էր նրա աշխատանքին։ Նրա մատիտը կամացուկ շրշշում է թղթի վրա, և այն, ինչ նրան առանձնապես էր դուր գալիս, նա կարդում էր մի քանի անգամ՝ անկեղծորեն ուրախանալով հաջողության վրա։ Տանը նա համարյա միակ մարդն էր, որ հավատում էր Պավելի աշխատանքին։ Մյուսներին թվում էր, թե ոչինչ չի ստացվի, և նա աշխատում է միայն մի բանով լցնել իր հարկադրական անգործությունը։

Մոսկվա վերադարձավ գործուղման գնացած Լեգենկը և, առաջին գլուխները կարդալով, ասաց.

— Շարունակի՛ր, բարեկա՛մս։ Հաղթանակը մերն է։ Դու դեռ մեծ ուրախություններ կունենաս, ընկեր Պա՛վել։ Ես հաստատ հավատում եմ, որ շարք վերադառնալու քո երազանքը շուտով կիրականանա։ Հույսդ մի կորիր, զավա՛կս։

Ծերունին բավարարված էր հեռանում. նա Պավելին գտավ եռանդով լի։

Գալիս էր Գալյան, թղթի վրա շրշում էր նրա մատիտը, և աճում էին բառերի շարքերն անմոռանալի անցյալի մասին։ Այն բոպեներին, երբ Պավելը խոհերի մեջ էր ընկղմվում, ընկնում էր հիշողությունների տիրապետության տակ, Գալյան դիտում էր, թե ինչպես են ցնցվում նրա արտահայտությունները, իրար հաջորդող մտքերն արտացոլելով՝ ինչպես են փոփոխվում նրա աչքերը, և ինչ-որ չէր հավատում, որ նա չի տեսնում։ Չէ որ հստակ, ոչ մի բիծ չունեցող աչքերում կյանք կար։

Աշխատանքն ավարտելուց հետո նա կարդում էր օրվա ընթացքում գրվածը և տեսնում էր, թե ուշադիր ականջ դնելով, ինչպես է Պավելը մռայլվում։

— Ինչո՞ւ եք մռայլվում, ընկեր Կորչագի՛ն։ Չէ՞ որ լավ է գրված։

— Ո՛չ, Գալյա, վատ է։

Անհաջող էջերից հետո ինքն էր սկսում գրել։ Տողացույցի նեղ շերտի մեջ կաշկանդված՝ նա երբեմն չէր դիմանում՝ շտապում էր։ Եվ այդ ժամանակ անսահման ցասման մեջ կյանքի նկատմամբ, որը նրանից խլել էր աչքերը, ջարդում էր մատիտները, իսկ կծոտված շրթունքների վրա արյան կաթիլներ էին հայտնվում։

Աշխատանքի վերջում աչալուրջ կամքի ճիրաններից սովորականից ավելի հաճախ սկսեցին դուրս պրծնել արգելված զգացումները։ Արգելված էին՝ թախիծը և ամբողջ մի շարք մարդկային հասարակ, ջերմ ու քնքուշ զգացումներ, որոնք գոյության իրավունք ունեին համարյա ամեն մեկի համար, բայց ոչ նրա համար։ Եթե նա դրանցից թեկուզ մեկին անձնատուր լիներ, գործը ողբերգությամբ կվերջանար։

Ուշ երեկոյան գործարանից գալիս էր Տայան և, Մարիա Յակովլևնայի հետ կիսաձայն մի քանի խոսք փոխանակելով՝ սառկում էր քնելու։

Վերջին զլուխն ավարտված էր։ Մի քանի օր Գալյան կարդում էր վիպակը Կորչագինի համար։

Վաղը ձեռագիրը կուղարկվի Լենինգրադ՝ մարզկոմի կուլտպրոպ բաժնին։ Եթե այնտեղ գրքին «կյանքի ուղեգիր» տան, այն կհանձնեն հրատարակչությանը, և այն ժամանակ...

Սիրտն անհանգիստ բաբախում է։ Այն ժամանակ... կըսկըսվի մի նոր կյանք, որ ձեռք է բերված տարիների լարված ու համառ աշխատանքով։ Գրքի բախտը վճռում էր նաև Պավելի բախտը։ Եթե ձեռագիրը ջախջախեն, դա կլինի նրա վերջին մթնշաղը։ Եթե անհաջողությունը մասնակի լինի, այնպիսին, որ կարելի է վերացնել հետագա աշխատանքով, նա անմիջապես նոր հարձակում կսկսի։

Մայրը ծանր փաթեթը փոստ տարավ։ Վրա հասան լարված սպասման օրերը։ Իր կյանքում Կորչագինը դեռ երբեք այդպիսի տանջալի անհամբերությամբ նամակի չէր սպասել, ինչպես այդ օրերին։ Պավելն ապրում էր՝ առավոտվա փոստից մինչև երեկոյան փոստը։ Լենինգրադը լռում էր։

Հրատարակչության լռությունն սպառնալի էր դառնում։ Պարտության նախազգացումն օրեցօր ուժեղանում էր, և Կորչագինն ինքն իրեն խոստովանում էր, որ գրքի անվերապահ մերժումն իր կործանումը կլինի։ Այն ժամանակ այլևս ապրել չի լինի։ Ինչի՞ համար ապրես։

Այդպիսի րոպեներին հիշում էր քաղաքամերձ պուրակը ծովի մոտ, և նորից ու նորից էր բարձրանում այն հարցը.

— Ամե՞ն ինչ ես արել, արդյոք, որպեսզի դուրս պրծնես երկաթե օղակից, որպեսզի շարք վերադառնաս, կյանքդ օգտակար դարձնես։

Եվ պատասխանում էր.

— Այո՛, կարծես թե՝ ամեն ինչ։

Շատ օրեր հետո, երբ սպասումն արդեն անտանելի էր դարձել, մայրը, որդուց ոչ պակաս հուզվելով՝ սենյակ մտավ և բղավեց.

— Լենինգրադից փոստ...

Դա հեռագիր էր մարզկոմից։ Բլանկի վրա մի քանի կցկտուր բառեր. «Վիպակը ջերմ հավանության է արժանացել։ Ձեռնամուխ են լինում հրատարակությանը։ Ողջունում ենք հաղթանակը»։

Սիրտն արագ բաբախում էր։ Ահա այն նվիրական երազանքը, որ իրականություն դարձավ։ Ճեղքված է երկաթե օղակը, և նա նորից, արդեն նոր զենքով, վերադառնում է շարք և դեպի կյանք։

1930—1934 թթ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ՍԵՐԱՖԻՄՈՎԻՉ — Երկաթե հեղեղ 5

Ա. ՖԱԴԵԵՎ — Ջախջախում, թարգմ.՝ Ս. Բաբիյան 197

Ն. ՕՍՏՐՈՎՍԿԻ — Ինչպես էր կոփվում պողպատը, թարգմ.՝ Վ. Նայան 387

Ալեքսանդր Սերաֆիմովիչ Սերաֆիմովիչ
ԵՐԿԱԹԵ ՀԵՂԵՂ

Ալեքսանդր Ալեքսանդրովիչ Ֆադեև
ՋԱԽՋԱԽՈՒՄ

Նիկոլայ Ալեքսեևիչ Օստրովսկի
ԻՆՉՊԵՍ ԷՐ ԿՈՓՎՈՒՄ ՊՈՂՊԱՏԸ

Александр Серафимович Серафимович
ЖЕЛЕЗНЫЙ ПОТОК

Александр Александрович Фадеев
РАЗГРОМ

Николай Алексеевич Островский
КАК ЗАКАЛЯЛАСЬ СТАЛЬ

(На армянском языке)
«Советакан грох»
Ереван, 1986

Խմբագիր՝ Գ. Պ. Սարգսյան
Նկարիչ՝ Ռ. Ս. Ջուլհակյան
Գեղ. խմբագիր՝ Հ. Ս. Մալխասյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Մ. Սիմոնյան
Վերստուգող սրբագրիչ՝ Օ. Ղ. Թերզյան

Հանձնված է շարվածքի՝ 15.04.86 թ.։
Ստորագրված է տպագրության՝ 26.05.86 թ.։
Ֆորմատ 84×108 1/32։ Թուղթ տպագր. № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 44,52 պայմ. տպ. մամ., 38,75 հրատ. մամ.։
Տպաքանակ 50.000։ Պատվեր՝ 992։ Գինը՝ 3 ռ. 60 կոպ.։
«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։
Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։
Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.